ՖՐԱՆՑ ՎԵՐՖԵԼ

ԳՐԵՄԻԱ

ԼՍԵ՛Ք ՁԱՅՆԸ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ
Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Նվիրվում է

ՖՐԱՆՑ ՎԵՐՖԵԼԻ
լուսավոր և անանց հիշատակին

Երախտագիտությամբ
աշխարհասփյուռ ժողովուրդ հայոց



ՖՐԱՆՑ ՎԵՐՖԵԼ
1890–1945

FRANZ WERFEL

JEREMIAS HÖRET DIE STIMME

Aus dem Deutschen übersetzt von
Erzbischof Hakob Kelendjian

JEREWAN 2022

ՖՐԱՆՑ ՎԵՐՖԵԼ

ԵՐԵՄԻԱ ԼՍԵ՛Ք ՁԱՅՆԸ

Գերմաներենից թարգմանեց
Հակոբ արքեպիսկոպոս Գլնճյանը

ԵՐԵՎԱՆ 2022

Տպագրվել է
Գրիգոր Մովսիսյան և Նաիրա Կարապետյան
ամուսինների մեկենասությամբ

ՀՏԴ 821.112.2(436)–31 Վերֆել
ԳՄԴ 84(4Ավ)–44
Վ 541

Վերֆել Ֆրանց
Վ 541 Երեմիա. Լսե՛ք ձայնը / Ֆ. Վերֆել: Գերմաներենից թարգմանեց
Հակոբ արքեպիսկոպոս Գլնճյանը.- Եր.: Հեղ. հրատ., 2022.— 696 էջ:

ՀՏԴ 821.112.2(436)–31 Վերֆել
ԳՄԴ 84(4Ավ)–44

ISBN 978–9939–0–3896–4

© Մովսիսյան Գրիգոր, 2022

ԹԱՐԳՄԱՆՉԻ ԿՈՂՄԻՑ

Գերմանալեզու մեծ գրող, վիպասան, թատերագիր և բանաստեղծ Ֆրանց Վերֆելը ծնվել է հրեա հարուստ վաճառականի ընտանիքում 1890 թ. սեպտեմբերի 10-ին, Պրագայում, որն այն ժամանակ Ավստրո-Հունգարիայի կայսրության մաս էր կազմում, և մահացել է Բևեռլի Հիլզում (Կալիֆորնիա), 1945 թ. օգոստոսի 26-ին: Նա եղել է Ֆրանց Կաֆկայի (1883–1924), Էգոն Էրվին Կիշի (1885–1948), Մաքս Բրոդի (1884–1968) ժամանակակիցն ու մտերիմը: Գիմնազիան ավարտելուց հետո նա ուսանել է Լայպցիգում և Համբուրգում: Այնուհետև հաստատվել է Ավստրիայում:

Ֆրանց Վերֆելը 1929 թ. Վիեննայում ամուսնանում է Ալմա (Շինդլեր) Մահլերի՝ կոմպոզիտոր Գուստավ Մահլերի այրու հետ, որի հետ ծանոթացել էր 1917 թ.: Գերմանացի նացիստների կողմից 1938 թ. Ավստրիայի բռնակցումից (Anschluss) հետո, երբ հրեաներն ամենուրեք հալածվում էին, Վերֆելը, զգալով վտանգը, իր տիկնոջ հետ ապաստանում է նախ հարավային Ֆրանսիայում (Սանարի-Սյուր-Մեր), ապա Իսպանիայում և Պորտուգալիայում, որտեղից էլ 1940 թ. անցնում է Ամերիկա, ուր մահանում է երիտասարդ տարիքում սրտի կաթվածից:

Մինչ Ֆրանսիայում էր, Վերֆելն այցելում է Լուրդի ուխտատեղին՝ նվիրված Սուրբ Աստվածամորը: Այնտեղ շատ լավ ընդունելության է արժանանում սրբավայրը պահպանող միանձնուհիների կողմից և խոստանում է ապահով Միացյալ Նահանգներ հասնելուց հետո գրել այդ վայրում Տիրամոր հայտնության հրաշքի մասին: Առ այդ, 1941 թ. լույս է տեսնում նրա հոգեշունչ վիպակը՝ «Բերնադետի երգը» անունով, որը վերածվում է նաև ֆիլմի: Բերնարդետը գյուղացի այն աղջնակն էր, ում 1858 թ. սկսած, պարբերաբար, հայտնվել էր Ս. Աստվածամայրը:

Դեռևս 1933 թ. Ֆրանց Վերֆելը նախազգում է ազգայնամոլության ահավոր վտանգն ամբողջ Եվրոպայի և բովանդակ աշխարհի համար, մանավանդ երբ Գերմանիայում իշխանության գլուխ են գալիս տխրահռչակ Ադոլֆ Հիտլերն ու իր համախոհները: Իբրև նախազգուշացում՝ նա գրում է մի կոթողային վեպ՝ «Մուսա լեռան քառասուն օրը» վերնագրով, որը ծանոթ է բովանդակ հայությանը, և ինչպես գերմանացի իմ մտավորական ծանոթներից մեկն էր ասում. «Յուրաքանչյուր հայ պետք է ընթերցի այդ դյուցազնապատումը, որպեսզի ճանաչի ինքն իրեն»: Այդ վեպում նկարագրվում է Սվեդիայում՝ Մուսա Դաղ կամ Մուսա լեռ կոչված գյուղերում փոքրաթիվ հայության հերոսամարտն ընդդեմ օսմանյան թուրք զավթիչների ու ջարդարարների կանոնավոր զորքի:

Նացիստների ուշադրությունից չի վրիպում Վերֆելի այս գրքի ներքին միտումը, որն էր բռնակալության դեմ փոքրիկ մի զանգվածի հերոսական մաքառումը՝ ի պաշտպանություն հայրենիքի, ազգային ինքնության և մարդկային նվիրական արժեքների պահպանումի: Հենց այս պատճառով էլ հիտլերականներն արգելում են գիրքը, օրինակները հավաքվում են ու հրկիզվում: Գիրքը նույն ճակատագրին է ենթարկվում նաև Թուրքիայում: Կ. Պոլսում ապրող հայերը թուրք կառավարությանը սիրաշահելու համար 1935 թ. դեկտեմբերին հավաքվում են Փանկալթի թաղամասի հայոց եկեղեցու բակում և այրում Վերֆելի նշված գիրքն ու մեծադիր լուսանկարը (Այս մասին գրված է թուրքական մամուլում, ուր զետեղված է նաև մի լուսանկար, որի տակ կա հետևյալ գրությունը. Franz Werfelin resmi ve Musadağında 40 gün ismili kitabı dün Pangaltı Ermeni Kilisesinda yakılırken, Cumhuriyet gazetesinin 16 Aralık 1935, այսինքն՝ «Երեկ, երբ Փանկալթիի հայկական եկեղեցում այրում էին Ֆրանց Վերֆելի նկարն ու նրա «Մուսա լեռան 40 օրը» անունով գիրքը, Ջումհուրիյեթ թերթ, 16 դեկտեմբերի, 1935 թ.»):

Ֆրանց Վերֆելի գրական վիթխարի ժառանգության մեջ մեծ տեղ է գրավում նաև նրա՝ «Երեմիա» անունով հոյակապ վեպը (լույս է տեսել 1937 թ.), որը ներկայացնում է Երեմիա մարգարեի կյանքն ու գործունեությունն իր բոլոր ծալքերով: Այն իր մեջ պարփակում է նաև կրոնական, խորհրդապաշտական և մարդկային վեհ ու ապաշնորհ զգացումների մի ամբողջություն: Դժբախտաբար, Վերֆելի այս գործը բավականին անծանոթ է, որովհետև այդ բնույթի աշխատություններ, մանավանդ ներկա

դրամապաշտ և այլասերված շրջանակների համար, բոլորովին անհասկանալի են ու ավելորդ:

Ինչպես «Մուսա լեռան քառասուն օրը» վեպում, այստեղ էլ Վերֆելի նպատակը համարյա նույնն է՝ նախազգուշացնել մարդկությանը բարքերի ապականության, կռապաշտության և մարդկային աստվածադրոշմ նկարագրի խաթարման մասին, որոնք միշտ առաջնորդում են դեպի անխուսափելի կործանում: Այստեղ կա նաև ավելին: «Երեմիա» անունով վեպի իբրև ենթավերնագիր, երբեմն էլ՝ ուղղակի իբրև վերնագիր, հեղինակը գրում է՝ «Լսե՛ք ձայնը», այսինքն՝ լսեք Տիրոջ ձայնը, քանզի Երեմիա մարգարեի (ն. Ք. 650–585) բերնով խոսողը հենց Ինքը՝ Աստված է: Տերն ասում է նրան. «Դեռ քեզ որովայնում չստեղծած՝ Ես ընտրեցի քեզ, և դեռ արգանդից դուրս չեկած՝ սրբացրի քեզ ու հեթանոսների վրա մարգարե կարգեցի»: Այնուհետև Տերն իր ձեռքը երկարում է դեպի Երեմիան և դիպչում նրա բերանին՝ ասելով. «Ահա Իմ խոսքը քո բերանը դրեցի» (Երմ., գլուխ Ա): Ուրեմն, Երեմիան Աստծու ձայնի պատգամողն է ու տարածողը: Եվ այդ ձայնը, դժբախտաբար, չի լսվում մարգարեի ժամանակակիցների կողմից, ինչը պատճառ է դառնում Սեդեկիա թագավորի և Հուդայի երկրի ու ժողովրդի կործանման: Նույն վիճակն է նաև այսօր: Աշխարհն ու մարդկությունն ահասարսուռ կործանումից փրկելու համար պետք է անպայման լսել Աստծու հուսատու և կենսապարգև ձայնը, որի աղբյուրն է հիմնականում Աստվածաշունչը և աղոթքների միջոցով ձեռք բերված հոգևոր ներշնչանքը:

Հավատարիմ մնալով հեղինակի հետապնդած վեհ նպատակին՝ ջանացել ենք գերմաներեն բնագրից հայերենի թարգմանել Ֆրանց Վերֆելի այս հոյակապ և անժամանցելի գիրքը՝ ի վայելումն հայ ընթերցողի:

Գրքի թարգմանությունն ամբողջական է՝ ներառյալ ներածական առաջին երեք գլուխներն ու վերջաբանը, որոնց բովանդակությունն ուղղակիորեն առնչվում է մեր ներկա ժամանակների հետ, և այդ պատճառով էլ ոմանց կողմից այն անհամատեղելի է համարվել վեպի ընդհանուր բովանդակության հետ ու կրճատվել որոշ հրատարակություններից: Այս մասին լուսաբանություն է կատարել նաև հեղինակի այրին՝ Ալմա Մահլեր Վերֆելը՝ վեպի 1956 թ. հրատարակության վերջում՝ գրելով.

«Ֆրանց Վերֆելն ավարտել էր «Երեմիա» վեպի գրառումը, երբ միտք է հղանում դրա վրա ավելացնել մի պատմողական շարադրանք, որով

փորձ էր անելու ներկայացնել վաղ անցյալում տեղի ունեցածը մեր ներկա ժամանակի մեջ: Նա իրականացնում է իր մտադրությունը, բայց շուտով անդրադառնում է, որ այն ներդաշնակ չէ ամբողջի հետ, և նույնիսկ՝ անտրամաբանական: Երբ նա գիտակցում է այս հանգամանքը, գիրքն արդեն տպագրվել էր»:

Համենայն դեպս, չնայած վերոհիշյալ վկայությանը, այդ հավելված բաժինն էլ ունի իր գեղարվեստական ու հոգևոր բարձր արժեքը: Հիրավի մեծ իմաստություն է պահանջում ներկան անցյալին շաղկապելը: Ըստ այդմ, վերոհիշյալ ներածական բաժնում Վերֆելի նկարագրած անձերից մեկը՝ Քլեյթոն Ջիվսը, իր ընկնավորության հազիվ մի ակնթարթ տևող նոպայի ընթացքում անջատվում է իր շրջապատից ու ժամանակից և հաղորդակից դառնում վաղ անցյալում կատարված մեկ այլ իրականության, որը Երեմիա մարգարեի ապրած ժամանակաշրջանն էր…

Այս ամբողջական թարգմանությունը կատարելիս ես իմ ձեռքի տակ եմ ունեցել վեպի 1965 թ. հրատարակությունը՝ հետևյալ վերնագրով. «Franz Werfel, Jeremias, Höret die Stimme» (Fisher Taschenbuch Verlag):

Հովվական ծառայությանս զուգընթաց՝ իմ կատարած այս թարգմանությունն ինձնից խլել է ավելի քան երկու տարվա աշխատանք, որի խթանիչ ուժն է եղել մեր ՏԵՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԸ, Ում հայտնում եմ իմ խորին և հավիտենական երախտագիտությունը: Այնուհետև, այստեղ հարկ եմ համարում նշել, որ այս թարգմանության գաղափարը հղացել է մի հոյակապ ու վեհանձն անձնավորություն, օրինակելի քրիստոնյա և ազնվագույն բարեկամ՝ պրն. Գրիգոր Մովսիսյանը, որը նաև իմ ցարդ հրատարակած բոլոր հատորների մեկենասն է: Հայցում եմ նրա և նրա բարեպաշտ ընտանիքի համար ՏԻՐՈՋ և ԵՐԵՄԻԱ մարգարեի առատաբուխ օրհնությունը:

Թարգմանիչ՝
Հակոբ արքեպիսկոպոս Գլնճյան

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԶՐՈՒՅՑՆԵՐ ՄԵՌՅԱԼ ԾՈՎԻ ԱՓԻՆ

Քլեյթոն Ջիվսը լռում էր: Դա լարված ու համառ մի լռություն էր, որով նա հետևում էր ուրիշների խոսակցությանը, և որը, սակայն, իր տարտամ ու թույլ շեշտվածությամբ չէր համապատասխանում արծարծվող թեմայի լրջությանը:

Նրանք նստել էին ճաշարանի տեռասում ու սուրճ էին խմում՝ զգաստ մտքով ընկղմված հետմիջօրեի առաջին ժամերի հաճելի թմբիրի մեջ: Տեռասը տարածվում էր ջրի վրա, բայց կարելի՞ էր արդյոք ջուր կոչել այդ պղտոր ու սևաթույր, բոլորովին լճացած զանգվածը: Մեռյալ ծովի այդ անորոշ տարրը,— որը, ի վերջո, ոչ ամբողջությամբ հեղուկ էր և ոչ էլ հաստատուն նյութ,— դանդաղորեն հասնում էր մինչև այնտեղ, ուր զատկական նորածագ արևի ճառագայթները, գոլորշիացող մառախուղի շղարշներով պարուրված, կարծես պսպղուն գույների մի խայտանք լինեին: Հարավային տարածություններում տեսարանը ձգվում էր դեպի անծանոթ բացատներ, մինչդեռ լեռները, որոնք արևելքից ու արևմուտքից շրջապատում էին այդ ասֆալտե լիճը, շոյում էին մարդկային հայացքը: Բայց լեռնե՞ր էին դրանք արդյոք, թե՞ քարացած ամպեր, առվակների եռացող ջրերից գոյացած բյուրեղացած գոլորշիներ, որոնք գնում լցվում էին Սոդոմ–Գոմորի ավազանը: Մերձակա լեռնաշղթան շարունակում էր պահպանել իր իսկական կերպարանքը և ասես արմատավորվել էր այդ հողատարածքում: Նման հողատարածք երբեք չեք գտնի այլուր: (Հավաքված հինգ անձերի խոսակցությունը հնարավոր չէր անջատել այդ յուրահատուկ և եզակի տեսարանի պարտադրող ազդեցությունից): Մովաբի լեռնազանգվածը, ինչքան որ անհետանում էր հեռավոր մշուշներում, նույնքան և առավել կորցնում էր իր ժայռեղեն լինելու համոզիչ կերպարանքը: Տպազիոնե լուսաթափանց

ամրոցներ, ակնեղեն աշտարակներ, բյուրեղյա ուրվականաձև կերտվածքներ՝ աղի և անծանոթ տարրերի բաց երանգներով,— խամրած կանաչավուն, մանուշակագույն և ծովակնյա,— խրոխտ բարձրանում էին արևելյան ափին: Եվ թվում էր, թե այդ ամբողջ կախարդական գույները գոյանում էին ոչ թե լուսաբեկումնային խաղերի հետևանքով, այլ հենց իրենք՝ ժայռերն օժտված էին ադամանդյա և բյուրեղյա բնությամբ:

Տանելի շոգ էր. մի բան, որ չափազանց դուրեկան էր ճամփորդությունների սիրահար անգլիացիների համար, որոնք, անշուշտ, սովոր էին մի այլ՝ նվազ բարեխառն կլիմայի, քան այս մեկին, որն իր ջերմոցային ժպիտով ուզում էր որոշ չափով նմանակել արևադարձային տաք եղանակը: Հաճելի էր, անշուշտ, ճաշելուց հետո մի ժամ այստեղ՝ բացօթյա տեռասում ժամանակ անցկացնելը՝ լրիվ անջատված ապագայի վերաբերյալ հոգսերից: Այցելուների թիկունքում տարածվում էր Մեռյալ ծովը եզերող հարթավայրային նեղ շերտը՝ իր չորացած ուղտափշերով ու թերաճ թփերով՝ ամբողջությամբ պարուրված կրային փոշիով ու աղային պսպղացող բյուրեղներով: Հարթության նեղ ու չոր շերտի անմիջապես հետևում տարածվում էր Հորդանան սրբազան գետակի հովիտը: Այս շրջանն օժտված էր փարթամ կանաչությամբ, որը ծածկում էր Հորդանանի գետաբերանը: Այնտեղ կային բազմաթիվ ճահճուտներ, կանաչապատ տարածքներ՝ խիտ, ծակծկող եղեգնուտներով և ուռենիներով, որոնց վրա իրենց հովանին էին սփռում բարձրուղեշ բարդիները, ուր տևապես ապաստան էին գտնում անթիվ ու անհամար թռչուններ: Հենց նոր էին այցելել այն նշանավոր ծանծաղուտը, ուր, ըստ ավանդության, Հովհաննես Մկրտիչը մկրտել էր Հիսուսին: Ավտոբուսով նոր էին ժամանել մի խումբ հույն ուխտավորներ՝ փաթաթված սպիտակ սավանների մեջ, որպեսզի, ըստ իրենց սրբազան սովորության, գնան ու սուզվեն Հորդանանի բավականին արագընթաց ջրերում: Գետի ափին կանայք ծնկի էին գալիս, ապա լրջությամբ ու երկյուղածությամբ խոնարհեցնում էին իրենց նայվածքը, մինչ իրենց հետ բերած թիթեղյա անոթները լցնում էին մկրտության դեղնավուն ջրով: Հնէաբան Բուրթոնը, որը մասնակցում էր Երիքովի պեղումներին, լռելյայն մի ժեստով ուշադրություն էր հրավիրում այդ անոթների վրա, որոնք, առանց բացառության, կրում էին «Vacuum Oil» պիտակը: Օրիորդ Դորոթի Քովելը մի հարևանցի ժպիտով նկատի է ունենում սրվակների պարունակության և

պիտակի միջև ընկած հակասությունը, որը թե՛ միացնում էր հազարամյակներն իրար և թե՛ բաժանում էր դրանք իրարից:

Խոսակցությունն անակնկալ կերպով հաճախ ընդհատվում էր: Եվ ամեն անգամ, երբ դա տեղի էր ունենում, ընդհատված բառերի շուրջը, ինչպես ջրում նետած քարի շուրջը, տիրում էր մի ականջալուր լռություն, որն անկարելի էր համեմատել աշխարհի որևէ այլ լռության հետ: Ուրվականաձև ու թափանցիկ լեռներով եզերված այս վայրը, թվում էր, թե մեկուսացած է աշխարհի խշշոցից ու հևքից, որպեսզի հնարավոր լինի ունկնդրել այն ձայնը, որն այդ համընդհանուր աղմուկից էր խլացվել: Ասֆալտի գործարանի աշխատավորները կեսօրվա դադարի մեջ էին: Հեռվից երբեմն գալիս էր կոկորդային խռպոտ մի ձայն, ասես լճի հանդարտ ու անտարբեր թվացող մակերեսով մի սարսուռ էր անցնում: Այնտեղ՝ հետևում՝ մի քանի մղոն հեռու, Երիքովի գեղեցիկ օազիսն էր՝ իր կիտրոնենիների, նարնջենիների և թուրինջենիների պարտեզներով, իր օրհնված աղբյուրներով, Ներո (Նաբավ) լեռան հազարամյա հնությունների մնացորդներով (ուր նաև պարոն Բուրթոնը պեղումներ էր կատարում), իր կավե արաբական հյուղակներով և շքեղափայլ անուններ կրող հյուրանոցներով: Օազիսից սփռվող ծաղիկների քաղցր ու ախորժելի բուրմունքը հասնում էր մինչև այստեղ: Երբեմն, սակայն, օդը տարօրինակ կերպով ծանրանում էր, կարծես վերածվում էր դոնդողի նման թանձրացած մի ուտելիքի, որը հնարավոր չէր շնչել, այլ պետք էր ծամել: Օդի հանկարծակի խտացման ու ծանրացման այս պարագայում միայն հայտնի էր դառնում, որ նստել էին երկրի ամենացածր տեղանքներից մեկում, մինչ օվկիանոսների մակերեսն իրենց գլխավերևից ավելի քան չորս հարյուր մետր բարձրության վրա էր:

«...Աշխարհի կենտրոնը...»:

Հնգյակը,— չորս տղամարդ և մեկ կին,— հանկարծակի շեղեցին իրենց նայվածքը Մեռյալ ծովի ադամանդափայլ լեռնաշղթայից և նայեցին իրար այնպես, որպես թե իրենցից մեկը չլիներ այդ բառերն արտասանողը, այլ դա իրենց շրջանակից դուրս ինչ–որ մեկի հանդիսավոր, հանդարտ ձայնն էր: Դորոթի Քովելը մի քիչ մեկուսի ընկողմանած էր բացվող թիկնաթոռում: Տղամարդիկ իրենց աթոռները հետ էին քաշել սեղանի մոտից, որի վրա երևում էին կիսադատարկ գրաֆիններ, գավաթներ ու բաժակներ: Բոլորն էլ կրում էին արևային մուգ ակնոցներ, բացի Քլեյթոն Ջիվսից,

որը, չափազանց կարճատես լինելով, իր երկարաթարթիչ աչքերին դրել էր հաստ ու թափանցիկ ապակիներով ակնոց: Նրանց մեջ նստած՝ նա ոչ միայն սուզված էր իր համառ լռության մեջ, այլև պարուրված իր բարեհամբույր կարճատեսությամբ, որը նրան առանձնացնում էր մյուսներից և չափազանց ամաչկոտ անձի տպավորություն հաղորդում: Այդուհանդերձ, ոչ Քարթրայթը, ոչ էլ Բուրթոնը կամ մայոր Շեփսթոնը որևէ լուրջ ուշադրություն չէին ընծայում նրա լռությանը: Միայն Դորոթի Քովելը մերթընդմերթ հառում էր իր նայվածքը նրա կողմը: Հավանաբար ինքն իրեն պատասխանատու էր զգում նրա համար, քանի որ օրեր առաջ ինքն էր այդ երիտասարդ գրողին ծանոթացրել մյուս երեք պարոնների հետ, իսկ երեկ էլ «Քինգ Դեյվիդ» հյուրանոցի ընդունման սրահում հրավիրել էր նրան միանալու իրենց դեպի Մեռյալ ծովը շրջագայելու նպատակով: Գուցե,— մտածում էր նա,— այդ պտույտի շնորհիվ և մի քիչ տարօրինակ այդ մարդկանց ընկերակցությամբ ինքը կկարողանա դուրս բերել Ջիվսին իր ինքնամփոփ վիճակից: Հրաշալի օր էր: Նրանք հանգստանում էին այդ չնաշխարհիկ գեղեցկության գրկում, ասես կախարդված լինեին մի ինչ-որ խորհրդավոր գոգավորության մեջ: Դա այնպիսի մի զգացմունք էր, որը շոշափելի կերպով արտահայտվում էր հետևյալ բառերով.

«Աշխարհի կենտրոնում լինել»...

Պրոֆեսոր Քարթրայթը՝ ներկաների մեջ ամենատարեցը, նախ ճակատից դեպի հետ տարավ իր արևադարձային գլխարկը, որ կրում էր՝ ծածկելու համար իր բոլորովին ճաղատ գլուխը, ապա արտահայտվեց այսպես.

— Ամենայն տեղ, ուր առաջանում է կրոնական ճշմարիտ պաշտամունք, այնտեղ է աշխարհի կենտրոնը: Նման տպավորություն է թողնում, օրինակ, Բեռնարեսը Հնդկաստանում...

Քարթրայթն ընդհատեց իր խոսքը: Դժգույն դեմքին նկատելի էր իր հաստատածը սրբագրելու մի միտում: Ի դեպ, նա, բոլոր մյուսներից ավելի, իրավունք ուներ նման հարցերի մասին արտահայտվելու: Սանսկրիտ լեզվի տարբեր ինստիտուտներում երկար տարիներ հետազոտական աշխատանքներ կատարելուց հետո նա նոր էր Հնդկաստանից վերադարձել Լոնդոն:

— Իմ արած համեմատությունը ճիշտ չէ,— սրբագրեց նա իրեն,— ամենուր գոյացել են տարբեր մակարդակի բազմաթիվ հավատալիքներ, պաշտամունք և փիլիսոփայություն, բայց իսկական առումով մի կրոն միայն

այստեղ՝ այս փոքր երկրում է ձևավորվել... Հենց դրա համար էլ սա է համարվում աշխարհի՝ Աստծու կողմից ընտրված կենտրոնը...

Մայոր Շեփսթոնը՝ մի փոքր ու նիհարակազմ մարդ, որ նստել էր Քարթրայթի մոտ, կնճռոտեց իր արևախանձ դեմքը և զգուշավորությամբ ասաց.

— Համենայն դեպս, մի բան հաստատ է, որ այս փոքրիկ երկրի բիբլիական Աստվածը մնացել է միշտ հաղթող ամբողջ աշխարհի և մյուս բոլոր աստվածների դեմ, և դա առնվազն մինչև հիմա այդպես է թե՛ քրիստոնեության և թե՛ նույնիսկ իսլամի համար...

— Մի՛ վախեցեք,— ծիծաղեց Բուրթոնը,— այս չափազանց արթնամիտ սերնդի և հաջորդող երեք սերունդների մեջ ստույգ է, որ տեղ չի գրավելու ոչ մի անծանոթ աստված:

Մայոր Շեփսթոնը միանգամից մտահոգ տեսք ընդունեց, որպես թե դժգոհ լիներ իր իսկ սեփական արտահայտությունից, որ վերաբերում էր աշխարհի կենտրոնին: Մի պահ հետո, որպես չքմեղանք, վրա բերեց.

— Ի վերջո, պետք է իմանաք, եթե որևէ մեկն այնքան երկար ապրի այս երկրում, որքան ես...

Իսկապես էլ, Շեփսթոնն արդեն ավելի քան տասը տարի էր, որ ապրում ու գործում էր Պաղեստինում: Նա պաշտոնական առաքելությամբ ենթակա էր բրիտանական Բարձրագույն Կոմիսարիատին: Ծանոթ էր Հերմոն լեռան և Սինայի անապատի միջև ընկած երկրամասի բոլոր անկյուններին և այնքան էր սիրում այդ աշխարհը, որ արդեն երկրորդ անգամ լինելով՝ մերժում էր այդտեղից տեղափոխվելու առաջարկը՝ ավելի բարձր պաշտոն ստանձնելու նպատակով: Նրա արևախանձ ու չոր դեմքը՝ իր փոքրիկ ու մոխրագույն բեղով, նրան իր իսկական տարիքից ավելի մեծ էր ցույց տալիս: Դրան հակառակ, սակայն, հնէաբան Բուրթոնը շատ ավելի երիտասարդ էր թվում, քան իր իսկական տարիքն էր: Նրա հսկա մարմնի վրա կար երեխայական շփոթահար մի դեմք՝ ծածկված բազմաթիվ դալկաթույր պեպեններով՝ նման ծաղկախտի սպիների թողած հետքերի, մի բան, որ նրան դեռահասի կերպարանք էր տալիս: Այդուհանդերձ, նրա հնչեղ ձայնն օժտված էր հանդիսավոր մի երանգով:

— Իրականում,— խոստովանեց նա,— ես դեռ այդքան տարի չէ, որ աշխատում եմ այս երկրում, բայց հաստատ տասն ամսից ավելի է: Եվ ամեն անգամ ինձ հետ պատահում է միևնույնը, ինչ որ առաջին օրը, երբ ոտք ես

դնում հնագույն ու սրբազան անուններով հայտնի այս վայրերը... Դա մի անհամեմատելի դող է... Իմ ասպարեզում ես սկսնակ մեկը չեմ, մասնակցել եմ բազմաթիվ պեղումների՝ լինի դա Հունաստանում կամ Եգիպտոսում... Այստեղ հողը ոչ այնքան առատ է և ոչ էլ բարեբեր, ինչպես այնտեղ, այլ սա ժլատ է, համարյա անպտուղ, բայց գիտե նախանձախնդրությամբ թաքցնել իր գաղտնիքները: Աննշան գտածոն անգամ սրտառուչ է... Եվ հավանաբար դա է տարբերությունը: Դա այն տարբերությունն է, ինչ որ գոյություն ունի Հոմերոսի և Աստվածաշնչի միջև...

Այնուհետև Բուրթոնն ավարտեց իր խոսքը՝ տղայական մտածկոտությամբ.

— Կամ, եթե կնախընտրեք, դա այն տարբերությունն է, որ գոյություն ունի միջնակարգ կրթության ժամանակահատվածի և մանկության միջև...

— Հոմերոս և Աստվածաշունչ, միջնակարգ դպրոց և մանկություն: Բավականին հաջող ձևակերպում քո կողմից, ով գանձախույզդ,— քրթմնջաց Շեփսթոնը բարյացակամ:– Լուսավորյալ այս ժամանակներում, երբ դեռևս կա մի տղա, որ Աստվածաշունչը նույնացնում է մանկության հետ, հապա ի՞նչ պետք է ասել նախորդ սերունդների կարծիքների մասին, որոնք բխում էին զուտ *պուրիտանիզմից* (մաքրակրոնությունից)... Դրա վերաբերյալ ես կուզենայի մի վառ օրինակ բերել, որը պատերազմից է առնված, բայց, ինչպես պատահում է, երբ ուրիշներն սկսում են ինձ պատերազմական պատմություններ անել, ես վեր եմ կենում ու թողնում հեռանում...

Պրոֆեսոր Քարթրայթը հանգիստ քաջալերեց նրան, որ ներկայացնի իր օրինակը: Խոսելիս նա հազիվ թե շարժում էր իր բարակ շրթունքները.

— Բոլորս համոզված ենք, որ դուք մեզ մի հերոսական պատմություն չեք մատուցի, Շեփսթոն...

— Դա ոչ իսկ մի պատմություն է,— անտարբեր վրա բերեց մայորը,— այլ մերկապարանոց մի իրականություն, առանց որևէ ավելորդ հարդարանքի. մի բան, որ իսկապես մեծ տպավորություն է թողնում ինձ վրա: Հարցը կապ ունի մարշալ Ալենբիի հետ... Պատերազմի ժամանակ ես արդեն այստեղ էի՝ Պաղեստինում: Մեր բանակի մեծածավալ առաջխաղացման ընթացքում ինձ նշանակեցին հրամանատարության անձնակազմի օգնական սպա: Թուրքական չորրորդ բանակը Հեզրայելի հարթավայրում՝ Մեգիդո–Աֆուլե գծի երկայնքով, բազմաթիվ կարևոր դիրքեր էր գրավել:

Մեծ հարձակումից առաջ՝ վերջին գիշերը, մենք անցկացրինք Ժենին կոչվող փոքրիկ քաղաքում: Վստահ եմ, որ դուք բոլորդ ծանոթ եք այդ վայրերին՝ դեպի Նազարեթ գնալիս: Գիշերվա ժամը մոտավորապես երկուսին մարշալն արթնացնել տվեց ինձ և իր մոտ կանչեց: Երբեմն նա սիրում էր հետս զրուցել: Բնականաբար, ես կարծեցի, թե այս անգամ էլ հարցը ծառայողական մի պարտականության մասին է,— հարձակումը ճշտված էր առավոտվա ժամը հինգին: Այդ առումով ես կազմ ու պատրաստ էի...

Երկարավուն բազկաթոռից հնչեց կանացի մի քրքջալից ձայն.

— Իհարկե, պատրաստ՝ առնվազն խիզախորեն մարտնչելու...

— Բոլորովին հակառակը, օրիորդ Քովել,— հանգստացրեց նրան Շեփսթոնը խոցող շեշտով:— Թեև մարշալը նստել էր՝ գլուխը հակած մի քարտեզի վրա, բայց դա ամենևին ընդհանուր հրամանատարության այն մեծ քարտեզը չէր, որի վրա նշված էին մեր դիրքերը, այլ դա սուրբգրային Պաղեստինի ատլասն էր, իսկ մեծ սեղանի վրա էլ ուրիշ բան չկար՝ բացի Աստվածաշնչի երկու բացված օրինակներից: Այնտեղ, ուր գիշերը միայնակ և անքուն լուսացնում էր Ալենբին, արաբական տան մի խեղճուկրակ սենյակ էր: Ինձ հրավիրեց կարճ ժամանակով ընկերանալ իրեն, քանի որ չէր կարողանում քնել, բազմաթիվ մտքերով էր տարված: Անհամբեր սպասում էի մի բան իմանալ այն մտահոգությունների մասին, որոնք խռովում էին բարձր պատասխանատվության տեր մեր ընդհանուր հրամանատարի հոգին իր վճռական գրոհի նախօրեին: Մեր դրությունը բավականին վատ էր: Անապատի միջով անցնելիս շաբաթներ շարունակ բազմաթիվ զրկանքներ և ծանր կորուստներ էինք կրել: Մեզ անհանգստացնում էր մեր սեփական հրետանու տկարությունը, մինչդեռ մեր թշնամին վերջին ամիսներին զգալիորեն համալրել էր իր զինուժը գերմանական և ավստրիական ռազմամթերքով: Վաղվա պատերազմի արդյունքից էր կախված Սուեզի ջրանցքի, գուցե նաև ամբողջ թագավորության ճակատագիրը... Իսկ հիմա այդ մոտալուտ և վճռորոշ օրվա առնչությամբ եղած բոլոր հրատապ հարցերի և մտահոգությունների մասին ոչ մի բառ չէր լսվում մարշալի շրթունքներից, այլ, ընդհակառակը, խոսելու իր դանդաղ ու խիստ ոճով նա սկսեց ինձ հարցուփորձել.

— Սիրելիս, Սուրբ Գրքում արձանագրված պատերազմներում քանի՞ անգամ են հիշվում Մեգիդոն և Հեզրայելի հարթավայրը: Ի՞նչ գիտես դրանց մասին:

Ես բացարձակապես ոչինչ չգիտեի այդ մասին, հետևաբար անմիջապես պատասխանեցի՝ պաշտոնիս վայել ափսոսանքի արտահայտությամբ: Միևնույն ժամանակ, այդպես վարվելով, հարմար առիթ տվեցի բարի ծերունուն՝ մեծահոգաբար սովորեցնելու ինձ: Եթե չեմ սխալվում, Հին Կտակարանում հիշված են հինգ կամ վեց ճակատամարտեր, որոնք տեղի են ունեցել այն միևնույն հարթավայրում, ուր մենք ժամեր հետո պիտի գրոհեինք: Մարշալը խոսեց միայն սուրբգրային այդ իրադարձությունների մասին և երբեք չհիշեց Նապոլեոնի տարած հաղթանակը Թաբոր լեռան մերձակայքում, որն իրականում զինվորական բոլոր դպրոցների համար իբրև ռազմավարական հայտնի օրինակ էր ծառայում: Հատկապես հիշարժան այդ գիշերին, թվում էր, թե նա բոլորովին կենտրոնացած է միայն մի անձնավորության և մի պատերազմի վրա, և երևի հենց նրա համար, որ այդ պատերազմը ցավալի վախճան էր ունեցել...

— Պարոն Բուրթոն, դուք պատմաբան եք, խնդրեմ, օգնեք ինձ, ի՞նչ էր աստվածաշնչյան այն թագավորի անունը, որն իր փոքրաթիվ բանակով հարձավել էր եգիպտական հզոր ու գերադաս զորքի վրա Մեգիդոյի մերձակայքում...

— Հովսիա թագավոր,— բարեհաճությամբ պատասխանեց հնէաբանը,— հենց միևնույնը, որի թագավորության ժամանակ Երեմիա մարգարեն սկսել է իր գործունեությունը:

— Այո, դա ճիշտ է, Հովսիա արքան...— Շեփսթոնն արդեն անհամբեր էր շարունակելու իր խոսքը,— դուք տեսնում եք մերկ իրականությունը՝ առանց որևէ չափազանցության. պարզապես մի անգլիացի հրամանատար համաշխարհային պատերազմին մասնակցություն բերելու իր կարևորագույն գործողության նախաշեմին իր ուշադրությունը կենտրոնացնում է ոչ թե վտանգալից լուսաբացի մտահոգիչ դրության վրա, այլ Սուրբ Գրքի վրա: Գուցե այդ անելով լոկ փորձում էր մտացրիվ լինել կամ իր իսկական մտածումները, որոնք դադար չունեին, դրանց հետևում թաքցնել: Այդուհանդերձ, ինձ ավելի հավանական է թվում, որ տարեց Ալենբին դժվարին բոլոր պարագաներում միշտ հետամուտ է եղել փնտրելու և գտնելու բիբլիական պատմության մեջ, որն իր համար Աստծու բացարձակ սրբազան խոսքն էր, մի ինչ-որ խորհրդավոր ուժ և մխիթարություն:

Բուրթոնը ժպտաց իր երեխայանման դեմքի բոլոր պեպեններով.

— Այսպիսով, Մեծ Բրիտանիան, ավելի քան երեք հազարամյակ հետո, ութերորդ կամ իններորդ անգամ է, որ հաղթանակ է տանում Մեգիդոյում: Սա մի հզոր ավանդույթ է...

— Շեփսթոնի պարզ ու անհարդարանք պատմածից կարելի է ուրիշ հետևություններ էլ անել,— վրա բերեց Քարթրայթն իր յուրահատուկ ձայնով՝ առանց շրթունքները շարժելու,— Սուրբ Գրքին այնքա՞ն հավատարիմ եղող գեներալ Ալենբին, գրավելով Պաղեստինը, մի շատ օրինավոր գործ կատարած է լինում, քանզի ինքնին անգլիացի ազգն իր խորհրդավոր ծագումն առաջացնում է Իսրայելի անհետացած տասը ցեղերից:

Քարթրայթի այս խոսքերի վրա օրիորդ Դորոթի Քովելը տեղից վեր կացավ: Նա բավականին երիտասարդ էր, դեռ ոչ իսկ երեսուն տարեկան, և չնայած լրագրողական իր անհրապույր մասնագիտությանը՝ բացառիկ գեղցկությամբ օժտված մի անձ էր: Նրան լավ էին ճանաչում Ազգերի Լիգայի պալատի միջանցքներում: Նրա մուգ սև մազերը, որոնց միջով անցնում էր գորշ գույնի մի մազափունջ, մի գրավիչ հակադրության մեջ էին իր մեծ ու կապույտ աչքերի հետ, որոնցում փայլատակում էր մի բորբոքուն կրակ: Այդ աչքերն այժմ մի պահ թաքուն խռովությամբ սևեռվեցին Քլեյթոն Ջիվսի վրա: Գրողը, իր կարճատես դեմքով ամբողջությամբ շրջված դեպի խոսակցությունը, ականջ էր դնում՝ առանց դրան մասնակցելու: Ոչինչ փոխված չէր նրա սուր ու կշռադատող վերաբերմունքից: Այդուհանդերձ, մի հանկարծահաս անկում էր նկատվում նրա կերպարանքում. թվում էր, թե նա հսկայական ջանքերով պայքար էր մղում մի մեծ հուսահատության դեմ: Դորոթին նկատել էր այդ և կարծում էր, թե գիտեր նրա հանկարծահաս անկումի պատճառը: Երևի այն դժբախտությունը, որ քիչ ամիսներ առաջ պատահել էր Ջիվսի հետ, մի անգամ ևս ընկճել էր նրան: Նա կանգնեց Ջիվսի և Բուրթոնի արանքում՝ հավանաբար նպատակ ունենալով օգնելու իր պաշտպանյալին և խոսեցնելու նրան:

— Անհետացած ցեղերը...— կրկնեց Դորոթին իր բարեհնչուն ձայնով և ապա մի կարճատև ընդմիջում տվեց:– Եթե դուք կցանկանաք ճշգրիտ տեղեկություններ իմանալ Ժնևի տարբեր կոմիտեների կազմության մասին՝ բաղկացած տասնութ, տասներկու և կամ հինգ անդամներից, հուսախաբ չեմ անի ձեզ... բայց հին ժամանակների պատմության վերաբերյալ ես ինձ

զգալիորեն տկար եմ զգում: Բազմահմուտ մտավորական Ջիվսը, որը ներկա է մեր մեջ, ասածս կհաստատի...

Ակնարկված անձը նույնիսկ չնայեց Դորոթիին: Լրագրողուհու բավականին սրամիտ ուրախությունը չկարողացավ փարատել ստվերները, այլ, ընդհակառակը, Բուրթոնը ոտքի կանգնեց, բռնեց Դորոթի Քովելի թևից, տարավ նրան երկու քայլ առաջ՝ դեպի ջրի ափը, և ցույց տալով Հորդանանի հովիտը, որը պատված էր նուրբ մշուշով, ասաց.

— Ահա այնտեղ դու դեռ տեսնո՞ւմ ես Մկրտության վայրը, ուր մենք հանդիպեցինք հույն ուխտավորների:

Դորոթին աչքերը թարթելով ասաց.

— Ես տեսնում եմ քարյուղի այն անճոռնի և արդիական անոթները, որոնց մեջ լցնում էին գետի սրբազան ջուրը...

Լսվեց Բուրթոնի հնչեղ ու հանդիսավոր ձայնը.

— Մեզ համար դա հույս ներշնչող մի խորհրդանիշ է, քանզի մենք բոլորս էլ այդպիսի անճոռնի և արդիական անոթներ ենք, այդուհանդերձ, կարող ենք լցվել նման սրբությամբ...

Նախանձախնդիր պատմաբանն այժմ ամբողջությամբ իր տարերքի մեջ էր: Հսկա մարմնի վրա հանգչող մանկական դեմքը սկսել էր փայլել: Ձեռքով նա ցույց տվեց Երիքովի ուղղությունը, ուր ավելի քան երեսուներեք դար առաջ մի քանի քոչվոր և աննշան ցեղեր հատել–անցել էին Հորդանան գետը՝ տիրանալու համար իրենց խոստացված երկրին: Օրիորդ Քովելն այժմ ունկնդրում էր մի խելացնոր դասախոսություն, ուր նկարագրվում էր Պաղեստինի ենթադրյալ գրավումը հիշյալ քոչվոր և անծանոթ ցեղերի կողմից: Ողորմելի և վատ զինված հորդաներին հաջողվել էր հաղթել ու իրենց ձուլել իրենցից ամեն ինչով հարյուրապատիկ անգամ գերադաս բնիկ ժողովրդին: Իրականում պետք է ասել, որ եկվորներն իրենց հետ բերում են մի այնպիսի հզոր բան, որին մարդկային պատմությունը դրանից առաջ երբեք չէր հասել և ոչ էլ կհասնի: Դա միակ արարիչ Աստծու գոյության գիտակցությունն էր, որն ստեղծել էր իրենց, իսկ իրենք էլ՝ Նրան... Հին Կտակարանից և եգիպտական արձանագրություններից կատարված մեջբերումներ զարդարել են այդ մեկնաբանությունը: Բուրթոնը, սակայն, իր խոսքը դեռ չէր ավարտել, օրիորդ Դորոթին ընդմիջեց նրան՝ նյարդայնացած հառաչելով.

— Պատմաբաններն իրենց բարձրությունից արհամարհանքով են նայում մեզ՝ լրագրողներիս, բայց ես ձեզ ասում եմ, Բուրթոն, որ եթե մեզանից որևէ մեկը կամենա ժամանակակից մի իրադարձության մասին նման մի ուռճացած զեկույց պատրաստել, ինչպես դուք արեցիք, ոչ մի թերթ այն չի տպագրի...

— Բայց դուք մոռանում եք,— փոխադարձեց Բուրթոնը,— որ մեզ ավելի քիչ է արտոնված ստելը, քան ձեզ...

— Այդ առնչությամբ գիտությունը մի հոյակապ նախապատվություն ունի ստելու, անկաշկանդ կերպով և առանց հերքվելու վտանգի...

Դորեթի Քովելը հաղթական էր, վերջին խոսքն էլ իրենն է լինում: Ազատամիտ և որոշ չափով էլ իշխելու ցանկությամբ տոգորված կանանց բնորոշ ինքնվստահությամբ նա չնահանջեց թեման շարունակելուց.

— Այսպիսով, մինչև այսօր դեռ չեմ հասկացել, թե ինչու է մի անգլոսաքսոն ազգ իր ծագումը կապում անհետացած ցեղերի հետ...

Պրոֆեսոր Քարթրայթը միջամտեց հաշտարար եղանակով.

— Հռոմեացիներն առանց բավականաչափ հիմքեր ունենալու իրենց ծագումը վերագրում են տրոյացիներին: Դա, իհարկե, մի առասպել է, ինչպես մյուսներից յուրաքանչյուրը: Այդուհանդերձ, ամեն մի առասպելի հետևում թաքնված է ինչ-որ բան...

— Կասկած չկա, որ դա այդպես է, դրանցից յուրաքանչյուրի մեջ էլ ինչ-որ բան է թաքնված,— գանգատվեց Դորոթին,— բայց մենք ահա արդեն մի քանի ժամ է, որ նստել ենք այս հիասքանչ Մեռյալ ծովի ափին և կրկին նույն բանն ենք խոսում, որպես թե չունենք մեր սեփական դառնալից խնդիրները... Մինչդեռ իմ այսօրվա աշխատանքը դեռ չի ավարտվել, քանզի Քլեյթոն Ջիվսն ինձ հրավիրել է իր առաջնորդությամբ այցելելու այն վայրը, ուր տաճարն է եղել... Անշուշտ, բոլորդ էլ հմայված եք այս Սուրբ Երկրով...

— Այդպես է, Դորոթին իրավունք ունի,— ասաց հնէաբանը և թիկնեց իր աթոռին,— Դա էլ հաճախ դարձել է զուտ Déjà vu...

Հանկարծ լսվեց մի սուր աղմուկ: Բոլորն էլ շրջվեցին աղմուկի կողմը, որն առաջացրել էր չխոսկան ունկնդիր Ջիվսը ծխամորճը դատարկելիս: Գրողը Դորոթիի հարցական նայվածքին փոխադարձեց թեթև ժպիտով, որը մոտավորապես նշանակում էր՝ «Խնդրում եմ, ինձ մի՛ խղճացեք: Ոչինչ

չի պատահել...»: Նրա ճակատը փայլում էր քրտինքից, սև մազերը, որոնք, տարօրինակ մի եռանկյուն կազմելով, աճում էին մինչև ճակատի խորքը, անկանոն խճճված էին իրար: Ձիվսը, ի տարբերություն մյուս պարոնների, հագել էր մուգ կապույտ մի կոստյում և ձախ թևին կրում էր սգո մի սև ժապավեն, որն արմունկից դեպի ներքև էր սահել՝ թողնելով թեև անճոռնի, բայց հուզիչ ազդեցություն: Հանկարծակի ուշադրությունը, որ հրավիրել էր իր վրա, ըստ երևույթին իրեն ավելի էր անհանգստացնում: Նա մի քիչ խոնարհեցրեց իր գլուխը: Նրա խիտ հոնքերը կազմում էին մի ուղիղ գիծ:

— Այստեղ ակնարկություն եղավ Déjà vu–ի մասին...

Այս խոսքերով պրոֆեսոր Քարթրայթը վերջ դրեց կարճատև լռությանը: Ի վերջո, հանեց գլխից իր արևադարձային գլխարկը, որը վաղուց արդեն խանգարում էր նրան, և դրեց այն ճերմակ շալվարով ծածկված իր ծնկներին: Այդ ժամանակ երևաց, որ նրա գանգն ամբողջությամբ առանց մազի էր՝ սկսած ճակատից մինչև ծոծրակը: Նրա հոնքերը՝ պարզապես երկու լերկ ցցվածքներ, փոխարինված էին դիմահարդարի մատիտով գծված երկու նուրբ գծերով: Նա նման էր եգիպտական քահանաների որոշ արձաններին:

— Իմ սիրելի Բուրթոն,— շարունակեց Քարթրայթն իր համարյա անշարժ շուրթերով,— դուք խոսում էիք առեղծվածային և վաղանցուկ այն զգացողության մասին, որ երբեմն մեզ անակնկալ կերպով համակում է, որով թվում է, թե հենց այսօրվա մեր ապրած որոշակի պահն ու վիճակը կրկնողությունն է արդեն նախապես մի անգամ մեր ապրած որոշակի պահի ու դրության: Մի ակնթարթ ջնջվում է ժամանակը, վերանում է կյանքի շարունակությունը: Եվ այս իրադարձության մտահոգիչ, նույնիսկ զարհուրելի կողմը հենց այն է, որ դա բնութագրվում է մի անհրապույր բառով՝ իբրև Déjà vu: Դրա վերաբերյալ բազմապիսի այսպես կոչված հոգեբանական բացատրություններ կան: Ես, սակայն, պատիվն եմ ունեցել հենց այս երևույթի մասին խոսելու արևելքցի մի շատ իմաստուն մարդու հետ... Արդյոք որևէ անգամ դուք ձեր կյանքում լսե՞լ եք akâsha բառը:

Բուրթոնը դեպի ճակատը տարավ արևի ակնոցը և ամուր փակեց իր աչքերը՝ լույսից պաշտպանվելու համար.

— Akâsha՞, սա շատ նման է Թեոսոֆիային (Theosophie)...

— Ճիշտ այդպես, պարոն Բուրթոն, թեոսոֆները, հատուկ նախասիրությամբ, օգտվում են վեղաներից: Akâsha–ն գրեթե մի անթարգմանելի հասկացություն է՝ վեղաներից առնված: Ինձ համար մի անմոռանալի գրույցի ընթացքում իմ չափազանց իմաստուն ընկերն akâsha–ն բնութագրում էր իբրև բանական մի տարր, իբրև ծավալումը սկզբնական արտացոլման, որն անմիջականորեն բխում է արարիչ Աստծուց, որպեսզի, համաձայն ֆիզիկայի օրենքի, մշտահոլով թանձրացյալ վիճակներում սուզվի, սկսած լույսի ճառագայթից և ջրածնի ատոմից, մինչև հաստատուն մարմինները: Համաձայն ավանդության՝ հարցը մի գերզգայուն մատերիայի մասին է, որը բազմաթիվ անգամ ավելի հին է, քան աշխարհը, հին և Աստծուն շատ ավելի մոտիկ, քան լույսը: Ի դեպ, իմ ընկերը, որը նաև գիտական կատարյալ կրթության ուներ, akâsha–ն բնորոշելու համար գործածում էր *պատկերների եթերային–անդրադարձիչ* կամ *երևույթների եթերային–անդրադարձիչ* արտահայտությունը...

Քարթրայթը չշարունակեց: Բոլորի նայվածքները սևեռվեցին նրա՝ գնդակի նման ողորկ գլխին և ներկված հոնքերին: Երբ նա խոսեց մաթեմատիկական հանգստին նմանող անտարբերությամբ, մեծապես գրավիչ ազդեցություն թողեց իր ունկնդիրների վրա: Միայն թե Քլեյթոն Ջիվսը, առաջին անգամ ներկա լինելով նման խոսակցության, դառնացած շրջեց իր դեմքը դեպի այլ կողմ: Երևի Քարթրայթն ուզում էր հանդիմանել նրան իր դժգոհ կեցվածքի համար, երբ ասաց.

— Շուտով պարզ կլինի, թե դեպի ուր եմ գնալու...

— Եթերային պատկերներ...— գրեթե սրդողելով կրկնեց մայոր Շեփսթոնը: Թվում էր, թե այդ բառերը ձանձրացնում են նրան և անհանգստացնում:

— Այս բոլոր անունները,— հավելեց Քարթրայթը,— միայն թույլ վերապատումներ են՝ նպատակ ունենալով ըմբռնելի դարձնել այն, ինչ որ անըմբռնելի է: Կարող ենք շատ լավ պատկերացնել, օրինակ, որ լույսի ճառագայթն աստղից աստղ գնալու իր սրընթաց ճանապարհին մինչև որոշ մի աստիճան հավերժացնում է կամ ժամանակի կախվածությունից զրկում իր հետ տարած բոլոր պատկերներն ու դեպքերը: Akâsha–ն, սակայն, այս գերբնական տարրը, մենք չենք կարող ըմբռնել կամ պատկերացնել, քանզի akâsha–ն նախալույսն է, սկզբնական լույսը: Համաձայն

ընկերոջս ուսմունքի՝ akâsha–ն իր յուրաքանչյուր մասնիկի մեջ, ինչպես նաև տարածության յուրաքանչյուր կետում, անըմբռնելի կերպով միաժամանակ պարփակում է կոսմոսի բոլոր երևույթներն ու դեպքերը: Եթե մեկը որոշի թույլ համեմատություններ կատարել, ապա այստեղ կարող է խոսել ֆիլմերի մի խորհրդավոր արխիվից, պատկերների մի կատարյալ հավաքածուից, մի ամբողջական ժամանակագրությունից, տիեզերական գրանցումներից, արարչության ոգու հավիտենական և հարանորոգ հիշողությունից: Եվ քանի որ akâsha–ն հնարավորություն ունի տարածվելու ամեն ինչում առավել, քան լույսը, այդպես էլ ներթափանցում է նաև մեր մեջ: Նույնիսկ մեր անձնական հիշողությունը գոյություն ունի միայն շնորհիվ akâsha–ի: Առանց akâsha–ի պատմություն գրելու ոչ մի ձգտում գոյություն չէր ունենա: Այն, ինչ որ դուք, սիրելի Բուրթոն, Déjà vu եք անվանում, իմ արևելքցի ընկերը բացատրեց, թե դա akâsha–ի հանկածակի խտացումն է, որը մեր հոգում զուր տեղը փորձում է հասնել գիտակցության...

— Մի գիրք հիշեցի,— ասաց Դորոթի Քովելը՝ կիսախուփ աչքերով,— այն կոչվում է՝ An Adventure...

Նա մի պահ սպասեց, ապա տեսնելով, որ ոչ ոք ծանոթ չէ գրքին՝ համարձակվեց շարունակել.

— Հեղինակները երկու անգլուհիներ են, մեկի անունն Էն Մորերլի է, իսկ մյուսինը մոռացել եմ: Կարծում եմ, թե երկու տարեց տիկիններ են՝ պահպանողական ծագումով, զգաստ, եռանդուն, ամեն տեսակ աղանդավորական կասկածանքներից և միստիկական երևակայություններից վեր: Ըստ այդմ, նրանք չոր և վավերագրական ոճով պատմում են, թե ինչպես մի անգամ, առանց որևէ կասկածի, սկսել են զբոսնել Վերսալի պալատի զբոսայգում, երբ անսպասելիորեն դեմ առ դեմ են ելել մի խումբ պալատական հովիվների և հովվուհիների... Կարծեմ՝ դեպքը տեղի է ունեցել գարնանային մի օր, 1905 թվականին... Պալատականները՝ ռոկոկո ոճի հովվական զգեստներ հագած, բոլորովին իրական էին, ամենևին ուրվականին հատուկ վարմունք չունեին, այլ զբուցում էին և կատակում անհոգ կենսունակությամբ: Ոչինչ չէր մատնում, որ այդ ամենը կարող էր խաբկանք լինել, թեև այդպիսին էր, անկասկած, միայն թե հոյակապ ներկայացված: Այդ երկու հարգարժան տիկինները ցերեկվա պարզ լույսով տեսնում են ամեն մի կոճակ, բրոշ, ճարմանդ, զանազանում են դեմքերը, նկարագրում են

բազմաթիվ՝ արդեն իսկ անհետացած շինությունների կառուցվածքն ու դիրքը, որոնք հանկարծ ճիշտ իրենց տեղերում են հայտնվում, ինչպես, օրինակ՝ Մարի Անտուանետի կովերի նշանավոր գոմը... Մասնագետները ստուգում են նրանց տեղեկությունները, և բոլորն էլ կետ առ կետ համապատասխանում են իրականությանը... Տարօրինակ կերպով անգլուհիները պալատական զբոսայգի կատարած իրենց հաջորդ այցելության ժամանակ մի անգամ ևս հայտնվում են այդ զարմանալի երևույթի առաջ... Նրանց գիրքը մեծ իրարանցում է առաջացնում... Ես չգիտեմ, պարոն Քարթրայթ, եթե ուրվականների այս ճշմարիտ պատմությունը պատշաճում է այստեղ...

— An Adventure–ի մյուս հեղինակն է Էլիանոր Ժուրդեյնը,— մեղմությամբ բացատրեց պրոֆեսոր Քարթրայթը:— Ես ձեզ շնորհակալ եմ, օրիորդ Քովել, ձեր պատմածն այստեղ միանգամայն տեղին է... Գոյություն ունեն վայրեր, որոնք հագեցած են պատմական եղելություններով, դրանք են աշխարհի կենտրոնները: Այնտեղ է կուտակվում akâsha–ն՝ ժամանակագրության եթերային խորհրդավոր պատկերների ամբողջությունը: Այնտեղ անցյալը թափանցում է ներկայի մեջ և միավորվում նրա հետ՝ վեր հառնելու անհամբեր պատրաստակամությամբ: Երևի սրանով են բացատրվում նաև մեր այսօրվա խոսակցությունները Մեռյալ ծովի ափին, քանզի ուրիշ ոչ մի տեղ անցյալը նման խորությամբ չի միախառնվում ներկային, ինչպես հենց այստեղ...

Մայոր Շեփսթոնն արևախանձ ու չոր դեմքը մռայլ հենեց իր երկու ձեռքերին.

— Ուրեմն այս աշխարհը լեցուն է մեռելներով... Մտածել, որ մարդը որևէ ժամանակ, չարաշահելով այդ ժամանակագրական արխիվը, կարող է դառնալ մի կանոնավոր մեռելահարցուկ... սարսափելի է... սարսափելի...

— Խնդրում եմ, միայն նայեք: Դեպի այն կողմ նայեք...

Այս սուր բացականչությունը Բուրթոնի կողմից էր, որը տեղից վեր էր ցատկել և, դառնալով ինքն իր շուրջը, բազուկը երկարած ցույց էր տալիս մի տեսարան: Բարձրացող արևի հետ աշխարհն իսկապես զգալի կերպով կերպարանափոխվել էր: Մեռյալ ծովի լեռներն անհետացել էին: Հեռվում այլևս չէին պսպղում բյուրեղյա ամրոցները, ակնեղեն աշտարակները: Միայն հերձաքարե ստվերներ էին իրենց անպատում թախիծն արտացոլում աստվածային պատժի ջրերում: Ամբողջ լույսը կուտակված էր կոնաձև մի

լերկ ու ճաքած ժայռի վրա, որը բարձրանում էր Երիքովի օազիսի հյուսիս–արևմուտքում: Արևը դիրք էր բռնել ուղիղ ժայռի գագաթին և կախարդելով նրա նյութեղեն էությունը՝ այն վերածել էր մանուշակագույն ծալքերով մոխրագույն շղարշների մի գերբնական կերպարանքի: Երևույթն իսկապես այնպիսին էր, որ կարծես akâsha–ի նման եթերային մի խորհրդավոր բան ներթափանցել էր քարի էության մեջ և կերպարանափոխել այն:

— Նայեք Կվարանտանա (Quarantana) լեռանը,— ասաց Բուրթոնը դանդաղորեն,— դա «փորձության լեռն» է, որի վրա Քրիստոսը լրիվ քառասուն օր ծոմ է պահել, նախքան սատանայի մերձենալը Նրան և նրա կողմից փորձության մատնվելը...

Բոլորն էլ այդ կողմ նայեցին և լուռ մնացին: Գուցե վախենում էին, թե որևէ մեկն ինչ–որ մի հանդուգն բան կասի: Դրա փոխարեն, սակայն, հնչեց մի ձայն, որը հազիվ թե կարողանում էր զսպել իր անհամբեր կոպտությունը.

— Կարծում եմ, Դորոթի, որ պետք է անմիջապես մեկնենք այստեղից, եթե ուզում ենք ճիշտ ժամանակին հասնել Երուսաղեմ...

Քլեյթոն Ջիվսը վերջապես խոսեց: Միանգամից բոլորն էլ սկսեցին շտապել: Մայոր Շեպսթոնը կանչեց մատուցողին: Ապա Մեռյալ ծովի ափի աղային փայլուն հարթության վրայով նրանք ուղղվեցին դեպի իրենց սպասող ինքնաշարժը: Դորոթի Քովելը և Քլեյթոն Ջիվսը մի քանի քայլ հետ մնացին:

— Բայց ի՞նչ պատահեց ձեզ այսօր,— հարցրեց կինը:

— Ոչինչ,— պատասխանեց Ջիվսը:

— Ձեզ այդքան խանգարե՞ց մեր խոսակցությունը:

— Այո՛,— ասաց Ջիվսը:

Նա կողքից ուշադրությամբ նայեց նրան.

— Ձեզ հետ դժվար է...

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ԵՐՈՒՍԱՂԵՄ

Այոր Շեփսթոնը բավականին լայն մի ավտոմեքենա ուներ: Եվ քանի որ պատերազմում վիրավորված լինելով՝ աջ բազուկը թույլ էր մնացել, նա անձամբ չէր կարողանում վարել այն: Քլեյթոն Ջիվսն առավոտվա ճամփորդության ընթացքում արդեն ցանկություն էր հայտնել նստել առջևում՝ վարորդի մոտ: Հիմա նույնպես, առանց հարցնելու, նա ընտրել էր այդ նույն տեղը: Այդ իսկ պատճառով Դորոթի Քովելը, Քարթրայթը, Բուրթոնը և մայորը կարող էին առանց լսելի դառնալու՝ հագիստ շարունակել իրենց խոսակցությունը, որովհետև ապակիով բաժանված էին իրենց առջև նստողներից: Ով գիտե, սակայն, եթե Ջիվսը նրանց լսելու լիներ, ինքն էլ պիտի ուզեր նրանց հետ նստել: Նրա տանջահար հոգին սուզվել էր մի խճճված մենախոսության մեջ: Մյուս երեք տղամարդիկ համարյա ոչինչ չգիտեին Քլեյթոն Ջիվսի մասին, քանի որ նրա հետ հազիվ մի քանի օր առաջ էին ծանոթացել Դորոթի Քովելի միջոցով: Վերջինս, ըստ երևույթին, մայրական վերաբերմունք ուներ նրա նկատմամբ: Ի դեպ, նախորդ օրը նա թույլ էր տվել իրեն մի հարգալից ակնարկ անել, որի համաձայն ինքը, հանձին Ջիվսի, տեսնում էր ոչ միայն մեծատաղանդ գրողին, այլև իսկական բանաստեղծին, թեև այս կարծիքը հիմնված էր նրա սակավաթիվ հրատարակությունների վրա: Պրոֆեսոր Քարթրայթն ու մայոր Շեփսթոնը, որպես պաշտպանություն, անմիջապես խոստովանեցին, որ իրենք բանաստեղծական ոգու նշույլ անգամ չունեն: Բուրթոնը նախասիրաբար կարդում էր բանաստեղծություններ, բայց որպես հնությունների վրա խենթացող և գեղապաշտ անձ՝ բավականանում էր Պինդարոսից սկսած մինչև Սվինբուռնի բանաստեղծություններով, իսկ նոր կամ բոլորովին նորագույն շրջանի գրականության վերաբերյալ հմտություն ձեռք

բերելը համարում էր մի անարգալից հավակնություն: Բայց Քլեյթոնի ունեցած գրական տաղանդը չէր, որ իր նկատմամբ հետաքրքրություն էր առաջացնում: Նրա՝ ներքին մռայլությունից ազդված դեմքը, այդ օրվա պահպանած անտանելի լռությունը, ինքնամփոփ նստելը, թեև ոչ նեղսրտած, մեծապես մեկուսացնում էր նրան: Կարճ ասած, նրա անձի թողած ընդհանուր անհանգստացնող ազդեցությունն այժմ ստիպում էր մյուսներին դուրս գալ իրենց ստացած դաստիարակության նորմերից և բոլորովին հակառակն անել՝ այդ օտարականի մասին տեղի–անտեղի հարցեր տալով Դորոթի Քովելին: Պարզ է, որ մյուս երկու տարեցների փոխարեն Բուրթոնը պիտի ստանձներ հետաքրքրվողի դերը: Այսպիսով, Ջիվսի անձը ներառյալ, գոյանում է մի յուրահատուկ հնգյակ, որի մեջ ինքն է դառնում առաջնորդող ձայնը՝ թեկուզ միայն որպես ներքին մենախոս: Ավտոմեքենայի շարժիչը, որ հսկա զառիվերներ պիտի հաղթահարեր, ոռնում է մի տխուր Cantus firmus: Եվ Հուդայի անապատի ողբերգական ամայությունը՝ իր կարմիր և դարչնագույն երանգի քարեղեն կնճիռներով, ժայռերի խոռոչներով, անդունդների պռունկներով, խոր ձորերով, որպես մի արտաքին պատկեր ներքին բզկտվածության, անցնում է իրենց կողքով՝ իբրև կարևոր ուղեկից:

Որևէ մենախոսության վերարտադրումը կապված է միշտ ինչ–որ չափով անճշտությունների հետ: Ինքն իրեն դիմելիս մարդը չի ասում ոչ «ես» և ոչ էլ «դու»: Ներքին կամ հոգևոր կյանքի կրողը ոչ միտքն է և ոչ էլ խոսքը, թեև այս երկուսն էլ համագործակցում են այդ ներքին կյանքի հետ: Երկար ժամանակ, նախքան որ հոգին իր հուզումները խոսքի վերածեր, այդ հոգին ողողվում է անհաշիվ պատկերներով: Եվ դեռ պատկերներն էլ, ընդհանրապես, ներքին խոհերի ամենախոր խավը չեն: Իրականում կարելի էր հավատալ մի բանական տարրի, ինչպիսին է Քարթրայթի akâsha–ն, հավատալ բջջային մի նուրբ հիմնահյուսվածքի, ուր զարգանում են հոգեկան ֆունկցիաների պատկերներն ու տպավորությունները: Քարթրայթը և ինքնաշարժի հետևում նստած՝ մյուսներն այլևս չեն մտածում ոչ akâsha–ի և ոչ էլ այն խոսակցությունների մասին, որոնք առաջացել էին մի տեսարանից, որը, ըստ երևույթին, Այդտեղի և Այնտեղի միջև ընկած ծայրագույն սահմանին էր: Վերափոխվելու՝ աշխարհի մարդկանց ունեցած հոգևոր ուժի շնորհիվ նրանք թոթափել էին բնազանցությունը (metapysik), և միայն զուտ բանականությամբ առաջնորդվելով՝ նստել էին այդտեղ:

Միայն Ջիվսը դեռևս չէր կարողանում ձերբազատվել Մեռյալ ծովի ափին եղած զրույցների տպավորությունից, որոնց ինքը մերժել էր բերել իր մասնակցությունը: Նա շարունակում էր անշարժ նստել ինքնաշարժի վարորդի մոտ՝ ուղիղ առաջ նայելով Հուդայի երկրին և անապատին:

— Հիվանդ եմ:— Այս եզրակացությամբ սկսեց նա իր մենախոսությունը,— միշտ հիվանդ եմ եղել՝ սկսած իմ երեխայությունից, բայց իմ հիվանդության ինչ բնույթի լինելը երեկ նոր հասկացա, երբ այցելեցի Երուսաղեմում բնակվող նյարդաբանին... Ի դեպ, եթե ինքս ինձ ներշնչած լինեի, այսինքն՝ մտացածին կամ լոկ սովորական մի հիվանդ, ապա պիտի չսպասեի երեսուներեք տարեկան մի մարդ դառնալուն, որպեսզի նոր երեկ, առաջին անգամ լինելով, խոստովանեի իմ հիվանդ վիճակը մի բժշկի... Մորս հետ դրա մասին երբեք չեմ խոսել, իսկ Լեոնորային միայն հարևանցի ակնարկել եմ նրա մահվանից շատ քիչ ժամանակ առաջ... (Երբ մենք սիրահարվեցինք, ես նրան տվեցի Լեոնորա անունը, իսկ հիմա, երբ արդեն մեռած է, տարօրինակորեն թվում է, թե նա ինձ է ներկայանում՝ վերադարձած իր նախկին Միլդրեդ անվանը...): Նա միակն էր, որը կկարողանար ինձ հետ կրել այս բեռը, չնայած որ այն ժամանակ այնքան էլ լուրջ չվերաբերվեց իմ զգուշավոր ակնարկներին... Անշուշտ թե թոքախտը, օրինակ, իմ ունեցածից շատ ավելի ծանրակշիռ էր... Այդուհանդերձ, ես զգում էի, թե ինչպես եմ օրեցօր անհույս սպառվում, ինքս ինձնից և շրջապատից օտարանում... Այլևս պիտի չկարողանամ նորից մի տող անգամ գրել, քանզի հիվանդությանս գիտակցությունը խլում է ինձանից նույնիսկ ապրելու ախորժակս... Ինձ ծիծաղելի է թվում այն ամենը, ինչը հուզում է իմ ժամանակակիցներին, ինձ ձանձրացնում են նրանց ժամանակավրեպ գրքերը, աստղերի չափ անսահման հեռու եմ պահում ինձ նրանցից... Արդյոք սա՞ է իսկապես հոգևոր մահը... Ինչքան անշնորհք եմ պահել ինձ այսօր Մեռյալ ծովի ափին... Այս մարդիկ, իհարկե, չէին կարող կռահել, որ Déjà vu–ի անիծյալ հիշատակումով իրենց մատն իմ վերքին էին դնում... Նրանք չէին կարող իմանալ, որ նման խոսակցություններն ինձ վախ էին պատճառում և դառնությամբ լցնում... Ես բժշկին պետք է պատմած լինեի, որ երկար ժամեր տևող ընկճվածությունը, որն ինձ չարչարում էր նախքան ունեցած նոպաներս, միշտ կապված էր այն զգացումի հետ, թե՝ «սա արդեն տեսել եմ, սա ինձ հետ արդեն մի անգամ պատահել է», ինչպես նաև

կապված էր այն սարսափելի և անօգուտ ջանքերի հետ՝ հայտնաբերելու, թե իրականում ինչ կարող է լինել սա, որ մի անգամ արդեն ապրել եմ... Այսօր նորից հինգշաբթի է... Վերջին չորս հինգշաբթիներին համապատասխանաբար կրկնվել են այս դեպքերը մեկը մյուսի հետևից, միշտ երեկոյան դեմ... Այսօր, սակայն, պետք չէ՝ նույնը պատահի, և հենց այս պատճառով էլ ժամադրվել եմ Դորոթիի հետ, որպեսզի ցույց տամ նրան Երուսաղեմի տաճարի տեղը: Արդարև, մեկնումեկի հետ եղածս ժամանակ նման նոպաներ երբեք չեմ ունեցել... Զգո՛ւյշ, սակայն, ինչո՞ւ եմ այս մասին այսքան ապահով... Իրականում ես այս առնչությամբ բոլորովին էլ ապահով չեմ... Լեոնորայի մահից սկսած, որքան որ նա հեռանում է ինձանից, այնքան իմ մեջ ավելի է վատանում ամեն ինչ մեկ շաբաթից մյուսը... Այն երեք տարիներին, որ մենք միասին ենք ապրել, ես համարյա լրիվ ձերբազատված եմ եղել իմ հիվանդությունից, այնպես որ եթե ես այդ մասին ակնարկած չլինեի, նա ոչ մի բան պիտի չիմանար... Լեոնորան իմ փրկությունն էր, և մարդ իր սեփական փրկության համար չպետք է ամաչի... Շատ վատ կլիներ, եթե ես դրա համար ամաչեի... Արդյոք հոգեպես այնքան սնա՞նկ եմ, որ ինձ նրանով մխիթարեմ, թե ունեցածս, վերջիվերջո, մի ազնվական հիվանդություն է... Հնում այն նույնիսկ «սրբազան հիվանդություն» էին անվանում: Նրանով էին տառապում ամենանշանավոր մարդիկը, որպիսիք են որոշ մարգարեներ, Պողոս առաքյալը, Դոստոևսկին... Նրանք այս հիվանդությունից նույնիսկ ստանում էին իրենց վիթխարի ուժը... Իսկ ես նրանից ստանում եմ միայն գերհոգնածություն և անդամալուծություն: Այո՛, երևի սա կապ ունի նաև հոգեկան արժեքներից դատարկված այս ժամանակաշրջանի հետ, որը, ինչպես մի կատաղած *բուլդոգ* շուն, կառչած է տվյալ պահի իրականությանը, որը կարիք ունի բոլորովին տարբեր առողջական վիճակների և հիվանդությունների, քան իմ ունեցածները... Ի դեպ, բժիշկը *«Էպիլեպսիա»* արտահայտությունը չօգտագործեց, այլ ինձ դա զգացնել տվեց... Այսպիսով, ինքն էլ այդ բառից ամաչեց... Ճիշտ է, փողոցում դեռ երբեք չեմ ընկել՝ գիտակցությունս կորցրած, բերանիցս փրփուր չի վազել, բթամատս չի պրկվել բռունցքիս մեջ... Հիշյալ բժիշկը մի իսկական ուշագնացությունից ավելի՝ այն անվանում է մի կատարյալ «բացակայություն», որն արդյունք է արյունը ուղեղին միանգամից չհասնելուն... «Բացակայություն», գեղեցիկ բառ... Գուցե մի դաժան ուշագնացություն ավելի տանելի կլիներ, քան այս

«բացակայությունը», այս անըմբռնելի դատարկությունը, անձնավորության կամ ես–ի այս ամբողջական կորուստը կամ ոչնչացումը, որը բոլոր տեսակի ոչնչացումներից ամենասարսափելին է... Օ, ո՛չ, ո՛չ, սա զարհուրելի է, թող Աստված օգնի ինձ, միայն թե սա չպատահի, ոչ մի ուշագնացություն, գեթ այսօր ոչ մի անկում Դորոթիի առաջ... Հիմա, երբ վախենում ես դրանից, այն գնալով ավելի է մոտենում քեզ... Եվ ես չեմ կարողանում մտածմունքս շեղել դրանից... Այժմ տեսնենք, թե ինչպես պատահեց, երբ վեց տարեկանում, առաջին անգամը լինելով, անհանգստացա... Մորս հետ գնացել էինք ծովափնյա մի փոքրիկ հանգստավայր: Ծովի տեսարանը, որը նման էր մինչև երկնքի կեսը բարձրացող հսկա և աստվածակառույց մի պատի, իմ մեջ առաջացրեց առաջին անհանգստությունս... Այդ ժամանակ ուշագնացությունս երկար է տևել...— «Չափազանց ջղային մի երեխա է»,— ասել է պանդոկի տիրուհին, ուր մայրս հուսահատ տարել է ինձ՝ անկողին դնելու... Ես, սակայն, ոչ միայն կատարելապես հիշում եմ ծովի տեսքը, այլ դրա հետ նաև գոյություն ուներ մի հարց, որը խեղդում էր ինձ. «Ինչո՞ւ է այս ամեհի և ամենազոր Աստվածը մնում իր սահմանների մեջ, ինչո՞ւ է Նա կանգ առնում ավազե մի արհամարհելի ու նրբաշերտ եզերքի առաջ, ինչո՞ւ չի քանդում իր սահմանները և առաջ չի գնում, որպեսզի գրկի մեզ՝ իմ մորն ու ինձ»... Իմ փոքրիկ հոգին հայտնաբերել ու տեսել էր Աստծուն Հյուսիսային ծովի այդ մռայլ պատի միջով և դրա հետևանքով նվաղել: Այս դրվագով է սկսվել իմ հիվանդությունը... Եվ հիմա, համարյա մի հավիտենականություն անց, Սուրբ Գրքում մի անգամ ևս դեմ հանդիման եմ երեխայական վաղ շրջանում ծովից ստացած սարսափելի զգացողությանս, դա էլ հենց Երեմիայի մարգարեության գրքում... Վիթխարի գեղեցկությամբ օծուն տողեր... Ես ինձ համար հիմա կարտասանեմ դրանք ցածրաձայն, գուցե օգնեն ինձ...

«...Ավազը ծովին սահման կարգեցի, հավիտենական հրամանով, որ չանցնի դրանից այն կողմ, թեկուզ ալեկոծվի՝ չկարողանա ոչինչ անել, թեկուզ կատաղեն նրա ալիքները, այդուհանդերձ, չկարողանան սահմանն անցնել...»:

Ձիվսը թեթևակի հազաց, որովհետև վարորդն արդեն երկրորդ անգամ էր, որ գաղտագողի նայում էր իր վրա, ապա մի կողմ շրջեց գլուխը՝ թաքցնելու համար իր թաց աչքերը: Ինքնաշարժը հռնդաց և լարված առաջ շարժվեց՝ մագլցելով ճանապարհի խիստ զառիվեր մի հատված:

— Ինչպե՞ս թե, նրա ազգանունը Ջիվս չէ՞,— հարցրեց մայոր Շեփսթոնը, որը լավ չէր հասկացել Դորոթիի ասածը: Վերջինս տալիս էր իր բացատրությունները շատ ցածր ձայնով, որպեսզի առջևում չլսվի՝ հակառակ ձայնամեկուսիչ ապակու:

— Ո՛չ, այդպես չէ: Թեև ճիշտ է, որ նա կոչվում է Ջիվս... Իրականում պարոն Ջիվսը նրա մոր երկրորդ ամուսինն էր, որը որդեգրել էր նրան, երբ նա երեք տարեկան մի երեխա էր: Նա ուրիշ ազգանուն երբեք չի կրել: Այդուհանդերձ, պարոն Ջիվսը նրա հայրը չէր, այլ ոմն Պադերբորներ...

— Սկզբից ևեթ ինձ թվում էր, թե, հակառակ իր ազգանվանը, նա զուտ անգլիացի չէ,— հայտարարեց Շեփսթոնը՝ մեջքով դեպի հետ կոթնելով՝ որպես թե գոհացուցիչ կերպով լուծած լիներ մի դժվարին հարց: Դորոթի Քովելը պարտք համարեց հակաճառել.

— Այս ամենը ես ձեզ չեմ պատմում որպես բամբասանք, ինքը՝ Ջիվսը, այս մասին խոսում է բացահայտ կերպով...

— Նման բաներ պատահում են,— կարծիք հայտնեց Բուրթոնը բարեհոգությամբ:

— Չե՞ք կարծում, որ նա արևելքցու տեսք ունի,— հարցրեց Դորոթին: Դրան պարոնայք պատասխանեցին միաձայն.

— Ոչ ուղղակի արևելքցու... այլ ավելի՝ օտարականի...

Դորոթի Քովելը մեղմ շեշտով ասաց.

— Ինձ թվում է, թե նա ավետարանական ժամանակներում ապրած մեկի կերպարանքն ունի... Ինչ-որ մի առաքյալ՝ իտալական մի կտավի ֆոնին նկարված... Դրա համար, անշուշտ, պետք էր մի փոքրիկ մորուք աճեցնել...

— Եվ դուք, օրիորդ Քովել,— ասաց պրոֆեսոր Քարթրայթը, որ նստել էր Դորոթիի մոտ՝ իր համարյա փակ շրթներով և առանց մեծ հետաքրքրության,— դուք, անկասկած, վաղուց եք ծանոթ եղել պարոն Ջիվսի հետ...

— Շատ ավելի վաղուց, քան այն, որ կկարողանամ հայտնել... Մենք երկուսս էլ դեռ երեխաներ էինք, երբ փողոցում իրար հաճախ էինք տեսնում, որովհետև մեր ընտանիքներն իրար հարևանությամբ էին ապրում... Ջիվսին, սակայն, ես շատ ավելի ուշ իսկապես ճանաչեցի, դա էլ Փարիզում՝ նրա ամուսնությունից քիչ առաջ... Մենք, այո՛, նույնանման մի մասնագիտություն ունեինք, մի բան, որ ինքն իր կողմից համառորեն ուրանում է:

Ավտոմեքենան մեծ ցնցումով կանգ առավ մի պահ: Մուգ կապույտ երկինքն իր հորիզոնի շեղբով, ինչպես մի հսկա գիլյոտին, մխրճվում էր լեռներով շրջապատված անապատի մեջ: Ձայներ էին լսվում և ուխտավորների խռպոտ մի երգեցողություն: Դրանք արաբ ուխտավորներ էին, որոնք խայտաբղետ և անկանոն թափորով ուխտի էին գնում դեպի Ներբի Մուսա, որպեսզի այնտեղ հարգանք մատուցեն Մովսես մարգարեի առասպելական գերեզմանին: Ճանապարհի մի հատվածից ճյուղավորվում էր մի կողմնակի ուղի, որը տանում էր դեպի ուխտավայրի այդ սրբազան կատարը: Այնտեղ էր կուտակվում ուխտավորների ամբոխը, որի երգեցողությունն ամենևին էլ նման չէր մի բարեպաշտ երգչախմբի, այլ ավելի՝ Ալլահի դեմ մի դաժան ապստամբության: Սպիտակ, դեղին և դարչնագույն պատմուճանների խառնախռիվ ալեկոծումների, նաև ֆեսերի և գույնզգույն փաթթոցների մոլեգին պարերի միջից աչքի էր զարնում մի պարարտ և սպիտակ ձի՝ ոսկեհյուս թամբածածկույթով, որի վրա օրորվում էր մի իսլամ *ոլեմայի*՝ մետաքսե կանաչագույն պատմուճան հագած անճոռնի կերպարանքը: Մուգ կանաչով պարուրված այդ հսկա ձիավորի աջ և ձախ կողմերում քայլում էին դերվիշները՝ բաց կանաչ գույնի դրոշներ բռնած: Մայոր Շեփսթոնը, վաղուց ծանոթ լինելով երկրին, ծիծաղելով բացատրեց, թե մուսուլմանները շատ լավ գիտեն, որ Մովսեսը երկրային ոչ մի գերեզման չի ունեցել: Ալլահը, սակայն, «առ ի բավականություն ճշմարիտ հավատացյալների», իր առաջին մարգարեի նշխարները տարել է Ներբի Մուսայի կատարը, որպեսզի դրանք ամեն տարի՝ զատկական տոների ժամանակ, մեծարվեն այնտեղ իսլամը ճշմարտապես դավանողների կողմից:

Վայրի գույներով զարդարված աղմկարար ամբոխն ուրվականի նման արագ կերպով կլանվում է Հուդայի մռայլ ու գորշ անապատի կողմից: Բնությունն այդտեղ իսկապես ամեն տեսակետով թառամել էր, ասես ինչ–որ մի անըմբռնելի ոգի սպառել էր այն: Ավտոմեքենան հիմա արդեն թեթևացած ճռնչյունով և օրորվելով սահում էր մի զառիվայրի վրայով: Աջ և ձախ կողմերում տխրատեսիլ ավերակների ընդհանուր կույտերի միջից հանկարծակի նշմարվեցին աշտարակների նման ատամնավոր զանգվածներ: Պրոֆեսոր Քարթրայթն ամենայն հանդարտությամբ արձակեց իր վճիռը.

— Այստեղից բացի, աշխարհում ուրիշ ոչ մի տեղ հնարավոր չէ ըմբռնել մեղքի գաղափարը...

Ձիվսը, ինչպես ճամփորդության սկզբում, հիմա էլ շարունակում էր անշարժ նստած մնալ: Նա չէր նայում ոչ աջ և ոչ ձախ, ուշադրություն չէր դարձնում ոչ մի իրադարձության վրա. թվում էր, թե ոչինչ չի նկատում, ինչպես մի տեղաբնիկ, որի աչքերի համար ոչ մի նորություն չկա, որ տեսած չլինի: Այն, ինչ որ իր մեջ կատարվում է, և այն, ինչ որ, կոպիտ ասած, համարվում է մի մենախոսություն, երբեք չեն ընդհատվել ոչ արաբ ուխտավորների ներկայությունից, ոչ ավտոմեքենայի կանգ առնելուց և ոչ էլ նրանում նստածների խոսակցության աշխույժ ձայներից:

— Հիմա ես արդեն այս երկրում եմ,— նման հարցերով էր նա զբաղեցնում իր միտքը,— բայց ես նախապես երբեք չեմ մտածել լինել այս երկրում... Խե՜նթ ճակատագիր... Օ, ո՛չ, ճակատագիրը երբեք խենթ չէ, այլ միայն մենք ենք խենթ, բթամիտ և կույր... Եվ եթե ես ուզենամ նույնիսկ ինքս ինձ հարյուր անգամ էլ խաբել, դարձյալ պիտի շարունակեմ ամուր հավատալ, թե ամեն պատահմունք նպատակային է և ծրագրավորված... Երևի այլևս չկարողանամ իսկ աշխատել այս հավատամքիս պատճառով, որն ինձ տարբերում է ուրիշներից: Այն ամենը, ինչ ներկայումս գրվում է, հիմքում հակառակն է, այսինքն՝ հիմնված է անիմաստ և անկապակից համոզմունքի ու անհեթեթ զուգորդությունների վրա... Այս հարցերի վերաբերյալ ուրիշներն ազատ են, մինչդեռ ես՝ ոչ... Իմ էության ամենախոր ծալքերում շարունակում է բնակվել պայմանավորող լուծումների հին Աստվածը, այսինքն՝ պատճառահետևանքային պայմաններ հաստատող Աստվածը... Նա այստեղ է, իր տանը... Ո՞վ գիտե, գուցե Նա է ինձ հրապուրել այստեղ... Ինչո՞ւ Լեոնորան հանկարծ ճամփորդելու այդ հիվանդագին փափագն ունեցավ: Նա, ում պետք է այլապես աղաչեիր՝ ընդունելու ամենափոքր նվերն անգամ, ինչպե՞ս եղավ, որ իր առողջությունը վտանգող հենց այդ փափագն ունեցավ՝ ճամփորդելու դեպի Եգիպտոս: Նա բառացիորեն ասաց, որ ինքը կարծում է, թե կհիվանդանա, եթե չկատարի այդ ճամփորդությունը... Ես, որ ընդհանրապես հաճույքով եմ ճամփորդում, ինչո՞ւ այն ժամանակ մի ինչ-որ շատ վատ նախազգացում ունեցա, որը լեցուն էր ներքին և տևական զգուշացումներով: Ինչո՞ւ լռության մատնեցի այդ զգուշացումները և չընդդիմացա ճամփորդությանը: Եվ երբ Լեոնորան անմտորեն համառեց վարձել ջրի եզրի արաբական տան փոքրիկ բնակարանը, ինչո՞ւ պարզապես ոչ չասացի, երբ մեր բոլոր ծանոթները մեզ զգուշացրին

այդտեղ սովորաբար տիրող համաճարակի մասին: Մեր տնտեսական վիճակը բավարար էր մի ավելի լավ իջևան վարձելու: Ինչո՞ւ չհամոզեցի Լեոնորային ընդունելու հրավերը Նեղոսի վրա մի ճամփորդություն անելու՝ շատ լավ գիտենալով, որ դա մի առիթ կլիներ՝ ինչ-որ սարսափելի բանից փրկվելու... Ինչո՞ւ, ինչո՞ւ, ինչո՞ւ... Այս բոլոր «ինչո՞ւ»-ները մի անհատնում շղթա են կազմում պատճառների, որոնցում գոյություն ունեն դիտավորություն և առաջնորդում... Արդյո՞ք այդ խորհրդավոր առաջնորդումի նպատակն էր ամուսնության և մահվան հնարքով ինձ բերել Երուսաղեմ, ինձ՝ Քլեյթոն Ջիվսիս՝ Ջիվս կոչեցյալ ոչնչությանս, որն իրականում ոչ իսկ Ջիվս է: Քանզի ամենևին պատահականություն չէր, որ Դորոթի Քովելը, Լեոնորայի մահից երեք շաբաթ հետո, ինձ դուրս բերեց իմ ընկճվածությունից և համառորեն պնդում էր, որ ճամփորդեմ դեպի Սուրբ Երկիր... Եվ ինչո՞ւ Նախախնամությունն ինձ դեպի այս Սուրբ Երկիրը կանչեց: Արդյո՞ք նրա համար, որ ես, համաձայն իմ ծագման, պատկանում եմ այս երկրին... Մի՞թե ես ուրիշների չափ և նույնիսկ ավելի քրիստոնյա չեմ, անգլիացի և աշխարհաքաղաքացի... Իհարկե, դա այդպես է անշուշտ: Իմ հայրը հրեա Պաղերբորներն էր, որին ես երբեք չեմ հիշում: Նա շատ լռելյայն հեռացավ այս աշխարհից, որպես թե ուզենար, ի նպաստ ինձ, ջնջել իր հետքերը: Այնուամենայնիվ, նա պետք է որ ավանդապահ մեկը եղած լիներ, որովհետև չէր խնայել անգամ մորս և թույլ էր տվել, որ ինձ վրա կատարվի Ուխտի նշանը: Հետևաբար ես պատկանում եմ Ուխտին, և չնայած որ չեմ ճանաչել իմ հորը, այդուհանդերձ, նա իմ մեջ է, ինչպես իր հայրը և իր հայրերի հայրերն են իմ մեջ՝ սկսած առաջին հորից մինչև վերջինը... Եվ այս առաջին ու վերջին հայրը, իմ նախահայրերի Աստվածը, Նա է, որ ինձ հակասության մեջ է դնում այլոց հետ և ինձ համար տնօրինում մի անմեկնելի ճակատագիր... Որպեսզի մերձենամ Նրան, ահավասիկ շաբաթներ ի վեր սերտում եմ Սուրբ Գիրքը. ես, որ բոլորովին տարբեր տեսակի կրթություն եմ ստացել, համենայն դեպս, այդպես եմ կարծում: Իսկապես անհավատալի է, թե Սուրբ Գիրքն ինչպիսի՜ մեծ հաճությամբ է ողողում իմ ներաշխարհը, որպես թե փորձում է ինձ սիրաշահել այնպես, ինչպես որ ես եմ փորձում սիրաշահել նրան: Սա այլևս սովորական ընթերցում չէ, այլ վերադարձ է և հիշողություն, որովհետև առանց որևէ ճիգ թափելու և առանց որևէ դիտավորության մտքիս մեջ եմ պահում հարյուրավոր սուրբգրային

համարներ... Օրեցօր ես շատ բան ավելի խորն եմ հասկանում, քան իմ հայրենակիցները, որոնք երկաթյա կամքով վերատիրանում են այս երկրին: Ես, սակայն, շատ բան հասկանում եմ՝ իմ մեջ գոյություն ունեցող ցեղային երկրաժանման կամ էլ այդ երկրաժանման միավորվածության պատճառով, որն ինձ պայծառատես է դարձնում... Այնքան ժամանակ, որ Նա՝ Երկնայինը, կամենում է, որ մենք, մարդկային որևէ համայնքի հետ համեմատած, միշտ տարբեր լինենք, մեզ համար չկա ոչ մի բուժում, ոչ մի երկրային կարգավորում և ոչ մի գոհունակություն... Աստվածային հարազատ ճշգրտությամբ ինձ համար էլ փակ են փախուստի բոլոր ելքերը: Հավանաբար իմ հիվանդությունն էլ կապ ունի այդ անելանելի վիճակի հետ, որն սկսվեց այն բանից հետո, երբ ես, դեռ իբրև մի անգիտակից մանուկ՝ մեր մարդկային չափանիշով, տեսա Աստծուն իր ամբողջական անտեսանելիության մեջ... Բայց իմ ինչի՞ն կօգնի այդ ճանաչումը: Այսօր հինգշաբթի է, երեք ժամ հետո երեկո կլինի, երբ կլրանա իմ ժամկետը... Ոչինչ չի փրկի ինձ, և ոչինչ չկռահող Դորոթիի ներկայությամբ կընկնեմ գետնին, թերևս այս անգամ բերանիցս էլ փրփուր կվազի... Հիմիկվանից արդեն մեռնում եմ զզվանքից ու ամոթից... Պետք չէ՞ արդյոք ներողություն խնդրեմ և մի պատրվակով տուն վերադառնամ... Ամոթ զգալը սարսափելի է, բայց դրանից ոչ պակաս սարսափելի է նաև մենակությունը... Անխուսափելին մոտենում է, ես դա զգում եմ... Բժիշկն այս նախազգացումն «aura» կոչեց: Ես արդեն ժամեր ի վեր է, որ ապրում եմ այդ «aura»–ի մեջ, որը գնալով ահագնանում է... Անապատն ինչպե՞ս է հանկարծ կարմրել... Արդյոք ուրիշ անգամ տեսե՞լ եմ դա... Ես պետք է կենտրոնանամ այնպիսի մտածումների վրա, որոնք ավելի հզոր են, քան «aura»–ն, այսինքն՝ այն պատկերների վրա, որոնց առաջ ջնջվում է իմ սեփական ես–ը, այն ամենադաժան պատկերի վրա... երբ նա իր սնարում պառկած էր, և դեռ շունչ կար վրան...

Անցնելով անդնդախոր մի կիրճի միջով, որի արևելյան լանջին կանգուն էին հունական ուղղիչ մի վանքի դժվարամատչելի քարեղեն խցերը, ավտոմեքենան վերստին մագլցել էր մի նոր և բոլորովին անհարթ բարձրություն: Իսկ այժմ ճամփան իջնում էր դեպի մի լրիվ տարբեր աշխարհ: Կրաքարե ժայռերի կողերն ու ճեղքերը, կրային կավերի գորշ գույնը, անապատային նախկին շերտերից մնացած ատամնավոր և ուղղաձիգ կազմվածքները, որոնք դեռևս կրում էին հուսալքության մռայլ կնիքը, այժմ

պարզում էին բոլորովին անձև ու անկարգ մի տեսարան: Նրանց առջև բացվում էր մի լայնատարած հարթավայր՝ լի հողակոշտերով, մանրախիճերով ու ժայռաբեկորներով, որոնք միայն մեկ անփոփոխ գույն ունեին՝ չորացած արյան գույն: Այստեղ էր, որ Հուդայի անապատի ծանր հուսալքվածությունը և դեռ հիմա էլ չարին հակամետ արժանապատվությունն ընթանում էին դեպի վերջին կործանում, դեպի անարգ դժոխքը այն հոգիների, որոնք կամովին հանձնվել էին նրան: Շագանակագույն խճաքարերի և հողակոշտերի դիմաց, որոնք ցաքուցրիվ էին եղած ամբողջ շրջանով մեկ, մարդ կարծես թե երկրի վիթխարի գերեզմանատան առաջ լիներ՝ լեցուն գանգերով ու ոսկորներով, և մտաբերեր Վերջին դատաստանի օրը: Ճանապարհից այն կողմ՝ խանձված հողագուղձերի և մամռոտած քարերի խորքում, պպզել էր քոչվոր բեդվինների մի աղքատ ընտանիք: Չորս սև և անշարժ մարդկային ստվերներ, երկուսը չափահաս և երկուսը երեխա, մի ցածր վրան և սովից քար դարձած մի էշ առանձնանում են չորացած արյան գույնի ալիքավոր գետնից, ինչպես իր ավարտին հասած կյանքը, ինչպես դառն մրուրը մարդկության՝ իր վախճանին ընդառաջ: Մայոր Շեփսթոնը վայրն անվանեց.

— «Ադումիմ», այսինքն՝ «արյունոտ ուղի»: Կարմիր գույնը երկաթի ժանգի արդյունք է, որը վերջապես գոյություն ունի նաև արյան մեջ...

Բուրթոնը, որ նկատի չէր առել այս բացատրությունը, դիմեց օրիորդ Քովելին.

— Ինչո՞ւ է նա կապում այդ սգո երիզը:

— Մի՞թե մինչև հիմա չեմ խոսել այդ մասին,— զարմացավ Դորոթին,— դա մի իսկական ողբերգություն է... Ջիվսի կինը մահացավ Կահիրեում, Սուրբ Ծննդյան ժամանակ, քսաներեք տարեկանում, կարծեմ պոլինևրիտիսի հետևանքով... Նա միայն տասն օր հիվանդ պառկեց՝ ամբողջությամբ կաթվածահար եղած...

Պարոնայք լռեցին՝ իբրև նշան իրենց անտարբեր վշտակցության, որն արգելք չեղավ Դորոթիին՝ շարունակելու.

— Նա խնամեց նրան, ինչը որ քիչ անգամ է պատահում, որ մի տղամարդ խնամի մի կնոջ... Իսկապես դա մի հրաշք էր այս եսակենտրոն բնության մեջ... Եթե մի խեղճ կին երբևէ հիվանդանա, ամուսինը դա ընդհանրապես համարում է մի հանդուգն վիրավորանք իր սեփական անձի

կարևորության դեմ... Դրանից բացի, Միլդրեդը երբեք միջինից բարձր մեկը չէր, թեև շատ հրապուրիչ էր... Ի դեպ, նա օժտված էր իր սեփական հումորով... Մի զգայուն տղամարդ և մի զվարթամիտ կին, սա մի լավ խառնուրդ է, չե՞ք կարծում... Նրանց ամուսնությունն իմ ճանաչած գրեթե միակ երջանիկ ամուսնությունն էր... Երևի հենց այդ պատճառով էլ այդ խեղճ Միլդրեդը պետք է մահանար, որպեսզի դրա նմանն իրավունք չունենար գոյություն ունենալու...

— Այն մարդիկ, ովքեր ուժգին են սիրում, նրանք են, ովքեր շատ շուտ են մխիթարվում,— վրա բերեց մայոր Շեփսթոնը, որը տարեց և ջլապինդ մի ամուրի տղամարդ էր և այդ առումով միայն աննշան և էժանագին փորձառություններ էր ձեռք բերել: Ըստ երևույթին, նրա դատողությունը լրջորեն հունից հանեց Դորոթիին.

— Ջիվսի վերաբերյալ դուք չարաչար սխալվում եք... Ես ոչ ոքի չեմ ցանկանա նրա երկրորդ կինը դառնալ... Այդ մարդն իր մեջ կրում է անսահման վիշտ ու տխրություն...

Այնուհետև նա լռեց և հայացքն ուղղեց գրողի կորաքամակ մեջքին, որն ինքնին արտահայտում էր մի ահավոր տառապանք և հաստատում իր ասածը:

Քլեյթոն Ջիվսը խոնարհեցրել էր գլուխը, և իր նեղ ուսերը կախ էին ընկել դեպի առաջ: Սպառնացող նոպայի վախից նա մտքի աչքն էր բերում իր ներաշխարհի այն չսպիացող պատկերները, որոնք բոլորից, նույնիսկ հիվանդությունից էլ հզոր էին: Դրանք իր կյանքի այն ցավագին պահերն էին, որոնք միշտ պատրաստ էին ցանկացած պահի դուրս խուժելու մի թափանցիկ շղարշի հետևից: Իր ներքին մենախոսությունը հիմա այլևս չէր որոշվում բառերով ու գաղափարներով, այլ բացառապես այդ պատկերների ներթափանցող լույսով: Նա հիշեց Սարկավագուհիների հիվանդանոցի փոքրիկ ճերմակ սենյակը: Այն ավելի նման էր մի էժանագին իջևանատան սենյակի, քան թե հիվանդանոցի արդիական սենյակի, և, չգիտես ինչու, նրա միակ պատուհանն էլ ծածկված էր գորշ վարագույրներով: Վարագույրների շուրջը բզզում էին բազմաթիվ զզվելի ճանճեր: Ջիվսը ստիպված էր ձիու մազից կազմված մի սպիտակ քշոցով անընդհատ հեռացնել ճանճերին Լեոնորայի բարձից ու դեմքից, որն ամենևին չէր կարողանում շարժել իր մարմնի ոչ մի անդամը:

Այդուհանդերձ, նա իր գերբնական բարությամբ, քանի դեռ գիտակցությունն ու ձայնը տեղն էին, մանկական կատակներ էր անում ու ծիծաղում ամեն ինչի վրա, նույնիսկ բժիշկների, խնամողների, կահույքի, պատերի գույնի, վարագույրների և հատկապես ամենից շատ՝ իր սեփական անկարողության վրա: Բացառությամբ այն ժամերի, երբ նրա հոգին ցնցվում էր սարսափելի ցավերի մեջ, նա իր մահվան մասին միայն երկու անգամ էր հասկացրել Քլեյթոնին. հիվանդության առաջին գիշերը, երբ անդոհալից նայվածքով աղաչում էր նրան՝ կրկնելով. «Մի՛ թող, որ մեռնեմ»,— և այնուհետև՝ իր մահվան օրը, արյան փոխներարկումից հետո, երբ նվաղկուն ձայնով շշնջում էր նրան. «Թույլ տուր ինձ մեռնել»: Դա էր նրա կյանքին համահունչ վերջին կարճ նախադասությունը: Քիչ անց արդեն ամբողջությամբ բացվել էր այդ ճնշիչ սենյակի պատուհանը: Դա այնուհետև բաց կմնա հավիտյան: Եգիպտական վաղ գարնան այդ վճռական մուգ կապույտ օրը միշտ պիտի ողողի այդ պատուհանն իր արմավենիների, մրտավարդերի, ոսկեծաղիկ թփուտների, հեռվից երևացող Նեղոսի վրա երթևեկող առագաստանավերի և Պտահ աստծու՝ երկնքի ու երկրի միջև թևածող հազարավոր սրբազան բազեների տեսարաններով: Ոհ, ինչ դիպված, ժամանակի մեջ հավետ կանգ առած հենց այդ օրը պիտի դառնար մի այդքան գեղեցիկ օր: Ոչ մի անձրև, ոչ մի ավազախառն փոթորիկ պիտի չխանգարեին, չխոովեցնեին կամ չփչացնեին այդ օրը: Ջիվսը հայացքը պատուհանից շրջեց դեպի Լեոնորայի մահիճը: Նա այդպես կմեռնի հավիտյան, նրա հոգեվարքը երբեք չի կորչի: Դա է akâsha–ն, այն խորհրդավոր տարրը, որը միահյուսվում է մեր էության հետ և ենթակա չէ ոչնչացման: Ինչ երկար ու դժվար է մահանում մարդը: Լեոնորայի կիսաբաց շրթունքները դեռևս կարմիր էին վարդի կոկոնների նման, խոնավ, ինչպես մի փոքրիկ աղջնակինը: Այդուհանդերձ, բժիշկը բամբակե թրջված կտորներ է դնում նրա աչքերին, որպեսզի դրանք չչորանան, ապա գնում է: Եվ Քլեյթոն Ջիվսը բոլորովին մենակ է մնում հանգուցյալի հետ, որի վերջին որոշումը հիմա ինքն էլ էր ցանկանում դաժան անկեղծությամբ: Մահը, սակայն, ժամանակ է պահանջում և ախորժակով լափում իր զոհի երիտասարդությունը: Մի շնչառություն, և ևս մի հառաչալից շնչառություն՝ խորախոր խորքերից, որին անմիջապես հետևում է մի թեթև ու թույլ շնչառություն, որպես թե ամեն ինչ հանկարծ դեպի լավն է

ընթանում: Գաղտնիքը, որ մարդն այլապես գրեթե երբեք ուրիշից չի կարող իմանալ, սրտի ծանր բաբախմունքը, միայն այդ ժամին են հայտնի դառնում որքան արտակարգ, այնքան էլ հստակ, ինչպես ժամացույցի հետզհետե ընդհատվող ընթացքը և մշուշապատ հեռուներից լսվող զանգի ղողանջը: Այնուհետև վրա է հասնում անխուսափելի և իրական պահը, ամենից իրական, քան մյուս բոլոր պահերի ամբողջությունը: Անտեսանելի մի հսկայի հմուտ ձեռքն արագորեն անցնում է Լեոնորայի դեռևս կենդանի դեմքի վրայով և դժգունացնում ու աղավաղում այն…

— Երուսաղե՜մ,— գոռաց Բուրթոնի բարձր ու հնչեղ ձայնը, որ նույնիսկ Ջիվսին լսելի դարձավ: Ճանապարհը թեքվում էր դեպի Հովսափատի հովիտը և ապա անցնում ձորի բարձունքն ի վեր: Այնտեղ Կիդրոնի հեղեղատը Սուրբ Քաղաքը բաժանում էր Ձիթենյաց լեռից: Ներքևում՝ հովտի տարածքում, տարածվում էին կանաչների մեջ կորած բանջարանոցներ, իսկ քաղաքը բարձունքի վրա էր, և գարունն էլ դեռ իշխում էր այնտեղ իր շքեղությամբ: Ուռենիների խիտ շարքերը կամար էին կապել ու ծածկել ջրանցքները, որի պատճառով ոչ մի առու չէր երևում: Միայն Սելովամ գյուղի տների սպիտակ մանրապատկերները հարևանցի ողջունում էին հեռվից արագ ընթացող ուղևորներին: Ճանապարհը, սակայն, իր ձախ կողմն էր թողում այդ կենսուրախ տեսարանը և սկսում բարձրանալ դեպի լրջահայաց նոճիներն ու վայրենաբար ծռմռված ձիթենիները, որոնց անունով էր կոչվում այդտեղի լեռը՝ իբրև Ձիթենյաց լեռ: Նրանք անցնում էին հրեական գերեզմանատան կողքով, ուր երևում էին անթիվ-անհամար շիրմաքարեր՝ կողք կողքի, հավատարմության նրբաճաշակ քանդակներով օժտված: Վերջնական հարության հովիտը կպած էր Հովսափատին: Այնտեղ էին թաղված անցած դարերի ու հազարամյակների բարեպաշտ մեռելները: Մարդիկ ծովի վրայով աշխարհի բոլոր երկրներից գալիս էին, որպեսզի խոհեմ կերպով ընտրեն իրենց հանգստյան տեղը Երուսաղեմի դիմաց: Երկրի բոլոր մեռելների միջից միայն նրանք պիտի ունենան ամենակարճ ճամփան՝ հասնելու հարության, այսինքն՝ նույնքան քայլեր, ինչքան որ անհրաժեշտ է հովիտ իջնելու համար: Այնուհետև երևում էր Աբիսողոմի հիշատակին կանգնեցված տարօրինակ հուշարձանը՝ նման գլխիվայր շուռ եկած մի բաժակի՝ ջարդված հատակով: Հիսուսի ժամանակ էլ, երբ նա վերևից նայել է

դրան, նույն չափով է ավերված եղել, ինչպես այսօր: Եվ վստահաբար ինքը՝ Հիսուսը, հենց այդ վերևից՝ Գեթսեմանիից, ուր նոճաստանն է և իր տագնապի վայրը, նայել է դեպի ներքև...

Ամենից ազդեցիկ ու գերող ուժը, սակայն, գալիս էր այնտեղից՝ դիմացի կողմից, ուր այդ ժամին թվում էր, թե հովտի դիմացի ժայռի վրա երկնային ու երկրային Երուսաղեմները միաձուլվում են իրար: Լեռներից ամպեր էին բարձրանում և մարգարեական հանդարտությամբ ու լուսաթաթավ շերտերով կուտակվում քաղաքի արևմտյան մասի վրա: Արևի մայր մտնելուն դեռ շատ ժամանակ կար, սակայն այն արդեն երկնքի բոլոր անկյուններից հավաքել էր ոսկիները և բերել ու կուտակել կործանված տաճարի գտնված վայրի վերևում: Հետևում էին մնում աշտարակները, գմբեթներն ու մինարեթները՝ ստանալով մի անիրական ու վաղանցուկ փայլ: Այդ փայլը միայն կենտրոնական լայն մասին էր իրական լինելու մի հանգամանք հաղորդում՝ ծառայելով միայն այն նվիրական տարածքին, որը նշանավորվում էր իբրև գերազանց քաղաք՝ մնացյալ համեստ քաղաքների հետ համեմատած: Օմարի մզկիթը, որի բազմանկյուն կառույցը ծածկում է իր մեջ գտնվող *Մորիա* կոչվող ժայռի զոհարանը, թվում էր, թե բոցավառվում էր հրդեհների մեջ: Հրապարակի հարավի մզկիթը պարուրված էր իրիկնային ծիրանագույն ստվերների ծավալուն շղարշներով: Պարզ ու մաքուր օդն ակնոցի դեր էր կատարում. հնարավոր էր զանազանել յուրաքանչյուր մանրամասնություն անգամ: Մեծ մզկիթի բարակ սյուներն ու սրածայր կամարները նշանավորվում էին իրենց հոյակապ քանդակներով: Ժայռի սրճագույն ու գորշ երանգների միջից բարձրանում էր քաղաքի շքեղ պարիսպը, որն ասես շրջանակն էր կազմում մի ոսկեհյուս պատկերի:

Մայոր Շեփսթոնը չխկացրեց դիմացի ապակուն և կանգնեցնել տվեց ավտոմեքենան: Բոլորն էլ անխոս դիտում էին Հավիտենական Քաղաքն իր փառքի մեջ:

Յեբուս, Ուրշալիմ, Երուշալայիմ, Սիոն, ինչպես որ միշտ կոչվել է. դա այն միևնույն քաղաքն է, որն անսկիզբ է և անվախճան, ավելի հին, քան ամենահին հիշողությունը: Եղել է, կա և պիտի մնա, ինչպես Ինքը՝ Աստված, որ հիմնել է այն Մորիա ժայռի շուրջը, որի վրա Աբրահամը պատրաստ էր մատուցել իր հավատի մեծագույն զոհը: Քաղաքի առաջին

թագավորի անունը, ըստ մեզ ավանդվածի, եղել է Մելքիսեդեկ, այսինքն՝ արդար թագավոր, և մինչև այսօր պաշտամունքի ընթացքում պահպանվում է նրա հիշատակը՝ իբրև նախացոլքը Մեսիայի: Թեբենի և Կառնակի տաճարներն ավերված վայրերի հրաշալի վերականգնումներն են: Բայց միայն այն, ինչ որ մեռած է, հնարավոր է վերականգնել: Հռոմն ու Աթենքը ժամանակակից քաղաքներ էին՝ իրենց կենտրոնում ունենալով թանգարանային արժեք ներկայացնող ավերակների դաշտեր, մինչդեռ Երուսաղեմը՝ բարձրակառույց և արևաշող, չի ունեցել ավերակներ: Այն զրկված չէ իր պատմական տարբեր շերտերից, այսինքն՝ իր քարեղեն մաշկից: Սիոնի դուստրը միշտ կանգնել է վերստին լույսի մեջ և միշտ էլ վերստին քարշ է եկել փոշու մեջ: Նրա վրայով են անցել Նաբուգոդոնոսորի կրակը, Տիտոսի տեգը, Ադրիանի արորը: Բայց նրա ճշմարիտ գոյությունը կախում չունի նրա գործնական գոյությունից: Նա, ով կհաշվի նրա տարիները, միաժամանակ կհաշվի նաև Աստուծո տարիքը, որն անժամանակ է: Նրա անցյալը ներկան է, իսկ նրա ներկան անցյալն է՝ իր հաղթական միաձուլումով դիմացի հրեղեն ու հրաշագեղ պատկերի հետ, որն իրեն նայող անգլիացիների գերված հոգիները լցնում էր հրաշքի շնչով և նույնիսկ հուզմունքով:

Երբ ավտոմեքենան կրկին սկսեց առաջ շարժվել, Ջիվսն արդեն վստահ էր, որ այդ հինգշաբթի օրն իրեն ոչ ոք և ոչինչ չի կարող օգնել՝ փրկելու համար վերահաս նոպայից: Եվ նա միևնույն վստահությամբ գիտեր նաև, որ իրեն դեռևս երբեք ոչ մի ուժգին նոպա չի կարողացել սպառնալ: Գուցե ինքն այլևս չարթնանար այդ «բացակայությունից»: Թող նույնիսկ այդպես լինի: Այսուամենայնիվ, հակառակ ամեն տեսակ վախի ու ամոթի, Քլեյթոն Ջիվսն այն տարօրինակ զգացումն ուներ, որ իր ներաշխարհում գոյություն ունի մի անծանոթ հարց, որի պատասխանն էլ իր համար նույնքան անծանոթ է, բայց իր մեջ առկա է դրանք իմանալու անսահման պահանջը: Անծանոթն իմանալու այդ չարչրկող ձգտումն էր, որ իրեն ուժ էր տալիս դիմակայելու վերահաս վտանգին:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՏԱՃԱՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

— Եկող շաբաթ կանհետանամ այստեղից, Քլեյթոն, լսո՞ւմ եք ինձ... Մի շատ նպաստավոր առաջարկ եմ ստացել Կենտրոնական Եվրոպայի համար... Դուք կմնաք բոլորովին մենակ, և ոչ ոք ձեզ այլևս հոգ չի տանի... Ի դեպ, չպատկերացնեք, թե ես այն պատրանքն ունեմ, որ դուք ինձ պիտի կարոտեք... Ինչ դժվար է ձեզ հետ աշխատելը... Ձեզ ծանոթացրի իսկապես բացառիկ մարդկանց հետ... Այդ մարդիկ սրտաբաց և անկեղծ բարեկամություն են ցուցաբերում ձեր նկատմամբ... Դուք, սակայն, խուլ և համր մեկի նման նստում եք նրանց մեջ՝ գոռոզ ու մերժողական հովերով, իբրև ցցահան արված դալկադեմ ու հպարտ մի թիրախ, իբրև անհամբերության և անկրթության խորհրդանիշ... Ես ձեզ հասկանում եմ, Քլեյթոն, հավատացեք ինձ, բայց սա այսպես երկար չի տևի, սա լրիվ խելագարություն է... Աստված իմ, եթե մարդ միայն իմանար, թե իր հետ իսկապես ինչ է կատարվում...

— Ինձ հետ ոչ մի բան էլ չի կատարվում,— ասաց Քլեյթոնը ժպտալով ու կոշտ սիրալիրությամբ: Ասաց ու հեռացավ:

Անցնելով Սիոնի միջնաբերդի կողքով՝ նրանք մտել էին հին քաղաքի շուկայի փողոցը, որը մռայլ քարերով և հնացած գերաններից առաստաղով մի կառույց էր: Այդ փողոցը տանում էր հարավ–արևելքի ուղղությամբ և վերջում մաշված անհաշիվ աստիճաններով իջնում մինչև տաճարի հրապարակի հիմքերը: Մարդկային երկշարք մի հոսք, որոնցից մեկը դեպի ներքև, իսկ մյուսը դեպի վերև էր ընթանում, հրաշալի ճկունությամբ էր շարժվում այդ նեղլիկ ճանապարհի միջով: Այդտեղ, ինչպես Արևելքի բոլոր շուկաներում, վաճառականներն իրենց ապրանքները վաճառքի էին դնում իրենց խանութների առջև, որոնք նման էին մռայլ խոռոչների: Կոշտ

ու կոպիտ խոհարարներն առաջարկում էին անցորդներին այրված ձեթով սևացած իրենց տապակների պարունակությունը: Փերեզակները, իրենց զամբյուղները ձողերի վրա հավասարակշռելով, առաջ էին շարժվում աշխուժությամբ: Էշեր, այծեր, ոչխարներ առաջ էին քշվում ամբոխի միջով: Չնայած այս բոլորին՝ Երուսաղեմի շուկայի փողոցում որոշ չափով տիրում էր մի խոհեմ լրջություն և մի հանդիսավոր հանդարտություն: Մարդկանց նայվածքները վսեմ անտարբերությամբ ուղղված էին դեպի առաջ: Իրենց քայլվածքի կշռույթը ոչ մի գայթակղության դիմաց չէր ընդհատվում: Դորոթին ու Ջիվսը հարկադրվում են քայլել իրար սեղմված:

— Ինձ համար պատվաբեր չէ, որ դուք իմ հանդեպ վստահության նշույլ անգամ չունեք,— ասաց Դորոթին:

— Դուք չափազանց լավ եք վարվել ինձ հետ, այնքա՜ն լավ, որ չգիտեմ, թե ինչպես կկարողանամ շնորհակալ լինել ձեզ,— փոխադարձեց նա ընկճված:

Երախտագիտությունը՝ արտահայտված այս պարզ բառերով, որոնց խորքում նշմարելի էր մի ցավատանջ իրականություն, իսկապես անկեղծ էր: Դա երախտագիտությունն էր ծանր հիվանդ մի մարդու՝ իր ստացած քաղցրագորով օգնության դիմաց: Ջիվսին հանկարծ թվաց, թե ինքն առաջին անգամ է տեսնում Դորոթիի աչքերը: Վերջինս հանել էր գլխարկը, և նրա երենոսյան մազերի միջից մի ալեխառն մազափունջ հուզել էր Ջիվսին: Դորոթին մի կին էր, որն առանց որևէ օգնության պայքարել էր կյանքի հարվածների դեմ, եղել էր կենսալից մի անձ, հնարամիտ, խիզախ, բայց և այնպես՝ մենակ, ոչ նվազ մենակ, քան ինքը՝ Ջիվսը, ում կողքին քայլում էր մարդկային ուժեղ մի անհատականություն: Յուրաքանչյուր հպումից նրա բարակ հագուստի միջից ինքն զգում էր նրա գեղեցիկ մարմինը: Եվ ահա մտքով անցավ. «Արդյոք սա չի՞ լինի փրկությունը. փախուստ տալ ինքն իրենից՝ մի նոր սկիզբ հաստատելու շնորհիվ, ապաստանելով մի կնոջ մոտ»: Բայց նախքան իր էության ամբողջ ավյունով այդ միտքն իրենից վանելը, թվում է, թե այն արդեն զգալի էր դարձել Դորոթիի կողմից, որը պաշտպանողական շեշտով ասաց.

— Ձեզ զգուշացնում եմ, Քլեյթոն, որ ես ամենևին նպատակ չունեմ խառնվելու ձեր կյանքին... Եթե ես կարոտում եմ ձեր անկեղծությունը, դա պարզապես նրա համար է, որ ես ձեզ ընդունում եմ իբրև արվեստագետ...

Նրանք ստիպված էին կանգ առնել դիմացից եկող խռնված ամբոխի պատճառով: Ամբոխի միջից քայլում էր առաջինը այն երեք կերպարանքներից, որոնք մեծապես տպավորել էին Ջիվսին դեպի տաճարի հրապարակը գնալիս: Դա բարետես մի մարդ էր՝ հագին փարթամ ծալքերով մի երկնագույն *պլբորնոզ* (վերարկու): Նրա հետևից գնում էին բազմաթիվ մուրացկաններ և փողոցի երեխաներ: Հավանաբար նա մեկն էր *էֆենդիներից*՝ այդ երկրի հարուստ կալվածատերերից, որն իր աջ ձեռքով կրծքին սեղմած էր պահում մի մետաքսյա հովանոց, իսկ ձախ ձեռքով վայր էր գցում և զրնգացնում բազմաթիվ մետաղադրամներ: Երբեմն մեկ կամ մի քանի հատ այդ մետաղադրամներից նետում էր իր հետևից գնացող ցնցոտիներ հագած աղքատների վրա, որոնց մեջ անմիջապես զզվոտոց էր սկսվում դահեկանին տիրանալու համար: Ինքը, սակայն, ոչ իսկ արժանի էր համարում նայել դրանց կողմը, այլ անվրդով ու լայն քայլերով շարունակում էր իր ճամփան՝ փաթաթված իր կապույտ ու ծալքավոր վերարկուի մեջ: Միաժամանակ իր մորուքավոր, գեղեցիկ և տիրական դեմքը փայլում էր մի անսանձելի խնդության լույսով: Դորոթին հիացած արտահայտվեց.

— Առասպելի միջից հառնած մի թագավոր... Սողոմոնը կամ Հարուն էլ Ռաշիդը... այդպես չէ՞:

Ջիվսն էլ իր հերթին երկար նայում էր երկնագույն թագավորին, ասես կամենում էր այդ շքեղ կերպարանքը լիովին իր հիշողության մեջ դրոշմել: Այդ ընթացքում Դորոթիի ձայնը մի նորովի ջերմությամբ հնչեց.

— Գիտեմ, թե ձեզ հետ ինչ է կատարվում, Ջիվս... Դուք պետք է նորից աշխատանքի լծվեք, դա է ամբողջը... Այն ամենից հետո, ինչ որ պատահեց, դուք մի շատ մեծ բան եք անելու...

— Այո՛, Դորոթի, շուտով ստիպված կլինեմ աշխատել, այսինքն՝ որևէ հոդված գրել, որը երևի ձեր բարեհաճ օգնությամբ կկարողանամ հրատարակել...

— Ինչի՞ համար է այս ինքնահեգնանքը... Դուք շատ լավ գիտեք, թե ինչ եմ ուզում ասել...

— Այն, ինչի մասին, որ ակնարկում եք, այլևս գոյություն չունի... Լեոնորան դա իր հետ տարավ... Բայց այն, ինչ իմ մեջ թողեց, դա է, որ ավելորդ է դարձնում այլևս որևէ նորամուտ խոսք...

— Թույլ կտամ՞ ինձ մի քիչ աննրբանկատ լինել, Քլեյթոն... Ձեր սենյակում տեսել եմ կուտակված բազմաթիվ Աստվածաշունչներ, Սուրբ Գրքի մեկնաբանություններ և կրոնական երկեր... Այդ տեսակի գրքեր փոխ չեն առնվում և պարզապես հաճույքի համար չեն կարդացվում... Հուսով եմ, որ ձեզ գոհացնող որևէ թեմա գտել եք, որովհետև դուք խոշորացույցով առօրեական մանրուքներ ուսումնասիրողների և մեր տաղտկալի հոգևոր ուղիները հետազոտողների դասակարգին երբեք չեք պատկանել...

— Դուք սխալվում եք, ես թեմաներ փնտրող չեմ,— կտրուկ հերքեց Ձիվսը:— Մոտավորապես գիտեմ, թե մի ժամանակ ինչ արժեք եմ ունեցել... Բավականին հպարտ եմ նրա համար, որ ինձ հետ առնչվող ոչ մի բան գրի չեմ առել՝ առանց մի ինչ-որ անհաճո արտահայտության, առանց ներշնչանքի...

Այս խոսքը, ըստ երևույթին, վրդովեցրեց Դորոթիին.

— Իմ մասնագիտությունն է հաղորդել այն, ինչ տեսնում եմ և լսում... Դրա համար էլ ես իսկապես չեմ կարողանում պատկերացնել, թե ինչ է «ներշնչանքը» այստեղ...

— «Բացակայություն akâsha-ի»,— բացականչեց նա քմծիծաղով:

Նրանք այժմ կանգնած էին մի ցածր ու սևացած մթերանոցի առջև՝ բացված քանդված մի տան ավերակների վրա: Սկզբում կարճատես Ձիվսը մթության մեջ համարյա ոչինչ չէր կարողանում տեսնել: Սենյակի խորքում կիսահանգած քարածուխի մի կրակ էր վառվում: Հետզհետե նա նշմարեց մի ինչ-որ ձեռքով պտտվող ջաղացք իր քեղու հետ՝ տեղադրված քարայրաձև մթերանոցի կենտրոնում: Մերկ իրանով մի հսկա աշխատեցնում էր այդ ջաղացքը, այսինքն՝ ձեռքերը կանթած քեղու վրա, աշխույժ ռիթմով անընդհատ ասես օղակների վրա օղակներ էր ձևավորում: Այն, ինչ որ աղում էր ջաղացքը, չէր երևում: Միայն մի բան էր պարզ, որ այդ հսկան օրական հազար անգամ պետք է իր շրջանը դառնար, ինչպես լծկան կենդանի: Տեսարանն ինքնին արդեն բավականին ցնցող էր, բայց դրանից ավելի սարսափելին էլ կար. երբ հսկան իր վիթխարի գլուխը ցուլի նման խոնարհեցրած դիրքից հանկարծ վեր է բարձրացնում, հայտնի է դառնում, որ նա կույր է: Քրտնաթոր դեմքի վրայից նրա աչքերի վիրավոր խոռոչներն ուղղված էին բաց օդի մեջ: Ըստ երևույթին այդտեղի անցորդներից ոմանք ճանաչում էին նրան և արաբերեն խոսքեր էին

գոռում նրան, որոնք հնչում էին իբրև անխիղճ ծաղրանք: Բայց աշխատանքի այդ կույր ստրուկի հոգը չէր բնավ, այլ երկու ձեռքով բռնած քեղին՝ անընդհատ պտտվում էր, հա պտտվում օղակաձև: Միայն մեկ անգամ ցույց տվեց մի ժպիտ փողոցի ուղղությամբ՝ առանց դադարեցնելու աշխատանքը:

Թեև արդեն շատ էին հեռացել այդ տխուր տեսարանից, բայց Դորոթիին և Ջիվսին չէր հաջողվում ձերբազատվել դրա թողած ազդեցությունից: Առաջին հերթին՝ առասպելի միջով եկած մի թագավոր, ապա՝ առասպելի միջով եկած մի ստրուկ: Կույր բանվորի տեսքն ընկճել էր Դորոթիին, որը գրեթե նսեմացած նայեց Ջիվսին՝ ասելով.

— Լսեք... Ես քիչ առաջ ոչ մի անարգալից բան չուզեցի ասել «ներշնչանքի» մասին...

— Երբ մեկը երբևէ զգացել ու ապրել է այն,— խոստովանեց Ջիվսն անսովոր հստակությամբ,— այդ դեպքում նրան թվում է, թե ապրելու համար արժանի միակ բանը, որ կա, դա այդ ակնթարթն է... Իսկ ինչ բան է աշխատելը... Մի խեղճ աչազուրկ, որը պտտեցնում է ջաղացքի քեղին միշտ միևնույն կենտրոնի շուրջը, անհուսալիորեն... Իսկ վերևում հիշված այդ ակնթարթում,— ով ինչպես ուզում է, թող այն այնպես անվանի,— ամբողջը միանգամից ընդգրկվում է, լինեն դրանք հարյուրավոր կերպարանքներ, իրադարձություններ, մտածումներ, որոնք կայծակնային արագությամբ հավաքվելով՝ բացվում են լույսին... Ոչ մի երևակայություն, ոչ մի համադրություն, խորաթափանցություն կամ ջանադրություն չեն կարող ձեռք բերել այն... Եվ այն պատճառով, որ այդ պահն ինձ համար չի վերադառնալու կրկին, ես երբեք այլևս չեմ աշխատելու...

— Այդ ակնթարթը մի անգամ ևս կվերադառնա ձեզ համար,— ասաց Դորոթին հաստատակամ, որպես թե ինքն իմացած լիներ այդ մասին մի հանկարծահաս ներշնչանքով:

Նրանք հասել էին Լացի պատին՝ քառակուսի վիթխարի քարերից բաղկացած այն սրբավայրին, որն Իսրայելի ազգի համար իր տաճարից մնացած միակ մասունքն է: Եվ քանի որ սովորական աշխատանքային օր էր և ոչ թե հանգստյան նվիրված շաբաթ օր, քիչ քանակով բարեպաշտ մարդիկ էին կանգնած հսկա պատի առաջ, որը տաճարի հրապարակի հիմքերն էր կազմում: Այդ բարեպաշտները ջերմեռանդությամբ

հպում էին իրենց դեմքերը պատի քարերին, ասես ուզում էին իրենց արցունքներով լվանալ դրանք: Միաժամանակ աղոթքի զորությունը ցնցում էր ու դողացնում խեղճ ու ողորմելի քաթանազգեստ կերպարանքներին: Քլեյթոն Ձիվսը շարունակաբար նայում էր պառավ և որոշ չափով էլ տձև մի կնոջ վրա, որը, իր գավազանին կոթնած, բավական ժամանակից ի վեր գնում էր՝ տատանվելով, ինչպես մի հարբած: Սա երրորդն էր այն ազդեցիկ հանդիպումներից, որոնք Ձիվսը համարում էր, թե ցավալիորեն կապ ունեն իր ներքին վիճակի հետ: Կնոջ տեսքը նման էր մի գնչու գուշակի՝ չնայած արևմտյան ոճով իր արտակարգ հագնվածքին: Նրա կտրված, յուղոտ և սև մազերին կար ընձառյուծի կեղծ մորթուց մի գլխարկ, որի մեջ խրված էր մի փետուր: Կանաչ ապակուց կաղինի մեծությամբ ականջօղերը ճոճվում էին նրա յուրաքանչյուր տատանվող քայլի հետ: Կինը նաև վզի շուրջը կրում էր մի ամբողջ հավաքածու գույնգույն ապակյա հատիկներով մանյակների, որոնք լսելի կերպով զրնգում էին: Ընդ որում՝ նա անընդհատ քրթմնջում էր ինքն իրեն, երբեմն էլ արձակում էր մի ինչ–որ սուր ճիչ: Ձիվսն անօգնական վիճակում էր, նրան թվում էր, թե այդ քրթմնջալն ու ճչալն իրեն են վերաբերում, որպես թե այդ ծեր կինը որոշ բաներ հայտներ իրեն և զգուշացումներ կատարեր, որոնցից չպետք է տեղյակ լիներ իր ուղեկցուհին: Դեպի վեր՝ դեպի տաճարի հրապարակն առաջնորդող մեծ աստիճանների ստորոտում կինը շրջվեց, մինչ այդ Ձիվսը զգաց դավադիր մեղսակցության մի նայվածք, որն իրեն ցնցեց ամբողջովին, մինչև իր էության խորքը: Ծեր կնոջ դեմքն իրականում այնքան էլ ծեր չէր, հազիվ հիսուն տարեկան, բայց թվում էր հազար տարեկան: Նրա հյուծված դեմքից նայում էին շուրջանակի անհանդարտ աչքեր, որոնք, լցված վիրավորող ծաղրանքով ու խելագար չարությամբ, ամեն ինչ գիտեին իր մասին: Այո՛, Իսրայելի այս ծեր ու թափառաշրջիկ դուստրն ամեն ինչ գիտեր իր մասին: Նա գիտեր, որ «aura»–ն անխուսափելիորեն միշտ խտանում է իր շուրջը, և այն, որ ինքը մի քանի րոպեից ահավոր սարսափ պիտի ապրի և անօգնական գետին ընկնի...

Քլեյթոն Ձիվսը մեծ ոստյուններով շտապեց բարձր աստիճանների վրայով հասնել վեր, որտեղ ուրիշ շատ անհանգստությունների կողքին ավելացան նաև սրտի ու շնչառության բարդություններ: Դորոթին

չէր կարողանում ըմբռնել նրա այդ անակնկալ փախուստի պատճառը: Նախքան մահմեդական պահակախմբի առջևից նրանց անցնելը, որը հավաքում էր տաճարի սրբազան հրապարակ մտնողների մուտքի կտրոնները, Ջիվսը դիպավ նրա թևին.

— Ես ձեզ պետք է խոստովանեմ, Դորոթի... Ուզում եմ ձեզ մի բան խնդրել...

Այս խոսքերը հնչում էին այնքան շնչակտուր և խռովահույզ, որ վերջինս անհանգիստ նայեց նրան շեշտակի:

— Մի՛ բարկացեք, Դորոթի... Բայց երևի հիմա լավ կլինի... Ձեզ համար լավ կլինի... որ միասին չլինենք, որ հենց հիմա իրարից բաժանվենք...

— Ինչ է նշանակում սա, ի սեր Աստծու... Չէ՞ որ մենք հատուկ կերպով պայմանավորվել էինք, և դուք էլ կարևոր էիք համարում, որ պիտի լինեք իմ ուղեցույցն այս այցելության ընթացքում...

–Ես ձեզ չեմ ուզում դժվարությունների կամ անհարմար վիճակի մատնել... եթե մի բան պատահելու լինի...

— Անհարմար վիճա՞կ... եթե մի բան պատահելու լինի՞...

— Եթե ինձ հետ մի բան պատահելու լինի... Այսինքն, եթե ինչ–որ բան պատուհասի ինձ... Դուք՝ Դորոթի, պետք է ինձ խոսք տաք, անմիջապես թողնել հեռանալ և այլևս հոգ չանել իմ մասին... Սրանում տարօրինակ ոչինչ չկա... Լավ մնացեք, Դորոթի, և խոստացեք այդպես անել...

Դորոթին մոտեցրեց իր դեմքը նրա դեմքին: Ինչպե՞ս չի կարողացել նկատել արդեն մի պահից ի վեր կատարվող սարսափելի փոփոխությունը նրա մեջ: Նրա գունատ դիմագծերն ավերվում էին վայրկյան առ վայրկյան, ծանր էր շնչում, և ճակատին քրտինքի կաթիլներ էին կուտակվում:

— Ուրեմն անմիջապես պանդոկ գնանք,— որոշեց Դորոթին:

Ջիվսը, սակայն, մերժեց փափկանկատությամբ.

— Ո՛չ, Դորոթի, ես կմնամ այստեղ...

— Գուցե մոտակայքում մի սրճարան լինի... Դուք պետք է մի բան խմեք...

— Մարմնականը երկրորդական բան է, Դորոթի... Սա ֆիզիկականի հետ որևէ կապ չունի...

Դրանից հետո նա կարծես թե սկսեց հասկանալ նրան: Հավանաբար Լեոնորայի մահը կրկին ընկճել էր նրան: Բռնեց նրա սառը ձեռքը.

— Ոչ մի բան չի պատահի, Քլեյթոն... Ես ահա ձեզ մոտ եմ և ուշադիր կլինեմ... Եվ այսպես գնանք հիմա... Ընդհանրապես ես այնքան էլ հետաքրքրասեր չեմ... Բայց այսօր կուզենայի ամեն ինչ մանրամասն իմանալ...

Ձիվսը, մի քիչ հանգստացած, շարժվեց տեղից:

— Գնանք... Բայց մի՛ մոռացեք իմ խնդրանքը...

Նրանք դուրս եկան սյուներով օժտված նախաշեմից: Սյուներ, որոնք ինչպես Հերովդեսի ժամանակ, այնպես էլ այսօր շրջապատում են այդ սրբազան տարածքը: Քլեյթոն Ձիվսը միշտ մի քայլ առաջ էր գնում Դորոթիից այն հույսով, որ այդպիսով բավարար հեռավորություն կպահպանի նրանից, որպեսզի վերջին պահին կարողանա նրա տեսադաշտից անհետանալ: Տաճարի հրապարակը չափազանց ընդարձակ էր: Այդ ժամին թվում էր, թե այն իր մեծությամբ գերազանցում է նույնանման բոլոր վայրերը, շրջապատի բոլոր սրբատեղիները: Երուսաղեմը կրում էր իր բեռն իր ուսերի վրա, ինչպես Ատլասը:

Արևը թեքվում էր դեպի հորիզոնը, բայց ինչքան շատ էր թեքվում, այնքան ավելի ձեռք էր բերում պուրպուր և զտված ոսկի, որպեսզի մշտանորոգ հրդեհներով պարուրի գմբեթները, կամարները, սյուները, աստիճանները, պարիսպների ատամնաշարերն ու քիվերը: Այդ պահին Դորոթին ու Ձիվսը միակ օտարներն էին այնտեղ: Հաջորդ օրը՝ երեկոյան, սկսվելու էր մահմեդականների մեծ տոնը, հետևաբար *Հարամ էշ-Շարիֆը*[1] փակ պիտի լիներ բոլոր անհավատների առաջ: Դրա համար էլ Դորոթի Քովելը, նախքան իր մեկնելը, այդ օրը վերջին հնարավորությունը պիտի ունենար այցելելու Երուսաղեմի այդ կարևորագույն և հիշարժան վայրը: Հենց դա էր եղել նաև Ձիվսի հետ իր ժամադրվելու պատճառներից մեկը: Ամենուրեք մեծ աշխուժություն կար: Տոնի առթիվ աշխարհի բոլոր ծագերից հավաքվել էին հավատացյալներ, քանզի մուսուլմանների համար *Հարամ ալ-Շարիֆն* իր մզկիթներով համավում է Մեքքայից հետո ամենից նվիրական սրբավայրը: Բազմաթիվ բարեպաշտ իսլամներ խմբերով նստել էին սալահատակի մեծ և սպիտակափայլ քարերին:

---

[1] Մուսուլմանների գլխավոր սրբավայրը Երուսաղեմում իր նշանավոր մզկիթներով, որոնցից են Ժայռի տաճարը (Qubbat al-Sakhrah) և Ալ-Աքսա մզկիթն (Al-Masjid Al-Aqsa) իր հրապարակով, հրեական նախկին տաճարի տեղում:

Թվում էր, թե արևամուտից հետո նրանք այդտեղ կրակ էին վառելու, ճաշ եփելու, ուտելու և քնելու, ինչպես անում էին անապատում: Երևի դա մի հին ավանդություն էր՝ իրենց զատկի նախատոնակն ու նախապատրաստման օրվա գիշերը տաճարի հրապարակում անցկացնելը: Ուրիշ խմբեր կանգնած խոսում էին եռանդով կամ իրար սեղմված բարձրանում էին լայն աստիճանների վրայով դեպի Օմարի մզկիթը:

Դորոթի Քովելն անհանգստանում էր, որովհետև Ջիվսի տեսքն ամենևին չէր լավացել: Ըստ երևույթին, դեմքն ավելի էր դեղնել: Նրա ծնոտի մկանների կծկումներից զգացվում էր նրա ներքին անսահման խռովքը: Ինչ էլ պատահեր նրա ներաշխարհում, հարկավոր էր լինել շատ նրբանկատ: Ինչ տարօրինակ բան, որ ինքը՝ Դորոթի Քովելը՝ աշխարհի ազատ ճամփորդը, որ ոչ մի բանով ավելի չէր հպարտանում, քան իր բացարձակ ազատությամբ, հիմա հանկարծ դժվարին կացության պիտի մատնվեր՝ խնամելով մի խելագար մարդու՝ իբրև մի բուժքույր: Այդ օրվա բազմաթիվ պատկերներն ու խոսակցություններն արդեն հոգնեցրել էին այս ընդհանրապես չհոգնողին: Հիմա ոչ մի բանի ցանկություն չուներ, բացի մի բաժակ տաք թեյից «Քինգ Դեյվիդ» պանդոկի նախասրահում: Նա, սակայն, լավ գիտեր, որ ինքը մեկ անգամ ևս չպետք է տուն վերադառնալու առաջարկ աներ: Միաժամանակ նա հիմա նոր էր անդրադառնում այն զարմանալի իրողությանը, որ այդ խելագար մարդը կարողացել էր մեծ ուժով գերել իրեն: Նրա անհայտ հիվանդությունը շատ էր ազդել իր վրա: Այդ պատճառով էլ ինքը փնտրում էր խորամանկ ու պատշաճ բառեր՝ վտանգից խուսափելու համար.

— Մզկիթների նկատմամբ ոչ մի նախասիրություն չունեմ, Քլեյթոն... Ինձ թվում է, թե դրանք աշխարհի ամենահասարակ ու հավատազուրկ վայրերն են... Հիմա արդեն շատ ուշ է, մի ընդհանուր ակնարկ բավարար է... Մոհամմեդը մեզ ոչնչով չի հետաքրքրում, այդպես չէ՞... Բայց հին տաճարի մասին կուզենայի լսել, ուր Քրիստոսը տասներկու տարեկանում քարոզել է... Այս քարերը շատ են հոգնեցնում, և տես, թե ինչքա՜ն խոշոր են... Խնդրեմ, հավաքեք ձեր ամբողջ գիտությունը... Ձեր հլու աշակերտուհին լսում է ձեզ...

Ջիվսը նշան արեց նրան առաջանալու՝ առանց նրա կողմը նայելու: Չափազանց ուղղաձիգ մարմնով, մեկ գծի վրա քայլելով՝ նա սկսեց

առաջանալ, այնպես որ Դորոթին դժվարությամբ էր կարողանում հետևել նրան: Նրանք հասան մինչև աստիճանները, որոնք տանում էին դեպի այն ընդարձակ հարթությունը, ուր բարձրանում էր Օմարի ութանկյուն մզկիթը: Սյուների նրբագեղ կամարների ավերակները նշանավորվում էին մանուշակների գույներով հագեցած երկնքի տակ: Ձիվսը ճկուն արագությամբ վեր էր բարձրանում այդ աստիճաններով: Երբ տեղ հասավ, կանգ առավ, նայեց չորս կողմը, ապա մոտեցավ սյուներից մեկին և կռթնեց նրան: Նա ենթադրում էր, թե մի լավ հենարան է գտել ընկնավորության վերահաս, անխուսափելի և սպառնալից վտանգի դեպքում: Այդտեղից երևում էր գրեթե ամբողջ հրապարակը, նույնիսկ մի կտոր՝ Ձիթենյաց լեռից: Դորոթին շատ մոտիկ էր եկել նրան: Այժմ նրա դեմքն էլ լարված էր ու հյուծված: Ձիվսն իր աջ բազուկով, որն օտար մի մարմնի նման կախված էր իր ուսից, մի լայն ու կոշտ շարժում կատարեց: Նրա ձայնը հիմա հնչում էր խռպոտ և հրամայական, ինչպես ձայնը մի վատ ուսուցչի.

— Հրապարակի առանցքը ձգվում է հյուսիսից դեպի հարավ,— ասաց նա շնչակտուր,— այստեղ՝ վերևում, արևմուտքից արևելք էր երկարում Սողոմոնի տաճարը, հետագայում՝ Հերովդեսի տաճարը, ուր քարոզել էր Քրիստոսը...

— Դուք շատ ավելի խիստ ուղեցույց եք, քան Բուրթոնը,— ասաց Դորոթին՝ նրան ծիծաղեցնելու անհաջող փորձ անելով: Ձիվսը, ըստ երևույթին, նույնիսկ չլսեց նրան.

— Այնտեղ, ուր հիմա կանգնած ենք, ժամանակին եղել է ժողովրդի համար հատկացված արտաքին գավիթի և քահանաների ներքնագավիթի ու զոհասեղանի միջև սահմանագիծը: Այստեղից էր սկսվում սրահի սյունաշարը...

Քլեյթոն Ձիվսը, հառաչալից մի ճիչ արձակելով, կիսատ թողեց իր նախադասությունը, որպես թե սպառած լիներ իր բովանդակ շունչը: Սյունին կռթնած՝ աչքերը սևեռել էր ներքևի աստիճաններին, ուր նոր էր հավաքվել սպիտակազգեստ բարեպաշտների մի բազմություն, որը հանգիստ քայլերով սկսել էր բարձրանալ դեպի Աստծու տունը: Դեռևս նրան հաջողվեց լսել Դորոթիի անհանգստացած հարցումը: Մայր մտնող հրակարմիր արևը նոր բռնկումներով էր ճոխացել: Ձիվսը, սակայն, գիտեր,

որ վրա է հասնում անխուսափելին, իսկ ի՞նչ էր այդ մեկը. արդյոք դա, ինչպես միշտ, այդ գլխապտույտի զգայությունն էր, սեփական ես–ը կորցնելու այդ վախը: Ինքն իր մեջ լսո՞ւմ էր արդյոք մի խշշոց, ինչպես ձայնը ներս խուժող և արտաբերվող գոլորշու: Քահանայական սպի-տակազգեստ կերպարանքներին առընթեր, որոնք ներքևից դանդաղո-ռեն մոտենում էին, այդ անխուսափելին էլ իր հերթին էր մերձենում: Եվ հիմա արդեն հասել էր այդտեղ: Նա հանեց ակնոցը, քանզի դեռ գիտակցում էր, որ իր գետին ընկնելու դեպքում այն կարող է ջարդվել: Բայց ի՞նչ բան է սա: Իր գիտակցությունը տեղն էր, իսկ «բացակայու-թյուն» կոչված այդ վտանգալից պահը չէր զգետնում իրեն: Ոտքերի վրա կանգնած էր աներեր: Սիրտը շարունակում էր բաբախել հանդարտ, մի-այն թե անզեն աչքերի դիմաց ամեն ինչ պտտվում էր ու կերպարանա-փոխվում: Չափի և ճշգրտության մի ծայրահեղ բծախնդրությամբ՝ նա դաստակին կապած իր ժամացույցը տարավ իր տկար աչքերին շատ մոտ: Նախքան ժամանակի անհետացումը, տվյալ ժամը գրանցվեց իր մտքում. երեկոյան հինգն անց էր երեսունյոթ րոպե:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՏԱՃԱՐՈՒՄ

Incipit vita Hieremiae prophetae[2]

Արդը, որ իր ձեռքը բռնել էր իր աչքերի դիմաց՝ մայր մտնող արևի շլացուցիչ ցոլքերից պաշտպանվելու համար, զարմանքով նկատում է իր դաստակի շուրջը կաշվե մի լայն ժապավեն: Այդ ժապավենին կարված էր մի *համայիլ*, որի մեջ մագաղաթյա մի կտրոն կար՝ նշանագրերով օժտված. Աստծու մի հզոր օրհնություն էր դա: Մարդն իր նայվածքը մի երկար պահ տաճարի արտաքին տեսքի վրա պահելուց հետո հիմա նորից գտել էր ինքն իրեն: Աչքերի դիմաց դեռևս շարժվում էր կաշվից պատրաստված ժապավենը՝ օրհնության խոսքով: Այո՛, իր մայրը՝ Քեղկիայի կինը, կապել էր այն իր դաստակին այդ օրվա առավոտյան՝ նախքան Անաթովթից իր մեկնելը դեպի Աստծու միակ ու ճշմարիտ տաճարը: Օրհնության ժապավենը հնուց հասած մի ժառանգություն էր իր մոր պապերից: Այդ օրը հատկապես մեծարանքի մի օր էր, որովհետև տաճարում Տերը երջանկացնելու էր նրա երիտասարդությունը: Ինչքա՜ն էր հուզվել մայրը, որ գնացել էր ինքն անձամբ զարթնեցնելու նրան: Մայրական հպարտությունն այս պարագայում արդար էր և լավ հիմնավորված: Երկրի ամբողջ տարածքում ապրող քահանայական ընտանիքների բոլոր տներից միայն իր կրտսեր որդին՝ Երեմիան, առանց տաճարում ծառայած լինելու, արժանացել էր ընտրությանը: Իրականում նրա գերդաստանն ամենահներից մեկն էր Հուդայում և Բենիամինում, որի արմատները հասնում էին մինչև սրբազան պատմության նախնական ժամանակները,

[2] Երեմիա մարգարեի կյանքի սկիզբը:



«Մայրը Երեմիայի դաստակին է կապում հմայիլը»

մինչև վտարանդի Աբիաթարը, մինչև Սիլոյի քահանա Հեղին, մինչև նույն ինքը՝ Մովսեսն ու Ահարոնը:

Այդ օրվա համար ընտրել էին Երեմիային, որպեսզի երեկոյան՝ Զատկի տոնի զենման ժամանակ, պատվավոր պաշտոն կատարի, այսինքն՝ սպասարկի արքայի սեղանին: Երիտասարդի սիրտն ուժգին բաբախում էր, քանզի այն լցված էր կանխապես զգացվող մի անսահման բերկրությամբ: Նա ամբողջ հոգով սիրում էր Տերունական այդ տոնը՝ իր շքեղությամբ ու ցնծությամբ, երբ կրակներն էին բոցավառվում, լապտերները պայծառ փայլում, երբ քնարների, շեփորների ու թմբուկների ձայնը հնչում էր տոնական, երբ մարդիկ ցնծությամբ ողջունում էին միմյանց և միավորվում Տիրոջ Ուխտի հոգևոր միությամբ:

Երեմիան շեղեց իր նայվածքը դեպի հարավ: Վերջալույսի կարմիր շողերում հրդեհվում էին արքայական նստավայրի վարչական շենքերն ու գահանիստ ապարանքները, որոնք միայն մի հաստատուն պարիսպով էին բաժանված Տիրոջ տաճարի տարածքից: Ինչքան ուժեղ պետք է լիներ թագավորի հոգին, որ կարողանար մշտապես դիմանալ Տիրոջ այս մերձավոր հարևանությանը: Պարսպի վերին ատամնավոր միջանցքում նկատվում էր երկարավուն նիզակներով զինված թիկնապահների համրաքայլ անցուդարձը: Նախատոնակի այդ երեկոյան այս պարսպի և այն վայրի միջև, ուր առանձնացած խոկում էր Երեմիան, սկսել էր խռնվել մի ստվարաթիվ ամբոխ: Իհարկե, Երուսաղեմն ու Աստծու հետ միաձուլված սուրբ երկիրը կարող էին ընդգրկել այդքան շատ ժողովուրդ: Ոչ Ասորեստանը, ոչ Բաբելոնը և ոչ իսկ Եգիպտոսն իրենց ոսկեձույլ և արծաթյա չաստուածների տոներին չէին կարող սրանից ավելի հոծ բազմություն ունենալ: Այսպես էր մտածում Անաթովթցի Երեմիան երիտասարդական հպարտությամբ, որը, բնականաբար, դեռևս ոչ մի սեփական փորձ կամ գաղափար չուներ հսկա աշխարհի և նրա մայրաքաղաքների մասին: Բայց միթե շատ վաղուց արդեն բոլորին հայտնի չէ, որ աշխարհի ազգերի Բահաղները (Բաալիմ) կարողություն ունեն գինովություն և մոլեգնություն թափել մահկանացուների արյան մեջ: Մյուս կողմից, սակայն, հոգու իսկական ուրախությունը զերծ է գինու և տոփանքի ներգործությունից, այն միայն ու բացառապես Հակոբի Աստծու պարգևն է, որին ոչ մի անուն չի բնութագրում, հակառակ նրա

ունեցած բազում անունների: Գյուղական քահանայի երիտասարդ որդու ոտքերի տակ՝ հարակից աստիճաններից ներքև, Աստծու հյուրերն իրար էին հրմշտում և սեղմվում: Նրանք կուտակվում էին արտաքին այն ընդարձակ բակում, որը շրջապատում է բուն Սրբավայրի բարձրադիր և վիթխարի բեմը: Սկսվող մթնշաղում առկայծում էին լույսի տարտամ շողեր: Շատերը, ընթացք տալով իրենց սրտերում տիրող բուռն ոգևորությանը, վառել էին ջահեր, բռնկվող փայտյա ձողեր և գույնզգույն լապտերներ, որոնք ճոճում էին երգչախմբերի՝ իրար խաչաձևող ձայների կշռույթի ներքո, դեռ նախքան առաջին աստղի ծագելը երկնքում՝ իբրև նշան տոնի սկզբնավորության: Երբեմն ընդհատվում էին երգչախմբերը, և այն ժամանակ ընդհանուր բզզոցների և շշուկների աղմուկի միջից լսվում էր մի խուլ և բազմազան ձայն, որն ասես երկրի խոր ընդերքից էր բարձրանում: Դա մայունն էր կուտակված ոչխարների ու գառների, որոնք քահանաների հատուկ դասի կողմից տասնյակ հազարներով տեղավորվել էին Տաճարի լեռան ստորգետնյա սրահներում և ախոռներում: Քաղաքի և ծայրամասերի նահապետական տների մատաղացուները պետք է հաշվարկվեն, արձանագրվեն և տարբերանիշի միջոցով ճանաչելի դառնան, որպեսզի հարգվի մաքրության կանոնակարգը, ոչ մի զոհաբերող չտուժի, և որպեսզի մատաղացուն էլ անարատ կերպով զոհասեղան տարվի: Այսօր նաև աղքատներն ու թշվառներն էին բերել տաճարին իրենց ընծաները: Այս պարագայում գառներին փոխարինելու էին գալիս արտոնված ընտանի թռչնազգիներ: Իսկ նա, ով ի վիճակի չէր նույնիսկ դա մատուցելու, բավականանում էր Աստծուն հաճելի մի բուռ դաշտի բերքով:

Երեմիան մի պահ ևս մտածկոտ դիտեց ներքևի եռուզեռը, ապա գլուխն ուրիշ կողմ դարձրեց անհանդարտ: Մի՞թե ինքն առանց ուղեկցի է եկել տաճար: Ո՛չ, Ներիայի որդի Բարուքը՝ տասնվեց տարեկան իր համագյուղացին, նա էլ այդ սպասման օրը, ինչպես և ամեն օր, իր հետ էր: Անաթովթում պատանի Բարուքին կոչում էին «Երեմիայի ստվերը»: Վստահաբար իր «ստվերն» այդ պահին մի անգամ ևս հեռացել է իրենից, որպեսզի նախանձախնդրորեն ընթերցի ու սովորի իր մեծավորից փոխ վերցրած մագաղաթներից մեկը: Բայց ահա Երեմիան իր հետևում լսեց պատանու հևասպառ ձայնը: Բարուքը վազելիս այնքան էր իրար անցել,

որ գլխածածկոցն ընկել էր գլխից դեպի ծոծրակը և ծածանվում էր այնտեղ: Նրա ձայնը դողում էր հուզմունքից.

— Իմ ուսուցիչը թող պատրաստ լինի... Գալիս են հայտարարելու իր անունը:

Բարուքը դեռ հանգիստ շունչ չէր առել, երբ երեք նշանավոր դեմքեր հայտնվեցին ամբիոններից մեկի վրա, որը զետեղված էր աստիճանների վերևում՝ Երեմիայի կողքին: Այդ անձերից մեկը, որպես արքունական պաշտոնյա, հագել էր Դավթյան պալատի հատուկ երկնագույն զգեստ: Մյուս երկուսից մեկը մի ազդարարող քահանա էր, իսկ մյուսը՝ շեփորահար քահանա: Վերջինս առանց հատուկ հանդիսավորության հնչեցրեց իր երկար շեփորը, որը ձուլված էր ոսկու և արծաթի խառնուրդից: Ազդարարող քահանան բացարձակ հստակությամբ մի քանի անուն կանչեց հավաքված ամբոխի միջից: Յուրաքանչյուր անունից հետո տիրում էր մի երկարատև սպասողական լռություն: Ամենից վերջում հնչեց ևս մեկ անուն.

— Երեմիա Անաթովթցի, որդի Քեղկիայի, Աբիաթար քահանայապետի գերդաստանից, Սելովցի Հեղի քահանայի տոհմից...

Այդ կերպ կանչված անձը, որի անունն արժանապատիվ կերպով կորչում էր հեռավոր անցյալի մշուշներում, բազուկները կրծքին խաչաձևած, հանդարտ քայլերով մոտեցավ ամբիոնին և այդտեղ կանգնեց՝ գլուխը խոնարհած, ինչպես որ վայել է կանգնել ծերունիների և վսեմաշուք անձնավորությունների առաջ: Նա գլուխը չբարձրացրեց նույնիսկ այն ժամանակ, երբ արքունական արարողապետն ու երկու քահանաներն առան նրան իրենց մեջ և այունազարդ սրահի միջով առաջնորդեցին դեպի տաճարի ներքին գավիթը: Այդ կարճ տարածությունն անցնելիս նրան տրվում էին պալատական սպասավորի անհրաժեշտ թելադրանքներ.

—Նորին արքայական մեծությանը հարկ է այսպես դիմել. «Պատիվ ունեմ նայելու իմ արքայի դեմքին»...

Երեմիայի աչքերին տաճարի ներքին հսկա գավիթը երևում էր կարմրավուն պսպղացող փայլով պարուրված: Մթնշաղի վերջին շողերը միաձուլվում էին լապտերների պլպլացումներին, աստվածային տոնի խրախճանքի համար պատրաստված սեղանների լույսերին՝ հասնելով

մինչև հեռավոր զոհասեղանի բորբոքուն կրակե զանգվածը: Առաջին անգամը չէր, որ նա տեսնում էր այն: Այդուհանդերձ, նաև այդ օրը շարունակում էր ահաբեկվել նրա անսպասելի վեհությունից: Ինչքա՜ն անանշան են թվում զոհասեղանի կողքի սպիտակազգեստ քահանաները, որոնք զույգ և եռակի շարքերով դառնում են նրա շուրջբոլորը: Զոհասեղանը ճարտար կերպով ագուցված էր Սրբազան ժայռին, որի կրաքարային գագաթը, որպես հիմք, Մորիայի խորքից էր սկսվում: Դեպի զոհասեղանի բարձունքն առաջնորդող աստիճաններ չկային, այլ միայն՝ մի լայն ուղի: Դա իր պատճառն ուներ. աստիճանների վրայով քայլելիս մարդ կարող էր տեսնել քահանաների մերկ ոտքերն ու սրունքները, մինչդեռ Աստված կամենում է, որ իր քահանայի մարմինը լրիվ ծածկված լինի: Շարժվող բազմության միջից հաճախ մի խումբ առանձնանում էր և մեծ քայլերով բարձրանում ուղու վրայով դեպի զոհասեղանը: Ընդհանրապես այն բաղկացած էր լինում բարձրաստիճան և սպիտակամորուս մի ծիսակատար քահանայից, որը երկու ընկերակցողների օգնությամբ բավականին ծանր ոսկյա մի մեծ սկուտեղի վրա տանում էր զոհաբերության ընծան: Զոհագործությունն ինքնին պետք է շատ ապահով և արագ կատարվեր, քանի որ զոհաբերողն ուղու բարձունքից խոնարհվում էր կրակե լայնածավալ հրաբորբ ծովի վրա՝ ծածկված միայն ողջակեզի մի քարեղեն հարմարանքով: Կրակն սպառնում էր կլանել նույնիսկ զոհ մատուցողին, որը միայն մի կարճատև պահ ուներ ընծան իր ճիշտ տեղը դնելու՝ շնորհիվ այդ նպատակի համար պատրաստված ոսկեղեն բահերից մեկի, միաժամանակ արտասանելով համապատասխան աղոթքը: Բոցերից առաջացած ջերմությունն այնքա՜ն ուժեղ էր, որ զոհասեղանի չորս անկյուններից դուրս ցցված բրոնզյա եղջյուրները, մեծ տոնների վերջավորության, արդեն հալված էին լինում՝ վերածվելով անճոռնի գնդերի և կարիք ունեին վերանորոգվելու: Յուրաքանչյուր զոհաբերումից հետո, որոնք առանց ընդհատումի իրար հետևից էին կատարվում, երեքական քահանաներից բաղկացած խմբերը գնում էին դեպի բրոնզյա ձուլածո ջրավազանը, որպեսզի այնտեղ թարմանան ու հովանան: Ձուլածո ջրավազանը զոհասեղանի արևմուտքում էր, այն իր երկարությամբ ու լայնությամբ համարյա հավասարվում էր զոհասեղանի չափսերին: Դա մի հսկա ջրավազան էր, եզերքներն ափի լայնությամբ հաստ

ու տոկուն, շուշանաձև դրվագներով ավարտված: Նրա չորս անկյուններից յուրաքանչյուրը հենվում էր բնականից շատ ավելի մեծ չափսերով պատրաստված երեքական ցուլերի մեջքերին, որոնք իրենց անիմաստ մռութները թեքել էին դեպի երկրի չորս հիմնական ուղղությունները: Այդ ամենի հեղինակն էր Հիրամը՝ հռչակավոր վարպետը, որով հպարտանում էր Երեմիան, ինչպես նաև յուրաքանչյուր երիտասարդ, որը բավականաչափ գիտելիքներ ուներ հնությունների մասին: Սակայն ոչ թե որևէ վարպետ արվեստագետի, այլ հենց Իր՝ Տիրոջ սեփական գործն էր սրբազան լեռան կրային չոր գետնից աղբյուրի բխեցումը, և այն էլ հենց ձուլածո ավազանի ներքև, որտեղից նրա ջուրը ճարտար սարքավորումներով տարվում է դեպի ավազան: Այսպիսով, համաձայն աստվածային կարգավորության, «Կենդանի ջուրն» էր հասանելի դառնում և ոչ թե ջրամբարի մեռած հեղուկը, որն ամենից առաջ հարկավոր էր մաքրել շերեփուկներից ու տզրուկներից: Այդ հրաշալի ու սառնորակ «Կենդանի ջուրն» էր՝ հողի ընդերքի երերացող անարատ արյունը, որ վերակենդանացնում էր քահանաների ուժասպառ հոգիները:

Զոհասեղանի դիմաց՝ պատշաճ հեռավորության վրա, բացվել էր արքայական սեղանը: Այն բաղկացած էր իշխաններին և պալատականներին հատկացված մի երկար սեղանից և թագավորի ու թագուհու համար նախատեսված մի ավելի բարձրադիր սեղանից: Սեղանների վրա կային երկնակապույտ ծածկոցներ, որոնց վրա դրված էին ափսեներ, պնակներ, բաժակներ, սափորներ, աշտանակներ, բոլորն էլ, առանց բացառության, միաձույլ ոսկուց: Այդ թանկարժեք սպասքը տրամադրվել էր հատուկ կերպով տաճարի գանձարանից, որպեսզի Զատկվա առթիվ դրվի արքայական սեղանին: Տանտերն ու խնջույքի հյուրընկալը հենց Ինքը՝ Աստված էր: Ինչպե՞ս կարող էր Նա, որ անիմանալի կերպով գարշում է ամեն տեսակ անմաքրությունից, իր բնակության տաճարում հանդուրժել մարդկանց տներից բերված անոթներ: Այդ է պատճառը, որ տաճարը պետք է ապահովի ուտելու և խմելու սպասքը նաև Աստծու մյուս հյուրերի, որոնց թիվն այս անգամ չէր անցնում հազարը: Հիմա այլևս այնպիսին չէր, ինչպես տարիներ առաջ, երբ Հովսիա թագավորն Աստծուն նվիրված իր առաջին խնջույքն էր տոնախմբել: Այն ժամանակ նա իր շուրջն էր հավաքել նվազագույնը երեք տասնյակ հազար

մարդկանց՝ երկրի բոլոր նահապետական տներից: Այսօր, երբ քահանաների ներքին գավիթը լիքն է սեղաններով ու նստարաններով, որոնք շրջապատում են արքայական սեղանը, նույն ձևով այն ժամանակ թե՛ արտաքին և թե՛ ներքին գավիթներում նստել էր ամբողջ ժողովուրդը, երգում էր, ուտում և խմում ի պատիվ Տիրոջ, այն աստիճան, որ նկատի ունենալով տոնախմբողների մեծ քանակը՝ թագավորը նրանց տրամադրության տակ էր դրել իր պալատի գավիթներից մեկը: Այս մեծ խնջույքի ամենից կարևոր ու վայելուչ մասը դրա շարժառիթն էր, քանզի Տերը թույլ էր տվել, որ Իրեն գտնեն՝ առանց եռանդագին փնտրտուքի: Այնտեղ՝ սրբավայրի նախասրահում, Երեմիան ահագնացող կրակի բոցերի միջից նշմարում էր խորհրդավոր այն զույգ սյունները պղնձյա՝ *Բոազ և Յահին* (Բոոզ և Յաքում), որոնցից յուրաքանչյուրի սյունագլխին կար մեկական նռնաձև գունդ. հենց այդտեղ էր, ուր Տերը կրկին հայտնել էր ինքն իրեն այդ սերնդին: Դա տեղի էր ունեցել այսպես. նկատի ունենալով, որ քահանայական մտածելակերպի տեսակետից շատ մեծ դժվարությամբ հնարավոր էր որոշում կայացնել՝ տաճարի վերաբերյալ անհրաժեշտ վերանորոգումները կատարելու, հետևաբար հենց ինքը՝ Հովսիան, հրահանգ էր տվել անհապաղ վերանորոգել դարերի ընթացքում սրբազան կառույցների կրած մնասները: Թագավորի կամքի և անսանձ շտապողականության դիմաց ոչ մի արժեք չէին ներկայացնում պահպանողականների առարկությունները: Նա, ով ամենայն պատկառանքով ու լրջությամբ մերձենում էր Աստծու էությանն ու Նրան նվիրված պաշտամունքին, իր ժամանակին միևնույն անսանձ շտապողականությամբ մաքրել էր երկիրն Աստարտի՝ երկնքի թագուհու, կոթողներից, սրբել վերացրել էր բարձունքներից Բահաղի պաշտամունքը, իսկ հովիտներից՝ Տափետի գարշելի հնոցը, մինչև իսկ բոլոր վայրերից անձամբ կործանել էր այլ աստվածներին նվիրված զոհասեղանները: Հավիտենականը, որին չեն կարող պարփակել երկինքների երկինքները, չի բնակվում ոչ մի երկրային օթևանում: Այդուհանդերձ, երբ թույլ է տալիս ինքն իրեն առժամյա այցելություն կատարելու, միայն ու միայն մեկ տուն կարող էր լինել իր իջևանը, քանզի Ինքն էլ մեկ է ու միակը: Այդ անզուգական տունը լուսափայլ շողում էր հենց այնտեղ՝ վերևում՝ Սորիա լեռան գագաթին: Միակի կողմից վարձատրությունը չի ուշանում: Վերանորոգման

աշխատանքների ժամանակ գավիթում՝ մայրու փտած տախտակների տակ, հայտնաբերվում է մի գաղտնադարան, ուր ամեն տեսակ բորբոսնած իրերի կողքին լավ պահված ու պահպանված գլանաձև մի ձեռագիր կար: Այն բովանդակում էր նոր հայտնությունը, կամ, ավելի ճիշտ ասած, հին հայտնությունը, ուր գրված էր ոչ այլ բան, քան հենց Աստծու գերազանց խոսքը՝ ուղղված Մովսեսին: Դա երկար ժամանակ կորած համարվող վարդապետական բնույթի մի մատյան էր, օրենքների մի ընդարձակ ժողովածու, որոնք մինչ այդ միայն թերի և աղավաղված կերպով էին ավանդվել: Սադոկի սերնդից Քեղկիա քահանայապետը, որը, հակառակ իր առաջացած տարիքին, դեռ շարունակում էր վարել իր պաշտոնը, արժանացել էր մատյանը գտնելու շնորհին: Երբ Հուդայից եկած գրագիր Սափանը, որին շտապ կանչել էր Քեղկիան, մտնում է նրա մոտ, տեսնում է, որ գլանաձև ձեռագիրը դողում է ծերունու անկայուն ձեռքերում: Իմաստուն Սափանը՝ Եսելիայի որդին, երեք օրերի ընթացքում վերծանում, ճանաչում ու հաստատում է ճշմարտությունը: Աստված մի անգամ ևս շնորհ էր արել այդ սերնդին նվիրելու կորած վարդապետությունը:

Ամբողջ աշխարհը գիտեր, որ պալատում ձեռագրի առաջին ընթերցման ժամանակ ջերմեռանդ Հովսիան իրեն գետին էր նետել և հագուստները պատառոտել, որովհետև մեծապես ընկճվել էր իր հայրերի և նախահայրերի, ինչպես նաև ամբողջ ժողովրդի գործած մեղքերի, խախտումների ու օրինազանցությունների ահավոր գիտակցությունից: Այնուհետև, երբ նրա խղճահարությունը մեղմացել էր, թագավորը սկսել էր ցնծալ ու պարել սրահի շուրջը, քանզի Դավթի որդիների զգացական տրամադրությունները շատ շուտ են փոփոխության ենթարկվում: Անհրաժեշտ էր մի նոր ուխտի ձևավորում, և հենց ինքը՝ թագավորը, ընտրվել էր կնքելու այդ ուխտն Աստծու հետ տաճարում՝ երդման սյունի առաջ: Հովսիայի առաջին կարգադրությունը վերաբերում էր Զատկվա հրավերին՝ Աստծու հետ միասնական սիրո ճաշկերույթին, որն այդ օրը, տասներորդ անգամը լինելով, մաքրազարդված վիճակում, տոնախմբում էին: Երեմիան մեծ հաճույքով էր ողջունում այն իր բերկրալից սրտում: Գոյություն ունի՞ արդյոք աստվածային ավելի մեծ արարմունք, քան Եգիպտոսից՝ այդ ստրկության երկրից, ժողովրդի ազատագրումը: Եվ գոյություն ունի՞ արդյոք ավելի հրաշալի նախատոնակի երեկո, քան

գարնանային լուսնի *Նիսան* ամսվա տասնչորսը, երբ հասունանում է դաշտերի առաջին բերքը, և բարեհամբույր երկինքը մեծահոգ համբերությամբ ողջագուրվում է երկրի հետ:

Աշխարհում կան բազմաթիվ տարակուսող հոգիներ, Երեմիան գիտեր այդ մասին: Նրանք ակնարկներ էին անում և կամ թարթում իրենց աչքերը, երբ խոսքը վերագտնված ուսմունքի մասին էր լինում: Գրագիր Սափանը չէ՞ր թաքցրել արդյոք ինքն իրեն Մովսեսի հետևում, որպեսզի նոր ժամանակների թույլ ու հանգստավետ կենցաղը փոխարիներ ավելի խստամբեր կենցաղով: Ոչինչ ավելի չէր զայրացնում Անաթովթից եկած երիտասարդին, որքան նման լպիրշ թերահավատությունը: Նա երկար գիշերներ էր հատկացրել՝ դրոշմելու համար մատյանի բովանդակությունն իր մտքում, որից արտագրված օրինակներ ձեռքից ձեռք էին անցնում: Նա ձգտում էր ոչ թե կյանքի դժվարություններին ու ծանրացումներին,— իր բնավորությամբ նա արդեն հնարավորինս խուսափում էր դրանցից,— այլ նա գիտեր, որ Աստծու խոսքը հենց ինքն Աստծու խոսքն է, և մարդկային ոչ մի էակի չի հաջողվի նմանակել այդ խոսքը: Նմանապես նա լավագույնս գիտեր, որ Տերն ունի Իր սեփական ձայնը՝ մի իրական ու հնչեղ ձայն, որի մեջ Տերն ըստ Իր կամքի զգեստավորում է Իր խոսքը: Առկա են մինչև իսկ հարյուրավոր հնարավորություններ՝ խուսափելու և թաքնվելու այդ խոսքից, անուշադրության մատնելու և խլացնելու այն, և Երեմիան լավ ծանոթ էր այդ հնարավորություններին...

Նա սևեռուն հայացքով նայում էր զոհասեղանից այն կողմ՝ դեպի աղոտ լուսավորված տաճարի նախասրահը, մինչ ցանկանում էր մերձենալ իր կյանքի համար ամենից վտանգավոր այդ գիտելիքներին ու փորձություններին: Բայց հանկարծ մտքերն ընդհատվում են, քանզի ստիպված էր թագավորի սեղանի դիմացի բեմի առաջ շարք կազմել ուրիշ երիտասարդների հետ, որոնք նույնպես կանչված էին կատարելու տարբեր պատվավոր ծառայություններ: Նրան վիճակվում է կանգնել շքեղ հագնված մի երիտասարդի կողքին, որը գուցե մի քանի տարով մեծ էր իրենից, բայց վստահ՝ հասակով իրենից մի գլուխ ավելի բարձր: Դա մի վայելչագեղ գլուխ էր՝ լավ խնամված գանգուր մազերով ու մորուքով: Երեմիան անմիջապես հրապուրվեց նրանով: Երիտասարդը նկատեց,

որ իր հարևանը նայում է իրեն, և շրջեց դեպի նա իր կիսախուփ աչքերով դեմքը, որը մատնում էր մի անսխալ ինքնագոհունակություն.

— Կանգնա՞ծ եմ արդյոք Քեղկիայի որդի Անաթովթցի Երեմիայի կողքին... ինչպես ինձ հայտնել են...

Երեմիան, չնայած իր մատուցած պատվավոր ծառայությանը (այդ պատիվը վերաբերում էր ավելի իր նախնիներին, քան թե իրեն), անտարբերների մեջ իրեն պահում էր անտարբեր, բայց այս պարագայում ժպտաց ամոթխած, երբ մի անծանոթ տվեց իր անունը.

— Այո՛, դա ես եմ,— ասաց նա:

— Ես էլ Աշուրի որդի Անանիան եմ, Գաբավոն քաղաքից... Նկատում եմ, որ այս անունը քեզ համար ոչ մի նշանակություն չունի... Ճիշտ է, որ իմ հայրը քահանա չէ, և մեր նախնիները հռչակված չեն եղել... Դրա փոխարեն հնուց ի վեր բազմաթիվ մարգարեներ են դուրս եկել իմ հայրենական քաղաքից՝ Գաբավոնից... Խնդրում եմ բարյացակամ լինես ինձ հետ...

Անանիան գոհունակ ծիծաղեց իր՝ որոշ չափով անշնորհ կատակի վրա, որը Երեմիան չէր կարող անտեսել: Ըստ երևույթին, գաբավոնցի մարդուն ինչ-որ բան դրդում էր արտահայտվելու իր հարևանի մոտ՝ իրենից չպահանջվող անկեղծությամբ: Նա նույնիսկ պատմեց, որ իր հայրը՝ քաղաքի ամենահարուստ մարդը, մեծ ջանքեր է գործադրել, որպեսզի արժանացնի իր որդուն այդ երեկոյի պատվին: Այս խոստովանությունը, իհարկե, նվաստացուցիչ էր Անանիայի համար, բայց երևում էր, որ նա հատուկ դիտավորությամբ էր այդ անում: Այնուհետև մի անգամ ևս հայտարարեց ամբարտավան և առեղծվածային կերպով, որ իրեն չեն հետաքրքրում ոչ քահանայությունը և ոչ էլ թագավորին մատուցվող ծառայությունը, այլ լրիվ այլ մի բան: Դրա վերաբերյալ, սակայն, ինքը պետք է լռեր: Այսուհանդերձ, Անանիան շատ հանգամանորեն տեղեկացված էր այդ օրվա պատվաբեր ծառայության ու պարտականությունների մասին: Ինքն ու Երեմիան պետք է որպես մատռվակ սպասարկեին, և ամեն անգամ, երբ թագավորը պահանջեր, իրենցից յուրաքանչյուրը մի կիսալից բաժակ գինի պետք է մատուցեր նրան.

— Տես այստեղ այս երկու կավե սափորները... Դրանցից մեկը դու կտանես, իսկ մյուսը՝ ես... Մեզանից ո՞վ պիտի լցնի թագավորին բաց գույնի գինին, և ո՞վ՝ կարմիրը:

Ըստ երևույթին, զոհաբերությունների շարունակական ընթացքում կատարվել էր մի ընդմիջում: Քահանաների շարքերը զոհասեղանից հետ էին քաշվում: Դա պարզապես նրա համար էր, որ տեղ բացեն քահանայապետի շքախմբին, որն արևելյան կողմից մուտք գործելով՝ շարժվում էր դեպի գավիթի կենտրոնը: Քեղկիան,— որը Երեմիայի հոր միևնույն անունն էր կրում,— լինելով արդեն մի վատառողջ մարդ և զգեստավորված քահանայապետական պաշտոնին հատուկ ծանր հանդերձանքով, շատ դանդաղ և դողդոջուն քայլերով էր առաջ շարժվում: Իսրայելի ցեղերը խորհրդանշող՝ տասներկու թանկարժեք քարերով օժտված լանջապանակը շիկում էր իր փոս ընկած կրծքավանդակի վրա, իսկ երկարաձև խույրը, որը կրում էր Աստծու անվան չորս տառերը, խորը ծածկել էր նրա զառամած ու նեղ ճակատը: Քեղկիան՝ հռչակավոր և Աստծու կողմից օրհնված այդ անձը, որը վերագտել էր կորած ուսմունքը, տարին մեկ անգամ էր միայն դուրս ելնում իր տնից, ինչպես մեռելն իր դամբարանից, որպեսզի իբրև քահանայապետ իր սեփական ձեռքով ընծայաբերեր թագավորի կողմից հատկացված զատկական մատաղացուն, որը ոսկյա մի մեծ կաթսայի մեջ դրված՝ բերում էին նրա մոտ: Մինչ այդ ինքն անձամբ, իր դողդոջուն ձեռքերի մեջ, քահանաների օգնությամբ ճոճում էր մի փոքր բուրվառ:

Երեմիայի կարճատես ու լարված աչքերը սևեռված էին ընծայաբերող ծերունու ծիսական հանդիսավոր երթին: Նա հազիվ թե անդրադառնում էր, որ իր հարևան Անանիան բազմիցս դիպչում է իրեն հուզված: Հազարավորների հայացքը հանկարծ շրջվեց դեպի արքայական սեղանի բեմահարթակը: Ուշադրություն հրավիրելու նպատակով շեփորաձայները գնալով ավելի մոտեցան, հիմա արդեն նրանք շաչում են մտրակի հարվածների նման հրապարակի վրա: Այդ ընթացքում հանկարծ երկնակամարում, որը դեռ հարբած էր մայրամուտի վերջին հետքերով, սկսեց հստակ փայլել առաջին աստղը: Ամոնի որդի Հովսիան աստիճանների վրայով բարձրացել և իսկույն հայտնվել էր իր սեղանի բեմահարթակին: Չնայած որ նա արդեն բազմաթիվ տարիներ ի վեր իշխում էր քաղաքում ու երկրում, նրա քայլվածքը դեռ առույգ էր ու արագ: Նրա պալատականների մի մասը, որը չափազանց ծեր էր, երկար ժամանակից ի վեր դադարել էր ընկերանալ արագընթաց արքայի քայլերին:

Մինչդեռ նա առյուծի ոստյունով գրավում է բարձրադիր աթոռը, որը նման էր ճառասացի ամբիոնի: Երկնակապույտ վերարկուն պարուրում էր նրա հոչակավոր կերպարանքը: Գլխանոցի վրա կրում էր բոլորաձև մի պսակ, քանզի Աստծու տան մեջ Դավթի թագը կրելը համարվում էր մի դատապարտելի խախտում մարդ արարածի խոնարհության նկատմամբ: Բայց ավելի, քան նրա գլխի բոլորաձև պսակը, փայլում էր նրա կարճ մորուքով շրջանակված թարմ դեմքը: Դա ճառագայթում էր կյանքի լիությունից, մարմնական ուրախությունից, ուժի զգացողությունից և այն գիտակցությունից, որ ինքն արդարացիորեն արժանացել է Ամենակարողի բարեհաճությանը: Պատվավոր ծառայության կանչված երիտասարդները, պալատական պաշտոնյաները, ստորադաս քահանաները և բոլոր նրանք, ովքեր այդտեղ պատրաստ սպասում էին որևէ ձևով սպասարկելու, այդ պահին թագավորի առաջ փռվում են գետնին: Բոլորն էլ միաբերան կրկնում են կիսաձայն սովորական բանաձևը. «Պատիվ ունեմ նայելու իմ արքայի դեմքին»: Միայն Երեմիան, ի դեմս թագավորական այդ մրրկահույզ տեսարանի, մոռացավ կատարել պարտն ու պատշաճը և մնաց կանգնած: Նա սթափվում է միայն այն պահին, երբ գաբավոնցի Անանիան քաշում էր նրա հագուստի ծոպից, որպեսզի ծնրադրի:

Ընդարձակ գավթում տիրում է քար լռություն: Շուրջանակի սեղաններից Աստծու հրավիրյալները,— յուրաքանչյուրն իր հերթին՝ իբրև ներկայացուցիչ երկրի նշանավոր գերդաստաններից մեկի,— ոտքի են կանգնած: Սպասում են թագավորի մեկ խոսքին, սակայն Հովսիան մեկի փոխարեն երկու բառ է արտասանում, և դրանք երկու ճշմարիտ նշանաբաններ են, որոնք նրա բերանից հնչում են հրապարակով մեկ.

— Ուրախությունն Աստուծո...

Դա հնչում է իբրև տիրակալի ռազմական մի հրահանգ՝ ուղղված տոնախմբողներին, որպեսզի շտապ ժողովեն կյանքի դժբախտություններում անգամ հոգու պահած բոլոր հաճույքներն ու ուրախությունները, և դրանք այս գիշեր ընծայաբերեն որպես զոհաբերության ողջակեզ: Քանզի սկզբում Աստված հանուն երջանկության ստեղծեց երկինքն ու երկիրը: Նրա Շունչը, որ մեղմ շրջում էր ջրերի վրա, լույսը, որին ասաց՝ «Թող լինի», և այդպես եղավ. դրանք Աստծու

ուրախության մարմնավորված նշաններն են: Թագավորի շողշողացող դեմքն ուզում էր ասել, որ ուրախությունն Աստծու զորությունն է: Նա մեզ տալիս է այդ, որպեսզի մենք այն վերադարձնենք Նրան Զատկվա այս ազատագրումի և ստրկությունից փրկվելու տոնին: Երեմիայի աչքերը լցված են արտասուքով: Գավթում, սակայն, որոտում է հազարավորների ձայնը՝ «Ուրախությո՛ւն Աստուծո»:

Միևնույն ժամանակ գավիթի սրբարանում՝ *Բոազ և Յաքին* անուններով հայտնի սյուների արանքում, խռնվում են Ասափի ժառանգները: Դրանք երգիչներն ու երաժիշտներն են, թվով երկու հարյուր ութսունութ հոգի, ինչպես որ սահմանվել էր բոլոր ժամանակների համար Դավիթ թագավորի և իր երաժշտապետների՝ Ասափի, Եմանի և Իդութունի կողմից: Նրանք երեք երգչախմբերով, բաժանված քսանևչորս տարբեր ենթախմբերի, գրավում են իրենց տեղերը: Ներքևի երգչախումբը՝ նախասրահի աստիճանների վրա, ընդգրկում է թավ ու խոպոտ ձայները՝ հատուկ ռազմական ու կրակոտ փառաբանությունների: Մեջտեղի երգչախումբը բաղկացած է նվագողներից՝ իրենց դրվագազարդ տավիղներով, քնարներով, ուդերով, սրինգներով, եղջերափողերով և երկարափող շեփորներով, առանց մոռանալու մետաղյա հսկա ծնծղաները, որոնք փառաբանական երգերի կշռույթի խելացնոր և ահագնացող ընթացքի հետ որոտաձայն խլացնում են ունկնդրությունը: Գեղեցկագույն ու գերազանց ձայները, սակայն, խմբված են «վերին երգչախմբում», որի անդամները երեխա տարիքից են ընտրվում և ենթարկվում խստապահանջ ուսուցումների ու տառապալից քննությունների, և նոր միայն դրանից հետո, այն էլ շատ հազվադեպ, հնարավոր է լինում ընդունվելու նրանում: Այնտեղ կան ձայնի և երգեցողության իսկական վարպետներ միայն, որոնք ճանաչում, պահպանում և կիրառում են իրենց ճշգրիտ մանրամասնություններով արվեստի հարյուրավոր տեսակներ, չափսեր, մեղեդիներ, մակարդակներ, զարգացումներ, զարդարանքներ, սկզբնավորություններ ու հանգավորումներ այնպես, ինչպես որ Ասափը դրանք մշակել էր: Նրանք ի վիճակի են նույնիսկ,— Տիրոջ ներշնչանքի առկայության դեպքում, և երբ պահանջկոտների կարծիքը թույլատրի,— հնավանդ շարականների սրբազան ժառանգության վրա նորն ավելացնելու: Հիմա, սակայն, մի շատ հին երգ՝ Դավթի կողմից հյուսված մի սրբազան

շարական, իր դաշնավորված ձայների հզոր հնչեղությամբ հաղթահարում է Աստծու հյուրերի խառնիճաղանջ աղմուկը:

Արդեն ողջույնի Սաղմոսի առաջին հատվածների ընթացքում պալատականները հավաքվել էին թագավորի շուրջը և նստել սեղանների մոտ: Քաջատեղյակ Անանիան ծանոթ էր բոլորի անուններին և դրանք հայտնում էր անտեղյակ Երեմիային: Ձառամյալ մարդը, որ այնտեղ՝ թագավորի երկու որդիների արանքում տեղ էր գրավել, հենց ինքը՝ Սափանն էր, գրագրապետն ու ժողովրդի մեծ ուսուցիչը, որի հանդեպ մեծագույն ակնածանք էին տածում: Չնայած որ նա քահանայական կամ արքունական որևէ պաշտոն չէր զբաղեցնում, սակայն արժանավորության տեսակետից նրան իրենց տեղն էին զիջում պետության կառավարիչը, թինապահների գերագույն հրամանատարը և անձամբ նույնիսկ «Շեմի առաջին պահապանը», հենց նա, ով տնօրինում էր տաճարի սպասարկությունը, որը պետք է բավականանար մի ստորադաս աթոռով: Այդուհանդերձ, թվում էր, թե Սափանն այնքան էլ ուրախ չէր իր երկարամյա փառապսակ կյանքին ընծայված պատիվների համար: Նրա կնճռոտված փոքրիկ դեմքը՝ իր թարթիչներից զուրկ կարմրավուն աչքերով, մռայլորեն նայում էր դեպի առաջ, ասես թե գրագրապետը ներքուստ մեղադրում էր ինքն իրեն նրա համար, որ ծանոթացել էր վերագտնված օրենք–ուսմունքի հետ ու վերծանել այն, որով ճանապարհ էր հարթել դեպի անորոշ մի ապագա: Քանզի ավելի վատ է մի օրենք ոտնահարելը, որին արդեն ծանոթ ես, քան թե տգիտության պատճառով նման մի օրենք անտեսելը: Սափանի որդի Ահիկամը՝ թագավորի անձնական գրագիրը, աթոռ չէր գրավել սեղանի շուրջ: Այդ հաղթամարմին և բավականին կոշտ մարդու աչքերն ուշադրությամբ պտտվում էին իր կյանքի երկու հզորագույն մարդկանց շուրջը՝ իր հոր և իր արքայի: Ինչպես երևում էր, նա ամենայն ինքնազոհությամբ պատրաստ էր այդ երկու համառ իշխանավորներին իրար հետ միշտ հաշտ ու համերաշխ պահել:

Հովսիան, սակայն, չէր հետաքրքրվում իր շրջապատով: Իր մոտ էր նստեցրել Ամիտալին՝ այն կնոջը, որին թագուհի էր հռչակել, որը, սակայն, մայրը չէր իր անդրանիկ որդու՝ Եղիակիմի: Վերջինս իրեն արհամարհված էր զգում՝ զգալի ծաղրանքով իրեն հատկացված նստատեղի համար, և աշխատում էր բոլոր ներկաներին, ներառյալ իր հորը,

հասկանալի դարձնել իր անթաքույց դժգոհությունը: Նման մի վերաբերմունքի համար թագաժառանգ իշխանն ուներ իր պատճառները, և Անանիան գիտեր այդ պատճառները: Անդրանիկ որդու մորն էր պատշաճում թագուհու կարգավիճակը, և իբրև կին նա միակն էր, որ իրավունք ուներ մտնելու տաճարի ներքին գավիթը: Հովսիան, սակայն, անտեսել էր այդ ավանդությունը: Նա սիրում էր Ամիտալին և երկար տարիներ ի վեր լոկ նրա հետ էր անկողին կիսում: Հետևաբար, կանանցից ո՞ր մեկը պետք է լիներ թագուհի: Ամիտալը երկու որդի էր շնորհել իր ամուսնուն: Նրանցից տասնյոթամյա Հովաքազը, դժբախտաբար, մարմնով ու մտքով շատ դանդաղ էր հասունանում: Սափանը, որ հսկում էր իշխանի կրթությունը, դառնությամբ էր դժգոհում այն բանից, որ Հովաքազի ջինջ ու բարի հոգին կրում էր մի անսթափ բանականություն, մինչդեռ Եղիակիմի պայծառ միտքը մի մռայլ ու պղտոր հոգու հետ էր կապված: Իշխանների էությունն ի հայտ էր գալիս ըստ իրենց դրսևորած վարվելակերպի: Նրանք երկուսն էլ ոչ մի բառ չէին արտասանում: Հովաքազը երեխայական չքացած մի ժպիտով հակված էր սեղանի վրա: Նրա մատներն անհանդարտ շարժվում էին և ձևավորում մի ինչ-որ անտեսանելի առարկա: Եղիակիմը ձանձրացած հենվել էր իր աթոռին: Երբեմն փրցնում էր մի ծաղիկ իր ճակատի ծաղկեպսակից, որը կրում էր՝ ըստ օտարամուտ սովորության, պոկում էր նրա թերթիկները և շփում իր ափերի մեջ, որպեսզի հետո թարթիչները փակելով ըմբոշխնի նրանց բուրմունքը:

Հովսիան և Ամիտալը, սակայն, կենտրոնացել էին միայն իրենց կրտսեր որդու՝ փոքրիկ Մաթանիայի վրա, որից ոչ մի ժամով նույնիսկ չէին ուզում բաժանվել: Դա էր պատճառը, որ հնգամյա Մաթանիային, իր երեխայական հանգիստ քնի փոխարեն, արտոնել էին վայելելու աստվածային տոնախմբությունը: Եվ նա վայելում էր այն: Դրա ապացույցն էր նրա ցնծալից ձայնը, որի սուր ճչոցներն անկարող էր լռեցնել արքայական կամ ծնողական ցանկացած հանդիմանություն: Երեխան սեղանի բեմահարթակի ներքևում՝ մի ազատ տարածության մեջ, խաղում էր և զզվոտվում իրեն տարեկից մի այլ երեխայի հետ, որը կոչվում էր Աբդիմելեք՝ Եթովպիայից Երուսաղեմ եկած մի խորամանկ սևամորթ և հրաշալի պարող: Փոքրիկ քուշեցին իր յուրաքանչյուր քայլն անգամ վերածում էր պարային արվեստի: Եվ երբ Դավթի սերնդի կրակոտ ժառանգորդը չէր

խանգարում նրան որևէ մի խաղի պահանջով, այն ժամանակ Աբդիմելեքը Տիրոջ տաճարի նախասրահի մեջտեղում սկսում էր խորասուզված պտտվել ինքն իր շուրջը՝ իր մեջ արմատացած պաշտամունքային մի պարով տարված՝ նվիրված մի ինչ–որ սևաթույր աստվածության:

Ամիտալը, չնայած որ արդեն մայր էր տասնյոթամյա մի որդու՝ Հովաքազի, գեղեցիկ կին էր՝ երիտասարդական մարմնով ու ներդաշնակ շարժումներով: Նրա՝ կովի աչքերի նման մեծ աչքերից արտացոլվում էր համերաշխության ու հաշտության իմաստուն ոգին: Հայտնի էր, որ թագուհին գիտակցում էր իր մարմնի գեղեցկությունը և դրա պահպանման ու խնամքի համար ողջամիտ ջանքեր չէր խնայում: Մազերի հարդարանքը եգիպտուհիների հոյակապ ոճով էր, որը լրիվ բաց էր թողնում ճակատի մասը: Նրա ներքնազգեստը սպիտակ էր, սակայն վերնազգեստը ոչ թե երկնագույն կապույտ էր՝ ըստ արքունական սահմանված կարգի, այլ կարմիր գինու գույն ուներ: Ի հարգանս Տեր Աստծու՝ նա դրել էր լավագույն զարդերը՝ զմայլելի ականջօղեր, իրար վրա շարված զանազան վզնոցներ, բազկի շղթաներ, ապարանջաններ, մատանիներ, գարշապարների շուրջը՝ ոսկյա օձեր: Նրա ձեռքերի և ոտքերի եղունգները երեսապատված էին ոսկյա ջնարակով: Ինչքա՜ն էր սիրում Հովսիան տեսնել Ամիտալին այդպես ճոխորեն պճնված: Նրա պղնձագույն ձեռքը հանգչում էր թագուհու սպիտակ, անփույթ և անփայլ ձեռքի վրա: Վերջինս ժպտալով թեքում էր գլուխն իր ամուսնու կողմը՝ լսելու համար նրա խոսքերը, որ փսփսում էր իր ականջին, մինչ աչքերով անընդհատ հետևում էր կովարար Մաթանիային և թելադրում պահապան զույգ գերիներին, որ չդադարեն հսկել նրա վրա:

Զատկվա տոնական ընթրիքն արդեն սկսվել էր: Ղևտացիներն ու ցածր աստիճանի քահանաները շարք կազմած շտապում էին իբրև մատուցող սպասարկել հրավիրյալների սեղանները՝ տանելով ափսեներ և սափորներ: Քահանաները, յուրաքանչյուրն իր պաշտոնի համեմատ, իրենք էին պատրաստել տոնական մեծ ճաշկերույթը՝ ամենայն ճշգրտությամբ պահպանելով բոլոր կանոնները: Իրենք էին մորթել մատաղացու կենդանիներին, հոսեցրել նրանց արյունը, մասնատել նրանց և առանձնացրել մարդկանց հատկացված սննդի բաժինը՝ Տիրոջ և նրա սպասավորների բաժնից: Բայց դրանով չէր ավարտվում ամեն ինչ. երկինքը

երկրի կենտրոնի հետ միավորող իրերի համապարփակ կարգավորության մեջ ոչինչ չպետք է մոռացվեր և անուշադրության մատնվեր: Նաև արտերից ընծայաբերվող երախայրիքը, բանջարեղենը, պտուղները, համեմունքները, որոնք կազմում էին ուտեստների համադամ բաղադրիչները, անհրաժեշտ էր մանրամասն քննության ենթարկել՝ նախքան դրանց մուտքը թույլատրելը: Չէ՞ որ Տիրոջ ամբողջ ստեղծագործությունը ենթակա է բաժանումի՝ բարին չարից, մաքուրը՝ պիղծից, արգելվածը՝ արտոնվածից: Այս բաժանումով այս և այն կողմ տատանվող մարդ էակը ձեռք է բերում ապահովություն և ճիշտ ուղղություն: Տաճարի համար հաստատվել էին բազմաթիվ պաշտոնյաներ, որպեսզի ամենայն բարեխղճությամբ հսկեին հիշյալ բաժանումը, որն ընդգրկում էր ամբողջը՝ իր մեծով ու փոքրով:

Ստեղծագործությունը վայրի թարմությամբ է պճնազարդարվում *Նիսանի* (ապրիլ ամսի) օրհնված լուսնի ներքո: Անշուշտ, բոլոր բույսերն ու բոլոր մրգերը հավասար չեն Տիրոջ առջև, ինչպես, համաձայն մի անըմբռնելի նախապաշարումի, բոլոր մարդիկ հավասար չեն Նրա դիմաց: Փեգենան, սամիթը, լեռնային գինձը, մարգագետնի մանանեխը և բոլոր ուտելի բույսերը, որոնք բուսնում են ազատ կերպով, Աստծու հետ առնչության տեսակետից տարբերվում են մարդու կողմից աճեցված բոլոր կանաչեղեններից: Ընծայաբերման վերաբերյալ վաղահաս վարունգներից ամեն մեկը և դդումներից յուրաքանչյուրն իր ուրույն արժեքն ունի: Ձիթապտղի ամեն մեկ հատիկը, ինչքան էլ աննշան լինի, ամենից առաջ պետք է ստուգվի նրա պիտանելիությունը: Քանզի Ադոնայ Էլոհիմը բացառապես Տերն է ապրողների, Աստվածը՝ տիեզերքի երիտասարդական թարմության: Նրա համար նվազագույն թերությունը, դույզն փտածությունը, ամենաչնչին որդը մրգի միջուկում պատգամաբերն է մահվան: Եվ չնայած որ Նա մահը հաստատել է իբրև գերագույն իշխանություն իր աշխարհի վրա, այդուհանդերձ, բացահայտել է նրա էությունը բոլորովին իբրև անմաքրություն, իբրև ապականարար և դատապարտելի:

Նկատելի էին հյուրից հյուր շտապող սպասարկու քահանաների՝ պահի դրության առթիվ դրսևորած հուզմունքն ու իրենց հոգնեցուցիչ պատրաստությունների վերաբերյալ գործադրած ջանքերի հետքերը: Եթե այդ քահանաների թիվն այդքան մեծ չլիներ, և աշխատանքի

բաժանումն էլ՝ այդքան ճշգրիտ, երիտասարդներից և անշնորհքներից շատերը կկորցնեին իրենց գլուխը:

Երեմիան կանգնել էր Անանիայի կողքին՝ թագավորի թիկունքում: Նա տարուբերում էր իր կարճատես աչքերն ուրախության մեծ խնջույքի աղոտ շարժումների վրա, քանզի մինչ այդ դեռ իր սպասարկման կարիքը չէր պահանջվել: Ինքն ու իր հարևանը յուրաքանչյուրն իր ձախ ձեռքում բռնել էին մեկական ոսկյա բաժակ, իսկ աջ ձեռքում էլ՝ մեկական կափարիչը հանված կավե կուժ, որոնք պարունակում էին թագավորի համար հատուկ կերպով պատրաստված գինի: Անանիայի կժի մեջ բաց ոսկեգույն գինի էր, իսկ Երեմիայի կժի մեջ՝ արյան գույնի կարմիր գինի:

Թագավորի առջև դարսված էր մի կույտ անխմոր գարու հաց: Վերցնելով ամենավերևի հացը՝ նա բեկանեց այն չորս մասի: Առաջին մասը հանձնեց Ամիտալին, երկրորդը՝ Սափանին, երրորդը՝ իր թիկնապահների հրամանատարին, որը կոչվում էր Մասիահ, իսկ հացի վերջին բեկորն էլ ուղարկեց փոքրիկ Մաթանիային, որն անմիջապես խրեց այն իր պարի սիրահար թուխ խաղընկերոջ՝ Աբդիմելեքի ատամների արանքը: Հովսիայի ուտելու ձևը շատ հապճեպ էր: Գիտե՞ր արդյոք նա, թե կար մի հինավուրց ավանդություն, որը հանձնարարում էր այդ տոնական երեկոյի ընթրիքն արագ կերպով վայելել, քանզի Իսրայելի որդիներն աճապարանքով էին սնվել, նախքան Տիրոջ զարմանահրաշ առաջնորդությամբ Կարմիր ծովն անցնելը: Ո՛չ, սակայն. թագավորի արտորանքը հիմնված չէր նման մի հիշողության վրա: Նա ամեն ինչում անհամբեր էր, հավանաբար մղված գործելու բուռն ցանկությունից կամ մի թաքուն անհանդարտության պատճառով: Շատ շուտ էին փոփոխվում Դավթի ժառանգների զգացումները: Նույնպես և Հովսիայի ուրախության զգացմունքը միանգամից վերածվում է ներքին խռովության: Երկար ժամանակ էր, որ նա մատներով զարկում էր սեղանի տախտակին, ապա ձայնեց Սափանին.

— Կատարվա՞ծ է ամեն ինչ օրենքի սահմանած կարգի համաձայն... Ոչ մի անհաճո բան թող չլինի Տիրոջ և իմ միջև: Ինչի՞ եք սպասում... Սկսե՛ք ընթերցումը...

Ըստ երևույթին Ահիկամը՝ թագավորի անձնական գրագիրը, վաղուց սպասում էր այդ հրամանին, որովհետև ձեռքում պատրաստ բռնած մագաղաթն անմիջապես տվեց իր հորը: Ժողովրդի ուսուցիչն ու

դաստիարակը խոհեմությամբ բացեց այն՝ առանց տուրք տալու թագավորի անհամբերությանը և սկսեց ցածր ու միապաղաղ ձայնով ընթերցել այն.

— «Պահի՛ր *Արիք* ամիսը, կատարի՛ր քո Տեր Աստծու Զատիկը, որովհետև *Արիք* ամսին գիշերով դուրս եկաք Եգիպտոսից...»:

— Այդ մեկը՝ ո՛չ,— բուռն կերպով ընդմիջեց թագավորը Սափանին:— Դրա կարիքը չկա... Կուզենայի միայն իմանալ, եթե քաղաքում ամեն ինչ կատարվո՞ւմ է ու պահպանվո՞ւմ Աստծու հրահանգի համաձայն: Ուտո՞ւմ են դառն խոտաբույսեր... Տան շեմքերին ու դռների բարավորներին քսո՞ւմ են արյուն զոպայի միջոցով...

Առանց պատասխանի սպասելու՝ Հովսիան հանկարծ շրջվեց և, հակառակ իր առջև դրված բազմաթիվ բաժակների, ցույց տվեց Երեմիայի բռնած բաժակը: Վերջինս, ըստ իրեն տրված ցուցմունքի, կիսով չափ լցրեց այն մուգ կարմիր գինով և մատուցեց թագավորին: Հովսիան, մտազբաղ, մի երկար պահ նայեց Անաթովթից եկած քահանայի որդու դեմքին: Այնուհետև խմեց լցված գինին, որից անմիջապես հետո դարձյալ դարձավ անհամբեր.

— Ի՞նչ պատահեց... դե, շարունակե՛ք ընթերցել... Բայց ոչ Սափանը... Սափանի ձայնը հոգնած է... Թող մեկ ուրիշը կարդա: Ուզում եմ լսել պատերազմի կանոնների մասին... Այ այս մեկն այստեղ... Ո՞վ է նա...

Արարողապետը հայտարարեց Երեմիայի անունն ու ընտանեկան ծագումը: Վերջինս անակնկալ կերպով, իր ամբողջ շրջապատից գերադասված, կանգնեց գրագրապետի կողքին, ձեռքերում բռնած կոթերը երկու փայտե ձողերի, որոնց վրա փաթաթված էր մագաղաթը վերագտնված օրենքի: Եթե մեկ օր առաջ իրեն ասվեր, որ ինքը պիտի հնչեցներ իր ձայնը թագավորի առաջ, հավանաբար հրաժարվեր այդ օրվա պատվավոր ծառայությունից: Նա ամաչկոտ էր և մարդկանցից խուսափող, չէր սիրում երևալ և լսելի դառնալ: Հիմա, սակայն, քանի որ թագավորի հրահանգն անսպասելիորեն իրեն էր տրվել, այլևս ինքը չի համակվում ամենադույզն ամաչկոտությամբ անգամ, որպես թե պետք է այդպես լիներ, և դա էլ իր իմաստն ուներ, որ այդպես է: Սափանի վտիտ մատնեմատը ցույց տվեց իրեն ընթերցման տեղը: Նա բարձրացրեց մագաղաթն իր դեմքի մոտ: Զարմանքով լսեց իր սեփական ձայնը, որը, ներդաշնակորեն

սահելով տողերի վրայով, պատգամում էր Աստծու խոսքը թագավորին: Իր ձայնում նկատեց նաև մի ինչ–որ օտար միջամտություն կամ թրթռացում, որն ինքն անձամբ լսում էր խոնարհած գլխով.

— «Եթե պատերազմի ելնես քո թշնամու դեմ և տեսնես նժույգներ ու կառքեր և ռազմի դաշտ եկած ժողովուրդ՝ թվով քեզանից շատ ավելի, մի՛ վախեցիր...»:

— «Մի՛ վախեցիր...»,— կրկնեց թագավորը հաստատակամ, որպես թե ուրախանում էր, որ աստվածային խոսքն այդքան ցանկալի կերպով հարազատ է իր սեփական սրտին: Երեմիան հանգիստ շարունակեց իր ընթերցումը: Տողից տող անցնելով՝ նրան թվում էր, որ իր ձայնում օտարոտի միջամտությունն ավելի է ուժեղանում.

— Նա, ով նոր տուն է կառուցել և դեռ բացումը չի կատարել՝ այնտեղ բնակվելու համար, թող վերադառնա իր տունը, որ չլինի թե պատերազմում սպանվի, և իր փոխարեն մեկ ուրիշը գա ու բնակարանամուտ անի:

— Եվ երբ մեկն այգի է տնկել, բայց դեռ դրա բերքը չի վայելել, թող վերադառնա իր տունը, որ չլինի թե պատերազմի դաշտում սպանվի, և այլ ոք վայելի դրա բերքը:

— Եվ նա, ով նշանվել է մի աղջկա հետ, բայց դեռ նրան տուն չի բերել, թող վերադառնա իր տունը, որ չլինի թե պատերազմի ժամանակ սպանվի, և ուրիշ մի մարդ ամուսնանա իր նշանածի հետ:

— Սպաները թող դարձյալ խոսեն ժողովրդի հետ և ասեն. «Այն մարդը, որ վախկոտ է և թուլասիրտ, թող գնա ու վերադառնա իր տունը, որպեսզի իր եղբոր սիրտն էլ վախկոտ չդարձնի, ինչպես իր սիրտն է...»: Երբ սպաները վերջացնեն ժողովրդի հետ խոսելը, այն ժամանակ հրամանատարները թող ժողովրդի գլուխն անցնեն ու բանակն առաջնորդեն»:

Թագավորը, մեծապես դեպի առաջ թեքված, աչքերը Երեմիայի վրա սևեռած, մրմնջալով կրկնում էր ուսմունքի հատվածները, որոնք մի թագավորի և բանակի հրամանատարի համար գրեթե անտանելի բեռ պետք է համարվեին:

— Շարունակի՛ր կարդալ... Դու, Անաթովթցի... Ինչ է անունդ... Ուզում եմ լսել այն պաշարված քաղաքի մասին... Թող ոչ մի անհաճո բան չլինի Տիրոջ և իմ միջև...

«Երեմիան ընթերցում է թագավորի առջև»

Երեմիան կրկին խոնարհեց աչքերը մատյանի վրա: Տիրեց խոր լռություն: Շատերը հիանում էին երիտասարդի ձայնի այդքան շուտ ձեռք բերած անհերքելի հզորության վրա.

— «Երբ մոտենաս մի քաղաքի՝ այն պաշարելու նպատակով, նախ խաղաղության կոչ կանես նրա բնակիչներին...»:

— Ապա կպաշարես այն,— բացականչեց թագավորը՝ մեծապես ուրախանալով իր լավ հիշողության վրա,— կգրոհես նրա վրա, բայց կացնահարելով նրա պտղատու ծառերը չկտրես... Այսպես է սահմանված կարգը...»:

Հովսիան մի թեթև նշան արեց՝ հայտնելու համար, թե ավարտվել է ընթերցանությունը: Այնուհետև խոհուն նայվածքով շրջվեց դեպի Երեմիան.

— Դու, Անաթովթից եկած երիտասարդ, շատ լավ ընթերցեցիր, հզոր ու գեղեցիկ է ձայնդ, երբ Աստծու խոսքն է հնչեցնում... Ուզում եմ նորից լսել քո այդ ձայնը...

Թագավորի այս մեծ գովասանքը, ինչպես սովորական երևույթ է, ինքնաբերաբար արժանացավ նաև սեղանակից պալատականների և իշխանների արքայահաճո հավանությանը: Նույնիսկ Սափանը գլխով արեց գոհունակ, իսկ նրա լրջախոհ որդին՝ Ահիկամը, ժպտաց թեթևացած, որպես թե իր համար մի սպառնալից կնճռոտ հարց բարվոք լուծում ստացած լիներ: Միայն մեկը զայրույթից դեղնել էր և չէր կարողանում ինքն իրեն զսպել: Դա Եղիակիմն էր: Թագավորի այդ անդրանիկ որդին զզվանքով դեն շպրտեց իր ձեռքում բռնած վարդի կոկոնը, որը պատրաստվում էր փետել: Նրա նիհարավուն դեմքը, ուր նորաբույս մորուքի միջից առանձնանում էր նրա հաստաշուրթ բերանը, գնալով ծամածռվում էր: Նախքան արքան ազատություն կտար ընդհանուր խոսակցություն սկսելու, նա բարկացած վեր կացավ տեղից ու բացականչեց.

— Արքայի մեծափառությունը թող ների իր ծառային այս խոսքի համար... Բայց ես ամենևին էլ գեղեցիկ չեմ համարում Անաթովթից եկած այդ մարդու ձայնը... Եվ մի անգամ էլ երբեք, երբեք պիտի չուզենամ լսել այն...

Բոլոր ներկաներն ապշահար էին եղել ավագ իշխանի այդ անպատկառությունից, որը հանդգնել էր թագավորի գովասանական խոսքերին

հակաճառել իր սխալ առարկությամբ: Համենայն դեպս, Սափանի և Ահիկամի ականջների համար պարզ էր, որ այդ անամոթ պոռթկումի հետևում շատ ավելին էր թաքնված, քան մի պարզ հակաճառություն: Ինչ-որ մեկը կհամարձակվե՞ր արդյոք մտածել, որ ապագայի թագավորը, պարսավելով ընթերցողին, ուզում էր թիրախ դարձնել հենց ընթերցվածը, այսինքն՝ Աստծու ուսմունքը: Ոչ ոք չէր շարժվում: Նույնիսկ երկու երեխաները զգում էին, որ մի շատ վտանգավոր բան է պատահել: Մաթանիան ընդհատել էր իր խաղը, իսկ Աբդիմելեքը՝ իր պարը: Ծածուկ նայվածքներ սարսափահար փորձում էին որոնել Հովսիայի դեմքը, որը մռայլ գույն էր ստացել: Տեսնում էին, թե ինչպես թագավորն իր բռունցքում պահում էր Երեմիայի մատուցած բաժակը, որը ջղագրգիռ կերպով տևապես սեղմում էր ուժեղ: Ուզում էր այդ պահին շպրտել այն իր որդու վրա՝ առանց նկատի առնելու, որ դրանով անարգած կլիներ աստվածային ընթրիքի սրբությունը: Անմիջապես, սակայն, կանացի մի անփայլ սպիտակ և մսոտ ձեռք հանգավ Հովսիայի դարչնագույն բռունցքի վրա, որը դանդաղորեն թուլանալով՝ բաց թողեց բաժակը: Ի հարգանս զատկական տոնի անխառն ուրախության, որի վերականգնումն իր ջանքերի շնորհիվ էր եղել, թագավորը փորձեց այժմ զսպել իրեն և մի քանի խոպոտ բառ արտասանել.

— Իմ ավագ որդին ազատ է իր խոսքն ասելու...

Բարեբախտաբար, Ասափի ժառանգները սկսեցին հնչեցնել երգչախմբային մի նոր երգ՝ թմբուկների որոտաձայն հարվածների ընկերակցությամբ: Ներքին գավիթի սեղանների բոլոր հրավիրյալները հետևեցին դրան: Ոչ ոք այլևս չէր կարող լսել անգամ իր սեփական ձայնը: Երեմիան, սակայն, որ անսպասելի կերպով դարձել էր փոխանցողը աստվածային վարդապետության և պատճառը թագավորի դեմ հակաճառության, հանգիստ կանգնել էր տեղում՝ ինքն իր մեջ ամփոփված, լրիվ անտարբեր: Թագավորը նշան արեց նրան, որ մոտենա իրեն: Այդ պահին նա որսաց Անանիայի տարօրինակ, հետապնդող և խոցող նայվածքը, որը չի մոռանա: Հովսիան իր բազկից հանեց մի ոսկյա ապարանջան և տվեց քահանայի որդուն՝ կոշտ կերպով ասելով.

— Դու, Անաթովթցի, վերցրո՛ւ սա...

Եվ ուրիշ ոչ մի խոսք չհավելեց:

* * *

Արքայական սեղանին մատուցած պատվավոր պաշտոնով դեռևս չէր ավարտվում Երեմիայի այդ գիշերվա ծառայությունը: Թագավորի գովասանքը, ավագ իշխանի ատելավառ պոռթկումը մեծերի աչքին որոշ կարևորություն ընծայեցին երիտասարդին: Եվ այսպիսով, հավանաբար նույնիսկ Սափանի անձնական առաջարկով, նրան արժանացրին նաև մի երկրորդ պատվի՝ «վկայելու պատվին»: Եվ քանի որ այդ պաշտոնը պետք է ամբողջացվեր գավառից եկած երկու անձի կողմից, հետևաբար, իբրև երկրորդ վկա, ընտրվեց Երեմիայի հարևանը՝ Անանիան՝ հարուստ մարդու որդին, որը պարզապես նրա համար արժանացավ այդ պատվին, որովհետև մոտիկ էր կանգնած:

Վկայելու պաշտոնի իմաստը հետևյալն էր. մեծ տոներից և հատկապես զատկական երկարատև կերուխումից հետո տաճարի դարպասները բավականին ուշ էին փակվում, ընդհանրապես մի քիչ առաջ գիշերային երկրորդ պահակափոխությունից, երբ տարվա եղանակի աստղերի հույլն արդեն անցած էր լինում զենիթը: Սակայն նախքան համատարած խոր անդորրի վրա հասնելը և լռակյաց քահանաների պահակության սկիզբը հարկավոր էր չթողնել ոչ մի հետք զոհաբերության խնջույքից: Մարդկային ոչինչ, նվազագույն անկարգությունը, ամենափոքր արատն անգամ չպետք է խանգարեր տաճարի հոժարակամությանը՝ ընդունելու իր Տիրոջը: Քանզի այդ պահին արդեն հայտնվում էին տիեզերքի ամենավտանգավոր ժամերը, բնական անզորության ժամերը, քնելու ժամանակը, երբ ընդհատվում էին զոհաբերություններն ու զոհաբերության հատուկ աղոթքները, և ժողովրդի աղերսող մանկական վերամբարձ ձեռքը չէր հիշեցնում իր Արարչին իր հայրական պարտավորությունը: Առայժմ միայն առանձին անհատներ՝ դժբախտ և ընկճված, աղոթում էին իրենց սենյակներում: Այդ համառոտ աղոթքները, սակայն, տարտամ ու մոլորեցնող ցոլքեր էին, որոնք, Աստծուն իր իսկական անունով կոչելով հանդերձ, դրանով կարող էին հանգիստ նկատի ունենալ նաև Մարդուկին, Պտահին, Թամուզին, Կամոշին, Միլկոմին և կամ Աստարտին: Քիչ բան կարելի էր կանխել նման համառոտ աղոթքներով, որոնք վերաբերում էին միայն իրենց անձնական ակնկալիքներին: Եհովայի բնության

մեջ ողորմածությունը հազարապատիկ անգամ գերազանց է, քան Նրա զայրույթը, այդուհանդերձ, Նա եղել է ու մնում է որպես անկանխատեսելի Աստված: Նրա ստեղծագործությունն անթիվ և անհամար օրենքներով է կարգավորված ու պահպանված՝ արևից և աստղերից սկսած, Հերմոնի ձյունառատ գագաթից մինչև տափաստանի յուրաքանչյուր ծղոտը: Այդ ստեղծագործությունը մարդուն տրված մշտական մի ժառանգություն չէ, որի վրա նա կարողանա հանգիստ զգալ: Այն տրված է նրան ժամանակավոր օգտագործման համար, իբրև մի փոխատվություն, որը կարելի է նրանից հետ վերցնել ցանկացած ժամանակ: Ինչպես ընտանիքի պարկեշտ հայրը միշտ նկատի ունի, որ մահը կարող է իրեն անակնկալ մատուցել, և ըստ այդմ նա իր տունը միշտ կոկիկ է պահում և ամեն ինչ կարգի բերված, նույն ձևով էլ ստեղծագործությունն ու մարդկությունը միշտ պետք է պատրաստ լինեն անակնկալ կերպով Վերջին դատաստանի առաջ կանգնելու: Ուրիշ որ ժամերը, սակայն, հարմարագույնը կարող են լինել նման անակնկալ վերջին հրաժեշտի համար, քան խոր քնի և ընդհատված զոհաբերության ժամերը, երբ մարդկային ոչ մի բազուկ չի կարող աղերսանքով հետ պահել աստվածայինը: Այդ պահին տունը պետք է խնամքով հարդարված լինի: Հավիտենականի կամքը կատարվում է այնտեղ, ուր կարգուկանոն կա, և այդ կարգուկանոնի միջոցով է միայն մարդն արժանի դառնում լինելու Աստծու պատկերի կրողը:

Այս կարգավորությունը պահպանելու նպատակով ղեկավարող մարմինը հաստատել էր վկայության ծառայությունը, որին այս անգամ մասնակցում էին Երեմիան և Անանիան՝ որպես ներկայացուցիչներ երկրի ներքին բնակավայրերի: Նրանք միացան այն պատկառելի հանձնախմբին, որն իր ամբողջական կազմով տասներկու հոգուց էր բաղկացած, որոնք հավաքվում էին մինչ այդ մարդկանցից դատարկված գավիթում՝ ողջակեզների խորանի առջև: Այդ հանձնախմբի մաս էին կազմում *սա-գանը*՝ քահանայապետի ավագ օգնականը, իր հինգ պաշտոնակիցների հետ, Շեմի առաջին պահապանը կամ խնամատարը, թագավորի երեք պատգամավորները և զույգ վկաները: Այս տասներկու մարդկանց պարտականությունն էր սրբավայրի կարևոր սրահներում շրջագայելը, որպեսզի ստուգեն, եթե որևէ տեղ խախտված է աստվածադիր կարգուկանոնը, և եթե որևէ սրբապիղծ կամ հայհոյիչ հանդգնել է Գերագույնի

տանը թաքուն մի տեղ տեղադրել ինչ–որ կուռքի նկար, արձանիկ կամ գաղտնի նշան, լինի դա մարդու կամ կենդանու կերպարանքով, լինի դա արևը խորհրդանշող ճառագայթավոր անիվի կամ լուսնի սկավառակի և կամ աստղերի պատկերներով: Իբրև վկայություն իրենց հայտնաբերած անառարկելի մաքրության՝ տասներկուսը պետք է իրենց անունները փորագրեին մի մոմեղեն տախտակի վրա: Այդ հանձնախմբի շրջագայությունն ընդգրկում էր միայն բուն սրբավայրի գլխավոր շինությունները, քանզի ընդհանուր տաճարի հարակից բոլոր կառույցներին տրվելիք միայն հարևանցի այցելությունը կպահանջեր ոչ թե գիշերային մեկ ժամ, այլ ամբողջ գիշերը: Սրբազան շենքը բաղկացած էր երեք մասից: Կենտրոնական շենքն ուներ իր հիմնական ու գլխավոր մասը, ինչպես նաև իր հարակից երկու թևերը, որոնց բարձրությունը կազմում էր երեք հարկ: Այդ հարկերից յուրաքանչյուրն ուներ երեսուներեք խորանարդաձև բնակարան, որոնց վայրի ձիթենու փայտից բարձրարվեստ փորագրությամբ օժտված դռները զետեղված էին դրանց առանցքների ուղիղ կենտրոնում, որպեսզի տեսանելի լիներ սենյակների քանակը: Այդտեղից էր սկսվում քննության շրջագայությունը: Տասներկու անդամները, *սագանը* առջևից, արագ քայլերով անցնում էին սենյակից սենյակ: Նրանցից յուրաքանչյուրի մեջ իբրև պահակ կանգնած էր մի ղևտացի, որը հաշվետու էր տաճարի օգտագործման համար այդտեղ պահպանված սպասքի տեսակի ու քանակի մասին: Շենքի պարիսպների հաստությունը մի քանի կանգուն էր, այնպես որ հեշտ էր այնտեղ պահարանների տեսքով խոռոչներ բացելը, ուր ոսկյա իրերի շքեղությունն իրար վրա էր կուտակված: Այնտեղ կային անհամար քանակությամբ բահեր, կրակի համար օգտագործվող ունելիներ, կրակը խառնելու ձողեր, սկուտեղներ, խորունկ պնակներ, կաթսաներ, խնկամաններ, լվացման ու մաքրման ջրամաններ, բոլորն էլ միաձույլ ոսկուց, մինչդեռ մարդկանց սեփական օգտագործմանը հատկացված ջրամանները, սափորները, բաժակները, պնակները մասամբ արծաթից էին: Անարժեք մետաղները, սակայն, ինչպես նաև կավե թրծված ամաններն ու քարեղեն սպասքները չէին կարող օգտագործվել տաճարում: Երեմիան իրենով հիացող իր պաշտոնակից գաբավոնցու հետ մտածկոտ ու լուռ անցնում էր ոսկով լեցուն սենյակների միջով՝ որպես վերջին այցելու: Հսկայական գանձի կուտակումը,

որի միայն մի փոքրիկ մասը, ուղղակի կիրառման մեջ գտնվող մասը, ցուցադրված էր, իր սրտում ոչ մի հպարտություն կամ հիացում չէր առաջացնում: Իր մտածումը բացարձակ և երկյուղալից պատկառանքով կենտրոնացել էր այն պահի վրա, երբ ինքը պիտի ներկայանար ու կանգներ այն գերագույն և ներքնապես առանձնացված Սրբարանի առաջ, ուր Տերը, չնայած որ չի բնակվում երկրում, հաստատել էր իր բնակության միակ վայրը: Ժողովրդից ոչ ոք, ոչ իսկ ինքը՝ թագավորը, իրավունք չուներ մուտք գործել այդ ամենախորհրդավոր վայրը՝ երկրային բոլոր տարածությունների մեջ: Միայն Քեղկիա քահանայապետն իրավունք ուներ տարին մեկ անգամ, իր ամբողջ քաջությունը հավաքած, երերուն քայլերով այդ շեմն անցնելու և այդտեղ մտնելու, ուր հավաքվել էր նախքան ստեղծագործության առաջին օրը գոյություն ունեցող խավարը: Այդ խավարի մեջտեղը, իրեն ամրացված ձողերի վրա դրված էր Աստծու Տապանակը, որի վրա կային ծնրադրած երկու քերովբեներ, որոնց տարածած հսկա թևերը հասնում էին մեկ պատից մյուսը: Տապանակում դրված էին այն երկու կոշտ եզերքներով քարե սալերը, որոնք Մովսեսը կոփել էր Սինայի ժայռից: Ով շատ էր մոտենում դրանց, անմիջապես մահանում էր դրանց զորությունից, քանզի դրանք էին կազմում հավիտենական անդրանցականի հաղորդակցության միակ կապն այս աշխարհի հետ, միակ մարմնավորումն անմարմնի՝ մարդու և Աստծու միջև գոյություն ունեցող հզոր հաղորդության մեջ, այսինքն՝ Խոսքի մեջ:

Երեմիան աչք չուներ հարակից շենքերի անհաշիվ պահեստներում կուտակված գանձերի վրա: Նա ուշադրություն չէր դարձնում քահանայական զգեստների վրա, որոնք կախված էին երկար շարքերով, ոչ էլ կրկնաթել մետաքսահյուս և մի կտորից բաղկացած, կար չունեցող պստմուճանների վրա, ոչ էլ գեղեցիկ, օձի կաշվի նման բարակ, բոսորագույն և հակինթափայլ ծաղիկներով բանված օրհնված ժապավենների վրա, ոչ էլ բարձր գլխարկների, ծամակալների և ճակատի ոսկեթել ու առատորեն զարդարված կապերի վրա: Նա ուշադրություն չէր դարձնում նաև հոյակապ գոտիների, ծոպերի, նախշազարդ երիզների վրա, որոնցից ոսկյա փոքրիկ զանգակներ և արծաթյա փոքրիկ նռներ էին կախված՝ ժողովրդին հայտնելու համար Աստծու ավագ ծառայողների անցնելը: Նա անտարբերությամբ էր անցնում այն արժեքավոր վերարկուների

կողքով, որոնք գունագեղ և բարձրորակ թելերով էին հյուսված, և որոնք կոչվում էին *էփոդ*, առանց որ իրեն հուզեն ծանր լրջությունն այն բառերի, որոնք անհետացած սերունդների վերապրողներն ուղղում էին իրեն: Ինչպես երազի մեջ ներկայացող խառնաշփոթություն՝ իր առջև տողանցում էին հարյուրավոր տեսակի աշտանակներ, լապտերներ, կանթեղներ, մեծ և փոքր չափսերի բարձրարվեստ բուրվառներ ու խնկամաններ, համեմունքների տուփեր և օծանելիքների սրվակներ, ընծայաբերման ձեթով լցված սափորներ, օծման ձեթի հախճապակյա շշեր, լվացման համար փորագրազարդ ամաններ և մաքրման ավազաններ, օտար թագավորների և իշխանների կողմից մատուցված զանազան չափսերի և տարբեր նպատակների համար օգտագործվող գոհարազարդ նվերներ: Այդ ամբողջը, որ փառահեղ փայլում էր ջահերի լույսի ներքո, քիչ անց ուրվականի նման նորից անհետանում էր:

Ըստ երևույթին, Երեմիան արդեն արթնացել էր իր տաղտկալի պատրանքներից, երբ տասներկուսը վերստին հավաքվեցին նախասրահի աստիճանների մոտ: Բոլորն էլ խորը շնչեցին, որպեսզի ուժ հավաքեն մտնելու Սրբարան: *Սագանը* տեղ գրավեց հանձնախմբի կենտրոնում և հրավիրեց անդամներին մանրազնին քննության ենթարկել իրենց խղճմտանքի մաքրությունն ու անարատությունը, որպեսզի թաքնված ամենադույզն արատն անգամ չխաթարի Տիրոջ բնակավայրի սրբությունը: Ցածր ձայնով նա թվարկեց այն զանազան հանգամանքները, որոնք Տիրոջ հայեցողությամբ պղծում են մարդուն և նրա մերձեցումը հավիտենական Սրբությանն անցանկալի դարձնում: Նա խոսում էր՝ համաձայն կանոնակարգի, արագ ու մեղմ ձայնով, քանզի պղծությունների թվարկումն անելիս շատ բան հարկավոր էր բացահայտ, իր իսկական անվամբ կոչել, որոնցով տուժում էր բազմաթիվ երևելի մարդկանց փխրուն ժուժկալությունը: Անմաքրության հավանական բոլոր դեպքերը նկատի էին առնված, սկսած մի դիակի նայած կամ հպած լինելու անմաքրությունից մինչև թաքուն սերմնաածորում ունեցած լինելու պղծությունը: Թվարկումը կատարելուց հետո ծեր քահանան մի պատշաճ ընդմիջում կատարեց, որպեսզի ամեն մեկը բավարար ժամանակ ունենար ինքն իր անձի քննությունն անելու: Նրանցից ոչ ոք չքաշվեց մի կողմ: Նոր միայն դրանից հետո *սագանն առաջ* շարժվելու նշան տվեց:

Սկսեցին դանդաղորեն բարձրանալ այն տասն աստիճանները, որոնք տանում էին դեպի նախասրահ:

Հանգցրեցին ջահերը: Դրսից որևէ կրակ չպետք է ներս տարվեր: Ժամանակին Ահարոնի երկու որդիները ճակատագրական դառն վախճան էին ունեցել, երբ դրսից օտար կրակ էին տարել Աստծուն հատկացված սրբավայրը: Նախասրահը մի երկար պահ թաղված էր խոր մթության մեջ, որտեղից հետզհետե սկսեցին նշմարվել կիսալուսինն ու մի բուռ նորածագ աստղերի լույսը: Յահին և Բոազ՝ պղնձյա այն երկու սյուները, երկար ստվերներ էին զցում: Նրանց նշանակության գաղտնիքը երկար ժամանակից ի վեր կորել էր սերունդների հիշողությունից: Այդուհանդերձ, իմաստուն և ծերունազարդ սակավաթիվ մարդիկ կարծում էին, թե Բոազն իր մեջ կլանել էր ու պահպանել Աստծու կողմից ստեղծված արևի զորությունը, իսկ Յահինն էլ նույնը արել էր լուսնի նկատմամբ: Սյուների՝ մրգերով ու շուշաններով քանդակազարդ խոյակները գունատ փայլ ունեին: Սրահի ներսից, սակայն, գալիս էր մի լույս՝ այնքան թույլ, այնքան յուրօրինակ ու նշանակալից, որ Երեմիան սկսեց սրտի անզսպելի և տագնապալից բաբախումներ ունենալ, որոնք կրկնապատկվեցին, երբ մի քանի քայլ հետո նրանք կանգ առան այն սենյակում, որը կրում էր «Սրբարան» անունը: Այն լույսը, որ խորապես հուզել էր Երեմիային, այստեղ ուներ իր աղբյուրը: Խունկ ծխելու մի փոքրիկ զոհասեղանի վրա հրաշեկ ածուխների մի փոքր կույտ կար, որտեղից արտացոլվում էր մի կարմրավուն փայլ, և բարձրանում մի համաչափ ամպանման զանգված: Այդ զոհասեղանից ոչ հեռու դրված էր մարդահասակ բարձրությամբ յոթթևյան ոսկյա աշտանակը, որի վրա թույլ, բայց չընդհատվող ցոլքով վառվում էին միայն երեք աննշան ճրագներ: Նրանց լույսն արդեն անհետանում էր դեռ սրահի որմերի բարձրության կեսին չհասած: Երեմիան հազիվ էր կարողանում նշմարել այն ոսկյա ափսեների փայլը, որոնք զարդարում էին Սրբարանի պատերը, ուր մնաց, որ կարողանար տեսնել մայրու փայտերի վրա արված զարդանախշերը՝ անհաշիվ ծաղիկների իրար հյուսված բողբոջներով, փեգենաներով, խաղողի ողկույզներով, շուշաններով, վայրի խնձորենիներով: Նա զգում էր այդ վայրի հզոր ազդեցությունը ոչ միայն իր սրտում, այլև իր մարմնի բոլոր անդամների մեջ: Ոտքերն ընթանում էին մայրու նուրբ և զով տախտակների վրայով,

որոնք հաճելիորեն շոյում էին իրենց հպվող ներբանները: Ոչ մի տեղ մեռած քար չկար: Պատերը, գերանները, առաստաղն ու դռներն իրար չէին միացված մեխերով կամ տարբեր տեսակի գամերով, առ այդ չէր օգտագործված մուրճ, քլունգ, հատիչ կամ երկաթե որևէ այլ գործիք: Ամբողջ սրահը, առանց շաղկապող հարմարանքների կիրառման, հրաշալի կերպով դարձել էր միաձույլ, ինչպես քահանայապետի զգեստը, որն առանց կարի էր: Երեմիան, սակայն, աչքերը հառել էր վարագույրին, որը ծածկում էր վերջին խորհուրդների դռան շրջանակը, և որի կերպասի չորս գույները նշմարվում էին ստվերների միջից...

Վեց քահանաները հավաքվեցին մի կարճ աղոթքի: Այնուհետև նրանց ղեկավարն իր շուրջը համախմբեց բոլոր մարդկանց և շշնջալով հարցրեց.

— Ո՞վ է այստեղ ամենից երիտասարդը:

Ամենից երիտասարդը Երեմիան էր: *Սագանը* բռնեց նրա ձեռքից և իր հետ մի քանի քայլ առաջ տարավ նրան: Այնուհետև վերցրեց յոթթևյան ոսկյա աշտանակի մեջտեղի թևի վրայից ձեթե ճրագը, բռնեց այն քահանայի որդու՝ Անաթովթցի Երեմիայի դեմքի դիմաց և սկսեց զննել այն երկար ու մանրակրկիտ:

— Երեմիա *բեն* Քեղկիա Անաթովթցի,— շշնջաց նա հազիվ լսելի ձայնով,— երկրի համար դու ընտրվել ես իբրև վկա՝ մի հայացք գցելու Սրբարանից ներս, ուրեմն ծածկի՛ր գլուխդ, ապա բաց արա այն միայն մինչև աչքերիդ ներքևի եզրը: Եվ սա միայն մի ակնթարթ տևողությամբ: Այդ նայվածքդ բավարար կլինի սրտիդ համար, որպեսզի կարողանաս տարբերակել...

Երեմիան հանկարծ նորից հանդարտվեց, ինչպես առաջ՝ թագավորի ներկայությամբ ուսմունքն ընթերցելիս: Այդ առավոտ նա բոլորովին անտեղյակ մեկնել էր իր հայրենի քաղաքից դեպի տաճար, ուր իր մեջ պիտի ամբողջանային երեք հանգամանքներ՝ արքունիքի առաջ Աստծու խոսքի հռչակումը, այդ առնչությամբ գովեստի ու պարսավանքի արժանանալը և, ի վերջո, ամենից գերազանցը՝ որպես մաքրության և կարգուկանոնի վերաբերյալ վկա համարձակվելը հայացք գցելու այն միակ վայրին, որը սիրտն էր աշխարհի, ուր բնակվում էր Եհովան՝ Տերն ու Տիրակալը: Տիրում է անհամեմատելի լռություն: Թվում էր, թե տասներկու անձերը չեն

«Երեմիան Սրբարանի առջև»

շնչում: Միայն Անանիան, որն իր պաշտոնակից եղբորից շատ հետ էր մնացել, հոնդաց մի անգամ: Երեմիան ամենայն հնազանդությամբ ծածկեց իր գլուխը: Տարեց քահանան բռնեց նրա ձեռքից և առաջնորդեց դեպի առաջ: Նա իր առջև զգաց դռան մի շրջանակ, որի մայրու հնացած փայտը դեռևս պահում էր իր թարմ բույրը, որպես թե մի օր առաջ ծառից կտրված լիներ: Երեմիան գիտեր, որ հիմա *սագանն* էլ ծածկել է իր գլուխը, ինչպես վկայության հանձնախմբի մնացած մարդիկ: Այժմ շրջվելով՝ նա իր երկու ձեռքերով բռնեց ծանր վարագույրը և այնքան հետ քաշեց այն, մինչև որ մի նեղ անցք բացվեց: Երեմիան հնազանդ կերպով բացեց գլուխը ճիշտ մինչև աչքերի ներքևի կոպերը: Հուզումնալից մի տատանում: Լարված և անվճռական մի որոշում: Այնուհետև բացեց աչքերը, և արդեն իսկ իր առջև էր Տիրոջ սրբազնագույն Սրբարանը: Նրա աչքերը, սակայն, չտեսան այլ բան, քան բոլոր խավարներից ամենախորը խավարը, այնպիսին, որը չի համեմատվում երկրի գիշերային ոչ մի խավարի հետ: Դա այն խավարն էր, որը գոյություն ուներ նախքան լույսի ստեղծումը: Նոր միայն մի ակնթարթ հետո նշմարվեց ինչ–որ բան այդ խավարում: Արդյո՞ք դրանք հսկա թևերն էին ոսկյա քերովբեների...

Մի անիմանալի ալիք շարժվեց դեպի Երեմիան՝ շարունակելով պարուրել ու սրտապնդել նրան, երբ արդեն իսկ Սրբարանի վարագույրը կրկին փակվել էր:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՁԱՅՆԸ ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ

Պատանի Բարուքը Երեմիայի ավանակի և իր գրաստի հետ սպասում էր տաճարի Բենիամին անունը կրող դարպասի մոտ: Տոնական ճոխ երեկոն տեղի էր տվել մի դատարկ ու լուռ կեսգիշերվա առաջ: Խեժե միայնակ և արդեն իսկ առկայծող մի ջահ ամրացված էր պարսպի օղակին: Քահանաների պահակագունդը կիսաքուն վիճակում սպասում էր մուտքի դարպասի մոտ հերթափոխությանը: Երբ կողպեքը փակվեց Երեմիայի հետևից, և նա արդեն իսկ ազատության մեջ էր, ոչ մի գանգատ չլսեց Բարուքի՝ այդ տասնվեց տարեկան տղայի բերանից, չնայած որ նա հարգալից սպասումով անց էր կացրել զրկանքներով լեցուն օր: Երեմիան անմիջապես նկատեց, որ պատանին դողում է ցրտից, և նրա ուսերի վրա գցեց իր վերարկուն: Եթե նրան հաճախ դուր չէր գալիս տղայի անօրինակ նվիրվածությունը, այդուհանդերձ, ինչպես հենց այդ պահին, միշտ էլ զգայուն հոգատարություն էր ցուցաբերում նրա նկատմամբ: Նրանք անխոս նստեցին իրենց գրաստներին և իջան դեպի Կիդրոնի հովիտը: Հսկա լուսինն ու երկնքի թագուհի աստղը՝ Աստարտը, շարունակում էին իշխել երկնակամարում: Նրանց դալուկ լուսավորության տակ ճանապարհի վրա հստակ ուրվագծվում էին ծուռումուռ ժանտաթզենիներն ու կաղնիները: Ձիթենիների պարտեզները տարածված էին Ձիթենյաց լեռան կողերն ի վար, ինչպես զոհաբերության ծխի թեթև ամպը, որն ասես թեքվում էր դեպի արևելք: Գյուղերում խորանարդաձև մութ տները համառորեն կանգնած էին իրենց տեղում, որպես թե զայրացած լինեին կեսգիշերային ձայներից: Վայրի շները, որոնք օրվա ընթացքում թափառում էին դաշտերում, թաքնվել էին իրենց քարանձավներում: Այդ երկու տուն վերադարձողներն ուրիշ բան չէին լսում,

բացի մերթընդմերթ մի հեռավոր ու աղիողորմ ոռնոցից, շնագայլի կլանչոցից և կամ էլ ծառի բարակ ճյուղին թառած որևէ մի երգեցիկ թռչունի կարճատև ու անմիջապես լռության մատնված երազկոտ ճիչից:

Բարեկրթության օրենքի համաձայն՝ կրտսերն իրենից մեծի հետ խոսակցություն չէր սկսում, մինչև որ վերջինս նրան այդ անելու նշան չտար: Դա տեղի էր ունենում բլրի բարձունքին, ուր ճանապարհը, դժբախտաբար, բաժանվում էր բարձրադիր Երուսաղեմից և առաջնորդում դեպի վար՝ Հուդայի և Բենիամինի սահմանագծից այն կողմ՝ դեպի պարսպապատ քաղաքն Անաթովթի: Երեմիան պատմում էր իր աշակերտին այն իրադարձությունների մասին, որոնք տեղի էին ունեցել Զատկվա գիշերը տաճարում, ընդ որում՝ փորձելով կարճ ու կտրուկ լինել, առանց երբեք շեշտադրելու իր ունեցած անառարկելի դերակատարությունը: Նրան, սակայն, չհաջողվեց նվազեցնել արժեքը երեք կարևոր եղելությունների՝ վերագտնված ուսմունքի մատյանից իր կատարած ընթերցման,— որն իրեն՝ իբրև ամենակրտսերի, Հովսիա թագավորն էր քմահաճ կերպով տնօրինել,— գովքի ու պարսավանքի արժանանալու, և վերջում՝ արժեքը Սրբարանի վերաբերյալ վկա դառնալու պատվի: Խելացի տղան՝ Բարուքը, հատուկ նախազգացում ուներ Երեմիայի նկատմամբ: Եվ այդ նախազգացումը կամ գուշակությունն էր, որ իրեն կապում էր անաթովթցի այդ մենակյացին և օրավուր լցնում քաղցր պատկառանքով՝ այն համոզմամբ, որ ինքը հետևում է հին ժամանակների հատուկ մի մեծության: Այդ գիշերվա պատահարների մասին Երեմիայի տված տեղեկություններից հետո, երբ ինքը տաճարում պատվո ծառայություն էր մատուցում թագավորի զատկական սեղանին, պատանին միանգամից մոռացավ ցուրտն ու հոգնածությունը: Նա, շտկվելով իր թամբի վրա, ասաց.

— Իմ ուսուցիչն այժմ ունի իր ապացույցը...

— Ինչո՞ւ ես ինձ ուսուցիչ կոչում... Ես քեզ միշտ խնդրել եմ, որ ինձ որևէ սխալ անունով չկոչես...

— Ուրիշ ի՞նչ կարող է լինել իմ տերը, եթե ոչ՝ իմ ուսուցիչը:

— Իրականությանը չհամապատասխանող մի բառ... Կոչի՛ր ինձ քո ավագ եղբայրը, հայրենակիցը կամ, եթե քեզ հաճելի է և անպայման պետք է՝ «իմ տերը»... Ես անձամբ ոչ իսկ աշակերտ եմ... Ո՞վ կարող է մի բան սովորել ինձանից...

Եվ անմիջապես սկսվեց մի խոսակցություն, որը կողքից նայողի համար պիտի դիտվեր իբրև բանավեճ երկու խելագարների միջև: Ներիայի որդի Բարուքը բարձրաձայն գոչում էր արձագանքող գիշերվա լռության մեջ.

— Բայց ես այսօր, մինչ դրսում սպասում էի, գրվածքներից սովորեցի մի բան, որն իմ տիրոջից չէ, բայց նրա համար է կանխորոշված...

Երեմիան, գրեթե սարսափած, հարցրեց դժգոհությամբ.

— Արդյոք դա նորից մի պարբերությո՞ւն է:

Պատասխանը տրվեց գոհունակությամբ.

— Այո՛, դա նորից մի պարբերություն է:

Երեմիան կրունկներով խթանեց իր էշին և գավազանով ուժգին հարվածեց նրա գավակին, որն ընդոստ ցատկեց իր դանդաղ ընթացքից և սկսեց իր կարողության չափով արագ առաջ շարժվել: Բարուքի փոքր ու տկարակազմ կենդանին հազիվ էր կարողանում նրա հետևից հասնել: Այնուամենայնիվ, պատանին սկսեց կոտրտված նախադասություններով և համարյա շնչահեղձ, գրաստի վազքի և նրա վրա առանց ասպանդակի նստած լինելու պատճառով, իր թարմ գիտելիքները հայտնել.

— «Պատանի Սամվելը Հեղի քահանայի առջև Տիրոջը ծառայություն էր անում: Այդ օրերին Տիրոջ խոսքը հազվագյուտ էր, և տեսիլք չկար, որ գուշակվեր...»:

Երեմիան բղավում էր՝ առանց դանդաղեցնելու իր երթը կամ խոսակցի կողմը շրջվելու.

— Իմ համերկրացի Բարուքը սխալվում է... Այդ պարբերությունն ինձ հետ բնավ կապ չունի... Իմ նախնիները չեն սերում Սամվել մարգարեի գերդաստանից... Մեր նախահայրը եղել է Հեղի քահանան, Հեղին՝ փոքրակազմ ու ծերացած մարդը, որը չի թողել մեծ հոչակ... Հեղին իր անարժան զավակներով...

Բարուքը ծանր շնչում էր իր խեղճ իշուկի մեջքին և չէր թողնում, որ իր արտասանած հնչեղ խոսքերի համար սաստեն իրեն: Քիչ էր մնացել, որ շնչահեղձ լիներ.

— «Եվ պատահեց, որ այդ ժամանակ Հեղին ննջում էր իր սենյակում, նրա աչքերն սկսել էին տկարանալ, ու նա չէր կարողանում տեսնել...»:

Կարճատես Երեմիան, նույն արագությամբ շարունակելով իր ընթացքը, պատասխանեց.

— Իմ նախապապ Հեղիի աչքերը ծերության ժամանակ սկսել էին տկարանալ... իսկ իմ աչքերն արդեն իսկ հիմիկվանից են տկար... Ինչ ես ուզում ինձանից...

Տղան այնքան շատ բան էր ակնկալում նրանից, որ հին գրվածքներից քաղված զեկույցների խոսքերը շտապ ներխուժում էին իր բերանը.

— «Եվ Սամվելը ննջում էր Տիրոջ տաճարում, ուր Աստծու տապանակն էր, և Աստծու տաճարի ճրագը դեռ չէր հանգել... Տերը կանչում է՝ ասելով. «Սամվե՛լ, Սամվե՛լ»... Իսկ սա պատասխանում է. «Ահավասիկ այստեղ եմ»... Եվ վազելով Հեղիի մոտ՝ ասում է. «Ահավասիկ ես այստեղ եմ, ինչո՞ւ կանչեցիր ինձ»: Նա ասում է. «Ես քեզ չեմ կանչել, վերադարձիր ու քնիր»: Եվ նա վերադառնում է ու քնում...»:

Երեմիան սկսեց խթանել իր էշին, որպեսզի ավելի արագացնի նրա վազքը: Տղայի խոսքերի միջոցով իրեն հալածում էր *հալածիչը*: Արդյոք ինքը տարիներից ի վեր չէ՞ր խուսափել այն մշտական կանչից, որը տալիս էր իր անունը՝ Երեմիա, առանց ասելու՝ «Ահավասիկ այստեղ եմ»: Եվ *հալածիչն* իշխանություն է ձեռք բերում ու զորացնում Բարուքի կենդանու կարճլիկ ոտքերը, որով նրանք սկսում են գրեթե թամբ թամբի կպած առաջանալ: Եվ Երեմիան պիտի լսեր, թե ինչպես է Տերը երկրորդ անգամ կանչում պատանի Սամվելին, որը հավանաբար ավելի մեծ չէր, քան ինքը՝ Երեմիան, երբ այդ մեղմ ու անավարտ կանչերը սկսել էին նույնպես փնտրել իրեն, իր աչքերի առաջ հյուսել մանվածքներ տարտամ պատկերների, այն ամբողջին, ինչին ինքը տենչում էր երկյուղալից և անձկանոք, բայց նաև խուսափում էր նրանից ճարտարությամբ: Հիմա, սակայն, Բարուքի ձայնը ներթափանցում էր իր մեջ բեկանված վանկերով՝ նրա սպառվող շնչի վերջին լարումով:

— «Տերը երրորդ անգամ կրկին կանչում է Սամվելին, որը վեր է կենում, գնում Հեղիի մոտ և ասում. «Ահա այստեղ եմ, ինչո՞ւ կանչեցիր ինձ»...»:

Ո՜հ, ով դու շատ հնազանդ Սամվել: Երեք անգամ հանգիստ վեր ես կենում, երեք անգամ գնում ես ծերունու մոտ և ասում հավատարմորեն. «Ահավասիկ ես այստեղ եմ»...

Նրանք վարգելով անցան գեղջկական մի ցածրիկ տան կողքով: Կտուրի վրա իրենց աչքերի դիմաց անհետացան մի քանի ստվերներ, որոնք շփոթահար իրենց հետ դեպի ներս էին տանում մի եռոտանի կրակարան, որի փոքր բոցերը վաղուց նշմարվել էին հեռվից: Վստահաբար դա մի ընծայաբերում էր հանուն Աստարտի: Գյուղացի կանայք խունկ էին ծխել աստվածուհու պատվին և նրան մատուցել սրբազան աստղանիշ թխվածքներ: Այլասերումը, բարքերի ու հավատի լայնածավալ անկումը, հակառակ Հովսիա արքայի կամքին, շարունակում էին իբրև կրակ անթեղված մնալ մոխիրների տակ. քամու որևէ շաչյուն կարող էր վերածել այն մի հրդեհի: Եվ հենց այդ օրերին Աստծու խոսքը հազվագյուտ էր, և համարյա գոյություն չունեին մարգարեություններ: Երեմիան դանդաղեցրեց իր էշի ընթացքը: Պատանին կերկերուն ձայնով, բայց հանգիստ շնչառությամբ, ավարտեց ավանդված ու արձանագրված պատմությունը.

— «Այն ժամանակ Հեղին հասկանում է, որ Տերն է կանչում պատանուն: Հեղին ասում է Սամվելին. «Վերադարձիր ու ննջիր: Եվ եթե որևէ մեկը քեզ կանչի, կասես. «Խոսիր, Տեր, քո ծառան լսում է»...»:

Հենց այն ժամանակ, երբ արտասանվեցին այս բառերը՝ «Խոսիր, Տեր, քո ծառան լսում է», Երեմիայի էշը վախեցած, մեծ ոստումով այնքան ուժգին մի կողմ ցատկեց, որ հեծյալը սկսեց տեղում օրորվել: Գիշերաշրջիկ ոչ մի կենդանի նրա առաջը չէր կտրել, ճանապարհին չկար ոչ մի օձ, արմատ կամ ստվեր: Էշի մազոտ կողերը դողում էին: Նա կանգնած էր իր առջևի ոտքերը լայն բացած և իր ընդլայնված ռունգերից արձակում էր բոլորովին մարդկային ու նույնիսկ տիրական մի հառաչանք: Այնուհետև նա մի երկար պահ հրաժարվում էր շարունակել իր ճամփան: Երկու հեծյալներն իջան իրենց գրաստներից՝ խաղաղեցնելու համար կենդանուն, նրան փաղաքշելու և համոզելու: Բարուքը հուզված թարթում էր իր աչքերը, բայց խելամտորեն ոչ մի բան չասաց այն մասին, որ հենց նոր կատարվել էր մի աննախադեպ ու անհերքելի հրաշք: Հովտի խորքում մի քանի նշմարվող լույսեր ապացուցում էին, որ արդեն մոտեցել են Անաթովթին:

* * *

Քեղկիա քահանայի կալվածքը պարսպապատ Անաթովթ քաղաքի դարպասների դիմաց էր՝ մի հոյակապ ու պտղառատ բլրի բարձունքին: Դա սեփական մի ընդարձակ տարածք էր, որն ընդգրկում էր բազմաթիվ հեկտարների հասնող վարելահող: Այստեղ ժամանակին՝ տասներկու սերունդ առաջ, Սողոմոն թագավորն աքսորել էր Աբիաթար քահանայապետին՝ Քեղկիայի նախահորը: Աբիաթարը, սակայն, փրկվել էր դահճի կողմից սպանվելուց միայն այն պատճառով, որ այդ օրը Դավիթը պարել է Աստծու Տապանակի շուրջը, իսկ ինքը մեկն է եղել այդ Տապանակը կրողներից: Մշուշներում կորած հին զրույցներ ու պատմություններ: Այդուհանդերձ, ժառանգված ընդարձակ տիրույթը նույնն էր, ինչ որ Աբիաթարի օրերին: Նույն պարիսպն իր նույն դարպասներով դեռ շարունակում էր շրջապատել Քեղկիայի հայրական կալվածքը, այո՛, նույնիսկ այդ հնամյա պարսպի մնասված տեղերը սերունդներից ի վեր մնացել են նորահասների հիշողության մեջ:

Երեմիան հանեց թամբն իր էշի վրայից, շփեց նրա մեջքն ու կողերը, ջուր և կեր տվեց նրան: Այնուհետև նոր միայն գաղտագողի անցավ ագարակի բակի միջով և հայրական տուն մուտք գործեց փոքրիկ դռնից: Վախենում էր, որ իր մայրը դեռևս արթուն կլինի՝ սպասելով իր գալուն, ինչպես որ հաճախ անում էր, երբ ինքը, հետապնդվելով այն տարօրինակ կանչերից, գիշերով տնից դուրս էր գալիս, որպեսզի ծառերի, բլուրների և աստղերի ընկերակցությամբ լինի Ադոնայի (Աստծու) հետ, այլ ոչ թե մենակ, ինչպես իր սենյակում: Նա իր մոր՝ Աբիի հետ երբեք չէր խոսել այդ ճնշող նեղությունների մասին, որոնք իրեն հաճախ զգայազուրկ վիճակի էին մատնում, երբեմն էլ նույնիսկ բաց դաշտի մեջտեղը թողնում գետին ընկած՝ իբրև Աստծու կողմից դատապարտված մեկը, որի հոգին թափառում էր մարմնից անջատված: Նույնիսկ եթե մայրը ոչինչ չգիտեր այդ մասին, այդուհանդերձ, նրա նայվածքից երևում էր, որ նա շատ բան էր գուշակում: Դրա համար էլ նա վախենում էր ու մտահոգվում Երեմիայի հոգու համար և անքուն սպասում նրան, երբ վերջինս ընթրիքից հետո հանկարծակի դուրս էր գալիս տնից՝ առաջացնելով մնացած տնեցիների ծաղրական դժգոհությունը: Այդ գիշեր, սակայն,



«Երեմիայի հոգին թափառում է մարմնից անջատ»

ուշ էր արդեն, և մայրաքաղաքից ավելի քան մեկ ժամ տևած ճամփորդությունից հետո լուսաբացը չէր կարող շատ ուշանալ: Մայրն ի վերջո պառկել էր քնելու, բայց հոգատար կերպով հետևի դռան սողնակը չէր դրել և նույնիսկ շեմին ձեթե մի վառված ճրագ էր թողել:

Երեմիան, մի ափով պաշտպանելով ձեռքում բռնած ճրագի լույսը, անցավ իր ծնողների սրբազան սենյակի մոտով: Տան ներսի կողմը մի երկար միջանցքով բաժանված էր երկու մասի: Այդ միջանցքի վերջում իր ննջարանն էր: Հառաչելով նա մտավ իր փոքրիկ սենյակը, որի առաստաղն այնքան ցածր էր, որ ինքը կարող էր հեշտությամբ դիպչել նրա գերաններին: Լուսամուտի քառանկյուն դատարկ բացվածքը նայում էր դեպի հյուսիս: Տարվա մեղմ եղանակին հանվում էին փայտյա փեղկերի ծխնիները, և *Նիսան* ամսվա գիշերային մեղրահամ օդն ազատ թափանցում էր սենյակից ներս աշխույժ վետվետումներով: Երեմիան ճրագը դրեց պատուհանի եզրապատին, որպես թե ուզենար մի գաղտնի նշան տալ երկնքին, որ ինքը վերադարձել է: Անմիջապես գիշերային թիթեռներ պար բռնեցին գոյություն ունեցող միակ ճրագի բոցի շուրջը, որը նրանք կարող էին այդ պահին պաշտել: Երեմիան, կռթնելով պատուհանին, իր մարմինը թեքեց դեպի դուրս: Ոչ շատ հեռու՝ խավարում նկատեց տաշված քարերի ցրված մի կույտ: Իր մանկության ժամանակ այդտեղ կանգուն էր Տիրոջը նվիրված ընտանեկան մի խորան: Ժամանակի սովորության համաձայն՝ հայրն ու Քեղկիայի ամբողջ սերունդն այդ վայրում էին մատուցել իրենց ամենօրյա ողջակեզները Եհովային, մինչև որ արգելվեց զոհ մատուցել ճշմարիտ Աստծուն իր սեփական և միակ տաճարից դուրս որևէ այլ տեղ: Պատանի Երեմիան մեծ եռանդով օգնել էր, առանց որևէ գործիքի, իր մերկ ձեռքերով, քանդելու այդ սրբազան խորանը: Քարերի այդ կույտից մի քանի մետր դեպի արևմուտք մի խարխուլ քառակուսի շինություն էր, որի տեսքը Քեղկիայի զավակներին, մինչ նրանք փոքր էին, լցնում էր միշտ մի սրբազան երկյուղով: Քանզի նախնիների ժամանակ՝ Հովսիա թագավորի օրերից շատ–շատ առաջ, այդ տունը, որպես գերդաստանի սրբավայր, որպես սեփականության մատուռ, հյուրընկալել է հենց Իրեն՝ Տեր Աստծուն: Հիմա, սակայն, այն բացվում է, և այնտեղ մարդ է մտնում միայն, երբ Քեղկիան կամ Օբադիան՝ երեց որդին, և տնտեսության կառավարիչն առևտրական

դաշինք էին կնքում որևէ հարևանի, վարձակալի կամ անասնավաճառի հետ, առ այդ երդվեցնելով նրան՝ համաձայն պահանջվող օրենքի:

Երեմիայի աչքերը փնտրում էին խարխուլ սրբարանից այն կողմ ալիքավոր բլուրների ծանոթ պատկերը և լեռնաշղթաները, որոնք լուսնի լույսի ներքո գնալով անհետանում էին դեպի հյուսիս: Սա մինչ այդ իր ապրած կյանքի ամենասիրելի պատկերն էր՝ լուսամուտից դիտված, սկսած իր մեջ Աստծու անվան զարթնումից մինչև այդ օրվա գիշերն իր մատուցած պատվավոր ծառայությունը տաճարում: Հյուսիսից ձգվող այդ տեսարանի միջով էին եկել ու հասել բոլոր պատկերներն ու իրադարձությունները, որոնք դրոշմված էին իր սրտում: Նա այդ նույն լուսամուտի մոտ էր կանգնած՝ իբրև յոթ տարեկան երեխա, երբ հյուսիսի երկինքը հանկարծ ծածկվել էր թանձր փոշով՝ օտարական հեծյալների ձիերի սմբակներից բարձրացած: Սկյութների ազգն էր, որ կոչվում էր նաև *շիտիմ,* ներխուժել էր Տիրոջ երկիրը: Հյուսված մազերով մարդիկ, լայն բերաններով, նեղ աչքերով և գայլի անգութ դեմքով. մի ժողովուրդ, որ նույնիսկ կուռքեր չուներ: Մի՞թե նրանց միջոցով պիտի կատարվեր գուշակված օրն Ահեղ դատաստանի, որն այժմ և միշտ, ինչպես սպառնալից մրրիկ, կախված է Հուդայի վրա: Դա ոչ ոք չգիտեր: Սարսափից լայնացած աչքերով մայրը խլել–տարել էր Երեմիային լուսամուտի մոտից: Քեղկիայի ամբողջ տունը շատ շտապ կերպով փախել էր և իջել դեպի պարսպապատ քաղաքի ամրությունները՝ այնտեղ թաքնվելու համար: Իրականում, սակայն, համբերատար Եհովան միայն զգուշացրել էր և սպառնացել վախճանաբանական պատկերների խաղերով: Հեծյալների ամպերը գնալով նոսրացել էին՝ շարժվելով դեպի հարավ այնպես, ինչպես որ եկել էին, իրենց հետևից թողնելով հրդեհ ու մահ: Աստված, սակայն, խնայել էր իր ծառայի ընտանիքին:

Երեմիայի տկար աչքերն այրվում էին անքնությունից: Նախորդ օրը նա զարթնել էր արդեն լուսաբացից շատ առաջ, որպեսզի ուխտի գնար դեպի տաճար: Նոր լուսաբացին միայն մի քանի ժամ էր պակաս: Հակառակ դրան, նա չէր կարողանում պոկվել լուսամուտի տեսարանից, որն իր ապրած կյանքի հետադարձ պատկերն էր: Այդ լուսնային ուշ գիշերին, որն ամեն ինչ տարօրինակ կերպով համախմբում էր, կանխատեսում էր այն մեծ ճամփան, որն առաջնորդում էր դեպի վեր, դեպի սարերը: Մի

նոսր և կաթնաթույր մշուշ, մի խորհրդավոր փոշի, որը չէր առաջացել ոչ մի սմբակից կամ կառքից, իջել էր նրանց վրա: Կարծես թե բոլոր պատկերների ու եղելությունների շուրջպարն էր կատարվում այնտեղ՝ հրաժեշտ տալու համար Քեղկիայի կրտսեր որդուն, որն իր լուսամուտից տարեցտարի երկար դիտել ու լրտեսել էր աշխարհը. կրկին ու կրկին ուխտավորների նույն խմբերը Մանասեից և Եփրեմից՝ հյուսիսային ցեղերից, որոնք, ենթարկվելով Տիրոջ դատաստանին, վերածվել են ստվերի: Նրանք բարձրանում էին դեպի տաճար՝ իրենց խամրած դաշտերի երախայրիքն ընծայելու այնտեղ: Անդադրում շարքերով քարավաններ Տյուրոսից և Սիդոնից, զանազան ձևերի ու տեսակների ապրանքներով բեռնավորված, որոնց մի մասի համար դեռևս անուններ իսկ չէին հնարած, և ավելին՝ գիշերային երկնակամարի երկրպագուներ Ասորեստանից ու Բաբելոնից և նույնիսկ հեռավոր Հնդկաստանից, որոնք Երուսաղեմի վրայով իջնում էին Եգիպտոս՝ Նեղոսի ստրկության տունը, որը զմռսելով հավիտենականացնում էր մեռելներին: Ծանր հակերով բարձված հարյուրավոր ու հարյուրավոր ուղտեր, վեհաշուք թախծոտությամբ և դանդաղ քայլերով, մեկը մյուսի հետևից, օտար իշխանների շքեղ կառքեր՝ թափառականներով, մունետիկներով և գունագեղ ու տարօրինակ կերպարանքներով շրջապատված: Հպարտ դեսպանություններ Ասորեստանից՝ իրենց շողշողուն զրահներով և կոնաձև ու սրածայր սաղավարտներով, իբրև հսկաներ հեծած ծիրանագույն թամբատակերով և ոսկյա սանձերով սրընթաց նժույգների վրա...

Ժամանակը եկել էր արդեն: Երեմիան հոգնությունից չէր զգում իր մարմնի անդամները: Երկու մատների արանքում հանգցրեց ճրագի վտիտ լույսը: Գերհոգնածությունն այնքան արագ հաղթեց նրան, որ ընկավ մահճակալի վրա, առանց նախապես հատակից վերցնելու հանած հագուստը: Միտքը խաղաղվել էր: Այդ օրվա պատկերներից ու պատահարներից ոչինչ չէր մտաբերում՝ նույնիսկ հպանցիկ կերպով: Դա մի անփոխարինելի քուն էր, հանկարծակի և խորը:

Այդուհանդերձ, այդ քունը հազիվ մի քանի րոպե տևեց, երբ այն հանկարծ փախավ այնպես, ինչպես որ եկել էր՝ թողնելով նրան բոլորովին զարթնած և զգաստ: Այն, ինչ որ հետո պատահեց, իսկապես աննկարագրելի է. Երեմիան ավելի քիչ էր երազում, քան մինչ այդ

երազել էր: Նա արթուն, ուշադիր ու թարմացած վիճակում էր, ինչպես բազմաթիվ ժամերի հանգստից հետո, և ամբողջությամբ ըմբռնում էր իր մեջ և իր շուրջը գոյություն ունեցող իրավիճակներն ու իրականությունները: Նա նստեց ու զննեց գիշերային մթությամբ պատված սենյակը: Ի՞նչ էր պատահել. լուսամուտի բացվածքում մի ինչ–որ ստվեր նշմարվեց, որը դրսից մտնում էր ներս, թեքվում ու տարածվում ամեն կողմ, այնպես որ լցնում էր ամբողջ սենյակը: Դա անորոշ մի բան չէր, այլ հստակ ու ձևավորված մինչև իր հետին թերթիկն անգամ, շքեղորեն ծաղկած ճյուղերի մի խումբ, որը ներս մտնելով՝ առատորեն և կենսունակությամբ բազմանում էր ու տարածվում, ինչպես պատերը մագլցող բաղեղը: Ասես թե հանկարծակի մի ծառ աճած լիներ լուսամուտի առջև ու իր ոստերը տարածած սենյակից ներս: Դրանք նշենու ճյուղեր էին. տարվա մեջ՝ անմիջապես ձմեռվա վերջին, ամենից շուտ իրենք էին արթնանում, երբ դեռևս ոչ մի բողբոջ ծաղկած չէր լինում այլուր: Զատկի ժամանակ նշենիների ծաղկումից արդեն շաբաթներ էին անցած լինում, այդուհանդերձ, զարթնումի, փթթումի, արշալույսի ու թարմության ոստերն անդադար ներս էին մտնում լուսամուտից, որոնց անհաշիվ բողբոջները ծաղկում էին ճերմակ ու վարդակարմիր գույներով, հասունանում էին ու թառամում՝ տեղ բացելու համար իրենց հետևից եկող ուրիշների համար: Երեմիան իր ձեռքերով կկարողանար բռնել ճյուղերը, դիպչել բողբոջներին ու ծաղիկներին, որոնք սիրտը լցնում էին ուրախ հուզմունքով, բայց նա իր տեղից չէր շարժվում: Նա հասկանում էր, որ դա մի տեսիլք է, որը նույնիսկ իր համար բոլորովին անծանոթ չէ, թեև նախկինում ծաղկած ճյուղերի վերաբերյալ իր տեսիլքը երբեք այդքան հստակ ու ամբողջական չէր եղել, հազիվ թե դրա մեկ հարյուրերորդ մասն էր ընդգրկել: Նա շունչը պահեց: Լսողությունը լարված էր: Ուր որ է՝ ձայնը պիտի գար, ձայնը, որ ծանոթ էր իրեն, թեկուզ իբրև կարճատև ու անորոշ շշուկ, թեկուզ իբրև դատարկ կամ հեռավոր կանչ, որպես լեռներից հնչող խաբուսիկ արձագանք կամ իբրև գրգռիչ պահանջ սեփական գլխում: Նախկինում միշտ, երբ հայտնվում էր իրեն մի տեսիլք, և ընթացքում վրա էր հասնում մի ձայն, անմիջապես փախչում էր և տագնապահար թաքնվում, ինչպես մի անչափահաս պատանի, որին վախեցնում է արբունքի հասնելը: Այսօր,

սակայն,— և ինքը գիտե այս մասին,— ոչ մի փախուստ իրեն չի օգնի, քանզի Աստծու առաջ ինքն արդեն հասուն տղամարդ է:

Եվ ձայնը հասավ ճիշտ այն պահին, երբ ինքը սպասում էր դրա գալուն. դա տղամարդու մի ձայն էր, մեղմ ու հստակ, որը լցնում էր ամբողջ սենյակը: Նույնիսկ պատի յուրաքանչյուր ճեղք, փայտի յուրաքանչյուր խոռոչ, նույն ժամանակ և նույն չափով, լցվում էր նրանով: Այդուհանդերձ, զարմանալիորեն, հատուկ ոչ մի տեղ չկար, որտեղից ուղարկված լինեին այդ ձայնի թրթռումները: Այն միանգամից մեջտեղ էր գալիս և տարածվում ամենուրեք: Ամբողջ սենյակն էր արտադրում այն, որը կարծես թե միշտ եղել է այնտեղ, բայց խլացվել գործող աշխարհի ընդհանուր ժխորից: Այժմ թվում էր, թե այդ ընդհանուր աղմուկը նահանջել է, որի պատճառով էլ լսելի էր դառնում ձայնը: Այո՛, Երեմիան ինքն էլ մի բնակարան էր, և ընդհանուր աղմուկը նաև իր մեջ էր լցվել, որն այժմ հետ էր քաշվում՝ ազատություն տալով ձայնին: Հետևաբար, այդ ձայնը լցնում էր ոչ միայն Երեմիայի շրջակա արտաքին տարածքը, այլև ներքինը, որը հենց իր անձն էր իր ամբողջ էությամբ: Ձայնը միևնույն ժամանակ թե՛ ներքին էր և թե՛ արտաքին: Իրար համընկնող կրկնակի մի ձայն: Եվ տղամարդու այդ ձայնը կանչեց մեղմ ու հստակ.

— Յիրմեյահու (Երեմիա)...

Քիչ անց կանչվողը պատասխանեց՝ ծանր շնչելով.

— Ահավասիկ այստեղ եմ...

Այս պատասխանն իր մեջ բովանդակում էր մի խորամանկ վախկոտության հետին մնացորդ, քանզի ասել՝ «ահավասիկ այստեղ եմ», բավարար չէր: Գոյություն ուներ տարբեր բանաձև՝ Աստծու ձայնը խնդրելու և պահպանելու: Հեղի քահանան հանձնարարել էր այդ բանաձևը պատանի մարգարե Սամվելին, և քիչ ժամանակ առաջ Բարուքն էլ կրկնել էր այն թաքուն մի նպատակով: Երեմիան շատ լավ գիտեր, թե ինչ պետք է անի: Գուցե այդ ձայնը մի անգամ ևս թողնի–գնա, բայց այն չի հեռանում իր կողքից: Սենյակը, որի մեկ մասն էր ինքը, միևնույն ժամանակ և նույն չափով նորից լցվեց թավ ու խոր ձայնով, որն ասում էր.

— Յիրմեյահու ...

Հաղթահարված և նվազող երկյուղով Երեմիան բացեց իր ձեռքերը՝ որպես մի բարեպաշտ աղոթող, և կրկնեց բանաձևը.

— Խոսիր, Տեր, քո ծառան լսում է:

Ձայնի արտաբերած խոսքերը, գրեթե մարմին առած, շրջում են մահճակալի շուրջը և հավաքվում սնարի կողմը: Շուտով թվում է, թե այդ շշուկային ձայնն ուժեղանում է ու կուտակվում Երեմիայի գլխում.

— Ես քեզ ճանաչեցի՝ դեռ քեզ քո մոր որովայնում չստեղծած,

Ես քեզ ընտրեցի՝ դեռ քո մայրը քեզ չծնած,

Ես քեզ ժողովուրդների վրա մարգարե կարգեցի:

Ներսում և արտաքնապես երեք անգամ անփոփոխ կերպով կրկնվող «Ես քեզ» արտահայտությունը հնչեց իբրև ներդաշնակ ձայների համադրություն: Դրա հաղորդած պատգամը տարօրինակ էր, անըմբռնելի կերպով տարօրինակ: Երեմիան մտքի ծայրով անգամ չէր անցկացրել, որ մի օր կարող կլինի ընտրվել իբրև գործիք աստվածային ծրագրերի, որ ինքը՝ Քեղկիայի և Աբիի համեստ որդին, մեկը՝ նման ուրիշ բազմաթիվ մարդկանց, նախքան իր ծնվելն արդեն որոշված պիտի լիներ ունենալու այդպիսի մեծ ապագա: Գաղտնիք չէր, որ տասներեք տարեկանից ի վեր իր ունեցած անավարտ տեսիլքներն ու կանչերը բովանդակում էին ինչ–որ իմաստ և նպատակ թե՛ իր և թե՛ քաջատեղյակ Բարուքի համար: Այդուհանդերձ, ի՞նչ իմաստ ուներ այն խոսքը, թե՝ «Ես քեզ ժողովուրդների վրա մարգարե կարգեցի», ո՞ր ժողովուրդներին նկատի ունի, մեծ ժողովուրդների՞ն արդյոք՝ Ասորեստանի, Բաբելոնի, Եգիպտոսի: Իսկ ի՞նքը՝ Երեմիան, ո՞վ էր ինքը. վեհերոտ և մարդկանցից խուսափող մի անձ, որը միշտ ձգտում էր մենակության, նաև անգործունակ էր և ամեն տեսակ վեճերից խուսափող: Նույնիսկ գերագույն այն պահին, երբ գերբնական իրադարձությունների կենտրոնում էր՝ կաթվածահար ու գրեթե շնչասպառ վիճակում, այնուամենայնիվ, իր հոգին դույզն չափով իսկ չէր կորցնում իր զգոնությունը, շրջահայեցողությունը, հնարամտությունը: Դեռևս շարունակում էր ելքեր որոնել՝ հետաձգումների ու մարդասիրական տարկետումների վերաբերյալ: Չնայած որ նա ամբողջությամբ գիտակցում էր իր բերած փաստարկումների անբավարարությունը, այդուհանդերձ, սկսեց թոթովել մանկական աղոթքի գանգատավոր հնչումով.

— Տեր, ով դու Տեր, ես պիտանի չեմ, նույնիսկ խոսել չգիտեմ... ես շատ երիտասարդ եմ...

«Երեմիան Տիրոջ կողմից մարգարե է կարգվում»

Որքա՜ն թույլ հնչեց այս պատրվակը մի կանչվածի կողմից, որի տարիքն արդեն քսանից ավելի էր: Նրան տրված անվրդով պատասխանը չուշացավ հնչել, այլևս հազիվ թե արտաքնապես, այլ թվում էր, թե այն լրիվ հանգրվանել է Երեմիայի ներաշխարհում.

— Մի՛ ասա, թե դու շատ երիտասարդ ես, այլ կապիր գոտին մեջքիդ և գնա:

Երեմիայի կորովն անբացատրելի արագությամբ էր աճել իր նախորդ արտահայտության՝ «Խոսիր, Տեր, քո ծառան լսում է», և Տիրոջ այս պատվերի՝ «Կապիր գոտին մեջքիդ և գնա», միջև ընկած կարճ ժամանակահատվածում: Նա իրեն չափազանց ապահով էր զգում, որպես թե իրեն հարազատ լիներ այդ ձայնը: Մահճակալից սահեց և նստեց նրա եզրին: Նշենու ծաղկած ճյուղերը մի քիչ հեռացան նրանից և լրիվ ծածկեցին լուսամուտի բացվածքը: Ձայնը, սակայն, չէր անհետանում, այն հնչում էր այստեղ և այնտեղ, ինչպես մի ամանում լցվող ջուրը.

— Ի՞նչ ես տեսնում:

— Տեսնում եմ գարնանային բողբոջած ճյուղեր:

— Ճիշտ ես տեսնում... Իմ խոսքը նույնպես բողբոջում է և հառնում, որպեսզի Ես այն ի կատար ածեմ:

Երեմիան վեր ցատկեց: Իր հոգու քաջությանը գալիս էր միանալու մի նոր ու հուզախառն ոգևորություն՝ կառչելու Ադոնային (Աստծուն) և հավիտյանս Նրան պատկանելու: Հորդառատ երախտագիտությամբ գիտակցում էր, որ այդտեղ կատարվածը ոչ պատրանք էր, ոչ երազ, և ոչ էլ կախարդություն, այլ այն այնքա՜ն հոգեհարազատ էր, ճշմարիտ և իրական, ինչպես իր սեփական անձը: Նա լայնորեն տարածեց իր բազուկները: Եվ ահա հանկարծ ծաղկած ճյուղերը չորացան և սկսեցին այրվել: Լուսամուտի բացվածքում, կամ ավելի ճիշտ՝ դրսում, անլուսին գիշերում, երկնքի և երկրի միջև, անտես շղթաներից կախված էր մի վիթխարի կաթսա, ուր նշմարվում էին ներքևից նրան հասնող ու այն շրջապատող կրակի բոցերը: Այդ կաթսան նույնպես մի անգերազանցելի իրականություն էր: Կրակը կարմիր գույն էր տալիս նրա՝ եռալուց դուրս մղվող շչացող գոլորշուն, ապա նրա պարունակությունը մի քիչ երերում էր կաթսայի կախվածության անտեսանելի հարմարանքի շուրջն այնպիսի ձևով, որ նրա մեկ ծայրը հյուսիսից թեքվում է դեպի Երեմիան, և երբ այն

հորդում է՝ սկսում է ժայթքել իր շուրջը հաստ ու հրաշեկ լավաների կատաղի զանգվածներ: Այժմ, առաջին անգամ լինելով, ձայնը գալիս էր մի որոշակի վայրից: Նրա շշունջը հասնում էր Երեմիայի ականջին.

— Ի՞նչ ես տեսնում:

— Տեսնում եմ մի եռացող կաթսա կեսգիշերից սկսած մինչև հիմա...

— Ճիշտ ես տեսնում: Կեսգիշերից է գալու դատաստանը:

Այսպիսի մարգարեություններ գերազանցում էին Երեմիայի ըմբռնելու կարողությունը: Դեռևս նրան չէր տրվել դրանք մեկնաբանելու շնորհը: Որքա՜ն ազատ և անկախ էր Տերն այն անձից, որին Ինքն ընտրում էր, որպեսզի օգտագործի: Երեմիան, սակայն, գնալով կորցնում էր ուժը՝ տոկալու հանդիպումին: Նրա ծնկներն արդեն թուլանում էին ու երերում: Կաթսայից շարունակում էր դուրս գալ ամպանման գոլորշին: Սկսում էին նշմարվել աղջամուղջի առաջին հետքերը: Եվ ահա մի անգամ ևս լսվեց Տիրոջ մեղմ ձայնը, և ընտրյալը նոր միայն նկատեց, որ քաղցրահնչյուն ու վճիտ տղամարդկային այդ թավ ու խոր ձայնը չէր խոսում սովորական մարդկանց ձայնի նման, այլ՝ քահանաներին հատուկ երգեցիկ ու հավասարաբաժան կշռույթի համաձայն.

— Դու պիտի քանդես և խորտակես, կործանես և ավերես, նաև պիտի կառուցես ու տնկես:

Վերջին երկու խոսքերը՝ «կառուցես ու տնկես», սավառնում էին ցնծալից, ինչպես մի երգ՝ կատարված Ասափի որդիների կողմից: Երեմիան ուզում էր բացականչել, որ ինքն ամենայն հնազանդությամբ լրիվ պիտի կատարի իրեն հրամայվածը, բայց չկարողացավ արտահայտվել: Նրա մեջ մեռած էր ամեն մի հնչյուն, անսահմանության կողմից խեղդված էր ամեն մի պատասխան: Եվ այդժամ զգաց Տիրոջ հպումն իրեն:

— «Եվ Տերը, ձեռքն ինձ երկարելով, դիպավ բերանիս ու ասաց. «Ահա Իմ խոսքը քո բերանը դրեցի»...

Դրանից հետո Երեմիան իրեն անհարմար դրության մեջ պիտի զգար, երբ հետաքրքրվողները հետը զրույցի բռնվելիս պիտի խնդրեին նկարագրել իր հետ պատահած աննկարագրելին: Եվ ամեն անգամ վերապատմելիս հենց իր իսկ օգտագործած խոսքերը պիտի տանջեին իր հոգին՝ իբրև սնապարծություն ու խաբկանք: Զորությունների Տերը ձեռք չունի, որպեսզի այն երկարի իր բնակության վայրից: Նա ունի ձայն: Այդ



«Տիրոջ ձեռքը հպվում է Երեմիայի բերանին»

ձայնն իր Հոգին է, իր շունչը, որն արտաքնապես թափանցում է սենյակի մեջ և ներքնապես՝ Երեմիայի ներաշխարհ, ինչպես ձայնը մի շեփորի: Աստծու շունչը մեջտեղ է բերում հնչյունը, բայց շեփորն ինքը գործակից է նրա արտաբերմանը: Առանց այդ շեփորային գործիքի շունչն ինքնին ձայն պիտի չունենար: Տիրոջ ձայնը կարիք ունի մարդու ներաշխարհի: Շունչը հոգի է, մինչդեռ ձեռքը հոգի չէ: Եվ թեկուզ որ Տերը ձեռք չունի, այդուհանդերձ, ձեռքով է դիպչում Երեմիային, և դա մի իրական հպում է, որն ինքնին մի կարճ ու թեթև հարված է բերանին: Այդ հարվածը կայծակի նման անցնում է մարդու որդու էության միջով՝ ընկերակցությամբ գոյություն ունեցող ամեն տեսակ ցավերի՝ գերագույն ցավով, միաժամանակ ամեն տեսակ հաճույքների՝ գերագույն հաճույքով: Եթե գոյություն ունի մի կրակ, որն ի վիճակի է մի ակնթարթի ամենաչնչին մեկ մասի ամենակարճ հատվածում այրելու և մոխրի վերածելու միս ու ոսկոր ունեցող մեկին, ապա այդ դեպքում ցավը հետևանք է կատարված հպումի պատճառած ցավի: Ստեղծված այս աշխարհում ցավի համար գոյություն ունեն բազմապիսի համեմատություններ, բայց հիշյալ հպումից առաջացած հաճույքի վերաբերյալ գոյություն չունի ոչ մի համեմատություն: Եվ բերանին տրված հարվածում կա նաև մի երրորդ զորություն. դա այն հստակ ու սառը համոզումն է, որ ինքն այժմ և այսուհետև հավիտյանս տարբեր մեկն է լինելու՝ վերանորոգված ու վերածնված շնորհիվ մահվան ու վերակենդանացման:

Երեմիան աղաղակեց բարձրաձայն՝ նախքան հատակին փլուզվելը:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՄԱՐԳԱՐԵՆ ԻՐ ՀԱՅՐԱԿԱՆ ՏԱՆԸ

Լուսաբացին Քեղկիայի ամբողջ տանը միայն Երեմիայի մայրը՝ Աբին, լսեց որդու աղաղակն ու ճանաչեց նրա ձայնը: Նա զարհուրած նայեց իր հետ նույն անկողնում պառկած Քեղկիային: Ծերունին, ընդհանրապես մի դժգոհ մարդ, դեռևս քնած էր: Ինչպես նրա սովորությունն էր, նա գիշերը երկու անգամ արթնացրել էր Աբիին, որպեսզի վերջինս ականջ դնի իր սովորական գանգատներին՝ ուղղված նրանից ծնված իր երեք որդիների հասցեին: Ծերության արդեն մաշված քունը՝ իր բազմաթիվ ճեղքերով ու անցքերով, առիթ էր տալիս Քեղկիային կազմելու մի հստակ պատկերացում Օբադիայի ու Հովելի թերի արժանավորության, նաև Երեմիայի համառ ինքնամփոփվածության մասին: Առավոտվա դեմ, սակայն, նա միշտ մտնում էր խոր ու հանդարտ քնի մեջ, դրա համար էլ Աբին համարձակվեց աննկատ վեր կենալ նրա կողքից և գնալ ու մտնել սենյակը կրտսեր որդու, որին գտավ դեմքով հատակին փռված: Մայրը նստեց ընկած որդու կողքին, սարսափահար շփեց նրա սառած ձեռքերն ու ոտքերը, փնտրեց սիրտը, որը բաբախում էր շատ ուժգին: Ի վերջո կարողացավ նրան ուսերից բռնած մի քիչ բարձրացնել ու պառկեցնել մեջքի վրա՝ գլուխն իր գրկում առած: Ակամայից ջղաձգվող հեկեկոցները ցնցում էին Երեմիային: Նրա ամբողջ մարմինը թրջված էր սառը քրտինքով: Աբին չորացրեց նրա ճակատն ու պարանոցը: Այդ անելիս օրորում էր նրա մարմինը, ինչպես անում են կանայք՝ հանդարտեցնելու համար ծծկեր մի երեխայի: Առանց իմանալու, եթե ուշաթափվածն արդեն կարողանում է լսել կամ ոչ, նա շշնջում էր.

— Ինչ է կատարվում իմ որդու հետ... Ինչ ունի իմ կրտսեր որդին... Աստված չանի, հիվանդ է արդյոք...

Լսելով մայրական ձայնը՝ Երեմիան բացեց իր աչքերը: Հայացքից երևում էր, որ հասկացել էր հարցումը, և պատասխանը բացասական էր: Մայրը դադարեցրեց իր շարժումները.

— Արդյոք մի վատ բան է պատահել իմ կրտսեր որդուն... Որևէ մեկը երեկ նեղացրե՞լ կամ վիրավորե՞լ է իմ Երեմիային...

Որդու երկարաթարթիչ աչքերը նայում էին դեպի հեռուները՝ անպատասխան թողնելով մորը: Այդուհանդերձ, վերջինս շարունակում էր իր հարցապնդումը.

— Քեզ հարգանքով չե՞ն ընդունել... Քեզ անտեսե՞լ են... Չնայած այն բանին, որ որպես հպարտություն քո հայրական գերդաստանի՝ դու գնացել էիր տաճար... Երանի՜ երբեք գնացած չլինեիր...

Երեմիան, որ հետզհետե վերագտնում էր իր ուժը, ցածրաձայն ընդմիջեց նրան.

— Ո՛չ, մայր իմ, հարցն այդ չէ...

— Ուրեմն ի՞նչ է, որդյակ... Ստիպում ես ինձ պատասխան մուրալ քեզանից...

Որդին լռությամբ շրջեց գլուխը: Աբին բարկացած էր թվում.

— Առանց պատճառի փռվել ես գետնին ու լալիս ես... ինչպես մի իսկական սգավոր... ինչպես որբացած մի անձ, որի ծնողներն ու եղբայրները կարծես մահացած լինեին, և ինքը ստպված լիներ դանակով քերծել իր այտերը... Բայց քո բոլոր հարազատները ողջ են, փառք Աստծու... Կեղծ սգով մի՛ հրավիրիր իսկական սուգը, քանզի այն, ինչ որ մարդ ձևացնում է, այն էլ արտադրում է... Չգիտե՞ս, որ ամեն անկյունում կանգնած է մահվան պատգամաբերը... Եթե դու երկար ժամանակ այստեղ ընկած մնաս, իսկապես պիտի հիվանդանաս... Դե, ոտքի ել, որդյակ իմ:

Երեմիան հնազանդվեց այս խրախուսիչ խոսքերին, վեր ելավ հատակից, ձեռքը մեկնեց մորը՝ օգնելու համար նրան, բայց երբ վերջինս կրկին սկսեց հարցեր տալ, նա լրջորեն ընդհատեց մորը.

— Ուզում եմ քնել, մայր իմ...

Երեմիան մի ակնթարթից մյուսն արդեն քնել էր: Այդ ընթացքում մայրը շտապեց դեպի օջախը՝ պատրաստելու համար դեղաբույսերից բուժիչ հատկությամբ մի ըմպելիք, բայց հանկարծակի հստակությամբ անդրադարձավ, որ Երեմիան չի ունեցել ջերմություն, հիվանդություն

կամ գիշերային զառանցանք, այլ ունեցել է շատ ավելի ուժեղ մի բան, քան դրանցից որևէ մեկը:

Այնուհետև տարավ իր պատրաստած ըմպելին Երեմիայի անկողնի մոտ, տեսավ, որ նա հանդարտորեն շնչում է իր քնի մեջ: Աբին նստեց մահճակալի եզրին՝ ծնկներին դրած կազդուրիչ խմիչքով ափսեն: Չէր ուզում արթնացնել ուժասպառ որդուն: Մնում էր լուռ նստած և զննում նրա դեմքը, որն ասես բարակ թարթիչների միջից նայում էր իրեն և հասկանում այն, ինչ որ ինքը գիտեր: Թվում էր, թե որդին թաքնված էր իր քնի մեջ, իսկ մայրն էլ՝ իր հսկողի համառ դերում: Նա երբեմն ձեռքով բռնում էր տաք բաժակը, որը հետզհետե դառնում էր գաղջ, ապա՝ սառը: Ով իմանա, թե ինչքան ժամանակ էր անցել, երբ լռության միջից հանկարծ հնչեց Երեմիայի ձայնը.

— Մայր իմ, քանի որ ես այն չպետք է թաքցնեմ աշխարհից, ուրեմն ի՞նչ իրավունք ունեմ ես այն ծածուկ պահելու քեզանից:

Աբիի մտքերը տատանվեցին, այնպես ձևացրեց, որպես թե ոչինչ չի կռահում.

— Ի՞նչ թաքցնել... Ինչի՞ մասին ես խոսում, որդյակ...

Նրա շուրթերից դուրս եկավ մի կարճ ու կտրուկ պատասխան.

— Տերը եղավ ինձ մոտ...

Մոր խոշոր ու դատարկ թվացող աչքերը սևեռվեցին նրա վրա: Վերջինս շարունակեց արտահայտվել անթաքույց.

— Տերն այցելեց ինձ հենց այստեղ, այս սենյակում... Իր սեփական ձայնով ու զորությամբ... Եվ այդ ձայնը խոսեց ինձ հետ և ինձ պատվիրեց գնալ այստեղից հեռու...

— Նա քեզ ուղարկում է այստեղից հեռո՛ւ,— կրկնեց մայրը նվաղկուն ձայնով:

Երեմիան ձեռքով մի կարճ շարժում արեց, որը բացառում էր հետին կասկածն անգամ.

— Այո՛, մայր իմ, դա ճիշտ այդպես է:

Աբիի աչքերը լցվեցին արցունքով: Լացի պատճառն այն չէր, որ Տերն ուղարկում էր իր սիրելի որդուն այդտեղից հեռու: Նա արդեն երբեք հույս չուներ, որ Երեմիային կկարողանա պահել իր մոտ: Նաև չէր լացում նրա համար, որ Տերն այցելել էր նրան: Արդյոք ինքը չպետք է

դրա համար նույնիսկ հպարտ լիներ՝ Հակոբի սերնդի բոլոր մայրերի համեմատությամբ: Թեև Միակն ու Հզորը, ում ինքը տիվ և գիշեր բարձրացնում էր իր աղոթքները, բնությամբ բարի է, այդուհանդերձ, իր սիրտը համակվում էր մեծ վշտով նրա համար, որ Նա հենց իր որդուն էր ընտրել:

Երեմիան շարունակում էր փակ պահել իր աչքերը, որպես թե ուզում էր կրկին թաքնվել: Տիրոջ հետ շփվելուց հետո աչքերը բացելը ցավ էր պատճառում իրեն: Ամբողջը և յուրաքանչյուրը կերպարանափոխվել էր և հայտնաբերել տարբեր ու վտանգավոր նշանակություն. այդ թվում՝ իր մանկության սենյակը, լուսամուտը, օրը, նույնիսկ իր ամենամոտիկ էակը՝ իր մայրը, որն իրենից խորթացած էր թվում, որի սերն ու հոգատարությունն իր նկատմամբ գրեթե անհաճո և անտանելի էին դարձել: Դրանք կպատշաճեին ավելի երեխա Երեմիային, որն այլևս զոյություն չուներ: Նոր Երեմիան, սակայն, կտրուկ ու լրջախոհ մի որդի, հասկանում էր, որ ինքը պետք է սովորի բոլոր կապերից զերծ մնալ և առ այդ նույնիսկ ցավ պատճառել թե՛ ինքն իրեն և թե՛ իր մորը:

* * *

Հնուց ի վեր օրվա գլխավոր ճաշը միասնաբար ճաշակում էին տան այն բաժնում, որը, համաձայն պատկառելի ավանդության, կոչվում էր «Աբիաթարի սրահ»: Սակայն Դավիթ թագավորի ժամանակակից նշանավոր քահանայապետի և իմաստուն մարդու անունը կրող այդ սրահը հազիվ թե արժանի էր կոչվելու նման մի ճոռոմ անունով: Այն պարզապես ընդարձակ և մերկ պատերով մի գեղջկական սենյակ էր, որի ցածր առաստաղը հանգչում էր մի քանի քարե անտաշ սյուների վրա: Եվ քանի որ Աբիաթարի սրահը տան ներսի կողմում էր, դրա համար էլ այն զրկված էր օրվա լույսից, որի պատճառով այնտեղ միշտ զով էր ու մութ: Տարվա մի մեծ շրջանի համար դա մի անգնահատելի առավելություն էր: Համայնական այդ վայրի մշտական մթության հետևանքով ընտանեկան ճաշասեղանի վրա ճրագը միշտ վառված էր. ոչ միայն երեխաների, այլև հարազատների ու օտարների համար դա «Քեղկիայի նահապետական

տան ճրագն» էր, օգտակար և միևնույն ժամանակ նշանակալից մի լույս: Մինչև հիմա էլ, երբ մեկի սերունդն անհետանում է, սովորաբար ասվում է՝ «այսինչ գերդաստանի տան ճրագը հանգել է»: Քեղկիայի սեղանի ճրագը մի մշտավառ ճրագ էր, որի ձեթը չէին թողնում, որ սպառվի՝ որպես խորհրդանիշ Աստծու օգնությամբ այդքան դարերից ի վեր այդ սերնդի գոյատևման: Սեղանը, սակայն, որն անհիշելի ժամանակներից ի վեր իր շուրջն էր հավաքում այդ գերդաստանի ներկայացուցիչներին, բավականին ընդարձակ էր, թեև կոշտ ու որդնած փայտից ու ցածր: Պետք է տեղը լայն լիներ, քանզի չնայած Քեղկիայի զավակների քանակը համեստ էր, սակայն հետագայում նրանց ժառանգների համար նահապետական սեղանում չպետք է երբեք տեղ պակասեր: Այդ օրը՝ Զատկվա երեկոյին հաջորդող օրը, դրա շուրջը դրված էին միայն տասներեք *կիսիմ*, այդպես էին կոչում այդ աթոռները, որոնք իրականում կարճ ոտքերով և մորթիներով ծածկված աթոռակներ էին:

Տոնական ճաշկերույթին հավաքվել էին հայրական տան գլխավոր անդամները. ծնողները, ամուսնացած որդիներն իրենց կանանցով ու երեց զավակներով և, բացի երկու անձնավորություններից՝ իբրև հյուր, նաև Երեմիան: Ավագ որդին՝ Օբադիան, տան ապագա գլուխը, սիրում էր գեղջկական բարձր ու կոկորդային կոպիտ ձայնով խոսել, որով արդեն հասկացնում էր, թե տնտեսության ու բարգավաճման ամբողջ բեռն իր ուսերին է կրում: Բեռնակիր էշն ու հայրական տան լծկան եզը որտեղի՞ց պիտի կարողանային ժամանակ և հատկանիշներ ձեռք բերել ազնվական կեցվածքի կամ բարձրարվեստ խոսակցության: Ինչքա՜ն անարդար էր վարվում մայրն իր նման մի ապուշի հետ, որի մայրական սիրտը բաբախում էր միայն Երեմիայի համար: Նաև իր պատվարժան հայրը կյանքի պահանջների ու կարիքների դիմաց երբեք գործունյա չի եղել: Ոչ միայն Օբադիան, այլև իր կինը՝ Մոխելեթը, անդրադառնում էին, որ անարդար կերպով անտեսվում են Օբադիայի գերազանց ունակությունները, որն աշխատում էր բոլորի համար՝ առանց արժանի դառնալու որևէ մեկի շնորհակալությանը կամ վարձատրությանը: Մոխելեթը շատ տգեղ էր, և ինչպես արդեն բառն է մատնում, հակամետ էր ատելին ու նախանձելին դառնալու բազմաթիվ տգեղ կանանց: Երկար ժամանակ էր, որ Օբադիան այլևս անկողին չէր մտնում նրա հետ, այլ դրա փոխարեն մերձենում էր

տան երիտասարդ աղախիններին կամ դաշտերում աշխատող ստրկուհիներին: Մոխելեթը ստիպված էր դրա հետ հաշտվել և նույնիսկ դրան հավանություն տալ, բայց իր համար ավելի նողկալի էր որոշ մի հատվածի դրսևորած այն ապերախտությունն ու արհամարհանքն իր Օբադիայի նկատմամբ, որը հայրական տան բարերարն էր ու կերակրողը: Սկզբից ի վեր ինքը կասկած չուներ, որ դրա պատճառն Աբիի սերտ կապն էր Երեմիայի հետ:

Աշխատողի կոշտ ու ծանր ձեռքերով և կոկորդային խռպոտ ձայնով օժտված կալվածատեր Օբադիայից բոլորովին տարբեր էր Հովելը՝ Քեղկիայի երկրորդ որդին: Նա միայն երբեմն էր տանը լինում, ընդհանուր առմամբ շաբաթ օրվանից առաջ, նորալուսնի և մեծ տոների նախօրեին, քանզի նրա ապրուստը կախում ուներ ճամփորդություններից: Նրա պարտականությունն էր Քեղկիայի կալվածքների հավելյալ բերքի վաճառքը երկրի ներսում և հարևան երկրներում: Գրաստների և ապրանքատար սայլերի վրա բարձած մեծ քանակությամբ գարու ալյուրի պարկերը, ձեթն ու գինին, ոչխարի և այծի կաշիները, համեմներն ու բանջարեղենի մածուկները, կտավատը, մանվածքները, բրդեղենն ու կտավը՝ նա ճամփորդում էր երկրի լավ պաշտպանված ճանապարհներով դեպի հյուսիս՝ մինչև Դամասկոս, դեպի հարավ՝ մինչև գերության երկրի Նոփ (Մեմփիս) քաղաքը, և դեպի արևմուտք՝ մինչև աշխույժ եռուզեռով նավահանգիստները Տյուրոսի և Սիդոնի:

Ծնողներից, որդիներից, հարսներից և դեռահաս թոռներից բացի, ներկա էին ևս երկու անծանոթ հրավիրյալներ:

Ճաշը տեղի էր ունենում խոր լռության մթնոլորտում: Հայր Քեղկիան չէր բարեհաճում մի խոսակցություն սկսել, ոչ իսկ որևէ կատակախառն հանդիմություն կատարել իր թոռներին կամ էլ ինչ–որ մի դաստիարակիչ և ուրախ ուսուցում փոխանցել երիտասարդներին, ինչպես որ սովորություն էր անել Աստծուն նվիրված նման մի տոնական օրվա առթիվ: Օբադիայի և Հովելի որդիները հստակորեն զգում էին այդ օրը մեծերի վրա ճնշող մթնոլորտը: Վախվորած դեմքերով նստել էին սեղանի շուրջը, մինչ սեղանի տակից ջղայնացած խփում էին իրար ոտքերին: Պապն ուներ իր մտահոգությունը: Քեղկիայի գերդաստանում «մտահոգություն ունենալ» էր կոչվում ցանկացած տեսակի տրտմություն, որ երևում էր

տան գլխավորի դեմքին: Եթե նրա համար նույնիսկ լուրջ պատճառ չկար տրտմության, այդուհանդերձ, տարիքն առած մարդը ժամանակի ընթացքում ավելիով էր կորցնում իր վստահությունը տան գործերի ապագայի նկատմամբ, թեև այդ կապակցությամբ բողոքի իսկական ու բացահայտ պատճառներ չուներ: Ինքը՝ իբրև վերջին հետնորդը Հեղիի, որը բարձր էր պահել գերդաստանի արժանապատվությունը, պիտի միանա՞ր արդյոք իր վախճանված հայրերին: Իր այդ զավակները դեռևս գիտակցո՞ւմ էին այն օրհնությունը, որն իջել էր իր քահանայական ընտանիքի վրա: Այնտեղ էր նստած իր երեց որդին՝ Օբադիան, որը մի գերազանց հողագործ էր և տնտեսվար. ո՞վ կարող էր դա ուրանալ: Նա քննում էր հողը՝ սահեցնելով այն իր մատների արանքով, ոտքերը լայն բացած քայլում էր արտերի վրայով, ամբարները բերքով էր լցնում: Բայց մի՞թե սա պատշաճ զբաղմունք էր մի քահանայի որդու համար: Արդյոք նրա փոխարեն նույնը չէ՞ր կարող անել մի ագարակապան կամ գործերի կառավարիչ՝ առնվազն ավելի զուսպ և աննկատ կերպով: Քեղկիայի ուժերի ծաղկման օրերին նրա ամբարները երբեք ավելի նվազ չէին լցվել այն պատճառով, որ նա ուներ իր գործերի կառավարիչը, իսկ ինքը երբեք չէր վտանգում իր իշխանական հանգիստը կամ քահանայական իր խոկումները հասարակ հարաբերություններով և շահադիտական մտածումներով: Ինչո՞ւ Օբադիան, որը կյանքի պայքարում այդքան ձեռներեց էր ու հաջողակ, չէր ձգտել որևէ պալատական պաշտոնի, որպեսզի այդպիսով նորովի բարձրացներ իր տան հեղինակությունն ու վարկը: Քեղկիան ինքն էլ երբեք չէր ունեցել նման փառասիրություն,— որի համար, իհարկե, ուներ ազնիվ պատճառներ,— հիմա, սակայն, քննադատում էր Օբադիային նրա համար, որ վերջինս զուրկ էր նման փքուն ձգտումներից: Իսկ Հովելը՝ նրա երկրորդ որդին, շարունակում էր իր վաճառականական ճամփորդությունները և թեև ոսկյա արդյունք էր բերում հետը, դարձյալ չէր արժանանում ծեր հոր ուշադրությանը, որի կարծիքով այդ որդին նաև ստախոս էր, քանի որ տանը պարծենում էր իր արածներով և ինքն իրեն կարևոր համարում: Անշուշտ, Օբադիան և Հովելն իրենց եղածից բոլորովին տարբեր պիտի լինեին, եթե ունենային, թեկուզ դժվարավ, իրենց հոր համաձայնությունն ու աջակցությունը: Հին սերնդին պատկանող այդ ծերուկը դառնացած ձգտում էր այն բանին,

որն այլևս գոյություն չուներ, մինչդեռ գոյություն ունեցողն իր բոլոր հնարավորություններով իր համար մերժելի էր:

Ինչ վերաբերում է նրա երրորդ որդուն՝ Երեմիային, այն պատմությունը, որն Աբին լաց լինելով պատմել էր նրան, բոլորովին խորհրդավոր էր և անըմբռնելի: Այդ էր նրա այդ օրվա մտահոգության գլխավոր պատճառը: Նա համոզված էր, որ իր կրտսեր որդու շնորհիվ Քեղկիայի սերունդը և նրան ժառանգաբար փոխանցված քահանայության անվրդով պատիվն ամբողջությամբ չեն անհետանա աշխարհից:

Ճաշն ավարտվել էր: Քեղկիան երեխաներին ու հարսներին դուրս ուղարկեց սրահից. մի բան, որ նշանակում էր, թե խորհրդակցության համար ինչ-որ մի լուրջ հարց կար: Միայն մայրը մնաց տղամարդկանց մեջ: Ծերունին ճրագը բարձրացրեց, որպեսզի նախքան իր խոսք առնելը լավ զննի բոլորի դեմքերը.

— Երեմիա, որդիդ իմ կրտսեր, մայրդ ինձ այսօր հաղորդեց այն մասին, ինչ որ դու պատմել ես իրեն, իսկ ես իմ կողմից դրա վերաբերյալ տեղյակ եմ պահել քո եղբայրներին... Արդ, իմ կրտսեր որդին թող մեզ խոստովանի, ինչպես որ ես նրանից ակնկալում եմ, թե առավոտյան իր մոր հետ խոսելիս դեռևս բոլորովին արթուն չի եղել... Եվ թող նա ընդունի, որ տեսել է մի ազդեցիկ երազ...

— Ինձ հետ պատահածը երբեք երազ չէր...

— Երազները նույնպես կարևոր են, և չպետք է դրանք արհամարհել, այլ հարկավոր է դրանք խելամտությամբ հաշվի առնել...

— Ես արթուն էի ճիշտ այնպես, ինչպես որ հիմա եմ... Թող իմ հայրը դրանում հավատա ինձ...

— Դրանով ուզում ես ասել, որդյակ, որ դա այնքան իրական էր, ինչպես որ մենք՝ սեղանի շուրջ նստածներս ենք...

— Այո՛, ինչպես մենք բոլորս, որ այս սեղանի շուրջն ենք նստած, իրական ենք...

Այս կարճ հարցուփորձին հաջորդեց ծանր լռություն: Երեմիան, սակայն, զգում էր բոլորովին նոր և անհիմն մի դառնություն, նույնիսկ իր դեմ կուտակված մի տարօրինակ ատելություն: Իր և իր ավագ եղբայրների միջև թեև երբեք բարեկամություն չէր եղել, բայց չէր եղել նաև երկպառակություն կամ խռովություն: Հիմա, սակայն, Օբադիան

շեշտակի նայում էր իրեն՝ ինչպես մի ոճրագործի: Արդյոք այդ նայվածքը հետևանք էր Տիրոջ կողմից իր հետ եղած շփումի: Հայրը, սակայն, արժանապատիվ կերպով զսպեց իր դժգոհությունը և ցածրաձայն խոսեց.

— Նույնիսկ այս օրերին էլ կան այնպիսի մարդիկ, որոնց Տերն իր ձայնով հասնում է և այցելում, ո՞վ է դա ուրանում: Երբեմն հանդիպում ենք նմաններին, որոնք հաստատում են, թե նման բան կատարվել է իրենց հետ... Ո՞վ կարող է ստուգել նման պնդումների իրականությունը, և խաբկանքը ճշմարտությունից զատորոշել... Հին ժամանակներն արդեն անցել են, և այսօրվա այս տարօրինակ սերնդի միջից դուրս չի գա ոչ մի Մովսես, Սամվել կամ Եղիա... Ինչո՞ւ Նրա խոսքը պիտի հասնի մեզ-պեսներին և նաև հենց քեզ, Երեմիա:

— Եվ նաև հենց նրա՛ն,— բորբոքվեց Օբադիան,— ես դա բացահայտ անկեղծությամբ պիտի ասեմ ձեզ, ով իմ հայր և իմ մայր, որովհետև մայրը նրան փայփայել է, իսկ հայրն էլ նրան զգացնել չի տվել իր առույգ տարիների խստությունը, որն ինձ լիովին բաժին է ընկել՝ իհարկե, հօգուտ ինձ: Ոչ ոք չի խրատել կրտսերին, ոչ ոք չի սովորեցրել նրան կատարել այն միակ իսկական աշխատանքը, որը ձեռաց աշխատանքն է: Դա արել է մեկ ուրիշը՝ կոշտ ու կոպիտ մեկը, առանց նեցուկի և առանց արժանի լինելու շնորհակալության: Մինչև ո՞ւր կարող է հասնել մեկը, որը չի կարող բահ բռնել, բայց դրա փոխարեն գիտե գրվածքները քրքրել ու շուռ տալ: Անտարակույս, դա կտանի դեպի երազային զառանցանք, դեպի հիմարություն ու խելագարություն, ինչպես որ այս պահին ենք տեսնում...

Քեղկիայի նահապետական խստամբեր սեղանին երբեք տեղի չէր ունեցել նման մի պոռթկում: Ծնողների ներկայությամբ որդիները միշտ ջանացել էին չափավոր խոսքերով արտահայտվել՝ արհեստականորեն թաքցնելով իրենց դառնություններն ու վիրավորանքները, որոնք բոլոր ընտանիքներում էլ պատահում են: Աբին սարսափահար բարձրացրել էր իր ձեռքերը՝ իբրև մերժում այդ վիրավորական խոսքերի: Քեղկիան մռայլ աչքերով նայում էր լույսին: Գլխավոր մուրացկան Շամարիան գլխի դրական շարժումով իր համաձայնությունն էր հայտնում, որի համար ուներ իր տրամաբանական պատճառը, քանզի ապագայում Օբադիան էր լինելու տան ղեկավարը, որի բարեգործությունից ինքը պետք է օգտվեր: Կույրը, որը, ըստ երևույթին, ոչինչ չէր հասկանում, չարախինդ

ծիծաղում էր օդի մեջ: Ինքը՝ Երեմիան, մտածում էր, թե ինչպես է Օբադիան լկտիորեն ստում, երբ պարծենում է իր ձեռքերի աշխատանքներով, քանզի նա՛ չէր, որ բահով շրջում էր հողը, արորով ակոսներ ձգում, այլ այդ բոլորն անում էին ստրուկներն ու ծառաներն ընտանեկան ընդարձակ կալվածքների վրա: Դրա դիմաց, սակայն, այդ խեղճերին խաբում էին ու կողոպտում՝ զլանալով նրանց յոթը տարվա ծառայությունից հետո ազատություն շնորհելը և օրինավոր վարձատրություն տալը, ինչպես որ սահմանված էր Աստծու օրենքում: Նման մի անարդարություն մեծապես ազդում էր Երեմիայի վրա, որպես թե ինքը լիներ այդ ծանր հանցանքը գործողը: Ինչ վերաբերում է ճկուն վաճառական և աշխարհիկ կյանքով ապրող Հովելին, նա փորձում էր մեղմացնել Օբադիայի խոսքերի ազդեցությունը.

— Մեր ավագ եղբայրը խիստ և ուժեղ խոսեց աշխատանքի մասին: Ինձ նման մեկը, որ շատ է ճամփորդում, համաձայն կլինի նրա հետ այն հարցում միայն, որ աշխատանքն իսկապես առողջ է պահում, մինչդեռ խոսքերի և գրությունների ուսումնասիրության մեջ խորասուզվելը շատ հեշտությամբ առաջնորդում է դեպի հիվանդություն... Գրության պատկերները քաշում–տանում են կոչում չունեցող անճարակին դեպի դժոխք, այսպես են ասում Տափնասի իմաստունները... Ոմանք այնքան են լցնում իրենց գլուխը, որ վերջում կորցնում են այն. մի բան, Աստված մի արասցե, որ պատահի մեր կրտսեր եղբորը... Այդուհանդերձ, թող իմ ավագ եղբայր Օբադիան ընդունի մի դիտողություն: Գոյություն ունի նաև այլ աշխատանք, քան միայն հերկելը, տափանելը, գոմի խնամքը... Ըստ բաբելոնյան մի առածի՝ մարդ պետք է հողից սնվի և ոչ թե հողը՝ մարդուց... Ամեն մարդ չի ծնվել հողագործության կամ անասնապահության համար... Աշխարհը տեսնել, ուսումնասիրել երկրները, ծանոթանալ ժողովուրդների նիստուկացին, սահուն կերպով խոսել նրանց հետ՝ իրենցից յուրաքանչյուրի լեզվով, վաճառել սեփականը և մրցակցել օտարի հետ, սա էլ, անշուշտ, դժվարին աշխատանք է, բայց նաև՝ քաջալերելի...

Քեղկիան շտապեց դիմել Երեմիային ամենայն քնքշությամբ և համոզիչ շեշտով.

— Տես, որդյակ իմ, ճանաչում եմ ոմանց, որոնք իրենց մասին նույնն են պնդում, ինչ որ դու ես ասել քո մորը: Մեծ մասամբ նրանք

խճճված մազերով և երբեք սանր ու ածելի չտեսած վայրի մորուքով մարդիկ են... Կոշտ վերարկուներ հագած ման են գալիս միայն երևալու և իրենց մասին խոսեցնել տալու համար... Բարձրաձայն խառնվում են թագավորի և իր իշխանների գործերին, իսկ ժողովրդին էլ ոտքի են հանում իրենց գուշակություններով: Եվ ինչ բանի են ծառայում այդ գուշակությունները: Նախքան դրանց կատարումը դրանք ոչինչ չեն բարելավվում, իսկ եթե կատարվում են, դրանից հետո ոչ ոքի օգուտ չեն տալիս... Կուզենայիր դու նմանվել այդ մարդկանց...

— Ո՛չ, չեմ ուզում նմանվել այդ մարդկանց,— շշնջում է Երեմիան դառնացած և գլուխը կախում: Մինչ այդ նա երբեք չէր մտածել, որ կարող է ինքն էլ դառնալ մեկն այդ անհաճո կերպարանքներից, որոնք թափառում էին ամբողջ երկրով մեկ, իրենց շուրջը հավաքում մարդկանց և գրգռիչ ու դատարկ խոսքերով խանգարում նրանց: Այժմ նա ցնցվում է այդ նողկալի պատկերից: Քեղկիայի գլխից սահել-ընկել էր նրա ճերմակ գլխանոցը, այնպես որ երևում էին նրա գունատ ճակատն ու ծերացած նիհար գանգը: Միշտ դժգոհ հայրը դեռևս երբեք չէր թվացել որդուն այդքան պատկառելի, ինչպես այդ պահին, իսկ որդին էլ իր ամբողջ էությամբ երբեք այդքան անմնացորդ կերպով համաձայն չէր եղել իր հոր խոսքերին:

— Լսիր, Երեմիա,— սկսեց նորից Քեղկիան,— արհամարհելի բան չէ պատկանել մի տոհմի, որի ծագումը հասնում է մինչև նախնական ժամանակները... Այնտեղ՝ արկղում, պահպանվում են այն գրատախտակները, ուր արձանագրված են այս գերդաստանի նախահայրերի անունները՝ հասնելով մինչև Ահարոն, բոլորն էլ եղել են քահանաներ: Քահանաները պարտավոր են անշեղ կերպով պահպանել Տիրոջ հաստատած կարգուկանոնը: Քո եղբայրների մասին չեմ ուզում խոսել. նրանց գաղափարները տարբերվում են իմ գաղափարներից... Բայց ես, անձամբ ես՝ քո հայրը, չե՞ս կարծում, որ իմ երիտասարդության տարիներին կարողություն եմ ունեցել դուրս գալ անհայտ վիճակից և նշանավորվել... Ես դա չեմ արել, և Տերը գիտե, թե ինչու... Եվ հիմա գալիս է իմ կրտսեր որդին՝ տեսիլքներով, ձայներով և Աստծու խոսքերով... Տերը, եթե կամենա, կարող է տեսիլքների և ձայների միջոցով դուրս գալ իր սեփական ոլորտից... Դու, սակայն, ո՛չ... Դու չես կարող հավասարվել խենթերին և

մոլեռանդներին, որովհետև դու քահանա ես... Չե՞ս կարծում, որ դա այդպես է, որդյակ...

— Ես այդպես եմ կարծում, հայր իմ,— ասաց Երեմիան, առանց գլուխը վեր բարձրացնելու:

Քեղկիան, ուժասպառ, իր առաջ դրված գերդաստանի արծաթյա մեծ բաժակը տարավ իր շրթունքներին, որպեսզի թրջի հուզումից չորացած իր կոկորդը, և ապա խոր շունչ քաշեց.

— Շատ լավ է, որ դու այդպես ես կարծում... Երանի, որ այլևս ոչ մի անգամ պարտավորված չլինենք այս մասին խոսել...

Երեմիան սևեռուն հայացքով երկար նայեց իր հորը.

— Եթե նույնիսկ ես այդպես եմ մտածում, այդուհանդերձ, ինձանից կախված չէ...

— Ինչը քեզանից կախված չէ... Ուրիշ ումի՞ց է կախված:

Օբադիան էր այս հարցը տվողը՝ ձայնի մի գրգռիչ գռմռոցով: Կրտսեր որդին, սակայն, հայացքը չշեղեց իր հորից.

— Դա որոշողը ես չեմ... Այլ Նա է, ով ինձ հրամայում է գնալ այստեղից...

— Ահա ինքներդ լսեցիք ու տեսաք,— գոռաց Օբադիան՝ ինքն իրենից դուրս եկած և ձեռքով ուժգին հարվածելով սեղանին:— Սա արդեն անպատկառ և ցնորված մարդու խոսակցություն է, որը մեզ հայտնի է... Արդյոք նա չունի՞ այն ամենը, որ իրեն պետք է... Դա հայթայթվում է, իհարկե, առանց որ ինքը մատը շարժի... Իր բաժինը, արդարև, անձեռնմխելի է...

Մայրը, հուսահատ, լռելու նշան արեց իր երեց որդուն՝ ակնարկելով Քեղկիային.

— Ձեր հայրը դեռ չի ավարտել իր խոսքը... Նա մշակել է մի հիանալի գաղափար...

Քեղկիան դանդաղ մաքրեց իր կոկորդը: Նա արդեն մի հոգնած մարդ էր և չէր դիմանում երկարատև ճառերի ունկնդրությանը.

— Որդիդ իմ, կրտսեր, ես քեզ համար պիտի անեմ այն, ինչ որ չեմ արել իմ մյուս որդիների համար... Անշուշտ, վերջիններիս կարողությունն էլ այդ առումով նպաստավոր չէր... Ես, որ արդեն շատ ծեր եմ ու հիվանդ, չարչարանքի պիտի ենթարկեմ մարմինս, քեզ իմ էշի գավակին

պիտի նստեցնեմ և տանեմ Երուսաղեմ... Ես, որ այլևս չեմ կարող նեղություն կրել և օտար մի տեղ քնել, ստիպված պիտի լինեմ քաղաքում մի իջևան վարձել... Ես, որ մեծերից ոչ մի բան երբեք չեմ խնդրել, ինձ պիտի նվաստացնեմ և քեզ համար աղերսավոր պիտի դառնամ նրանց մոտ... Տաճարում դու արդեն մատուցել ես պատվո ծառայություն և թագավորի առաջ Աստծու խոսքն ես ընթերցել... Այնտեղ, սակայն, իշխում են Սադոկի որդիները: Սադոկը եղել է Աբիաթարի ոխերիմ թշնամին... Քո անձով ես խաղաղություն պիտի առաջարկեմ Աբիաթարի և Սադոկի միջև՝ բազմաթիվ սերունդների հետ, նաև պիտի խնդրեմ, որ ընդունեն իմ կրտսեր որդուն նվիրապետության բարձրագույն կարգերում...

Ով ճանաչում էր Քեղկիային և նրա գերդաստանի անսահման հպարտությունը, նրա՝ ներկայի հանդեպ արհամարհանքը, նրա համառ եսասիրությունը, նրա դառնախիստ դժգոհությունը՝ հոգնություն կրելու վերաբերյալ, թեկուզ տնից մի քանի քայլ հեռանալու նպատակով, այդպիսիք մեծապես ապշած կմնային նրա հայրական իսկապես վեհանձն առաջարկի վրա: Ավագ եղբայրները, նախանձից քար կտրած ու գունատ, մնացին նստած իրենց տեղերում: Հոր ամեն մի խոսքը վիրավորում էր նրանց, որ առանց հանգստանալու միշտ ջանք էին թափել տան մեծության ու բարգավաճման համար, մինչդեռ նա մեծարում էր իր այն որդուն, որը ոչինչ չէր արել և ոչ մի բանի էլ պիտանի չէ: Մայրը՝ Աբին, պաղատական ակնարկներ էր անում Երեմիային, որպեսզի նա օգտագործի նպաստավոր առիթը և ոչինչ չձախողեցնի: Նրա մայրական երբեմնի թաքուն փափագը չէ՞ր արդյոք այն, որ իր սիրասուն որդին քահանա դառնա ոչ միայն համաձայն նրա ծագման, այլև ի սեր ծառայության և վեհ պաշտոնի: Մայրական աչքերի անսովոր փայլից Երեմիան կարողացավ նախատեսել իր սեփական վերելքը՝ աստիճան առ աստիճան, մինչև Աբիաթարի վերանորոգ քահանայապետությունը: Գոյություն ունե՞ր արդյոք ավելի վեհ ու փառավոր պաշտոն, քան բացահայտ կերպով Տիրոջը ծառայելը՝ նրա փորձառու ծառայողների շարքում: Համաձայն հոր ճշմարիտ խոսքի՝ այդ պաշտոնը պատշաճում էր միայն քահանայի որդուն: Անծանոթը, անկազմակերպը կամ անհամբերատարը, եթե նույնիսկ մեծություններ լինեին, մերժելի էին այդ պաշտոնի համար: Երեմիան իր մտքում որքա՜ն բուռն ցանկություն ուներ ընդունելու հոր

առաջարկը և կատարելու մոր փափագը, բայց իր արտասանած խոսքերը չէին ենթարկվում այդ ցանկությանը.

— Թող իմ հայրը տանը հանգիստ մնա, քանզի ինձ թույլատրված չէ ծառայելու տաճարում՝ իբրև քահանա...

Բոլորն էլ միանգամից վեր թռան իրենց տեղերից: Օբադիան մի ծաղրական քրքիջ արձակեց, որին միացավ նաև մուրացկանը: Նույնիսկ վեճից ու աղմուկից խուսափող խաղաղասեր Հովելի համար այլևս չափազանց էր հայրական այդ բարյացակամ և անսպասելի առաջարկի մերժումը: Նա բռնեց Երեմիայի զույգ թևերից և ուժեղ ցնցեց նրան՝ ասելով.

— Դու, խենթ ու խելագար, ասա, ի վերջո ինչ է ուզածդ:

Երեմիան ինքն իրեն ազատեց նրանից, մնաց տեղում կանգնած, փակեց աչքերը, որպես թե սուզված լիներ մի երազի մեջ, որպես թե լսելիս լիներ մի աներևույթ անձի: Նրա շրթունքները շարժվեցին անխոս, իսկ վերջում իր նեղ կոկորդից դժվարությամբ դուրս եկավ այս խոսքը.

— Իմ փափագն է, որ դուք այլևս ինձ չհիշեք...

* * *

Երեմիան որոշել էր տոնական շաբաթվան հաջորդող առաջին գիշերն իսկ թաքուն հրաժեշտ տալ իր հայրական տանը: Այդ շաբաթը եղել էր անհաճո և դառնահուշ մի շաբաթ: Հայրն այլևս հետը ոչ մի բառ չէր փոխանակել: Եղբայրները հանդիպելիս բացահայտ ծաղրանքով ու արհամարհանքով էին անցնում իր կողքով, նույնիսկ եղբորորդիները գարշելի քմծիծաղով փախչում էին իրենից, ինչպես մի խայտառակված մարդուց: Իր գերդաստանում նա արդեն խարանված էր այն պատճառով, որ Տերն այցելել էր իրեն: Բնականաբար, նա չէր հասկանում, թե ինչ բանի համար են իրեն մեղադրում. ամբարտավանության, մեկուսացումի, խելագարության... Ուրիշ ինչ ճար կար... Դա այդպես էր եղել նույնիսկ այն դեպքում, երբ պատճառները շարունակում էին մնալ թաքնված:

Վերջապես հասավ թաքուն մեկնումի գիշերը: Ամեն ինչ պատրաստ էր: Բարուքը երկու էշերի հետ սպասում էր շրջապատող պարսպի քանդված մասում: Երեմիան դեռևս տատանվում էր: Նրա սիրտը չէր

ծնվել պայքարի ու վեճի համար: Հենց այդ իսկ պատճառով նա որոշել էր առանց որևէ շշուկի լքել տունը: Ոչ իսկ Աստծուն հաճելի լինելու սիրուն կուզենար մեղանչել հոր նկատմամբ՝ դաժան անհնազանդությամբ հատուցելով նրան: Ինչո՞ւ էր Տերը հենց իրեն ընտրել, իրեն, որ շատ զգայուն է և հեշտությամբ ենթարկվում է տառապանքի, նաև այնքա՜ն տկար է, որ չի կարող մեկին ցավ պատճառել և կամ ցավին դիմանալ: Տերը չէ՞ր կարող արդյոք իր ծրագրերի համար ժողովրդի միջից մեկ ուրիշին գտնել, որը լիներ իրենից ավելի տոկուն, ավելի սառնասիրտ և ավելի ուժեղ:

Նա դեռ կանգնած էր իր մանկության ննջասենյակում: Լուսամուտից դիտում էր դեպի հյուսիս տանող հին ճանապարհը, ուր իշխում էր կեսգիշերային մռայլ երկինքը՝ առանց աստղերի: Ոչինչ չէր նշմարվում, ոչ իսկ կիսավեր սրբարանի ուրվագիծը: Մեծ հառաչանքով նա պոկվեց լուսամուտի մոտից, որտեղից միշտ նայել էր այն տեսարանին, որը մինչ այդ ուղեկցել էր իրեն իր ամբողջ կյանքի ընթացքում: Այնուհետև անաղմուկ քայլերով անցավ տան միջանցքով, ինչպես որ միշտ արել էր: Հիմա, սակայն, ինքն այլևս չէր վերադառնալու տուն, այլ հեռանում էր բոլորովին, որպեսզի ընդմիշտ խուսափի իրեն այդտեղ կապող որևէ հանգամանքից: Նա մի պահ կանգ առավ ծնողների ննջասենյակի մոտ և ականջ դրեց. նույնիսկ մորը ոչինչ չէր ասել իր այս որոշման մասին: Այնուհանդերձ, հանկարծ իրեն թվաց, թե Աբին ամեն ինչ գիտե իր մասին, մինչև անգամ հայրական տնից իր զգուշավոր մեկնումից է տեղյակ: Հազիվ թե այս մասին մտածած՝ զգաց իրեն երկու նիհար բազուկների արանքում: Մթության միջից դուրս գալով՝ փոքրամարմին Աբին էր կանգնած իր դիմաց, թեև անտեսանելի, բայց զգալի էր նրա ներկայությունը:

— Մայր իմ,— շշնջաց նա,— ես միշտ գիտեի, որ դու ամեն ինչից տեղյակ ես...

Եվ քանի որ Աբին վախենում էր, որ կարթնացնի Քեղկիային, հազիվ թե լսելի ձայնով փսփսաց.

— Ես գիտեի, որ իմ կրտսեր որդին գնալու է առանց հրաժեշտ տալու...

— Եվ դու լսեցի՞ր իմ գնալը, մայր իմ...

— Ո՛չ, չլսեցի, այլ միայն զգացի... Եվ դուրս եկա, որպեսզի իմ Երեմիան առանց հրաժեշտ տալու չգնա...

— Ինչի՞ են ծառայում խոսքերը... Պետք է այդպես լինի, մայր...

— Ես գիտեմ, որ պետք է այդպես լինի, քանզի Նա է հրամայում քեզ մեկնել...

Երեմիան սեղմեց նրան իր կրծքին.

— Ես անհավատարիմ չեմ, մայր իմ...

Աբին ձայն չէր հանում, հավանաբար թաքցնելու համար իր արցունքները: Երեմիան մի փոքր բարձրացրեց ձայնը.

— Ասա նաև հորս, որ ես անհավատարիմ չեմ... Գիտեմ, թե որքան դժվար է մի մարդու համար ճամփորդելը՝ առանց հայրական օրհնությունը ստանալու...

Կողքի սենյակից լսվեց մահճակալի ճռճռոցը:

Քեղկիայի խիստ ձայնը ճեղքեց խավարը.

— Ո՞ւր ես դու, ո՞ւմ հետ ես այդտեղ խոսում...

Աբիի պատասխանն արդեն եկավ ներսից.

— Ահա այստեղ եմ... Ո՞ւմ հետ պետք է խոսեմ... Դու երազ էիր տեսնում...

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ՏԵՍԻԼՔՆԵՐԻ ԴՊՐՈՑԸ

Պատանի Բարուքի ընկերակցությամբ Երեմիան առանձնացել էր Հուդայի անապատի մի խուլ անկյունում, որպեսզի այնտեղ, շնորհիվ պահեցողության, հսկումների և աղոթքի, ինքն իրեն մաքրագործի ու սրբացնի Տիրոջ համար: Նկատի ունենալով, որ նույն ինքը՝ Մովսես մարգարեն, Քորեբ լեռան վրա քառասուն օր և քառասուն գիշեր էր անցկացրել, հետևաբար ավանդությունը թելադրում էր բոլոր նրանց, որոնք Աստծու մարդիկ էին և կամ հիմք ունեին կարծելու, որ այդպիսիք են, նույնն անել: Իր ուժերի ամբողջական լարումով միայն Երեմիային հաջողվեց հենց սկզբից հաղթահարել իր տկարությունը: Իհարկե, բոլոր այս բառերը, որպիսիք են «սրբացում», «մաքրազարդում», «ժուժկալություն», գերազանց են հնչում, երբ մարդ ընթերցում է դրանք սրբազան Գրվածքներում՝ փափուկ անկողնում նստած: Հայրական հարուստ գերդաստանի շփացած զավակը, սակայն, երբեք չգիտեր, թե ինչ բան է զրկանքը: Նրան անծանոթ էին քաղցը, ծարավը, վախը, գիշերային մենակությունը դրսում՝ անողոք եղանակին, նաև մշտական փորձությունը՝ շտապ վերջ դնելու այդ իրավիճակին, որի անհրաժեշտությունը ոչնչով արդարացված չէր: Այսուհանդերձ, նա մի կերպ հաղթահարեց իր կյանքի առաջին դժվարությունը, որն ինքն անձամբ էր փնտրել:

Այսուամենայնիվ, նա այդ օրերին ոչ իսկ մի պահ չէր զգում իր տարած հաղթանակի բարերար գոհունակությունը՝ ընդդեմ բազմաթիվ ցանկական ոգիների և վախերի: Նրա համար հետաքրքրական չէր իր սեփական տկարությունների վրա հաղթանակ հռչակելը: Սրբանալն ու մաքրվելը նրա համար ինքնանպատակ չէին, այլ դրանք հետապնդում էին բոլորովին նախորոշված մի նպատակ: Եվ այդ նպատակին ինքը երբեք չէր

հասել: Տերը երբեք այդքան հեռու չէր եղել իրենից, ինչպես այդ ժամանակ, երբ ինքը ջանք էր թափում մերձենալ նրան՝ պայքարելով քաղցի, ծարավի, շոգի, սառնամանիքի և վախի դեմ, աղոթելով և գիշերները հսկումներ կատարելով: Թվում էր, թե Նա՝ ամենաողորմածը, քմահաճորեն հեռացել էր Երեմիայից և թաքնվել իր անմատչելի հեռավորության ոլորտներում: Միևնույն քմահաճ տրամադրությամբ, որով ընտրել էր տասնյակ հազարավոր երիտասարդների միջից անաթովթցի քահանայի որդուն ու փոխանցել նրան իր ձայնը, հիմա էլ կրկին հետ էր քաշվում և ոչ մի կերպ հնարավոր չէր փոխել ստեղծված իրավիճակը:

Երեմիան նախնադարյան մի հսկա չէր, այլ նա ծնունդն էր մի նոր, վեհերոտ և կասկածամիտ սերնդի: Նա կասկածում էր: Նա կասկածում էր, նույնիսկ երբ աղոթում էր, երբ պայքարում էր իր փորձությունների դեմ: Անշուշտ, թե Աղոնայի (Աստծու) մեղմ ու հստակ տղամարդկային ձայնը գաղտնիքներ էր հաղորդել նրան, որոնք երբեք չէին կարող լինել արտադրանքը վերջինիս սեփական մտքի. «Ես քեզ ճանաչեցի՝ դեռ քեզ քո մոր որովայնում չստեղծած, Ես քեզ ընտրեցի՝ դեռ քո մայրը քեզ չծնած»: Նման հավակնության ամենադույզն նշույլն անգամ երբեք չէր անցել նրա մտքով, քանզի ամաչկոտ էր և կասկածում էր նույնիսկ ինքն իր վրա: «Ես քեզ ժողովուրդների վրա մարգարե կարգեցի»: Արդյոք սա էլ իր հնարածն էր: Ո՞ւր, իր գիտակցության ո՞ր խորությունում կարող էր նման մի խելագար և մահվան չափ տարօրինակ երազ այդքան երկար ժամանակ թաքնված մնալ: Այդ խոսքերը հստակ կերպով չէի՞ն ապացուցում արդյոք կոչումի վավերականությունը: Այդուհանդերձ, Երեմիան մշտական տարակույսի մեջ էր և այսպես էր մտածում. «Եթե ամեն ինչ խաբկանք է, և այն ամենը, որ ինձ հետապնդել է տասներեք տարեկանից ի վեր կոչերի ու հայտնությունների միջոցով, մի՞թե վերջում ինձ ավելի մեծ խաբկանքի պիտի առաջնորդի ու լքի հավիտյան»: Երեմիան մաքրության ու սրբության այդ օրերին որքան ուժգին էր դիմադրում նման հարցադրումների, այնքան ավելի էին համարձակ դառնում դրանք իր ներաշխարհում:

Տերը, թվում էր, թե ժամ առ ժամ հետ էր քաշվում ու հեռանում ամենայն սառնասրտությամբ: Երեմիան՝ հոգնած ու բարոյալքված, հաղորդում է իր կասկածները Բարուքին՝ իր աշակերտին: Իրեն հարկավոր էր

վստահություն ձեռք բերել հենց ինքն իր վրա, բայց գոյություն ունե՞ր արդյոք վստահություն այս աշխարհում, և մարդկանցից ո՞վ կարող էր դա տալ իրեն: Ուշիմ պատանի Բարուքն ուներ մի օգտաշատ գաղափար:

* * *

Երուսաղեմում ապրում էր մի նշանավոր մարդ՝ Շալլում (Սեղղում) անունով, որդին Թեկուայի: Նա զբաղեցնում էր արքունական հանդերձապետի պաշտոնը. դրա հետ մեկտեղ ուներ դերձակության մի արհեստանոց, իր տեսակի մեջ ժամանակի ամենամեծ արհեստանոցը: Նրա տունը տաճարի լեռան հարավ-արևմուտքում էր, Միլլո անունով մի փողոցի վրա, որը մի կամուրջի նման միացնում էր իշխող թագավորների պալատական թաղամասը Դավթի հին ու մռայլ ամրոցի հետ: Այդ տունն ամբողջ Երուսաղեմի ամենատպավորիչ տներից մեկն էր՝ երկու հարկ բարձրությամբ, չհաշված տանիքի վրայի կացարանը: Գետնահարկում արհեստանոցն էր: Շալլումը սովոր էր անձամբ լինել այնտեղ: Նա մի աշխույժ ու նիհարակազմ տղամարդ էր, որն ստուգում էր կտավները, մանվածքները, բրդյա գործվածքները, սպիտակեցված ու գունավորված կերպասները, որոնք փերեզակներն ու շուկայի վաճառականներն առաջարկել էին իրեն գնել: Այնտեղ նաև ընդունում էր հաճախորդներին՝ մողեսի նման այս ու այն կողմ ոստոստելով: Նա արժանացել էր նույնիսկ տաճարի համար որոշ զգեստներ պատրաստելու պատվին: Այդ առնչությամբ պարտավոր էր ճշգրտորեն ուշադրություն դարձնել սահմանված բազմաթիվ կարգուկանոնների: Հարկավոր էր հաշվի առնել պաշտամունքային այս կամ այն զգեստի ժապավենների կամ ծոպերի լայնությունը, որովհետև դրանք իրարից տարբերվում էին ըստ քահանայական աստիճանակարգի, օրինակ՝ ավագների պաշտամունքային զգեստի ժապավենը պետք է զարդարված լիներ տասներկու ասեղնագործված շուշաններով կամ նռներով: Շալլումը վարպետ էր նաև աշխարհականների զգեստներ պատրաստելու մեջ: Անվիճելի հեղինակությամբ նա էր որոշում, թե ինչպես պետք է լինեին տղամարդկանց վերարկուի ծոպերը, կանանց երկարաթև շրջազգեստը՝ պատշաճեցնելով այն իրենց մարմնին ու քայլվածքին:

Վերին հարկի սենյակները, ուր տիրում էր լռություն և դատարկություն, հատկացված էին թագավորական սպասարկությանը: Թեև «հանդերձապահի» պալատական պաշտոնն ավելի շուտ տիտղոս էր, քան մի իսկական զբաղմունք, այդուհանդերձ, այն պարտավորեցնող էր, քանզի կարող էր օրը գալ, և դրա կարիքը զգացվեր: Այդ իսկ պատճառով տան մեկ մասը միշտ ազատ էր ու դատարկ, որպեսզի հարկ եղած դեպքում այնտեղ կարողանան պատկառանքով ընդունել արքայի զգեստները:

Շալլումի տիտղոսը, հարստությունն ու գիտելիքները բավարար էին՝ ապահովելու որևէ մեկին բարձր հեղինակություն, բայց արքունական հանդերձապետի համար դրանք միայն համեստ հանգամանքներ էին: Իր ունեցած գերապատվության հիմնական պատճառը ոչ իր զբաղեցրած պաշտոնն էր և ոչ էլ իր անձը, այլ այդ բանի համար նա պարտական էր մի հոչակավոր էակի՝ իր հարազատ կնոջը: Այդ հեղինակավոր կինը, որի ամուսինը մի պարզ դերձակ էր, կոչվում էր Հուլդա (Ողդա): Նա մի տեսանող էր, մարգարեուհի, որի անունը, Հովսիա արքայի հանձնարարությամբ, գրագրապետ Սափանի կողմից ընդգրկվել էր Հուդայի թագավորների ժամանակագրության մեջ՝ արժանանալով հավերժական հիշատակման: Երբ նրան կոչում էին «մարգարեուհի» կամ «պատգամաբեր», ինչպես հաճախ էր պատահում, առաջինը հենց ինքն էր բողոքում այդ հասկացությունների կոպիտ շփոթության դեմ: Հուլդան այն անձնավորությունների շարքում չէր, որոնք սովորաբար «Աստծու պատգամաբեր» էին կոչվում: Աստծու պատգամաբերները, ուր և երբ էլ լինեին, հիմնականում Աստծու մարդիկ էին. մարդիկ, որոնց հոգին Տիրոջ կամքին էր ուղղված, որպեսզի այն իրագործեն երկրի վրա: Միակ բացառությունը եղել էր հին ժամանակներում. Դեբորան՝ դատավորուհին, Իսրայելում մի մայր, որը երգել էր Տիրոջ մաքառումի հաղթական երգը: Հուլդան, սակայն, ինքն իրեն չէր համեմատում Դեբորայի հետ, ինքը պատգամաբեր չէր, այլ տեսանող:

Տերը նրա ականջը չէր սրել, որպեսզի լսի իր հրահանգներն ու հանձնարարությունները, այլ բացել էր նրա աչքը, որպեսզի իր նայվածքով քննի խորախորհուրդ խորությունները: Այսպիսով՝ նրա խորհրդավոր պայծառատեսության դիմաց հստակորեն փռվում էին մարդկանց և առարկաների թաքուն հանգամանքները՝ լինեին դրանք ներկայի,

հեռավոր անցյալի կամ մոտալուտ ապագայի վերաբերյալ: Երեսուն տարուց ի վեր, իր երիտասարդ հասակից սկսած, արքայական հանդերձապահի կինը գուշակություն էր անում, և մատների վրա միայն կարելի էր հաշվել այն սակավ դեպքերը, երբ իր գուշակությունները սխալ էին դուրս եկել: Մարդու դեմքին մեկ հայացք գցելով՝ Հուլդան ի վիճակի էր հասկանալու նրա ունեցած հիվանդությունը, որը մի տարի հետո այդ դեմքը հողին պիտի միախառներ: Երիտասարդ կնոջ կրծքի տակ ձեռքի թեթև հպումով Հուլդան գուշակում էր քանակն ու սեռն այն երեխաների, որոնցով հղի կինը պիտի բախտավորվեր և օրհնվեր իր կյանքի ընթացքում:

Մեծ էր արժեքը նրա գործունեության՝ ի նպաստ բազմաթիվ տառապյալների, հիվանդների և մոլորվածների: Այդուհանդերձ, նրան իսկական հռչակ ապահովողն իր կատարած մի քանի պետական գուշակություններն էին: Դրանցից ամենակարևորը վերաբերում էր վարդապետության վերագտնված գրքին: Հովսիա թագավորը գրագրապետ Սափանի կողմից կատարված առաջին ընթերցման միջոցով ծանոթացել էր դրա բովանդակությանը, ապա ընդհանուր դարձի և ապաշխարության որոշում կայացրել: Այդուհանդերձ, նախքան այդ, նա կամեցել էր մեկ անգամ ևս ապահով լինել ձեռագրի վավերականությանը և Աստծու կողմից նրա ներշնչվածության հանգամանքին: Հայտնի էր բոլորին, որ Հուլդան թեև կարդալ չգիտեր, բայց գիտեր որևէ գրվածքից բազմաթիվ մեկնաբանություններ անել, այն ամենը, ինչ որ թաքնված էր տեքստի տողերում: Իր պայծառատեսության առաջ գրվածքների անծանոթ նշանագրերը կազմում էին այլազան պատկերներ, որոնք, ինչպես երկնքի համաստեղությունները, իրենց մեջ պարփակում էին իր կողմից ընթեռնելի ճակատագրեր: Հովսիան կազմում է մի պատվիրակություն՝ բաղկացած քահանայապետից, Սափանից ու նրա որդի Ահիկամից, ինչպես նաև երկու պալատական իշխաններից, որի պարտականությունն էր Հուլդայի միջոցով ստուգել հին մագաղաթի աստվածային ծագման վավերականությունը և նրանից պահանջել մի մեկնաբանություն: Մարգարեուհին մեծ արդյունավետությամբ կատարեց պետական հանձնարարությունը: Առաջին իսկ հայացքից հաստատեց գրվածքի խորին հնությունը և դրա աստվածային ծագումը: Ի մեծ զարմանս պատվիրակների՝ նա անգիր ասաց մատյանի մի շարք կարևոր հատվածներ, անշուշտ, առանց դրանք

ընթերցած լինելու: Վերջում տվեց իր մեկնաբանությունը. Տերը պիտի իրագործի իր բոլոր սպառնալիքները ժողովրդի ու երկրի նկատմամբ, բայց ոչ այս ժամանակահատվածում և Հովսիայի իշխանության օրոք: Հուլդան անցավ գուշակուհու սահմանը և դարձավ մի պատգամաբեր, քանի որ թագավորի համար արված իր գուշակությունն ավարտեց Տիրոջ հետևյալ խոստումով. «Տես, ես քեզ տանելու եմ քո հայրերի մոտ, որպեսզի դու խաղաղությամբ իջնես գերեզման, և քո աչքերը չտեսնեն այն դժբախտությունները, որոնք բերելու եմ այս վայրի ու նրա բնակիչների վրա...»: Հովսիան, որ բազմաթիվ թերացումների ու հանցանքների համար սպասում էր անմիջական դատապարտության ու պատիժների, ուրախությամբ ողջունեց Հուլդայի հայտնած վճիռը, որն իր համար անսպասելիորեն բարենպաստ էր:

Հասկանալի է, որ այդ օրվանից մարգարեուհին արժանացավ թագավորի անսահման բարեհաճությանն ու երախտիքին: Նրա նկատմամբ արքայի տածած բացահայտ ակնածանքն ավելի հեղինակավոր դարձրեց նրա արած գուշակությունը: Թագավորի օրինակն իր հետևից տարավ նաև ժողովրդին: Ուր որ հայտնվում էր մարգարեուհի Հուլդան, այնտեղ մարդկային ամբոխը խռնվում էր և հուզված ու սևեռուն նայվածքով հետևում նրան: Սակայն նա ինքը մնում էր բոլորովին անտարբեր իր հռչակի ու փառքի նկատմամբ, երբեք չէր փորձում ենթարկել իր եզակի ու յուրահատուկ էությունն իր վայելած հռչակին: Հուլդան մի փոքրակազմ ու տարիքն առած կին էր: Փողոցում քայլելիս նա գինովի նման տատանվում էր և սովորություն ուներ ինքն իր հետ ցածրաձայն խոսել ու վիճել: Նրա հանդերձանքը նման էր իր տարօրինակ բնավորությանը, գլխին գլխաշոր չէր կրում, ինչպես ուրիշ կանայք, այլ մորթյա մի լայն գլխարկ և էժանագին զրնգուն զարդեր: Նրա ձեռքին իբրև խորհրդանիշ կար հովվական մի կորագլուխ գավազան, որն իր հասակից ավելի բարձր էր: Եթե նա չլիներ նշանավոր Հուլդան, փողոցի լակոտներն ու երուսաղեմի ծաղրածուները ծամածռություններով և ծաղրական երգերով հետևից կգնային: Սակայն փողոցում նրան ողջունում էին երկյուղալից հարգանքով: Շալլումը՝ արքունի հանդերձապահը, ամեն վայրկյան խոնարհաբար ծառայում էր իր վսեմափայլ տիկնոջը: Երբ վերջինս դուրս էր գալիս փողոց, հրապարակ, տաճարի արտաքին գավիթ, նա անհապաղ վազում էր՝

նրա համար ճամփա բացելու և հետաքրքրվողներին հետ մղելու, որպեսզի ոչ ոք որևէ կերպ չփորձեր խանգարել նրան: Նա փոխում էր իմաստունների այն հին ասացվածքը, թե՝ «Տղամարդը պետք է քայլի կնոջ առջևից», և ինքը շարժվում էր նոր օրինակով, ընդ որում չէր դադարում բարձրաձայն գոչելուց, որպեսզի նույնիսկ տգետներն էլ իմանան. «Հուլդան է անցնում... Ճամփա՛ բացեք վսեմափայլ մարգարեուհուն...»:

Շալլումը նաև հետամուտ էր, որ աստվածային շնորհով լցված իր կինը չխառնվի անգետ մարդկանց հետ, որոնք հաճախում էին իր արհեստանոցը: Դրա համար էլ նա երբեք չէր հայտնվում տան գետնահարկի արհեստանոցում, այլ իր արքայությունը հաստատված էր տանիքի վրայի սենյակում, որի բաց թողնված չորս լուսամուտներից օդի հոսանքը տևապես թափանցում էր: Այնտեղ էր նա ընդունել թագավորի պետական պատվիրակությանը: Այնտեղ էին նրան ներկայանում ճշմարտություն որոնողները, որոնց խնդրանքները միշտ պատրաստ էր լսելու: Այնտեղ նաև արևամուտից հետո կանոնավոր կերպով հավաքվում էին նրա շուրջը որոշ մարդիկ, որոնք ցածրաձայն խոսում էին Աղոնայի (Աստծու) խորհուրդների և աշխարհում նրա կատարած միջամտությունների մասին, անշուշտ թե ավելի ազատ և համարձակ, քան ինչ որ խոսում էին տաճարի գավիթներում կամ ուսուցումների սենյակներում: Նախկին ժամանակներում գոյություն են ունեցել ամբողջ համայնքներ՝ ջերմեռանդ և Աստծուց ներշնչված, որոնք էքստազային պարերով ու երգերով շրջել են երկրով մեկ և կոչվել «մարգարեների դպրոցներ»: Երեկոյան Հուլդայի շուրջը հավաքվողների շրջանակը շատ քիչ էր նման Աստծուց ոգեշնչվածների հավաքներին: Տանիքի կացարանում տիրում էր լռություն և կամ շշուկ միայն: Նրա պատուհաններից ոչ մի բարձր հնչյուն չէր լսվում, և այդ հանդարտությունն ավելի էր պատշաճում նոր ու զգաստ ժամանակներին, քան մոլեգնող նախկին հուզմունքներին: Վերոհիշյալ հավաքներին երբեմն մասնակցում էր նաև Աստծուն ծառայող մի տարեց մարդ, որը տաճարի սովորական քարոզիչներից չէր, այլ հռչակված էր իբրև ճշմարիտ ընտրյալ և վավերական պատգամաբեր: Նրա անունն էր Ուրիա՝ որդի Շեմայահի:

Բարուքն առաջարկել էր իր ուսուցչին գնալ տեսանող Հուլդայի և նրա շուրջը խմբված իմաստուն մարդկանց մոտ, այնտեղ փնտրել

ճշմարտություն և օգնություն: Երեմիան, սակայն, որ ամեն անգամ ավելի էր մխրճվում իր անորոշության մեջ, ոչ մի վայրկյան չի կորցնում դիմելու այդ օգնությանը: Նրանք հավաքում են իրենց վրանը Հուդայի անապատից և ճանապարհ ընկնում դեպի Երուսաղեմ:

* * *

Սկզբում Շալլումը չէր ուզում ներս թողնել նրանց: Աշխատանքային օրն արդեն ավարտվել էր, հասել էր երեկոյան աղոթքի ժամը, անհրաժեշտ էր փակել տան դուռը: Երեմիան և Բարուքը համեստորեն սպասում էին մի անկյունում: Երբ արդեն գնացել էր վերջին հաճախորդը, և դատարկվել էր արհեստանոցը, արքունի հանդերձապահը խստությամբ դիմեց այդ երկու երիտասարդներին.

— Դո՞ւք... Ինչի՞ եք դեռ սպասում...

Երեմիան հանդարտությամբ ներկայացրեց իր խնդրանքը, որպեսզի Շալլումն իրենց շնորհ անի տեսնելու մարգարեուհու դեմքը: Դրա վրա վսեմաշուք տիկնոջ այդ խեղճ ամուսինն աղաղակող խանդավառությամբ սկսեց շաղակրատել:

Երեմիան համբերությամբ սպասեց Շալլումի շատախոսության ավարտին, ապա բացատրեց, որ ինքը չի եկել փնտրելու որևէ սովորական գուշակություն կամ մեկնաբանություն, այլ ինքը կարոտ է խորհրդի՝ Տիրոջ վերաբերյալ մի հարցով: Նա հայտնեց նաև իր քահանայական անունը: Դրանից հետո արքունի հանդերձապետի կասկածամիտ վերաբերմունքն ու անբարեհաճությունն անմիջապես փոխվեցին: Նա մի քննող հայացք գցեց Երեմիայի ներամփոփ ու գունատ դեմքին և միանգամից լռելով, այլևս առանց որևէ առարկության, նշան արեց ուշացած այցելուներին, որ հետևեն իրեն:

Տանիքի վրայի սենյակը մի ընդարձակ կացարան էր, համարյա առանց կահավորանքի: Կենտրոնում մորթիներով ծածկված մի լայն ու ցածր թախտ կար, ուր ընկողմանած էր պառաված Հուլդան՝ մորթյա գլխարկը գլխին, գույնզգույն ապակե ուլունքներով մանյակը վզի շուրջը և կորագլուխ գավազանը կողքին: Իրարից հեռու դրված բազկաթոռներին

շուրջանակի նստած էին մի քանի լռակյաց մարդիկ: Նրանց դեմքերը հազիվ էին նշմարվում աշտանակի վրա դրված միակ ճրագի արձակած աղոտ լույսի ներքո: Չորս լուսամուտները, որոնք բացվել էին դեպի աշխարհի քառյակ ուղղությունները, թույլ էին տալիս տեսնել երեկոյան մթնշաղի երկինքը՝ ծածկված գունատ ամպերով: Շալլումն իր հետ բերել էր մի կավե թաս լիքը թանձր կաթ, որն այդ պահին քնքշությամբ պահեց Հուլդայի աչքերի առաջ: Այնքա՜ն մեծ էր նրա պատկառանքը սեփական կնոջ հանդեպ, որ նրան երբեք ուղղակի չէր դիմում, այլ փաղաքշական կերպով և հաճոյախոսելով՝ ակնարկում էր.

— Տեսանողուհին մսխում է իր փխրուն սիրտն ու իր տկար մարմնի ուժերն ավելի, քան որևէ այլ ուժեղ ու կոշտ մարդ... Սակայն երբեք չի մտածում քնելու և սնվելու մասին: Տեսանողուհին պետք է այժմ խելամիտ լինի և գդալով ուտի այս փոքրիկ թասի քաղցր պարունակությունը, որ ես եմ պատրաստել, քանզի ինձ ծանոթ է նրա դժվարահաճ քիմքի նախասիրությունը, որի համար միշտ հոգատար եմ...

Արքունական հանդերձապահը խոսում էր դուրեկան ձայնով, ինչպես մի երեխայի հետ, ում համոզում են ուտել: Նրա ծերացած ձեռքերը, որոնք երկար ժամանակ բռնած պահում էին կավե թասը Հուլդայի համար, գնալով ավելի էին դողում: Վերջինս հառաչանքով ընդունեց մատուցվածը և սկսեց այն ուտել գդալ առ գդալ, բայց բոլորն էլ նկատեցին, թե ինչ դժկամությամբ է այդ անում պարզապես ի սեր նրա, ում մտահոգում է իր առողջությամբ: Վերջինս լարված հետևում էր փայտյա գդալին: Կինը դանդաղ և առանց կամեցողության մտցնում էր այն թանձր կաթնասերի մեջ: Երբ արդեն կիսով չափ սպառել էր թասի պարունակությունը, Շալլումը ձեռքի նշանով ցույց տվեց նրան նոր այցելուին և հայտնեց նրա անունը.

— Անաթովթից ժամանած քահանայի այս որդին տեսանողից ակնկալում է ոչ սովորական մի գուշակություն...

Քանի որ արքունի հանդերձապահն այլևս չէր կարող ստիպել Հուլդային ևս մի գդալ ճաշակել, պատկառանքով և ոտքի մատների վրա քայլելով դուրս եկավ տանիքի կացարանից, ինչպես մի սրբավայրից: Երեմիայի կարճատես աչքերը նայում էին շուրջբոլորը: Կիսաստվերում նշմարվում էին միայն տղամարդկային անորոշ դեմքեր: Նրա համար

այդ անորոշության մեջ լոկ մի բան էր հստակ. իրարից հեռու շուրջանակի նստած լռակյաց տղամարդիկ համակված էին մի մեծ տխրությամբ, որն ազդում էր նաև սենյակի ամբողջ մթնոլորտի վրա: Ինչպե՞ս հասկանալ դա: Ընծայաբերման բոլոր տոնների առթիվ Աստված մարդկանցից տոնական ուրախություն էր ակնկալում, իսկ հրեշտակներից էլ՝ հավիտենական բերկրություն, հետևաբար, նույն Աստվածն ինչպե՞ս կարող էր օժտել մարդկանց տրտմության հոգով, այն մարդկանց, որոնց հետ ինքն ավելի էր հաղորդակից, քան հրեշտակների հետ: Գուցե տառապում էին իրենց սեփական ճակատագրի պատճառով կամ գալիք անխուսափելի պատահարների համար, որոնց իրենք նախօրոք տեղյակ էին: Միայն ինքը՝ տեսանողուհի Հուլդան, զերծ էր «Աստծու մարդկանց» ունեցած այդ տխրությունից: Մթնալույսի միջից նա լարված նայում էր Երեմիային: Նրա խորշոմած դեմքին ուրվագծվեց մի խորամանկ ու անցողիկ ժպիտ: Ո՞վ գիտե, թե դեռ ինչքան կտևեր այդ ծանրակշիռ լռությունը, եթե Բարուքը բավականին համարձակություն չունենար և ի նպաստ Երեմիայի՝ պատշաճությունից դուրս չգար: Իր պատանեկան խռպոտ ձայնով նա կակազեց հուզված.

— Այս մարդն այստեղ... Քեղկիայի որդի Երեմիան... ում Տերն այցելել է թե՛ տեսիլքի և թե՛ խոսքի միջոցով ու հրահանգել. «Կապիր գոտին մեջքիդ ու գնա»: Դրանից հետո, սակայն, Տերն այլևս չի այցելել նրան, և նա չգիտե՝ արդյոք դա իրական էր, և կամ թե ինչ պետք է անի հիմա...

Այդ տարակուսելի երևույթը թոթովանքով նկարագրելուց հետո Բարուքը հանկարծակի լռեց, մինչ քրտինքը պատում էր ճակատը: Գուշակուհին, լսելու դժվարություն ունեցողի նման, մորթյա գլխարկով ծածկած գլուխը մի կողմ թեքած, հետևում էր խոսակցությանը՝ առանց որևէ նշանով ցույց տալու, թե մի բան հասկանում է: Ի վերջո կիսաստվերի միջից վեր կացավ մի նիհարակազմ ու բարձրահասակ մարդ և եկավ կանգնեց ուղիղ Երեմիայի առջև ու կիսախուփ աչքերով նայեց նրան: Դեմքին մի լայն սպի ուներ, որն անհավասար ու շեշտված կերպով ճակատից իջնում էր ներքև՝ ձախ աչքի կողքով անցնելով մինչև այտոսկրը, ասես ոչ թե սրի հարվածի, այլ կարիճի խայթոցի արդյունք էր: Այդ սպին վկայում էր այլ տեսակ տառապանքների մասին, քան այն ներքին տառապանքները, որոնցով չարչարվում էր Երեմիան: Վերջինս մտքում

սարսափով հարց էր տալիս ինքն իրեն, թե ինքը կկարողանա արդյոք երբևէ բավականաչափ ուժ հավաքել՝ կրելու համար նման մի պատժի խայտառակությունը: Դիմացը կանգնած մարդը բացեց բերանը, որ խոսի: Այդ ընթացքում Երեմիան տեսավ, որ այդ մարդու թշնամիներն ու նրան ատողները փշրել էին նաև նրա առջևի ատամները, բայց նրա դեմքի բոլոր այլանդակությունների տպավորությունը ջնջվեց նրա նուրբ ժպիտի և հստակ ու քաղցր ձայնի դիմաց, որն իրեն հիշեցնում էր այն ձայնը, որը կանչել էր իրեն և ապա բոլորովին լքել:

— Բաց քո սիրտը վստահությամբ,— ասաց այդ մարդը,— և մի՛ մոռացիր ոչինչ... Քանզի նա, ով խոսում է քեզ հետ, Ուրիան է...

Երեմիան սկսեց կակազել, բայց տեսանողի՝ նրբորեն զգայուն նայվածքն այնքա՜ն անսովոր կերպով քաջալերում էր իրեն, որ լեզուն շուտով բացվեց և, առանց որևէ մանրամասնություն բաց թողնելու, սկսեց պատմել այն գերազանց պատահարի մասին, որը տեղի էր ունեցել Զատկվա գիշերն ու առավոտյան: Ուրիան երբեմն ընդմիջում էր նրան, որպեսզի կրկնել տա տեսիլքի որոշակի հատվածի նկարագրությունը կամ դրա միջից լսված խոսքերը: Նրա տված հարցերից յուրաքանչյուրն ապացուցում էր նրա անսպասելի լավատեղյակությունը և Ադոնայի հետ հանդիպման առնչությամբ ունեցած փորձառությունը: Երեմիան սրտի թեթևություն զգաց, ուրեմն ինքը մենակ չէ աշխարհում: Այնտեղ ապրում են եղբայրացած մարդիկ, որոնք իրար ճակատագրակից են, նույն փորձառություններն են ունեցել, ինչպես ինքը, և դա իրեն ապահովության մեծ զգացում է պարգևում: Այնուհետև նրա նայվածքը դարձյալ ընկավ Ուրիայի մեռելագույն դեմքի, նրա պղնձագույն սպիի ու նրա անատամ բերանի վրա... Վերջինս սպառիչ կերպով իր հարցաքննությունը կատարելուց հետո հառաչեց խորապես.

— Տերը եղել է քեզ հետ, Երեմիա... Այլևս մի՛ կասկածիր, դու խաբված չես, ինչ որ տեսել ես ու լսել, իրական է, ճշմարիտ... Բայց դա միայն սկիզբն է... Շատերն են տեսնում ու լսում, բայց իրենցից կախում չունի, եթե այդ լսածներն ու տեսածները ճշմարիտ են, դա իրենց կարողությունից վեր է... Տերը, եթե կամենա, կաղավաղի ճշմարիտ թվացող խոսքը և, ընդհակառակը, աղավաղվածը ճշմարիտ կդարձնի... Դու սա հասկանո՞ւմ ես, Երեմիա...

Երիտասարդն ինչպե՞ս պիտի կարողանար ըմբռնել այդ դաժան հակասությունը, որը գիտակցել էր նա, ով իր ամբողջ երկար կյանքի ընթացքում մոտիկից հաղորդվել էր Աստծու հետ: Երեմիային հուզում էր միայն մի մտածում. արդյոք ինքը կանչվե՞լ էր Աստծուց և միևնույն ժամանակ անտեսվե՞լ, արդյոք ինքն ուղարկվե՞լ էր, որպեսզի աննպատակ թափառի: Նա հարցրեց երկյուղալից.

— Կարո՞ղ է պատահել, որ ես այլևս չլսեմ Նրան երբեք... որ Նա երբեք չվերադառնա... որ Նա անհավատարիմ է...

Ուրիան ծիծաղեց փոքր-ինչ հեգնական դառնությամբ.

— Հավատարիմ կամ անհավատարիմ... Դրանք քո խոսքերն են... Դու կարող ես լինել հավատարիմ կամ անհավատարիմ, բայց ոչ Նա... Քանզի Նա ոչինչ պարտական չէ քեզ... Հարցեր մի՛ տուր, այլ սպասիր, որդի... Սպասիր մեծ համբերությամբ... Եթե հարկ լինի սպասել մինչև քո կյանքի վախճանը, ուրեմն սպասիր...

— Իսկ եթե սպասեմ իզուր...

— Ուրեմն դա է Նրա որոշումը, որ դու իզուր սպասես: Հավանաբար դա է բարին քեզ համար... Դու այլևս չես կարող հետ դառնալ...

Թախտից լսվեց տեսանողուհու հանդիսավոր ձայնը՝ քննադատական շեշտով.

— Սարսափելի են նրանք, ովքեր միայն ականջով են լսում...

Նա ձեռքում բռնած էր կորագլուխ գավազանը և դրանով ցույց էր տալիս մոտավորապես այն ուղղությունը, ուր Երեմիան կանգնած էր: Վերջինս առաջացավ և խորը խոնարհվեց նրա առաջ: Այնուհետև ուզում էր խոսել, բայց նա ձեռքի շարժումով կտրուկ մերժեց: Հուլդայի դեմքը ներքին լարվածության ու խռովքների հետևանքով, որոնք հանկարծակի վրա էին հասել, թվում էր ավելի խորշոմած, իսկ գլխին դրած մորթյա գլխարկը՝ ավելի աճած: Նրա ծերացած բերանը սկսեց անշշուկ շարժվել: Բառերն հետզհետե լսելի էին դառնում, որոնք արագ կերպով արտաբերվում էին իրար հետևից, որպես թե գուշակուհին բավարար ժամանակ չունենար նկարագրելու այն պատկերները, որոնք անցել էին իր առջևից թավալգլոր հաջորդականությամբ.

— Այս մարդը մի տան մեջ է... Մթության մեջ խոսում է մի կնոջ հետ... Կինը լալիս է... Նա ճիշտ է անում, որ գիշերով հեռանում է իր հայրական

տնից... Տեսնում եմ մի ամայի վայր... Այնտեղ նստում են երկուսով՝ ինքն ու պատանին... Պատանին մնում է իր հետ... Նստել են կրակի մոտ և վախենում են գիշերային գազաններից...

Հուլդայի դժգոհությունն ազդեց իր սեփական ձայնի հնչեղության վրա.

— Տեղին չէր այն, ինչ որ դու արեցիր... Դրա համար էլ Տերը թաքնվեց քեզանից...

Երեմիան ջանադրաբար հետևել էր գուշակուհու տարտամ նախադասություններին: Նրա վերջին բառերը ցնցել էին իրեն: Ինչ սխալ էր գործել ինքը: Ձայն բարձրացրեց՝ մի հարց տալու համար, բայց նա բարկությամբ լռեցրեց նրան, ձեռքով նշան արեց՝ ավելի մոտ գալու իրեն, իր ոսկրացած փոքրիկ ձեռքերը դրեց նրա մեջքին ու հրամայեց.

— Քո ձեռքերով ծածկիր իմ ուսերը, և քո ոտքերով դիպիր իմ ոտքերին...

Երեմիան, հաղթահարելով իր սեփական սարսափը, կատարեց այն, ինչ որ Հուլդան իրեն հրամայեց: Վեց անգամ հպվելով պառավ կնոջը՝ զգաց մեռելային մի սառնության թափանցումն իր մեջ, որը գալիս էր նրա մարմնի անդամներից: Վերջինս շարժեց գլուխը և շշնջաց.

— Միացած իրար, ինչպես որդին՝ իր մորը...

Երեմիայի մեջ, սակայն, աճում էր սարսափը այդ նոր մորից և այդ արհեստական կապից, որոնք փորձում էին ճանապարհ հարթել դեպի իր սրտի կենտրոնը: Մեծ հաճույքով կուզենար ազատվել դրանցից: Սենյակի՝ դեպի արևմուտք նայող պատուհանից լիալուսինը ցույց էր տալիս իր ամբողջական կլորությունը՝ մթության մեջ հստակորեն քանդակելով Հուլդայի կորացած կերպարանքը, որի նայվածքն ինքն իր մեջ էր խորասուզված, թեև նայում էր Երեմիային, բայց չէր տեսնում նրան: Այնուհետև նրա խորշոմած դեմքը սկսեց տարօրինակ կերպով այլանդակվել, բերանը ցնցվում էր, ծանր էր շնչում, արագ ջղաձգումներով դողում էին նրա բոլոր մկանները: Սառած աչքերում ուրվագծվեց սարսափներով լեցուն մի ներքին կյանք: Կուրծքը մաքառում էր զարհուրելի պատկերների ներխուժման դեմ: Ծանր շնչառությունը վերածվեց տնքոցի, իսկ տնքոցն էլ՝ անզուսպ հեկեկոցի, որը ցնցում էր տարիքն առած փոքրակազմ կնոջը: Երեմիան հասկանում էր, որ Հուլդան իր ներհայեցողության

ընթացքում իրեն էր տեսել, իր կյանքն ու ապագան, իր ճակատագիրը: Այլևս չկարողանալով զսպել իրեն՝ աղերսեց.

— Ինչ ես տեսնում... Դե խոսիր... Ուզում եմ իմանալ ամեն ինչ...

Նա չէր լսում նրան: Հևասպառ ու հեծկլտացող շնչառության միջից ձևավորվում են անկապ խոսքեր.

— Ո՛չ մենակությանը... Դեպի ժողովուրդը... Ազգերի մեջ... Թագավորների մոտ... Դավթի որդիների մեջ...

Երեմիայի ձեռքերը սեղմեցին նրա ուսերը: Տեսանողուհին, սակայն, հանկարծակի վեր կացավ իր տեսիլքից, անմիջապես սկսեց երերալ դեպի հետ: Եվ ահա փխրուն առողջությամբ այդ կնոջ ներսից պոռթկաց մի ուժգին ողբ, որը վերածվեց բարձրագոչ աղաղակի:

Ներկա մարդիկ շտապեցին նրա մոտ, որպեսզի տեսիլքից նոր արթնացածը գետին չընկնի: Արդեն հասել էր նաև արքունի հանդերձապահը՝ զայրույթից հևալով:

— Ինչ եք անում,— գոռաց նա,— դուք արդեն սպանում եք մարգարեուհուն... Միթե ես այս մեկը չէի արգելել ձեզ և ձեզ հետ համաձայնության չէի՞ եկել, որ նման բան չպատահի... Այլևս ոչ մի անգամ չեմ թույլատրի, որ որևէ օտարական տեսնի նրա դեմքը...

Ծեր Շալլումը ծնկի եկավ Հուլդայի առջև և սկսեց բալասանով շփել իր գերհոգնած կնոջ ճակատը, և մինչ դա անում էր, նրա ուսի վրայից գոչեց բարկացած...

— Ի՞նչ եք սպասում... Արդեն ժամանակն է... Տեսանողուհին պետք է գնա քնելու... Նա պետք է երկար քնի, որպեսզի կարողանա հանգստանալ... Ի վերջո նա էլ իրավունք ունի հանգստանալու...

Լուսնի լույսի ներքո, տանիքի վրայի սենյակի մոտի աստիճանների վրայով նրանք իջան փողոց: Հակառակ իր խռովյալ վիճակին՝ Երեմիան հանկարծ տեսավ իրեն ծանոթ մի երիտասարդի. դա Գաբավոնցի Անանիան էր, իր պաշտոնակից եղբայրը Զատիկի առթիվ արքայական սեղանին սպասարկման ժամանակ: Ինչ կապ ուներ Անանիան Աստծու մարդկանց հետ: Արդյոք իրեն է՞լ հասել էր Եհովայի ձայնը: Երեմիան զարմացավ դրա վրա, նույնիսկ իր այդ խառնաշփոթ վիճակում:

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԱՋԻՆ ԽԱՅՏԱՌԱԿ ՄԻՋԱԴԵՊԸ

Ուրիայի կարծիքն ու Հուլդայի խոսքերը բացել էին Երեմիայի աչքերը: Ուրեմն, ոչ մի խաբկանք և Տիրոջ կողմից ոչ մի անհավատարմություն պատճառը չէին իր տառապանքի: Իր սեփական անհնազանդության մեջ պետք է փնտրեր Աստծու ցավալի հեռացումի պատճառը: «Կապիր գոտին մեջքիդ ու գնա»: Հենց ինքը՝ Երեմիան, Տիրոջ այս հրամանը չափազանց մակերեսային էր մեկնաբանել: «Գնա» ասելը չի նշանակում՝ հեռացիր քո պատասխանատվությունից, կապերից, համայնքից, հայրական օջախի նկատմամբ պարտականությունից, որպեսզի անապատում դու լինես ինքդ քեզ հետ միայն: Այս «գնա»–ն նշանակում է բոլորովին հակառակը, այսինքն՝ ստանձնիր նոր պարտականություն, արա այն, ինչ որ քեզ համար մինչ այդ ամենից հեռավորն է եղել, ինչ որ պիտի լինի նաև ամենածանրն ու դաժանը, քեզ խորապես տանջողն ու վախեցնողը: Սակայն քեզ համար առայսօր ինչն է եղել ամենից հեռավորն ու տաժանելին, որ քեզ խորապես տանջել է ու վախեցրել: Դա մարդկանց համայնքն է, կոպիտ, խառնակենցաղ, Աստծուց երես թեքած, որը բաղկացած է այնպիսիններից, որոնք հավասար են քո եղբայրներին: Պարզ թվացող այդ «գնա» խոսքը հանկարծ նոր նշանակություն է ստանում, այսինքն՝ «գնա մարդկանց մոտ և խոսիր նրանց այն, ինչ որ Ես եմ խոսել քեզ հետ: Մնիր ժողովրդի մեջ և մի՛ վախեցիր, այլ միայն վստահիր ինձ»: Այս ամբողջը կարծես թե այն ձայնը, որը կոչում էր իրեն, պարփակել էր իր խոսքերի մեջ:

Եվ Երեմիան, որպեսզի հնազանդ լինի Տիրոջը, ճամփա ընկավ: Մեկնումից առաջ՝ նախորդ գիշերը, իր հոգում տարօրինակ հստակություն

զգաց. միանգամից ըմբռնեց կապերն ու հարաբերությունները. մի բան, որ իրեն իր ուսուցիչներից ոչ մեկը չէր սովորեցրել:

Քահանաները, ուսուցիչները և դպիրներն Իսրայելում անորոշ գաղափար ունեին այն մասին, որ տիեզերքի ստեղծման պատճառն ու մղումը եղել է «Աստծու ուրախությունը», սիրո լիառատ մղումը, խանդավառ շռայլությունը՝ մարդկային զգայարաններից ծածկված: Հովսիա թագավորը Զատկի առթիվ տաճարի ներքին գավիթում հռչակել էր Աստծու ուրախությունն իբրև տոնական ցնծության նշանաբան: Եվ Տիրոջը նվիրված յուրաքանչյուր տոն պետք է լինի արձագանքն այն սկզբնական սիրո ուրախության՝ հիշեցնելով այն ժամանակը, որն ավելի առաջ էր, քան բոլոր ժամանակները, որը «ինչպես երիտասարդ ցուլ» արածում էր անստեղծի մեջ: Երեմիայի համար «Աստծու ուրախությունը» այլևս վարդապետների ու քահանաների մեկնաբանությունը չէր, ոչ էլ չոր ու ցամաք, իրական ոչինչ չպարունակող մի գաղափար, այլ մի հզոր էքստազ, որը մինչ այդ չէր ճանաչել:

Երբ նա հիմա՝ ճանապարհորդության ընթացքում, վաղ առավոտվա աղջամուղջին կանգ էր առնում մի տան առջև, և արևն սկսում էր ծագել բլրի գագաթին և մի հին կաղնու դժգույն տերևները կանաչ փայլով էր պատում, ուրեմն այդտեղ էր «Աստծու ուրախությունը»: Երբ իրիկվա դեմ գառների հոտերը, ինչպես սև ու ճերմակ ալիքների հեղեղներ, հողմածաղիկներով առատ լեռնային արոտավայրերի միջով ցած են իջնում, աճում են ստվերների տեսարանները, և ծարված անասունները կուտակվում են ջրափոսի շուրջը, այնտեղ է, անիմանալի կերպով, «Աստծու ուրախությունը»: Այն համակում էր Երեմիային, երբ նա նայում էր խաղացող երեխաներին կամ քայլող այն կանանց, որոնք զգուշությամբ են տանում իրենց լեցուն կավե կուժերը՝ իրենց գլուխներին դրած: Յուրաքանչյուր պատկեր, յուրաքանչյուր նայվածք, յուրաքանչյուր բառ կարող են պատճառ լինել անմիջապես տպավորելու նրան: «Աստծու ուրախությունը» սկզբնապատճառն է աշխարհի ստեղծագործության, աղբյուրը պաշտամունքի և փառաբանության, ստեղծողի միավորումը ստեղծվածի հետ, հորը՝ իր որդիների հետ, բավարարումը՝ մահացու անհամբերության: Տերը թույլ էր տալիս իր ուրախությունից անսպառելի մի փոքրիկ ճառագայթի՝ թափանցելու Երեմիայի հոգեզմայլանքների

մեջ, որպեսզի նա կարողանա ճանաչել ու զատորոշել: Եվ այդ պահերին նա ըմբռնում էր, որ արարածների համար Աստծու սկզբնական նպատակն է եղել իր ուրախությունը վերածելու մի անփոփոխելի և անընդմեջ գոյավիճակի, փոխադարձված երջանկազվարթ սիրո մի հավիտենական երգի:

Ինչ էր պատահել, սակայն, որ այդ վիճակն ստացել էր բացասական հանգամանք: Մարդը չէր կամեցել գոհանալ ուրախության այդ հիասքանչ վիճակից, որն իրեն հավասարեցնում էր երկնային զորքերին՝ մինչև անգամ գերադասելով նրանց: Իր էության թերի մի հատվածը ենթակա էր եղել խավարային ազդեցությունների, որոնցից էլ ինքը հաղթահարվել էր: Իր համար բավարար չէր լինել այն, ինչ որ էր, այսինքն՝ արարած: Դարձել էր ամբարտավան, ուզում էր լինել այն, ինչ որ չէր, այսինքն՝ արարիչ: Ամբարտավանության այս հանդուգն օրինազանցության միջոցով նա եղծել էր աստվածադիր կարգուկանոնը և իր սեփական կյանքը, որը դրանից հետո կորցրել էր իր իշխանությունը երկրի վրա ու ենթարկվել մահվան: Չպե՞տք էր արդյոք Եահվե Սաբաովթը (Զորաց Տերը) զայրույթից բորբոքվեր նրա համար, որ իր նախընտրած արարածը չարաշահել էր ազատությունը և ոչնչացրել իր հաստատած կարգն ու ծրագիրը: Մարդը երկրի վրա հեռացել էր Աստծուց, և երկնքում Աստված էլ հեռացել էր մարդուց: Այս հեռացումով էր սկիզբ առնում աշխարհի ընթացքը: Դա նման էր մի սառցակալման, անմխիթար մի կարծրացման: Այդուհանդերձ, նույնիսկ սրտերի ծայրահեղ կարծրացման մեջ, սառցակալված աշխարհի ծայրագույն ամայության մեջ մարդկանց հիշողությունից ամբողջությամբ չէր ջնջվել սկզբնական ուրախության հիշատակը: Նրանք կրակ էին վառում իրենց զոհասեղաններին և այնտեղ ողջակեզներ դնում: Սակայն ի պատիվ ո՞ւմ էին ընծայաբերում դրանք. ի պատիվ բարձրաբնակ Բահաղի, Մարդուկի, Ներգալի, Աստարտի, Հաթորի, Ամոնի, Պտահի, Դագոնի, Մեղքոմի և այլ տասնյակ հազարվորների: Այս կուռքերը ժողովուրդների մեջ, այս նողկալի գարշանքները ուրիշ բան չէին, եթե ոչ մարդկային այն անմաքուր հիշողությունը Միակի հանդեպ: Քանզի այնտեղ, ուր կուռքն ու իր հեթանոսական մոլորությունն են իշխում, այնտեղ չի կարող գոյություն ունենալ այլ իշխանություն, քան մարդկային հոգու ծայրահեղ հոգնածությունը, որը չափազանց թույլ

և անզոր է՝ մերձենալու համար Տեր Աստծուն: Զորությանց Տիրոջ անսահման ողորմածությունը միշտ զսպել էր իր վերջնական բարկությունը: Նա տեսնում էր, որ մարդիկ շատ տկար են Իրեն հասնելու համար: Հետևաբար, ողորմածորեն խոնարհվում էր դեպի նրանց սերունդները և հայտնվում էր նրանց իբրև մեկը, որ հետամուտ է հավատարմության ուխտ կնքել նրանց հետ: Բայց սերունդ սերնդի հետևից հեռանում են Նրանից: Երկար ժամանակ համբերությամբ սպասելուց հետո Նա որոշում է ոչնչացնել այլասերվածներին ու ամբարիշտներին, որոնք ընդդիմանում էին փրկությանը և շնորհին, քանզի նրանք ինքնին թշվառ էին, իսկ Իր ամենողորմ կամքի ու ծրագրերի համար էլ՝ անօգուտ: Երբ նա քառասուն օր ու գիշեր ջրի հեղեղներն ուղարկեց երկիր՝ թույլ տալով, որ դրանք կուտակվեն այնտեղ, խղճաց արարածին և ոչնչացումից փրկեց մի մարդու յուրայինների հետ, որպեսզի փրկվածների հետ կնքի առաջին ուխտը: Սակայն հենց Նոյի զավակները, որոնք դեռևս վկաներն էին կատարվածի, խախտեցին ու արհամարհեցին այդ ուխտը: Աշխարհը շարունակեց իր ընթացքը, և շուտով հետջրհեղեղյան սերունդը հավասարվեց նախաջրհեղեղյան սերունդներին:

Եվ Տերը նկատեց, որ բավարար չէր լինի սերունդների բազմության միջից առանձնացնել մի սերնդի, երբ գոյություն ուներ ընտանիքի մի գլխավոր, որի մեջ դեռ ապրում էր վսեմագույն հիշողության մի հետք, և այդ պատճառով էլ նա վարում էր մի բարեպաշտ կյանք՝ առավել, քան բոլոր մյուսները: Հավիտենականը մի հիանալի ծրագիր հղացավ, որպեսզի կասեցնի աշխարհի անկումն ու խորտակումը. երկրում բնակվող հարյուրավոր ազգերի միջից ընտրեց ծեր և անզավակ մի մարդու, ում շնորհեց մի ուշացած զավակ, որպեսզի դրանով փորձի նրա նվիրումն ու պատկանելիությունն Աստծուն: Աբրահամը, սակայն, չմերժեց զոհել իր սիրելի որդուն և դրանով հաղթահարեց ամեհի փորձությունը: Այնքա՜ն մեծ էր այդ զոհաբերության արժեքը, որ Տիրոջ համար բավարար եղավ դրա վրա հիմնելու մի ամբողջ ժողովուրդ և այն ընտրելու բոլոր ժողովուրդների միջից: Աբրահամի սերմից առաջացավ Իսրայելը՝ աշխարհի ընթացքը պարզաբանող ժողովուրդը՝ դառնալու համար «Աստծու ուրախության» ժողովուրդը: Այնուհետև նրան ենթարկեցին դառն ցավերի ու տառապանքների, որ մինչ այդ մարդկային ոչ մի ցեղ չէր կրել: Հզոր և

ահեղ ազգերի մեջ նա ուրիշ բան չունեցավ, քան Աբրահամի վաստակի արգասավոր գանձը և նրա սուր լսողությունը՝ Աստծու ձայնի նկատմամբ: Ազգերը, սակայն, ատեցին Իսրայելին իրենց ամենադաժան ու դառնագույն ատելությամբ:

Իր սրտի նոր լուսավորվածության մեջ Երեմիան հասկանում էր, որ այդ ատելությունը մի խոր պատճառ ուներ, ավելի, քան աշխարհիկ մյուս բոլոր պատճառները, և այն չէր կարելի նույնիսկ չարիք համարել: Լսելի և ճանաչելի դառնալու համար Տերն ինչո՞ւ չէր բախել Եգիպտոսի, Ասորեստանի և Բաբելոնի շքեղ դռները: Թեև հսկա աշխարհը զբաղված էր իր ոսկյա, արծաթյա, քարեղեն կամ փայտյա ցնորական պատկերներով, այդուհանդերձ, իր սրտի խորքում այն միշտ կրում էր հիշողությունն արդեն իսկ վաղուց հայտնված մի ճշմարտության: Դա նման էր մի զգայուն սպիի, որն ուժգին մրմռում է, երբ նրան դիպչում է ճանաչումը հետևյալ ճշմարտության. «Մեկը, որ ոչ մի անունով չի կոչվում, ստեղծել է երկինքն ու երկիրը, ցերեկն ու գիշերը, ծովն ու ցամաքը, կենդանին ու մարդը: Նա միշտ գոյություն ուներ և ունի և հավիտյան պիտի ունենա»: Այս պարզ ճշմարտությունն Իսրայելի բերանում էր և ոչ թե Եգիպտոսի ու Բաբելոնի ուսյալ բերաններում: Եգիպտոսի ոսկեղեն երկիրը, Բաբելոնի գերադաս քաղաքը չպե՞տք է արդյոք ամաչեին նրա համար, որ իրենք չէին ընտրվել՝ բարդ և արհեստական պատրանքների փոխարեն պարզ ճշմարտությունն արտահայտելու: Անշուշտ, նրանք ամաչում էին իրենց սրտի թաքուն խորքում: Եվ քանի որ ամաչում էին, հետևաբար նախանձում էին Հակոբի աննշան ժողովրդին՝ ճշմարտությունը հայտնելու իրավունքի համար: Եվ քանի որ նախանձում էին, հետևաբար զոռոզանում էին իրենց ստությունների մեջ: Եվ քանի որ զոռոզանում էին, հետևաբար նվաստացնում էին Իսրայելին:

Եվ Եգիպտոսը հարյուրավոր տարիներ շարունակ ստորացնում էր Աբրահամի նահապետական տունը ստրկական գարշելի ծառայությամբ: Նվաստացումներն ու ճնշումները, սակայն, երբեք չէին խոչընդոտում Հավիտենականի ծրագրին և ոչ էլ ժողովրդին՝ Նրա ծրագրի նկատմամբ: Նրանցից է Նա դարբնում իր ամենահաղթ զենքերը: Եվ երբ ժամանակը հասունացել էր, Հակոբի տան համար ասպարեզ էր հանում մի մարգարեի, որի նմանը երբեք չէր եղել և ոչ էլ լինելու էր: Մովսեսը,

սակայն, հարսին առաջնորդողն էր, որն անապատում առաջնորդում էր Իսրայել տենչալի հարսին և նրան հանձնում իր փեսային՝ Սինայի հարսանիքի համար: Տերը մարդկային պարզ լեզվով հայտնում էր Մովսեսին իր օրենքն ու կարգը, որպեսզի դրանից հետո այլևս ոչ մի սայթաքում կամ սխալ չլիներ: Եթե նրա հաստատած կարգուկանոնը պահպանվեր ու կատարվեր, եթե ամեն անգամ այն ավելի լավ և ավելի ճշգրիտ ընկալվեր, միշտ հարաճուն մաքրությամբ գործադրվեր, ի վերջո այն կդառնար աշխարհի կարգուկանոնը՝ շնորհիվ իր մեջ պարփակած պարզության ու արժեքի: Դրանից հետո, հավանաբար, առիթ կտրվեր Իսրայելին՝ քանդվածը վերականգնելու և Աստծու արքայությունը վերահաստատելու:

Այդ մեկը, սակայն, չէր վիճակված Իսրայելին: Աստծու ծրագիրը ձախողվում է մարդու մեջ, ինչպես մարդն էլ՝ Աստծու ծրագրի մեջ: Իսրայելի առանձնաշնորհյալ ընթացքը ծույլ ու նոսրացած մի առվի նման կորչելու սպառնալիքի առաջ էր ժողովուրդների ընդհանուր ընթացքի մեջ: Անհայրենիք ժողովուրդը ստացել էր Տիրոջից իր հայրերի երկիրը, որպեսզի սկսի հետազոտել ու բացահայտել այն: Սակայն, արի տես, ոչ թե ժողովուրդն էր տիրում երկրին, այլ երկիրն էր տիրում ժողովրդին՝ իր բարձունքների, բլուրների և կանաչազարդ ծառերի բոլոր մանր կուռքերով, քաղաքների և տների *թերափներով*[3], հովիտների սարսափազդու *թոփեթներով*[4]: Նաև դրսից, շրջակա ազգերից, Իսրայելի վրա տարածվում էին փորձությունների և գայթակղությունների նորանոր ալիքներ, որպեսզի հեռացնեն նրան միակ Տիրոջից և ի վերջո ձուլման ենթարկեն: Ժողովրդի և նրա թագավորների մոտ աճում էր ձգտումը հավատուրացության և ձուլվելու: Տիրոջ գլխավոր ցեղերը բաժանվում էին սրբազան կենտրոնից և միանում հյուսիսին: Հուդայի և Բենիամինի ամենատկար ու չնչին մեկ մասը միայն հավաքվում էր տաճարի սրբարանում՝ Տապանակի լռած ամպրոպի շուրջը: Բաժանվածները շրջում էին նաև իրենց դեմքը ու սնվում տարօրինակ որոմով: Եվ այսպես, պատահում էր այն, ինչ որ պետք է պատահեր: Ինչ է անում քարտաշը, երբ իր հատիչը քարի կարծրության պատճառով կոտրվում է. անմիջապես դեն է շպրտում

[3] Բնագրում՝ *թերափիմ* = տան կուռքեր:
[4] Բնագրում՝ *թոփեթիմ* = հովիտների կուռքեր:

այն: Աշխարհի միջից ինչո՞ւ ընտրել մի ժողովրդի, որը միայն մի ձգտում ունի՝ հարմարվելու և ձուլվելու: Գեղատեսիլ Սամարիայի շուրջը բնակվող տասը ցեղերի հյուսիսային թագավորությունն ավելորդ էր դարձել, այո՛, նույնիսկ անիմաստ՝ Աստծու ծրագրի համար: Վա՜յ նրան, որ հավատում է, թե Տերը սիրում է մի ժողովրդի մեկ այլ ժողովրդից առավել, և կամ թե Նա իր հոգատար ձեռքն է պահում Հակոբի ցեղի վրա՝ պարզապես վասն Հակոբի: Աշխարհի սիրուն է Նա պահում իր ձեռքը Հակոբի ժառանգների վրա, բայց դեռ ինչքա՞ն ժամանակ: Արդարև Սամարիայի և հյուսիսային ցեղերի վրա Տերն արդեն ուղարկել էր իր դատաստանը: Դա տեղի էր ունեցել ոչ շատ երկար ժամանակ առաջ. երեք սերունդ անգամ չի անցել այդ սարսափելի ժամանակից, երբ Ասորեստանի հզոր թագավորը պաշարել էր Սամարիան, ավերել այն և սպանել բնակչության մեծ մասին, իսկ մնացածներին էլ գերեվարել:

Արդյոք սա մի ազդարարություն չէ՞ր, մի սարսափելի նշան, որից մարդ պետք է դողար մինչև իր հոգու խորքեր: Մի՞թե բավարար էր հանդուգն անհոգությամբ վստահել տաճարին, զոհաբերությանը և Տապանակին, որպես թե Տերը լիներ մարդկային ընտանիքի մի հայր, գծուծ և ժլատ, որը, ինչ էլ պատահեր, հրդեհից պիտի փրկեր միայն իր գանձը: Ո՛չ, այդպես չէր, քանզի իր հարսի՝ Իսրայելի գանձն իր սեփական գանձը չէր: Նա կարիք չուներ ոչ տաճարի, ոչ զոհերի, ոչ Տապանակի և ոչ էլ օրենքի: Երբ Հուդան նմանվում է այն հատիչին, որն այլևս անպիտան է դարձել քար կոփելու համար, այն ժամանակ նա էլ պետք է դեն շպրտվի: Տերն ասում է. «Ես Որ Էն եմ», հետևաբար Նա կախյալ չէ Աբրահամի սերմից: Նա կարող է նոր ծրագրեր մշակել և այլ գործիքներ ձեռք բերել: Նա, եթե ձանձրացել է այս խախտված ստեղծագործությունից, կարող է այն իր երկու մատների արանքում ճզմել, ինչպես մի ճրագի աննշան բոցը:

Հուլդա մարգարեուհուն տված այցելությունից ի վեր, Տիրոջ օգնությամբ, Երեմիայի հոգուց վերացվել էր այն շղարշը, որը ծածկում էր այս բոլոր գաղտնիքները: Եռացող կաթսան հյուսիսում և դատաստանի սպառնալիքը գնալով ավելի հստակ նշանակություն էին ստանում: Նա զգում էր, որ աշխարհի համար իր բոլոր առումներով ժամանակն արդեն ուշ էր, գուցե դեռ մնացել էր միայն մի ակնթարթ՝ կասեցնելու համար Տիրոջ դատաստանի ավերիչ ուժը: Հույսի միայն մի ճառագայթ

վանում էր վախը. Հավիտենականը շնորհ էր արել Երեմիայի ժամանակակից սերնդին՝ վերագտնելու ինքն իրեն՝ կորած ու նորից հատնաբերված ուսմունքի մեջ: Դա, իհարկե, վերջին փորձն էր ժողովրդին արթնացնելու: Այդ սերնդի ձեռքում էին մահն ու կյանքը, և Հուդայի կյանքը կախված էր մի մազից:

* * *

Երեմիան իր երիտասարդությունը նվիրել էր մենակեցության և ներքին հայեցողության: Դեռևս երեխա ժամանակ ամաչկոտությամբ խուսափել էր որևէ ընկերային շրջանակից՝ նույնիսկ իր հայրական տան ու գերդաստանի հետ առնչված: Դրսում քայլելիս ու շրջագայելիս նա հաճախ ձգտել էր արժանանալ սիրալիր վերաբերմունքի և ընկալման, բայց երբ նորից եկել ու նստել էր Քեղկիայի սեղանի շուրջը, սովորականի նման լսել էր հոր փնթփնթոցը, Օբադիայի դառնությունը և Հովելի պարծենկոտությունը: Այդ ժամանակ հազիվ թե կարողացել էր կուլ տալ իր մեջ կուտակված ատելության տառապանքը: Ոմանք նրան անվանում էին երազկոտ ու ցնորքներով տարված, բայց իրենք հավակնում էին լինել նվիրված իրականի, ապահովի և կենդանի բարեպաշտության ծառայությանը: Երեմիան, սակայն, դեռևս տասներեք տարեկանում, (այն ժամանակ երբ ձայններն ու շշուկները սկսել էին հետապնդել նրան), արդեն հասկացել էր, որ այն ամենը, ինչ մարդիկ «իրական» են կոչում, միայն ամենից անարգն է ու հակադիրը, այսինքն՝ Աստծուց հեռացումն է: Անհրաժեշտ էր ձերբազատվել վերոհիշյալ հավակնոտությունից և դառնալ դեպի ճշմարիտն ու իրականը, քանզի շուտով սպառվելու էր աստվածային համբերության ժամկետը: Դրա համար էլ կարիք կար գնալու մարդկանց մոտ, խառնվելու նրանց հեռացած լինելու վիճակի հետ, որն իրենք «կենդանի բարեպաշտություն» էին անվանում, սկսելու մի մեծ երթ քաղաքից քաղաք, գյուղից գյուղ, տնից տուն, որովհետև Հուլդան այդպես էր մեկնաբանել Տիրոջ կամքը Երեմիայի վերաբերյալ: Եվ նա որոշում է Բարուքի հետ կատարելիք այցելություններում ընդգրկել շատ լայն շրջանակ, մինչև որ Տերը դա բավարար համարեր:

Երկու երիտասարդները եբրայական Նոր տարվա սուրբ տոնը Երուսաղեմում անցկացնելուց հետո, աշնանային այդ ամսում ճամփա ընկան հարավային ուղղությամբ: Բեթլեհեմի և Թեկուայի վրայով հասան Հեբրոն, ուր Եգիպտոսից եկած քարավանների ճանապարհները միանում էին իրար: Հեբրոնից ընթացան դեպի Եգիպտոսի սահմանը, հասան Աղի հովիտ, որի երկայնքով քայլեցին դեպի Բերշեբա (Բերսաբե) քաղաքը: Այստեղ Երեմիան շեղվեց ծրագրված ճանապարհից, որովհետև բուռն ցանկություն ունեցավ տեսնելու Տիրոջ ծովը, որը դեռ չէր ճանաչում: Այդ պատճառով էլ նրանք անցան Հուդայի սահմանը և համարձակվեցին մտնել Փիլիշտիմ (Պաղեստին) երկիրն ու հասնել ծովային բազմամարդ մայրաքաղաք ու նավահանգիստ՝ Գազա: Այդտեղ՝ ավազոտ ծովեզերքում, Երեմիան ձեռք բերեց բոլորովին նոր ընկալումներ ու փորձառություններ Արարչի և նրա ստեղծածների մասին: Մի՞թե այդ տիրակալ և ամեն ինչ ծածկող ջրերի զանգվածն Աղոնայի (Տեր Աստծու) ստեղծածը չէր, և դրա հետ մեկտեղ այն անսահմանորեն ավելի զորեղ չէ՞ր արդյոք իր համար հաստատված սահմանն անցնելու հարցում, քան մարդ արարածը: Այդուհանդերձ, այդ ահռելի հսկան, ամենակատաղի փոթորիկների ժամանակ անգամ, մնում էր իր սահմաններում: Ավազե մի շերտ միայն բավարար էր նրա եզերքի սահմանը դառնալու: Թեև նրա համար մի շատ հեշտ խաղ կլիներ ամբողջ երկիրը ողողել ու կլանել: Հետևաբար, որևէ ստեղծված, նույնիսկ եթե այն լինի ծովի նման մի ամեհի հրեշ, ինչքան հեռու է մարդ արարածից, այնքան ավելի հնազանդ կերպով ենթարկվում է Տիրոջ հաստատած կարգուկանոնին: Այն օրերին, երբ նրանք մնում էին Գազայում, Երեմիան իր ժամանակն ամենից շատ ծովեզերքում էր անցկացնում: Երբ քամիները շաչում էին, և փրփրաբաշ ալիքները՝ գալարվում, Բարուքը կարողանում էր տեսնել, թե ինչպես էր մշտապես զուսպ իր ուսուցիչը, ցնցված իր ներքին հույզերից, ինքն իրեն ավազի վրա զցում և նորից վեր ցատկում, ապա բազուկները վեր բարձրացրած սկսում էր խառնաշփոթ խոսքեր կրկնել ու պարելով ծովի ջրին մոտենալ: Այդ օրվանից աշակերտը սկսեց ուշադրություն դարձնել Երեմիայի ինքնամոռաց խոսքերին՝ դրանք ճշգրտությամբ դրոշմելով իր հիշողության մեջ:

Տերը երիտասարդ Բարուքին՝ իր ընտրելագույնին, շնորհել էր իր հաստատուն աջակցությունը: Միայն աստվածային միջամտությամբ է,

որ կարողացել էր հասունանալ նրա տղայական հոգին, որն անձնասիրական ոչ մի ցանկություն կամ տենչանք չուներ, այլ մեծապես ձգտում էր միայն Երեմիային հետևել և ծառայի նման նրա ճանապարհը հարթել: Իրենց թափառումների ընթացքում,— հավանաբար այս մեկը նաև Աստծու բարեհաճ աջակցությամբ,— թուլակազմ երիտասարդը դարձել էր մի ուժեղ տղամարդ, ում դեմքին սկսել էր աճել մի փափուկ մորուք, որով գրեթե հավասարվել էր Երեմիայի տարիքին: Աշխարհի ընկալման ու ճանաչման տեսակետից էլ նա ավելի շուտ էր հասունացել, քան Երեմիան: Նրա կարողությունն ու գործնական ճկունությունը երկրային կարիքները հոգալու հարցում երկուսին էլ օգտակար էին: Երեմիան իր տանը եղած ժամանակ արտասանել էր սարսափելի խոսքեր. «Իմ փափագն է, որ դուք այլևս ինձ չհիշեք»: Նա թողել–գնացել էր իր վրայի հագուստով՝ չպահանջելով ոչինչ իր բաժին ժառանգությունից, արտերի և հոտերի հարստությունից, արծաթի և ոսկու կշեռքից: Մյուս կողմից Բարուքը սերում էր մի չքավոր ընտանիքից: Հետևաբար, նրանք երկուսով ոչինչ չունեին, բացի իրենց գրաստներից և մի փոքրիկ գումարից, որը գրեթե սպառվել էր Երուսաղեմում ապրելու ընթացքում: Մնացել էր միայն մի քանի *շեկել*[5]: Առանց Բարուքի օգնության Երեմիան դժվար թե կարողանար առաջ գնալ երկրի ճանապարհներով:

Իր հոգատարության շնորհիվ Բարուքը կարողացել էր նույնիսկ իրենց գրաստները հասցնել մինչև Գազա ու պահպանել: Փիլիշտիմի այդ քաղաքում, սակայն, եկել էր ժամանակը Երեմիայի էշի, որի հետ նա կապված էր գորովալից կերպով: Բարուքը, որ ճանապարհորդության սկզբից ի վեր ստանձնել էր աշխարհիկ հոգսերի պատասխանատվությունը, որոշել էր վաճառել կենդանիներին իրենց համետներով միասին, որպեսզի, մի քանի *շեկել* ձեռք բերելով, կարողանար մի քիչ ազատ շարժվել: Սակայն այդ հավատարիմ անասունների վաճառքից հետո նրանց անճարակ ոտքերի առջև անողորմաբար ձգվում են փոշոտ ու քարքարոտ ճանապարհներ:

Երբ Երեմիան վերջապես դադարում է դիտել ծովը՝ Աստծու այդ հրաշալի ստեղծագործությունը, նրանք այս անգամ ճանապարհ են

[5] շեկել = հին և նոր Իսրայելի դրամական միավոր:

ընկնում դեպի արևելք ու հասնում ամրացված Լեբնա քաղաքը, որն արդեն Հուդայի սահմանում էր: Լեբնայում նրանք լավ ժամանակ են անցկացնում: Տեղի հզոր ամրոցը ղեկավարում էր մի իշխան, որը կրում էր միևնույն անունը, ինչ որ ինքը՝ անաթովթցի քահանայի որդին, Երեմիա Լեբնացի: Նա, բացի այդ, նաև հայրն էր Ամիտալ թագուհու: Քանի որ արքունի հրահանգը բոլոր ամրոցների վերաբերյալ պահանջում էր հարցաքննել օտարներին, հետևաբար այդ նպատակով Երեմիային ու Բարուքին անմիջապես տանում են իշխանի մոտ:

Ծերունի Երեմիա Լեբնացուն Երուսաղեմի արքունիքում պատահականորեն տեղեկացրել էր իր դուստրն այն իրադարձությունների մասին, որոնք տեղի էին ունեցել տաճարում թագավորի զատկական սեղանի շուրջը: Այդ օրվա գնահատված ու քննադատված ընթերցողի անունը մնացել էր իր հիշողության մեջ, քանի որ ինքն էլ նրա նման կրում է միևնույն անունը: Լեբնայի իշխանը՝ Հուդայում հերոս մի քաջամարտիկ, հռչակված էր նաև իբրև բարեպաշտ մի անձնավորություն, որը ոչ միայն պահում էր պատվիրանները և տաճարում ամենօրյա մի ընծայաբերում կատարել տալիս, այլև սիրում էր Աստծու հրաշափառ էության մասին իր սեփական խորհրդածություններն անել: Ապրել հեռու Ադոնայի (Տիրոջ) սրբարանից իր համար աքսորի մեջ լինել էր: Այդ աքսորի մեջ էր բռնկվում իր անզսպելի ջերմեռանդությունը: Լեբնայի արևմտյան դարպասի առաջ, այնտեղ, ուր ճանապարհն իջնում է դեպի Փիլիշտիմի հարթավայրը, նա կառուցել էր քարեղեն մի հուշակոթող: Այդ վիթխարի քարի վրա նա քանդակել էր Հակոբի Աստծու բացառիկ առավելությունները՝ ի հակադրություն փղշտացիների գերագույն աստծու՝ Դագոնի դաժանության ու անզորության: Աշխարհի անողոք ընթացքը փիլիշտիմցիներին (փղշտացիներին), Դավթի օրերից սկսած, նվազեցրել էր և դարձրել մի փոքրիկ առևտրական ժողովուրդ, որն օրավուր վիրավորվում էր և իրեն անարգված զգում՝ ի տես այդ ամբարտավան ու գրգռիչ հուշակոթողի: Նաև վերևում հիշված երկու երիտասարդները մեծապես վանողական են համարում հուշաքարի վրայի մեծաբերան արձանագրությունը: Թագավորի անները հրավիրում է նրանց իր տունը, պատշաճապես հյուրասիրում, իսկ երեկոները Տիրոջ վերաբերյալ աշխույժ զրույցներ է ունենում Երեմիայի հետ: Վերջինս

շատ արագ է անդրադառնում, որ Լեբնայի իշխանը, չնայած հավատի նկատմամբ իր ունեցած բացառիկ հավատարմությանը և նախանձախնդությանը, սխալ պատկերացումներ էր կազմել Տիրոջ վերաբերյալ, որոնցով առանց վարանելու կարելի էր բնորոշել ինչ-որ մի Դագոնի: Չէր ուզում հասկանալ, որ Իսրայելի Աստվածը բացառապես միայն Իսրայելի համար չէր, այլ նա Իսրայելի միջոցով մի Աստված էր համայն աշխարհի համար: Ծեր ռազմիկի աչքերին Զորաց Տերը ցասումնալից ու վրեժխնդիր մի զորապետ էր, որը որոգայթներ էր պատրաստում իր թշնամիների համար (և բոլոր ժողովուրդներն էլ իր թշնամիներն էին), որպեսզի իր սեփական ժողովուրդը, հանկարծակիի բերելով նրանց, պարտության մատնի: Երիտասարդ Երեմիան համարձակվում է հակաճառել այս տեսակետին: Դրա վրա ծեր Երեմիան բորբոքվում է ու իրավունք ունեցողի նման բուռն վիճաբանում, մինչև որ երիտասարդը զգուշացնում է նրան, որ ճշմարտությունը կարող է միայն այն հոգիներին համոզել, որոնք ինքնին հաղորդակից են դրա մեծությանը: Այս հանդիպումից սարսափահար՝ Երեմիան հասկանում է, թե ինչպիսի մակարդակ ունեն Հուդայի մեծերն ու արդար համարվողները:

Չնայած տարակարծություններին՝ իշխանը, երկրորդ *շաբաթը* լրանալուց հետո, հայրական սիրալիությամբ և զանազան փոքրիկ նվերներով արձակեց նրանց: Հրաժեշտի պահին նա նույնիսկ առաջարկեց նրանց նեղության կամ հալածանքի ժամանակ իր պաշտպանությանը դիմելու: «Քանզի Հուդայում շատ քչերն են միայն ճանաչում Տիրոջը՝ քո Աստծուն, ինչպես ես...»,— եզրակացրեց նա:

Երեմիան և Բարուքը Լեբնայից գնում են դեպի արևմուտք: Մեկ ամբողջ օր Հուդայի երկրի միջով անցնելուց հետո կանգ են առնում Լաքիս հռչակավոր քաղաքում, ուր առժամանակ մնում են: Այնտեղ առիթ են ունենում իրենց սեփական աչքերով տեսնելու հավատի այն մեծ անկումը, ինչ որ այլ վայրերում նվազ ակնհայտ էր: Թվում էր, թե հին Օրենքի պատվիրանները և վերագտնված ուսմունքինը զուր են բախել Լաքիսի դարպասները:

Ի տարբերություն Երուսաղեմի՝ այդտեղ գարշանքները կատարվում էին բացահայտ կերպով: Մարդիկ *շաբաթը* չէին պահում: Մի՞թե հնարավոր էր, որ Հուդայում գոյություն ունենային այնպիսի բիրտ ու

դաժան հոգիներ, որոնք ոչինչ չիմանային հանգստյան օրվա բարիքների մասին, չհասկանային արարչագործության հանգստի հանդիսավոր խորհուրդը, դադարի սրբացումը, որը հաղթահարում է ամեն ինչ, որ իրական է և արհեստական, որպեսզի դրանով մոլորյալները մի քանի ժամվա համար վերադառնային ճիշտ ուղու վրա: Ավա՜ղ, այո՛, կային այդպիսի դաժան ու կարծրացած հոգիներ և դրանցից ավելի դաժաններն անգամ: Լաքիսի հարուստները վաշխառությամբ էին զբաղված և դրանով կեղեքում էին իրենց եղբայրներին: Աղքատները հիվանդ ու սոված մեռնում էին փողոցի փոսերում, առանց որ իրենց որևէ մեկն օգնության ձեռք մեկներ: Ամենից վատը, սակայն, կատարում էին Լաքիսի կանայք. նրանք թողնում էին Տիրոջն իր տեղում և համառ բացարձակությամբ պաշտում էին Աստարտին՝ երկնքի և աստղերի թագուհուն: Համարձակ հավատուրացությունն այնքա՜ն առաջ էր գնացել, որ այդ կանայք, հակառակ պատվիրաններն ամենայն անարատությամբ պահելու թագավորի խիստ հրահանգին, տոնախմբում էին իրենց Աստարտի՝ «երկնքի կապույտի և ցանքի կանաչության տիրուհու» մեծ տոնը, ոչ թե առանձնության ու *շշնջացող* մեկուսացման մեջ, այլ *շքեղ* տողանցքներով և զոհաբերությունների *շռնդալից* պարերով:

Օրեր առաջ սկսում էին տոնի պատրաստությունները տեսնել. հազարավոր աստղաձև և մրգախառն թխվածքներ էին շաղում ու եփում, հաստափոր սափորների մեջ խմորում էին խառը նյութերից մի տեսակ հարբեցնող գարեջուր, որը գրգռում էր մարմնի զգայարանները: Մեծ առատաձեռնությամբ առաջարկում էին աստվածուհու հյուրերին թխվածքներ և գարեջուր, օրհնված պատկերներ ու ծաղիկներ: Եվ ի հավելումն այդ ամենի, երբ Երեմիան տոնախմբողների մեջ էր, այդ օրը *շաբաթ* էր: Հավաքվել էին մի լերկ բլուրի վրա խնկի անարյուն ընծայաբերման նպատակով և ճոխ կերուխումի ու հարբեցողության: Լիալուսինը՝ կանանց հովանավորողն ու ընկերը, հպարտորեն փքվել էր գրեթե արեգակի չափ: Այդտեղ Երեմիան, առաջին անգամ լինելով, ժողովրդի առաջ կանգնեց և, առանց մեծ հաջողության, զգուշացրեց նրանց մեղմորեն և ամոթխածությամբ, քանզի իր դիմաց կանայք էին: Երբ մի աղջիկ առաջարկեց իրեն մի աստղաձև թխվածք և մի օրհնված պատկեր, նա սարսափահար ձեռքերը հետ քաշեց:

— Ի՞նչ եք անում այստեղ,— կմկմաց նա,— ինչո՞ւ եք կատարում նման գարշանքներ... Եվ դա էլ հենց այսօր, որ մի սրբազան օր է... Այսպիսով դուք ձեզ վրա եք բերում կորուստ ու կործանում...

Աղջիկը զննեց Երեմիայի դեմքն այնպիսի լպիրշությամբ, որ վերջինս խոնարհեցրեց իր նայվածքը: Այդ զննումից հետո նա բացականչեց.

— Վա՛յ, դու, երկար թարթիչներովդ, դու այդ վատահոգի լրտեսներից մեկը չե՞ս... Արդյոք մի անգամ ևս տաճարի քահանաներին հանելո՞ւ են մեր դեմ... Քույրեր, եկեք այստեղ...

Մի ակնթարթում Երեմիան իրեն շրջապատված զգաց կանացի շնչող մարմիններով՝ իրենց օծանելիքների բուրմունքներով և զայրալից ծիծաղներով, որոնք ալիքի նման առաջ էին մղում նրան: Ի վերջո նրան բերեցին ու կանգնեցրին սաղարթախիտ մի ժանտաթզենու տակ դրված բարձրադիր գահի նման մի նստարանի առաջ, որի վրա բազմած էր Լաքիս քաղաքի կառավարիչ իշխանի կինը, որն այդ շրջանի աստվածուհու՝ Աստարտի քահանայապետուհին էր: Այս կինը, չնայած իր բարձր դիրքին, դեռ երիտասարդ էր և կոչվում էր Ֆրուստրա: Նա կրում էր շղարշյա մի նուրբ զգեստ՝ արծաթյա աստղերով և ոսկեգույն հասկերով ասեղնագործված: Երեմիան նկատեց, որ նրա՝ դեպի վեր սանրված ու գոհարազարդ մազերի սևության միջից փայլում է գորշ մազերի մի նեղ շերտ: Նա իր երկար ու նուրբ մատներով ձեռքը վեր բարձրացրեց, դաստակին զրնգացին ոսկյա ապարանջանները.

— Ուրեմն, դու *Ադոնայ Էլոհիմի* (Տեր Աստծու) մարդն ես...

Մի պահ լռելուց հետո Երեմիան պատասխանեց.

— Հույս ունեմ լինել և լինելու եմ Աստծու մարդը...

— Թող ինձ ուրեմն լսի *Ադոնայ Էլոհիմին* հետևող այս երիտասարդը,— ասաց Ֆրուստրան հոգնած ու հեգնական շեշտով,— ես չեմ կարծում, որ դու ինձ որևէ նոր բան ունես հայտնելու: Այն, ինչ որ դու և քեզ նմաններն են մտածում, մենք շատ լավ գիտենք, մինչդեռ ձեզ անծանոթ են մեր գաղափարները: Արդարև բոլոր մոլեռանդները պնդում են միայն իրենց սեփական համոզումների ու կարծիքների վրա, իրականում, սակայն, հեռու են գերագույնից, սրբազնագույն էությունից... Երանի մեզ, որ Աստարտի հետ ենք, որովհետև նա՝ երկնքի թագուհին, հենց ինքն է խաղաղությունը, բարյացակամությունը, մայրական սերը մեծ

սրտերի: Ինչո՞ւ մենք պետք է մեզ հեռու պահենք նրա մայրական սիրուց: Երբ մեր աչքերը մեծարանքով բարձրացնում ենք դեպի Աստարտը, մենք չենք արհամարհում Ադոնային՝ մեր հայրերի Աստծուն: Աստարտի զորությունը տեսանելի կերպով տարածվում է մեզ վրա՝ այնքա՜ն մեղմ և այնքա՜ն հստակ, մինչդեռ Ադոնայինը չի երևում, այլ նա, ընդհակառակը, լսելի է դարձնում իրեն իշխանամոլ, դառնությամբ լցված ու ծեր մարդկանց անատամ բերանով... Ի դեպ, երիտասարդ մարդ Աստծու, դու չե՞ս եկել ընդհատելու ինձ...

Երեմիան միայն մի տխուր ճիչ արձակեց:

— Այսպես լավ է,— ասաց Ֆրուստրան՝ գոհունակությամբ շարժելով գլուխը,— քանզի դու ինձ երբեք պիտի չկարողանայիր ընդհատել մի օգտաշատ պատասխանով: Դրա համար էլ սովորիր մեզանից: Արդյոք որևէ սերմ կշարունակի՞ ապրել միայն ինքն իրենով: Իհարկե ոչ, եթե չգտնի որևէ ձվաբջիջ, որ կարենա մեջը մտնել: Մի՞թե գիշերը չէ, որ օրը դարձնում է օր, իսկ խավարն էլ լույսը դարձնում է լույս: Ինչպե՞ս կարող է Ադոնայը՝ աստվածային մարդը, իշխել, եթե Աստարտը՝ աստվածային կինը, չի ամբողջացնում նրան: Նա լսում է կանանց ամենաթաքուն խնդրանքները: Ստինքների մեջ առաջացնում է կաթը՝ իբրև սնունդ, որպեսզի մարդկանց նորածինները և կենդանիների ձագերը սովից չմահանան: Եվ նա նաև մեր հաճախ տխուր սրտերի համար պատրաստում է ու շնորհում մի անուշահամ կաթ, որը մենք անվանում ենք «մխիթարանքն աստղերի թագուհու»... Իսկ հիմա ես ուզում եմ լսել քեզանից՝ Աստծու երիտասարդ մարդուցդ, եթե դու մի նոր բան ունես ինձ պատգամելու...

Ժամանակը չէ՞ր հասունացել արդյոք, որ Տերը բացեր նրա թոթովախոս լեզուն: Երեմիան վեր բարձրացրեց իր կնճռոտած ճակատով գլուխը և սկսեց ունկնդրել: Ոչ մի ձայն: Դեռ դրա ժամանակը չէր եկել: Այդուհանդերձ, ասաց.

— Տիկին, այն, ինչ որ դու անում ես և գեղեցիկ խոսքերով պատմում, ուղղակի գարշանք է... Թո՛ղ այս սրբապղծությունը և ընդհատի՛ր այս տոնակատարությունը... Որովհետև սրանից ավելի մեծ գարշանքներ չէին այն արարքները, որոնց հետևանքով պատուհասվեց ու կոտորվեց Իսրայելի ժողովուրդը Եփրեմից մինչև Դան...

Այդ էր Երեմիայի խոսքը, բայց ոչ Աստծունը: Այն թեև Երեմիայի կողմից արտասանված, բայց նա չէր մարգարեացած այդ խոսքը: Շուրջը գտնվող կանայք, ոչինչ չհասկանալով, նույնիսկ չփնթփնթացին: Իշխանուհին, սակայն, հանգիստ նայում էր իր ցցուն ծնկներին, որոնք ուրվագծվում էին իր շղարշյա զգեստի տակից: Հուսախաբ շարժեց գլուխը.

— Քո անիմաստ ճառն ամենևին չպիտի խանգարի Աստարտի տոնակատարությանը, այլ, ընդհակառակը, պիտի նպաստի դրան... Իսկ եթե ուզում ես իմ խորհուրդն իմանալ, քեզ համար մի ընկերուհի փնտրիր, որպեսզի նա քեզ ծանոթացնի երկնային թագուհու երանելի էությանը...

Ֆրուստրան նշան արեց շարունակելու լույսերով շուրջպարը: Բարուքը խոհեմ համարեց նույն գիշերն իսկ Երեմիայի հետ հեռանալ այդ քաղաքից:

Նրանք ճանապարհ ընկան դեպի հյուսիս՝ հեռվում մի կողմի վրա թողնելով բարձրավանդակն ու Երուսաղեմը: Իրենց առաջ բացվում էին բնապատկերներն ու քաղաքները՝ Սոկքով, Յերիմութ, Թիմնա, Բեթ Շեմեշ[6] և Սորա՝ իրենց հզոր ամրոցներով: Եվ քանի որ Լաքիսը թողնելուց քիչ հետո արդեն ծախսել էին իրենց վերջին *շեկելը* և սպառել Լիբնայի իշխանի տված նվերները, Բարուքն սկսեց քաղաքներում ու գյուղերում ամեն տեսակ աշխատանք փնտրել, որի շնորհիվ նա ի վիճակի պիտի լիներ իր մոտ պահել իր ուսուցչին: Այժմ Երեմիան ամբողջ մարմնով ու հոգով կարողանում էր հաստատել, թե ինչքա՜ն հրաշալի են երկնքի և երկրի Աստծու տված օրենքներն իր ժողովրդին, և ի՜նչ ստորությամբ այդ ժողովուրդն անտեսել ու արհամարհել էր այդ սքանչելի պատվիրանները: Իսրայելը չպետք է ուրիշ անելիք ունենար, բացի աստվածային ուսմունքի հիմնական օրենքներին հետևելուց, որի արդյունքում իր թագավորությունը հաստատուն պիտի մնար բոլոր ժամանակների համար: Օրենքում գրված է.

«Մշակին նույն օրը տուր նրա վարձը, քանի դեռ արևը մայր չի մտել, որովհետև նա տնանկ է, և դա է նրա ապրուստի միջոցը»...

Երեմիան ինչքան հաճախ պետք է անձամբ նկատած լիներ, որ գործատերն իր աշխատավորի վարձը չէր տվել նախքան արևի մայր մտնելը, իսկ առավոտից հետո էլ մի բան նույնիսկ կորզել էր դրանից:

---

[6] Հայերեն Ս. Գրքում գրված է՝ *Բեթսայմուս*, այսինքն՝ *Արեգ* կամ *Արեգակի տուն:*

Իսրայելին տրված Աստծու պատվիրաններում գրված է.

«Եթե մի եղբայր, տղամարդ կամ կին վաճառվի քեզ իբրև ստրուկ, թող նա վեց տարի ծառայի քեզ, իսկ յոթերորդ տարում նրան ազատ կարձակես քեզնից:

Իսկ երբ նրան ազատ արձակես, ձեռնունայն չարձակես: Նրան կտաս քո ոչխարներից, քո ցորենից ու քո հնձանի բարիքից, որոնցով քո Տեր Աստվածն օրհնեց քեզ, դու էլ դրանցից նրան տուր:

Հիշիր, որ դու ինքդ էլ ստրուկ էիր եգիպտացիների երկրում, և քո Տեր Աստվածը քեզ փրկեց այնտեղից»...

Այսպես է արձանագրված վերագտնված ուսմունքի մեջ: Երեմիան, սակայն, անձամբ հաստատել էր, որ երկրում չկար ոչ մի սեփականատեր, որը վեց տարի հետո իր ստրուկներին ազատ թողներ, բացի այն պարագայից, եթե նրանք ծերացած, տկար կամ ուժասպառ էին: Երեմիան մեծ ամոթով էր հիշում, որ նույնիսկ իր պատկառելի հայրը՝ Աստծու մի քահանա, ավելի լավ չէր վարվում, քան երկրի մնացյալ բոլոր սեփականատերերը: Միշտ կրկնվում էր հոբելյանական յոթերորդ տարին (թողության տարին), հոբելյանական *շաբբաթը*, Անաթովթի բլուրին, սակայն ոչ մի ստրուկի ազատություն չէր տրվում, իսկ ֆիզիկապես սպառված կամ հիվանդ լինելու պատճառով արձակվածներին էլ չէր տրվում իրենց հասանելիք օրինավոր բաժինը: Մի անգամ տանը, պատանի եղած ժամանակ, Երեմիան հարցրեց, թե պատվիրանների միջից ինչու հենց այդ մեկը չի գործադրվում: Հայրը պապանձվեց, իսկ Օբադիան պատասխանեց դժգոհությամբ. «Դժվարին ժամանակներում պետք է ամեն ոք գոհ լինի, եթե ուտելու հաց ունի և տանիք»: Հովելը, սակայն, ջանալով գտնել ավելի նուրբ ու համոզիչ պատճառներ, վկայակոչեց արտասահմանը. «Ինչ պիտի ասեին Եգիպտոսի, Ասորեստանի և Բաբելոնի մեծերը, երբ իմանային, որ Հուդայի փոքրիկ երկիրն իր ստրուկներին նման բարեգործություններ է անում և դրանով հարևան երկրների ստրուկների ախորժակն է բացում ազահության»: Այս պատասխանները պատանու համար արդեն համոզիչ չէին, իսկ այսօր, երբ ինքն արդեն հասունացել էր, դրանք ուղղակի զայրացնում էին իրեն: Սիրտը կորցրել էր իր անդորրը, քանի որ իրեն մեղսակից էր զգում անարդարության:

Բայց դա դեռ ամբողջը չէր: Մի՞թե օրենքում գրված չէ նաև. «Եթե քո Տեր Աստծու քեզ տված երկրի քաղաքներից որևէ մեկում քո եղբայրների մեջ մեկը կարիքավոր լինի, ապա մի՛ կարծրացրու սիրտդ և նրանից երես մի՛ թեքիր»: Երեմիան, սակայն, քաղաքից քաղաք կատարած իր դեգերումների ընթացքում տեսնում էր, որ սիրո այդ պատվիրանի միջոցով էին քողարկում վատթարագույն ամբարշտությունները: Նաև այս պարագայում մարդ արարածն իր նողկալի չարությամբ խաթարում էր ու չարաշահում Աստծու մաքուր պատվիրանը: Աղքատությունը վերածում էր մի զբաղմունքի, իսկ բարեգործությունն էլ՝ ցուցադրական պարծանքի:

Այն, ինչ որ պատահում էր իսկական աղքատների հետ, նույնը կատարվում էր նաև օտարականների, այրիների և որբերի հետ, մի խոսքով՝ բոլորի հետ, որոնց վրա Տիրոջ օրենքը տարածում էր իր հովանավորող ձեռքը: Արտը հնձելուց հետո հնձվածի մի մասը չէին թողնում այնտեղ՝ իբրև սրբազան տուրք անհամարձակ կարոտյալների, որոնք իրենց լքվածության մեջ նույնանում էին հասկաքաղ անող Հռութի հետ: Իսկ այն դեպքում, երբ որևէ «բարեպաշտ», հետևելով պատվիրանին, սահմանաքարի վրա թողնում էր մի ժլատ բուռ դաշտի բերքից, որը նույնիսկ անասունների համար չէր կարող պիտանի լինել, դա ավելի վատ էր, քան ոչինչ չթողնելը, քանզի դրանով մի անգամ ևս սահմանված մաքուր ընծան խաթարվում էր ու փոխարինվում անմաքուրով:

Դանդաղորեն թափառելով մեկ տեղից մյուսը՝ Երեմիան ու Բարուքը հարյուրավոր հանդիպումների և խոսակցությունների ընթացքում, լինի ազարակներում թե տներում, աշխատանքում կամ ազատ ժամանակ, դեմ հանդիման էին իրականության հետ, այսինքն՝ այն ստորության և մոլորվածության հետ, որոնք տիրապետող էին մարդկանց սրտերում: Երեմիան որոշում է դեռ չվերադառնալ Երուսաղեմ, այլ առաջանալ դեպի Իսրայելի հյուսիսային հին թագավորության տասը մոլորված ցեղերը: Սարսափով միախառն մի բուռն ցանկություն մղում էր նրան տեղում տեսնելու Եհովայի անեծքի ու բնաջնջումի արդյունքը: Երեմիան վաղուց իր սրտում Եփրեմի և Մանասեի ցեղերի նկատմամբ մի երեխայական կարեկցություն էր տածում, որովհետև նրանք Բենիամինի եղբոր զավակներն էին, որի երկրում էր նաև իր ծննդավայրն ու տունը: Հիմա, սակայն,

տեսնելով այդ վայրերը, նա նոր էր անդրադառնում, թե Եհովան ինչպիսի դաժանությամբ էր կատարել իր դատաստանը Եփրեմի ու Մանասեի նկատմամբ: Հակառակ տեղի ունեցած սպանդներին և նահապետական հազարավոր ընտանիքների տեղահանմանն ու գերեվարմանը՝ Իսրայելի ժողովուրդը բոլորովին չէր անհետացել այդ շրջանից, այլ նույնիսկ վերջին սերունդների ժամանակ բազմացել էր: Եփրեմն ու Մանասեն ապրում էին, բայց իրենց կյանքը նման էր ստորգետնյա աշխարհում՝ *Շե'օլի* մեջ բնակվողների կյանքին՝ խորհրդավոր լքվածության մեջ թողնված:

Եփրեմը շարունակում էր ապրել՝ թիկունքը դարձրած տաճարին, և չէր էլ մտածում շրջվելու դեպի նա, այլևս ոչ մի փորձ չէր անում՝ ուղղվելու դեպի Տերը, այլ, իր սովորության համաձայն, ծուլությամբ հանձնվում էր անեծքին: Նրա սերունդն անտարբեր էր, այլանդակված էր և բազմաթիվ խառնուրդներով խաթարված: Իսրայելի կորած ցեղերն այնտեղ էին, առանց այնտեղ լինելու: Սրտի ճմլումով ու տառապանքով Երեմիան նախազգում էր. «Երբ ավարտվել էր աստվածային սպասումի վերջին ժամկետը, վրա էր հասել կործանումը, նույնը պիտի պատահի նաև Հուդայի ապագայի հետ, գուցե ավելի դաժան, ավելի տխուր և դժոխային»:

Երբ ինքն ու Բարուքը մի արագ շրջագայությունից հետո վերջապես հասնում են Սամարիայի վիթխարի ավերակներին, նա ամբողջությամբ համակվում է տխրությամբ: Այդտեղ է եղել Իսրայելի թագավորության մայրաքաղաքը, որն իր փառահեղությամբ չափվում էր Բաբելոնի, Նոփի (Մեմփիս) և Նինվեի հետ: Հերոբովամ արքայի պալատն ու որոշ հոյակապ շինություններ դեռ մասամբ կանգուն էին: Այդուհանդերձ, որքան անվնաս էր թվում որևէ մի շինություն, այնքան մեծ էր նրա դատարկության պատճառած սարսափելի ազդեցությունը: Սամարիան լքված էր ոչ միայն մարդկանցից, այլև Աստծուց, մի ահավոր դաժանությամբ: Ադոնայի (Տիրոջ) ժառանգորդներն էին շնագայլերը, վայրի շները, օձերն ու կարիճները, որոնք սպառնում էին ամեն քայլափոխի: Երեմիան, նստած մի քարեղեն զանգվածի վրա, աչքերի առաջ այլևս նկատի չուներ Սամարիայի ավերակները: Նա տեսնում էր այրվող Երուսաղեմը: Նայում էր տաճարի ավերակների կույտերին, սիրտը սարսափից դողում էր: Մինչև ե՞րբ... Հիշում է Ուրիայի խոսքերը. «Սպասիր, եթե նույնիսկ պետք է

սպասես մինչև քո մահվան ժամը...»: Նա պատրաստ էր սպասելու, բայց իր հոգին հառաչելով դիմում է Աստծուն. «Ինչի՞ ես Դու սպասում»...

Ադոնայը լռում էր: Փախչելու մի բուռն ցանկություն էր համակում Երեմիային, թողնելու դատապարտության ենթարկված այդ վայրը և շտապ կերպով, ամենակարճ ճանապարհով, հասնելու Երուսաղեմ: Նրանք անմիջապես ճամփա են ընկնում: Քիրիաթ Յարիմում[7], սակայն, մայրաքաղաքի դարպասների առաջ Երեմիան պիտի տեսներ հավատուրացության ևս մի պատկեր, որը գերազանցում էր թափառումների ընթացքում մինչ այդ իր բոլոր տեսածները:

Այդ բնակավայրի մուտքին կար մի փարթամ տուն, որի դարպասի մոտ կանգնած էր ոչ նվազ փարթամ մի տղամարդ: Մի ձեռքով պաշտպանելով իր աչքերն արևի դեմ՝ նայում էր փողոցին, որպես թե հատուկ կերպով սպասելիս լիներ որոշ ուշացած անցորդների: Դանդաղ քայլերով ընթացող երկու հոգնած երիտասարդների տեսքը նրան մեծ ուրախություն է պատճառում, չնայած նման երկար ճամփորդության հետևանքով նրանց ունեցած մաշված հագուստների ու կոշիկների թողած տպավորությանը: Անընդհատ իր լավ խնամված ու ալիքավոր սպիտակ մորուքը շոյող մարդու սրատես աչքերն անմիջապես ճանաչում են, որ եկողները սովորական թափառականներ չեն, այլ զարգացած երիտասարդներ, որոնք գուցե Տիրոջ վերաբերյալ փորձառություն էին ձեռք բերում կամ թե ուխտ էին արել զրկանքներով լեցուն մի շրջագայություն կատարելու: Ուրեմն, ի՞նչ մեծ առիթ էր, սպասարկելով նման մարդկանց՝ արժանի դառնալու շնորհի ու բարեհաճության: Բարետես տղամարդը թույլ չի տալիս Երեմիային ու Բարուքին շարունակելու իրենց ճամփան, թեև այդտեղից Երուսաղեմ հասնելու համար հազիվ մեկ ժամվա ճանապարհ էր մնացել: Հայրական սիրալիրությամբ հրավիրում է նրանց իր տունը, տրամադրում լավ կահավորված մի սենյակ՝ փափկամազ անկողիններով: Նրանց տանում են նաև մի շքեղ լոգարան, ուր պղպջում էր առատորեն բուրումնավետ ընտիր խառնուրդներով օժտված տաք ջուրը: Լողանալիս հատուկ ծառաներ սպասարկում են նրանց, ապա կոշտ անձեռոցներով չորացնում նրանց մարմինները, անուշաբույր յուղերով

[7] Հայերեն Ս. Գրքում՝ *Կարիաթարիմ*:

օծում, կտրում ու հարդարում նրանց մազերն ու մորուքը: Վերջում ստանում են նոր հանդերձներ ու սանդալներ: Երեկոյան, երբ նրանք ընթրիքի են նստում իրենց հարուստ հյուրընկալի սեղանին, իրենք իրենց զգում են պատանու նման թարմացած ու վերանորոգված: Երեմիան իր սրտում գովաբանում է ծեր մարդու բարությունը, չնայած որ նրա շարժուձևը փոքր-ինչ անհաճո էր իրեն, որով նա քնքշորեն շոյում էր իր ալիքավոր ու գեղեցիկ սպիտակ մորուքը: Շատ քիչ էր հանդիպում որևէ հողատեր կամ կալվածատեր, որ, առանց քահանայական կարգ ունենալու, այդքան խորը հմտություն ձեռք բերած լիներ վարդապետության մեջ, և որը կարողանար անակնկալ կերպով զարմանահրաշ շրջադարձներ կատարել Աստծու շուրջը ծավալվող խոսակցություններում: Մինչև ուշ գիշերները նա արտասանում էր նոր աղոթքներ՝ պատշաճ արտահայտությամբ և արժանապատիվ զղջումով: Աստծու գեղադեմ այդ հաճոյախոսը կոչվում էր Մեշուլամ՝ որդին Մալուխի: Յոթ *շաբաթներ* տևող իրենց թափառումների ընթացքում Երեմիան և Բարուքը երբեք այդպես հանգիստ չէին քնել, ինչպես այդ գիշեր Մեշուլամի շքեղ ննջարանում:

Լուսաբացին նրանք արթնացան մի շատ տխուր խմբերգի ձայնից, որը մինչ այդ ծանոթ բոլոր խմբերգների մեջ ամենից տխուրն էր: Ըստ երևույթին՝ դրանով ողբում էին Իսրայելի մոտալուտ կործանումն ու վախճանը: Երկու քնածները, ընդոստ զարթնելով, դուրս եկան տնից, որպեսզի պարզեն, թե ովքեր են երգում այդ սրտաճմլիկ երգը: Մեշուլամի վեհատեսիլ տան հետևում տարածվում էր մի ընդարձակ ու չորացած մարգագետին, ուր դրված էին երկար ձողի միջոցով պտտվող տասներկու ջաղացքներ՝ նման այն ջաղացքներին, որոնք անհիշելի ժամանակներից օգտագործվում էին Հուդայի երկրում: Հիմքում հաստատուն և անշարժ կերպով զետեղված էր մի ջաղացաքար, որի վրա դրանից ոչ պակաս մեծությամբ մեկ այլ շարժուն ջաղացաքար, որը մի երկար ձողի մղումով պտտվում էր իր առանցքի շուրջը: Ջաղացքի այդ ձողերին մեծ մասամբ եզներ էին լծում, որոնք ամբողջ օրը շուրջանակի էին դառնում: Երեմիան ու Բարուքը, սակայն, տասներկու ջաղացքների ձողերին լծված եզներ չտեսան, այլ միայն մարդիկ՝ մերկ ու քրտնաթոր հսկաներ, ասես հզոր Սամսոնի տասներկու անգամ կրկնվող պատկերը լինեին: Երբ ավելի մոտեցան նրանց, տեսան, որ նրանք իսկական առումով Սամսոնի

կրկնօրինակ պատկերներն էին, քանզի ջաղացք բանեցնող այդ տասներկու ստրուկները, որոնք իրենց տխուր հառաչանքը բարձրացնում էին դեպի երկինք, բոլորովին կույր էին: Ներքնապես ցնցված՝ Բարուքը սարսափահար հարցրեց կույրերին.

— Ովքե՞ր եք դուք, ո՞ւմ եք պատկանում:

Տասներկու Սամսոն–հսկաները միասնաբար դադարեցրին իրենց աշխատանքն ու երգը: Եզան դանդաղությամբ տասներկու գլուխներ շրջվեցին դեպի հարցաքննող ձայնը: Դրանք բոլորն էլ գլուխներն էին տարիքներն առած ստրուկների: Վիրավոր և ճանճերի բզզոցով շրջապատված աչքերի քսանչորս դատարկ խոռոչներ սևեռվեցին նրանց վրա: Ստրուկները պատասխանեցին միաբերան.

— Մենք ջաղացպան Մեշուլամի սեփականությունն ենք...

Բարուքն այժմ համարյա գոռալով հարց տվեց, որպես թե հարկավոր լիներ աչքերի այդ խոռոչներին ամենայն հստակությամբ դիմել.

— Մի՞թե դուք բոլորդ կույր եք ծնվել...

Տասներկու հսկաների մոտ նշմարվեց պարելու մի տարօրինակ շարժում: Սկսեցին ներդաշնակ օրորվել մեկ կողմից մյուսը, նախքան մի պատասխան տալը.

— Ո՛չ, մենք կույր չենք ծնվել: Երբ մենք դեռ երիտասարդ էինք, մեզ կուրացրեց Մեշուլամը՝ ջաղացպանը, կրակով ու երկաթով, շիկացած երկաթով ու կրակով...

— Նրանք ճիշտ են ասում...

Այս խոսքերն արտասանեց Մեշուլամն իր հեղինակավոր ձայնով: Հոգատար հյուրընկալը, որի ալիքավոր մորուքը գիշերվա ընթացքում չէր խանգարված, փնտրել էր և այժմ գտել իր հյուրերին: Իր փոքր, սպիտակ ու նուրբ ձեռքով մատնացույց արեց կույրերին և ասաց.

— Երբ մարդկանց կուրացնում են, և նրանք այլևս չեն կարող տեսնել, թեթևությամբ են կրում ծանր աշխատանքը, և ավելի շատ գործ են անում: Տեսնողները, սակայն, որոնք պետք է շարունակ շուրջանակի պտտվեն՝ ջաղացքն աշխատեցնելու համար, շատ անգամ խելագարվում են: Ես այս մեկը սովորեցի Բաբելոնի ու Եգիպտոսի ժողովուրդներից...

Մեշուլամն ինքնահաճո պարծանքով արտասանեց վերջին նախադասությունը, որպես թե գովասանք ակնկալելու լիներ իր երիտասարդ

«Քաղաքպանի ստրուկները»

հյուրերից՝ ճշգրիտ կերպով նմանակելու համար խելացի ու առաջադեմ մեծ ժողովուրդներին: Բարեկամական գերազանցությամբ նայեց Երեմիային՝ առանց ըմբռնելու, որ միայն իր այդ արարքով ոտնակոխ է արել Աստծու օրենքը և հրահրել իր դատապարտությունը: Երեմիան ոչինչ չասաց, այլ միայն հանեց իր վրայից Մեշուլամի նվիրած զգեստն ու կոշիկը և թողեց դրանք ապշահար հյուրընկալի ոտքերի առաջ: Նույնն արեց նաև Բարուքը: Իրենց թափառումների այս վերջին փորձառությունից հետո նրանք բոկոտն և իրենց մերկությունը միայն վերնաշապիկով ծածկած, Եփրեմի դարպասով մտան Երուսաղեմ:

* * *

Այն, ինչ որ Երեմիայի հետ չէր պատահել երկար թափառումների ընթացքում, կատարվեց առաջին օրը Երուսաղեմում: Թվում էր, թե Ադոնայը (Տերը) գոհ էր, որ իր ընտրյալը ծանոթացել ու շփվել էր ամեն տեսակ իրականության հետ: Սակայն այդ ամբողջը ճամփորդողի համար կատարվել էր բոլորովին անակնկալ կերպով: Արդարև Ադոնայի հատկություններից մեկն էլ այն է, որ ինքն իրեն երբեք չի կրկնում:

Երեմիան իջևանեց քաղաքի ստորին մասում, ուր պետք է իջնեին բազմաթիվ աստիճաններով, արհեստավորների թաղամասի բրուտի մի արհեստանոցի վերնահարկի փոքրիկ սենյակում: Եվ քանի որ կավեղեն իրերի պատրաստությունը չէր պահանջում մուրճի հարվածներ և դոփյուններ, այլ դա մի անաղմուկ արհեստ էր, հետևաբար նա հուսով էր, որ իր սենյակում կկարողանա խաղաղ քնել: Սակայն հենց առաջին օրն իսկ, չկարողանալով տանել առանձնությունը, ցանկություն ունեցավ իջնելու բրուտի արհեստանոցը: Դա մի տարօրինակ հետաքրքրություն էր, իր հոգուն անծանոթ, որն իրեն պահում էր այդտեղ և ստիպում ամբողջությամբ կլանվել կավագործի աշխատանքով: Անսահման հաճույքով էր դիտում, թե ինչպես վարպետ արհեստավորի և նրա աշխատավորների արագ պտտվող սկավառակների վրա կավի անձև կույտերը նախ վերածվում էին կլոր գնդերի և ապա՝ հավկթաձև զանգվածների, թե ինչպես էին սկսում ձգել պատրաստվող անոթների բարակ վիզերը

և ուռեցնելով՝ վայելչորեն ձևավորում նրանց փորային մասերը: Վերջում բրուտագործ վարպետի ձեռքը նախշազարդում էր ձևավորված անոթը ծաղիկների փնջերով և բարեձև գծերով: Ավարտված կժերը, ամաններն ու այլ անոթները թրծվում էին կրակի մեջ:

Երեմիան տեսավ, որ բրուտագործին չի հաջողվում իր անոթներից մեկը պատրաստել: Ըստ երևույթին, կավեղեն զանգվածը չէր ենթարկվում պտտվող սկավառակի ձևավորող շարժումին: Կավե գունդն արդեն կորցրել էր իր կլորությունը, փորի փքվածությունը տգեղորեն ծռվել էր մեկ կողմի վրա, իսկ վերի մասն էլ անկանոն էր: Կուժն ամբողջությամբ ասես օժտված լիներ մի ծուռ և ապստամբ դնչով: Այդժամ բրուտագործը զայրացավ, դադարեցրեց սկավառակի պտտվելը, նորից շաղեց սխալ ձևավորված անոթի կավը՝ վերադարձնելով այն իր նախնական անձև տեսքին:

Այդ պահին, առաջին անգամը լինելով Զատկվա գիշերվանից ի վեր, Ադոնայը կրկին խոսեց Երեմիայի հետ: Նա այլևս չէր խոսում այն հնչեղ ու կրկնակի ձայնով՝ ներքին և արտաքին, մեղմ ու հստակ, քանզի նա իր ընտրյալին արդեն այնքան էր առաջ տարել, որ նա այլևս առանց որևէ շշուկի իսկ կարող էր լսել իրեն: Նրա համար այլևս չի հայտնում որևէ արտակարգ տեսիլք: Այն, ինչ որ կատարվում էր և մինչև իր խորքը տեսանելի էր, կարող էր ծառայել իբրև տեսիլք, այո՛, և դա արդեն տեսիլք էր: Միայն հարկավոր էր, որ աչքերն ու ականջներ բացվեին Տիրոջ կողմից: Խոսքը, սակայն, որի անոթն էր դարձել Երեմիան, հնչեց այսպես.

— Մի՞թե այդ բրուտի պես չեմ կարող վարվել քեզ հետ, ով տունդ Իսրայելի: Ինչպես այդ կավն է բրուտի ձեռքին, այդպես էլ դու ես իմ ձեռքին...

Երեմիան զգաց, որ Տերն այդ առակով հուշում էր միայն իր ծրագրի վերջին նպատակը, որն էր իր ցասման պոռթկումը: Գուցե Նրա ձեռքն արդեն սկսել էր շաղել կավը մի նոր ստեղծագործության: Այդուհանդերձ, սպասման ժամկետը դեռ չէր հասել իր ավարտին: Այս գիտակցության հետ մեկտեղ ուրիշ բան էլ էր տեղի ունենում: Դա նախազգուշացում էր, և հորդոր, և շարժում Երեմիայի մեջ, մի չհանդարտվող անհանդարտություն, որը հետզհետե ավելի էր ուժ ստանում: Դա Տիրոջ հրահանգն էր, առաջինը այն հրահանգից հետո՝ «Կապիր գոտին մեջքիդ և

գնա», որքան էլ վախն ու դժկամությունը տանջելու լինեին նրան, այս ծավալվող հրահանգի դեմ գոյություն չէր կարող ունենալ որևէ առարկություն կամ հետաձգում: Ինչքան մեծ էր լինում Երեմիայի ընդդիմությունը, այնքան ավելի հաճախ էր կրկնվում ներքին շշնջյունը, որը գնալով հնչում էր նաև արտաքին տարածության մեջ.

— Գնա և հրապարակավ քարոզիր Երուսաղեմի բնակիչներին այն, ինչ որ ես քեզ կներշնչեմ:

* * *

Տոնական հանդիսավոր օրերից հետո առաջին *շաբաթն* էր: Ժողովրդական մարգարեներն ու փրկության քարոզիչները տոնական այդ առիթներով լավ փայլել էին, իսկ այդ օրը, երբ չէին կարող իրենք իրենց ցուցադրել, հեռու էին մնացել տաճարից: Շաբաթվա օրերին արտաքին մեծ գավիթը խռնված էր լինում բազմությամբ, մինչև Տիրոջ հանգստյան օրվա սկսվելը, երբ, օրենքի համաձայն, ուշ երեկոյան, հենց որ երևում էր առաջին աստղը երկնակամարում, հարկավոր էր ընդհատել վաճառքն այն բոլոր ապրանքների, կենդանիների, թռչնազգիների, որոնք թույլատրված էին տաճարի իշխանության կողմից:

Սրբազան օրն ուրիշ անելիք չկար, բացի մեկը մյուսի հագած տոնական հագուստին նայելուց: Բացառություն էր կազմում միայն այն պարագան, երբ տաճար գնացողների մեջ լինեին թագավորը, իշխանները, որևէ օտար իշխանավոր իր շքախմբով կամ որևէ Աստծու մարդ՝ կոշտ և ընդհանուրի ուշադրությունը գրավող ձայնով: Քաղաքի ամբոխը, եթե նման որևէ հետաքրքրական բան չպատահեր կամ որևէ հետաքրքրական տեսարանի ականատես չլիներ, տուն էր վերադառնում դժգոհ և հիասթափված:

Ոչ մի բացարձակ արգելք չկար, որ մեծ անուն և դիրք չունեցող ամբոխը չկարողանար մուտք գործել արտաքին գավիթի սյունազարդ սրահ, այդուհանդերձ, տաճարի այդ մասը, ուր բազմաթիվ աստիճաններով էին բարձրանում, վերապահված էր բացառապես և միայն որոշ դիրքի տեր անձնավորությունների: Այդտեղ, հանդիսավոր ընթացքով

և այսպես կոչված *շաբաթի* հանգստյան օրենքում նախատեսված քայլերի քանակը չավելացնելու մտահոգությամբ, հավաքվում էին և սպասում տաճարի նշանավոր պաշտոնյաներն ու թագավորին ծառայողները: Զգուշավոր կարծիքներ էին փոխանակում աշխարհի վերաբերյալ Հավիտենականի ունեցած ծրագրի մասին, դատողություններ էին անում երկրի ներքին իրադարձությունների և դրսի ժողովուրդների նկատմամբ: Հատկապես նկատի էին առնվում աստվածային իրավունքի և թագավորի ունեցած հեղինակության միջև առկա նուրբ հարաբերությունները: Այս կարևոր խոսակցությունները կատարում էին ստեղծագործության հանգստյան օրվա օրենքի համաձայն, ցածր և համարյա մեռած ձայնով, չհանդուրժելով ոչ մի հուզմունքային արտահայտություն: Հովսիայի թագավորության օրերում արդեն այլևս ոչ մի առիթ չկար հուզմունքի կամ գրգռության: Երկար ժամանակից ի վեր, սկյութացիների արշավանքից այս կողմ, մարդիկ ապրում էին խաղաղության մեջ:

Ամեն տեղ, սակայն, չէր տիրում այն միևնույն զուսպ լռությունը, որը նկատելի էր վերոհիշյալ երևելի մարդկանց մեջ: Տաճարի՝ հնուց եկած ազատություններից մեկն էր խոսելու ազատությունը, որն արդարև իր մեջ բովանդակում էր ոչ պակաս վտանգներ խոսողի համար: Սյունազարդ ճեմասրահը շրջապատող աստիճանների վրա դրված էին քարոզիչների համար որոշ քանակով ամբիոններ: Այնտեղ իրավունք ուներ բարձրանալու և քարոզելու տաճար այցելող չափահաս և անկասկածելի վարքի տեր ցանկացած անձ: Արտաքին գավիթի այդ ամբիոններն ասես թակարդներ լինեին անփորձ պատգամաբերների և Աստծու մարդկանց համար: Տաճարի այս մասի գործունեությունը ղեկավարելու համար որոշված էր մի շատ բարձր պաշտոն, որն ուներ իր սեփական իրավասությունը, որը նվիրապետական կազմում երկրորդն էր *սագանից*՝ քահանայապետի գլխավոր օգնականից հետո: Նրա պաշտոնի անունն էր՝ «Շեմի պահապան կամ խնամակալ»: Գոյություն ուներ ոչ միայն մեկ, այլ երեք «Շեմի խնամակալ», որոնք իրար ենթակա էին՝ ըստ ավագության: Մի քանի ամիս առաջ մի նոր անձ էր ստանձնել «Շեմի առաջին պահապանի» պաշտոնը: Երեմիայի համար, բարեբախտաբար, այդ շաբաթ օրը տաճարում ներկա չէր Փաշհուրը[8]՝

[8] Հայերեն՝ Պասքոր կամ Փասոր:

Եմների որդին, իսկ նրա երկու պաշտոնակիցները սիրով աչք էին փակում երիտասարդ քարոզիչների արած վրիպումների վրա:

Երեմիան կանգնած էր դեպի արքայական պալատները նայող ամբիոնին. ինքն էլ չէր իմանում, թե ինչպես էր հայտնվել այդտեղ: Երբ արդեն Տիրոջը հնազանդվելու սիրուն հաղթահարել էր իր հսկայական ամաչկոտությունը, իրեն դարձյալ հանգիստ էր զգում, ինչպես այն ժամանակ, երբ թագավորի առաջ պետք է ընթերցեր վարդապետության գրքից: Սիրտը կայուն ու հանդարտ բաբախում էր: Դա նրանից էր, որ այդ ժամին ինքն իրեն հրաշալիորեն ապահով էր զգում Տիրոջով: Բավական էր միայն փակել աչքերը՝ ընդունելու համար Նրա խոսքն ու պատգամն իր մեջ՝ ավելի քան երբեք այդպես ճոխ ու արդյունավետ: Մի բան, սակայն, անհրաժեշտ էր նկատի ունենալ. ինքն այն անձը չէր, որ տագնապահար պետք է խոսքեր փնտրեր կամ պետք է պայքարեր՝ արտահայտելու համար իր սեփական մտքերը: Իր պարտականությունն էր Տիրոջը վստահել, ինչպես քնի մեջ՝ անջատվելով իր սեփական մտքից ու հոգուց, իր զգայարաններից, գրեթե մինչև մահվան եզրը: Իսկույն, և ի զարմանս իրեն, հնչեց իր իսկ բերնով մարգարեների սովորական ազդարարությունը՝ ուշադրություն ընծայելու պահանջով.

— Տիրոջ կողմից մի խոսք... Լսե՛ք Տիրոջ պատգամը...

Այս թնդացող և տիրական ձայնից իր մեջ սկսեց ինչ–որ բան սարսռալ, որն իրեն անծանոթ էր, և թվում էր՝ այլևս որևէ կապ չուներ իսկական Երեմիայի հետ, այսինքն՝ իր կյանքի մշտական ուղեկցի հետ.

— Լսե՛ք, լսե՛ք Տիրոջ խոսքը... Քանզի Տերն այսպես է ասում ձեզ...

Կոչը թողեց իր ազդեցությունը: Աղմուկն ու շարժումը դադարեցին: Լռեց նույնիսկ թիկունքից լսվող քայլերի ձայնը: Այս ամբողջը տևեց միայն մի ակնթարթ, որովհետև անմիջապես հետո նորից բարձրացավ ամբոխի ժխորը, և հետաքրքրասերների մի խմբակ միայն մնաց կանգնած ամբիոնից ներքև՝ ունկնդրելու այդ անծանոթին: Վտանգավոր զգուշությամբ փորձագետների չարախինդ հայացքները սևեռվեցին նրա վրա: Երեմիան նկատեց իր նկատմամբ անբարենպաստ մթնոլորտի առկայությունը: Ոմանք քննադատում են այն, որ նա քաղաքացիական տոնական հագուստով էր հանդես գալիս և ոչ թե կարծր հագուստով, այսինքն՝ կոշտ մազով անմշակ կաշվից պատրաստված վերարկուով, ինչպես վայել էր

Աստծու պատգամաբերին: Երեմիայի աչքերն ու ականջները հստակ կերպով ընկալում էին այն ամենը, ինչ որ կատարվում էր իրենց շուրջը: Այդուհանդերձ, ոչինչ չէր կարող խանգարել ու շփոթեցնել նրան, քանզի Տիրոջ խոսքերը սկսել էին կուտակվել նրա հոգում, ինչպես ջրի կաթիլներ ժայռերի խոռոչներում: Մի անսահման անդորրություն պատել էր նրա էությունը: Առաջին անգամ իր կյանքում նա զգում էր, թե ինչպես է իր մեջ բնակվող ձայնը բաժանվում իրենից և տարածվում մարդկանց մեջ:

— Տերն ասում է այսպես... Իմ սիրո մեջ քո սերն եմ հիշում, քանի որ դու մի երիտասարդ բարեկամ էիր և մի սիրելի հարս, անապատի մեջ հետևում էիր ինձ դեպի այն երկիրը, ուր մարդ ոչինչ չէր սերմանում... Այն ժամանակ, իմ Իսրայել, ինձ համար դու սուրբ էիր և սեփական: Ինձ համար անդրանիկ պտղի նման էիր, իսկ նա, ով ուտելու էր այն, զղջալու էր անպայման...

Փոքրիկ խումբն արդեն մեծացել էր ու դարձել ավելի քան հարյուր մարդ: Ինչ հաճելի էր նոր ձայնը, որի նմանը երկար ժամանակից ի վեր չէր լսվել: Այն ջանք չէր թափում լսելի դառնալու, այլ ուղղակի ողողում էր շրջապատը խաղաղությամբ: Արդարև հրապուրիչ էր նաև նկարագրված պատկերի քնքշալից գեղեցկությունը: Անշուշտ, նոր բան չէր այն առակը սիրուն հարսի մասին, որն անապատում հետևել էր առույգ փեսային: Փորձառուները գիտեին, որ Ադոնայն այդ միևնույն առակը դրել էր նաև հին մարգարեներից ոմանց բերանը: Այդուհանդերձ, մարդ միշտ հաճույքով էր լսում հարսանյաց զգեստներով զարդարված այդ աղջկա մասին և տեսնում նրան իր առաջ, որը մի ժամանակ անձամբ եղել էր Տիրոջ սրտի սիրելին: Հնչեց հավանություն տալու մի ձայն: Երեմիան, սակայն, փակել էր աչքերը: Այլևս նրա անձի սեփական մտքերը չէին, այլ շշնջալով իրեն փոխանցված խոսքն էր, որն արտաբերվում էր իր շուրթերով.

— Այսպես է ասում Տերը. «Ձեր հայրերն ինչ վնասակար բան գտան իմ մեջ, որ հեռացան ինձնից և, սնոտի աստվածների հետևից գնալով, սնահավատ դարձան... Նրանք այլևս չհարցրին. «Ո՞ւր է Տերը, որ մեզ հանեց եգիպտացիների երկրից և առաջնորդեց մեզ անապատում, անծայր ու անուղի, անջուր ու անպտուղ երկրում, մահվան ստվերների մեջ, այն երկրում, որտեղով մարդ չէր անցել, և ուր մարդ չէր բնակվել...»: Ես ձեզ տարա Կարմելի բերքառատ երկիրը՝ ուտելու նրա պտուղն ու

բարիքները, իսկ դուք մտաք ու ապականեցիք իմ երկիրը, և իմ ժառանգությունը պղծության մատնեցիք...

Երեմիան ընդհատեց իր խոսքը: Արտասանած վերջին բառերի դաժանությունը շնչասպառ արեց նրան: Ամեն անգամ, երբ նա իր թափառումների ընթացքում լցվում էր սրբազան զայրույթով՝ ի տես հազարավոր օրինազանցությունների, հրապարակային կերպով արած իր մեղադրանքների ու քննադատությունների ընթացքում երբեք սանձարձակ չէր եղել: Մի՞թե իր հայրն իրեն չէր սովորեցրել, որ ազնիվ մարդը բոլոր պարագաներում էլ պարտավոր էր խուսափել մերկապարանոց ու կոշտ որակումներից՝ միշտ ընտրելով քողարկված, չափավոր ու զուսպ արտահայտություններ: Հիմա, սակայն, իր բերանը ստիպված է լինում ամենից մերկապարանոց մեղադրանքներն անելու, նույնիսկ այն վայրում, որն եղել է իր մանկության ակնածանքի առարկան և իր քաղցր ու նվիրական հույզերի կենտրոնը՝ սկսած իր հասունության օրվանից: Շուրջբոլորը տիրում է անդնդախոր լռություն: Թեև Երեմիան փակել էր աչքերը, սակայն զգում էր, որ հետզհետե խտանում է մարդկանց կուտակումն ամբիոնից ներքև:

— Լսե՛ք, լսե՛ք Տիրոջ խոսքը...— կրկին հնչեց այդ կոչը, ասես խոսողն ուզում էր վախկոտությամբ թաքնվել բուն խոսողի հետևում և մեղքը գցել նրա վրա:

— Իմ ժողովուրդն իր փառքը փոխանակեց գարշանքի հետ: Դրա վրա ապշեց երկինքը, ամպեց ու խիստ մռայլվեց... Տերն ասում է. «Իմ ժողովուրդը մերժեց ինձ՝ կենաց ջրի աղբյուրիս, և իր համար խախուտ հորեր փորեց, որոնք ջուր չեն կարող պահել... Վա՜յ քեզ, ժողովուրդ, վաղուց խորտակեցիր քո քաղցր լուծը և քո թեթև կապանքները: Չես ուզում տեսնել ճշմարտությունը, ոչ էլ ծառայել նրան... Մի ժամանակ ես քեզ ճշմարիտ ու թանկագին սերմից տնկեցի իբրև համակ ազնիվ և պտղաբեր որթատունկ: Դու, քաղցր որթատունկդ, ինչո՞ւ դառնության փոխվեցիր... Կուզենայի՞ր մաքուր լվացվել: Եթե բորակով էլ լվացվես, և կամ օճառը ձեռքիցդ վար չգցես, դարձյալ իմ առաջ քո անիրավությունների մեջ շաղախված կմնաս»...

Մեռելային լռությունը վերածվել էր դժգոհության ալիքի: Ի՞նչ էր կատարվել: Այդ կարճամորուս և դեռ կաթնակեր մռութից հնչում էր Տիրոջ իսկական սպառնալիքը, որի նմանն անհիշելի ժամանակներից ի վեր չէր

լսվել: Մի՞թե կարելի էր ընդունել, որ Տերը նման մի պատգամի համար ավելի հասուն մեկին չէր գտել: Այդ օրերի երիտասարդությունը չլսված ազատություններ էր ձեռք բերել: Մտածելով ապաշխարություն քարոզող մի ծերացած մարգարեի մասին, ինչպիսին էր սպիներով ծածկված Ուրիան, յուրաքանչյուր ոք ընդունում էր, որ ինքը, հակառակ իր ունեցած տխուր փորձառություններին, միշտ աշխատում էր դրսևորել գովելի ու խոհեմ զսպվածություն, բոլորովին տարբեր, քան այս անխոհեմ ու անպատկառ նորեկը: Եվ հին ժամանակվա մեծե՞ը... Եսային երեք տարի շարունակ մերկ թափառել է Երուսաղեմի փողոցներում, որպեսզի պատժի ինքն իրեն այն դառն խոսքերի համար, որ Տերը ստիպել էր իրեն ասել: Նույն ինքը՝ Եսային, ծանր ելույթներից հետո միշտ պահանջում էր. «Մխիթարեք, մխիթարեք իմ ժողովրդին»... Իսկ իրականում ի՞նչ էր նշանակում մեղքի արատը ձեռքերին, որը հնարավոր չէր մաքրել ոչ մի մոխրաջրով կամ օճառով: Մի՞թե այդ օրվա սերունդը չէր, որ վերագտել էր կորած օրենքն ու վարդապետությունը: Մի՞թե Հովսիա թագավորը չէր, որ Երդման սյունի մոտ նոր ուխտ էր կնքել Տիրոջ հետ և դրա կատարման համար երկիրը մաքրել օտար աստվածների պաշտամունքից: Մի՞թե վարդապետության պատվիրանները չէին կարևորվել ու դարձել թագավորության հիմնական օրենսդրությունը: Ուրեմն, ուրի՞շ ի՞նչ: Տիրոջ պահանջներին լիովին գոհացում էր տրվել, երկրի ընթացքն ու բարգավաճումն այդ մասին են վկայում: Այս մարդու խոսքերը, սակայն, չէին կարող լինել Աստծու խոսքերը, այլ դրանք հանդգնությունն էին պատիժներ ակնկալող մի անչափահասի, որը ձգտում էր աչքի ընկնել տաճարի պատկառելի անձնավորությունների և Երուսաղեմի հարգարժան մարդկանց առաջ: Լսվում են ծաղրալից բացականչություններ և ընդհանուր դժգոհության սպառնալիքներ: Երեմիան, սակայն, այլևս ոչինչ չի լսում: Նրա զգայարանները միաձուլված էին խոսքի ողջակեզում, որի հետ ինքն էլ նույնացել էր.

— Շրջեք Հուդայի քաղաքներով և Երուսաղեմի փողոցներով, նայեք, իմացեք և փնտրեք նրանց հրապարակներում, եթե այնտեղ կգտնեք մի մարդ, միայն մեկ հատիկ մարդ, որն արդար գործ է անում և ճշմարտությանը հետամուտ է, ապա ես նրան թողություն կտամ: Սակայն ինչպե՞ս պետք է ներեմ, երբ սարսափելի ու գարշելի բաներ են կատարվում

երկրում: Իմ ժողովրդի մեջ ամենուրեք ամբարիշտներ են: Մարդկանց ոչնչացնելու համար թռչնորսների թակարդների պես որոգայթներ ու ցանցեր են լարում: Ինչպես մի վանդակ, որը լեցուն է թռչուններով, այնպես էլ նրանց տունն է լեցուն մեղքերով: Նրանք մեծանում են ու հարստանում: Այո՛, պարարտանում են և ուժեղանում, ուրախանում չարությամբ: Նրանք արդար դատաստան չեն անում, որբի իրավունքը չեն պաշտպանում, զրկում են աղքատներին...

Ամեն կողմից գոռացին կատաղած.

— Ո՞ւր է Շեմի պահապանը... Գտեք ու բերեք Շեմի պահապանին...

Այլևս, սակայն, ինքը՝ Երեմիան, չէր խոսողը, այլ ինքը դարձել էր Տիրոջ բերանը: Բառերի հզոր պոռթկումն անզսպելի զայրույթով էր համակել իր ամբողջ էությունը: Ձաղացպան Մեշուլամի փոքր ու ճերմակ ձեռքը ցույց էր տալիս իր կուրացրած տասներկու Սամսոն–հսկաներին: Ներքևում մոլեգնում էր բազմությունը.

— Վերջ տվեք... Թող այլևս նա չխոսի... Տարեք նրան Շեմի պահապանի մոտ...

Երեմիան զույգ բռունցքներով ծեծում էր իր կուրծքը.

— Մի՞թե այսպիսի ազգից վրեժ չեմ լուծելու,— ասում է Տերը...

Նրա թիկունքից ականջին փսփսում են նախազգուշացնող ձայներ: Մի ոմն ամբիոն էր բարձրացել, նրա կողքը կանգնել և բազկից քաշելով՝ փորձում էր տանել նրան դեպի ճեմասրահի սյունները: Նա պետք է լիներ Բարուքը: Թեև Տիրոջ խոսքն ամբողջությամբ չէր ավարտվել, այդուհանդերձ, ոչ թե Տիրոջ կողմից տրված հարցն էր, այլ ավելի Երեմիայի սեփական ճիչն էր երկյուղալից, որը նա դեռ կարողանում էր արձակել.

— Ուրեմն, ի՞նչ եք անելու, երբ վախճանը հասնի...

Այդ ընթացքում նա բացեց իր աչքերը: Ամբոխը չափազանց շատացել էր ու վեճի բռնվել, քանզի նորեկները ելույթը չէին հասկացել, մինչդեռ լայնախոհ մարդիկ կշտամբում էին զայրացածներին: Բարուքն աղերսում էր Երեմիային ամբիոնից վար իջնել, դեպի ճեմասրահը գնալ և այնտեղից էլ հնարավորինս շուտ թողնել տաճարը: Վերջինս, եղելությունից սթափված, նայում էր վերևից օդում թափահարվող բռունցքներին և վիճաբանող մարդկանց վրա: Տարօրինակ բան էր կատարվում. մի բարձրահասակ ծերունի բազմության միջից համառորեն ճամփա էր

բացում և բազուկը սպառնալից դեպի վեր բարձրացրած՝ գնում էր դեպի Երեմիան, որը հանկարծ սարսափով նկատեց, որ դա իր հայրն է՝ Շեմի պահապաններից մեկը: Հպարտ և հոգնած Քեղկիան եկել էր Անաթովթից հաշիվ պահանջելու այն մեծ խայտառակության ու վիրավորանքի համար, որ իր որդին տաճարում այդ սրբազան *շաբբաթ* օրը պատճառել էր իր գերդաստանին: Երեմիան կանգնեց ամբիոնի եզրին, որպեսզի ամենայն հնազանդությամբ դիմավորի իր հորը: Բարուքը, սակայն, երկու ձեռքերով բռնեց նրա կրծքից ու քարշ տվեց դեպի հետևի ելքը: Երբ արդեն մի քիչ հեռացել էին, սկսեցին վազել իրենց մեղքը գիտակցող երեխաների նման:

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ԹԱԳԱՎՈՐՆ Է ԿԱՆՉՈՒՄ

Իայտառակ միջադեպի նույն պահին, երբ Աբիաթարի և Հեղիի գերդաստանից սերած Քեղկիան *շաբբաթի* առթիվ տաճարի գավիթում հավաքված բազմության միջից հայտնվում է իր քարոզող որդուն, իրականում, սակայն, նա այդ միևնույն պահին իր ագարակի տան դռան առջև անակնկալ մահանում է: Հենց նոր էր կշտամբանքի ու բողոքի ծանր խոսքերով ելույթ ունեցել իր կրտսեր և մոլորյալ որդու մասին, առանց ուշադրություն ընծայելու իր կնոջ՝ Աբիի մեղմացուցիչ առարկություններին: Իսկ երբ հասել էր այնտեղ, ուր ասում էր՝ «և իմ սիրտը նրանում էր...», հանկարծ ընկնում է գետնին և հայրական դժգոհության մի վերջին խռխռոցով ավանդում հոգին:

Բարուքին հաջողվել էր իր ուսուցչին անվնաս հեռացնել տաճարից: Դրանից հետո, երբ նրանք նստել էին բրուտագործի արհեստանոցի վերևի փոքրիկ սենյակում, Երեմիայի առաջին խոսքը եղավ Բարուքին ուղղված այն հանձնարարությունը, որ շտապ գնա ու մի գրաստ ճարի: *Շաբբաթի* վերջանալուն պես նա անհապաղ պետք է գնար Անաթովթ, քանզի մի անշփոթ նախազգացում ուներ, որ իր հայրն անհապաղ կանչում է իրեն: Նա շատ ավելին էր գուշակում, սակայն այդ մասին չէր ուզում խոսել իր աշակերտի հետ: Հոր խոսքերն անդադար հնչում էին իր ականջին.

— Քահանաներն անշեղ կերպով պահպանում են Տիրոջ հաստատած կարգուկանոնը... Եվ հիմա գալիս է իմ կրտսեր որդին տեսիլքներով, ձայներով և Աստծու խոսքերով... Տերը եթե կամենա, կարող է դուրս գալ իր սեփական վիճակից... Դու, սակայն, ո՛չ...

Նրա այդ խոսքերից նա ոչինչ չէր մոռացել:

Արդեն գիշեր էր, երբ Երեմիան հասավ Անաթովթի բլուրների և իր հայրական տան մոտ: Իր սենյակի պատուհանի առաջ՝ կիսավեր սրբարանի շուրջը, հավաքվել էին փոքրիկ քաղաքի մասնագետ ողբերգուհիները, որոնց պարտականությունն էր իրենց լալահառաչ պոռթկումներով ընդմիջել գիշերվա անդորրը: Որքան նշանավոր էր հանգուցյալը, այնքան ճոխ էր ողբերգությունը: Կրտսեր որդին, արդեն հեռվից լսելով այդ սրտաճմլիկ բացականչությունները, հաստատում է իր ունեցած ներքին կասկածների իրավացիությունը:

Քեղկիայի մարմինը դրել էին տան Աբիաթար կոչվող սրահի հատակին. ըստ սրբազան սովորության՝ այն փաթաթված էր *թահրիքիմով* (պատանքով): Գերդաստանի մշտավառ ճրագն այժմ դրվել էր նրա ծածկված գլխի կողմը՝ իբրև մեռելի ճրագ: Նաև նրա նախընտրած և ամենօրյա օգտագործման զանազան իրեր շարել էին նրա շուրջը: Դրանցից բացի, նշմարվում էին նարդոսյան յուղի բազմաթիվ նրբազարդ տուփեր և բուրումնավետ օծանելիքների ոսկյա սրվակներ, որոնք Քեղկիան միշտ օգտագործել էր, որպեսզի նրանց ազդեցիկ ու ներթափանցող բուրմունքի թմբիրով կարողանար վանել յուրայինների ու կյանքի պատճառած տհաճությունները: Երբ Երեմիան Աբիաթարի սրահից ներս մտավ, դարչինի և այլ անուշահոտ համեմունքների բուրմունքը մի պահ շփոթեցրին նրան: Նա իրեն բավական հեռու էր պահում գետնին տարածված և սպիտակով փաթաթված կերպարանքից, որն այլևս զուրկ էր մարդկային շնչից: Ինչքա՜ն ակնհայտ էր, թե ինչպես է Տերը երես թեքում մեռելներից: Հակառակ իր հոր դժգոհ ու գանգատվող նկարագրին՝ Երեմիան միշտ պատկառանքով էր սիրել նրան, իսկ այժմ օտարականի նման անվրդով նայում էր այդ դիակին, թեև լավ հասկանում էր, որ Քեղկիայի մահը մի թաքուն կապ ուներ տաճարում արած իր մարգարեական ելույթի հետ:

Նրա կարճատես աչքերը հանկարծ նկատեցին, որ սրահի մի անկյունում, ուր ճրագի աղոտ լույսը հազիվ էր հասնում, հատակին կուչ էր եկած մի՝ նույնպես ամբողջությամբ փաթաթված կերպարանք: Երեմիան մեղմորեն մոտեցավ Աբիին և, վեր բարձրացնելով նրան, սեղմեց իր կրծքին: Մայրը զարմանալիորեն նիհարել էր, գրեթե ոչինչ չէր կշռում: Չնայած որ Քեղկիայի մահով նա կորցրել էր իր ամբողջ կյանքի բացառիկ ընկերոջն ու տիրոջը, այդուհանդերձ, նա չէր ողբում ու կոծում, ինչպես ուրիշ այրի

կանայք, որոնք նույնպես անակնկալ կերպով կորցրել էին իրենց ամուսիններին: Միայն թե նրա տեսքը թվում էր լրիվ թառամած: Մայր ու որդի երկար մնացին գրկախառնված, սակայն առանց սրտերի միաձուլման:

— Իմ կրտսեր որդի՛ն,— մրմնջում էր նա, և այդ սովորական բառերի մեջ զգացվում էր մի զգուշավոր երկյուղ և անհանգստություն, որ Երեմիան չէր կռահում: Այնուհետև լուռ շրջեց գլուխը որդուց դեպի հանգուցյալը, որպես թե չէր կարողանում ոչ մի ակնթարթ պոկվել իր ամուսնուց, քանի դեռ նա չէր իջել գերեզման: Երեմիան էլ նորից սկսեց նայել այդ երկար ու քարացած առարկայի վրա, որը մի ժամանակ կոչվել էր Քեղկիա, հիշելով, թե ինչպես էր նա, ձեռքը սպառնալից վեր բարձրացրած, գալիս իր վրա՝ ճեղքելով *շաբաթի* առթիվ հավաքված մարդկանց բազմությունը:

— Նա մեծ վրդովմունքով մեկնեց աշխարհից...— ասաց Երեմիան, իսկ Աբին, առանց որդու կողմը նայելու, հաստատեց դա.

— Ջօր ու գիշեր զայրացած էր կրտսեր որդու վրա... Բայց իր սիրտը միայն այդ որդու հետ էր... մինչև իր մահը...

Երեմիան մի քայլ հետ քաշվեց Աբիի մոտից, որպես թե իր մերձավորությունը կարող էր վնաս պատճառել նրան: Ձայնի մեջ սարսափ էր նկատվում, երբ ասաց.

— Մայր, հարցրու Տիրոջը... Արդյոք ես բոլոր նրանց մահվան պատճառը պիտի լինեմ, որոնց սիրտն ինձ հետ է...

Ավելի ուշ, երբ միջանցքում լսվեցին Օբադիայի ու Հովելի քայլվածքի ձայները, Աբին ուժգինս սեղմեց Երեմիայի ձեռքը և որոշ կանխատեսելի մտքերից տանջահար եղած՝ շշնջաց.

— Ձգույշ եղիր, որդյակ իմ կրտսեր...

* * *

Ավանդությունը հանգուցյալի հարազատներին պատվիրում էր հուղարկավորությունից հետո յոթ օր և յոթ գիշեր սուգ պահել: Տղամարդիկ պետք է իրենց հանդերձները որոշ տեղերից պատռեին և իրենց այտերին դանակի կտրվածքներ անեին: Կանայք էլ, բոլորովին փաթաթված

կոշտ կտորե հագուստների մեջ, երբեմն–երբեմն մոխրով լեցուն եռոտանու վրայից պետք է առնեին մի բուռ մոխիր և խորասուզված շաղ տային իրենց ուսերին: Եվ այսպես, համաձայն հնամենի ավանդության, մի ամբողջ շաբաթ նստում են Աբիաթարի սրահի հատակին, հեռացնելով իրենց նայվածքն իրարից, լռելով կամ շշուկով իրար հետ խոսելով, քանզի սգո օրերին որևէ բարձր հնչյուն կամ որևէ կարևոր ու վիճելի նյութի արծարծում բոլորովին այպանելի էր:

Օրվա ընթացքում ցավակցողների մի երկար շարան մտնում էր Աբիաթարի սրահը: Սեղանի վրա առավոտվանից մինչև գիշեր դրված էին առատ խմիչք և խորտիկներ, ինչպես որ վայել էր հյուրասեր ու հարուստ մի ընտանիքի: Սկզբում հյուրերը, ըստ բարեկրթության կանոնների, մերժում էին օգտվել սեղանի բարիքներից, վերջում, սակայն, տեղի էին տալիս հարսների թախանձանքներին և հոժարակամ սկսում էին ուտել ու խմել: Ցածր ձայնով և շինիչ արտահայտություններով գովաբանում էին հանգուցյալին՝ սգակիրներին մղելով նոր արցունքներ թափելու:

Երեմիան նկատում է, որ այցելուներն իրենց նայվածքը բազմաթիվ անգամ լկտի հետաքրքրությամբ ուղղում էին իր վրա: Կասկած չկար, որ տաճարում պատահած խայտառակության լուրը հասել էր ամենուրեք և իր համար ապահովել մի տխուր հռչակ: Մյուս կողմից՝ սգո հենց առաջին օրվանից տանը շրջում էր աչքի զարնող մի կերպարանք, որը հատկապես հետաքրքրված էր վատաբանելու Երեմիային: Դա Անաթովթի գլխավոր մուրացկան Շամարիան էր, որը Քեղկիայի մահից հետո իրեն այդտեղ զգում էր, ինչպես իր տանը: Սրահի մուտքի մոտ կանգնած՝ նա ներս էր հրավիրում ցավակցող այցելուներին՝ մելամաղձոտ ողջույնով և լավ նախապատրաստված նախադասություններով.

— Դու մտնում ես քահանայի տուն: Քահանայի տունը Տիրոջ տունն է: Տիրոջ տունը, սակայն, աղքատների տունն է: Դրա համար էլ աղքատների մեջ ամենաաղքատը՝ Շամարիան, խնդրում է քեզ մտնել իր տունը...

Ըստ երևույթին, բոլոր աղքատների ամենաաղքատը լավ պատճառ ուներ իրեն ուրախ զգալու այդ տանը, քանզի Օբադիան՝ գերդաստանի նոր նահապետը, միշտ մեծահոգությամբ էր վերաբերվում նրան, հաճախ մեկ կողմ էր քաշում ու շշնջալով խոսում նրա հետ, մինչ վերջինս գաղտագողի հայացքներ էր գցում կրտսեր եղբոր վրա: Սգո օրերին

Օբադիան և Հովելը խուսափում էին որևէ խոսք ասելու Երեմիային: Նոր միայն շաբաթավերջում շատ տխուր երեց եղբայրները սկսեցին իրար որոշ նկատողություններ անել և անուղղակի ակնարկներ գցել.

— Դեռ ինչքա՞ն ժամանակ ուներ ապրելու մեր հայրը,— հառաչեց հարմարվող ու ճարպիկ Հովելը,— քանզի նրա ժամանակը դեռ չէր հասունացել: Ափսոս, որ նա չկարողացավ ալևորության հասնել ու կյանքից լիացած՝ նստել տան առջև, ինչպես որ իր նման շատերին է վիճակված: Նա արժանի կերպով վաստակել էր ապրելու հարյուր տարուց ավելի, բայց հազիվ յոթանասուն տարեկան դարձավ, դա արդար մեկի համար մեռնելու տարիք չէր...

Դրա վրա Օբադիան՝ Քեղկիային կոշտ ու կոպիտ հաջորդողը, պատասխանեց.

— Եթե տառապանքը հաղթահարած չլիներ նրան, ես այսքան վաղաժամ չպիտի խմեի գերդաստանի բաժակից...

Դռնապան Շամարիան գլուխը դրականորեն շարժեց իբրև նշան հավանության.

— Քեղկիան շքեղ, եռանդով լի ու քաջառողջ մեկն էր, քանի դեռ չէին կոտրել նրա սիրտը...

— Եվ այս ամոթը, հոր և ամբողջ գերդաստանի համար...— բռնկվեց հանկարծ Օբադիան՝ իր խոպոտ ձայնը բարձրացնելով թույլատրելիից ավելին:– Այսպես, ուրեմն, Քեղկայի որդիներից մեկը *շաբաթի* առիթով կանգնում է սրբազան տաճարում և հրապարակավ բացականչում. «Լսե՛ք, լսե՛ք Տիրոջ խոսքը»... Ինչո՞ւ... Ինչո՞ւ հատկապես ինքը...

Հովելն այդ անթույլատրելի զայրույթն անմիջապես վերածեց մի արտոնված տխրության.

— Այն, ինչ որ իմ եղբայրն այստեղ հիշեց, խնայվեց իմ հորը, դրա համար օրինյալ լինի Տերը... Լուրը չհասավ նրա ականջին... «Եվ նա, ով մեկ օր առաջ է մահանում, տասը տառապանք պակաս է կրում»,— ասում են Եփրատի երկրում...

Նոր շաբաթվա առաջին օրն իսկ հայտնի դարձավ, որ եղբայրները նման ակնարկներով ու մեղադրանքներով ցանկանում էին հնազանդեցնել Երեմիային իրենց նպատակներին: Տունն արդեն դատարկվել էր ցավակցող այցելուներից, մնացել էր միայն Շամարիան: Այդ օրը, սակայն,

տանը հայտնվեցին երեք ազգական տղամարդիկ, որոնց կանչել էր Օբադիան, որպեսզի վկաները լինեն իր ծրագրերին: Այդ զարմիկներից ամենաերիտասարդը կոչվում էր Հանամէէլ (Անամայել)՝ մի հանդարտ ու խոհուն մարդ: Հանամէէլը եղել էր Երեմիայի մանկության միակ խաղընկերը: Տղայության ժամանակ միասին էին թափառել Անաթովթի բլուրների վրա, որոնց ընթացքում Երեմիայի քմահաճ գաղափարներն ու կրակոտ ծրագրերը դանդաղաշարժ Հանամէէլին միշտ հիացմունք էին պատճառել ու դրդել հետևելու նրան: Նաև հիմա նա իր հայացքը միևնույն վստահությամբ ու հավատով սևեռում է այսպես ասած խայտառակության հեղինակի վրա, մինչ նրա մյուս երկու զարմիկները նայում էին բոլորովին անտարբեր: Ճաշից հետո Օբադիան՝ տան նոր տերն ու մեծավորը, Քեղկիայից ընդօրինակած սիրալիր մի շարժումով ճամփում է կանանց ու երեխաներին: Չի պահում նույնիսկ իր մորը, որը մինչ այդ միշտ մասնակցել էր տղամարդկանց ժողովներին: Եվ քանի որ Մոխելեթը՝ տան նոր տիրուհին, նույնպես թողնում է սեղանը, Օբադիան հասնում է իր նպատակին՝ առանց մեղանչած լինելու որդիական հարգանքի դեմ: Նկատի ունենալով այս աննշան թվացող երևույթը՝ Երեմիան հասկանում էր, թե ինչպիսի նոր ժամանակներ են սկսվում տան նախկին տիրուհու համար: Օբադիան փորձեց մտերմական հանաքի ձևով մի վիրավորանք պատճառել, երբ ասաց քմծիծաղով.

— Լավ բան չէ մի մարգարեի հետ միևնույն տան բաժնեկիցը լինել...

Հովելը, սակայն, անմիջապես միջամտեց մեղմությամբ.

— Իմ մեծ եղբայրը սխալվում է: Շատ լավ է ու օգտակար տան իբրև բաժնեկից ունենալ մի մարգարեի: «Պահիր օձին դռան շեմին, իսկ Աստծուց հմայվածին՝ պատվո գահին», այսպես են ուսուցանում Արամի որդիները Դամասկոս քաղաքում: Բայց մենք ինչ պետք է անենք, եթե մարգարեն չուզենա բաժանել տունը մեզ նման կոշտ ու անշնորհք մարդկանց հետ: Որ նա անգթաբար ուզում էր հեռանալ, և դա արդեն ցույց տվեց, որի հետևանքով մահացու վիշտ պատճառեց մեր հորը: Եթե մորը չհաջողվեց պահել նրան այստեղ, մեզ դա ինչպե՞ս պիտի հաջողվի, մենք, որ նրա եղբայրներն ենք, հողագործ մարդիկ և ոչ թե Աստծուն հետազոտողներ... Մեր նկատմամբ նա արդեն ոչ մի հարգանք չունի: Թող անի ու մտածի, ինչպես կկամենա: Ավագ ու փորձառու եղբայրների մեր

պարտականությունն է հոգատար լինել անփորձի նկատմամբ: Եվ մենք այդ պարտականությունից չենք ուզում խուսափել ոչ այժմ և ոչ էլ հետագայում, որի համար էլ ահավասիկ հավաքվել ենք այստեղ: Մեր փոքր եղբայրը գուցե կցանկանա մեզ լսել և հանգիստ մտածել...

Եվ այժմ Հովելը հասկանալի խոսքերով սկսեց բացատրել Երեմիային ընտանեկան կալվածքների վիճակը: Երրորդ որդին ժառանգելու էր մի կարևոր բաժին արտերից, արոտավայրերից, հոտերից, ագարակներից և հայրական իրերից: Եվ քանի որ նա հոգ չէր անում մշակելու իր հողատարածքները կամ չէր փորձում կնքել առևտրական գործարքներ, հետևաբար արդար ու տրամաբանական կլիներ, վերջնական կարգավորման նպատակով, մի համաձայնագիր կնքել եղբայրների միջև: Իրենց հայրը, չնայած իր կրած ամեն տեսակ վիրավորանքներին, այդ կրտսեր որդու նկատմամբ ունեցած մեծ նախասիրության պատճառով իր կյանքի վերջին օրերին գրավոր հանձնարարել էր, որ Երեմիայի ժառանգությունն իր եղբայրների կողմից մշակվի ու կառավարվի, իսկ արդյունքն արդարորեն հատկացվի նրա ապրուստին: Հարկավոր էր հարգել իր հայրերի մոտ գնացած մեկի կամքը: Հոր հիշատակին մեծ պատիվ պիտի լիներ, եթե եղբայրները կարողանային փոխադարձ համաձայնության գալ և մի արդար պայմանագիր կնքել, որը կրտսերին մեծ առավելություններ էր նախատեսում և, դրանից բացի, նրան ազատում ամեն տեսակ անհանգստացնող կախվածությունից:

Այս բացատրություններից հետո Հովելն իր և Օբադիայի անունից առաջարկեց Երեմիային վաճառել իր բաժին ժառանգությունն իր ավագ եղբայրներին, քանի որ նա ամուրի է և անզավակ, իսկ Տերն իրենց առատորեն օրհնել է զավակներով: Պայմանագիրը կարելի է անմիջապես կնքել, վկաները կան, և ոսկին ու արծաթը պատրաստ են, որով նա այնուհետև կդառնա բոլորովին անհոգ և ապահով:

Երեմիան լսեց լարված ուշադրությամբ, թեև գիտեր, որ եղբայրներն ատում են իրեն, քանի որ ինքը հոր նախընտրելին էր: Նրանք այդ պայմանագրով ուզում էին վտարել իրեն: Այդուհանդերձ, առաջարկը նրան թվաց բավականին ուշագրավ, որը, Հովելի խելացի խոսքի համաձայն, իրեն ազատություն կտար ամեն տեսակ կարիքից, և անկախություն՝ տաղտկալի կախվածությունից: Միայն մի բան ճնշում էր իր սիրտը: Դա

այն էր, որ ինքն այնուհետև իր հայրական տանն օտար և իրավազուրկ մի հյուր կդառնար, երբ վերադառնար տեսնելու համար իր մոր դեմքը: Երեմիան իր հայացքը սևեռում է գերդաստանի հավերժական ճրագին, որը, կրկին սեղանին դրված, լուսավորում էր:

— Իմ եղբայրները,— ասաց նա,— թող ինձ մի քիչ ժամանակ տան...

Օբադիան, որին նյարդացնում էր Երեմիայի ամբողջ էությունը, պատասխանեց զայրացած.

— Պարզ ու արդար է մեր առաջարկը... Կարծո՞ւմ է արդյոք մեր կրտսեր եղբայրը, թե խաբում ենք իրեն...

Երեմիան վստահ ու թախծոտ հայացքով նայեց բարկացածին.

— Ես դա չեմ կարծում, եղբայր... Բայց որոշողը ոչ իմ փափագն է և ոչ էլ իմ շահը...

Սեղանի շուրջը ծաղրական հռհռոց լսվեց: Միայն տղայության ընկերոջ՝ Հանամէէլի քաջալերական նայվածքը Երեմիայի վրա էր, որպես թե ուզում էր նրան ուժ տալ՝ չենթարկվելու փորձության, այլ անելու այն, ինչ որ ճիշտ է:

Ընտրյալը խոնարհեցրեց իր երկարավուն թարթիչները: Մտքով անցավ մի արագ գաղափար. «Եթե ընդունեմ նրանց առաջարկը, կազատվեմ նաև մեղքի բաժնից, որը խառնված է իմ ժառանգությանը: Մի՞թե Տերը չէր ասել իրեն՝ կապիր գոտին մեջքիդ և գնա»: Այդուհանդերձ, Տիրոջը չէր կարելի միանշանակ հասկանալ ու կանխատեսել: Հակառակ «այո» պատասխանը ստանալու բոլոր ակնկալիքներին՝ Երեմիայի մեջ բնակվող Տիրոջ զորությունը մղեց նրան ասելու՝ ո՛չ: Ինքը չպետք է հրաժարվեր պապերից ստացած իր հողային ժառանգության իրավունքից: Այնուհետև հարց տվեց.

— Երբ վրա հասնի յոթերորդ տարին, այսինքն՝ թողության *շաբբաթի* հոբելյանական տարին, արդյոք իմ եղբայրները պիտի շարժվե՞ն օրենքի համաձայն իրենց կալվածքների վերաբերյալ՝ մարելով բոլոր վարկերը և ազատ արձակելով իրենց սեփականությունը համարվող ծառաներին ու աղախիններին՝ տալով նրանց իրենց հասանելիք բաժինը...

Նախքան Օբադիան այս վտանգավոր հարցի իմաստը կհասկանար, Հովելը կտրուկ պատասխանեց.

— Թողության *շաբաթի* հորելյանական տարում քո եղբայրները կգործեն այնպես, ինչպես ամբողջ Հուդայում ու Բենիամինում են գործում, թագավորից սկսած մինչև հետին գյուղացին: Ոչ ավելի և ոչ պակաս...

Երեմիան ոտքի կանգնեց՝ իբրև նշան, որ ինքը խոսակցությունն ավարտված է համարում.

— Ուրեմն մեր հոր կամքն ի զորու կմնա, և մեր միջև ոչ մի համաձայնագիր չի կնքվի...

Եղբայրները ժամանակ չունեցան արտահայտելու իրենց զգացումները, որովհետև այդ պահին կատարվեց անկանխատեսելի ու փառավոր մի բան. լսվեց ձիերի սմբակների ձայն, որն անվրեպ ապացույց էր մի մեծ իրադարձության, քանզի Հուդայի երկրում ձիերի օգտագործումը վերապահված էր բացառապես թագավորին, իշխաններին, պալատականներին ու բանակին: Աղմուկն այնքան ուժգին խուժեց Աբիաթարի սրահը, որ բոլորն էլ, աչքները զարմանքից լայն բացած, վեր կացան սեղանից: Մուտքի դռանը երևաց գլխավոր մուրացկանի երջանիկ դեմքը: Նա ձեռքի շարժումներ էր անում և ոգևորությունից գինովցած կանչում էր Օբադիային անհասկանալի խոսքերով: Այնուհետև ներս մտան չորս զինված մարդիկ: Նրանք կրում էին *դավթյան* զինվորներին հատուկ երկնագույն զգեստ և արքայական պահակազորի ոսկյա կլոր վահաններ: Նրանք կանգնեցին հետին պլանում, քանի որ եկել էին ուղեկցելու բարձրահասակ ու սպիտակ հագած մի անձի, որը պալատական մի իշխանի անտարբեր ու հանգիստ նայվածքով զննում էր տան միջի տղամարդկանց: Մի քիչ երկար նայելուց հետո բարձրահասակը բացեց իր նեղ բերանը, որի նրբորեն կորացած վերին շրթունքը զուրկ էր բեղից:

— Ես Ահիկամն եմ, Սափանի որդին...

Այս անվան արժեքն ու ազդեցությունը կայծակի նման փայլատակեցին հավաքվածների մեջ: Հովելը միանգամից կարմրեց, քանզի ուժի և բարձր դիրքի առաջ թուլանում էր նա, ով շրջագայել էր աշխարհով մեկ: Թագավորի անձնական գրագիրը մի քայլ առաջ անցավ և խոնարհ գլուխ տվեց.

— Ես այստեղ եմ՝ Քեղկիայի տանը, որը նահապետական տունն է Աբիաթարի և Սելով քաղաքի քահանա Հեղիի...

Օբադիայի և Հովելի դեմքերը ողողվեցին ինքնահաճո երանության ճառագայթով, որը վերածվեց արշալույսի, երբ Ահիկամը հայտնեց բարձրաձայն.

— Ամոնի որդու՝ Հուդայի թագավոր Հովսիայի կողմից մի պատվիրակություն...

Երեց եղբայրները համոզված էին, որ Քեղկիայի տան համար եկել էր պահը վաղուց սպասված մեծարանքի ու փառքի: Ահիկամը հավանաբար բերում էր իրենց թագավորի կողմից պաշտոնի բարձրացում, մի ինչ–որ առանձնաշնորհում կամ, նվազագույնը, ցավակցական խոսքեր իրենց հոր վախճանի առթիվ: Եվ քանի որ Օբադիան կանգնած էր ձեռքերը կախ, առանց իմանալու՝ ինչ ասելը, Հովելն ազդված, ցույց տալով ավագ եղբորը, ասաց.

— Սա Օբադիան է, Քեղկիայի մահից հետո գերդաստանի ավագը...

Ավա՛ղ, սակայն, ըստ երևույթին, արքայի անձնական գրագիր Ահիկամն իր հետ չէր բերել պաշտոնի բարձրացման որևէ կարգադրություն, որևէ շնորհաբաշխում և ոչ իսկ իրենց հոր մահվան առնչությամբ ցավակցական արժանապատիվ մի խոսք, այլ նա դանդաղորեն մոտեցավ իր տեղում կանգնած Երեմիային: Երկու ավագ եղբայրները շեշտակի նայեցին իրար: Իրենց ակնկալած մեծարանքի փոխարեն թագավորի կողմից ձերբակալման նվաստացուցիչ հրամա՞ն էր արձակված արդյոք: Հասնե՞լ էր արդյոք հատուցման պահը եղբոր՝ տաճարում կատարած հանդուգն ելույթի համար: Ահիկամը, սակայն, ճանաչում էր նրան, ում փնտրելու համար էր ինքը ուղարկված. բարեկամաբար Երեմիայի բազկին անցկացրեց ոսկյա ապարանջանը՝ իբրև նվեր արքայի կողմից: Պարզված պատկերը գրգռեց եղբայրների նախանձոտ հայացքները:

Գրագրապետը հաղորդեց.

— Երեմիա, թագավորը ցանկանում է լսել քո խոսքը, պատրաստվիր ուղեկցելու ինձ... Դու արժանի պիտի լինես նայելու արքայի դեմքին...

Երեմիան սարսափած շրջվեց դեպի իր եղբայրները, որոնք խոնարհեցրել էին իրենց գլուխները, որպես թե մեկը հարվածած լիներ նրանց դեմքին: Սափանի որդին ձեռքը դրեց նրա ուսին և տարավ դեպի դուրս այնպես, ինչպես որ մեկը կառաջնորդեր իր երիտասարդ ընկերոջը: Բակում Երեմիային հազիվ թե ժամանակ էր մնացել հրաժեշտ տալու իր մորը:

«Երեմիան կանչվում է թագավորի պալատ»

— Սա Տիրոջ գործն է,— շշնջաց նա Երեմիայի ականջին,— Դրա համար մի՛ մտահոգվիր, որդյա՛կ, մի՛ մտածիր իմ մասին, քանզի ես եմ մտածելու քո մասին...

Երբ Երեմիան ամենայն ճկունությամբ ցատկեց պալատական ձիերից մեկի վրա, որպես թե վաղուց վարժ եղած լիներ ձի հեծնելու, Աբիի աչքերը փայլեցին հավատի և հույսի ջերմեռանդությամբ:

* * *

— Ճրագներ բերեք այստեղ,— հրամայեց մի ձայն բոլորովին մութ մի սենյակից:

Կախարդական արագությամբ, ինչպես անխոս ստվերների միջից բերված, հայտնվեցին երկու աշտանակներ՝ թույլ կերպով պլպլացող լույսով, որը գնալով ավելի էր ուժեղանում և լուսավորում ամբողջ հյուրասենյակը: Այդ պահին Երեմիան նկատեց, որ ինքը՝ մենակ, թագավորի դեմ դիմաց է: Ահիկամը նրան թողել էր պահակային հսկողության երկրորդ կետում, որը վարչական կառույցների և «Սողոմոնի տուն» կոչվող պալատի միջև էր: Դրանից հետո այն տխեղծ ներքինին, որը նրա ձեռքից բռնած առաջնորդել էր նրան միջանցքների և մռայլ սրահների միջով, հանկարծ անհետացավ նրա կողքից: Երեմիան խոնարհվելով՝ ճակատը մի պահ պահեց հատակի խնկաբույր տախտակին, որի ընթացքում մրմնջում էր հպատակների կողմից արտասանվող ողջույնի բանաձևը: Հովսիան մի քանի անգամ դարձավ խոնարհվածի շուրջը և այդ ընթացքում ինքն իրեն, ցածր ձայնով, տվեց նրա անունը.

— Երեմիա, որդի Քեղկիայի, Անաթովթից...

Մի երկար պահ հետո, որն անվերջանալի էր թվում խոնարհվածի համար, շուրջանակի քայլող արքան գոչեց բարձրաձայն.

— Ոտքի՛, ոտքի՛, Երեմիա, ինչո՞ւ ես մնում այդպես խոնարհված...

Աշտանակի վրայից նա վերցրեց մի ճրագ և բռնեց Երեմիայի դեմքին շատ մոտիկ, որպես թե ուզենար անգիր սովորել այն, ինչպես գրքից մի հատված: Սրահի մեջտեղում մի լայն գահավորակ կար՝ ծածկված ծիրանագույն և ոսկյա թելերով միահյուսված մի հոյակապ գորգով:

Հանգստավետ այդ բազմոցում անկանոն կերպով դրված էին բարձեր: Հավանաբար այդտեղ պառկած ու քնած է եղել թագավորը նախքան կանչվածի մուտքը: Հովսիան նստեց գահավորակին, նրա կողքին դրված յոթնաբազուկ աշտանակը լուսավորում էր նրան ամբողջությամբ: Հիմա հերթը Երեմիայինն էր՝ ուսումնասիրելու և անգիր անելու դեմքն ամենամեծ թագավորի՝ Դավիթ ու Սողոմոն արքաների ժամանակներից ի վեր: Սակայն նրա փառահեղ ու կենսահորդ նայվածքի դիմաց ոչ ոք չէր կարող դիմանալ, այլ ձախողության էր մատնվում ամեն տեսակ զննում և ուսումնասիրություն: Այդտեղ գոյություն ուներ միայն «այո» կամ «ոչ», միջին ու տատանվող որևէ որոշում բացառված էր: Այդ անձին հարկավոր էր սիրել կամ ատել: Երեմիան պիտի սիրեր նրան, և այդ սերը գնալով պիտի աճեր այն տխուր գիտակցությամբ, որ Հովսիայի փառքը գրեթե աննշմար կերպով վտանգված էր և ենթակա անկումի և ինքնասպառումի:

— Քեզ չեմ մոռացել, Երեմիա Անաթովթցի,— սկսեց խոսել Հուդայի տիրակալը,— Ջատկվա այն օրվանից ի վեր թագավորի ականջին հնչում է քո ձայնը...

Հակառակ իր սովորական արագ խոսելաոճին՝ հաջորդող բառերը Հովսիան արտասանեց դանդաղ ու խոհուն կերպով.

— Ընթերցման ընթացքում քո ձայնը գրավեց իմ ուշադրությունը և թույլ տվեց ինձ ճանաչել այն, ինչ որ ուրիշներն անտեղյակ են, որ Տերն ուզում է կապ հաստատել քեզ հետ... Թող ոչ մի պատնեշ չլինի Նրա և իմ միջև... Բայց դու *շաբաթի* օրը քարոզել ես տաճարում... Տիրոջ դառն ու զայրալից խոսքերն ես պատգամել. խոսքեր, որոնք մինչև այստեղ են հասել և կրկնվել թագավորի առաջ... Մարդիկ գայթակղված են ու պահանջում են՝ նման բան մի անգամ էլ չկրկնվի...

Հովսիան այստեղ ընդհատեց իր խոսքը և լռեց: Ահավոր մի հուսախաբություն ճնշում էր Երեմիայի սիրտը: Նա մտածում էր, որ արքան կանչել էր իրեն պարզապես զգուշացնելու համար: Այնուհետև Հովսիան հանկարծակի վեր ցատկեց իր բազմոցից: Նրա մարմինը կորանում էր և ձգվում ուղիղ, ինչպես մարմինը մի բռնցքամարտիկի:

— Բայց թագավորն ուզում է,— գոչեց նա,— որ նման բան կրկնվի, նորից ու նորից կրկնվի... Նա ուզում է, որ Տիրոջ խիստ ու ծանր խոսքերն

ասվեն իրեն և ոչինչ չմնա թաքնված... Ոչ մի քարոզիչ թող չվախենա, և ոչ էլ դո՛ւ, Երեմիա, ում ձայնին թագավորը շատ է վստահում... Քանզի թագավորը բոլորովին մեծ ծրագրեր ունի... Կուզենա լինել մաքրիչ մոխրաջուրն Իսրայելի ձեռքի արատների...

Մեծ հուզումով արտահայտած այս խոսքերից հետո թագավորն սկսեց արագ քայլերով գնալ-գալ սենյակի մի ծայրից մյուսը, և թվում էր, թե այլևս մոռացել էր Երեմիային: Վերջինս ձեռքով սեղմեց կուրծքը, որպեսզի զսպի իր հուզումնալից սրտի աղմկոտ բաբախումը՝ նկատի ունենալով, որ իր բերանից ելած խոսքերն օգտակար են եղել արքային: Հովսիան, սակայն, շատ հոգնած էր երևում, նա իրեն զցեց գահավորակին, փակեց աչքերը և մրմնջաց.

— Երեմիան պետք է մնա արքայի պալատում... Սա է իմ կամքը... Թող նա լինի իբրև մի գավազան, իբրև մի պարան՝ ձգված Տիրոջ ու թագավորի միջև... Բազմաթիվ գավազաններ արդեն ջարդվել են, բազմաթիվ պարաններ կտրվել... Ես պետք ունեմ հենց նրանց օգնությանը, ովքեր հստակ կերպով լսում են Տիրոջ ձայնը...

Միանգամից փոխվում է Երեմիայի կյանքն ամբողջությամբ: Նա դեռևս չէր կարողանում հասկանալ կատարվածը: Աչքերը հառում է թագավորի վրա, որը թվում էր, թե քնած է, գունատ ու անշարժ, ինչպես մի մեռյալ: Ժամանակը դանդաղ սահում է հյուրասրահում: Ո՞վ գիտե, թե ինչ ծանր բեռ է ճնշում գահավորակում ընկողմանած այդ փառահեղ մարդուն: Վերջում Հովսիան, առանց բացելու աչքերը, հրամայեց.

— Նստիր այդտեղ՝ իմ ոտքերի մոտ:

Երեմիան անվճռական գնաց նստելու: Արքան զննեց նրան կիսախուփ թարթիչներով.

— Ինչպիսի՞ տեսիլքներով էիր շրջապատված... Ինչպիսի՞ շշուկներով... Ոչինչ մի՛ թաքցրու դրանցից, որպեսզի արքան էլ տեսնի ու լսի դրանք և դրա համապատասխան իր գործերը զորացնի...

Երեմիան խորասուզվեց ինքն իր մեջ: Իր կյանքի այդ մեծագույն ժամը չպետք է անցներ առանց որևէ փրկաբեր ազդեցություն թողնելու: Տերը նրան առաջնորդել էր թագավորի մոտ, որպեսզի ապարդյուն չանցներ սպասումի համար հատկացված վերջին ժամանակահատվածը, մինչև իր համբերության վերջին ժամկետը: Նա հիմա նստած է երկրում

գոյություն ունեցող ամենահզոր իշխանավորի ոտքերի մոտ, որի իշխանությունը լի է մեծ պատրաստակամությամբ՝ ծառայելու ի նպաստ կապանքների արձակման և ժողովրդի վերադարձի դեպի Հավիտենականը: Ամենայն հավանականությամբ, նրան էր վերապահված ցույց տալ արքայական բազկի զորությունը և փրկել Երուսաղեմը: Զգուշությամբ կշռադատելով իր յուրաքանչյուր խոսքը՝ հանուն իր զեկույցի անարատության և ճշմարտացիության, Երեմիան սկսում է նկարագրել Տիրոջ հետ ունեցած իր փորձառությունները: Կատարում է հետադարձ մի քաղվածք՝ ամենից առաջ կրկնելով տաճարում ունեցած իր մարգարեական ելույթը և ճշգրիտ կերպով նկարագրելով թագավորի համար, թե ինչպես է Տիրոջ խոսքը, անհաշիվ տարիների բացակայությունից հետո, առաջացել իր մեջ՝ առանց իր կողմից որևէ ճիգ թափելու: Թագավորը, աչքերը լայն բացած, մեծ ուշադրությամբ ու հետաքրքրությամբ է ունկնդրում: Երեմիան շարունակում է պատմել բրուտագործի արհեստանոցի իր տեսիլքի մասին, որը տեսիլքից ավելի մի հայտնաբերում էր: Երկարորեն անդրադառնում է իր շրջագայությանը, որն իրականությունը ճանաչելու նպատակ էր հետապնդում, ինչպես Տիրոջ նկատմամբ հավատի ուրացությունը: Չի մոռանում հիշել Սամարիայի ավերակները, դատապարտության մատնված Եփրեմի ու Մանասեի մթին աշխարհը, ջաղացպան Մեշուլամի տասներկու կույր հսկաներին և երկնքի թագուհու տոնը Լաքիսում: Տիրոջ օգնությամբ նրա խոսքը դառնում է ավելի կրակոտ ու սուր, երբ անդրադառնում է երկրում տիրող սիրո պատվիրանի բացարձակ անտեսումին: Այս ամբողջը պատմելու ընթացքում թագավորի դեմքը մռայլվում է ու պրկվում: Միայն այն ժամանակ, երբ Երեմիան հասնում է Զատկվա գիշերը տեղի ունեցած իր ընտրությանը, խաղաղվում են արքայի դեմքի գծերը: Նա թեքվում է պատմողի կողմը և ականջ դնում: Հերթը հասել էր նշենու դալար ոստի տեսիլքին և եռացող կաթսային:

Խոսքի կեսին Հովսիան ընդմիջեց իր կոշտ ձայնով.

— Մի անգամ էլ կրկնիր, Երեմիա... որտեղ էր կախված կաթսան... Դեպի ո՞ր կողմ էր թեքված...

— Այն կախված էր երկնքի և երկրի արանքում... Հյուսիսից դեպի հարավ էր թեքված և հրեղեն կայծեր էր շաղ տալիս իր շուրջը... Եվ Տերն ասաց. «Կեսգիշերից է սկսվելու իմ դատաստանը»...

Թագավորը, բռնելով Երեմիայի ուսից, ոտքի կանգնեց:

— Հյուսիսից է թափվելու կրակը,— բացականչեց նա,— և ոչ թե հարավից... Օրհնյա՛լ լինի մեր Տերը՝ Աստված... Կեսգիշերից է սկսվելու Նրա դատաստանը և ոչ թե կեսօրվանից և ոչ էլ Նեղոսի տնից՝ իր ժողովրդի ստրկության երկրից... Ոչինչ չկա Տիրոջ և իմ միջև... Նա ինձ չի հայտնում ոչ մի դատաստանի օր... Հովսիան խաղաղությամբ է իջնելու գերեզման՝ համաձայն գուշակուհու ասածի, որին հավատում եմ... Ոչինչ չի կարող դիպչել թագավորին և նրա ծրագրերին...

Նա մի կողմ քաշեց մի վարագույր և հրեց բացեց մի դուռ, որն առաջնորդում էր դեպի կողքի սենյակը.

— Լսե՞լ է արդյոք Ամիտալը՝ իմ թագուհին, լավ նորությունը...

Թագավորը մնաց դռան շեմին կանգնած: Այդ սենյակը շատ ավելի լուսավոր էր, քան իր անձնականը: Երեմիան նույնպես վեր կացավ և նայեց լուսավոր սենյակից ներս: Իրեն այնպես էր թվում, թե իր առջև բացվել է մի ծաղկած պարտեզ: Պարտիզպաններն արքայական զբոսայգու, որը քաղաքի հարավային ծայրամասում էր, ուր իրար էին խաչաձևվում Կիդրոն և Բեն–Հիմոն հովիտները, հավաքել բերել էին թագուհուն նոր քաղված ծաղիկների չափազանց շատ զամբյուղներ: Ոռոգել ջրառատ աղբյուրի արհեստական ավազանից սնվելով՝ թագավորի պարտեզում տարվա բոլոր եղանակներին աճում էին դրսից բերված և տեղական բազմաթիվ տեսակի ծաղիկներ՝ մեջտեղ բերելով գարնանային մի շքեղություն: Ըստ երևույթին, Ամիտալը զբաղված է եղել օրվա քաղված ծաղիկներն առանձնացնելու՝ պալատում ծաղկեպսակ կազմողների, ինչպես նաև առանձին հարդարանքների համար, այդ պաշտոնը նա վերապահել էր իրեն: Իր բազուկներում դեռ գրկած պահում էր մի շարք դեղին շուշաններ, որոնք միաձուլվում էին իր վերնազգեստի ալ կարմիր գույնի հետ՝ թողնելով հրեղեն բոցի տպավորություն: Նրա մոտ էր փոքրիկ իշխան Մաթանիան, որը, սակայն, նկատելիորեն մեծացել էր այն օրվանից ի վեր, երբ Երեմիան տեսել էր նրան: Մի քիչ հեռվում կանգնած էր իր պարային շարժումները դժվարությամբ զսպող Աբդիմելեքը՝ Մաթանիայի անբաժան ընկերը՝ Եթովպիայից եկած: Երկու պատանիները վախեցած հետաքրքրությամբ նայում էին մի մութ կերպարանքի վրա, որն իրեն փռել էր թագուհու ոտքերի առջև, որի

պատճառով էլ վերջինս չէր կարողանում ոչ մի քայլ առաջ գնալ, այլ նայում էր արքային և համեստորեն ժպտում:

— Թող իմ տերը չվախենա... Մի դժբախտություն է պատահել քաղաքին...

Գետնին փռված կերպարանքը բարձրացնում է գլուխը, Երեմիան ճանաչում է նրան. դա Շալլումն էր, արքունական հանդերձապահն ու Հուլդա գուշակուհու ամուսինը: Միշտ եռանդուն ու ճարպիկ այդ մարդը թվում էր խորտակված: Շալլումը ողբաձայն կրկնում է թագուհու խոսքը.

— Դժբախտություն է պատահել քաղաքին ու երկրին... Մի դժբախտություն թագավորի և նրա տան համար... Մի դժբախտություն ինձ՝ նվաստիս... Գուշակուհին, այդ հրաշալի անձնավորությունը...

— Մահացե՞լ է,— հարցնում է Հովսիան կտրուկ և անհամբեր:

— Դրանից ավելի վատը, Տերը սպանեց նրան.– հեկեկում է Շալլումը.– Անցնող գիշեր նա կուրացավ ու պապանձվեց: Այժմ նա պառկած է տան վերի սենյակի իր անկողնում և այլևս չի կարողանում տեսնել, գուշակել ու պատգամել... Բայց նրա դեմքը ժպտում է Շալլումին գթալից... Բայց ես՝ ոչինչս, ի՞նչ կարժեմ առանց Հուլդայի զորության... Ինչո՞ւ Տերն այդպես ուժգին դիպավ իր փխրուն անոթին...

Հովսիան խորհրդածում էր խորապես և իր սրտում քննարկում էր պատահածի նշանակությունը: Մի՞թե դա իսկապես դժբախտություն էր, ինչպես որ մարդիկ են մտածում... Եվ արդյոք դա հարվա՞ծ էր՝ հասցված իրեն ու իր ծրագրերին... Տերը կնքում էր այն բերանը, որն իրեն փրկություն ու երջանկություն էր գուշակել: Այդպես է կնքվում նաև այն անոթի բերանը, որն ազնվագույն բալասանն է պարունակում: Մի լավ նշան, որի մասին այլևս թագավորը չէր կասկածում: Նա իր խոսքերով կարծես թե արձակում էր սպառված գուշակուհուն իր ծառայություններից.

— Թագավորի համար նա մեծ ու վսեմ գործ է կատարել,— ասաց նա:— Նրան ուժ է տվել երդվելով ամրապնդելու նոր Ուխտը... Նրան հանգստություն է տվել ուրախությամբ սպասելու իր մահվանը, քանի որ արքան իսկապես պիտի ունենա մի խաղաղ մահ իր կատարած բոլոր գործերից հետո... Տիրոջ կամքով մագարեուհու բերանն այլևս չի կարող հրաժարվել իր արած պատգամից... Դրա համար էլ թող նրա չարչարանքը կարճ տևի...

Վերջին խոսքերը սառը հրաժեշտ էին մի ամբողջ դարաշրջանից: Այնուհետև թագավորը փնտրում է Երեմիայի հայացքը.

— Հուլդան պապանձվել է, սակայն միևնույն օրն ինձ համար մի նոր ձայն է հայտնվել... Հուլդան տեսիլքում տեսել էր իմ խաղաղ մահը... Դու, սակայն, տեսիլքում տեսել ես եռացող կաթսան, որը կեսգիշերից մինչև կեսօր, մի կողմի վրա հակված, ժայթքում էր դատաստանի օրվա համար պահած իր հրեղեն պարունակությունը, որն այլևս ինձ չի դիպչելու և չի վնասելու...

Հանկարծակի մի երկյուղ գալարվեց Երեմիայի կրծքում: Դեռևս չէր հասկանում թագավորին և չգիտեր՝ ինչ կար թաքնված նրա խոսքերի հետևում: Մի բան, սակայն, հստակ էր, որ Զատկի գիշերվա տեսիլքում տեղի ունեցած առանձնակի խոսակցությունն իր և Տիրոջ միջև, դուրս գալով իր ծածկված վիճակից, սկսել էր միջամտել աշխարհի ընթացքին: Պատասխանատվության վիթխարի ծանրությունն ընկնում էր իր ուսերին: Եվ հասկանում էր ավելին. վսեմաշուք Հովսիան, արբեցած աստվածային շնորհներով, հարմարեցնում էր ու մեկնաբանում Տիրոջ խոսքերն իր ցանկության համաձայն: Երեմիան շնչում էր խորը և կմկմալով, առաջին անգամ իր կյանքում արեց մի նախազգուշացում, որ հետագայում հաճախ պիտի կրկներ.

— Լավ բան չէ ստուգություն ցուցաբերել Տիրոջը վերաբերող հարցերում...

ԳԼՈՒԽ ՏԱՄՆԵՐՈՐԴ

ՅԱՍՄԱՆ ԲԱԺԱԿԸ

Թագավորի հետ այն երեկոյի հանդիպումից ու խոսակցությունից ի վեր՝ Երեմիան երկար ժամանակ է, որ ապրում էր նրա պալատում, առանց նրան տեսնելու: Իր և Բարուքի բնակության համար հատկացրել էին մեկական սենյակ: Նրանց սնունդը մատուցվում էր արքայի սեղանից: Մյուս կողմից էլ Ամիտալը չէր մոռանում Երեմիային և մերթընդմերթ որևէ նվեր էր ուղարկում նրան: Հակառակ այդ հանգստավետ պայմաններին՝ Երեմիան շատ անհանդարտ ժամանակ էր անցկացնում «Սողոմոնի պալատում»: Պատճառը հետևյալն էր. թագավորը նրան իր մոտ էր կանչել, ինչպես ժամանակին արել էր Տերը, բայց հետո լքել: Նա նույնիսկ ոչինչ չէր հայտնել իրեն այն խորհրդի մասին, որն իր մեջ պարփակում էր կաթսայի տեսիլքը, և որը վերծանվել էր նրա կողմից: Բացի դրանից, ըստ երևույթին, նաև Ահիկամը ոչինչ չգիտեր այն մեծ ծրագրերի մասին, որոնք ծնվում էին թագավորի մտքում: Մեծերը լռում էին, բայց փոքրերը շշնջում էին իրար՝ լիներ դա պալատում, թե քաղաքում: Հնարավոր չէր լինում թաքցնել սպառազինություններն ու ռազմական վարժությունները Դավթի հինավուրց ու մռայլ դղյակում, ոչ էլ աննկատ էին անցնում թագավորի եռանդուն ուղևորությունները, որոնք նրան շաբաթներով տանում էին երկրի մեկ կողմից մյուսը: Արդյոք Երեմիայի սուր զեկույցը չէ՞ր պատճառ հանդիսացել, որ թագավորը շրջի ամբողջ երկրով մեկ, որպեսզի արյունալի խստությամբ ստիպի հնազանդություն Տիրոջ օրենքի ու վարդապետության նկատմամբ, որպեսզի դարձի բերի ժողովրդին նախքան սահմանված ժամանակի սպառումը: Երեմիան, սակայն, չէր սխալվել: Այդ անդադար գնալ–գալը հետապնդում էր բոլորովին այլ նպատակ, որը հուշում էր մի շատ վտանգավոր գործողություն:

Արդեն վաղուց իր տանը՝ հայրական սեղանի շուրջը, հաճախ խոսք էր լինում այն տարօրինակ իրադարձությունների մասին, որոնք Արևելքում՝ գետերի երկրում, ցնցել էին Ասորեստանի կայսրությունը: Շատ ճամփորդող և շատ բան իմացող Հովելը հաղորդել էր այն պայքարների մասին, որոնց ընթացքում նոր Բաբելոնը, արքայական մի նորահաստատ գերդաստանի կողմից ղեկավարվելով, դուրս էր եկել Նինվեի խնամակալությունից: Կար նաև դրանից ավելին. հեռավոր տափաստաններից և ձյունապատ լեռներից անծանոթ և անանուն ժողովուրդներ արշավում էին և սպառնում երկրի տիրակալներին: Ոչ ոք չէր հասկանում այդ ժողովուրդների լեզուն, ոչ իսկ ճարտարախոս Հովելը: Նրանց կապարճները նման էին բաց գերեզմանների, և բոլոր տղամարդիկ էլ հերոսներ էին: Հովելի պատմածներում,— ինչպես նրա կասկածոտ հայրն էր ասում,— դժվար էր զանազանել ճշմարտությունը ստից: Այսուամենայնիվ, թվում էր, թե որոշ բաներ կային, որ ինքը չէր հնարել, քանզի վերջին ժամանակներում թագավորության ամբողջ տարածքում, ինչպես նաև Երուսաղեմում, հայտնվում էին Ասորեստանի պատվիրակություններ, որոնք մեղմ խոսքերով ու եղբայրական դրսևորումներով ազատում էին ժողովրդին հնուց ի վեր դրված տուրքերից, պայմանով, որ եթե մեծ ազգերի միջև պատերազմներ տեղի ունենան, ոչ մի օժանդակություն չուղարկվի Ասորեստանի դեմ պատերազմող կողմին: Այս համաձայնությունից ի վեր, որը հավասար էր մի ամբողջական անկախության, Հուդայի արքան չնչին տուրքեր էր վճարում միայն Եգիպտոսի փարավոնին: Մի՞թե Հովսիան, առանց որևէ մի պարտադրանքի, կմտածեր փոխել այդ երջանիկ իրավիճակը...

Հստակ չէր, թե ինչ է պատահելու աշխարհի ընթացքի հետ: Նույնպես անորոշություն էր տիրում Տիրոջ և Երեմիայի միջև: Չնայած որ ընտրյալը գիտեր արդեն, որ Տիրոջ կողմից որևէ անհավատարմություն չէր կարող գոյություն ունենալ: Որքան դժվար է մեկի համար դիմանալ անորոշության երկարատև խավարին ու մթնշաղներին, երբ ճանաչել է հանկարծակի փայլատակող կայծակների լուսավորությունը: Երեմիան չէր ենթարկվում որևէ խաբկանքի: Աստված ինքն անորոշ ու շփոթելի չէ, այլ մարդն է այդպիսին: Ինքը՝ Երեմիան, ծանր էր լսողությամբ, տկար էր տեսողությամբ, կարծրացած էր մարմնով: Տերը և ինքն իրարից բոլորովին տարբեր էին:

Նրանցից յուրաքանչյուրը կանգնած էր առանձին, ասես երկու միմյանցից շատ հեռու գագաթների վրա, և կանչում էին իրար, նշան էին անում փոխադարձ, որը, իհարկե, մարդ արարածն ընդհանրապես ի վիճակի չէր հասկանալու: Նրանց միջև կար մի անհաղթահարելի հեռավորություն, էակների մի ամբողջ աշխարհ, մի վայրի թփուտ: Այդ էակների միջև էր մարդկային խոսքը՝ միացնող և բաժանող, տատանվող և բազրիքներից զուրկ մի կամուրջ, որի միջնամասի տախտակները կոտրված են: Ո՞վ կարող է համարձակվել առաջ անցնել նման մի կամրջի վրայով: Երեմիան, որ ոչինչ չէր սիրում ավելի, քան հստակությունը, ստանում էր առեղծվածային բառեր ու նշաններ: Երբ չէր հարցնում, ստանում էր դրանք անակնկալ կերպով, իսկ երբ հարցնում էր, ստանում էր ոչինչ, բացի Տիրոջ մեծ առեղծվածից, որը նրա շուրջն էր միշտ:

Առավոտներն ընդհանրապես անցկացնում էր փոքրիկն իշխան Մաթանիայի և Քուշից (Եթովպիայից) եկած երիտասարդ Աբդիմելեքի հետ: Թագավորը հրահանգել էր, որ Երեմիան իր կրտսեր որդուն դաստիարակի Տիրոջ ուսմունքի մեջ, որը նախատեսված էր այդ տարիքի տղաների համար: Հովսիայի մյուս երկու որդիները վաղուց արդեն անցել էին սովորելու տարիքը: Եղիակիմն ապրում էր՝ ջանալով թաքցնել հոր հետ ունեցած իր հակասությունը: Երուսաղեմից դուրս էր նրա շքեղ տունը, որը կառուցել էր իր և իր կնոջ՝ Նեհուստայի (Նեսթա) համար: Ամեն ինչ, որ անում էր Եղիակիմը, գրգռում էր Հովսիայի բարկությունը: Առաջին հերթին նրա շռայլ ծախսող լինելու մոլությունը: Ամեն օր տարբեր երկրներից գալիս էին շատ հարուստ քարավաններ և խռնվում թագաժառանգ իշխանի պալատի առաջ: Թվում էր, թե աշխարհը նրա համար չէր կարողանում բավարար չափով բալասաններ, համեմունքներ, օծանելի յուղեր, բուրավետ նյութեր և թանկարժեք խունկեր հայթայթել, որոնք անհաշիվ քանակով սպառվում էին իր տանը: Սակայն այն, ինչ որ ամենից շատ զայրացնում էր թագավորին, դա *մասպաբան* էր, եգիպտական վիթխարի ու շքեղ դամբարանը, որը երիտասարդը հանձնարարել էր կառուցել, որպեսզի ապագայում այնտեղ ամփոփեն իր դիակը: Եվ ամենից ամոթալին այն էր, որ դամբարանը շատ հեռու էր Ուսիյահի պարտեզից, որտեղ Դավթի որդիների համեստ շիրիմներն էին: Ճիշտ է, Տերն իր ծառայի՝ Հովսիայի, չափահաս որդիների հետ բարյացակամ չէր

եղել: Հովաքազը՝ Ամիտալի երեց որդին, մեղմաբարո և ցրված մի երիտասարդ էր, որը դատարկ և անիմաստ աչքերով էր նայում աշխարհին և հավասարաչափ դժվարությամբ ըմբռնում թե՛ սուրբը և թե՛ երկրայինը: Եթե Երուսաղեմի մարդիկ իրենց թագավորին կոչում էին երկրի ամենից արագաշարժ անձը, ուրեմն Հովաքազին էլ պետք է կոչեին երկրի ամենից դանդաղաշարժ մարդը: Այնուամենայնիվ, արագաշարժ Հովսիան Իսրայելի ցեղերի տարածքները ձիով կատարած իր բոլոր բիրտ հետազոտությունների ընթացքում իր հետ քարշ էլ տալիս դանդաղաշարժ Հովաքազին՝ ստիպելով նրան առավոտից իրիկուն թամբին նստած մնալ և ամեն տեսակ անարդարություն հանդուրժել: Նրա կյանքի միակ իմաստը կարծես թե իր մատների մեջ էր, որոնք միշտ անհանդարտ վիճակում էին՝ հետամուտ մի բան գտնել շաղելու և ձևավորելու համար:

Փոքրիկը Մաթանիան էր, որ ամենից շատ նմանվում էր իր հորը, հատկապես նկարագրի տեսակետից: Նա կարող էր նուրբ ու քնքուշ լինել, գուրգուրել մոր ծաղիկները, բայց մի ակնթարթ հետո դրանք անտեղի զայրույթով ոտքով տրորել: Բավական էր, որ Երեմիան միայն մեկ անգամ արտասաներ մի ասացվածք նրա առաջ, և իշխանն անմիջապես անգիր էր անում այն: Երբեմն էլ անուշադիր և համառ կերպով նայում էր դիմացը, և ոչ մի միջոց չկար սթափեցնելու նրան: Այն ժամանակ նա գրեթե նմանվում էր պարի սիրահար Աբդիմելեքին, որն ի վիճակի չէր կենտրոնացնելու իր մտքերը որևէ բանի վրա: Նրա նիհար ոտքերը միշտ շարժվում էին: Նրա մուգ կարմիր բերանը միշտ շաղակրատում էր՝ իրարից անկապ հարցեր տալով և Երեմիային հուսահատեցնելով, որի պատճառով նա բազմիցս գանգատվում էր՝ ասելով. «Էլ բավական է, դու հետաքրքրասեր սատանա»: Դրա վրա Աբդիմելեքը թարթում էր աչքերը վախեցած, որն ուզեցել էր պարզապես հարյուրավոր հարց ու պատասխաններով փոխարինել այն, ինչ որ իրեն բաժանում էր Մաթանիայից:

Երեխաները, սակայն, սիրով էին կապված իրենց ուսուցչին: Հատկապես, երբ ավարտվում էին գրավոր վարժությունները, և Երեմիան սկսում էր նկարներ գծել աստվածային ու մարդկային աշխարհների վերաբերյալ, նրանք եռանդով գալիս էին իր ծնկների մոտ և ծածկում դրանք իրենց փոքրիկ ձեռքերով: Երկուսն էլ, իհարկե, ավելի հաճույքով էին լսում ծանոթությունները մարդկային ու բնական աշխարհի

մասին, քան աստվածային, բայց հնարավոր չէր սիրել դրանցից մեկն առանց մյուսի: Ուսուցիչն ամենից առաջ փորձում էր Մաթանիայի սրտում սեր առաջացնել բնական աշխարհի նկատմամբ: Նրանց առաջ, օրինակ, նա բացում էր անապատի մի նկար և անդրադառնում դրա մելամաղձոտ տեսքին ու ընդգրկած վտանգներին: Դաստիարակի բերանից բխում էր կյանքի մի անզսպելի հեղեղ, և երեխաներն էլ ունկնդրում էին նրան լարված հետաքրքրությամբ: Օրերից մի օր յոթնամյա Մաթանիան սեղմվեց Երեմիայի լանջին և դեմքը ծածկելով այնտեղ՝ կմկմաց.

— Դու, որ ամեն ինչից տեղյակ ես, գիտե՞ս արդյոք, եթե Մաթանիան թագավոր է դառնալու...

Հայտնի չէր, թե ինչ էր կատարվում փոքրիկ իշխանի ներաշխարհում, սակայն Երեմիան սոսկաց այդ բիրտ ու երեխայի համար անսովոր հարցից: Հանգստացնելով նրան՝ ձեռքը դրեց վրան և կտրուկ ասաց.

— Քո ավագ եղբայրները քեզնից առաջ են...

Փոքրիկի այդ քնքշալից վերաբերմունքից կարճ ժամանակ անց Հովսիան հանկարծակի վերադառնում է իր ճամփորդություններից: Նա անմիջապես իր մոտ է կանչում Երեմիային.

— Տիրոջ կողմից ստացե՞լ ես որևէ պատգամ... Տեսե՞լ ես արդյոք որևէ երազ...

Երեմիան դառնորեն շարժում է գլուխը: Նույն գիշերը, սակայն, տեսնում է մի երազ:

* * *

Սրբարանի գավիթի միջանցքում՝ Բոազ և Յահին սյուների արանքում, բացված էր սպիտակով ծածկված մի սեղան, որը մի անհանգստացնող երևույթ էր, քանի որ խախտում էր տաճարի ներքին կանոնակարգի օրենքները: Ներքին գավիթը, ուր Երեմիան հառել էր նայվածքը, բոլորովին ամայի էր ու դատարկ: Այնտեղ կիսամութ էր, կամ, ավելի ճիշտ, պողպատյա ու սառած աղջամուղջ, որը, սակայն, ոչ մի առավոտվա առաջընթացը չէր և ոչ էլ հետևում էր որևէ օրվա: Դա այն աղջամղջային լուսավորությունն է, որը գոյություն ունի երկու ժամանակահատվածների

միջև, երկու հավիտենականությունների միջև: Տերը դեռևս աշխարհներից մեկն ամբողջությամբ չէր դատապարտել և ոչ էլ մյուսն ամբողջությամբ ծրագրավորել:

Երեմիան կանգնած էր երկար սեղանի հետևում՝ ճիշտ կենտրոնական մասում, դեմքը շրջել էր դեպի ընդարձակ գավիթը: Նրա սիրտը լցված էր մեծ մխիթարությամբ և խաղաղությամբ, ինչպես չէր պատահել երկար ժամանակից ի վեր: Նա հնազանդվել էր իր հորը,— փառք Հավիտենականին,— չէր մերժել այն մեծահոգի առաջարկը տաճարում քահանայագործելու, որը Քեղկիայի դժվարին միջամտությամբ ու խնդրանքով էր իրագործվել: Այժմ, իբրև իր հնազանդության արդյունք, օրհնությունն առատորեն իջել էր իր վրա, քանզի հետզհետե գիտակցում էր, որ Տիրոջ կամքն իրեն ոչ միայն պարզ քահանայի, այլև մինչև իսկ քահանայապետի աստիճանին էր բարձրացրել: Ինչպես յուրաքանչյուր ճշմարիտ քահանայապետի սրտում էր, իրենում էլ որևէ աղտեղի մտածմունք չափված ու զսպված էր, որևէ պատկեր ճնշված, որպեսզի հաշվենկատ կամ մարմնական ցանկություններ չպղծեին ու չստորացնեին իրեն, ինչպես որ դրանք անկարգ կերպով պղտորում են մարդկային հոգին: Իր սկզբնական, երանելի և անարատ հյուսվածքի շուրջն իր մարմինը պատրաստում էր, իբրև երկրորդ երանելի և անարատ հյուսվածք, ձյունասպիտակ, մի կտորից բաղկացած և առանց կարի հանդերձանք:

Երեմիան շրջում է իր նայվածքը դատարկ գավիթի կապտավուն աղջամուղջից և խոնարհեցնում այն սեղանի վրա, որից բավականին բարձր էր իր հասակը, քանզի պաշտոնի բարձր հեղինակությունն ազդել էր նաև իր կեցվածքի վրա՝ իբրև Աստծու ավագ սպասավորի: Իր աչքերի առաջ՝ սեղանի կենտրոնում, նա նշմարում է մի վիթխարի ոսկյա բաժակ, որն իր տեսքով մի քիչ հիշեցնում էր գերդաստանի այն բաժակը, որ ունեին Քեղկիայի տանը, սակայն այս մեկը շատ ավելի մեծ էր, կազմված ծեծած ոսկուց և զարդարված զանազան դրվագներով: Հանկարծակի մի ներշնչանքով Երեմիան վերահասու է դառնում, որ դա Եգիպտոսում Հովսեփին է պատկանել, և արբեցումի ընթացքում այն իր մեջ պարփակել է ճշմարտության յուրահատուկ մի ուժ: Համաձայն դպիրներից մեկի կողմից ավանդված ծանոթ զրույցի՝ Հովսեփի բաժակը ժառանգաբար փոխանցվում էր խորհրդավոր ու թաքնված սերունդների

միջոցով, մինչև որ Իսրայելի և ամբողջ ստեղծագործության նորոգման օրն այն գար և հասներ հենց նրա ձեռքը, ով դարձի էր մղել ժողովրդին: Երեմիան տեսնում է, որ ոսկյա բաժակը մինչև ծայր լցված էր մուգ գինիով: Սակայն երբ նա ավելի է խոնարհվում բաժակի վրա, զարմանում է, որ միջի ըմպելին նման չէր տեղական գինու՝ հնձանված Եփրեմի ու Շարոնի այգիներից, Կարմելի բարձունքներից և Հերմոնի բլուրներից: Նրան պակասում էր հանրածանոթ սև խաղողի կապույտ երանգը: Այն ժանգի դարչնակարմիր գույնի մի խմիչք էր՝ առանց փայլի և բուրմունքի: Եվ Երեմիան գուշակում է, որ դա պետք է լինի արյան գինի՝ քամված մի խորհրդավոր որթատունկից, որը Տիրոջ արևը լցրել էր զոհերի արյամբ: Նրա աչքերը շարունակում էին սևեռված մնալ բաժակի վրա, և նրա մտքերը դեռ փորձում էին խորասուզվել այդ հրաշքի մեջ, երբ միանգամից իր ծոծրակի շատ մոտ լսում է տղամարդու մի հստակ ու մեղմ ձայն.

— Երեմիա, պատրաստվիր, գալիս են քո հյուրերը: Մի՛ մոռացիր այն, որ հենց դու ես խնջույքի հրավիրել աշխարհի ժողովուրդներին:

Նոր հիմա զգում է Երեմիան, որ ինքն անտեսել էր մթնշաղային մթնոլորտի միջից մի խուլ շշուկ, որը որոշ ժամանակից ի վեր ամեն կողմից ներթափանցում էր: Նա վեր է բարձրացնում գլուխը և տեսնում է ժամանակների միջև ընկած քարացած ամպերի ներքո, որոնք սառել էին տաճարի վերևում, թռչնանման հսկա կերպարանքների մի երամ: Այդ կերպարանքները միասնական թռիչքով իջնում էին սրբարանի նախագավիթում և հանգրվանում հանգած զոհասեղանի շուրջը: Դրանք մարդկային հնադարյան հսկաներ էին՝ օժտված թևերով: Հյուրընկալ քահանայապետի համար, սակայն, ամենազարմանալին այդ հսկա թևերով մարդկանց երկվությունն էր: Քանզի, բացի արծվի, անգղի և բազեի թևերից, որոնցով եկել–հասել էին մինչև տաճար, մարդկային այդ յուրաքանչյուր դեմքի տակ ու մարմնի մեջ պարփակված էր նշմարելի կերպով ձևավորված մի խորհրդանշական կենդանի՝ ցուլ, առյուծ, շնագայլ, հովազ, օձ, դելֆին: Անձերի ունեցած այս երկվությունն ի հայտ էր բերում մի շարունակական տատանում մարդկայինի և անասնականի միջև: Շատ անգամ, սակայն, այնպես էր լինում, որ մարդկայինը կազմում էր մի ամբողջական արտաքին դիմակ, որի միջից պոռթկում էր անասնականը, ինչպես բոցը այրվող մի տան պատուհանից դիտելիս:

Մեղմ ու հստակ ձայնը ստանձնել էր պաշտոնը մի արարողապետի և հայտարարում էր անունները հյուրերի: Սկսում է Եգիպտոսից: Երեմիայի աջ կողմում անխոս նստում է մի մարդ արքայական տոհմից, որը նման էր ժայռից քանդակված մի կոթողի Նեղոսի ափին: Նա անշարժ էր իր տեղում, բայց իր դեմքին ու մարմնին մեջընդմեջ ուրվագծվում էր Ապիս եզան շնչող կերպարանքը: Դրան հաջորդում էր Բաբելոնը՝ երկար մռութով մի առյուծամարդ, որը նստում է Երեմիայի ձախ կողմում: Եգիպտոսի մոտ տեղ է գրավում Ասորեստանից եկած մարդը, որի կերպարանքում երևում էր և անհետանում Ասորեստանի թևավոր ցուլը՝ աճող և նվազող տեսքով: Եվ այսպես շարունակաբար: Անունների հայտարարությանը հետևում էր տվյալ անձի ներկայությունը: Այն էակը, որ ներկայացնում էր ծովում կառուցված Տյուրոս քաղաքը, մի դելֆին էր, որն իր ընդունած տղամարդկային կերպարանքով մեկ կողմից դեպի մյուսն էր շարժվում և նայում չորս կողմն իր ոչինչ չարտահայտող ձկան աչքերով: Հազորը՝ Սիրիայի ժողովուրդը, իբրև խորհրդանիշ ուներ մի շնագայլ, Մովաբը՝ մի հովազ, Եդովմը՝ մի գայլ, Արամը՝ մի եղնիկ, Աշկելոնը՝ ծովային մի օձ, իսկ Ամոնի ու հեռավոր Ելամի խորհրդանշող կենդանիներն էլ անորոշ էին: Արդեն տասնմեկ հրավիրյալներ նստել էին բրոնզյա սյուների արանքում դրված սեղանի խնջույքին, և ահա ձայնը ծանուցում է մի նոր հրավիրյալի մասին, որը, ըստ երևույթին, ուշացել էր.

— Անծանոթ ժողովուրդը:

Անմիջապես թռչելով իջնում է մի արծիվ մարդ և նստում Երեմիայի ու բաժակի դիմացի ազատ տեղում: Ձայնը հորդորում է.

— Ինչ ես սպասում, հյուրերդ ծարավ են: Նրանց խմելու բան տուր, թող սկսվի խրախճանքը:

Երեմիան՝ Իսրայելի քահանայապետը, բարձրացնում է բաժակը և խմելու համար տալիս Եգիպտոսին՝ ստրուկների կառավարչին, իր հին թշնամուն: Եգիպտոսը խմում է և բաժակը փոխանցում Ասորեստանին: Ասորեստանը խմում է և բաժակը փոխանցում է Տյուրոսին: Տյուրոսը խմում է և բաժակը փոխանցում է Եդովմին: Եդովմը խմում է և բաժակը փոխանցում է Մովաբին: Մովաբը տալիս է բաժակն անծանոթ ժողովրդի ազնվական մարդուն: Նրանից բաժակն անցնում է Ամոնին, Արամին, Ելամին, Աշկելոնին: Այնուհետև բաժակն ստանում է Հազորը՝ քոչվոր

այն մեծ ժողովուրդը, որի վրանները տարածվում էին մինչև Տավրոսյան լեռները: Վերջում խմում է Բաբելոնի առյուծը, որը մի վայրենի հարվածով ոսկյա բաժակը դնում է սեղանին՝ ուղղակի Երեմիայի առջև:

Ժողովուրդների այդ խնջույքի տասներեքերորդ մարդը՝ սպիտակ և առանց կարի զգեստով, կրկին բարձրացնում է բաժակը և բռնում իր աչքի մոտ: Եվ, ինչ տարօրինակ բան, արյան կարմիր գույնի զոհաբերության գինուց այլևս ոչ մի կաթիլ չէր մնացել, որպեսզի ինքն էլ կարողանար խմել և խրախճանքին մասնակցել: Այնուհետև բաժակի արբեցումն ազդում է Իսրայելի քահանայապետի հյուրերի վրա: Սրբարանի շեմում իրենց նստած տեղերից վեր են կենում, երերալով իջնում են դեպի նախագավիթը տանող տասն աստիճանների վրայով, բռնում են իրար ձեռքերից, որոնք նաև ճիրաններ են, թաթեր ու մագիլներ, սկսում են հանդիսավոր ու լուռ շուրջպար պարել: Գնալով ուժեղանում է գինու ազդեցությունը, որ Տերը նրանց համար էր պատրաստել: Պարողների շղթան կազմալուծվում է: Թվում է, թե նրանցից յուրաքանչյուրը սոսկալի ցավի մեջ է, ընկնում է գետնին ու գալարվում տանջահար: Ամենից սարսափելին, սակայն, այն էր, որ տասներկու դեսպանները լեզու չունեին: Ժամանակների միջև ընկած աղջամուղջի դատարկության մեջ ի վիճակի էին միայն հաչոցի, ոռնոցի, կռնչոցի կամ ճռճռոցի նման ցավագին ճիչեր արձակել: Արդյոք Տիրոջ գինին այրե՞լ էր նրանց ներսը: Այդ ժամանակ Երեմիան գիտակցում է պատճառը նրանց անպատում տանջանքների: Գինովությունը հյուրերի մեջ առաջացնում է ցնցող փոփոխություն: Խորհրդանիշ կենդանին՝ նրանց մեջի սկզբնական էությունը, որը հստակ կերպով զատորոշվում է իբրև անասնական բնություն, աստվածային գինու ազդեցությամբ նվազում է, թվում է, թե թառամում է և անհետանում: Մարդկայինը, սակայն, վեր է հառնում անասելի երկունքով: Ամեն անգամ ավելի թույլ ու հազվադեպ են աճում առյուծի երախն ու ցուլի եղջյուրը: Ամեն անգամ ավելի են նվազում ձեռքերի մագիլները: Նա, ով ամենից շատ է տառապում այս կերպարանափոխությամբ, անծանոթ ժողովրդի արծիվ մարդն է: Խլացուցիչ մի աղաղակով նա փոքր-ինչ վեր է բարձրանում օդի մեջ և նորից ու նորից ցած իջնում՝ իր շուրջը սփռելով իր թևերի շագանակագույն փետուրները: Բոլոր հրավիրյալները բարձրացնում են իրենց բազուկները և ուղղում Երեմիայի

վրա: Կուզենային արդյոք հարձակվել վրան ու ոչնչացնել նրան՝ իբրև վրեժխնդրություն նրա համար, որ տվել էր իրենց խմելու արյան գինի, որն այրում էր իրենց ներաշխարհը և ոչնչացնում իրենց էության հատկանիշը: Փնտրում էին արդյոք նրա օգնությունը, թե՞ անիծում էին նրան իրենց ճռինչի, հաչոցի, մռնչյունի, սուլոցի ձայներով:

Արթնանալով՝ Երեմիան չգիտեր խնջույքի նշանակությունը, թե դա օրհնություն էր կամ անեծք, թե Տերը ժողովուրդներին Իսրայելի միջոցով բարկությա՞ն, թե՞ փրկության բաժակ էր մատուցել: Մի անգամ ևս Տերը մնում էր անհասկանալի և անորոշ:

* * *

Թագավորը բոցավառ աչքերով մեկնաբանում է Երեմիայի երազը հարբեցումի բաժակի մասին: Այդ ընթացքում, առաջին անգամը լինելով, նա բացահայտում է երազատեսին իր վիթխարի ծրագիրը: Այսպիսով, ժողովուրդներին մատուցված հարբեցումի բաժակը Տիրոջ ցասման բաժակն էր, իսկ նրա հարբեցնող արյունոտ գինին Իսրայելի զոհաբերության արյունը չէր, ինչպես գուցե կարող էր ենթադրել Երեմիան իր չափազանց բարեխիղճ քննարկումների ընթացքում: Խելացնոր պարը և խնջույքին հրավիրված ժողովուրդների ջղապիրկ ցնցումներով ուղեկցված ինքնակերպարանափոխությունը խորհրդանշում էր նրանց կենդանակերպ կուռքերի և սեփական այլասերված բնության վերջնական պարտությունը: Իրականում Տերը երիտասարդ ու անփորձ հոգուն, ում հայտնվում է, նախընտրում է անորոշությամբ ծածկված մնալ, մինչդեռ թագավորի հոգուն, ում ինքը չի հայտնվում, թույլ է տալիս անսքող տեսնելու իր նպատակը: «Ժամանակը հասունացել է,— այս խոսքն ասելիս թագավորը մեղմացրեց իր ինչեղ ձայնը շշնջալու աստիճան,— և իրեն՝ Հովսիային, տրվել է մեծ հանձնարարություն՝ հիմնելու «նոր Դավթի թագավորությունը», որից բխելու էր ճշմարտությունը: Այո՛, ինքն է նոր Դավիթը, որի մասին մարգարեները գուշակել էին անհիշելի ժամանակներից, դրանում ինքը նվազագույն կասկած անգամ չունի: Մի՞թե չուներ այդ առումով շնորհների առատաբուխ վկայություններ:

Դրանցից ամենամեծն էր այն, որ Տերը չէր ընտրել ոչ մի ուրիշ դարաշրջան և ոչ մի այլ թագավորություն, քան հենց իրենը՝ Հովսիայինը՝ վերագտնելու համար կորած ուսմունքն ու օրենքը, ինչպես նաև առաջարկելու մի նոր ուխտ: Երբ Երեմիան ակնարկում է իր նախահոր՝ Դավթի մասին, արքան իրեն համարում է բոլորովին արժանի այդ պատկանելության համար, քանզի, ի տարբերություն Դավթի, իր խղճի վրա չի ճնշում ոչ մի ծանր մեղք: Մի՞թե ինքը չէր, որ նոր ուխտի հաստատման պահից սկսած ամեն ջանք թափել էր իր սրով ու դատաստանով գործադրել տալու օրենքը և պահպանելու ուսմունքը: Մի՞թե ինքը չէր, որ համառորեն արշավում էր երկրով մեկ և ոչ միայն իր ժառանգությունը համարվող Հուդայի և Բենիամինի միջով, այլև Իսրայելի կողմից պարտված բոլոր ցեղերի տարածքներով մինչև Դան հյուսիսում, որպեսզի դարձի բերի անտարբերներին ու տկարներին: Իհարկե, բավարար չէին գարշելի ու պիղծ խորանների քանդումը, պոռնկության աստվածներին նվիրված կանաչ ծառերի հատումը, Աստարտին հատկացված անկյունների սրբագործումը խունկի ծխումով: Դրանցով միայն հնարավոր չէր ամբողջությամբ վերացնել մեծ չարիքը և խափանել սպասվող անկումը: Բավարար չէր նաև տարբեր վայրերից հավաքել մարդկանց, ընթերցել նրանց համար օրենքից ու վարդապետությունից, ինչպես նաև հորդորել, որ չարիքի առաջն առնեն և հնազանդվեն աստվածային փրկաբեր պատվիրաններին: Մարդ արարածը, սակայն, անխոհեմ էր ու ծույլ: Տերը և Հովսիան ակնկալում էին ավելին, քան խնկարկումներն ու պաղատանքները: Նրանք սպասում էին հաղթանակի: Տերը հաճույքով կցանկանար իմանալ, թե ինչ էր անելու նրա ծառա Հովսիան իր համար: Երբ նա ուժեղացներ իր սեփական իշխանությունը, երբ նա այլևս ոչ թե փոքր, այլ մի մեծ արքա լիներ, այն ժամանակ ամբողջ երկիրը պիտի թնդար Տիրոջ ուսմունքով ու փառքով: Այն ժամանակ վերստին պիտի միանան Իսրայելի և Հուդայի սգավոր եղբայրները, սկսած Հերմոնից և իջած մինչև Եգիպտոսի գետը...

Որքա՜ն հուսադրող և դրական ազդեցություն է թողնում Երեմիայի տեսիլքը թագավորի ծրագրերի վրա: Ճ՞երբ, եթե ոչ հիմա, հասել է ժամը, որ բոլորին փոխանցվի հարբեցումի ու ցասման բաժակը: Մեծերը տկարացնում են իրար մեռնելու աստիճան: Նրանք բոլորը և նրանց հետ՝

նաև փոքրերը՝ մշտական թշնամիները, պիտի խմեն բաժակից ու գինովանան: Վերջում նրանք Տիրոջը պիտի պատկանեն:

Թագավորը մոտ է քաշում երազատեսին և գրկում: Նա ինքն էլ հարբել էր այն վիթխարի հեռանկարներով, որ այդ տեսիլքի միջոցով բացվել էր իր առաջ: Միայն մարդկային բանականությամբ հնարավոր էր գնահատել պահի անկրկնելի երանությունը: Առյուծն ու թևավոր ցուլն իրար են փաթաթված: Աշխարհն առանց տերերի է... Սակայն թագավորի համար ավելի ոգևորիչ են այն սրբազան արժեքները, որոնք ինքը մեծ հաճույքով է փայփայում իր սրտում: Դրանց շարքում է Հուլդայի գուշակությունը, որը մշտապես կրկնվում է իր մտքում. «Տես, ես կժողովեմ քեզ քո հայրերի մոտ, որպեսզի դու խաղաղությամբ իջնես գերեզման և ոչ մի դժբախտություն չտեսնես»: Հոյակապ երաշխիք, կրկնակիորեն հոյակապ, որովհետև Տերն անձամբ փակել էր ու կնքել այս փառավոր ճշմարտությունը փոխանցողի բերանը՝ իբրև նշան, որպեսզի դրանից ոչ մի բառ հետ չառնվի: Որքան մեծ ուժ է ստանում Հովսիան այն համոզումից, որ Տիրոջ բացահայտ խոստումի համաձայն՝ պատերազմում իրեն ոչ մի դժբախտություն չի պատահելու, որ ինքն իր թագավորության խաղաղության մեջ է գտնելու իր վախճանը: Եվ այնուհետև՝ դատաստանի օրվա եռացող կաթսան թեքվելու է հյուսիսից հարավ: Թագավորը չէր մտածում պատերազմել հյուսիսային և հյուսիսարևելյան իշխանությունների դեմ, այլ նրա նպատակն էր խորամանկորեն պարտավորեցնել Միջագետքում հաղթողին հաստատելու նրա հսկողության ներքո Հավիտենականի արքայությունը: Գործը, սակայն, որ Հովսիային պիտի ազատագրեր ու փառավորեր, ուղղված էր Աստծու հին ու ավանդական թշնամու՝ Նեղոսի ստրկատիրական տան դեմ: Բազմաթիվ ամիսներից ի վեր Նեքավովը՝ Պսամմետեխի որդին, որը նոր փարավոնն էր և ժողովրդի կողմից «բարի աստված» հորջորջված, սպառազինում էր չորս հարյուր նավերից բաղկացած մի նավատորմ, որը պիտի խարսխեր Կարմելյան լեռների ծովածոցում: Նեքավովը մտածում էր նավերի ընդերքում ապաստանած իր բանակն Իսրայելի տարածքներով առաջնորդել ընդդեմ Ասորեստանի, որպեսզի ոչ թե Բաբելոնի աստեղապաշտ թագավորները, այլ ինքը՝ արև աստծու մարմնավորումը, հափշտակի աշխարհի տիրապետությունը: Այս

առնչությամբ փարավոնն արդեն ուղերձ էր հղել Հուդայի թագավորին: Սակայն Հուդայի թագավորը ծրագրում էր Մեգիդոյի (Մակեդով) մոտակա կիրճում ոչ միայն Նեքավովի ճանապարհը փակել, այլև նրան ու նրա բոլոր վարձկան զինվորներին ծովը շպրտել: Այդ նպատակով նա, առանց շունչ առնելու, տքնաջան աշխատանքով և չափազանց գաղտնի կերպով Հուդայի բոլոր քաղաքներից ու գյուղերից, անհրապույր շուկաներից ու ագարակներից հավաքում է երիտասարդ տղամարդիկ, զինում է նրանց և մարզում՝ նշանակելով հրամանատարներ, գնդապետներ, բանակի մարզպետներ, սպաներ: Կանխավ որոշում է նրանց զորակոչման օրը և հավաքվելու վայրը: Զորքը բաժանում է մասերի՝ մանրամասնորեն հոգ տանելով նրանց բոլոր կարիքների համար: Հովսիայի սիրտը լցվում է խանդավառ ուրախությամբ, որովհետև աշխատանքը ծրագրվել էր հաջողությամբ, և ինքը լիովին պատրաստ էր այն իրագործելու: Ոչ միայն իրեն, այլև իր բոլոր զորավար իշխաններին թվում էին իրենց դիրքերը շատ ավելի նպաստավոր, քան դրսից եկած և այդտեղ տեղակայված բանակինը, նույնիսկ եթե այն իրենցից տասն անգամ ավելի ուժեղ լիներ: Սակայն ոչ թե իր զորքի բացահայտ առավելությունն էր նրան մղողը, այլ այն նոր նշանը, որ Տերը հայտնել էր իրեն Երեմիայի տեսիլքի միջոցով: Հայրական քնքշանքով նա շոյում է նրա այտը.

— Երեմիա, կրկին անգամ օգնեցիր քո թագավորին հասնելու ճշմարտությանը... Ո՞վ էր այն առաջինը, ում քո ձեռքը մատուցեց ցասման բաժակը... Դա Եգիպտոսն էր, փարավոնը: Հասկանո՞ւմ ես այդ նշանի իմաստը... Ես եմ լինելու այն անձը, որ Եգիպտոսին արյան գինի է մատուցելու... Թող իմ որդիներն էլ մի օր Բաբելոնին տան խմելու...

Հետզհետե թագավորը բացահայտում է իր մտադրությունը: Երեմիան ոգևորված էր, բայց միևնույն ժամանակ՝ ցնցված: Այնուամենայնիվ, նա ամենայն հստակությամբ գիտեր, որ Հովսիան անլուրջ կերպով է մեկնաբանում Տիրոջ կամքը, ինչպես որ իրեն հաճելի է: Սակայն ի՞նչ արժեք ունի այդ գիտենալը, քանի որ հենց ինքն անձամբ հստակ ոչինչ չէր ներկայացրել թագավորին, այլ միայն հեղձուցիչ անորոշություն էր փոխանցել նրան: Հիմա ինքն անձկությամբ էր ակնկալում մի ճշմարիտ ու հստակ խոսք: Սակայն Տերը նրա հետ չէ: Հովսիան արդեն դուրս էր

եկել սենյակից: Գվարդիայի բակից պատուհանի միջով հասնում է նրա խրախուսական և հրամայական ձայնը, ինչպես նաև ձիերի սմբակների դոփյունը սալահատակին:

* * *

Դրանից հետո չորրորդ նորալուսնին թագավորը հրավիրում է երկրի ավագաժողով, որպեսզի Սողոմոնի գահից իր խոսքն ուղղի Երուսաղեմին և Հուդային:

Սրահը լցվել էր խանդավառ աղմուկով: Աստիճանաբար ի հայտ են գալիս ծրագրերը, ռազմական սպառազինությունը: Բազմաթիվ *շարքաթներից* ի վեր Երուսաղեմի փողոցներում և տաճարի նախագավթում ամեն անգամ ավելի ուժեղ կերպով մի նոր նշանաբան էր հնչում՝ «Դավթի թագավորությունը»: Սրահում հավաքվածների ժողովը մերթընդմերթ ընդմիջվում էր այդ ոգևորիչ բացականչությամբ:

Դրա փոխարեն գահասրահում, որի մուտքերը խստագույն կերպով վերահսկվում էին զույգ շարք թիկնապահներով, տիրում էր խոր լռություն՝ հղի ապագա իրադարձություններով: Թագավորը նստել էր Սողոմոնի՝ ոսկուց ու փղոսկրից շինված գահին, որը թվում էր կախված սրահի կենտրոնական մասում: Նրա ոտքերի տակի առաջին աստիճանին՝ Հուդայի խորհրդանիշ և պահապան զույգ ոսկյա առյուծների արանքում, նստել էին արքայազներ Եղիակիմն ու Հովաքազը: Եղիակիմն այդ օրն էլ,— ինչպես միշտ,— առաջացրել էր հոր զայրույթը, քանի որ փոխանակ դավթյան երկնագույն կապույտ զգեստի, հագել էր չափազանց աչքի զարնող դեղին գույնի մի զգեստ, կրում էր սիրամարգի փետուրներով մի հովահար և հովվական կորագլուխ մի գավազան, որոնք Եգիպտոսի հանրածանոթ խորհրդանիշներն էին և անհամատեղելի այդ օրվա ու վայրի հետ: Դրանք այլևս հնարավոր չէր անմեղունակ կերպով և նուրբ խոսքերով անվանել իբրև «խեղկատակություն» կամ «արտասահմանը կապկելու մոլություն»: Այնուհետև լարվածությունը գահասրահում սաստկանում էր, այնպես որ ոչ թագավորը և ոչ էլ այլ ոք ուշադրություն չէր դարձնում Եղիակիմի վրա, որն իր գրկում փռել էր փոքրիկ

նավակների մի հավաքածու, կավե անոթներ ու սրվակներ, որոնց բուրումնալից պարունակությունը քննում էր զգուշավոր լրջությամբ, նման անուշահոտ յուղեր վաճառողի, անկախ սրահում ընթացող ավազաժողովի: Երկու իշխանների նստած տեղից դեպի ներքև տեղ էր գրավել Դավթի ամբողջ տունը, որին միացել էր նաև մի մարդ, որը թեև արյունակցական կապ չուներ այդ բարձր գերդաստանի հետ, սակայն լինելով արքայի անները՝ իրավունք էր ստացել նստելու այդտեղ: Երեմիան ճանաչում է իր հին հյուրընկալին և անվանակցին՝ Լիբնայի իշխանին, որն այնքան հպարտ էր Աստծու խստության ու բռնության մասին ունեցած իր գաղափարներով:

Սողոմոնի բարձրադիր գահի աջ և ձախ կողմերում կանգնել էին թագավորության պաշտոնատար իշխանները: Ռազմական պաշտոնների պատասխանատուներն անհամեմատ ավելի էին փայլում, քան հասարակական կարգուկանոնի պահպանողները: Հակառակ ամառվա ճնշիչ շոգին՝ նրանք այդտեղ ներկայացել էին իրենց ամբողջական զրահավորումով. Մասիասը՝ իբրև զորապետ իշխան, իսկ Ասայիան՝ իբրև ամբողջ թիկնազորի վերակացու: Իրենց ոսկյա շքեղ վահաններին կոթնած՝ նրանք, իբրև իրենց այդ սպասված ժամին հասած մարդիկ, անվրդով նայում էին ժողովականներին: Բեմահարթակի առջևի ազատ մասում դրվել էր մի շարժական բազկաթոռ, որի մեջ կուչ էր եկած կորաքամակ և ողջ Երուսաղեմի ամենից իմաստուն ու զարգացած մարդը՝ գրագրապետ և վերագտնված ուսմունքը վերծանող Սափանը: Նա այժմ այնքա՜ն էր տկարացած, որ այլևս չէր կարողանում օգտագործել իր ոտքերը: Այդուհանդերձ, նա դեռ կարողանում էր լավ օգտագործել իր հյուծված, զառամյալ գլուխն ու ոսկրացած ձեռքերը: Իր գրկում կար մի հսկա մագաղաթյա բաց գիրք, որի տողերի ու հատվածների վրայով սահում էին իր մաշված մատները, ինչպես Աստծու սարդեր, հյուսելով ու հանգուցելով անտեսանելի թելեր:

Երեմիան հեռվից նայում էր թագավորին, որը թվում էր, թե սավառնում է բարձունքում. նրա պրկված ու կարմրած դեմքն աղավաղվում էր հեռվից նայողի աչքերի դիմաց: Քեղկիայի որդին նստել էր սրահի մեկ այլ պատի մոտ՝ գահից շատ հեռու, մարգարեների համար նախատեսված նստարանին. նրանց մի մասը հրավիրվել էր ավազաժողովին: Չնայած

Հովսիայի ունեցած ջերմեռանդ վստահությանը՝ Աստծուց եկած ու փոխանցված խոսքի նկատմամբ, արքայի գահից բավականին հեռու մարգարեներին հատկացված այդ խեղճ տեղն ապացուցում էր, որ աշխարհն ընդհանուր առմամբ ավելի լավ կարծիք չուներ նրանց մասին, քան որ ունեցել է նույն ինքը՝ Երեմիայի հայրը: Դրան հակառակ՝ երկու կողքերում երկարող պատերին կից և թագավորի գահի մոտ զետեղված էին նստարաններն իսկական հզորների՝ իշխանների և քահանաների: Այդ օրն այդտեղ ներկայացել էին քահանայական բարձրագույն կարգի պետերը՝ գլխավորությամբ *սագանի* և Շեմի պահապանների: Նրանց դիմաց նստել էին քաղաքի բոլոր մեծ ու փոքր իշխանները, գյուղացիական կոշտ ու կոպիտ թագավորները, որոնք նույնպես շատ լավ գիտեին գործածել արորը, ինչպես և սուրը՝ հարկ եղած դեպքում: Երեմիան իրեն ճնշված էր զգում նրա համար, որ ինքը ժողովրդի այդ մեծերի մեջ մի անծանոթ էր: Խռովությունը, որ ինքը, Տիրոջը հնազանդվելով, հրահրել էր տաճարում, թվում էր, թե այդքան երկար ժամանակ հետո և մեծ իրադարձությունների դիմաց, բոլորովին մոռացության է տրվել: Նաև թագավորի պաշտպանող ձեռքը եղել է իր վրա: Հավանաբար միայն մարգարեների նստարանի իր հարևաններն էին հիշում իր այն առաջին գայթակղեցուցիչ ելույթը, քանի որ ինքը զգում էր, թե այդտեղից որոշ սուր, կասկածելի ու խուզարկու նայվածքներ ուղղված էին իրեն: Ինքը՝ Երեմիան, նստել էր մտասույզ և նայում էր ուղիղ առաջ, ոչ աջ և ոչ ձախ: Այդ ընթացքում գունատ դեմքով մի անձ թեքվում է նրա կողմը և ողջունում նրան մելամաղձոտ բարյացակամությամբ: Դա քննիչ Ուրիան էր, որը Հուդա մարգարեուհու վերնասենյակում փարատել էր Երեմիայի կասկածները, իսկ հիմա արժանավորագույն տեղն էր գրավել մարգարեներին հատկացված նստարանին: Մեկ անգամ ևս տեսնել այն մարդու դեմքը, որը մեծագույն փորձառություն ուներ Աստծու հետ հարաբերվելու, հուզմունքով է լցնում Երեմիայի սիրտը: Եվ նա կրկին անգամ զայրույթով, ամոթով ու նողկանքով է նայում այն ատամնավոր ու խորը սպիին, որն աղավաղում էր նրա դեմքի միասնությունը:

Այդ ընթացքում բոլորը շրջվեցին գահի կողմը, որովհետև Ահիկամը՝ Սափանի որդին, հենց նոր էր առաջնորդել փարավոնի դեսպանին արքայի առաջ: Եգիպտացին մի շատ բարձրահասակ մարդ էր, բարձր կնգուղով, որի երկու կողմերից կախված էին երկարավուն ժապավեններ:

Նրա վակասը պսպղում էր յոթ գույներով, մինչ թափանցիկ վերնազգեստի թիկունքին պատկերված էր դեղնագույն թևավոր արևը՝ թեթև կապույտով շրջանակված: Աջ ձեռքում բռնած էր սիրամարգի փետուրներով մի հովահար, իսկ ձախում՝ ոսկյա մի գավազան: Աղոթքի միօրինակ ձայնով նա սկսեց իր ողջույնի նախաբանը, որը նույն պահին ուղղակի թարգմանվեց մի թարգմանչի կողմից.

— Հյուսիսային ու հարավային երկրների արքան, աստվածների որդին, որը սիրում է իր հայրերին, աստվածների հայրը, որը սիրում է իր որդիներին, Պտահի ընտրյալը, որին Ռան զորություն է շնորհել, իսկ Ամոնը՝ իր կենդանի պատկերը, Ռայի, Օսիրիս–Պսամմետեխի որդին, որն աչքի է ընկնում իր բարությամբ, ամենից հզորն իշխանությամբ, որը բազմելով գահին՝ հաստատել է պետություններ...— Այստեղ մի պահ ստիպողաբար շունչ առավ եգիպտացին, ապա ավարտեց իր խոսքը.— նա այս է ասում քեզ՝ Հուդայի թագավորիդ...

Փարավոնի հաջորդական լուրջ պատգամները՝ ուղղված Հովսիա թագավորին, պարուրված էին եգիպտական պալատական բարդ ճոռոմաբանությամբ և միևնույն ժամանակ սիրալիր քաղաքավարությամբ: Դրա փոխարեն ինչքա՜ն պարզ ու անսեթևեթ էր հնչում Տիրոջ լեզուն: Միայն Նա, և ոչ թե մարդը, կարող էր թաքցնել այդ խոսքերի հետևում իր գաղափարներն ու զգացմունքները: Ավագաժողովին հարկավոր էր մեծ ջանք թափել՝ հասկանալու համար թարգմանչի՝ իրադարձությունների վերաբերյալ թարգմանած ճշգրիտ տվյալները: Կրկին ու կրկին խոսքը «գեղեցկության կրողի» մասին էր, «լուսափայլ սենյակում բնակվողի», «երբևէ չփտող փայտյա հավիտենական նավակում բնակվողի» մասին, «Նորին մեծության, որը ժպտալով ընդունում է աստվածների երկրպագությունը» և այն «լուսավորյալի, որի առաջ սողում են մարդկանց ստրկացած սրտերը»: Իհարկե, շատ տարօրինակ էր, որ տիտղոսների այդ անսպառ շքեղությունը փառավորում էր միայն փարավոնին, մինչ խոսքի հասցեատիրոջը՝ Հուդայի արքային, և նրա Աստծուն ամենևին նկատի չէին առնում՝ իբրև ինքնիշխան անձնավորություններ: Սակայն դա չէր կատարվում վիրավորելու կամ նվաստացնելու նպատակով, այլ պարզապես այն ծիծաղելի համոզումից ելնելով, որ Եգիպտոսն է աշխարհակալ մեծությունը, տիեզերական իմաստության կենտրոնը, աշխարհի

գեղեցկությունը, որից դուրս միայն տխուր ու մռայլ կյանք կարող է գոյություն ունենալ: Միզրայիմի (Եգիպտոսի) հետ առնչությունը, փարավոնի խոսքը՝ արտասանված իր դեսպանի կողմից, իրենց մեջ բովանդակում էին փրկաբեր ու կենդանարար ուժ օտարերկրյա խեղճ հոգիների համար, որի վերաբերյալ կասկած չէին թողնում դեսպանի խոսելաոճն ու կատարած վերամբարձ շարժումները: Պատգամն ինքնին խոսում էր անհաշիվ նավերից բաղկացած մի հսկա նավատորմի մասին, որը նույնիսկ սարսափ էր պատճառում ծովի տիրակալ աստվածներին: Այն այժմ մեկնելու պատրաստ վիճակում խարիսխ է գցած բոլոր գետերի մայրը համարվող գետի հոսանքներից մեկում, որն ամեն տարի հորդում է գերագույն աստվածների թափած ուրախության արցունքներից, և շնորհիվ այդ հրաշքի՝ մահվանը կյանք է պարգևում: Այս նավատորմը՝ բաղկացած երբեք պարտություն չկրած ռազմիկներից, ծով էր մտնելու երկրորդ նորալուսնի օրը, աստվածային առաջնորդող նավի գերագույն ղեկավարությամբ: Այն նավարկելու էր փղշտացիների հարթ ծովեզերքում՝ ուղեկցությամբ անհամար ռազմակառքերի, իսկ վերջում խարսխելու էր Կարմելյան լեռների հյուսիսային ծովածոցում: Այնտեղից Նորին գերազանցությունը, որի առաջ աստվածներն ուրախությամբ են խոնարհվում, կուզենա իր առաջխաղացումով լուսավորել Իսրայելի հարթավայրը: Այսքան էր Հուդայի թագավորին ուղղված ուղերձը: Նրանից պահանջվում էր առատորեն պարենավորել փարավոնի զորքը հիշյալ հարթավայրի քաղաքների ու գյուղերի միջով անցնելիս, ապահովել բնիկ ժողովրդի կատարյալ խաղաղ վերաբերմունքը տեղակայված զորամասերի նկատմամբ, ինչպես նաև երաշխավորել Հուդայի թագավորի հավատարիմ հնազանդությունը: Այս ամենը չէր ներկայացվում իբրև մի յուրահատուկ պահանջ, այլ իբրև մի պարզ ձևականություն, որը, ըստ սովորության, հասկանալի կերպով առաջ էր բերվում:

Դեսպանի ելույթին հետևեց երկար ու զայրալից մի լռություն: Հովսիան, իր տեղում անշարժ նստած, թողեց նրան շարունակել մինչև իր համբերության վերջին սահմանը, այնպես որ նույնիսկ պնդակազմ եգիպտացին սկսեց անհանգստանալ: Դրանից հետո միայն նա հոգնած ու ձանձրացած բարձրացրեց ձեռքը և նշան արեց իր անձնական գրագրին՝ մոտենալու իրեն:

Խոսքերը, որ նա ասաց Ահիկամին ու դեսպանին, դառնացածի ու դժգոհի խոսքեր չէին, այլ նա դրանք արտաբերում էր մեղմաձայն և կատարյալ հանդարտությամբ.

— Ասա նրան, որ եթե նա նույնիսկ կամենա փարավոնի անունից առավոտվա յոթ ուշացած զոհաբերությունները կատարել տաճարում, դարձյալ նրան պատասխան չեմ տա, այլ ես դա անձամբ կհաղորդեմ փարավոնին...

Հպարտ եգիպտացին, լավ չհասկանալով թագավորի ասածը, անվստահ նայեց իր շուրջը և մի պահ տատանվեց: Հովսիան այլևս նրա վրա ուշադրություն չդարձրեց, արդեն ազատ էր թողնված մեկնելու: Դեսպանը, որը չէր սպասում դեմ հանդիման հայտնվել թագավորի այդ խոչընդոտին, մատների ծայրով դիպավ ընդունարանի հատակին՝ իբրև նշան հարգանքի. մի բան, որ սկզբում Եգիպտոսի կողմից արժանի չէր համարել կատարել: Ավելի ուշ, ոմանց ասելով, նկատել էին որ շփոթի մատնված այդ եգիպտացին փնտրել է Եղիակիմի նայվածքը: Փարավոնի շփոթահար դեսպանը հազիվ էր դուրս եկել գահասրահից, երբ արքայի գահի շուրջը հավանության մի բուռն և անհամեմատելի ալիք ծավալվեց: Այդ ընթացքում ոսկյա ճրագի կապույտ բոցն ընդոստ վեր բարձրացավ և խեղդեց աղմուկը:

Թագավորը դիմեց Երուսաղեմին ու Հուդային այնպիսի խոսքերով, որոնք ծանոթ էին Երեմիային: Նա խոսեց Հակոբի Աստծու արքայության մասին, նոր Դավթի և հաղթանակած օրենքի ու վարդապետության թագավորությունների մասին, որոնց ժամն արդեն հասել է, հիմա ավելի, քան երբևիցե: Հուդան հզորացել է, Իսրայելը վերածննդյան մեջ է՝ պատրաստ վերադառնալու իր ակունքներին: Փարավոնի զորքը, կտրված հայրենիքից և օգնության միջոցներից, չպիտի կարողանա դիմադրել Տիրոջ արդարադատ հարվածին: Հետևաբար, Տիրոջ ծրագիրն ամեն ինչ անըմբռնելի և նպաստավոր կերպով էր տնօրինել: Թագավորի ձայնը հնչում էր իբրև աստվածային ոսկեղեն մի ամպրոպ: Դրանով նա դյուրաբորբոք ավագաժողովը մատնեց կատաղության, որպես թե հենց ինքը՝ թագավորը, ամենից առաջ իր սեփական ժողովրդին խմելու համար մատուցած լիներ զայրույթի ու հարբեցումի բաժակը: Ավագաժողովը լուծարվեց, և մասնակցները շրջապատեցին արքայի գահը:

Նրանցում ամենից շատ զայրացել էր թագավորի անները՝ Երեմիա Լիբնացին, որի աչքերն արյունով էին լցված, ասես պատերազմում լիներ: Բազուկները վեր բարձրացնելով՝ խլացուցիչ ձայնով գոռում էր պարբերաբար. «Դավթի թագավորությունը»:

Միայն շատ քչերն էին պահում իրենց խոհուն հանդարտությունը: Դրանց մեջ էին Եղիակիմն ու Երեմիան: Առանց սարսափի չէր, որ Երեմիան նայում էր Լիբնայի մոլեգնած իշխանին: Նրա մեջ առաջանում էր մի մտահոգիչ հարց. թագավորի ունեցած պատկերացումը՝ աստվածային ծրագրի ու գործունեության մասին, իր էության մեջ տարբերվո՞ւմ էր արդյոք իր աներոջ կազմած պատկերացումից: Երկուսն էլ փառաբանում էին Տիրոջը՝ իբրև պատերազմի հերոսի, որը քշում է իր թշնամիներին: Երեմիան կենտրոնանալու համար ձեռքով ծածկեց իր դեմքը: Գուցե Տերն այդ ընդհանուր աղմուկի պահին ընդհատեր իր լռությունը և զգուշացներ թագավորին՝ առաջքն առնելու համար մի մեծ աղետի: Սակայն աստվածային ոչ մի միջամտություն չփորձեց խափանել ստեղծված խռովությունը և հանդարտեցնել մարդկային փոթորկալից կրքերը, որոնք գնալով ավելի էին մոլեգնում: Մարդիկ ողջագուրվում էին միմյանց հետ, հուզմունքից արտասվում, դաժան երդումներ էին կատարում, ուխտեր էին կնքում, արյան եղբայրություններ էին հաստատում: Եվ կրկին ու կրկին հնչում է այդ աղմուկի միջից մեծ կարգախոսը՝ «Դավթի թագավորությունը»:

Գահասրահում, սակայն, աղմուկն անմիջապես դադարում է: Խնդրվում է լռություն պահպանել: Ի վերջո, մարդիկ նկատում են, որ զառամյալ Սափանը շատոնց պայքարում էր լսելի դառալու համար: Ավագաժողովի մարդիկը վերադառնում են իրենց տեղերը՝ ունկնդրելու համար իմաստունների մեջ ամենից իմաստունը համարվող այդ մարդու խոսքերը: Իր ելույթի ընթացքում Սափանն անհամբեր այս ու այն կողմ է շարժում իր ձեռքի օրինագիրքը, որպես թե այլևս չէր կարողանում հապաղել՝ վերադառնալու համար աշխարհի վաղանցուկ իրադարձություններից դեպի Հավիտենական Խոսքի ճշմարիտ ու խելամիտ մեկնաբանությունը և չէր կամենում իր կյանքի վերջին ժամերին զրկված մնալ Տիրոջից:

— Նաև ես,— սկսեց նա խոսել հևքոտ շնչով,— միանում եմ այս ոգևորված ժողովրդին՝ արքային գովաբանելու հարցում... Նրանից

ավելի լավը չի եղել Իսրայելում և Հուդայում, և չի էլ լինելու... Միայն քչերն են հիշում նրա հայրերի՝ Մանասեի և Ամոնի հին ժամանակները, երբ գարշանքներն էին տիրում անարգել կերպով, և Բեն Հինոմի հովտում կրակն էին թեժացնում, որպեսզի նրա մեջ ողջ–ողջ զցեն իրենց անդրանիկ որդիներին... Այն ժամանակ դու՝ թագավորդ իմ փառապանծ, մի երեխա էիր՝ ոչ ավելի մեծ, քան քո կրտսեր որդին՝ Մաթանիան. Սափանը նստում էր մոտդ՝ իբրև լեզվի ու գրի ուսուցչիչ... Եվ Սափանը քո կողքից չփախավ, երբ Ամոնի դաժան սպանության գիշերը քեզ՝ արքայազնիդ, անսպասելի կերպով առիթ տրվեց բարձրանալու այս գահին... Ուսուցչի իմ սիրտն անբաժան կերպով է կապված քեզ, ով Հովսիա... Ինչքա՜ն արժանի կերպով ես վարձահատույց եղել իմ աղքատիկ ուսուցումներին... Քանզի իմ արքայի կատարած գործը չպիտի մոռացվի ոչ երեսուն և ոչ էլ երեք հարյուր սերունդների կողմից...

Այստեղ ծերունու գլուխը խոնարհվեց իր կրծքին: Ոմանք կարծեցին, թե նա քնում է, կորցրել է մտքի թելը կամ էլ ավարտել է իր խոսքը: Նա, սակայն, տարված էր մելամաղձոտ մտքերով և ասես թե այդ մեծ ավագաժողովի սրահում միայնակ լիներ թագավորի հետ:

— Սափանը երբեք չի լսել իր սեփական ականջներով Տիրոջ շշնջյունը... Նա ընտրված չէ, ոչ էլ մարգարե, այլ միայն՝ ուժեղ եռանդով օժտված ջանադիր մի մարդ... Նա կարդում է ու մտածում, եզրակացնում է ու համեմատում, կապում է, ընդունում և հեռացնում... Նա կարող է ասել միայն այն, ինչ որ ինքն է ձեռք բերել ու ամբարել իր սեփական գլխում, բայց չի կարող ասել. «Այսպես է ասում Տերը...»: Ինչ որ օրենքն է սովորեցնում, ինքն էլ կարող է սովորեցնել... Բայց ինչպե՞ս կարող է ի վիճակի լինել ինքը՝ մի զառամած մարդ, որը զուրկ է ձեր աշխուժությունից, ձեզ խորհուրդ տալ, որ սա լավ է, և արեք սա, իսկ այդ մեկը վատ է, և այդ մի՛ արեք... Իսկ եթե շարունակեմ ես այսպես խոսել ձեզ հետ, հավանաբար հարգանքի համար կխոնարհեցնեք ինձ ձեր ականջը, բայց ոչ ձեր կամքը... Ձերդ արքայական մեծություն, խոնարհեցրու ինձ քո ականջը, ով դու մանուկդ իմ սիրելի, ում դեռ տեսնում եմ խաղացող տղայի կարմիր այտերով: Մեծդ արքա, լսիր ի վերջո. դու ունես խաղաղություն և ժամանակ, ինչո՞ւ ես ուզում առանց որևէ անհրաժեշտության վտանգել քո սեփական խաղաղությունը և կրճատել քո սեփական ժամանակը...

Հուզմունքից Սափանի վերջին խոսքերը հազիվ թե լսելի էին, և դրանք միայն քչերին էին հասկանալի: Շատ ծերերի նման նա հեշտությամբ սկսում է արտասվել: Նրա արտասանած խոսքերը, իրենց մեղմության պատճառով, ոչ մի ազդեցություն չեն գործում: Դրանք, ըստ երևույթին, միայն թագավորի վրա էին որոշ չափով ազդել, քանզի նա երազում էր նստած, և մի քանի խոր կնճիռներ էին կազմված ճակատին, որոնք, անշուշտ, ոչ մի գրագրապետ չէր կարող մեկնաբանել: Նոր բացականչություններ են լսվում: Մարդիկ ակնկալում էին արքայի վերջին խոսքը, որը, սակայն, ձեռքի մի կտրուկ շարժումով մերժեց արտահայտվել և երկարեց բազուկը մարգարեների նստարանի ուղղությամբ.

— Հասնե՞լ է ձեզ արդյոք որևէ խոսք Տիրոջից... Լինի երազ կամ տեսիլք...

Երեմիայի հոգին տենդագին աղոթում էր Տիրոջը և խնդրում.

— Հայտնիր ինձ, Տեր, կամ թույլ տուր ինձ հասկանալ, եթե իսկապես այս թագավորի միջոցով պիտի հաստատվի նոր Դավթի թագավորությունը: Արդյոք այդ ծրագիրը մի որոգայթ կամ մի անդունդ չէ՞, ուր պիտի խորտակվենք բոլորս: Ես թափառեցի քո ամբողջ երկրով մեկ և ըստ բավականին լավ ճանաչեցի այն: Այնտեղ անապատի չորացած խոտի նման են քո պատվիրանները, որոնց մեջ է նաև մահը: Սարսափելի խոսքեր Դու ինձ տվեցիր՝ խոսելու համար տաճարում: Իսկ հիմա մի՞թե մոռացության պիտի տրվեն այդ բոլորը, քանի որ Դու փոխել ես միտքդ, ինչո՞ւ... Այո՛, միշտ էլ հնարավոր է, որ Դու քո կառքն անսպասելիորեն այլ ուղղությամբ տանես, այո՛, ես դա գիտեմ, նաև գիտեմ, որ այս բոլոր մտքերը քեզ համար անիմաստ են, և եզրակացություններն էլ՝ սխալ: Բայց ես ի՞նչ պետք է անեմ, Տեր: Իմ բերանից է կախված թագավորը, և ես կարող եմ քաջալերել նրան և կամ արգելք լինել, որ որևէ սխալ բան չանի: Օգնիր ինձ, Դու, որ ինձ արդեն տեսել ես նախքան իմ լինելը, որպեսզի ես էլ օգնեմ թագավորին և այս ժողովրդին: Իմ մեջ հավասարապես միախառնված են այո-ն և ոչ-ը, երկյուղն ու վստահությունը: Արդ, ով Տեր, ջինջ ջրի նման կազմիր իմ ուղեղում մի այո կամ էլ մի ոչ, որպեսզի ես այն շաղ տամ, ինչպես որ արել եմ ժամանակին տաճարում, երբ դեռևս դրա համար ոչ մի ակնհայտ պատճառ չկար...

— Տիրոջ կողմից ոչ մի խոսք չկա այստեղ... Ոչ մի երազ, ոչ մի տեսիլք...

Երեք քայլ առաջանալով՝ վերոհիշյալ տխուր խոսքերն արտասանեց Ուրիան՝ ավագագույնը մարգարեների մեջ: Նրա հյուծված կերպարանքը կանգնած էր կորաքամակ, ասես իրեն մեղավոր էր զգում և թագավորից ներում հայցում՝ Տիրոջ լռության և նրա մարգարեների խլության պատճառով, որոնք այդ մեծ օրը չէին կարողացել ոչ իսկ մի փոքր պատգամ ստանալ ու հաղորդել: Սակայն մինչ Ուրիան դեռ տխուր կանգնած էր, հանկարծ հնչեց մի թարմ ու հզոր ձայն.

— Այո՛, Տիրոջ կողմից մի խոսք կա այստեղ... Եվ մի տեսիլք...

Երեմիան շրջվեց դեպի այդ ձայնը: Սրահի պատին սեղմված տղամարդկանցից մեկը պոկվեց իր տեղից և վայելուչ քայլվածքով երկար սրահի միջով առաջացավ դեպի գահը: Նա հանել էր իր մարգարեական անհանգստացնող վերարկուն և դրել իր բազկին, որի պատճառով երևում էր նրա իսկական հագուստի նուրբ և թանկարժեք հյուսվածքը: Աստծու այդ մտերմի մազն ու մորուքն ամենայն խնամքով օծվել էին ու հարդարվել: Երեմիան զարմանքով տեսավ, որ Զատկվա այն միասնական ծառայությունից հետո տարիները դրական բարքերով են օժտել Անանիային: Տերը, իհարկե, նկատի է առնում տարբերությունն ու բազմազանությունը նրանց, որոնց ուզում է ինքը հայտնվել, և Նա, ըստ երևույթին, այդ ուղղությամբ չունի մի միատեսակ վարվելակերպ: Անանիան խոնարհվեց թագավորի առաջ և հստակ ձայնով պատգամեց.

— Տիրոջ տեսիլքում ես տեսա Նեղոս գետը, որն իր ափերից դուրս եկած անցնում էր անապատի միջով: Նրա հոսքը նոր հուն էր բացում... Տերը, սակայն, բացեց իմ աչքերն ու ասաց. «Նայիր Նեղոսի ալիքներին»,— և ես տեսա ալիքները: Նրանք ռազմիկներ էին: Բազմության միջից վեր էին խոյանում նժույգները... Ահա մի անգամ ևս Տերը բացեց իմ աչքերը և ասաց. «Նայիր Նեղոսի ալիքներին»,— և ես տեսա տիղմ, ապականություն և բեկորներ: Անապատում ցամաքել էր գետերի մայրը, և անհետացել էին նրա հզոր ալիքները...

Հավանություն արտահայտող ձայներ հետևում էին Անանիայի պատգամին, որն ուրախությամբ համապատասխանում էր մարդկանց սրտերի ակնկալությանը և հաստատում սպասվող հաղթանակը: Հովսիան զարմանալիորեն լսեց այդ պատգամն առանց հուզվելու կամ տեղից շարժվելու: Երեմիան ազատվեց մի ծանր հոգսից: Կարևորն այն է, որ

Տերը խոսել է, նույնիսկ եթե ոչ իր միջոցով: Ավագաժողովի ավարտին նա դեռ գլուխը կախած մտածում էր Անանիայի տեսիլքի մասին. դա՞ էր արդյոք Տիրոջ հայտնության ճիշտ ձևը: Հարցական էր: Դրա համար էլ նա նորից ընկավ մտատանջության մեջ: Այդ ընթացքում թագավորը հանկարծ եկավ կանգնեց նրա առջև և ժպտաց.

— Ով ուզում է՝ թող լինի մարգարեացողը, միայն դու ես իմ միակ կապը ՆՐԱ և իմ միջև...

ԳԼՈՒԽ ՏԱՄՆՄԵԿԵՐՈՐԴ

ՄԵԳԻԴՈ

Երեմիան իրավունք չուներ հեռանալու թագավորի կողքից, քանի որ Հովսիան կարիք ուներ նրա նման մարդկանց, որոնք իր համար լսում էին երկնքից պատգամներ, և ինքն ամբողջ սրտով վստահում էր դրանց վավերականությանը:

Տարվա ամենանվիրական պահեցողության օրվանից հետո, որն անհիշելի ժամանակներից ի վեր նշվում էր մեծ զղջումով և ապաշխարությամբ, առաքվում է թագավորի կոչը բոլոր ցեղերին ու քաղաքներին:

Ժողովրդի նշանակումն ու տեղաբաշխումը՝ զինված տարբեր խմբերի մեջ, չէր կատարվում զուտ աշխարհիկ ընտրությամբ, այլ դա նվիրականորեն որոշված ու հաստատված էր մահամերձ Հակոբի խորհրդավոր օրհնության մեջ՝ տրված իր որդիներին: Պատերազմի ժամանակ առաջին տեղը պատկանում էր Հուդային, քանզի ցեղի նահապետը հենց նրա մասին էր մարգարեացել.

Կորյուն առյուծուն Հուդայի,
Իմ շառավիղից ելար դու, որդյակ իմ:
Բազմեցիր, պառկեցիր ու ննջեցիր որպես առյուծ,
Որպես կորյուն առյուծի:
Ո՞վ արդյոք պիտի արթնացնի քեզ...
Հուդայից իշխան չի պակասելու,
Ոչ էլ առաջնորդ՝ նրա կողերից ելնող,
Մինչև որ Դավթի տնից գա խոստացվածը՝
Նա, ում պատկանում են հանդերձյալները,
Եվ ում շուրջը կհավաքվեն ժողովուրդները:

Հետևաբար, Հուդայի մարտիկներին, «որոնց աչքերը գինուց կարմրել են, և ատամները կաթից սպիտակել», տրվել է առաջին կարգը և հրամանատարության աստիճանն իր բոլոր եղբայրների վրա: Նրանք իրավունք ունեին նստելու նժույգների վրա և օգտագործելու որևէ տեսակի զենք: Արքայական պատերազմի ընտրելագույն միջոցը՝ ռազմակառքը, միայն նրանց էր վերապահված:

Ռազմական կառքերի ջոկատը կազմում էր բանակի ներքին և լավագույն կորիզը, որի կենտրոնում անձամբ ինքը՝ թագավորն էր կանգնած իր զրահավորված *մերկաբա*-ի[9] վրա, որը երկրի վրա համապատասխանում էր երկնքում Տիրոջ սրընթաց կառքին: Հակոբ նահապետն իր բոլոր զավակներին հավասարապես չէր կանխորոշել նույն հերոսությունը, ինչ որ Հուդային: Եփրեմի և Մանասեի օրհնության մեջ ասվում էր, որ նրանց աղեղը չի կոտրվելու, և նրանց բազուկը լինելու է միշտ ուժեղ ու ճկուն: Այդ իսկ պատճառով այդ մարզերի քաղաքներն ուղարկում էին միայն աղեղնավորներ ու պարսատիկավորներ հավաքավայրերում: Դանի հյուսիսային տարածքը, սակայն, որի անտեսված բնակավայրերը Հովսիան երբեք չէր մոռացել այցելել իր շրջագայությունների ընթացքում, ուղարկում է մի քանի հարյուր ավազակներ և ճանապարհների ելուզակներ, որոնց արվեստն էր հոյակապ ծուղակներ պատրաստել՝ նեղելու համար թշնամու թևն ու թիկունքը: Բայց նաև այս երկիմաստ խիզախությունն էր նախասահմանել Հակոբն իր օրհնության մեջ.

Դանը թող լինի իբրև դարանակալ օձ ճանապարհի վրա՝
խայթելու համար ձիու գարշապարը
Եվ մեջքի վրա ցած գցելու հեծյալին նրա:

Նախքան խմբերի՝ իրենց բոլոր հավաքավայրերից ռազմադաշտ տեղափոխվելը՝ Հովսիան հրահանգում է այն, ինչ որ սահմանում է Տիրոջ օրենքը. «Այն մարդը, որ նոր տուն է կառուցել, որ նոր այգի է տնկել, որ երիտասարդ կին է առել և կամ վախենում է ու թուլասիրտ է, թող գնա

[9] Երբ.՝ ռազմակառք:

ու վերադառնա իր տունը»: Սակայն համարյա ոչ ոք չի կամենում օգտվել այդ արտոնությունից իր սեփական շահի համար:

Մինչ Նեքավով փարավոնի նավատորմը թույլ քամիների ուղեկցությամբ բարձրացնում էր խարիսխը Նեղոսի գետաբերանի ավազանում և նավ նավի հետևից դեպի բաց ծով էր շարժվում, Հովսիայի զորքերը շարժվում էին հարավից և հյուսիսից դեպի կանաչապատ հարթավայրը, որը ձգվում էր Կարմելից մինչև Հորդանան գետի հովիտը՝ անցնելով Գելբուա բլուրների կողքով: Արքան իր ռազմական ուժը երեք մասի էր բաժանել և նրանց համար երեք նպատակ էր առաջադրել: Արևմտյան բանակը Մասիահի հրամանատարության տակ էր, որը Հուդայի ամենատարեց ու փորձառու զորապետներից էր: Այդ բանակն իր աղեղնավորների ու պարսատիկավորների հետ պետք է իջներ Կարմելի բարձունքներից և ուղղվեր դեպի Եգիպտոս, որպեսզի ամբողջ թափով արգելք հանդիսանար հարթավայր ներթափանցելու փարավոնի փորձերին: Կենտրոնական բանակն առաջնորդում էր անձամբ թագավորը՝ Ասասիահի հետ, որը նաև նրա թիկնազորի հրամանատարն էր: Նրա զորամասերը երկար շարքերով տեղավորված էին գլխավոր ճանապարհի երկայնքով, որը հատում էր Հեզրայելի հովիտը: Որոշ բերդաքաղաքներ, ինչպիսիք են՝ Մեգիդոն[10], Կադեշը, Թանաքը, օգնության էին հասնում պատերազմողներին: Արքայական կայազորի կենտրոնն էր Մեգիդոյի ամրոցը: Բանակի երրորդ մասը՝ արևելյան զորաբաժինը, հակառակ թագավորի բուռն ընդդիմությանը, վստահված էր թագաժառանգ իշխան Եղիակիմին: Հովսիան երկար ժամանակ չէր համաձայնում նման մի որոշմանը, բայց ի վերջո զիջում է իր խորհրդականների թելադրանքներին, որոնք այդպիսի մի մերժում ծանր նախատինք էին համարում Եղիակիմի համար, որը կարող էր ապագայում լուրջ հետևանքներ ունենալ: Իշխանը խիզախ մարդու հռչակ ուներ, առանց դրա համար որևէ ապացույց ներկայացնելու: Բացի նրա որոշ խռովություններից, հակասություններից և խենթություններից, թագավորի համար այլ արդարացուցիչ պատճառ չկար՝ մերժելու իր ավագ որդուն զորապետի պաշտոնի նշանակումը: Մի՞թե տեղին էր, որ Հուդայի թագավորն ամբողջ աշխարհին բացահայտեր

[10] Նույն է՝ Մակեդդով, Արմագեդոն:

իր անվստահությունը որդու նկատմամբ: Հովսիան սովորականի նման հանդարտեցնում է իր սիրտը՝ մտածելով, որ պատերազմի ահավոր ծանրությունը, փառասիրությունն ու հաղթության մրցանակի ակնկալումը կզսպեն կամ նույնիսկ կբժշկեն Եղիակիմի անհնազանդությունը: Բացի այդ, արևելյան այդ բանակը, որը տեղավորված էր Գելբուայի բլուրներում, ստանձնել էր ամենահեշտ պարտականությունը. անհրաժեշտության դեպքում այն պիտի լիներ պահեստային օժանդակ ուժ, իսկ հաղթանակի պարագայում այն պետք է կասեցներ եգիպտացի զինվորների փախուստը և ոչնչացներ նրանց: Այս բանակին միացած էին նաև Դանի ճանապարհների ելուզակները և հեծելազորի մի մասը: Ապահովության համար թագավորն իր երեց որդու մոտ է նշանակում պատերազմի փորձ ունեցող մի կատաղի ու սարսափազդու հերոսի՝ Աքբորի որդի Եղնաթանին: Հովսիային չի մտահոգում այն հանգամանքը, որ այս Եղնաթանն ազգակցական կապ ուներ Եղիակիմի հետ՝ լինելով նրա կնոջ՝ Նեհուսթայի, հայրը:

Ամեն ինչ իմաստությամբ էր կազմակերպված ու նախատեսված, ինչը չէր պատահել ոչ մի պատերազմի պարագայում՝ Հեսուի և Դավթի ժամանակներից ի վեր: Միայն մեկը կար, որին հնարավոր չէր պատկերացնել և կանխատեսել: Եվ որպեսզի այդ անըմբռնելին ու անկանխատեսելին որևէ կերպ կասեցվի և խաղի մեջ ներգրավվի, թագավորն իր հետ էր տարել Երեմիային, քանզի հաստատ կերպով հավատում էր նրա՝ Տիրոջ կողմից յուրահատուկ կերպով ընտրված լինելուն, ինչպես նաև նրա հրաշալի օգտակար ուժին: Տերը մտնում էր Երեմիայի հոգու մեջ և դուրս էր գալիս այնտեղից: Հովսիան դրանում համոզված էր և իր պարզ ու բարեպաշտ տրամաբանությամբ կարծում էր, որ Երեմիայի միջոցով ինքը կկարողանար Տիրոջը ծառայեցնել իրեն: Անաթովթցի մարդն այդ տխուր և լարված օրերին իրավունք չուներ մեկ ժամով անգամ հեռանալ Հովսիայի մոտից: Նույնիսկ նրա համար անկողին էր դրվել թագավորի ննջասենյակում: Մեգիդո քաղաքն ու ամրոցը Դավթի տան սեփականությունն էին: Ամրոցը երկրի հզորագույն և ամենից հոյակապ շինություններից մեկն էր: Նույնիսկ Աբրահամը ճանաչել էր այն, երբ Ուրից գալով՝ ոտք էր դրել խոստացված երկիր, իսկ անխոնջ շինարար Սողոմոնը մարդկային ինը սերունդ առաջ օժտել էր այն գերազանց

կերպարանքով՝ իր բազմաթիվ աշտարակներով, ամուր պարիսպներով, կտուրներով, գավիթներով ու բնակարաններով: Երեմիան այժմ այդ-տեղ երկար օրեր էր անցկացնում ՝ թագավորի շրջապատի հետ մտերիմ հարաբերության մեջ, ում ինքը պետք է օգներ Տիրոջից ստացած խոս-քերով ու տեսիլքներով: Իրեն, սակայն, անձամբ աջակցում էր Բարուքը, որն իր հետ էր շարունակ:

Ամառային հեղձուձիչ շոգն արդեն կոտրվել էր, երբ մի առավոտ սկսեցին շտապ լուրեր հասնել Կարմելից, որ Միզրայիմի (Եգիպտոս) նավատորմը գիշերվա ծածկույթի տակ, անակնկալ և զարմանալի արա-գությամբ, հանգրվանել է Հոպպեյի ավազուտ ծովեզերքում: Հաստափոր հրեշներ՝ երեք հարկ բարձրությամբ, յուրաքանչյուրը մի զորեղ ամրոց, մի գծի վրա անհաշիվ մղոններով շարված, գրեթե անձայն և առանց լույ-սի խարսխել էին ծովափում: Պատերազմի դաշտն ասես Աստծու ձեռ-քով գիշերով ավազի հատակից դուրս եկած մի հսկա քաղաք լիներ, որի տաճարներն ու պալատները ներկայացված էին հզոր նավերի տեսքով: Մասիահը՝ արևմտյան բանակի հրամանատարը, զգուշացնում է այդ քա-ղաքի առնչությամբ որևէ անխոհեմություն չկատարել: Լավագույնը կլի-ներ խորամանկորեն թաքնվել, անտեսանելի մնալ և սպասել փարավո-նի մեկնումին: Հովսիա թագավորը միայն իր երկու թիկնապահների ըն-կերակցությամբ անմիջապես մեկնեց դեպի Կարմելում տեղակայված իր բանակը, ուր ամենաբարձր դիտարանից կարող էր լրտեսել Նեքավով փարավոնի ճամբարը: Եվ միայն միջօրեին նա սրընթաց վերադարձավ: Երեմիան նկատեց, որ նա խիստ գունատ էր և մտածկոտ:

Դեռևս միևնույն օրը տեղի ունեցան մեծ նշանակություն ունեցող եր-կու իրադարձություններ. առաջին հերթին բարձրացավ մի մեծ փոթո-րիկ, որի նմանը չէր պատահել ջրհեղեղի ժամանակվանից ի վեր: Կեսօ-րից սկսած մի անորոշ և ընդհատվող որոտում, զսպված կատաղությամբ, թնդում էր երկնակամարով մեկ: Մայրամուտից երկու ժամ առաջ սկսվեց մեծ փոթորիկը: Աստվածային մի հայտնության ակնկալիքով թագավորը Երեմիային իր հետ տարավ դեպի ամենաբարձր դիտարանի աշտարա-կը: Այնտեղ մնացին կանգնած՝ բռնվելով պարսպի ատամներից, առանց ուշադրություն դարձնելու սանձազերծված հողմերին ու անձրևի հեղեղ-ներին, որոնք համարյա պոկում էին իրենց մարմնի վրայի հագուստները:

Միթե հողմն այն միակ տեսանելի ազդակը չէր, որով զգեստավորվում էր Անտեսանելին: Թեև շատ սերունդներ առաջ սուրբ Եղիա մարգարեն գուշակել էր, որ փոթորիկն աստվածային ներկայության առաջատարն է, և այդ ներկայությունն ի վերջո բացահայտվում է բացառապես զեփյուռի մեղմ շնչում: Այնուամենայնիվ, ո՞վ կարող է հերքել այն, որ Տերը կայծակից ու ամպրոպից է պատրաստում իր քահանայապետական զգեստը, որի ծոպերից կախված ոսկյա և արծաթյա նռները փայլում են ու փայլատակում:

Թագավորն ու Երեմիան ամուր կառչում են իրարից, որպեսզի փոթորիկն իրենց վայր չգցի: Երկնքի հագուստի հյուսվածքը պատռվում է իր բոլոր կարերից և ճեղքվում հարյուրավոր տեղերից: Ճեղքերի միջով, սակայն, նշմարվում է բարձրագույն երկինքը, հրեղեն երկինքը, փառաբանական երգերի երկնակամարը, որը մահկանացուներին թույլատրված է տեսնել միայն մի կայծակնային ակնթարթ: Եվ քանի որ ամբողջ երկինքը հրեղեն բոցերի մեջ էր, և փոթորիկն էլ տևապես փոխում էր իր ուղղությունը, հետևաբար հնարավոր չէր դրանց միջից ճանաչել աստվածային կամքի դիտավորությունը: Հանկարծ, սակայն, թմրկահարվում է մի տեղատարափ կարկտահարություն, ասես Եհովան կամենում էր քարկոծել աշխարհի այդ խեղճ տարածքը: Աշտարակի գագաթի այդ երկու տղամարդը ստիպված էին պպզել հատակին, մեջքով ամուր կոթնել աշտարակի ատամներին և իրենց զույգ ձեռքերով գլուխները պաշտպանել հսկայական կարկուտներից: Այդ կարկտահարությունը, սակայն, հստակեցնում է Հովսիայի սրտում աստվածային կամքի ուղղությունը, քանզի տեղատարափ կարկուտը շեղակի ու շատ խիտ շարքերով հարվածում էր հատկապես արևմուտքին՝ ուղղակի Նեքավովի ճամբարին ու նավերին: Միևնույն ժամանակ մի ամեհի կայծակ, բարձր աշտարակի խիստ մոտիկից անցնելով և գերբնական շեղումով խնայելով թագավորի ու տեսանողի կյանքը, ընկավ քաղաքի պարիսպներից դուրս աճած մի ժանտաթզենու վրա: Չնայած անձրևին՝ կայծակնահարված ծառը սկսեց վառվել ու ծխալ: Կայծակը չէր խփել Հուդայի ճամբարին:

Թագավորը ցնծության աղաղակներ արձակեց: Իրեն շնորհվել էր երկնային մի նոր նշան: Իր սենյակում նա հանեց վրայից իր թաց հագուստները: Արցունքները հոսում էին այտերի վրայով: Ձեռքերը վեր բարձրացրած՝ փորձում էր պարի հանդիսավոր քայլեր անել:

— Ոհ, Երեմիա,— ասաց նա հեկեկալով,— Երանի թե ես էլ կարողանայի պարել ու երգել, ինչպես իմ նախահայր Դավիթը...

Հազիվ թե մի քիչ հանդարտվել էր Հովսիայի հոգին, երբ տեղի ունեցավ երկրորդ՝ ոչ նվազ կարևոր իրադարձությունը: Փարավոնի կողմից մի դեսպանություն թակեց Մեգիդոյի արևմտյան դարպասը և հանձնեց թագավորին արև աստծու մարմնացումը համարվող Նեքավովի գրությունը, որն իր անվան ստորագրությանը կցում էր մի բոլորակ՝ մեջը մի կետ դնելով, իբրև խորհրդանիշ իր աստվածությանը: Ձեռագիրը գրված չէր եգիպտական ժողովրդային համառոտված գրելաոճով, այլ սրբազան նշանագրերի մանրամասն պատկերներով, որով այն ստանում էր նվիրական հանգամանք: Այն ընդամենը մի քանի բառ էր պարունակում: Ահիկամն ընթերցեց այն դանդաղ և հատուկ ընդգծումով, և այդ անելիս նրա վերին նուրբ և անմորուք շրթունքը խոնավանում էր զսպված հուզմունքից: Սրանք են Նեքավովի խոսքերը.

«Հուդայի արքա, ինչ ես ուզում ինձանից: Հանգի՛ստ թող ինձ»:

Այս բառերը հնչում են անվեհեր և անհամբեր: Ապիս ցուլը հարվածում է իր պոչի ծայրով, որպեսզի վախեցնի ու քշի Իսրայել կոչվող խանգարիչ իշամեղուներին: Սափանի որդին, սակայն, ժառանգել էր իր հայրական ոգին, որն ի վիճակի էր թափանցել բառերի խորքը: Երկու երկրների աստծու այս կոպիտ ուղերձն իր տիրական սակավախոսության հետևում թաքցնում էր որոշ լուռ հրավերներ և մարտավարական առաջարկներ Հուդայի թագավորի համար. մի ուղերձ, որը, առաքված լինելով նման մի աշխարհակալ գոռոզամտության կողմից, կարելի էր նույնիսկ իբրև հարգանք ընկալել: Շտապ կերպով գումարված պատերազմական խորհրդի նիստում Ահիկամը ներկայացրեց իր մեկնաբանությունն ուղերձի վերաբերյալ. նման մի ուղերձի առաքումն ինքնին արդեն ապացուցում է, որ փարավոնն իր հոգու խորքում մեծապես վախեցած է Հուդայի ազդեցիկ ու մարտունակ բանակի գոյությունից: Չնայած որ Եգիպտոսի գոռոզությունը երբեք իրեն թույլ չէր տալիս կասկածելու իր սեփական հաղթանակի նկատմամբ, այդուհանդերձ, Նեքավովը չէր կարող անտարբեր լինել այն հանգամանքին, որ իր զորքի ցամաքահանումից անմիջապես հետո և նախքան իր առաջին քայլը ձեռնարկելը ստիպված պիտի լիներ ներգրավվելու մի արյունալի պատերազմի մեջ,

որը տկարացնելու էր իր բանակը և հետաձգելու էր իր հիմնական նպատակի իրագործումը: Իր նպատակն ուրիշ բան չէր, եթե ոչ ոչնչացումն Ասորեստանի՝ խլելով նրանից Միջագետքի և Լիբանանի միջև ընկած բոլոր հարկատու երկրները: Նա գերազանց կերպով էր մշակել մի հանդուգն պատերազմ, որը չէր սպառազինվում իր սեփական երկրում, դրա համար էլ այն մշտական վտանգի մեջ էր՝ մնալով առանց մատակարարման, առանց փոխարինող ուժի և առանց նահանջելու հնարավորության: Նրա առջև տարածվում էին հազարավոր ուղիներ, որոնք անցնում էին հիմնականում տափաստանների և անապատային հողատարածքների միջով: Պատերազմից բացի, միթե տափաստանային և անապատական թշնամի ու մրցակից աստվածությունները չպիտի հոշոտեին առնվազն կեսն իր բանակի: Իհարկե, հենց սկզբից փարավոնն ու իր գաղտնի խորհրդականները սարսափով էին նկատի ունենում նման կորուստներ: Հետևաբար, մի արյունալի բախում իրենց հակառակորդի լավ սպառազինված բանակի հետ, այն էլ՝ նրա հոգատար Աստծու սեփական տիրույթում, չափազանց վտանգավոր և անհանդուրժելի պիտի լիներ: «Հուդայի արքա, ինչ ես ուզում ինձանից»: Սա իրականում նշանակում էր՝ «Հուդայի թագավոր, ինչ գին ես պահանջում»: Համաձայն Սափանի որդու՝ թագավորը պետք է մի այնպիսի գին պահանջեր, որը դժվար թե կարողանար ձեռք բերել մի արյունահեղ պատերազմով:

Ահիկամը մոռանում էր, որ ինքը խոսում է ոչ թե քահանաների ու դպիրների հետ, այլ մի ռազմական խորհրդի, որը բաղկացած էր խիզախ մարդկանցից, որոնք երկար և ձանձրացուցիչ մի խաղաղությունից հետո անհամբեր սպասում էին այն օրվան, երբ պիտի նշանավորվեին պատերազմի դաշտում և հասնեին փառքի ու պատվի: Նրանք աղմուկ–աղաղակով լռեցրին Ահիկամին: Փարավոնի գրությունը մի խոստովանություն էր վախի և տկարության, և հենց դրա համար էլ գոյություն ուներ միայն մեկ պատասխան, այն էր՝ չտալ ոչ մի պատասխան: Թագավորը խոստացել էր անձամբ պատասխանել Եգիպտոսին: Դրա ժամը հասել էր: Կարևոր պատճառներ, սակայն, զայրացնում են Հովսիային Ահիկամի դեմ. լրջախոհ ու ճկուն գրագրապետը, որը գիշեր ու ցերեկ իր հետ էր շփվում, դեռևս չէր հասկացել իր ծրագրի սրբությունը: Աստծու արքայությունը, նոր Դավթի թագավորությունը, ճշմարտության

ու աստվածային վարդապետության արմատավորումն աշխարհում հնարավոր չէր ապահովել արքաների միջև եղած սակարկությամբ, այլ միայն ու միայն արքաներից մեկի հաղթանակով:

Երբ արևը մայր էր մտել պատառոտված երկնքում, և նրա վերջին շողերը դեռ շարունակում էին արտացոլալ տաճարի վարագույրի չորս գույներով, թագավորը Բարուքի և Երեմիայի հետ մի անգամ ևս բարձրացավ ամրոցի աշտարակի դիտարանը: Այդ պահին այնտեղ քամի չկար, զով էր ու խաղաղ: Ճամբարի աղմուկը խառնաշփոթ կերպով հասնում էր մինչև այնտեղ: Երկար գծերի վրա երևում էին բանակի երեկոյան կրակները: Հովսիան Տիրոջ առաջ կատարել էր բոլոր աղոթքներն ու ծեսերը՝ ըստ պահանջված կարգի: Նա արել էր ավելին և մեկ անգամ ևս հայտարարել Օրենքի խոսքերը. «Ով վախենում է և թուլասիրտ է, թող գնա և վերադառնա իր տունը»: Այժմ նա լուռ նայում էր երկնքում հետզհետե կուտակվող գիշերվա աստղերին: Այդ ընթացքում Երեմիան հանկարծակի, ինչպես մի կայծակ, ընկավ թագավորի ոտքերը և աղաչեց նրան.

— Արքադ իմ մեծափառ, նախքան հարձակվելդ լավ մտածիր, քննարկիր ու կշռադատիր...

Հովսիան շատ լուրջ դեմքով նայեց աղաչավորի վրա և հարցրեց.

— Կա՞մ արդյոք որևէ խոսք Նրանից:

— Ո՛չ, ոչ իսկ մի խոսք չի հայտնվել ինձ իմ թագավորի գործողությունների մասին...

– Տիրոջից տրված նախազգուշացումներ կա՞ն արդյոք քո մեջ...

— Ո՛չ, ոչ մի նախազգուշացում... Ոչինչ, ոչինչ... Պարզապես իմ սեփական հոգու խորքից եմ աղաղակում քեզ՝ արքայիդ... լավ խորհրդածիր ու կշռադատիր...

Մի թեթևացած ժպիտ ուրվագծվեց Հովսիայի դեմքին.

— Քո սեփական հոգու խորքի՞ց... Սա ուղղակի երկչոտություն է, Երեմիա, մի վախկոտություն, որը նույնիսկ ճակատամարտի նախապատրաստման օրը համակում է ուժեղ ու փորձառու մարդուն... Մի՛ ամաչիր... Կամ թե արդյոք կասկածո՞ւմ ես... Տես, թագավորը վստահում է... Ես իմ պարտքը կատարում եմ, քանզի ես ոչ թե իմ, այլ Նրա փառքին եմ ծառայում... Մի՞թե Նա կխախտի իր ուխտը...

Թագավորը շրջեց իր նայվածքը Երեմիայից դեպի խավարը, մինչ վերջինս սեղմում էր իր դեմքն աշտարակի սառը քարին՝ ծիծաղելի մանկամտությամբ աղաչելով Տիրոջը, որ իրեն շնորհի արգելվածների մեջ ամենից արգելվածը, որն է՝ ապագայի քողազերծումը: Գիշերը վրա էր հասել ամբողջությամբ: Բավական ժամանակ անց թագավորը նորից բարձրացրեց իր ձայնը և կանչեց Երեմիային ու Բարուքին՝ որպես վկաների.

— Լսեք, իբրև վկաներ իմ ուխտի, որ կատարում եմ Տիրոջ առջև... Ով Տեր, եթե վաղը դու ինձ հաղթանակ շնորհես Գերության տան վրա, այն ժամանակ ես իմ ուխտին հավատարիմ պիտի մնամ մինչև վերջին և ամենադժվարին կետը... Յոթերորդ տարում պիտի ստիպեմ բոլոր գերդաստաններին ազատ արձակել իրենց ստրուկներին, քանզի մենք ինքներս էլ ստրուկ ենք եղել Եգիպտոսում... Դուք՝ վկաներդ, լսո՞ւմ եք այս...

Վկաները լսեցին նրան, սակայն Երեմիայի սիրտը չէր թեթևանում:

Հանկարծ արևմտյան հորիզոնը սկսեց կարմրել մանուշակագույն, այնպես որ հեռավոր Կարմելի ուրվանկարն առանձնացավ հատուկ կերպով: Լայն բացված աչքերով նրանք երեքով նայում էին հրդեհների աճող ցոլքերին: Այնուհետև Բարուքը, որ խոնարհաբար միշտ հեռավորություն էր պահում մեծերից, ասաց.

— Փարավոնն այլևս չի սպասում իմ արքայի պատասխանին... Եգիպտոսն իր հետևից այրում է իր նավերը...

Եվ խելամիտ մարդը ճիշտ էր նկատել:

* * *

Պատերազմն սկսվեց նրանով, որ լուսաբացից մեկ ժամ առաջ Քուշն ու Փուդը՝ փարավոնի եթովպիական և նուբիական օժանդակ ժողովուրդները, այրվող նավատորմի մռայլ լույսի ներքո հարձակվեցին այն բարձր դիրքերի վրա, որոնք Մասիահի պաշտպանության տակ էին: Հարձակումները հետ մղվեցին Եփրեմի և Մանասեի աղեղնավորների ու պարսատիկավորների կողմից, որոնք հսկում էին բոլոր կարևոր անցքերն ու լեռնալանջերը: Արևածագին սևամորթների տասնյակ դիակներ արդեն

իսկ փռված էին վայրի թփուտներում: Եվ հարձակվողների խռպոտ բացականչություններին խառնվում էին վիրավորների ցավատանջ աղաղակները: Սակայն, ըստ երևույթին, նաև արևմտյան բանակը սկսել էր հետզհետե դժվարին կացության մատնվել, քանզի առավոտվա առաջին ժամին Մասիահը ձիավոր սուրհանդակներ էր ուղարկել թագավորի մոտ՝ օժանդակ ուժերի պահանջով:

Հովսիան ամբողջ գիշերն արթուն էր անցկացրել աշտարակի դիտակետում: Նույնպես Երեմիան ու Բարուքը չէին հեռացել այնտեղից: Նրանք կանգնել էին իրար մոտ և նայում էին թագավորին ու նրա ենթահրամանատարներին, որոնք շշուկով էին խոսում միմյանց հետ և ձեռքները երկարած դեպի արևմտյան հորիզոնը՝ նշաններ էին անում: Կեսգիշերին Հովսիան արդեն ուղարկել էր իր երկրորդ որդուն: Դանդաղաշարժ Հովաքազը հրաման էր ստացել ամենասրընթաց նժույգով հասնել Երուսաղեմ և թագավորի անունից տնօրինել քահանայապետին, որ անմիջապես հայտարարի տաճարում աղոթքի և պահեցողության օր, որպեսզի պատերազմի ընթացքում Զորաց Տերն անտարբեր չլինի իրենց նկատմամբ: Այս ցանկությունը հաղորդելու համար բավական կլիներ առաքումը որևէ մի ճարպիկ սուրհանդակի: Մեծերը, սակայն, հասկանում էին թագավորին, որը ձգտում էր պարզ ու լուսավոր հոգու տեր իր որդուն զերծ պահել բոլոր տեսակի խռովություններից և ապահովության համար թողնել նրան Երուսաղեմում:

Երբ Կարմելից հասան առաջին զեկույցները, ըստ երևույթին, Հովսիան ընկավ խորը մտքերի մեջ: Արագ քայլերով գննում–գալիս էր դիտարանի ատամնավոր պարսպի ներքնամասում՝ նայելով Երեմիայի վրա այնպես, որպես թե չի ճանաչում նրան: Քուշի և Փուդի գիշերային հարձակումը զգալիորեն խոցել էր նրա մարտական ծրագիրը: Այդ մասնակի ճակատամարտը, նույնիսկ եթե ի նպաստ Հուդայի ավարտվեր, Մասիահի բանակը դարձյալ կմնար շարքից դուրս եկած ու շրջապատված: Այդ լեռնային ճակատամարտի վարագույրի հետևում փարավոնը կարողանում է իր լավագույն գումարտակները նեղ կիրճերի միջով դեպի հարթավայր առաջնորդել: Ասասիահն առաջարկում է արքայական ամբողջ թիկնազորով դեմ դուրս գալ Եգիպտոսի դեմ, Նեքավովի հետ կռիվ մտնել հենց առաջին բլուրների միջև ընկած կիրճում: Թագավորը,

սակայն, մերժում է այդ ծրագիրը: Նա ուզում էր թշնամու դեմ դուրս գալ ոչ թե կիրճում, այլ ընդարձակ հարթավայրում: Մեգիդոյի ամրացված կենտրոնի շուրջը կուտակվում են պատերազմի պատրաստ մարտական ուժերը: Միևնույն ժամանակ Եղիակիմին հանձնարարվում է դանդաղորեն դուրս գալ արևելքից և պատրաստ լինել օգնության հասնելու:

Ծեր կանայք Իսրայելում խորապես հավատում էին Եգիպտոսի ունեցած կախարդական ուժին: Իսկապես էլ, մոգության նման մի բան էր այն, որ արև աստծու մարմնավորումը համարվող փարավոնը կարողացել էր առաջնորդել իր զորքերը նեղ կիրճերի միջով: Առավոտյան զով լույսի ներքո հարթավայրը փայլում էր մինչև հյուսիսային հովիտներն աշխարհի բոլոր տեսակ զենքերով: Ամեն տեղ ծածանում էին դրոշներ: Մարտական կարգով և լավ կազմակերպված, շարք առ շարք կանգնած էին փարավոնի զինվորները: Ճանապարհի մոտ առաջին գծի վրա էին *Լուբիմ* անունով հայտնի ռազմիկները, որոնք Լիբիայի ծովափնյա շրջանների և անապատի որդիներն էին: Նրանք ծառայում էին իբրև վարձկան զինվորներ, խիտ խմբերով կանգնած, իրենց ձեռքերում նիզակներ բռնած՝ պատրաստ էին հարձակման: Նրանց երկու կողմերում համախմբված էր հարյուրավոր շարքերով ուժեղ հեծելազորը: Նրանց ծալքավոր համազգեստներից կարող էր որևէ երեխա անգամ ճանաչել, որ դրանք պետք է լինեին Սինայից եկած սարսափազդու Անու և Սաթիու ժողովուրդների օժանդակ ուժերը, որոնք ամրացված նիզակներով էին կռվում և ամենուրեք սարսափ տարածում: Այդ բոլորի հետևում նշմարվում էին բուն եգիպտացիները: Իսրայելի մեծամեծները ճանաչում էին նրանց՝ շնորհիվ նրանց աստվածների հսկայական պատկերների, որոնք օրը ցերեկով բարձրացվում էին յուրաքանչյուր զորամասի ձախ թևում: Այնտեղ աչքի էր ընկնում «*Սպիտակ պապ*» մարզի բռնակալ ուժը՝ Անուբ (Եգնոր) Հեթը, որի մայրաքաղաքն էր մեծահռչակ Նոփը կամ Մեմփիսը: Պտահ աստծու փայտյա քանդակը բարձրանում էր դեպի երկինք՝ իբրև պատերազմի խորհրդանիշ: Հեռվից նույնիսկ հնարավոր էր տեսնել, որ նա իր ձեռքերում սեղմած պահում էր մականը՝ սրբազան բազեի հետ: Անուբ Հեթի ուժերի կողքին կուտակված էր Սեփինը, որոնց վերևում, որպես Հուդայի սարսափ, բազմել էր ալաբաստրից պատրաստված շնագայլի գլխով Անուբիս աստվածը: Մարզ և աստված, աստված և մարզ:

Այս բանը կրկնվում էր քառասուներկու անգամ, և աստվածներից յուրաքանչյուրն ուներ տարբեր կենդանու կերպարանք: Սակայն այն, ինչ որ Երեմիայի աչքերին ավելի սարսափազդու էր դարձնում Եգիպտոսի բանակին, քան ձիագլուխ Խնում աստծու պատկերը, բազեի գլխով Քանոպոն, կովի գլխով աստվածուհի Հաթորը, քաջահավի գլխով Թոթը, կոկորդիլոսի գլխով Սեբակը, դա այն մեծ և գրեթե անմարդկային անշարժությունն էր, որը պահպանվում էր զրահապատ և զինված ստորաբաժանումների կողմից, որոնք մեռելային լռությամբ պատել էին ամբողջ հարթավայրը:

Եգիպտոսի պատվիրված լռությունն այնքա՜ն ուժեղ էր, որ նույնիսկ խլացնում էր որևէ ձայն Հուդայի կրակոտ շարքերում: Ոչինչ չէր լսվում, բացի նժույգների խրխինջից, պայտերի դոփյունից, անիվների դղրդոցից և քամու առավոտյան երգից: Միզրայիմը սպասում էր: Հարձակման համար ոչ մի նիզակ չէր շարժվում: Բայց այդ լռությունը, սառեցված այդ սպասումը հանկարծ լուսավորում են Երեմիայի միտքը. փարավոնը ցուցադրում էր իր ուժի գերազանցությունը Հովսիայի աչքին: Այդ ուժի միայն մի փոքր մասն էր հավաքել իր շուրջը: Այդ ցուցադրության նպատակն էր մեկ անգամ ևս զգուշացնել Հուդայի թագավորին, վերջին առիթը տալ նրան, որպեսզի հետ կանգնի իր արկածախնդրությունից: Վերջինս ինքն էլ լռակյաց նայում էր ներքև: Ասասիահն ու մյուս հերոս ռազմիկները վաղուց արդեն միացել էին բանակին: Թագավորը նորից միայնակ էր աշտարակում Երեմիայի ու Բարուքի հետ, միայն աշտարակի փողահարն էր նրա մոտ՝ կոր եղջերափողը ձեռքին, պատրաստ հնչեցնելու այն:

— Եգիպտոսը սպասում է,— ասաց Երեմիան հևալով:— Թող իմ արքան վար իջնի ու խոսի փարավոնի հետ...

Նրա խոսքը, ըստ երևույթին, չհասավ Հովսիայի ականջին, քանզի նա դեռ իր խոսքը չավարտած՝ թագավորը նշան արեց փողահարին հնչեցնելու եղջերափողը, որը մի երկար ոռնոց արձակեց: Նրան միացան Հուդայի մյուս փողերն ու ռազմական շեփորները:

Եվ այդ ուժեղ պոռթկումից հետո կրկին կարճատև, մեռելային մի լռություն, նախքան Եգիպտոսի տանապատիկ կատաղությամբ փոխադարձելը՝ արձակելով Լուբիմի նետերի շարանն աշտարակի ուղղությամբ:

* * *

Արևը հատել–անցել էր երկնակամարի կենտրոնը: Հուդայի երեք ուժեղ հարձակումներից հետո զինվորները ստիպված էին նահանջել և ապաստանել Մեգիդոյի պարիսպների հետևում: Հովսիան կրել էր մարդկային մեծ կորուստներ՝ կորցնելով նաև նժույգներ ու ռազմակառքեր: Դաշտը լեցուն էր մեռելներով, որոնք փռված էին զանազան տարօրինակ ու տանջահար դիրքերով: Առաջին անգամ էր, որ Երեմիան առնում էր մարդկային արյան թարմ ու սարսափելի հոտը, որը բարձրանում էր Իսրայելի հարթավայրի զոհասեղանից:

Բայց Եգիպտոսի շարքերը ևս նոսրացել էին վերջին կատաղի գրոհի հետևանքով և սասանվել: Հուդան մի խորը սեպ էր խրել Լուբիմի մարտական շարքերում: Երկուստեք սպառվածությունն այնքան մեծ էր, և երկու բանակներն իրենց այնքան հեռու էին պահում իրարից, որ կարծես թե իրար հետ մի երկարատև ու մարտավարական զինադադար էին կնքել:

Ամրոցի մեծ բակում թագավորը կանգնած էր՝ շրջապատված իր բանակի հրամանատար իշխաններով և սուրհանդակների մի բազմությամբ: Սակայն ո՞ւր էր Եղիակիմը: Արդեն մի քանի սուրհանդակներ շտապել էին դեպի արևելք՝ Եղիակիմի քայլերն արագացնելու նպատակով: Հովսիան հանել էր վրայից իր պատմուճանը և մնացել սպիտակ ներքնազգեստով: Պալատի սպասավորները կուժերից սառը ջուր էին լցնում նրա գլխին և ուսերին: Տխեղծ ներքինին՝ նրա սենեկապետը, հևալով շփում էր նրա մարմինը կոշտ սրբիչներով: Ընթացքում Հովսիան նոր հրամաններ էր արձակում: Նա ուզում էր անձամբ ղեկավարել չորրորդ և վճռական գրոհը: Բոլոր մարտակառքերը, ամբողջ հեծելազորը, ողջ մնացած բոլոր հետևակները պետք է հավաքվեին այդ հարձակման համար:

Թագավորի առաջ ներկայացան իրար կողք շարված իր մարտակառքերը, որպեսզի իր համար ընտրի հարմարագույնը: Նա ընտրեց լավ պատրաստված երկանիվ մի կառք՝ բրոնզյա հսկայական ծածկով, որի պաշտպանիչ վահանը հասնում էր մինչև մարդու կոնքերի բարձրությանը: Ոսկյա կապարճը պարունակում էր շատ երկար նետեր, որոնց ծայրերը ոչնչով չէին տարբերվում նիզակների ծայրերից: Կայտառ ու հոյակապ

նժույգները, որոնք լծված էին մարտակառքերին, իրենց գլխին կրում էին ջայլամի երկնագույն փետուրներ և միևնույն գույնի ոսկեհյուս երիզներ:

Ասասիահը թախանձագին խնդրում էր թագավորին չօգտագործել այդ կառքը: Ոսկով և արծաթով պատած նման մի կառք լավ էր շքահանդեսների համար, բայց ոչ երբեք՝ պատերազմի: Հովսիայի դեմքը մռայլվեց: Նա տհաճությամբ ու կոպտությամբ թիկունք դարձրեց Ասասիահին, քանզի դա հենց իր ջերմ ցանկությունն էր՝ արքայական փառահեղ շքեղությամբ դուրս գալ փարավոնի անսահման ամբարտավանության դեմ: Մյուս կողմից էլ որևէ մեկը, եթե թագավոր չէր, ինչպե՞ս կարող էր հասկանալ իրեն: Նա կառք բարձրացավ և զննեց նրա ծածկի պրկված պարանը: Կառապանը ձեռքն առավ նժույգների սանձերը: Հանկարծ թագավորը շուռ եկավ և բարձրաձայն կանչեց Երեմիային: Նոր հրաման տրվեց: Զորսանիվ հսկա կառքերից մեկը պետք է հետևեր Հովսիայի ջոկատին: Այդ կառքով չպետք է փոխադրվեին զինվորներ, այլ նրանում պետք է լինեին, մի բարձրաստիճան քահանայի կողքին, արքայի բարեկամները՝ Ահիկամն ու Երեմիան: Իսրայելն իր հետ կուռքեր չպետք է տաներ պատերազմ: Այդուհանդերձ, Հովսիան ուզում էր Աստծուն էլ ներքաշել պատերազմի մեջ, որպեսզի արթնացնի նրա ռազմական արդար զայրույթը: Մաքրակրոն քահանայի աղոթքը հմայում էր նրան, բայց այդ աղոթքից ավելի անաթովթցի մարդու ներկայությունն էր, որ գոտեպնդում էր նրան, քանզի նա համոզված էր, որ երբ Երեմիան իր թիկունքին է, դա նշանակում է, որ Տերն էլ իրենից հեռու չէ:

Հովսիայի ռազմական հրամանատարները նույնպես նստեցին իրենց կառքերը: Զախ կողմում Ասասիահը, իբրև թիկնազորի պետ, մնաց թագավորի անմիջական հետևում: Աջ կողմում Ամիտալի հայրն էր, ծերունի Երեմիա Լիբնացին, որի պղնձագույն դեմքն արդեն այդ իսկ պահին շատ հեռու էր պատերազմի ոգևորիչ ցնծությունից: Արքայական կառապանի մտրակի շառաչյուն հարվածը տվեց մեկնումի նշանը: Ամրոցի բակում, ինչպես մի դղրդալից կարկտահարություն, լսվեցին կառքերի և ձիերի սմբակների հանած աղմուկը, պատերազմի կոչերը: Արքայական կառքին հետևող ճռճռացող քառանիվ կառքում նստած ծեր քահանան, Ահիկամն ու Երեմիան ամբողջ ճանապարհին ցնցվում էին այնպես անխնա, որ գրեթե ուշաթափ են լինում: Կառքերը կանգ առան Մեգիդոյի

հյուսիսային դարպասի առաջ: Ամեն կողմից հնչեցին եղջերափողերը՝ հավաքվելու ազդանշանով: Եկան միանալու նաև այլ ջոկատներ, որոնք բոլորվեցին թագավորի շուրջը: Կառքերի կողմերում հավաքվեցին արքայական թիկնազորի հեծյալներ: Դրանց թվին ավելացան նաև մի խումբ արագավազ նիզակավորներ:

Արդեն վերսկսվել էին նետաձիգների, նիզակավորների և պարսատիկավորների բախումները: Մթնոլորտը լցված էր թունալից շաչյուններով ու սուլոցներով: Այժմ Հուդայի առաջապահներն են, որ հարձակվում են Լուբիմի կանոնավոր շարքերի վրա: Հարյուրավոր կետերում սանձազերծվում են նիզակների ու սուրերի արյունոտ պայքարներ: Երեմիայի հոգին ամայի է ու դատարկ: Սպանդների միօրինակ աղաղակը լցնում է նրա ականջը, ինչպես պղտոր ջուրը՝ խեղդվողի ականջը: Ինչպե՞ս կարելի էր հրապուրել Տիրոջը, որ դուրս գա իր օթևաններից: Եթե Տերն այդքան հեռու չլիներ այս պատերազմից, ինչպես որ է իրականում, Երեմիան ոչ իսկ ուժ կունենար իր մտածումները կենտրոնացնելու նրա վրա: Նա գիտակցում է սարսափով լցված, որ այդ օրը թագավորը մնալու է պատերազմում առանց Տիրոջ օգնության: Հեծյալների ու ձիերի ստվերները վաղուց արդեն երկարել էին: Սակայն որտե՞ղ էր արևելյան բանակը:

Իսկույն բարձրացավ մի խելագար աղաղակ ու բախվեց քաղաքի պարիսպներին, ասես թե երերացնում էր դրանք իրենց հիմքերից: Հուդան հաղթում էր: Լուբիմի բանակի երկարավուն ու ամրակուռ շարքերը չորս տեղերից խոցված էին ու քայքայված: Եգիպտոսին օգնող ժողովուրդների անջատ խմբերը ցած են դնում իրենց զենքերը, անձնատուր են լինում կամ փախչում դեպի հյուսիս: Ազդված նրանց փախուստից՝ Անու և Սաթիու ռազմիկները նույնպես նստում են իրենց ձիերն ու փախուստի դիմում: Եփրեմի և Մանասեի աղեղնավորները մոնչալով ցատկում են ու նետերի տարափով ողողում փախչողներին: Դիմացի դաշտը դատարկ էր: Նաև քառասուներկու մարզերից ընտրված եգիպտական զորախմբերը սկսում են սասանվել այս փախուստի ազդեցության հետևանքով, որը հարկավոր էր կասեցնել: Հովսիայի ձայնը ճեղքում–անցնում է հազարապատիկ անգամ կրկնվող աղաղակը: Մոտ էր Աստծու արքայությունը երկրի վրա, և նոր Դավիթը չէր սխալվել իր համոզման մեջ: Խիտ զանգվածներով իրար մոտ են գալիս արքայական

ջոկատները՝ մարտակառքերը, հեծյալներն ու հետևակները: Թիկնապահների հեծյալ զորքը գնում է բոլորից առաջ: Թշնամիներից մաքրված դատարկ տարածության մեջ շարժվում են դղրդացող կառքերը: Բարձրանում է փոշու մի վիթխարի ամպ: Նրա մեջ ծածկվում է նոր Դավիթը, ինչպես Տերը՝ ամպրոպի մեջ: Երեմիան այլևս ոչինչ չի տեսնում, կառչում է կառքի եզրակալին, որպեսզի դուրս չշպրտվի այնտեղից: Նետեր, քարեր, նիզակներ անցնում են նրա մոտով բազմաձայն շաչյունով: Ամպի փոշու մեջ հեծյալներն ընկնում են ձիերից, վերջիններս շարունակում են իրենց վազքը, որպես թե անկախ ռազմիկներ լինեին: Մահը, որի մասին ոչ ոք հոգ չէր անում, մնում էր հետևում: Հանկարծ պատառոտվում է ամպը բազմաթիվ մասերի: Լսվում է հաղթանակի նոր բացականչություն: Անուբ Հեթը՝ «Սպիտակ պատի» մարզը, պարտության էր մատնվել: Պտահ աստծու պատկերն ընկել էր Եհովայի ձեռքը: Երեմիան տեսնում է, թե ինչպես է փայտյա այդ հսկա քանդակը բազմաթիվ ձեռքերի վրայով մատուցվում թագավորին: Նոր Դավիթը գրեթե գերմարդկային զորությամբ առնում է աշխարհակալ համարվող կուռքը, խփում է գետնին ու ջարդում: Եվ պարբերաբար նույնը պատահում է նաև Անուբիսի՝ ալաբաստրե քաղաքի հաչող աստծու հետ, Ուաթ մարզի կովագլուխ Հաթոր աստվածուհու հետ, որն իր եղջյուրների արանքում կրում էր արևի սկավառակը: Փոքրացած ամպը կրկին անցնում է որոտաձայն թշնամիներից մաքրված տարածության վրայով:

Այնուհետև հաղթանակի ընթացքը միանգամից կանգ է առնում: Խորը և ընդարձակ ջրային մի խրամ բաժանում էր տարածքը երկու մասի: Մարտակառքերին լծված ձիերը ծառանում են ու խրտնում: Խրամի հետևում նրբասլաց բարձրանում էր մի բլուր: Հարձակվող բանակի մահացու կերպով սպառված ուժերը, սակայն, ականատես են լինում բլրի լանջին մի այնպիսի տեսարանի, ինչը պապանձեցնում ու սարսափ է պատճառում նրանց: Բանակի երեք ստորաբաժանումներ, իրար հետևից շարք կազմած, իբրև բրոնզյա հսկաներ, գրավել էին բլուրը:

Այդ ռազմիկները դեռ չէին օգտագործել իրենց նիզակները, ոչ մի վիրավորում չէին ստացել: Լավ հանգստացած ու թարմացած, մեջքներն արևին տված՝ սպասում էին Հովսիայի մոլեգնած ու արյունահեղ զորքին: Պողպատյա կարճ զրահները, բազպաններն ու ազդրապանակները

փայլում էին իրենց նիհար մարմինների վրա: Ձիու պոչերի մազից կազմված դարչնակարմիր փնջերը և փետուրները կախվել էին ալիքավոր կերպով իրենց սաղավարտներից: Քամիներից ծածանվող այդ ծոպերը միակ շարժվողն էին, որ տեսանելի էին վերոհիշյալ բանակի ստորաբաժանումներում: Հուդայի ջոկատներում բերնից բերան էր անցնում մի սարսափազդու բառ՝ *Յավան*: Դրանք *իոնացիներն* էին՝ փարավոնին օժանդակող ժողովուրդները հյուսիսային կղզիներից ու երկրներից, որոնցից նա կազմել էր իր անպարտելի թիկնազորը: Հրամանի բարձրագոչ ձայնը տարածվում է նրանց վրա: Հետևակների առաջին երեք շարքերն ուղղում են հարձակման պատրաստ իրենց նիզակները դեպի առաջ: Թվում է, թե իրար միաձուլված երեք հսկա մանգաղներ սևեռուն նայում են Հուդայի վրա: Բայց սա միայն սպառնալի շրջանակն էր մի ուշագրավ պատկերի: Ցածր բլրի գագաթին, որը Կարմելյան լեռների արևելյան լանջի շարունակությունն էր, հավաքվել էր լուսաշող մարդկանց մի խումբ՝ բոլորված մի տարօրինակ կառույցի շուրջը: Երեմիան բացուխուփ է անում աչքերը, որպեսզի ավելի լավ տեսնի: Այդժամ հաստատում է, որ վերջալույսի ոսկեգույն շողերի տակ փայլփլացող այդ կառույցը փարավոնի վեհաշուք գահն էր՝ դրված մի շքեղ կառքի վրա, որտեղից նա մասնակցում էր իր մղած մարտերին: Այդ գահակառքը կարծես թե ներկայացնում էր ավելի մի խորհրդանշական անշարժ պատկեր, քան թե մի իրական մարտակառք: Ոչ մի կողմից չէին երևում կառքին լծված նժույգներ: Գահակառքում, աստվածանման կերպարանքով պաճուճված, կանգնել էր մի միայնակ մարդ՝ անտարբեր բոլոր անցուդարձին: Եգիպտական կրկնակի թագը՝ առջևից դուրս ցցված սրբազան օձի գլխով, գերազանցում էր նրա նրբակազմ կերպարանքի շնորհը: Պալատական ծառայության անձնական խորհրդականները, խայտաբղետ հագուստներ հագած, շրջապատել էին կառքը, ուր փարավոնի գահն էր, և ըստ երևույթին տևապես կանչվում էին իրենց լռակյաց տիրոջ մոտ: Քանզի կրկին ու կրկին մեկնումեկը թեթև քայլերով մոտենում էր, երանությամբ խոնարհվելով՝ համբուրում գահը, ապա միևնույն քայլվածքով իր տեղն էր վերադառնում: Այդ ակնառու կառքի հետևում կային պաշտոնյաների ուրիշ շարքեր, որոնք պատրաստ պահում էին մի ամպհովանի: Երեմիան տեսնում է նաև երկու բարձր վանդակներ Նեքավովի աջ

և ձախ կողմերում: Նրանցից մեկում թվում էր, թե պպզած է մի անշարժ կերպարանք, իսկ մյուսում՝ ինչ–որ մեծ ճկունությամբ շուրջբոլորը ցատկոտող մեկը: Ո՞վ չգիտեր, որ երկրի վրա մարմնավորված արև աստված Նոփն իր հետ տանում էր միշտ Պտահի մի ոսկյա բազե և մահացածների արքայությանը նվիրված մի սրբազան շնակապիկ:

Երեմիայի աչքերն այլևս չեն նայում արևի տակ փայլող փարավոնի պատկերին, այլ իր սեփական թագավորի ավերված պատկերին: Տիրոջ կողմից էլ որևէ շշուկ չէր լսվում այդ սարսափելի լռության մեջ: Միայն Երեմիայի սեփական հոգին էր աղաղակում ու դիմում իր իսկ սեփական խեղճ կարծիքին: Մի՞թե իր քովը կանգնած Ահիկամն էլ նույնը չէր մտածում: Իոնացիների ջոկատները մնում են անշարժ: Մեծաթիվ հեծելազորը հայտնվում է բլրի լանջին և մնում այնտեղ քարացած: Նրան հետևում են շողշողացող մարտակառքերի շարքեր: Սարսափելի սպանդից հետո եգիպտական ոչ մի զենք չի պատրաստվում հարձակվել: Մի՞թե դա Աստծու գործը չէր: Նեղոսի ինքնակալը, չնայած ամբողջ արյունահեղությանը, չնայած աստվածների փշրված արձաններին ու պատկերներին, ուզում էր ժամանակ տալ Հուդայի թագավորին՝ խելքի գալու: Երեմիան սեղմում է Ահիկամի ձեռքը: Նրանք հասկանում են իրար, ցատկում են կառքից դուրս, սկսում են վազել ու գոռալ, բայց դեռ հարյուր քայլից ավելի հեռավորություն կար իրենց և թագավորի մարտակառքի միջև:

Հովսիան, սակայն, որ հաղթել էր Եգիպտոսի մարզերից Լուբիմի, Անուի և Սաթիուի ռազմիկներին և ջարդել նրանց կուռքերը, չի հասցնում հասկանալ Երեմիայի ու Ահիկամի խոսքերը: Հաղթանակի գինովության ճանապարհին նա կորցրել էր իր սաղավարտը: Գլխի մազերի երկար փնջերը քրտինքից կպել էին նրա դեմքին, որը փոշու, կեղտի և արյան հետքերի պատճառով բոլորովին այլանդակված էր: Մահվան գինովությունը և պատերազմի մոլեգնությունը նույնպես աղավաղել էին նրա դիմագծերը: Այնուամենայնիվ, նրա ձեռքերը հանգիստ էին: Նա զգուշորեն դնում է երկար և հեռահար նետերից մեկն աղեղի լարին, ձգում է այն առավելագույնս ոտքի լծակով: Տեսանելի կերպով նետը բարձրացնում է, կորաձև անցնում է սուլելով Յավանի գլուխների վրայով և ըստ երևույթին արտորանքով կորչում Եգիպտոսի արև աստծու մարմնացումը նկատվող անձի ուղղությամբ: Արդարև բլրի գագաթին, ուր փայլում էր

փարավոնի գահը, հուզումնալից աղաղակ է բարձրանում: Արդյոք նետը խոցե՞լ էր մարմնացած աստծուն՝ փարավոնին: Ո՛չ: Նրա անձնական խորհրդատուները շտապում են վանդակներից մեկի մոտ ու հավաքվում նրա շուրջը: Հովսիայի նետը, ամենայն հավանականությամբ, սպանել կամ վիրավորել էր մահացածների արքայությանը նվիրված սրբազան շնակապիկին:

Ամբողջը տևում է մի ակնթարթ: Բայց ինչ որ հետո է տեղի ունենում, Երեմիայի սրտում այն չի չափվում ժամանակային չափանիշներով: Նա դեռևս հասցնում է տեսնել, թե ինչպես թագավորը, գլխավերևում ճոճելով մի նիզակ, նշան է տալիս հարձակման. «Անցնել ջրային խրամատը»: Ահիկամն ու ինքը ստիպվում են շտապ վերադառնալ, որպեսզի չտրորվեն բանակի ոտքերի տակ: Դեռևս չէին հասել իրենց կառքին, երբ սկսվում է կատաղի գրոհը: Տարածքը, որ պետք է անցնեին, բավականին անհարթ էր ու ընդարձակ: Ձիերի մի մասը տապալվում է, մյուսը ճիգ է թափում մագլցելու կողմնակի ճանապարհով: Երեմիայի, Ահիկամի և քահանայի քառանիվ կառքը կանգ է առնում ջրային խրամի այս կողմում: Մտրակի ոչ մի հարված ի վիճակի չէր առաջ մղել ձիերին: Այդտեղ, սակայն, նրանք մենակ չէին: Հարյուրավոր նորեկներ էին հավաքվել այդտեղ. ձիերից գլորված հեծյալներ, վիրավորներ և այնպիսիք, որոնց քաջությունը խորտակված էր՝ ի տես փարավոնի և նրա զորքի: Շատերը պատերազմի ամենադժվարին պահին լքել էին թագավորին: Ջրային խրամի մյուս կողմում բարձրացել էր մի նոր ամպ և ամեն ինչ ծածկել: Փոշու, հողի, արյան, զայրույթի ու ցավերի տնքոցների պատճառով գնալով այդ ամպն ավելի էր սևանում: Դրան զալիս է միանալու մի երկրորդ ամպ, որն իրենով պարուրում է ներխուժող Յավանի երթն ու նրա հեծելազորի հարձակումները: Միայն նիզակների հարվածների փայլատակումը և սրերի բախումը մերթընդմերթ պատառոտում էր ամպը ծվենների: Նաև այնտեղ՝ Մեգիդոյի առաջ, ուր կրկին հավաքվել էին Լուբիմի ջոկատները, նոր մարտեր են սկսվում: Արևն արդեն Կարմելի վերևում էր, ուր Մասիահը դեռևս շարունակում էր պաշարված մնալ Քուշի և Փուդի բանակների կողմից: Սակայն ո՞ւր էր Եղիակիմը: Երկար ժամանակից ի վեր Հուդայի ռազմիկները տալիս էին այս սարսափելի հարցը: Հանկարծ բանակին ուղեկցող ծեր քահանան, որից մարդ չափից

շատ բան էր ակնկալում, սկսում է հեկեկալ: Ծածկում է իր գլուխը և բռունցքներով ծեծում կուրծքը՝ երեխայական առաջարկություններ անելով հեռավոր ու անհաղորդ Տիրոջը:

Հողի, արյան ու աղաղակների վիթխարի սև ամպը միշտ իր սեփական առանցքի շուրջն է պտտվում, ինչպես մի պտուտահողմ: Այն հետուառաջ է գնում, տարածվում է և կծկվում: Մարտնչող իոնացիների փոխարեն գալիս է կայտառ ու լավ հանգստացած մի նոր ջոկատ՝ հաստատվելու բլրի լանջին: Ով նայում է փարավոնին, տեսնում է, որ նա չի փոխել իր աստվածանման կեցվածքը՝ առանց դույզն-ինչ ազդվելու շրջապատի իրադարձություններից: Պալատական սպասավորներն ու ներքին թիկնազորը շրջապատում են փարավոնի գահակառքը, որպեսզի իրենց մարմիններով ու վահաններով պաշտպանեն այնտեղ բազմած բարի աստծուն: Այդ պահին թվում էր, թե սև ու պտտվող ամպը հանկարծ կանգ է առնում: Տղամարդկանց մի շտապող խումբ պոկվում է նրանից, կռացած և արագ վազում դեպի ջրային խրամը: Իրենց հետ տանում են մեկին: Լիբնայի ծերունին երերալով գնում է նրանց առջևից, նյարդայնացած նշաններ է անում, ընկնում է գետնին և կրկին վեր չի կենում: Ամեն ինչ կատարվում է շշուկով և թեթևաքայլ, ինչպես երազում: Նույնիսկ պատերազմի աղաղակները կարծես թե հանկարծ լռած լինեին: Իր գիտակցությունը կորցրած արքան պառկած էր քառանիվ կառքում: Հոգնատանջ ու հյուծված հարյուրավոր մարտիկներ ականատես են լինում այդ ահավոր դժբախտությանը: Ամպն արդեն հոգնած սկսում է քայքայվել: Ասասիահը պայքարելու էր մինչև իր վերջին զինվորը: Քիչ ժամանակ էր մնացել՝ փրկելու թագավորին: Ահիկամն իր ձեռքն է առնում սանձը: Կառքը, մի քանի ձիավորների ընկերակցությամբ, կողմնակի ճանապարհներով շտապում է դեպի Մեգիդո: Երեմիան իր գրկում պահում էր վիրավորի գլուխը: Նա անասելի վշտով էր նայում արյունով, քրտինքով ու կեղտով ծածկված այդ գլխին: Փախուստի վերջում իր սեփական թիկնոցը թաթախված էր արքայական արյամբ: Երկու *իոնական* նիզակներ խոցել էին Հովսիայի կուրծքն ու ձախ կողը: Շրջանցելով թշնամուն՝ նրանք հասնում են ամրոց և մուտք գործում այնտեղ արևմտյան դարպասով: Վիրաբույժներն ու ներքինին հապճեպորեն կապում են արքայի վերքերը, որը տնքում էր ցավից, բայց գիտակցության

չէր գալիս, միայն մեկ անգամ է բացականչում. «Դեպի Երուսաղեմ»: Ահիկամը չի դադարում պնդել դրա վրա: Ճակատամարտն արդեն տանուլ էին տվել, ապագան մութ էր: Մահամերձ վիրավորի կամքը պետք էր անհապաղ կատարել: «Դեպի Երուսաղեմ», հենց այդ գիշեր և կատաղի արագությամբ: Լավագույն կառքի մեջ դնում են ընտիր բարձեր ու վերմակներ: Փափուկ բարձերի վրա պառկեցնում են թագավորին՝ գլուխը Երեմիայի գրկում, իսկ ոտքերն էլ Ահիկամի ձեռքերում:

ԳԼՈՒԽ ՏԱՄՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

ՄԵԾ ՄԵՂԱԴՐԱՆՔԸ

—Տեր, ինչքան հաճախ հետդ վիճաբանեմ, միշտ էլ դու իրավացի ես դուրս գալիս: Հանուն արդարության, սակայն, պիտի շարունակեմ պաշտպանել իմ դատը: Ինչպե՞ս է, որ ամբարիշտների բռնած գործերը հաջող են, և բոլոր նրանք, ովքեր անհավատարիմ են ու քեզ են անարգում, ամեն ինչ ունեն առատությամբ: Դու նրանց տնկում ես հոյակապ, որպեսզի նրանք արմատավորվեն, աճեն և պտուղ տան: Դու, Տեր, թեև նրանց շուրթերի վրա ես, սակայն երբեք՝ նրանց սրտերում:

Սրանք խոսքեր են, որոնք Երեմիան հաճախ արտասանել էր իր նեղության ժամանակ: Բարուքը դրանք գաղտնորեն արձանագրել էր այն մագաղաթի վրա, ուր հավաքում էր իր ուսուցչի որոշ ասույթները: Սակայն ինքը՝ Երեմիան, իր հակաճառությունը սովորել էր ուղղակի մի մեծ ուսուցչի մոտ, որը Հովսիան էր՝ Հուդայի թագավորը, երբ նա, ծանրորեն վիրավոր, օրեր շարունակ հոգեվարքի մեջ էր: Այդ մեծ գանգատն ամենևին չէր վերաբերում ամբարիշտների ունեցած հաջողության ու երջանկության, այլ դա նկատի ուներ բարեպաշտների և օրինապահների կրած տառապանքն ու դժբախտությունը:

Պահեստային ճամբարներում ձիերը հաճախակի փոխելուց հետո երկրորդ օրվա կեսօրին հազիվ հասնում են Եփրեմի դարպասի մոտ: Թագավորը միայն հրաշքով է կարողանում դիմանալ ճամփորդության տանջալից ժամերին: Ձիավոր սուրհանդակները շտապում են կառքից առաջ հասնել տաճար և պալատ՝ հաղորդելու թագավորի ծանր վիրավորման լուրը, նրա վերադարձն ու Մեգիդոյի ճակատամարտի ցավալի արդյունքը: Չնայած որ քահանաներն ու պալատական իշխանները

սարսափահար տեղեկանում են վատ լուրի մասին, սակայն չեն բացում իրենց բերանը, որպեսզի չտարածեն այն: Այդուհանդերձ, ինչպես պատահում է նման զգայացունց դեպքերում, լուրը, անցնելով լռության ճեղքերի ու ծակոտիների միջով, գտնում է ժողովրդին հասնելու իր ճանապարհը: Առաջին սուրհանդակի՝ Եփրեմի, դարպասով քաղաք մուտքից հազիվ թե մի ժամ անց ամբողջ Երուսաղեմն արդեն տեղյակ էր ամեն ինչից և մի քիչ էլ ավելի: Այդ առավոտ Երուսաղեմի բոլոր անգործներն ու աննպատակ թափառողները խուժում են տաճարի արտաքին գավիթը՝ հիվանդագին և անհաղթահարելի հետաքրքրությունից դրդված: Գրեթե անխոս՝ բազմությունը շարժվում է հյուսիսային մեկ դարպասից մյուսը: Եթե հայտնվեր մի բարձրաստիճան քահանա կամ պալատական պաշտոնյա, անմիջապես շրջապատում էին նրան՝ հարցեր տալու համար: Օրերի թավալման հետ անպատասխան մնացած հարցերն էլ գնալով ավելի էին սրվում: Արդյոք թագավորը մեռա՞ծ է, գերեվարվա՞ծ, թե՞ վիրավոր: Արդյոք արքայազն Եղիակիմի բանակը նույնպե՞ս ընկել է արև աստծու՝ Նոփի մարմնացումը համարվողի ձեռքը: Գուցե Եղիակիմը, որն իր հոր թշնամին էր, դավաճանել է: Գուցե փարավոնն արդեն Եփրեմի լեռներում է և արշավում է դեպի Երուսաղեմ: Այս բոլոր անորոշ շշուկներն իսկույն լռում են, երբ արևն արդեն հատել էր երկնակամարի կենտրոնը: Ամիտալ թագուհին, իր զգեստների մեջ հույժ փաթաթված, իր մի քանի կանանց հետ շտապ քայլերով գնում էր դեպի Բենիամին կոչվող հյուսիսային փոքրիկ դարպասը: Բազմությունը հետևում է նրան, բայց թիկնապահների ամրացված դիրքերը, որոնք պահպանում էին դարպասի անցքը, իրենց նիզակներով հետ են մղում առաջացողներին:

Թագավորը շտապ դուրս է բերվում կառքից և դրվում մի պատգարակի վրա, որը խորն էր և այդ պատաճառով ասես մի դագաղ լիներ: Այդպիսով նա ծածկված էր ամբոխի աչքից: Նույնիսկ Ամիտալը հազիվ կարողանում է մի հայացք գցել նրա դեմքին: Թագավորին տանող խումբը շտապ կերպով անցնում է ամբոխի մոտով, որը հանկարածկի փոխում է իր պահվածքը և սկսում է ողբաձայն հառաչել՝ նոր ըմբռնելով կացության լրջությունը և մահամերձ արքայի մեծությունը:

Հովսիային պառկեցրին իր ննջասենյակի բազմոցին: Նա չընդունեց Ամիտալի ձեռքով իրեն մատուցված կազդուրիչ խմիչքը, ոչ էլ թողեց, որ

իր անձնական բժիշկը փոխի իր վերքերի արյունոտված վիրակապերն ու բուժիչ բալասանով օծի դրանք: Նրա աչքերը փնտրում էին Երեմիային և ասես հրահանգում. «Դու մնա այստեղ»: Նա դեռևս ոչ մի բառ չէր արտասանել, երբ բոլորովին ուժասպառ ընկավ խորը քնի մեջ: Ամիտալի հետ նրա սնարի մոտ մնացին Երեմիան և Ահիկամը: Գերհոգնածությունից Ահիկամը նստած տեղն անմիջապես քնեց: Երեմիային, սակայն, հոգնությունն արթուն էր պահում, ինչպես կրակը, որ նախքան հանգելը բազմապատկում է իր բոցը: Կարճատև խորը քնից հետո զարթնեց թագավորը: Թվում էր, թե նա իրեն ավելի լավ է զգում: Մահվան գունատությունն անհետացել էր նրա այտերից և դրա փոխարեն կարմիր բծեր էին ձևավորվել այնտեղ: Մարմնականից բոլորովին դուրս՝ մի հոգևոր ջերմություն էր աշխուժացնում նրա էությունը: Ամիտալը, որ մինչ այդ դիմադրել էր հոգնությանը, ի վերջո փլուզվում է վիրավորի անկողնու առաջ, դժվարությամբ է շնչում, և հեկեկալով սեղմում է իր դեմքը նրա թուխ ձեռքին: Հովսիան կարիք ուներ խոսելու Երեմիայի հետ: Նրա ձայնը թեև շատ ցածր էր, բայց հնչում էր հստակ, որպես թե *իոնացի* ռազմիկի ոչ մի նիզակ ճեղքած չլիներ նրա թոքը: Այլևս ժամանակ չկար տղամարդու անպատում ցավով հրաժեշտ տալու սիրելի կնոջը: Հասել էր ծանրագույն ժամը, արդարության սառցակալած պահը: Մահվան պատգամաբերի մեկնած ձեռքը սպասում էր, ակնթարթները հաշվված էին: Երբ թագավորը մենակ մնաց Երեմիայի հետ, տևապես շնչեց զգուշությամբ, խորը և կանոնավոր, որքան որ հնարավոր էր, որպեսզի ուժ հավաքի արտահայտելու իր մեծ մեղադրանքի սաստկությունը:

— Ես պահել եմ Ուխտը... Նա է խախտել այդ Ուխտը...

Վիրավորը հարբածի նման խոսում էր ծանր լեզվով: Նույնիսկ Երեմիային այլևս չէր կոչում իր սեփական անունով, այլ՝ Անաթովթցի, նրա ծննդավայրի անունով: Գուցե մոռացել էր, թե ինչպես է կոչվում նա, գուցե իր համար բավարար չէր մի անձի անունը՝ իբրև վկա իր հակաճառության:

— Նա է խախտել Ուխտը... Խոսիր, Անաթովթցի, Նրա անունից... Քանզի Նա քեզ էր այցելում իր խոսքերով ու տեսիլքներով... Ինչ ունես ասելու...

Երեմիան փորձեց խուսափել հարցից.

— Իմ արքան չպետք է խոսի... Իմ արքան պետք է քնի, որպեսզի շուտ ապաքինվի...

Հովսիան զայրացած հակադարձեց.

— Ժամանակ չկա բարբաջանքների... Պատասխան տուր ինձ, Անաթովթցի... Դու գուշակուհու բերանով խոսել ես ինձ հետ և ասել, թե խաղաղությամբ պիտի իջնեմ գերեզման, ոչ մի դժբախտություն ինձ չի պատահելու... Արդ, եթե իսկապես գիտենամ իմ մեղքը... Եթե ճանաչեմ իմ հանցանքը... Այո՛, այն ժամանակ միայն խաղաղությամբ կիջնեմ գերեզման... Իսկ եթե ես չիմանամ, թե որն է իմ մեղքը, եթե չգիտակցեմ իմ հանցանքը, ինչպե՞ս պիտի կարողանամ խաղաղությամբ մեկնել այս աշխարհից...

Հովսիայի շունչն սկսեց կտրվել: Ցնցվում էր ընդհատվող հևոցներից: Երեմիան սեղմեց նրա ձեռքը: Քիչ անց թագավորը կրկին ուժ հավաքեց.

— Ես քեզ հետ եմ խոսում, Անաթովթցի... Ես քեզ հետ եմ խոսում, Եհովա... Ինչո՞ւ տվեցիր ինձ քո վարդապետությունն ու պատվիրանները, եթե նախօրոք մտադիր էիր ինձ դատապարտելու և ոչնչացնելու... Ես չեմ անարգել քո օրենքը... Երդման սյան մոտ ուխտել եմ պահել այն... Տոնել եմ մեծ Զատիկը՝ երեսուն հազար մատաղացու ցուլերով, գառներով, խոյերով և նոխազներով, ինչպես նաև բերքի երախայրիքով... Կատարել եմ քո պատվիրանները: Երկրում ամեն տեղ գիշեր ու ցերեկ քեզ համար եմ աշխատել... Քանդել եմ Բահաղի խորանները և ցրել այնտեղ ամփոփված մեռելների ոսկորներն ու մոխիրները... Եվ Դու ի՞նչ արեցիր ինձ հետ... Պատասխան տուր ինձ, Եհովա, Անաթովթցու միջոցով...

Այս մեղանդրանքի դիմաց Տիրոջ խոսնակը պահում էր քար լռություն: Այո՛, այս մեղադրանքը սուր շեղբի նման թափանցում էր իր հոգին, և ինքը նույնպես համաձայն էր դրան: Իսկապես, ինչո՞ւ Տիրոջ կայծակը հարվածեց հենց այս թագավորին, որը Դավթի շառավիղների մեջ մարմնավորումն էր հավատարմության: Հովսիան լռեց: Զաղացպան Մեշուլամը մնաց նրա մոտ կանգնած և շոյում էր իր ոճրագործի հատուկ սպիտակ մորուքը: Մի քիչ հետո թագավորի խռպոտ ճիչը սթափեցրեց Երեմիային անլուծանելի հարցերի մասին ունեցած իր խորհրդածությունից.

— Տեր իմ... Ես քեզ շատ եմ սիրել...

Մեծ մեղադրանքի ու հակաճառության վկան սկսեց հեկեկալ, մինչ թագավորը սառը հայացքով նայում էր նրան: Այդ արցունքներն

արտահայտում էին սովորական ու հպանցիկ կարեկցանքը մարդկային մի փափուկ սրտի՝ ուրիշի դժբախտության նկատմամբ: Անաթովթցին լալիս էր՝ թափելով իր սրտի անմիտ արցունքները: Տերը, սակայն, չէր լալիս իր ծառայի համար և չէր թափում հավիտենական արցունքներ: Նա լուռ էր մնում իր հարյուրավոր սառցե երկինքների հետևում: Հովսիայի հոգին չէր աղաղակում փրկության համար, այլ ուզում էր դատապարտման խոսք լսել, պարզապես իմանալու համար պատճառը, թե ինչու մի ամբողջ կյանք Եհովային նվիրելուց հետո այդ միևնույն Եհովայի կողմից է դատապարտվել, որն իր օրհնությունն է բաշխել ամենալկտի օրինազանցներին ու մեղավորներին, որը հաղթանակ է շնորհել հենց իր ամենաոխերիմ թշնամուն՝ Եգիպտոսին: Հովսիան ուզում էր միայն իմանալ իր մեղքը, որը պատճառ էր եղել իր դժբախտության, և դա բավական էր, որպեսզի ինքը կարողանար խաղաղությամբ իջնել գերեզման: Այս հարցում Երեմիան չէր կարող օգնել նրան, քանզի ինքն էլ ապշած էր Աստծու անքննելի և անսահման անտարբերությունից:

Թագավորի մեղադրանքն ու հակաճառությունը տևում են երեք օր ու գիշեր շարունակ: Երեմիան ստիպված էր համբերությամբ լսել դրանք: Միայն այն ժամերին, երբ ջերմությունն ու ցավերը հաղթահարում էին վիրավորին, ինքն էլ ընկնում էր մղձավանջային քնի մեջ: Այդ օրերը և գիշերներն իրենց սալի վրա դարբնում են պատգամաբերի սիրտը: Եհովայի հանդեպ երեխայական նվիրվածությունն այժմ փոխակերպվել էր մի նոր հակառակության և մի թաքնված ինքնակամության: Եվ ժամ առ ժամ ավելի էր մտածում իրենից հեռացնել Տիրոջը, ինչպես նաև հրաժարվել իր ընտրված լինելու հանգամանքից: Քանզի իր ունեցածը միայն մի ուխտ էր, որը կարելի էր խախտել, ինչպես որ Տերն էր խախտել իր ուխտը Հովսիայի հետ: Արտաքին և ներքին ձայնը հմայել էր ու համոզել իրեն, իսկ ինքն էլ թույլատրել էր, որ դա այդպես լինի: Եվ ոՐն էր դրա արդյունքը, որ ինքը Տիրոջ կողմից ճանաչվել էր նախքան իր ծնվելը և կանխորոշվել որպես մարգարե. ոչնչացված երիտասարդություն, կրակի տրված կյանք: Ինքը փախել էր իր հոր տնից, խոր վիշտ էր պատճառել մորը, զայրացրել ու խայտառակել էր հորը և նրան հասցրել մահվան, ատելությամբ էր լցրել իր եղբայրներին: Շրջել էր ամբողջ երկրով մեկ, սարսափով համակված, որ շուտով կլրանա Տիրոջ համբերության

վերջին ժամկետը: Տաճարում նա քարոզել էր Տիրոջ խոսքը և տեղի տվել գայթակղության: Ինչի՞ համար էր այս ամենը: Տերը հայտնել էր իրեն աշխարհի վրա կախված վտանգի մասին, բայց դա ինչ օգուտ բերեց աշխարհին: Ինչ օգտակարություն ունեցավ թագավորին այն հանգամանքը, որ Տերը նրա մոտ տարավ Երեմիային, որը բոլորին դժբախտություն բերեց, ում հետ, որ շփվեց: Իր՝ Երեմիայի պաշտոնը բոլորովին անօգուտ էր և նույնիսկ ավելի վատ, քան անօգուտ, այն վնասակար էր ու տաղտկալի: Թագավորն իր պատերազմական պատրաստությունների ընթացքում միշտ հարցնում էր իրեն, թե որևէ պատգամ կար արդյոք Տիրոջից: Երբ անհրաժեշտ էր Իսրայելի համար մի պատգամ հաղորդել, Տերը լռում էր իր սարսափելի և առեղծվածային անորոշության մեջ: Բայց Անաթովթցի այդ աննշան Երեմիան հանուն ինչի՞ պիտի միշտ կանչվեր և միշտ էլ մերժվեր՝ պատասխանատվություն կրելով ամբողջ աշխարհի համար: Միշտ դարան մտնել և սպասել մի նշանի. դա ավելի սարսափելի էր, քան մահը: Բավական չէ՞ր լինի ապրել որևէ մի տեղ աշխարհում, չմտահոգվելով Աստծու մասին, որպես մի մանկիկն այդ աշխարհի, և դրա հետ էլ կործանվել, ոչ ավելի բարենպաստ և ոչ էլ ավելի սարսափելի կերպով, քան մյուս բոլորը:

Սրանք էին Երեմիայի խորհրդածությունները, երբ նա գիշեր ու ցերեկ լսում էր ջերմության մեջ տվայտող թագավորի աղաղակը՝ ակնկալելով Տիրոջ կողմից մի պարզաբանում: Ամենից վատը երրորդ գիշերն էր. Հովսիայի վզի երակները տեսանելի կերպով բաբախում էին: Նրա մարմնի երկաթյա միսը մոմի նման հալվում էր ջերմի և Տիրոջ հետ բանավեճի հնոցում: Նրա ձայնը վերածվել էր մի խռպոտ սուլոցի.

— Խոսիր, Անաթովթցի... Խոսիր, Եհովա... Մի անգամ՝ Քավության օրվա պահեցողության ընթացքում, թաքուն մի բաժակ գինի եմ խմել... Արդյոք դա՞ է եղել իմ մեղքը...

Երեմիան հոգնած շարժեց գլուխը.

— Արքա, ինչպե՞ս կարելի է դրա նման մի աննշան բան նկատի ունենալ...

— Խոսիր, Անաթովթցի... Խոսիր, Եհովա... Շատ անգամ եմ ցանկացել իմ մերձավորների կանանց... հարյուրապատիկ անգամ տարվել եմ իմ տոփանքներով... Արդյոք դա՞ է եղել իմ մեղքը...

— Ինչպե՞ս կարող է դա լինել, ով արքա... Քո նախահայր Դավիթն ավելի ծանր մեղանչեց կնոջ հետ և պատժվեց իր երեխայի մահվամբ... Բայց նա խաղաղությամբ իջավ գերեզման...

— Խոսիր, Անաթովթցի... Խոսիր, Եհովա... Ես զոր ու գիշեր լեցուն էի անմաքրությամբ... գործով ու մտածումով... Արդյոք դա՞ է եղել իմ մեղքը...

— Ինչպե՞ս կարող է դա լինել, ով արքա... Արդեն քո նախահայր Սողոմոնն ասել է, և Տերն էլ գիտե, որ «ամենայն հողեղեն արարած մեղանչական է»...

Նման անվերջանալի հարցաքննությամբ սպառվել էին այն բոլոր պատճառները, որոնք կարող էին արդարացնել Աստծու պատիժը: Այնուհետև թագավորը սեղմեց իր թույլ բռունցքները Երեմիայի դեմ.

— Անիծյալ լինես դու, ով Անաթովթցի, եթե չպատասխանես ինձ...

Երեմիան ծնկի եկավ նրա մահճի առաջ.

— Ես ուզում եմ թագավորին մի պատասխան տալ, որպեսզի նրա հոգին կարողանա խաղաղություն գտնել... Մեղքի պատասխանատուն իմ թագավորը չէ... Սակայն նրա հայրերը մեղավոր են. հենց նրանք են կրում մեղքը... Նրանք պղծեցին սրբությունը, մաքուրին անմաքրություն խառնեցին, մոռացան Ուխտը... Նրանցից հետո իմ արքան պարտավորվեց մաքրել երկիրը... Սակայն Տերն ասում է, որ մինչև չորրորդ սերունդը պիտի հատուցի մեղքի փոխարեն:

Սա մի հստակ պատասխան էր, թեև այն չէր բխում Երեմիայի սրտից: Արքայի դեմքը, թվում էր, թե խաղաղվել է: Աչքերը փոս էին ընկել իրենց սևացած խոռոչներում: Նա այդ ծանր վիրավոր վիճակում պառկել էր անշարժ: Հետո, սակայն, տեղի ունեցավ մի շատ տարօրինակ բան. Հովսիան անկողնուց դուրս հանեց իր հյուծված ոտքերը, կանգնեց երերալով և կտրուկ մերժեց Երեմիայի օգնությունը: Այնուհետև ամուր քայլերով գնաց դեպի սենյակի պատուհանը, որը բացվում էր դեպի երկրորդ պահակակետի բակը, դողդոջուն ձեռքերը դրեց պատուհանի բազրիքին և գոչեց իր սուլող ձայնով ու դեռ ունեցած ամբողջ ուժով.

— Թագավորի հրամանն է... Այրե՛ք տաճարը... Կրակի՛ մատնեք Սրբարանը... Ոչնչացրե՛ք վարդապետությունը... Թագավորի հրամանն է... Եհովան թշնամին է Իսրայելի... Նա միայն դժբախտություն է բերել Հուդայի վրա... Նա ընտրել է այս թագավորին պարզապես իր ատելության

նշավակը դարձնելու համար... Կորչի՛ Եհովան... Դռները լայն բացեք Ռային, Պտահին, Բահաղին, Մարդուկին, Թամուզին և Աստարտին... Որովհետև նրանք մեծ են և ողորմած... Սա է թագավորի հրամանը...

Այս հայհոյանքի սաստկությունը ստիպեց Հովսիային հևասպառ պտտվել ինքն իր շուրջը մի պարողի նման, և ապա մեջքի վրա ընկավ հատակին: Բերանից սկսեց մի արյունահոսություն, որը ողողեց տախտակամածը: Լսելով հայհոյությունը՝ Ամիտալը շտապեց մտնել սենյակ: Իր սիրեցյալն իր առջև անշարժ, կիսախուփ աչքերով և առանց շնչառության տարածված էր հատակին: Նա անմիջապես պատռեց իր զգեստները, բացեց մայրական կուրծքը և տաք շնչով ընկավ իր ամուսնու արյունոտված մարմնի վրա, որպեսզի հետ խլի նրան մահվան ձեռքից: Եվ դա հաջողվեց նրան: Սիձավանջային մի սպասումից հետո կարծես մի անցողիկ ժպիտ ուրվագծվեց Հովսիայի դեմքին, և նրա խոցված կրծքից լսվեց երկու երկար ու խորը հառաչանք:

* * *

Հաջորդ առավոտյան թագավորը երևաց բոլորովին կերպարանափոխված: Վերջ էին գտել իր կողմից արված մեծ մեղադրանքները: Նրա շեշտված դիմագծերն արտացոլում էին մի վսեմ անդորր և խոհեմություն: Կարևոր նորություններ էին հասել, որոնք նվազեցնում էին արհավիրքի տարողությունը, քան ինչ որ ակնկալվում էր: Բանակի հրամանատարները զեկուցում էին, որ կարողացել են ոչնչացումից փրկել զորքի մնացած մասն ու հավաքել այն Եփրեմի լեռներում, որպեսզի փակեն փարավոնի ճանապարհը: Սակայն աստվածների որդին և հայրը երբեք չէր մտածում դատաստան տեսնել Հավերժական քաղաքի հետ, քանզի հենց ինքն էլ ողբալի կորուստներ էր կրել: Երկու օրվա զինադադարից հետո նրա զորքը Քուշի, Փուդի, Լուբիմի և Յավանի հետ հնչեցրեց մեկնումի եղջերափողը, և այսպիսով փարավոնը հաղթականորեն ուղղվեց դեպի հյուսիս՝ դեպի Եմաթի երկիրը[11]:

[11] Համաթ կամ Համա-քաղաք Սիրիայում:



«Ամիտալը մահվան ձեռքից հետ է խլում իր ամուսնուն»

Այս բոլոր լուրերի անլուծելի առեղծվածի պատճառն էր գահաժառանգ Եղիակիմը, որի ուշացումին պետք էր մեծ մասամբ վերագրել Մեգիդոյի պարտության մեղքը: Թագավորին հաղորդվել էր, որ Եղիակիմի բանակը ոչ իսկ մի աննշան ընդհարում չի ունեցել փարավոնի հետ, այլ միայն ձեռնածալ սպասել է իր ճակատագրին: Դրա վրա արև աստծու մարմնավորումը՝ փարավոնը, շրջապատել էր իշխանի բանակը Գելբուա բլուրների և Հորդանանի հովտի միջև և առանց որևէ դիմադրության բախվելու ամբողջությամբ զինաթափել էր այն: Այնուհետև Եգիպտոսը հարկադրված ուղղվել էր դեպի Ռիբլա՝ ամրացված մի քաղաք Լիբանանի հյուսիսում, և իր հետ տարել է Հովսիայի ավագ որդուն, սակայն հայտնի չէր, թե ինչ կարգավիճակով. իբրև պատվավոր պատանդ, թե՞ իբրև դավաճան:

Մահամերձ Հովսիան հաղթահարեց իր ծայրահեղ թուլությունը: Առանց ուշադրություն դարձնելու Ամիտալի, Ահիկամի, Երեմիայի և իրեն խնամողների ընդդիմացող խնդրանքներին՝ հրահանգեց զգեստավորել իրեն արքայական հանդերձանքով և տանել Սողոմոնի գահասրահը, ուր Հուդայի մեծերի խորհուրդը տևապես նիստեր էր գումարում: Թագավորին ստիպված էին կապել իր ոսկեզարդ ու փղոսկրյա բարձրադիր գահին, որպեսզի չընկնի դեպի առաջ ու չգլորվի աստճանների վրա:

Ինչքան տարբեր էր ավագաժողովի այդ օրվա պատկերը նախքան Եգիպտոսի դեմ մղված պատերազմի պատկերից: Այն ժամանակ Հովսիայի արևը շողում էր իշխանների ու քահանաների առատ բերքի վրա, որոնք շքեղորեն հավաքվում էին նրա ոտքերի շուրջը: Հիմա, սակայն, Հուդայի բերքն արդեն հնձվել էր ու արմատախիլ եղել: Իշխանների մի մասը սպանվել էր պատերազմում, մի մասն էլ տառապում էր Նեքավովի շղթաներում: Մի երրորդ մաս էլ ջարդված զորքերի հետ էր թաղվել լեռների ծերպերում: Քաղաքի իշխանների աթոռին նստել էին նրանց պաշտոնը փոխարինող մի քանի անտաշ ավագանիներ, որոնք վախեցած աչքերով նայում էին իրենց առաջ և անհեթեթ կարծիքներ հայտնում: Նրանց մոտ զգալի էին այն զգուշավոր ջանքերը՝ լավ հասկանալու համար իշխանության ապագա ծրագրերը, որպեսզի կարողանան ճիշտ կողմնորոշվել և լինել շահավետ կողմի հետ: Մի բան միայն պարզ էր, որ գահին կապված թագավորին այլևս ոչ մի հրաշք չէր կարող փրկել,

ոչ մի սպեղանի չէր կարող բուժել: Մարդկային սրտի դիվային ապերախտությամբ՝ մի պարտության պատճառով մոռացության են մատնվում հարյուրավոր հաղթանակներ, մի անհաջողության հետևանքով մտահան են արվում հազարավոր փառապանծ արարքներ: Այդպիսի նկարագրի տեր մարդիկ էին նրանք, ովքեր երես էին թեքում այն տիրակալից, որին դեռ երեկ փառաբանում էին: Մահամերձ վիրավորն այլևս նրանց համար գոյություն չուներ: Քահանաների նստարանից նույնիսկ հնչում էին մեղադրանքներ առ այն, որ աստվածների որդու և հոր դեմ մղված պատերազմը տաճարի հետ առնչվող մի սրբազան պատերազմ չէր: Դրա համար Սրբարանի մեջ պահվող Ուխտի տապանակից ոչ մի կայծակ չէր արձակվել երկրի վրա: Ըստ բարձրաստիճան քահանաների եզրակացության՝ դա պարզապես մեկ հոգու նախաձեռնությունն է եղել:

Թագավորը սարսափելի լքվածության մեջ էր: Սողոմոնյան գահի ոսկյա ճրագը դեռևս շարունակում էր արձակել իր կապույտ բոցը, որը, սակայն, շուտով հանգելու էր՝ մնալով առանց ձեթի: Բացի հավատարիմ Ուրիայից՝ Տիրոջ մարգարեները նույնպես թաքնվել էին: Նրանց նստարանը մնացել էր բոլորովին թափուր: Նրանցից մեկը՝ նորելուկ Անանիա Գաբավոնցին, նույնիսկ հաղթանակ էր գուշակել, որը դեպքերի դառն ելքից հետո բացահայտվել էր իբրև խաբեբայություն: Անանիան, սակայն, չէր ուզում ընդունել իր պարտությունը: Գահասրահի ճանապարհին նա գաղտնորեն մոտեցավ իր հին պաշտոնակցին՝ Երեմիային, և շշնջաց նրա ականջին, որ Եգիպտոսի վերաբերյալ իր գուշակությունը միայն այն դեպքում հնարավոր կլինի հերքել, երբ Միջագետքի զորքերի դեմ փարավոնի պատերազմը պսակվի հաղթանակով: Թեև Երեմիան ցնցվեց այդ խոսքերից, բայց նրան անհավանական չթվաց, որ Անանիան նույնպես կարող էր լինել մի իսկական զոհ Եհովայի անորոշության ու առեղծվածի:

Մահամերձ արքայի ժողովից, բոլոր իշխանների, քահանաների և մարգարեների բացակայությունից ավելի, բացակա էր հատկապես մեկ հոգի, որը ծերունազարդ Սափանն էր: Նա այլևս չէր մտածում դուրս գալ տնից աշխարհիկ իրադարձությունների քննարկման համար: Իր մտային կարողության վերջին օրերը նա ուզում էր հատկացնել վարդապետության և օրենքի մեկնաբանությանը:

Արյունահոսությունից հետո թագավորը համարյա լրիվ կորցրել էր իր ձայնը: Նա կարողանում էր միայն մի խռպոտ շշունջով հասկանալի դարձնել իրեն: Այդ իսկ պատճառով Ահիկամն ու Երեմիան գլուխները խոնարհած կանգնել էին գահի աջ և ձախ կողմերում՝ ամենաբարձր աստիճանին՝ լսելու համար արքայի շշնջալից խոսքերը և փոխանցելու դրանք ժողովականներին: Հովաքազն ու Մաթանիան նստել էին իրենց հոր ոտքերի առջև: Նրանցից բացի ոչ ոք Դավիթ թագավորի գերդաստանից, ոչ ոք արքայական ընտանիքի ավագներից կամ զարմիկներից, ոչ իսկ այն քչերը, որոնք այդ փոթորկալից շրջանում մնում էին Երուսաղեմում, չկային այդտեղ: Նրանք նույնպես սպասում էին տեսնելու, թե ճակատագիրը դեպի ուր կառաջնորդի թագավորությունը, քանզի դեռևս այդ թագավորության վրա կախված էր Եգիպտոսի հզոր տնօրինումը, և դա գիտեին տեղի մեծերը: Նրանց համար Հովսիան Աստծու շնորհներով լցված մի թագավոր էր՝ արդեն իսկ ավարտված մի ժամանակաշրջանի, իսկ հիմա այլևս նա դարձել է անեծքով բեռնավորված մի պիղծ դիակ:

Ոչինչ չէր վրիպում թագավորի աչքից,— Երեմիան զգում էր դա,— ոչ հարգանքի դիմակի տակ վատ կերպով թաքնված ներկաների սառնությունը և ոչ էլ համեստության տարազով զգեստավորված խայտառակությունը: Նրա շշնջացող ձայնից արտաբերվում է մի քանի խոսք: Ըստ երևույթին, Ահիկամը դրանք լավ չի հասկանում, բայց ժողովի մարդկանց նշան է անում մոտենալու գահին: Լավ թաքնված հետաքրքրությամբ նրանք բոլոր կողմերից հանդիսավոր քայլերով առաջանում են: Թագավորի խզված ձայնով մրմունջը գնալով դառնում է սուր և հուսահատական: Ի վերջո ունկնդիրները գուշակում են նրա ասածը, իսկ Ահիկամն էլ հայտնում է ավագաժողովին արքայի կամքը. Հովսիան ինքն իրեն մեռած էր հայտարարում: Համաձայն մի հնագույն սովորության՝ պետք է անմիջապես ընտրությունը կատարվեր: Եղիակիմը գերության մեջ էր և արդեն կորցրել էր իր արժանապատվությունը: Այդուհանդերձ, իրավունք չկար մի ժամ իսկ թափուր թողնել Դավթի բարձրապատիվ գահը: Հետևաբար, Հուդայի մարդիկ ստիպված էին երկրորդ որդուն ճանաչել իբրև օրինավոր ժառանգորդ և ընտրությամբ բարձրացնել նրան թագավորի գահին: Այսպես կարգադրեց Հովսիան իր նվաղկոտ ձայնով: Հուդայի մեծերը նայեցին իրար: Նրանց պատշաճ էր թվում

կատարել մահամերձի կամքը: Հետագայում թող Հավիտենականը ծառայեցնի այն ի նպաստ իր նպատակների: Հետզհետե մեկը մյուսի հետևից ձեռք են բարձրացնում հանուն Հովաքազի ցանկալի ընտրության: Ինչքան թույլ էր արքայի այդ ընտրությունը, նույնքան և առավել թույլ էր դրան հաջորդող մեծարանքը: Հովսիան գրեթե գերմարդկային մի ճիգով տարավ իր կարծրացած ձեռքերը դեպի ճակատը՝ հանելու համար Դավթի թագն իր գլխից և այն դնելու նոր թագավորի գլխին: Այդ ընթացքում Հուդայի արքաների թագի ժապավենը սահեց նրա կոշտացած մատների միջից և ճկունությամբ գլորվելով հասավ մինչև սրահի մյուս ծայրը: Ներկաներից մեկը վազեց անարգված թագի հետևից, որը, սակայն, խուսափեց նաև իրեն հետապնդողի ձեռքից: Վերջում *սագանը*, որին շտապ գնացել էին բերելու, պատահարից գունատված, մի պարզ օծումից հետո Դավթի թագը դրեց Հովաքազի անշնորհ գլխին, որը դեռևս չէր էլ գիտակցում, թե ինչ է կատարվում իր հետ: Հովսիայի հոգում, սակայն, այդ ձախող թագադրությունը կարծես թե անցել էր աննկատ, առանց որևէ տպավորություն թողնելու: Խեղաթյուրված դեմքով, ատամները սեղմած, նա մի նոր և գերմարդկային ճիգ թափեց՝ արձակելու իր կապերը, որպեսզի թողնի Սողոմոնի գահը նոր թագավորին: Ահիկամն ու Երեմիան բռնեցին նրա ուսերից ու վեր բարձրացրին: Մոլեգնող ցավը վերադարձրեց նրա ձայնը: Երկիցս այնպես գոռաց, որ ամբողջ սրահը դողաց: Այնուհետև մեռելի նման կախվեց իրեն բռնողների և գահի աստիճաններից վար իջեցնողների ձեռքերից: Խեղճ Հովաքազի աչքերում աճել էր սարսափը խելագարվելու աստիճան, երբ նրան արդեն նստեցրել էին բարձրադիր գահին: Նա տանջահար նայեց իր չորս կողմը, մինչև որ վերջում, մի թագավորի համար բոլորովին անպատշաճ կերպով, ասաց.

— Հայր իմ, վերադարձիր... Սա ինձ համար չէ... Ես սա իսկապես չեմ ուզում...

Եվ լացկան երեխայի նման երկու ձեռքերով ծածկեց իր դեմքը: Հովսիան, սակայն, այլևս չէր լսում երեխայական այդ լացը, որով դժբախտ Հովաքազը, ներկաների արահամարհական հայացքի ներքո, ստանձնում էր թագավորությունը: Մինչ այդ բարկությամբ լցված մարդիկ շտապեցին պատգարակի վրա դրված մահամերձին դուրս տանել իր կորցրած թագավորության գահասրահից:

* * *

Հովսիայի վրա դեռ շունչ կար: Ամիտալը, Հովաքազը, Մաթանիան, Ահիկամը, Երեմիան և մի քանի այլ հավատարիմներ հավաքվել էին նրա մահճի շուրջը: Արքայական զգեստները չէին հանել վրայից, այնպես որ նա իր փայլուն օրերի կապույտ հանդերձների մեջ էր փաթաթված: Անարցունք աչքերով և նրա նման անշարժ՝ նստել էր Ամիտալը նրա ոտքերի մոտ: Նոր այդժամ միայն նա համարում է նրան իսկապես կորած: Դեռ երեկ էր, որ ինքը, չնայած իր տառապանքներին, խնամք էր տանում իր գեղեցկությանը: Այսօր, սակայն, իր մազերը հարդարված չէին եգիպտական ոճով: Իր նուրբ մարմնի վրա կար մի անգույն և անճաշակ շրջազգեստ: Թագավորական պարտեզներից ոչ մի ծաղիկ չէր զարդարում իր կուրծքը: Իր դաստակներին չկային զրնգուն ապարանջաններ: Իր ամուսինն այլևս չէր լսում դրանց հաճելի զրնգոցը, իսկ ինքը՝ Ամիտալը, որ դեռ երեկ փայլում էր իր գեղեցկությամբ, այժմ նստել էր մահճակալի եզրին՝ իբրև աշնանային մի անմիտ ագռավ:

Այդ մեծ սենյակի լռակյաց ներկաներից ոչ ոք չէր սպասում, որ նա, ով հավերժապես պիտի լռեր, մի անգամ ևս պիտի խզեր լռությունը: Եվ իսկապես էլ Հովսիա թագավորը սկսեց խոսել: Նրա ձայնը լեցուն էր և հնչեղ, ինչպես իր թագավորության փառահեղ օրերին: Նրա աչքերն էլ վերստին բացվեցին և լցվեցին խորհրդավոր պատկերներով: Երեք անգամ տարբեր արտահայտությամբ նա կրկնեց միևնույն խոսքը. «Եվ հայրերը...»: Առաջին անգամ այն հնչեց իբրև մի ահավոր հասկացություն: Երկրորդ անգամ՝ իբրև մի անորոշ հարցում: Երրորդ անգամ, սակայն, Հովսիան երգելով ու հստակ մի ժպիտով ասաց այդ կարճ խոսքը, որպես թե լիներ Ասափի որդիների երգերից մեկը: Լռակյաց ներկաները բոլորվեցին մահճակալի շուրջը: Ո՜հ, եթե միայն հնարավոր լիներ վերծանել հայրերի սրբազան ժողովի պատկերն այնպես, ինչպես որ Հովսիայի հոգին էր տեսնում այն իր երկրային գիտակցության վերջին ակնթարթին, նախքան իր միանալն այնտեղ, ուր տիրում է մի այնպիսի քուն, որը գերազանցում է աշխարհի բոլոր զգաստությունները: Առաջին հերթին արքան տեսնել էր արդյոք իր անմիջական հայրերին՝ Ամոնին ու Մանասեին, որոնց նայվածքը սարսափով էր լցրել իրեն, իսկ այդ պահին էլ

«Հովսիայի վերջին խոսքերը»

տեսնում էր Աբրահամին, Իսահակին և Հակոբին, նաև Մովսեսին ու Դավթին և իրեն էլ՝ նրանց կողքին: Ո՞ւր էր հայրերի այդ ժողովի հավաքատեղին: Արդյոք Տիրոջից հեռու՝ *շե՛ղի* գարշելի կիսախավարո՞ւմ, թե՞ Տիրոջ մերձակայքում, ընկղմված նրա քողազերծված ներկայության մեջ, ինչպես ժամանակին նա հայտնվել էր Մովսեսի երկրավոր աչքերին՝ որպես անորոշ շափյուղա:

Նոր և անվերջ մի լռությունից հետո թագավորը մի կողմ թեքեց գլուխն այնպես, որ աչքերը հառած էին մնում փոքրիկ Մաթանիայի վրա: Ըստ երևույթին, սակայն, նա ամենևին չէր էլ նկատում իր կրտսեր որդուն: Նրա հայացքի առաջ կրկին հայտնվեցին անըմբռնելի պատկերներ, որոնց ուժեղ ազդեցության տակ նրա ձայնը սկսեց դողալ: Այդ ձայնը մի անգամ ևս արտաբերեց միայն մեկ բառ, որը կրկնեց երեք անգամ տարբեր ինչականությամբ. «Որդիները...»: Առաջին անգամ՝ լցված կարեկցանքի հառաչանքով, երկրորդ անգամ՝ մի անորոշ հարցումի նման, երրորդ անգամ՝ երջանիկ հիացմունքի երգաձայն արտահայտությամբ: Դեպի ժամանակի վախճանն ընթացող երեխաների տողանցքի պատկերը շատ ավելի առեղծվածային էր, քան հայրերի համախմբման պատկերը: Երկուսն էլ, սակայն, պատճառ եղան Իսրայելի բարձրացման ու ընտրության: Թագավորը, որի նմանը, ըստ Սափանի գրավոր ու բարեխիղճ վկայության, երբեք չի եղել Հուդայում և Իսրայելում, գուցե իր վերջին ժամին կարողացել էր տիրական մի նայվածքով համադրել սկիզբն ու վախճանը: Նրա աչքերը վերջապես այդ պատկերով են փակվում: Ահիկամն արդեն նշան էր արել նոր թագավորին, որպեսզի կատարի իր պարտականությունը՝ փակելով իր հոր թարթիչները, երբ Հովսիայի ձայնը, մի խորը հառաչանքից հետո, «Անաթովթցի» է աղաղակում: Երեմիան, իբրև արքայից կանչված մի անձ, ծնկի եկավ և իր դեմքը մոտեցրեց մահացողին, որը շատ հստակ կերպով դանդաղորեն ասաց հետևյալը.

— Գնալ ու մեռնել խաղաղությամբ... Հիրավի ոչինչ պատրանք չէր... Անաթովթցի, ասա Նրան... Ես սիրում եմ Նրան... Կրկին, այժմ և մեկընդմիշտ...

Այնուհետև Ամոնի որդի Հովսիա թագավորի մարմինը մնաց անշարժ ու անշնչացած:

* * *

Մեծ մեղադրանքի օրերից և թագավորի մահվանից սկսած՝ Երեմիան այլևս չէր սիրում Տիրոջը, զայրացել էր նրա դեմ և կարծում էր, թե ամենայն սրտով ատում է Նրան: Նա որոշեց անհապաղ հրաժարվել մարգարեական կոչումից և հեռանալ ընդմիշտ: Սակայն հրաժարվելը բավարար չէր, քանզի սեփական երկրում Տերը նրան տևապես պիտի փնտրեր ու հաղթահարեր: Դրա համար էլ Երեմիան պետք է երկրից դուրս գնար այնտեղ, ուր Եհովայի ձայնն օտար մարդկանց ու լեզուների մեջ այնքան ուժեղ պիտի չհնչեր և իրեն հանգիստ պիտի թողներ: Հովսիայի մահվան հաջորդ գիշերը նա մեկնեց Անաթովթ՝ իր հայրական տունը, և խիստ մտահոգված խոսեց իր մոր հետ ծրագրած փախուստի մասին, որով ինքը վերջնականապես պիտի հեռանար այդտեղից: Աբիի աչքերը, սակայն, հակառակ այդ խոսակցությանը, չարցունքոտվեցին, այլ սևեռուն նայեցին Երեմիային.

— Որդիդ իմ կրտսեր, ես հոգ չեմ անում... Գիտեմ, որ ես քեզ կրկին պիտի տեսնեմ... Որովհետև ՆԱ քեզ վրա ավելի իշխանություն ունի, քան դու ինքդ...

Անքննելին, սակայն, չի դիմում բռնության: Նա կարծես թե ընդունել էր նրա հրաժարականը և արտոնել նրա հեռացումը՝ նույնիսկ հարթելով իր ընտրյալի առջև փախուստի ճանապարհները՝ շնորհիվ հետագա իրադարձությունների, նախախնամական ծրագրավորման և առաջնորդության:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ

ՆՈՓԻ ԾԱՂԿԱԶԱՐԴ ՍՅՈՒՆԵՐԻ ՏԱԿ

Երեմիայի հայրենիքում այս կենսուրախ քաղաքը կոչվում էր Նոփ: Նեղոսի ափին, ուր անվերջ տարածվում էին իր տաճարները, պալատները, բուրգերն ու դամբարանները, այն կրում էր Մեն–Նոֆր անունը, որի վանկերը, հաճախ ձևափոխվելով տգետ օտարերկրացիների կողմից, դարձել էր Մեմբրե կամ Մեմփի (Մեմփիս): Տեղի քահանաներն այն կոչում էին հանդիսավոր ճշգրտությամբ՝ Հա–Կա–Պտահ, որը նշանակում էր «Պտահի հոգևոր կերպարանքի բնակարան»: Բոլոր անվանումներից ամենահիշտը սա էր, քանզի Նոփն իսկապես փառահեղ Նու–Պտահն էր, այսինքն՝ արարիչ Պտահի քաղաքը, և նրա հոգևոր կերպարանքի օթևանը. դա ինքնին արդեն մի քաղաք էր, որը հենց կենտրոնում էր: Նոփի տաճարը տարբերվում էր Հավիտենականի՝ պատկերներից զուրկ տաճարից, քանզի տոնական որոշ օրերին կարելի էր ուղղակի մերձենալ Նոփի տաճարում Պտահի քարեղեն մարմնացումը ներկայացնող կերպարանքին:

Այն, ինչ որ այդ հսկա շինության վերաբերյալ ամենից շատ է գրավում մի օտարականի ուշադրությունը,— թեկուզ նա լինի Աստծու լուրջ մարդ, ինչպիսին էր Երեմիան,— դա նրա սյուների ու պատերի գարունն է: Այդ գարունը տևում է հազար տարի, որին հաջորդում են ամառան երաշտն ու աշունը, ինչպես վկայում են քառասուներկու մարզերի որոշ տաճարների ավերակները: Սակայն հաճախ առաջին գարնանը հաջորդում է մի երկրորդ գարուն, ոչ պակաս երկարատև, քան առաջինը: Եվ ոչ շատ երկար ժամանակ առաջ Նու–Պտահի տաճարի ծաղկուն սյուների մեջ զարթնել էր այդ երկրորդ գարունը: Աստվածների հայր ու որդի համարվող Պսամմետեխ փարավոնը՝ Նեքավովի հայրը,

պատճառն էր այդ զարթոնքի, նա, որ եկել էր երկիր՝ վերահաստատելու Եգիպտոսի հավիտենական գահը: Նրա ճառագայթումը նորովի և փառավոր կերպով ծաղկեցնում է Նոփի արդեն իսկ չորացած, գորշ և տերևազուրկ սյունները: Խունացած գույները վերանորոգվում են ծիրանի, շիկակարմիր, հակինթե, զմրուխտյա ու ոսկյա թարմ գույներով՝ իրենց փայլուն ու նրբագեղ երանգներով: Այսուամենայնիվ, այս վերածաղկած գարունն իր հզոր ավիշով, հսկա սյուների միջով բարձրանում է մինչև այդ սյուների գագաթը՝ կազմելով հոյակապ խոյակներ՝ բացված հազարավոր լոտոսների նմանությամբ կամ պապիրուսի թփերի փակ կոկոնների տեսքով:

Գարնանային այս սյուներից յուրաքանչյուրն ինքնին մի աշխարհ է՝ ամբողջությամբ զարդարված սրբազան պատկերագրերով: Նրա ծաղկած բներն ամբողջական գրքեր են՝ աստվածային պատումների և փառաբանությունների, գունավոր կերպով փորագրված նրանց քարեղեն երեսների վրա: Սակայն նա, ով չի կարող կարդալ այս գրությունները, մտնում է անհաշիվ պատկերներով աստվածային նկարագրությունների մի հրաշագեղ աշխարհ:

Երեմիան մտածում էր, որ Նոփում կարող է լինել միայն մեկ տուն, որն անհաղորդ էր վերոհիշյալ կենսուրախ գեղեցկությանը: Եվ դա տունն էր իր սեփական փախուստի, տունն էր, ուր ինքը միասին էր ապրում աքսորված Հովաքազի, Ամիտալի և փոքրիկ Մաթանիայի հետ, որի դաստիարակությունը մահացող թագավորի հրամանով շարունակում էր ինքը կատարել: Երբ նա դուրս էր գալիս այդ գեղեցիկ ու խոշոր տնից, որը փարավոնը տրամադրել էր Դավթի աքսորված ժառանգին, և կանգնում արևոտ ու աղմկոտ փողոցներում, Եգիպտոսի ուրախ մթնոլորտը միանգամից գրկում էր նրան իր բազուկներում: Մեծ ցավերի մեջ պետք է լիներ այն հոգին, որը կարող էր խուսափել նման մի գրկախառնումից: Ուրիշ ոչ, քան այստեղ անսահման ուրախությանը թույլ է տրվել հաստատել իր տիրապետությունը, քանզի նրան հաջողվել էր մահը վերածել կյանքի շարունակության՝ հավերժացնելով երկրային բարօրությունը: Դրա ապացույցն էր «Արևմուտքի քաղաքը» իր հազարավոր պալատ-դամբարաններով, որոնք իրենց հարմարավետ գեղեցկությամբ գերազանցում էին ապրողների բնակարանները: Ինչքան շատ էին երկրային քաղցրությունների գունագեղ ու

կենսունակ պատկերներն օթևաններում և հանգստարաններում, որոնցում մեծահարուստ մահկանացուներն անմահանում էին՝ փրկված Օսիրիսի փրկության մեջ: Ոչ ոք չի թողնում այն, ինչը սիրում է: Նա իր թանկագին ունեցվածքի հետ միայն մի քիչ հեռու դեպի արևմուտք է շարժվում, որպեսզի այնտեղ վայելի իր հավիտենական ու երանավետ հանգիստը: Այսպիսի իմաստուն կերպով էր կատարվում փոխանակումը. մահվան մշտական ձանձրույթն ու դատարկությունը վերածվում էին քաղցրալից կյանքի: Գովաբանական մի անսպառ երգ փոխակերպում էր այն ամենը, ինչ անցողիկ էր, մի իսկական հավերժության, և երկիրը, որը մեռնելուց բացի այլ բան չէր մտածում, շնորհիվ այս գաղափարի ոչնչացնում է մահը:

Երեմիան մեծ ուրախության բազուկներում դողում է ներքին սառնությունից: Ամեն օր՝ մայրամուտից մեկ ժամ առաջ, ինչ-որ բան նրան հրապուրում է դեպի Պտահի տաճարի վիթխարի հրապարակը: Նա, սակայն, չպղծվելու համար չի մտնում տաճար: Արտաքին գավթում խառնվում է մարդկանց հոսքին, քանզի այդ ժամին այդտեղ էր հավաքվում համարյա ամբողջ քաղաքը, երիտասարդ և ծեր, վայելելու համար իրար հանդիպումը և միասին զբոսնելը: Երեմիան խուսափում է նայել նրանց, փակում է նաև իր ականջները և զգում ավանդված խոսքի ճշմարտությունը. «Եվ նրանց մեջ սարսափ կար այլ երկրների ժողովուրդների նկատմամբ»: Միևնույն ժամանակ նա գիտակցում է այս խոսքի երկդիմի լինելը, որովհետև նույնպես այլ երկրների ժողովուրդների մեջ էլ սարսափ կար Իսրայելի հանդեպ: Նա զգում է այդ սարսափը, երբ հպանցիկ կերպով նկատում է իրեն նայող մի զույգ աչքեր, վանողական թշնամությամբ տրամադրված մի դեմք, որը գուշակել էր իր ծագումը: Ինքը, սակայն, գիտեր, որ այդ փոխադարձ սարսափի պատճառը հենց ինքը՝ հավիտենական Աստվածն է, որն ազգերի քաղցր ու մեղավոր երազանքից արթնացրել էր մի տկար ժողովրդի՝ բարդելով նրա վրա զգաստության և պարզաբանումի բեռը:

Մղված իր օտարերկրյա հանգամանքից՝ Երեմիան վար է իջնում սյունազարդ գավիթի աստիճաններով և մուտք գործում մի ընդարձակ ու գեղեցկորեն սալահատակված հրապարակ: Ծաղիկների արբեցնող բուրմունքը դիմավորում է նրան: Ծաղկավաճառ խանութների մի ամբողջ քաղաք բացվում է նրա առջև: Տաճարի կից նեղլիկ փողոցներում գտնվող

ծաղիկների, սրբազան իրերի և բուրումնավետ խնկերի խանութներն անցնելուց հետո նրա առաջ տարածվում են աշխարհիկ առևտրի և արհեստների խճողված շուկաները, որոնցից յուրաքանչյուրը թվում է նրան ավելի մեծ, քան Երուսաղեմի ներքին ամբողջ քաղաքը:

Այնուհետև Երեմիայի ճամփան անցնում է ատաղձագործների, կահույքագործների և կառագործության արհեստանոցների շուկայով: Ինչպես երազում՝ նրա աչքերի առաջ շարված են հարյուրավոր տեսակի պահարաններ և արկղեր, նրբաճաշակ մեծ ու փոքր սեղաններ, խաղատախտակներ՝ կանաչ և կապույտ քարերով զարդարված: Նոփում մեծ ազդեցություն ունեին աստվածների ու մահացածների աշխարհները՝ ի տարբերություն ողջերի տկար ու փխրուն աշխարհի: Երեմիան անցնում է ոսկերիչների ու գոհարավաճառների փողոցով: Եվ ահա այստեղ, բազմաթիվ ամիսներից հետո առաջին անգամ լինելով, կրկին հասնում է իրեն Տիրոջ մրմունջը: Մի պատգա՞մ: Ո՛չ, դա գրեթե չափազանցություն է: Դա առակի ձևով իրեն արված մի լուռ զգուշացում էր, որպես թե Տերը կամենար Երեմիային ցույց տալ միայն, որ հեռավորությունն ու օտար երկիրը չեն կարող սահմանափակել իր աստվածային էությունը, և որ իր աչքն անխուսափելի կերպով հանգչում է ընտրվածի վրա՝ հակառակ այս վերջինի հրաժարումին և ձեռնարկած փախուստին: Նոփում Եհովայի խոսքը գրեթե նման էր Երուսաղեմի բրուտագործի արհեստանոցում հնչեցրած խոսքին:

Երեմիան ամբողջությամբ կլանվում է ոսկերիչների աշխատանքով, բայց նրան շատ ավելի քիչ է հետաքրքրում մուրճի հարվածներով ոսկու ձևավորումը, քան քարե հնոցում նրա հալեցումը, ուր շաչում է հնոցապանի կողմից տևապես բորբոքվող վտանգավոր կրակը: Գմբեթավոր այդ ոչ շատ մեծ հալոցից այնպիսի ջերմություն էր դուրս գալիս, որ մոտակա ոսկի հալեցնողների կիսամերկ մարմիններն ասես եփվում էին կրակի մեջ, որոնցից կաթիլ–կաթիլ հոսում էր քրտինքը: Ոսկի հալեցնողներից յուրաքանչյուրն իր ձեռքին ուներ երկար բռնակով մի հալաման: Հալամաններում դրված էին ոսկու հանքաքարի տղմապատ փշրանքներ ու հատիկներ: Հնոցապանն ունելիով բացում էր հնոցի դուռը: Ոսկի հալեցնողները մոտենում էին և իրենց հալամանները երկարում կրակի մեջ: Հնոցն արձակում էր կայծեր և հրեղեն մասնիկներ: Մարդկանց սևեռուն

ու բորբոքված աչքերում նշմարվում էր այն մեծ ցավը, որը պետք է հանդուրժեին, որովհետև որպեսզի ոսկին հալվեր, շատ ժամանակ էր հարկավոր: Աշխատողների բազուկները ծածկված էին փուչիկներով և այրվածքներով: Այդուհանդերձ, նրանց ձեռքերը չպետք է ցնցվեին կամ թուլանային, այլ պետք է ամուր պահեին թանկարժեք պարունակությամբ հալամանը, մինչև որ հալվելն ավարտվեր, և ազնվագույնը բաժանվեր անազնիվ նյութերից: Երեմիան շատ է մոտենում հնոցի բացվածքին: Եվ ահա արդեն զգում է խոսքն իր սրտում, իբրև մի հարցում, թեև առանց ձայնի, բայց բոլորովին լիարժեք.

— Մի՞թե ես քեզ չեմ դարձրել ոսկի հալեցնող իմ ժողովրդի մեջ, որպեսզի դու ճանաչես և փորձես նրա արժեքը...

Երեմիան հետ է քաշվում: Ինչո՞ւ ոչ սկզբում, այլ հիմա է գալիս այդ խոսքը, երբ այլևս դրա կարիքը չկա: Այն օրը, երբ գումարվում էր ավագաժողովը, նաև դրանից առաջ և պատերազմի ընթացքում, երբ իսկապես դրա կարիքը կար, ինչո՞ւ, հակառակ բոլոր աղաչանքներին, Տիրոջից ոչ մի խոսք չի լսվել, որը կկարողանար հետ կանգնեցնել թագավորին և փրկել նրա կյանքը: Պատասխանը դառնությամբ բարձրանում է դեպի բերանը.

— Կրակն այրել ու ածխացրել է հնոցը... Տանջահար հալեցնողը զուր տեղը ջանք է թափում... Վատ ու անազնիվ մասը չի տարանջատվում... Անարժեք հանքաքարը մնում է հալամանում... Ինձ համար իմ տեղն այստեղ լավ է...

Երեմիան մնում է հաստատ իր հրաժարականի վրա: Ամբողջ ուժով փորձում է իր հոգուց հանել Տիրոջ մրմունջը, ինչպես որ մարդ հանում է մատը մտած փուշը: Բայց ինչքան որ նա ստիպում է իրեն, այնքան ավելի իր ուշադրությունը շեղվում է ու հեռանում Նու–Պտահի աղմկոտ շուկայից, իր սեփական անգործությունից և տխուր խաղաղությունից: Նա պետք է մտածեր այն ժողովրդի մասին, որից Տերը խոսել էր իրեն: Պետք է մտածեր Երուսաղեմի մասին, թե ինչպես և ինչպիսի ծրագրված կերպով էր տեղի ունեցել ամբողջը...

* * *

Ահավասիկ այն, ինչ կատարվել էր վերջում Երուսաղեմի մեջ. Հովսիային՝ Հուդայի անբախտ արքային, տարել էին Ուսիյահի պարտեզի գերեզմանոցը՝ միանալու իր հայրերին: Ողբ ու կոծի ցուցադրական ոչ մի ճոխ արտահայտություն չէր եղել, ինչպես վայել էր որևէ մի հերոսի թաղմանը, այլ միայն մի անշուք և հապշտապ արարողություն: Խայտառակությունը մշտապես եղել է և մնում է կրտսեր քույրը դժբախտության: Մեռյալ ստվերներ էին իջել Հովսիայի անվան վրա, և փոխանակ մի գերազանց երգչախմբի կողմից բազմաթիվ սգո երգեր ինչեցնելու, Ասափի որդիներից բաղկացած մի թույլ պատվիրակություն կատարել էր ողբի միայն մեկ երգ, որի գովասանական խոսքերը՝ նվիրված սիրելի թագավորին, գրվել էին Երեմիայի կողմից: Խայտառակ թաղմանը հաջորդել էր ոչ պակաս խայտառակ ու մեծապես ճնշիչ մի ժամանակահատված, ուր յուրաքանչյուր ոք քաղաքում և երկրում զգացել էր, որ մի պահից մյուսն այն հասնելու էր իր վախճանին: Այդ խառնաշփոթ պահին թագավորեց Հովաքազը: Իշխաններն ու քահանաները դեռևս իրենց աչքերի առաջ ունեին ավագաժողովի այն սարսափելի նիստը, որի ընթացքում իր գահին կապված մահամերձ թագավորը պարտադրել էր իր երկրորդ որդու ընտրությունը, որը, սակայն, ընդդիմանում էր դրան երեխայական նվնվոցով: Այնուամենայնիվ, Դավթի արքայական երկնագույն պատմուճանը կրելով՝ նա օժտվում է մի որոշակի դժգույն արժանապատվությամբ, որով թագավորում է իրեն ընձեռված ժամանակի սահմաններում: Նա ոչ մի վատ բան չի կատարում, ոչ մի լավ բան էլ չի կատարում, և այդ ոչինչ չկատարածը դուր չի գալիս Տիրոջը:

Երեմիան, սակայն, պատրաստվում էր փախչել, թեև դեռ չգիտեր՝ դեպի ուր: Սգո օրերից հետո առաջին նորալուսնին ներկայանում է նոր թագավորին և նրա մորը՝ խնդրելով, որ արտոնեն իրեն հրաժարվել դաստիարակի իր ծառայությունից, քանզի նա, ով իրեն նշանակել էր այդ պաշտոնին, արդեն գնացել էր ու միացել իր հայրերին: Այդուհանդերձ, թե՛ Հովաքազը և թե՛ Ամիտալը տխրությունից գունատվում են, քանզի Տիրոջ մարդը, որից հանգուցյալն այնքա՜ն կառչել էր հավատքով, որ նույնիսկ իր կյանքի վերջին խոսքը նրան էր ուղղել, այժմ ցանկանում էր

հեռանալ իրենցից: Նրանք շոյում են ու սեղմում Երեմիայի ձեռքերը, արցունք են թափում և այնպիսի մեծ քնքշություն են ցուցաբերում, որ նա երբեք չէր սպասում: Սակայն ավելի քան Ամիտալի և Հովաքազի ցուցաբերած գորովը, Մաթանիայի արտասվալից աղաչանքները ճնշում են իր հոգին, քանզի իր սիրտը կապված էր այդ պատանուն ու աշակերտին: Հետևաբար, նա հետաձգում է իր մեկնումը մինչև ամբողջական պարզաբանման պահը և Բարուքի հետ շարունակում է ապրել պալատում:

Հասել էր ամբողջական պարզաբանման պահը, և այն այնքան նպաստավոր էր, որ Երեմիան կարիք չէր զգում հրաժարվել իր որոշումից: Իր կապերի հաղորդած լուրերը՝ Երուսաղեմի վերաբերյալ, ամեն անգամ ավելի տագնապալի էին: Եվ շատ չանցած ասեկոսեները հաստատվեցին այն մասին, որ եգիպտական հեծելազորքը շրջում է երկրով մեկ: Այն, ինչ որ պիտի պատահեր, պատահեց մի առավոտ շատ վաղ, երբ դեռ աղջամուղջ էր: Քաղաքի Եփրեմյան դարպասի առաջ, որն ամրացված էր աշտարակով, հայտնվեց մեծ քանակությամբ եգիպտական հեծելազորք և պահանջեց մուտք գործել: Նրանց գլուխն էր փարավոնի դաշտային հրամանատարներից մեկը՝ ուղեկցությամբ անձնական խորհրդականների մի հոյակապ խմբի: Նրանք գոռալով դիմեցին աշտարակների վրա կանգնած պահակներին, որ իրենք, իբրև բարի աստծու կողմից մի սրբազան պատվիրակություն, խաղաղ նպատակներով են հայտնվել այդտեղ, որպեսզի աստվածային անխախտ կամքը հաղորդեն Հուդայի թագավորին: Պահակազորի հրամանատարները չվստահեցին այդ խոսքերին, որովհետև մի խաղաղատենչ պատվիրակությանը չէր պատշաճում օժտված լինել նման սպառազինությամբ: Նրանք անմիջապես փակեցին դռները, պահակները դիրքեր գրավեցին աշտարակների վրա, պատրաստեցին քարաձիգները և ամրացրին պատվարները:

Արթնացնում են քնկոտ թագավորին, և շտապ հրավիրվում է նախարարների ժողով: Այդ առիթով, սակայն, Հովաքազը պետք է որոշում կայացներ. մի բան, որ ամենից դժվարն էր իր թույլ սրտի համար: Փարավոնի կողմից ուղարկված պատվիրակության մերժումը բոլորովին անընդունելի կլիներ: Խորհրդականներից յուրաքանչյուրը գիտակցում էր, որ այդ պատվիրակության հետևում կանգնած զորքը վիթխարի վտանգ էր սպառնում Երուսաղեմին: Գուցե փարավոնի բանակը հանդարտվել էր,

սակայն Մեգիդոյի դաժան դեպքերից հետո ճիշտ կլինե՞ր արդյոք անհնազանդության պատճառով հրահրել Եգիպտոսի վրեժխնդրության ծարավը: Այդ տարակուսելի իրավիճակում Աիկամը գտավ միակ գործնական ելքը. թող թագավորն ինքը բանակցի փարավոնի պատվիրակության հետ՝ ապահովելով նրա մուտքը Եփրեմի դարպասի միջով, սակայն այն պայմանով, որ միայն ընտրված սակավաթիվ պատվիրակներ իրավունք ունենան քաղաք մտնել, իսկ մնացածները դարպասից դուրս պետք է սպասեն: Պատվիրակության ներս մտած անդամների ապահովությունը երաշխավորելու համար Նեքավովի զորքի հրամանատար իշխանի տրամադրության տակ պիտի դրվեն որոշ քանակով պատանդներ: Իր խորհուրդը տալուց հետո Սափանի որդին նայում է Երեմիային, որպես թե սպասելիս լիներ նաև նրա խորհրդին: Երեմիան, սակայն, լռում է: Նրա պարտականությունը չէր մեծերի խորհրդում խոսելը: Նա չէր պատկանում այդ խորհրդին: Իր միակ պաշտոնն է եղել Տիրոջ խոսքի հաղորդումն ու տարածումը, որից ինքն արդեն հրաժարվել էր: Կարիք կա՞ր արդյոք մեծամտանալու և մրցակցության մեջ մտնելու աշխարհի խելամիտ մարդկանց հետ՝ փոխարինելով աստվածային անորոշությունն իր սեփական փխրուն և անբավարար հստակությամբ, որը չի ընդգրկում ճշմարիտն ու իսկականը, այլ միայն իր կողմից թույլ կերպով հաշվարկվածը: Երեմիան լռում է՝ որպես թագավորի խոնարհ ծառա, որը խորհրդականների շարքում չէր: Այնուամենայնիվ, խորհրդականներից մեկը ոտքի է կանգնում՝ արտահայտվելու նպատակով: Նա Եմմերի որդի Փաշհուրն էր՝ Շեմի առաջին խնամակալը, մի ամբարտավան մարդ, երեսնոյան փայտյա սև գույնի մորուքով՝ սրածայր հարդարված, ինչպես որ սովոր էին օգտագործել Եգիպտոսում: Ըստ երևույթին, նրա հոգին զայրույթից եռում էր, իսկ փոքրիկ աչքերն էլ փայլում էին տարօրինակ: Այդ զայրույթի նշավակ է դարձնում առաջին հերթին դժբախտ և դյուրահավատ Հովսիային ու նրա խորհրդականներին, որոնց վրա ցանկանում է, որ թափվեն Օրենքի բոլոր անեծքները: Սակայն, ըստ նրա, մեղքի ամենամեծ բաժինը կրում են «խենթերն ու խելագարները», որոնց լսել է Աստուծով արբեցած թագավորը: Դրանով նա մեղադրում էր մարգարեներին և առ այդ խստորեն նայում էր Երեմիային: Վերջինս հեզությամբ հանդուրժում է նրա նայվածքը: Այնուհետև Փաշհուրը պահանջում է անհապաղ և

առանց վերապահության, ամենայն հնազանդությամբ բացել պարսպի դարպասը պատվիրակության առաջ: Եվ քանի որ Շեմի առաջին խնամակալը խստությամբ էր խոսել, դա մեծ ազդեցություն էր թողել Հովաքազի վրա, որը հուսահատ այս ու այն կողմ էր գնում և կոտրտված բառեր էր վանկարկում: Իշխաններից ոմանք դա նկատի են ունենում իբրև թագավորի համաձայնության արտահայտություն և նշան են անում այդտեղ սպասող սուրհանդակներին գնալ և հաղորդել արքայի համաձայնությունը: Թագավորը մի որոշ ժամանակ մտածում է և կասկածանքով սկսում է զննել ներկաների դեմքերը, ապա հանկարծ հասկանում է դրությունը, վեր է ցատկում ու բղավում, որ ինքը դեռ որոշում չի կայացրել, և թե գնացողներին պետք է անմիջապես հետ կանչել:

Դա այլևս շատ ուշ էր: Եգիպտական հեծելազորի ջոկատներն արդեն աղմկում էին քաղաքի փողոցներում, գրավում են Դավթի ամրոցը: Այնուհետև փարավոնի վսեմաշուք դեսպանը հրավիրում է Հուդայի թագավորին շտապ գալ պալատի գահասրահ: Երբ Հովաքազը, փոխանակ հավաքելու իր թիկնազորը և պաշտպանվելու ներխուժողների դեմ, անվճռականորեն մտնում է գահասրահ և հանկարծ մեկ ուրիշին է տեսնում նստած Սողոմոնի գահին, ուր իրեն էին բազմեցրել, հակառակ որ ինքը դողալով ու լացով մերժել էր այն: Սակայն նա, ով այդ պահին բազմել էր այդ բարձրադիր գահին, երբեք չէր դողում ու լալիս, այլ տարածել էր իր փոքր ու նիհար մարմինը և ծիծաղում էր: Եղիակիմը դարձել էր թագավոր: Փարավոնը թեև փոխել էր նրա անունը, և նա այնուհետև պետք է կոչվեր Հովակիմ, որպեսզի ոչինչ ժառանգած չլիներ իր հորից, այլ ամեն ինչի, նույնիսկ իր սեփական անվան համար պարտական լիներ մարմնացած արև աստծուն, բայց դա ինչ արժեք ուներ: Փարավոնի բարեհաճության դիմաց մոռացության էր տրվել Հովսիայի հանցանքը և վերականգնվել էր Դավթի գահի օրինավոր հաջորդականությունը: Հուդան փրկվել էր: Ամբողջ Երուսաղեմն այդպես էր զգում դա: Ժողովուրդը խուժում է առանց պահապանների թողնված դարպասների միջով ամրոցից ներս, ծափողջունում է նոր թագավորին, որպես թե նա չի եղել դավաճան կամ նվազագույնը երկդիմի քաղաքականություն վարող անձ, այլ, շնորհիվ իր անսխալ հեռատեսության, իր երկրի փրկիչը: Եթե մեկ պարտությունը գերազանցում է հարյուրավոր հաղթանակների, միակ

ձախողումը՝ հարյուրավոր սխրագործությունների, իսկ մի խորամանկ ստորությունը գերազանցում է հազարավոր անօրենությունների: Ամբոխի շնային ոգում հաղթանակած ուժն է միշտ իրավացի ամեն ինչում: Նրանք այլափոխում են ու փառաբանում դավաճանությունը, ուխտադրժումը, սպանությունը, սուտը, խարդախությունը՝ իբրև անհրաժեշտ և առողջ երևույթներ, որոնք ընդունվում են ստորաքարշ մարդկանց կողմից և արագ մոռացվում, ինչպես երեխան, որը մոռանում է իր առած դառն դեղամիջոցը: Հովակիմը հզոր էր և բռնակալ մի թագավոր: Եվ քանի որ ձերբազատվել էր իր հոր նվաստացուցիչ ճնշումներից, այժմ ժամանակն էր ցույց տալու ինքն իրեն: Ինքը, որ երբեք չէր խոսել ժողովրդի հետ, այժմ կրակոտ խանդավառությամբ մի ճառ է արտասանում Երուսաղեմի առջև, որի ընթացքում ամբողջ մեղքը նախկին իշխանությանն է վերագրում և մեծին ու փոքրին համակում է սատանայական գոհունակությամբ, որ իրենք ամենևին մեղավոր չեն պատահածների համար, հիմա ամեն ինչ կարգադրված է, և իրենք կարող են ավելի լավ կյանքով ապրել: Իշխանները մեծարում են Հովակիմին, քահանաներն օրհնում են նրան, իսկ *սագանը* շնչասպառ շտապում է, օծության յուղը ձեռքին, կատարելու թագադրությունը:

Հովաքազը հիվանդագին մի ժպիտով կանգնած էր աճող եռուզեռի մեջ: Երեմիան ստիպված էր կոթնել նրան, որովհետև թվում էր, թե ընկնելու է: Եգիպտական բանակի հրամանատար իշխանը կարդում է փարավոնի ուղերձը, որտեղ ասվում էր, թե Հովաքազը կորցրել է իր գահը, և հայտարարվում է իբրև երկու երկրների մշտական բանտարկյալ: Նրա ձեռքերը կապում են ոսկյա մի երկար շղթայով, որպեսզի հնարավորություն ունենա ազատ շարժվելու: Այնուհետև նրա խորթ եղբայրը Սողոմոնի գահից արձակում է աքսորի հրաման՝ ընդդեմ նրա, Ամիտալի և Մաթանիայի: Այդ նույն օրը թագուհին՝ Հովսիայի սիրելի կինը, իր երկու որդիների հետ, որպես բարի աստծու բանտարկյալներ, պետք է հեռանային քաղաքից: Երեմիան մնում է նրանց հավատարիմ: Նրանց, բացի մի քանի ծառաներից և աղախիններից, ընկերանում են միայն տխեղծ ներքինին ու սևամորթ պատանին՝ Աբդիմելեքը: Եգիպտական պատվիրակությունն աճապարանքի մեջ էր և դրա համար ուներ անհրաժեշտ ձիերը և մրցավազքի հատուկ ուղտերը: Քարավանների համար

պահանջվող ժամանակի միայն մեկ քառորդ մասը բավարար էր՝ հասնելու համար Ռիբլա, ուր փարավոնի ընդհանուր բանակատեղին էր: Աքսորյալներին տարան այնտեղ, բայց Հովաքազին ու նրա մորը չեն առաջնորդում Նեքավովի մոտ: Այնուամենայնիվ, իբրև նշան պատվավոր ձերբակալության, արձակեցին գահազուրկ թագավորի ոսկյա կապանքը: Մի քանի օր անց հրամայվեց, որ կալանավորներին տանեն Տյուրոսի նավահանգիստ, ուր նրանց արդեն սպասում էր մի եգիպտական նավ: Թեև Երեմիան փարավոնի դիվանից ոչ մի արտոնություն չուներ՝ ուղեկցելու ձերբակալվածներին, այդուհանդերձ, նավապետը չարգելեց նրան նավ մտնել: Արդարև, նույն ինքը՝ Եհովան էր թողնում նրան ազատ շարժվել և նույնիսկ փախչել:

Երեմիան, կրակե հնոցի առջև ունկնդրելով Տիրոջ շշնջալից զգուշացումը, վերհիշում է իր՝ անձնապես կրած և աչքերով տեսած ողջ տառապանքը:

* * *

Երեմիան շարունակում էր կանգնած մնալ իր տեղում: Նա խորասուզված էր խոսակցության մեջ մի որոշակի անձի հետ: Այդ անձը, սակայն, իր մայրը չէր, այլ Բարուքը... «Իմ ընկեր Բարուքը թող ինձ ների,— ասում է նա իր երազում,— այն պատճառով, որ ես լքել եմ նրան կես ճանապարհին և մի անհավատարիմ մարդու նման վարվել հետը... Ով Բարուք, դեռևս պատանի՝ դու կիսել ես իմ բեռը, փոխարենը ես մեղք եմ գործել քո դեմ, ինչպես մի բրուտագործ, որը չի ավարտում իր սկսած գործը, ինչպես մի վատ հայր և եղբայր...»: Արդարև նա այժմ կարոտում էր իր հավատարիմ ընկերոջը, իրեն թվում էր, թե նա ծիծաղում է, ինչպես հաճախ սովոր էր անել, երբ նվազեցնում էր իր ծառայության սեփական արժանիքները կամ մերժում ընդունել որևէ շնորհակալություն: Կարծես թե հիմա ասում է. «Թող հոգ չանի իմ ուսուցիչը, այլ թող հանգիստ ապրի Նոփում»:

Երեմիան վախեցած նայում է շուրջը: Մտքերի մեջ խորասուզված լինելով՝ նա ամենևին չէր նկատել, որ արհեստավորներն ամենուրեք ավարտել էին իրենց աշխատանքը և հավաքել իրենց գործիքները:

Նու–Պտահի ընդարձակ հրապարակը լրիվ կերպարանափոխվել էր: Ժողովրդի հոսքը կենտրոնացել էր տաճարի շուրջը: Երեմիան վերադառնում էր իր անցած ճանապարհով: Դեպի սյունազարդ գավիթն առաջնորդող աստիճանները խճողված էին հազարավոր մարդկանցով, որոնց մեջ ինքն էլ հրմշտկելով տեղ է բացում իրեն: Այդ պահին նա նոր հիշում է, որ իրեն պատմել էին մի մեծ տոնի մասին, որն այդ օրը պիտի տոնախմբվեր, արևի մայր մտնելուց մինչև կես գիշեր, Նու–Պտահի տաճարում և նրա շուրջը: Դա սկիզբն էր ձմեռային արևադարձի, օրը Եգիպտոսի մեռյալների փրկության: Այդ սրբազան գիշերին խոսելու են «փոքր արևի» մասին, քանզի Պտահը, որն ինքն իրեն ստեղծել էր ոչնչից, ստանում է Օսիրիսի տառապող կերպարանքը: Ինչի՞ համար է այդքան կարճ արևի շրջագիծը ցերեկային երկնքում: Որովհետև մեռելների աշխարհն իշխանություն է ձեռք բերել ապրողների աշխարհի վրա և հզոր շղթաներով ձգում է արևը դեպի ներքև: Եվ սա է պատճառը, թե ինչու Պտահը շնորհն ունի սպանված և հարություն առած աստծու՝ Օսիրիսի, կերպարանքն ընդունելու, իջնելու մեռելների աշխարհ և ամեն տարի նրանց ավետելու փրկությունն ու հավիտենական կյանքը: Իր էջքով նա հաղթահարում է ստվերի իշխանությունը, ազատագրում է լույսը հավիտենական խավարից, վերահաստատում է փրկաբեր հավասարակշռությունը: Այն ժամը, որի ընթացքում փրկիչ աստվածը պատրաստվում է մտնել *Ամենտի*[12]՝ մեռյալների արևմտյան արքայությունը, հենց այդ ժամն է, որ տոնում են Նու–Պտահի քահանաներն ու բնակիչները մի փառահեղ թափորով, որը տեղի է ունենում անաթովթցի օտարականի աչքերի առաջ:

«Փոքր արևը» նոր էր շոշափում աստիճաններով օժտված բուրգի գագաթը, որը տիրապետող դիրք ուներ անապատի եզերքի «Արևմտյան քաղաքի» վրա: Դա անփայլ և մառախլապատ մի մայրամուտ էր, առանց ոսկու և ծիրանիի, որն այդ պահին պատշաճում էր ստեղծագործության թշվառությանը, քանզի հավասարակշռության նժարը թեքվում էր հօգուտ մեծ մահվան: Դա այն պահն էր, երբ մարդկությունը պետք է օգներ աստվածությանը, որն իրեն տվել էր արհեստական լույսը կրակի

[12] Ամենտի կամ Ամենտես, Հին Եգիպտոսում մեռյալների հանդերձյալ կյանքի և ստորգետնյա աշխարհի անվանումն է:

բոցի կերպարանքով: Այդ իսկ պատճառով մթնշաղի հենց սկզբին ամենուրեք սկսում են հայտնվել լույսեր, լինեն դրանք ջահերի, ճրագների կամ կանթեղների, մարխոտ փայտի ու մոմի ձողերի տեսքով, որոնք նաև վաճառվում են փողոցների բոլոր անկյուններում: Երեմիան այժմ կարող է նույնիսկ տարբերակել մոտեցող երաժշտության հնչյունները: Դրանք ինչքան տարբեր են հուզում իր սիրտը, քան Տիրոջ տաճարում հնչող երգչախմբային եղանակները: Այդտեղ՝ Նոփում, երաժշտությունը մեղմ է և հաճելի, փաղաքշում է ականջները և քաղցրորեն հանդարտեցնում հոգին: Չեն հնչեցնում ուժեղ եղանակներ, ինչպես Ասափի երգչախմբերի երգերը, որոնք ուղղված են դեպի երկինք իբրև պաղատող ու պահանջող հսկա բազուկներ: Նվագախմբի երաժիշտները, որոնք մեղեդիների կշռույթի տակ օրորվելով մոտենում էին, բաղկացած էին տղամարդկանցից ու կանանցից, որոնք փչում էին սրինգներ և այլ փողային գործիքներ, նվագում էին տարբեր հարվածային գործիքներ: Այդ բոլոր երաժիշտները կույր էին և կենդանիների հոտի նման պետք է առաջնորդվեին գավազանի մեղմիկ հարվածներով: Այդ երկրում, ուր ամեն ինչ ձև է ու պատկեր, ուր աչքը թարմանում է և հաճոյանում գույների արբեցությամբ, ինչպե՞ս կարող է այդտեղ ներքին ականջը հանգստություն գտնել ու կենտրոնանալ՝ ունկնդրելու համար տեսողության սահմաններից դուրս գտնվող աշխարհները, թեկուզ միայն հնչյունների աշխարհները: Այդ էր պատճառը, որ Նոփում գրեթե բոլոր երաժիշտների աչքերը վերջնականապես փակված էին:

Քայլող երաժիշտների խմբին հետևում էին քահանաների շարքեր՝ ըստ իրենց աստիճանակարգի: Նրանք իրենց հանդերձանքով իրարից շատ քիչ էին տարբերվում, քան իրենց մազերի սանրվածքով և գլխի զարդարանքով: Ոմանք գալիս էին հյուսված ու մարգարտաշար կեղծամներով, ուրիշները՝ բարձր գլխանոցներով, որոնք իջնում էին մինչև իրենց աչքերը: Սափրված գլուխներով քահանաները, սակայն, որոնք բոլորովին գլխաբաց կամ վեղարով ծածկված էին քայլում, պատկանում էին բարձր դասակարգին, այսինքն՝ գաղտնի գիտություններ տիրապետող ուխտերին: Բոլոր քահանաներն էլ, առանց բացառության, կրում էին իրենց կոնքերը պաշտպանող պինդ գոգնոցներ, որոնցից առյուծի պոչ էր կախված: Դրանք մաս էին կազմում աստվածների

տոնական շքեղության զգեստների, որոնք ընդօրինակվում էին և օգտագործվում իրենց երկրավոր ծառաների կողմից՝ բարձր հարաբերությունների և պաշտամունքի հատուկ արարողությունների ընթացքում: Նրանց ուխտագնացությունը կատարվում է շատ կարճ քայլերով և համարյա իրար միացած ոտքերով: Ավելի հեռու, ուր կարմրագույն լույսն ամենից ուժեղ կերպով է փայլում, երևում է պաշտամունքի հիմնական առարկան: Երեմիան ցնցվում է, նախընտրում է ժողովրդի միջից կոպիտ կերպով ճամփա բացել ու շտապ հեռանալ այդտեղից՝ առանց վախենալու, որ Պտահի հավատացյալները կարող են սպանել իրեն: Հաջորդ պահին բոլորն էլ պիտի երկրպագեն իրենց սեփական սխալների պատճառով աստվածացած «ոչնչության» առջև: Եվ ինքն ինչ է անելու: Անմիջապես միտքն է գալիս Տիրոջ անսահման նախախնամությունը, որը հաշվի է առնում յուրայինների տկարությունն ու թշվառությունը: Սինայի պատվիրանը կուռքերի վերաբերյալ երկիմաստ է հնչում. «Նրանց առջև չպետք է երկրպագես և չպետք է պաշտես նրանց»: Նա, ով երկրպագում է, դեռ չի նշանակում, որ պաշտում է, իսկ ով չի պաշտում, իրականում չի էլ խախտում պատվիրանը: Մեջքով խոնարհվելը պարզապես մի դատարկ վարմունք է, որը, հարկ եղած դեպքում, բոլորովին անտեսվում է Տիրոջ կողմից: Ո՞հ սրբազան նախախնամություն բոլոր տկարների ու թշվառների համար: Արդ, բոլորն էլ խոնարհվում են դեպի երկիր, նույնպես Երեմիան խոնարհեցնում է իր գլուխը: Այդուհանդերձ, նա տեսնում է, թե ինչպես տասնինը քահանաներ երկու ոսկյա երկար ձողերի վրա տանում են սրբազան *Հենանու* նավակը, որի կենտրոնում բարձրանում էր տապանակը՝ Պտահի փառահեղ մարմնավորումը ներկայացնող կերպարանքով: Նավակի կմախքն ավարտվում էր եղնիկի գլխով, իսկ ցռուկը՝ բռնակով օժտված ոսկյա մի մեծ խաչով, որը խորհրդանշում էր կյանքը: Պտահի արտաքին կերպարանքը մումիայի նման փաթաթված էր զմռսման հատուկ կտավների մեջ, քանզի նա, Օսիրիսի նման, զոհաբերում է իր անձը, իջնում է ազատագրելու լույսը: Նրա ոտքերի առաջ դրված են խարազանն ու հովվական գավազանը՝ իբրև մեռյալների աստծու իշխանության խորհրդանիշներ:

Հենանու սրբազան նավակն արդեն հեռացել էր: Հիմա, սակայն, Երեմիայի շուրջը բարձրանում է մի բարեպաշտ մրմունջ, որը, իբրև աճող

փոթորիկ, լցնում է Նու–Պտահի ամբողջ հրապարակը: Հուդայեցի մարդը, առանց իմանալու, թե ինչու, զգում է մի հարված իր սրտում: Բոլորի մեջքերը գնալով ավելի են խոնարհվում: Շատերը ծնրադրում են և իրենց դեմքը սեղմում են քարին: «Ապիս» բառը, որը երկյուղալից կերպով երկար հնչվող «Ա» տառն է պարունակում, լսվում է ամբոխի միջից: Եվ, իրոք, մի դատարկ տարածության մեջ Ապիսը շարժվում է դանդաղ, որի ոսկյա սանձը քաշում են հարգարժան քահանաները: Մարդկային ոչ բոլոր սերունդների համար է վերածնվում Ապիսը, որի մեջ Օսիրիսը՝ փրկիչը, մարմնավորվում է ամենամաքուր և ամենակատարյալ կերպով: Գոյություն ունեն ամբողջական սերունդներ, որոնք զրկված են եղել այդ մարմնավորումը վայելելու շնորհից: Պետք է լինեն քսանինը նշաններ, որպեսզի թաքնագիտության մասնագետները կարողանան հաստատել երևույթի անկասկածելի իսկությունը, նախքան դրա հայտարարելն աշխարհին ու ժամանակին, թե՝ «ունենք մի Ապիս»: Պահանջվող ամենից կարևոր հատկանիշներն են՝ նա պետք է լինի սև գույնի մի հսկա ցուլ, իր ճակատին պետք է ունենա եռանկյունաձև մի սպիտակ նշան, իսկ մեջքին՝ մի մեծ ու սպիտակ տարբերանիշ՝ սավառնող մի բազեի հստակորեն ճանաչելի տեսքով: Պոչի մազերը պիտի ունենան երկու գույն, իսկ լեզվի տակ էլ պիտի լինի մի տարօրինակ ուռուցք, որի աստվածային առանձնահատկությունը միայն մասնագետը կարող է հայտնաբերել: Բայց եթե նույնիսկ արտաքին կամ անհատական բոլոր քսանինը նշանները կատարյալ կերպով առկա լինեն, որպեսզի մի սովորական ցուլ իսկապես դառնա «աստծու հոգու հաճելի պատկերը», պետք է ունենա ևս մի ներքին և ընդհանուր հատկանիշ, որն է ուժեղների յուրահատուկ և անզուգական հեզությունը, որով հնարավոր կլինի ճանաչել իսկական Ապիսին: Դա աստվածային տառապանքի բարեհաճ նշանն է, Օսիրիսի տառապանքի հատկանիշը, որն արտացոլվում է իր անասնական աչքերի մեջ՝ խորը հուզմունքի պատճառ դառնալով ամբողջ Եգիպտոսի համար:

Երեմիան թեև խոնարհեցրել էր իր գլուխը, սակայն տեսնում է, որ այդ սերնդի համար ծնված Ապիսը չափազանց մեծ մի ցուլ է: Կարծես թե խորապես գիտակցելով իր աստվածությունը՝ հրեշը ոստյուններով մեկ թաթը մյուսի առաջ է գցում: Յուրաքանչյուր քայլափոխի նրա կրծքից կախ ընկած թույլ միսը դողում է ու թրթռում: Այնուամենայնիվ,

չնայած այն վիթխարի ուժին, որ գոյություն ուներ այդ կենդանու մեջ, նա օժտված էր սրբազան հեզությամբ և գերբնական բարությամբ, որոնք տարածվում էին Նոփի բնակիչների սրտերում՝ պատճառ դառնալով, որ շատ կանայք հուզմունքից արտասվեն: Խճողված բազմության մեջ, Երեմիայի կանգնած տեղի ճիշտ դիմացը, թափորը շարժվում է դեպի հյուսիս՝ հասնելու համար տաճարի գլխավոր դարպասին: Դանդաղորեն ոստոստելով և զգուշությամբ առաջանալով՝ Ապիսը մոտենում է այն վայրին, ուր Երեմիան կանգնել էր: Մեծահոգաբար, հոգնած երևույթով, երկգույն մազերով օժտված իր պոչով նա հարվածում է իր կողերին, որպես թե պաշտպանվելիս լիներ անտեսանելի ճանճերից: Այն երկու քահանաները, որոնք աջ և ձախ կողմից բռնել էին ցուլի սանձի պարանները, հոգատար ուշադրությամբ հետևում են աստված–կենդանու ներքին կամքին: Հսկիչների նման չէ, որ առաջնորդում են ցուլին, այլ ավելի ցուլն է առաջնորդում նրանց: Հանկարծ բոլորը կանգ են առնում ճիշտ այն պահին, երբ պիտի թեքվեին: Ապիսը կանգ էր առել հանգստանալու համար: Հսկա ցուլը մի քանի անգամ շարժում է իր սպիտակ նշանով սև գլուխը, որի ճակատից դուրս էին ցցվել ուժեղ եղջյուրները, նայում է կասկածանքով իր շուրջը, հոտ է քաշում ցավագին, փնչացնում է, իսկ վերջում արձակում է բողոքի մի կարճ բառաչյուն դեպի մայրամուտի երկինքը: Ապիսը խոսե՞լ է… Մարդկային անհիշելի ժամանակներից ի վեր նման բան երբեք չէր պատահել: Ապիսը բազմության մեջ հայտնաբերե՞լ էր արդյոք մի թշնամու կամ մի ուրացողի, որովհետև ուրացումով նաև աստվածայինը խամրում է: Ունեցե՞լ է արդյոք նախազգացումը Եհովայի գոյության՝ հավիտենական և չմարմնավորվող Աստծու, երկրի և երկրի իսկական Արարչի, որը վերացնում է Եգիպտոսի քառասուներկու երրորդությունների բաժանված աստվածներին՝ վերածելով նրանց պատրանքի:

Այդ պահին մի մեծ կերպարանք հետևի կողմից մոտենում է Ապիսին: Դա մի ճաղատ մարդ էր՝ դեղին ու փայլուն գանգով: Ձեռքում բռնած խարազանն ու հովվական գավազանն ապացուցում են, որ բարեպաշտ ժողովրդի առջև է թաքուն գիտությունների տեր և Օսիրիսի ծառայությանը նվիրված մի նշանավոր պաշտոնյա: Երեմիան ճանաչում է այս բարձրաստիճան մարդուն, որի իսկական անունը ոչ ոքի ծանոթ չէր, քանզի Նու–Պտահում նա կոչվում է պարզապես Խեր–Հեպ, որը

նշանակում է՝ «Մահվան արարողությունների վարպետ»: Այո՛, Խեր–Հեպն Արևմտյան քաղաքի կուսակալն է, բարձրագույն պաշտոնյան և մեռյալների արքայության կառավարիչը: Միևնույն ժամանակ փարավոնի կարգադրությամբ նա վերակացու էր կարգված մեռյալների արքայության սահմանակից բոլոր անձերի վրա, ինչպես նաև հանձնարարված՝ իբրև խնամատար պետության բոլոր բանտարկյալների, կույրերի, հիվանդների, ազնվական տներին պատկանող այրիների և որբերի: Նա պետք է հսկեր նաև Հուդայի աքսորված ու բանտարկված թագավորին, որի տանը ժամանակ առ ժամանակ հայտնվում էր պաշտոնական այցելությամբ:

Այժմ Խեր–Հեպը մոտեցել էր Ապիսին: Ձախ ձեռքը, որով բռնել էր խարազանը, մեղմորեն դնում է ցուլի վզին և հազիվ տեսանելի կերպով սկսում է շոյել է նրան: Թաքուն գիտությունների տեր մարդը մի քիչ մոտեցնում է իր փոքր, ճաղատ ու գնդաձև գլուխն Ապիսի հսկա գլխին, որպես թե խորին հարգանքով պատրաստվում է լսել պատճառն այն բանի, ինչն Օսիրիսի հոգու լավ մարմնավորված պատկերին խրտչեցնում է ու անհանգստացնում: Լուռ հաղորդակցությունը տևում է միայն մի պահ: Թվում է, թե երջանկության մի քաղցր զգացում, մի խայտալից թեթևություն ու զոհունակություն են անցնում աստված–կենդանու մարմնի միջով՝ գլխից մինչև թաթերը: Սիրալիր զգուշությամբ նա խոնարհեցնում է իր գլուխը, երկու անգամ քնքշությամբ դնում է այն իր վստահելիի ուսին: Շրթունքների միջից դուրս է հանում իր դարչնագույն լեզուն և լիզում Խեր–Հեպի գունատ այտերը: Այնուհետև կրկին ցատկում է և բարեհաճորեն ու հեզությամբ շարունակում իր ընթացքը թափորի մեջ:

Հազարավորների խորը ճնշվածությանը հաջորդում է շունչ առնելու մի մեծ թեթևություն: Այն պահին, երբ Օսիրիսը մտնում է Ամենտիից ներս, Ապիսը սկսում է ցավագին բառաչել՝ որպես նշան այն բանի, որ աստվածը, հասնելով մեռյալների ստորին աշխարհի դարպասներին, լուրջ վտանգների առաջ է: Սակայն երբ Օսիրիսը հաղթահարում է այդ վտանգները, այն ժամանակ իր լավ մարմնավորված նմանության միջով մի անդորրիչ դող է անցնում, որի մեծ լեզուն սկսում է երախտագիտությամբ փաղաքշել հավատարիմ խնամատարին: Ինչ հիանալի նշան: Փոքր արևը հաղթահարել էր իր տկարությունը: Սկիզբ է առնում մի նոր վերելք. մի լավ տարի՝ հորդ անձրևներով, առատ բերքով և աշխույժ

շուկաներով: Ամբոխը պատկառալից ուրախությամբ հայտնում է իր երախտագիտությունը Խեր–Հեպին՝ աստծու այդ գաղտնի բժշկին, փարավոնանման այդ անդրշիրիմյան վերահսկողին, որն այժմ կրկին հանդիսավոր ու կարճ քայլերով, ոտքերը գրեթե իրար կպած, գնում է Ապիսի հետևից:

Այն, որ մեծ ուրախությունը հետևում է մեռյալների արքայության վերակացուին, ունի իր նուրբ իմաստը: Օսիրիսը խորտակել էր Ամենտիի դռների նիգերը: Այժմ բոլոր ստեղծվածների գեղեցկությունը կարող է ընթանալ վերակենդանացած արևի հետևից: Նոփում բնության այդ գեղեցկությունը ներկայացնում են բազմահարյուր գեղեցկուհիներ, որոնք աստծու կողմից ազատագրվել են խավարային ստվերներից՝ նրա մտնելով մեռյալների ստորերկրյա աշխարհ: Կույսերը կրում են շղարշանման նուրբ, թափանցիկ ու ծալքավոր զգեստներ, ուսերի վրա գունազարդ օձիքներով զարդարված, նաև ծաղկյա պսակներ բոլոր տեսակի գույներով: Աղջիկների ձեռքերում նշմարվում են նաև պապիրուսե հարյուրավոր փոքրիկ նավակներ՝ պատճենները Հեննու սրբազան նավակի, որոնց ներսում պարփակված են փոքր լույսեր՝ դրանք դարձնելով թափանցիկ լապտերներ: Թափորից հետո լուսազարդ ամբոխը շտապելու է դեպի գետի եզերք, որպեսզի այնտեղ հոսանքին հանձնի պապիրուսյա լուսափայլ նավակները:

Թեև արարողակարգի ու պարի մի վարպետ էր գլխավորում գեղեցիկ կյանքի այդ հասարակությանը, այնուամենայնիվ, հնարավոր չէր մտածել մի իսկական կարգուկանոնի մասին: Ըստ երևույթին, երիտասարդները գիտակցում են, որ թափորի ընթացքում չպետք է ներկայացնեն աստվածների հանդիսավոր անշարժությունը, այլ պետք է արտահայտեն շնչող համայն աշխարհի հորդ մղումներն ու բարեհաճ սանձարձակությունները: Կախարդիչն ու հմայիչը հենց այնտեղ է, ուր խորհրդանշելու ոչինչ չկա: Պարմանի եգիպտուհիների մեծ աչքերում երևում է մի տարտամ ամոթխածություն՝ ներկայանալու հասարակության առաջ, բայց միևնույն ժամանակ մի լպիրշ ցանկություն՝ հաճոյանալու և իրենց վրա հրապուրելու մարդկանց նայվածքները: Երեմիայի մոտով անցնում են տոնական շուրջպար բռնողներ, պապիրուսե փոքրիկ ու լուսափայլ նավակներ տանողներ: Թվում է, թե Նու–Պտահում անցնող

աղջիկներից յուրաքանչյուրը նայում է միայն իրեն, ընդ որում՝ հարցական ու զննող նայվածքով: Տանջալից մի խռովք համակում է անաթովթցի մարդուն: Արդյոք նրանք հիշեցնո՞ւմ են իրեն իր լքած պաշտոնը, իր սկզբնական տունն ու տեղը՝ մղելով իրեն, որ ինքը թաքնվի կյանքի գեղեցիկ պատկերների հետևում: Կամ էլ արդյոք հորդորո՞ւմ են իրեն հայրենիք վերադառնալ և շարունակել դաժան ու անվերապահ պայքարը հանուն Տիրոջ:

Լուսավոր խմբին անկանոն կերպով միանում է մի բազմություն՝ ձեռքերում ջահեր տատանելով: Լույսի ալիքները խուժում են գավիթներից ներս: Նոփի գարնանային սյունները պճնվում են վառ ծաղիկներով:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ

ՋԵՆՈՒԱ

«Փոքր արևի» տոնի հաջորդ օրն աքսորվածների տան դռան պահապանը հաղորդում է այցելությունը Խեր–Հեպի: Այդ օրը, որը հաջորդում էր արևադարձին, ինչպես նաև մյուս երեք օրերը՝ տարեկան մեծ տոներից հետո, որոնք նվիրված էին արևի տարբեր փուլերին, նախատեսված այն օրերն էին, որոնց ընթացքում Նոփում մահվան արարողակարգի մեծ վարպետը, իբրև խնամատար պետության բոլոր կալանավորների, հայտնվում էր դժբախտացած Հովաքազ արքայի տանը: Այդ տունը ոչնչով չէր տարբերվում Եգիպտոսի երևելիների գունագեղ և օդասուն տներից, որոնք հեռու էին շուկաների աղմուկից ու քաղաքի կենտրոնից, շրջապատված էին գեղեցիկ պարտեզներով: Այն ուներ բազմաթիվ սենյակներ ու բաժանմունքներ, կենտրոնում՝ կանաչազարդ մի հոյակապ բակ, ինչպես նաև կանանց հատկացված հարակից մի շինություն: Այնուամենայնիվ, աքսորյալները, որոնք կարծես արդեն մոռացել էին Սողոմոնյան պալատի ընդարձակ բնակարանները, սովորաբար հավաքվում էին մի սենյակում, քանզի ինչպես բոլոր տառապողներն ու սգավորները, նրանք էլ միշտ փնտրում էին միմյանց մոտիկությունը: Այդ հավաքատեղին մի մեծ ու հաճելի սրահ էր՝ ամբողջությամբ կարմիր և կանաչ գույներով, որի կենսուրախ պատկերներով նկարազարդված առաստաղը հենված էր թանկարժեք փայտից պատրաստված երեք զույգ լոտոսյան բարետեսիլ սյուների վրա: Այդ պահին Երեմիան դաս էր տալիս պատանի Մաթանիային և Աբդիմելեքին: Ամիտալը, ինչպես սովոր էր, նստել էր այդտեղ և ականջ էր դնում: Նրա գեղեցիկ ու խոշոր աչքերն այլևս չէին արտահայտում այն գրավիչ հանդարտությունը, որով նա հաճախ խաղաղեցրել էր Հովսիային: Նրա

վառ գույներով զգեստներն ու զրնգուն զարդերը վերջնականապես դրվել էին պահեստում: Այդուհանդերձ, նրա հրաշալի գեղեցկությունը, որը զոհաբերել էր իր հանգուցյալ ամուսնուն, դեռ փայլում էր գաղտնորեն իր գորշ այրիության միջից: Թվում էր, թե Հովաքազն էր ամենից հեշտությամբ կրում իր դժբախտությունը: Նոփում նա կլանվել էր մի խանդավառ աշխատանքով. ամբողջ օրը կոփում էր, տաշում, ատաղձագործությամբ զբաղվում, պատրաստում փայտյա փոքրիկ կերպարանքներ ու տիկնիկներ, արկղիկներ ու պահարաններ, ինչպես նաև ամեն տեսակ դժվար ճանաչելի առարկաներ: Նրա մատները միշտ եղել են անհանդարտ ու ստեղծագործող, բայց այժմ Եգիպտոսի նուրբ արվեստը դրանց մեջ արթնացրել էր ձեռային աշխատանք կատարելու բուռն ցանկություն: Լոտոսյան սրահի մի անկյունում խեղճ թագավորի համար հաստատել էին մի արհեստանոց, որտեղից նա գրեթե երբեք դուրս չէր գալիս:

Նույնիսկ հիմա, երբ իր հոր տխեղծ ներքինին առաջնորդում է հայտնի այցելուին դեպի սրահ, Հովաքազն իր բազմաթիվ փորագրիչ գործիքներով, խոզանակներով և սոսնձի բանկաներով նստած էր արհեստանոցի մի անկյունում, ուր թռչկոտում էին կոփվող փայտերի տաշեղները: Խեր–Հեպը մենակ չէր եկել, այլ նրան ուղեկցում էին իրեն տարեկից երկրորդ կարգի երկու քահանաներ: Զարմանալին այն էր, սակայն, որ մեռյալների արքայության ամենաբարձր կառավարիչը ձեռքից բռնած առաջնորդում էր եգիպտացի մի մանկամարդ աղջկա, որի խոշոր աչքերը մեծ ուշադրությամբ էին նայում Ամիտալին: Առյուծի թաթերով բազկաթոռներին, համապատասխան հեռավորության վրա, նստեցին թագավորի մայրը, թագավորն ու Խեր–Հեպը, մինչդեռ մյուսները մնացին կանգնած, Երեմիան և տղաները՝ Ամիտալի բազկաթոռի հետևում, իսկ եգիպտացիները՝ Խեր–Հեպի հետևում: Խեր–Հեպը խոսում էր շատ դանդաղ և հստակ, որպես թե յուրաքանչյուր բառի տեղին ընտրությունն ու ճշգրտությունը դժվարություններ էր հարուցում իր մտքում: Նա արտահայտվում էր հանգամանալից և բարեխիղճ կերպով: Նու–Պտահում խոսվող ճկուն բարբառը շատ լավ էր պատշաճում պետական հարցերի վերաբերյալ արվող խոսակցություններին: Այն կրում էր առատ և անսպառելի արտահայտչաձևեր՝ տարբերելու նրբաճաշակ երանգներ և իրավական զգայնություններ: Այդ բարբառը տալիս էր նաև Հովաքազի

նման մի գահընկեց ու անհուսալի կերպով բանտարկված թագավորին իր արժանի տիտղոսը՝ ոչ չափազանց բարձր և ոչ էլ չափազանց ցածր, որպեսզի չվիրավորի նրա ընկճված անձի ինքնասիրությունը: Այդ տիտղոսը մոտավորապես այսպես էր հնչում՝ «Ձերդ արքայական մեծություն՝ ժամանակավոր հանգստյան կոչված»: Այս էր դիմելու հանդիսավոր ձևը, որով Խեր–Հեպը մեծարում էր Հովաքազին, մինչդեռ նրա մորը, որ չէր զրկվել պետական ոչ մի աստիճանից, պարզապես անվանում էր «իմ տիրուհի»: Պետության բանտարկյալների հոգատար վերակացուն իրեն ընկերակցողների ձեռքից ստացավ գլանաձև մի մագաղաթ, որը, ի նշան հարգանքի, տարավ դեպի իր շրթունքները, բայց չբացեց: Այնուհետև տեղեկացրեց ժամանակավորապես հանգստյան կոչված Նորին վեհափառությանը, որ նա աստվածների հայր ու որդի համարվող փարավոնի բարձրապատիվ դիվանի կողմից արժանացել է բարեհաճ մի կարգադրության: Նախքան մագաղաթի բովանդակությանն անցնելը նա սկսեց փառաբանել գերագույն աստվածությունները,— ընդ որում, ի նշան քաղաքավարության, ամենավերջին տեղը հատկացրեց Դավթի տան աստվածության,— ապա հայտարարեց, որ շնորհիվ Եգիպտոսի բարեսիրտ տիրակալի ողորմած կամքի՝ Հուդայի երկրին տխուր պատահարներից հետո սպասվում է մի պայծառ ժամանակաշրջան: Հանձնարարեց մեծապատիվ աքսորյալներին, հանուն Երուսաղեմի թագավորության և նրա արքունիքի բարգավաճ պահպանման, այլևս չշարունակել սեփական ճակատագրի հետևանքով դառնացած ապրել: Այնուհետև իր երկար ու սրածայր մատներով նա բացեց մագաղաթը և մի անցողիկ հայացք գցելով գրության վրա՝ հաղորդեց. «Լույսի մեջ բնակվող անսահման բարությամբ փարավոնը որոշել է պահպանել Հուդայի գոյությունը, քանի որ ինքը գոհ է ներկա թագավորի հավատարմությունից, որն ամեն ինչ պարտական է իր արեգակնային բնությանը, նույնիսկ սեփական նոր անունը»: Երեմիան, սակայն, հասկանում էր, որ Նեքավովը մեկ այլ պատճառ ուներ՝ խնայելու նվաճված երկրին: Արդյոք Տերն իսկապես խոսե՞լ էր Անանիայի հետ և ոչ թե իր հետ: Արդյոք Գաբավոնից եկած այդ գեղեցիկ տղամարդը, որը կրում էր մազեղեն մի վերարկու, ճի՞շտ էր մարգարեացել Եգիպտոսի մասին: Գուցե իսկապես հաղթահարվել էր դեպի հյուսիս հոսող սպառազինված Նեղոսը Միջագետքում:

Երեմիայի մտքերն ընդհատվեցին Խեր–Հեպի ձայնից: Դա տարօրինակ կերպով մի խուլ ձայն էր, ինչպես նրա լերկ գանգը: Երեմիան ունկնդրում էր այդ ձայնը, որը չէր ասում այն, ինչ որ ներքուստ մղում էր թաքնագետին ասելու, այլ միայն երկրորդական բաների մասին էր արտահայտվում:

— Բարի աստվածը,— ասաց նա,— պատրաստ է բարելավելու ժամանակավոր կերպով հանգստյան կոչված Նորին վեհափառության վիճակը: Նա տարածում է իր ողորմությունը Նոփում հյուրընկալվող արքայական տան վրա և նույն մարզի սահմաններում շնորհում է նրան ազատ տեղաշարժվելու իրավունք, այն պայմանով, որ վայրի փոփոխության դեպքում պետք է տեղյակ պահի Խեր–Հեպի դիվանը:

Դատարկ ձևականություն: Հովաքազի և Ամիտալի ինչի՞ն էր պետք տեղաշարժվելու այդ մեկուսի ազատությունը: Դա ոչինչ չէր նշանակում: Դրա փոխարեն նրանց համար ավելի հաճելի էր ստանալ այն ձիակառքը, որն այդ օրը հանձնվելու էր իրենց իբրև բարեհաճ նվեր: Եվ դեռ մեկ այլ առանձաշնորհում, գուցե մինչ այդ ամենից մեծը, որը վերապահված էր Ամիտալին.

— Իմ տիրուհին մի առիթով ինձ խոստովանել է,— ասաց Խեր–Հեպը՝ շրջվելով արքայամոր կողմը և ընտրելով իր խոսքերը,— որ ինքը կարոտ է բարի ու հասկացող սիրտ ունեցող մեկի ընկերակցությանը... Այդ իսկ պատճառով նրա համար ես ընտրել եմ մի անգին ու հասկացող սիրտ, որպեսզի ընկերակից լինի նրան...

Այս խոսքերի վրա «Մահվան արարողակարգի մեծ վարպետը» ոտքի կանգնեց, բռնեց եգիպտացի աղջկա ձեռքից և առաջնորդեց Ամիտալի մոտ՝ ասելով.

— Սա Հե–Նուտ–Դիմեն է, վաղաժամ որբացած: Նա Մայ–Պտահի հինավուրց և արժանավորագույն ընտանիքից է, դուստրն Օսիրիսի գրկում արդեն հանգուցյալ գաղտնի խորհրդականի, ինչպես նաև հյուսիսի երկրների առևտրական կենտրոնների նախկին կառավարչի... Նա իր մանկությունն անցկացրել է իմ տիրուհու երկրի սահմաններում և հիմա շատ ուրախ է, որ առիթ ունի նորից լսելու իմ տիրուհու լեզուն...

Հե–Նուտ–Դիմեի դեմքը, անշուշտ, չէր բացահայտում Խեր–Հեպի ակնարկած ուրախությունը: Բարձրահասակ և բարեկազմ աղջկա

արտահայտությունը եզակիորեն զգուշավոր էր և շատ զգոն: Նրա աչքերն ամենևին նման չէին մանկամարդ եգիպտուհիների լայնաճեղք և ուրիշների նայվածքները հրապուրող աչքերին, որոնք մի օր առաջ «Փոքր արևի» սրբազան թափորում ներկայացնում էին գեղեցիկ կյանքի պատկերը: Որբուհու աչքերում առկա էր մի զգալի հանդարտություն: Նրանցում կար ևս մի բան, որը հնարավոր չէր արագ մեկնաբանել: Այդուհանդերձ, ըստ երևույթին, Ամիտալը ցնծության մեջ էր, քանզի նա իսկապես ցանկացել էր ունենալ իր կողքին կանացի սիրալիր և հասկացող մի սիրտ: Նա արագ կերպով ոտքի կանգնեց, տարավ Հե–Նուտ–Դիմեին դեպի լույսը և հուզախառն ժպիտով սկսեց ուսումնասիրել նրան, ապա հանկարծակի մղումով սեղմեց այդ օտար աղջկան իր կրծքին:

* * *

Խեր–Հեպը դրսևորել էր իր հատուկ նրբանկատությունը նրանով, որ իր խնամատարության տակ եղած բոլոր որբերի միջից ընտրել էր հենց Հե–Նուտ–Դիմեին: Ոչ միայն լեզվական ճկունության փոխաբերական արտահայտությամբ, այլ իր իսկական իմաստով, հետայսու Նոփում՝ աքսորյալների տանը, ապրելու էր մի սիրալիր ու համակերպվող սիրտ: Բացի այդ, շուտով պարզ դարձավ, որ Հե–Նուտ–Դիմեի խոհեմ լրջությունը և մտքի հանդարտությունը չէին բխում նրա ինչ–որ ներքին դառնությունից, այլ, ընդհակառակը, մի յուրահատուկ ուրախությունից, որը դժբախտ աքսորյալների վրա բարերար ազդեցություն էր թողնում: Լոտոսի սրահում օտար աղջկա հմայիչ ներկայությունը ոչ միայն Ամիտալին, այլև բոլորին պարգևում է մի կազդուրիչ թեթևություն՝ վանելով իրենց ունեցած սրտնեղությունները:

Երեմիան տղաներին ուսուցանելու համար հիմնականում օգտագործում էր առավոտվա երկու ժամերը: Ինչպես հայրենիքում և Սողոմոնի պալատում, դասավանդության զգալի մասը բաղկացած էր ազատ պատմվածքներից ու խոսակցություններից, որոնք ընդհանրապես ընթանում էին աստվածային և աշխարհիկ այլազան թեմաների շուրջ: Եվ քանի որ նորն ու գունագեղը, առանց ձանձրացուցիչ կրկնողությունների,

բխում էին Երեմիայի բերանից, հետևաբար Մաթանիայի քմահաճ ու փայլող աչքերը մնում էին կախված նրանից, նույնիսկ Աբդիմելեքի մարմնի՝ պարելու ցանկությամբ համակված անդամները դադարում էին շարժվելուց: Այդ սևամորթ պատանին արդեն տասնմեկ տարեկան էր և սկսում էր հասկանալ իրեն ընծայված այն մեծ պատիվը, որով ինքն արժանի էր դարձել կրթվելու աստվածային վսեմ ուսմունքների մեջ՝ հակառակ իր անշուք ծագումին ու դիրքին: Նրա մեջ նկատվում էր մի անհուսալի ջանք կենտրոնանալու և իր հոգում անընդհատ պայքարելու անհեթեթ հարցասիրության դևի դեմ: Երեմիայի դասաժամերը հրապուրում էին ոչ միայն մայր թագուհուն, այլև տան ծառայողներին, երբ նրանք զբաղված չէին, և կախված իրենց ուսուցչի շրթունքներից, նրանք շշնջալով կրկնում էին նրա դասերի բովանդակությունը, որն իրենց աչքերի առաջ վերակենդանացնում էր իրենց հեռավոր հայրենիքը, բացի դրանից, և առավել ևս, այն լցնում էր իրենց հոգին ճշմարիտ Տիրոջ գործերով ու խոսքերով, որն այդ երկրին օտար էր, ինչպես իրենք: Երեմիայի խոսքերի հզորությունը չէր խանգարում միայն Հովաքազին իր փայտագործության արհեստում:

Երեմիայի ամենահավատարիմ ունկնդիրը, սակայն, Հե–Նուտ–Դիմեն էր: Մինչ Ամիտալը նստած էր լինում առյուծի թաթերով իր բազկաթոռին, քաղցր և ըմբռնող սրտով օժտված պարմանուհին նստում էր նրա մոտ՝ հատակին: Նա այդ վիճակում կարող էր մնալ երկու ժամ շարունակ՝ առանց հոգնելու կամ համբերությունը կորցնելու: Նրա լայն բացված աչքերը խուզարկու նայվածքով նայում էին դեպի առաջ: Խոսքերն ուղղակիորեն չէին ընդունվում նրա կողմից, այլ նրբանկատորեն դրանք քննարկելուց հետո: Խեր–Հեպը չէր չափազանցել՝ ասելով, որ Հե–Նուտ–Դիմեն հասկանում էր Տիրոջ լեզուն: Նա կատարյալ կերպով չէր տիրապետում այդ լեզվին, մանավանդ Հուդայի յուրահատուկ խոսելաոճին, սակայն ինչքան երկար էր մնում այդ տանը, այլևս շատ քիչ անգամ էր պարտավորված զգում հարցնելու որևէ բառի իմաստը: Հիշողության մեջ հետզհետե հառնում էին ժամանակին սովորած հազվադեպ օգտագործվող բառեր: Երբ տատամսելով արտասանում էր այդ բառերից մեկը, ամոթից ծիծաղում էր և շիկնում:

Դուստրը՝ Օսիրիսի գրկում ննջող պալատական խորհրդականի և հյուսիսի երկրների առևտրական կենտրոնների նախկին կառավարչի, իր

մանկությունն անցկացրել էր Գազայում՝ Հուդայի սահմանակից Փիլիշտիմի (Պաղեստինի) ծովեզրյա մայրաքաղաքում: Հանգուցյալն այնտեղ զբաղեցրել էր նավահանգստի կառավարչի պաշտոնը, որով ցույց էր տրվում, թե բարի աստվածը մեկ կողմից պատվում էր Մայ–Պտահ կոչվող հնագույն ընտանիքի անունը և մյուս կողմից էլ գերադասում էր այդ անունը կրողին հեռու պահել արքունիքից: Հե–Նուտ–Դիմեն չգիտեր պատճառն իրենց համար բարենպաստ այդ դժբախտության: Ժամանակի ընթացքում փիլիշտիմցիների լեզուն թեև մի քիչ մոտեցել է Տիրոջ լեզվին, բայց այն այնքան էլ նման չէր դրան, որպեսզի Հե–Նուտ–Դիմեն կարողանար նրանով արտահայտել իր գիտելիքները: Նրան հավանաբար խնամել ու մեծացրել էին Եհովայի երկրի դայակներն ու աղախինները, որոնց երգերն ու խոսքերը սկսել էին զարթնել իր սրտում: Նա այդ մասին ոչ ոքի հետ չէր խոսում, իսկ Ամիտալն էլ խուսափում էր հարցեր տալ նրան:

Դասավանդությունների ժամանակ Երեմիան, որն զգում էր, թե ինչպես է իր պերճախոսությունն օրեցօր զարգանում, երբեմն հառում էր իր նայվածքը երիտասարդ եգիպտուհու վրա: Եգիպտուհին, չնայած իր ինքնազսպված լրջությանը, դեռևս չէր կարողանում թաքցնել իր մանկական դեմքի արտահայտություններում իր զգացածների ապրումները:

Մի օր՝ ճաշից հետո, երբ Երեմիան քայլում էր բակի պարտեզում, Հե–Նուտ–Դիմեն ազատորեն մոտեցավ նրան.

— Ի՞նչ անունով քո աղախինը կարող է դիմել քեզ...

Սրանք էին անմիջականորեն նրան ուղղված առաջին բառերը: Տիրոջ փախստական մարգարեն իջեցրեց իր հայացքը դեպի ներքև: Երիտասարդ մի աղջկա մերձավորությունն արթնացնում էր նրա մեջ ցավատանջ ամաչկոտության զգացում: Մինչդեռ այդ աղջիկը, առանց որևէ ամաչկոտության և առանց պատասխանի սպասելու, շարունակեց.

— Ես քեզ կոչելու եմ այնպես, ինչպես Մաթանիան է քեզ կոչում՝ «մեր ուսուցիչ», անշուշտ, եթե դա քեզ հաճո է, և եթե դու դա արտոնում ես Հե–Նուտ–Դիմեին...

Երեմիան բարձրացրեց նայվածքը, ժպտաց և գլուխը դրականորեն շարժեց՝ ի նշան համաձայնության: Այնուամենայնիվ, տասնյոթ տարեկան մանկամարդուհու դեմքին չերևաց ոչ մի ժպիտ, այլ այն վճռական լրջությունը, որի հետևանքով նա հաճախ կնճռոտում էր իր ճակատը:

— Կուզենայի ծառայել քո Աստծուն,— ասաց նա կարճ ու կտրուկ:

Այս բառերի վրա Երեմիայի հոգին զարմանքից ընկրկեց.

— Նա այնքանով է իմ Աստվածը, որքանով որ քոնն է: Նա քո և իմ Աստվածն է...

Պարմանուհին մի պահ մտածելուց հետո իր երկար ու խորազնին նայվածքը հառեց Երեմիայի վրա և ապա ասաց.

— Ինչ որ նոր ասաց մեր ուսուցչը, դա գուցե ինձ է վերաբերում... Բայց լսիր ինձ, ես ցանկանում եմ, որ նա, ով մեր Աստվածն է, ճշմարտապես դառնա նաև իմ Աստվածը...

Նա երդում անելու նման վեր բարձրացրեց իր բարակ մատներով ձեռքը: Երեմիան, սակայն, հեռու մնաց նրանից՝ առանց շարունակելու խոսակցությունը: Այնուհետև աղջիկը կախեց գլուխն ու հեռացավ: Նման լուրջ ու հակիրճ կերպով տեղի ունեցավ առաջին զրույցը Երեմիայի և Հե–Նուտ–Դիմեի միջև:

* * *

Այն ձգտումը, որ եգիպտացի որբուհին ուներ Երեմիայի Աստծու նկատմամբ, մանկական մի պարզ երազանք չէր, այլ մի խանձող կրակ: Առաջին խոսակցությանը հաջորդեցին ուրիշները: Շուտով դրանք վերածվեցին ամենօրյա խոսակցությունների, որի պատճառով Երեմիան հրաժարվեց իր օրական զբոսանքից Նու–Պտահի մեծ հրապարակում:

Տան փոքրիկ զբոսայգու կենտրոնում կար գեղեցիկ պատերով մի ջրավազան, որի մեջ լողում էին կարմիր և արծաթագույն դեկորատիվ ձկներ: Ջրավազանի եզրին Հե–Նուտ–Դիմեն նստել էր Երեմիայի կողքը: Նրանց վրայի մի կտոր երկինքը լեցուն էր Պտահի սավառնող ու խայտալից բազեներով: Հե–Նուտ–Դիմեն մոտեցրել էր իր ծնկներն իրար և արմունկներն էլ սեղմել իր մարմնին: Նրա բարակ ու երկար մատներով օժտված ձեռքերը հանդարտ հանգչում էին իր գրկում, ինչպես վայել էր լավ դաստիարակություն ունեցող մի աղջկա: Նա խուսափում էր նայել Երեմիային, այլ իր նայվածքը հառել էր իր սեփական ոտքերին, որոնք տան պարիսպների ներսում բոբիկ էին:

— Թող վերջապես մեր ուսուցիչը հայտնի ինձ,— համառորեն պնդում էր նա,— թե ինչ պետք է անեմ՝ ծառայելու համար Տիրոջը...

Երեմիայի սիրտը հուզվեց՝ տեսնելով Հավիտենականին մերձենալու աղջկա հաստատակամ տենչը: Նա երբեք չէր մտածել այլ ժողովուրդների միջից որևէ մի առանձին հոգու անմիջական կերպով առաջնորդել դեպի Տերը: Արդեն իսկ բավականին բարդ էր Աբրահամի, Իսահակի և Հակոբի Աստծու հարաբերությունը յուրայինների և այլոց հետ, որ ցանկալի լիներ հավատի մի նոր, անխոհեմ ու անկանոն խառնուրդ մեջտեղ բերելը: Ոչ թե առանձին, կղզիացած ու ցրված հոգիներ, այլ բոլոր ժողովուրդները մի օր պիտի հասնեն Տիրոջ ճշմարիտ ճանաչման ու ծառայության, և այլևս առանց տարանջատման պիտի հավաքվեն տաճարի սրբազան կենտրոնի շուրջը: Այնուամենայնիվ, Երեմիան, որ նստել էր Տիրոջը տենչացող աղջկա մոտ, համակվեց մի բարերար ջերմությամբ և ժպտալով պատասխանեց.

— Հե–Նուտ–Դիմեն արդեն ծառայում է մեր Տիրոջը՝ սիրելով նրան...

Խուսափողական այդ պատասխանը շատ դժգոհ թողեց նրան.

— Սերը ոչինչ է, եթե այն մնում է միայն սրտում... Ինչպե՞ս կարող է Հե–Նուտ–Դիմեն սիրել առանց զոհաբերության... Թող մեր ուսուցիչն ինձ բացատրի, թե ինչպես պետք է զոհ մատուցեմ Տիրոջը...

— Աշխարհում,— ասաց Երեմիան,— գոյություն ունի միայն մեկ տեղ, ուր մարդ կարող է Նրան զոհ մատուցել...

Աղջիկը զայրացած հետ գցեց գլուխը.

— Երեմիան շատ խորամանկ է, բայց Հե–Նուտ–Դիմեն էլ այնքան միամիտ չէ, ինչպես նա է կարծում... Աստծու զորությունը մարդու կատարած զոհաբերությունն է... Ընծայաբերումի, նվիրագործումի, խնկարկումի միջոցով նա ամրապնդում է իր սիրտը... Աստված, սակայն, ամենից շատ հաճոյանում է այն նվերներով, որոնք մեզ համար շատ թանկ են... Երբ ես ավելի երիտասարդ էի, կովի գլխով Հաթորին ընծայաբերեցի իմ երգեցիկ փոքրիկ թռչունը, որին ես շատ էի սիրում... Եվ Իսիսը՝ երկու երկրների աստվածների մեջ ամենից իմաստունը, հակառակ իմ աղքատ լինելուն, մեկից ավելի ոսկյա նվեր է ստացել ինձանից... Սակայն ես ի՞նչ պետք է նվիրեմ այն Տիրոջը, որն ստեղծել է համայն աշխարհներն ու աստվածներին, որոնք ցածր են իրենից...

Երեմիան, պահելու համար իր լրջությունը, ստիպված էր զսպելու իր ձայնի հուզումնալից պոռթկումը.

— Արդյոք Հե–Նուտ–Դիմեն երեկ դասաժամին չլսե՞ց այն խոսքերը, որ Տերը խոսել էր Սամվել մարգարեի միջոցով. «Ավելի լավ է հնազանդությունը, քան ընծայաբերումը»: Ամենամեծ նվերը, որ մենք կարող ենք անել Տիրոջը, դա նրա նվերն ընդունելն է, որն է՝ նրա պատվիրանների նվերը...

Նուրբ ծաղրանքով ու վիրավորանքով համակված խոսքեր են դուրս գալիս պարմանուհու շրթունքներից.

— Մեր ուսուցիչը հաճախ Մաթանիային է հարցնում պատվիրանների մասին և ստանում է կցկտուր պատասխաններ... Ինչո՞ւ նա ոչ մի անգամ չի հարցնում իր կողքին նստած Հե–Նուտ–Դիմեին, որպեսզի քննի ու ճանաչի նաև նրա միտքը...

Այնուհետև մի պահ լռեց: Ապա նրա ձայնը փոխվեց և ստացավ մի վախեցած շեշտ, որպես թե որոշած լիներ հարցնել բոլորովին անհեթեթ ու արգելված մի բան.

— Արդյոք Տերն իսկապե՞ս բոլորովին անտեսանելի է...

— Գոյություն չունի ոչ մի ստեղծված աչք, որ կարողանա տեսնել Նրան:

— Այո՛, բայց... Երեմիան թող լսի ինձ, նույնիսկ եթե ես շատ մեղավոր բան ասեմ... Արևը պատկերն է արև աստծու, ինչպես ամբողջ աշխարհն է հաստատում, լինեն դրանք իմաստուն կամ ոչ... Նա երևելի է և աներևույթ... Այդ աստվածն իր նավակով անցնում է երկնքի վրայով, բայց ստեղծված աչքն ի վիճակի չէ տեսնել նրան...

— Արևը, Հե–Նուտ–Դիմե, ոչ թե աստված է, այլ Նրանից է ստեղծված...

— Իսկ կայծա՞կը...

— Կայծակն ինքը աստված չէ, այլ Աստված այն ուժն է, որ ուղարկում է կայծակը...

— Եվ փոթորի՞կը...

— Փոթորիկը աստված չէ, այլ Աստծու կամքն է, որ սանձազերծում է փոթորիկը...

Աղջկա անզիջում կեցվածքը հատուկ ուրախություն էր պատճառում Երեմիային: Նա բռնեց Հե–Նուտ–Դիմեի ձեռքը, որը շատ սառն էր: Իսկույն զգաց նրա սառը մատների թեթև սեղմումը.

— Այնուամենայնիվ, ով իմ ուսուցիչ, ես կուզենայի, որ Աներևույթը լիներ միայն մի քիչ երևելի...

Նա իր նայվածքն ուղղեց դեպի հետմիջօրեի մուգ կապույտ երկինքը, ուր սավառնում էին հպարտ բազեները: Շատ դանդաղ ու հոգնած, հազիվ կարողանում էր խոսքեր գտնել, կարծես ներքին հուզմունքն ու անմարմին Աստծու վերաբերյալ պայքարը սպառել էին իր ուժերը.

— Թող Երեմիան նայի վերև՝ բազեներին, որոնց բնակարանը ոչ ոք չգիտե, թե ուր է... Նրանք Պտահի թևավոր պատկերներն են... Իսկ Ապիսը, ում երկրպագում են, և նրա խնամատարները ծնկաչոք սպասարկում են նրան, նա էլ իր հերթին լավ ձևավորված պատկերն է Օսիրիսի հոգու... Եվ Օսիրիսը՝ հերոսն ու փրկիչը, որն իջնում է մեռելների արքայություն, ունի մի հավատարիմ օգնական. դա Անուբիսն է՝ շնագայլի գլխով... Շների որոշ նայվածքներում քահանան ճանաչում է Անուբիսի հոգու հարազատ պատկերը, որը հերոսի առջևից է գնում դեպի ստորերկրյա աշխարհ... Այսպիսով, այն ամենը, որ աստծուն է վերաբերում, ունի իր տեսանելի ու կենդանի պատկերը, որպեսզի այդ աստվածայինը մեզ հետ բնակվի... Այդ պատկերներից, սակայն, մենք էլ նոր պատկերներ ենք պատրաստում, ոչ միայն տաճարների համար մեծ պատկերներ, այլև փոքրեր՝ մեր սենյակների համար... Քանզի գալիս է պահը, երբ մարդ իրեն բոլորովին մենակ է զգում ու վախենում, դրա համար ստիպված է լինում երկնայինի առաջ մի ճրագ վառելու, մի ծաղկեփունջ ընծայաբերելու և մի քիչ էլ խունկ ծխելու, որպեսզի դրանցով հանդարտեցնի իր իսկ վախեցած սիրտը... Հիմա, սակայն, Հե–Նուտ–Դիմեն սովորեց արդեն, որ այդ բոլորը շատ վատ է ու մեղանչական... Եվ վերջապես թող իմ ուսուցիչն ինձ այն էլ սովորեցնի, թե աշխարհի բոլոր պատկերների մեջ ո՞րն է Աներևույթի իսկական պատկերը...

Երեմիայի ձեռքի ջերմությամբ տաքացել էր Հե–Նուտ–Դիմեի ձեռքը: Նա, բաց չթողնելով այն, հարցրեց.

— Մի՞թե աշակերտն արդեն դրա մասին պատասխան չի ստացել: Չի՞ ասվում, թե ՆԱ, ով ստեղծեց մարդուն, նրան իր պատկերի համաձայն ստեղծեց...

Այս խոսակցության ընթացքում աղջիկը, առաջին անգամը լինելով, նայեց ուղղակիորեն նրա աչքերին.

— Ուրեմն կարելի՞ է ասել, թե մարդիկ են պատկերն Աներևույթի ու Հավիտենականի, ինչպես վերևում բազեները պատկերն են Պտահի...

— Հե–Նուտ–Դիմեն է ասում այդպես... Նա չպետք է խոսի բազեների մասին և իրականը համեմատի անիրականի հետ...

Նրա հայացքը պղտորվում էր հավատի հարցերի պատճառով.

— Մի՞թե բոլոր մարդիկ, ներառյալ հիվանդները, հաշմանդամները, դիվահարները, խելագարները, հանցագործները, Տիրոջ պատկերներն են...

Երեմիային թվում էր, թե ինքը մինչ այդ երբեք չի հակաճառել նման մի դժգոհ ու քմահաճ հակառակորդի:

— Հե–Նուտ–Դիմեն պետք է իմանա,— ասաց նա,— որ պատկերը շատ է խեղաթյուրվել և մի շարք անոթներ ծուռ են դուրս եկել, ինչպես կավը բրուտագործի ձեռքում, ու դեն շպրտվել...

Այս խոսքերի վրա աղջիկը մի տարօրինակ վրդովմունքով համակվեց, բիրտ կերպով թողեց նրա ձեռքը, և արյունը խուժեց դեպի նրա այտերը.

— Չեմ հավատում և չեմ էլ ուզում հավատալ, որ բոլոր մարդիկ Տիրոջ պատկերն են... Քանզի ես անհողդողդ կերպով հավատում եմ, որ միայն մեկ մարդ կա, որ Տիրոջ իսկական պատկերն է, և դա հենց ինքը՝ Երեմիան է...

Երկուսն էլ սարսափած վեր ցատկեցին: Աղջիկը, շփոթված, գլուխը մի կողմ շուռ տվեց և կմկմալով ասաց.

— Կուզենայի, որ Երեմիան ինձ տաճար տանի, որպեսզի ես այնտեղ զոհ մատուցեմ Տիրոջը, որի պատկերն է ինքը...

Այնուհետև, առանց գլուխն ուղղելու, շարունակեց շշնջալով.

— Հե–Նուտ–Դիմեն՝ դուստրն Օսիրիս Մայ–Պտահի, անվանված Հե–Նուտ–Դիմե... Այդուհանդերձ, մայրս ինձ ժամանակին մի ուրիշ անունով է կոչել, Տիրոջ լեզվով մի գաղտնի անունով...

— Եվ դու հիշո՞ւմ ես այդ անունը,— հարցրեց Երեմիան՝ հուզմունքից հաղթահարված:

Հե–Նուտ–Դիմեն նայեց նրան մտածկոտ ու շարժեց գլուխը բացասական կերպով:

— Ինչպե՞ս կարող եմ հիշել այդ անունը, քանի որ ես այլևս չեմ էլ հիշում իմ մորը, նրա ձայնը, նրա դեմքը...

Այն, ինչ որ Երեմիան պատկերացրել էր իր գաղտնի տեսիլքներում, հաստատվում է հիմա նրա բերանով: Քնքշորեն և հանդիսավորությամբ ձևացնելով՝ իբր դնում է իր ձեռքը նրա գլխին, սակայն առանց դիպչելու նրան, ասաց.

— Ես քեզանից կվերցնեմ Հե–Նուտ–Դիմե անունը և քո մոր նման քեզ կտամ մի նոր անուն Տիրոջ լեզվով: Այսօրվանից սկսած թող կոչվես Զենուա...

Ձահել եգիպտուհին կիսախուփ աչքերով մի պահ կանգնեց քարացած: Այնուհետև հեռացավ Երեմիայից դեպի ջրավազանը: Դիտեց երեկոյան մթնշաղով պարուրված ջրի հայելու մեջ իր պատկերը, որը շրջանակված էր վարդերով ու լոտոսի ծաղիկներով: Հրաժեշտ տալու նման նա խոնարհվեց և բացականչեց.

— Հե–Նուտ–Դիմենն այլևս չկա, նա գնացել է...

Այնուհետև նա շրջեց իր գունատ դեմքը դեպի Երեմիան և առանց մի քայլ առաջ գնալու դեպի նա՝ հայտարարեց.

— Զենուան է գալիս...

Ապա ընծայաբերման մատուցվող մի ափսեի նման բարձրացրեց իր ձեռքերը դեպի երկինք, մինչ համարձակ ու վտանգավոր մի խենթ ծիծաղ ցնցեց նրան.

— Երեմիայի Աստված, ընդունիր Զենուային...

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ

ՋԵՆՈՒԱՆ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ Է

Մի անգամ Երեմիան, իր մարգարեի կոչումը ստանալուց շատ առաջ, երբ դեռ տարտամ ու շշուկաձայն պատգամներ էին հասնում նրան, գիշերը կիսաքուն վիճակում լսում է մի հրահանգ՝ ոչ մի կին չառնել: Շշուկաձայն այս հրահանգին հաջորդում են ևս երկուսը. երբեք ոտք չդնել մի տուն, ուր խնջույք կա, և ոչ մի անգամ էլ չգնալ սգո տուն: Այսուամենայնիվ, մարգարե լինելուց դեռ շատ առաջ ստացած այդ հրահանգները երկար ժամանակից ի վեր մոռացության էին տրվել, հավանաբար այն պատճառով, որ նա իր մտքով երբեք չէր անցկացրել ամուսնանալ: Հաճախ նրան թվում էր, ինչպես նաև յուրաքանչյուր առողջ մարդու Հուդայում և Իսրայելում, անարդար ու Տիրոջ կամքին հակառակ, որ Հուդայի ծառի մի ոստը չորանա ու անժառանգ կորչի: Տարիներ շարունակ մայրը խնդրել էր նրան չհրահրել Աստծու զայրույթը՝ խուսափելով ամուսնանալու պարտականությունից: Աբին չէր սիրում դատարկ խոսքեր անել, դրա համար նա մատնանշում էր որոշակի կույսերի, որոնցից մեկնումեկը, ամենայն հավանականությամբ, կարող էր արժանի լինել ամուսնանալու իր կրտսեր որդու հետ:

— Ինչո՞ւ է ուզում իմ մայրը,— հակաճառում էր Երեմիան,— այս կամ այն արարածին դժբախտացնել՝ ամուսնացնելով մեկի հետ, որն իր վրա է կրում Տիրոջ բեռը, իսկ կինը, մայր իմ, կրկնապատկում է որևէ բեռ:

— Ինչ գիտե իմ որդին կնոջ մասին: Քո հայրը մեծ դառնություն ուներ իր սրտում: Եվ նա ամեն գիշեր երկու–երեք անգամ արթնացնում էր ինձ, քանի որ կարիք ուներ մեկի հետ խոսելու իր սրտի մասին: Եվ ես արթնանում էի, լսում ու ցավակից լինում նրան, թեև երբեմն նա նաև ինձ էր

մեղադրում: Բայց ո՞վ պիտի լինի իմ կրտսեր որդու մոտ, որ արթուն մնա ու լսի նրան, երբ նա անքնությունից տառապի, ինչպես իր հայրը...

Երեմիան ընդհանրապես ընդհատում էր նման խոսակցությունները՝ առարկելով, որ ինքը չէր կարող ինքնուրույն տնօրինել իր հարցերը, առանց Տիրոջ հստակ խոսքի: Չնայած նրան, որ իր մտքից անհետացել էին երբեմնի շշնջալից պատգամները, բայց երբ խոսք էր լինում ամուսնության մասին, դրանք զգալի էին դառնում իր հոգում՝ իբրև տաղտկալի ճնշում:

Այժմ կարծես թե այդ տաղտկալի ճնշումը բոլորովին չքացել էր, և դրա նման նաև՝ բոլոր տեսակի կասկածները: Դա միայն այդպես էր թվում. իրականում Երեմիան իր ուժով էր հաղթահարել դրանք ու դեն շպրտել: Նա փորձում էր համոզել ինքն իրեն, որ Տերը, ում ինքը ներկայացրել էր իր հրաժարականը, երկար ժամանակ անց որոշել էր երիտասարդ եգիպտուհուն առաջնորդել իր մոտ, որպեսզի ինքն ամուսնանա նրա հետ: Զենուան ամբողջովին օտար մեկը չէր, նույնիսկ եթե նա այլևս չէր հիշում իր մորը, սակայն շատ բան ապացույցն էր այն բանի, որ նավահանգստի հանգուցյալ կառավարչի կինը կարող էր լինել դուստրն Իսրայելի: Այլ կերպ հնարավոր չէր բացատրել, որ Նու–Պտահի որբուհին կարողացել էր շնորհիվ վերհիշումների այդքան հեշտ ու սահուն կերպով սովորել Տիրոջ լեզուն: Սակայն Հակոբի տան հետ ունեցած մասնակցությունից ավելի արժեքավոր մի հանգամանք կար. Զենուան իր սրտում միշտ փնտրել էր Տիրոջը, ինքը սիրում էր Նրան առավել, քան Նրա ժողովուրդը: Մի՞թե դա հրաշալիորեն հստակ մի ապացույց չէր, որ դեռևս տասնութ տարին չբոլորած այդ եգիպտուհին՝ Խեր–Հեպի խնամքին հանձնված այդ հեթանոս որբուհին, առանց մարդկային մի կարևոր գործոնի, մեկ օրից մյուսը մասնակից դառնար Հավիտենականի լուսավորությանը: Այս հրաշքի մեջ մի՞թե մարդ չպետք է ճանաչեր Տիրոջ ձեռքի միջամտությունը: Եվ այս անգամ այդ ձեռքը բացահայտ կերպով չէ՞ր անտեսում արդյոք այն հայտնի պատճառները, որոնց համաձայն խորհուրդ չէր տրվում «խառնվել օտար կանանց հետ», ինչպես Սողոմոն թագավորը, քանզի այդ օտար կանայք իրենց կուռքերը Հակոբի տան հետևի դռնով ներս պիտի տանեին: Զենուան ընդամենը նման էր միայն մեկին՝ մովաբացի օտարական Հռութին, որն ընտրված էր լինելու Դավթի նախամայրը:

Աստծու հանդեպ նրա ջերմեռանդ սերը այնքան հեռուներն էր գնում, որ կարծես թե ինքը սիրում էր Երեմիային ոչ թե ի սեր նրա անձի, այլ Տիրոջ պատճառով, որն առանձնացրել ու ընտրել էր Երեմիային: Ամիտալը, հուրախություն իր սրտի, շատ շուտով հասկանում է, որ Երեմիան ու Զենուան սիրահարված են իրար: Սակայն այդ երկու սիրահարվածները երբեք չէին խոսում իրենց սիրո մասին, քանզի Աստծու վերաբերյալ խոսակցությունը երբեք չէր ավարտվում իրենց բերանում: Միայն երբեմն, մի անցողիկ ակնթարթ, այդ մտերիմ սիրո արտահայտությունները խառնվում էին իրար՝ երջանկությամբ արբեցած: Իրար միջև տեղի էր ունենում հազիվ թե մի թեթևակի հպում, ավելի ճիշտ՝ իրար հպվելու մի ճնշված ցանկություն, որից Զենուան անմիջապես զգաստանում էր ու խուսափում: Այսպիսով սկսվում է նախաամուսնական մի տարօրինակ վիճակ, որի նմանը ոչ ոք երբևէ չէր տեսել, ուր սիրահարվածների խոսակցությունն ավելի գերբնական բաների մասին էր, քան երկրային: Երեմիան զգում է բոլորովին մի նոր ազատություն: Մինչ նա հաճախ Զենուայի հետ Տիրոջ մասին էր խոսում, իրականում, սակայն, ամեն անգամ ավելի էր հեռանում Նրանից: Միայն հիմա նրան հաջողվում էր ամբողջությամբ ազատվել իր առաքելությունից, և այն էլ այնպիսի հակասական ձևով, որ կարծում էր, թե նորից է դիմավորում այդ առաքելությունն իրեն հանձնարարողին: Գնացել էր Եգիպտոս՝ երեք հարյուր ութսունյոթ աստվածների երկիրը, թաքնվելու համար ճշմարիտ Աստծուց: Սակայն նույնիսկ Եգիպտոսը չէր կարողացել ամբողջությամբ պաշտպանել նրան հետապնդողի աչքերից: Միայն մի կնոջ հանդեպ ունեցած սերը նրա համար դարձել էր անթափանցելի թաքստոց:

Կար նաև մի երրորդ էակ, որի դեմքը ճառագայթում էր սիրո այդ միության հրճվանքով, և դա Ամիտալն էր: Նրա մեծ աչքերը վերագտել էին իրենց նախկին փայլը, և նրա կերպարանքը՝ իր նախկին մեղմությունն ու քաղցրությունը, չնայած իր կրած սգո գունատ հագուստին: Ամիտալը տեսնում էր Երեմիայի մեջ ընկած հերոսի վերջին մխիթարիչին, այն միակ ընկերոջը, որն ինքնակամ պահպանել էր իր հավատարմությունը և աքսորի մեջ չէր լքել իրեն: Զենուայի մեջ, սակայն, նա մայրական ու քրոջական կերպով սիրում էր հենց սերն ինքնին: Առանց թագուհու միջամտության այն ուժը, որ մղում էր Երեմիային ու Զենուային իրար

միանալու, հեշտությամբ չէր արտահայտվի, քանզի երկուսն էլ ամաչկոտ ու խուսափողական նկարագիր ունեին: Մի կնոջ բոլորանվեր եռանդով, որի առաջ հանկարծակի վերաբացվում է կյանքը՝ շնորհիվ իր ցուցաբերած հոգատար մասնակցության, Ամիտալը մի կողմ է քաշում աղջկան և քաջություն է տալիս նրան արտահայտվելու իր մեջ կուտակված բուռն սիրո երջանիկ զգացումների մասին:

Նոփում հին ժամանակներից ի վեր ապրում էր իսրայելացիների մի փոքրաթիվ համայնք, որն իրեն պահել էր անաղարտ: Այդ համայնքն ուներ մի ժողովասրահ, մի դպրոց և մի սեփական գերեզմանոց: Բարեպաշտ մարդիկ ամեն տարի Զատկվա տոնի առթիվ ուխտագնացության էին գնում Երուսաղեմ, որպեսզի այնտեղ՝ տաճարում, զոհաբերություններ կատարեն: Այդ համայնքի գլուխն էր մի ծեր քահանա, որն իբրև դատավոր հարթում էր բոլոր վեճերը, նորածին արուների վրա Ուխտի նշանն էր հաստատում, տասներեք տարեկաններին ընդունում էր բարեպաշտ հրեաների համայնքում, ամուսնություններն էր օրհնում, հուղարկավորում մահացածներին: Ամիտալն իր մոտ կանչել տվեց այդ քահանային: Վերջինս լսեց թագուհուն և որոշ քննարկումներից հետո համաձայնեց եգիպտացի երևելի որբուհուն, որը Հռութի նման ջերմագինս պաշտում էր Տիրոջը, առաջնորդելու դեպի Հակոբի տունը և ամուսնացնելու Անաթովթի քահանայի որդու հետ:

Ամիտալը ձեռնարկեց նաև այլ անհրաժեշտ և հավանաբար դժվարագույն քայլեր: *Նիսան* ամիսն էր, Զատկվա տոնն արդեն անցել էր, նորից սպասվում էր Խեր–Հեպի պաշտոնական այցը հենց այն օրը, երբ Օսիրիսը, անցնելով մեռյալների աշխարհի միջով, հայտնվում էր Ամենտիի մյուս ծայրում: Ճիշտ նշված օրը Նու–Պտահի «Մահվան արարողակարգի վարպետը» կատարեց իր այցելությունը՝ ընկերակցությամբ իր երկու ստորադաս քահանաների: Սովորության համաձայն նրանց տրամադրեցին առյուծի թաթերով բազկաթոռները: Խեղճ գահազուրկ թագավորը ստիպված էր դժկամությամբ թողնելու այն անկյունը, ուր իր աշխատանոցն էր, քաղաքավարությամբ փոխանակելու համար ընտրված նախադասություններ: Նրա աչքերը հուսահատ թափառում էին Լոտոսյան սրահի շուրջը, և նրա ձեռքերն անհամբեր շարժվում էին օդում: Խեր–Հեպը նուրբ արտահայտություններով հետաքրքրվեց պետության

բանտարկյալների առողջությամբ և հարցրեց նրանց ցանկություններ-ի մասին, որոնք ինքը մտածում էր հավատարմորեն դնել աստվածնե-ի հոր և որդու ոտքերի առաջ: Ինքը մտահոգ էր և անհանգստացած, ուզում էր իմանալ՝ արդյոք իրենց ամբողջովին գոհացնում են ընծայ-ված բարիքները, արդյոք Նորին վսեմություն թագուհին, որ ժամանա-կավոր հանգստյան մեջ էր, որևէ թերություն չի հայտնաբերել արքա-յական ախոռից նվեր ստացած կառքի ու ձիերի վերաբերյալ: Ամիտալն այդ օրը, բոլորովին հակառակ իր բնությանը, սկսեց ճոռոմ խոսքերով գովաբանել փարավոնի գերմարդկային բարությունն ու դրանից բխած առատաձեռնությունը, այնպես որ Խեր–Հեպի ճաղատ ու գունատ գլու-խը լարված ուշադրությամբ թեքվեց նրա կողմը: Նա հայտնեց նաև, որ Հուդայի թագավորն ու նրա մայրը, բացի աքսորի ժամանակ իրենց կրած տառապանքներից, դժգոհության ոչ մի պատճառ չունեն, քանզի Խեր–Հեպի բարեգութ կարգադրությամբ իրենց մոտ ապրող քաղցր ու ըմբռնող սրտով եգիպտուհին իրենց համար դարձել է մի հոյակապ և չափազանց մտերիմ ընկերուհի: Ո՜հ, ինչքան կուզենար ինքը, որ այդ կենսախինդ ու երիտասարդ ընկերուհին միանար իրենց հավիտյան: Այս իմաստալից հառաչանքից հետո Ամիտալը ոտքի կանգնեց և խնդ-րեց Խեր–Հեպին գնալ կողքի սենյակը, ուր անմիջապես կանչվեցին նաև Երեմիան ու Զենուան:

Ամենտիի արարողակարգի նիհարակազմ ու բարձրահասակ վար-պետը կանգնեց զույգի դիմաց և սառած հայացքով նայեց նրանց: Մի երկար պահ տիրեց ճնշիչ լռություն: Ի վերջո նա որոշեց բացել բերանն ու խոսել:

Նա ասաց, որ շատ լուրջ բան է փոխանակել աստվածներին, և այն էլ՝ ոչ թե աստվածների սիրուն, որոնք անշարժ են, այլ այն մարդկանց սիրուն, որոնք հանդգնում են անել այդպիսի բան: Դրանով մարդկային հոգին կարող է հեշտությամբ ընկնել միջանկյալ արքայության մեջ, որի վրա իշանություն չունեն ոչ հին աստվածները և ոչ էլ նոր աստվածը: Այ-նուհետև այդ հոգուն սպառնում է բոլոր վտանգներից ամենասարսափե-լին՝ Աշխարհից «դուրս ընկնելու» վտանգը: Հետևաբար նման ձևով աշ-խարհից դուրս ընկած մի հոգի բոլորովին անարժեք մի հոգի է, չի պատ-կանում ստեղծված ոչ մի վայրի և մնում է որևէ համայնքից կտրված,

նույնիսկ մեռյալների համայնքից, քանզի Օսիրիսին մատուցված զոհաբերության միջոցով ծաղկող շնորհներն ի զորու են միայն նրանց համար, ովքեր զմռսվել են սրբազան աղով և դիմացկուն պատանքներով ու չեն լքել նրան հետևողների շարքերը: Ըստ այդմ, որևէ հոգի, նախքան աստվածներին փոխանակելը, պետք է իմաստությամբ նկատի ունենա նշված կործանարար վտանգը:

Ձենուան, ինչպես անում էր միշտ, երբ խորը մտածում էր, երեխայական կնճռոտված ճակատով և սևեռուն հայացքով նայում էր իր առաջ: Այժմ գլուխը դեպի հետ տարավ այնքան ուժգին, որ արձակվեցին իր մազերը և տարածվեցին, ինչպես մի պարուհու մազերը, դեպի գունազարդ օձիքով պարանոցը.

— Իմ հոգին սիրում ու վստահում է Եհովային՝ այս մարդու Աստծուն, Անտեսանելիին, Միակին, Հավիտենականին: Նա թույլ չի տալիս, որ որևէ հոգի դուրս ընկնի աշխարհից, թեկուզ դա լինի իմ հոգին...

Ամիտալը, որ կանգնած էր մի քիչ հեռու, գունատվեց աղջկա այդ համարձակ խոսքերից, որոնք անտեսում էին Նու–Պտահում թաքուն գիտությունների գերագույն վարպետի ազդարարությունը: Խեր–Հեպը, սակայն, դրա վրա զայրույթի որևէ նշան չարտահայտեց, այլ նրա գունատ շրթունքներին ուրվագծվեց մի թույլ ժպիտ:

— Ես գիտեի, որ Հե–Նուտ–Դիմենն՝ Մայ–Պտահի ազնվական հնագույն ընտանիքից, այլ կերպ չպիտի խոսեր: Հարգում եմ ու գնահատում նրա քաղցր սրտի կամքը: Սակայն խնամատարի պարտականությունն է իր խնամքին հանձնված երեխաներին տեղեկացնել բոլոր վտանգների մասին: Հե–Նուտ–Դիմենն ոչ մի դեպքում թող չվստահի իր մայրական կողմին: Աստված չի որոշվում մոր կողմից, այլ հոր: Հե–Նուտ–Դիմենն թող չվստահի նաև աստվածների ողորմությանը, թող նկատի ունենա, որ արտոնված է աղերսել ցանկացած աստծու ողորմությունը, սակայն առանց դրան վստահելու, քանզի աստվածների ողորմությունն ու զայրույթը, բարին ու չարը մեզ անհայտ են...

Այս խոսքերից հետո Խեր–Հեպը շրջեց իր նայվածքը Ձենուայից դեպի Երեմիան: Վերջինս ցնցվեց այն սարսափելի մտքից, թե Օսիրիսին նվիրված այդ մարդն էլ, որի բերանը լի էր կռապաշտական դատարկ անուններով, կարող էր լինել Եհովայի՝ աշխարհի Աստծու, մի գաղտնի

հետևորդը: Խեր–Հեպի հայացքը, սակայն, երկար ժամանակ չմնաց Երեմիայի վրա, որպես թե նրանում ոչինչ չգտավ ուսումնասիրության արժանի: Ոչ մի խոսք չասաց նրան, այլ բարձրացրեց աջ ձեռքը, որով բռնել էր Օսիրիսի նուրբ խարազանը, և լուռ կերպով ցույց տվեց Զենուայի դաստակը: Բոլոր եգիպտացիների տղամարդկանց ու կանանց նման, նա նույնպես իր դաստակներին կրում էր գունազարդ ժապավեններով պատրաստված սեղմ ապարանջաններ, որոնց ներսում կարված էին նեղ և նրբորեն մակագրված պապիրուսե շերտեր: Նոփի բնակիչներն իրենց աջ դաստակներին կրում էին պապիրուսե մի շերտ, որը գաղափարների պատկերագրությամբ ներկայացնում էր Օսիրիսի ողնաշարը: Այդ ամուլետը կոչվում էր «*Դեդ*», որը խորհրդանշում էր մասնատված աստծու վերածնունդն ու հարությունն ամեն մեկ ողնոսկրից, իսկ ամուլետը կրողին տրվում էր հարության հույսը: Դիակի վրա մնում էր այն՝ որպես մումիայի ուղեկից մինչև Վերջին դատաստանի օրը:

Մյուս կողմից՝ ձախ դաստակի ժապավենում դրված պապիրուսե շերտը կոչվում էր «կյանքի ընթացքի գաղտնի արձանագրությունը», կրճատված՝ «*Անեկ*»: Գրության գլուխը զարդարում էր բռնակով օժտված խաչը՝ իբրև կյանքի նշան: Այնուհետև դրան հետևում էին կրողի ճակատագրի կարևորագույն հանգամանքները. նրա և նրա ծնողների ծնունդը հովանավորող համաստեղությունները, տվյալ ժամանակահատվածում վերամարմնավորված Ապիսի անունը և մի քանի բոլորովին գաղտնի նշաններ, որոնք նույնիսկ մեծ զարգացում ունեցողն ի վիճակի չէր կարդալու, եթե նա ավարտած չէր խորհրդագիտության բոլոր դպրոցները: Խեր–Հեպը պահանջեց Զենուայից «կյանքի ընթացքի գաղտնի արձանագրության» վավերագիրը: Վերջինս դժկամությամբ հանեց «*Անեկը*» իր ձախ դաստակից: Գաղտնի գիտությունների վարպետը խորամուխ եղավ դրա ուսումնասիրության մեջ: Բավական երկար ժամանակ տևեց, մինչև որ նա վերջապես վեր բարձրացրեց գլուխը, մի փոքր կիտեց իր ներկված հոնքերը: Սակայն նրա գունատ և չափազանց անտարբեր աչքերում ոչինչ հնարավոր չէր կարդալ մարդկային ապագայի մասին: Մի հանկարծակի վախ սեղմեց Երեմիայի կոկորդը՝ ի դիմաց այդ անթափանց անտարբերության: Խեր–Հեպը դանդաղորեն շրջվեց դեպի Ամիտալը, որն անհամբեր հուզմունքով սպասում էր նրա խոսքին.

— Խնամակալը ոչ մի առարկություն չունի Մայ–Պտահի որբացած դուստր Հե–Նուտ–Դիմեի և այս արտասահմանցի մարդու ամուսնության ուխտի վերաբերյալ...

Երեմիան ու Ձենուան լռում են: Ամիտալն սկսեց բարձրաձայն շնորհակալություն հայտնել: Նա չէր սպասում, որ այդքան հեշտությամբ կլուծվեր այդ հարցը: Խեր–Հեպն ընդմիջեց նրան.

— Խորհուրդ եմ տալիս իմ տիրուհուն, որ հարսանիքը տեղի չունենա, մինչև որ Օսիրիսի փոքր արևն ամբողջությամբ չվերածվի Հորուսի մեծ աչքի, այսինքն՝ ամռան սկզբին, իմ հաջորդ այցից հետո...

Դատապարտյալների խնամատարը պատրաստվեց հեռանալ: Հեռանալիս, սակայն, քահանայական իր դեղնագույն ձեռքը մեղմորեն հպեց Ձենուայի մազերին: Դա ուներ երկու կամ նույնիսկ երեք իմաստ. գուցե դա բարեկամաբար տրված համաձայնության շնորհավորանք էր և կամ նրան քնքշությամբ հանձնելու նշան, կամ էլ՝ կարեկցանքի մի քաղցր շոյանք...

* * *

Նույն օրը երեկոյան փեսան խնդրեց իր հարսնացուին դաստակից հանել «*Դեղ*» և «*Անեկ*» ամուլետները: Նրանք, ինչպես հաճախ, կանգնած էին պարտեզի ջրավազանի եզերքին, ուր Ամիտալի խնամքի շնորհիվ առատորեն աճում էին գունագեղ ծաղիկներ: Դեռևս բոլորովին չմթագնած երկնքում թռչկոտում էին Պտահի սրբազան բազեները: Երեմիայի ցանկությունը երբեք այդքան երջանիկ չէր արել աղջկան: Գոհունակության մի թեթև ճիչ լսվեց նրա շրթունքներից: Նա շտապ հանեց իր ժապավենահյուս ապարանջանները, ասես թե դրանք թունավոր բաներ լինեին, և շպրտեց ավազանի կանաչավուն ջրի մեջ: Նրա խոսքերը հնչեցին իբրև թեթևության հոգոց.

— Որքա՜ն ժամանակ է, որ Ձենուան սպասում էր այդ հրամանին... Արդարև սա Տիրոջը նվիրված առաջին զոհաբերությունն է, որն ինձ արտոնվում է անել Երեմիայի միջոցով...

Կանգ առավ և ապա շարունակեց տառապալից.

— Վա՛յ, իրականում սա զոհ էլ չէ, սրանով պարզապես ես ինձ եմ ազատագրում...

Երեմիան չէր հասկանում, թե Զենուան ինչ էր ուզում ասել, որ ջրավազանի եզրին քաշում էր իրեն դեպի ինքը: Վերջինս նկատեց, որ նա պայքարում է մի ինչ-որ բանի դեմ, որի մասին խոսելը նրանից սարսափելի մեծ ջանք էր պահանջում:

— Փեսան պետք է իմանա,— սկսեց նա դժվարությամբ,— որ իր հարսնացուն տեղեկացել է մի շատ զգայնացունց գաղտնիքի մասին, երբ Խեր-Հեպը վերլուծել էր նրա կյանքի արձանագրության վավերագիրը... Կբարկանա՞ արդյոք փեսան...

— Ինչպե՞ս կարող է պահանջկոտ փեսան զայրանալ հարսի վրա, որը զոհաբերություն է անում...

— Դա, սակայն, վերաբերում է Օսիրիսին... Դա վերաբերում է այն ուսմունքին, որի մեջ կրթել են Հե-Նուտ-Դիմեին...

— Ուրեմն դա վերաբերում է այն բանին, ինչը Զենուան իրենից հանեց ու ջուրը գցեց...

Զենուան ժպտաց ցնցված, նման մի երեխայի, որը մթության մեջ սրտապնդվում է քաջալերանքի խոսքերից.

— Այնուամենայնիվ, հարսնացուն, փեսայի արտոնությամբ, ուզում է դա նկատի ունենալ իբրև մի լավ ու բարենպաստ նշան...

Երեմիան իր բազուկը դրեց Զենուայի մեջքին և խրախուսեց նրան խոսելու: Վերջինս լարված աչքերով նայում էր գետնին: Հանկարծ իր ոտքի ծայրով իրար մոտեցրեց երեք խճաքար ու շշնջաց.

— Այս մեկը Երեմիան է... Այս մեկը՝ Խեր-Հեպը... Իսկ սա էլ՝ Զենուան... Խնամակալը կանգնած է հարսնացուի և փեսայի միջև ու բաժանում է նրանց... Ապա տեղի է ունենում...

Նա լռեց: Երեմիան գրկեց նրան.

— Զենուան թող չվախենա: Երեմիան կպաշտպանի նրան, Տերը նույնպես պաշտպան է նրան, ում մոտ է գնում նա...

— Դա հրաժեշտ էր Նու-Պտահի եռապատիկ երրորդության աստվածներից,— ասաց աղջիկը հուզված,— Խնամակալի խոսքերով՝ գուցե Զենուան իսկապես դուրս է ընկել աշխարհից և բանադրվել... Քանզի ո՞վ է ունեցել երբևէ նման մի ապրում... Սկզբում ես չէի

կարող տեսնել Երեմիային, ում շատ էի տենչում, Խեր–Հեպը թաքցնում էր նրան...

Այդ ընթացքում Երեմիան հայտնում է հապճեպ կերպով կայացրած իր որոշումը.

— Մենք չպետք է ենթարկվենք Խեր–Հեպի խոսքին... Չպետք է սպասենք ամռան գալուն... Ես չեմ սիրում *Ար*–ը՝ ամառվա այդ ամենաշոգ ամիսը... Մենք կրճատած կլինենք միջանկյալ համարվող արքայությունը, եթե իրար միանանք նորալուսնից անմիջապես հետո... Համաձա՞յն ես, հարսնացուս...

— Այո՛, փեսադ իմ, թող այդպես լինի...

Այնուհետև նրանք երկուսով գնացին Ամիտալի մոտ, որպեսզի թագուհուն տեղեկացնեն իրենց որոշման վերաբերյալ: Ամիտալը տատանվում էր հայտնելու իր համաձայնությունը, քանզի մտածում էր գաղտնի գիտությունների վարպետի արած թելադրանքի մասին: Հիմա, սակայն, Ձենուան ծիծաղելով ցրեց այդ մտահոգությունը, որը վերաբերում էր խառնաշփոթ աշխարհին, և ինքը կարծում էր, թե այն վերջնականապես զոհաբերել է Երեմիայի հզոր Տիրոջը:

* * *

Այնուամենայնիվ, հարսանյաց տոնակատարությունը հանկարծակի կերպով պիտի հետաձգվեր: Նոր լուսնի նախօրեին տեղի ունեցավ մի բան, որը սարսափեցրեց աքսորյալների սրտերը: Արևը դեռ չէր բարձրացել, իսկ գիշերային վերջին ժամի խավարը ծվենների էր վերածվել, երբ դռան պահապանը մի զգայնացունց լուրով արթնացրեց ամբողջ տունը, որի համաձայն Երուսաղեմից մի մարդ էր եկել և ուզում էր խոսել թագավորի և նրա մոր հետ անհապաղ: Այդ գաղտնի սուրհանդակը (արդեն ուրիշ բան չէր կարող լինել), չնայած առավոտվա այդ վաղ ժամին և Նորին արքայական մեծության քնած լինելուն, չէր թողնի, որ իրեն մերժեն: Մի մեծ ու հրատապ լուրի ակնկալիքով բոլորն էլ գունատ դեմքով հավաքվեցին Լոտոյան սրահում, ուր ներկա էին նաև Մաթանիան, Երեմիան և Ձենուան: Առավոտյան մռայլ կիսախավարում Երեմիան նշմարեց

ենթադրյալ պագամաբերին՝ նիհարակազմ ու բարձրահասակ մի մարդու, որը փռվել էր գետնին՝ Հովաքազի և Ամիտալի ոտքերի առաջ: Նրա պատառոտված թիկնոցն ու զգեստը կախվում էին նրա կորաքամակ ու սարսափազդու մարմնից: Ոտքերն արյունոտված էին: Սրունքները մինչև ծնկներից էլ վեր ծածկված էին չորացած տիղմով, որպես թե մարդն անցած լիներ Նեղոսի գետաբերանի ճահճուտներով: Շնչահեղձ ձայնով նա հառաչեց.

— Ինձ համար մեծ պատիվ է տեսնել ճշմարիտ թագավորի դեմքը... որպեսզի նա ինձ օգնի ընդդեմ իմ հալածիչներին...

Այս խոսքերի վրա օտարականը բացեց իր խեղված դեմքը: Նրա խճճված ու գորշ մորուքի կողքից նշմարվեց մի մեծ, խորը և ատամնավոր գործիքի հարվածով առաջացած սպի, որը փոս ընկած աչքի տակով իջնում էր մինչև անատամ բերանը:

— Ուրիա, որդի Շեմաեյահի,— բացականչեց Երեմիան՝ ճանաչելով Տիրոջ ծառային: Վերջինիս իր մոլորած աչքերն աղաչական բարձրացրեց նրա կողմը և դժվարությամբ ասաց.

— Երեմիա, որդի Քեղկիայի, օգնիր ինձ... օգնիր ինձ...

Ամիտալը շտապ դուրս եկավ և շուտով իր հետ բերեց մի աման արգանակ և մի պնակ կերակուր: Ծնկի եկավ համարյա կիսամեռ դարձած Աստծու ծառայի մոտ, որպեսզի սննդով մի քիչ զորացնի նրան: Սակայն, ըստ երևույթին, արգանակն ու հացը, որոնցից նա շատ քիչ օգտվեց, ուժ չտվեցին նրան: Այնուհետև նա նվաղեց: Ամիտալը բերել տվեց մի փափուկ անկողին, որի վրա պառկեցրին մարգարեին: Մի ամբողջ ժամ անցավ, մինչև որ նա բավարար շունչ հավաքեց՝ մի քանի կցկտուր նախադասությամբ արտահայտվելու համար իր կրած մեծ տառապանքի մասին:

Երեսուն օրից ավելի էր, որ Ուրիան ճամփորդում էր՝ փախչելով Հովակիմի բանտերից: Նա կարողացել էր անցնել թագավորի հրամանով փակված և խիստ վերահսկողության ենթարկվող ճանապարհներով ու հասել Բեերշեբա: Այնուհետև դրան հաջորդել էր անվերջանալի ճանապարհն անապատի միջով՝ իբրև սնունդ ունենալով միայն մի բուռ արմավ: Տերը, սակայն, միշտ իր մարգարեի հետ էր, որով նա հրաշքով ի վիճակի է լինում հասնելու մինչև երկու երկրներն իրարից բաժանող

սահմանը Կարմիր ծովի հյուսիսում՝ Տոփանքեսի մոտ: Այդտեղ, սակայն, հայտնի դարձավ, որ սահմանային տարածքն ուժեղ հսկողության տակ է եգիպտական սահմանապահ զորքերի կողմից: Հուդայից, Մովաբից, Եդոմից, Արամից և Միջագետքից եկած բոլոր քարավանները պետք է վերադառնային: Ամրոցների վրայի քարաձիգ հարմարանքներն անողոքաբար թիրախավորում էին նրանց: Այդ խստագույն միջոցառման պատճառը մոտալուտ ժամանումն էր երկրի վրա արև աստծու մարմնացումը համարվող Նեքավով փարավոնի և նրա քայքայված զորքի: Այո՛, Նեքավովը պարտվել էր մի երիտասարդ ռազմիկի կողմից, որի անունը սկսել էր ուժեղ հնչել լայն աշխարհում: Նա կոչվում էր Նաբուգոդոնոսոր՝ որդի Նաբուպալասարի, որը բազմած էր Բաբելոնի գահին և իր գարշապարը դրած Ասորեստանի վզին: Ուրիայի համար, սակայն, ամենածանր օրերը նոր պիտի գային, երբ նա, իր կյանքը վտանգելով, կարողանում է գաղտագողի անցնել սահմանապահների միջով ու հասնել Սեթի մարզի ճահճուտները: Դրանից հետո նա, կրելով բազմաթիվ զրկանքներ ու սպառնալիքներ, հատկապես գիշատիչ թռչունների ու վայրի գազանների կողմից, քիչ էր մնացել, որ ոչնչանար, եթե Տերը նրան մի երկրորդ հրաշքով չողորմեր և ցույց չտար ճանապարհը դեպի Նոփ:

Ծանր շնչառությամբ և հիվանդ սրտի մեծ ջանքով ասված յուրաքանչյուր խոսքից հետո Ուրիան երկյուղած նայում էր իր շուրջը, թարթում էր աչքերը և փորձում նստել: Նա ճանաչում էր իր հալածիչներին: Նրանց առաջնորդն էր Աքորորի որդի Եղնաթանը՝ Հովակիմ թագավորի անները: Հուդայում նա հայտնի էր իբրև մի կատաղի մարտնչող և պատերազմի հերոս, որի սրտին բոլորովին անծանոթ էին գութն ու կարեկցանքը: Եղնաթանն ու նրա հետախույզները լիազորված էին հենց իր՝ փարավոնի կողմից՝ ձերբակալելու իրեն, ուր որ ինքը լիներ Եգիպտոսի տարածքում: Ափսոս, որ ինքը դրա մասին շատ ուշ էր իմացել: Նա խոսում էր հազիվ լսելի ձայնով և ատամները կրճտացնելով: Այնուհետև իրար սեղմեց ձեռքերը և ձայնը բարձրացնելով՝ աղաչեց Հովաքազին, որպեսզի իրեն լավ թաքցնի և չհանձնի ստույգ մահվան:

Անցավ բավական ժամանակ, մինչև որ Ուրիան ի վիճակի եղավ հետևողականորեն պատմել այն իրադարձությունների մասին, որոնք տարել էին իրեն Հովակիմի բանտը և ստիպել այնտեղից փախչել:

Դրանք, իհարկե, մասնակի պատահարներ էին, քան այն, ինչ վերաբերում էր նոր իշխանությանը և նրա դեմ իր հանդուգն դիմադրությանը: Սկզբում Հովակիմը գոհանում էր միայն իր հոր և նրա ժամանակաշրջանի դեմ զրպարտություններ անելով: Երուսաղեմի բնակիչները, գոհ լինելով իրենց կրած դժբախտության թեթև հետևանքներից, կարծում էին, թե այդ բոլորն իրենք պարտական են նոր թագավորին, դրա համար էլ գովաբանում էին նրան: Հովակիմը, սակայն, տարածում էր իր կեղծ փառքը շնորհիվ վարձու գործակալների, դատարկապորտների, չարախոսների և սադրիչների, որոնք ամեն տեղ՝ քաղաքում և տաճարում, մեղադրանքներ էին հնչեցնում Հովսիա արքայի իշխանության և նրա կողմնակիցների դեմ: Հատուկ կերպով ծրագրված ստերի այդ գարշահոտությունը տարածվում էր անարգել: Քահանաներն ու իշխանները ենթարկվում էին դրան, և հազիվ թե մեկը նկատեր, որ ինքը թունավոր օդ է շնչում: Առանց մեծ ջանքի Հովակիմն իր հոր հաշվին կուտակում է ավելի քան հարյուր տաղանդ ոսկու և արծաթի պարտք, որի դիմաց սկսում է հարկեր հավաքել: Դա անում է նաև իր անձնական կարիքների համար, քանզի նա խելագարի նման սիրում էր փառավորվել շքեղ պալատների և շինությունների կառուցմամբ: Հովսիայի բոլոր հավատարիմ պաշտոնյաները դուրս են դրվում տաճարից, պալատից ու բանակից: Երկրի հարուստները, բայց հատկապես այդ հարուստների զավակները, կարողանում էին ազատորեն պարծենալ և իրենք իրենց ցույց տալ: Գոռոզամիտները, ագահները, բարկացողներն ու կռվարարներն ամենուրեք վխտում էին անարգել: Քահանաների պարագայում էլ իշխանությունը նրանց ձեռքում էր, որոնց համար կարևոր էր միայն մատաղների մատուցումը, մինչդեռ նրանք ատում էին Աստծու արդարությունը: Այս բոլորից բացի, Երեմիան տեղեկացավ, որ ժամանակին իրեն հյուրընկալող Մեշուլամը՝ Քիրիաթ Յարիմի հայտնի ջրաղացպանը, Հովակիմի կողմից նշանակվել է արքայական գանձարանի պետ: Թագավորական իշխանության նորովի բաշխման ընթացքում թագավորը չէր կարողանում դիպչել միայն մեկ տան, և դա Սափանի տունն էր, թեև այդ գրագրապետն ու ժողովրդի դաստիարակը կնքել էր իր մահկանացուն հենց այն միևնույն առավոտը, երբ Եղիակիմը տիրացել էր գահին՝ շնորհիվ իր կատարած հանդուգն ու

փոքրոգի հեղաշրջման: Սակայն նրա ամենից անպատկառ միջամտությունը կատարվել էր Զատկի տոնին, երբ նա, Երդման ուխտի սյունին հենված, հայտարարել էր տաճարում հավաքված ժողովրդին, որ այնուհետև վարդապետության և պատվիրանների պահպանումը կախված պետք է լինի միայն թագավորի համաձայնությունից: Ի պատասխան դրա՝ երկնքից ոչ մի կրակ չի թափվում ոչ այն ժամանակ և ոչ էլ դրանից հետո, երբ նա ասպարեզ է կարդում Եհովային՝ հրահանգելով տաճարի դիմաց կանգնեցնել արևի ոսկյա անիվը: Դա իսկապես մի բացահայտ սրբապղծություն էր: Այդուհանդերձ, ոչ ոք չէր կարող հերքել թագավորի հսկայական քաջությունն ու ամբարտավանությունը: Շատերը նույնիսկ նրա մեջ էին տեսնում նոր Դավթին:

— Եվ Տիրոջ մարդի՞կ,— հարցրեց Երեմիան գունատ շրթունքներով:

Փախստականը, սակայն, տարված իր սեփական պատմությամբ, պոռթկաց ծաղրական ծիծաղով.

— Տիրոջ մարդի՞կ... Տերը նրանց լավություն է անում և տալիս սիրալիր ու շշուկաձայն պատգամներ, այնպես որ նրանց բերանն այլևս նախազգուշացումներով չի բարբառում, այլ փրկության ու թագավորի համար գովաբանական խոսքերով... Տիրոջ մարդի՞կ... Նրանցից մեկն արդեն հեռու էր, Նոփում... Եվ մյուսն այժմ նույնպես հեռու՝ Նոփում, որը խոսել էր թագավորի դեմ... Նրան բռնել էին, խոշտանգել և արգելափակել... Վախ ու դողի մատնված՝ նա հազիվ մի կերպ ոտքի է կանգնել և պատգամել այն, ինչ որ Տերը նրան շշնջացել էր... Դրանից հետո նրան սկսել են կրկին ու կրկին ծեծի ենթարկել...

Ուրիան իր կարծրացած մատներով բաց արեց իր ուսերը: Ծերունու մեջքին արյան կարմիր գույներով երևում էին դաժան տանջանքների հետքերը: Նա այլևս չկարողացավ զսպել իր արցունքները.

— Ամիսներ շարունակ անցկացրի զնդաններում և նկուղներում: Այնուհետև թագավորն ինձ համար մահապատիժ սահմանեց, բայց ես չափազանց թույլ էի և փոքրոգի՝ հանուն Տիրոջ մեռնելու... Ահիկամն օգնեց ինձ... Եվ ես փախա ու փախա...

Այդ պահին դռնապանը մտավ Լոտոսյան սրահ, որպեսզի տիրուհուն հաղորդի մի առտնին հարց: Ուրիան մի խեղդվող աղաղակով տեղից վեր ելավ և ամուր կառչեց Երեմիայից.

— Նրանք են,— հառաչեց նա,— Եղնաթանն ու մյուսները... Ինձ հայտնաբերել են, եկել են ինձ բռնելու... Թողեք ես գնամ... Ես վտանգում եմ ձեզ... Դուք ինձ չեք կարող թաքցնել...

Ամիտալը բռնեց հուսահատվածի թևից.

— Հանգիստ կաց, ով Աստծու մարդ... Դու մեզ հետ ես... Մենք քեզ դուրս չենք թողնի... Այդ մենք ենք, որ քեզ համար վտանգ ենք ներկայացնում, մենք, որ պատվել ենք ճշմարիտ թագավորին՝ Հովսիային... Քո սենյակը պատրաստ է... Ես քեզ կառաջնորդեմ այնտեղ, որպեսզի մի լավ քուն առնես, և քո հոգին խաղաղվի, որպես թե ճշմարիտ արքան հիմա այս տանը լիներ...

Հասակ նետած Մաթանիան, թվում էր, թե միանգամից թողել էր իր պատանեկությունը և չափահաս դարձել: Արդյոք իր խորթ եղբոր հզոր իշխանության մասին հալածական մարդու արած պատմությունն ատելությամբ, թե՞ նախանձով էր լցրել իր հոգին, քանի որ ինքը միշտ դուրս էր մնացել այդ իշխանությունից: Նրա խոշոր աչքերը երկչոտ փնտրում էին իր ուսուցչին, որպես թե բուռն կերպով ցանկանում էր տիրանալ ինչ–որ մի արգելված բանի: Երեմիան, սակայն, իր վրայից սահեցնում էր նման նայվածքներ: Նա էլ իր հերթին խռովահույզ վիճակում էր: Իր հայրենիքում հառնել էր մի շատ հստակ կազմավորված իշխանություն՝ ընդդեմ տևապես անորոշ, անթափանց և խառնաշփոթ վիճակների: Այդ իշխանությունը մտադիր էր ջնջել այն ամենը, ինչ որ Հովսիան արել էր Տիրոջ համար: Ծեծի էին ենթարկում և սպանում մարգարեներին ու ճշմարտությունը խոսողներին: Տերը, որ Հովսիայի արդար գործը չէր հավանել, հիմա, սակայն, թվում էր, թե հանդուրժում է ամբարիշտների գործերը և նույնիսկ քաջալերում: Որքան լավ է, որ ինքը՝ Երեմիան, փախել էր այդ կործանումից, հրաժարվել Տիրոջ մարգարե լինելուց և թաքնվել Նրանից Եգիպտոսում, ուր փախել ու ապաստանել է նաև Ուրիան:

Երբ նա շրջվեց, աչքն ընկավ Ջենուայի վրա, որը լրջորեն նայում էր իրեն: Այդժամ նրան հաղթահարեց այն մեծագույն պարգևը, որն Աստծուց տրվել է մարդուն. դա «մարդկային մի էակ» է: Նույնիսկ եթե աշխարհն անարգել ընթացքով գահավիժի դեպի անդունդ, այդ անդնդի եզրին բավարար տեղ կլինի իր և իր հարսնացուի համար մի տուն կառուցելու և նրանում ապրելու խաղաղությամբ: Ինքը չի կարող կանգնեցնել

Իսրայելի անկումը՝ առանց Ուրիայի նման ջարդված ու խորտակված լինելու: Սակայն իր տնից ինքը Զենուայի հետ կարող է կրկնակի սրտով դիմել Տիրոջը:

Փեսան ասաց հարսնացուին.

— Դժբախտություն է պատահել... Բայց դա մեզ չի հասնելու... Պետք է անցնի ևս մեկ *շաբաթ*, ապա գալու է ուրախության ժամանակը...

Այդ առավոտ Զենուան թարմ էր ու կայտառ ավելի, քան երբեք: Այն ժամանակից ի վեր, երբ նա իրենից հանել ու դեն էր շպրտել «Դեդ» և «Անեկ» ամուլետները, կարծես թե դարձել էր ավելի ուժեղ, աճել էր նաև նրա ուրախությունը: Սենյակից հաճախ լսվում էր նրա սիրալիր և ըմբոնող սրտի երգը: Այնուամենայնիվ, նա այժմ խորիմաստ կերպով նայեց Երեմիային, ասես գիտեր ինչ-որ մի յուրահատուկ բան, և երգելով ասաց.

— Այո՛, փեսա, ժամանակն է ուրախանալու...

* * *

Հաջորդ *շաբաթը* դեռ չլրացած՝ Տիրոջ խորհուրդը ճիշտ ժամանակին հասավ Զենուային՝ հետագա ծրագրերի վերաբերյալ: Այդ *շաբաթի* առավոտյան տան բոլոր անդամները հավաքված էին Լոտոսյան սրահում՝ ունկնդրելու օրենքի ու վարդապետության ընթերցումը: Ուրիան էլ նրանց մեջ էր: Վերջին օրերին, շնորհիվ Ամիտալի խնամքների, փոքրինչ կազդուրվել էր: Նրան հարգելու համար կրտսերն այդ օրն ուսուցանելու իր պաշտոնը զիջում է ավագին: Ուրիան նստում է իր ունկնդիրների մեջտեղը, ուժասպառ և միօրինակ ձայնով սկսում է կարդալ, և իր կարդացածը մեկնաբանել հատված առ հատված: Բայց երևի այն պատճառով, որ նա Երեմիայի նման հստակ ու հասկանալի չէր խոսում, փոքրիկ համայնքում առաջանում է մի տարօրինակ անհանգստություն, և հարգարժան մարգարեին չի հաջողվում գրավել հոգիների ուշադրությունը Տիրոջ նկատմամբ: Մասնավորապես Զենուան իր պահվածքով խանգարում էր անդորրությունը և շեղում ունկնդիրների ուշադրությունը: Սերտողության ժամանակ նա երեք կամ չորս անգամ ելնում է տեղից ու քայլում սրահի շուրջը: Գնում և անմիջապես վերադառնում էր, որպես թե

կանչված լիներ մոլորեցնող ձայներից: Ուրիշ առիթներով, սակայն, նա ժամերով նստում էր երիտասարդ եգիպտացի տիկնանց հմայիչ դիրքով, բայց այդ օրը բազմիցս կորցրեց հավասարակշռությունը: Սևեռուն կերպով նայում էր առաջ, բայց ոչ այլևս Տիրոջն ուղղված բարյացակամ լրջությամբ: Ամիտալը բազմիցս շեշտակի նայում է նրան: Ինքը միակն էր, որ մտահոգվում էր Զենուայի տեսքով: Երեմիան, ընդհակառակը, դժվարությամբ էր զսպում իր մեղմ զայրույթը հարսնացուի խանգարիչ ցրվածության նկատմամբ: Ինքը գիտեր, որ Զենուան օժտված է ազնվական հեթանոսուհու հատուկ անգերազանցելի գեղեցկությամբ, որն անհանգստացնում էր նրան որևէ տգեղության կամ խեղվածության դիմաց: Այս պատճառով էլ իր մեջ կասկած է առաջանում, որ նա խրտչում է Տիրոջ մարգարեի՝ Ուրիայի խեղված դեմքից: Մտածում է նաև, որ նա գարշում է տառապած մարդու անատամ բերանից, պատժի հետևանքով նրա կրած երկար ու խորը սպիից, նոր խոշտանգումների հետքերից: Երեմիան ցավում է, որ Զենուան չի իմանում, թե Ուրիայի խեղվածությունը նշանն է մի պատվարժան ու հերոս ռազմիկի, որով ուրիշ մեկը նրա տեղը ազնվափայլ կանանց առջև կպարծենար:

Երեմիան հազիվ թե կարողանում է սպասել սերտողության ավարտին: Դժգոհությունն աճում է մեջը: Ցանկանում էր հնարավորինս շուտ լուսաբանել իր հարսնացուին նրա զանցառության մասին: Սակայն պարտեզում, երբ հանդիպում է նրան, իր մեջ փարատվում են կասկածն ու դժգոհությունը, ոչ մի խոսք չի գտնում ասելու: Երկու ժամվա ընթացքում Զենուան լրիվ կերպարանափոխվել էր, դարձել թափանցիկ ու փխրուն:

— Ինչ է պատահել, Զենուա,— հարցրեց կմկմալով:

Նա երկար նայեց Երեմիային սիրո մի տարօրինակ հեգնանքով և մի ինչ–որ բան թաքցնելով:

— Սա ուրախություն է,— ասաց նա,— քանզի *շաբաթն* իր ավարտին է հասնում... Գալու է մեծագույն ուրախությունը...

— Հարսնացուի այս ուրախությունը վախեցնում է փեսային...

Զենուան իր աջ ձեռքը դրեց նրա աչքերին.

— Փեսան թող չնայի հարսնացուին... Քանզի Աստված պայքարում է նրա հետ և ուզում է տիրել հարսին... Գուցե դա Տերն է... գուցե Օսիրիսը...

Նա նրբորեն վերցրեց նրա ձեռքն իր աչքերից և սեղմեց այն իր այտին.

— Այդ ի՞նչ հիմարություններ է ասում Զենուան, ասես երազում լինի...

Զենուան թվում էր չափազանց թույլ՝ նույնիսկ մի ժպիտ արտաբերելու: Նրա կնոջական բերանի աջ անկյունը փոքր–ինչ դեպի վեր էր ծռված.

— Մի՛ ասա, թե դրանք երազային հիմարություններ են... Ավելի լավ կլինի խրախուսես քո Տիրոջը, որ ինձ շահի ու փրկի... Քանզի «*Դեղը*» վրայիցս հանել եմ ու շպրտել, և դրանով իսկ Օսիրիսին եմ կանչել...

— Ինչպե՞ս չզայրանամ, եթե հարսնացուն նման անիմաստ բաներ է խոսում...

— Մի՛ բարկացիր, փեսադ իմ... Քանզի հարսնացուն լի է ուրախությամբ... Ողողված է մեծ ուրախությամբ...

Զենուան պոկվեց նրանից և մի քանի քայլ հետ գնաց: Եվ որպես թե ինքն իր հետ խոսելիս լիներ, ասաց.

— Երբ գա Աստված... Պետք է, որ ես պարեմ... Պարելով պիտի դիմավորեմ Աստծուն...

Այնուհետև խաչաձևեց ձեռքերը կրծքին և դեմքի սրտաճմլիկ արտահայտությամբ փորձեց պարել: Սակայն նախքան Երեմիան կկարողանար բռնել նրան, նա ընկավ և փռվեց գետնին:

* * *

Զենուային տեղափոխեցին իր սեյակը և երկարատև ջանքերից հետո քացախի, այրող կաթիլների և բարկ հոտերի միջոցով վերակենդանացրին: Թվում էր, թե կորցրել էր խոսելու կարողությունը: Դաժան ջղաձգումները ցնցում էին նրա բարեկազմ մարմինը: Սարսափից ուռած աչքերը սևեռված էին Երեմիային, ապա աղաչալից նայում էին Ամիտալին և դարձյալ՝ Երեմիային: Ամիտալը հասկանում էր նայվածքի իմաստն ու նրա խնդրանքը: Հարսնացուն չէր ուզում, որ փեսան տեսնի իրեն տառապանքի այդ սարսափելի վիճակում: Անընդհատ շարժում էր շրթունքները՝ արտաբերելով անհասկանալի բառեր: Ամիտալը նրբորեն հանեց տղամարդուն սենյակից դուրս: Դռան առաջ կուչ եկած՝ Երեմիան խորասուզվեց ինքն իր մեջ: Նրա մթագնած հոգին ի վիճակի չէր ասելու ոչ մի աղոթք կամ կատարելու որևէ ուխտ: Միակ և միևնույն միտքը, որ

անընդհատ պտտվում էր նրա գլխում, այն էր, թե ինչի համար է անմեղների այս մեծ տառապանքը, ինչի համար է կրկին ու կրկին անմեղ մարդկանց այս մեծ տառապանքը:

Նոր միայն երեկոյան Ամիտալը հետ կանչեց նրան հիվանդի սենյակ: Զենուան կարողանում էր նորից խոսել: Նա շշնջում է հևալով.

— Փեսան թող շատ, շատ խոսի ինձ հետ Տիրոջ մասին... Նա է Գերագույնը... Այդուհանդերձ, Նա թույլ է տալիս, որ մյուս աստվածը տիրապետի ինձ... Երկուսի միջև եմ բաժանված... Նախքան իմ ուրախության օրվա գալն ուզում եմ լսել միայն Երեմիայի Տիրոջ մասին... ում ես շատ եմ սիրում...

Երեմիան, սակայն, ի վիճակի չէր կատարելու իր ծառայությունը և խոսելու Տիրոջ մասին: Իր կյանքում դա անելը ոչ մի անգամ այդքան դժվար չէր եղել, որքան այդ պահին: Իր հոգին դարանակալ մի աղեղնավորի նման թիրախավորում էր Տիրոջ անտարբերությունը, չմիջամտելը: Աստծու դեմ ուղղված նետը լարված էր իր հոգու աղեղին: Այդուհանդերձ, բավարարելու համար Զենուայի ցանկությունը նա արեց այն, ինչ բարեպաշտներն են անում հիվանդների ու մահամերձների համար. նա երգեց մեղմ ձայնով մի սաղմոս, որն իր ժամանակին Դավիթն անձամբ էր շարադրել.

— Օրհնիր Տիրոջը, ով իմ անձ,
Եվ թող սիրտս օրհնի Նրա սուրբ անունը,
Որ քավություն է տալիս մեղքերին,
Բժշկում է ախտերը բոլոր,
Որ փրկում է կյանքդ
Գերեզմանի ապականությունից...

Այստեղ Զենուան ընդհատեց մեղմ երգեցողությունը, որն ունկնդրում էր կիսախուփ աչքերով.

— Փեսա իմ, «*կա*»-ն՝ ծիծեռնակը, դեռևս այստեղ է, իմ սրտում... ամբողջովին խեղճացած... ես զգում եմ նրան... Սակայն «*բա*»-ն՝ բազեն, թռչկոտում է իմ գլխում, զարկվում է նրա պատին և ուզում է դուրս գալ... Նրանից են գալիս բոլոր ցավերը... Բայց մենք պետք է ծիծեռնակին պաշտպանենք...

Երեմիան թեթևակի շփեց նրա ուռած ձեռքը, որ թույլ կերպով ընկած էր վերմակի վրա: Նա գոռաց ցավից: Երեմիան սարսափած հետ քաշեց ձեռքը, բայց նա խնդրեց.

— Թո՛ղ ձեռքդ իմ ձեռքի վրա... թեև ինձ ցավ է պատճառում, բայց դա ինձ դուր է գալիս...

Նա շարունակեց երգել սաղմոսի հատվածներ և դրանց վրա ավելացրեց նորեր՝ հուսալով, որ այդ կերպ կկարողանա Ձենուային քնեցնել: Եվ իսկապես էլ վերջինս փակեց աչքերը, և շնչառությունը սկսեց կանոնավորվել: Արդյոք Տերն ի վերջո նկատի՞ է առնում նրան: Կարեկցո՞ւմ է արդյոք նրան, որն ի սեր իրեն լքել էր հորինված աստվածներին: Երեմիան պատրաստվում էր երախտագիտության աղոթք մատուցել Տիրոջը, երբ Ձենուայի անշարժ դեմքը հանկարծ սկսեց ցնցվել ու աղաղակել.

— Ինչո՞ւ ես թողնում, որ ես թափառեմ Սեթի երկրում... Նա ճահիճների մեծ մարդասպանն է...

Ափսո՛ս, նրա աստվածները տանջում են նրան, իսկ ինքը չի կարողանում օգնության հասնել, քանզի Տերն անտարբեր է այդ տանջանքների նկատմամբ: Մի քանի ընդհատված շնչառությունից հետո Ձենուայից լսվում են նողկանքի խոսքեր.

— Բադերը, բադերը... Հե–Նուտ–Դիմեն չէր իմանում, որ սև բադերը Սեթի հոգու պատկերներն են... Նրանք արագ գնում–գալիս են կեղտոտ ճահիճների վրայով... Լայն ու կարմիր կտուցներով... Նրանք կռնչում են ու ճկճկում՝ ատելություն տարածելով... Չեմ կարողանում առաջ գնալ... Նրանք արդեն ինձ բռնել են...

— Քսիր, Ձենուա... Դու պետք է քնես... Քնելով դրանք կհեռանան քեզանից... Քսիր, հարսնացուս... Քսիր...

Երեմիան, անընդհատ կրկնելով՝ «քնիր, Ձենուա, քնիր» խոսքերը, կարծում էր, թե դրանց միօրինակ կրկնողությամբ կկարողանար քնեցնել հիվանդին, ինչպես մի օրորոցային երգ: Ձենուան, սակայն, բացեց իր աչքերը և հարցրեց.

— Ով իմ փեսա, ինչո՞ւ է Տերն այսօր այդքան թույլ արտահայտվում քո մեջ...

Երեմիան խոնարհեցրեց գլուխը: Վրդովված սեղմեց բռունցքը՝ փորձելով հարվածել ինքն իր կրծքին: Բայց դա անելուց առաջ մատները

բացվեցին, և պայքարելու պատրաստվող ձեռքն ուժասպառ ընկավ ցած: Զենուան, ինչպես միշտ, հիմա էլ չի ուզում նահանջել.

— Փեսա իմ, մի՛ խաբիր հարսնացուին... Տերը, որ ամեն ինչ կարող է անել, չի գործադրում իր կամքը... Ինչ էլ անես, աղոթես և խնդրես, ոչինչ չի օգնի հարսնացուին... Հավաքիր քո բոլոր ուժերը և ստիպիր քո Տիրոջը, որ վերադարձնի բազեին դեպի իմ սիրտը... Բազեն և ծիծեռնակը պետք է միասին բնակվեն, որպեսզի Զենուան շարունակի ապրել...

Ահռելի մեծ ճիգով արտասանած իր այս խոսքից հետո կապտում են նրա շրթունքները, վերջին սարսափը համակում է նրա աչքերը, շունչը բռնվում է, և սկսում է խռխռալ.

— Մի՛ թող ինձ մեռնել...

Ամիտալն ու նաժիշտները շտապում են, նստեցնում են Զենուային, հարվածում են մեջքին, որպեսզի չխեղդվի: Գլուխը թույլ կերպով դեպի հետ է ընկնում, և ուժերի ամբողջ լարումով աղաղակում է.

— Թող դուրս ելնի Երեմիան...

Փեսան չպետք է տեսներ հարսին տգեղ վիճակում, չպետք է տեսներ նրան հոգեվարքի տվայտանքների մեջ: Այս վախն ավելի մեծ էր, քան մահվան պատճառած վախը:

Ամբողջ գիշեր Երեմիան նստեց Զենուայի սենյակի դռան առջև: Նրա հոգին բթացել էր ու ամայացել: Աղախինները գնում-գալիս էին լույսերով, տաք ջրի սափորներով, քացախի մեջ թաթախված սրբիչներով և բուրումնավետ խնկամաններով: Նրանք լաց էին լինում և շշուկով խոսում իրար հետ և աղոթում: Այս ամենը ներկայանում էր Երեմիային՝ ինչպես մի թանձր շղարշի միջով անցած բան: Ի վերջո Նոփի վրա բացվեց մի հրաշալի գարնանային առավոտ: Բարձրացող արևը, որը զվարթությամբ պատրաստվում էր դառնալ Հորուսի մեծ աչքը, թափանցեց տան յուրաքանչյուր անկյուն և պատճառ դարձավ, որ հրաշալիորեն շողան պատերի և սյուների կարմիր ու կանաչ գույները: Արդյոք սա չէ՞ր մեծ ուրախության համար որոշված այն առավոտը, որը պատրաստվել էր Տիրոջ կողմից այսպիսի շքեղությամբ՝ դառն փորձություններից հետո: Ամիտալը, գիշերային հսկողությունից հոգնած դեմքով, դուրս եկավ հիվանդի սենյակից և մի հանգստացուցիչ ժպիտով հասկացրեց Երեմիային, որ ամեն ինչ դեպի լավն է գնում:

Երբ նրան թույլ տրվեց կրկին մտնելու Զենուայի սենյակ, գտավ նրան բոլորովին վերափոխված: Նրա բերանը կարմրագույն էր և կիսաբաց, ինչպես մի աղջնակի բերանը: Այտերին նկատվում էր գույնի մի թեթև շունչ, միայն աչքերն էին ընկել ավելի խորը: Երեմիան բռնեց նրա ձեռքը, և դա նրան ցավ չպատճառեց, չգոռաց, այլ շշնջաց դժվարությամբ.

— Արդեն որոշված է... Զենուան չի պատկանում կյանքի Տիրոջը, այլ Օսիրիսին...

Նա լռեց՝ հոգնելով իր արտասանած այդ մի քանի վանկերից, բայց ինչ–որ մի անորոշ ուժ պարտադրեց Երեմիային հեռացնել աչքը Զենուայից և նայել պատուհանի կողմը: Դա արդեն այն նենգ ուժն էր, որը շեղում է ապրողների նայվածքը լքվածների դեմքից: Մեծ ուրախության այդ մուգ կապույտ օրը տիրական կերպով պատուհանի տեսարանը լցրել էր արմավենիների, աքասիաների և ոսկեծաղիկ թփերի ամբողջական պատկերներով: Հեռվում երևում էին նավերի առագաստները, որոնք նավարկում էին Նեղոսում: Նավաստիների, կառապանների, իրենց ամենօրյա աշխատանքին գնացողների ձայները խառնվում էին գեղգեղող թռչունների երգերին: Ավելի շատ, քան երբևէ, Պտահի բազեները, իբրև դեպի արևը սլացող մարդկային հոգիներ, լայնաբաց թևերով հպարտորեն սավառնում էին երկնքի ու երկրի միջև:

Մի թեթև շշուկ զգաստացրեց Երեմիային.

— Ծիծեռնակը պատրաստ է թռչելու... Թառած է սրտի եզրին... ինչպես մի ծառի ճյուղի վրա... Եթե «*կա*»–ն դուրս գա արևմտյան դարպասից... Եթե ծիծեռնակը նստի քո ուսին... Դու կընդունե՞ս նրան...

Այնուհետև նա ժամերով ոչինչ չասաց: Թվում էր, թե նա հանգիստ քնում է, առանց ցավերի: Երբ արևն արդեն անցել էր իր բարձրության գագաթնակետը, Երեմիան կրկին լսեց Զենուայի ձայնը.

— Իմ մոր երկիրը... Քո Տիրոջ հողը... Ինչո՞ւ ինձ չառաջնորդեցիր այնտեղ, քանի դեռ ժամանակ կար ուրախության ժամանակի համար... Մենք կկարողանայինք այնտեղ մի տուն կառուցել... Դու և ես...

Հազիվ էր արտասանել այս կոտրտված նախադասությունները, երբ նա նորից սկսեց շնչահեղձ լինել, ավելի սարսափելի, քան բոլոր նախորդները: Ոչ մի ցնցում և մեջքին տրված հարվածներ չեն օգնում նրան: – «Թողեք ինձ մեռնել»,— ասում էր նա հևասպառ և դուրս ընկած

աչքերով: Հարսնացուն այլևս չէր մտածում գեղեցիկ երևալ և հեռացնել փեսացուին սենյակից: Վերջին պահին, սակայն, երբ նա արդեն խեղդամահ լինելու վտանգի առաջ էր, պալատից ու հիվանդի սենյակից ներս մտավ Խեր–Հեպը: Հատկանշական է, որ նա այս անգամ իր ձեռքին չուներ Օսիրիսի խորհրդանիշը, այլ կենդանի Պտահի նշանը՝ բամբուկի փայտից երկար գավազանը, որի վրա քանդակված էր մի բազե: Նրա մուտքը սենյակ անմիջապես հետ բերեց Ջենուայի շունչը: Խեր–Հեպը, սակայն. հատուկ խստությամբ դիմեց Ամիտալին.

— Իմ տիրուհին չափազանց շուտ է արհամարհել իրեն տրված խորհուրդը... Իմ տիրուհին չափազանց ուշ է դիմել օգնության... Արդեն սիրող ու քաղցր սրտի անհանգստացած *կա*–ն աղերսել է խնամակալի օգնությունը...

Առանց պատասխանի սպասելու կամ որևէ մեկի վրա ուշադրություն դարձնելու՝ նա լուռ նստեց մահճակալի ստորոտում: Այդ մեծ բժիշկն ու թաքուն գիտությունների վարպետը չդիմեց բժշկական ոչ մի հնարքի կամ խնդրամատույց աղոթքի: Միայն նրա ճաղատ ու փայլուն գլխի գունդը կարծես թե սառել էր: Թավ հոնքերի տակ նրա հանգած ու քարացած աչքերն անտարբեր ուղղված էին իր խնամատարությանը հանձնված որբուհու վրա: Ջենուան վերականգնվել էր: Նրա շունչը կանոնավորված էր: Թվում էր, թե նա ժպտում է երանությամբ, կոպերը ծանրացած էին, և քնում էր:

Մոտ մեկ ժամ հետո Խեր–Հեպը վեր կացավ և մի կարճ ողջույնից հետո դուրս եկավ: Դարպասի առաջ, նախքան կառք բարձրանալը, Երեմիան, որ հետևել էր նրա քայլերին, մեղմորեն դիպավ նրան: Նու–Պտահի մահվան արարողակարգի վարպետն իր նիհար մարմնով շուռ եկավ դեպի նա: Խորհրդավոր նայվածքով, որը ոչ բարեկամական էր և ոչ էլ թշնամական, զննեց Աստծու մարդուն: Ինքն իր աստվածության կողմից չէր ընտրված մարգարեանալու, այլ հենց այդ աստվածության մասին լռելու: Նրա խոսքը պետք է լավ մտածված լիներ՝ ընտրելու այն, ինչը թույլատրելի էր, և ինչը՝ ոչ: Նույնիսկ այդ պահին նա իր հակիրճ խոսքերն այդ կանոնին է ենթարկում.

— Օտարականը կարող է հանգիստ լինել... Հե–Նուտ–Դիմեն հաղթել է իր թշնամուն...

Այս խոսքերն ասելուց հետո մի պահ սպասեց, որպեսզի անհրաժեշտության դեպքում հավելյալ բացատրություն տա: Սակայն խոսելու փոխարեն մեկնեց բազեազարդ գավազանը դեպի արևմուտք, ուր՝ անապատի եզերքին, բարձրանում էր «Հավիտենական քաղաքը» իր բուրգերով, բազմաթիվ տաճարներով, հսկա պալատներով ու արհեստանոցներով: Երեմիան կլանված նայեց արևմտյան երկրի կողմը, որը մայրամուտի արևը պատել էր ոսկով: Երբ շրջվեց, տեսավ, որ Խեր–Հեպի շքեղազարդ կառքն արդեն սկսել էր հեռանալ: Կարմիր մազերով, տխեղծ և գաճաճ չորս գարշելի կերպարանքներ հայտնվեցին այդտեղ: Նրանք իրենց հետ բերել էին սայլակի վրա դրված մի երկար դագաղ, որի շուրջը հավաքված՝ անամոթաբար ծիծաղում էին: Նու–Պտահում յուրաքանչյուր երեխա ճանաչում էր կարմրագլուխներին և գիտեր, թե ինչպիսի մի հզոր աստծու են ընծայված նրանք: Նրանք ծառայում էին Սեթին, որը մահվան ստորագույն և ամենագարշելի դրսևորումն էր: Ինչ արժեք ուներ նրանց հանդեպ ցուցաբերված արհամարհանքը: Չկար որևէ մի շքեղ սենյակ, ուր նրանք երբևէ մտած չլինեին:

Երեմիան շտապ հետ վազեց դեպի տուն: Ամիտալն արդեն սպասում էր նրան նախասրահում և մայրաբար սեղմեց նրա գլուխն իր կրծքին...

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ

ԱՆՑՈՒՄ ԱՄԵՆՏԻԻ ՄԻՋՈՎ

Երեմիան իր հոգու խորքից արձակել էր նետը Տիրոջ դեմ: Նա արևմտյան քաղաքի բնակարաններից մեկում էր, Արևմուտքի երկրամասում, ուր Խեր–Հեպը բացարձակ իշխանություն ուներ, ավելի, քան փարավոնը: Պառկած էր մի կոշտ մահճակալի վրա: Իր աչքերի դիմաց՝ ջահերի ուժեղ լույսի ներքո, երևում էին պատերին մի լայն շերտի վրա նկարված գունագեղ պատկերներ, որոնք ներկայացնում էին արեգակնային նավակի ճամփորդությունը «ստվերների երկրի» միջով: Երեմիան դեռևս շարունակում էր չհասկանալ այն ամենը, որ կապ ուներ այդ կռապաշտ զառանցանքների հետ, այդուհանդերձ, իր սիրտը լցվում էր ցավով ու զայրույթով: Այն, ինչ որ նա այժմ մտածում էր, անում էր և նախատեսում, ինքն իր վրա անեծք էր բերում, պարզապես պատժելու համար Տիրոջը, որն սպանում էր ամենքին, որոնց ինքը սիրում էր, և իրեն էլ էր կործանում՝ համարելով իբրև իր վատթարագույն թշնամին: Զոհերի թվում էր նաև հարսնացուն, որը պետք է մահանար Նրա մեղքով և այն էլ՝ հենց իրենց ուրախության համար որոշված օրը, չնայած որ նա՝ Զենուան, տենչում էր Տիրոջն ավելի ջերմեռանդ, քան Հակոբի տան որևէ այլ անմեղ երեխա...

Երեմիան պառկած էր կոշտ անկողնում, պղծությունների և կախարդությունների Արևմտյան երկրում: Մումիայի հատուկ նուրբ կտավե բարակ շերտեր էին փաթաթված նրա իրանին՝ ի նշան, թե ինչ էր փնտրում և դեպի ուր էր ուզում գնալ: Նա, որպես մաքուր պահապան անարատ խոսքի, ընկած էր այդտեղ խորը թշվառության մեջ, ավելի, քան Իսրայելն ու Հուդան: Նա ավելի վատն էր արել, քան թագավորի հրահանգով արևի անիվի տեղադրումը: Նա հետամուտ էր անմաքուրին ու մոլորության,

քանզի նրա հոգին պահանջում էր վրեժխնդրություն, աղաղակում էր հանուն անմեղորեն սպանվածների: Արդյոք Տերն իսկապես կարծում էր, որ ինքը պետք է գոհ լինի ամեն ինչից և ոչ թե ըմբոստ: Նա չէր ընկրկում ոչ մի խոչընդոտի առաջ, առավել ևս այն ճանապարհի, որը տանում էր դեպի Զենուան, պայքարում էր ընդդեմ անողոք արգելքների, ուզում էր տառապել Զենուայի կրած տառապանքով, ուզում էր տեսնել ու դիպչել նրան նրա նոր աշխարհում, նույնիսկ եթե ինքը դրա համար պիտի փչանար ու ոչնչանար: Այլևս Իմհոթեփ, Սեշեթ, Թոթ, Անուբիս և Սեթ անունները նրա մեջ ամոթի և սարսափի զգացումներ չէին արթնացնում: Նա պատրաստ էր դաշնակցելու կոկորդիլոսի երախով, իբիսյան կտուցով, նեղոսյան ձիու գլխով ցնորական ամբոխի հետ, պարզապես մոտ լինելու համար ստվերին, միրաժին, ներառյալ մեռյալների ուրվականին: Յոթ անգամ նա բաց էր թողել առավոտյան և երեկոյան աղոթքները և այլևս չէր կատարում իր ամենօրյա անհրաժեշտ սրբացումները: Համենայն դեպս, վախճանվածներն այլևս չեն աղոթում, իսկ նա ձգտում էր հասնել նրանց: Այսպիսով իրար էին միանում մեկ կողմից ընդդեմ Տիրոջը վրեժխնդիր լինելու ծարավը և մյուս կողմից կարոտը նրանց հանդեպ, որոնք մահվան կողմից խլվել էին իրենից:

Երեմիան ճամփա ընկավ դեպի Արևմուտքի քաղաքը: Ներկայացավ Խեր–Հեպին «աստվածային պաշտամունքի գեղեցիկ տանը»: Վերջինս չզարմացավ՝ տեսնելով օտարականին, ոչ էլ զայրացավ նրա խելագար ցանկության վրա, որի նկատմամբ այնքան հանգիստ ու անտարբեր էր, որ Երեմիան վախեցավ, թե նա խորհրդանշական իմաստով է ընկալել իր ասածը: Անաթովթցի մարդը փաստորեն բախեց Ամենտիի (հանդերձյալ կյանքի) դռները: Ավելի ուշ միայն Երեմիան նկատեց, որ ինքը միակը չէ, որ նման պահանջով է այդտեղ: «Վերջին քարավանատանը», որը սահմանակից էր «*ռոզետավ*» դռներով տաճարին, բազմաթիվ խուցեր կային, ինչպես իրենը, սգավորներով բնակեցված, որոնք չէին ուզում լքել իրենց հանգուցյալներին: Այդտեղ էին ապրում նաև նրանք, ովքեր ընծայացուներ էին՝ մասնագիտանալու մահվան հետազոտությունների մեջ: Ըստ երևույթին, քիչ սենյակներ էին ազատ: Խեր–Հեպը հարևանցիորեն լսեց Երեմիային: Իր պատասխանում ամենևին չանդրադարձավ նրա ցանկությանը, չասաց, թե այս մեկը հնարավոր է, կամ այն մեկը՝ անհնար: Նաև

օտարականի կրոնը ոչ մի արգելք չի ներկայացնում: Ամենտին իրականություն էր, ուր իշխում էր Խեր–Հեպը՝ որպես ներկայացուցիչ փարավոնի և հսկում կարգուկանոնի վրա՝ մարզային որևէ մեկ կառավարչի նման: Այն բաց էր Եգիպտոսի բոլոր հոգիների առաջ, թե՛ տեղացիների և թե՛ օտարականների: Հետևաբար, Խեր–Հեպը ոչինչ չի ակնարկում Երեմիայի խնդրանքի մասին, այլ բավարարվում է միայն անորոշ կերպով թվարկելով այն պայմանները, որոնց նա պետք է ենթարկվեր: Նա իրավունք չուներ վերադառնալ Նու–Պտահ, այլ պետք է մնար Արևմուտքի քաղաքում և բնակվեր «Վերջին քարավանատանը»՝ ընծայացուների խուցերից մեկում, որն իրեն պիտի տրամադրվեր: Բացի այդ, պետք է առանց դիմադրության ենթարկվեր նախատեսված բոլոր վարժություններին ու ժուժկալություններին, ներկա լիներ բոլոր դասախոսություններին: Այդ առնչությամբ իրենից չէր պահանջվում ոչ մի խոսք կամ գործ, որն ուղղված լիներ իր սեփական Աստծու կամ խղճմտանքի դեմ:

Այնուհետև Խեր–Հեպը եզրակացրեց.

— Քանզի մեծահոգի են Եգիպտոսի բարձրագույն աստվածների երեք և ինն էությունների միավորումները:

Եվ այդ ամենը ճշմարիտ էր: Երեմիայից ոչինչ չէր պահանջվում, որ հակառակ լիներ պատվիրաններին: Նա ստիպված չէր խոնարհվել որևէ պատկերի առաջ, ոգեկոչել որևէ կեղծ անուն, հարաբերվել որևէ անմաքուր հոգու և մարմնի հետ, չնայած որ ապրում էր անմաքրության մեջ: Այսպիսով, խորհրդավոր կերպով, չնայած իր վրեժխնդրության ու կարոտի զգացումներին, նա մնում էր մեղքից հեռու:

Նախատեսված ժուժկալությունները հիմնականում բաղկացած էին գրեթե չընդհատվող պահեցողությունից: Միայն մեկ անգամ գիշերը Երեմիային տրվում էր գինուց և բանջարեղենների հյութերից պատրաստված մի տաք ըմպելիք: Այս խմիչքն ի վիճակի էր մարելու մարմնական բոլոր կրքերն ու ցանկությունները և զգայարանների առաջ վերացնելու իրականությունների սահմանները: Երեմիան ամենևին չէր էլ զգում, որ ինքը ծոմ է պահում: Չգիտեր նաև իր շարունակական հսկումի մասին: Անկախ նրանից, թե նա կանգնած էր կամ պառկած, գիշերվա յուրաքանչյուր ժամին նրա խուցում հայտնվում էր մի ազդարարող՝ արևային ստորգետնյա ճամփորդության, որը նկարագրական ճոխ

երգով ծանուցում էր համապատասխան ժամի խորհուրդը: Երեմիայի համար օրն ամբողջությամբ օր չէր, և ոչ էլ գիշերը՝ ամբողջությամբ գիշեր: Տեսնում էր լույսը, ինչպես մուգ ապակու միջով տեսնելիս լիներ, և խավարը՝ որպես թե լուսավորված լիներ իր սեփական աչքերի աղոտ լապտերներով:

Ինչ վերաբերում էր պահանջվող վարժություններին, դրանք բաղկանում էին երկարատև ուսուցողական դասախոսություններից, ուր նորընծաների վարդապետներն անգերազանցելի միապաղաղ երգեցողությամբ ընթերցում էին երկար հատվածներ զանազան գրավոր աշխատություններից: Այդ կարևոր գրքերից մեկը կոչվում էր «Մատյան դարպասների», մեկ ուրիշը՝ «Դատի մոտ» կամ «Նրա մասին, ինչ գոյություն ունի խորության մեջ»: Կանոնավորապես, ջրի կաթկթացող կաթիլների նման հնչող կրկնողությունները բթացնում էին միտքը, հանդարտեցնում հոգին մի տարօրինակ թմբիրի մեջ:

Այդ բոլորից ավելի, սակայն, Երեմիայի համար էական էր Խեր–Հեպի հարգարժան այցելությունը, որը կատարում էր ամեն օր իր խցում մայրամուտից առաջ՝ օրվա տասներկրորդ ժամին: «Լռության մեծ վարժություն» էր կոչվում այն, ինչ որ Նու–Պտահի մեռյալների արքայության ամենաբարձր կառավարիչը կատարում էր Հուդայի օտարականի հետ: Լռությունը, որով երկուսն էլ լռում էին, սովորական մի լռություն չէր, այլ դա կանխում էր մեռյալների լռությունը կենդանի մարմնում: Այս վարժությամբ Երեմիայի հոգու հոգին՝ նրա «*կա*»–ն, պիտի դառնար ավելի հանդարտ, ճկուն, արագաշարժ և հնազանդ: Քանզի միայն «*կա*»–ն՝ այդ ներքին կերպարանքը, որը կարոտով բազուկները դեպի երկինք պիտի բարձրացներ, կկարողանար անցնել դարպասների միջով, անշուշտ, երբ զգայուն սրտով հափշտակված լիներ զմայլանքի մեջ:

Օրերից մեկում, երբ Երեմիան այլևս չգիտեր, թե որքան ժամանակ էր անցկացրել Արևմուտքի քաղաքում, եկան և առաջնորդեցին նրան որոշակի ճանապարհով և անաղմուկ նրբանցքներով, դեպի «աստվածային պաշտամունքի շքեղ տունը»: Այդ հսկա պալատը, շրջապատված սյունազարդ ու լուսավոր դահլիճներով, բարձրանում էր մի ընդարձակ հրապարակի վրա, հավանաբար ավելի մեծ, քան Նու–Պտահի տաճարի հրապարակը: Բնականաբար, այնտեղ չէր տիրում շուկայական և տոնի

հատուկ ուրախ եռուզեռ: Ձեթի, յուղի, խորոված ի և գարեջրի հոտերի փոխարեն նրա քթին է դիպչում հասմիկի և ակացիաների սուր բուրմունքը՝ խառնված կուպրի և մի անորոշ դառն բույրի շնչով: Այնտեղ չէին վխտում ոչ գնորդներ և ոչ էլ հետաքրքրասեր ամբոխ, այլ կային միայն Սեթի աշխույժ ծառաներ: Շիկահեր գաճաճները շտապ գնում–գալիս էին փակ արկղերով: Նրանք կրում էին ափսեներ՝ լեցուն աղաքարի սպիտակ գնդիկներով, նույնպես կրում էին զամբյուղներ՝ սաթի գույնի խեժով լցված, թափանցիկ սափորներ՝ լիքը զմուռսի յուղով և ամեն տեսակ ծաղիկների հյութերով, կապոցներ՝ ընտիր ու նուրբ եղեգների և *մենեա* բույսի: Այդ տձև մարդուկները շտապում էին բուրումնավետ նյութերով ապահովելու պալատի հարյուրավոր սենյակները:

Մի շատ մութ սենյակում Երեմիան ընդունվեց Խեր–Հեպի պաշտոնյաներից մեկի կողմից, որը բաց արեց մի փաստաթուղթ և գործնական շտապումով կարդաց հետևյալ տեղեկությունը, որի համաձայն՝ մասնատված և հարություն առած Օսիրիսը մեռյալների համայնքի կողմից ձևավորված միության գլուխն է: Միայն Օսիրիսի մեջ է մահկանացուների հույսը՝ գոյատևելու վախճանումից հետո և պահպանելու իրենց ներքին անհատականությունը՝ մասնատված բոլոր տասնչորս մասերում: Դրա համար վախճանվածներից յուրաքանչյուրը, որի մարմինը հավերժանում է բալասանին բնորոշ օգտակար հատկություններով, յուղի, քարաղի, խեժի և փաթաթման կտավների միջոցով, ընդունվում է աստծու մարմնի մեջ, այսինքն՝ Օսիրիսի միության մեջ: Այնուհետև նա կրելու էր Օսիրիսի անունն ու էությունն իր սեփական էության ու անվան հետ: Իգական սեռին պատկանող մեծարելի հանգուցյալ Հե–Նուտ–Դիմեն՝ Մայ–Պտահի ազնվագույն տան ժառանգորդը, ըստ այդմ կոչվելու էր ընդմիշտ «Օսիրիս Հե–Նուտ–Դիմե»: Հարգարժան Օսիրիս Հե–Նուտ–Դիմեն պիտի փոխադրվեր աստվածային պաշտամունքի պալատից դեպի վերջին քարավանատան մարզ, ուր «*ռոզետավ*» դռներով տաճարում պիտի բացվեին նրա աչքերն ու բերանը:

Այս փաստաթղթի ընթերցումից հետո Երեմիայի գլխին զցեցին սգո բավականին հաստ և դարչնագույն մի քող: Նույն լռակյաց մարդիկ, որոնք բերել էին նրան այդտեղ, հետ տարան: Երբ վերցրին քողը գլխից, նա տեսավ, որ ինքն անպաճույճ և մութ մի սենյակում է, ուր

արդեն սպասում էին արարողությանը հրավիրված անծանոթներ: Երկար ու տառապալից ժամանակ անցավ, նախքան կողմնակի մի լայն դռան բացվելը, որը թույլ էր տալիս տեսնել փայլուն կերպով լուսավորված և արտակարգորեն զարդարված մի սենյակ, որի խորքում, պատին կոթնած, կանգուն վիճակում կար մի հսկա մումիա՝ իրեն հարմարեցված գունագեղ փայտե արկղով: Մումիայի կափարիչը բաց էր: Հարյուրավոր կանգունների հասնող սրբազան կտավներով փաթաթված մարմինը նման էր մի խոշոր մրգի երկարավուն միջուկի: Դեմքին դրված էր մեղրամոմից կամ դեղին գաջից պատրաստված մի դիմակ: Ամենից սարսափելին, սակայն, երկար ու փափուկ սև մազերի փնջերն էին, որոնք դուրս էին ընկել դիմակի տակից:

Ուրեմն դա էր Եհովայի և եգիպտացիների գործը: Նրանք կարող էին հպարտանալ իրենց արած գործով՝ նման անգթությամբ այլանդակելով մարդկային հրաշալի կյանքը: Երեմիան խոնարհեցրեց իր նայվածքը, ինքնաբերաբար մրմնջաց Իսրայելի հին օրհնությունը՝ ի հիշատակ հոգիների: Այնուհետև չբարձրացրեց գլուխը, նույնիսկ երբ սկսվեց արարողությունը, երբ մեծ ու փոքր եղերամայրեր փոխանակում էին սգո երգեր, երբ քահանան, որին Սեմ էին կոչում, օրհնված ջրով օծում է մումիան, երբ մյուս քահանան, որին Ուդպու էին կոչում, խնկավետում է մումիան, և վերջում էլ Խեր–Հեպն ինքը՝ անձամբ, հանում է դիմակի աչքերի խոռոչներից և բերանի վրայից ոսկյա կափարիչները, որպեսզի Օսիրիս Հե–Նուտ–Դիմեն կարողանա տեսնել, պատասխանել և նշանակել մեռյալների քառասուներկու դատավորներին:

Երեմիան բազմաթիվ ժամերից ի վեր պառկած էր կարծր անկողնում՝ կաթվածահար եղած իր կրած դժբախտությունից: Նա հազիվ թե նկատում է և անտարբերությամբ հանդուրժում, երբ երկու տղամարդ գալիս են և մի բարակ կապով կապում են նրան մահճակալին, թեև նա մի չնչին շարժումով կարող էր ազատել իրեն այդ կապանքից, բայց չի փորձում շարժվել, նույնիսկ այն ժամանակ, երբ Խեր–Հեպը ներս է մտնում և նրան մանրամասն ուսումնասիրում: Երեմիան անտարբեր դիտում է, թե ինչպես թաքնագիտության վարպետը մի երկար գավազան է խրում քարե հատակի ճեղքերից մեկի մեջ, ապա հայացքը շրջում է դեպի պատերի երկայնքին նկարված պատկերազարդ լայն շերտը: Գավազանը մի ուժեղ

ստվեր է զցում պատին: Ստվերը տեսանելիորեն արագ շարժվում է այն պատկերի վրա, որը ներկայացնում էր աստվածային արեգակնային նավակի ճանապարհը վերին և ստորին աշխարհների միջև: Երբ արևն ընդամենը մի կանգուն հեռավորության վրա էր այն վայրից, ուր աստվածային նավակը թողնում էր ցերեկվա արքայությունը, Խեր–Հեպը նշան է անում Երեմիային, որը վեր է կենում և հետևում նրան:

* * *

Նրանք թողնում են վերջին քարավանատունը և քայլում անապատի միջով: Իրականում Երեմիան ուրիշ բան էր ակնկալել, երբ Խեր–Հեպը նրան առաջնորդել էր «*ոզեպավ*» դռներով տաճարի մութ միջանցքների միջով: Ավելին, երբ այնուհետև բացվում է ամենաներքին և վերջին դարպասը, նրանց առջև, սովորական անապատից բացի, ուրիշ ոչինչ չի ներկայանում: Իհարկե, դա սովորական շրջագայություն չէր, այլ բոլորովին հատուկ մի թռիչքային ընթացք, որի համար Երեմիան հանկարծ իրեն հզոր է զգում: Նա համարյա սավառնում էր, երբեմն միայն ոտքը դնում էր անապատի՝ քամուց սանրված ավազի վրա, որն ուրիշ առիթով անցնելու համար շատ ջանք ու ժամանակ պետք է վատներ: Հիմա, սակայն, իրեն թվում էր, թե իրենք «*ոզեպավ*» դարպասից հեռանալուց ի վեր կտրել–անցել են մի տարածք՝ ավելի երկար, քան Դանի և Բերշեբայի միջև ընկած հեռավորությունը: Իրենց նպատակը հստակ էր. հասնել այնտեղ, ուր մայր մտնող արևը սուզվելով պիտի հատեր երկրի սկավառակը: Երեմիան այն զգացումն ուներ, որ ինքը ոչ թե իր լրիվ կյանքով, այլ միայն դրա մի մասով է այդտեղ, ինչպես մի ստվեր, ինչպես մեկը այն ուրվականներից, որը քահանաների կողմից նկատի է առնվում որպես Օսիրիսի մի անդամը: Նրա միտքն այնքա՛ն շփոթ էր, նրա քայլվածքը՝ այնքա՛ն թեթև, որ հազիվ թե անդրադառնում է, որ իրենք արդեն իսկ հասել են հորիզոնի հատման գծին, և իրենց դիմաց՝ ամպերի մեջ, հայտնվում է գիշերվա առաջին ժամի ժայռեղեն դուռը հսկա, որը նման էր ուղղակի «*ոզեպավի*» դարպասին, միայն թե հարյուրապատիկ անգամ ավելի լայն ու բարձր: Դեռևս նշմարվում էր անփայլ շողքն աստվածային

ամբոխի, որն ամեն երեկո առաջանում խռնվում էր Ամենտիի դարպասի մոտ, երբ աստված փոխարինում էր ցերեկվա նավակը գիշերայինով, որը միանգամից շրջապատվում էր հարակից աստվածությունների փոքրիկ նավակներով: Սակայն մայր մտնող արևի ցոլքն արագորեն անհետանում է, և մի կաթնային մթնշաղ շրջապատում է Երեմիային ու նրա առաջնորդին: Առաջինը, որ նրանք տեսնում են, շնագայլի գլուխներով մարդկային կերպարանքների մի մեծ շարան էր, որը մշուշի միջից արձակում էր կարմրագույն մի թույլ փայլ: Շնագայլի գլուխներով մարդիկ կազմում էին Անուբիսի հավատարիմ բանակը, որը բացում էր դարպասներն աստծու առաջ: Այդ բանակի զինվորները, սակայն, իրենք իրենց դրսևորում էին ոչ այնքան ջանադիր ծառայողներ: Բայց քանի որ Ամենտիի ազդեցությունը հսկայական էր, նրանք ունեին երիտասարդ օգնականների մի բազմություն: Դրանք շան գլուխներով փոքրիկ կապիկներ էին, որոնք ծառաների հատուկ շաղակրատանքով ցատկոտում էին մեծերի շուրջը՝ զզվոտելով կամ խաղալով նրանց ոտքերի արանքներում: Խեր–Հեպը ծափ է տալիս և կանչում շնագայլի գլխով մարդանց, ինչպես կանչում են կառապաններին, բեռնակիրներին, նավավարներին.

— Նու–Պտահի Խեր–Հեպի համար թող դարպաս բացողներից մեկը գա այստեղ:

Անմիջապես իր տեղից պոկվում է շնագայլի գլխով մի ծեր տղամարդ, մոտենում է իշխանական ծառայի արժանավայել քայլվածքով, ապա չափավոր ենթակայությամբ ողջունում է Խեր–Հեպին, ինչպես մեկն իր տիրոջը, ում լավ է ճանաչում, ապա ուշադիր ու կասկածանքով նայում է օտարականին: Խեր–Հեպը բռնում է վերջինի ձեռքից և խստությամբ դիմում շնագայլի գլխով մարդուն՝ կոչելով նրան այն անունով, որը որոշված էր նրա համար՝ «Որմնաքանդ»: Դրանով «Որմնաքանդը» գոհանում է և, ի նշան իր ծառայական հավատարմության, մի փոքր քսում է իր դունչը Երեմիային: Խումբը, սակայն, դեռևս ամբողջացած չէր: Խեր–Հեպը կրկին ծափ է տալիս և գոռում. «Հետ նայող»: Շնագայլի գլխով մի ուրիշ կերպարանք կաղալով մոտ է գալիս, որը թվում է ավելի ծեր, քան «Որմնաքանդը», և ուսին կրում է մի երկար թիակ: Կաղ քայլվածքից նկատվում է, որ նա իրեն անհաստատ է զգում ամուր գետնի վրա: «Հետ նայողին» միանում են շան գլխով կապիկներից ոմանք:

«Որմնաքանդը» քայլում է առջևից և իր կարմրավուն շողքով ցույց է տալիս ճանապարհը:

Երեմիան հանկարծ զգում է, որ ինքը կանգնած է սահող տախտակների վրա: Նրանք նավարկում են Ուր–Նես գետի վրայով, այսինքն՝ գիշերային Նեղոսի վրայով՝ հետևելով արեգակի նավակին: «Հետ նայողն» իր թիակով ոգևորված թիավարում է, բայց, ըստ երևույթին, ոչ պղտոր ջրում, այլ դիմադրության բացակայության մեջ: Կասկածից վեր էր, որ միայն Ամենտիի կառավարչին, այսինքն՝ Խեր–Հեպին հատուկ կերպով էր վերապահված գետի գիշերային հոսքի վրայով նավարկել դեպի մեռյալների աշխարհ: Դեպի այնտեղ էր գնում նաև գետի՝ գորշ մշուշով պատված տարածուն ափերի երկու կողմերում վխտացող, անհայտ հետիոտների մի անվերջ բազմություն: Արդյոք Ջենուաֆն էլ թշվառների այդ խմբում էր: Խեր–Հեպն իր երկար ցուցամատով բացասական նշան է անում: Այդ հսկայածավալ բազմության մեջ չկար ոչ մի ազնվական *«կա»*: Նույնպես չկար այնտեղ քառասուներկու մարզերից բաղկացած երկրի հարգարժան տներից ոչ մի հոգի, այլ կային միայն ստրուկների, ճորտերի, բանվորների, գյուղացիների, արհեստավորների և ծառաների հոգիները, բացի այն պարագայում, որ նրանց սեփականատերերն իրենց հետ տարած լինեին այդ հոգիները մի ավելի լավ կացարան:

Այդտեղ Երեմիան առաջին անգամ լինելով զգում է, որ ձեռք է բերել մի այնպիսի գիտելիք, որը տևապես աճում է իր մեջ: Նա չի հավատում, որ դա պարզապես մի վառ երազ է: Ուր–Նես գետի երկու ափերին նա տեսնում է մարդկանց խիտ երթեր, որոնցից լսվում են մեղմ հառաչանքներ: Նավակի վրա իր առջև նա տեսնում է նաև հարգարժան «Որմնաքանդին» իր ծառայական պատրաստակամության մեջ: Երբ շրջվում է, տեսնում է «Հետ նայողին», որը մեծ եռանդով թիավարում է դատարկության մեջ: Շան գլխով կապիկները զվարճանում են՝ իրար գցելով ջրի մեջ և կրկին բռնելով:

Այդ բոլորի մեջ ամենից ապահովը թվում էր Խեր–Հեպի սառն ու չոր ձեռքը, որը մեղմորեն բռնում էր Երեմիայի ձեռքից: Այս ամենը կար, բայց միայն իբրև հակասություն սեփական խորը համոզմունքի և գիտելիքի: Մի երևակայական վայր էր արդյոք Ամենտին: Տիրոջ կողմից ոչ մի հստակ խոսք երբեք չէր հնչել մեռելների հավաքման վայրի կամ

ճակատագրի մասին: Բայց հարցը կասկածելը չէր կամ պարզաբանելը, այլ Զենուային գտնելը, թեկուզ որպես ստվեր կամ ուրվական, բայց ոչ իբրև երազ...

Մոտենալով գիշերային մի նոր ժամի դարպասին՝ Ուր–Նես գետը նեղանում է, անտեսանելիորեն և անձայն փրփրում ու հոսում կտրուկ զառիվայրերով: Դրանից հետո նավակն սկսում է գլխապտույտ արագությամբ ընթանալ: «Հետ նայողը» ուժգին թիավարում է արագավազ հոսանքի դեմ, որպեսզի խուսափի վերահաս աղետից: «Որմնաքանդը», սակայն, կլորացնում է ձեռքերն իր շնագայլի դնչի շուրջը և հաչում դռնապաններին ներս մտնելու անցաբառը. «Ով դարպաս, քո անունն է արդարություն ժայթքող ուժ,— ապա ավելացնում է այս գաղտնաբառին մի նախադասություն,— Ինչն է հավիտենական. դա օրն է: Ինչն է անվերջ. դա գիշերն է»: Գիշերվա երկրորդ ժամի երկիրը հիմնականում չէր տարբերվում առաջինից: Միայն թե գետի երկու ափերում առաջ ընթացող թափորը թվում էր քանակով մի քիչ պակասած: Ավելորդները մաղից անցնելով զտվել էին ու հետ մնացել: Իրարահաջորդ դարպասների առաջ նույնպես կրկնվում է նույն արարողակարգը: Գնալով զտվում, փոքրանում ու «լավանում» է քայլող մարդկանց շարանը:

Գիշերային չորրորդ ժամին ափին կանգ է առնում նավակը և դուրս են գալիս: Երիտասարդ կանայք անմիջապես շրջապատում են Երեմիային ու Խեր–Հեպին: «Որմնաքանդն» ու «Հետ նայողը» միջամտում են զայրացած, բայց ապարդյուն: Օղակը կրկին ու կրկին խտանում է: Երեմիան հուզախառն սրտով զննում է իր շուրջը, բայց չի գտնում Զենուային: Բոլոր այդ կանայք կարծես թե դեմք չունեին: Նրանցից մեկը պպզում է նրա ոտքերի առջև և սկսում է ծղրիդի նման երգել.

Ամուսինս, սերս անգին, վայելիր այնտեղ՝ վերևում,
Քանի դեռ ապրում ես՝ վայելիր ինչքույքները բոլոր,
Գիշերներն այլ կանանց հետ գնա, մտիր անկողին
Եվ ծառայիր մեծ եռանդով կոփանքներին բոլոր,
Գինուն, որսորդությանը, բախտախաղին ու սիրուն:
Եվ քանի դեռ ապրում ես, վայելիր սերն անձնվեր:

Մենք մի տխուր օթևանում գտնվում ենք ներքևում,
Երերում ենք սասանված. անմարմին մարմնում,
Այլևս ոչ պիտի հիշի հորը, մորը, եղբայրներին,
Անպարբեր սիրտը չի էլ ճանաչի իր երեխային:

Ես անվանում եմ վիշտը որպես «Մահ կատարյալ»,
Երբ մեր միջի սերն այլևս մեզ չի սիրում:

Ով ապրում է, նա խմում է կյանքի ջրից,
Եվ ես, սակայն, գտառապում եմ հավերժական ծարավից:
Թեև գեղը շատ մոտիկ է, բայց ես ծարավ եմ, ծարավ,
Եվ այլևս չգիտեմ, թե ով եմ ես և ուր եմ հիմա:
Լաց եմ լինում ափից փչող զեփյուռի համար.
Որն ինձ հիշեցնում է սիրող սերը սրտագին:

Կանայք հավանաբար Երեմիայի մեջ ճանաչում են կյանքի միսն ու արյունը, քանի որ նրանք հավաքվում են նրա շուրջը՝ իբրև սառը բոցեր, որոնց հպումը մարդ չի կարող զգալ: Խեր–Հեպը, որն ապահով բռնել էր նրա ձեռքից (միակ ապահով բանն անապահովության մեջ), քաշում է նրան իր հետ: Արագությամբ անցում են աճող և նվազող անմարմին մարմինների հորձանուտի միջով: Նրանք միայն մի քանի անգամ ան-փութորեն շարժում են իրենց ոտքերը և ահա արդեն «Որմնաքանդի» առաջնորդությամբ և «Հետ նայողի» ուղեկցությամբ հասնում են գի-շերային հինգերորդ ժամի դարպասին և այդպիսով հենց այն մուտքի առաջ, որը կոչվում էր «Այն, ինչը գոյություն ունի խորության մեջ»: Արև-մտյան երկրի այս մասը կրում էր անունը՝ «Ստեղծագործության բոլոր երևակայված և երևակայելի հնարավորությունների մարզ»: Այս անգամ, սակայն, «Որմնաքանդը» չի արտասանում անցաբառը, այլ Խեր–Հեպն է դա անում: Արդարև այդ երկրում, առաջին անգամը լինելով, հոգիների նոսրացած այդ շարանին, որը ձգտում էր միաձուլվելու Օսիրիսին, դիմա-վորում են գրեթե նույնաքանակ տխեղծ կերպարանքներ՝ վախեցնելու և ստուգելու համար նրա անդամներին: Դեպի առաջ ընթացող հոգին կա-րող էր ազատվել այդ նյարդացնող վախից ու քննությունից նրանով, որ

միշտ ի վիճակի լիներ կոչելու այդ կերպարանքներին իրենց իսկական անուններով, որի համար բաց էին թողնված մումիայի աչքերն ու բերանը: Անվանակոչության մեջ գոյություն ունի մի կաթվածահարող ուժ, որը բռնում է ու զինաթափում յուրաքանչյուր էակի ու դիմադրություն ցուցաբերողի: Ինչը կարողանում ես անվանակոչել, այն կարողանում ես նաև քեզ ենթարկել: Միայն անունն է իսկական և տեսանելի դարձնում աստվածությունն ու արարածը, մեջտեղ բերում և միաժամանակ ոչնչացնում դրանց: Դրա համար էլ հոգատար, մասնագետ և հավատարիմ պաշտոնյաների կողմից մշակված հանգուցյալների մարմիններին կապում էին *Մեռյալների մեծ գիրքը*, որովհետև այդ գրքում գրված էին իրենց հետ հանդիպելու ելած բոլոր էակների և զազրելի կերպարանքների անունները, որպես թե դա լիներ Ամենտիում բնակվողների ցուցակը: Մեկը, որ ամենաքիչ կարիքն ուներ այդ գրքի, Խեր–Հեպն էր, որը, իբրև գաղտնի գիտությունների մեծագույն խորագետը Նու–Պտահում, տիրապետում էր ոչ միայն բոլոր անուններին, այլև այն անուններին, որոնք ոչ մի գրքում արձանագրված չէին և ոչ էլ բերանացի ավանդված: Եվ քանի որ Խեր–Հեպն արհամարհում էր ինքն իրենով պարծենալը, բավարարվում էր միայն Երեմիայի ձեռքն ամուր բռնելով: Որպես առաջին սարսափ ազդող և քննող տարր՝ իրենց առջև ներկայանում է մի հրեղեն շրջանակ, որը ջայլամի լայն բացված ոտքերի վրա վեր է ցատկում: Խեր–Հեպը կանգ է առնում և թույլ է տալիս, որ դաժան կրակը մի պահ խանգարի իրենց ճանապարհը: Այնուհետև նա փնթփնթում է արհամարհալից՝ «Պոչավոր աչք հրեղեն»: Դրա վրա նշված երևույթն անմիջապես անհետանում է:

Այն, ինչը բնութագրում է այդ բոլոր սարսափ պատճառողներին ու քննիչներին, դա նրանց արտաքին տեսքի լիակատար անիմաստ լինելն էր: Նրանց առանձնահատկությունն այն էր, որ նրանք կազմված էին իրարից անջատ և հակոտնյա այնպիսի էական մասերից, որոնք բանականության ու նպատակի առումով չնչին կապ անգամ չունեին միմյանց հետ: Ամեն ինչ միաձուլված էր կենդանական կերպարանքի հետ, քանզի առանց դրա չէին կարող ի հայտ գալ Զույգ Երկրների վերին և ստորին մասերը: Սակայն այդ կենդանական կերպարանքին միանում էր նաև անհեթեթություն, հաճախ ամենագարշելի և խայտառակ ձևով: Մարդկային հասակի բարձրությամբ մի աքաղաղ հպարտ թափառում էր՝

պարծենալով իր փայլուն ու շքեղ փետուրներով: Նա իր գլխի ու վզի փոխարեն օժտված էր աքաղաղի սանտրաձև կատար ունեցող մի ֆալ-լոսով: Խեր–Հեպը, տալով այդ գարշելիության անունն իբրև «Երկրի կրկնակի իշխանություն», անհետացնում է նրան՝ առանց բացահայտելու նրա անվան գաղտնի նշանակությունը:

Երեմիան՝ Անաթովթի քահանայի այդ որդին, որը մի անգամ՝ Զատկվա գիշերին, Տիրոջ Սրբարանի դիմաց խորապես քննել էր իր կյանքի անարատությունը, այստեղ՝ Ամենտիի ընդերքում, կարծում էր, թե կորչում է ամոթից ու զզվանքից: Այժմ նա սկսում է գիտակցել, որ իր մեղավոր մուտքով Ամենտիի մեջ պատժել է ոչ թե Տիրոջը, այլ ինքն իրեն:

Կողմնակի մի հայացքով Երեմիան համոզվում է, որ Խեր–Հեպը չի տառապում ամեն տեսակ խառնաշփոթ կերպարանքների այդ դժոխքում: Ընդհակառակը, թվում էր, թե նա զոհ է, որ ղեկավարում է նման մի դժոխք, որի գլխապտույտ գաղտնիքներին տիրապետում էր նրա հոգին ամենայն հեշտությամբ: «Որմնաքանդն» ու «Հետ նայողը»՝ Անուբիսի այդ երկու նողկալի որդիները, հիացմունքով քսում էին իրեն դնչերը նրա մարմնին: Խեր–Հեպը շատ բան գիտեր իրականի և անիրականի մասին, անսահմանորեն ավելին, քան Երեմիան: Այդուհանդերձ, կար մի բան, որ Օսիրիսը չէր սովորեցրել նրան: Դա բարին ու չարը, մաքուրն ու անմաքուրը, ամոթն ու լկտիությունը միմյանցից տարբերակելն էր: Նա գաղափար չուներ նաև այն մասին, որ գարշանքի կայծակնային հարվածը երկնքից մշտապես իջնում է և անցնում երկրի միջով դեպի խորությունները՝ դաժանորեն բաժանելով տիեզերքը երկուսի:

Ինչքան առաջանում էին ահավոր խոչընդոտների միջով, այնքան ավելի կենդանական կերպարանքների հետ միախառնումները դառնում էին ժանտատեսիլ: Նրանք հետզհետե ստանում էին նեղոսյան ձիու և կոկորդիլոսի ձև: Դա ապացուցում էր, որ նրանք մոտենում էին Ամենտիի կենտրոնին, ամենամեծ խորությանը, գիշերվա վեցերորդ և յոթերորդ ժամերի տարածքին, որի սահմանին՝ Ուր–Նեսի ձախ ափին, բարձրանում էր մեռյալների դատարանի դահլիճը: Իրենց ոտքերի տակ կրկին սահում էին լաստի տախտակները: Գիշերային Նեղոսը դառնում էր ավելի նեղ, իսկ խավարը՝ ավելի խորը: Միայն թե երբեմն փայլում էին դարպասների ոսկեզօծ շրջանակները և բարձր ճաղերի պղնձյա ցանցերը:

Սակայն ոչ դարպասները և ոչ էլ ճաղերն այդտեղ ոչ մի իրական վտանգ չէին ներկայացնում հոգիների համար: Մի կարճ հեռավորություն կտրելուց հետո հասնում են առավելագույն խորությանը: Երեմիան զգում է, թե ինչպես է սառել Խեր–Հեպի ձեռքը, ում «Որմնաքանդը» մոտենալով գրկում է, համարյա նույնն անում է նաև «Հետ նայողը», որը մի պահ թողնում է թիավարությունը և սկսում խղճալիորեն խռխռալ: Անցնում են Ապեպի բնակավայրի միջով: Խեր–Հեպը խոր շունչ է քաշում, ապա լիակատար մթության մեջ գոռում է մի այնպիսի ձայնով, որը Երեմիան չէր ակնկալում այդ մեղմաձայն մարդուց.

— Ապեպը՝ սկզբնական օձը, ինձ ուզում է պարտադրել՝ մասնատելու իմ աստծուն...

Անձնատուր լինելու դեպքում նրանք երկուսով պիտի կանգնեին երկրորդ մահվան առաջ, որը մահ էր մահվան մեջ, ոչ թե ուղղակի ոչնչացում, այլ գիտակցված մահ, որը կարող էր պատկերացնել միայն նա, ով երկու անգամ էր մահացել: Այժմ նույն ինքն՝ Խեր–Հեպը, թվում էր համակված խորը սարսափով: Երեմիան, սակայն, չէր վախենում, քանզի իր համար այն բոլոր սարսափազդու էակների, քննիչների, ճնշողների, նվաճողների մեջ Ապեպը չնչին արժեք էր ներկայացնում: Եգիպտոսը տեղյակ չէ՞ արդյոք, որ հենց ինքը՝ Եգիպտոսը, մեղավոր է կրկնակի մահվան հարցում: Մի՞թե ինքը չէր, որ պարտվել էր Ապեպից և մասնատել աստծուն անհամար մասերի: Այդ հանցագործության պատճառով՝ ընդդեմ աստվածային միասնության, Ամենտին էր դարձել Եգիպտոսի տերը, քանզի Միակի միասնության և ճշմարտության մասնատումը պարտադրում է մարդկանց հուսահատությամբ ընկնելու արբեցության մեջ, և անիմաստ մահը գահի վրա բարձրացնելու: Ինչպիսի՜ հուզմունք է պատում Երեմիային, երբ վստահ է լինում, որ Ապեպի ստորին դժոխքում է առանձնացման վայրն Իսրայելի: Նա հարցնում է հանգիստ.

— Որտե՞ղ պիտի տեսնեմ նրան...

Խեր–Հեպը, սակայն, պատասխանելու փոխարեն ցույց է տալիս իր դիմացի դատարկ տարածությունը: Արդյոք Ձենուան շտապե՞լ էր և հասցրել անցնել դժոխային բոլոր ուժերի և մեռյալների դատարանի նեղ դռների միջով: Այլևս հնարավոր չէր տարբերակել ջուրը ցամաքից: Արագ կերպով մոտենում են դատարանի դահլիճին: Շուրջբոլորը

տարածվում էր ոչնչությունը, որն ընդունում էր քառասուներկու դատավորների կողմից մերժվածներին: Հանկարծ «Որմնաքանդի» և «Հետ նայողի» շուրջը հավաքվում են Անուբիսի գլխով նոր կերպարանքներ, որոնք Երեմիայի ու Խեր–Հեպի համար կազմում են մի ամրացված թիկնախումբ: Աղմկարար և հաչոցներ արձակող խումբը խանգարում է տեսադաշտը: Նետի արագությամբ նրանք սահում են դեպի ներքև: Լսվում է բազմազան աղմուկ՝ նման գիշատիչ ձկների ու կոկորդիլոսների հանած աղմուկին: Մարդկային խորհրդավոր ու շփոթահար ձայները սկսում են մոտենալ: Այժմ նրանք գիշերային արևի ճանապարհով պիտի անցնեն դատարանի կողքով, ուր լռակյաց Օսիրիսը, նստած մեռյալներ դատող քառասուներկու կենդանակերպ դատավորների մեջտեղում, պիտի արձակի թույլտվության կամ մերժման դատավճիռ՝ համաձայն ոսկյա վիթխարի կշեռքի տատանման, եթե հոգին մեղանչել է աստվածների դեմ կամ ոչ: Խոռվահույզ աղմուկն աստիճանաբար հստականում է: Լսվում են առանձնակի խոսքեր: Դատարանում կանգնած բազմաթիվ մարդկանց՝ լացուկոծով արվող սրտաճմլիկ խոստովանանքը հասնում է Երեմիայի ականջին.

— Ով դու, Շրջագայողդ ամբողջ երկրում, ես չեմ արել այն, ինչը հաճելի չէր աստվածներին:

— Ով դու, Գրկախառնվողդ կրակի հետ, ես երբեք չեմ փչացրել ընծայաբերման թխվածքները տաճարում:

— Ով դու, Ձրերին Հարվածողդ, ես չեմ փոքրացրել մեռելների հագուստներն ու փաթաթման երիզները:

— Ով դու, Վավամտի–օձդ, ես չեմ քնել ոչ մի տղամարդու հետ:

— Ով դու, Ուրիտի Ավազակդ ձայնի, ես ինձ չեմ պղծել իմ քաղաքի աստծու սրբավայրում...

Մեղադրյալներն այս և նմանօրինակ այլ արդարացումներ իրար խառնելով արտահայտվում էին աղերսաձայն: Երբեմն դադար էին առնում, և վրա էր հասնում դատավճռով հղի ճակատագրական լռությունը: Վճիռը, սակայն, չէր հայտարարվում բարձրաձայն: Ցավն ու կարեկցանքը համակում են Երեմիային նրանց համար, որոնք խաբվել էին մինչ իրենց մահը: Դատարանի դահլիճն այլևս շատ հետ էր մնացել: Խեր–Հեպի նավակը կարողացել էր աննկատ հեռանալ այդտեղից:

Գետը գնալով լայնանում էր: Երկիրը հասել էր գիշերվա յոթերորդ ժամին, որը միաժամանակ մոր արգանդում վերածնվող օրվա առաջին ժամն էր: Ուր–Նիսը պարուրված էր մի թույլ փայլով: Այն գալիս էր աստծու նավակից, որն իր հետ էր տանում գիշերային արևը, որը հեռվում սահում էր դեպի Ամենտիի մյուս դարպասը: Խեր–Հեպի և իր հյուրի նավակը, սակայն, խարսխում է գիշերային յոթերորդ ժամի ափին, որի տարածքը Եգիպտոսում կոչվում էր «*Ապի*», ինչը նշանակում էր «Երանելիների անդաստաններ»: Սակայն, ավաղ, ինչ երանություն էր դա, որն էականորեն չէր տարբերվում առաջին մարզերի դժբախտությունից: Հոգիներն Ամենտիի ճանապարհին դրա համար էին կրել այդքան երկրային տանջանքներ, անկումներ, երկյուղներ ու փորձություններ, որպեսզի իրենց ապրած կյանքը հավերժորեն որոճան, ինչպես անհաճո հիշողությունը վաղուց ճաշակած մի կերակրի: Իսկապես էլ, այդտեղ՝ Ուր–Նեսի ափին, կանգնում էր մի ձկնորս, որի մեծագույն ուրախությունն էր կարթը ջրում նետելը և ապա հափշտակված կերպով դրա հետևից նայելը: Նրա հոգին հիմա էլ է անում նույն շարժումը: Լավ թիրախավորած թափով նետում է ձկնորսության սարքը, բայց կարթին կապված լար չկար, լարին էլ կապված կարթ չկար, և ոչ էլ ձկներով լի ջուր կար այնտեղ, ուր ընկել էր: Ոչինչ չկար այնտեղ, բացի ինքն իրեն խաբող մի ձկնորսի ձկնորսության խաբեպատիր ստվերից: Թեև *Ապիում* ստվերները մի քիչ ավելի դեմք ունեին, քան գիշերային նախորդող ժամերինը,— որովհետև այստեղ մթությունն ավելի նվազ էր,— այսուհանդերձ, նրանց դիմագծերի վրա չէր տեսնվում որևէ երանություն կամ երջանկություն, այլ միայն ինչ–որ պարտադրված բան, որը թույլ կերպով միախառնված էր ցանկալի բավարարվածությամբ և վերահաս հիասթափությամբ: Ոչ մի հետազոտող աչք չէր կարող զերծ մնալ այն կասկածից, որ մարդկային այս բոլոր երևութական կերպարանքները միայն իրենց բարության և տկարության պատճառով էին ենթակա դարձել կեղծիքի, որպեսզի այդպիսով չխանգարեն Եգիպտոսի աստվածներին:

Երեմիան Տիրոջ կողմից չի ստանում ոչ մի շշուկ կամ պատգամ, այլ միայն մի հանկարծակի բարձր գիտակցություն, ընդ որում՝ Աստծու բերկրությունը, իր կյանքի այդ բուռն բռնկումը: Նա միանգամից մոռանում է Ձենուային, մոռանում է մեղանչելու իր ցանկությունը, վրեժխնդրության

ծարավը և այն անսահման կարոտը, որն իրեն մղել էր այդտեղ, ինչպես նաև մոռանում է նույնիսկ իր զզվանքը: Իր մեջ այժմ ուրիշ բան չկա, բացի գերագույն մի փրկության նկատմամբ ունեցած վստահությունից, բացի մի վաստակած երանությունից և առատ գթությունից այն հոգիների հանդեպ, որոնք մահվան կողմից դարձել էին մանկամիտ՝ կրկնելով իրենց ծիծաղելի կյանքը մի ավելի ծիծաղելի խաղով: Եվ չնայած որ վերևից ոչ մի խոսք չէր հասել իր ականջին, այդուհանդերձ, իր սեփական մեղքով չէր, որ իջել էր մեռյալների մոտ, այլ դա աստվածային ծրագիր էր: Քանզի ինքն ուղարկված էր մեռելներին ճշմարտություն և մխիթարություն հաղորդելու, որովհետև կենաց Տերն իշխում է նաև նրանց վրա, և այդ նույն Տերը մերժում է մահը և չի կարող մոռանալ իր ստեղծածին: Իսկ ընտրյալը, որ կարգվել էր մարգարե ժողովուրդների մեջ, տարածում է իր բազուկները և մահացած ժողովրդին հայտնում Իսրայելի մխիթարությունը.

— Լսիր և դու, ով Ամենտի, որ Տերն է մեր Աստվածը, և Տերն է միակ Աստվածը:

Եթե մխիթարության իր բոցաշունչ պատգամն Ամենտիի երանելիների վրա որևէ ազդեցություն է գործում, դա Երեմիան այլևս չի կարողանում իմանալ, միայն զգում է, որ Խեր–Հեպը թողել է իր ձեռքը: Արդարև, հենց այդ պահին մի վավերական տեսիլք բարախող իրականության մասին, որը մինչ այդ երբևէ չէր ճանաչել, ընդմիջում է այն կեղծ ու կասկածելի տեսիլքը մեռյալների աշխարհի վերաբերյալ: Ոչինչ չի երևում այնտեղ, բացի մի լուսավոր և ուժեղ մարդուց: Երեմիան անհրաժեշտություն չի զգում հարցնելու նրան իր ծագման մասին: Նա Աբրահամին այցելող մարդկանցից մեկն էր, որի հետ մարտնչել էր Հակոբը, նա Տիրոջ պատգամաբերն էր՝ վերևից իջած: Նոր միայն Երեմիան նկատում է, որ այդ փայլող մարդն իր բազուկների վրա զգուշորեն կրում է մի քնած կին: Նա Զենուան էր, բայց այլևս ոչ թե ամուր փաթաթված և դեմքին դիմակ դրած նրա մումիան, ոչ էլ գիշերային երանելի ժամերի թույլ ու անցողիկ ստվերը նրա, այլ իսկական Զենուան՝ հենց ինքը, ինչպես որ էր ապրելիս, մանկական վարդագույն և կիսաբաց շուրթերով, հանգիստ շնչով: Զենուան՝ իր փրկված կյանքով: Զենուան՝ իր պահպանված տեսքով: Եվ պատգամաբերն ասում է.



«Զենուան Տիրոջ պատգամաբերի բազուկներին քնած»

— Տես, ահա սա է Զենուան՝ *նեֆեշ խայյիմ*, ողջախոհ հոգին, կենդանի շունչը ժողովուրդների, որը պահպանված պիտի մնա իր տեղում, մինչև որ իր պատշաճ ժամանակը գա...

Ցնծության ինչ աղաղակ կարող էր բավականաչափ հզոր լինել՝ երախտագետ լինելու համար այս պատգամին, որը ոչնչացնում է ամեն տեսակ ոչնչացում: Զենուան ապրում է: Զենուան՝ հեթանոս երկրի այդ քաղցր հոգին, իր օթևանում սպասում է Երեմիային՝ Իսրայելի հոգուն: Նա ննջում է հանգիստ, մինչև որ հասնի ամուսնության գերագույն ժամը: Երեմիան, սակայն, չի հասցնում բացականչել իր մեջ տոչորվող ուրախության զգացումը, որովհետև իր ականջին միանգամից հնչում է տղամարդկային մի ծանոթ, հստակ ու մեղմ ձայն.

— Քեզ համար կին մի՛ առնիր, թող քեզ տղաներ ու աղջիկներ չծնվեն, քանզի նրանք, ովքեր ծնվելու են քո երկրում, պիտի մահանան տանջահար:

* * *

Երիտասարդության ժամանակի մոռացված շշնջյունն: Վերանորոգ շշնջյուն Արևմուտքի այդ ամենից օտար երկրում: Մի շշնջյուն, որն անիմանալի կերպով անտեսում էր իր հրաժարումը Տիրոջից, իր փախուստը Եգիպտոս, իր մեղքը, որպես թե դա ոչինչ չլիներ: Երեմիան ուզում է ներթափանցել դրա մեջ և խորհրդածել դրա մասին: Նա սթափվում է: Մումիայի երիզը, որով անփութորեն փաթաթված էր նրա մարմինը, ընկնում է նրա վրայից: Նա նստում է մի կոշտ հարթակի վրա: Խոր գիշեր էր: Լույսի մի թեթև փայլ, և Խեր–Հեպի զգեստի սպիտակ ծոպը մի շփոթահար մղումով անհետանում է սենյակի հառաչող դռան բացվածքի միջով:

* * *

Երեմիան վերափոխված էր: Այն ամենը, ինչ նա զգացել էր Նոփում և Ամենտիում, միանգամից բոլորովին անհետացել էր: Միայն պարզ ու

մեղմ ձայնը մնացել էր անջնջելի: Նա այժմ անդրադառնում է, թե ինչ–որ բան պետք է պատահած լիներ, որը հեղաշրջել է իր կյանքը: Կասկած չկար, որ իր արձակուրդն ավարտվել է: Նրա մեջ անզսպելի ցանկություն և պատրաստակամություն կար չեղյալ համարել իր հրաժարումը և վերսկսել իր ծառայությունը: Նոր միայն հիմա, Եգիպտոսի մեռյալների աշխարհի միջով անցնելուց հետո, նա իրեն հասունացած է զգում իր կոչման ճանապարհին: Նրա մարմնի անդամները ցավերի մեջ են պասերի և հրաշք ըմպելիների հետևանքով: Այդուհանդերձ, նա վեր է ցատկում իր տեղից, դուրս է գալիս իր խցից, հեռանում է վերջին քարավանատնից և նրա «*ռոզկրաչ*» դռներով տաճարից, որը լուսավորված էր աստղերի աղոտ լույսով: Երկար ժամանակ նա թափառում է Արևմուտքի ամայի քաղաքում: Արդեն առավոտ էր, երբ նա հասնում է աքսորյալների տունը: Ոչ մի դռնապան. բոլոր մուտքերը բաց էին, սենյակները՝ դատարկ, ասես թալանված լինեին: Վերջապես պարտեզում նա գտնում է մեկին. նա Հովսիայի տխեղծ ներքինին էր, որը հառաչելով կռացել էր հակերի ու պարկերի վրա և կապում էր դրանք: Արտասվելով և քրտնելով նա պատմում է տեղի ունեցածի մասին. երկու գիշեր առաջ տունը հանկարծակիորեն շրջապատվում է *իտնական* թիկնապահների կողմից: Եղնաթանը՝ Հովակիմ թագավորի անները, Հուդայի այլ ռազմիկների հետ ներխուժում է այնտեղ: Խուզարկում են սենյակները, մինչև որ գտնում են իրենց փնտրածին՝ Ուրիա մարգարեին: Ծերունուն անմիջապես ծանր շղթաներով կապելով քարշ են տալիս: Նորին արքայական մեծությունը, որ իր ժամանակավոր հանգստի մեջ էր, ինչպես նաև նրա ամբողջ ընտանիքն ու ծառաները, հաջորդ առավոտյան անհապաղ ճանապարհ են ընկնում դեպի հարավ՝ համաձայն փարավոնի հրամանի: Ինքը՝ Հովսիայի ամենահավատարիմ ներքինին, այժմ գնալու է իր տերերի հետևից՝ տանելու համար նրանց իրերը: Երեմիան տխրությամբ մտածեց մի երկար պահ, այնուհետև ուժգին հարվածեց գետնին և ասաց.

— Ո՛չ,— ապա ևս մի բառ,— Ուրիա՛:

Այնուհետև, ցույց տալով Երուսաղեմի ուղղությունը, ավելացրեց.

— Դուք ինձ կգտնեք, երբ ժամանակը գա...

Առանց շուրջ նայելու՝ նա արագ քայլերով թողեց փոքրիկ պարտեզը և իր նշանադրության տունը:

ԳԼՈՒԽ ՏԱՄՆՅՈԹԵՐՈՐԴ

ՃԱԿԱՏԱԳԻՐԸ ԽԵՑԻՆԵՐԻ ԴԱՐՊԱՍԻ ՄՈՏ

Երբ լուրը տարածվում է Հուդայում, թե Նոփում կատաղած Եղնաթանը փարավոնի մարդկանց օգնությամբ ձերբակալել է և իր հետ Երուսաղեմ է բերել ու բանտարկել ծերունի մարգարե Ուրիային, այդ առնչությամբ Բարուքը նախատեսում է, որ իր ուսուցիչը չի կարող ձեռքերը ծալած մնալ նման մի սրբապղծության նկատմամբ: Երեմիան արդեն իսկ ճանապարհ էր ընկել՝ օգնելու համար այդ օրինակելի մարդուն: Մյուս կողմից էլ նա հաստատ գիտեր, որ Բարուքը սպասում է իր վերադարձին և հավանաբար արդեն իսկ մի նպաստավոր վայրում է: Նրա համար նաև դժվար չէր կռահել, թե որտեղ է այդ վայրը, որովհետև միայն Հեբրոնում էին քարավանների մեծ ուղիներն իրար միանում, և այդտեղ անհնար էր չհանդիպել Եգիպտոսից ժամանած ճամփորդներին: Երեմիան գուշակում է նաև, որ Բարուքը, նախորդ ժամանակվա նման, երկու էշ էր վարձելու, որպեսզի ճամփորդությունն առանց ընդհատվելու շարունակվեր դեպի Երուսաղեմ: Նա չէր սխալվում նաև դրանում: Երկար բաժանումից հետո ուսուցիչն ու աշակերտը փափագում էին ժամ առաջ հանդիպել իրար: Երկուսն էլ միևնույն մտահոգությունն ունեին. դա Ուրիան էր: Տղամարդը, որը սպասողական վիճակում էր, գիշեր ու ցերեկ նստում էր Հեբրոնի հարավում՝ իջևանատան առաջ, իրենից վանում քունը, որպեսզի Եգիպտոսից ժամանողներին տեսնելու առիթը չփախցներ: Նա, ով վերադառնում էր մի մեծ քարավանի հետ, շատ անգամ ենթարկվում էր փոթորիկների և այլևայլ դժբախտությունների: Այնուամենայնիվ, Երեմիայի և Բարուքի սրտերում տողանցում էին միևնույն երկյուղն ու հուսադրող մտքերն Ուրիայի վերաբերյալ:

Կհասնե՞ն արդյոք ճիշտ ժամանակին: Սա էր հարցերի հարցը: Եղնաթանն ու իր ծառաները ճանապարհին չէին սպանել Ուրիային, ինչը ցույց էր տալիս, որ Հովակիմ թագավորը մտադիր չէր սրով հենց այդպես վերջ տալ բանտարկված ու զնդան նետված մարգարեի կյանքին, այլ նպատակ ուներ դատարանի օրենքին ենթարկել նրան: Նա հավանաբար պահում էր նրան մի հատուկ տոնի համար: Գուցե նաև նրա միտքն այդ օրերին խճճված էր այլ գործերով: Միակ բանը, որ Հովակիմ–Եղիակիմը ժառանգել էր իր հորից, անկանխատեսելի քմահաճությամբ գործելն էր: Կարող էր պատահել, որ շինության մի նոր նախագիծ, շքեղակառույց մի սենյակի պատերի գույնի ընտրություն, բուրավետ յուղերի թարմ բեռներ, այնքա՜ն կլանած լինեին նրան, որ նա մեղմացներ իր ատելությունը, օրերով մոռանար իր կրած վիրավորանքները: Նույն կերպ կարող էր պատահել նաև, որ առավոտյան դեմ ունեցած մի ճնշող երազ, ինքնասիրությունը վիրավորող մի հարց, նույնիսկ մի ամոթալի միտք, հանկարծակի հարուցեին իր զայրույթը, և դրանից հետո վա՛յ այն խեղճերին, որոնք իր իշխանության ներքո էին:

Չնայած իր կատարած անարգալից հայտարարությանը՝ Երդման ուխտի սյունին կոթնած, Հովակիմը չէր հանդգնել վերացնել Տիրոջ օրենքը: (Վերացնե՞լ... Ոչ ոք չի կարող վերացնել կամ ոչնչացնել այն, ինչ որ Տիրոջ կողմից է հաստատված: Նա առավելագույնը կարող էր անտեսել կամ խախտել այն): Դատելով այս հանգամանքից՝ Հուդայում պահպանվում էին բոլոր օրենքներն ու պատվիրանները, որոնք վերաբերում էին դատական և կարգապահական հարցերին: Տերն իր ողորմածությամբ չէր հանդուրժում, որ դատավճիռը կայացվեր միայն մեկ դատավորի կամ նույնիսկ դատավորների ավագի կողմից: Յուրաքանչյուր քաղաքում և յուրաքանչյուր համայնքում պետք է ավագներից բաղկացած դատաստանական խորհուրդ կազմվեր, որպեսզի աստվածային օրենքի լույսի ներքո հարցերը բարեխիղճ կերպով քննելուց հետո իմաստուն դատավճիռ տրվեր: Եվ եթե դատավարության խորհրդում թեկուզ մեկ ձայն լինի, որ մեղադրյալին իր հանցանքի համար արժանի չգտնի մահվան, այն ժամանակ նրա վրա չպետք է կիրառվի «ժողովրդի միջից ոչնչացնելու» օրենքը: Սակայն եթե նույնիսկ միաձայն կերպով մահապատիժ սահմանվի, այդուհանդերձ, կենաց Տերը հոգ պիտի տանի, որ բոլորովին չսպառվեն

այն խոչընդոտները, որոնք դժվարացնում են մահապատժի կիրառումը: Աշխարհի թագավորներն ու ժողովուրդները.– բոլորն էլ ավելի հզոր, քան Իսրայելը.– իրենց իրավասության տակ պահում էին մահապատիժների լավ պատրաստված կատարողներ: Դրանք բոլորն էլ փորձառու դահիճներ էին, կախաղան հանողներ կամ էլ որոշ չափով սարսափ ներշնչող և այլ կոչումներով հայտնի անձեր: Դրանք նաև մարդիկ էին՝ ջլապինդ բազուկներով և հսկայական մերկ կրծքով, որոնք ճշգրտորեն պտտեցնում էին երկսայրի սուրը հանցագործի գլխին և կամ էլ բռունցքի ճարպիկ հարվածով զցում էին նրան կրակե հնոցը: Իսրայելում, սակայն, այդպես չէր: Աշխարհի բոլոր ժողովուրդների մեջ Հակոբի ժողովուրդը միակն էր, որը դահիճներ չէր պահում, քանզի վարդապետության իմաստուն ու բարեխիղճ սահմանումով չէր նախատեսված որևէ սպանություն կամ բնաջնջում, որը կարող էր մի անհատ իրականացնել: Դրա համար էլ կար մի այլ իրավական ընթացակարգ, որը մի թաքուն նպատակն էր հետապնդում, և դա կոչվում էր քարկոծում: Համայնքից ինչ–որ մեկն այնքան ծանր մեղք էր գործել, որ, ըստ աստվածային օրենքի, ժողովուրդն այլևս չէր կարող նրան հանդուրժել և իր մեջ պահել, առանց ինքն իրեն վնասելու: Հանուն Իսրայելի մաքրության ու սրբության՝ հարկ էր ջնջել անպատվաբեր արատը և արյուն թափել: Արյունը, սակայն, կյանքի սրբավայրն էր, նույնիսկ եթե դա լիներ մի մարդասպանի արյունը: «Մի՛ սպանիր» պատվիրանը միշտ և ամենուր ի զորու էր՝ առանց նվազագույն զիջումի կամ բացառության: Իսրայելում ոչ ոք իրավունք չուներ սպանելու կամ նույնիսկ այդ պաշտոնի համար որևէ մեկին նշանակելու: Միայն ժողովուրդը, որպես ամբողջություն, ի խնդիր իր սեփական պաշտպանության, իրավասու էր ոչնչացնել ամբարշտին, նույն ձևով, որ անում էր թշնամուն մի արյունալի պատերազմում: Այդ իսկ պատճառով աստվածային կանոնակարգը թելադրում էր, որ մի բնակավայրի բոլոր տղամարդիկ պետք է հավաքվեին քաղաքի դարպասների առաջ, ուր յուրաքանչյուրը և ամենքը միասին, ձեռքները սուր քարեր բռնած, քարկոծեին մնասատուներին մինչև մահ: Թափված յուրաքանչյուր արյուն, ում էլ որ պատկաներ, հանուն վրեժխնդրության աղաղակելու էր դեպի երկինք:

Բարուքն օրեցօր սպասում էր: Երեմիան էլ օրեցօր ուշանում էր: Քարավանի հետ նա անցնում էր անապատի միջով, այն հայտնի

ճանապարհի երկայնքով, որը կոչվում էր «ոսկու և խնկի ճանապարհ»: Սակայն ի՞նչ օգուտ կտար անհամբերությունն ու հուսահատությունը: Հնարավոր չէր առաջ շարժվել: Ոսկու և խնկի ճանապարհը խցանված էր վաճառականական գրեթե անվերջ քարավանների կողմից:

Երեմիան ամեն երեկո վաճառականների հետ նստում էր կրակի շուրջը: Նույնն անում էր նաև Բարուքը: Այդտեղ և այնտեղ՝ անապատում և Հեբրոնում, նույն բաներն էին պատմում ու քննարկում: Վաճառականները մեկնաբանում էին Նոփի պատգամաբերների կողմից ծանուցված արքայական հրովարտակները, որոնց համաձայն՝ արև–աստված Նեքավովը շնորհ է արել ողորմածաբար ավարտելու լույսի բաշխումը: Նպատակը, որ մարդացած արևի աստվածային լույսը հասանելի լիներ խավարում ապրող բոլոր ժողովուրդներին, իրագործվել էր: Բարի աստծու սիրտը տոգորված էր այնպիսի հորդառատ սիրով, որ որոշել է ցուցադրել Նու–Պտահի տաճարում այն հանդերձանքը, ինչը նա կրել էր Մեգիդոյի հաղթանակի օրը,— նախքան որ այն նվիրեր իր թիկնազորի աստվածություններին Բրանչիդայում:– Վաճառականների խոսակցություններն ու առարկությունները, սակայն, այնքան էլ կենտրոնացած չէին միայն Նու–Պտահի, փարավոնի և նրա արեգակնային էության վրա, որքան որ գիշերային երկնքում հայտնված այն նոր տեսարանի վրա: Այո՛, Մարդուկը՝ գիշերային երկնքի Յուպիտեր–աստղը[13], փայլում էր երկրի վրա իր ամենավառ ու նոր մարմնավորումով: Մարդուկ–Նաբուգոդոնոսորը[14] բարձրացել էր Բաբելոնի գահին՝ Ետեմենանկի սուրբ աշտարակի ստվերում: Այս երիտասարդ մարդն ինչքա՞ն շատ էր արտացոլում աստվածության լրիվ առանձնահատկություններն ու բնութագրերը, որոնք նա կատարյալ կերպով էր մարմնավորում: Կլանող ճառագայթներն ու արագ գործունեությունը պատկանում են արևի բնությանը, իսկ նպատակասլաց լուսավորությունն ու ծրագրավորումը հատուկ են աստղի էությանը:

---

[13] Հայերեն անվանումը՝ Լուսնթագ:

[14] Մարդուկ (Մարդովք, Բել), Բաբելոնիայի թագավորության գլխավոր աստվածն էր, ինչպես նաև Բաբելոն քաղաքի հովանավորը: Մարդուկն ունեցել է տարբեր մարմնավորումների դրսևորումներ: Այսպես՝ Նինուրտոն խորհրդանշել է Մարդուկի հզորությունը, Ներգալը՝ մարտը, Էնլիլը՝ իշխանությունը: Բաբելոնի մի շարք թագավորներ իրենց անունը ստացել են Մարդուկի անունից հետո, ինչպես Նաբուգոդոնոսորի պարագայում, Մարդուկ–Նաբուգոդոնոսոր: (Ծնթ. թարգմանչի):

Վաճառականները մտահոգ շարժում էին իրենց գլուխները՝ հարբած իրենց իմաստությամբ: Ցերեկային երկնակամարին պատկանող մի հերոս կկարողանար կառչած մնալ պարտված թշնամու կրունկներին, կոչնչացներ նրան և ապա իր հաղթական աստվածների ցայտուն միջամտությամբ իրեն կենթարկեր ամբողջ երկիրը՝ հասնելով մինչև Եգիպտոսի գետը: Մարդուկ–Նաբուգոդոնոսորը, սակայն, ամենևին դա չկատարեց, այլ, ճիշտն ասած, նա դա կատարեց իր աստղային եղանակով, մեղմորեն և աննկատելի կերպով, հակառակ իր երիտասարդ տարիքին: Նրա կոնաձև սաղավարտներով հեծյալները հայտնվում էին փոքր թագավորների պատկանող երկրներում: Նրանք միայն սպառազինված օգնություն էին մատուցում խիստ խաղաղասեր այն մարդկանց, որոնք ցմփոր վաճառականներ էին, արտադրողներ, ներմուծողներ և արտահանողներ:

Այդ մեծ մարդը Նաբուգոդոնոսորն էր: Առևտրականները միաձայն այն կարծիքին էին, որ նրա իշխանության ժամանակաշրջանը խոստանում է դառնալ մի լավ առևտրաշրջան: Պատերազմի մի հերոս, հզոր և բարեպաշտ, մի աստված, որը հրճվում էր իր աստվածության մասին մտածելով, որը, ի զարմանս իր պալատականների, նրանց առաջ ներկայանում էր ոչ թե մականով, մտրակով և սրով, այլ ոսկյա բահով, որն ընտրել էր իբրև իր սեփական խորհրդանիշը: Այսպիսով նա ներկայանում էր ոչ թե որպես աշխարհի նվաճող, այլ որպես աշխարհի նոր կառուցող: Այն խոսքը, որով նա դիմում էր ազգերին, հետևյալն էր. «Բաբելոնի խաղաղությունը»:

Հազարավոր բահեր հարթեցնում էին հողը՝ նոր ճանապարհներ կառուցելու համար, ծռում և առաջնորդում էին գետերի հոսանքները ջրանցքների միջով: Մարդուկի սառը ուժը գալիս էր գիշերային երկնքի սրբազան գիտությունից, որը նա կիսում էր աստվածների հետ, և որը շատ վստահելի էր: Քանզի աստղերը,— երեկոյան կրակի շուրջը հավաքված վաճառականների կարծիքով,— ճշգրիտ գուշակներ են, որոնց մեջ չկան կեղծ մարգարեներ: Երբ Բարուքը Հերրոնում ցանկանում էր խոսք բացել ճշմարիտ մարգարե Ուրիայի, Հովակիմ թագավորի և Հուդայի այդ ժամանակվա իշխանությունների մասին, բոլորն էլ իսկույն պապանձվում էին, երկչոտ նայում էին իրենց շուրջը և ապա անմիջապես սկսում տարբեր բաների մասին խոսել:

Մի անգամ, գիշերը շատ ուշ, Բարուքը, որ քնում էր գլուխը թամբի վրա դրած, փողոցների խաչմերուկում, արթնացավ աղմուկից և ջահերի լույսերի փայլից: Այդ ընթացքում տեսավ Քուշից եկած մարդիկ, որոնք ապրանքներ էին բեռնաթափում ծնկի իջած ուղտերի վրայից: Աչքերը լայն բացելով՝ նա իր կողքին կանգնած տեսավ Երեմիային, որը կլանված էր իր մտորումներով: Բարուքը տղամարդու զսպվածություն դրսևորեց: Նա գիտեր, որ իր ուսուցիչն իրեն միշտ հեռու է պահել ամեն տեսակ զգացական արտահայտությունից: Թաքուն կերպով բացակայելը և հանկարծակի հայտնվելը հատուկ էր Երեմիային. դա նրա հրաժեշտ տալու և վերադառնալու ձևն էր: Բարուքն այնպես ձևացրեց, որպես թե ոչ այնքան երկար, այլ իրարից միայն մի քանի օր բաժանված են եղել, և ամեն ինչ ընթացել է ճշգրիտ կերպով այնպես, ինչպես որ պայմանավորվել էին: Առերևույթ հանգստացավ մի քիչ, ապա վեր ցատկեց, թամբեց էշերին, ամրացրեց փալանները, այնուհետև ազդարարեց.

— Երբ արևը սկսի ծագել, մենք կլինենք քաղաքում...

Բայց նախքան թամբին նստելն այդ երկու տղամարդը հուզված հայացքով նայեցին միմյանց: Երեմիան թողել էր նիհարակազմ և գունատ դեմքով մի երիտասարդի, որի նոսր մորուքն անկանոն կերպով աճել էր այտերի երկայնքով, այժմ իր առաջ ամրակազմ մի մարդ էր, մի փոքր գեր, որի վերին շրթունքն ըստ սովորության ածիլված էր, իսկ մորուքն էլ՝ սրածայր: Բարուքի աչքին, սակայն, Երեմիան զարմանալիորեն ավելի էր փոխված: Հնարավո՞ր էր արդյոք, որ այդ երկար թարթիչներով մարդը, որը պարմանուհու դեմքի նման նուրբ մաշկ ուներ և շիկնում էր շարունակ՝ համաձայն իր սրտի զգայուն տրամադրության, Նոփում անցկացրած տարիների ընթացքում այդքան փոխված լիներ և կնճիռներ ձեռք բերած: Եվ արի տես, որ այդ մարդու, ում դեռ մայրը շարունակում էր կոչել՝ «իմ կրտսեր երեխան», հոնքերն արդեն սկսել էին սպիտակել, և այտոսկրերը՝ դուրս ցցվել: Մեծ հակաճառությունից և հերոս արքայի մահից հետո ի՞նչ դժոխքների մեջ ես ընկել դու, Երեմիա, այնտեղ՝ Եգիպտոսում: Սակայն այն մարդը, ում տալիս եք այս հարցը, խստորեն իր մեջ էր պահում դժոխքի փորձառությունը: Ամենտիի անմաքուր տեսիլքների պատմությունները երբեք պիտի չլսվեին նրա շուրթերից: Նույնիսկ Բարուքը՝ նրա վաղեմի վստահելին, ոչինչ չէր իմանում «Որմնաքանդի»

և «Հետ նայողի» մասին, քննիչների և սարսափ ներշնչողների, դժբախտների, երանելիների և Զենուայի փրկված կերպարանքի մասին: Երեմիայի հայացքն արդեն վաղուց շեղվել էր իր աշակերտից և ուղղվել դեպի հյուսիս, ուր լիալուսնի ներքո նշմարվում էր Երուսաղեմի լեռնային տեղանքը:

* * *

Քաղաքի ամուր դարպասը, որտեղից բացվում էր «ոսկու և խնկի ճանապարհը», կոչվում էր «Հովտի դարպաս», քանի որ այն իշխում էր Բեն-Հինոմի հովտի վրա: Այդ առավոտ, զարմանալիորեն, այն արգելափակված էր արքայական թիկնազորի կրկնաշարք հսկողության ներքո: Այդ իսկ պատճառով Երեմիան և Բարուքը ստիպված էին շրջանցել այդ մուտքը և գնալ դեպի արևելք՝ անկանոն կերպով կառուցված աշտարակներ ունեցող պարսպի երկայնքով, որպեսզի հասնեն մոտակա դարպասին: Դա «Խեցիների» դարպասն էր, որը հարավային կողմից պարսպի միջով անցնող մուտքն էր դեպի Երուսաղեմ: Դիտարանների և ամրոցների միջոցով հսկողության տակ առնված Խեցիների դարպասի առաջ՝ դեպի ներքև թեքության վրա, տարածվում էր մի լքված ու անմխիթար հողաշերտ, որից գալիս էր դարպասի անվանումը: Այդ վայրն աղբանոց էր, ուր ամբողջ քաղաքն իր ջարդված իրերն ու կոտրված սպասքն էր գցում: Ամեն տարի այդտեղ կուտակվում էր բեկորների հինգ բուրգ, որոնց շուրջն առավոտից երեկո խռնված էին մուրացիկ կանանց ջանադիր խմբեր, որոնք ագռավների նման խառնում էին բեկորներն ու լաթերը՝ գտնելու համար որևէ պիտանի առարկա կամ հարուստների կողմից կորցրած որևէ թանկարժեք զարդեղեն: Զարմանալի չէր, որ այդ վայրը, իր անարժան հանգամանքից ելնելով, համարվում էր վատահամբավ: Դա, սակայն, նախընտրելի մի վայր էր չար ոգիների համար, թափառական ժողովրդի համար, ում թույլ չէր տրվում մուտք գործել քաղաք: Դա նաև անձնասպանների վայր էր, որոնք այդտեղ գտնում էին որոշ հանգուցավոր ժանտաթզենիներ, որոնցից շատ հարմար էր իրենք իրենց կախելը: Այդտեղ նաև իրականացվում էին դատարանի վճիռները

քարկոծումների վերաբերյալ, և դա ինքնին հասկանալի էր: Այդ հողակտորն ուներ բազմաթիվ անուններ, որոնցից «Հակելդաման» ամենից տարածվածն էր՝ «Արյան արտ» կամ «Արյան ագարակ»: Ժողովրդի երևելիները, սակայն, որոնք, հոգևոր սովորության համաձայն, նախընտրում էին մեղմ արտահայտությունը, քան մերկ ճշմարտությունը, այն պարզորեն անվանում էին «Բրուտագործի արտ»: Վաճառական խղճուկ տաղավարների շարքում կար նաև երկու խեցեգործարան, ուր մեծ էր կոտրված սպասքը նորերով փոխարինելու պահանջը:

Երբ Երեմիան ու Բարուքը հասան պարսպի վերջին մուտքի մոտ, սարսափով տեսան, որ Խեցիների դարպասը նույնպես հսկողության տակ էր առնված զինյալների կողմից: «Արյան արտը», սակայն, ողողված էր մարդկային հոծ բազմությամբ: Նրանք կապում են իրենց կենդանիները պատի օղակաձև երկաթին, որի կողքին մի պահակախումբ էր, որը ներքևի խճողվածության մասին տալիս է իրենց մի հակիրճ ու կոպիտ բացատրություն. «Նրանք սպասում են թագավորին»: Կասկածելով մի ինչ-որ դժբախտություն՝ նրանք շտապ մոտենում են այնտեղ: Առավոտյան արևը շողում էր Ձիթենյաց լեռան կատարին: Լույսի աշխույժ ծվեները վետվետում են մայրիների, սյունակների, փոքր գմբեթների և արքայական պարտեզների շատրվանների վրա: Նրանք մուտք են գործում հուզված ամբոխի մեջ, սակայն տևապես դուրս են մղվում այդտեղից: Նրանց ականջին են հասնում ծաղրական խոսքեր: Երեմիան գիտակցում է, որ Երուսաղեմի ժողովուրդը Հովսիայի օրերից ի վեր հսկայական փոփոխություն է կրել: Նրանց դեմքերը, ինչպես և իրը, որոնց վրա Տիրոջ հոգու դրոշմը կար, այժմ առաջացնում են հակակրանք, հեգնանք և ատելություն: Դրա փոխարեն ստոր, կոպիտ, անշնորհք և դաժան դեմքեր, նախկինում բոլորովին արհամարհված, ձեռք են բերել ակնհայտ հարգանք: Ատելի լինելու զգացումն ուժ է տալիս Երեմիային: Ազնվականի իր առանձնաշնորհյալ իրավունքով դեմ է դուրս դալիս արգելքներին, մինչև որ ի վերջո կանգ են առնում հավաքվածների առաջին շարքում: Թագավորի թիկնապահները ձիգ պարաններով շրջապատել էին Խեցիների դարպասի առջևի ընդարձակ տարածքը: Կենտրոնում՝ փայտամածի վրա, դրված էր թագավորի բարձր աթոռը, ուր հարկ էր բարձրանալ աստիճանների վրայով: Պալատական իշխաններից և կառավարիչներից

ոմանք արդեն այդտեղ էին և սպասում էին իրենց տիրոջը: Նրանք, համարյա բոլորը, նոր մարդիկ էին: Երեմիան ճանաչում էր նրանցից միայն երկուսին՝ մշտապես վատ տրամադրություն ունեցող Եղնաթանին, որը կատաղի մի ռազմիկ էր և կրում էր մանուշակագույն թիկնոց ու սաղավարտ: Մյուսը՝ Հովակիմի զարմիկն էր, որը Հովսիայի կենդանության օրոք առիթը երբեք բաց չէր թողնում իր անարգալից վերաբերմունքը ցուցաբերելու այդ մեծ արքայի հանդեպ: Դավթյան տան այդ իշխանն իր դուրս ցցված կզակով, բարակ և սեղմված շուրթերով՝ ի նշան իր չընդհատվող բարկության, կոչվում էր Հերախմե'էլ: Եղնաթանն ու Հերախմե'էլը կանգնած էին գահի երկու կողմերում:

Բարուքը հանգիստ շունչ քաշեց: Նախապատրաստական աշխատանքներից ամենևին չէր երևում, որ քարկոծման պիտի ենթարկեն մի մարդու: Դա վերաբերում էր թագավորի անակնկալ միջոցառումներից մեկին, որով նա սիրում էր անհամբեր վիճակի մատնել իր ժողովրդին: Հավանաբար նա մտադիր էր իր գահի բարձունքից դատավորի և հռետորի դեր խաղալ, քանզի թագավորական իր պաշտոնում ոչինչ չէր ուրախացնում նրան այնքան, որքան իր սեփական ձայնը հնչեցնելը և ունկնդրելը: Երեմիան ու Բարուքը հազիվ էին գրավել իրենց տեղերը, երբ Խեցիների դարպասի միջով ներխուժեց թիկնապահների մի խումբ՝ տեղ բացելով իրենց կողմից հսկվող մի միջանցքի: Արդեն հասել էր Եղիակիմ–Հովակիմ արքան: Վերջինս տևապես վախի մեջ էր, որ կսպանեն իրեն, դրա համար էլ ոչ մի քայլ չէր անում՝ առանց շրջապատված լինելու իր զինյալներով: Հովակիմը շտապեց մի ոստյունով տեղ գրավել իր փայտյա գահին: Դա իր հորը նմանվելու և նրան ընդօրինակելու մի անհաջող փորձ էր: Այն հորը, ում ինքը դավաճանել էր և նրա գործը խեղաթյուրել: Նրա՝ տպավորիչ և վեհաշուք կերպով ներկայանալը Երեմիայի վրա այն տպավորությունը թողեց, որ նրա խեղճ ու հիվանդոտ մարմինը փորձում էր պարզապես ցույց տալ կենսունակություն, մինչդեռ իրականում դա այդպես չէր: Նոր Դավիթ ձևանալու ապարդյուն ջանքը շուտով պրկված լարի նման կտրվելու էր: Բացի այդ, նրա հանդերձանքն էլ անհաճո կերպով չէր պատշաճում նրա մեծամիտ հավակնությանը: Դավթի որդիների երկնագույն կապույտ վերարկուի ներքո Հովակիմը կրում էր եգիպտական աստվածներին հատուկ շերտավոր գոգնոց, որը

ծածկում էր ազդրերը, և ուսերի վրա էլ՝ գունավոր օձիք: Նրա բարձր ու ճչացող ձայնը հնչեց այդտեղ հավաքված բազմության վրա.

— Նկատի ունեցիր, Երուսաղեմ, որ թագավորն իշխում է քեզ վրա և առաջնորդում քեզ: Նա վերացնում է այն, ինչը վնասում է քեզ, և հաստատում այն, ինչը քեզ օգտակար է: Նա փոխում է դատավճիռը հօգուտ քեզ, քանզի աշխարհում դա է պահաջում քո շահը: Նա իր վրա է վերցնում ամբարիշտների արյունը: Այո՛, ամբարիշտ են բոլոր նրանք, ովքեր խռովարար են և ապստամբ, ովքեր Տիրոջ անունով իր օծյալի և նրա կառուցած տան դեմ են ելնում: Թագավորը, սակայն, չի հրաժարվի, քանզի դու, փոքր Հուդա, դու պետք է ժողովուրդների մեջ մեծ լինես և ազատ...

Այդ պահին ցնծության բուռն աղաղակ բարձրացավ բազմության միջից: Հովակիմի զգոն աճպարարությունը դիպել էր ժողովրդի զգայուն կետին՝ սնապարծության և ամենաէժան ոգևորության, որոնք գործի էին դրվում՝ ղեկավարելու համար ամբոխներին: Քանզի Ամենտին թաքնված է մարդկային բոլոր էակների մեջ, բայց հատկապես մարդկանց բազմության մեջ: Մահացածներն ուզում են լսել, որ իրենք կենդանի են, փոքրիկներն ուզում են լսել, որ իրենք մեծ են, իսկ ներքևում գտնվողները՝ որ իրենք հաղթանակել են: Ցնծության պոռթկումների վրա ավելի ուժեղ հնչեց Հովակիմի ձայնը.

— Երուսաղեմ, ո՞վ է ուզում քեզ դուրս շպրտել քո ժառանգությունից: Ո՞վ է ուզում ծառայեցնել քեզ քո թշնամիներին այն երկրներում, որոնք քեզ ծանոթ չեն: Իհարկե, դա Տերը չէ, որը բնակվում է վերևում՝ երկնքում, և քեզ բերել է այստեղ՝ այս երկիրը, այլ դա նրանք են, որոնք միայն շուրթերի վրա են կրում տևապես Տիրոջ անունը, բայց իրականում ատում են քեզ և ուզում են նվաստացած տեսնել քեզ՝ իբրև կեղտը բոլոր ժողովուրդների: Բաց արա նրանց գլուխները, և նրանցում չես գտնի Տիրոջը, այլ կգտնես միայն ատելություն՝ քո և քո արքայի նկատմամբ...

Ձայրույթի աղաղակը, որը բարձրացավ ամբոխի կողմից, այնքան ուժգին էր և կրկնվող, որ խլացրեց նույնիսկ Հովակիմ արքայի ճչացող ձայնը: Երեմիան, որի ամբողջ արյունը խփեց քունքերին, բռնեց անվտանգության պարանը և փորձեց պոկել այն: Բարուքը, սակայն, ամուր կերպով բռնեց նրա ձեռքերը, որպեսզի զերծ պահի նրան այդ խելագար արարքից: Այդուհանդերձ, շուտով երկուսն էլ սարսափից քարացան.

այնտեղ ներկայացավ մի այնպիսի ահավոր տեսարան, որը ոչ ոք չէր կարողացել կանխել: Կարճազգեստ տղամարդիկ բերեցին կիսամերկ և պարաններով լրիվ կապված մի մարդու և նետեցին Հովակիմի առաջ: Հնարավոր չէր հասկանալ՝ մարդկային կերպարանքով այդ փաթեթը կենդանի էր արդյոք թե մեռած, գիտակցությունը տեղն էր թե ոչ: Երեմիան լարեց իր նայվածքը և հանկարծ ճանաչեց Տիրոջ սրբազան բարեկամին՝ Ուրիա բեն Շեմայահին, որին ինքը մի քանի ամիս առաջ Նոփում որդիական ակնածանքով մխիթարել էր ու խնամել: Հիմա, սակայն, Տիրոջ այդ մարդը համարյա անճանաչելի էր դարձել. նա, ով մի ժամանակ իրեն՝ Երեմիային հավատ էր ներշնչել և վստահություն իր ճշմարիտ ընտրվածության վերաբերյալ: Կարճազգեստ մարդկանց կողմից ամենայն կոպտությամբ իր ծնկների վրա հատակին շպրտված մարդն անշարժ մնաց թագավորի առջև: Տիրեց քար լռություն: Դեղնագույն և ոսկոր դարձած մարդկային այդ կերպարանքը ոչ հառաչում էր և ոչ էլ ողբում, այլ թվում էր բոլորովին անտարբեր: Նրա բարձր գլուխն ասես քնկոտությունից թեքվել էր ձախ ուսի կողմը: Ուրիան անհուսալիորեն պետք է մահանար հանուն Աստծու խոսքի: Արդ, հետևից ե՞րբ էր շպրտվելու առաջին սրածայր քարը նրա գլխին: Բայց ո՞վ կարող էր ծրագրած լինել այդ վայրագությունը, որն ավելի սարսափազդու և դիվային էր դարձնելու մի արդար մարդու սպանությունը: Ընտրությամբ կազմված քարկոծողների խմբին չեն գալիս միանալու այն մարդիկ, որոնք անմեղ մեկին քարկոծելով պիտի վերացնեին Իսրայելի միջից: Միակ անձը, որ վեր է բարձրացնում ձեռքը, լինում է թագավորը: Նրան մեկնեցին մի լայնաբերան սուր: Այն, ինչ որ թագավորն արեց, մի սովորական մահկանացուի պատահական արարմունքը չէր՝ մղված ատելությունից, վախից, զառանցալից հպարտությունից կամ վրեժխնդրությունից: Թագավորի կատարածը նշանակում էր մի բան, որն իջնում է վերևից դեպի ներքև. դա մի կայծակ է, որը երկար ժամանակ լարված վիճակում պատրաստ է եղել երկնքում: Դպիրներն արդեն սկսում են Թագավորաց մատյանում արձանագրել պատահարները բոլոր ժամանակների համար: Եվ քանի որ երկրում դահիճներ չկային, հետևաբար ինքը՝ թագավորը պիտի ստանձներ դահճի դերը՝ սպանելու համար գլխավոր թշնամուն՝ խոսքի պատգամաբերին, քանզի ուր առկա էր թագավորի խոսքը, այնտեղ այլ

խոսք չէր կարող լինել: Հովակիմը ոտքի կանգնելով դեն գցեց դավթյան իր թիկնոցը և քննեց իր սրի սրությունը: Այնուհետև բարձրացրեց արդարության սուրը և պտտեցրեց իր գլխավերևում, որպեսզի ցույց տար ժողովրդին իր կարծեցյալ ուժը, ապա իջեցրեց այն իր առաջ գցված ոսկրացած կերպարանքի վրա: Վրիպած հարվածն իջավ մարգարեի ուսին, որը ներկվեց հորդ արյունով: Ուրիան ցավից հառաչեց կարճ և խորը: Հովակիմը սարսափահար և այլանդակված դեմքով հետ քաշվեց, սկսեց երերալ, որպես թե ուշագնաց լիներ, սուրը ձեռքից դեն գցեց և վայր չընկնելու համար դեմքին սեղմեց բուրումնավետ օծանելիքով մի փոքրիկ սրվակ: Այդ ընթացքում զինվորներից մեկը վերցրեց սուրը և զոհի գանգը ճեղքող երկու հարվածով վերջ դրեց նրա կյանքին: Թագավորն ու իր պալատականներն ավելի շտապ կերպով, քան եկել էին, թողեցին հեռացան այդ վայրից: Կարեկցող անձինք պատանքով (Tachrichim) փաթաթեցին մարգարեի արյունաքամ դին և քարշ տվեցին դեպի Խեցիների դարպասի կողքի աղքատների գերեզմանատունը: Շուրջանակի դրված անվտանգության պարանը հանում են տեղից: Ամբոխն ընդհանուր առմամբ ցրվում է: Տախտակամածի մոտ՝ լճացած արյան շուրջը հավաքվում են վշտահար, լռակյաց կամ լացող մարդիկ: Երեմիան, անշարժ կանգնած իր տեղում, մտածում է, հա մտածում:

* * *

Հանկարծ նա վեր բարձրացրեց գլուխը: Նրա հայացքն ընկավ խեցեգործության տաղավարներից մեկի վրա:

— Ընծայաբերման համար մի կուժ... Եվ դրանցից ամենամեծը,— ասաց նա դժվարությամբ:

Խելացի Բարուքն անմիջապես հասկացավ, որ այդ հրամանը չի բխում լոկ նրա բզկտված ու անօգնական սրտից, այլ մեծ Պատվիրատուի կամքից: Շտապեց բրուտագործի մոտ և գնեց ամենամեծ կուժը: Դա մի շատ բարձր ու լայնափոր անոթ էր: Այդպիսի անոթներ համայնական ընծայաբերումներ կատարելու համար իրենց հետ տաճար էին տանում մի շարք ուխտավորներ որոշ հեռավոր գյուղերից: Անոթի կավը թրծվել էր

այնքան, մինչև որ այն ստացել էր քարի կարծրություն, այն ողողկ էր և զարդարված սև ձուլվածքներով ու ոսկեզօծ եզերքներով, որը կարող էր պարունակել երկու դույլ գինի: Դատարկ կուժն այնքան ծանր էր, որ Բարուքը մեծ ջանք թափելով հազիվ էր կարողանում քարշ տալ: Երեմիան, սակայն, որի աչքերը լցված էին արտասուքով և շնչում էր հառաչալից, երկու ձեռքով հեշտությամբ վեր է բարձրացնում ընծայաբերման հսկա կուժը և դնում իր գլխին՝ նման ջուր բերող կանանց: Բարուքը զարմանքից ապշում է՝ ականատես լինելով մարմնական այդ թաքնված ուժին, որը չէր կարող լինել միայն իր ուսուցչի սեփական ուժը: Նա ուշադիր կանգնած է մնում Երեմիայի թիկունքում, որպեսզի օգնության հասնի նրան այն դեպքում, եթե հանկարծ Տիրոջ ուժը լքի նրան: Վերջինս հանգիստ և առանց հոգնելու տանում է համայնական ընծայաբերման սափորը, որն այլապես հազիվ թե մի քանի մարդ միասին կկարողանային քարշ տալ: Միևնույն ժամանակ նա դանդաղ պտտվում է իր առանցքի շուրջը, ինչպես մի հմուտ պարող կամ աճպարար, որը տոնավաճառներում հիացում է պատճառում ներկաներին: Այդ տարօրինակ վարմունքի պատճառով էլ իր շուրջը տևապես հավաքում է բազմաթիվ մարդկանց: Շատերն սկսում են ծիծաղել ու ծաղրել նրան: Նրանց համար նա մի իսկական խելագար էր, մի անվնաս հիմար, որի հետ կարելի էր զվարճանալ: Խենթի հետ զվարճանալն այդ պահին հանգստանալու լավագույն միջոցն էր: Բայց հանկարծ շուրջն ամեն ինչ կանգ է առնում, տիրում է սարսափելի լռություն, երբ խենթը բացում է իր դողդղացող շուրթերը և հնչում անծանոթ կամ մոռացված մի ձայն, որ անաթովթցի մարգարեի ձայնն էր: Մարդը կարծես թե ամբողջությամբ կլանված էր իր ձայնի մեջ, որը ծառայում էր նրան իբրև արտահայտվելու միջոց: Նրանում չկար ոչ խստություն և ոչ էլ աննկարագրելի պոռչտուք: Այն հնչում էր խորը, թավշյա և լիարժեք, թեև ցնցված ներքին հառաչանքներից: Երեմիայի այդ ձայնը հրավիրում է ժողովրդին.

— Թագավորներ, իշխաններ, քահանաներ, այս քաղաքի տղամարդիկ և կանայք, եկեք ինձ հետ՝ Տիրոջ գործը տեսնելու, Տիրոջ խոսքը լսելու...

Այն, ինչը սկսում է իսկույն հմայել մարդկանց, ավելին էր, քան պարզ հետաքրքրությունը՝ ենթադրաբար քահանա ծնված այդ մարդու նկատմամբ, որը խոնարհեցնում էր ինքն իրեն և աճպարարի նման պահում

կավե հսկա կուժն իր գլխին՝ առանց կորցնելու նրա հավասարակշռությունը: Դա նաև ավելին էր, քան այդ նոր ձայնի սրտահույզ ուժը: Այդ հմայքը բխում էր այդ մարդու ունեցած ամեհի և խենթ քաջությունից, որն զգում էին նույնիսկ այդ օրվա թագավորական իշխանության կրքոտ կողմնակիցները: Դեռ մեկ ժամ իսկ չանցած՝ ժամանակի երիցագույն և հռչակավոր մարգարեի գլխատումից, արդեն իսկ մեկ ուրիշը մեջտեղ է գալիս՝ անզուսպ խելագարությամբ ծանուցելու համար Աստծու վճիռը, որը, անշուշտ, Հովակիմի համար ոչ մի լավ բան չէր պարունակում: Թվում էր, թե սպանվածի հոգին ամբողջ արագությամբ փոխել էր պարզապես իր մարմինը, որպեսզի, ի հեճուկս թագավորի, աննահանջ կերպով շարունակեր իր մարգարեական քարոզչությունը: Այդ խիզախությունը պապանձեցնում էր նույնիսկ բռնություն սիրող ամբոխին: Պատերազմի հերոսները կրում են զենք ու զրահ, նրանք հարյուրավորներով են՝ դասավորված իրենց շարքերում, բայց որտե՞ղ են այս միայնակ մարդկանց զենքերն ու վահանները: Եվ ահա պատահում է այնպես, որ բազմաթիվ բութ և բիրտ հոգիներում բռնկվում է այն հատուկ խիզախությունը, որը նկատի է առնվում պատերազմի ընդարձակ դաշտում և արժանի է հիշատակության: Իրականում դա հոգու արիությունն ու խիզախությունն է:

Սկզբում միայն մի քանի աղջիկներ ու կանայք են հետևում Երեմիային: Այնուհետև տարեց տղամարդկանց մի խումբ է գալիս վարանումով, որոնք ակնհայտ կերպով կարողանում են հաղթահարել իրենց վախը՝ ունկնդրելու համար թաքնված մի խոսք, որին երկար տարիներից ի վեր ձգտում էր իրենց ճնշված սիրտը: Նրանց մեջ կային նաև սոված ու թշվառ արարածներ, որոնք բավարար լաթեր իսկ չունեին՝ ծածկելու համար իրենց մերկ մարմինը: Վերջում գալիս են միանալու ներկաներին նրանք, ովքեր մնացել էին Արյան արտում, հետաքրքրասեր, կասկածոտ և նույնիսկ թշնամական հայացքով մարդիկ: Արդյոք այս մարդը՝ այս պարող խելագարը, մեկն էր նրանցից, որոնք չէին ուզում, որ փոքրիկ Հուդան մեծանա և ժողովուրդների մեջ հզոր դառնա:

Տասը քայլ առաջ, դեռ Խեցեղեն դարպասին չհասած, Երեմիան կանգ առավ: Նրա հետևում սպասում էր ամբոխը՝ մեծ ակնկալիքներով: Նա իրար սեղմեց իր թարթիչները և սկսեց երերալ, որպես թե խորտակվելու լիներ շալակած կժի բեռան տակ:

Կատաղի բարկությունից իսկույն կարմրագույն արյան նման շիկնեց նրա դեմքը: Ահռելի ուժով նա իր գլխից վեր բարձրացրեց կավեղեն հսկա կուժը և ապա շպրտեց դարպասի առաջ՝ սալահատակին. այն վերածվեց հազարավոր փշրանքների:

— Այսպես է ասում Զորաց Տերը,— լաց լինելով պոռթկաց նա բարձրաձայն,— պիտի խորտակեմ այս ժողովրդին և այս քաղաքը, ինչպես որ փշրվում է խեցեղեն այն անոթը, որն այլևս հնարավոր չէ վերականգնել...



«Երեմիան կոտրում է կավե կուժը»

ԳԼՈՒԽ ՏԱՄՆՈՒԹԵՐՈՐԴ

ՈՏՔԵՐԸ ԿՈՃՂԻ ՄԵՋ

Տաճար գնալու ճանապարհին շատ քիչ թվով մարդիկ միայն հավատարիմ մնացին Երեմիային ու Բարուքին: Կուժը կոտրելու մարգարեական արարքը և դրա հետ կապված սարսափազդու խոսքն ահաբեկել էին հետաքրքրասերներին ու ծայրահեղ ձգտումներ ունեցող մարդկանց: Հովակիմի և նրա իշխանների այդ քաղաքում, ուր ամենուրեք վխտում էին նրանց լրտեսները, մատնիչներն ու բամբասողները, վտանգավոր էր Երեմիայի կողքին տեսնվելը: Արդյոք երբևէ պատահե՞լ էր, որ որևէ մեկը նախկինում համարձակվեր նման ձևով մարգարեանալ մի քաղաքի մասին, որն անհիշելի ժամանակներից ի վեր հրճվում էր իր գոյությամբ և իր մեջ էր հյուրընկալում արարիչ Աստծու միակ բնակավայրն այս երկրի վրա: Եթե Տերը լքեր Երուսաղեմը, դա կնշանակեր, որ Նա հրաժարվում է անձամբ ինքն իրենից: Նա, ի վերջո, երկրի վրա իր ունեցած միակ տաճարի միջոցով էր կապված իր քաղաքի հետ թե՛ կյանքի և թե՛ մահվան պարագայում: Եթե խորտակելու լիներ Երուսաղեմը խեցեղեն մի անոթի նման, այդպիսով Նա կդառնար անօթևան, կմնար առանց զոհաբերության, առանց աղոթքի և նույնիսկ առանց անվան, քանզի քահանայապետն այլևս Սրբարանում չէր կարող երկյուղալից շշնջալ Նրա անվան չորս սրբազան հնչյունները: Երուսաղեմի անկումը չէր կարող այլ բան լինել, քան Տիրոջ սպանություն հենց ինքն իր կողմից: Հպարտ մայրաքաղաքը Աստծու և Երուսաղեմի այդ փոխադարձ և անքակտելի կապի մասին բավականին տեղյակ էր: Զուր տեղը չէր, որ դա հաճախ քարոզվում էր բեմերից: Բարեբախտաբար, Տիրոջ ոչ բոլոր մարդիկ էին նման Ուրիային՝ այդ հոռետեսին և տխրահռչակ քարոզչին, որն իր արյամբ էր քավել իր արյունալի սպառնալիքները: Նրանց մեծ մասը քահանայական

բարեսիրտ հոգիներ էին, որոնց շուրթերից հոսում էին միայն քաղցրահունչ խոսքեր՝ խոստանալով պայծառ ապագա: Պետք է հարց տրվի, թե մարդն ինչպես պիտի ապրի, աշխատի, Աստծուն ծառայի, երբ լսի, որ ինքն ու յուրայինները վաղվա օրը պիտի ջարդվեն ու փշրվեն, ինչպես թրծված կավե մի անոթ: Հետևաբար, կամ պիտի ամբաստանի անոթը ջարդողին, կամ էլ պիտի մոռանա նրան, որպեսզի չընկնի նեղության ու դժբախտության մեջ: Երբ նրանք՝ Երեմիան ու Բարուքը, մտան արտաքին գավիթ, իրենց հետևորդների քանակը զգալիորեն նվազել էր, մնացել էին հազիվ մի տասնյակ աղքատ ու տարեց մարդիկ:

Բարուքը երկյուղով լցված քայլում էր Երեմիայի կողքին և կրքոտությամբ համոզում էր նրան, որ անհարկի կերպով չհրահրի հզորներին և չփնտրի Ուրիայի ճակատագիրը: Արդարև, դա կլիներ ինքնասպանության նման մի բան: Եվ, ի վերջո, այլևս ինչ բանի պիտի ծառայեր Ուրիայի սպանված մարմինն իր արյունաթաթախ հագուստների մեջ: Նույնիսկ Տերը, որի ի նպաստ նա պայքարել էր եռանդագին, այլևս ոչինչ չէր կարող սկսել նրա հետ և այդ պատճառով զզվանքով հեռացել էր նրա անմաքուր դիակից: Մահացած մի թագավոր, մեռած մի մարգարե և սատկած մի շուն միևնույն արժեքն ունեն:

Այն ամենը, ինչ ասում էր իմաստուն Բարուքը, բոլորովին ճիշտ էր: Եթե Երեմիան ընդհանրապես լսեր նրա հոգատար խորհուրդը, այդ դեպքում նրա դեմ ոչինչ հնարավոր չէր լինի առարկել: Այնուամենայնիվ, նա ամենևին չէր փորձում հրահրել հզորներին, ոչ էլ փնտրում էր վտանգն ու մահը: Բայց ինչ էր անելու: Նրա միտքը լեցուն էր հուզական շշուկներով, և Տիրոջ ազդակը նրա մեջ անքան ուժեղ էր, որ նրա միտքը թեև հասկանում էր նշանակությունը «մահվան վտանգի», բայց նրա հոգին՝ ոչ:

Շաբաթվա աշխատանքի վերջին օրն էր: Արտաքին գավթում շատ քիչ աշխուժություն կար: Քահանաներն արդեն վաղուց ավարտել էին առավոտյան զոհաբերություններն ու աղոթքները: Ժամանակը շատ արագ էր անցնում: Մոտենում էր կեսօրը: Ծառայողները դույլերով և ավելներով շտապում էին դեպի հրապարակ: Ղևտացիները հսկում էին մաքրության վրա, որպեսզի սպիտակ սալաքարերը շաբաթ օրվա համար անթերի կերպով փայլեին: Ընդարձակ սյունասրահների միջով

քայլում էին ավագագույն քահանաներն ու դպիրներն իրենց աշակերտների հետ: Լսվում էին ուսուցիչների և սովորողների ձայները, որոնք երբեմն ընդհատվում էին և ապա դարձյալ խճճվում աստվածաբանական նուրբ վեճերի մեջ: Թղթատարները տանում էին զամբյուղներով գրվածքների գլանակաձև փաթեթներ դեպի հետազոտողների խուցերը: Այլ գիտնականներ մտասույզ քայլում էին միայնակ, նուրբ ժպիտով, տարված խորաթափանց մենախոսությամբ: Ամեն ինչ նույնն էր, ինչպես միշտ: Ոչ ոք, որ երկրային եռուզեռից հեռանալով, ուշադիր հետևում էր հոգևոր մղումներին, երբևէ չէր կարող կռահել, որ Երուսաղեմի վրա գերիշխում է մի բացարձակ հավատուրացություն, որ տաճարի մեծերն ու Օրենքի ուսմունքը լռելյայն հանդուրժել էին Աստծու ընտրյալի և նրան նվիրված անձի սպանությունը: Այդտեղ՝ այդ սյուների տակ, բռնության բիրտ մեղքը չէր, որ տիրապետում էր, այլ հոգու նրբագույն մեղքը, երբ հմտորեն հետազոտվում էին խոսքն ու վարդապետությունը, սակայն առանց ընդունելու և հետևելու դրանց:

Երեմիան հետ մղեց Բարուքի բազուկը, որն ուզում էր կանխել նրա ինքնակործանումը: Մի կտրուկ ոստյունով բարձրացավ սյունազարդ ճեմասրահի աստիճանների վրա՝ առանց զբաղեցնելու գոյություն ունեցող ամբիոններից մեկը: Անմիջապես սկսեց թնդալ նրա հստակ ու նոր ձայնը ողջ նախագավիթում.

— Այսպես է ասում Զորաց Տերը՝ Իսրայելի Աստվածը. Ահավասիկ ես բերում եմ այս քաղաքի և Հուդայի բոլոր քաղաքների վրա այն ամբողջ չարիքը, որ մարգարեացել եմ նրանց դեմ: Քանի որ նրանց իշխանները մարդասպաններ են, նրանց քահանաները՝ խաբեբաներ, որոնք չեն լսում իմ խոսքը...

Սյունազարդ նախասրահում քայլող կրթված մարդիկ և ժողովուրդը կանգ առան՝ սարսափահար շրջվելով պոռթկացող ձայնի ուղղությամբ: Այնուհետև տեղի ունեցավ լռելյայն կուտակում: Երեմիայի շուրջը հավաքվողների քանակն արագ աճեց, գրեթե հարյուր մարդուց ավելի: Նրանք ապշահար լսում էին այն դաժան խոսքերը, որոնք օրը ցերեկով մեկը հանդգնում էր հնչեցնել սրբազան տաճարում: Եվ թվում էր, որ այդ հանդուգնը մի խելամիտ մարդ է և ոչ թե աճպարար, խենթ կամ խելագար: Ակնհայտ էր, որ նա չէր խոսում զառանցելով, այլ հստակ գիտեր,

թե ինչ է ասում, նույնիսկ եթե նրա ձայնն ընդհատվում էր ծննդյան երկունքի մեջ գտնվողի նման.

— Եվ այս քաղաքի վրա սարսափ պիտի բերեմ և այն ծաղրի առարկա պիտի դարձնեմ... Եվ բոլոր նրանք, ովքեր կանցնեն նրա միջով, պիտի ծաղրեն նրա թշվառությունը...

Երեմիան չկարողացավ ավելին ասել. մեկն իր ձեռքը դրեց նրա ուսին և թիկունքից փնթփնթաց.

— Փաշհուրի ականջը ծանր է լսում: Տիրոջ մարգարեն թող կրկնի իր խոսքը...

Երեմիան շրջվեց և իր դիմաց տեսավ Փաշհուրին՝ Շեմի առաջին խնամատարին, տաճարի բարձրագույն ղեկավարին, որը հսկում էր սրբավայրի կարգուկանոնը: Փաշհուրի փոքր ու կլոր աչքերը երկդիմի հաճությամբ նայում էին անակնկալի եկածին: Նրա ուղղանկյուն մորուքը դողում էր տարօրինակ կերպով: Երեմիայի աչքերը, սակայն, անշեղորեն կախված են մնում նրանից: Մեծ զայրույթով ճանաչում է դավադրին, որը, անկասկած, պետք է նախապես տեղեկացված լիներ Երուսաղեմի վրա Եղիակիմի վատոգի հարձակման մասին: Անմիջապես, սովորականից ավելի բարձրաձայն, բառ առ բառ կրկնեց Տիրոջ սպառնալիքը Փաշհուրի դեմքին, որպես թե խոսելիս լիներ մի իսկապես խուլ մարդու հետ: Աստիճանների վրա հավաքվածները զարմացած նայում էին, թե ինչպես է ավարտվելու պայքարը հզորի և անպաշտպանի միջև: Շեմի խնամատարը բավարարված շարժեց գլուխը.

— Հիմա լավ ըմբռնեցի քո քարոզած խոսքը...

Նա ավելի մոտեցավ Երեմիային, մինչ տաճարի կառավարիչն ու հսկիչները, որոնք միշտ ուղեկցում էին նրան, կանգնեցին նրա հետևում:

— Դու գիտես, անշուշտ,— ասաց Փաշհուրը զսպված ձայնով,— յուրաքանչյուր ոք, որ արտասանում է Եհովայի անունը, պետք է պատասխանատվություն կրի դրա համար... Անշուշտ, դու հիմա չպիտի փորձես գայթակղություն առաջացնել և կամ ընդդիմանալ, որը քեզ ոչ մի օգուտ չի բերի... այլ պետք է խաղաղությամբ և առանց ուշադրություն գրավելու հետևես այս մարդկանց, որոնք քո հետևում են, որպեսզի ավելի չվատացնես քո վիճակը...

Հանդարտությամբ արտասանած այս խոսքերից հետո Փաշհուրն առանց ողջույնի, անտարբերությամբ անհետացավ ճեմասրահում:

Տաճարի կառավարիչն առաջ անցավ, և հսկիչները շրջապատեցին Երեմիային: Դրանք կազմված էին ղևտացի ոստիկաններից, որոնք կաշեզոտիներով զինված լինելու պատճառով ժողովրդի կողմից կոչվում էին «գոտի ճոճողներ»: Խոհեմ անցորդները, բավարարված այդ անհավասար առճակատման ելքից, շարունակեցին իրենց զբոսանքը: Խեղճ ժողովուրդը ցրվեց վախեցած, որովհետև Երուսաղեմում իշխում էր բռնությունը: Շատ քչերը հետևեցին ձերբակալվածին, վերջում նրանցից մնաց միայն Բարուքը:

Նրանք ստիպված էին քայլել ամբողջ արտաքին գավիթի շուրջը՝ հասնելու համար Բենիամինի դարպասին, որը տաճարի լեռան հյուսիսային պարսպի մեջ էր: Այդ պարսպի լայն պատերում էին տեղադրված պահակների սենյակները, փաստաբանական գրասենյակները, բանտախցերն ու զնդանները, որոնք բոլորն էլ կառավարվում էին Շեմի խնամատարի կողմից: Հենց այդտեղ էլ կենտրոնն էր «գոտի ճոճողների», որոնց պարտականությունն էր հսկել տաճարն օր ու գիշեր, հաստատել արտաքին պահակախմբեր, կանխել անկարգություններն ամբոխի մեջ, հայտնաբերել տաճարն անարգողներին, ինչպես նաև ձերբակալել նյարդայնացնող մարգարեներին: «Գոտի ճոճողների» կողմից բոլոր ձերբակալվածների վերաբերյալ իրավունք էր տրվել Շեմի խնամատարին դատավորի արագ վճիռներ կայացնել, որը, բացի զանազան տուգանքներից, իրավունք ուներ միայն երկու ծանր պատիժ սահմանել՝ խարազանում և կոճղի մեջ սեղմում:

Պահակները Երեմիային հրեցին մի դատարկ սենյակ, որտեղ ոչինչ չկար, բացի մի խսիրից, ուր նա լուռ նստեց: Այնքան էր հոգնած ճամփորդությունից և օրվա սարսափելի իրադարձություններից, որ մի խոր քուն պատեց նրան, և նույնիսկ «գոտի ճոճողների» աղմուկն ու քրքիջն ի վիճակի չէին խանգարելու այն: Հանկարծ նրան վեր քաշեցին խսիրի վրայից: Նա չէր նկատել Փաշհուրի մուտքը: Շեմի խնամատարը նայեց նրան իր կոռնկի փոքրիկ ու գնդաձև աչքերով՝ ջանք թափելով բարեկամական երանգ տալ իր ձայնին.

— Անաթովթցի Քեղկիայի որդին վերադարձել է երկիր... Նա գնացել էր ու անհետացել՝ իր դյուրահավատ թագավորին վատ խորհուրդներ տալուց հետո...

— Իմ բարերար Վեհափառությունն ինձ կարգել էր իր կրտսեր որդու ուսուցիչը...

— Իսկ հիմա դու թողել ես քո աշակերտին... Ո՞վ է կանչել քեզ այստեղ...

— Տերն է ինձ կանչել:

— Ուրեմն, Տերն է քեզ կանչել...

Շեմի խնամատարը մի պահ ծաղրական լռություն պահպանեց, այնուհետև ավելի բարյացակամ ձայնով հավելեց.

— Փառք տուր Տիրոջը, որ նա քեզ հանձնել է Փաշհուրի ձեռքը... Քանզի դու սայթաքում ես հարատև... Եթե ես չլինեի բոլոր մոլեգնածների ու խելագարների հայրը, քեզ պետք է հանձնեի քո արքայի դատաստանին... Ուստի գոհ եղիր և շնորհակալ, որ Շեմի մեղմաբարո խնամատարը վերցնում է քեզ իր հովանու տակ...

Սրանով արդեն դատավճիռն արձակված էր: Գոտի կրող երկու պահապաններ կապեցին Երեմիային, որի դեմքը հետզհետե գունատվում էր, այնուհետև նա խոնարհեցրեց իր երկար թարթիչները և դժվարությամբ մրմնջաց.

— Եմմերի քահանայական տան շառավիղդ Փաշհուր, լավ մտածիր ու խորհրդածիր, նախքան հրամաններ արձակելդ Հեղիի և Աբիաթարի ժառանգորդի դեմ...

— Հեղիի և Աբիաթարի ժառանգորդը պետք է հիշի այն, ինչ ինքն արել է... Հիմա, սակայն, թող ուրախ լինի իրեն տրված պատժի համար, որ իր հետ չեն վարվում արդարության պահանջի համաձայն, ինչպես որ վարվել էին Ուրիայի հետ...

Տանջահարի բերանից լսվեց մի աղաղակ.

— Ինձ մի՛ դիպեք...

Դա այլևս անօգուտ էր: Ամեն ինչ կատարվեց կայծակնային արագությամբ: Փաշհուրն արդեն լքել էր սենյակը: Գոտիներով զինված հսկիչները քարշ տվեցին Երեմիային դեպի կողքի սենյակը, ուր կեղտոտ բռունցքներով պատռեցին նրա հագուստները և կոշտ պարաններով կապեցին քահանայի որդու սպիտակ մարմինը մի երկար տախտակի վրա: Վերջինս փորձում էր ամբողջ ուժով դիմադրել, բայց ձախողվեց, նրա կատաղած սիրտը, որն արդեն շատ էր տառապել, նահանջեց: Մթնշաղի

միջից հայտնվեց խարազանողը, որն իր ձեռքում սովորական մի կաշեգոտի չէր կրում, այլ մի պոչավոր խարազան: Այս խոշտանգիչը, հին կանոնների համաձայն, մաքուր ղևտացի չէր. նա սերում էր մի ղևտացու և ապօրինի ծնված մի ստրկուհու ոչ օրինավոր ամուսնությունից: Նրա ծառայությունը, թեև կատարվում էր տաճարի շրջանակում, սակայն, ամենից արհամարհվածն էր: Նրա մերկ կուրծքը փայլում էր յուղով: Տաճարի կառավարչի նշանի վրա նա անցավ գործի: Առաջին ոչ այնքան ուժգին հարվածն իջավ Երեմիայի մեջքին:

Այդ ընթացքում, սակայն, պատահեց մի ինչ–որ բան, որը մեծ խառնաշփոթության մեջ գցեց հսկիչներին ու խարազանողին, որովհետև չէր կարելի ընդհատել պատիժը, և շեղված հարվածը երկու անգամ կրկնել: Բարուքը, կաշառելով դարպասապահին, կարողացել էր սողոսկել պատժասենյակից ներս: Կառավարիչն ուշադրություն չ դարձրեց նրա վրա՝ կարծելով, որ նա Շեմի խնամատարի կողմից նշանակված է իբրև վկա: Հենց որ առաջին հարվածն իջավ իր ուսուցչի նուրբ մարմնին, նա մռնչաց կատաղի.

— Գիտե՞ք՝ ինչ եք անում: Դուք ծեծում եք ձեր Աստծուն այս մարդու մեջ...

Եվ այնպիսի առույգությամբ, որը հակասում էր իր մարմնեղեն կազմվածքին, նա ցատկեց ու բռնեց խարազանողի կոկորդը և սեղմեց, որի ձեռքից ընկավ խարազանը, և տապալվեց գետնին: Բռնկվեց մի կատաղի իրարանցում, ինչը լրջորեն վնասում էր վայրի դատաստանական հեղինակությանը: Վա՛յ պահակախմբի ղեկավարին, եթե Շեմի խնամատարը տեղեկանա այս միջադեպի մասին: Նույնիսկ այդտեղ՝ տաճարի լեռան եզրին, ինչպես նաև որևէ ամբարշտի պատժելու պարագայում, օրենքի առաջին նպատակն էր սրբազան կարգուկանոնի պահպանումը: Այդուհանդերձ, Աստծու օգնությամբ, Բարուքի ուժերը բավարար էին՝ ընդհատելու պատժի գործադրությունը: Նա թոթափել էր «գոտի ճոճող» հսկիչներին, որոնք հարձակվել էին իր վրա, ինչպես վարազը թոթափում է իր վրայից որսորդական շներին: Նրա ձայնն ահեղ թնդաց կամարների ներքո.

— Դուք ձաղկում եք Եհովային՝ ձեր Աստծուն...

Ամեն անգամ, երբ խարազանողը պատրաստվում էր մի նոր հարված հասցնել, Բարուքը հսկիչների հետ, որ բռնել էին նրան, նետվում էր



«Երեմիայի խոշտանգումը»

խարազանողի և խոշտանգվածի միջև, որով ինքն ու պահակներն էլ ենթարկվում էին մի շարք հարվածների: Նրա քրտնաթոր դեմքին ձևավորվում են արյան կարմիր նշաններ: Նա չի նահանջում, մինչև որ մի մահակի հարված շպրտում է նրան մի անկյուն: Շնչասպառ կառավարիչը չգիտեր՝ հարվածների հաստատված քանակը՝ «քառասուն նվազ մեկ», ամբողջացել է արդյոք, քանի որ կորցրել էր հաշիվը: Եվ որպեսզի այս դեպքի պատճառով մեղանչած չլիներ օրենքի դեմ, նշան է անում խարազանողին, որը ծիծաղում էր հեգնանքով, այլևս վերջ տալու այդ պատժին:

Երեմիան կորցրել էր գիտակցությունը ոչ թե մարմնական ցավի պատճառով, որը հազիվ թե զգում էր, այլ իրեն հասցրած անջնջելի նախատինքի համար: Իր կյանքի ընթացքում ոչ ոք ձեռք չէր բարձրացրել՝ խփելու իրեն, նույնիսկ իր խստաբարո հայրը նման բան չէր արել: Նա բոլորովին անտարբեր էր իր վիրավոր մեջքի ցավատանջ մրմուռի նկատմամբ, բայց այդ անպատվությունը՝ Փաշհուրի կատարած այդ պիղծ արարքը, չէր կարողանում տանել: Սրի երկու հարված բաժանել էր Ուրիայի գանգը, որից հետո նա այլևս ոչինչ չէր իմացել, ամեն ինչ ավարտվել էր: Երեմիան, սակայն, գիտակցում էր ամենը, կծում էր լեզուն՝ ճչալուց խուսափելու համար, զգում էր իր անձի դեմ կատարված սարսափելի նախատինքն ու ահավոր խայտառակությունը, մինչև որ վերջում մթագնեց հոգին: Դույլերով սառը ջուր բերեցին ու թափեցին նրա վրա, որից հետո նա արագորեն կրկին գիտակցության եկավ, թեև անշարժ էր ու թմրած: Թող Փաշհուրն իր ուզած պատիժը սահմաներ, այլևս ոչինչ չէր կարող ջնջել Երեմիայի մարմնի անարգումը և իր հոգու նվաստացումը: Երբ «գոտի ճոճողները» նրան դուրս էին տանում, նրան թվում էր, թե մեկ ուրիշին են տանում: Նույնպես նրան թվում էր, որ իր այրող ցավերը ոչ թե իր մեջ են, այլ ուրիշի մեջ: Նա անտարբերությամբ տեսավ վանդակն ու նրա կենտրոնում դրված փայտյա երկաթանախշ բլոկը, որի առաջ նստեցրին: Ահավոր սուր ցավ զգաց, երբ ծառաները կոճղի բացվածքների միջով ծռելով դուրս հանեցին նրա ոտքերը, որոնց կոճերի վրա սեղմեցին կոճղի կափարիչը: Արևը վառվում էր սպիտակ սալաքարերի վրա: Երեմիայի աչքերի առաջ, որոնք գրեթե ոչինչ չէին տեսնում, դանդաղ շարժվում էին մութ ստվերներ, որոնք նայում էին բերդամասից ներս: Ամենտիի ստվերներ: Մի մարդ քարշ գալով մոտեցավ նրան: Իբրև պատիժ՝

կառավարիչը բանտարկել էր աշակերտին իր ուսուցչի մոտ: Երեմիան հանկարծ ընկավ դեպի հետ, բայց իր գլուխը հանգչեց մի փափուկ տեղ. դա Բարուքի գիրկն էր: Նրա վերևում կար մարդկային մի առնական դեմք, մի հավատարիմ աստղ: Բարուքի շուրթերը շարժվում էին՝ առանց հարմար խոսք գտնելու: Երբեմն մի ինչ–որ ծանր կաթիլ ընկնում էր Երեմիայի վրա. դա արնախառն քրտինք էր և արցունք...

* * *

Բենիամինի դարպասին կից տանջարանի բլոկը համարվում էր միաժամանակ տաճարի անարգանքի սյունը: Այստեղ չարագործը ենթարկվում էր ոչ միայն հասարակության արհամարհանքին, այլև ծաղրանքին, որն ավելի ծանր էր կշռում, քան արհամարհանքը: Պատիժը, սակայն, կարելի էր հետ կանչել, եթե հայտնի դառնար, որ մեղադրանքը հիմնված է իրավական սխալի կամ զրպարտության վրա: Սակայն հերյուրանքի ու ծաղրանքի լորձունքը հնարավոր չէր ամբողջությամբ լվանալ: Դա նման է կարիճի թույնին, որն ընդմիշտ մրմռացնում է տուժված մասը: Ծաղրանքը հիշողության մեջ չի լուծվում ու անհետանում, այն մի հարատև վնասվածք է, անկախ այն բանից, թե նրա հիմքում գոյություն ունի ճշմարտություն թե սուտ: Ոչ մի պահի, սակայն, ծաղրն այնքան լավ չի ծաղկում, որքան երեկոյան դեմ տաճարում, երբ վերջինիս արտաքին գավիթը լցվում է դատարկաշրջիկներով, ուր դատապարտված մարդու մասին լուրը տարածվում է արագորեն: Այնուհետև բոլորը շտապում են դեպի Բենիամինի դարպասը՝ կատարելու համար իրենց պարտականությունը և լավ օրինակ ծառայելու՝ մասնակցելով ծաղրանքին ու նախատինքին, որպեսզի ավելի արդյունավետ դարձնեն մեղադրյալի պատիժը:

Անարգանքից քայքայված՝ Երեմիան անզգայացած պառկել էր Բարուքի գրկում և ենթակա դարձել անարգալից պատժի: Նա փակեց իր աչքերը և սուզվեց իր թշվառության Ամենտիում, ուր իրեն ոչ մի մխիթարություն չէր ընձեռվում ոչ իսկ Ձենուայի կողմից, քանի որ նրա ժամանակը դեռ չէր եկել: Եվ պատահեց այնպես, որ կծու ծաղր անող մարդկանց շրջանակից առանձնացավ մի անատամ ծերունու ձայն, որն իրեն

ծանոթ թվաց: Այդ ձայնը գնալով իշխանություն ձեռք բերեց ծաղրական մյուս ձայների վրա և խլացրեց դրանք: Երեմիան ստիպված էր լսելու նրանից հետևյալը.

— Ահա, տեսեք, թե ով է այստեղ... Անաթովթցի Քեղկիայի քահանայական գերդաստանի կրտսեր որդին... Հակառակ իր տարիքին՝ նա եղել է դատարկապորտ, ծույլ և այլասերող... Ես՝ Շամարիաս, Անաթովթի աղքատների մեջ ամենից աղքատը, գիտեմ նրա հայրական տունն այնքան լավ, որքան իմ սեփականը: Եղել եմ նրանց սեղանի հյուրը՝ իբրև Աստծու նվաստագույն հյուրընկալվողը... Օրհնյա՛լ լինի Տերը, մեր Աստվածը, որ Քեղկիան չհասցրեց ապրել այնքան երկար, որպեսզի չտեսներ իր կրտսեր որդուն այս պատժի մեջ... Այս մոլորվածն արդեն իսկ առանց այս խայտառակության կոտրել էր իր հոր սիրտը: Շուտով նա գերեզման կիջեցնի նաև իր մորը... Որքան քիչ նման է նա իր պատվավոր եղբայրներին, որոնք տքնաջան աշխատանքով վաստակում են իրենց ապրուստը և առատությամբ բաժին հանում աղքատներին: Փոխարենը սրա համար ընչազուրկ Շամարիան՝ Տիրոջ մուրացկանը, երբեք չի ընդունվել իբրև բարի մեկը... Ինքը միշտ եղել է գոռոզամիտ, ուրիշներից ավելի գերադաս... Ահա տեսեք Տիրոջ այս պատգամաբերին... Տեսեք, թե ինչի է վերածվել նա, ով մեծ ջանք էր թափում ներկայանալու թագավորների առաջ... Ահավասիկ նա հիմա կալանքի տակ է, և ոտքերը կոճղի մեջ ամրացված, նման հարբեցողների ու գողերի, որոնք ձերբակալվում են տաճարի կառավարչի կողմից... Եթե առջևում չլիներ *շաբբաթը*, որի ընթացքում արգելված է տեղաշարժը, Շամարիան իր ութսունամյա ոտքերով անմիջապես կվազեր մինչև Անաթովթ՝ առաջինը հաղորդելու այս հաճելի լուրը, ինչին արժանացած է Քեղկիայի տունը...

Այդպես էր հնչում ծաղրական խոսքը գլխավոր մուրացկանի՝ Շամարիայի, որը Երուսաղեմ էր եկել որոշ բարերարների հաշվին, որպեսզի նրանց անունով ողջակեզներ մատուցեր: Կեղտոտ ծերունու պերճախոսությունը գոհունակություն էր պատճառում ունկնդիրներին: Երեմիան միայն մեկ անգամ բացեց իր աչքերը և սևեռեց դրանք իրեն տանջողի վրա: Մուրացկանի կոպիտ դեմքը ցնծում էր գոհունակությունից: Չհիմնավորված ատելությունն էր թաքուն պատճառն ամեն տեսակ

չարակամության, որը գերիշխում էր իր դիմաց կանգնած մարդկանց վրա, սկսած այն պահից, երբ Տիրոջ ձեռքը դիպել էր իրեն:

Ծաղրանքի ժամն էլ իր հերթին անցավ: Հնչեցին քահանաների շեփորները՝ ծանուցելով երեկոյան զոհաբերությունները: Նախագավիթը դատարկվեց: Հսկողության ծառայողները կարեկցեցին պատժվողին և մի քիչ թուլացրին կոճղի վերևի կափարիչը, որպեսզի Երեմիան կարողանա շարժել իր ոտքերի կոճերը: Նրա մարմնի տակ տեղադրեցին մի խսիր: Բարուքին տրվեց մի վերմակ: Երկուսին էլ մատուցվեց ինչ-որ սնունդ և ըմպելիք: Գիշերը մեղմ էր ու խաղաղ: Մոռացության ձանձրալի նինջն առավ Երեմիային իր բազուկների մեջ: Գիշերվա պահակության առաջինից երկրորդ հերթափոխի ընթացքում ինչ-որ բան զարթնեցրեց նրան: Գլուխը վեր բարձրացրեց և տեսավ, որ մեկը կռացել է իր վրա: Մթության մեջ անմիջապես չճանաչեց Անանիային: Իրենք վերջին անգամ տեսել էին իրար Հովսիա թագավորի ժամանակ, որից հետո անցել էին բազմաթիվ ծանր տարիներ: Այնպես չէր թվում, որ Անանիան վատ էր զգացել Երեմիայի ընտրված լինելուց: Նրա հաճելի դեմքը դեռևս լեցուն էր և երիտասարդ, մինչդեռ Երեմիայի այտերը փոս էին ընկած, իսկ հոնքերն էլ՝ սպիտակած: Անանիայի փափուկ մորուքը փայլում էր օծանվելու անուշաբույր յուղով: Նրա զգեստը մանուշակագույն նուրբ թելերով էր հյուսված, իսկ մարգարեի մազեղեն կոշտ թիկնոցը ծալված էր իր բազկի վրա: Կաթի նման ճերմակ ձեռքերով նա գետնին դրեց ճրագը: Այնուհետև զգուշորեն նստեց հատակին, այնպես, որ ճրագի լույսը նրա և Երեմիայի միջև առաջացրեց տարօրինակ ստվերներ:

— Երեմիա, կասկած մի՛ ունեցիր,— շշնջաց նա,— Եղբայրը գալիս է եղբոր մոտ... Անարդարություն և ստորություն է գործվել քո դեմ...

Նա իր գոտուց արձակեց մահուդե մի տոպրակ, որի մեջ բերել էր իր հետ քացախի մեջ թաթախված մի սպունգ, մի քանի սրվակներ ու շշեր: Պատռեց սպունգը և մի կտոր տվեց Երեմիային, իսկ մի ուրիշ էլ՝ Բարուքին: Շշերի մեջ կային բարկ հոտեր, իսկ սրվակների մեջ՝ ցավազրկող ու քնաբեր ըմպելիքներ, որոնցից տվեց մի քիչ Երեմիային՝ խմելու: Այս գթասիրտ վերաբերմունքից հետո նա մնաց հանգիստ պպզած՝ մերժելով ընդունել որևէ շնորհալական խոսք.

— Անաթովթցի իմ ընկերը չպետք է ինձ շնորհակալություն հայտնի... Քանզի միասին ենք դուրս եկել աշխարհ...

Այնուհետև նա լռեց մի երկար պահ՝ հարմարվելով այնպես՝ ասես պատրաստ էր ամբողջ գիշերն անցկացնել պատժի ենթարկվածի մոտ: Հայացքն ուշադիր հառել էր փոքրիկ ճրագի առկայծող լույսին: Նրա ներդաշնակ դեմքին չարախնդության նշույլ անգամ չկար՝ ի տես իր մրցակցի այդ թշվառ վիճակին, այլ այնտեղ զգացվում էր մի թաքուն վիշտ, որով նա փորձում էր սրտակցել Երեմիային:

— Ես գիտեմ,— ասաց նա,— որ իմ ընկերը չի հավատում ինձ...

Եվ կարծես թե անհրաժեշտ էր ավելի պարզ խոսել, հավելեց.

— Նա կարծում է, թե խաբեություն է և սուտ այն, ինչ ելնում է Անանիայի բերանից...

Երբ կապվածը ցանկացավ պատասխանել, Անանիան տխրադեմ վեր բարձրացրեց ձեռքը, որպես թե յուրաքաչյուր խոսք լիներ նույնիսկ ավելի թույլ և վիրավորիչ, քան դրական լռությունը:

— Եվ այնուհանդերձ,— շարունակեց նա մեղմ շեշտով,— Անանիան միակն էր, որ մարգարեացել էր ճշմարտությունը փարավոնի մասին, մինչ Ուրիան և Երեմիան լռում էին, և ոչ ոք չէր հասկանում իմ խոսքը...

Այս պարծենկոտ հաստատումն անառարկելի էր: Անանիան երկիմաստ խոսքերով մարգարեացել էր Նեքավով փարավոնի զորքի կործանումը: Ավագաժողովի օրն ինքը, և ոչ թե մեկ ուրիշը, եղել է Տիրոջ խոսքի հաղորդողը: Այդ պահին նա հիշեց Ուրիայի որոշ խոսքերը. «Նա, ով ճշմարիտ է մարգարեանում, չպետք է անպայման Տիրոջ իսկական մարգարեն համարվի, իսկ նա, ով սխալ է մարգարեանում, չպետք է խաբեբա հռչակվի»: Կարծես թե Անանիան կռահեց դիմացինի այս մտքերը, որի պատճառով էլ մի փոքր բարձրացրեց իր ձայնը.

— Երեմիան չափազանց ամբարտավան է. դա այդպես է, ինչպես որ կա... Նա կարծում է, որ մի հոգի, որ նման չէ իր սեփական հոգուն, չի կարող ընտրված լինել Տիրոջ կողմից... Սակայն Երեմիան չգիտե, որ Տերը շատ հայելիների մեջ է նայում... Եվ ամեն հայելու մեջ այլ կերպ է նայում...

Խոշտանգվածը մի փոքր ուղղվեց՝ աչքերը սևեռելով կեսգիշերային այցելուի վրա: Արդյոք աշխարհի այդ հաճելի մարդը ձեռք էր բերել ավելի խորը գիտելիքներ աստվածային հարաբերություններում, քան

ինքը... Մի՞թե սարսափելին իրական էր և ճշմարիտ: Գոյություն ունե՞ն արդյոք այդքան շատ աստվածային ճշմարտություններ, որքան հոգու հայելիները, որոնց մեջ Տերը բարեհաճում է նայել... Մի՞թե խեղդող ճշմարտությունը, որով ինքը տանջում է իր հոգին, իրականում միակ ճշմարտությունը չէ... Արդյոք ինքը՝ Երեմիան, որ այժմ խոշտանգված է ու սեղմված կոճղի մեջ, պարզապես մի բանի համար, որ արժեք է ներկայացնում միայն իր հոգու համար և ոչ թե հանուն ընդհանուր և աստվածային նպատակների...

Անանիան, սակայն, բարեհաճորեն ժպտաց.

— Ես այստեղ չեմ եկել ինքս ինձ գովաբանելու, այլ իմ եղբորը նախազգուշացնելու... Երբ դու խնդրվածքներ ես ներկայացնում Տիրոջը, արդյոք Նա կատարո՞ւմ է այդ բոլորը... Իսկ դու ինչո՞ւ ես կատարում այն բոլոր խոսքերը, որ Նա ասում է քեզ... Ինչո՞ւ ես միշտ գնում և խոսում Նրա անունով, երբ Նա պահանջում է. «Գնա՛ և խոսի՛ր իմ անունով»... Որքան շատ ես փայփայում Տիրոջը, Նա այնքան ավելի պակաս է փայփայում քեզ... Թող վերջապես Երեմիան իմաստուն լինի, քանի որ նա խաղում է Տիրոջ խաղն իր սեփական կյանքով... Իսկ եթե կորցնի այդ խաղը, Տերը նրա համար ավելի քիչ կտառապի, քան այն թագավորը՝ պատերազմում կորցրած իր մեկ համեստ մարտիկի համար... Թագավորներն այսպիսին են...

Այս բարեմիտ և կշռադատված խոսքերը խարազանի հարվածի նման վիրավորեցին Երեմիային: Մեռած մարդու նման նա հետ ընկավ՝ հազիվ նկատելով, որ մխիթարիչը վերցրեց իր ճրագը և հեռացավ: Երեմիայի վերադարձից դեռ չէր անցել քսանչորս ժամ, երբ Տերն արդեն ուղարկել էր նրան այնքան շատ պատուհասներ, որոնք մեկ ուրիշին բավարար կլինեին իսպառ խորտակելու: Մի՞թե Տերը չէր կարող գեթ մի օրվա հանգիստ տալ նրան: Երեմիայի հոգում ձևավորվում էին երգաձայն խոսքեր, որոնց վրա նա իշխանություն չուներ: Դրանք Եհովայի խոսքերը չէին, այլ դրանք գերմարդկային դիմադրության խոսքեր էին Նրա դեմ.

— Դու ինձ ցնորքներով գերեցիր... Եվ ես ինձ թույլ տվեցի խաբվել... Ուրախացիր, Տեր, որ դու ավելի ուժեղ ես, քան ես, և ինձ հաղթել ես... Հիմա ես ծաղրուծանակ եմ դարձել, ամեն ոք ծիծաղում է վրաս... Մի անգամ մտածեցի այլևս չհիշել քեզ և ոչ իսկ մարգարեանալ քո անունով...

Հետո փախա քեզնից ու թաքնվեցի... Բայց դու ինձ բաց չթողեցիր, դու փակված ես իմ սրտում և ոսկորներիս մեջ, դու այրող կրակ ես... Դու իմ մեջ ես իբրև բորբոքուն կրակ, ինչին այլևս չեմ կարող դիմանալ և պետք է անհետանամ...

Նա այլևս չէր կարող դիմանալ և պետք է անհետանար ու ոչնչանար, բայց դա նրա համար այնքան էլ հեշտ չէր... Երկու ժայռերի՝ Եհովայի և աշխարհի արանքում, նա փշրվել էր և դրանից չէր մահացել: Եղավ մի պահ, որ նա այնքան վատ վիճակում էր, որ մտածում էր, թե պետք է անպայման դուրս ելնի բանտից, այլապես ներսում զայրույթից պիտի խելագարվի: Ըմբոստացած՝ փորձեց ուղղվել, մարմնի անդամները ճռճռացին: Ոչ ոք չէր գալիս օգնելու իրեն: Բարուքը խոր քնի մեջ էր: Այնուհետև նրա բերանից բեկբեկուն հնչյուններով լսվեց մեծ անեծքը.

— Անիծյալ լինի այն օրը, երբ ես ծնվեցի... Անիծյալ լինի այն մարդը, որն ավետիս տվեց իմ հորը և ասաց, թե՝ «Քեզ արու երեխա ծնվեց»... Ինչո՞ւ չմեռա ես մորս արգանդում... Եվ իմ մայրը չդարձավ իմ գերեզմանը...

— Դու ինձ կանչեցի՞ր,— կմկմաց Բարուքը քնի միջից:

Երեմիան, սակայն, այդ պահին թիկնած նայում էր գիշերային երկնքին, որը տարածվում էր տաճարի վերևում՝ Մարդուկի, Իշթարի, Ներգալի, Նինուրտուի, մոլորակների և հազարավոր համաստեղությունների հետ: Բայց երբ Իշթարը՝ առավոտյան աստղը, արդեն վառ փայլում էր ավելի, քան մյուսները և թողնում կարճ ստվերներ, վրա հասավ մի նոր նախազգուշացում Երեմիայի համար: Նա, ով նրան բերում էր այս նախազգուշացումը, ոչ այլ ոք էր, քան Հովսիա թագավորի անձնական գրագիր Ահիկամը: Հայրերի ունեցած վաստակը, Սափանի որդիների մաքրությունը, խոհեմությունը, Աստծու նկատմամբ նրանց ցուցաբերած պատկառանքն այնքան մեծ էին, որ Հովակիմը նրանց դեմ ոչինչ անել չէր կարող: Իրադարձության փոփոխությունից հետո նրանք պահում են միայն իրենց պատվավոր պաշտոնները և Սափանի ուսուցչասենյակը տաճարում: Այստեղ նրանք անձեռնմխելի էին: Այդուհանդերձ, Ահիկամը հազիվ թե այդ ժամին՝ գիշերվա և լուսաբացի սահմանին, համարձակվել էր այցելել իր ելույթների և կարգազանցության պատճառով պատժվածին: Արքայի մահից հետո նրա անձնական գրագրապետը

լրիվ ծերացել էր: Իրեն ուղեկցողի ձեռքից նա առավ ջահը և դրանով լուսավորեց Երեմիայի դեմքը, այնուհետև հառաչելով նստեց նրա մոտ՝ հատակին:

— Ահիկամը,— ասաց նա ցածր ձայնով,— չի մոռացել իր ընկերոջը, ում իսկական թագավորը համակրում էր ու գնահատում...

Երեմիան, շեղելով իր նայվածքը, այն հառեց Ահիկամի ծնկներին: Վերջինս լռությամբ թողեց՝ մի պահ անցնի, այնուհետև շարունակեց շատ ցածր ձայնով.

— Ես ձեռքս պահում եմ Երեմիայի վրա... Բայց դու պետք է խոհեմ լինես...

— Արդյոք Տերը խոհեմ է,— ընդվզեց կալանավորը,— Նա է հրամայում ինձ խոսել դառնաղետ վախճանի մասին...

— Ինչ օգուտ ունի խոսքը... Այստեղ լսելու պատրաստ ականջներ չկան, բայց շատ ձեռքեր կան՝ խեղդելու համար...

Եվ Սափանի գերդաստանին բնորոշ հնարամտությամբ Ահիկամը սկսեց բացատրել Երեմիային ամենն տեսակ պայքարի անխոհեմ և ապարդյուն լինելը: Ըստ նրա՝ ներկայումս Երուսաղեմում տիրող բռնությունը նույնն է, ինչպես ցանկացած իշխանության պարագայում, որը ծիծաղում է օրենքի վրա, միշտ և ամենուրեք անապահով է և դյուրագրգիռ, ինչպես բնությունն անաստված մարդու: Եղիակիմը կառուցել է իր իշխանությունը հոր դեմ կատարած դավաճանության, կողոպուտի ու կեղծիքի վրա: Դրա համար էլ նա ներքուստ ահուդողի մեջ է, որ կարող է բացահայտվել ու պատժի ենթարկվել: Մեկուսացած իշխանությունը, ինքն իրենից բացի, ուրիշ ոչինչ չի սիրում և չի ուզում պահպանել, ուստի վախենում է միայն իր սեփական պարտությունից, բայց ոչ թե ժողովրդի ընդհանուր անկումից: Այս է պատճառը, որ նման մի իշխանություն մեծապես ատում է ճշմարիտ խոսքը՝ Տիրոջ հոգին, որը հնարավոր չէ ճնշել կամ արգելափակել: Դրա փոխարեն, ինչպես տեսնում ենք, առանց մեծ դժվարության հնարավոր է խոսքի քարոզչին արգելափակման ենթարկել և նույնիսկ Տիրոջ հետ հաղորդակցվող մարդու գլուխն անձամբ ջախջախել: Հետևանքը լինում է այն, որ Տիրոջ հոգին ու խոսքը կորցնում են ժողովրդի ակնածանքն իրենց հանդեպ, քանի որ դրանք պայքարի մեջ թվում են թույլ և անզոր: Եթե մի մարգարե զոհաբերի իր

կյանքը, դրանով նա պարզապես մնաս կպատճառի Տիրոջ հեղինակությանը: Հիմա այլևս ո՞վ կհիշի Ուրիային, որը սպանվեց, քանի որ չէր կարող ստել: Ճշմարտության խոսքի համար արդարև պետք է ընտրել խոհեմ և խորաթափանց հնարքներ, հոգեկան նրբանկատ վերաբերմունք, քան թե կոշտ ու կոպիտ հարձակումը, ինչը միայն ինքն իրեն է մնասում ու կործանում: Երեմիան լսում էր այս եզրահանգումները: Դրանք համոզիչ էին, նույնքան հիանալի և տեղին, ինչքան խելացի մարդկանց խոսքերը: Տերը, սակայն, իմաստուն չէ, համոզիչ չէ, և Նրա հետ ոչ մի բան կարգին չէ: Եթե այլևս չլինի ոչ ոք, որ հիշի Ուրիային, այդուհանդերձ, մեծ է հավանականությունը, որ Տերը հիշի նրան: Եթե մարգարեի մահը նվազեցնում է Տիրոջ համբավը, գուցե հենց մարգարեի մահով Նա կհիմնավորի ու կհաստատի իր հեղինակությունը: Ամեն ինչ սպասելի է Տիրոջից: Այսուամենայնիվ, Երեմիան ասաց.

— Իսկ եթե Նա մրմնջում է ականջիս, ես ինչպե՞ս կարող եմ լուռ մնալ...

— Ես իմ բազկով կպաշտպանեմ Երեմիային,— հաստատեց Ահիկամը,— բայց թող հիմա նա երդվի ինձ Տիրոջով, որ այս օրերին չի քարոզելու ոչ տաճարում և ոչ էլ քաղաքում...

— Ինչպե՞ս կարող եմ երդվել Տիրոջ անունով՝ ընդդեմ այդ միևնույն Տիրոջ...

Երեմիան մնաց անշարժ: Ահիկամի խոսքը, սակայն, դարձավ ավելի սուր և ազդեցիկ.

— Արդյոք քո կամքո՞վ ես մարտահրավեր նետել թագավորին և նրա իշխաններին:

— Իմ կամքը...— ծիծաղեց Երեմիան հոգնած,— իմ կամքը ոչ այլ ինչ է, քան խաղաղությունը... Քանզի ես կարիք ունեմ հանգստանալու, ոչինչ չիմանալու և համերաշխ ապրելու...

Սափանի ժառանգորդն անմիջապես ընդմիջեց.

— Այս քո խոսքն ինձ համար բավարար է... Ես այն վերցնում եմ որպես մեր միջև երդման ուխտ... Խաղաղությամբ սպասիր քո օրվան, ինչպես անում եմ ես...

Երեմիան հուսահատորեն սեղմեց բռունցքներն իր քունքերի դեմ: Ահիկամը վեր կացավ ու գնաց, որպեսզի ոչ մի հակադարձ ելույթ

չթուլացնի այն խոստումը, որ ինքը տանում էր իր հետ: Իշթարը՝ երկնքի թագուհին, անհետացավ: Նահանջող գիշերվա ավարտին Սրբարանի ուրվագծերը դարձան մոխրագույն: Աշխարհի արթնացման այդ պահին Երեմիան երդվեց հնազանդվել Ահիկամին, այլևս չբացել բերանը և հնարավորինս շուտ վերադառնալ Անաթովթ: Չնայած եղբայրների ծաղրական ատելությանը, ինչից ինքը շատ էր վախենում, նա կայացրեց այս որոշումը, քանզի ավելի մտածում էր իր մոր մասին:

Քահանաների կողմից շեփորների առաջին ազդարարությունից հետո Երեմիային հանեցին կոճղից: Փաշհուրը, կանոնի համաձայն, ներկա էր իր բանտարկյալի ազատ արձակման ժամանակ: Երբ նա ոտքի կանգնեց, սկսեց երերալ, փլուզվելու էր, եթե Բարուքն օգնության չհասներ նրան: Փաշհուրն առաջ եկավ.

— Քեղկիայի որդի, երախտապարտ չե՞ս մեղմ պատժի համար, որը փրկում է քեզ...

Երեմիան լուռ հայացքով նայեց նրա կռունկի փոքրիկ աչքերին: Այնուհետև Շեմի խնամատարը հրաժեշտ տվեց նրան՝ հետևյալ ցանկությամբ.

— Թող այլևս երբեք չհայտնվես այստեղ...

Նա շուռ եկավ ու հեռացավ: Երեմիան մեղմորեն հետ կանչեց նրան: Հզոր մարդը չկարողացավ մերժել նրան և շրջվեց: Երեմիան մի քայլ մոտեցավ նրան ու շշնջաց.

— Փաշհուր, Փաշահ՚ուր... Քո անունը նշանակում էր *փաշահ* (*զապրիկ*), այսինքն՝ ուրախություն և ազատություն... Այսուհետև, սակայն, դու մի նոր անուն ունես, և այդ անվան մեջ կա աքսոր ու սարսափ...

Շեմի խնամատարի դեմքը գունատվեց մահացու կերպով, երկու ձեռքերը վեր բարձրացրեց՝ ի պաշտպանություն: Դրանք արդարև ծանր ու մռայլ խոսքեր էին, որոնց դեմ անզոր էին խարազանի հարվածներն ու կալանքները: Այդ խոսքերն ուժգին սեղմեցին Շեմի խնամատարի կոկորդը՝ մի հավաստի մարգարեության սարսափով:

ԳԼՈՒԽ ՏԱՄՆԻՆՆԵՐՈՐԴ

ՀՈՎԱԿԻՄ ԵՎ ՀԵՔՈՆԻԱ

Անցավ որոշ ժամանակ, մինչև որ Երեմիան կարողացավ շարժել իր խոշտանգված ոտքերը: Գնաց այցելելու Բեթ Համոկեդ՝ «Կրակարանի տուն», որը տաճարի լեռան արևելյան եզրին էր: Բեթ Համոկեդի կենտրոնական տարածքում կառուցված էր տաք ջրի մի պարսպապատ ավազան՝ սուզվելու և մաքրման լոգանքների համար: Այդտեղ կային նաև մի քանի փոքր խուցեր, ուր հնարավոր էր բազմոցի վրա կարճ ժամանակով հանգստանալ: Մինչ այդ Բարուքն իջել էր քաղաք՝ իր երկու անասունները խնամելու և մի իջևանատանը փոքր-ինչ հանգստանալու: Այնուհետև, երեկոյան դեմ՝ տոնական օրվա անմիջապես ավարտին, նրանք Բենիամինի հյուսիս-արևելյան դարպասից բռնեցին Անաթովթի ճանապարհը:

Ամառային *շաբաթը* Երուսաղեմից և Հուդայի այլ քաղաքներից շատ մեծ թվով մարդկանց էր հավաքել տաճար: Հաճելի զով էր, քանի որ արևը ծածկված էր ամպերով: Ուխտավորների միայն մի փոքր մասն էր մուտք գործել քահանաների ներքին գավիթ՝ մասնակցելու ողջակեզներին: Մարդկանց մեծ մասը, ինչպես միշտ, երկու հակադիր շարքերով կուտակված էր արտաքին գավթում: Այս շարքերը, սակայն, համակված էին տոնական ուրախությամբ, քանզի նրանցից լսվում էին ծիծաղներ ու կատակներ, ուրախ գովաբանություններ ու երգեր, չնայած որ Երուսաղեմի վրա ճնշում էր ուժն ու բռնությունը: Ո՞ւմ հոգն էր դա, բացի ըմբոստներից, մեկուսացվածներից, հոգատար և մտահոգվող անձերից, որոնց դեմ էր ուղղված բիրտ ուժը: Անկախ նրանից, թե ինչ հանգամանքներում էր գահ բարձրացել Հովակիմը, Տերն օրհնել էր նրա ժամանակաշրջանը: Հինգ տարուց ի վեր բերքի առատություն կար, իրենց պատշաճ ժամանակին

արևն ու անձրևը մեծ եռանդով կատարում էին իրենց դերը, որպես թե Տերը չհանդուրժեր որևէ թերացում՝ ի վնաս այս թագավորության: Շտեմարաններում առատորեն կուտակվում էին հացահատիկը, անասնակերը, կանեփն ու կտավատը, գինին և յուղը: Ոչ ոք չէր բողոքում Հովակիմի դեմ՝ ժողովրդի վրա դրած այն երկու տուրքերի համար, որպես հատուցում իր հոր կուտակած պարտքերի: Ինչ վերաբերում է, սակայն, քաղաքից դուրս՝ նախկին նստավայրից հեռու թագավորի կառուցած խելացնոր շքեղությամբ պալատներին, որոնք թեև այնքան էլ չէին գոհացնում նրան, այդուհանդերձ, դրանք պարզապես սնուցում էին ժողովրդի բովանդակազուրկ հպարտությունը: Հատկապես Ձիթենյաց լեռան օդավետ բարձրության վրայի «Ամառային պալատը» նկատվում էր մի հրաշք՝ իր հարյուրավոր սրահներով ու սենյակներով: Հուդայի երիտասարդության համար նման մի վեհ ու հիանալի կառույց ստվեր էր գցում Բաբելոնի և Նոփի աշխարհահռչակ տիրակալների վրա:

Երեմիան դուրս եկավ Բեթ Համոկեդից դեպի արտաքին ընդարձակ գավիթը, ուր մի անգամ ևս դառնորեն զգաց ժողովրդի խաբուսիկ ինքնավստահությունը: Ցերեկվա միևնույն վտանգավոր ժամն էր, նախքան կեսօրը: Ամբոխն անմիջապես խռնվեց նրա շուրջը: Իր թուլացած ուժերով նա չէր կարողանում ազատել իրեն: Մարդկանց հոսանքն իր հետ տանում էր նրան: Ականջներում բզզում էր մարդկանց տհաճ ու դատարկ խոսակցությունը, որը կենտրոնացած էր վաստակների ու կորուստների, տան և ագարակի, ծնողների և երեխաների, ծնված ու սատկած անասունների վրա: Այդ սրբազան տաճարը վերածվել էր ամենօրյա շուկայի: Հազարից հազիվ թե մեկն ի վիճակի էր ճղճիմություններից ու առօրյա հոգսերից վեր բարձրացնել իր հոգին դեպի տիեզերքի Արարիչը:

Երեմիան միայն մեկ նպատակ էր հետապնդում՝ արագ փախչել այդտեղից, ուր անհնարին էր երկար մնալ: Ինչ էլ պատահելու լիներ, իր բերանն այնուհետև փակ պիտի մնար, ինչպես Ահիկամն էր իրենից պահանջել, նաև ինչպես ինքն իրեն խոստացել էր ու երդվել: Սակայն փախուստն այնքան էլ հեշտ չէր՝ իր մարմնական ցավերի պատճառով: *Շաբբաթի* հսկա բազմությունը կրկին ու կրկին նոր հորձանքներ, հանգույցներ ու խցանումներ էր կազմում, որոնք շրջափակում էին իր ճանապարհը: Ավարտելով առավոտվա վերջին ողջակիզման արարողությունը՝

ընծայաբերող ուխտավորներն արագ դուրս էին գալիս քահանայական գավիթից և կուտակվում արտաքին գավիթում: Մարդկանց առավել խիտ խճողումն ամբիոնների առջև էր, որոնց վրայից այդ շաբաթ օրը քարոզում էին ժողովրդին, քանզի միշտ չէ, որ այդքան մեծաթիվ ուխտավորներ գալիս էին տաճար: Ամբոխի մեջ սեղմված՝ Երեմիան ստիպված էր լսել մի քարոզ հենց այն ամբիոնից, որտեղից ինքն էր քարոզել առաջին անգամ և գայթակղություն առաջացրել: Ամբիոնն զբաղեցնողը բոլորից սիրված մի մարգարե էր, որի կրքոտ ձայնը հնչում էր նախագավթում: Աստծու հետ քայլող այդ անձը կրում էր ոչ միայն մազոտ թիկնոց, այլ ինքն ամբողջությամբ չափազանց մազոտ ու կոպիտ տեսք ուներ, մորուքավոր էր, փոս ընկած աչքերով, կեղտոտ, մաշված հագուստով: Պատկերավոր ասած՝ նա իր անխնամ մարմնի բոլոր ծակոտիներից արձակում էր ծուխը մարգարեությունների: Նրա հետ համեմատած՝ Երեմիան, առավել ևս Անանիան, կոկիկ էին, մաքրասեր և ազնվական: Անհավատալին այն էր, սակայն, որ այդ քարոզիչը երբեք ջանք չէր թափում ցույց տալ կամ թեկուզ ձևացնել, որ ինքն ինչ–որ պատգամ է ստացել Տիրոջ կողմից, այլ բացահայտ կերպով և անամոթաբար իր սեփական անունով էր քարոզում: Օրվա նույն հանգերգն էր կրկնում՝ գովաբանելով Հովակիմի վեհությունը, Իսրայելի մեծության վերականգնումը: Դա մի կեղծ ու խաբուսիկ գովերգություն էր, որը կուրացնում, խլացնում ու հարբեցնում էր ժողովրդին՝ առաջնորդելով նրան դեպի կործանում: Շեմի խնամատարի, տաճարի կառավարիչների և կաշեգոտի ճոճողների աչքերի առաջ քահանայական քսանչորս սրբազան կարգերի և բոլոր դպիրների ու իմաստունների ունկնդրությամբ այդ հանդուգն ու լկտի ճառախոսությունը մնում է անպատիժ, որը վերածվում է նույնիսկ Աստծու դեմ հայհոյության: Երեմիան զգում է, թե ինչպես են զայրույթն ու ատելությունը սեղմում իր կոկորդը, քանզի այդ բրդոտ ստահակը խեղաթյուրում էր աշխարհի կարգը: Նա այնպես էր ներկայացնում, որ ոչ թե Տերն է բարձրացնում Իսրայելին, այլ Իսրայելը՝ Տիրոջը: «Միայն Հուդայի մեծությամբ,— գոռում էր նա իր մորուքի վայրենի խառնիճաղանճի միջից,— Եհովան կմեծանա ու կբարձրանա ժողովուրդների աստվածների մեջ: Երուսաղեմը պետք է լինի հզոր և բազմամարդ, ավելի քան Նոփն ու Բաբելոնը: Միայն այդ դեպքում Տերը կդառնա հզոր, միայն այդ դեպքում նա կլինի ճշմարիտ ու միակ Աստված»:

Երեմիայի մեջ խոսում է աղաչավոր մի ձայն. «Մի՛ լսիր այն, ինչ ասում է: Փակի՛ր քո աչքերն ու ականջները, լռի՛ր ու լռի՛ր»: Ձայրույթով է նա հիշում իր կրած նվաստացումն ու ամոթը: Հիշում է Անանիայի և Ահիկամի զգուշացումները, ինչպես նաև իր տված խոստումը: Միայն թե Տերը թող հիմա ողորմի իրեն, ըմբռնի ու հասկանա, չթողնի հաղթահարվել:

Փրկության մարգարեն իր ճղճիմ ոչնչությունը չէր կարողանում իր ոտքերի ծայրից ավելի վեր պահել, բուռն կերպով թափահարում էր մազե թիկնոցով ծածկված բազուկները, որոնք ասես մի հսկա թռչունի թևեր լինեին, և գոչում.

— Տիրոջ տաճարը, Տիրոջ տաճարը, Տիրոջ տաճարը: Երբ Հուդան դառնա մեծ ու հզոր, Տիրոջ համար մի նոր տաճար կկառուցի, ավելի մեծ, քան աշխարհի բոլոր տաճարները...

Այս պատգամով հմայված՝ քարոզիչը ոգևորված դոփում է գետինը, որպես թե գինովցած լիներ Տիրոջով: Նրա խոսքերն արտասանվում են իրար հետևից.

— Ուստի գոչում եմ. Ողջո՛ւյն Տիրոջ մեծ տաճարին, Ողջո՛ւյն արքային, որը բարձր է պահում Երուսաղեմի հմայքը: Ողջո՛ւյն, ողջո՛ւյն...

Ամբոխը միանգամից շրջվում է դեպի Երեմիան, որի բերանից մի խլացուցիչ ձայնով հնչում է անդադար միևնույն բառը՝ ողջո՛ւյն... ողջո՛ւյն... ողջո՛ւյն...

Ակնկալվող մի լռություն է տիրում այդ ուժեղ ձայնի շուրջը: Երեմիան տեղի էր տվել Տիրոջը՝ մոռանալով իրեն արված բոլոր զգուշացումները, իր տված խոստումներն ու կատարած երդումները: Կոտրվել էր դիմադրությունը: Կծու ծաղրով կրկնվող այդ «ողջո՛ւյն» բառը մտրակի հարվածների նման իջնում էր ներկաների գլխին, այնպես որ այդ մազոտ մարդը զայրացած հանում է իր մարմնի վրա դրած վերարկուն և սեղմում է իր բռունցքները խանգարիչի դեմ: Ապա անողոքաբար հարց է տալիս նրան.

— Ողջո՛ւյն... ողջո՛ւյն... Մի՞թե սրանք բուժիչ միջոցներ են, որոնց օգնությամբ կարող եք բուժել իմ ժողովրդի վերքերը...

Հավաքվածները լսում են երկյուղած: Երեմիան սկսում է հեգնել խճճված մորուքով մարդու կոկոռոցը.

— Տիրոջ տաճարը... Տիրոջ տաճարը... Տիրոջ տաճարը...

Այնուհետև երկարաձայն վանկերով լսելի է դարձնում իր ձայնը մինչև թագավորական պալատի պահակախումբը.

— Եթե չլսեք իմ խոսքը և իմ ուսմունքը,— ասում է Տերը,— ես իմ այս տաճարը կկործանեմ Սելովի պես, իսկ ձեզ բոլոր ժողովուրդների անեծքին կդատապարտեմ...

Այս անհասկանալի խոսքերից հետո տիրում է կարճ ու սարսափելի մի լռություն, ինչին հաջորդում է մի մահաբեր ատելության պոռթկում, այնպիսի ուժգնությամբ, որ մազ էր մնում ավելորդ դառնար որևէ իրավական դատաստան նախատողի նկատմամբ: Երեմիային զցում են գետնին, հարվածում դեմքին ու քացով խփում: Բայց այդ վտանգավոր պահին Տերը կարծես թե օգնում է նրան՝ մարմինը դարձնելով անխոցելի, իսկ հոգին էլ՝ անզգայացած: Երեմիան այլևս չի զգում իր կրած ոչ հին և ոչ էլ նոր տանջանքները, ասես ապրում է ինքն իր կողքին, ինքն իրենից դուրս: Սյունասրահից դեպի արտաքին նախագավիթ են վազում տաճարի՝ ծառայության մեջ գտնվող կառավարիչները: Նրանց հետ գալիս են «գոտի ճոճող» հսկիչները, որոնք հարվածելով ու հրմշտելով ճամփա են բացում խռնված ամբոխի միջով: Մեծ աղմուկ–աղաղակով քարշ են տալիս Երեմիային և տանում դեպի տաճարի հարավային մասը:

* * *

Տաճարի տարածքի հարավային պարիսպը և արքայական ամրոցի հյուսիսային պատը կապված էին իրար երկու հսկայական դարպասների կառույցով: Զախը թագավորի և նրա տան համար էր, երբ նա քայլում էր դեպի տաճար: Մյուսը կարելի էր հետևցնել իր անունից՝ *Հաշալիշիմ*, այսինքն՝ *պահակախմբի ամրացված դարպաս*: Երկուսի միջև, սակայն, բարձրանում էր մի ընդարձակ և սյուներով հարուստ երրորդ կառույց, որը նույնպես միացնում էր տաճարն ու ամրոցը: Այս շինության երկու մուտքերից մեկը հոգևոր իշխանության համար էր, իսկ մյուսը՝ աշխարհիկ իշխանության: Դա մի հոյակապ շինություն էր, ուր քննարկվում էին թե Տիրոջ և թե թագավորության վերաբերյալ հարցեր, որի պատճառով էլ այն կոչվում էր Դատաստանական միացյալ խորհուրդ: Օր օրի այնտեղ

հավաքվում էր քահանաներից և թագավորի պաշտոնյաներից բաղկացած մի խառն վերնախավ՝ արդարադատություն կատարելու: Դատաստան վարողները հիմնականում քսաներեք դատավորներ էին՝ տասնմեկ հոգևորական և տասնմեկ աշխարհիկ, որոնց ղեկավարը փոխառփոխ ընտրվում էր տաճարից ու պաշտոնական պալատներից: Դատաստանական խառը խորհուրդը գումարվում էր նաև շաբաթ օրը, քանզի հանցագործը դադար չէր առնում նույնիսկ այդ հանգստյան սրբազան օրվա մեջ: Դատարանը փակ էր մնում միայն Նոր Տարում և Քավության օրը նշելու ժամանակ, այսինքն՝ Տիրոջ Ահավոր դատաստանի օրը: Այնտեղ արվող դատաստանները մեծ մասամբ վերաբերում էին աստվածային սրբությունների դեմ կատարված հանցագործություններին, որոնց համար նույնիսկ Շեմի խնամատարն ի վիճակի չէր որևէ համարժեք պատիժ սահմանել:

Երեմիային հրում են հերետիկոսների դատարանից ներս: Բազմությունը հետևում է կալանավորին և լցնում է սրահն ամբողջությամբ: Նոր միայն դրանից հետո պահակային ծառայությունը փակում է մուտքի դուռը, քանզի չէր կարելի մերժել որևէ մեկի մուտքն այնտեղ, մինչ տակավին ազատ տեղ կար դատասրահում: Կաշեգոտիներ կրող հսկիչները կապեցին Երեմիային մի ողորկ ու առանձնացված սյանը: Քսաներեք դատավոր, որոնք միշտ պետք է հավաքվեին որոշակի ժամերին, նստած էին ըստ սահմանված կարգի կիսաշրջան կազմելով, «որպեսզի մեկը մյուսին կարողանար տեսնել» և խուսափել իրար դավադիր նշաններ տալուց: Արքունական տասնմեկ դատավոր, ընդհանուր առմամբ ծեր ու խոհեմ մարդիկ, պիտի որ ավելի բարյացակամ լինեին հանցագործի նկատմամբ: Այդ օրը հերթը չէր ոչ Եղնաթանի և ոչ էլ Հերախմե'էլի, հատկապես ոչ ոքի այն մարդկանցից, որոնց վրա էր հենված բռնակալությունը: Դատարանի նախագահի աթոռին նստել էր ոչ թե մի քահանա, այլ, ի վնաս հանցապարտի, մի աշխարհիկ բարձրաստիճան պաշտոնյա, որն էր Մեշուլամը՝ Քիրիաթ Յարիմի ջրաղացպանը, սեփականատերը տասներկու *սամ-ատնյան* ստրուկների, որոնց ինքը կուրացրել էր: Նա այնքան իմաստուն կերպով էր բազմապատկել իր ունեցվածքը և օգնել ժողովրդին տուրքերի վճարման ընթացքում, որ թագավորի կողմից նշանակվել էր իբրև երկրի գանձապահ: Մեշուլամը չէր փոխվել այն օրվանից ի վեր, երբ նրա

կողմից լավ սպասարկված հյուրերը՝ Երեմիան ու Բարուքը, նրա ոտքերի առջև էին շպրտել իրենից ստացած նվերները՝ կոշիկներն ու հագուստը: Հիմա նա գլխի թեթև շարժումով էր պատասխանում իր պաշտոնակիցների հայացքին ու ողջույնին, մտածկոտ էր ու հոգնած, կարծես ուզում էր ասել, թե մենք արդեն գիտենք, թե ինչ է սպասվում մեզ:

Տաճարական դատավորներին հատկացված բաժնում նստել էին Փաշհուրն ու երկու այլ Շեմի խնամատարներ: Առայժմ նրանք լռում էին՝ թողնելով, որ փրկություն քարոզող թափթփած մարգարեն, ում Երեմիան խանգարել էր իր միջամտությամբ, անձամբ հարուցի մեղադրանքը: Մորուքավոր տղամարդը դեռ զառանցում էր բարկությունից և անդադար փոխում պատահած չնչին նախատինքի բովանդակությունը: Երեմիայի էության մեջ նա տեսնում էր իր ախոյանին, ում ատում էր պարզունակ ատելությամբ: Մեղադրյալի աչքերը փնտրում էին կիսաշրջան կազմած դատավորների շարքում այն դատավորին, որն ասել էր. «Ես իմ ձեռքը կպահեմ քեզ վրա»,— բայց Ահիկամը, որ մաս էր կազմում դատավորների խմբին, դատարան չէր եկել: Գուցե նա դեռ ոչինչ չգիտեր: Գուցե նաև նա, իբրև զգուշավոր մարդ, զայրացել էր այդ անվստահելի անձի վրա, որը խախտել էր խոստումը և հրաժարվել դրանից: Այնուհետև Երեմիան տեսավ իրեն տարեկից երկու մարդու, որոնք նոր էին մուտք գործել դատավորների կիսաշրջան և, լինելով ամենից երիտասարդ անդամները, տեղ էին գրավել կիսաշրջանի աջ և ձախ ծայրերին: Եվ նա ճանաչեց նրանց. դրանք Ահիկամի երկվորյակ որդիներն էին՝ Գեդալիան ու Միքիան, որոնք Հովսիայի ժամանակ ծառայում էին դրսի քաղաքներում, և որոնց ինքը հազվադեպ էր հանդիպել: Երկվորյակ եղբայրները շատ նման էին իրար, բացի այն հանգամանքից, որ Գեդալիան ուժեղ էր և գունեղ, մինչդեռ Միքիան գունատ էր և հիվանդոտ: Երեմիան այնքան տխուր էր Ահիկամին չգտնելու պատճառով, որ իրեն ամենևին չէր կարող մխիթարել նրա երկու որդիների ներկայությունն իրենց հոր փոխարեն: Գեդալիան ու Միքիան շատ քիչ բան գիտեին իր մասին, նրանք զգույշ պիտի լինեին՝ չարատավորելու իրենց անունը մի հայհոյիչի պատճառով: Մի մեծ հուսահատություն համակեց նրան: Եվ հուսահատությունը վերածվեց մի վեհերոտ թուլության, իսկ վեհերոտ թուլությունը՝ մարդկային շնչակտուր վախի, և մարդկային շնչակտուր վախը՝ մահվան

սարսափի: Նրա ձեռքերը կառչեցին սյունից, իսկ գլուխը տատանվեց այս ու այն կողմ: Նա կորած էր:

Մազե թիկնոց հագած ամբաստանողը նոր էր ավարտել իր անողոք ելույթը: Բռունցքները սեղմեց քսաներեք դատավորների դեմ և բղավեց.

— Եվ այս իսկ պատճառով օրինավոր է, որ նա դատապարտվի մահվան...

— Դատապարտվի մահվան...– արձագանքեց իր հետ բերած երգչախումբը հմայված:

Այդ ընթացքում այն գիտակցությունը, որ ինքը մեռնելու է հուսազուրկ, պաշարեց Երեմիայի ողջ էությունը: Այդուհանդերձ, տարօրինակ կերպով հենց այդ գիտակցությունը նրան դարձավ աջակից: Նա մի քանի անգամ խոր շունչ քաշեց, որպեսզի հաղթահարի իր հոգու թուլությունը: Հիշեց Ուրիային, որը մահացել էր սպանդանոց տարվող գառան նման: Ո՛չ, ինքը չէր ցանկանում մեռնել Ուրիայի նման: Եվ չնայած որ իր ճակատը խոնավացել էր սառը քրտինքով, իսկ ձեռքերը դեռ դողում էին, նա բարձրացրեց գլուխը և սևեռուն հայացքով նայեց Մեշուլամին՝ իր դատավորին: Եվ մի անգամ ևս տարօրինակ էր, որ արդար թվացող այդ մարդու կերպարանքը, որն Իսրայելում թաքնված չարագործներից մեկն էր, ուժ տվեց իրեն: Մեշուլամը, սակայն, իր փոքրիկ ու սպիտակ ձեռքով փոքր-ինչ շոյեց իր գեղեցիկ ծալքերով սպիտակափառ մորուքը, ապա ուղղեց իր առաջին հարցը.

— Ճի՞շտ է, Երեմիա Անաթովթցի, որ դու աստվածահայհոյության հանցանք ես գործել՝ քարոզելով տաճարում, թե Սելովի սրբավայրի նման կավերվի այս տաճարը, իսկ այս քաղաքը կդառնա ավերակ ու անմարդաբնակ...

Երեմիան շատ հանգիստ ու դանդաղ դիմեց ինքնաարդարացման՝ ստեղծելով իր շուրջը հատուկ ուշադրություն.

— Դա ճիշտ չէ: Ես աստվածահայհոյության հանցանք չեմ գործել, քանզի Տերն ինքն է ինձ հանձնարարել մարգարեանալ տաճարի ու քաղաքի մասին, ինչպես որ դուք ձեր ականջներով լսեցիք...

Նախքան որ Մեշուլամը շարունակեր իր հարցաքննությունը կամ նախքան մեկ այլ դատավորի հարց տալը Գեդալիան ոտքի կանգնեց և շատ բարձրաձայն ասաց.

— Ես դեմ եմ մեղադրանքին, որովհետև դա չի համապատասխանում իրականությանը: Մարդ կարող է միայն ինքն իր կողմից անարգել Տիրոջը, և ոչ թե Տիրոջ կողմից թելադրված հայհոյել Տիրոջը: Կարո՞ղ է արդյոք Աստված աստվածահայհոյություն գործել: Ո՛չ: Մեղադրանքն ինքնին արդեն հակասում է ինքն իրեն, հետևաբար անիմաստ է...

Այստեղ Փաշհուրը հանգիստ վեր կացավ, ժպտաց քաղաքավարի, բայց նրա արագիլի աչքերը փայլեցին կրակոտ.

— Լսիր, Գեդալիա, որդի Ահիկամի... Շեմի խնամատարը հաճույքով կցանկանար դաս քաղել քո մեծ իմաստությունից... Ոչ մի մարգարե այնքան անմիտ չէ, որ ինքն իր կողմից հայհոյություն կատարի: Նա միշտ թաքնվում է Տիրոջ հետևում, երբ հայհոյում է:

Գեդալիան հակադարձեց որոշ խստությամբ.

— Ինչպե՞ս է տարբերում Փաշհուրը ճշմարտության խոսքը սրբապղծության խոսքից: Իհարկե, ամենուրեք շրջում են բազմաթիվ խաբեբա քարոզիչներ, սակայն դու պետք է ի վիճակի լինես հայտնաբերել դրանց, որոնց խորամանկությունը շատ անգամ զգալի չէ: Կան նաև խաբեբաներ, որոնք իրենք անգամ չգիտեն, որ խաբեբա են: Հետևաբար նրանց չի կարելի մեղավոր ճանաչել հայհոյության մեջ... Թող Փաշհուրն ինձ ապացուցի, որ փրկություն ու բարօրություն քարոզող բոլոր մարգարեները ճշմարտախոս են, իսկ բոլոր աղետ ու ապաշխարություն քարոզողները՝ խաբեբաներ ու հայհոյիչներ... Եթե նա կարողանա դա ապացուցել, այն ժամանակ միայն առաջադրված մեղադրանքն այս մարդու դեմ արդարացված կլինի...

Մեշուլամն ընդհատեց այդ վեճը, որը հոգուտ ամբաստանյալի էր ընթանում՝ պահանջելով Երեմիայից շարունակել իր պաշտպանությունը: Վերջինս, սակայն, խոսելիս իր հայացքը չէր հեռացնում իր դատավորի վրայից, ինչը Մեշուլամին հայտնապես անհանգստացնում էր: Նա ասաց.

— Տերն իմ միջոցով չխոսեց, թե կքանդի այս տաճարը, այլ Նա ասաց, եթե չլսեք իմ խոսքն ու ուսմունքը, Ես կկործանեմ այս տաճարը, ինչպես այն ժամանակ արել եմ իմ հին սրբավայրի հետ...

Երեմիան հազիվ էր ավարտել իր խոսքը, երբ Գեդալիան կրկին գրոհեց.

— Ահա այնտեղ են դատավորները և լսում են ասվածը... Ոչ մի վկա չի առարկում դրա դեմ... Այս մարդը չի նախատել Աստծուն, այլ մարդկանց...

Մեզ է հայհոյել, բայց ավելի ճիշտը՝ զգուշացրել, որ Տերը վրեժխնդիր պիտի լինի, եթե չապաշխարենք...

Միքիան՝ Գեդալիայի երկվորյակ եղբայրը, կիսաշրջանի մյուս ծայրից բարձրացրեց իր բարակ ձեռքը և ցածրաձայն ասաց.

— Այս դատարանին ուղղված մի հարց... Կա՞ արդյոք մի օրենք, որ գրված լինի մադկանց դեմ արված հայհոյանքի մասին... Այս դատարանն ունի՞ արդյոք որևէ նախադեպ՝ ընդդեմ զգուշացման նպատակով կատարված կոչի...

Այս խոսքերից հետո վեճ առաջացավ դատավորների և ունկնդիրների միջև: Իրավական հարցերում Սափանի ժառանգների դրսևորած հմտությունն ու եռանդը ձախողեցրին մեղադրանքը՝ նախքան դրա քննարկումը դատավարական խորհրդում: Միքիայի տված հարցի վրա կիսաշրջանում նստած ալեհեր գլուխներն իրար բախվեցին ու տաքացած վիճաբանեցին այն մասին, թե արդյոք այդ դատարանում եղել է մի նախադեպ, որի հետ համեմատելով հնարավոր լինի դատել ամբաստանյալին: Պարզ երևում էր ժողովրդի պառակտումը հատվածների. մի պառակտում, որը եռում էր վախի ծածկույթի տակ: Ամբարտավանությամբ հարբածները ցանկանում էին Երեմիայի կործանումը, անկախ նրանից՝ նա մեղավո՞ր էր, թե՞ ոչ: Մյուսները, սակայն, որոնք բռնակալ ուժից սարսափահար էին կամ բթացած, հանկարծ թվում էր, որ արթնանում են և քաջություն ձեռք բերում: Թույլերի հոգուց անհետանում է ընդհանուր պարծենկոտության արբեցությունը, և այնտեղ ինչ–որ բան հակվում է դեպի տկարը, որպիսին էր ամբաստանյալը: Մեղադրողը, որն զգացել էր, թե կորցնում է դատը, կրկին անգամ մոլեգնեց բողոքի գոչումներով: Նրա պահվածքն այնքան անտանելի դարձավ, որ Մեշուլամը, ի պաշտպանություն դատարանի արժանապատվության, ստիպված էր փրկության այդ ոխակալ քարոզչին դուրս վտարել դահլիճից: Այս միջադեպը նույնպես նպաստեց Երեմիայի դատին, որը, մեղադրանքի սյունին կապված, իր հանգիստ խոսքն ուղղեց լռած դատակազմին և բոլոր հավաքվածներին.

— Ես ձեր ձեռքում եմ,— ասաց նա:— Արեք ինձ հետ, ինչպես որ ձեզ համար ճիշտ է և լավ, բայց այս բանը պետք է իմանաք, որ եթե դուք ինձ սպանեք, ևս մեկ անգամ անմեղ արյուն կբերեք այս քաղաքի և իր բնակիչների վրա, ինչպես արեցիք Ուրիայի պարագայում...

Դա մի պարզ և արժանապատիվ ելույթ էր, որը խոր լռություն առաջացրեց: Ուրիայի ոչնչացման մասին եղած ակնարկն ամոթով թողեց շատերին: Նույնիսկ մեղավոր արյունն աղաղակում էր դեպի երկինք, որի համար պետք է պատասխանատվության ենթարկվեր ամբողջ ժողովուրդը: Փաշհուրը, սակայն, նկատի ունենալով իր աստիճանն ու հեղինակությունը, չցանկացավ ընդունել իր պարտությունը: Նա սաստկացրեց ու հստակեցրեց մեղադրանքը՝ դատավորներին ներկայացնելով Երեմիայի անբուժելի համառությունը և նրա հանցանքների անամոթ կրկնումը: Գեդալիան, սակայն, մի անգամ ևս միջամտեց.

— Արդյոք Շեմի խնամատարն իր իրավասության սահմանո՞ւմ է պատժել այս մարդուն պարզապես իր ասած խոսքի համար:

Փաշհուրը պատասխանեց.

— Շեմի խնամատարը, իր պարտականությունը կատարելուց բացի, ուրիշ ոչինչ չի արել...

Գունատ Միքիայի հոգնած ձայնն անմիջապես միջամտեց.

— Մի հարց այս դատարանին... Գոյություն ունի՞ արդյոք մի գրավոր օրենք, որ միևնույն հանցանքի համար իրավունք տա երկու անգամ պատիժ սահմանել... Արդյոք այս դատարանը նման մի նախադեպ կամ ավանդույթ ունի՞...

— Այս երկիրը, սակայն, ունի նման մի նախադեպ...

Բոլորը լսեցին, որովհետև այս բացականչությունը գալիս էր ունկնդիրների շարքից: Չափազանց տարեց մի մարդ ներկաների միջով ճանապարհ էր բացում՝ առաջ անցնելու: Բոլորը նկատեցին, որ նա գյուղական ավագներից է, այսինքն՝ Հուդայի գյուղապետներից մեկը, որն իր համայնքի նպաստով տաճար էր եկել՝ ուխտի: Եվ այս աշխույժ ծերունին՝ հողին կառչած այս անգրագետ գյուղացին, ում կյանքը հետ էր գնում մինչև հեռավոր անցյալը, հանգիստ մոտեցավ ուսյալ քահանաներին, աստվածաբաններին, բարձրաստիճան պաշտոնյաներին և սկսեց սովորեցնել նրանց մեղմ, բայց հստակ խոսքով.

— Ահավասիկ սա է նախադեպը... Միքիա Մորստացին՝ Աստծու մարգարեն իմ պապի օրերում, Հուդայի թագավոր Եզեկիայի ժամանակ, թող Տերն օրհնի վերջինիս հիշատակը... Միքիա Մորստացին հետևյալն է մարգարեանում ամբողջ ժողովրդի առաջ. «Ահա թե ինչ է ասում Զորաց

Տերը. Սիոնը կհերկվի դաշտի նման, և Երուսաղեմը կլինի աղբի կույտ, իսկ տաճարի լեռը՝ անտառապատ մի բարձունք...»: Արդյոք այս խոսքերի համար Հուդայի թագավոր Եզեկիան և ամբողջ Հուդան ելա՞ն սպանելու Միքիա Մորստացուն... Ո՛չ, Եզեկիան՝ իմ պապի ժամանակվա թագավորը, երկնչեց Տիրոջից և Նրա առջև աղոթեց, որ Տերը գթա և իրենցից հեռացնի մոտալուտ արհավիրքը... Իսկ դուք այստեղ անեծք եք ուզում բերել մեր հոգիներին...

Այս ելույթով մի տգետ ու զառամյալ գյուղացի ոչ միայն ուսուցանեց Երուսաղեմի իմաստուններին, այլև հանդիմանեց նրանց: Եվ դրանում ամենից վատն այն էր, որ այս հանդիմանությունը չէր բխում միայն ժողովրդական պարզ հասկացողությունից, այլ առնված էր նրա իմաստության գանձարանից՝ համաձայն հին օրենքների ու կանոնների: Ոչ թե հետազոտողներից ու մեկնաբանողներից մեկն էր նա, այլ հողին կառչած մի պարզ ու տարեց գյուղացի, որը ներկաների մեջ արթնացրեց հիշատակը Միքիա մարգարեի և դրանով դատակազմի առաջ բերեց մի անհերքելի իրավական ապացույց՝ իբրև նախադեպ: Սրահում գտնվող ունկնդիրներն ուրախացան, որ մի անուս մարդ կարողացավ պարտության մատնել իմաստուններին, և նրա հաղթանակը համարեցին իրենցը: Ամեն կողմից ինչեց. «Լսե՛ք նրան, քանի որ նա ձեզ ասաց պարտն ու պատշաճը»: Կիսաշրջանում տհաճ լռություն տիրեց: Երեմիայի բախտը վերջապես փոխվում էր դեպի լավը: Փաշհուրի կողմից մի վերջին փորձ՝ վերարծարծելու մեղադրանքը, խեղդվեց ունկնդիրների ծաղրի ու զայրագին բացականչությունների մեջ, որոնք մի կարճ ժամվա ընթացքում արդեն ամբողջությամբ փոխել էին իրենց կեցվածքը: Մեշուլամը նշան արեց Շեմի խնամատարին, որ վերջ տա իր միջամտությանը: Այնուհետև ազդարարեց ընդունված սովորության համապատասխան քվեարկության գնալ: Խառը դատակազմի ձայները հավասար էին՝ քսանմեկ ընդդեմ քսանմեկի: Որոշումը կախյալ էր քսաներեքերորդ ձայնից, որը պատկանում էր ժողովը նախագահողին: Մեշուլամը բարի ժպիտով հաստատեց ամբաստանյալի ազատ արձակումը.

— Ազա՛տ արձակեք նրան,— հրահանգեց նա կաշեգոտիներով զինված հսկիչներին:

Երբ պահապանները հեռացրին պարանը, որով կապել էին Երեմիային սյանը, և ազատ արձակեցին նրան, Մեշուլամն իր փափուկ ձեռքով

դադարեց շոյել իր փառավոր և ձյունասպիտակ մորուքը, հրամայեց լռություն պահել և ասաց.

— Երեմիա Անաթովթցի, այս դատարանը քեզ մեղավոր չի ճանաչում աստվածահայհոյության մեջ: Այնուամենայնիվ, հազարավոր վկաների աչքին դու հանցավոր ես նրանում, որ Տիրոջ *շաբաթ* օրը տաճարում քո խոսքի միջոցով ժողովրդական մեծ ընդվզումների սանձազերծման պատճառ ես եղել: Դրա համար Հուդայի թագավորը քեզնից հաշիվ է պահանջում: Այսպիսով, դու կներկայանաս թագավորի առաջ, որը նաև քո դատավորն է...

Մեշուլամը մեղմ նայեց շուրջը: Ներկաները լռեցին, քանի որ թագավորի դեմ ապստամբությունը կարող էր յուրաքանչյուրի համար, իբրև դատավորի, շատ թանկ արժենալ: Գանձապետի պաշտոնին արժանացած ջրաղացպանը հավանաբար ակնկալում էր, որ այժմ ջարդվելու է Երեմիայի հպարտությունը, և ինքն ափսոսանքով մերժելու է նրա լալահառաչ աղերսանքը՝ ողորմելու և խնայելու իրեն: Համենայն դեպս, նա այս հարցում սխալվում էր: Երեմիան ժպտաց անտարբեր: Նրա հոգուց բոլորովին դուրս էին մղվել հուսահատությունը, թուլությունը, մարդկային վախը, մահվան երկյուղը, և իր հոգում տեղ էր բացվել մի այնպիսի անպատում վստահության, որի փառքն ինքը, առաջին անգամ լինելով, գիտակցում էր այդ դատարանի առաջ: Ինչքան հաճախ կողոպտել էին իրեն, զրկել ու լքել, բայց այս անգամ, այս պայքարում, ինքը զգում էր, որ Տերն իր հետ է: Ինքն արդեն գիտեր, որ պայքարից դուրս է գալու անվնաս: Մի՞թե զառամյալ գյուղացին չէր հայտնվել իբրև Աստծու ճշմարիտ ու թաքնված առաքյալ: Հզորության մի անզուսպ զգացողություն համակեց Երեմիային և լցրեց նրան ցնծագին վեհացումով. «Դու իմ կողքին ես, ինչպես հզոր մի մարտնչող... Դրա համար ինձ հետապնդողները սայթաքում են և ամաչում...»:

Երեմիան ժպտալով խոնարհվեց քսաներկու դատավորների և նրանց գլխավորի առջև.

— Ես կներկայանամ թագավորին և կխոսեմ նրա հետ...

Հերթապահող պահակախումբը շրջապատեց նրան: Մեշուլամը, սակայն, թույլ չտվեց, որ կապեն նրան:

* * *

Վաղ առավոտյան թագավորն արդեն իր եգիպտական շքեղ կառքում նստած, որը նվեր էր ստացել փարավոնից, ուղղվել էր դեպի Ձիթենյաց լեռան վրայի իր ամառային պալատը: Դա *շաբբաթի* օրենքի կրկնակի խախտում էր, այսինքն՝ տեղից հեռանալը և կառքով դուրս գալը: Հովակիմի համար, սակայն, ամենևին կարևոր չէր *շաբբաթի* խախտումը, թեկուզ դա լիներ յոթ կամ տասներկու անգամ, քանզի նա ստիպում էր երկրի ազատ քաղաքացիներին,— իր եղբայրներին ու քույրերին,— ստրուկի նման աշխատել իր շինարարություններում նաև սրբազան օրվա ընթացքում: Մյուս կողմից, քսաներեք դատավորների համար անհաճո անհրաժեշտություն էր՝ որոշելու իրենց հետագա անելիքը: Յուրաքանչյուր ամբաստանյալ պետք է տարվեր իր դատավորի առաջ նախքան մայրամուտը. դա նրա անկողոպտելի իրավունքն էր: Հետաձգումը մեկ գիշերով իսկ օրենքի խախտում էր, որը մի բարեխիղճ դատարան չէր կարող իրեն թույլ տալ: Հետևաբար, անհրաժեշտ էր փնտրել որոշումներ ու դրույթներ, որոնք կլուծարեին *շաբբաթ* օրվա սահմանափակ տեղաշարժի օրենքը նաև ամենախիստ պահողների համար: Հնում եղել են նման որոշումներ, ինչպես, օրինակ՝ «Պատերազմը կոտրում է *շաբբաթը*», «Հալածանքն ընդհատում է *շաբբաթի* հանգիստը», «Ապստամբությունն ու խռովությունը խախտում են *շաբբաթը*»: Նկատի է առնվում իրավական վերջին ձևակերպումը, որը մեկնաբանվում է այսպես՝ «Ապստամբության դեմ պաշտպանվելիս թույլատրվում է խախտել *շաբբաթի* հանգիստը»: Որոշում են Երեմիային անհապաղ տանել արքայի Ամառային պալատ՝ յոթ հոգուց բաղկացած մի պատվիրակության ընկերակցությամբ, որը ձևակերպելու էր մեղադրանքը: Գեդալիան ու Միքիան չէին ընտրվել այդ պատվիրակության կազմում: Պատկառելի Մեշուլամը, սակայն, չնայած իր տարիքին, չէր ուզում առիթը բաց թողնել և երախտագետ թագավորին անձամբ ներկայացնել իր որսը: Արդեն երեկո էր, երբ հասան Ամառային պալատ: Մարդկանց մի բազմություն միացել էր պատվիրակությանը՝ շրջապատելով պահապաններին ու ձերբակալվածին: Երեմիան զգաց մի թեթև հպում իր ուսին: Դա Բարուքի ձեռքն էր, ով փնտրել էր նրան, և հիմա նշան տալով հայտնում էր իր անսակարկ պատրաստակամությունը՝ ամեն ինչում օգնելու նրան:

Աշխույժ աշխատանք էր գնում Ամառային պալատի ներսում և շուրջը: Հովակիմը մեծ շինարար էր, բայց միևնույն ժամանակ դրանից շատ ավելի մեծ վերականգնող էր: Այդուհանդերձ, նրան տրված չէր վայելելու ավարտն իր աշխատանքի, որի նկատմամբ իր մեջ առաջացած մի բութ դժգոհություն ստիպում էր իրեն ընդհատել աշխատանքը և միշտ վերստին վերակառուցել: Այսպես էր պատահել երիտասարդության տարիներին իր կառուցած եգիպտական դամբարանի հետ, որը նոր էր քանդել, որպեսզի իր համար նորը կառուցի՝ չլսված մեծությամբ, հենց Ամառային պալատի մոտ՝ տաճարի լեռան տեսարանով:

Ամեն կողմից լսվում էին մրճահարման, սղոցների ու խարտոցների ձայներ, մերթընդմերթ էլ ստրուկների վրա հսկող վերակացուների հրահանգներ: Աշխատանքը դադար չուներ: Երեմիան սևեռուն նայում է այն քահանաներին, որոնք առաջնորդում էին իրեն դատավորների մոտ: Այդ քահանաները ստիպված էին խոնարհեցնել իրենց նայվածքները ձերբակալվածի առջև՝ ամաչելով այն բանից, որ թագավորն ամենայն հանդգնությամբ արհամարհել էր *շաբբաթի* օրենքը: Դրա համար ոմանք անհրաժեշտ էին համարում թույլ տալ փախուստը Անաթովթի քահանայի որդու, որը ոչ մի հանցանք չէր գործել, բացի ըմբոստանալուց «իրական» դրության դեմ: Ծեր Մեշուլամն էր առաջ մղում թափորը՝ արագ հասնելու համար դարպասին: Պալատը պաշտպանված էր ավելի քան հարյուր ռազմիկներից բաղկացած պահակախմբով, քանի որ Հովակիմն ապրում էր սպանվելու վախով, ինչպես իր պապը՝ Ամոնը: Այդ օրը, սակայն, բացի թիկնազորից, նրա հրամանատարից, ներքինիներից և ծառաներից, արքայական ընտանիքը մենակ էր Ամառային պալատում, քանի որ Հովակիմի մշտական ընկերները՝ Եղնաթանն ու Հերախմե'էլն այդ առավոտ արձակուրդ էին վերցրել: Սա էլ, արդարև, Տիրոջ նախախնամության միջամտությունն էր՝ հօգուտ Երեմիայի:

Անմիջապես բացվեց պալատի դարպասը յոթը դատավորների առջև, որոնց գլխավորում էր Մեշուլամը: Ներքինիների առաջնորդությամբ դատավորների խումբն անցավ բազմաթիվ շքեղ սենյակների և սրահների միջով: Նման շքեղություն և շռայլություն դեռևս ոչ ոք չէր տեսել Երուսաղեմում: Դրա հետ համեմատած՝ Սողոմոնի պալատը և փարավոնի աղջկա հարակից կանանոցն անճաշակ և անշուք բաներ էին:

Վսեմաշուք Հովսիա թագավորի բոլոր զավակները,— ինչպես գիտեր Երեմիան,— իրար նմանվում էին իրենց ունեցած մոլությամբ՝ վայելուչի, հմայիչի, գեղեցիկի, բուրմունքի և բուրավետության հանդեպ: Խեղճ Հովաքազն ամբողջ օրը մի անկյուն քաշված, որը ծառայում էր իրեն իբրև արհեստանոց, քանդակում էր եգիպտական գեղեցկությունների կրկնօրինակներ: Եվ երիտասարդ Մաթանիայի գեղեցիկ աչքերը զմայլանքով էին նայում գեղեցկորեն պատրաստված զարդեղենին, թանկարժեք ու շողշողուն քարերին, նույնիսկ գունագեղ ապակիների կտորների կույտին:

Շաբաթի օրով քահանաներից ու բարձր պաշտոնյաներից բաղկացած դատական խմբի հայտնվելը պալատում պետք է մեծ անակնկալ մատուցեր Հովակիմ արքային: Նա հագել էր մի ազատ և շատ բարակ հյուսված տնային զգեստ,— ինչպես որ փարավոնը սովորություն ուներ հագնվելու,— որը փափուկ ծալքերով իջնում էր մինչև կոճերը: Պատվիրակությունը հավաքված էր մի ընդարձակ դահլիճում, որը կոչվում էր «Դատարանի ամառային դահլիճ», ուր ստիպված էր անվերջ սպասել թագավորին: Տարեց դատավորները, նույնիսկ անխորտակելի Մեշուլամը, հոգնածությունից դեփ-դեղին էին կտրել և հազիվ էին կարողանում կանգնած մնալ: Նրանցից ոչ մեկն այլ բան չէր ուզում, քան մի նստատեղ և հովացնող մի ըմպելի: Ակնհայտ էր, որ Հովակիմը չգիտեր *շաբաթ* օրով այդ բարեպաշտ մարդկանց այդտեղ հայտնվելու և իրեն խանգարելու պատճառը: Նա անընդհատ շփում էր իր նիհար ձեռքերն իրար՝ ժամանակ առ ժամանակ հոտ քաշելով դրանցից: Այս վարմունքը ցույց էր տալիս, որ ընդմիջել էին նրան իր սիրելի զբաղմունքի ընթացքում, երբ ինքը խորացել էր կառուցման և վերականգնման իր աշխատանքներում: Բռնության այս սարսափազդու թագավորը, ում վրեժխնդրության սուրն այնքան անկաշկանդ էր գործում, ժողովրդին հմայող ու մոլորեցնող այս վարպետ հռետորն իր բոլոր բնակարաններում ուներ իր սեփական խոհանոցները, ուր նա ինքն իրար էր խառնում ու թորում տարաբնույթ նյութեր: Նա իրար էր խառնում տարբեր գինիներ, հյութեր և համեմունքներ: Իրար էր խառնում ծաղիկներից պատրաստված բուրումնավետ օծանելիքներ և պտուղների կորիզներից հանված յուղեր: Իրար էր խառնում նաև գույներ, խնկեր, զանազան համեմունքներ, այն մոլի ցանկությամբ,

որ մեջտեղ բերի նորն ու անծանոթը, կյանքը կախարդական նմանությամբ երկարաձգելու միջոցը: Նրա այդ ցանկությունը վաղուց ինքնանպատակ էր դարձել, նա գնալով ամեն անգամ ավելի էր կենտրոնանում իր ապագայի մումիայի կատարելագործման վրա, որը պետք է գերազանցեր առ այդ Եգիպտոսում արվող բոլոր հնարքներն ու աշխատանքները: Հովակիմը համակված էր միախառնելու ոգով, մինչդեռ Տերը պահանջում էր Դավթի տանից բաժանման և առանձնացման ոգի: Կախարդական խոհանոցում երկար մնալը կարծես թե լուրջ ազդեցություն էր թողնում թագավորի առողջության վրա: Նրա փոս ընկած այտերը կարմիր նշաններ ունեին, ինչպես տենդի մեջ գտնվող մարդու: Նրա աչքերը մշուշապատ էին, ինչպես աչքերը ծանր հարբածի, իսկ հաստաշուրթ բերանը բացվում էր, ինչպես վավաշոտության մեջ սպառված մեկի բերանը: Քնաշրջիկի նման նա բարձրացավ աստիճանները, հասավ իր բարձրադիր գահին և մեջքով հենվեց բազկաթոռին: Մեշուլամը և մյուսները խոնարհվեցին նրա առաջ, այնուհետև սկսվեց մեծ տրտունջը.

— Պատիվ ունենք տեսնելու դեմքը մեր արքայի...

Հովակիմը կարծես թե այս ամենից դեռ ոչինչ չէր նկատում իր շուրջը: Իր թունավորված զգայարանքները հեշտասիրությամբ պտտվում էին իր լքած բույրերի շուրջը: Որոշ ժամանակ անց նա ուշքի եկավ և իրեն միայնակ գտավ երուսաղեմցի այդ անհաճո մարդկանց դիմաց: Անհանգիստ նայեց իր շուրջը: Ո՞ւր էին Հերախմե'էլը, Եղնաթանը և մյուս իշխանները, որոնք ուժ էին տալիս իր սրտին և արձակում իր լեզվի կապանքները: Մեշուլամը, երերալով իր ոտքերի վրա, գոհունակ շրջվեց դեպի թագավորը և իր ալիքավոր մորուքի տակից բացեց բերանը.

— Թող իմ մեծափառ արքան շնորհ անի լսելու իր ծառային... Այս մարդն այստեղ՝ թագավորի առջև, Երեմիա Անաթովթցին, մարգարեացել է տաճարում...

Հովակիմը, գնալով ավելի անհանգիստ դարձած, ոչ իսկ լսեց Մեշուլամին, այլ շարժվեց ու շրջվեց իր աթոռին նստած, որպես թե պատրաստվում էր հաջորդ վայրկյանին ցատկել այդտեղից: Սակայն հանգստացնող մի ժպիտ հանկարծ պայծառակերպեց նրա դեմքը, քանի որ մի ձայն կանչեց՝ հայրիկ: Եվ մի քնքույշ, գունատ երեխա՝ մոտավորապես տասներկու տարեկան մի տղա, տատանվելով մտավ դահլիճ: Դա

Հեքոնիան էր, թագավորի որդին, ում բոլորը փաղաքշաբար Քոնիա էին անվանում, քանի որ Տերը Դավթի տան շառավիղներին մինչ այդ երբեք չէր շնորհել նման մի գեղեցիկ տղա, նման մի սիրալիր իշխան: Ձնայած տարիքի հետ համեմատած իր փոքրակազմ տեսքին՝ Քոնիան ուներ Եհովայի երկնավոր զորքերին հատուկ լուսավոր ու նրբագեղ մի կերպարանք: Իր սպիտակ ու նուրբ դեմքի վրայի աչքերն ամեն ինչ էին ասում, որոնք հազիվ թե կարողանային թաքցնել իր հոգին: Այդ աչքերը մելամաղձոտ և հակակրական նայվածքով չափում էին բարձրաստիճան և ինքնակոչ հյուրերին: Թագավորն իր մոտ կանչեց Քոնիային, գրկեց նրան և ապա նստեցրեց իր ծնկների միջև: Նա այն միակ որդին էր, ում ինքը շատ էր սիրում:

Այդ ընթացքում արքունի սպասավորներն ու պալատի մոտ գտնվող ազնվականները զարմանալի շտապողականությամբ հավաքվել էին թագավորի բարձր գահի աստիճանների վրա: Այդ ժամին նախատեսված չէր այցելությունը մի պատվիրակության և թագավորի դուրս գալը խոհանոցից: Մեշուլամը՝ այցելուների խոսնակը, մեղադրյալի ձեռքից բռնած, դարձյալ խոսք առավ: Այդ պահին, սակայն, Երեմիան կոպտությամբ պոկեց իր ձեռքը նրանից և ազատ ու համարձակ կանգնեց Հովակիմի դիմաց և ասաց.

— Այո՛, ես ասել եմ Տիրոջ խոսքը տաճարի մասին, իսկ հիմա ես ասում եմ Տիրոջ խոսքը քո մասին, ով Հուդայի թագավոր, որ նստել ես Դավթի գահին, լսիր Տիրոջ խոսքը, դու և քո ծառաները, քո ժողովուրդը և բոլոր նրանք, ովքեր մուտք են գործում քո դարպասներով...

Մեշուլամը և նրանք, ովքեր բերել էին նրան թագավորի առաջ, սարսափահար էին և մերթընդմերթ կարմրած ու գունատ մինչև իրենց գորշ մորուքները: Գանձապետը բարձրացրեց իր ձայնն աղերսալից.

— Մեծափառդ իմ արքա...

Հովակիմը, սակայն, գլխի մի անհամբեր շարժումով ստիպեց նրան լռել: Նրա աչքերը միայն Երեմիայի վրա էին կենտրոնացած: Ակնհայտ էր, որ նա փորձում էր դուրս գալ իր ապշած վիճակից, որն իրենից դեռ ամբողջությամբ չէր անհետացած: Եվ նրա աչքերը ճանաչեցին Երեմիային՝ իր դավաճան հոր վերջին ընկերոջը: Եվ նրա ականջները ճանաչեցին այն ձայնը, որը բուռն կերպով զայրացրել էր իրեն Ձատիկի

երեկոյին: Հովակիմի ձեռքերը բռնեցին Քոնիայի նեղ ուսերը: Նրա դեմքին չէր նկատվում զայրույթի որևէ նշան, այլ զարմանք և լարվածություն: Մինչ Երեմիան, ամբողջությամբ լցված Տիրոջ մրմունջներով, գիտեր առավելագույն արթնամտությամբ, որ իր կյանքը կախված է նրանից, որ այդ զարմանքը չթուլանա ու չանհետանա, այլ բոլորի գլխին ընկնի՝ իբրև մի ուռկան.

— Այսպես է ասում Տերը քեզ. Եղի՛ր արդար, փրկի՛ր զրկվածներին իրենց շահագործողների ձեռքից, մի՛ ճնշիր թույլերին, օտարներին, այրիներին, որբերին, բռնություն մի՛ գործադրիր և անմեղ արյուն մի՛ թափիր: Այն ժամանակ միայն պալատի դարպասով հավիտենապես պիտի մուտք գործեն թագավորներ... Բայց ի՞նչ ես անում դու. դու բռնություն ես գործադրում և արյուն թափում: Այո՛, դու քո այդ ձեռքերով սուրբ և անմեղ արյուն ես հեղել...

Երեմիայի ձայնը երբեք չէր հնչել բարձր և ուժեղ հանդիսավորությամբ, ինչպիսին էր Բարուք մարգարեի պարագայում: Այդուհանդերձ, խոսքերի խիստ չորությունը, որոնց միջոցով շպրտվել էր ճշմարտությունը թագավորի երեսին, դարձնում էր այդ մարտահրավերի քաջությունը տասնապատիկ անգամ անխոհեմ ու խելագար: Այո, անխոհեմությունը հասել էր այն սահմանին, ուր այլևս այն դարձել էր անխուսափելի: Ոչ ոք չէր շարժվում, բոլորի աչքերն ապշած նայում էին Հովակիմին: Բավական էր թիկնազորին ուղղված ցասումնալից մի ակնարկ, և Երեմիան անմիջապես խեղդամահ կարվեր՝ փռվելով խսիրի վրա, ոչ այլ տեղ, որպեսզի թանկարժեք իրերին ոչ մի կաթիլ արյուն չկպչեր: Բայց այդպես չպատահեց: Թագավորը չբացեց բերանը և մնաց իր տեղը հանգիստ նստած: Ինչպես յուրաքանչյուր բռնավոր, որը մեծ հեշտությամբ վնաս էր հասցնում ուրիշներին, բայց ինքն իր համար չափազանց փխրուն էր և զգայուն: Նա անողոք էր իր կատարած հարձակումների ընթացքում, իսկ այժմ հենց ինքը ենթակա էր անմիջական հարձակման, որի պատճառով էլ դարձել էր կաթվածահար: Թագավորի այդ կաթվածահար վիճակը վարակեց նաև բոլոր մյուսներին: Դատական այդ սրահում Երեմիան դարձել էր տերը կացության այն աստիճան, որ տառապում էր թագավորի անմեղսունակ տղայի համար, որին այդ մեծ ժամին չէր կարողացել խնայել, որպեսզի չլսեր իր խոսքերը: Բայց Քոնիան՝ Դավթի սերնդի այդ

հրեշտակային կերպարը, նայում էր նրան՝ առյուծին հանդիպող եղնիկի սարսափով: Երեմիան այդժամ նույնպես չի բարձրացնում իր ձայնը, այլ ավելի է ցածրացնում այն.

— Անարդարությամբ ես կառուցել քո տունը, իսկ այս սրահներն էլ՝ անիրավ կերպով... Արդյոք քեզ փարավոնի կամ Բաբելոնի թագավորի տեղ ես դրել... Քո հայրը նույնպես կերավ ու խմեց և ուրախացավ, բայց նա միշտ սիրում էր Աստծու օրենքը և պահում մարդկանց իրավունքը...

Երեմիան օգտագործում է իրեն շնորհված առիթը մինչև իր ծայրագույն վերջնաժամկետը: Հովակիմ արքայի հոր անվան պարզ հիշատակումն արդեն մի սարսափելի մեղադրանք էր, որը ցնցեց ամբողջ դահլիճը: Թիկնապահները ձեռքները տարան իրենց սրերին: Երեմիան, սակայն, թեքվեց դեպի առաջ, քանզի Տիրոջ խոսքը, որ այդ պահին պիտի ասեր, վերաբերում էր միայն Դավթի տանը և ոչ թե ուրիշներին: Նա շշնջաց.

— Այսպես է ասում Տերը Հովակիմի մասին. Թող այդ մարդու վրա չողբան և չասեն՝ վա՛յ, վա՛յ, եղբա՛յր իմ, վա՛յ, վա՛յ, սիրելի՛դ իմ: Ոչ ոք թող չողբա քեզ վրա և չասի՝ վա՛յ իմ թագավոր, վա՛յ Նորին վեհափառություն...

Այնուհետև նա ևս մեկ անգամ խոր շունչ քաշեց և, որպես հատուցում Ուրիայի, ասաց պարտն ու պատշաճը.

— Ինչպես մեկը մի սատկած էշ է թաղում, այդպես էլ քեզ պիտի թաղեն: Քեզ քարշ պիտի տան և գցեն քաղաքի դարպասներից դուրս...

Հովակիմը տեղից վեր չցատկեց, այլ խուսափողական կոթնեց աթոռի հենակին, ասես թե սարսափելին սկսել էր արդեն տեղի ունենալ: Արդյոք դեռ մտադի՞ր էր բալասաններով անմահացնելու իր մարմինը: Շրջապատի մարդիկ, որոնք ոչինչ չէին լսել մարգարեական շշուկներից, մռայլ դեմքերով իրար էին նայում: Թագավորի ձեռքերը ջղաձիգ ու դանդաղ սկսեցին սեղմել իր աթոռի հենակները: Նրա դեմքի հետզհետե շառագունելը ցույց էր տալիս, որ նա արթուն վիճակում է: Նրա նայվածքը փնտրում էր թիկնազորի հրամանատարին: Այդ վերջին պահին, սակայն, տեղի ունեցավ Տիրոջ փրկարար միջամտությունը: Փոքրիկ Քոնիան, որ իր հոր ոտքերի մոտ էր, և որն ստիպված էր եղել լսել անխուսափելին, հանկարծակի ուշագնաց եղավ: Տղայի հոյակապ

դեմքն անմիջապես դիակի գույն ստացավ, կարծես սիրտը դադարել էր բաբախելուց:

Թագավորը սկսեց աղաղակել, գրկեց և վեր բարձրացրեց իր սիրելի տղային, ջուր պահանջեց, հրամայեց բժիշկներ և օգնականներ բերել: Տիրեց մեծ շփոթ և իրարանցում: Թագավորը որդու անշարժ մարմինը մոտեցրեց մարգարեին՝ թախանձագին աղերսանքով.

— Թող քո Տերը փրկի նրան: Աստված մեր, փրկիր նրան...

Երեմիան ձեռքը հանգիստ դրեց պատանու դալուկ ճակատին: Երկար չտևեց, քան սրտի տասներկու բաբախյուն, երբ Քոնիան նորից բացեց իր աչքերը: Սկզբում ներկաները ժպտացին տարտամ, բայց երբ անդրադարձան եղածին, նրանք մի անգամ ևս լցվեցին աննկարագրելի սարսափով:

Հաղթողը հեռացավ տխրությամբ: Նա դանդաղ անցավ Մեշուլամի և իր դատավորների կողքով, թիկնազորի միջով, ճոխ սենյակներից սենյակ, ասես անտեսանելի լիներ, մինչև որ անարգել դուրս եկավ գլխավոր դարպասի միջով և ըմբոշխնեց մայրամուտի տեսարանը: Նրան, սակայն, զարմացնում էր այն, որ ինքը ոչ միայն ուրիշների համար է անտեսանելի դարձել, այլ նաև ինքն իր համար:

«Աստված փրկում է թագավորի որդուն»

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ

ԱՇԽԱՏԱՆՔԸ ԹԱՔՍՏՈՅՈՒՄ

Անլուսին գիշեր էր Անաթովթի բլուրների վրա: Աշնանային երկու «սարսափելի օրերը» վաղուց անցել էին: Եղանակն արդեն խստաշունչ էր: Մի համառ քամի փչում էր Քեղկիայի մեծ կալվածքը եզերող ձիթենիների արծաթյա սաղարթների վրա: Ամենուրեք զգալի էր մի մռայլ հակասություն: Երեմիան ու Բարուքը լուռ քայլում են հին պարսպի երկայնքով, որն ամրոցի նման շրջապատում էր գերդաստանի ունեցվածքը: Նրանք ամիսներ շարունակ թաքնված էին Երուսաղեմի մոտակայքում: Միայն Ահիկամն ու նրա երկվորյակ որդիները գիտեին նրանց թաքստոցի տեղը: Ըստ երևույթին, Հովակիմը, Եղնաթանն ու Հերախմե'էլն այլևս հոգնել էին Երեմիային հետապնդելուց: Հսկայական աշխատանք էր եղել այդ արշավի կազմակերպումը: Այն տարածվել էր հարևան բոլոր երկրներում՝ իջնելով դեպի հարավ և հասնելով մինչև Նոփ: Այժմ՝ ձմռան սկզբին, թվում էր, թե թագավորը վերջապես ըմբռնել է, որ ինքը պարտվել է իրենից ավելի ուժեղի կողմից: Հուդայում տարածված շշուկների համաձայն՝ այդ ավելի ուժեղից ստացած մարտահրավերի պատճառով Հովակիմի վիճակը տեսանելիորեն վատացել էր: Կարո՞ղ են երբևէ ուժն ու բռնությունն արժեք ունենալ, երբ իրենց կողքին գոյություն ունի իրենցից գերադաս մի ուժ, որից հնարավոր չէ վրեժ լուծել: Պատժելու անկարողությունը տկարացնում է իշխանության ուժը:

Երեմիայի համար, սակայն, հասել էր տունդարձի ժամը: Այդքան ամիսներ հետո թագավորի լրտեսները պիտի շարունակեին ամեն տեղ փնտրել նրան և կասկածի տակ առնել՝ իբրև նրա ապաստարան, բացի նրա հայրական տնից: Այնուամենայնիվ, հանուն մոր ապահովության,

անհրաժեշտ էր առավելագույն զգուշություն ցուցաբերել: Երկու գիշեր էր, որ ինքն ու Բարուքը գաղտնագողի քայլում էին պարսպի շուրջը: Վերջինս գունատ էր և ընկճված: Վարը՝ Անաթովթում, իմացել էր, որ իր բացակայության ընթացքում կարճ ժամանակում իրար հետևից մահացել էին իր ծնողները: Եվ իրեն թույլ չէին տվել հրաժեշտ տալ նրանց ու թաղել: Ուսուցչի անողոք Պատվիրատուն ճնշում է նաև աշակերտի էությունը՝ հետզհետե ավելի նսեմացնելով նրան: Բարուքի ճակատագիրը նույնպես դարբնվում էր Տիրոջ կողմից՝ հեռացնելով նրան մարդկային բոլոր տեսակի կապերից: Ծնողների մահը և այն փաստը, որ ինքը չէր կարողացել ողբալ նրանց վրա, մի ուժեղ հանգամանք էր, որի համար Բարուքն անընդհատ ստիպում էր Երեմիային վերադառնալ տուն: Ի վերջո, Աբին պիտի որ շատ ծերացած լիներ, տարիների բեռան տակ կքած, և վաղը կարող էր ուշ լինել:

Նրանք հասնում են պարսպի այն քայքայված կետին, ուր Երեմիան պատանի ժամանակ հաճախ էր բարձրանում, երբ վերադառնում էր գիշերային իր փախուստներից՝ իր ականջներին հասնող կիսավարտ շշուկներից խուսափելու համար, և դարպասները փակված էին: Նույնիսկ հիմա էլ բարձրանում է այնտեղ արագաշարժ և ճկուն կերպով: Նրա նիհար մարմինը, հակառակ իր կրած բոլոր տանջանքներին, չէր կորցրել իր առույգությունն ու երիտասարդությունը: Նա նստում է պարսպի գագաթին և ցածրաձայն հանձնարարում է Բարուքին, որ զգուշությամբ հսկի և անմիջապես հաղորդի իրեն որևէ վտանգ նկատելիս: Ո՞վ գիտե: Վերջալույսի պահին իրենք ճանապարհի վրա տեսել էին մի քանի զինված մարդիկ, որոնք հնարավոր է՝ ճանաչած լինեին իրենց:

Այնուհետև Երեմիան ցատկում է փափուկ խոտի վրա: Երկար մի պահ հանգստանում է այնտեղ՝ այն հաճելի զգացողությամբ, որ երազում է: Ոչինչ չէր կարող զրկել նրան այդ երազկոտ զգացումից, ըստ որի ինքը դեռ պատանի է, Եհովան առայժմ միայն իր հետ է խաղում, և ինքը, ինչպես միշտ, վերադառնում է տուն, առանց դեռևս զգալու Տիրոջ և աշխարհի խստությունը: Իրեն թվում է, որ ինքը քայլում է երեկվա իր հետքերի վրայով: Տարիների թավալումի հիշողությունը ջնջվում է իր մտքից:

Երեմիան հանգիստ քայլերով մոտենում է իր հայրական տանը: Տղայական ժամանակվա հին վախը համակում է նրան այն առումով,

որ իր վերադարձի աղմուկը կարող է արթնացնել քնած տնեցիներին: Խավարում ուրվագծվում են լայն ու քառակուսի տեսքով տները: Երեմիան կանգ է առնում: Շատ հավանական է, որ սենյակներում շատացել է քնած մարդկանց քանակը: Իր եղբայրների կանայք՝ Մոխելեթն ու Սուան, հավանաբար նոր զավակներ էին ծնել: Նրանց ավագ որդիներն ու դուստրերը պետք է վաղուց մեծացած լինեին և հիմա արդեն ամուսնացած: Այժմ, անկասկած, նրանց որդիների որդիներն են նստում նահապետական հսկա սեղանի շուրջը՝ Աբիաթարի սրահում:

Մի թեթև կասկած է արթնանում Երեմիայի մտքում. չի մտածում իր եղբայրների թշնամության մասին, այլ իր մոր մասին: Գուցե նոր սերնդի զավակների բազմացման հետևանքով տան մեջ նորովի բաժանումներ են արվել, և իր մորը հանած կլինեն ծնողական հինավուրց և սուրբ սենյակից: Ինչ պետք է անել, եթե ինքը նրան չգտնի այդ գիշեր, քանզի օրը ցերեկով ինքը չպիտի համարձակվի լինել այդտեղ՝ իր հայրական տանը: Թաքնված վախը գնալով ավելի է ուժեղանում իր սրտում: Վախենում է տեսնել իր մորն այդքան տարիներ բացակայելուց հետո: Արդյոք Աբին իր առաջացած տարիքի բերումով այնքան փոխված կլինի՞, որ ինքը նրան հազիվ ճանաչի: Արդյոք նրա մեջքը թեքված կլինի՞ գետնին, աչքերը կուրացած, և միտքը խանգարված: Եհովայի բոլոր մարգարեների մեջ ամենից խիզախը, որը մարգարեացել էր բռնավոր թագավորի երեսին՝ Էշի թաղման արժանանալու անարգանք, այժմ համակված էր խորը վախկոտությամբ: Նա համարյա ցանկանում էր գաղտագողի հեռանալ այդտեղից: Մեծ հառաչանքով սևեռում էր նայվածքը դեպի խավարը:

Ինչ–որ տեղ, ավելի զգալի, քան տեսանելի, խավարն ընդմիջվում է մի առկայծող ու նվաղկուն շողքով: Երեմիան հետևում է այդ ցոլքին: Բայց նախքան որ ինքը կփորձեր հետազոտել այդ անորոշ շողքի ծագումը, իր սիրտն արդեն գիտեր ամեն ինչ: Մայրը նաև այդ գիշեր տան դռան արտաքին շեմին էր դրել փոքրիկ ճրագը, որպեսզի իր կրտսեր որդին, հալածված երկնքի և երկրի իշխանություններից, կարողանա գտնել տուն վերադառնալու ճամփան, երբ այլևս ոչ մի այլ ճանապարհ բաց չլինի: Արդյոք նա դա կատարե՞լ է բոլոր այն հազարավոր գիշերների ընթացքում, ինչ ինքը թողել էր իր հայրական տունը, կամ էլ արդյոք նա միայն այս գիշե՞ր է տալիս իրեն այդ նշանը՝ ցույց տալու համար, որ

նա գիտե որդու սրտի առավել թաքուն մտադրությունները, նախքան դրանք գործի վերածելը: Այո՛, ճշմարիտ է, և Երեմիան միշտ զգացել է դա, որ Աբիի պարզունակ ու անուս հոգին բանիմաց է և խորագետ այն ամենում, որ վերաբերում է իր փոքր որդուն, ինչքան էլ վերջինս հեռու լինի: Երկրի վրա նա միակ անձն էր, որ անբացատրելիորեն նույնիսկ բաժնեկից էր Տիրոջ համակեցությանը Երեմիայի հոգում:

Իր հին սովորության համաձայն՝ Երեմիան վերցրեց ճրագը շեմի վրայից: Ուշ գիշեր պետք է լիներ, քանի որ ճրագի ձեթը գրեթե սպառվելու վրա էր, և պատրույգը՝ սևացած: Երեմիան ներս մտավ կիսաբաց դռնով, կանգնեց իր մանկության քաղցրահուշ գիշերների երկար ու մութ միջանցքում: Նա պարզապես զարմացավ այն բանի վրա, որ ինքն այդ պահին այդքան քիչ է զարմացած: Ոտքի մատների վրա քայլեց և գնաց մինչև ծնողների սենյակը: Նա միշտ այդպես էր արել, երբ գիշերներն անհանգիստ անցել էր այդտեղով: Հիմա, սակայն, նա կանգ առավ, խոր շունչ քաշեց, ճրագը բարձր պահեց: Դուռը բաց էր: Արդյոք դեռ մայրը քնո՞ւմ է այդ սենյակում: Ճրագն իր վերջին առկայծումով ծվենների վերածեց սենյակի խավարը: Երեմիան տեսավ մորը: Նա, ամբողջությամբ հագնված, նստած էր իր բազմոցին: Դանդաղ ոտքի կանգնեց և գնաց դեպի Երեմիան, որն անշարժ կանգնած մնաց իր տեղում: Մայրը չէր փոխվել, տարիքը նրան չէր կքել: Նրա նայվածքը, ինչպես միշտ, պարզ էր ու հանդարտ: Նրանք, առանց լաց լինելու, լուրջ ու զուսպ գրկախառնումով միացան իրար:

— Խաղաղություն ընդ քեզ, մայր իմ:

— Նաև ընդ քեզ, որդյակ իմ կրտսեր:

— Դու պետք է հասկանաս ինձ, մայր իմ...

Մայրը բացասական շարժեց գլուխը.

— Ինչո՞ւ ես խոսում այդ մասին, դրա կարիքը չկա...

Աբին բռնեց Երեմիայի ձեռքը և տարավ ու նստեցրեց նրան իր անկողնու վրա: Այնուհետև նա աճապարանքով գնում–գալիս էր սենյակի մեկ կողմից մյուսը, փակեց դուռը՝ առանց աղմուկ հանելու, փոխարինեց թույլ ճրագի պատրույգն ավելի ուժեղով, և ճրագը դրեց հատակին, որպեսզի կտրուկ լուսավորի իր որդու ծերացած ու փոս ընկած այտերով դեմքը: Գնալով ավելի էր մտահոգվում ամեն անգամ, երբ

նայում էր Երեմիային գաղտագողի: Եվ որպես թե պետք է անհապաղ ամոքեր նրա կրած վնասները, զրկանքներն ու նեղությունները, նա բերեց պատի պահարանից թունդ գինի և թզի թարմ թխվածք: Երեմիան պետք է ուտի և խմի: Մեղրով ծածկված քաղցր թխվածքի համի մեջ նա կրկին համտեսեց իր պատանությունը և կրկին հիշեց այն գիշերները, երբ Տիրոջ կանչերը դեռ հեռավոր էին և ոչ պարտավորեցնող, ոչ էլ արյուն արժեցող:

Երեմիան ստիպեց մորը նստել իր կողքին, բայց վերջինս հանգիստ չուներ, նորից ու նորից ելնում էր տեղից: Որդու հագուստը ոչ միայն հնացած էր ու մաշված, այլև խայտառակ կերպով ծակոտված: Բերեց նրան նոր շորեր և մի պատմուճան՝ տնական լավագույն հյուսվածքով: Փախուստ չկար, որդին պետք է փոխեր հագուստը: Դրանից առաջ, սակայն, նրա մաշկին պետք է քսվեր այն հովացնող բալասանը, որը հնուց ի վեր օգտագործվում էր Քեղկիայի տանը՝ նորածինների բուժման համար: Ինչ էին այդ արյունակալած սպիներն ու կապտուկները որդու մեջքին: Աբին զգույշ էր այդ մասին հարցնելու, այդպիսով Երեմիան էլ ստիպված չէր այդ առումով որևէ բացատրություն տալու: Երեխաների բալասանի բուրմունքը նրա հիշողության մեջ արթնացրեց հնագույն հիշատակներ: Թվում էր, թե մայրն իր փոքր որդու նկատմամբ ցուցաբերած չափազանց հոգատար խնամքով ցանկանում էր օգնել նրան ու մխիթարել՝ հակառակ իրենց միջև առկա բոլոր չասված խոսքերին: Այնուհետև, երբ մայրն արդեն արել էր հնարավոր ամեն ինչ, նստում է Երեմիայի կողքին՝ աշխատանքից հոգնած ձեռքերը հանդարտեցնելով: Առանց հարցեր տալու, այլ պարզապես տեղեկացնելու համար, նա ասաց.

— Թագավորի զինյալները հինգ անգամ եղել են այս տանը, որպեսզի ձերբակալեն կրտսեր որդուն...

Երեմիան շարժեց գլուխը.

— Դրա համար էլ հեռու եմ մնացել իմ մորից... Եվ դա է նաև պատճառը, որ ես թաքուն եմ եկել այստեղ, գիշերվա այս ուշ ժամին...

Աբին բարձրացրեց իր մեղմ ձայնը՝ տալով նրան մի խիստ երանգ, որի դեմ ոչ մի հակաճառություն չէր կարող լինել.

— Հիմա, սակայն, ես այլևս քեզ թույլ չեմ տա հեռանալ...

Երեմիան ավելի մոտեցավ ծեր կնոջը և դառնորեն շշնջաց.

— Որտեղ Երեմիան է, այնտեղ դժբախտություն է և մահ... Իմ մայրը շատ բան գիտե: Այդուհանդերձ, նա չգիտե, որ ես անիծել եմ այն օրը, երբ նա ծնել է ինձ... Քանզի ահա ես համր եմ, բայց պետք է գոռամ... Ես թեև երկչոտ եմ, բայց պետք է պայքարեմ թագավորների ու քահանաների դեմ... Միայնակ եմ, ուրեմն պետք է խառնվեմ ժողովրդի մեջ... Խաղաղություն եմ աղերսում, բայց փոխարենը միայն պատերազմ եմ ստանում...

Ծեր կնոջ փոքրակազմ մարմնի միջով անցավ վճռականության մի ցնցում, որը Երեմիան իր հոր օրոք երբեք չէր նկատել նրա մեջ: Ըստ երևույթին, նա այն ժամանակ խոնարհվում էր դժգոհ Քեղկիայի փառքի և հպարտության առջև՝ առանց որևէ դիմադրության: Հիմա, սակայն, նրա աչքերը փայլում են՝ հոգու չօգտագործված ուժերից:

— Ես չեմ կարող պաշտպանել իմ կրտսեր որդուն Տիրոջից...

Աբին ընդհատում է ինքն իրեն, քանզի այլևս կարիք չկար խոստովանելու, որ կպաշտպանի իր կրտսեր որդուն մարդկանցից:

— Կարո՞ղ է մայրս իսկապես պաշտպանել ինձ իմ եղբայրներից,— հարցրեց Երեմիան կասկածանքով:

Մայրը լռեց: Եվ Երեմիան նրա կարճատև լռությունից հետևցրեց ճշմարտությունը: Գայթակղությունների կուտակումով և թագավորի զինյալների կողմից կատարված տան խուզարկումներից հետո եղբայրների զայրույթը բորբոքված էր նրա դեմ: Եթե մի պատվարժան ու պարզ տան մեջ եղբայրություն անելը մի ընտրյալի հետ, որը վայելում է աշխարհում համբավ ու հարգանք, արդեն իսկ բավականին նյարդայնացնող է, հետևաբար, պատժի ենթարկված և հետապնդվող մի ապստամբի անունը միայն նշանակում էր խայտառակություն և նախատինք՝ հավասար բորոտության: Այն, որ Օբադիան ու Հովելն այս կարծիքին էին, մատնում էր մոր մռայլված դեմքը: Այստեղ այլևս գոյություն չուներ հաշտություն: Միայն Երեմիայի մահը կարող էր թեթևացնել եղբայրների սիրտը: Քանի նա ապրում էր, նրանք միշտ նոր խայտառակությունների առաջ պիտի կանգնեին: Երեմիան վստահ էր, որ իր եղբայրներն անողոքաբար կհանձնեն իրեն թագավորի իշխանությանը, եթե հակառակ դեպքում նրանք իրենց սեփական ձեռքով մեջտեղից չվերացնեն իրեն: Նման արարքի համար ո՞վ կենթարկի նրանց պատասխանատվության:

Նաև ապստամբի և մնասատուի արյունը կարող է աղաղակել դեպի երկինք, բայց դա այնքան էլ չի անհանգստացնի արժանապատիվ դատավորներին: Երեմիան գրեթե ծաղրանքով ժպտաց Աբիին.

— Եվ իմ մայրն ինչպե՞ս պիտի պաշտպանի ինձ իմ եղբայրներից...

Նա լուռ ոտքի ելավ և պատի պահարանից դուրս բերեց մի մեծ ու ժանգոտ բանալի: Երեմիան սկզբում չհասկացավ այդ բանալու իմաստը: Մայրը, սակայն, ասաց չարաճճի հպարտությամբ.

— Քո հայրն այս բանալին թողեց ոչ թե իր ավագ որդուն՝ Օբադիային, այլ միայն կնոջը...

Այժմ Երեմիան հիշեց իր սենյակի դիմացի կիսաքանդ սրբավայրը՝ ընտանիքի այն սուրբ շինությունը, ուր Տիրոջը վաղուց չէին երկրպագում, այլ այն օգտագործվում էր միայն վարձակալների, տանտերերի և անասնապահների միջև առևտրական դաշինքներ կնքելու առթիվ երդվելու նպատակով, ինչն իր մանկության ժամանակ դեռ հազվադեպ անգամ էր տեղի ունենում, իսկ Քեղկիայի մահից հետո այդ սովորությունը բոլորովին վերացել էր: Մի գոհունակ ժպիտ լուսավորում է մոր դեմքը.

— Կրտսեր որդին այլևս չի քնելու իր առաջվա սենյակում...

Երեմիան ուշադրություն դարձրեց, որ իր ապաստարանը վաղուց արդեն հոգացված է եղել: Գիշերներն աշխատելով՝ Աբիի ձեռքերը բնակելի էին դարձրել հին սրբավայրի ներքնակողմը: Նա այնտեղ տարել էր խսիրներ, բարձեր և նույնիսկ հանգստանալու համար մի մահճակալ՝ բոլոր այն մանր բաների հետ, որոնք պատկանում են կենցաղային հարմարավետությանը: Ոչ ոք չէր կասկածի, որ պաշտամունքային մի հին ու ավերակ սրբավայր վերածվել է մի տաք թաքստոցի, ուր հնարավոր կլիներ ապրել: Նույնիսկ եթե Երեմիան պետք է թաքնվեր օրվա ընթացքում, գիշերները, սակայն, բավականաչափ ազատություն կունենար: Ո՞վ կարող էր պատկերացնել, որ այդ վայրը, որն ընտանիքի բոլոր անդամների համար դեռ պահում էր իր երկյուղալից հանգամանքը, դարձել է ինչ–որ մեկի կացարանը: Աբին ոչինչ չէր մոռացել: Միայն ինքն ուներ այդ սրբազան պատսպարանի բանալին, ուր, ըստ իր սուր հոտառության, Երեմիան շատ մոտ կլիներ իր Տիրոջը:

Երեմիան թեև մտածել էր այն բոլոր ապաստարանների մասին, ուր դեռ հնարավոր կլիներ պատսպարվել, բայց չափազանց հոգնել էր չորս

կողմը թափառելուց: Այժմ մեծապես ուրախացնում է իրեն իր մոր այս հոգատար գաղափարը: Ինքը պիտի թաքնվեր նրա կողքին և ամեն օր զգալու էր նրա մայրական սերը: Բարուքն էլ իր հետ կիսելու էր այդ ապահով թաքստոցը: Երեմիան և Աբին անաղմուկ դուրս եկան հայրական տնից: Կոշտ բանալին այնքան ուժեղ ճռնչաց ժանգոտ կողպեքի մեջ, որ երկուսն էլ ցնցվեցին վախեցած: Սրբավայրը բաղկացած էր առաջնամասի մի մեծ բնակարանից և հետևի մի փոքրիկ սենյակից: Այս սենյակն էր, որ Աբին կահավորել էր հալածվածների համար: Երբ Երեմիան մտավ այնտեղ, անմիջապես զգաց իր սրտում Եհովայի մերձավորությունը: Այս անգամ, սակայն, Տիրոջ շշուկաձայն պահանջմունքն ավելի մեղմ էր, քան երբևէ: Այս անգամ նա չպահանջեց որևէ գործողություն, այլ մտածմունք և խորհրդածություն: «Մտածիր, հետազոտիր և խորհրդածիր»,— շշնջում են պատերը: Եվ այդ շշուկի մեջ կար ևս մեկ բառ, որը Երեմիան մինչ այդ երբեք չէր լսել: Եվ այն կրկնվում էր շարունակ. «Գրիր»:

* * *

— Քեզ համար մի մատյան վերցրու և նրա մեջ գրիր այն ամենը, ինչ ասել եմ քեզ Հովսիայի օրերից սկսած մինչև այսօր...

Երեմիան բառացիորեն չի իրականացնում այս պահանջը, քանի որ գրում էր հապճեպ և անընթեռնելի: Փոխարենը Բարուքը գեղագրության վարպետ էր և այս արվեստում հետ չէր մնում Երուսաղեմի ոչ մի հռչակավոր վարպետից: Երեմիան թելադրում էր Տիրոջից ներշնչված խոսքեր, և իր աշակերտը գրի էր առնում դրանք, սկզբում միայն կրճատված նշանագրերով, որոնք հետո նա բացառիկ խնամքով արձանագրում էր իսկական մատյանում: Նրանց կյանքն ու գործը բաժանված էին ըստ հետևյալի.

Երեմիան ու Բարուքը յուրաքանչյուր կեսգիշեր դուրս էին գալիս իրենց թաքստոցից, բարձրանում պատի քանդված հատվածի վրայով և հեռանում Քեղկիայի սեփականության տարածքից, որպեսզի դրսում՝ ազատության մեջ, ժամանակ անցկացնեն: Անաթովթի անտառապատ բլուրների վրա այդ գիշերներին երբեմն լուրեր և ուղերձներ էին

ստանում Երուսաղեմի իրենց ընկերներից: Ահիկամը, որի պաշտպանության տակ էր Երեմիան, ինչպես նաև նրա երկվորյակ որդիները՝ Գեդալիան և Միքիան, իրենց վստահելի մարդկանց միջոցով պատգամներ կամ նախազգուշացումներ էին հղում հալածյալին Հովակիմ թագավորի դատավարությունների և ծրագրած խժդժությունների մասին՝ թելադրելով չլքել իր ապահով ապաստարանը: Սափանի ժառանգները մեծ վարպետությամբ մղում էին թագավորին քայլելու կեղծ հետքերի վրայով:

Գիշերային թարմացնող ու կազդուրիչ զբոսանքից հետո նրանք երկուսով արևածագից մի ժամ առաջ վերադառնում էին իրենց սրբազան որջը: Այնուհետև նրանք լավ քնում էին օրվա ընթացքում: Երբ կեսօրին արևը հասնում էր իր զենիթին, և հորանջող ու քնկոտ հանգիստը տարածվում էր ագարակի վրա, այդժամ ծեր Աբին մեծ զգուշությամբ դուրս էր գալիս տանից՝ տանելով իր ձեռքերի մեջ վրան ծածկված փայտյա մի սկուտեղ, որը խորամանկորեն, կողմնակի ճանապարհներով և չորս կողմը զննելով, բերում էր և դնում գետնին՝ թաքստոցի դարպասի դիմաց: Անմիջապես ներսից բացվում էր դարպասը, և ափսեն լուռ անհետանում էր: Դա Աբիի հոգածության տակ գտնվող երկու տղամարդկանց ամենօրյա կերակուրն էր. կաթնասեր, կաթի շիլա, ոսպապուր, գարու հաց, թուզե թխվածք և երբեմն էլ՝ գառան տապակած կողիկներ:

Բավականաչափ ուտելուց և խմելուց հետո անմիջապես լծվում էին աշխատանքի, քանի որ այն հսկա ջանքը, որ պահանջում էր արտասանված խոսքերի մանրակրկիտ վերարտադրումը, ընդհանրապես կարելի էր համեմատել հողագործության աշխատանքի հետ: Ժամանակն անցնում էր: Երեմիան այլևս չէր իմանում՝ արդյոք միայն ամիսներ կամ թե արդեն տարիներ էին անցել իր գաղտագողի տունդարձից, քանզի, ինչպես միշտ, այդպես էլ հիմա, Պատվիրատուի (Տիրոջ) հետ գործ ունենալն ամբողջությամբ վերացնում է ժամանակի զգացողությունը: Նրա հետ այդ կապը, սակայն, այլևս ամիջական չէր, այլ վերհիշումների միջոցով, որը բոլորովին նորություն էր: Չնայած նրան, որ չկային այն վտանգները, որոնք հարվածել էին իրեն, անմիջապես երբ ինքը սկսել էր քարոզել, այդուհանդերձ, դրանց փոխարեն հայտնվել էին նոր տանջանքներ: Դրանք վերաբերում էին ընտրված քարոզչի համառ փորձին՝

միշտ ճշմարտացի լինելու, աստվածային հարցերում ոչինչ չավելացնելու կամ նրանից ոչինչ չպակասեցնելու: Դա կատարվում էր այսպես.

Երբ մարգարեի մտքում ձևավորվում է խոսքը, ինչպես ջուրը ծակոտկեն ժայռի մեջ, երբ այնուհետև ջնջվում են նրա սեփական բանականությունն ու կամքը, երբ բնազդային վատ ցանկություններն այլևս չեն կարողանում եղծել ու պղտորել աստվածային շշուկաձայն թելադրանքները, միայն այդ կարճ ժամանակահատվածում՝ այդ համարյա ոչ երկրային հնարավորության մեջ, խոսքը մնում է անաղարտ ու ճշմարիտ: Սակայն քարոզչի ավելի երկարաշունչ ճառը չի կարող մնալ իր բարձրության վրա, քանի որ մարդկային երկրորդական մտքեր կխառնվեն նրանում, ինչպես հեռվից լսվող շան հաչոց: Ըստ այսմ՝ հաճախ կարող է պատահել, որ մեկը, որ իր քարոզչությունը սկսել էր իբրև Տիրոջ ճշմարիտ մարգարե ավարտեր այն իբրև կեղծ մարգարե:

Մարդկային խոսքն ապականացու է և անցողիկ, ինչպես կյանքն ինքնին: Այն արդեն ձևափոխվում է խոսողի բերանում: Յուրաքանչյուր պարզ զեկույց բերանից բերան փոխանցվելու պարագայում դառնում է բամբասանք՝ իր նպատակից բոլորովին շեղված: Նաև Եհովայի խոսքը քարոզչի կողմից կարիք ունի մարդկային լեզվի, որպեսզի լսելի դառնա: Այն պետք է իջնի հենց նրա ապականացու անմաքրության մեջ, որը երկրի վրա ավելի ծառայում է ծածկելու ճշմարտությունը, քան բացահայտելու այն: Դրա համար, ցավալիորեն, Աստծու կողմից մարդուն փոխ տրված խոսքը ձգտում է հեռանալ մարդուց:

Երեմիան այժմ անդրադառնում է, որ Աստծու խոսքը փորձում է խուսափել իրենից, մինչ ինքը հուսահատ ջանքերով աշխատում է գրավոր կերպով պահել ու ավանդել այն: Այդուհանդերձ, նա չի հուսահատվում, սրում է հիշողությունը, ինչպես մի դանակ, որով նա ճեղքում է ժամանակի վրա կուտակված ստվերները: Նա փորձում է արձանագրել տալ ու պահել յուրաքանչյուր տեսիլք, յուրաքանչյուր շշուկ, որոնք տրվել էին իրեն: Բարուքը շատ բան պետք է գրեր նույնիսկ յոթ կամ տասն անգամ, մինչև որ Երեմիայի մտքի համար մարդկային խոսքը բավականին մոտիկ լիներ աստվածայինին: Խավարի և անորոշության բնագավառում նա ձգտում էր առավելագույն հստակության, որի հետևանքով էլ նա հաճախ սպառված պառկում էր մի անկյունում և լուռ մնում:

Երեմիայի թաքստոցում է առաջանում աստվածային թաքնված խորհրդի աշխատանքը: Այն սկսվում է կոչման գիշերով, ընտրության պատգամով և տեսիլքներով՝ նշենու ճյուղի և եռացող կաթսայի մասին: Այդտեղից սկսած՝ նա հավատարմորեն հետևում է բոլոր ներշնչանքներին ու պատկերացումներին՝ խստորեն տարբերություն դնելով աստվածային խոսքի և մարդկային հավելումների միջև: Սովորաբար պատահում էր, որ Երեմիան սկզբում երկարաշունչ խոսքերով էր արտահայտում իր տեսածն ու լսածը: Այնուհետև, երբ Բարուքը կարդում էր դրանց մասին կատարած իր արձանագրությունը, ուսուցիչը դժգոհությամբ մերժելի էր համարում այն: Շարադրանքի երկրորդ տարբերակը որոշ փորձերից հետո ավելի կարգավորված ու կրճատված էր լինում: Այսպես էր պատահում բոլոր տարբերակների հետ, լինեին դրանք «բրուտագործի ձեռքում եղած կավի», «աստվածային ցասման բաժակի տեսիլքի», «փշրված կժի» կամ «ոսկի հալող հնոցի» պարագաներում: Որոշ բախտավոր ժամերին թվում էր, թե Տերը որոշել է իր նախընտրած ձևով գործակցել մարգարեի աշխատանքին: Նա պատասխանում էր հարցերին, բացատրում էր և ամրողջացնում գրության որոշակի հատվածներ: Իսկ երբ Երեմիան իր շարադրանքում մեկ անգամ ևս հանդիպում է «Մեծ մեղադրանքին», ուր ասվում էր, թե՝ «Տեր, ինչքան հաճախ հետդ վիճաբանեմ, միշտ էլ դու ես իրավացի դուրս գալիս: Սակայն, հանուն արդարության, պիտի շարունակեմ հետդ վիճաբանել»,— հանկարծ ստանում է մի ազդու պատասխան.

— Եթե դու արդեն հոգնել ես հետիոտների հետ քայլելուց, դու քեզ ինչպե՞ս պիտի զգաս, երբ մրցես ձիավորների հետ: Եվ քանի որ դու ապահովություն ես փնտրում խաղաղ երկրում, ի՞նչ պիտի անես, երբ գետը բարձրանա, և հեղեղները տարածվեն:

Իրականում սա մխիթարանք չէր և ոչ էլ Տիրոջ չքմեղանքը՝ նրա արդարության երկարաժամկետ և անհասկանելի բնույթի համար: Մյուս կողմից սա մի լուրջ նախազգուշացում էր ընդդեմ այն ցավալի մոլորության, որը նկատի ուներ անցյալի և ներկայի տառապանքները՝ իբրև գագաթնակետ բոլոր չարիքների: Այդ գագաթնակետը պսակում էր ապագայի ամայի լեռները, և Երեմիան դեռ պետք է ուժ հավաքեր և անզսպելի վճռականություն՝ մագլցելու այնտեղ:

Նման բախտավոր և շնորհներով լեցուն ժամերին, երբ Տերը բարեհաճում էր շնորհել իր գործակցությունը, միշտ պատահում էր, որ մեջտեղ էին գալիս ժամեր բացարձակ դատապարտության, որոնց ընթացքում ոչ միայն վերացնում էր իր խոսքը, այլև դրա փոխարեն թողած ներքին դատարկությունը հաղթահարում էր Ամենտիի գարշանքով: Նոր միայն թաքնվելու այդ տանջալից աշխատանքում Երեմիայի հոգին սովորում է ընդհանուր առմամբ գիտակցել,— և դա էլ որքան ուշ,— որ Տիրոջ մերձենալն ու հեռանալը կապված են ուղղակի իր սեփական տրամադրության հետ: Մարգարեին միշտ չէ, որ հաջողվել է իր սեփական հակումները հեռու պահել աստվածային էությունից: Երբեմն նկատվում են մարդկային ապօրինի միջամտություններ: Երեմիան իր հիշողությունների ճանապարհին որքան շատ էր մոտենում իր՝ Երուսաղեմ վերադառնալու սարսափելի օրերին, այնքան ավելի զայրույթը, ատելությունն ու վրեժխնդրությունը կատաղի կերպով համակում են իր հոգին: Նա հպարտանում է, և նրա ձայնը դառնում է ավելի սուր և ազդեցիկ, երբ անեծքի խոսքեր է բարբառում: Դրանք ներքևից եկած խոսքեր էին, որոնք աշակերտը հնազանդորեն արձանագրում է իբրև վերևից ասված անարատ խոսք.

— Դու, ով Տեր, գիտես ինձ, տեսնում ես ինձ և քո առաջ փորձում ես իմ սիրտը... Հավաքիր նրանց՝ իմ թշնամիներին, նման ոչխարների, որ պիտի մորթվեն: Երբ գա սպանության օրը, զոհաբերիր նրանց...

Անմիջապես այն բանից հետո, երբ Երեմիան արձակել էր այս անեծքը, Տերը հետ էր վերցրել իր գործակցությունը, և դա, ըստ երևույթին, վերջնականապես: Ամենասարսափելի դատարկությունը վերադարձել էր մարդուն: Օրեր շարունակ նա անց էր կացնում ապարդյուն փորձերի մեջ: Նրան չէր հաջողվում կազմել ոչ մի նախադասություն: Նրա գլուխը չոր կրաքարի նման էր: Ամեն ինչ, որ աստվածային էր, նրա համար հանկարծ թվում է մի տանջալից խաբկանք: Մնացել էր միայն խարամը: Մի անգամ, սակայն, իր էության խորքում Երեմիան լսում է այս խոսքը.

— Եթե կրկին իմը լինես, Ես էլ քոնը կլինեմ կրկին: Եթե քո մեջ պատվականն առանձնացնես անարգից, այդժամ նորից դու կլինես իմ բերանը...

Այնուհետև Երեմիան հասկանում էր Տիրոջը: Անընդունելի էր համատեղել ու միացնել Աստծու մտադրությունը մարդկային մոլորյալ

բնության ձգտումների հետ: Մի հանդուգն ամբարտավանություն էր Աստծու հետ միասնական մի գործ կատարելու խղճալի ցանկությունը: Հիմա Երեմիան հստակ գիտակցում է այդ, բայց դա, իհարկե, նրան շատ չի օգնում բարելավելու իր վիճակը: Նա միշտ սայթաքում է և կրկին ու կրկին վրա է հասնում անքննելիորեն զգայուն Տիրոջ հետ քաշվելու պատիժը: Նույնիսկ փոքր զանցանքներին հետևում են պատիժներ: Երբ նա մի անգամ մի նախադասությամբ մերժում է Իսրայելին ապաշխարելու հնարավորությունը, քանի որ նա այլևս չէր կարող փոխվել, ինչպես «ընձառյուծը չի կարող փոխել իր խայտուցները», այս կասկածի համար անհրաժեշտ է լինում, որ ինքը երկու լրիվ ամիս դիմանա ներքին ամայությանը:

Տիրոջ այս անբացատրելի զգայնությունն ու օտարացումը, ինչպես նաև Երեմիայի՝ ունկնդրելու հնարավորության պակասը, չեն օգնում աշխատանքի բարվոք ընթացքին: Դրսում եղանակները փոխվում են: Սրբազան ապաստարանի ներքին աղոտ սենյակում լույս էր մտնում միայն մի բարձրադիր պատուհանի ճեղքից, որտեղից ներթափանցում էին ձմռան ցուրտը և ամառվա շոգը: Աստծու հրաշքը պետք էր համարել այն, որ այդ ավերակ շինության բնակիչներն այդքան երկար ժամանակ է, որ բնակվում էին այդտեղ՝ թաքնված մնալով Քեղկիայի գերդաստանից: Օրվա ընթացքում եղբայրների երեխաներն ու թոռները խաղում էին քարե թաքստոցի հարևանությամբ, որը համակում էր նրանց, ինչպես բոլոր երեխաներին, երազային մի գաղտնիքի սարսափով: Երեմիան ու Բարուքն անհանգստությամբ լսում էին տղաների և աղջիկների խորհրդակցության ձայները, որոնք միշտ նոր հնարքներ էին մտածում՝ ներթափանցելու պապենական սրբավայր: Բարեբախտաբար, կաղնու պղնձապատ դուռն ամուր էր փակված, իսկ պատուհանը շատ բարձր էր գետնից: Այդուհանդերձ, թաքնվածները բազմաթիվ անգամ արդեն ենթակա են լինում հայտնաբերվելու ահավոր վտանգներին: Մի առիթով ամենից հանդուգն պատանուն հաջողվում է պատի ճեղքերի և դուրս ցցված եզերքների օգնությամբ թիկունքից մագլցել մինչև պատուհանը և գլուխը մտցնել դրա բացվածքից ներս: Երեմիան, սարսափով լցված, տեսնում է տղայի հետաքրքրությունից փայլող և դեպի ներքև նայող աչքեր: Բայց գուցե սենյակի բնական մթության պատճառով, գուցեև Տիրոջ

կամքով, պատանու հետաքրքրասեր հայացքը ոչինչ չի ճանաչում: Հավանաբար նույն պատճառով նաև մոր ամենօրյա այցելությունները կրտսեր որդուն մնում են անհայտ տնեցիների ընդհանրապես խորամանկ և չվստահող անդամներից:

Երեմիան ու Բարուքը վերհիշում են և հավատարիմ կերպով արձանագրում Տիրոջ կողմից ասված բոլոր խոսքերն ու հայտնած տեսիլքները՝ սկսելով Հովսիայի ժամանակներից և հասնելով մինչև Հովակիմի օրերը: Անհաշիվ օրերից հետո գրի առնելու այս նոր աշխատանքը կարող էր հույս ներշնչել մարգարեին և կարծել տալ, որ ինքը կատարել է իրեն տրված պատվերը և արժանի դարձել մրցանակի... Բայց երբ ավարտված աշխատանքի հարբեցնող ուրախությունը ոգևորում է իր սիրտը, նա կրկին անգամ հիասթափվում է: Պարզ ու մեղմ մի արական ձայն ինչում է նրա ականջներին. «Լսիր և շարունակիր գրել»: Եվ այն, ինչ որ հիմա վարանումով կրկնում էր ինքն իրեն և Բարուքը գլխահակ գրի էր առնում, սարսափեցնում էր իր հոգին: Քանզի չնայած բոլոր մարգարեություններին, հորդորներին, նախազգուշացումներին, սպառնալիքներին և անեծքներին, որոնք ինքը մինչ այդ ասել էր Եհովայի անունով, անձամբ ինքը կիսով չափ միայն նայել էր ամբողջական ճշմարտության դեմքին և հույս ուներ, որ Տերը, ինչպես մի լավ ուսուցիչ, ամբողջապես չի կատարի իր սպառնալիքները, և խաղը, ի վերջո, կդարձնի ի նպաստ Իսրայելի: Այնուամենայնիվ, իր իսկ խոսքերը, որոնք ինքը թելադրում էր արձանագրողին, սառեցնում էին իր մարմինը: Առաջին անգամ լինելով՝ նա իր հոգու խորին մտահոգությամբ գիտակցում էր, որ Իսրայելի գոյատևման համար չպետք է ունենալ խիզախ ակնկալիքներ, ավելի քան մահամերձ մարդու նկատմամբ: Այս էր գրության ճակատագրական և աղետալի մասը:

— Հուդայի թագավոր Ամոնի որդու՝ Հովսիայի թագավորության տասներեքերորդ տարուց սկսած մինչև օրս ինձ հայտնվել է Եհովայի խոսքը, և ես ձեզ հետ խոսել եմ այդ մասին, բայց դուք չեք կամեցել լսել... Տերը ձեզ համար ուղարկեց իր բոլոր ընտրյալներին, քարոզիչներին, բայց դուք չխոնարհեցրիք ձեր ականջը՝ լսելու նրանց: Ձեզ ասվել է՝ հետ դարձեք չար ճանապարհից և չար արարածից, որպեսզի մնաք այն երկրում, որ Տերը տվել է ձեզ և ձեր հայրերին հավիտյանս հավիտենից:

Մի՛ գնացեք օտար աստվածների հետևից, մի՛ երկրպագեք և մի՛ պաշտեք նրանց: Մի՛ անարգեք ինձ այն կուռքերով, որոնք ձեր ձեռքերի գործերն են, որպեսզի ես էլ ստիպված չլինեմ տառապեցնել ձեզ: Մի՛ հրահրեք իմ զայրույթը: Դրա համար է, որ Զորաց Տերն ասել է այսպես. «Քանի որ դուք չլսեցիք իմ խոսքը, Ես ձեզ վրա կուղարկեմ հյուսիսի ցեղերը՝ գլխավորությամբ Բաբելոնի արքա և իմ *ծառա* Նաբուգոդոնոսորի: Ես նրանց կբերեմ այս երկրի վրա, նրա բնակիչների և շրջակա ազգերի վրա, նրանց կմատնեմ սարսափի և ծաղրուծանակի: Ես կմարեմ ամեն ուրախալի երգ, երանության ձայն, փեսայի և հարսնացուի ուրախության կանչ: Կդադարեցեմ նաև ջրաղացների աշխուժությունը և կհանգցնեմ ճրագների լույսը: Երկիրը կամայանա և կվերածվի ավերակի, իսկ դուք յոթանասուն տարի շարունակ կծառայեք Բաբելոնի արքային»...

Երեմիան կանգ առավ մի պահ և իր սառած ձեռքերով ծածկեց աչքերը: Մի՞թե հնարավոր էր ենթադրել, որ իր բերանով ուղղակի Տերն ինքն էր խոսում. «Ես կուղարկեմ ձեզ Նաբուգոդոնոսորին՝ իմ ծառային»: Ինչպե՞ս կարող էր նա Տիրոջը ծառա լինել, երբ ոչինչ չգիտեր Նրա մասին: Ինչպե՞ս կարող էր ծառայել Նրան, երբ ինքն իր կողմից հնարված հարյուրավոր աստեղային կուռքերի մեջ լինելով՝ ծաղրում էր Տիրոջ պաշտամունքը: Արդյոք Հուդայում ապրող ամենավատ չարագործն ու ապականիչը Աստծու նվիրյալ ծառա չէ՞ ավելի, քան Նաբուգոդոնոսորը, որի ամբարիշտ հոգին երբեք չի փնտրել ճշմարտությունը մաքուր խոսքի մեջ, այլ աստղերի մեջ, ամպերի շարժումների, չվող թռչունների երամների և զոհաբերված կենդանիների լյարդների մեջ: Նաբուգոդոնոսորի հետ համեմատած՝ Հովակիմի մեղքը նույնիսկ կարելի էր համարել մի ինչ–որ սխալմունք և մոլորություն: Սակայն ուր սխալմունք կա, դեռևս կա նաև մի պտղունց արդարություն: Մարդուկ–Նաբուգոդոնոսորի մեջ, սակայն, չկար նույնիսկ ոչ մի սխալ, այլ միայն ոչնչություն, հեղգություն, փրկվելու հնարավորությունից զուրկ: Եվ այս ոչնչությանը նա կոչում էր՝ «իմ ծառա». մի պատվական անուն, որով նա կոչել էր միայն Աբրահամին, Իսահակին, Հակոբին և Մովսեսին, ուրիշ ոչ ոքի, ոչ էլ նույնիսկ Դավիթին:

Երեմիան հառաչեց, ծնկի եկավ և պրկված բռունցքներով հարվածեց չորս կողմը: Այնուհետև արտասվեց, ինչպես մի երեխա, որ պատժված էր իր հոր կողմից անարդար կերպով:

* * *

Ձմեռային մի շատ մեղմ գիշեր էր, երբ Ահիկամի որդի Գեդալիան հայտնվեց Անաթովթի բլուրների վրա, պայմանավորված այն վայրում, ուր հանդիպելու էր Երեմիային: Ժողովուրդը Միքիայի երկվորյակ եղբորն անվանում էր «ավագ»: Այս մականունը տրվում էր ոչ միայն նրա համար, որ նա անդրանիկ որդին էր, այլ քանի որ նա օժտված էր հուժկու բնությամբ և վստահություն ներշնչող ուժով: Նա ազդում էր խորհրդականների վրա ոչ միայն իր անառարկելի փաստարկներով, ինչպես Միքիան, այլև իր լիարժեք բարությամբ, որի եռանդն ու փորձառությունը ծառայում էին խաղաղություն սփռելու: Երեմիան էլ զգում էր, որ Գեդալիայի ներկայությունն իր համար հանգստացնող էր:

Սափանի որդիները մտահոգված էին, քանի որ Երուսաղեմի արքունական պալատում տեղի էին ունենում խորհրդավոր անցուդարձեր, և իրենք, լինելով տաճարում՝ պատվավոր աքսորի մեջ, ի վիճակի չէին հետազոտելու դրանք: Համաձայն շրջանառվող շշուկների՝ փարավոնի կողմից ուղարկված մի գաղտնի պատվիրակություն ընդունվել է քաղաքի արևմուտքում գտնվող Ձմեռային պալատում: Ասվում էր նաև, որ դրա փոխարեն Աքորորի որդի Եղնաթանը մեկնել է Նոփ Հովակիմի կողմից նշանակված մի պատվիրակության հետ: Իշխանության շրջանակներից միայն անստույգ խոսքեր էին հասնում տաճար: Սակայն հետզհետե գրեթե բացահայտ կերպով սկսում են խոսել երկրում կատարվող սարսափելի սպառազինության մասին, որը հիշեցնում էր Հովսիայի ժամանակը, երբ նա պատրաստում էր այն տխրահռչակ ծրագիրը՝ հարձակվելու փարավոնի վրա: Ինչպես այն ժամանակ, արտաքնապես բոլորովին անմնաս հիմունքներով գաղտնի հրահանգ է տրվում քաղաքի և գյուղական շրջանների իշխաններին հավաքագրել երիտասարդներին, մարզել և զինել նրանց: Բացի դրանից, կասկածելի քարավաններ էին ժամանում Եգիպտոսից, որոնք իրենց հետ բերում էին հսկա կապոցներ և բեռնաթափում Դավթի հին ու մռայլ ամրոցում: Ոչ ոք չէր կարող հաստատ ասել, որ դրանք զենքի փոխադրումներ են, քանզի բռնապետության բնույթին հատուկ է ճնշող անապահովությունը և գործելակերպի անպատասխանատու գաղտնիությունը: Ահիկամը և նրա որդիները համոզված էին, որ

այդ բոլոր նշանները ցույց են տալիս, որ մի ինչ–որ անմաքուր գործարք կա Իսրայելի գլխավոր թշնամու՝ Ստրկության տան հետ: Հովակիմն իր գահը պարտական էր Նոփի բարի աստծուն՝ փարավոնին: Հավանաբար նա այժմ ստիպված էր վճարել իր պարտքը՝ նրա հետ կնքելով իր կյանքի համար մի վտանգավոր դաշինք, որը ծառայելու էր նրա նպատակներին: Սակայն Գեդալիայի սիրտն ամենից շատ վախեցել էր այն հանկարծակի դարձից դեպի Տերը, որ Հովակիմը մեծ կարևորությամբ սկսել էր իրագործել: Մեկ օրից մյուսը քանդել էր տվել Ձիթենյաց լեռան վրա տեղադրած արևի անիվը, ընդհատել էր արքայական դամբարանի կառուցումը, նորից հռչակել էր շաբաթ օրվա հանգստի պատվիրանը, որը, ի զարմանս բոլորի, սկսել էր խստորեն պահել: Եվ, այնուամենայնիվ, Գեդալիայի խոսքերի համաձայն, կեղծ դարձը շատ ավելի գարշելի էր, քան հավատուրացությունն ինքնին:

Ի պատիվ իր սեփական դարձի և ընդհանուրի ապաշխարության համար Հովակիմը հաստատում է ծոմապահության մի օր ամբողջ ժողովրդի համար: Տարօրինակ կերպով այդ օրը համընկնում է այն օրվա հետ, երբ Երուսաղեմ է ժամանում բաբելոնյան մի պատվիրակություն, որը, իբրև Ասորեստանի ժառանգ, եկել էր գանձելու հարկերի իր բաժինը: Դա մի չնչին գումար էր և նույնիսկ չէր կարելի տուրք համարել այն, այլ դրանով պարզապես պետք է ընդունեին Մարդուկ–Նաբուգոդոնոսորին՝ իբրև աշխարհի նոր տեր ու տիրակալին:

Գիշերները թաքնվածները ժամերով նստում էին մի կանաչազարդ ծառի տակ և փոխանակում մտահոգիչ տեղեկություններ: Գեդալիայի պահանջն էր մարգարեից, որ նա հետազոտի Տիրոջ կամքը, որպեսզի մարդկային բանականությանը հաղորդվի աստվածային աջակցություն: Ահիկամի որդին հավատում էր, որ նույնիսկ ամենաբարդ խոսքի և շշուկի մեջ հնարավոր էր զգալ նախախնամական շնորհի առկայությունը, որը միայն խորաթափանց մտքով կարելի է պարզաբանել: Երեմիան մտահոգ նայում է իր դիմաց: Երբեք չի ակնարկում թաքստոցում կատարվող աշխատանքի մասին, այլ խոստանում է Սափանի որդուն անհապաղ հաղորդել, եթե ինքը Տիրոջից որևէ պատասխան ստանա:

Երեմիան ու Բարուքը լուսաբացից առաջ հասան իրենց սենյակ և պառկեցին քնելու:

— Մի՞թե մատյանում բավարար չափով գրված չէ Գեղալիայի ուզածը,— հարցրեց աշակերտը մթության միջից:

Երեմիան երկար ժամանակ թողեց նրա հարցն անպատասխան, այնպես որ Բարուքը կարծեց, թե արդեն քնել է իր ուսուցիչը: Դրանից հետո միայն լսվեց նրա մեղմ ձայնը.

— Եվ ի՞նչ կլինի, ասա ինձ, եթե ես բոլոր այս խոսքերը խոսեմ թագավորի ականջին...

Բարուքը վեր ցատկեց ահաբեկված.

— Արդյոք Երեմիան կգնա՞ դեպի անօգուտ մահ, որը ոչնչով չի նպաստի Տիրոջը և այս ժողովրդին...

— Նրա ծառա Նաբուգոդոնոսորի վերաբերյալ խոսքը պետք է ասվի,— պատասխանեց Երեմիան:

Հիմա Բարուքն էլ իր հերթին լռեց մի պահ, ապա աշակերտական շեշտով հարցրեց.

— Թող իմ ուսուցիչն ինձ ասի, թե ինչու է Տերը հնարել մագաղաթները, որոնք գրքեր են կոչվում:

— Գրքերը գոյություն ունեն, որպեսզի մարդկանց հոգին վախենա, ճանաչի, սթափվի, խորհրդածի հիմա և ավելի ուշ... Գրքերը խոսուն շշուկներ են յուրաքանչյուրի համար...

— Ճի՞շտ է,— առարկեց խոհեմ Բարուքը համեստաբար,— երբ ասեմ, թե գրքերը գոյություն ունեն, որպեսզի ընթերցողներն ընթերցեն դրանք, իսկ ոչ ընթերցողների համար ուրիշները բարձրաձայն ընթերցեն դրանք:

Երեմիան ոչինչ չպատասխանեց:

— Ընթերցելու համար կարիք կա՞ արդյոք մի ուժեղ բերանի, բավարար չի՞ լինի լոկ մի սովորական, տկար բերան...

Ուսուցիչը հասկացավ աշակերտի միտքը, բայց կտրուկ կերպով մերժեց այս առաջարկը.

— Այդ երբվանի՞ց է, որ պատերազմի հերոսն ուղարկում է իր կրտսեր եղբորն արյունոտ պայքարի մեջ, որպեսզի փրկի իր սեփական կյանքը...

— Քո կրտսեր եղբայրը չի մտնի ոչ մի արյունալի կռվի մեջ, որովհետև ոչ ոք նրան չի ճանաչում: Տերը, սակայն, մեզ չհանձնարարեց գրել այս մատյանը, որպեսզի այն մնա իբրև մեռած գրություն...

Բարուքը ներկայացնում է իր մշակած ծրագիրը Երեմիային: Նա ցանկանում էր հայտնվել տաճարում՝ թաքնված ժամանակ գրի առնված մատյանի հետ և ընթերցել այն հանրության մեջ, ամենից առաջ Սափանի որդիների սենյակում, որի համար իրեն ոչ մի լուրջ վտանգ չէր սպառնում: Անհրաժեշտության դեպքում ինքը պիտի հիմար ձևանար: Նաև ոչ ոք չպետք է իմանար, թե ինչպես էր գիրքը հասել իր ձեռքը:

Բարուքի տեսակետը տեղին էր: Նրա ծրագիրը հոյակապ էր: Այդուհանդերձ, Երեմիան երեք օր ու երեք գիշեր տատանվում էր, մինչև որ համաձայնություն տվեց իր աշակերտի վտանգավոր ծրագրին: Նոր միայն չորրորդ գիշերը թույլատրեց նրա մեկնումը: Իրենց ընկերակցության սկզբից ի վեր առաջին անգամը լինելով՝ նա դրեց իր ձեռքերը Բարուքի վրա և արտասանեց քահանայական օրհնությունը, որի իրավունք նա ուներ շնորհելու իբրև քահանա.

— Տերը թող օրհնի քեզ ու պահպանի, թող իր երեսը ցույց տա քեզ և լուսավորի:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆՄԵԿԵՐՈՐԴ

ՀՐԱԲՈՐԲ ՓԱՅՏԱԾՈՒԽՆԵՐ ԵՎ ԹՈՒՆԱՎՈՐ ԳԻՆԻ

Մի օր, երբ Երեմիան միայնակ նստած էր իր սենյակում և անհանգիստ հոգով մտածում էր Բարուքի և նրա համարձակ ձեռնարկության մասին, հանկարծ տեսավ Օբադիային՝ իր ավագ եղբորը՝ կանգնած իր առջև: Անակնկալը նույնիսկ ժամանակ չտվեց նրան զգալու իր սոսկալի վախը: Նա դանդաղ վեր կացավ իր տեղից: Գիշերը, երբ վերադարձել էր, մոռացել էր դռան ներսի սողնակը դնելու: Սարսափահար նայեց Օբադիային՝ այդ դյուրագրգիռ ու խոպոտ ձայնով գյուղացուն, որը տարիների թավալումի հետ բոլորովին ծեր մարդու կերպարանք էր ստացել: Նրա մորուքը երկարել էր և գորշ գույն ստացել: Ըստ երևույթին, նա սովորել էր տիրապետել իրեն, քանի որ նրա նայվածքը զայրալից կամ թշնամական չէր եղբոր նկատմամբ: Նրանք լուռ նայեցին միմյանց: Մինչ այդ Երեմիան տենդագին կերպով մտածում էր փախուստի ելքերի մասին: Օբադիան, սակայն, կարծես թե կռահելով նրա միտքը, առաջինն ինքը բացեց բերանը.

— Ինչո՞ւ է իմ կրտսեր եղբայրը թաքնվում իր եղբայրներից... Ճիշտ է, որ նա բավական նեղություն և անարգանք է պատճառել մեզ իր ընթացքով, բայց մի՞թե նա կարծում է, որ մեզանից որևէ մեկն ավելի կմեծացնի այդ անպատվությունը...

Չնայած արված նկատողությանը՝ այս խոսքերը բավականին բարեկամական էին: Բացի դրանից, հարցումի ձևի տակ զգալի էր ապահովության մի թաքուն երաշխիք: Սակայն հենց այդ բարեկամական շեշտն ու ապահովության թաքուն երաշխիքը մտահոգեցին Երեմիային: Հին ու բացահայտ թշնամանքը քիչ էր անհանգստացնում իրեն: Նա հիմա գիտեր, որ Տերը վերացրել էր իր վրայից թաքնված մնալու օրհնությունը և

իր տկար ուժերը նորից դրդել էր մղելու մի նորովի պատերազմ, որն ինքը վաղուց ավարտված էր համարել: Օբադիան հառաչեց, ասես իր կանխատեսումը վերջապես իրականություն էր դարձել.

— Աշխարհն աշխարհ է... Եվ հայրական տունը՝ հայրական տուն...

Այս խոսքերն արտասանեց Քեղկիայի հետնորդը ոչ իբրև ավագ որդի, այլ իբրև հայր, իբրև Քեղկիան ինքնին, որն Իսրայելում Տիրոջ առջև պատասխանատու էր նահապետական մի հինավուրց տան գոյատևման և միասնության համար: Ոչ առանց զարմանքի Երեմիան նկատեց, որ հոր նկարագրի մի զգալի մասը փոխանցվել է իր առաջնեկ որդուն: Այլևս ինքը լոկ իր երեց եղբոր դիմաց չէր, այլ այն մարդու, որը վարում էր հոր ժառանգորդը լինելու պաշտոնը: Եվ Երեմիայի հոգին միանգամից պատրաստ էր արժանի հարգանքով խոնարհվելու նրա առաջ: Եվ իսկապես էլ նա հանցապարտի նման մի փոքր խոնարհեցրեց իր գլուխը: Այս խոնարհումը մեծ բավականություն պատճառեց Օբադիային, որ մի մեծահոգի հաղթողի նման շարժեց գլուխը.

— Ալիքն ափ է նետել փոքր եղբորս... Թող նա վերադառնա տուն՝ Աբիաթարի սրահը, ուր նրան տեղ կնշանակվի հայրական սեղանի մոտ... Թող ընդունի իր սխալն ու ամբարտավանությունը և, ի վերջո, ինքն իրեն թող կարգի բերի: Այնուհետև նա ապահով կլինի մասնակցելու Օբադիայի նահապետական սեղանին... Անկեղծ ասած, կնախընտրեմ խեղդել քեզ իմ սեփական ձեռքով, քան հանձնել քեզ նրանց դատաստանին, ովքեր հետապնդում են քեզ...

Հայրական դերի իշխող արժանապատվությունն ակնհայտորեն զտել և նրբացրել էր Օբադիայի անշնորհք բառապաշարը, ինչպես նկատելի էր նրա վերոհիշյալ խոսքից, որի վերջում ձեռքը դրեց վերադարձածի ուսին և ավելացրեց.

— Լավ, ուրեմն, թող մոռացության մատնվի այն, ինչը կարելի է մոռանալ...

Մայրը, մահու չափ սարսափահար, հայտնվեց Օբադիայի հետևում, որտեղից աղաչավոր ակնարկներ էր անում կրտսեր որդուն: Վերջինս լարված ժպտում է, բազուկները վեր է բարձրացնում, ավագ եղբորը դեպի իրեն քաշում և հետը թեթև գրկախառնվում՝ ի նշան խաղաղության կնքման:

Ընթրիքի ժամանակ Տիրոջ կողմից թագավորների և ժողովուրդների վրա նշանակված մարգարեն լուռ և ճնշված նստում է Աբիաթարի սրահի հայրական հին սեղանի շուրջը՝ նույն տեղում, ուր նստել էր տղա ժամանակ: Նրա մեջ կրկին անգամ գործում է ընտրված լինելու խորհրդավոր օրենքը, որը հայրենիքը դարձնում էր օտար, իսկ մերձավորներին՝ հեռավորներ: Նրա ճանապարհորդության և բացակայության ընթացքում այդ տանն ավելացել էին նոր դեմքեր, և շատ բան էր փոխվել: Չափահաս դարձածներին հազիվ է ճանաչում: Մոխելեթը, որը կանանց մեջ բարձրացել էր տիրուհու աստիճանին, ծերացել էր իր ամուսնու նման: Բայց մինչ Օբադիան գիտակցում էր, որ ինքը մի մեծ գերդաստանի գլուխն է և հոգ էր տանում նուրբ և կիրթ վարվելակերպ ունենալու մասին, Մոխելեթն իրեն դրսևորում էր ավելի այլանդակ և ավելի դաժան, քան նախկինում էր: Չարակամությունից նրա աչքերը կրակ էին ժայթքում, և նա նույնիսկ չէր կարողանում զսպել իր ձայնը ճաշող տղամարդկանց ներկայությամբ: Բարձրաձայն հանդիմանում էր երեխաներին և մինչև իսկ մի առիթով հանդգնեց կոպտել տան տարեց մայրիկին, որը միշտ հանդարտ ընդունում էր նման պոռթկումներ, առանց որևէ պատասխան տալու: Ըստ երևույթին, Երեմիայի վերադարձը տակնուվրա էր արել Մոխելեթի սիրտը՝ մահացու հիասթափությամբ: Ինքը՝ Երեմիան, զգում էր նրա այդ այրող ատելությունը, որն աղավաղում էր նրա դեմքը: Թեև ինքը միշտ գիտակցել է, որ Մոխելեթն իրեն չի հանդուրժում, բայց հիմա ուղղակի ապշած էր շարունակվող այդ ատելության վրա, որի համար ոչ մի պատճառ չկար: Մինչդեռ Սուան՝ Հովելի կինը, գեր և անտարբեր, առաջվա նման բութ հետաքրքրությամբ նայում էր իրեն՝ հազիվ թե զսպելով իր ծիծաղը: Նաև բազմաթիվ երեխաների նոր դեմքերը գաղտագողի նայում էին իրենց տխրահռչակ հորեղբորը, որի անունը Քեղկիայի տանը հավասար էր սարսափի: Մեծերը հետաքրքրասեր նայվածքով ամբարտավանորեն զննում էին նրան՝ որպես թե նա մի կապված հրեշ լիներ, որի տեսքը հիասթափեցնում էր իրենց սպասելիքները: Փոքր տղաներն ու աղջիկներն արագ անցնում էին նրա կողքով, ասես թե նա արգելված ու պիղծ հատկությամբ մեկը լիներ:

Տղամարդիկ՝ Օբադիան և Հովելը, սակայն, ապրում են բավարարվածության մի հիանալի երեկո: Դա համարում են իրենց համար մի արդար

հատուցում այն բանի, որ ժամանակին թագավորն իր սուրհանդակների միջոցով փոխանակ կանչելու իրենց նման պատվավոր և աշխատասեր մարդկանցից մեկին, ընտրել էր ու հրավիրել Երեմիային՝ ոչինչ չանող մի համառ մարդու: Մինչև իսկ այս օրը նախանձի և սնափառության այդ վերքը դեռ չէր սպիացել: Նույն ինքը՝ Հովելը, աշխարհ տեսած այդ մարդը, չի քաշվում կանանց և երեխաների ներկայությամբ չնչին ու գռեհիկ ուսմունքների և դիտողությունների մի տարափ տեղացնել Աստծու այդ համեստ ու անզոր բարեկամի գլխին: Թափառականի անկայուն կյանքը նրան շատ ավելի առողջ էր պահել, քան Օբադիային՝ իր հողագործի աշխատանքով: Հովելը մնացել էր երիտասարդ և արագաշարժ, ոչինչ չէր կորցրել իր հնարամտությունից: Բայց հակառակ նրանց այդ տարբերությանը՝ երկուսն էլ՝ Օբադիան և Հովելը, այդ երեկո գինովցած Երեմիայի նավաբեկությամբ, լցվում են պարծենկոտությամբ և դիմացինի հանդեպ արհամարհանքով՝ գերազանցելով մեկը մյուսին: Մեծ հաճույքով նրանք գովերգում են ու գնահատում են իրենց գործերն ու արարքները՝ որպես միակ աստվածահաճո արարմունքներ, որոնք պետք է կատարի մարդ արարածը երկրի վրա: Շարքն սկսվում է Օբադիայի հնարած աղով խառնված անասնակերով, որը շատ ավելի առողջարար էր ժողովրդի և երկրի համար, քան ցանկացած շատախոսություն: Շնորհիվ այդ անասնակերի կրկնապատկվում է նախիրների քանակը, և նույնիսկ եռապատկվում է ճարպի քաշը: Ինչ կանեին այն բոլոր ուսյալ դատարկապորտները տաճարում և այլուր, եթե Օբադիայի անխոնջ աշխատասիրության շնորհիվ Անաթովթի բլուրների վրա հոտերի կաթը չկթեին և նրանց բուրդը չխուզեին ու չմանեին: Հովելը ողորմածաբար իր համաձայնությունն է տալիս այս ճշմարտությանը և ընդլայնում է այն՝ պնդելով, որ ամենաքաղցր կաթն անգամ կթթվի, ամենանուրբ բուրդը կփչանա, հողի արտադրանքը կոչնչանա, եթե չհաջողվի դրանք վաճառել՝ իր ճամփորդությունների և լեզվական գիտելիքների, ինչպես նաև մարդկանց համոզելու իր կարողության շնորհիվ:

Արդեն վաղուց հասուն մարդ դարձած Երեմիան ստիպված էր լուռ ընդունել այդ պարծենկոտություններն ու քամահրանքներն իր տևական ընդդիմադիրների կողմից: Նրանց պատճառով այլևս նա չէր զայրանում, ինչպես իր երիտասարդ տարիներին: Կատարյալ խոնարհությամբ

նա լսում էր իր եղբայրներին և ոչնչով չէր հակաճառում նրանց: Դրանով նա մի լավ դաս էր տալիս կանանց և երեխաներին՝ հանդուրժելու անարդարություններին: Վերջիններս, սակայն, ոչինչ չէին հասկանում դրանից և արհամարհում էին նրան նրա լռության համար, որը նրանց կողմից ընկալվում էր իբրև մեղքի գիտակցության արտահայտություն:

Երեմիայի խաղաղասիրական լռությունը, սակայն, զայրացնում է հատկապես Հովելին, որը շատ կուզենար, որ իր պերճախոսությունը հրահրի դիմացինի հակաճառությունը: Երեմիան շարունակում էր մնալ անխոս, մինչև որ եղբայրների նվաստացուցիչ արտահայտություններն սպառվեն, որոնցից նրանք բավականություն էին ստանում: Նոր միայն դրանից հետո նա բարձրացրեց հայացքը և ասաց.

— Ես հարգում եմ իմ ավագ եղբայրների աշխատանքը... Կցանկանայի՞ն արդյոք բարի լինել և ինձ սովորեցնել այդ աշխատանքը, որպեսզի Երեմիան օգտվի նրանց գիտելիքներից և սովորի իր բաց թողածը...

Այս համեստ խնդրանքը զարմացնում է եղբայրներին՝ նրանց մեջ առաջացնելով կասկած և անորոշություն: Նրանք իրենց և իրենց կանանց միջև ակնարկներ են փոխանակում, ինչպես այն վաճառականները, որոնք որևէ էժան առաջարկի հետևում մի ինչ–որ լավ մտածված խաբեություն են կասկածում:

* * *

Հաջորդող օրերին եղբայրներն ու նրանց ավագ որդիները դաշտ են տանում Երեմիային, որպեսզի իրենցից դուրս մնացած այդ անձը կարողանա տեսնել իրենց աշխատանքի օրինությունը: Մանկությունից ի վեր նա երբեք չէր այցելել այդ դաշտերը, արոտավայրերը, խաղողի այգիները, ձիթաստանները, ագարակները, ջրաղացներն ու ցանկապատերը, որոնք մաս էին կազմում իր հոր վիթխարի ունեցվածքի, և որոնց երրորդ մասն իր սեփական ժառանգությունն էր: Եվ Երեմիան գիտակցում է, որ իր ավագ եղբայրների աշխատասիրությունը մեծացրել էր իրենց բարեկեցությունը և անձամբ իրեն հարուստ մարդ դարձրել, չնայած նրան, որ ինքը մոր սենյակ էր մտել պատառոտված թիկնոցով և զգեստով:

Քեղկիայի մահից ի վեր նա հազիվ թե պահանջած լիներ իր ժառանգությունը, քանզի նա ապրում էր Հովսիայի արքունիքում, որպես Մաթանիայի ուսուցիչ, առանց որևէ հոգսի: Իր հոգին զարշում էր դասվել աշխարհի հարուստների շարքը, որոնք բոլորն էլ հեռու էին ողորմած լինելուց և աստվածային հոգուց, ինչպես ցույց էր տալիս Օբադիայի և Հովելի օրինակը: Բայց իր հոգին նաև մերժում էր հրաժարվել իրեն պատկանող ժառանգությունից, որը նվիրական մի ժառանգություն էր Տիրոջ սուրբ երկրում: Այդ ամեն մեկ թիզ հողի մեջ ներառված էր Աստծու հեռահար նպատակը, որից ոչ ոք իբրև պարտականություն իրավունք չուներ խուսափելու: Իհարկե, հենց իրեն՝ Երեմիային, Տերն ազատել էր այդ պարտականությունից, քանի որ արգելել էր նրան կին առնել և երեխաներ ունենալ: Ի վերջո, անիմաստ է այն մարդու ժառանգությունը, որը որդի չունի՝ կտակելու համար նրան այդ ժառանգությունը:

Երեմիայի մտքերն ալեկոծվել էին: Նա լավ գիտեր, որ Օբադիայի և Հովելի առերևույթ բարեկամությունը հիմնված էր այն հույսի վրա, որ իր ժառանգությունը ձեռք բերելու նրանց առաջին անհաջող փորձից հետո հիմա պիտի հասնեն հաջող արդյունքի: Մշտական հալածվածի նման կրտսեր եղբայրը վերադարձել էր տուն, ինչպես մեկը, որ անվերապահ կերպով հանձնված էր իր եղբայրների ողորմությանը: Նրա կյանքը ոչ մի պահ ապահով չէր, և նրա ներկայությունը վտանգում էր Քեղկիայի ամբողջ տունը: Այս փաստին բազմիցս անդրադառնում էր Հովելը, իսկ Օբադիան՝ ընտանիքի արժանավոր գլուխը, ոչինչ չէր ասում՝ առանց հավելելու, որ ոչ մեկը չի մտածում զղջացող արյունակից հարազատին պետական պաշտոնյաների ձեռքը հանձնելու մասին: Ակնհայտ էր, որ այդ բոլոր խոսակցությունները, որոնք տևապես հիշեցնում էին Երեմիային նրա անզորությունը, նպատակ ունեին վերածելու նրան մի հեզ և հլու կամակատարի:

Տգեղ Մոխելեթը, սակայն, կարծես թե չէր ընդունում տղամարդկանց դրսևորած մեղմությունը: Նա նույնիսկ չէր բարեհաճում պատասխանել Երեմիայի խաղաղության ողջույնին, և երբ նա հայտնվում էր հոր սեղանի մոտ, ինքը միանգամից շրջում էր իր գլուխը դեպի ուրիշ կողմ: Հավանաբար նա հույս ուներ, որ երրորդ եղբայրը հավերժ կկորչեր և կամ կմեռներ: Ինքն ուներ երեք որդի, որոնց միջև վաղուց արդեն իր մտքում

բաժանել էր Երեմիայի ժառանգությունը: Հիմա, սակայն, ի սարսափ իրեն, այդ ատելին նորից է հայտնվել, պարզապես նրա համար, որ ծաղրի և ոչնչացնի իր հույսերն ու որոշակի վստահությունները: Այդ անշնորհք մարդիկ՝ պարզամիտ Օբադիան և շատախոս Հովելը, գաղափար չունեին, որ Երեմիայի հետ կնքված որևէ համաձայնություն անվավեր և անարժեք կլիներ, եթե աստվածային հզոր Տիրակալը որոշեր չեղարկել այն: Մոխելեթը դա գիտեր և գիտեր նաև, որ Երեմիայի Տերը, չնայած բոլոր զոհաբերություններին ու աղոթքներին, իր և յուրայինների նկատմամբ տածում էր մի հակակրական զգացում և երբեք անբարենպաստ որոշում չէր կայացնելու Աբիի կրտսեր որդու նկատմամբ: Մարդիկ, կառչած իրենց երկրային դատողություններին, նույնիսկ չէին անդրադառնում դրան: Մոխելեթը խորապես համոզված էր, որ միայն Երեմիայի մահը կարող էր լուծել նրա անբարենպաստ կապը գերբնական Գործընկերոջ հետ, որով ապահովված կլիներ նրա ժառանգությունն իր որդիների համար: Եթե մեկը ջարդեր աստվածային անոթը,— կարծում էր Իսրայելի այս մոլորյալ դուստրը,— այդպիսով անօթևան կդառնար հենց ինքը՝ աստվածությունը, որով հեշտ կլիներ խափանել նրա վնասարար ուժը: Հետևաբար, այդ տանը Մոխելեթը միակն էր Աբիի հետ, որը խորապես համոզված էր Տիրոջ հետ Երեմիայի ունեցած ճշմարիտ կապին: Վերջինս, սակայն, ճաշի ընթացքում ոչ ոքի այնքան հաճախ և այնքան ուշադիր չէր նայում, որքան իր եղբոր տգեղ կնոջը, որը շիկնում էր մինչև իր գորշագույն մազերի արմատները:

Երբ Երեմիան նկատեց, որ իր եղբայրների ագահ սիրտն օրեցօր ավելի է ձգտում տիրանալու իր ժառանգությանը, իր տատանվող մտքերը քննարկելուց հետո մի որոշում կայացրեց. նա որոշեց ընդառաջել ագահ եղբայրների ցանկությանը և այդպիսով գնել խաղաղությունն առնվազն իր կյանքի մի բնագավառի համար: Չնայած նրան, որ Երեմիան գարշում էր հարուստների անհագ ագահությունից, այդուհանդերձ, նա նույնքան չէր սիրում աղքատությունն ու թշվառությունը: Նա բոլորից էլ լավ գիտեր, որ մարմնի կարիքներն ու զրկանքներն առաջ չէին բերում Աստծու գաղափարը, այլ ավելի էին հեռացնում այն: Միայն ազատակամ ծոմապահությունը կարող էր ժամանակ առ ժամանակ փոքր-ինչ պարզել Եհովայի խորհրդավորությունը: Ոչ կամավոր ծոմապահությունը

երբեք չէր կարող անել դա: Հետևաբար, ինքն ուզում էր պահանջել իր եղբայրներից այն, ինչ որ օրինավոր կերպով իրեն էր պատկանում:

Իր այս որոշումը նա առայժմ թաքցնում է իր մորից, քանի որ նա երբեք չէր համաձայնվի, որ կրտսեր որդին հրաժարվեր իր հոր ժառանգությունից: *Շաբաթի* ճաշից հետո Օբադիան ու Հովելը սկսում են վերջապես շփոթահար շեշտով խոսել այն մասին, ինչը ճնշում էր իրենց սիրտը: Նրանք գովաբանում են իրենց բարյացակամ վերաբերմունքը հալածյալի նկատմամբ, և որ նրա տուն վերադառնալուց հետո իրենք այլևս ոչ մի ընկեր կամ Աստծու հյուր չէին ընդունել *շաբաթի* սեղանին, որպեսզի չվտանգեն նրա կյանքը: Երեմիան լսում է ուշադիր և թողնում է, որ նրանք խոսեն, մինչև որ նրանք իր ճնշող հայացքի ներքո անցնում են բուն թեմային: Հովելը մեծահոգաբար բացատրում է, որ կրտսեր եղբայրը, վաճառքի միջոցով զիջելով իր բաժին ժառանգությունը, չի կորցնի իր հայրական տունը, այլ իրականում միայն կշահի, հատկապես, երբ ձեռնպահ մնա բոլոր տեսակի անխոհեմ գործունեությունից: Ի զարմանս այդ ընչասերների՝ Երեմիան դրականորեն շարժում է գլուխը՝ որպես ապացույց, որ ինքը չի մերժում նրանց առաջարկը: Օբադիայի նահապետական լուրջ արժանապատվությունը հազիվ է թաքցնում իր հրճվանքը: Հաջորդ օրն իսկ, համաձայն իր առաջարկության, վստահելի մարդկանց միջոցով պետք է որոշվեր ժառանգության գնման արդար արժեքը: Երեմիային հիասթափեցնում է այս փոթորկոտ ոգևորությունը: Իր համար ճանապարհին էր մի պատգամ, որը որոշելու էր իր ապագան: Ինքը ստիպված էր սպասել դրան, մինչև որ այդ նոր ընդունված որոշումն ուժի մեջ մտներ: Միշտ նույն դժվարությունն էր այս մարդու հետ. երբ կարծում էին, թե արդեն ստույգ բռնել են նրան, նա հանկարծակի անհետանում էր: Օբադիայի դեմքն աղավաղվեց այս հիասթափությունից: Քիչ էր մնացել, որ նա կորցներ իր՝ վերջերս ձեռք բերած հանդուրժողականությունը: Այնուամենայնիվ, շատ ճամփորդող առևտրականը հանգստացրեց երեց եղբորը՝ աչքով անելով նրան.

— Համբերատար կրակն ավելի ամուր է դարձնում թրծվող կավե կուժը,— ասաց նա Արամի երկրի լեզվով:

Հաջորդ օրը Երեմիան միայնակ անցնում էր դաշտի միջով: Մի ցավալի մտահոգություն ստիպում էր նրան վերանայել իր ժառանգությունը,

որը նախապես նրա համար շատ քիչ արժեք էր ներկայացրել: Իր սրտին ցավալիորեն դժվար էր հրաժեշտ տալ մի ունեցվածքի, որին ինքը երբեք չէր գնացել տիրանալու: Տարօրինակ տխրությամբ համակված՝ նա քայլում է դաշտերի միջև ընկած արահետներով, անցնում է փափուկ հողի վրայով, ասես ուզում է սիրալիր վերաբերմունք ցուցաբերել նրա նկատմամբ: Եվ երկիրն էլ ուրախությամբ է փայփայում նրան: Մի թարմ քամի թեթևակիորեն փչում է հնձված արտերի վրայով և լցնում է աշխարհը համեմունքների բույրերով: Հասել էր նոր ցանքի ժամանակը: Դաշտերի վրա ամենուրեք կոպիտ գութանը բացել էր իր ակոսները: Էծկան եզներն առաջ էին շարժվում ծանր ու դանդաղ քայլերով: Մաճկալը հրում էր գութանի խոփը հողում այն հավակնոտությամբ, որ ակոսներն ուղիղ գծով բացվեն: Մաճկալի հետևից գնում էր սերմնացանը՝ սերմերը շաղ տալով չորսբոլորը: Դրանից հետո կանայք և երեխաները կռացած, իրենց ձեռքերով հող էին լցնում այդ թանկագին սերմերի վրա: Քեղկիայի ընդարձակ դաշտերը լիքն էին հերկող մշակներով: Այս մշակները, սակայն, ազատ տղամարդիկ և կանայք չէին, հավասար իրավունքով եղբայրներ և քույրեր, որոնք ազատ ծառայում էին կալվածատիրոջը, այլ նրանք գնվող և վաճառվող ճորտեր ու ստրուկներ էին: Նրանք ամբողջությամբ՝ մարմնով և իրենց կյանքով, պատկանում էին իրենց կալվածատերերին, այս պարագայում՝ Օբադիային, Հովելին և Երեմիային: Նրանք վաճառվում էին իրենց հատուկ շուկաներում և իրենց հյուծված մարմինների վրա ունեին ստրկության դաջված կամ այլևայլ նշաններ: Մի՞թե Տերն ազատագրել էր Հակոբին Եգիպտոսից՝ Ստրկության տնից, որպեսզի Հակոբի այս զավակներն իրենց սեփական տանն ընկնեին ստրկության մեջ: Թեև նրա պատվիրանը հոգատար էր աղքատների և թշվառների նկատմամբ, և նրա խոսքը մշտապես ի նպաստ նրանց էր, այդուհանդերձ, Հուդայի հարուստների կողմից ոչ մի պատվիրան այնքան չէր անտեսված ու արհամարհված, որքան այս մեկը: Ճորտացված ստրուկների խղճալի տեսարանը, որոնք աշխատում էին նաև Երեմիային պատկանող դաշտերում, ցնցում է նրան և լցնում սարսափով ու ամոթով: Նա, ով համարձակորեն պահանջում էր թագավորներից պատվիրանների կատարումը, վատոգի կերպով աչք էր փակել այդ հիմնական պատվիրանների անտեսմանն իր սեփական տարածքում:

Երբ զար–հասներ հաշվետվության օրը, ինքն ավելի մաքուր պիտի չլիներ, քան Օբադիան և Հովելը, և որպես հանցակից պետք է ինքն իրեն դատապարտեր: Քամին փչում էր և բոլոր կողմերից իր հետ բերում էր ստրուկների ողբաձայն երգերի ձայները և դրանք կուտակում Երեմիայի առջև, որի քայլերը գնալով ավելի էին դանդաղում ու տատանվում: Այնուհետև նշմարվում է անհրապույր խրճիթներից մեկը, որը կառուցում էին այդ թշվառները՝ կավն ու մանրացված ծղոտներն իրար շաղախելով: Այդ խրճիթի առջև հավաքված էին մի խումբ ստրկուհիներ, որոնք փորձում էին օգնել մի ծերունու, որը փռվել էր գետնին մի ինչ–որ տկարության կամ մահացու հիվանդության պատճառով: Մի հաղթանդամ կին փորձ էր անում մի քանի կաթիլ կաթ խմեցնել ուշաթափվածին: Երեմիան միանում է նրանց, նստում է գետնին, վերցնում է հիվանդի գլուխն իր գիրկը և ձեռքը դնում է նրա սառը ճակատին: Անգիտակից մարդն արագ սթափվում է: Նրա չորացած ու խորշոմած դեմքը դատարկ հայացքով նայում է Երեմիային: Մեկեն նրա դեմքին երևում է դիմացինին ճանաչած լինելու մի սիրալիր փայլ: Հավանաբար ծերունին հին օրերում հետևել էր այն երազկոտ տղային, որը կորած հայացքով քայլելիս է եղել հայրական ընդարձակ կալվածքների միջով: Նրա ձեռքերը փորձում են շոյել Քեղկիայի կրտսեր որդուն, իսկ մարած ձայնն էլ սկսում է հևալով արտահայտվել.

— Տեսեք, սա է իսկական բարի տանուտերը... Սա այն լավ տանուտերն է, որը բարյացակամ է իր ծառաների հանդեպ... Ով իմ բարի տեր, ես արդեն ինն յոթնյակ տարի է, որ ծառայում եմ քեզ, և շուտով կսկսվի տարիների մի նոր յոթնյակ...

— Տարիների մի նոր յոթնյակ...— կրկնում է Երեմիան գունատ շրթունքներով:

Շրջապատի կանայք ծիծաղում են և աչքով անում նրան.

— Նա հաշվում է, հաշվում է և հաշվում...

Շաբաթի տարիների հաշվարկը, պատվիրանի հիշատակումը, որը հանձնարարվում էր իրագործել ու չանտեսել, կանանց համար այդ ամբողջը թվում էր ոչ ավելի, քան արտադրանքը մի զառամյալ մտքի: Նրանք վաղուց արդեն մոռացել էին ազատ լինելու ցանկությունը: Երեմիան անմիջապես տալիս է հիվանդին այն նոր հագուստները, որոնք

ինքը ստացել էր իր մորից: Նա գիտեր, որ եթե դրանք չթալանվեն ծերունու վրայից, նրա համար կծառայեն իբրև *թախրիքիմ* (պատանք): Նա նվիրում է նաև Հովսիայի ոսկե ապարանջանը՝ մի սրբազան հիշատակ, որն ինքը միշտ իր վրա էր պահում: Իր հարազատներին մեծ զայրույթ պատճառելով՝ նա գրեթե մերկ, միայն ազդրերը ծածկող մի գոգնոցով վերադառնում է տուն:

* * *

Եղբայրները ստիպված էին մեկ անգամ ևս զսպել իրենց ագահությունը՝ երրորդ անձի ժառանգության նկատմամբ, քանի որ Երեմիան անսպասելիորեն անհետանում է երկար ժամանակով:

Մի գիշեր Բարուքը հայտնվում է նրա սենյակի պատուհանի դիմաց: Նրանք անմիջապես գնում են փակվելու իրենց հին ապաստարանում: Աշակերտը կարծես թե կարողացել էր խուսափել բոլոր վտանգներից: Այդուհանդերձ, նա իր ձեռքում չուներ գրվածքների մատյանը:

— Թագավորն այրել է իմ տիրոջ աշխատանքը...

Այս բառերով Բարուքն սկսեց պատմել իր արկածները:

— Քո հրաժեշտի խոսքերը,— ասաց նա,— ուժեղացրին իմ վախեցած սիրտը, և ես այլևս չեմ դողում...

Չնայած այս պնդմանը, Երեմիան զգաց նրա պատմածի մեջ վերապրած մարդու շարունակվող վախի արձագանքը:

Սափանի որդիները տաճարում ունեին ուսուցանելու մի մեծ սրահ՝ իր հարակից փոքրիկ խցերով: Բարուքի հետ նախօրոք համաձայնվելուց հետո նախորդ *շաբաթի* օրը նրանք հրավիրել էին այդ «Սափանյան սրահում» հարյուրավոր մարդկանց, բոլորն էլ անխտիր բարեմիտ բարեպաշտներ և Աստծու մտերիմներ, որոնք լսելու ականջ ունեին: Բարուքը նրանց առջև է բերվում՝ ընթերեցելու համար Երեմիայի գրքից, որը միայն մարդկային գրություն չէր, այլ Տիրոջ կողմից հնուց ի վեր Իսրայելին ուղղված խոսքի շարունակությունը: Աշակերտը հայտնեց իր ուսուցչին, որ հուզմունքից իր ձայնը սկսել էր խզվել, և որ ինքը սկզբում շնչահեղձ լինելով՝ հազիվ կարողացել է առաջին տողերը կարդալ: Եհովայի խոսքն

իբրև այրող կրակ էր իր կոկորդում: Միայն աստիճանաբար իր ձայնն ու մարմինը հարմարվում են այդ կրակին:

Մի աշակերտի կողմից ընթերցված Աստծու խոսքերի ազդեցությունն այնքան հսկայական էր, որ Ահիկամի ու նրա որդիների սրտերը սարսափով են լցվում: Ահասարսուռ լռության մի պահից հետո, ինչպես հաջորդում է ամպրոպին, հավաքվածները մեկ մարդու նման իրենց զգում են գետնին և ճակատներն սկսում են խփել այնտեղ: Նրանք բոլորն էլ միանգամից գիտակցում են իրենց զանցառումները, իրենց նկատմամբ համբերության սպառվածությունը և մահվան անխուսափելիությունը: Սկսվում է մի մեծ ողբ ու կոծ, ատամների կրճտոց, որոնք վերածվում են մի սրտառուչ աղաչանքի, որը, ըստ Բարուքի, անպայման հասնելու էր Տիրոջը: Ահիկամն ու նրա որդիները հանգիստ սպասում են, մինչև որ մարվեն այդ ողբալից պոռթկումները: Այնուհետև արթնամիտ Միքիան, օգտագործելով ընդհանուր զղջման այդ առիթը, առաջարկում է առանց հապաղելու գնալ արքունի պաշտոնատեղիները և իշխանություններին տեղեկացնել նոր գրված մատյանի մասին, որը գրեթե նույն արժեքն ուներ, ինչ որ Հովսիայի օրոք վերագտնված օրինագիրքը: Այդ հարյուրավոր տղամարդկանց ալեկոծված տրամադրությունները տալիս են իրենց համաձայնությունն առաջարկին՝ վեր բարձրացնելով իրենց ձեռքերը: Առանց վախենալու և առանց ուշացման պետք էր ստիպել թագավորին անկեղծորեն ապաշխարել: Դա մի աղմկարար ամբոխ չէր, որը Միքիայի և Բարուքի հետ ճամփա է ընկնում դեպի արքունական ամրոց: Դրանք սակավախոս, սպիտակամորուք և ականավոր մարդիկ էին, որոնցից յուրաքանչյուրը Երուսաղեմում անվանի էր և բարձր պաշտոնի տեր, որոնք չէին կարող անտեսվել արքունական հեղինակությունների կողմից: Պատվիրակությանն անմիջապես ընդունում են պետության նոր կանցլեր Ելիշամայի պաշտոնավայրում: Միքիան, որն առաջնորդում էր այն, հրամայում է Բարուքին, որ սպասի կողքի սենյակում: Այնտեղ տագնապալից սպասումը երկար է տևում, երբ վերջապես հայտնվում է մի երիտասարդ՝ տանելու համար նրան պետության մեծամեծների առաջ: Այդ գեղեցիկ տղամարդու անունը Եհուդի էր, Քուշիի որդին, որը թագավորի ավագ ընթերցողն էր: Նրա աչքերը բարությամբ են նայում Բարուքին: Այդ անդոհալից պահին ինչքա՜ն բարերար ազդեցություն են թողնում Եհուդիի աչքերը նրա վրա:

Սակայն երբ նա կանգնում է կանցլեր Ելիշամայի ընդունարանում՝ սառցակալած նայվածքով բարձրաստճան իշխանավորների դիմաց, նա իրեն անմիջապես զգում է թույլ և ընկճված: Նրանցից մեկն իր դիմացի սեղանին է նետում մերկ սուրը և նստում այնտեղ խաչաձևած ձեռքերով: Նա Եղնաթանն էր՝ Հովակիմի աներն ու ընկերը, աղբյուրն ամենայն բռնակալության: Այդ անզգամ կռվարարի դիմաց Բարուքը որոշում է փախուստի դիմել, բայց հենց ինքը՝ Եղնաթանն էր, որ պիտի լիներ այդ պահի մեծ անակնկալը:

Ելիշաման գերազանց քաղաքավարությամբ հրամայում է աշակերտին տեղ գրավել և սկսել կարդալ աստվածահաճո գրությունները: Ընթերցման սկիզբը Բարուքի համար շատ ավելի դժվար էր, քան այն առաջին անգամը, որ դա արել էր: Զգում էր, թե պետք է ընդհատի ընթերցումը, այլապես կխելագարվի: Իր մահացու հուզմունքի միջից նա տեսնում է մեծամեծների լուրջ հայացքները՝ ուղղված իրեն: Ամենից շատ Եղնաթանի աչքերն էին մեծ ուշադրությամբ կենտրոնացած իր վրա: Այդժամ Բարուքը հասկանում է, որ աշխարհի ամբողջ ընթացքը կախում ունի իր արտաբերած խոսքերի զորությունից: Այս մտածումը խթանում է նրա էությունը և վանում նրանից ամեն տեսակ երկյուղ: Իր կյանքն իր համար այլևս ոչ մի արժեք չուներ. հոգևոր հաղթանակն այդ մարդկանց նկատմամբ ամեն ինչ արժեր: Եվ նա բարձրացնում է իր ձայնը՝ փորձելով օժտել այն կախարդական մի հսկա ուժով, որով իր ուսուցիչը վտանգավոր պահերին գիտեր շանթահարել իր հակառակորդին: Եվ մեկ անգամ միայն Տերը նրա ծառայողական կյանքում թույլ է տալիս ընդօրինակել հենց Նրան, ով անընդօրինակելի էր: Բարուքը եզրակացնում է իր խոսքը՝ հայտարարելով Նաբուգոդոնոսորի կողմից Երուսաղեմի կործանումն ու հրկիզումը: «Իմ ծառա» արտահայտությունը՝ այս սոսկալի վիրավորանքն Իսրայելի նկատմամբ, նա կրկնում է անդադար և առանց վախի:

Ոչ ոք ձեռքը զենքին չի տանում՝ պատժելու համար այդ անպատկառին: Վերադասները նստած էին լուռ և գլուխները կախ: Եղնաթանը վեր է թռչում տեղից և սուրը շպրտում մի անկյուն: Այնուհետև նա շրջում է իր ցավատանջ դեմքը, որպեսզի մարդկանցից թաքցնի այն: Նրա սարսափը՝ երբևէ չլսված նման խոսքերից, բոլոր ունկնդիրների մեջ ամենամեծն էր:

Նա ձեռքերով սեղմում է քունքերը, նրա կրծքից դուրս է գալիս մի անվերահսկելի հառաչանք.

— Սա է, որ պետք է լսի թագավորը...

Ելիշաման, սակայն, մի բարդ հարց է ուղղում Բարուքին.

— Դե ասա մեզ, ինչպե՞ս ես գրել այս բոլոր խոսքերը...

Աշակերտը, սակայն, երկար հապաղում է, մինչև որ բացահայտում է իր ուսուցչի անունը: Բացահայտում է նաև մատյանի իսկական ծագման խորհրդավոր հանգամանքները.

— Այս բոլոր խոսքերը Երեմիան ինքն անձամբ է խոսել, և ես թանաքով գրել եմ դրանք այս մատյանում...

Եղնաթանը հավաքում է իր թիկնոցը կրծքին և կոչ է անում.

— Եկեք գնանք արքայի մոտ, ո՞վ համաձայն չէ...

Եհուդին՝ պալատի առաջին ընթերցողը, բարձրացնում է իր ձայնը՝ ընդդեմ նման մի որոշման: Նա ասում է, թե պետք է սպասել բարենպաստ պահի, բացի դրանից, մատյանի ընթերցումը չպետք է կատարի օտար մեկը, որը կարող է հրահրել Հովակիմի զայրույթը, այլ այն պետք է կատարի ծանոթ և վստահելի մի անձ: Մեծամասնությունը հավանություն է տալիս Եհուդիի իմաստուն խորհրդին, բացի այդ, Եղնաթանը վերջում զգուշավորություն է ցուցաբերում: Այս հիշատակելի ժամից հետո, երբ տղամարդիկ բաժանվում են իրարից, Եհուդին մի կողմ է տանում Բարուքին և զգուշացնում.

— Գնա և թաքնվիր Երեմիայի հետ, թող ոչ ոք չիմանա ձեր թաքնվելու վայրը:

Բարուքը գաղտնի ապաստան է գտնում Գեդալիայի տանը: Այնտեղ նա ապահով էր: Միայն Եհուդին գիտեր, թե որտեղ է նա: Մի ամբողջ անվերջանալի օր նա ստիպված էր սպասել: Գիշերը վերջապես Եհուդին հայտնվում է Գեդալիայի տանը: Եվ միայն այդժամ արքունական ընթերցողի բերանով Բարուքն ու Սափանի որդիները տեղեկանում են, թե ինչ էր պատահել Երեմիայի աշխատության հետ:

Թագավորին գտնելը հեշտ բան չէր: Վերջին ժամանակներում Հովակիմն օրական մի քանի անգամ փոխում էր իր բնակության վայրը: Դա անում էր ոչ միայն սպանվելու վախից, այլև որոշումներ կայացնելու հարկադրանքի սարսափից: Այդ վախից ելնելով՝ նա պատճառ էր

եղել, որ փարավոնի պատվիրակությունը, հարցերն անավարտ թողած, մեկներ երկրից: Անպատասխան էր թողել նաև Բաբելոնի պատվիրակներին: Այս բռնավոր թագավորը, որն ի վիճակի էր իր հատու ձայնով ոգևորել ու հրապուրել ժողովրդին, Երեմիայի կատարած մարգարեությունից ի վեր այլևս չէր կարողանում նույնիսկ մի չնչին որոշում կայացնել: Օրեր շարունակ նա մնում էր իր խոհանոցներում՝ իրար խառնելով տարբեր բույսեր, ծաղիկներ, հյութեր, համեմունքներ, գինիներ: Ուրիշ առիթներով էլ հանգստանում էր իր շքեղ օթևաններում: Եղնաթանն ու իրեն ընկերացող մարդիկ գտնում են թագավորին Զմեռային նոր պալատի մի մութ սենյակում: Հովակիմը ցրտից դողալով նստած էր վառվող փայտածուխի կրակարանի մոտ, որի կայծերին էր սևեռել իր հայացքը: Նրա բարակ ոտքերը սեղմված էին իրար, և իր ոսկրոտ ձեռքերը երբեմն կախարդության նման անցնում էին կրակի վրայով: Եղնաթանը հուզված ձայնով հաղորդում է, որ տաճարում հայտնվել է Աստծուց ներշնչված մի մատյան, որի մարդկային տարբերակն առաջացել է Երեմիա Անաթովթցու կողմից: Թող Նորին վեհափառությունը հրահանգի նրա ընթերցումը: Լսելով այդ անունը՝ թագավորը զգալիորեն տագնապի է մատնվում և ապշած հայացքով նայում Եղնաթանին՝ մարգարեների այդ կատաղի հալածչին: Այնուհետև, բոլոր հզորների նման, փորձում է ուշադրություն չդարձնել անցանկալի խոսքի վրա և բոլորովին այլ բնույթի մի խոսակցություն սկսել: Դա նրան չի հաջողվում: Փորձառու ռազմիկ Եղիակիմը սկզբից ի վեր Հովակիմի հետ բաժնեկից է եղել ամեն տեսակ դավաճանության, բռնության և մեղքի, այժմ, սակայն, նրա համար հասունացել էր մի շատ լուրջ ժամ: Նա, իբրև տխրության ու զղջումի արտահայտություն, պատռում է իր զգեստները և կտրվածքներ պաճառում իր դեմքին:

Հովակիմը ցավից կծկվում է: Բայց մի՞թե հնարավոր է, որ սարսափ տարածող անձը հենց ինքը սարսափ դրսևորի, և այն էլ՝ խոսքերից սարսափի: Եղնաթանը, այնուամենայնիվ, հաստատակամ կերպով մնում է կանգնած իր տեղում: Այնուհետև Եհուդիին դժկամությամբ նշան է տրվում բացել անիծված ձեռագիրը: Շատ հաճելի է հնչում արքայական ընթերցողի ձայնը: Հիանալի գեղեցկությամբ է նա արտաբերում Տիրոջ խոսքը, որի կրակը չի այրում նրան: Ամենայն հավանականությամբ, Հովակիմը զղջացել էր իր այդքան հանդուրժող լինելու համար:

(Հետագայում Եհուդին այս կարծիքն է հայտնել Բարուքին)։ Նրա աչքերը թափառում են մեկ կողմից մյուսը՝ առերևույթ ցույց տալով, որ ինքն անուշադիր է։ Երբեմն վեր էր կենում տեղից, հետ ու առաջ էր քայլում և շատ բարձրաձայն խոսում իր սենեկապետների հետ։ Այնուհետև նա նորից լուռ նստում էր, և թվում էր, թե վերջապես ազդվել է բարձրաձայն կարդացված խոսքից։ Բայց Եղնաթանը, որ հույս ուներ, որ թագավորն ի վերջո կզգաստանա, դառնորեն հիասթափվում է։ Հովակիմն արցունքներ չի թափում, չի պատռում իր զգեստները, չի զղջում։ Երբ Եհուդին ավարտում է ընթերցել մատյանի ընդարձակ սյունակներից մեկը, որ կոչվում էր «Դռներ», թագավորը հրամայում է իրեն հանձնել դրա ձեռագիրը։ Գրագրի դանակով նա կտրում է այդ սյունակը և անփութորեն շպրտում կրակարանի հրաբորբ կայծերի մեջ։ Կարո՞ղ էր արդյոք դրանից հետո որևէ ծաղրածու պնդել, որ Հովակիմը մի վախկոտ մարդ է եղել։ Եղնաթանը, սակայն, ձեռագրի յուրաքանչյուր մասի հրկիզումից հետո անողոքաբար նշան է անում Եհուդիին շարունակել ընթերցումը։ Վերջինս շարունակում է ընթերցել, մինչև որ ավարտվում է սյունակը։ Սրա հետ նույնպես կատարվում է նույնը։ Եվ քանի որ Եհուդին ոչ մի նախադասություն բաց չէր թողնում, դրա համար էլ բազմաթիվ ժամեր է պահանջում մինչև թաքնված ժամանակահատվածի շարադրության ամբողջական այրումը։ Մինչ այրվում էր մատյանի վերջին գլուխը, Եղնաթանը երկու ծանր քայլ է անում դեպի թագավորը և ոտքով հարվածում է կրակարանին, շուռ է տալիս այն և մեջի հրաբորբ կայծերը ցատկում են այս և այն կողմ։ Թագավորն աղաղակում է։ Սենեկապետները վրա են հասնում՝ կայծերը մարելու համար։ Պատերազմի հերոս ռազմիկը մի պահ վերից վար տխուր չափում է իր տիրոջը, ապա շրջվում է և հեռանում...

Երեմիան ձեռքերով փակում է իր աչքերը։ Մի սաստիկ ցավ սեղմում է նրա կոկորդը։ Մեծապես ափսոսում է բազմաթիվ օրերի ու գիշերների ընթացքում իր կատարած տքնաջան աշխատանքի ոչնչացումը։ Հիմա այլևս ոչնչի համար չէր ցավում այնքան, որքան մաքուր ու հստակ կերպով լսած խոսքի, որը կորել էր հավետ։ Նա հազիվ թե լսում էր Բարուքի պատմածը թագավորի կատաղի գործողությունների մասին, որպեսզի ձերբակալի իրեն։ Ամենից փորձառու լրտեսներն են ուղարկվում՝ նրան և Բարուքին բռնելու համար։ Նոր հետապնդումի

պատճառով անհրաժեշտ էր մի նոր ապաստարան գտնել: Երեմիան հազիվ թե ըմբռնում է իրավիճակը, երբ կայծակի նման անցնում է իր մտքով. «Մի՛ հուսալքվիր: Տերը ցանկանում է, որ իր խոսքը չկորչի: Գրիր այն երկրորդ անգամ, սկզբից մինչև վերջ»: Այս որոշումը հանգստություն է տալիս նրան:

Մայրը գիտեր լավ խորհուրդներ տալ: Նրանց կալվածքի հյուսիսային սահմանին՝ լքված մի դաշտում, մի կիսաքանդ խրճիթ կար, որտեղով հազվադեպ էր որևէ մարդ անցնում՝ մոլորված լինելով: Դա մի ապահով թաքստոց էր, քանի որ շրջակայքում ապրող ստրուկները, որոնք սիրում էին Երեմիային, ցանկացած վտանգի դեպքում կարող էին հեշտությամբ նախազգուշացնել նրան:

Այդ խրճիթը դարձավ ապաստարան, ուր Երեմիան և Բարուքը նոր և անձնանվեր աշխատանքով սկսեցին մի անգամ ևս արձանագրել Եհովայի խոսքը պապիրուսե թերթերի վրա:

* * *

Երկրորդ անգամ լինելով, նախկին հիշողություններին հավատարիմ մնալով՝ վերականգնվում է հրկիզված մատյանի բովանդակությունը: Տերն իրեն դրսևորում է շատ բարյացակամ և Նրա շշուկաձայն ու ինքնաբուխ պատգամներն ավելի են հստակեցնում ու ճոխացնում իր խոսքը: Նա իր բազկի հովանին պահում է իր աշխատողների վրա այնպես, որ նույնիսկ եղբայրներին չի հաջողվում հայտնաբերել նրանց թաքստոցը, և առավել նվազ՝ նաև նրանց հալածիչներին, որոնք, հակառակ Անաթովթի բլուրների վրա և շրջակայքում իրենց կատարած խուզարկություններին, որևէ արդյունքի չեն հասնում: Այնուհետև թվում է, թե թագավորը մեկ անգամ ևս հոգնում է իր թշնամուն բռնելու ապարդյուն փորձերից: Գուշակված աղետը մոտենում էր, և նրանից պահանջվում էր ամենօրյա որոշումներ կայացնել, որոնցից նա խուսափում էր՝ փակվելով իր խոհանոցներում: Նրա բռնավոր իշխանությունը կառուցվել էր թուլության և անցողակի հաջողության վրա, որն առաջին իսկ հարվածից սկսում է երերալ: Բաբելոնի մեծ տիրակալը՝ Աստծու այդ անկեղծ ծառան,

իր զորքով Դամասկոսի դիմաց էր՝ Արամի երկրում: Շրջապատի ժողովուրդները չէին ընկալել նրա «Բաբելոնի խաղաղությունը» ուղերձը և այն համարել էին իբրև արտահայտություն նրա անզորության: Բոլոր նրանք, ովքեր հարմարվում են որևէ ստորաքարշության, բռնության և ստրկության, արհամարհում են մեղմությունը՝ իբրև թուլության նշան: Մարդուկը, որն իրեն ներկայացնում էր իբրև աշխարհի կառուցողը, ամենից առաջ պետք է հաստատեր ինքն իրեն իբրև նրա զորագլուխը: Կոնաձև սաղավարտներով ձիավորների խիտ խմբերը հայտնվում են ամենուրեք, Հուդայի բաց քաղաքների առաջ, որոնց նախազգուշական ներկայությունն արգելք էր լինելու երկրում որևէ պատերազմական պատրաստության: Մի լուր է պտտվում և հասնում մինչև Երեմիայի ապաստարանը, որ գիշերային երկնքի տերը՝ Մարդուկը, պահանջել է Հովակիմից, որ դադարեցնի որևէ հարաբերություն Նոփի արևի հետ և անվերապահորեն ճանաչի Բաբելոնի թագավորին՝ որպես գերագույն տիրակալ: Հովակիմի պատասխանը, սակայն, հայտնի չէր դարձել:

Աշնանային մառախլապատ քամին կրկին անցնում էր դաշտերի միջով: Բերքահավաքն ավարտվել էր, տարին էլ իր հերթին հասնում էր իր ավարտին: Տարվա նախավերջին շաբաթն էր, շուտով սկսվելու էր արևի մեծ շրջանառության *շաբբաթ* օրը, որը համընկնում է ստրուկներին աշխատանքից ազատ արձակելու հոբելյանական յոթներորդ տարվա հետ: Եվ մի օր էլ անսպասելիորեն Երեմիան հայտնվում է Աբիաթարի սրահում՝ իր եղբայրների առաջ: Նա հայտարարում է, որ ինքը վերջապես պատրաստ է կատարելու նրանց ցանկությունները և իր բաժին ժառանգությունը փոխանցելու նրանց: Ցանկություն է հայտնում Նոր տարվա տոնից առաջ՝ հարմար մի օր, կազմակերպել գերդաստանի բոլոր տղամարդկանց մասնակցությամբ մի հավաքույթ, որպեսզի ինքը վկաների, իրավարարների և երդվյալների ներկայությամբ իր պայմաններն առաջարկի, որոնց ընդունումից անմիջապես հետո համաձայնագիրը կարող է կնքվել: Հովելը կասկածանքով հարցնում է, թե ավելի լավ չէ, որ ամեն ինչ նախօրոք եղբայրներն իրենք իրար մեջ ճշտեն՝ նախքան զարմիկներին իրազեկելը: Այնուհետև շարունակում է հարցնել, թե արդյոք իրենց կրտսեր եղբայրը չի՞ վախենում բացահայտելու իր թաքստոցի վայրն այդ կիսաօտար մարդկանց: Երեմիան վստահեցնում է, որ ինքը դրանից չի վախենում, և որ

ինքը համաձայնության գալուց անմիջապես հետո կհեռանա այդտեղից՝ խոնարհաբար ու ակնածանքով զիջելով իր ավագ եղբայրներին իր կալվածային իրավունքները: «Ակնածանք» բառը շատ դուր է գալիս Օբադիային. մեծահոգաբար նշան է անում Հովելին և համաձայնություն տալիս ժողովի գումարման խնդրանքին: Բայց նրա կինը՝ Մոխելեթը, որը բաժակներով գինի էր մատուցում մարդկանց, շշնջում է ամուսնու ականջին.

— Եհովայի այս խարդախը ձեզ կխաբի...

Նոր տարուց երեք օր առաջ գերդաստանի չափահաս տղամարդիկ, ինչպես նաև Անաթովթում ապրող բոլոր զարմիկները, հավաքվում են Աբիաթարի սրահում: Նրանց մեջ էր նաև բարի զարմիկը՝ Հանամեէլը, որը նաև մարգարեի տղայության ընկերն էր, որի աղքատիկ կալվածքը սահմանակից էր Երեմիայի ժառանգածի հետ: Առանց որևէ մեկից հրավիրված լինելու հայտնվել էր նաև անամոթ Շամարիան: Տարիների ընթացքում այդ գլխավոր մուրացկանը մեծ հեղինակություն էր ձեռք բերել Քեղկիայի տան վրա: Նա վարպետորեն գիտեր համատեղել քծնանքն ու լկտիությունը, այնպես որ Օբադիայի դանդաղ միտքը միշտ հեշտությամբ էր ենթարկվում նրան: Բոլորն էլ վախենում էին *շաբբաթի* այդ անխուսափելի ընկերակցողից՝ վատահամբավ լուրերի այդ աներես դեսպանից, որը, առանց որևէ մեկին հարցնելու, պարզապես ելնելով իր սովորություն դարձած իրավունքից, նստում էր ընտանիքի հայրական սեղանի շուրջ: Օբադիան նույնպես վախենում էր նրանից, բայց քանի որ իր փառամոլությանը դուր էր գալիս նրա ստորաքարշ շողոքորթությունը, հետևաբար իր պաշտպանության տակ է առնում նրան՝ ընդդեմ նրա բոլոր ընդդիմադիրների: Այս անգամ, սակայն, նրան չի օգնում նույնիսկ գերդաստանի մեծավորի պաշտպանությունը, քանզի Երեմիան արագ և հաստատակամ միջամտում է.

— Մի՞թե դու պատկանում ես նահապետական այս տանը կամ զարմիկների այս խմբին,— հարցնում է նա սուր կերպով և բռնելով նրա՝ մուրացկանի հատուկ գունավոր վերարկուից՝ քարշ է տալիս նրան դեպի դուրս,— Տես, ուրեմն, քո տեղը ոչ թե Աբիաթարի սրահում է, այլ այս դռնից դուրս...

Նուրբ, բայց անկոտրում մի ճնշում սրահից դուրս է մղում տարեց մարդուն այնպես, որ նա նույնիսկ չի հասցնում թունավոր ու պերճախոս

լեզվով ողբալու իր դրությունը կամ խնդրելու իր հովանավորի պաշտպանությունը: Մարդկանց մեջ տիրում է լռություն, որոնց մեծ մասը ներքուստ գովաբանում էր Երեմիայի վճռականությունը: Օբադիան սեղմում է իր ատամները և լռում: Կրտսեր եղբայրը հավակնել էր մեծ հեղինակություն դրսևորել, որն իրեն չէր պատշաճում, թեև նա իր իրավունքի մեջ էր՝ վտարելու Շամարիայի նման մի անցանկալի լրտեսի: Երեմիան օգտվում է խոր լռությունից, շրջվում է դեպի ներկաները և սկսում խոսել: Առաջին անգամը լինելով՝ մարգարեն, որի անունը տարածված էր Երուսաղեմում, իր հայրական տանը բարձրացնում է իր ձայնը, որը հարկ եղած դեպքում դատապարտել էր թագավորներին ու քահանաներին: Հետաքրքրաշարժ նայվածքները կենտրոնանում են նրա վրա:

— Դուք, նահապետական այս տան տղամարդիկ և զարմիկներ, անշուշտ, կցանկանաք ողջամիտ որոշում կայացնել այն խոսքի մասին, որ ես այսօր ձեզ եմ ներկայացնելու: Չկարծեք, թե հիմա պետք է սկսվի մի սակարկություն արտի սահմանի կամ արծաթի քաշի շուրջ: Կրտսեր եղբայրը կգոհանա նրանով, ինչ որ իրեն առաջարկում է իր ավագ եղբայրների արդարությունը: Նախապես, սակայն, կա մի բան, որ պետք է արվի: Լսե՛ք, ուրեմն, Տիրոջ խոսքը, որ պատգամվել է ամբողջ աշխարհին և, հետևաբար, նաև այս տանը: Դժվար թե հույս լինի, որ Եհովան զղջա այս ժողովրդի համար և խնայի նրան, քանզի երկրի ոչ միայն մեծերն ու երեխաներն են ապրում գարշահոտության և անկումի մեջ, այլև նույնիսկ քահանայական տները՝ սկսած Հեղիի ժամանակից: Մենք չենք հարգել *շաբաթի* տարին և ստրուկների ազատ արձակման իրավունքը, անտեսել ենք պատվիրանն ու ուսմունքը: Թող իմ աղաչանքը ձեզ մոտ բարեհաճություն գտնի, որպեսզի այս անգամ ընթացք տաք հոբելյանական տարուն՝ ազատ արձակելով ձեր ծառաներին և աղախիններին՝ իբրև ձեր եղբայրներ ու քույրեր՝ տալով նրանց իրենց հասանելիք համապատասխան բաժինը և այդպիսով խուսափելով Տիրոջ մեծ զայրույթից...

Երեմիան խոսում էր առավելագույն խոհեմությամբ և հեզությամբ, ոչ որպես խստապահանջ մի քարոզիչ, այլ որպես քահանայական մի գերդաստանի խոնարհ անդամ: Այնուամենայնիվ, նրա ասածի ազդեցությունը չէր տարբերվում քարոզչի ամբիոնից մի կատաղած խելագարի արձակած որոտացող վիրավորանքներից: Մարդիկ վեր են ցատկում իրենց

տեղերից և սկսում են բղավել իրար վրա բարկությամբ, ծաղրանքով և արհամարհանքով: Օբադիան դեն է շպրտում իր նահապետական արժանապատվությունը և կատաղի վայրագությամբ սկսում է լուտանքներ թափել Երեմիայի գլխին: Հովելը՝ երկրներ ու մարդիկ ճանաչող այդ մեծ վարպետը, գլուխը բռնած, ոտքի մատների վրա պարուհու նման քայլելով անցնում է դահլիճի միջով և դառնորեն ծիծաղում ինքն իրեն.

— Մի խեղճ ցավագար: Դեռևս իր ծննդյան օրվանից վտանգավոր մի հիմար...

Նրանք բոլորն էլ իրենց խղճալի կյանքում խոցված էին սրտից և, հետևաբար, վարվում էին իբրև վիրավորներ՝ արձակելով զայրույթի ու ցավի ճիչեր: Զարմիկներից Հանամեէլը միակն էր, որ խորասուզված էր մտքերի մեջ՝ բոլորովին հեռու այդ փոթորկից: Եղբորորդիներից ու զարմիկներից ոչ ոք չզորակցեց Երեմիային: Ամենից վատը երիտասարդներն էին: Կասկածյալ հորեղբոր նկատմամբ նրանց վրդովմունքը սահման չէր ճանաչում: Աստիճանաբար, սակայն, չափավոր կալվածատերերը փորձեցին զայրույթի դատարկ պոռթկումների փոխարեն լավ մտածված պատճառաբանություններ առաջ քաշել՝ համոզելու համար նրանց, ովքեր ծաղրանքով ընդդիմանում էին Եհովայի և Երեմիայի պահանջներին: Եվ, ինչպես միշտ, շատ լավ ու համոզիչ պատճառներ կային Աստծու պահանջների դեմ գնալու: Եթե մեկն օրենքին հնազանդվելով ազատեր իր հին ստրուկներին, մի՞թե դրանց փոխարեն չպետք է նորերը ձեռք բերեր: Դրանով ի՞նչ կփոխվեր: Աշխարհի սկզբից ի վեր ստրուկները մշակում են իրենց տերերի դաշտերը: Ուրիշ ովքե՞ր, եթե ոչ հենց այդ ծառաներն ու աղախիններն են հաստատվել Աստծու կողմից՝ կատարելու նման աշխատանքներ: Մի՞թե նրանց մատնել են սովի: Իրենց կարիքների համապատասխան հաց և հագուստ չե՞ն ստացել: Մի՞թե նրանցից որևէ մեկն այնքան անմիտ պիտի լինի, որ իր կուշտ անազատությունը փոխանակի սոված ազատության հետ: Ի՞նչ կլինի արդյունքը, եթե ամբողջ երկիրը հետևի հոբելյանական տարվա օրենքին, որը, ի դեպ, ոչ թե սկզբնական օրենքում, այլ ուշ ժամանակներում գտնված ուսմունքի մեջ էր գրված: Վստահաբար հետևանքը կլինի անկարգություն, խառնաշփոթություն, ապստամբություն, թշվառություն և սով:

Երեմիան տխուր դիմակայում էր բարկության ու լավ պատճառաբանությունների հարձակումներին: Բավական երկար տևեց հուզումնալից իրավիճակը, մինչև որ այն հանդարտվեց, որից հետո Երեմիան կարողացավ արտահայտվել իր որոշումի մասին.

— Իմ աղաչանքը չի արժանացել բարենպաստ ունկնդրության... Սիրտս ճնշված է, քանի որ իմ եղբայրները չեն ցանկանում բռնել Տիրոջ կողմը... Սակայն ես պետք է այս բանն անեմ, նույնիսկ եթե վշտացնեմ նրանց... Ինձ ազատություն տվեք իմ ժառանգության բաժին դաշտերի և արոտավայրերի նկատմամբ կիրառել Տիրոջ պատվիրանը...

Օբադիան կանգնում է Երեմիայի կողքին, դողում էր ամբողջ մարմնով և խռպոտ ձայնով շշնջում.

— Եվ ես քեզ խնայել եմ, պաշտպանել ու հանդուրժել...

Հանկարծ նա բարձրացնում է իր աջ ձեռքը և բռունցքի մի ուժեղ հարված հասցնում ուղղակի Երեմիայի դեմքին: Վերջինս տեղից չի շարժվում, այլ իր սեղմած բռունցքները դանդաղ տանում է հետև ու պահում մեջքին:

* * *

Այդ զզվելի դեպքից հետո մարդիկ արագ ցրվեցին: Օբադիան որոշեց սաստիկ ջղաձգումների մեջ, անիծելով, բայց ներքուստ զղջալով, գնաց քնելու: Հովելը, չնայած մոտալուտ Նոր տարվան, հրամայեց թամբել իր գրաստները՝ կատարելու համար վաճառականական մի կարճ ճամփորդություն դեպի Ասկալոն: Երեմիան Հանամեէլի հետ մնաց մենակ Աբիաթարի սրահում:

— Ես աղքատ եմ,— ասաց բարի զարմիկը,— Եվ ունեմ միայն մեկ ծառա և նրա կինը: Նրանց հետ պիտի վարվեմ այնպես, ինչպես Տերն է պահանջում...

Նախքան Երեմիայի պատասխան տալը նա թախանձեց.

— Իմ ընկերը չի կարող մի ժամ անգամ մնալ այս տանը, թող գա և գիշերի ինձ մոտ, որպեսզի ապահովության մեջ լինի...

Երեմիան, առանց դույզն-ինչ մտածելու, մերժեց Հանամեէլի այդ հոյակապ առաջարկը: Վերջինս երկար ժամանակ մնաց նրա մոտ՝

հուսալով, որ նա, լինելով վտանգի մեջ, կփոխի իր միտքը: Երբ Երեմիան դուրս եկավ Աբիաթարի սրահից, դրսում ունկնդրող կանայք և երեխաները սարսափով հետ-հետ քաշվեցին: Միայն Մոխելեթն իր չորացած ամբողջ կերպարանքով կանգնեց նրա դիմաց և արհամարհանքով նայեց նրան, որպես թե Երեմիան լիներ Օբադիային հարվածողը, և ոչ թե հակառակը:

— Քո եղբայրը հիվանդ է քո պատճառով,— ասաց նա հևալով,— և քեզ համար մեծ ցավ է զգում...

Ավելի հեռուները չկարողացավ գնալ: Մոլեգին ատելությունը սեղմում էր նրա կոկորդը, սկսեց ջղագրգիռ հազալ, ինչը ցնցեց նրան ամբողջությամբ, մինչև որ հեկեկալով փախավ Երեմիայից՝ ասես մի դիվահար կախարդից:

Ավելի ուշ մայրը Երեմիային տեղափոխեց ծնողների հին սենյակը: Նրանց միջև տեղի ունեցավ մի խոսակցություն, ինչպես նախկինում, որի ընթացքում ավելի լռում էին, քան թե արտահայտվում:

— Ես վախենում եմ քեզ համար, կրտսեր որդիս,— ասաց մայրը լրջությամբ:

Առանց իմանալու, թե ինչու, նույն բառերն էլ դուրս եկան Երեմիայի շուրթերից.

— Ես էլ քեզ համար եմ վախենում, մայրիկ...

Նրանք կողք կողքի նստեցին մահճակալի եզրին, ինչպես սովոր էին անել: Աբին չէր կարողանում զսպել ծանր հառաչանքը.

— Շատ մարդիկ են եղել այստեղ... Նրանք ամեն ինչ տեսել են և լսել: Նրանց սրտերը լեցուն են զայրույթով... Կրտսեր որդին թող մի ուրիշ տեղ փնտրի, ուր Տերը նրան կպահպանի...

— Նրանք բոլորն էլ մաս են կազմում այս նահապետական տան,— հանդարտեցնում է մորը:— Նրանք ձեռք չեն տա Քեղկիայի որդուն...

Աբին, սակայն, այնքան էլ վստահ չէր դրանում: Նա պնդեց.

— Վերջապես լսիր իմ խնդրանքը... Քո զարմիկ Հանամեէլը դեռևս սպասում է քեզ... Գնա նրա հետ...

— Կարո՞ղ եմ գնալ ու թաքնվել, իբրև մի պարտված մարդ,— փոխադարձեց Երեմիան համառությամբ:— Ո՛չ, ես պետք է մնամ ու դիմանամ՝ կատարելու Տիրոջ պատվիրանն իմ դաշտերի վերաբերյալ:

Այս խոսքերից հետո, որոնք նա արտահայտեց զսպված հուզմունքով, մայրն ավելի խոր հառաչեց, մոտեցավ պատի պահարանին և վերցրեց այնտեղից զգուշորեն փաթաթված մի ինչ–որ բան: Դա ձույլ ոսկու մի ծանր զանգված էր, որը մատուցեց որդուն՝ ասելով.

— Գիշերը՝ իր մահվան նախօրեին, քո հայրը հետևյալն ասաց ինձ. «Եթե Քեղկիայի որդիներից կամ թոռներից մեկը Տիրոջ կամքով հայտնվի հետին կարիքի մեջ, տուր նրան այս ոսկին... Նա սրանով թող փախչի այնտեղ, ուր որ ապահով է...»:

Երեմիան հանգիստ վերցրեց ոսկին և մրմնջաց երազկոտ.

— Ո՞վ գիտե, գուցե հետին կարիքն արդեն հասել է...

Երեկոյան նա մոտենում է հոր սեղանին, ասես ոչինչ պատահած չլիներ, և գրավում իր տեղը: Բոլորն էլ սարսափի են մատնվում: Միայն Մոխելեթի աչքերն են մի պահ շողում, ինչը նկատում է Երեմիան: Նա կտրուկ հայտարարում է, որ ընտանիքի հայրը ներկա չի լինելու ընթրիքին, քանի որ մի ստոր մարդու լկտիությունը նրան հիվանդացրել է ու զցել անկողին: Երեց եղբայրների և նրանց անդրանիկ զավակների բացակայության պատճառով սեղանը սովորականից շատ ավելի դատարկ էր: Մայրը, նկատի ունենալով այդ հանգամանքը, փոխում է իր տեղը և նստում է Երեմիայի կողքին, որպես թե ուզենար պաշտպանել նրան՝ միևնույն ժամանակ դիմելով նրա պաշտպանությանը: Ճաշի ընթացքում տիրում է քար լռություն, կարծես թե դա թաղման ճաշ լիներ:

Անհիշելի ժամանակներից ի վեր Քեղկիայի տանը սովորություն էր, յուրաքանչյուր կերակուրից հետո արծաթե բաժակներով գինի էր դրվում սեղանին: Հեղիի ժամանակից հասած երկարավուն և դրվագազարդ բաժակը պատկանում էր տան գլխավորին: Մյուս բաժակները, որոնք իրարից տարբերվում էին, հատուկ տերեր չունեին: Սովորության համաձայն՝ տան մայրը կավե մի մեծ սափորից լցնում է գինին իր առջև շարված բաժակների մեջ: Այդ գինին պատրաստված էր Անաթովթի բլուրների վրա: Այնուհետև մայրն իր ձեռքով մատուցում է խմիչքը հարազատներին: Երեմիան նկատում է, որ բաժակներից մեկը բոլորովին դուրս է դրված մնացածների շարքից, և Մոխելեթը գաղտագողի նայում է նրա վրա, չնայած որ այն արդեն սկզբից լցված էր գինիով: Նա մտածում է, որ այդ բաժակը պետք է նախատեսված լիներ իր համար, քանի որ այն

առանձնացված էր մյուսներից, ինչպես ինքը: Նրան տարօրինակ է թվում Մոխելեթի այդ աստիճան ատելությունը, որ այդ առանձնացված բաժակը ոչ թե անձամբ նրա, այլ մի աղախնի միջոցով է մատուցվում իրեն: Տարված այս մտքերով՝ նա հազիվ թե նկատում է, որ իր կողքին նստած մայրը փոխանակում է այդ բաժակն իր բաժակի հետ: Երեմիան բարձրացնում է գլուխը, բոլորն էլ սպասում են օրինության խոսքին, որ պետք է նախորդեր խմիչքի առաջին ումպին, և քանի որ նա սեղանի ամենատարեց տղամարդն էր, ոտքի է կանգնում և ասում.

— Օրինյալ լինես Դու, հավիտենական մեր Աստված, որ ստեղծել ես որթատունկը...

Բոլորը տանում են բաժակները դեպի իրենց բերանները և ըմպում, յուրաքանչյուրն իր ձևով՝ ագահությամբ կամ խորհրդածելով ու դանդաղ: Մոխելեթը խմում է գինին տղամարդու նման արագ: Աբին ամենից առաջ զննում է նրա գույնն ու բուրմունքը, ապա ժպտալով խմում է երեք ումպ իրար հետևից: Երեմիան թեև շատ ծարավ էր, բայց դեռ հազիվ կեսը խմած՝ կանգ է առնում: Մեկեն անդրադառնում է բաժակների փոխանակմանը: Մի սարսափելի կասկած է անցնում նրա մտքով: Սառած աչքերով նայում է մորը: Նա ձեռքից թողել էր բաժակը և ուրախ տրամադրությամբ գլուխով է անում որդուն: Երկրորդ նայվածքն ուղղված էր իր թշնամուն՝ Մոխելեթին, որը ջղագրգիռ կերպով ոտքի էր կանգնած և դեռ սևեռուն կերպով նայում էր այն բաժակին, որը Երեմիան բռնած էր իր ձեռքում: Հիմա, սակայն, բոլորն էլ սարսափով նայում են Մոխելեթին: Նրա աթոռն ընկնում է հատակին, իսկ նա հանում է իր գլխաշորը, որը ծածկում էր նրա գորշ ու ապստամբ մազերը, և արագ դուրս է գալիս Աբիաթարի սրահից՝ երկար ու անմարդկային մի ոռնոց արձակելով: Երեմիան և մյուս բոլորը մնում են իրենց տեղերում քարացած: Հանկարծ Աբին սկսում է դանդաղորեն թեքվել դեպի որդին և գլխով ընկնում է նրա գիրկը: Երեմիան բռնում է նրան և ցնցում: Մայրն անկենդան պառկած էր նրա բազուկների վրա: Նա վեր է բարձրացնում նրա փոքր ու թեթև մարմինը և, անցնելով մութ միջանցքի միջով, տանում է ծնողների սենյակը: Նա անշնչացած էր: Երբ նրան դնում է իր անկողնում, կարծես թե մի անգամ ևս լսում է նրա շշնջոցը.

— Կրտսեր որդիս... Իմ փոքրիկ երեխան...

Վերցնում է այն փոքրիկ ճրագը, որը շատ անգամներ էր սպասել իրեն տան շեմին, պահում է այն մոր դեմքի մոտ: Նրա աչքերն արդեն հանգել էին:

Առաջինը, որ անում է Երեմիան, դուռը կողպելն էր և այն տան կահույքով ամրացնելը: Այնուհետև պառկում է մահացած կնոջ կողքին: Այդ գիշեր երբեմն կայծակի նման անցնում են իր խանգարված մտքով անկապ խոսքեր, ինչպիսիք էին, օրինակ՝ «տուր նրան այս ոսկին... հետին թշվառության ժամանակ...»: Մայրն ի սեր նրա կրել էր այդ հետին թշվառությունը, որի մասին նա քիչ ժամեր առաջ հիշատակել էր: Այժմ իրեն Ընտրողն իրենից վերցրել էր ամենավերջինը, որ մնացել էր: Կատարյալ էր Եհովայի մարդասպանության գործը, որը խղճում է իր բոլոր ծառաներին, ինչպես նաև իր սեփական ծառային: Երեմիան չէր մտածում, չէր լացում, չէր ապրում, այլ պարզապես պառկած էր այդտեղ: Հեռվից նա ամբողջ գիշեր լսում էր ձայներ, քայլեր և դռան հարվածներ: Առավոտյան հարվածներն արդեն ուժգնանում են: Ի վերջո դուռը խորտակվում է: Բիրտ բազուկները պոկում են Երեմիային իր մոր և հոր անկողնուց: Ձինված մարդիկ կանգնում են ծնողների սենյակում, ուր դրված էր սրբազան մահացածը: Ավելի վատ, քան Երեմիային ձերբակալելու եկած այդ զինվորների ներկայությունը, զզվելի տեսքն էր մուրացկան Շամարիայի, որն անընդհատ խոսում էր նրանց հետ: Նրանք կապում են Երեմիային, որն առանց դիմադրության թույլ է տալիս իր հետ վարվել, ինչպես կկամենան: Այնուհետև, գինովի նման, նա հետևում է Հովակիմի զինվորներին:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

ՄԵԼԵԽ ԲԱԲԻԼՈՒ[15]

Երեք թեթև զինված արքայական ռազմիկներ, գլխավորությամբ մի սպայի, իրենց հետ քարշ են տալիս երերացող Երեմիային: Պարսպի մոտ Բարուքը միանում է նրանց՝ անտարբեր թափառողի նման մի քանի քայլ հետ մնալով: Առաջնորդը, հավանաբար աճապարելով, հրահանգ չէր ստացել ձերբակալելու նաև հալածված մարդու աշակերտին, որի համար էլ ուշադրություն չէր դարձնում իրենց հետևից քայլողի վրա: Երբ Երեմիան մի անգամ հետ է նայում, Բարուքը վեր է բարձրացնում ու շարժում իր ձեռքում բռնած վերականգնված գրքի ձեռագիրը, որպես թե ուզենար դրանով մխիթարել իր դժբախտացած ուսուցչին: Բայց թվում է, թե նա չէր ճանաչում ոչ Բարուքին, ոչ էլ իր սեփական աշխատանքը:

Հովտի խորքից ճանապարհը բարձրանում էր բավականին ուղղաձիգ ու բարձր դեպի Երուսաղեմի լեռները: *Թիշրի* ամսվա առավոտյան զով և մաքուր օդում արևը շողում էր՝ լուսավորելով լեռներն ու նրանց երկնասլաց գագաթները: Մարդ կարող էր հեռվից հստակ կերպով տեսնել ամեն մի թուփ կամ վայրի շուն, որ հայտնվում էր հորիզոնին: Այդ վաղ ժամին ամայի ճանապարհին դեռևս չէր երևում ոչ մի մարդ և ոչ մի գրաստ: Աշխարհը դատարկ էր, ինչպես Երեմիայի տխուր հոգին:

Սպան հանկարծ կանգ առավ և մի հակիրճ հրաման արձակեց: Զինվորները բռնեցին իրենց բանտարկյալին, ճանապարհից դուրս հանեցին և քարշ տվեցին դեպի ամայի դաշտը, որտեղ նրանք նստեցին նրա հետ: Իրենց սարսափահար առաջնորդի ձեռքը ցույց էր տալիս

[15] Երբ. (արամերեն)՝ Բաբելոնի թագավոր:

հաջորդ լեռնապարը, ուր մռայլ հեծյալների երկար մի շարք ուրվագծվում էր երկնքի կապույտ տեսարանի հակադրությամբ: Նրանք իրենց սրածայր սաղավարտների պատճառով հեշտությամբ և անշփոթ կերպով կարող էին ճանաչվել որպես քաղդեացիներ: Դա մի սարսափելի ապացույց էր, որ Բաբելոնից եկած զինյալներն արդեն Աստծու սրբազան քաղաքի մատույցներում են: Սպան և իր ռազմիկները խորհրդակցում են՝ նպատակահարմա՞ր է արդյոք այդպիսի պայմաններում շարունակել ճանապարհը, թե՞ թանկարժեք ավարի հետ խելամիտ կերպով նահանջել դեպի Անաթովթի պարիսպները: Այս չկողմնորոշված իրավիճակում Բարուքն առիթն օգտագործում է՝ նստելու բանտարկյալի մոտ և ինքն էլ հուզված ցույց է տալիս Բաբելոնի զինվորներին, որոնք շարժվում էին հեռվում: Թվում էր, որ դա մի լավ առիթ էր փախուստի դիմելու, բայց Երեմիան չի լսում իր խոհեմ աշակերտին: Նա սևեռուն հայացքով նայում էր արնակարմիր հողակույտերին և ցածր ձայնով մտածում ինքն իրեն.

— Իր սեփական անվան իմաստի մեջ պարփակված գուշակությունը կատարվել է, այն անվան, որով կրտսեր որդին կոչվել է ծնողների կողմից՝ դեռևս մոր արգանդում՝ Յիրմե՛յահու... այսինքն՝ «Աստված բարձրացնում է, Աստված խորտակում է»...

— Ի՞նչ է ուզում ասել իմ ուսուցիչը,— զարմացած հարցրեց Բարուքը:

Երեմիան ցնցվեց, միայն այդժամ նկատեց, թե ով է նստած իր կողքին: Մինչ այդ հեծյալների երկար շարքը կրկին անգամ անհետացավ լեռնաշղթայի հետևում: Սպան որոշեց չնահանջել, այլ ուշադիր շարունակել Երուսաղեմ տանող ճանապարհը: Շատ խիստ էր հրամանը՝ ձերբակալված այդ մարդուն կենդանի տանել թագավորի առաջ:

Սակայն կողմնակի ուղիներով հազիվ էին հասել լեռան բարձունքին, երբ անսպասելիորեն դեմ հանդիման հայտնվեցին Բաբելոնի ձիավորների բանակին, ասես մի մեծ պատի դիմաց լինեին: Քաղդեացիները կարծես թե դեռ չէին որոշել՝ որ ուղղությամբ գնալ: Զորամասերից մեկը բռնել էր հարավարևելյան ուղղությունը՝ դեպի Երուսաղեմ: Մյուս հատվածը տարածվում էր դեպի Իարայելի հարթավայրը: Բաբելոնի ձիավորները ոտքից գլուխ սպառազինված էին, նրանց պողպատյա կոնաձև սաղավարտները փայլում էին արևի ներքո:

Սպան ձեռքը վեր բարձրացրեց և հրահանգեց իր մարդկանց, որ շտապ դուրս գան հեծյալ զինվորների տեսադաշտից, բայց հենց այդ պահին հեծյալներից մեկը, շրջելով իր անհանգիստ ձին, նկատեց փոքրիկ խմբին կալանավորի հետ: Անմիջապես զեկուցեց իր վերադասին: Կանգ առնելու մի կոպիտ հրահանգ ստիպեց փախչող հրեաներին, որոնց մեջ էր Երեմիան, չշարունակել իրենց փախուստը: Նրանք անմիջապես կանգ առան՝ նկատի ունենալով թշնամու բանակի գերակայությունը: Բաբելոնցի վերադասն ազատ արձակեց իր ձին, եկավ կանգնեց Երեմիայի մոտ ու հարցրեց.

— Ի՞նչ եք ուզում այս մարդուց:

— Այս մարդը,— կմկմալով ասաց եբրայեցի սպան և խոնարհվելով՝ ձեռքով դիպավ հողին՝ ի նշան հարգանքի,— այս մարդը մի խռովարար է և չարագործ...

— Իսկ ի՞նչ է նրա հանցանքը:

— Նա շատ վատ բաներ է մարգարեացել մեր վեհափառ թագավորի մասին... Թող իմ տերը հասկացողություն ցուցաբերի և մեզ թույլ տա գնալ խաղաղությամբ...

Մինչ վերադաս զինվորականը խորհում էր իր անելիքի մասին, հանկարծ Բարուքը ցատկեց առաջ և նրա աչքերի դիմաց թափահարեց իր ձեռքում բռնած մատյանը, ապա համարյա գոռալով ասաց.

— Թող իմ տերը նկատի ունենա այս մարդու անմեղությունը... Նա մարգարեացել էր Հուդայի թագավորի կործանումը և Բաբելոնի արքայի հաղթանակը... Ամբողջը գրված է այս գրքում, որի համար նա հետապնդվում է: Արդարև նա ուղղակի Աստծու ձայնով է լսել Հովակիմի դժբախտությունը և Բաբելոնի օրհնությունը...

Բաբելոնցի զինվորականի փոքր ու սրատես աչքերը սկսեցին պտտվել մերթ Բարուքի և մերթ Երեմիայի վրա և երկար մնացին այդպես, ասես նա հարբած վիճակում լիներ՝ չկարողանալով ինչ-որ բան ըմբռնել: Ապա հրամանատարի կտրուկ շեշտով դիմեց իր ստորադասներին՝ կազմելով մի կարևոր սկզբունք Բաբելոնի ռազմական կարգուկանոնի համապատասխան.

— Երկնային մարմինների և Աստծուն լսողների գուշակությունները պետք է միշտ խստորեն ստուգվեն և իրար հետ համեմատվեն:

Այս խոսքերն ասելով՝ նա Բարուքի ձեռքից վերցրեց մատյանը և զետեղեց այն թամբից կախված մի դատարկ կապարճի մեջ: Այնուհետև նա արձակեց մի քանի կարճ հրամաններ: Հանեցին Երեմիայի շղթաները: Երեք նետաձիգներ նշան բռնեցին հրեաների խմբակի հուսահատ ղեկավարի վրա, որը խնդրում էր և բողոքում իր կալանավորի համար: Սակայն նրա ականջների մոտով շաչյունով անցավ արձակված մի նետ, որն ապացուցում էր նրան, որ այդտեղ իրադրությունը շատ լուրջ է: Հրեաներն արագորեն հեռացան բարձունքից: Երեմիան ու Բարուքը ստիպված էին նստել իրենց տրամադրված ձիերի վրա: Սպառազինված աղեղնավորներն առան նրանց իրենց մեջ և հեռացան դեպի հյուսիս, մինչդեռ թեթև հեծելազորը գնաց հակառակ ուղղությամբ:

* * *

Բաբելոնյան զորքի վրանները տեղավորվում են Թաբոր լեռան լանջերի շուրջը: Այդտեղ հարյուրավոր շքեղ և գորգազարդ վրանների միջև Երեմիային տալիս են ծակերով լի մի պատսպարան, որը շատ հեռու էր վրան կոչվելուց: Նրանց տալիս են նաև երկու վերմակ, գարու մի քանի կտոր հաց և կավե մի մեծ սափոր՝ աղբյուրի թարմ ջրով: Առանց որևէ բան ճաշակելու՝ Երեմիան անմիջապես ընկնում է խոր քնի մեջ, որը տևում է ավելի քան քսանչորս ժամ: Նա կարող էր նույնիսկ քսանչորս օր անընդմեջ քնել, քանի որ ոչ ոք չէր զբաղվում նորեկներով, և ճամբարն էլ չէր տեղափոխվում:

Այդ բոլոր օրերի ընթացքում Երեմիան իր ընկերոջ հետ խոսում է միայն ամենից անհրաժեշտ խոսքերը, որպես թե դրանք առաջացած լինեին իր տխրության ու սգո ամենից հեռավոր անկյուններից: Նրա ձայնն ամբողջովին փոխված էր, մեղմ ու խռպոտ կերպով հնչում էր նրա վիրավոր կոկորդից: Նա գրեթե ոչինչ չէր ուտում ու խմում: Բարուքը շատ էր վախենում նրա համար, երբ գիշերը թեքվում էր քնածի վրա և լսում դաժան երազների միջից նրա հեկեկոցը: Հովսիայի ու Ջենուայի մահերից հետո Երեմիան հակաճառելու և պայքարելու կատաղի ուժ էր ձեռք բերել: Վիճաբանում էր Տիրոջ հետ, հրաժարվում էր Նրանից և համառորեն

փնտրում մեղքը մինչև իսկ Ամենտիի խորքերում: Մոր մահից հետո նա այլևս Աստծու հետ վիճելու ուժ չէր գտնում, որը վերջում մնում էր ամենից ուժեղը: Բայց ինքը՝ Երեմիան, նույնպես չգիտեր հանձնվել և ենթարկվել, այլ միայն մի բութ գոհունակություն էր զգում: Բարուքը մտածում էր, որ նա կորցրել է այն միակ հոգուն, որն ամենայն սիրով մտահոգվում էր նրա վիճակով: Աշակերտին, սակայն, երբեք չէր վիճակվել իրեն զգալ իբրև մի սիրելի ընկեր, որն արժանի լիներ նաև սիրվելու:

Վերջապես թվում էր, թե Երեմիան ուզում է փոխվել և աշխուժանալ: Լուսնի լույսով լուսավորված մի երեկո նա քայլում էր Բարուքի հետ ճամբարի նրբանցքներով: Ամենուրեք վառվում էին կրակներ, որոնց վրա բանակայինները ճաշ էին եփում: Զաբուղոնի բերքառատ երկրում զինվորների երկար ու անդորրիչ քունը կազդուրում և ուրախացնում էր նրանց: Նրանք երգում էին ծափերի և ծնծղաների ուղեկցությամբ Բաբելոնի արագ կշռույթով այն երգերը, որոնք տոնում էին գիշերային երկնքի հաղթանակը ցերեկայինի վրա, Կարգեմիշի մոտ: Բաբելոնի որդիների աչքերը հետաքրքրությամբ նայում էին Երեմիային և նրա ուղեկցին: Բայց նրանց նայվածքը թշնամական չէր: Ոչ ոք չէր փակում նրանց ճանապարհը, կասկածելի հարցեր չէին տալիս և ոչ էլ նեղություն պատճառում: Կարող էին անարգել թողնել ճամբարի սահմանապատը, կարծես թե վերևից հատուկ հրահանգ կար՝ հարգանքով վարվել Հուդայի Աստծու ունկնդրի հետ:

Երկուսով բարձրանում են Թաբոր լեռան ծառազուրկ լանջի վրայով: Բարձրության կեսը հազիվ հասած՝ նստում են մի լերկ ժայռի պռնկին, ուր չէին հասնում բոցավառ կրակների ծուխն ու հարբեցողների խելացնոր աղմուկը:

— Մենք բանտարկյալ չենք,— ասաց Բարուքը,— կարող ենք գնալ այնտեղ, ուր ուզում ենք...

Երեմիան օրորեց գլուխը.

— Ո՞ւր կուզենայիր գնալ... Դեպի ո՞ր կողմը կարող է դիմել Երեմիան...

Այդտեղ Բարուքը հասկացավ, որ Երեմիան երբեք չպիտի հրաժարվի թաքնված ժամանակ շարադրած իր աշխատությունից, որը բաբելոնացիների ձեռքում էր:

Հսկա լուսնի մաքուր սկավառակը անթիվ աստղերի հետ շրջում էր լեռան վերևում՝ հրավիրելով Աստարտի և երկնային զորությունների բոլոր երկրպագուներին, որպեսզի պաշտեն իրեն: Երկիրը տարածվում էր՝ ծածկված լույսի պայծառ շողերով և խառնված գերբնական ստվերների հետ: Թաբոր լեռը բարձրանում էր Իսաքարի ու Զաբուղոնի միջև: Երեմիան վերևից նայում էր դեպի Մանասեն, որտեղ Մեգիդոյի խոպան դաշտը ձգվում էր Կարմելից մինչև Գեղբուայի բլուրները: Երկրում այլևս չէր հիշվում Հովսիան: Տերը թույլ չէր տվել իր ընտրյալին փրկելու վսեմաշուք թագավորին: Այնտեղ, ուր արյունաշաղախ հարթավայրի հետևում կրկին բարձրանում էին սարերը, տարածվում էր անկենդան և ավերակ Եփրեմը՝ Իսրայելի այդ Ամենտին: Եվ Երեմիային թվում էր, թե լուսնային գիշերվա կաթնային մառախուղում տեսնում է Սամարիայի պալատների համար օգտագործվող քարահանքը՝ օձերի և կարիճների բերկրության այդ վայրը: Եփրեմի բլուրների հետևում ժպտում էին գագաթները Բենիամինի տարածքի, որի հողում եղբայրները վաղուց արդեն թաղել էին իր մորը: Եվ Բենիամինի գագաթների հետևում հեշտագինս երազում էր Սիոնի դուստրը՝ անվրդով և անկասկած: Դեռ որքա՞ն ժամանակ... Հյուսիսի դատաստանը հավաքվել էր Թաբոր լեռան շուրջը, իսկ բազում կաթսաներ, որոնց մեջ բաբելոնացիները պատրաստում էին իրենց կերակուրը, եռում էին ճամբարի կրակների վրա և ցրում իրենց փրփուրները: Բարուքը կողմնակի նայեց Երեմիային և նրա դեմքին նկատեց մի մեծ տխրություն, որը միայն մոր՝ Աբիի կորստյան վիշտը չէր: Աշակերտը մի պահ սարսափեց և ասաց.

— Երեմիան թող հարցնի Տիրոջը, արդյոք դեռ հնարավո՞ր է փրկվել այս դատաստանից ու վախճանից...

Կործանում գուշակող մարգարեն այդ ժամին այլևս ոչինչ չէր սպասում: Նա, ով հարյուրավոր լեռնապարերի հետևում զգացել էր այրվող տաճարի բոցերի ծուխը, երդում անողի նման վեր է բարձրացնում իր երկու բազուկները և ընդհատվող շնչառությամբ ասում է ինքնահոս կերպով.

— Նա, ով արևը հաստատեց ցերեկվա լուսավորության, իսկ լուսինն ու աստղերը՝ գիշերվա լուսավորության համար, ով ցնցում է ծովը, և նրա ալիքները շառաչում են կատաղի, նրա անունն է Տեր Ամենակալ: Եթե իմ

օրենքները դադարեն գործելուց, ասում է Տերը, ապա իմ աչքի առաջ Հակոբն ընդմիշտ կթողնի իր տեղը և կդադարի ժողովուրդ լինելուց...

* * *

Ճամբարում արդեն երեք ամիս էր անցել, երբ մի առավոտ Երեմիայի առջև հայտնվում են երկու ազնվական բաբելոնացիներ և նրան ու Բարուքին տանում են շքեղորեն զարդարված մի վրան, որն այլևս պիտի ծառայեր նրանց իբրև բնակարան: Բաբելոնի ազնվականները շատ համեստ ու հարգալից կերպով հետաքրքրվում են անծանոթ մարդկանց ցանկությունների մասին, որոնց նրանք «մոլորակների հյուրեր» էին կոչում: Այս հանգամանքը ցույց է տալիս, որ ճակատագրի մի նշանակալից և թաքնված շրջադարձ պետք է կատարված լիներ նրանց համար, քանի որ սովորական բանտարկյալներին և անարժեք օտարականներին երբեք նման սիրալիություն չէր ցուցաբերվում: Այդ պահից սկսած աշակերտն անընդհատ ձանձրացնում էր իր ուսուցչին՝ խնդրելով այլևս անգործ չսպասել, այլ պետք է համարձակորեն առաջ ընթանալ ու հասնել մինչև Բաբելոնի մեծամեծներին, անգամ նրանց ամենից բարձրաստիճան անձին, որը քիչ ժամանակ առաջ եղել էր ռազմական ճամբարում՝ որոշում կայացնելու համար աշխարհի ժողովուրդների ճակատագրի մասին:

Երեմիան շատ հանգիստ էր վերաբերվում Բարուքի խնդրանքներին: Նրան հատուկ չէր վազել անխուսափելիի հետևից՝ ընդառաջելով սրտաճմլիկ աղաչանքների: Նա թույլ էր տալիս, որ իր հետ կատարվի այն, ինչ որ պետք է կատարվեր: Սա հենց այն էր, ինչ առանձնացնում էր նրան դյուրահավատ ու սովորական մարդկանցից, որոնք խորամանկորեն ենթադրում էին, թե երբեք ուշ չի լինի, նույնիսկ վերջին պահին՝ կաշառելու Տիրոջը բարեպաշտ թվացող համառ աղերսանքներով: Իր կյանքի դաժան փորձառությունները սովորեցրել էին իրեն, որ Անմեկնելիի կամքի հետ հնարավոր չէ մի հստակ դաշինք կնքել: Եհովան ատում էր այն, որ մարդիկ իր առաջ դնեն ինչ-որ անմաքուր բան, եթե այն նաև զերծ չլիներ բոլոր տեսակի թաքուն ու եսակենտրոն նպատակներից: Այս փորձառությունն էր Երեմիայի անգործության և նրա սպասողական

կեցվածքի պատճառը, ինչը հաճախ քննադատվում էր Սափանի խելամիտ որդիների և Բարուքի կողմից:

Բացի այդ, նաև այս անգամ ամեն ինչ կատարվում էր առանց իր միջամտության: Գարնան գիշերահավասարին և Արևելքում Մարդուկի հայտնության տոնի օրը բաբելոնացի յոթ աստղաբան խորհրդատուներ այցելում են Երեմիային: Նրանք փայլում էին շքեղ հանդերձանքով: Նրանց բարձրահասակ ու սեղմ կերպով գոտևորված մարմիններն օժտված էին մուգ ծիրանագույն կոշտ հագուստներով, որոնք հասնում էին մինչև ոտքերի ծայրերը: Ձախ ուսերից կախված էին գույնզգույն երիզներ, որոնք ավարտվում էին արծաթավուն սպիտակ ծոպերով: Նրանց օծված ու գանգուր մորուքների մեջ հյուսված էին զարմանալի մեծությամբ սուտակներ և զմրուխտներ: Հնարավոր չէր ասել՝ արդյոք նրանց երկար և նուրբ մազերը նույնպես պարունակում էին նույն արժեքի զարդեր, քանի որ փայլուն կապույտ գործվածքից պատրաստված բարձր գլխարկները ծածկում էին դրանք: Ասեղնագործված գոտու վրա, որտեղից այլապես կախված կլիներ զինվորի կարճ սուրը, շողշողում էին ոսկյա նուրբ բահեր՝ իբրև Նաբուգոդոնոսորի և հավիտենականության խորհրդանիշներ՝ հողը փորելու և շրջելու: Աստղաբան խորհրդատուներն իրենց բարձր գլուխները խոնարհեցնում են Երեմիայի առջև և նրանցից աստիճանով ավագը ձևակերպված ելույթով ներկայացնում է Հուդայի մարգարեին և նրա օգնականին այն հրամանը, որ նրանք պետք է ներկայանան այն սրբազան դեմքի առաջ, որն իր երկրային արտացոլման մեջ կրկնում է, տիրապետում և կատարում գիշերային պարող երկնքի ճակատագրի շրջանները, որոնք ձևավորվում ու նախատեսվում են աստղերի կողմից: Այնուհետև, ըստ Բաբելոնի պալատական սովորության, նրանց գլուխներին վուշե նուրբ պարկեր են անցկացնում և տանում՝ մեղմորեն բռնելով նրանց ձեռքից:

Մի որոշ ճանապարհ կտրելուց հետո, որը նրանց շատ երկար էր թվացել՝ կուրության մեջ լինելու պատճառով, այդ միևնույն նուրբ ձեռքերը հանկարծ ամուր բռնում են նրանց և ստիպում ծնկի գալ: Անաղմուկ կերպով նրանց գլուխներից վերցնում են վուշե պարկերը: Այդժամ նրանք նկատում են, որ մի լայն ու բարձր վրանային տարածքում են, ինչն սկզբում իրենց համար բոլորովին պարզ չէր, որովհետև այն ոչ մի

պատուհան չուներ: Միայն վրանի լաթորմի մի կտրուկ ճեղքից և բազմաթիվ փոքր պատռվածքներից ներս էին մտնում արևի շողեր, ինչը, սակայն, մութը փարատելու փոխարեն այն միայն բեկբեկում էին և շփոթեցնում: Աստիճանաբար Երեմիան վերահասու է դառնում, որ հսկա վրանի շրջանակաձև պատերին դրված էին տասներկու փոքրիկ խորաններ, որոնց վրա խնկերի քուլաները կուտակվում էին մեղմորեն: Այդ փոքրիկ խորանների վրայի նկարներն ապացուցում էին, որ նրանք նվիրված են *Շամաշ* համաստեղությանը, որը կազմում էր կեղանակերպի նշանները: Նրանցից միայն երկուսը, իրենց պայծառ լույսով, թաքուն պատճառներով առանձնանում էին շրջապատի աղջամուղջից. դրանք էին Խոյն ու Աղեղնավորը: Այս տասներկու փոքր խորաններից բացի, կային ուրիշ յոթը մեծերը՝ վրանի խորքում՝ կազմելով մի երկրորդ բոլորակ: Տարբեր գույներով ծխացող բոցեր էին բարձրանում նրանցից: Յուրաքանչյուր ոք կարող էր այդ գույներից ճանաչել, թե մոլորակներից որին է ընծայված համապատասխան խորանը: Դեղին բոցը հատուկ էր արեգակին, արծաթափայլ սպիտակագույնը նվիրված էր լուսնին, բոցավառ կարմրագույնը՝ Ներգալին, այսինքն՝ Հրատ մոլորակին, դարչնագույնը՝ Նինուրտային, այսինքն՝ Երևակ մոլորակին, կապույտը՝ Նաբուին, այսինքն՝ Փայլածու մոլորակին, կանաչ գույնը՝ Աստարտին, այսինքն՝ Արուսյակ մոլորակին, իսկ հողագույնը կամ ավազի գույնը հենց իրեն՝ Մարդուկին, այսինքն՝ Լուսնթագ մոլորակին: Բայց այն, ինչն առավել զարմացրեց Երեմիային, այն էր, որ վրանի վերևից անընդհատ լսվում էին աղմուկ ու կոկոռց, որոնց արձագանքը տարածվում էր ամեն կողմ: Այնտեղ՝ վերևում, կուտակված էր մեծ ու փոքր, ընտելացված թռչունների մի շարան՝ ագռավներ, սարյակներ, թութակներ, ինչպես նաև որոշ տարօրինակ, անշնորհք ու մեծ կտուցներով հավքեր, որոնց, որպես աստեղային աշխարհի մանրապատկերներ, սովորեցրել էին խոսել: Փետրավորների այդ խումբն իր արձակած սուր և գրեթե մարդկային ճիչերով ամենևին չէր փորձում բռնանալ ու խանգարել այդ վայրի հանդիսավոր լռությունը: Դրանք հնչում էին իբրև ոգիների ծաղր մարդկային լրջության վրա:

Սակայն Բաբելոնի աստղաբանները կարծես թե այլևս ամենևին չէին լսում թռչունների ծաղրական ճչոցն ու անհասկանալի ձայները: Եթե կենդանակերպի և մոլորակների խորանները կազմում էին արտաքին

շրջանակները, ապա նրանք կազմում էին ամենաներքին շրջանակը կենտրոնական կետի շուրջը: Առանց շարժվելու պահում էին իրենց մեղմաժպիտ նայվածքները փոքր-ինչ խոնարհված՝ ներկայացնելու համար հոգու կատարյալ բավարարվածությունն ու հավասարակշռությունը, ինչը երաշխիքն էր կատարելության: Նրանց ձեռքերը տարածված էին միմյանց վրա հորիզոնական դիրքով՝ արտահայտելով կես մասերի միությունը և տիեզերքի երանելի միավորումը՝ նոր մարմնավորված Մարդուկի հովանու տակ:

Ինչ վերաբերում է հագուստին և մազերի հարդարանքին, իհարկե, դա բոլորովին աչքի չէր զարնում թագավորական վրանում: Բայց մի՞թե նույնը չէր Լուսնթագի (Յուպիտեր աստղի) պարագայում, որը բարձրացնում է ու կառուցում աշխարհներ, սակայն նույնպես քիչ է ուշադրության արժանանում գիշերային երկնակամարում: Նաբուգոդոնոսորը նստել էր սրահի կենտրոնում դրված ծալովի մի աթոռի վրա: Նա կարճահասակ ու ամրակազմ մի անձ էր՝ փաթաթված գորշ դեղին (ավազագույն) մի պարեգոտի մեջ, և գլխին դրած մի պարզ գլխարկ: Պապիրուսե գլանակներ և գրելու հատկացված կավե սալիկներ դիզված էին նրա շուրջը:

Մարդուկի երկու կողմերում կանգնած էին երկու հոյակապ կերպարանքներ. աջ կողմինը Ներգալ Ներուսարադանն էր՝ Բաբելոնի ռազմական գլխավոր հրամանատար իշխանը, հրակարմիր հանդերձներ հագած, ինչպես ինքը՝ Ներգալը, այսինքն՝ Հրատ աստղը, որը նա ներկայացնում էր և ում ազդեցությունն էր երկրի վրա: Ոչ ոք չէր կարող հավատալ, որ այդ մարդը, որը դեռևս մի թարմ երիտասարդ էր, իր ձեռքում ուներ Ներգալի իշխանությունը՝ ոչնչացնելու, լուծարելու, սպանելու, քայքայելու: Սակայն այս մարդը, որն իր երիտասարդության տարիներին փայլում էր հոյակապ կերպով, թվում էր, թե երջանիկ է Ներգալի իշխանությամբ տոգորված լինելու պատճառով: Մարդուկի ձախ կողմի տղամարդը ոչ պակաս գեղեցիկ էր ու երանելի: Սակայն նրա գեղեցկությունը չէր կարելի համեմատել Ներուսարադանի գեղեցկության հետ, քանզի այն չէր բխում պատանեկան թարմությունից և երիտասարդական զվարթությունից: Դեռևս ոչ ոք չէր կարողացել իմանալ Բաբելոնի գերագույն աստղագուշակ Սամգեր Ներուի տարիքը: Ծերերը պիտի որ

նրան հիշեին իրենց առույգ օրերից, սակայն նա շարունակում էր մնալ որպես քսանամյա մի երիտասարդ, թեև մի փոքր հոգնած և հարյուրամյա ծերունու աչքերով: Կապույտ ներկած գանգուր մազերի տակ նրա անկնճիռ ու հարթ դեմքն ասես իսկապես հյուսված լիներ աստղերի լուսափայլ ճառագայթներով, որոնց հետազոտումին նա ընծայել էր իր կյանքը: Սամգեր Նեբուն գեղեցիկ էր և հաստատուն, ինչպես գիշերում կամ ստվերում աճած մի սլացիկ տունկ: Նրա ներքին ու սրբազան գաղտնիքը բարձրացնում էր նրան բոլորից՝ երիտասարդությունից, ծերությունից և մահից: Բաբելոնում ամեն դարաշրջանում չէ, որ ծնվում է մի գերագույն աստղաբան, որը կարողանում է իր մեջ ընդգրկել և միավորել սեռային երկու հատկանիշները, բայց չմնալ ներքինու նման առանց սեռի, այլ լինել տղամարդ և կին մեկ կերպարանքում, մեկ մարմնում: Աստարտը՝ Արուսյակ աստղը, ինչպես նաև Նեբուն՝ Փայլածու մոլորակը, որի գույնն էր կրում նա, միանում են և լուծվում նրա մեջ:

Բավական ժամանակ է անցնում, մինչև որ Նաբուգոդոնոսորը բարեհաճում է նայել Հուդայի մարգարեին, և դեռ ավելի ժամանակ է պահանջվում, մինչև որ նա պապիրուսների դեզի միջից հանում է Երեմիայի աշխատությունը և դրանով մատնանշում է նրան: Այդ պահին նա խոսում էր արամերեն լեզվով, որին շատերը տիրապետում էին Հուդայի երկրում: Ի տարբերություն պալատական դարձվածքների և ճոռոմ ոճերի՝ նա արտահայտվում էր կարճ, հակիրճ և անհամբեր: Ոչ ոքի չէր նայում, բայց դիմում էր բոլորին.

— Աստղերի խոսքը... Այս մարդու խոսքը... Համընկնում են...

Ձեռքի մի թեթև շարժում կնքում է Հուդայի ճակատագիրը: Երեմիան, որ դեռ ծնկի էր, խոնարհեցնում է իր գլուխը դեպի կուրծքը: Նրան արված մի նշանի վրա նա սկսում է խոսել և դիմում է արքային նույնպես արամերեն լեզվով.

— Թող Ձերդ մեծափառությունը բարեհաճի լսել իր ծառային,— սկսեց նա խոսել անխռով, միաժամանակ առանց կակազելու, ոչ ինչպես նրանք, ովքեր կակազում էին՝ հաղթահարված Մարդուկից:— Հավիտենականը՝ մեր Տեր Աստվածը, Ձեզ հաղթանակ է տվել, նա Ձեզ լավ ծառա է դարձրել՝ իր կամքի գործը կատարելու համար... Ոչինչ չի խանգարի Ձեզ, ոչ իսկ Տերը, կործանելու Երուսաղեմը և այրելու Տիրոջ տաճարը...

Աստղաբան խորհրդատուները, իրենց քաղցրաբարո դիմակի ներքո, առանց բարձրացնելու իրենց գլուխները, զարմանքից թարթում էին իրենց աչքերը: Նրանք չէին սպասում նման հզոր խոսքերի՝ մարմնավորված Մարդուկի դիմաց, այլ միայն խղճուկ հպատակություն, թախծալից աղաչանք ու բարեխոսություն: Երեմիայի խոսքերից հետո, տարօրինակորեն, վերևում մեկեն դադարում է ծաղրածու թռչունների խառնաշփոթ շաղակրատանքը: Օդի ոգիները լարվածությամբ լսում են և սպասում, թե ինչ ելք կունենա ներքևի խոսակցությունը: Այդ ընթացքում նրանք հավանաբար մոռացել էին շարունակել իրենց խենթ դատարկաբանությունը: Կասկածից դուրս էր, որ մեծ տիրակալը, ի զարմանս իրեն, նկատել էր իր թռչունների անսովոր լռությունը, որոնք չէին լռում նույնիսկ այն ժամանակ, երբ ինքը խոսում էր: Իր պատասխանում նա, անհասկանալի պատճառներով, ընդգծում է համաշխարհային բոլոր իրադարձությունների մեծ անհրաժեշտությունը:

— Թագավորի գործը,— ասում է նա,— բխում է աստղերի օրենքից:

— Աստղերի օրենքը, սակայն, բխում է Տիրոջ գործից,– ասում է Երեմիան մեղմորեն և համարյա շշնջալով ավելացնում,— Նա է քեզ թույլ տալիս մի բան անել կամ տնօրինում է այդ բանը չանել...

Նաբուգոդոնոսորն իր կլոր գլուխը շրջում է դեպի Սամգեր Նեբուն և, առանց նրան նայելու, նույնպես մեղմորեն հարցնում.

— Ինչ է նշանակում թույլ տալ մի բան անել կամ այդ բանը չանել:

Մի ցավագին մռայլություն է պատում հարյուրամյա աչքերով երիտասարդի դեմքի հրաշագեղ դիմագծերը: Թվում էր, թե Սամգեր Նեբուն խոսելու ջանք անելիս վախենում էր կորցնել իր հմայիչ գեղեցկությունն ու փառահեղ ժպիտը: Շրթունքները հազիվ էին շարժվում, թվում էր, թե ոչ թե ինքն է անձամբ խոսում, այլ իր կողմից հանձնարարված մի տարեց կին: Ունկնդիրների համար այն չէր հնչում իբրև մի անմիջական հայտարարություն, այլ իբրև մի միապաղաղ զեկույց՝ իր մասին արված:

— Ընդհանրապես,— ուսուցանում է Սամգեր Նեբուն,— մարդուն ազատություն տրված չէ անել կամ չանել այն, ինչ կամենում է, որպեսզի դրանով չշփոթեն մարդկային ինքնիշխան ազատությունը գիշերային երկնքի նախասահմանվածության հետ: Որոշակի չափով ազատությունը վերապահված է միայն աստվածներին, որոնք այն օգտագործում են

միայն շատ չափավոր, քանի որ նրանց էության երևելի մասն ինքնին կապված է աստղերի հետ և ենթակա նրանց օրենքներին: Միայն բացառիկ հանգամանքներում մի Աստված իշխանություն ունի միահյուսելու պատճառների մի նոր շղթա՝ տիեզերքի անսահման հյուսվածքին: Եվ շնորհիվ այդ արարչական հատկանիշի՝ նա ազդում է իրադարձությունների ընթացքի ու վախճանի փոփոխման վրա: Բաբելոնի թագավորի ունեցած համահավասարությունն աստվածների հետ, իր մարդկային մասերով՝ նյութական և մահկանացու խառնուրդներով, իր իսկական էությամբ, մի տարբեր դրսևորումն է նրա, ով աստվածայնորեն հայտնվում է գիշերային երկնակամարում՝ իբրև արքայական աստղ: Դրա համար էլ Մարդուկը երկրի վրա թող ողորմածաբար ընդունի, որ միայն ինքն իշխանություն ունի «մի բան անելու կամ մի բան չանելու», և այդպիսով տիեզերքի հյուսվածքում պատճառների և սկզբունքների նոր շղթաներ հյուսելու, քանզի մի բանը մյուսի արդյունքն է, մեկը մյուսին է հետևում:

Ծեր կնոջ նմանվող թավշյա ձայնը հնազանդորեն այս ճշմարտությամբ է ավարտում իրեն թելադրվածը: Սամգեր Ներուն կրկին մնում է իր երանելի դիրքում: Երեմիան, սակայն, ում դեմքին պահանջկոտ կերպով սևեռված էին Նաբուգոդոնոսորի սև ու աշխույժ աչքերը, կրկնում է Սամգեր Ներուի վերջին նախադասությունը.

— Մի բանը մյուսի հետևանքն է... Հավիտենականը՝ մեր Աստվածը, տվել է Ձերդ մեծափառությանն իր քաղաքն ու տաճարը՝ իբրև ավար... Ոչ մի իշխանություն չի կարող հափշտակել այս շնորհը քեզանից... Բայց ինչ է հետևելու սրան... Իմ արքայի մեծափառությունը հաղթանակած կլինի Հուդայի վրա, ինչպես որ հաղթանակած է ավելի մեծերի վրա... Դրանից հետո, սակայն, կկատարվի նաև մյուս բանը, որը հետևանքն է առաջինի... Քիչ ժամանակ անց արքայի տունը, որը դատել է ու ավերել Տիրոջ սրբազան սեփականությունը, կմերժվի, կդատապարտվի ու կավերվի:

Այդ պահին թագավորական վրանի ներսում մահվան մեծ վտանգ է սպառնում Երեմիային: Աստղաբան խորհրդատուների օրհնված դիմակները մռայլվում են: Ոմանք փնտրում են թիկնապահներին: Սարսափելի էր այդ մարգարեությունը՝ արված Մարդուկի դիմաց, և ավելի սարսափելի էր, քանի որ այն համընկնում էր աստղերի գուշակության հետ:

Տիրակալի ձեռքերն այլևս անհամբեր չէին քրքրում մատյանների դեզը: Նրանք թույլ կերպով կախված էին դեպի ներքև: Նրա տղայական դժգոհ դեմքը մեծ ուշադրությամբ նայում էր Երեմիային, ասես ամենայն բարությամբ խորհրդածում էր այդ հանդուգն մարդու համար մահվան առավել զգայուն ձևի մասին: Ոչ ոք չգիտեր, թե ինչ կարող էր պատահել, եթե ընտելացված սարյակներից մեկը մեծ լռության միջից նախազգուշական ճիչերով չասեր.

— Մելեխ Բաբիլո՛ւ... Մելեխ Բաբիլո՛ւ... Մելեխ Բաբիլո՛ւ...

Եվ մի պահ հետո մնացած թռչուններն էլ են միանում նրան իրենց խելագար խառնաշփոթի մեջ.

— Բաբելոնի թագավո՛ր...

Մեծ տիրակալը ոտքի կանգեց: Նրա ձայնը բարձր չէր, բայց զարմանալիորեն ուժեղ էր հնչում: Նա զսպում էր իր զայրույթը.

— Քո թագավորը դավաճան է... Անհավատարիմ է... Նա չի հասկանում իմ կամքը... Բաբելոնի խաղաղությունը... Նրանք բոլորը չեն հասկանում իմ կամքը...

Երեմիան իրեն գետնին նետեց բերանքսիվայր:

— Երուսաղեմի թագավորը,— ասաց նա աղաչալից,— Երուսաղեմը չէ... Դավթի տունն այլ որդիներ էլ ունի...

Թռչունները նորից լռեցին: Նաբուգոդոնոսորը, որ նայում է Երեմիային, պատասխանեց սուր կերպով.

— Վատ շնից ծնվում են վատ լակոտներ...

Երեմիայի պարանոցի երակները պրկվեցին, նորից ծնկի իջավ, սեղմեց բռունցքները, ասես կառապանի նման բռնել էր ձիերի անտեսանելի սանձափոկերից: Վայրենու ձայնով պոռթկաց.

— Հիշեք այն թագավորին, որը հանուն ձեր օգտի կտրեց փարավոնի ճանապարհը, դիմադրեց նրան և զոհվեց... Այդ բարի թագավորի կրտսեր ու հարազատ որդին դեռ ապրում է գերության մեջ՝ Եգիպտոսում...

Մարդուկը տարակուսանքի մեջ ընկավ, նստեց և մտքերի մեջ խորասուզվեց: Թռչունները վերևում նորից սկսեցին աղմկել՝ ծաղրելով մարդկանց:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ

ԷՇԻ ԹԱՂՈՒՄՆ ՈՒ ԵՐԿՆՔԻ ԲԱՆԱԼԻՆ

Բազմաթիվ օրեր ճամփորդելուց հետո երկուսով հասնում են Միշմաթ կոչվող փոքրիկ քաղաքը՝ Բենիամինի երկրամասում, ուր իրար են հատում գլխավոր ճանապարհները: Թեև մեծ տիրակալն այլևս կանչել չէր տալիս Երեմիային իր մոտ, այդուհանդերձ, նրան ազատ են արձակում սիրալիր կերպով՝ բազմաթիվ նվերներով և հոյակապ գրաստներով: Միևնույն ժամանակ, Մարդուկի հրամանով, նրան վերադարձնում են այն մատյանը, որ նա պատրաստել էր թաքնված ժամանակ: Երեմիան ու Բարուքն անդրադառնում են, որ իրենք ընդամենը մի քանի օրով են նախորդել Բաբելոնի զորքի մեկնումին, քանի որ ռազմական ճամբարից դուրս գալուց հետո Թաբոր լեռան մոտ նրանք ամենուրեք տեսնում են բանակի հեռացման հապճեպ նախապատրաստություններ: Քաղաքները, որտեղով նրանք անցնում են, նման էին հարբածների, որոնք ասես հանկարծակի արթնացել էին իրենց սեփական տան հրդեհից՝ իրենց հաճելի քնի ընթացքում: Մեծահարուստները չեն ուզում հավատալ, որ օրինությունը, առանց որևէ հայտնի պատճառի, մեկեն վերածվում է անեծքի: Համեստ ժողովուրդը, սակայն, իրար միացած, անվախորեն մեծ աղաղակ է բարձրացնում ընդդեմ երկրի հզորների: Հատկապես անողոքաբար նախատում էին և անիծում Հովակիմին: Մարդիկ այժմ կրկին հիշում են հարկերի անհավասար գանձումների և այն ստոր վերաբերմունքի մասին, որոնց պատճառով ազատ մարդկանց անվճար, իբրև ստրուկների, աշխատեցնում էին թագավորի շինարարություններում: Որքան ուժեղ էր բռնությունը, երբ այն ուղղված էր տկարների դեմ: Բայց երբ ավելի ուժեղ մեկը մեջտեղ գար, այն անմիջապես խորտակվում էր: Հովակիմը հոխորտացել էր Բաբելոնի դեմ, ասես թե

փարավոնի ամբողջ իշխանությունն իր ձեռքին լիներ: Սակայն ո՞ւր էր հիմա փարավոնը: Աղետը կանխելու համար ոչինչ չէր ձեռնարկվել: Եվ քանի որ տարիներ ի վեր ոչ ոք չէր համարձավում բացահայտ խոսել, շշուկները բարձրանում էին, ինչպես առագաստներ մահաբեր քամիների միջից: Ասվում էր, թե Եղնաթանը՝ Հուդայի հերոսը, մերժել էր բանակ կազմել իր փեսայի համար: Ասվում էր նաև, թե Հովակիմի պատվիրակություններն իրար հետևից իզուր էին ներկայանում արև աստծուն Նոփում: Բայց ո՞վ կարող էր հաստատել ճշմարտությունն այս բոլոր լուրերի հետևում:

Երեմիան ու Բարուքը բնակություն են հաստատում Նիշմաթի դարպասների մոտ՝ բաց դաշտում: Արևն արդեն կեսօրն անցել էր: Երեմիան, կնճռոտած ճակատով, մտածմունքի մեջ էր ընկել: Բարուքը հաստատ համոզված էր, որ իր ուսուցիչն այժմ կգնա Անաթովթ, որպեսզի հաշտության առաջարկով ներկայանա իր եղբայրներին: Բաբելոնի հեծյալները շրջում էին երկրով մեկ, իսկ հսկա զորքը կեսգիշերն անց դանդաղ մոտենում էր: Երեմիայի թշնամիներն այժմ ցրված էին, թուլացած, անզոր: Ոչ մի Հերախմե՛էլ, ոչ մի Փաշհուր, ոչ մի Մեշուլամ չէր կարող համարձակվել ժողովրդի աչքի առաջ ձեռք բարձրացնել մարգարեի վրա, որի կանխատեսումները սարսափելորեն ճիշտ են դուրս եկել: Երեմիան իր կյանքի այդ օրերին իրեն ավելի ապահով և ուժեղ էր զգում, քան երբևէ: Նա պետք է միանար ու դաշնակցեր իր զարմիկ Հանամեէլի և բարի կամքի տեր անաթովթցիների հետ, որպեսզի վրեժ լուծեր իր եղբայրներից և Մոխելեթից, ինչպես նաև ստիպեր, որ հարգեն ստրուկների ազատ արձակման իրավունքը բոլոր արտերում ու դաշտերում:

Բարուքի այս մտքերը, սակայն, ամենևին Երեմիայի մտքերը չէին: Վերջինս չէր մտածում գնալ Անաթովթ Բաբելոնի պաշտպանության ներքո, ներկայանալ իր եղբայրներին և վրեժ լուծել մարդասպան կնոջից, որը ոչ թե իր մոր համար էր նախատեսել թույնը, այլ հենց իր համար: Նա չէր մտածում նաև ստիպել, որ Քեղկիայի դաշտերում հարգեն հոբելյանական տարվա օրենքը: Չափազանց ուշ էր: Ոչ ոք չգիտեր, թե վաղը ով է լինելու ազատ մարդ կամ ստրուկ: Այժմ, երբ ամբողջ տունը փլուզվելու վտանգի մեջ էր, այլևս իմաստ չուներ ամրացնել միայն մեկ պատը: Բարուքի զգուշավոր հարցին ի պատասխան Երեմիան բացասական կերպով շարժեց գլուխը.

— Անաթովթի մասին չէ, որ մտածում եմ, ոչ էլ՝ ինչ-որ մոտիկի մասին, այլ հեռավորի...

— Թող Տերը զարթնի քո մեջ,— ասաց Բարուքը՝ ցանկանալով մի քիչ մենակ թողնել խռովության մեջ գտնվողին: Վերջինս, սակայն, թելադրեց նրան մնալ և ստիպեց նստել իր կողքին՝ ասելով.

— Երեմիայի համար ծանր վիշտ կլինի Բարուքից բաժանվելը, որը ճանաչում է Տիրոջը և բոլորովին հավատարիմ է...

Գրեթե երբեք չէր պատահել, որ ուսուցիչը բացեր իր սիրտն աշակերտի առաջ: Բարուքը խոնարհեց աչքերը և շունչը պահեց: Երեմիան ձեռքը ծանրորեն դրեց նրա ծնկին.

— Եվ սա, այնուամենայնիվ, պետք է պատահի... Սա մի մեծ աշխատանք է, որն այժմ ծանրանում է Բարուքի վրա... Տես, այնտեղ, ուր ճանապարհները բաժանվում են, մենք հրաժեշտ կտանք իրար... Բարուքը կիջնի Եգիպտոս, որպեսզի ճանապարհին կատարի իմ գործը...

Այս է այն մեծ աշխատանքը, որով Երեմիան ծանրաբեռնում էր իր խոհեմ ու խելացի աշակերտին:

Բարուքը պետք է անմիջապես գնար Անաթովթ, որպեսզի այնտեղ և հարևան քաղաքներում մի քանի հուսալի և Աստծուն հավատարիմ երիտասարդներ հավաքեր ու իր ճամփորդության ընթացքում իր հետ տաներ դեպի Եգիպտոս՝ իրեն օգտակար լինելու համար: Դավթի աքսորյալ տունն ապրում էր Շեֆեթում՝ կոկորդիլոսների քաղաքում: Օտարների մուտքն այնտեղ՝ ուժեղ հսկողության տակ գտնվող դարպասների միջով, մեծ քաջություն էր պահանջում: Ամեն դեպքում, սակայն, պատվիրակները պետք է բոլորովին գաղտնի հանդիպեին Ամիտալին: Բարուքին հանձնարարված գործի նպատակն էր օգնել Հովսիայի կրտսեր որդուն՝ Մաթանիային, փախչել Ստրկության տնից և նրան անվտանգ ու հնարավորինս շտապ տանել Երուսաղեմ: Երեմիան հաշվում է Մաթանիայի տարիքը: Ահավասիկ երեկվա անհանդարտ տղան՝ իր մտացրիվ աշակերտը, մեծացել է ու դարձել քսան տարեկան մի տղամարդ: Նրա վրա էր դրված վերջին հույսը: Երեմիայի ու Բարուքի միջև ավելորդ էր այդ մասին խոսելը: Երկրի վրա մարմնավորված Մարդուկը լռել էր և խորասուզվել երկար մտորումների մեջ, երբ նրա առաջ տրվել էր Մաթանիայի անունը: Թեև այնուհետև էլ նա շարունակում էր լուռ մնալ և շտապ

կերպով, ձեռքի մի փոքր շարժումով, իր մոտից հեռացրել էր Աստծու ունկնդրին, այդուհանդերձ, գուցե հնարավոր լիներ Երեմիայի միջոցով մեկ անգամ ևս կասեցնել դատաստանը Երուսաղեմի նկատմամբ:

Բարուքը գունատ դեմքով նայում է Երեմիային՝ իր պատվիրատուին, առանց որևէ առարկության, այլ անմիջապես լծվելով իր դժվարին պարտականությանը: Բայց ոչ թե դրա նկատմամբ ունեցած վախը, այլ ավելի բաժանումի մտածումն էր ճնշում իրեն մի այնպիսի ժամանակ, երբ որևէ հրաժեշտ կարող էր շատ հեշտությամբ վերածվել մի հավիտենական հրաժեշտի: Նրանք նստում են ճանապարհների խաչմերուկին: Ուղիղ գնացող ճանապարհը տանում էր դեպի Երուսաղեմ: Սայլերի նեղ ու կողմնակի ճանապարհը տանում էր դեպի Անաթովթ: Նախքան միմյանցից բաժանվելը Երեմիան ասում է.

— Մաթանիայից վերցրու նրա տղայական անունը և տուր նրան մի թագավորի անուն: Այսուհետև թող նա կոչվի Սեդեկիա՝ «արդար է Աստված», որովհետև նա պիտի բազմի Դավթի աթոռին և դատաստան տեսնի...

* * *

Երեմիան նույնպես միացել էր այն ողբացող ամբոխին, որը հավաքված էր շրջակա արվարձաններից և Եփրեմի դարպասով խուժում էր դեպի քաղաք: Երուսաղեմի դարպասներից միայն երեքը կամ չորսը բաց էին, բայց մյուսներն ամրացված էին և անհասանելի, որոնց աշտարակներն ու բերդերը վերահսկվում էին պաշտպանության ուժերի կողմից: Գունատ պահապանները մտահոգված ներքև էին նայում աշտարակներից: Ոչինչ չէր կարող փարատել նրանցից այն մեծ մտահոգությունը, որ Երուսաղեմը մահացու վտանգի մեջ է: Բաբելոնի մարտնչող հեծելազորը կատարել էր իր գործը՝ իր սաղմի մեջ խեղդելով որևէ դիմադրության պատրաստություն Հուդայի քաղաքներում: Այդ օրը Մարդուկի հիմնական զորքի առաջամարտիկները հասնել էին Սիոնի բարձունքները և դիրքեր գրավել՝ քաղաքի շուրջը կազմելով մի ընդարձակ կիսաբոլորակ: Հովակիմի ամառային պալատն ու ապօրինի կառուցված

դամբարանը դարձել էին առաջին թիրախները: Բազմազան գույներով շքեղ սենյակները՝ լի եգիպտական նրբաճաշակ գեղեցկությամբ և արաբական բուրմունքներով, մեկ ժամվա ընթացքում լրիվ մերկացել էին իրեն ճոխությունից ու քայքայվել, ինչպես անապատում ընկած մի ձիու ոսկորներ: Երուսաղեմի բնակիչներն առանց արցունքների հանդուրժում էին այդ շքեղության անկումը, բայց նրանց սրտերը տագնապում էին, երբ հաստատում էին, որ քաղդեացիների խեղդող օղակն անընդհատ սեղմվում է: Նաբուգոդոնոսորի ռազմական ծանր սարքերը քարշ տվող եզներն արդեն իջնում էին դեպի Կիդրոնի հովիտ: Կացինների ու մուրճերի հարվածների աղմուկի ներքո տաճարի դիմաց պատրաստվում էին հսկա քարընկեցներ, պարսպաքանդ սարքեր, գրոհների համար օգտագործվող սանդուղքներ: Թիկնապահները մռայլ հայացքով նայում էին աշտարակներից, բայց թագավորի հրամանը չկար՝ միջամտելու կուտակման ու պաշարման այդ գործողություններին:

Ամբոխը, որի մեջ էր նաև Երեմիան, աննահանջ կերպով մղվում էր դեպի վեր՝ դեպի տաճար: Քաղաքի վերին և ստորին մասերի փողոցներն ու ծառուղիները լցված էին փախստականներով, նորեկներով, անօթևաններով, որոնք, հենվելով տների պատերին, քնում էին ընկերակցությամբ իրենց հարազատների, ճաշում էին, վիճաբանում իրար հետ և հուսահատ աղմուկ բարձրացնում: Ժողովուրդը Երուսաղեմում քիչ օրերի ընթացքում եռապատկվել էր: Քաղաքի ավազները փետում էին իրենց մազերն ու մորուքները, քանի որ նրանց չէր հաջողվել ավելի հացահատիկ և անասուն բերել քաղաք, քան այն, ինչ բավարար էր մեկ ամսվա համար: Դրանից հետո, ծայրագույն պարագայում, անհրաժեշտ կլիներ դիմել սննդի վերջին պաշարներին, որոնք ամբարված էին Դավթի ամրոցի ապահով շտեմարաններում:

Փողոցներում շարժվող մարդկային ալիքը կազմված էր հյուծված և անօթևան մարդկանցից, որոնք բարձրաղաղակ հայտնում էին իրենց դառնությունը: Ո՞ւր էին մնացել Հովակիմի խոստումները: Այդ պարծենկոտի խոսքերը մտրակի հարվածի նման շաչել էին ամբոխի գլխին: Մի բան ճիշտ էր, որ այդ չոր ու նիհար լարախաղացը ճոխացրել էր Երուսաղեմը և դարձրել մարդաշատ բոլոր ազգերի մեջ: Տերը, սակայն, հարվածել էր այն, ինչպես կհարվածեր մի նյարդայնացող ու բզզացող

իշամեղվի: Ափսո՜ս, երբ այդ հարվածը դիպչում է ողջ ժողովրդին: Այլևս հնարավոր չէր փրկել Տիրոջ ժողովրդին: Իշխանավորները, բռնավորները, շահագործողները, կեղեքողները, խաբեբաները կարողացել էին իրենք իրենց փրկել ճիշտ ժամանակին: Գանձապետ Մեշուլամը փախել էր Նոփ՝ իր հետ տանելով ժողովրդից հավաքած հարկերը, որոնցով կարող էր իր ապրուստը հոգալ ոչ պակաս, քան փարավոնի անձնական խորհրդատուն: Ի՞նչ օգուտ ունեցավ Եղնաթանի նահանջելն անապատ՝ մի բուռ քաջակորով զինյալների հետ, որպեսզի այնտեղ սպասի մի բարենպաստ պահի: Այդ պահը, սակայն, երբեք չներկայացավ: Բայց ո՞ւր էր թագավորը, ինչո՞ւ չէր երևում իր ժողովրդին: Արդյոք նա այդ օրերին թաքնվե՞լ էր իր թիկնապահների հետևում՝ Սողոմոնի տանը, որն ուրիշ պարագաներում չափազանց վատ էր իր ամբարտավանության համար:

Միշտ միևնույն հարցերն էին բարձրանում ամբոխի միջից: Երեմիան տեսնում էր նաև, որ տարեց մարդիկ պատռում էին իրենց զգեստները և երեխաների նման արտասվում Հովսիա թագավորի հետևից, ում արդարորեն համարում էին «միակը» և «սուրբը»: Միաժամանակ, ի մեծ զարմանս իրեն, լսվում էին նաև Ուրիայի և իր անունները: Այո՛, Ուրիան և Երեմիան քարոզել էին «ճշմարտությունը»,— այսպես էին բացականչում շատերը,— բայց հպարտ ու պարծենկոտ իշխանավորները խանգարել էին, որ Երուսաղեմի բարեպաշտ ու պատրաստակամ ժողովուրդն ունկնդրի ապաշխարություն և քավություն քարոզող մարգարեներին: Երեմիայի զարմանքը զգալիորեն աճում է, երբ ամբոխի կողմից մղվում է դեպի տաճարի դարպասներից մեկը և նրա միջով անցնելով հասնում է տաճարի արտաքին գավիթ: Այնտեղ ամբիոններից չէր բացակայում փրկություն քարոզողներից ոչ մեկը, ոչ իսկ իր թշնամին՝ մազոտ ու թավամորուս մարդը: Ճիշտ է, նա այդ ժամին մարգարեանում էր ամեն ինչ, բացառությամբ փրկությունից ու երջանկությունից:

Տաճարում մեծ եռուզեռ կար, խռնված ու հուզված ժողովուրդն այնտեղ ալեկոծվում էր, ասես փոթորկի բռնված մի մեծ առագաստանավում լիներ: Քահանայական քսանչորս կարգերն այդ նավում էին՝ կանխելու համար նրա խորտակումը: Օր ու գիշեր անխափան հաջորդականությամբ ծխում էր ողջակեզը զոհասեղանին: Բոազ և Յահին սյուների միջև կանգնած՝ Ասափի որդիները ողջ ժողովրդի անունից երգում էին

ապաշխարության և քավության սաղմոսներ՝ առանց մեկ ժամ իսկ հանգստանալու: Այն, ինչ թույլատրվում էր անել միայն Քավության օրը, քահանայապետը կատարում էր այդ պահին՝ նկատի ունենալով Բաբելոնի զորքի մոտեցումը: Նա համարձակվում է մտնել տաճարի Սրբություն Սրբոց կոչվող Սրբարանը և այնտեղ՝ նախաստեղծման խավարում, արտասանում է Աստծու իսկական անունը:

Կաշեգոտի կրող պահապանները խստորեն հսկում էին մուտքը դեպի քահանայական ներքին գավիթ և որևէ մեկին ներս չէին թողնում, ում անարատությանն ու արժանավորությանը փոքր–ինչ կասկածում էին: Արտաքին գավիթում, սակայն, ամբոխը խռնված էր: Երբեմն նա տեղի էր տալիս ճնշմանը և, որպես զանգված, այս կամ այն կողմ էր տեղափոխվում: Մինչ ամբոխն այն աստիճան սեղմված էր իրար, որ շնչասպառ լինելու վտանգի առաջ էր: Նախասրահի բոլոր ամբիոններից հնչում էին արտաքին գավթում քարոզիչների ճչացող ձայները: Նրանց մխիթարական խոսքերի մեջ ինչ–որ անողոք ու դաժան բան կար: Նրանք, ովքեր ուրախ օրերին հաճոյախոսել էին Սիոնի դստերը և փառաբանել նրա ապագան, այժմ, երբ հակառակն էր պատահել, չէին զոհանում դատապարտող քարոզներով ու դառնության խոսքերով: Եվ Երեմիային հալածող ու ատող այդ անձինք այնքան էին առաջ գնացել, որ առանց լավ ըմբռնելու գողացել էին Տիրոջ կողմից նրան տրված խոսքերը և քարոզում էին դրանք՝ իբրև իրենցը: Բայց Երեմիան գիտակցում էր, որ այդ կոշտ վերարկուներով քարոզիչները շատ ավելի վատն են, քան խորամանկ խաբեբաները: Նա ուրախ էր, որ այդ նորադարձների մեջ Անանիան չկար: Ամեն կողմից համարյա միևնույն մտքերը հասնում էին իր ականջին.

— Դուք հարցնում եք. Ինչո՞ւ է Տերն այս բոլոր դժբախտությունները բերել մեզ վրա... Որովհետև ձեր հայրերը լքեցին ինձ, ասում է Տերը: Բայց դուք կատարեցիք ավելին, քան ձեր հայրերը, որովհետև դուք հետևեցիք միայն ձեր սրտի ամբարտավանությանը և չլսեցիք ինձ, այլ ընթացաք ձեր չար սրտերի հաճույքների հետևից... Դրա համար էլ այս երկրից ես ձեզ կնետեմ մի ուրիշ երկիր, որը չգիտեք ոչ դուք և ոչ էլ ձեր հայրերը... Այնտեղ օր ու գիշեր կծառայեք, և ես ձեզ թույլ չեմ տա հանգստանալ...

Այսպես էին հնչում այն դառն խոսքերը, որոնցով անխիղճ մարդիկ կշտամբում էին և սարսափեցնում անօգնական ժողովրդին: Երեմիայի հոգին վրդովված էր: Այդ մարդիկ չգիտեին այն, ինչ ինքը գիտեր, բայց նրանց մեջ ինչքա՜ն դաժանություն կար, որ նրանք հիմա միախառնում էին իրենց խոսքերն ավերածությանը, որն զգալի էր և տեսանելի Երուսաղեմի դարպասների առաջ: Ոչ ոք չէր կարող խափանել այն, դա կարող էր անել միայն Տիրոջ խորախորհուրդ որոշումը, որի գիտակցությունը Երեմիան մեծ զգուշությամբ էր պահպանում, ինչպես քամու դիմաց պլպլացող մի վտիտ բոց: Նա կարեկցանքով էր լցվել շրջապատի տղամարդկանց ու կանանց նկատմամբ, որոնք նման էին մեռյալի, ծանր էին շնչում և երբեմն էլ հուսահատ հառաչանքներ արձակում: Լսելով քարոզիչների հետզհետե սաստկացող, անողոք ու հարվածող խոսքերը՝ Երեմիան, զայրույթից ու կարեկցանքից մղված, ուզում է վերջ դնել նրանց խայտառակությանը: Նա խոր շունչ է քաշում, արմուկով մի փոքր տեղ է բացում իր համար և ձայնը բարձրացնում է այնքան ուժգին, որքան հնարավոր էր: Խոսքերը, սակայն, որոնցով նա դիմում է ամբիոններից ցասումնալից քարոզողներին, Եսայի մագարեի խոսքերն էին.

— Մխիթարե՛ք, մխիթարե՛ք իմ ժողովրդին...

Այդ ձայնը, ինչպես միշտ, զգայացունց էր, չնայած որ նրա հետևում առկա խորհրդավոր ուժը մղում էր նրան արտաբերելու միայն երեք բառ: Հարյուրավոր գլուխներ անմիջապես շրջվում են դեպի այդ մարդու կողմը, ում պատկանում էր այդ ձայնը, որի մեջ էր միակ ու ճշմարիտ հորդորը: Այդ հարյուրավորներից միայն վեցը կամ յոթն էին ճանաչում մարգարեին, որի իրականություն դարձած կանխատեսումն ամեն անգամ ավելիով էր զգալի դառնում քաղաքում: «Երեմիա» աղաղակը գնալով ուժեղանում էր ու տարածվում ժողովրդի մեջ, իսկ վերջում վերածվում փոթորկի: Երեմիան երբեք չէր պատկերացրել, որ իր անվան հնչյունները (Աստված բարձրացնում է, երբ խորտակում է) մի օր անթիվ սրտերից պիտի բխեցնեին այդպիսի ջերմեռանդ հույս և կենսապարգև հավատի ուժ: Չարչարվածը, հալածվածը, ծաղրուծանակի ենթարկվածն այժմ կանգնած էր այնտեղ՝ որպես այն ամուր սյունը, որին կառչում էին բոլորը: Նրա համար հասել էր սիրո և փառքի կարճատև ժամը, և դա նրան միայն անհանգստացնում էր: Ամբոխը նրան բարձրացնում է իր

ուսերին, որպեսզի նա իր ճշմարիտ խոսքով հակազդի քարոզիչների չարաշունչ գոռոցին: Բայց մինչ նա այդպես՝ հազարավոր մարդկանց գլուխներից վեր էր բարձրացվել, որոնք ծարավ ու սոված երեխաների նման նայում էին նրան, այդ ընթացքում նրա կոկորդը սեղմվում է. նա փոխակերպվել էր, այլևս չէր զգում իր սեփական կյանքը, նրա մեջ ծաղկում է Եհովայի շունչը: Եվ նա սկսում է մխիթարել իր ժողովրդին.

— Կգա ժամանակը,— ասում է Տերը,— մի՛ վախեցիր, ես քեզ կբարձրացնեմ, և դու վերստին կբարգավաճես, ով կույս դուստրդ Սիոնի: Դարձյալ պիտի առնես քո թմբուկը և ուրախությամբ պիտի խառնվես պարողների երջանիկ խմբերին: Այգիներ պիտի տնկես սարերում, և ինչ որ քո գինեգործները տնկեն, դրա արդյունքը պիտի ստանան... Ցնծացեք Հակոբի համար, ուրախ եղեք բոլոր բարձունքներում, ավետեք, գովաբանեք և ասացեք. Տերը փրկեց իր ժողովրդին, Իսրայելի մնացորդներին...

Երանության ու երջանկության մի ալիք է հետևում այդ հակիրճ ելույթին: Երեմիայի խոսքերը, որոնք դանդաղ էին արտասանվում, ասես երազում ասված լինեին, անապատում մի զովաշունչ աղբյուր էին տառապող երեխաների համար: Մարդը, ով բարօրության ու բերքի առատության օրոք բացահայտ հայտարարել էր անկում ու կործանում, այժմ, երբ ավերածությունն ու ոչնչացումն արդեն դարպասների առաջ էին, հռչակում է փրկություն և Սիոնի հավերժական գոյատևում: Արդյոք սա կարելի՞ է համարել Տիրոջ կամքի մի անսպասելի շրջադարձ: Եվ քանի որ կատարվել էր մարգարեացված խոսքը, ուրեմն այլևս չպե՞տք է հուսալ և սպասել ասված նոր խոսքի իրականացմանը... Տաճարը դեռ կանգուն էր, նույնպես՝ Երուսաղեմը, Եհովան դեռևս հապաղում էր կործանել իր սրբավայրը: Գուցե մի անգամ ևս խնայվեր կործանումը: Բայց այն, ինչ հնազանդությունը պահանջում էր, պետք է շտապ կերպով կատարվեր: Հորձանքի նման մի ալիք է անցնում ամբոխի միջով: Հազարավոր ձայներ խառնիխուռն նախադասություններ էին բացականչում Երեմիային, որի ականջը չէր կարող ընկալել ամբողջը: Մեկը, սակայն, վերևում՝ նախագավիթի մյուս ծայրում, բարձրացնում է մի աղաղակ, որը ճառագում է աստղի պես և վերջում վերածվում ընդհանուր աղաղակի.

— Թագավորի՛ մոտ, թագավորի՛ մոտ:

Հաշվետվության ժամը հասել էր: Նա, ով դավաճանել էր իր սեփական հորը, ով սպանել էր Ուրիային, հալածել Երեմիային, ընդդիմացել ամեն տեսակ ճշմարտությանը, հրահրել բռնությունն ու սարսափը, այժմ պետք է պատասխան տար իր ժողովրդին և իր սեփական կյանքի գնով պետք է աշխատեր ազատել Սիոնը: Այլևս նրան ոչինչ չէր կարող պաշտպանել Երուսաղեմի ժողովրդի կամքից: Ժողովրդի զանգվածները լայնածավալ գրոհով դիմում են դեպի կրկնաշար պարիսպները, որոնք առանձնացնում էին տաճարի տարածքը պալատական ամրոցից: Սուր կերպով ճռճռում են աշտարակների դարպասները, որոնց վրա գրոհում են ամենից հանդուգնները և ուժեղները: Ատամնավոր բերդերի միջանցքներում շտապում են հավաքվել կաշվե գոտիներով պահապաններն ու արքայական թիկնազորի հերթապահները: Նրանք սակավաթիվ էին, քանի որ համարյա բոլոր զինված ուժերը տեղափոխվել էին՝ պաշտպանելու համար քաղաքը: Աշխույժ պայքար է սկսվում պահապանների և հզոր բազմության միջև, մինչ որոտալից հնչում են կացնի և մահակների հարվածների ձայները: Բայց այդ պահին պահապանների գունդը թույլ է տալիս մի ճակատագրական սխալ: Փոխանակ բանակցությունների շնորհիվ ժամանակ շահելու, մինչև օժանդակ ուժերի հասնելը, նրանք կորցնում են իրենց գլուխները, տարվում են վախով ու զայրույթով, որի պատճառով էլ նետում են իրենց նիզակները ժողովրդի վրա: Մի կին սպանվում է, և բազում մարդիկ էլ՝ վիրավորվում: Այս վայրագությանը հաջորդում է հազարավոր մարդկանց սրտաճմլիկ աղաղակը: Բազմությունը կրկին անգամ կատաղությամբ հարձակվում է պարիսպների վրա, ասես իրենց մարմինների ուժով ուզում էին հիմնահատակ քանդել դրանք իրենց հիմքից: Մեկեն հայտնվում են բարձր սանդուղքներ, որոնք հասնում էին մինչև պարիսպների ցցվածքները: Մարդիկ շտապում են բարձրանալ դրանցով, սակայն շուտով հետ են շպրտվում և ընկնում հատակին: Ուրիշները հետևում են նրանց: Քիչ ժամանակ անց պարիսպների գագաթներին գտնվող պահապանները պարտության են մատնվում: Այնուհետև ծխնիներն ու տախտակները ճռնչում են, և դանդաղորեն ներսից բացվում են դարպասների հսկայական թևերը: Աջ և ձախ դարպասների, ինչպես նաև խառը դատարանի սրահի միջով երեք

մասի բաժանված ժողովրդի հոսքը խուժում է թագավորական պալատ: Երեմիան էլ տարուբերվում է այդ հոսքի հետ:

Պահակատան գավիթը, որը շրջապատում էր պալատի օթևանները, մի շատ ընդարձակ վայր էր, այդուհանդերձ, աղմկարար և իրարանցած բազմությունը չէր կարողանում տեղավորվել այնտեղ: «Սողոմոնյան տան» դարպասի առջև Հովակիմի կողմից կանգնած էին սակավաթիվ թիկնապահներ, սպասավորներ և ներքինիներ՝ մուտքն այնտեղ պաշտպանելու համար: Զայրացած ժողովուրդը մեծ դժվարություններ չէր ունենա այդ մեռելի նման գունատ և վատ զինված մարդկանց հետ, եթե Երեմիան իր կողմնակիցների օգնությամբ չկարողանար հասնել մինչև պալատի մուտքը: Նա իր խոսքով հանդարտեցրեց ժողովրդին՝ հորդորելով, որ նոր հանցագործություններ չբարդեն իրենց վրա: Ապա հրավիրեց, որ իրենց միջից ընտրեն տասներկու արժանավոր ու խոհեմ անձերի, որպեսզի Երուսաղեմի անունից խոսեն թագավորի հետ: Այդպես էլ արվեց: Տասներկու տարեց և պարզ մարդիկ անջատվեցին խռովյալ բազմությունից և շփոթահար մոտեցան Երեմիային: Վերջինս, սակայն, անընդհատ նայում էր իր շուրջն անհանգիստ, եթե հնարավոր էր դժոխային աղմուկի միջից իր մոտ կանչել Սափանի որդիներից մեկին, ում համար նա գնացել էր տաճար: Սակայն նա չկարողացավ տեսնել ոչ Ահիկամին, ոչ նրա երկվորյակ որդիներին կամ այդ հնարամիտ գերդաստանի որևէ այլ ներկայացուցչի: Այդ օրերին, մինչ պարզ ամբոխը տիրում էր փողոցներին, կարծես անհետացել էին Երուսաղեմից բոլոր ընտրյալ դեմքերն ու ազնվական ծնունդները:

Հովակիմի ծառաները թեթևացած շունչ քաշեցին, երբ ամբոխը փոքր-ինչ հետ քաշվեց և ազատեց պալատի մուտքի աստիճանները, որպեսզի տեղ բացեն Երեմիայի և տասներկու ընտրված ավագների համար: Գլխավոր ներքինին և երկու սենեկապետ առաջնորդեցին պատվիրակությունը թագավորի մոտ: Մարգարեի հայացքի առաջ տարածվում էր սրահների և օթևանների ամայի ու տխուր պատկերը: Հովսիայի աղմկոտ օրերից ի վեր նա առաջին անգամ էր ոտք դնում այդ հնամյա պալատը: Հովսիայի և Ամիտալի սենյակներում դեռ զգալի էր այն հիանալի բուրմունքը, որ տարիներ շարունակ տարածել էին թագուհու ծաղիկները:

Նրանք շտապ անցան ամբողջ տան միջով: Այն դատարկ էր: Թագավորի հետքը չկար: Սենեկապետները թոթվում են ուսերը: Նորին վեհափառությանը հնարավոր չէր գտնել: Նա լքե՞լ էր պալատը... Ոչ ոք չգիտեր: Ժամեր առաջ նա տանն էր: Իսկ թագուհի՞ն... Սենեկապետները կիսախուփ աչքերով նայում են միմյանց. թագուհին ուղևորության մեջ էր: Ոչ ոք չգիտեր նրա ուղղությունը: Իսկ Հեքոնիա՞ն՝ թագավորի որդին: Նորին ողորմածություն թագավորի որդի Հեքոնիան միշտ իր հոր կողքին է: Երեմիան չէր նահանջում: Նա հետազոտում է, թե սովորաբար որտեղ է անցկացնում թագավորն օրվա ժամերի մեծ մասը: Հովակիմի սենեկապետները խուսափողական պատասխաններ էին տալիս: Հիշվեց նաև «նյութեր իրար խառնելու աշխատանոցի» (լաբորատորիա) մասին: Արդյոք նման աշխատանոցներ կան միայն նո՞ր պալատներում, իսկ Սողոմոնյան պալատում՝ ոչ: Գլխավոր ներքինին խոնարհեցրեց աչքերը և լռեց: Ուրեմն այդտեղ էլ կա նման մի աշխատանոց, իսկ ո՞ւր է այն: Սենեկապետները շրջվեցին: Երեմիան հավաստիացրեց նրանց, որ իրենց այցելությունը ոչ մի չարիք չի բերելու թագավորին, այլ, ընդհակառակը, կանխելու է բոլոր չարիքները և նրա անձին պաշտպանություն ապահովելու: Գլխավոր ներքինին երկար նայեց մարգարեի բաց դեմքին, այնուհետև հառաչեց և շշնջալով արտասանեց մի բառ.

— Ներքևում:

Նրանք գաղտնի ճամփաներով հասան պալատի նկուղները և Մորիա լեռան ժայռափոր միջանցքերը, ուր հենվում են տաճարի և ամրոցի հիմքերը: Անթափանց խավարում միայն մի քանի քայլ անելով՝ հասան ցածր ու փոքրիկ մի դռան: Սենեկապետը թակեց դուռը: Ոչ մի պատասխան: Նա շարունակեց թակել հուզված: Այնուհետև ցնցեց դուռը. այն փակված էր բանալիով: Ապա նա բարձրացրեց իր ձայնը՝ սկզբում շշնջալով և հաճոյանալով.

— Ով իմ մեծափառ արքա, տերդ իմ սիրելի, շա՛տ սիրելի...

Երբ ներսից ոչ մի ձայն չլսվեց, նա ավելի ու ավելի հուսահատորեն կրկնեց նույն բառերը, մինչև որ դրանք վերածվեցին սարսափի աղաղակների, որոնք արձագանք էին տալիս ստորգետնյա կամարների ներքո: Մինչ այդ տասներկու մարդ, իրար հետ ցածրաձայն խորհրդակցելով, կայացրին մի որոշում: Նրանցից ամենաուժեղներն իրենց

մարմինների բովանդակ թափով կոթնեցին դռանը և ներս հրեցին այն: Մյուսներն օգնում էին իրենց ձեռքերով ու ծնկներով: Փտած փայտը ճռճռաց, բայց տեղի չտվեց: Միայն մի կացին հնարավոր դարձրեց դռան խորտակումը:

Նրանց առաջ բացվեց մի սենյակ, որը լուսավորված էր պատի վրա ամրացված երկու ջահերով: Այն նման էր արևմտյան Նոփ քաղաքի մեծ դամբարաններից մեկին, որը թալանված էր ավազակների կողմից: Երեմիան տատանվում էր, չգիտեր, թե ինչ էր կատարվում իր հետ, ինքնազգացողությունը թուլացել էր: Դրա պատճառն այն սարսափելի և անկարագրելի անուշահոտությունն էր, որ գալիս էր սենյակից և բռունցքի հարվածի նման դիպչում դեմքին: Որպեսզի զգայազուրկ չլինեն, բոլորն էլ իրենց վերարկուներով ծածկում են իրենց քիթ–բերանները: Այդ մահաբեր բաղադրիչներով անուշահոտությունն առաջացել էր ոչ միայն սենյակի անկյուններում դրված դեռևս մխացող ափսեներից, այլև հատակին թափված յուղերից: Սափորների և շշերի հարյուրավոր բեկորներ ապացուցում էին, որ մի կատաղած ձեռք ջարդել էր այն բոլոր տարաները, որոնք պարունակել էին բազմապիսի բուրումնավետ յուղերի խառնուրդներ: Բեկորների կողքին փռված էին երկու մարդ՝ Հովակիմն ու Քոնիան (Հեքոնիան): Հոր մարմինն արդեն սառած էր, որդունը դեռ ջերմ էր, իսկ սիրտը շարունակում էր բաբախել: Նրան շտապ բարձրացնում են պալատ: Տասնյոթամյա Քոնիայի մեջ, հետզհետե, եթե ոչ լրիվ զգաստ վիճակում, վերադառնում է ջերմալից կյանքը: Թագավորի մահը, սակայն, որ նա պատճառել էր ինքն իրեն՝ գրկախառնվելով անթիվ ու մահացու բուրմունքների հետ, անդառնալի էր:

Տասներկուսն ընկճված սենեկապետների ու ծառաների շարքերի միջով դուրս են տանում Հովակիմի դիակը և դնում մարդկանց առաջ, որոնք ապշահար լռում են այս արագ և անսպասելի դատաստանի դիմաց: Բռնության ու շքեղության արքային դնում են մի պարկի մեջ, մինչ մսուրի վերածված նրա գունազարդ գահավորակում Բաբելոնի ձիերը կուշտ ճարակում են: Նրա դիակը քարշ են տալիս, ինչպես մի սատկած էշի, Խեցիների դարպասի միջով դեպի հրկիզված «Արյան արտի» (Հակելդամա) եզերքը, որպեսզի ամբողջությամբ կատարվի Տիրոջ ասածը նրա նկատմամբ: Պոռթկուն ժեստերով Մարդուկի սահմանային

պահակակետերի ուշադրությունն է հրավիրվում ավարի վրա: Ո՞վ գիտե, գուցե դավաճանի և խաբեբայի մահը կմեղմացնի Բաբելոնի տիրակալի զայրույթը և կհաշտեցնի նրան Հուդայի ժողովրդի հետ: Մեկը, սակայն, դիակը պարունակող պարկի վրա, նախքան այն շպրտելը, լայն վրձինով գրում է հետևյալ տարօրինակ բառերը. «Այս և դեռ ավելին»:

Վերոհիշյալի մասին լուրը միայն անորոշ կերպով է հասնում Երեմիայի ականջին, որն անշարժ նստել էր Քոնիայի մահճակալի եզրին՝ սպասելով, որ ուշագնացի ու մահամերձի հոգին նորից աշխուժանա նրա մեջ: Երիտասարդի նուրբ մարմինը շարունակում էր մնալ տղայական թարմությամբ, ում վերջին անգամ Երեմիան թողել էր նույն իրավիճակում, երբ իր ձեռքով կյանքի էր կոչել նրան:

Այդ ընթացքում Ահիկամը, Գեդալիան ու Միքիան, ինչպես նաև այլ պաշտոնատար անձինք, որոնք դեռ չէին լքել իրենց պաշտոնները, նույնպես հայտնվում են թագաժառանգի սենյակում: Ցածր ձայնով մի խորհրդակցություն է անցկացվում, ինչը հանգեցնում է շատ կարևոր որոշման: Ստեղծված իրավիճակում անհնար էր նույնիսկ մեկ ժամ անգամ թափուր թողնել Դավթի գահը, ինչպես նաև քաղաքն ու երկիրը՝ առանց օրինավոր թագավորի: Դրա համար էլ կոչ են անում Երուսաղեմի քահանայական բոլոր կարգերի ղեկավարներին, իշխաններին և ավագներին շտապ հավաքվել Սողոմոնի գահասրահում:

Միայն Երեմիան է մնում բժիշկների և խնամողների հետ հիվանդի մոտ: Նա պարտականություն էր ստանձնել կատարել թագավորի որդու արքայական օծումը նրա ապաքինումից անմիջապես հետո: Բժիշկները մոխրաջուր են քսում Քոնիայի կրծքին, դեմքը թրջում են բարկ հեղուկներով, քթի տակ քացախ են պահում: Սակայն այդ բոլոր լավ միջոցներն ու դեղերը կարծես թե չեն ազդում: Ժամանակն անցնում է: Այնուհետև Երեմիան ծնկի է գալիս անգիտակից հիվանդի մոտ և քնքույշ ձայնով նրա ականջին կանչում է նրա անունը.

— Քոնիա՛... Տերն ու քո ժողովուրդը կանչում են քեզ... Քոնիա՛...

Վերջապես մի ակամա կարկամություն Հեքոնիայի դեմքին ցույց տվեց, որ նա լսել է այդ անխուսափելի ձայնի հեռավոր կանչը: Նա խորը շունչ քաշեց, ձգեց մարմնի անդամները և հանկարծակի մղումով, անսպասելիորեն, նստեց: Նրա լայն բացված ու մշուշապատ աչքերը

փնտրում էին այդ կանչի հեղինակին, որն իրեն դուրս էր բերել ոչնչության խորքից դեպի անհաճո իրականություն: Նա Երեմիայի դեմքը շատ մոտ է պահում իր դեմքին: Այնուհետև նրա տղայության ահավոր ապրումները համակում են նրան: Կարծես թե ոչ մի ժամանակ չի անցել այսօրվա և այն ժամանակվա միջև, երբ ինքը նստել էր իր հոր ոտքերի մոտ և ստիպված լսում էր էշի թաղման մասին շշուկաձայն մարգարեությունը: Նա չգիտեր, թե ինքն ինչ ուշաթափությունից է արթնացել հիմա, հնի՞ց, թե՞ նորից: Նա զույգ ձեռքերով ծածկեց իր դեմքը և երկյուղալից մի աղաղակ արձակեց: Խոր տխրության մեջ Երեմիան կրկնում է.

— Քոնիա՛... Տերն ու քո ժողովուրդը կանչում են քեզ... Քոնիա՛...

Հեքոնիան մրմնջում է դողացող շուրթերով.

— Ոչ թե Տերն ու իմ ժողովուրդը... այլ դու ես ինձ կանչում... Ով մահվան պատգամաբեր...

— Երեմիան է, որ քեզ կյանքի է կոչում: Նա չի հալածել քո հորը, այլ քո հայրն է հալածել նրան... Եվ, այնուամենայնիվ, Քոնիա, ես չեմ թողնի քեզ, մինչև չլինես քո տեղում...

Սենեկապետները շտապ բերում են արքայական զգեստները. ծաղկավոր սպիտակ ներքնազգեստը, երկնակապույտ վերարկուն ու զրահը: Դեպի Սողոմոնյան գահասրահ է շտապում նաև *սագանը*՝ օծման սրբազան յուղի հետ, որպեսզի պսակաձև օծի նոր թագավորի գլուխը: Քոնիան ոտքի է կանգնում և թույլ է տալիս, որ իր տղայական նուրբ մարմինը զարդարեն վսեմափայլ և չափազանց լայն հագուստով: Նա անմիջապես որդեգրում է մի կոշտ կեցվածք, ինչը նաև չափազանց ամբարտավան էր և բոլորովին անօգուտ:

* * *

Երուսաղեմում պաշարները սպառվել էին: Նաբուգոդոնոսորը դեռևս ոչ մի հարված չէր հասցրել քաղաքին և ոչ էլ փորձել էր այն կրակի տալ: Ընկեր, թե թշնամի զարմացել էին այդ տարօրինակ վարանումից, որը չափազանց հակասում էր Մարդուկ–Նաբուգոդոնոսորի բնությանն ու կամքին: Ինչ գաղտնի պատճառ կարող էր ունենալ այդ հաճախակի

հետաձգումը՝ նկատի ունենալով, որ պաշարման սկզբից արդեն անցել էր երեք ամիս:

Ժողովուրդը, զրկանքներից ու բռնակալությունից զայրացած, լցվում է քաղաքի փողոցները: Քաղցին հետևում են կողոպուտն ու սպանությունը, ինչպես սերմնացանը հերկողի հետևից: Կարգուկանոնի քայքայումն ընդհանրապես նախորդում է անխուսափելի ավարտին: Մի օր՝ վաղ առավոտյան, քաղդեական ճամբարի հսկա շրջապատում մեկեն պայթում է մի կատաղի դղրդոց, որը գալիս բախվում է Երուսաղեմի պարիսպներին՝ առանց թուլանալու: Հնչում են փողեր և եղջերափողեր, սարսափ ազդող շեփորներ, դղրդացող թմբուկներ և տակառներից բաղկացած հարվածային գործիքներ, ճռճռացող շղթաներ, և այս բոլորը, իբրև հետին պլան այն աղմուկ–աղաղակի, որն առանց հոգնության դուրս է գալիս տասնյակ հազարավոր բաբելոնցիների կոկորդից: Ռազմադաշտից լսվող այս աղաղակը կանչում է նաև Եհովայի անարտասանելի անունը՝ միևնույն ժամանակ մահվան սպառնալիք հնչեցնելով Հավիտենականի նկատմամբ: Այնքան սարսափելի էր այս հայհոյության ազդեցությունը, որ Երուսաղեմի փողոցներում խռնված վայրենացած ժողովուրդը գետին է նետվում՝ անօգուտ կերպով այս ու այն կողմ վազելուց հետո: Մարդիկ ծածկում են իրենց գլուխները և սեղմում իրենց այրվող ճակատները տների պատերին: Դրսի մահացու աղմուկն անտանելիորեն սրվում է հազարավոր երեխաների աղաղակներով: Եվ յուրաքանչյուրի հոգում իրագործվում են Երեմիայի մարգարեացած այն խոսքերը, որոնք արձանագրվել էին նրա մատյանում.

— Ներսս ալեկոծվում է: Ցավ է ընկել, և հեծում են սրտիս զգայարանները: Ես չեմ կարող հանդարտեցնել իմ սիրտը, քանի որ ես լսում եմ շեփորների աղմուկը: Եվ չեմ կարող հանգստացնել իմ հոգին, քանի որ լսում եմ պատերազմի և թշվառության գույժը...

Մոտավորապես մեկ ժամ հետո կատաղի իրարանցումը հանկարծ դադարում է ճիշտ այնպես, ինչպես որ սկսվել էր: Երուսաղեմի բոլոր դարպասների առաջ հայտնվում են Մարդուկի արծաթափայլ հանդերձանքով մունետիկները՝ հայտարարելով, որ նորալուսնի առթիվ շնորհվող ներումների ժամկետը հասել է իր ավարտին: Գահասրահում ավագաժողովն ապարդյուն կերպով տևապես գումարվում էր արքայորդու՝

Քոնիայի շուրջը: Անիմաստ էր և ամբարտավան մեկ ակնթարթ անգամ քաղաքի հաղթական պաշտպանության մասին մտածելը: Նույնիսկ եթե Երուսաղեմի ռազմիկներն ու ամրոցները բավականաչափ ուժեղ լինեին, երկար ժամանակ դիմադրելու մեծ տիրակալի գերազանցող ուժերին, այդուհանդերձ, հարկ էր նկատի ունենալ մարդաշատ և հիասթափված ժողովրդին, որն ի վիճակի չէր նույնիսկ երեք շաբաթ հանդուրժել զրկանքները: Ոչինչ չէր կարող կասեցնել անկումը, միայն լիակատար նվաստացումը կարող էր մեղմել այն: Նպատակը միայն մեկն էր. անձնական հպարտության և ինքնասիրության զոհաբերումով փրկել տաճարը կործանումից ու պահպանել Տիրոջ պաշտամունքը, առանց ուշադրություն դարձնելու ժողովրդի համար այդ նվաստացուցիչ հանգամանքի վրա: Օրենքի ու վարդապետության պահպանումն ու ուսուցումն ամեն ինչ է, իսկ հպարտության պահպանումը՝ ոչինչ:

Երկար դիմադրությունից հետո մեծամասնությունը հավանություն է տալիս Ահիկամի և նրա որդիների իմաստուն եզրակացությանը: Արդեն որոշված էր անձնատուր լինել, երբ կատարվում է անսպասելին. նախկին բռնակալ իշխանության ներկայացուցիչները, որոնք մինչ այդ թաքնված էին, հայտնվում են ավագաժողովում: Նրանց բանբերն էր Փաշհուրը՝ Շեմի առաջին խնամակալը: Ինչպես նեղ ու սրածայր մի ժայռ՝ նա կանգնում է ժողովում: Նրա փոքրիկ ու կլոր աչքերը փայլում են արհամարհանքով: Նա ապշեցուցիչ հայհոյանքներ է արտասանում Երեմիայի և Ահիկամի հասցեին: Այնուհետև նա բղավում է, թե Եհովան կջնջի իրեն մարդկանց հոգիներից և կսպանի ինքն իրեն, եթե ցանկանա թողնել իր քաղաքը կատաղի թշնամուն: Միայն անաստվածները, միայն խաբեբաներն ու դատավորից փախչողները, որոնցից է անաթովթցի հայհոյիչը, կարող են Տիրոջը նման սարսափելի հակասություն վերագրել: Եհովայի միակ իսկական պահանջն է՝ պայքարել հանուն տաճարի և քաղաքի: Դրանում համոզված են Փաշհուրը, Հերախմե'էլը և սակավաթիվ մարդիկ, որոնք իրենց հետ են: Երիտասարդ Քոնիայի լուսավոր հայացքից հայտնի է դառնում, որ նրա սիրտը հակված է իր հոր ընկերների կողմը: Սակայն այդ վտանգավոր ժամին Գեդալիան՝ երկվորյակներից ավագը, գործում է անվարան վճռականությամբ: Նա հրահանգում է, ասես թագավորի անունից, ժողովասրահում հայտնված համարձակ այդ մարդկանց

կապել ու նետել դիվանատան շենքի զնդանը: Տասնյոթամյա թագավորի դեմքն ավելի թափանցիկ է դառնում: Նրա բերանը շարժվում է, բայց ոչինչ չի ասում, այլ թույլ է տալիս, որ բռնակալության նախկին ներկայացուցիչները ձերբակալվեն, ծեծի ենթարկվեն և վերջում քարշ տրվելով դուրս հանվեն:

Երեմիան լուռ կանգնած էր թագավորի կողքին: Քոնիան խուսափում էր իր հայացքով պատվել նրան՝ այդ ատելի մարդուն, որն արթնացրել էր իրեն և կյանքի կոչել: Մարգարեն ինչքան էլ նրբորեն էր վարվում նրա հետ, նա չէր կարողանում հաղթահարել իր վախը, որ նրա ներկայությունն անընդհատ ներշնչում էր իրեն:

Արևոտ օրվա ավարտին, երբ արդեն վերջին որոշումները քննարկված էին, հաջորդում է մի շատ մութ գիշեր: Անհետացող լուսնի լուսեղեն բարակ շերտն ուշ է հայտնվում երկնքում: Երիտասարդ թագավորն ու նրա մերձավորները բարձրացել էին պալատի տանիք: Երեմիան կրկին Քոնիայի կողքին էր: Տաճարից լսվում էին Ասափի որդիների երգերի ձայները: Ներքին գավիթի վերևում կուտակված էր չընդհատվող ողջակեզների կարմրավուն ծուխը, որը Եհովայի անբարենպաստ քամին զսպում էր:

Երբ ժամապահ քահանաները հնչեցրին փողերը՝ ազդարարելով գիշերային երկրորդ հերթափոխության սկիզբը, տաճարի կողմից մի տխուր թափոր, ջահերի տատանվող լույսերով, մոտեցավ իրենց ուղղությամբ: Այդ ժամանակվա քահանայապետի գլխավորությամբ, որի ծեր ու հոգնած մարմինը հենված էր իր *սագանին*, ինչպես նաև ընկերակցությամբ Ահիկամի և նրա որդիների, Երուսաղեմի իշխանների ու ռազմական հրամանատարների, թափորը գալիս էր ներկայանալու Քոնիային: Նրանք բոլորն էլ իրենց խոնահեցրած գլուխները ծածկել էին իրենց վերարկուներով: Նրանց մեջտեղում կանգնած էր մի բարձրահասակ մարդ, որը սպիտակ կտորով ծածկված մի մեծ սկուտեղ էր բերում: Նա կաշվե գոտիներով զինված պահակների հրամանատարն էր: Այդ սկուտեղը շատ նման էր այն սկուտեղներին, որոնց մեջ դնում էին մատաղի ընտիր մասերը և տանում զոհասեղան:

Թափորը լուռ բարձրանում է պալատի տանիքը: Զոհաբերության ծածկված սկուտեղը լռությամբ բարձր է պահվում Հեքոնիայի դեմքի

դիմաց: Քահանայապետն անխոս հանում է ծածկոցը նրա վրայից: Երիտասարդ արքան կարմրավուն լույսի ներքո տեսնում է նրա մեջ տաճարի և քաղաքի դարպասների հսկա բանալիները: Ընծայման ոսկյա սկուտեղի վրա դրված բանալիները խորհրդանշում էին նվաստացման այն ահավոր գինը, որը թագավորը պիտի մատուցեր իր սեփական ձեռքով: Աղոտ լույսը ծածկում էր դրանք վետվետացող նախշերով: Քոնիան մի կողմ է շրջում իր փակ աչքերը: Նա հասկացել էր լուռ պահանջը: Նրա փխրուն մարմնի միջով մի դող է անցնում, և նա սկսում է կորցնել հավասարակշռությունը: Երեմիան ամուր բռնում է նրան: Դժբախտի շուրթերը շարժվում են.

— Տես, սրա՛ համար էր, ուրեմն, որ դու ինձ արթնացրիր ու կյանքի կոչեցիր...

Այդ կարճ ժամանակահատվածում, որը կարծես թե վերջ չուներ, ոչ ոք չի համարձակվում շարժվել ու բարձրաձայն շնչել: Միայն ընծայման սկուտեղն էր շարժվում իր բարետես կրողի ձեռքերում: Քոնիան լռելյայն լալիս էր, մինչ լուսնի ցոլքն անհետանում էր երկնքից, իսկ ջահերն էլ առկայծում էին՝ շուտով հանգչելու սպառնալիքով: Քոնիան, սակայն, մեկեն վերագտնում է ինքն իրեն, վերցնում է իրեն մատուցված սկուտեղը և դնում այն տանիքի քիվապատի վրա: Թագավորը մեջքով էր կանգնած արքայական օթևանների պահակատան հակառակ ուղղությամբ և նայում էր դեպի ներքև՝ դեպի փոքրիկ պարտեզի խավարը: Պարտեզում երկու սաղարթախիտ ճյուղերով լավ խնամված ժանտաթզենիներ կային: Փոխնիփոխ նա նայում էր դեպի պարտեզի և երկնքի խավարը: Ինչպես մի երազկոտ երեխա՝ նա վերցրեց քաղաքի հսկա բանալիներից մեկը և մտազբաղ շուռ էր տալիս այն մի կողմից մյուսը: Այնուհետև, երկինք նայելով, տղայական շշնջացող և հուզիչ ձայնով վիճաբանում էր Տիրոջ հետ.

— Ինչ մեղք ես գտել իմ մեջ... Ինչո՞ւ համար հենց ես՝ ինքս, պետք է անեմ այս... Եվ ինչո՞ւ ոչ Դու... Դո՛ւ արա այն...

Կիսաբաց շրթունքներով նա մի պահ սպասեց պատասխանի, ապա իր աջ ձեռքը մի քանի անգամ օդի մեջ պտտեցնելով՝ ուժգին շպրտեց բանալին դեպի երկինք: Առանց որևէ ձայն հանելու՝ այն անհետացավ խավարում, քանզի այդ նույն պահին մի ուժեղ քամի բարձրացավ, որն ուժգին ցնցեց սաղարթախիտ ծառերի ճյուղերը: Մետաղի ոչ մի զրնգոց

չլսվեց: Տանիքի վրա հավաքված մեծամեծներն առաջվա նման անշարժ էին: Նրանց հմայված աչքերը հետևում էին թագավորի արարքին: Դա գնդակի մի երեխայական խաղ էր Աստծու հետ, և միևնույն ժամանակ՝ խորհրդավոր մի հարաբերություն Նրա հետ: Բանալիները մեկը մյուսի հետևից անհետացան օդում: Եվ նրանցից յուրաքանչյուրի հետևից արվեց միևնույն նկատողությունը.

— Ինչո՞ւ հենց ես... Եվ ինչո՞ւ ոչ Դու... Դո՛ւ արա այն...

Երբ Քոնիան ի վերջո շպրտել էր վերջին բանալին, ծնկի եկավ քիվապատի առաջ և ծանր շնչելով՝ այտը սեղմեց քարին: Նրան մահացու կերպով սպառել էր գնդակի հանդուգն խաղը Հավիտենականի հետ: Դեպի վեր նետված մետաղն անաղմուկ կերպով կուլ էր գնացել շաչող քամիներով լցված բարձրության կողմից: Մարդիկ նայում են միմյանց: Ո՞վ կարող էր իմանալ, եթե խաղի աստվածային զուգընկերը, «որն անցնում է հնագույն երկինքների միջով», օդում չի բռնել իր Սրբարանի և իր քաղաքի բանալիները...

* * *

Հաջորդ օրը, նույնիսկ առանց բանալիների հանդիսավոր հանձնման, Բաբելոնի առջև լայնորեն բացված էին Երուսաղեմի դարպասները: Արևածագից կարճ ժամանակ անց շեփորների սուր ձայների և թմբուկների աղմուկի ուղեկցությամբ երեք տարբեր կողմերից ներս խուժեցին առաջին առաջապահները: Անհիշելի ժամանակներից և Սենեքերիմի օրերից ի վեր առաջին անգամ էր, որ թշնամին ոտք էր դնում Սիոնի սրբազան ամրոցը: Որոշ տեղերում՝ այստեղ ու այնտեղ, տեղի ունեցան կարճ, արյունալի կռիվներ: Ամրոցների կայազորը և հատկապես արքայական թիկնազորը, հաղթահարված զայրույթից և թշվառությունից, չէին ցանկանում ինքնակամ հանձնել իրենց զենքերը: Սակայն ոչինչ չէր կարող փոխել իրադարձությունների ընթացքը: Դեռ երեք ժամ իսկ չանցած քաղաքի բոլոր աշտարակների ու պարիսպների վրա արդեն ծածանվում էր Բաբելոնի դրոշը: Նվաճողների բանակը հերքում է իր մասին տարածված վատ համբավը, ստերը: Կոնաձև սաղավարտներ կրող զինվորների

շարքերը հաստատուն քայլերով անցնում են քաղաքի միջով: Կարծես թե ուժի մեջ էր մի խիստ հրաման: Ոչ ոք չի լքում իր շարքը: Ձոկատները չեն ցրվում փողոցներում ու թաղամասերում թալանելու և սպանելու համար, ինչն իրենց ռազմական իրավունքն էր: Կատարվում է անհավատալին. ոչ մի արյուն չի թափվում, ոչ մի արտակարգ իրավիճակ չի սահմանվում: Ժողովուրդը, ներառյալ կանայք և աղջիկներ, կարող էին հանգիստ դուրս գալ իրենց թաքստոցներից:

Կեսօրվա մոտերքը տեղի ունեցավ Մարդուկ–Նաբուգոդոնոսորի մուտքը: Պալատականների, հպատակ թագավորների, արքունական իշխանների, հերոսների, աստղաբան խորհրդականների և դրոշներ կրող մարդկանց կենտրոնում շարժվում էր Բաբելոնի արքայի զոհարազարդ դեսպակը: Մարդուկի առաջին ճանապարհը տանում էր դեպի տաճար: Արտաքին գավիթում հավաքվել էին քահանաների ստորադաս կարգերը, ավելի քան հազար մարդ, բոլորն էլ սպիտակ հագնված, ինչպես դատաստանի և հաշտության օրը: Նրանք, տեսնելով արքայական դեսպակը, մահվան աղաչավոր լռությամբ անշարժ պառկեցին գետին, ինչպես նոր տեղացած ձյուն: Մեծ տիրակալն իջավ դեսպակից: Երևի դրանով նա կամենում էր իր հարգանքը մատուցել մի օտար աստվածությանը, որի շշուկաձայն պատգամները համընկնում էին աստղերի ճշգրիտ կանխատեսումների հետ: Նա, սակայն, անտեսեց քահանաներին, իր ոսկեզօծ ու բարձրակրունկ սանդալները հագած, դանդաղ անցավ իր ուղեկիցների հետ նախասրահի միջով և մտավ ներքին գավիթ: Այդպիսով նրանք, իբրև աստղերի և կուռքերի անմաքուր ծառաներ, իրենք իրենց արժանի են դարձնում մահվան: Բարձրաստիճան քահանաները, որոնք, ըստ իրենց կանոնների, տեղավորված էին հանգած զոհասեղանի շուրջը և դռան աստիճանների վրա՝ Բոազ և Յահին սյուների արանքում, սարսափում են ու ցնցվում տաճարի այդօրինակ պղծության տեսարանի դիմաց: Ոմանք ծածկում են իրենց աչքերը վերարկուներով՝ ոչինչ չտեսնելու համար:

Երեմիան, սակայն, որ կանգնած էր զոհասեղանի ու նախասրահի միջև, չի ծածկում իր աչքերը և ազատ նայում էր Մարդուկ–Նաբուգոդոնոսորին ու նրա աստղաբան խորհրդականներին: Այդ օրերի քահանայապետը՝ տարեց ու տկար մի մարդ, պաշտոնական ծանր հագուստների

մեջ փոքրիկ քայլերով գնում է դեպի մեծ տիրակալը: Ձեռքերը բարձրացնում է՝ աղաչավոր կերպով ափերը դեպի վեր բռնած, հառաչում է մի ինչոր անհասկանալի բան, ապա շրջում է գլուխը: Դա երկիմաստ ժեստ էր: Այն կարելի էր համարել իբրև դժկամությամբ արված մի օրհնություն կամ իբրև մի հուսահատ մերժում: Նաբուգոդոնոսորը, սակայն, չի մտահոգվում ծերունու մասին, թույլ է տալիս, որ մի փորձառու ճարտարապետ հետազոտի կառույցը, ապա դանդաղ քայլերով գնում է դեպի ողջակեզների զոհասեղանը՝ ստուգելով նրա տպավորիչ չափերը: Ամբողջ աշխարհը գիտեր, որ Նաբուգոդոնոսորը ոչ միայն մեծ քաղաքաշեն էր, այլև հնությունների գիտակ և հավաքող: Բաբելոնում՝ Էսագիլա տաճարային քաղաքում, կառուցել էր իր սեփական պալատը, որտեղ հավաքել էր Ուրի, Աքքադի և Ասորեստանի նկարչության, քանդակագործության, գրվածքների հնագույն գործերը: Խելամիտ մարդու կիսաբաց աչքերով այժմ նա նայում էր կրակե ավազանին և իր նյարդային ձեռքի կարճլիկ մատներով շփում էր բրոնզյա հսկա ցուլերի կողերը: Ծեր քահանայապետը հետևում էր նրան, ասես այն մտադրությամբ, որ գուցե իր ցավատանջ ու դժվար շնչառությամբ հանդերձ կարողանա կանխել վատթարագույնը: Երբ, սակայն, մեծ տիրակալի խոհուն ու գնահատող նայվածքն ուղղվեց դեպի նախասրահն ու պղնձյա երկու տարօրինակ սյուները, մի անսպասելի բան տեղի ունեցավ. քահանայապետի զառամյալ ու փխրուն մարմինը հանկարծ վերագտավ իր ուժն ու երիտասարդական ճկունությունը: Արագ մի ոստնումով բարձրացավ գավիթի տասն աստիճանները, որի ընթացքում նրա զգեստի ծոպերից կախված արծաթյա զանգակներն ու ոսկյա նռներն ուժգին զրնգացին: Նա գնաց և պառկեց Սրբարանի շեմին, որպեսզի իր սեփական մարմնով խոչընդոտի աստղերին երկրպագող անմաքուր մարդու մուտքն այդտեղ: Այդուհանդերձ, Նաբուգոդոնոսորին ամենևին չխանգարեց իր տոնական հանդերձներով գետնին տարածված հարգարժան մարմինը, այլ նա մի փոքր վեր բարձրացնելով իր գորշ դեղնավուն պատմուճանը, անցավ Իսրայելի քահանայապետի վրայով և մտավ Սրբարանից ներս: Հարյուրավոր քահանաների կոկորդներից բարձրացող մի սրտաճմլիկ աղաղակ հետևեց այդ սրբապղծությանը: Մարդուկ–Նաբուգոդոնոսորը ձեռքի մի թեթև նշան արեց Ներգալ Նաբուսարադանին և Սամգեր Ներուին՝ հետևելու իրեն: Դա կարող էր

իր հերթին մեկնաբանվել իբրև հարգանքի արտահայտություն կամ իբրև ճանաչում վայրի աստվածային հանգամանքին: Շատ լուրջ ու հանգիստ կերպով նա անհետացավ Եհովայի երկրային բնակարանի մթնշաղում: Բայց նա միայն կարճ ժամանակով անհետացավ մարդկանց հայացքից. երբ դուրս եկավ Սրբարանից, նրա աշխույժ դեմքը մտածկոտ ժպտում էր: Կանգ առավ ներքին գավիթի տասն աստիճանների մեջտեղում, որոնք մինչ այդ ազատված էին քահանաներից, և հեզությամբ սպասող Սամգեր Նեբուին գոռաց միայն մի բառ՝ «ոչինչ»: Անմիջապես հետո ներքին գավիթից նա դանդաղ քայլերով կրկին գնաց դեպի զոհասեղանը և այդ ընթացքում սկսեց ուշադիր զննել քահանաների դեմքերը, մեկեն կանգ առավ: Մեծ ինքնակալներին հատուկ անսխալ հիշողությամբ նա անմիջապես ճանաչեց Երեմիային, որը քահանայական կարգերի շրջանակից դուրս էր կանգնած: Մի երկար պահ նայեց նրան՝ չկենտրոնացված աչքերով, որոնք իրականում մատնում էին ինչ–որ բան աստղերի հեռակա ու սիրալիր հրճվանքից: Այնուհետև նրա համար էլ բոլորովին ցածրաձայն հնչեցրեց «Ոչինչ» բառը, ասես թե ծաղրում էր մարգարեին և որպես թե հանձնարարում էր նրան. «Լավ, ուրեմն, հիմա դու մեկնաբանիր իմ խոսքը...»: Երեմիան հասկացավ և անմիջապես մեկնաբանեց այն իր սրտում: Մարդուկը «ոչինչ» չէր գտել գրեթե դատարկ Սրբավայրում, որը կկարողանար խախտել իր համոզմունքները: Այս «Ոչինչ»–ը՝ թաքուն վախի հաճելի այս հիասթափությունը, այնպես հաճելի ու հաշտարար կերպով է ուրախացնում մեծ տիրակալին, որ ինքն էլ իր հերթին «ոչինչ» չի ցանկանում ձեռնարկել ընդդեմ այդ տաճարի աներևույթ Աստծու, թեև նա հավակնում էր զբաղեցնել իր միտքը թույլատրվածից ավելի: Այդ աննշան բառը որոշ չափով ողորմածություն արտահայտող մի արգահատելի խոսք էր, որն ապահովում էր նաև Սրբարանի ներքին անձեռնմխելիությունը:

Նաբուգոդոնոսորը, բնականաբար, չապահովեց միևնույն անձեռնմխելիությունը տաճարի գանձերի վերաբերյալ, որոնք պահվում էին տաճարի երկու կողմնակի թևերում, որոնցից յուրաքանչյուրն ընդգրկում էր իննսունինը սենյակ: Անմիջապես այդտեղ կանչվեցին Բաբելոնի հաշվակալներն ու գանձապահները, որոնց հանձնարարվեց գրատախտակների վրա կազմել թանկարժեք իրերի, ոսկյա սպասքների և

զարդեղենների, գոհարեղենների ու ազնիվ գործվածքների ճշգրիտ ցուցակը: Այս աշխատանքի համար նրանցից պահանջվեց ավելի քան մեկ շաբաթ ժամանակ: Այնուհետև սրբազան տաճարում հայտնվեց կոշտ բեռնակիրների մի բանակ, որը խիստ հսկողության ներքո տեղավորեց դարավոր գանձերը հակերի ու տոպրակների մեջ և քարշ տալով հեռացավ: Քահանաները, ամբողջովին ընկճված, ստվերների նման սողոսկում էին ամենուր: Երեմիայի սիրտը, սակայն, ուրախ էր: Եհովան չափազանց մեղմ դատաստան էր տեսել: Տաճարը կանգուն էր: Տիրոջ պաշտամունքն ամենևին ընդհատված չէր: Ի՞նչ կարևորություն ուներ գանձերի կողոպտումը: Գուցե դա պիտի ծառայեր մի լավ նպատակի: Բայց նույնիսկ Մարդուկ–Նաբուգոդոնոսորի ավելի վատ գործողությունները, քան տաճարի կողուպուտը, չէին հանգցնում Երեմիայի զգացած երախտագիտության ապրումը: Մեծ տիրակալը Հուդայի վրա հարկային ծանր բեռ սահմանեց: Բոլոր այն իշխանները, քահանաները, բարձրաստիճան պաշտոնյաներն ու քաղաքացիները, որոնք իրավացիորեն կամ սխալմամբ կասկածվում էին Հովակիմի բռնակալությանը հարելու մեջ, ձերբակալվեցին ու բանտարկվեցին իրենց սեփական ճամբարների մեջ: Այն քաջարի մարտիկները, որոնք ձերբակալվել էին քաղաքում և դաշտում, դրանց հետ նաև ձերբակալված Երուսաղեմի հմուտ արհեստավորները, կազմում էին ավելի քան տասը հազար մարդուց բաղկացած մի զգալի բազմություն: Նաբուգոդոնոսորի համար ամենից դառն ու անհաճո պարագան այն էր, որ այդ տասը հազարի մեջ մեծ թվով Հակոբի հինավուրց և ազնվագույն տան հետնորդներ կային: Նրանց համար իբրև պատիժ սահմանվեց վտարում և աքսոր դեպի Բաբելոն: Հերախմե՛էլ իշխանին ոչնչով չօգնեց Դավթի տան հետ ունեցած իր ազգակցական կապը, ինչպես Փաշհուրին և նրա կլանին՝ նրանց զբաղեցրած բարձր պաշտոնը տաճարում: Բոլորը, ովքեր հալածել էին Երեմիային, ստանում են իրենց արժանի պատիժը: Մյուս կողմից՝ Ահիկամն ու նրա որդիներն արժանանում են Նաբուգոդոնոսորի բազմաթիվ պատիվներին ու պարգևներին՝ ազատ ելումուտ ունենալով նրա մոտ:

Տաճարը թալանվել էր: Նահապետական ազնվագույն տները ենթարկվել էին ծանր տուրքերի: Երկիրն աղքատացել էր մարդկանց նվազումով և ապրանքների սակավությամբ: Բայց մի՞թե այս ահավոր

արյունահեղությունն արյան մաքրում չէր, որը կատարեց «Տիրոջ ծառան» անգիտակից կերպով և Եհովայի պատվերով: Այսուհանդերձ, ժողովուրդը դեռ ապրում էր, թեկուզ նոսրացած ու նվաստացած: Սակայն հարցը ժողովրդի հպարտ ու մեծ լինելու մեջ չէր, այլ նրա մաքուր լինելու մեջ էր: Տերը նրան մի նոր ժամկետ է սահմանում՝ մեղքից անջատվելու համար: Դա նման էր մի թարմ մեկնարկի՝ մեծ քավությունից հետո: Դժբախտության այդ օրերին Երեմիան ապրում էր իր կյանքի ամենից հուսալի օրերը: Նրա սիրտն արյունաքամ էր լինում միայն մի անմեղ մարդու համար, ում անմեկնելի Հավերժությունը որոշել էր իբրև քավության ընծա՝ այդ գթառատ շրջադարձի համար: Դա տասնյոթամյա Քոնիան էր, որն ստիպված էր հատուցել իր հոր ժամանակաշրջանի ամբողջ մեղքը: Երիտասարդ թագավորը դեռևս մնում էր արքայական ամրոցում: Նա երկաթյա շղթաների մեջ էր, և ոչ ոքի թույլ չէր տրվում այցելել նրան:

* * *

Երեմիան մնում էր Սողոմոնի պալատի նույն սենյակում, ինչպես Հովսիա թագավորի ժամանակ: Անհանգիստ գնում-գալիս էր մի կողմից մյուսը: Նրա հոգին փափագում էր հանդիպել Քոնիային: Երեկոյան մթնշաղն արդեն տարածվել էր պատուհանի շուրջը, որը նայում էր դեպի ներքին բակերից մեկը: Ինչպես միշտ, ամեն օր այդ միևնույն պահին կատարվում էր այն, որ թագավորի ծառաներից մեկը բերում էր մի ճրագակալ, որի վրա վառվում էին երեք ճրագներ: Նրանց առկայծող լույսերին նայելով՝ Երեմիան մի օր էլ չնկատեց, որ այդ աշտանակը բերողի հետևից իր մութ սենյակն են մտել երկու տղամարդ: Հենց այդ պահին նա մտածում էր, թե ինչպես Ահիկամը կամ ինքը կարող կլինեն մեղմել Քոնիայի կացությունը: Ահա հանկարծ նա լսեց մի ծանոթ ձայն, որը տալիս էր իր անունը: Զարմանքից ցնցված բացականչեց՝ Բարուք, ապա սեղմեց նորեկին իր կրծքին՝ չափազանց հուզված այն ամենի համար, որ պատահել էին իրենց բաժանումից հետո:

Բարուքը լուռ մատնացույց արեց երրորդ անձին, որն ամաչկոտ կանգնած էր դռան մոտ: Նա բավականին բարձրահասակ մի մարդ էր՝

ճամփորդական փոշոտ զգեստով, առույգ երիտասարդ էր՝ լեցուն զսպված առնականությամբ: Երեմիայի հայացքը երիտասարդի վրա կարծես մատնում էր նրան հուզախառն շփոթության, որն ուղղեց իր մարմինը, և գլուխը փոքր-ինչ դեպի հետ տարավ, որպեսզի ցույց չտա իր թուլությունը՝ վերահսկելով իր զգացումները: Մարգարեն անմիջապես նկատեց Հովսիա թագավորին հիշեցնող շարժուձև նրա վարմունքում: Ձայնը սկսեց դողալ.

— Մաթանիա՛, իմ երիտասարդ աշակերտ...

Նորեկի ձայնը հնչեց տիրական.

— Այլևս ոչ թե Մաթանիա՝ քո պատանի աշակերտը... այլ Սեղեկիա՝ «արդար է Աստված», որին դու ես այդպես կոչել: Այս անունը պիտի կրեմ, երբ ես նստեմ Դավթի աթոռին և դատաստան կատարեմ:

Այդ ընթացքում Երեմիան հիշեց, որ երբեմնի երեխան մի անգամ ագահ տրամադրությամբ հարցրել էր իրեն.

— Դու, որ ամեն ինչ գիտես, ասա ինձ, արդյոք ես երբևէ թագավոր կդառնա՞մ...

Այն, ինչը այն ժամանակ բոլորովին անհավանական էր՝ երեխայի թագավոր լինելու երազանքը, այժմ Տերը հրաշքով իրականացրել էր: Երեմիան մինչև գետին խոնարհվեց իր աշակերտի առջև՝ իբրև հարգանքի արտահայտություն.

— Դու Սեղեկիան ես, իմ թագավորի իսկական որդին... Թող Տերը փառաբանվի քո միջոցով:

Սեղեկիան բարձրացրեց իր ուսուցչին: Նրա գերադաս էության համեմատությամբ, ում Երեմիան թողել էր, երբ նա դեռ մի քմահաճ երեխա էր, հիմա զգում էր ինքն իրեն զարմանալիորեն ծերացած: Նրանք նայում էին միմյանց այնպիսի աչքերով, որոնք այլևս չէին կարող թաքցնել հուզմունքի արցունքները: Բարուքն անհարմար էր զգում, որ ինքը ներկա էր այդ երկու անձերի հուզումնալից հանդիպմանը: Դրա համար էլ ընդհատեց նրանց իմաստալից լռությունը՝ իր հիանալի կերպով կատարած գործի թարմ զեկույցով: Դժվարություններն իր ակնկալածից շատ ավելի քիչ էին: Ճիշտն ասած, դժվարություններ ամենևին էլ չեն եղել, քանի որ Նոփում նոր արև–աստվածը՝ Նոփրա փարավոնը, որը Նեքավովի թոռն էր, անձնապես շատ լավ էր տրամադրված երիտասարդ

Մաթանիա–Սեդեկիայի հանդեպ, այդ պատճառով էլ առանց վարանումի համաձայնել էր նրա թագավոր դառնալուն: Երեմիան, սակայն, չպետք է մտահոգվեր այդ մասին: Միայն թե պարզ էր, որ այդ հանգամանքն ու փարավոնի համաձայնությունը պետք է մնային իբրև մեծ գաղտնիք: Իհարկե, *մեկեմ* Բաբիլոն պիտի հաստատեր իբրև Հուդայի թագավոր մեկին, որը եղել էր Հոփրայի բանտարկյալը և բազում դառնություններ ու տառապանքներ էր կրել Ստրկության տանը, և ոչ թե պիտի ընդուներ այնպիսի մեկին, որը եղել էր Եգիպտոսի համակրանքը վայելողը: Ինքը՝ Բարուքը, իր Երուսաղեմ ժամանումից անմիջապես հետո սկսեց տարածել մի արկածալից պատմություն Մաթանիայի հանդուգն փախուստի մասին: Մարդիկ Երեմիային փնտրելիս տաճարում հանդիպում էին Սափանի որդիներին: Գեդալիան, որն ավելի քան որևէ մեկը, վայելում էր բարեհաճությունը մեծ տիրակալի և ունկնդրության էր արժանանում նրա կողմից, անմիջապես պատրաստվում է համարձակ կերպով ներկայանալու Մարդուկ–Նաբուգոդոնոսորին և զեկուցելու նրան Հովսիայի օրինական որդու կատարած փախուստի մասին՝ Եգիպտոսից դեպի Բաբելոնի գիրկը: Այլևս ոչ ոք չէր կասկածում, որ Նաբուգոդոնոսորը Սեդեկիային կբարձրացնի Դավթի գահին:

Երեմիան լուռ նայում էր առաջ: Բարուքի պատմածները խռովել էին նրա ներաշխարհը: Սեդեկիայի նուրբ զգայարաններն անմիջապես նկատեցին իր ուսուցչի հազիվ նշմարելի մռայլությունը և հասկացան դրա բազմաթիվ պատճառները: Նա իր սիրալիր նայվածքով ժպտաց նրան.

— Ես գիտեմ,— ասաց նա,— որ ինձ բարձրացնողն ու իմ իրավունքը վերականգնողը ոչ թե փարավոնն է, Նաբուգոդոնոսորը, Ահիկամը կամ Գեդալիան, այլ միայն ու միայն Երեմիան...

Դրա վրա Երեմիան մերժումի մի փոքր ժեստ արեց՝ առանց մի բան ասելու: Սեդեկիան աչքերը գետնին հառած լրացրեց իր ասածը.

— Ես իմ կյանքը պարտական եմ հորս և մորս... Մնացած բոլորը, սակայն, ես պարտական եմ իմ ուսուցչին...

Հզոր և չափազանց պարտավորեցնող մի խոսք՝ ասված ապագա թագավորի կողմից մարգարեին: Սեդեկիան սաստիկ կարմրեց, որպես թե լիովին գիտակցում էր, որ հեշտ չէր լինելու տեր կանգնել իր այդ խոսքին: Նրա այդ խոստովանությանը հաջորդեց մի դադար, որը լեցուն էր

ծանր և անբացատրելի զգացումներով: Բարուքը վերջ դրեց դրան: Նա իմացել էր, որ հաջորդ օրը Հեքոնիային երկաթե վանդակի մեջ դրած պիտի բերեն ճամբար և մի քանի օր անց պիտի տեղափոխեն Բաբելոն: Լսելով այս մասին՝ Երեմիան մի քայլ հետ գնաց: Սեդեկիան իր հերթին ձեռքի ցավալիորեն արհամարհական մի շարժումով թողեց իր դժբախտ նախորդին՝ հանձնված իր դառն ճակատագրին: Այնուհետև նա դիպավ Երեմիային և իր մոտ բերեց, որպեսզի պահի նրան իր համար.

— Այլևս ես երբեք չեմ թողնի, որ դու հեռանաս իմ կողքից...

— Դու պիտի թույլ տաս ինձ հեռանալ քո կողքից,– ասաց Երեմիան,— մինչև որ ես վերադառնամ քեզ մոտ Բաբելոնից...

— Բաբելոնի՞ց,— հարցրին զարմանքով Սեդեկիան ու Բարուքը միասնաբար:

Երեմիան տանջալից շեշտով այսպես խոսեց.

— Արդյոք այս մարդը՝ Քոնիան, կոտրված մի զզվելի բա՞ն է կամ էլ ջարդված ամանի մի ինչ–որ բեկո՞ր: Ինչո՞ւ են նրան շպրտում մի կողմ: Նա կարող է լինել Տիրոջ աջ ձեռքի կնիք–մատանին...

Երեմիան գնաց դեպի լուսամուտը, կարծես թե ընկղմված լիներ խոր մտքերի մեջ: Նրա հոգին երկմտության մեջ էր. կարելի՞ էր արդյոք մենակ թողնել Քոնիային իր թշվառության ճանապարհին. նրան, ով այդ պահին գթության մեծ կարիք ուներ: Մյուս կողմից էլ՝ ինչպե՞ս մենակ պիտի թողներ նորահաստատ ու անփորձ թագավորին հենց իր իշխանության առաջին օրերին: Մեկին կամ մյուսին լքելը հավասարապես սխալ կլիներ: Միայն Եհովան կարող էր այստեղ ճիշտ որոշում կայացնել: Բարուքն ու Սեդեկիան լուռ հեռանում են սենյակից՝ ենթադրելով, որ իրենց ուսուցիչն արդեն իսկ սկսել է խոսել Տիրոջ հետ:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ

ԱՍՏՂԱԶԱՐԴ ԵՐԿՆՔԻ ՄԻՋՈՎ

Երեմիան յուրացրել էր շշուկներ լսելու բարձր արվեստը: Ինչպես ցանկացած տեսակի կատարելագործում, այս արվեստն էլ արդյունք էր սեփական հոգու նկատմամբ տածած անվստահության և նրա մեջ բույն դրած ազատագրվելու բնազդի: Շատերը տեսիլքներ էին ունենում, ոմանք էլ լսում էին ձայներ: Այնուամենայնիվ, միայն այդ երկնային պարգևների միջոցով կատարված ընտրությունը չէր, որ նրանց դարձնում էր իսկական մարգարեներ: Աստվածայինը բավարար չէր, եթե մարդկային բնության սեփական կարողությունն ու սրբազան ջանքերն առանց դաղարի գործակից չլինեին դրան: Տիրոջ ողորմածությունն աշխարհի հանդեպ բարեհաճում էր ձևավորվել լսելի խոսքի միջոցով: Դրանով Գերագույն Անարատությունը միանում է ամենից պղտոր խառնուրդին: Իսկական մարգարեի արվեստը «ճիշտ» կերպով լսելու կարողությունն է, այսինքն՝ տարանջատել հասած մրմունջը բոլոր տեսակի արատավոր հավելվածներից, որոնք առաջանում են սեփական անձի կրքերից, ցանկություններից ու կամքից: Երեմիան զանազան չափանիշներ էր հայտնաբերել՝ Եհովայի անարատ մրմունջն իր մարդկային բնության ներշնչանքներից առանձնացնելու համար: Օրինակ՝ որքան թարմ և հանկարծակի էր հասնում նրան Աստծու խոսքը, այնքան նվազ կասկածելի էր դառնում նրա անարատությունը:

Այդ օրերին, երբ Տերը խղճում է իր ժողովրդին և մեկ անգամ ևս փրկում նրան անդունդ գլորվելուց, Երեմիայի սիրտը դողում էր երկյուղալից երախտագիտությամբ: Մի՞թե մեծ երկյուղով համակված չպիտի լիներ, քանի որ ոչ թե ենթադրաբար, այլ հաստատ գիտեր, որ Եհովան

միայն իր միջնորդությամբ էր խնայել ժողովրդին՝ հետաձգելով նրա կործանումը: Ո՞վ էր նրան առաջնորդել Նաբուգոդոնոսորի մոտ, որպեսզի իր խոսքով ազդեր նրա վրա՝ կատարելու մեծ շրջադարձ, որն այժմ արդեն իրագործվել էր: Մեծ տիրակալը թույլատրել էր Երեմիային Երուսաղեմում գումարված մի ավագաժողովի ընթացքում օծման սուրբ յուղով օծել ու Դավթի թագով թագադրել իր աշակերտին՝ Սեդեկիային: Միևնույն ժամանակ, սակայն, գահընկեց Քոնիային՝ տղա-թագավորի, երկաթյա վանդակի մեջ դրած տեղափոխել էր Բաբելոնի ճամբար:

Ո՞ւմ կարող էր Երեմիան ավելի վստահել, քան Հովսիայի և Ամիտալի սիրելի որդուն, որն ուղղակի իրենից էր սովորել վարդապետությունն ու պատվիրանները: Ո՞վ ավելի շատ կարիք ուներ պաշտպանության, քան Հեքոնիան՝ դուրս շպրտվածը, որն իր սիրտը լցնում էր ոչ միայն կարեկցանքով, այլև ավելի շատ մեղավորության յուրօրինակ զգացումով: Այնուամենայնիվ, Երեմիան մնալու կամ գնալու առումով ինքնուրույն որևէ որոշում չէր կայացնի, եթե մի նոր ու հանկարծակի շշուկաձայն պատգամ ստացած չլիներ.

— Գնա,— ասաց ձայնը,— և քեզ համար գնիր քաթանե (վուշից պատրաստված) մի գոտի ու փաթաթիր այն քո մեջքին, բայց այն ջրի մեջ չմտցնես...

Երեմիան հազիվ էր կատարել այդ տարօրինակ հրամանը, երբ մի նոր հրաման հնչեց.

— Վերցրու այդ գոտին, որ գնել ես ու կապել քո գոտկատեղի շուրջը, գնա Եփրատի ափը և թաքցրու այն ժայռի մի խոռոչում, որ Ես քեզ ցույց կտամ...

Առեղծվածային այս հրահանգով, որի իմաստը դեռևս անհասկանալի էր, քողարկված կերպով թույլատրվում էր Երեմիային ուղևորվելու դեպի Բաբելոն, որպեսզի այդպիսով պատանի Քոնիան մենակ չլիներ իր թշվառության մեջ:

Երեմիան անմիջապես գնաց ճամբար, ուր ներկայացրեց իր խնդրանքը: Զինվորները, որոնք նշանակված էին հսկելու տասնյակ հազարավոր հրեաների աքսորը, քիչ զարմացած չէին՝ տեսնելով, որ մեկը, ում խնայվել է իր հայրենակիցների դառն ճակատագիրը, թախանձագինս խնդրում է միանալ նրանց դեպի Բաբելոն: Հրամանատարների համար

էլ բոլորովին անհասկանալի էր Երեմիայի խնդրանքը, մի մարդու, որը երբեք չէր պատկանել Քոնիայի արքունիքին:

Եվ քանի որ մարգարեի անունը մեծ հարգանք էր վայելում Բաբելոնի մեծամեծների մոտ, հետևաբար նրա խնդրանքն անմիջապես ներկայացրին Մարդուկ–Նաբուգոդոնոսորին: Վերջինս առանց սահմանափակումների ընդառաջեց Երեմիայի ցանկությանը: Թվում էր նույնիսկ, թե մեծ տիրակալը դժգոհ չէր, որ Եհովայի մարդը մուտք էր գործելու իր քաղաքը, որը գիշերային երկնքում աստղերի արտացոլման խտացված ստվերն էր: Նաբուգոդոնոսորը նաև իր մեծ բարեհաճությունն է ցուցաբերում Երեմիային՝ Քոնիային երկաթյա վանդակից ազատ արձակելով և մի հարմարավետ վրանում պահելով: Հաջորդ առավոտ արդեն Քոնիայի վրանի դիմաց սկսում են արածել երկու հոյակապ ուղտեր, որոնք նախատեսված էին նրա և նրա ուղեկցի համար: Սա ցույց էր տալիս, որ Նաբուգոդոնոսորը որոշել էր իր սեփական շքախմբի հետ Բաբելոն տեղափոխել բանտարկյալին՝ նախքան տեղահանվածների շարժվելը: Ինչ վերաբերում է այս վերջիններին, նրանց դեմ առանձնապես խիստ միջոցներ չէին կիրառվում: Նրանք իրար շղթայված չէին: Նրանց թույլատրվում էր օգտագործել ձիեր, ուղտեր, էշեր, բեռնատար անասուններ, եթե դրանք արդեն իրենց էին պատկանում կամ կարողացել էին դրանք ձեռք բերել: Ներողամտության ու սիրո ալիքը ողողել էր ամբողջ Երուսաղեմն ու երկիրը: Ժողովուրդը հանուն տեղահանվածների հրաժարվում էր իր բոլոր ավելորդ և նույնիսկ անհրաժեշտ իրերից: Ամենից աղքատ արհեստավորն անգամ կարողացել էր մի իշուկ ճարել և ամենտեսակ լավ սնունդ, երբ ահա հնչեցին Բաբելոնի աղմկոտ շեփորները՝ մեկնելու ազդարարությամբ:

Մարդուկ–Նաբուգոդոնոսորն ու իր շքախումբը յոթ օրով կանխում են վերադարձող բանակի շարքերի և տեղահանվածների մեկնումը: Այդ խումբը հրաշքի համազոր արագությամբ հատում է Հորդանան գետի ցածրադիր գոտիները և, անցնելով Լիբանանի լեռների կողքով, հասնում է Ռիբլա (Ռերղաթա) քաղաք, ուր հատվում էին երկրի չորս գլխավոր ուղղություններով ընթացող ճանապարհները: Թեթև ու ծանր հեծելազորը չորս կողմից պաշտպանում էր մեծ տիրակալի վերադարձը: Նաբուգոդոնոսորն ինքն էլ, ըստ իր սովորության, նստել էր մրցավազքի

հատուկ մի երկարատոք ուղտի վրա, որն իր մեծաքայլ վազքով ասես ուրվականի նման սուրում էր տափաստանի թերաճ խոտերի վրայով: Երբեմն նա փոխարինում էր այդ կենդանուն ավազի գույն մի նժույգով կամ էլ իր սեփական ձիակառքով, որը միշտ կազմում էր կայուն երթի կանխորոշված կենտրոնը: Մարդուկի շուրջը կազմված էր ամենաներքին ու լավագույն շրջանակը՝ բաղկացած հեծելազորային չորս ընտիր խմբերից, որոնք նվիրված էին Ներգալ, Նինուրտու, Նաբու և Իշթար մոլորակներին: Աջ կողմում էին Ներգալի հրակարմիր մարդիկ, ինչպես նաև Հրատ և Երևակ մոլորակներին համապատասխանող՝ կուպրի նման սև տղամարդիկ, որոնք Մարդուկի զորքի հրամանատարներն էին և նշանավոր հերոսները՝ Ներգալ Սարասարի ղեկավարությամբ: Նրանց հետ էին գնում նաև քրեական դատավորները, կայացած վճիռների կատարողները, գուշակներն ու մեռյալների քահանաները, որոնք բոլորն էլ Նինուրտուի ծառաներն էին: Մարդուկի ձախ կողմում, այսինքն՝ նրա սրտի կողմը, գնում էին կապույտ և բաց կանաչ հանդերձներով զգեստավորված *նաբուներն* ու *իշթարները*, որոնք համապատասխանում էին Փայլածու և Արուսյակ աստղերին: Նրանց առաջնորդն էր Սամգեր Նեբուն, որն իր մեջ միավորում էր երկու ուժերը՝ գրողների աստղի արական–հոգևոր ուժը և համաշխարհային մայր աստղի իգական զգացողության ուժը: Գիշերային հրաշագեղության այդ անժամանակ տղամարդը, սակայն, նստած չէր իր թամբին, այլ ոտքերը ծալած նստած էր հարմարավետ ու փափուկ բարձերով մի զամբյուղում, որն ամրացված էր ուղտի մարմնին: Նրա երկսեռ բնությանն անճոռնի և անբարենպաստ կլիներ թամբի վրա ոտքերը տարածած նստելը: Նաբուգոդոնոսորն ինքը՝ ուրախ աստղը, ամուր և հանգիստ նստած էր թամբին: Նա լավ գիտեր, որ իր գործերը,— լինեն դրանք կառուցելու թե քանդելու գործեր,— Մարդուկի ճառագայթների անմահ հետքերն են վաղանցիկության շարժուն ավազների վրա: Աստղերի քահանաները բուժիչ հատկություն էին վերագրում նրա էությանը: Բոլոր քաղաքներից և գյուղերից ժողովուրդը շտապում էր մոտենալ նրան: Արդեն Մարդուկի տեսքն ինքնին, իր ավազի գույնի պարզ զգեստով, հապշտապ հարդարված մազերով, առանց գոհարեղեն զարդարանքների, մատուցում էր մարդկանց մի խորհրդավոր տեսակի «շինություն»: Այսպիսով, նրանք գալիս էին ամեն կողմից,

որպեսզի կառուցեն իրենք իրենց արքայական աստղի և աստղերի աշխարհաստեղծ արքայի վրա:

Մարդուկն իր խոսքով շատ հազվադեպ էր դիմում Ներգալին կամ Նաբուին: Սովորաբար նա իր գրաստի վրա հեծնած գնում էր, ինչպես որ պատշաճ էր արքայական միայնակ մոլորակին՝ լռությամբ խորասուզված իր ծրագրերի մեջ: Երբեմն, սակայն, նրա դեմքը զվարթ էր, և նա նայում էր դեպի վեր՝ իր թռչուններին, որոնք, որպես իր գլխի վրայով ազատ թռչող ամպ, հնազանդորեն ուղեկցում էին իրենց տիրոջը՝ երկար ճամփորդության ընթացքում: Ըստ որոշ մեկնաբանների՝ թռչուններն ավելի վաղ մի ստեղծագործության պատկանող աստղերի փոքրացված և հնագույն մնացորդներն են: Նրանք իրենց ազատ տեղաշարժվելու հատկությամբ որոշ առումով գերազանցում են նույնիսկ մարդկանց: Հետևաբար, պատահական չէր, որ երկրի վրա, իբրև առաջնաստեղծ արարածների, նրանց է տրվել երգեցողության հնարավորությունը՝ մարդկային խոսքի այդ աստվածային նախադրյալը: Բոլոր մարգարեություններից առաջ գոյություն է ունեցել թռչունների մարգարեությունը: Մարդուկի թռչունները վառ ապացույցն էին այս ուսմունքի: Նրանք իրենց թռիչքի ընթացքում անխոնջ կերպով ծիծաղում էին ու ծաղրում: Նրանցից ամենահանդուգնները գալիս նստում էին Մարդուկի ուսերին և հնչեցնում նրա ականջին իրենց անկապ ու անիմաստ կարգախոսները: Այդուհանդերձ, Նաբուգոդոնոսորը չէր ձանձրանում այդ կատակներից և կարողանում էր նույնիսկ նրանցից ոմանց վրա բարձրաձայն ծիծաղել:

Երթի կարգը, որով Մարդուկ–Նաբուգոդոնոսորն ու նրա շքախումբը գնում էին դեպի առաջ, միայն մոլորակների ներքին օղակից չէր բաղկացած, որն անմիջականորեն շրջապատում էր արքայից արքային: Մոլորակների ներքին օղակը ներառում էր *Շամաշի* արտաքին օղակը՝ կենդանակերպի տասներկու պատկերները: Կենդանակերպի յուրաքանչյուր նշան ներկայացված էր այնքան երևելի հեծյալներով, որքան որ այն ընդգրկում էր առանձին աստղեր: Ինչքան խճճված ու բարդ հարցեր վարկանիշի և արժանիության, ինչքան հիասթափություններ ու հաղթանակներ՝ կապված հիշյալ բաշխվածության հետ: Դա կարող էին չափել միայն աստղաբան խորհրդատուները: Մինչ Մարդուկն ու մոլորակները հարթ ճանապարհների վրա էին, կենդանակերպի խմբերը բաց դաշտի վրա

շարժվում էին լայն շրջագծով: Այսպիսով, գիշերային աստղալից երկինքն օրեցօր անցնում էր երկրի վրայով՝ արտացոլելով իր ուղևորության հավերժական ընթացքը: Սակայն այնտեղ, «ուր կարգուկանոնը խանգարված էր», մոլորակների և կենդանակերպի շրջանից այն կողմ, անհաշիվ զանգվածների սառեցված տարածքում, ուղտին նստած գնում էր Երեմիայի կողքով Հուդայի գահընկեց պատանի թագավորը՝ շրջապատված մինչև ատամները զինված սրատես հսկիչներով:

Քոնիան շղթայով կապված էր իր ուղտի սապատներին, ինչը դժվարացնում էր թամբի վրա նրա շարժվել: Բացի այդ, նրա ձախ ոտքին մի երկար պարան էր կապված, որը պահակներից մեկը պահում էր իր ձեռքում: Եթե պահակի գրաստը շատ հեռու գնար կամ մի կողմ ցատկեր, այն ժամանակ շղթան ուժեղ ձգվում էր Քոնիայի ոտքի շուրջը, և, ամենայն հավանականությամբ, նա ցած կգլորվեր, եթե կապված չլիներ ուղտի սապատներին: Հաճախ պարանն ու շղթաները մխրճվում էին նրա մարմնի մսերի մեջ: Տղան, սակայն, նստած էր ուղիղ, թեև գունատ էր, սակայն ոչ մի ցավագին ճիչ չէր լսվում նրա շուրթերից, միայն թե նա շարունակում էր լուռ մնալ և առաջվանից ավելի գոռոզ էր ու թշնամացած: Նրան ուժ տալու Երեմիայի բոլոր փորձերը կտրուկ մերժվում էին գրեթե վայրենի և համառ լռությամբ: Եվ Երեմիան հասկացավ, որ Քոնիան անհաշտորեն ատում է իրեն: Այնուհետև նա խոնարհեցրեց ինքն իրեն և սկսեց ծառայել դժբախտ մարդուն՝ միայն որպես ծառա, բերելով նրա ճաշը և հոգալով նրա մարմնի կարիքները: Այլևս ոչ մի խոսք չէր արտասանելու, եթե նա իրենից չէր պահանջում: Իրեն չհաջողվեց նույնիսկ քաջալերել Քոնիայի հոգին այն ճշմարիտ հանգամանքով, որ նա իր տառապանքների միջոցով պայքարում էր տաճարի և քաղաքի գոյության համար:

Մինչ մի գիշեր Երեմիան հանում էր երիտասարդ թագավորի զգեստները, տեսավ, որ նրա սպիտակ ներքնազգեստն ամբողջությամբ ծածկված էր արյունով: Դա առաջացել էր շղթաների սեղմումից ու նրանց պատճառած վերքերից, որոնցից հոսում էր թարախակալված արյունը: Քոնիան նայեց իր արյունոտված վերքերին՝ առանց որևէ բառ ասելու, մինչ նրա տղայական զուսպ դեմքը, ավելի հրեշտակային, քան երբևէ, փայլում էր տենդով:

Չնայած ուշ ժամին՝ Երեմիային՝ իբրև հարգված մարդու, թույլատրվում էր ազատ շարժվել ճամբարում: Նա գնաց մինչև «Զուկն» համաստեղության բաժանմունքը, ուր բժշկական օգնություն և դեղորայք էին մատակարարվում: Խորհրդակցությունից հետո նրան անմիջապես տալիս են մի բժիշկ: Քոնիայի աչքերը, սակայն, փայլում էին չարությամբ, ցույց էր տալիս ատամները և սեղմում բռունցքները: Անտարակույս, նա կսեղմեր բժշկի կոկորդը, եթե վերջինս համարձակվեր մոտենալ իրեն: Ոչ ոք չպետք է լվանար իր վերքերը, բալասանով օծեր ու կապեր: Քոնիան չէր ուզում բժշկվել: Վերքերի անտանելի ցավն իր բաժինն էր, ասես իր թագը լիներ: Դա վերջին իրականությունն էր, որ բանտարկյալն ուներ աշխարհի դատարկ անդունդում:

Երեմիան ամբողջ գիշեր արթուն անցկացրեց տենդահարի կողքին: Նա խնդրել էր մի փոքր ճրագ և այն դրել հատակին: Երբեմն Քոնիան բացում էր աչքերը և այնպիսի զարշանքով էր նայում իր հավատարիմ ուղեկցորդի վրա, որ վերջինս ցնցվում էր: Այդուհանդերձ, նա իր սառը ձեռքն անընդհատ պահում էր հիվանդի ճակատին, ինչը մեղմացնում էր նրա ցավը: Այդ մասին էր վկայում այն զսպված հառաչանքը, որ նա արձակում էր, երբ Երեմիան իր ձեռքը հեռացնում էր նրա վառվող ճակատից: Առավոտյան կողմ ջերմությունը նահանջում է, և ծանր քրտինքը հավաստիացնում է վիճակի բարելավման մասին: Երիտասարդն արթնացել էր, նրա աչքերը հառած էին Երեմիայի դեմքին. նրանց մեջ, սակայն, մի փոքր նվազել էր առաջվա ատելությունը: Մարգարեն շարունակում էր լռել, ինչպես երդվել էր, որպեսզի չվրդովեցնի տառապյալի սիրտը: Հիմա, սակայն, Քոնիան է բարձրացնում իր թույլ ձայնը: Հասել էր ժամը նրա հակաճառության: Դա բոլորովին այլ հակաճառություն էր, քան Հովսիայի մեծ հակաճառությունը կամ մեղադրանքը: Նրա պապն այն ժամանակ պառկած էր մահվան անկողնում. նիզակի հարվածները պատառոտել էին նրա թոքերն ու երանքը: Երիտասարդ Քոնիային, սակայն, ում կալանքի շղթաները բավականին վիրավորել էին, դեռ սպասում էին գերության անթիվ օրեր:

— Ճի՞շտ է,— շշնջալով հարցրեց Քոնիան,— որ վարդապետության պատվիրաններում գրված է. «Սիրի՛ր քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով, քո ամբողջ զորությամբ»:

Երեմիան քնքշորեն շոյեց Քոնիայի մազերը, ասես թե ուզում էր համոզել նրան հրաժարվել ապարդյուն հակաճառությունից, որը ոչ մի տեղ չէր տանելու նրան: Բայց նա չէր թողնում, որ համոզեն իրեն: Իր ատամների արանքում սեղմած ու վիրավորած շուրթերը նման էին այն տղայի շուրթերին, որը փնտրում էր իր ցավի պատճառը.

— Ինչո՞ւ ես պետք է սիրեմ իմ Տեր Աստծուն... Ինչ է արել Նա ինձ համար, որ ես կարողանամ սիրել Նրան... Ո՞ւր է Նա ի վերջո... Նրա և իմ միջև ոչինչ չկա... Միայն դու ես Նրա և իմ միջև...

Տղա թագավորը շատ դանդաղ արտասանեց վերջին խոսքերը: Նրա հայացքը սարսափով ընկավ Երեմիայի վրա: Եվ Երեմիան զգաց այն սարսափը, որը նա ներշնչում էր իր մեջ, քանզի անսահմանորեն հեռավոր Տիրոջ և այս աքսորված հոգու միջև գոյություն ուներ միայն ինքը՝ իր անձով: Քոնիան նորից հայացքը գցեց ցածր վրանի առաստաղին, որն ամեն երեկո պատրաստվում էր իր համար:

— Ինչո՞ւ ես հետապնդում ինձ,— մրմնջաց նա,— Դու, որ կանգնած ես Նրա և իմ միջև... Խոսք միայն դու ունես, ինչպես որ Նա միայն ունի խոսք... Ես, սակայն, ատում եմ Նրա և քո խոսքը... Քանզի այն իմ հորն ու ինձ կործանման է առաջնորդել... Այո՛, դո՛ւ ես իմ կործանումը, թեև հիմա ինձ խղճում ես, և քո մեղքը ճնշում է քեզ... Թող ինձ ի վերջո մենակ իմ դժբախտության մեջ և մի՛ խանգարիր ինձ...

Երեմիան լուռ գնաց դեպի վրանի վարագույրը և բարձրացրեց այն, որ երեկոյան զով քամին ներս մտնի ու թարմացնի հիվանդին: Դժգույն աստղերը թեքվում էին դեպի հսկա տափաստանը, Քոնիան հենվեց ինքն իր վրա: Էքստազի մեջ լինելու մի հուսահատ արտահայտություն ուրվագծվեց նրա հյուծված դեմքի վրա:

— Ինչպե՞ս եմ նախանձում նրանց,— բացականչեց նա,— ովքեր երկրպագում են աստղերին, ովքեր պատկանում են աստղերին... Աստվածները բարձրանում են ու թաքնվում նրանց աչքերի առաջ... Ես ոչ թե Նրան եմ սիրում, այլ սիրում եմ աստղերը... Դու, հիանալի աստղ առավոտյան, որ ընկնում ես երկնակամարից, ես ուզում եմ քո առաջ խոնարհվել և քեզ պաշտել... Բայց եթե նույնիսկ ես ուզում եմ, սակայն ես դա անելու իրավունք չունեմ... ես դա անելու իրավունք չունեմ...

Վերջին նախադասությունը՝ «ես դա անելու իրավունք չունեմ», Քոնիան արտասանեց կիսաքուն վիճակում: Երեմիան թեքվեց քնածի կողմը: Ինչպես նա ժամանակին ուղեկցել էր Դավթի պարզամիտ ժառանգորդ Հովաքազին դեպի հանգիստ գերություն, այժմ նա ուղեկցում էր Դավթի մի այլ ժառանգորդի՝ Հեքոնիային, դեպի տաժանագին գերություն: Բայց Քոնիան պարզամիտ չէր: Նրա մեջ Տերը ջարդել էր հերոսին և փշրել նրա արքայական կնիք–մատանին: Հոգնությունն էր արդյոք պատճառը կամ էլ տարիների փորձը, որ Երեմիան չէր ապստամբում, ինչպես ժամանակին էր արել՝ փախչելով Տիրոջից դեպի արևմտյան դժոխային երկիր: Հիմա, երբ նա տեղափոխվում էր դեպի արևելյան երկիր, իր սիրտը լուռ լալիս էր Քոնիայի համար մինչև արևածագ:

Այդ օրը Մարդուկ–Նաբուգոդոնոսորը սովորականից շատ ավելի ուշ մեկնելու հրաման տվեց: Անկասկած, նա ուզում էր բանտարկյալին հնարավորություն տալ հանգստանալու և նոր ուժ հավաքելու: Երբեք նրա նպատակը չէր գահազրկված թագավորին իբրև դիակ թողնել, որպեսզի նա կերակուր դառնա դաշտի գազաններին և երկնքի թռչուններին: Նրա համար բանտարկյալը ոչ միայն արժեքավոր պատանդն էր մի ամեհի ու տարօրինակ աստվածության, այլև աստղային ճակատագրի նախասահմանված նվերը: Որքան որ նա ապրեր և բանտարկված մնար Բաբելոնի քաղաքային ամրոցում, այնքան ժամանակ ապահովված կլիներ Նաբուգոդոնոսորի տան իշխանությունը: Դա *Շամաշի* մեջ մոլորակների բարդ շրջապտույտի մեկնաբանությունն էր: Մարդուկը մասնավորապես հարցրեց Երեմիային, թե հիվանդն ի վիճակի է արդյոք շարունակել ուղևորությունը: Բայց նախքան դրա պատասխանը ստանալը, Քոնիան մոտեցավ իր գրաստին, ծնկի բերեց նրան և նստեց նրա թամբին: Նրա դեռևս անմորուք այտերը դեղնած էին ու թառամած: Այդուհանդերձ, նա ժպտում էր համառորեն, որպեսզի ոչ ոք չնկատեր այն սարսափելի ցավը, որն իր ունեցվածքն էր ու մահվան հույսը: Հաղթահարելով իր տկարությունը՝ նա մեծ դժվարությամբ ուղիղ էր պահում իրեն, ոչ ոքի չէր նայում, որպես թե չէր ուզում Բաբելոն մտնել իբրև աքսորյալ, այլ իբրև իսկական թագավոր:

Երեկո չեղած՝ նրանք հասան Եփրատ գետ, որի արևմտյան ափին հաստատեցին իրենց գիշերային ճամբարը: Քոնիան, ուժասպառ,

անմիջապես ընկավ խոր քնի մեջ: Օրվա վերջալույսին Երեմիան դուրս սողոսկեց ճամբարից: Գետի հոսանքի երկայնքով տարածված կավային սպիտակ ժայռերը գրավեցին նրա հայացքը: Մի կարճ ճանապարհ անցնելուց հետո նա հասավ մի ժայռոտ լեռնաշղթայի, որի վրա քանդակված էին աստիճաններ: Նա անմիջապես անդրադարձավ, որ սա այն վայրն է, որ հենց Տերն ինքը ցույց էր տվել իրեն: Նա արագ հանեց մեջքին կապած գոտին: Բայց ահա, ի զարմանս իրեն, վուշե ազնվական կտավից պատրաստված գոտին մնացել էր մաքուր և սպիտակ, որպես թե երբեք օգտագործված ու փաթաթված չլիներ իր մարմնին՝ հակառակ ծանր ճանապարհորդությանը: Երեմիան բարձրացավ այն աստիճաններով, որոնք գնալով ավելի խորն էին թափանցում ժայռերի մեջ և տանում դեպի մի հին արձանագրություն: Այդ արձանագրության տառերը մաշված էին, և նա ի վիճակի չէր կարդալ դրանք: Փորագրված նշանագրերից մեկը, սակայն, նրա համար պիտի ծառայեր այն նպատակին, որի իմաստը դեռևս թաքնված էր նրա համար: Դա մի բացված ակոս էր մաքուր քարի վրա, որի մեջ Երեմիան մխրճեց իր ծալած գոտին՝ սեղմելով այն երկու կավե քարերի միջև և խնամքով ծածկելով միևնույն քարի համապատասխան կոտրվածքներով: Այդտեղ այլևս չէին կարող թափանցել անձրևաջրերն ու խոնավությունը: Կավե քարերի արանքը չէր կարող մտնել ոչ մի բան, ոչ իսկ որևէ միջատ, մրջյուն կամ թրթուր:

Հաջորդ օրվա երթը Եփրատի եզերքով դեպի վեր էր: Քոնիայի ուժերը չէին նահանջում: Միայն մեկ անգամ նա տկարացավ և գրեթե ընկնում էր թամբի վրայից: Երեմիան նրան խնդրեց մի փոքր հանգստանալ: Տղա թագավորի դեմքը, սակայն, այլայլվեց ամոթից ու զայրույթից: Որպես պատասխան՝ նա հարվածեց իր գավազանով զգայուն ուղտի մռութին, որով վերջինս սկսեց ավելի արագ ընթանալ:

Երբ արևը պատրաստվում էր նորից մայր մտնել, հեծյալների բազմությունը հանկարծ կանգ առավ՝ կարծես տեղում արմատավորված լինելով: Երեկոյի կարմրավուն մառախուղում, որի միջով հոսում էր Եփրատը, հորիզոնից վեր էր խոյանում մի ուրվականանման կառույց: Այն բարձրանում էր միգապատ հողից, որի լայնանիստ և քառանկյուն հիմքերը հավելյալ հարկերով էին օժտված՝ կազմելով յոթ աստիճաններ, որոնք իրենց ծավալով հետզհետե ավելի էին փոքրանում: Բաբելոնի

մարդիկ իջան իրենց գրաստների վրայից և երկյուղալից պատկառանքով գետին նետվեցին Ետեմենանկի աշտարակի առաջ, որը կառուցվել էր սլացիկ կերպով դեպի երկինք:

* * *

Դա հրաժեշտ չէր, այլ իրարից անջատում ու մեկուսացում: Այն պահին, երբ Մարդուկն ու իր զորքերը պատրաստվում էին մուտք գործել մայրաքաղաք, Քոնիային բաժանեցին Երեմիայից, և նրան, իբրև պետության բանտարկյալի, նորից դրեցին իր երկաթյա վանդակում, որպեսզի ցուցադրվի Մարդուկի հաղթական մուտքի ճանապարհին: Այդ ժամից սկսած պատանի թագավորը մեկընդմիշտ զրկվեց իր անձնվեր խնամատարից: Երեմիան չէր կարողանում ջնջել իր հոգուց Քոնիայի վերջին հայացքը: Այդ հայացքով նա ցույց էր տալիս, որ ինքը հրաժարվել է իր բոլոր ինքնազսպումի հաղթանակներից, ամեն տեսակ ջղագրգիռ գոռոզամտությունից և, ի վերջո, ընդունել իր ամբողջ թշվառությունը: Այդ հայացքում այլևս չկար ատելություն և զզվանք, այլ ընծայաբերվող զոհի աղերսալից արտահայտություն: Դրա պատճառը, սակայն, շուտով մորթվելու վախը չէր, այլ վախն էր անկանխատեսելի բանտային կյանքի՝ մթության ու մենակության հանդեպ: Մինչ Քոնիան վերջին անգամ նայում էր իր խնամատարին, աչքերը լցվում են այն գիտակցությամբ, որ ինքն այժմ և ընդմիշտ կտրվում է այն ամենից, որ կյանքը դարձնում էր իսկական կյանք. այսինքն՝ ծննդավայր, համայնքի օրրան, գերդաստանի նահապետական տուն, սպասող նշանած, որը կին էր դառնալու և երեխաներ ունենալու, որպեսզի մարդու հոգին ու նրա հիշատակը չկորչեին երկրի երեսից: Այլևս ի՞նչ նշանակություն ունեն շղթաների ցավն ու զնդանի տանջանքն այս գիտակցության համեմատությամբ:

Ամիսներ շարունակ Երեմիան քայլում էր տիեզերական քաղաքի ուղիղ փողոցներով՝ փնտրելով Քոնիայի մոտ տանող մի ճանապարհ: Ապարդյո՞ւն: Բաբելոնի օրենքն անողոք էր, շատ ավելի խիստ, քան Նոփի օրենքը: Նրան, ում տանում էին քաղաքի սև ներկված ամրոցը՝ ապստամբների բանտը, որը գտնվում էր Նինուրտույի աստղային կառավարման

ներքո, այլևս չպետք է իր բանտարկության պայմանների մեջ որևէ մեղմացում ակնկալեր: Շղթայակապված մարդկանց կյանքը ցավալիորեն սահմանափակող հարյուրավոր արգելքներից մեկը, որը նաև ամենից խիստն էր, այն էր, որ բանտարկյալը երբեք իրավունք չուներ տեսնվելու իր հայրենակիցների, արյունակից հարազատների և իր հայրենյաց Աստծու կողմից առաքված մարդկանց հետ: Այդ գերագույն արգելքը հաղթահարելու՝ Երեմիայի ունեցած համարձակ ու մարդասիրական ցանկությունը, որը նա բացահայտ կերպով ներկայացրեց Բաբելոնի ամբողջ վերնախավին, ամենևին նպաստավոր չէր իր անձի վայելած հեղինակության համար: Ի դեպ, մայրաքաղաքում նրա համար ամեն ինչ փոխվել էր՝ համեմատած ճամբարի հետ: Փողոցում հանդիպելիս այլևս ոչ ոք նրան հարգանքի տուրք չէր մատուցում, քանզի նրան այդտեղ ոչ ոք չէր ճանաչում: Երբ նա օրեր շարունակ սպասում էր աստղաբան խորհրդականների փակ դռների առջև, նա ոչ այլ ինչ էր, քան կասկածելի մի օտարական՝ կասկածելի մի ժողովրդի ներկայացուցիչ:

Մարդուկը և իր բոլոր Ներգալներն ու Նաբուները, գլխավորությամբ՝ Սամգեր Նեբուի, մնում են Երեմիայից ավելի հեռու, քան իրենց համապատասխան երկնային մարմինները: Նրան չի հաջողվում նույնիսկ հասնել մեծ պալատի պահապաններին: Այդ ժամանակ նա հասկացավ, որ Քոնիային այցելելու արտոնություն ստանալու և թեկուզ մեկ ժամով նրա սարսափելի մենակությանը բաժնեկից լինելու որևէ հնարավորություն այլևս չկար: Եվ երբ վերջապես համոզվեց, որ իր կատարած բոլոր հոգնեցուցիչ փորձերն ապարդյուն են, սկսեց մտածել տուն վերադառնալու մասին, քանզի Սեղեկիայի պատճառով գիշերային անքնության ընթացքում մատնվում էր մի տարօրինակ անհանգստության: Առայժմ իր վերադարձի ճանապարհին երկու խոչընդոտ կար: Առաջինն այն էր, որ դեռևս Տիրոջ կողմից որևէ խոսք չէր հասել իրեն առեղծվածային գոտու մասին, իսկ երկրորդն այն էր, որ ինքը նոր քաղաքում դիմել էր օտարների հարցերով զբաղվող գրասենյակին՝ վերադառնալու թույլտվություն ստանալու, որն սկզբում տրվել էր իրեն, բայց հետո հանկարծ հետ էր առնվել: Գրասենյակի՝ սահմանափակ իշխանություն ունեցող պաշտոնյաները հետաքրքրական քաղաքավարությամբ էին վերաբերվել նրան: Երևի հենց ինքը՝ Մարդուկ–Նաբուգոդոնոսորն էր պահանջել, որ նա մնար

մայրաքաղաքում: Խոչընդոտները, սակայն, այնքան էլ անհաճո չէին նրա սրտին, քանի որ ինքը դեռ չէր հաշտվել Քոնիայի ճակատագրի հետ:

Երեմիան ամեն օր անհանգիստ թափառում էր Բաբելոնի փողոցներում: Այժմ նա շրջում էր տասներեքերորդ փողոցում գտնվող մարդկանց բազմության հետ, որն ընթանում էր «Թափորների և տարեկան տոնախմբությունների սրբազան ճանապարհով» դեպի Էսագիլա տաճարի տարածքը: Էսագիլան Բաբելոնի հովանավոր Մարդուկ աստծու տաճարն էր՝ իր ազդեցիկ դարպասներով: Երեմիան նայում է իր շուրջը. Մարդուկի կրկնակի դարպասը փայլում էր մայր մտնող արևի շողերի ներքո: Այս դարպասը իր բոլոր աշտարակներով, ատամնավոր պարիսպներով և դիտակետերով, երեսապատված էր գոց կապույտ սալաքարերով, որոնք, հղկված, հարթեցված ու փայլեցված լինելով, նման էին հսկա ակնաքարերի: Դարպասատան՝ մինչև տանիք հասնող կապույտ մակերեսները ծածկված էին գունավոր բարձրորակ քանդակներով, որոնց գեղեցիկ ու ներդաշնակ կարգավորումը համապատասխանում էր յոթ թվին:

Ոչ մի տեղ Տիրոջ բեռն այնքան ծանր չի կշռում, որքան մի օտար երկրում: Տասներեքերորդ փողոցում ծուլորեն քայլող բազմության մեջ Երեմիան բազմիցս հանդիպում է մարդկանց ատելավառ նայվածքների ծանոթ զայրույթին, որոնք հայհոյում էին իրեն և ծաղրական բացականչություններ անում: Այդտեղ Իսրայելի հանդեպ հակակրանքը շատ ավելի վատ էր, քան Նոփում: Թեև Նոփը Հաբեթի ցեղից էր, իսկ Բաբելոնն ու Հակոբը՝ Սեմի ցեղից: Արյան հարազատությունն ու արյան օտարոտիությունը ոչ մի կապ չունեին այս ատելության հետ: Դրա ծագումը ևս կախում ուներ Աստծու կամքից, որը ստեղծել էր մի ժողովրդի, առանձնացրել էր նրան ու դրել աշխարհի բոլոր ժողովուրդների դեմ: Դժվար էր պատկերացնել նման մի հոգևոր նողկանք, որը լցնում էր վսեմներին և ստորայիններին, նրբազգացներին և անտաշներին՝ ընդդեմ Իսրայելի: Այնուամենայնիվ, ամենից դժվարն այն էր, որ Երեմիան իր ժողովրդի մեջ պետք է գործեր ոչ թե իբրև նրա կողմնակից, այլ իբրև նրա դաժան քննադատ: Նա մտածում էր այն տասը հազարների մասին, որոնց մեծ տիրակալը տեղակայել էր Բաբելոնի հարևան երկու տարածքներում՝ Բորսիպայում և Թել Աբիբում: Աքսորվածներից միայն իշխաններն ու

ազնվականներն էին հրահանգ ստացել հաստատվելու մայրաքաղաքում, որպեսզի այդպիսով իշխանությունները կարողանան նրանց պահել իրենց մշտական հսկողության տակ, ինչպես նաև կարողանան անմիջապես դաժանաբար ճնշել ցանկացած դավադրություն: Երեմիան զգուշանում էր, որ Բաբելոնում չհանդիպի Փաշհուրին և իր մյուս հալածիչներին: Նախքան Միջագետքից մեկնելը նա կուզենար այցելել Բորսիպա և Թել Աբիբ (Բաբելոնի մոտ), որպեսզի Երուսաղեմում Սեդեկիա թագավորին պատմի աքսորյալների կյանքի մասին: Նա իր հայացքը բարձրացնում է դեպի Բաբելոնի անամպ երկինքը, որն արդեն սկսել էր ողողվել վերջալույսի ոսկով: Նա շունչը պահում է և փակում է կոպերը, որպեսզի իր ներսից լսի որևէ մրմունջ: Բայց, ինչպես միշտ, այնպես էլ հիմա, երբ փորձում է անիմաստ մի բան, իր հանդուգն հարցերին ոչ մի պատասխան չի ստանում:

Երբ նա նորից բացում է իր աչքերը, հզոր Բաբելոնը թվում է ավելի հսկա, ավելի ճնշող, քան առաջ: Երեկոյան դեմ քսանչորս գլխավոր փողոցներից, որոնք հատում էին իրար ուղիղ գծերով, բարձրանում է մարդկանց խառնաշփոթ աղմուկը: Եփրատի պարսպապատ քսան ջրանցքներում, որոնք անցնում են ծառաստանների միջով, իրար հետևից անխոնջորեն շարժվում են նավակներ, ինչպես նաև երկար լաստեր, որոնք կազմված էին այծի փչված մորթերով: Գյուղացի ժողովուրդը, ուխտավորների խիտ շարքերով, ներս է մտնում քաղաքի դարպասներով: Ծաղկեպսակներով ու պաստառներով տոնականորեն զարդարված էին ոչ միայն Էսագիլա տաճարը,— որը տասն անգամ ավելի մեծ էր, քան Տիրոջ տաճարը,— այլև աստծու հիսուներեք տաճարային մյուս տարածքները, բոլորն էլ Բաբելոնի սահմաններում: Փողոցների անկյուններում դրված էին մուտքերը դրոշներով զարդարված վրաններ ու մատուռներ, որոնց խորաններում անպակաս էր խունկի ծուխը: Այդ փոքրիկ սրբավայրերից երեք հարյուրն ընծայված էին կենդանակերպի նշաններին, առաջին հերթին՝ Խոյի համաստեղությանը, որը նաև կոչվում էր «Վարձու աշխատող» և այդ դարաշրջանի նշանն էր: Վաղը գիշեր՝ *նիսան* ամսի սկզբին, երբ Մարդուկը մտնում է Խոյի կամ Վարձկանի համաստեղություն, դարաշրջանը հասնելու է իր գագաթնակետին, սկիզբ է առնելու համաշխարհային մի նոր գարուն՝ Նաբուգոդոնոսորի գարունը: Այդ իսկ

պատճառով այդ օրերին պատրաստվում էր ամենամեծ փառատոնը, որը վայելելու էր այդ ժամանակվա սերունդը: Մինչ ամեն կողմից բյուրավորներ շտապում էին դեպի Բաբելոն, արքայից արքան գաղտնորեն լքել էր քաղաքը: Գարնանային մեծ տոնի նախապատրաստման գիշերը նա անցկացնում էր լեռնային մի ամայի քարանձավում՝ մերկացած իր ողջ իշխանությունից և հետևորդներից, ինչպես մի լքված, ինչպես մի մեռած մարդ: Բայց երբ գա հասնի իր ժամը, և սպառվեն իրեն փնտրող քահանաների՝ ժամեր տևած ողբերը, այդժամ ինքը՝ հզոր աստվածը, դուրս է գալու իր խոնարհությունից, վերադառնալու է և բախելու Մարդուկի դարպասը: Այդտեղ գիշերային երկնքի բոլոր աստվածներն ու նրանց քահանաները կընդունեն նրան և առնելով իրենց սրբազան թափորի մեջ՝ կտանեն նրան դեպի Էսագիլա, որպեսզի նա այնտեղ կարողանա բարձրանալ աշտարակի ամենաբարձր աստիճանը, որը կոչվում էր՝ «ճակատագրի սրահ՝ ճակատագրի որոշման»:

Երեմիայի հայացքն այժմ կենտրոնանում է Ետեմենանկիի վրա, որը, ինչպես Հերմոն լեռան գագաթը, բարձրանում էր Էսագիլայի լեռների արքայական պալատներից ու տաճարներից վեր: Իսկապե՞ս դա «Լեզուների խառնակության աշտարակն» էր՝ «Միգդալ Բաբելը», ինչպես ասում էին իր հայրենի երկրում, որ ամբարտավան մարդիկ փորձել էին կառուցել՝ հասնելու նույնիսկ մինչև երկնքի խորքերը... Գուցե վերջում Տերը զիջել էր մարդկային գոռոզությանը, քանզի աստղերի ամենաբարձր կացարանը, ըստ երևույթին, անհետացել էր երեկոյան երկնքի կարմավուն ցոլքում: «Երկնքի և երկրի միջև կառուցված աշտարակի» յոթ աստիճաններից յուրաքանչյուրն ընդգրկում է մի ամբողջ աշխարհ: Երկրի վերևում գտնվող յոթ աշխարհները բացարձակ կրկնությամբ արտացոլվում են այն յոթ աշխարհների մեջ, որոնք երկրի ներքևում են, քանզի ինչ որ վերևում է, նույնը նաև ներքևում է: Իր ծավալի առումով առավել հզոր մակարդակն առաջինն է, ոչ պակաս, քան իր պատերի ներսում գտնվող փոքր քաղաքը: Յուրաքանչյուր աստիճանի հարթակի վրայից բարձրանում է հաջորդը՝ ավելի փոքր ծավալով, տարբեր շինանյութով և գույներով՝ ըստ իր ներկայացրած մոլորակի և նրա ոլորտի: Ներքևի մասում են թանձրացած նյութականության մուգ գույներն ու ծանր մետաղները, որոնք վերևում գնալով դառնում են հոգևոր:

Բաց ու լայն աստիճաններն իրար են կապում Ետեմենանկի աշտարակի մոլորակային հատվածները: Երեմիան իր գտնվելու վայրից զգում է քահանայական թափորների լավ դասավորված վերելքն ու վայրէջքը, որոնք աստիճանների վրայով գնում–գալիս էին՝ կատարելու իրենց ժամապահությունը: Իր տեղում անշարժ կանգնած՝ նա ակնապիշ նայում է *Միգդալին*, որը մարդիկ կառուցել էին Տիրոջ կամքին հակառակ՝ դեպի երկինք: Հիմա արևը մայր է մտնում: Աշտարակի առանձին աստիճանների գույները դանդաղորեն խամրում են մթնշաղում: Ամենից երկար Ներգալի ծիրանագույն կարմիրն է պահպանում իր ուժը, մինչև որ այն ևս թուլանում է և հալվում ամենից առաջ մի ընդհանուր թեթև մանուշակագույն և այնուհետև կարմրակապույտ գույների մեջ, որոնցով պարուրվում է Ետեմենանկին, ինչպես քահանայական մի թիկնոցում: Փողոցում եռուզեռը դադարում է: Բոլորի աչքերը շոայլորեն նայում են դեպի աստիճաններով աշտարակը, որպես թե ակնկալում էին նրանից մի հրաշք: Եվ այդ հրաշքը նաև տեղի է ունենում. ամեն երեկո այն դիտողներից երազային աղաղակներ և զմայլանքի կանչեր է խլում: Իշթարի երեկոյան աստղը բարձրացել էր դեռևս լրիվ չմթագնած երկնակամարում: Այն երկար չի մնում միայնակ: Երկնային զորքերի աստվածությունները մեկը մյուսի հետևից սկսում են լուռ քայլել նրա կողքին: Ետեմենանկի աշտարակի կարմրակապույտ գույնը մթագնում է՝ մի ծանր ու անձև ամպով շրջապատված: Այժմ, սակայն, նրա բարձր գագաթը՝ աստղերի վերին կացարանը, բարձրացող գիշերվա մեջ սկսում է շողալ մի լույսով, որը գոյություն չունի երկրային ոլորտում: «Ճակատագրի որոշման սրահի» պատերն ու տանիքը կառուցված են բյուրեղապակու նման մի հատուկ նյութով, որը, Ուրի ավանդույթի համաձայն, թաքնագետ մասնագետները պատրաստում էին ապակու իրենց սեփական վառարաններում: Այդ թափանցիկ շինանյութն առանձնահատկություն ունի ոչ միայն մեծացնելու և հրաշալիորեն տարանջատելու գիշերային երկնքի կերպարանքները մեկնաբանի աչքերի համար, այլև ի վիճակի է կլանել աստղերի ճառագայթները երկնակամարի խորքերից՝ հավաքելով դրանք ճակատագրի որոշման սրահում: Համենայն դեպս, դա մարդկային ձեռքով վառված մի լույս չէ, որով աշտարակի գագաթն այժմ այդքան նրբորեն փայլում է, այլ դա աստվածների թաքնված լույսն է ճառագայթող, որը ձեռք է բերվել

Ետեմենանկու կողմից և, իբրև գագաթը մարդկության, հաստատվել է այնտեղ: Ամբոխի կողմից մեղմաձայն աղոթքի մի երգեցողություն գալիս է փոխարինելու այն սարսափը, որն ամեն երեկո առաջանում էր ժողովրդի մեջ՝ աշտարակի այդ հրաշքը դիտելիս: Երեմիան լուռ և մտախոհ մնում է կանգնած այդ օտար ազգի մեջ:

Երբ նա պատրաստվում է գնալ, տեսնում է, որ շրջապատված է չորս կապույտ կերպարանքներով, որոնք սպասում էին իրեն: Սկզբում ցնցվում է: Արդյոք ինքը խախտե՞լ էր Բաբելոնի օրենքը՝ միջնորդելով Քոնիայի համար: Գուցե մեծ տիրակալն այդ մարդկանց միջոցով ուզում էր ձերբակալե՞լ իրեն: Այդ չորս մարդկանց կողմից իրեն ընծայված պատիվը, սակայն, որոնք խոնարհվում են իր առջև, արագորեն հանգստացնում է իրեն: Երջանիկ մի մտածում համակում է իր սիրտը. միգուցե աստղային կապույտ քահանաներ են ուղարկվել իր մոտ, որպեսզի առաջնորդեն իրեն դեպի քաղաքի մռայլ ամրոցը՝ տեսնելու դժբախտ թագավորի երեսը: Այդ կապույտ անձինք պատկանում էին Նաբու աստղին, որը հոգևոր աստղն է գրողների, մեկնաբանների և մարգարեների, որոնք որոշ չափով իրար եղբայր են, քանզի թե՛ Բաբելոնում և թե՛ Երուսաղեմում «*մարգարե*» բառը նույն ձևով է հնչում՝ «*Նաբի*», և նույն իմաստով է օգտագործվում: Այսուամենայնիվ, Նաբուի պատգամավորները չեն բռնում դեպի քաղաքի ամրոց տանող ճանապարհը: Նրանք մեծ քաղաքավարությամբ առնում են Երեմիային իրենց մեջտեղը և ուղեկցում նրան հետաքրքրասեր մարդկանց միջով, թափորների գլխավոր փողոցի երկայնքով, ուղիղ դեպի Էսագիլա տաճարի խստորեն փակված տարածք, որը Ետեմենանկի աշտարակի մոտ էր: Երբ նրանք հատում են «նորընծաների» սահմանը, արդեն խորը գիշեր էր: Միայն սակավաթիվ հավերժական լապտերներ էին լուսավորում Էսագիլայի փողոցներն ու հրապարակները: Էսագիլան երկրի վրա գիշերային երկնքի առանձնացված ու պարիսպներով շրջապատված սրբազան տարածքն էր: Դրա համար Երեմիան չի կարողանում տարբերակել այն երկար ճանապարհն ու վայրերը, որոնց միջով նրան առաջնորդել էին այդտեղ: Միայն մեկ պալատ լուսավորված էր թույլ լույսով: Ճամփորդությունը հասել էր իր ավարտին: Դարպասի մուտքին Երեմիային դիմավորում է հենց ինքը՝ Սամգեր Նեբուն: Չի հասկանում, թե ինչ է պատահում, երբ գիշերային

ստվերների վսեմափայլ գեղեցկությունը, Մարդուկից հետո թագավորության բարձրագույն անձնավորությունը՝ հարյուրամյա աչքերով հավերժ քսանամյան, ողջունում է իրեն՝ նվաճված և արհամարհված ժողովրդի մեկ անդամին, խաղաղության եղբայրական համբույրով: Նույնիսկ երբ Սամգեր Ներուն հրավիրում է նրան մասնակցելու Նաբույի միաբանության և եղբայրության հասարակաց խնջույքին, նա ոչինչ չի կռահում այն տարօրինակ ծրագրի մասին, որի դերակատարն էր լինելու ինքը: Դա ինչպես լուռ, այնպես էլ խնայողաբար պատրաստված մի ճաշկերույթ էր կապույտ ներկված մի սրահում և միևնույն գույնի ծածկոցով ծածկված սեղանի շուրջ, որը լուսավորված էր միայն արծաթյա խնկամաններում վառվող կապույտ փոքրիկ բոցերով: Սպասավորները սեղանակիցներին մատուցում են արմավ և թուզ, գարու հաց և մեղրով թխվածք: Ընթերցողի ձայնն ավելի է խորացնում Նաբուի եղբայրության խոր լռությունը, որը սեղանից հեռու ընթերցում է ոչ թե սրբազան օրհներգներն ու պատմությունները, այլ համաշխարհային տարվա օրացույցների թվերը, համաստեղությունների վերելքներն ու վայրէջքները, ինչպես նաև արևի կանխատեսված խավարումները: Ճաշի ավարտին մատուցվում է քաղցր գինի՝ անագե փոքրիկ բաժակներով: Այնուհետև Սամգեր Ներուն վեր է կենում, բռնում է Երեմիայի ձեռքից և տանում նրան դեպի լայն մահճակալով մի հարմարավետ ննջարան:

Նոր միայն վսեմաշուք տղամարդ–կինը (հերմաֆրոդիտը) հաղորդում է Եհովայի մարգարեին, որ նա Մարդուկի պատվերով արժանի է դարձել այն սրբազան պատվին՝ ներկայացնելու օտարականին, այսինքն՝ աստղերի օտարերկրյա վկային, աշխարհի վերանորոգման վաղվա գիշերին և ճակատագրի որոշման պահին, ինչպես սահմանված էր Բաբելոնի հիմնադրումից ի վեր: Տարբեր առիթներով այդ պատիվը ողորմածաբար տրվել էր դաշնակից թագավորներին: Այս անգամ, սակայն, Մարդուկը բարեհաճել է մի օտար մարգարեի բարձրացնել աստղային վկայի պատվին, քանի որ նա մեծ հմտություն էր ցուցաբերել բացվող դարաշրջանի բազմաթիվ ճշմարտությունների վերաբերյալ: Մինչ Երեմիան լսում էր Սամգեր Ներուի կնոջական մեղմ ձայնը, նրա վրա գալիս է մի անհաղթահարելի, բայց միևնույն ժամանակ հաճելի ու երանելի հոգնածություն, որը նրան տանում է անկողին: Նա դեռ փորձում է ժպտալ

գանգրահեր ու անթառամ գեղեցկուհուն՝ ասես չքմեղանալով, բայց դեռ այդ ժպիտը չավարտված՝ նա արդեն քնել էր: Այժմ սկսվում է նրա կյանքի ամենախոր քունը: Երբ Նաբուի չորս կապույտ կերպարանքներն արթնացնում են նրան, նա չգիտեր, թե առավոտ է կամ գիշեր: Քունը լիովին շփոթեցրել էր նրա ժամանակի զգացողությունը: Երեկո էր, և այդ դարաշրջանի ամենամեծ ու լավագույն երեկոն, երբ Բաբելոնի արքայի աստղը պատրաստվում էր հասնել իր գագաթնակետին: Կապույտ քող են զցում աստղային վկայի գլխին, նախքան նրան պալատից դուրս հանելը: Քողը, սակայն, հաստ կտավից չէր և արգելք չէր տեսողությանը: Երեմիան այժմ Նաբուի եղբայրության շրջապատում էր՝ հսկայական աստիճանավոր աշտարակի ստորոտում, երկու բաց աստիճանների միջև, որոնք աջից և ձախից առաջնորդում էին դեպի գլխապտույտ բարձունքները: Մարդուկի թափորի գլուխը վաղուց արդեն տեղափոխվել էր Էսագիլա: Աստղային աստվածների մի բանակ՝ պատրաստված ոսկուց, արծաթից, պղնձից, փայտից, ալաբաստրից, մոտենում է վարանումով: Նրանք Ուխտագնացության դարպասի մոտ սպասում են Մարդուկին, որը դուրս էր եկել իր ամայի քարանձավից, և տանում են նրան դեպի սրբավայր: Այնուհետև նրանք բոլորն էլ անհետանում են Ետեմենանկի աշտարակի Նինուրտու մակարդակի սև դարպասներում: Մարդուկը, սակայն, այդ օրը չի ձիավարում, ոչ էլ կառքի մեջ է նստում, այլ գնում է ոտքով: Նա մի կարճահասակ և աշխույժ տղամարդ էր, ավազի գույն համեստ հագուստով: Նրա կլոր դեմքը փոքր-ինչ հոգնած էր և շատ լուրջ: Իր շուրջն առկա սառցե դատարկությունը ցույց էր տալիս իր մեծությունը և իր սարսափելի պարտականությունը՝ որոշելու մոտալուտ ճակատագիրը: Դատարկ տարածությունը, ուր նա քայլում էր, հագեցած էր քահանայական երգերով, նվագների նյարդայնացնող հնչյուններով, փողերի ու թմբուկների ձայներով: Երեմիան արդեն կարողանում է տարբերակել Նաբուգոդոնոսորի դեմքի առանձնահատկությունները. լայն ու կոշտ բերան, դուրս ցցված քիթ, որը տղայական համառությամբ առանձնանում էր նրա ընդհանուր դեմքից: Մարդուկ-Նաբուգոդոնոսորն իր աջ ձեռքում բռնած էր մի արծաթե շանթ, իսկ ձախում՝ մի մարտական ուռկան: Մոտենալով աշտարակի բաց աստիճանին, նա հանկարծ բարձրացնում է արծաթյա կայծակը: Երգեցողությունը կանգ է առնում: Երաժշտական խառնիճաղանջը

լռում է: Քահանաների շքախումբը մնում է տեղում սառած: Մենակ, համաչափ քայլերով Բաբելոնի աստղ–թագավորը գնում է դեպի աշտարակ, որն սպասում էր իրեն: Այդ պահին Սամգեր Նեբուի ձեռքը թեթևակի դիպչում է Երեմիայի ուսին...

* * *

Ճակատագրի և դրա վերաբերյալ որոշումներ կայացնելու սրահը շատ ավելի մեծ էր, քան այն, ինչ երևում էր ներքևից և հեռվից: Այնտեղ Երեմիան մենակ էր Մարդուկի և Սամգեր Նեբուի հետ: Կապույտ աստղերի եղբայրության անդամներն աշտարակ բարձրանալու սրտամաշ վերելքի ժամանակ մնացին Նաբուի հարկի մակարդակում և մտան սնդիկի աճյունասրահ: Ճակատագրի սրահը, սակայն, գրեթե դատարկ տարածություն էր, որի կենտրոնում զետեղված էր Մարդուկի գոհարափայլ ու զարմանահրաշ կառքը՝ երկնքի տիրակալի *մերկապկրուն*[16]: Փոխադրական այդ միջոցը շքեղ կառքի և հոյակապ նավի միջև մի բան էր: Պտտվող անիվների փոխարեն այն ուներ տարօրինակ կերպով ձևավորված ոսկե չմուշկներ, որոնց վրա հենվում էր կառքի զամբյուղը և դրա հետևում՝ ղեկավարողի բարձրադիր նստատեղը: Մայրամուտի ժամանակ շողում էին հազարավոր թանկարժեք քարերը, որոնք Մարդուկի *մերկաբայի* վրա դասավորված էին համաստեղությունների կարգի համաձայն: Աստղային պալատի վերին սրահի պատերն ու առաստաղը, որոնք կառուցված էին սրբազան գետի բյուրեղապակուց, ամբողջությամբ թափանցիկ չէին, այլ կիսաթափանցիկ: Դրանք նման էին բոլորովին նուրբ ալաբաստրի: Հայտնի չէր, եթե նրանց ցուցադրած կարմրավուն ամպի երանգները պատկանում էին երկնքին, թե՞ իրենց սեփական հորինվածքին: Բյուրեղապակյա պատերը գնալով ավելի էին կարմրում և ողողում ճակատագրի սրահը սրտի կարմիր գույնով: Այդժամ Երեմիան վերահասու դարձավ, որ Մարդուկի *մերկաբային* լծված է մի կենդանի, իհարկե,

[16] Բառ, որը գալիս է հին երբ. *մերկաբա* բառից և նշանակում է ձիակառք, ռազմակառք, լույսի կառք կամ Աստծու կառք:

ոչ թե մի ձի, այլ թևավոր, ընձուղտի վզով մի բարձրասլաց փոքր վիշապ, որը կազմված էր արմատի նման շագանակագույն մի նյութից:

Խիտ ու ծանր կաթիլներով կաթկթում էր ժամանակը, սրտի մի տրոփյունը հաջորդում էր մյուսին՝ ծանր ու դանդաղ բաբախումով: Երբ Երեմիան մի անգամ կանգնած էր Ամենտիի մուտքին՝ ժայռե դարպասի առաջ, գիշերային առաջին ժամին զգացել էր իր էության միայն մեկ մասի ներկայությունն այնտեղ: Հիմա էլ զգում էր իր մեջ իր ինքնության մեկ մասը միայն: Այդ մասը ստոծանիում չէ, ինչպես այն ժամանակ, այլ գլխում, որը կարծես թե ազատորեն տարուբերվում էր իր բավականին անզգա մարմնի վրա: Երեմիան հիշեց մահամերձ Զենուայի խոսքերը.

— *«Կա»* ծիծեռնակը դեռ իմ սրտի մեջ է... «*բա*»-ն՝ բազեն, սակայն, թռչկոտում է իմ գլխում...

Մի աննկարագրելի հանդիսավորություն համակում է Անաթովթցուն այնքա՜ն կատարյալ կերպով, որ չի կարողանում ոչ իսկ պատկերացնել, թե ինչ է պատահել իր հետ վերջին քսանչորս ժամվա ընթացքում, որ ինքն այդ պահին «ճակատագրի սրահում» է՝ արքայից արքայի կողքին, որի կամքից են կախված երկրի բոլոր ժողովուրդների ճակատագրերը: Երեմիան այնքան շատ էր զբաղված իր անձով և իր անորոշ վիճակով, որ հազիվ է նկատում է, թե ինչպես է Սամգեր Ներուն իր տիրոջը թագադրում մի բարձր թագով և զգեստավորում ակնաքարերով զարդարված մի թիկնոցով: Այդ սրբազան գործողության ընթացքում նրանց ցածրաձայն փոխանակած խոսքերը Երեմիան չի հասցնում հասկանալ: Այնուհետև Մարդուկն իր պայծառափայլ շքեղությամբ բարձրանում է աստեղային կառքը: Սամգեր Ներուն, որը բռնել էր Երեմիայի ձեռքը, երկու անգամ վճռական կերպով շշնջում է նրան, որպեսզի կանգնի *մերկաբայի* այն լայն աստիճանին, որը հատկացված էր վկային: Միայն դրանից հետո նա ցատկում է կառապանի բարձրադիր նստարանին, որպեսզի Մարդուկի անունով բռնի սանձերը:

Պատերի միջով թափանցած երկնագույն ծիրանին անհետացել էր: Աստղային սրահում մթությունը գնալով խորանում էր, ինչպես երեք մարդկանց ճնշիչ լռությունը: Երբ հնարավոր էր տարբերակել դեմքի և ձեռքերի փայլող բծերը միայն, հանկարծակի բացվում են սրահի չորս դռները: Տարածության մթնշաղի մեջ դռներից յուրաքանչյուրի

մոտ ուրվագծվում է մի սև կերպարանք՝ ինչեղ ձայնով արտասանելով մի կարճ նախադասություն: Ահավասիկ սրանք են այդ արտասանված չորս նախադասությունները՝ «Իշթարն այստեղ է», «Թող երթն սկսվի», «Նվաճիր գարունը», «Ղեկավարիր աշխարհը»: Հազիվ են ձայները լռում, և փակվում դռները, Սամգեր Ներուն ձգում է սանձերը: Ճարճատումով ցատկում են կայծեր՝ այրելով դանդաղ կրակի մեջ կառքին լծված թևավոր վիշապը: Շագանակագույն նյութը, որից կազմված էր այդ կենդանին, այժմ ներկայանում է իբրև թանկաժեք խունկ, մի այնպիսի անուշաբույր խունկ, որի նմանը Երեմիան երբեք չէր շնչել իր տանը կամ Նոփում: Խնկի ծխի քուլաները լցնում են «Ճակատագրի որոշման սրահը», բայց տարօրինակ է, որ դրանք չեն թանձրացնում մթությունը, այլ հետզհետե փարատում են այն: Ամեն կողմից լուսավոր նուրբ ճառագայթներ են ներթափանցում ծխի քուլաների մեջ և ձևավորում անհասկանալի, բայց հանճարեղ նախշեր ու ոստայններ: Հրաշալի խնկի ծուխն ու դուրեկան բուրմունքը, ինչպես մի խոռոչավոր օղակ կամ շրջանակ, կամարներ են կազմում *մերկաբայի* շուրջը: Եվ քանի որ խավարը գնալով ավելի թափանցիկ էր դառնում, բացահայտվում է, որ խոռոչավոր օղակն ուղղակի գիշերային երկինքն է, որի միջով ճանապարհորդում են Մարդուկն ու նրա վկան:

Երեմիայի ունեցած առաջին հստակ զգացումն ու գիտակցությունն այն էր, որ այդ ճամփորդությունը տարօրինակորեն անշարժ է, բայց իրական: Բնականաբար, նա չէր կարողանում տարբերակել՝ արդյոք իրենք են շարժվում առաջ, թե ուղին է շարժվում իրենց ուղղությամբ: Իրականում, մտածում է նա, նշանակություն չունի դեպի առաջ կամ դեպի հետ շարժվելը, ոչ էլ ավելի վեր բարձրանալը կամ սավառնելը, այլ կարևորը հոգու երջանկաբեր լուսավորվածությունն է: Երեմիան անմիջապես չի անդրադառնում, որ ինքը սկսել է նորովի տեսնել ամեն ինչ, խանգարիչ թեփուկներն ընկել են իր աչքերից: Գիշերային երկինքը սկսում է բողբոջել ու ծաղկել, ինչպես *նիսան* ամսի ընթացքում մի լավ ոռոգված մարգագետին:

Այս վերափոխումն ինքնին այնքան էլ չի վերաբերում տարածությանը, որքան Երեմիայի՝ տարածության մասին ունեցած սեփական գաղափարին: Ամեն ինչ նրան թվում է հեռու և միևնույն ժամանակ՝ մոտ,

միևնույն ժամանակ՝ վերևում և ներքևում: Այո՛, նման գաղափարներ կորցնում են իրենց իմաստը, քանզի անսահման հեռավորը նաև ամենից մոտիկն է, և հակառակը: Երբ գիշերներն Անաթովթի բլուրներում շրջող տղան նայում էր աստղային երկնքին, շնչակտուր անձկությունը ճնշում էր նրա սիրտը: Այդ պարագայում նրան չէր օգնում նույնիսկ Տիրոջ մերձավորության գիտակցությունը, քանզի մարդու հոգին շնչահեղձ էր լինում սարսափի մեջ, երբ տեսնում էր երկնքի՝ իր համար անըմբռնելի կարգավորությունը՝ իր գտնված շրջապատի գլխապտույտ անկարգության համեմատ: Հիմա էլ հենց դա է պատահում: Գիշերային բողբոջող ու ծաղկող երկինքը բացահայտում է իր կարգավորությունը Երեմիայի աչքերի առջև: Դա է իրականության դեմքը: Տեսանողի զգայարանները հանկարծ օժտվում են մեկնաբանելու կարողությամբ: Նա սկսում է հրաշալիորեն տեսնել Սամգեր Նեբուի աչքերով, որը կառապանն է՝ նստած հենց իր հետևի բարձրադիր աթոռին: Ամենից առաջ թվերի և չափման մի անծանոթ հարբեցողություն համակում է Երեմիային: Նրա հայացքը, չիմանալով, թե ինչպես, անշարժ, բայց միևնույն ժամանակ շարժվող երկինքը բաժանում է իրար շաղկապված մասերի:

— Տես տները, տաճարները, վերին աշխարհների պարտեզները,— ասում է Սամգեր Նեբուի թավշյա ձայնը:

Եվ Երեմիան տեսնում է տները, տաճարները, պարտեզները, չնայած այս խոսքերը շատ անորոշ կերպով են ներկայացնում իր տեսածը: Բայց նա դեռևս չի կարողանում իր ամբողջ ուշադրությունը սևեռել կանգ առածի և շարժվողի վրա, քանզի չորս շարժվող բնությունները կլանում են իր զգայական կարողությունը: Այս չորսը, չնայած որ շատ հեռու են իրարից, թվում է, թե գաղտնորեն ուղղվում են դեպի Մարդուկի *մերկաբան*: Ամեն անգամ ավելի նյութականացած՝ նրանք ներթափանցում են խնկի ծխերի ծածկույթ: Սամգեր Նեբուի ձայնը հնչում է.

— Հրամանատարները մոտենում են թագավորին՝ տարածելու և իրագործելու համար նրա պատվիրանները:

Սամգեր Նեբուի այս խոսքերը խորհրդավոր կերպով օգնում են Երեմիային՝ հստակորեն տարբերակելու չորս պատվիրանակատար մոլորակների իսկական կերպարանքը: Արագ շարժվողները կազմում են մի վիթխարի խաչի ծայրակետերը, որոնց կենտրոնում է գտնվում Մարդուկի

մերկաբան՝ կանգնած կամ ընթացքի մեջ: Արևմուտքից շտապում է Իշթարը, արևելքից՝ Նաբուն, կեսգիշերից՝ Նինուրտուն, կեսօրից՝ Ներգալը: Այնուամենայնիվ, ինչքան էլ նրանք շտապում են մոտենալ կառքին, խաչի ծայրակետերի հետ եղած հեռավորությունը չի նվազում:

Երեմիայի խորհրդածությունը չորս էությունների՝ Ներգալի, Նինուրտույի, Իշթարի և Նաբուի մասին, ընդհատվում է մի հաղորդագրությամբ, որը Սամգեր Նեբուն հայտնում է Մարդուկ թագավորին.

— Հրամանատարները հավաքված են ու պատրաստ են լսելու քո հանձնարարությունը...

Անհիշելի ժամանակներից ի վեր այդպիսին է բանաձևը մի լուրի հաղորդման պարագայում, ինչպիսին է նաև Մարդուկի պատասխանը, որը հաջորդում է ամփոփ կերպով և մի փոքր բարձր ձայնով.

— Հրահանգում եմ պատվիրանակատար հրամանատարներին, թող շտապ կերպով առաջանան դեպի Երկնային Եփրատը, որպեսզի այն ուժերը, որոնց պատկանում են նրանք, պատրաստ լինեն:

Երեմիան բարձրացնում է հայացքը գնացող–շարժվողից դեպի կանգնած–շարժվողը: Երկնքի կապի ուղին՝ Ծիր Կաթինը, կատարյալ ու հստակ կերպով, մի փոքր դեպի արևելք թեքված, կամար է կազմում Ետեմենանկի աշտարակին պատկանող Ճակատագրի սրահի և Մարդուկի՝ դեպի երկինք սլացքի վրա: Աստղային վկան միանգամից հասկանում է, որ Բաբելոնը երկնային մի Եփրատ ունի, ինչպես Նոփը՝ գիշերային մի Նեղոս: Ծիր Կաթինը հենց երկնքի Եփրատն է, որից հրամանակատարները նոր ուժեր են հավաքում՝ տանելու համար դրանք Մարդուկին ճակատագրեր որոշելու այդ գիշերվա մեջ: Երեմիայի հայացքին երկնային այդ ուղին թվում է ինչպես ջրի մի սպիտակավուն հոսանք: Ձրի այդ հոսանքը բաղկացած էր անթիվ ալիքներից ու կոհակներից: Եվ վկայի տեսիլքում այդ ալիքների ու կոհակների յուրաքանչյուր կաթիլը բացահայտվում է որպես սքանչելի ոգեղեն էակ, հազար անգամ ավելի նուրբ և երկրայինից հեռու, քան չորս հրամանակատարների կոշտ ու կոպիտ ոգեղեն էությունը: Մի արտակարգ երանություն սեղմում է Երեմիայի կոկորդը, որով նա չի կարողանում զսպել զմայլանքի իր արցունքները: Գիշերային երկնքի միջոցով ամբողջական վերափոխման պահը գալիս–հասնում է իր վրա: Հիմա ոչ միայն Մարդուկ–Նաբուգոդոնոսորը, այլ հենց ինքը նույնպես

դարձել է կատարյալ կերպով «երկնային մարդ»: Այլևս իր մեջ ոչինչ չի բաժանում վերինը ստորինից, որոնք միաձուլվում են երանելի միասնության մեջ: Երկնային գետի հոսանքն անցնում է իր մարմնի միջով՝ իր գլխի գագաթից մինչև ոտքերի ներբանը: Ոգեղեն էակների հավերժական ընթացքը հոսում է իր միջով, և չկա այնպիսի ալիք կամ ճառագայթ, որը չի բխում իրենից: Իր հարբած երանության մեջ նրան թվում է, որ իր իսկ մարմինը և արյունը բաղկացած են աստղերից: Սիրո անօրինակ մի զգացում պաշարում է նրան, ինչպես նաև մի ձգտում՝ նետվելու տարածության մեջ, հանձնվելու աշխարհին: Այդ պահին Երուսաղեմն ու Իսրայելը մոռացության էին մատնված, և Տիրոջ անունն ինքնին մնում է իր հոգու խորքում, որպես տաղտկալի մի զգուշացում:

Մյուս կողմից էլ, Մարդուկի և նրա կառապանի միջև տեղի է ունենում ցածրաձայն մի յուրահատուկ հարց ու պատասխանի խաղ, որը սրբազան բանաձևումով սահմանվել էր շատ հին ժամանակներից ի վեր՝ ճակատագրի որոշման գիշերվա համար: Դա վերաբերում էր ժամանակի հեռավորությանը, որը կտրել էր Մարդուկն իր՝ դեպի երկինք թվացյալ կարճ վերելքի ժամանակ:

— Դու անցել ես քո «*սուքը*»,— հայտարարում է կառապանը, որպես թե ծանուցած լիներ ուղևորության առաջին հանգրվանը: Երեմիան գիտե, որ վաթսուն տարին Բաբելոնում «*սուս*» են անվանում:

— Հիմա ես որտե՞ղ եմ:

— Դու շտապել ես ու հասել քո «*ներին*»: Դրանով արդեն հատել ես վեց հարյուր տարի:

Հաջորդ բանաձևումը վերաբերում է Մարդուկի *սար*-ին, որում նա ներթափանցել է վեց անգամ վեց հարյուրական տարիների ընթացքում: Երբ դա նույնպես հաղթահարվել էր, Սամգեր Նեբուն սկսում է երգել.

— Ընդունիր քո համաշխարհային տարին:

Համաշխարհային տարի է կազմում վաթսուն *սարը* կամ մեծ օ*լումը*՝ մեծ հավիտենականությունը, որի վրա Մարդուկն այժմ տարածում է իր ճանապարհորդությունն ու զորությունը:

Արագընթաց թևավոր վիշապը, որն այլևս ավելի մեծ չէ, քան մի բազե, ուղարկում է խնկի մի նոր և ուժեղ ամպ, որը քաղցր բույրով ու ծխով պարուրում է ուղևորությունը դեպի երկինք: Գնալով հստականում է

շուրջբոլորը: Երեմիան կարողանում է տարբերակել Մարդուկի աստղային վերարկուի ադամանդներն ու ակնաքարերը: Կարծես թե այդտեղ սկսել էր բարձրանալ լուսինը, բայց այդ ժամին՝ *նիսան* ամսի նորալուսնի գիշերում, դեռևս լուսինը չէր բարձրացել: Լույսը գալիս էր այլ խորություններից: Սամգեր Նեբուի ձայնը թրթռում է զսպված հուզմունքից, երբ նա հաղորդում է իր ուսուցչին.

— Հրամանատարները պատրաստվում են հանդիպել քեզ: Ուժերի երրորդությունները, որոնց պատկանում են նրանք, պատրաստ են:

— Ո՞ւմ է բերում Նաբուն,— հարցրեց Մարդուկը բարձրաձայն:

— Նրանց, ովքեր ինձ են պատկանում,— լինում է նրան ներկայացնող Սամգերի պատասխանը,— ովքեր թեթև են և օդային: Նրանցից են Զրիոսը, որը քո ծրագրած մենությունն է ժողովուրդների մեջ, Երկվոր-յակները՝ խորաթափանց կասկածը, որը քեզ տանում է *«ների», «սարի»* և «համաշխարհային տարվա» միջով դեպի քո նպատակը, իսկ Զկները խորհրդանշում են քո ամբարտավան գոռոզության խորագույն նվաստացումը, երբ դու մուտք ես գործում ստորին քարանձավ: Դու նորից բարձրանում ես միայն այն ժամանակ, երբ խոնարհվում ես:

— Ո՞ւմ է բերում Իշթարը:

— Նրանց, ովքեր ինձ են պատկանում,— պատասխանում է կառապանն Իշթարի փոխարեն,— ովքեր բարգավաճ են ու ծաղկուն և քեզ հաճույք են պատճառում. Այծեղջյուրը, որի նշանի տակ դու ցանում ես սերմը, Ցուլը, որի նշանի տակ խնամում ես ցանքը, Կույսը, որի նշանի տակ հնձում ես, քանզի նա ծնում է որդուն, որը քեզ է ամբողջացնում:

— Ո՞ւմ է բերում Նինուրտուն:

— Նրանց, ովքեր ինձ են պատկանում,— ասում է Սամգերը՝ իբրև ներկայացուցիչ Նինուրտուի,— անպարտելի մարդիկ, ովքեր քո տանջանքներն են, Խեցգետինը, որը քեզ հյուծում է և սարսափով լցնում, քանզի նաև քո մարմինը մերկ է ծնվել քո մորից: Կարիճը, որը հավաքում է քո ատելությունը, և քեզ դնում է աշխարհի զարկերակի վրա՝ իբրև մի տզրուկ: Մահացածների դատաստանի Կշեռքը, որի վրա դու կկշռվես:

— Իսկ ո՞ւմ է բերում Ներգալը, որը կատարում է իմ կամքը:

— Նրանց, ովքեր ինձ են պատկանում,— հայտարարում է Սամգերը,— այսինքն՝ կրակի բոցավառ եռամիասնությունը՝ Առյուծը, որպես քո

ուժի բացահայտ կիրառում, Աղեղնավորը, որպես քո իշխանության խելամիտ տնտեսություն, և Վարձկանը, որպես դու ինքդ քո նշանի տակ:

Իր բաց աչքերով Երեմիան ուզում էր ներթափանցել նաև այն ոգեղեն էակների մեջ, որոնց վայրը *Շամաշն* է՝ արևի ուղեծրի գոտին: Այնուամենայնիվ, նրանց շրջապատող պատկերավոր աշխարհներն ըմբռնելի չեն երկրային առումով, ինչպես որ մոլորակների պատկերավոր աշխարհներն են: Դրանք խուսափում են նրանից: Նա տեսնում է միայն աստղերի մի փոքր խումբ՝ ներառված թեթև միգամածության մեջ, որոնց ձևը ոչ մի կապ չունի իրենց կրած խորհրդավոր անունների հետ: Զրհոսն իսկապե՞ս իր սափորից լայն ճառագայթներով անսահման ուժեր է դուրս բերում ու տարածում: Լողո՞ւմ են արդյոք ձկները երկնային Եփրատում: Աղեղնավորն արձակո՞ւմ է արդյոք իր նետը: Երեմիան այլևս չի կարողանում պատկերացնել իր տեսածը և այլևս չի կարողանում տեսնել իր պատկերացրածը: Անխորտակելի խաղաղության մի երանելի վիճակում նա կանգնած էր Մարդուկի կառքի աստիճանին՝ որպես երկնային մարդ՝ կազմված աստղային բնությունից: Այնուհետև նրա ականջները նույնպես բացվում են: Սամգեր Ներուի թավշյա ձայնը սկսում է նորից խոսել.

— Քանի որ չորսը և տասներկուսը հավաքված են քո աստվածության շուրջը, բարեհաճիր հնչեցնել եղանակի առաջին տոնայնությունը:

Նաբուգոդոնոսորի ձայնը գեղեցիկ չէր, այլ սուր և շատ սահմանափակ: Վերևից մի թեթև բզզոց պատասխանում է նրան, բայց նախքան Երեմիայի լսողությունը կկարողանար բաժանել դա հնչյունների, ներքևից լսվում է ձայնը բազմաթիվ քնարների ու տավիղների: Էսագիլա տաճարի քահանաներն իրենց երկրային նվագարաններով վերակրկնում են երկնային տաճարների երաժշտությունը: Տավիղների այդ ձայնն առաջին ստվերն էր Երեմիայի զմայլանքի և հափշտակվածության ճանապարհին:

Սամգերի բանաձևի հուզումնախառն խոսքերն ազդարարում են.

— Քո աստղը, որի մեջ հայտնվում ես դու, ով Մարդուկ, բարձրանում է գագաթը:

Նաբուգոդոնոսորի անտարբեր կերպարանքը շտկվում է: Ըստ երևույթին, նրա անվրդով ու խաղաղ տրամադրությունն ասես ցնցված էր գիշերային երկնքում ճակատագրի որոշումների ամեհի պահից: Նրա կրծքից դուրս եկած ծանր շունչը լսելի է դառնում: Նա սկսում է ցածր ձայնով

արձակել իր վճիռը, բայց վերջին խոսքերն արտասանելիս բարձրացնում է ձայնը տիրակալի հնչեղ շեշտով.

— Դուք՝ չորսդ, իսկ հինգերորդը և ձեր տերը ես եմ: Արև և լուսին, որ ձեզ թաքցնել գիտեք: Դուք՝ տասներկուսդ, որ եկել եք ինձ մոտ: Դուք՝ հազարավորներ, որ հեռացել եք ինձնից: Եվ ամենից առաջ դու, ով իմ վարձկան, իմ ժամանակաշրջանի ծառա, այն ժամանակաշրջանի, ուր ես փայլում եմ, լսի՛ր ինձ, և լսե՛ք ինձ: Ես, որ երկրի վրա կոչվում եմ Նաբուգոդոնոսոր, որդին՝ Նաբոպոլասարի, ճակատագրի որոշման այս պահին ձեր բոլոր ուժերի և իշխանությունների հետ ձեզ կապում եմ ինձ, իմ որդիներին և իմ տանը: Ես ձեզ կապում եմ մեկ *«ների»*, մեկ *«սուի»* և *«աշխարհի մեկ կարվա»* տևողությամբ: Թող որ ես լինեմ այն մաղը, որի միջով մաղվելով կզտվեն այն ճակատագրերը, որոնք դուք կհյուսեք, որպեսզի պատերազմի և խաղաղության միջոցով կատարվի իմ գործը և ամբողջանա:

Մարդուկն արտասանում է ճակատագրի տնօրինման վերաբերյալ կախարդական բանաձևը, որը սկիզբ էր դնելու աշխարհի մի նոր գարնան: Դեռևս լսվում էր նրա ծանր շնչառությունը տիեզերքի հանկարծակի և մահահանգույն լռության մեջ: Երեմիան սկզբում չէր հասկանում, որ կախարդական այդ անգութ բանաձևն էր, որ իրեն վախեցնում էր, խանգարում ու պոկում իր աստղային երանությունից: Այն գիտակցությունը, որ նա ձեռք էր բերում, հիասթափությունն էր, որն աճում էր ու վերածվում ակնհայտ կասկածի, որի համաձայն նույնիսկ աստղերի տեսարանն իրական ու ճշմարիտ մի տեսիլք չէր, ճիշտ ինչպես մահացածների մասին տեսիլքը: Ամենտիի միջով անցնելիս մեջը ձևավորվում է այն քողազերծող կարծիքը, թե՝ «մահը ձանձրալի է», որովհետև նրանում ոչինչ չկա երանելի, հիմա էլ իր մեջ սողոսկում է այն ոչ պակաս բացահայտող միտքը, թե՝ «աստղերն ունայնություն են»: Ոգեղեն էակները, որոնց ինքը կարծում էր, թե ճանաչել է դեռ մի քանի վայրկյան առաջ ճակատագրի որոշման սրահի խնկի ծխի քուլաներում, հետ էին քաշվել և կրկին դարձել ամեն գիշերվա հատուկ փայլող կայծեր: Իր սառուցյալ մենակությունը համարյա արատավոր էր թվում իր համար, որը խաթարում էր իր ներքին ներդաշնակությունը: Եթե հրեշտակները երկնային զորագնդեր են, ապա նրանք մոռացել են իրենց Տիրոջը և գովերգում են միայն իրենց սեփական ունայնությունն ու մոլորությունը: Նրանք նման են գիշերային

երկնքի տասներկու փայլող պալատների ինքնահավան ծառաներին, որոնք ոչ թե թագավորին, այլ իրենք իրենց են զարդարում փոխ առնված ուժերով և լիազորություններով: Այնպես, ինչպես Ամենտիի *«կա»*-երը միայն դիմակներ են, որոնք թաքցնում են իրենց ճչացող ոչնչությունը, նույնպես և աստղերը, Բաբելոնի տեսակետից, միայն դիմակներ են՝ իրենց բոլոր ճառագայթներով ու զորությամբ: Երեմիան հիշում է մի հին ասացվածք, որն իր հայրը՝ Քեղկիան, հաճախ օգտագործում էր՝ ասելով. «Իսրայելը ճակատագրի աստղ չունի»: Նոր է միայն նա հասկանում այդ խոսքը: Եվ իր սիրտն այդ պահին գիտե, որ չորսն ու հինգը, յոթն ու տասներկուսը, որոնք դարձի են եկել, և այն բյուր բյուրավորները, որոնք շեղվել են ու հեռացել, կազմում են մի խաբուսիկ միջանյալ պետություն՝ Աստծու ուրախության և Քոնիայի տառապանքների միջև, այսինքն՝ այս երկու մեծ իրականությունների արանքում:

Չե՞ս կարող լռել, Հակոբի որդի: Այդյոք քո սրտի խռովարարը նորից ճնշո՞ւմ է քեզ, որպեսզի նոր հարցեր առաջացնի: Երկրի մեծ տիրակալը բարձրացրել է քեզ՝ Անաթովթցի աննշան մարդուդ, մարդկային բոլոր չափանիշներից վեր, որպեսզի լինես գիշերային երկնքում քո ճակատագրի վկան: Ուրեմն, ուրախացիր: Հպարտ եղիր այս բարձրացման համար ու լռի՛ր: Սակայն ինչպե՞ս կարող է Երեմիան հանգիստ մնալ ու լռել, երբ իր աչքերի դիմաց ներկայանում է մի իսկական տեսարան, որը ջնջում է աստղերի տեսիլքը: Նա տեսնում է Քոնիային՝ տղա–թագավորին՝ շղթաներով կապված պատի խոնավ քարերին, արյունաշաղախ ձեռքերով և կոճերով: Եվ Քոնիան իր թշվառության մեջ այլևս կարիք չունի թաքցնելու իր ցավն ու տառապանքն իրեն ծաղրող թշնամու աչքից, երեխայի նման հառաչում է մեղմաձայն՝ շարունակ կանչելով Երեմիայի անունը դատարկության մեջ: Սակայն Քոնիայի դեմքից բացի, որը Երեմիան հենց նոր էր տեսել շատ հստակ կերպով, առաջ են մղվում նաև ուրիշ դեմքեր: Մի՞թե սա Հովսիան չէ արյունոտված ու աղավաղված բերանով իր մեծ հակամարտության օրերին: Եվ հիմա նրան թվում է, թե այդ դեմքերի շարքում ինքը ճանաչել է նաև երիտասարդ Սեդեկիային, որը հառաչելով սեղմում էր բռունցքներն իր աչքերի դեմ: Քոնիայի պատանեկան դեմքն ամեն անգամ ավելի արագ է փոխվում ու վերածվում հարյուր դեմքի՝ ծանոթ և անծանոթ: Նրանք բոլորն էլ ծեծի են ենթարկված, մերժված և

դուրս շպրտված, ինչպես Նինուրտուի մեջ: Երեմիան անընդհատ լսում է իր անունը: Այն անցնում է շատ հաստ պատերի միջով մինչև իր ականջը հասնելը: Քոնիայի անպաճույճ, բայց հստակ ձայնի մեջ, որը կանչում է իրեն, պարփակված են հազարավոր այլ ձայներ, բանտարկյալների մի բանակ, տառապանքի մի ծով: Երեմիան այլևս չի կարողանում լռեցնել իր սիրտը և հանդգնում է կատարել մինչ այդ չլսված մի բան՝ դիմելով ուղղակի Մարդուկին, որն արդեն հասել էր իր բարձունքին և տիրացել «համաշխարհային տարվան».

— Տեր,— շշնջում է նա,— դու, որ այս հանդիսավոր ժամին քեզ ես ենթարկում և կապում զորություններն ու իշխանությունները, հիշիր քո քաղաքում կապված մարդու մասին, հիշիր երիտասարդ Քոնիային: Ողորմածաբար բարձրացրու նրան իր նվաստացումից և արժանի դարձրու նստել քո սեղանին:

Ճակատագրի որոշման սրբազան սովորույթը դեռ չէր հասել իր ավարտին, քանի որ խնկի վիշապի մի մնացորդ դեռ շարունակում էր այրվել, և թագավորական աստղը դեռևս չէր լքել իր գագաթը: Հետևաբար կարելի էր ենթադրել, որ, ըստ մեծերի ընդունված կարգի, Մարդուկն անտեսել էր վկայի կատարած ծանր խախտումը: Եթե նաև Սամգեր Նեբուն էր մտածում այդպես, ապա այժմ նա բոլորովին անակնկալի է գալիս՝ Նաբուգոդոնոսորի արձակած հրահանգից.

— Պատասխանի՛ր նրան:

Մտորումի մի կարճ պահից հետո, մթության միջից գալիս է Սամգեր Նեբույի մեղմ ձայնը Երեմիայի ականջին.

— Աշխարհների մեկ տարին վաթսուն «*սար*» է: Ո՞վ է մարդը, որի մասին Մարդուկը մտածի:

— Անմեղ մարդու տառապանքը,— շշնջում է Երեմիան,— տևում է ավելի երկար, քան «համաշխարհային տարին»:

— Պատասխանի՛ր նրան,— հրամայում է Մարդուկը երկրորդ անգամ:

Մտորումի մեկ այլ կարճ պահ: Այնուհետև Երեմիայի թիկունքում լսվում է ձայնն ավելի ուժեղ և շեշտված.

— Պատմի՛ր ինձ ստեղծագործության օրերից սկսած մի պատմություն՝ տրորված մի որդի մասին, և ես քեզ ցույց կտամ, որ քո ոտքը չի ճզմել ոչ մի անմեղի...

Երեմիան պետք է հավաքի իր ամբողջ ուժը՝ զսպելու համար իր մարմնի ցնցումները: Այդ մարմինն այլևս աստեղային մարմին չէ.

— Ուրեմն, աստղերի ճակատագրի օրենքում կարեկցանքի ու գթասրտության ոչ մի տեղ չկա՞ շղթայված ու կալանավորված մարդու նկատմամբ:

Մարդուկի թիկնոցի գոհարեղենները զրնգում են: Երրորդ անգամ նա ասում է.

— Պատասխանի՛ր նրան:

Այս անգամ առանց մի պահ խորհրդածելու՝ անմիջապես գալիս է պատասխանը վերևից.

— Աստղերի ճակատագրի օրենքում ոչ մի այլ ողորմություն չկա, բացի կանխորոշված ողորմությունից:

Երեմիան բարձրացնում է հայացքը դեպի երկնային գետի անփայլ հոսանքը, որը շարունակում է հսկել ճակատագրի որոշման սրահի և Մարդուկի ճանապահորդության վրա: Սամգեր Նեբուն խոսել էր ճշմարտությունը:

— Ինչպե՞ս կարող եք դուք՝ հաշվվածներդ և անհաշիվներդ, այդտեղ՝ վերևում, ունենալ ողորմելու և ողորմած լինելու ազատություն, որը պատկանում է միայն ճշմարիտ Տիրոջ՝ Ամենակալին: Դուք, սակայն, գիշերային երկնքի բազմություններ, որոնցից յուրաքանչյուրն առանձնացված է և հաշվված, դուք միայն փայլուն ծառաներ եք, որ տերերի դերն եք կատարում Էսագիլայում: Ձեր մասնակցությունն ու դերն իշխանության մեջ կարող է լինել մակընթացության և տեղատվության, առողջության և հիվանդության, ծննդյան ու մահվան կարգավորումը կամ էլ, Եհովայի կամքով, ընթանալը ժամանակների միջով՝ ջրհեղեղյան ջրի սափորներով և աշխարհը հրդեհելու խեժե ջահերով: Դուք, սակայն, նախադրյալ կամ պատճառ չեք, այլ՝ հետևանք, դրա համար էլ ամբողջ գիտությունը սուտ է, որը ձեզ նախադրյալ է դարձնում: Դուք ավելի կապված եք, քան կապանքների մեջ գտնվող մարդը՝ Դավթի որդին, որի համար է այժմ միջնորդում Երեմիան:

Չնայած որ Երեմիան շատ լավ գիտեր, թե ինչ հետևանքներ կարող էին ունենալ իր խոսքերը Մարդուկի սրբազնագույն այդ վայրում, այդուհանդերձ, նա այլևս չէր կարող հրաժարվել նրանցից: Այժմ իրականանում է

ժողովուրդների մեջ որպես մարգարե իր ընտրված լինելու հանգամանքը՝ նախքան իր ծնունդը: Եվ այն, ինչ նա մարգարեացել էր Ամենտիի մեռյալներին, նույնն այժմ անում է մի շատ ավելի վտանգավոր վայրում՝ Բաբելոնի աստղապաշտ ժողովրդի համար.

— Լսե՛ք, Մարդուկ և բոլոր աստղեր, Հավերժականը միայն մեր Տեր Աստվածն է: Հավիտենականն է մեր միակ Տերը ճշմարիտ:

Երեմիան հանդիսավոր կամ նույնիսկ ամպրոպագոռ կերպով չի կատարում վերհիշյալ խոստովանությունը, որը մերժում է աստղերի գերակայությունը, այլ նա այդ անում է շատ քնքշորեն և համարյա ամաչելով այնպիսի մեծ բաների համար, որոնց մասին իր բերանն իրավունք չուներ լռելու: Աստղերը լսում են ուշադրությամբ: Մարդուկը, մտախոհ, բարձր թագով օժտված իր գլուխը շրջում է դեպի նա:

Գուցե այն հանգամանքն է փրկում մարգարեի կյանքը, որ միայն հզոր իշխանավորներն են լսում նրա վկայությունը Ետեմենանկիի աստղային աշտարակում: Միևնույն ժամանակ ցած են թափվում թևավոր վիշապի նյութեղեն կազմվածքի վերջին մոխիրները: Դռները բացվում են երկնքի չորս ուղղություններով: Սրբազան Նաբուի սրբազան եղբայրությունը սպասում է վառված կապույտ ջահերով՝ աշտարակի ամենաբարձր սենյակից ներքև առաջնորդելու Մարդուկին և ուղեկցելու նրան դեպի տաճար՝ դեպի «հանգույցը մարդկության միավորման», ուր նա արթուն անցկացնելու էր այդ ահռելի գիշերվա մնացած մասը: Արտաքին աստիճանների ստորոտում Նաբուգոդոնոսորը կանգ է առնում և շրջվում է դեպի օտարերկրյա մարգարեն, ում նա բարձրացրել էր լինելու աստղային վկա՝ զարնանամուտի առթիվ: Նաբույի ջահերի կապույտ լույսերի ներքո, նրա դեմքն իսկապես նման էր իր մոլորակը ներկայացնողի ոգեղեն բնությանը: Թեև շարժում էր շուրթերը, բայց ոչ մի բառ չի արտասանում: Հետաքրքրությամբ լարված, բայց միևնույն ժամանակ ծաղրականորեն դատապարտող նրա աչքերը հանգրվանում են Երեմիայի դեմքի վրա: Վերջում Մարդուկը շշնջում է ընդամենը երկու կարճ հրամայական բառ.

— Տուն վերադարձիր...



«Երեմիան Նաբուզոդոնոսորի առջև»

* * *

Քարավանը, որին միացել էր Երեմիան, իջևանում է Եփրատի այն նույն տեղում, ուր ճանապարհը թեքվում էր դեպի արևմուտք: Երբ քնում են վաճառականները, Երեմիան լուսնի ուժեղ լույսի ներքո բարձրանում է այն աստիճաններով, որոնք տանում են դեպի հինավուրց արձանագրությունը: Նա գտնում է այն խոռոչը նույնությամբ, ինչպես որ թողել էր այն. մարդկային ձեռք չէր դիպել նրան: Նրանից մեծ ջանք է խլում իրար սեղմված երկու կավե սալերի պոկելը: Նրանք մաքուր էին և չոր: Ոչ մի անձրևաջուր կամ որևէ մի խցանում չէր ներթափանցել ճեղքվածքի մեջ: Ոչ մի կենդանի չէր թողել իր հետքն այնտեղ: Ոչ մի մրջյուն կամ թրթուր ինքն իրեն չի սեղմել սալաքարերի արանքում: Այդուհանդերձ, նուրբ վուշից պատրաստված այդ տոկուն կտավը, որը թվում էր անքակտելիորեն հյուսված հավերժության համար, մեկ տարվա ընթացքում ամբողջովին քայքայվել էր այդ պաշտպանված, չոր ու մաքուր վայրում: Երեմիան այդ փչացած գործվածքը զգվանքով է պահում իր ձեռքում, որպես քայքայված մի մարմին: Մաշված, պատառոտված, դեղնագույն դարձած մի կտավ. դա էր ամենը, ինչը մնացել էր այն հիանալի ազդրագոտուց. մի խղճուկ մանվածք, որը հնարավոր էր մեկ ափում նույնիսկ պարփակել: Ոչ մի նշան ցույց չէր տալիս այդ մնասի պատճառը: Երեմիան նստում է Եփրատի ափին և սևեռուն կերպով նայում հոսող ջրերին: Իր գրկում կային չորացած ու քայքայված մանվածքի մնացորդները: Լուսինը և գետից առաջացած մառախուղը պտտվում են նրա շուրջը: Այդ պահին հայտնվում է նրա մտքում ազդրաշորի առակը, ինչպես որ ժամանակին հայտնվել էր իրեն կավի առակը բրուտագործի ձեռքում: Սպիտակավուն մանվածքը փաթաթված էր իր մարմնի կեսի շուրջը՝ իր սրտին մոտիկ: Այն ծածկում էր իր ստոծանին, ուր նրա մարմնի զգայուն թելերը միահյուսվում են իրար՝ կազմելու համար կյանքի մանվածքը: Մարմնից անջատվելով՝ վուշե գործվածքն անհասկանալի կերպով չորանում է: Առակում Տերը փաթաթում է Իսրայելին իր զգայուն կյանքի շուրջը, ինչպես Երեմիան էր փաթաթել մանվածքը: Լինելով Տիրոջ սրտի մոտ՝ այն մնում է անարատ, շուշանի նման ճերմակ, անձեռնմխելի: Հեռանալով Աստծուց՝ կարճ ժամանակվա ընթացքում այն կորչում է

ու մահանում թշվառ կերպով և անարգված: Արդյո՞ք այս մեկնաբանությունը վերաբերում է Բաբելոնում տասը հազար գերվածներին: Ինչքան ծանր էր ճնշում այժմ Երեմիայի սիրտն այն հանգամանքը, որ ինքը խուսափել էր աքսորյալներից՝ Քոնիայի համար անհաջող պայքարի պատճառով, որպեսզի իր համակրանքը չկորցնի: Ձեռքերն անհագիստ կերպով այս ու այն կողմ են շրջում քայքայված կտավը: Բայց արդյո՞ք այդ առակն այլ խոր իմաստներ չուներ: Արդյո՞ք ինքը, որպես կրողը վուշե այդ մանվածքի, փոխարինաբար կրողը չէր նաև Երուսաղեմի ճակատագրի: Շնորհիվ իրեն էր Տերը մի անգամ ևս հետաձգել իր պատժամիջոցները: Ինքը, սակայն, Քոնիայի հետ գնացել էր Բաբելոն, հանել էր վրայից ազդրագոտին, իսկ իր սրտից էլ հեռացրել էր տաճարն ու քաղաքը: Այդ բոլորն արել էր՝ վստահելով Սեղեկիային, որն իր սիրելի աշակերտն էր, և ում անձամբ օգնել էր բազմելու Դավթի գահին: Այժմ ինքն իր ձեռքում բռնած էր մի փչացած մանվածք՝ մի քայքայված ու անպիտան դարձած կտավ: Իսկ Երուսաղե՞մը...

Անհամբեր մարդու համար չափազանց դանդաղ էր ուղևորության ընթացքը: Որքան հեռանում էր Երեմիան Բաբելոնից, այնքան ավելի էր ծանրանում իր վրա աքսորյալների հոգսը: Իրեն տրամադրված ուղտի վրա նստած՝ նա ծրագրում է մի պատգամ ուղարկել գերվածներին, որն այնուհետև գիշերը, վրանի լապտերի լույսի ներքո, գրի է առնում: Դա բավականին երկար մի նամակ էր՝ ուղղված «աքսորյալների ավագներին».

— Տներ կառուցեք ու բնակվեցեք նրանցում: Պարտեզներ մշակեք, ծառեր տնկեք և օգտվեք նրանց պտուղներից: Կիներ առեք և նրանցից որդիներ ու դուստրեր ունեցեք: Նաև ձեր որդիները պետք է կանայք առնեն, իսկ ձեր դուստրերը՝ ամուսիններ, որպեսզի նրանք նույնպես որդիներ ու դուստրեր ունենան: Օտարության մեջ բազմացեք և երբեք մի՛ նվազեք: Խթանե՛ք այն քաղաքի բարեկեցությունը, ուր Տերը ձեզ գերեվարել է, և աղոթեցե՛ք նրա համար, քանզի նրա օրհնության մեջ կլինի նաև ձեր օրհնությունը...

Նա խնդրում է նրանց ապարդյուն հույսեր չունենալ, զգուշանալ գուշակներից ու կախարդներից, ինչպես նաև չվստահել նրանց տեսած կամ մեկնած երազներին: Այնուհետև նա հայտնում է, որ նրանց աքսորը պիտի տևի երկար և պիտի ավարտվի միայն Բաբելոնի հզորության վախճանով:

Երեմիան ավարտում է իր սրտագին հորդորների գրառումը և ձեռագիրը խնամքով պահում իր մոտ: Այնուհետև Ռիբլայում նա հնարավորություն է ունենում նամակն ապահով կերպով ուղարկելու Բաբելոն: Երբ արդեն հանձնել էր ձեռագիրը, մի հանկարծակի վախ սկսում է պատել սիրտը: Ինչ էր գրել նա նամակում. «Խթանեք այն քաղաքի բարեկեցությունը, ուր դուք այժմ աքսորված եք, և աղոթեք նրա համար»: «Աղոթեք ձեր բանտապահի համար: Օրհնեք ձեր ոխերիմ թշնամուն, որն ատում է ձեզ»: Արդյո՞ք նա իրոք գրել էր այս խոսքերը, որոնք ջնջում էին աշխարհի ընդունված կարգն ու գոյությունը, ինչպես որ դրանք կային: Դրանով նա պահանջում էր մարդկային սրտի ամբողջական կերպարանափոխում: Ո՞ր ժողովուրդն իր զայրույթի մեջ չէր քարկոծի նման մի մարդու՝ այդպիսի մի ուսմունքի համար: Ինչո՞ւ նա չէր գրել. «Աղոթեք Տիրոջը գիշեր ու ցերեկ Բաբելոնի կործանման և ձեր վերադարձի համար»...

Երեմիան գիտեր, որ իր այդ արտահայտությամբ՝ «Աղոթեք Բաբելոնի համար», ինքը մարտահրավեր էր նետել մարդու բնությանը, որը չէր կարող մնալ անհետևանք:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆՀԻՆԳԵՐՈՐԴ

ԵԶԱՆ ԼՈՒԾԸ

Օրեր շարունակ Երուսաղեմն ապրում էր տոնական խառնաշփոթի մեջ: Մեծ տիրակալի կողմից քաղաքի հանդուրժելի պաշարման հիշատակը համարյա դուրս էր մղվել մարդկանց հիշողությունից: Եթե մեկը խոսելու լիներ այդ մասին, նրան ակամայից լռության էին մատնում: Փառատոնը լավագույն միջոցն էր ընդդեմ դառն հիշողությունների: Երուսաղեմն այդ օրերին բավականաչափ պատճառներ ուներ տոնակատարությունների համար: Այնտեղ էր ամենից առաջ Սեդեկիան՝ երիտասարդ և պայծառափայլ թագավորը, որն անձամբ, իբրև շինարար, գերազանցում էր Հովակիմին, քանզի նրա գործերը չէին կատարվում իր սեփական ցանկություններն ու ագահությունը գոհացնելու համար, այլ արվում էին ի շահ ամբողջ ժողովրդի: Դեռ հազիվ թե մեկ տարի էր անցել պատահած աղետի վրայից (որի մասին ավելի լավ է չխոսել), Սեդեկիան արդեն անխոնջ աշխատանքով ամրացրել էր Երուսաղեմի պարիսպները, նոր օղակներով օժտել և ավելացրել մի շարք հոյակապ աշտարակներ ու ամրոցներ: Իր նմանը չունեցող մի աշխատանք՝ առաջին իսկ հայացքից վեհաշունչ ու վեհաշուք: Էլ ով հիմա չի հավատա, որ Սիոնն անառիկ է, նա պետք է խարանվի իբրև դավաճան:

Ամրությունների նոր կառույցները, սակայն, հազիվ թե առիթ էին տոնախմբության: Թագավորը հաջողության էր հասել ավելի մեծ բաների մեջ, և ժողովուրդը տոնելու ավելի կարևոր պատճառներ ուներ: Այն, ինչ երբեք չէր կատարվել փառաշուք ժամանակներում, Սեդեկիայի ղեկավարման տաղանդով վերածվել էր զարմանալի իրադարձության: Հուդայի երիտասարդ թագավորն ուղերձներ էր հղել հարևան երկրների թագավորներին և նրանց հրավիրել էր իր պալատ՝ Երուսաղեմ: Հրաշքը

պատահել էր: Նրանք ընդունել էին հրավերը: Նույնիսկ մեծազոր տիրակալներ, ինչպիսիք էին Տյուրոսի և Սիդոնի փյունիկյան ծովային թագավորները, այնքան էլ գոռոզամիտ չէին, որ մերժեին պատվել իրենց այցելությամբ Տիրոջ փոքրիկ պետությունը նրա կրած դժբախտությունից անմիջապես հետո: Մովաբի, Եդովմի և Ամմոնի թագավորները, սակայն, նախնական ժամանակներից ի վեր Հակոբի տան թշնամի հարևանները, իրենք իրենց մեծապես շոյված են զգում Սեդեկիայի հյուրընկալ հրավերից, և նրանցից յուրաքանչյուրը պատրաստվում է մեծածախս ու շքեղ ճամփորդության: Հաջողության գագաթնակետը լինում է Նոփի աստված՝ Հոփրա (Վափառ) փարավոնի այցելության խոստումը: Նա թեև անձամբ չի գալիս, բայց ուղարկում է իր միակ եղբորը, որը շատ մոտիկ էր գահին, որպեսզի, իբրև փարավոնի ներկայացուցիչ Երուսաղեմում, հովանավորի թագավորների և ժողովուրդների խաղաղության համախմբումը: Վեց թագավորներ, որոնց իշխանությունը տարածվում էր Նեղոսի ջրվեժներից մինչև հյուսիսի կղզիները, Արաբիայի օազիսներից մինչև Լիբիայի ափերը, համաձայնվում են ճանաչել Եհովայի քաղաքը, որը նվաստացման էր ենթարկվել, որպես աշխարհի այդ ժամանակվա ընթացքի կենտրոն: Եթե Սեդեկիան, որի կողքին կանգնած էր փարավոնը, իմաստնորեն կարողացել էր համախմբել ու միավորել բոլոր այդ թագավորներին և ժողովուրդներին, ապա ուրեմն ստեղծվել էր մի նոր կարգ, որի առջև պետք է խոնարհվեր նաև Բաբելոնը: (Ի դեպ, միևնույն ժամանակ Սեդեկիայի կողմից ուղարկվում է մի պատվիրակություն Մարդուկի մոտ՝ ճոխ նվերներով և հնազանդության ու հավատարմության խոստումներով): Հիմա այլևս ոչ մի մարգարե չէր կարող դժգոհել կամ բողոքել, որ Դավթի տունը խաթարում է Տիրոջ սուրբ դիտավորությունը: Աստծու ճանապարհները լավ ճանապարհներ են: Ոչ ոք չի կարող հավատալ կամ ընդունել, որ Նա երբևէ կփորձի թշնամանք տածել իր սեփական ժողովրդի նկատմամբ: Նա, անկասկած, գոհ էր իր ծառա Սեդեկիայից: Նախագավիթի թավամազ քարոզիչներն ամբիոնների վրա այլևս դույզն-ինչ չէին մտածում աղմկել կամ սպառնալիքներ կարդալ: Հովակիմի վերջին օրերը վաղուց արդեն մոռացության էին տրվել, որոնց ընթացքում այդ քարոզիչները չէին կարողանում զսպել իրենց սրտերում պատժիչ ելույթներն ու դառն խոսքերը: Այժմ նրանք կրկին

դարձել էին փրկության քարոզիչներ և իրենց ուժեղ ձայնը խառնում էին տոնական մթնոլորտին:

Պաստառներ և դրոշներ, արմավենու մեծ հովհարներ և ձիթենու ճյուղեր, ծաղկեպսակներ և պսպղացող ժապավեններ զարդարում էին քաղաքի դարպասները, աշտարակներն ու տները: Վեց հյուր թագավորներին շտապել էին դիմավորելու արքայավայել նվերներով: Տավարի և ոչխարների հոտեր, բոլորն էլ միամյա, հատկացված էին իբրև ողջակեզներ՝ ընծայաբերելու Աստծուն՝ յուրօրինակ և անտեսանելի Աստծուն, ում իր քաղաքը ժամանած հյուրերն ուզում էին հարգանքի տուրք մատուցել: Թագավորների բերած ընծաները՝ Դավթի տան համար, ցուցադրված էին հանրությանը. ազնվացեղ նժույգներ և մրցավազքի ուղտեր, մարտակառքեր և իշխանավորների կառեթներ, որոնց դիմաց կուտակվում էր հիացած բազմությունը: Տյուրոսի Հոբաղ թագավորն իր հետ բերել էր գեղարվեստական կրկնօրինակը մի նավի՝ փորագրված թանկարժեք փայտի վրա, որը, ի զարմանս Երուսաղեմի ոգևորված բնակչության, ցուցադրության է դրվում ամրոցի առաջին պահակատան բակում: Բայց դա միայն իսկական նվերի խորհրդանիշն էր, իսկականը իր լրիվ անձնակազմով մնում էր Տյուրոսի նավահանգստում և սպասում իր նոր տիրոջ հրահանգներին: Սիոնի ժողովուրդն այդ տոների ընթացքում չէր գնում քնելու, օր ու գիշեր հեղեղում էր փողոցները:

Տոնակատարությունների գագաթնակետն էր այն բարձրակարգ խնջույքը, որը Սեղեկիան պատրաստել էր իր հյուրերի համար՝ նրանց վերադառնալուց մեկ օր առաջ, «Լիբանանի անտառատանը»՝ միջնաբերդի մեծագույն պալատում: Նա ընտրել էր անտառային այդ տունը ոչ միայն իր սրբազան հնության և մեծ համբավի պատճառով, այլև նրա համար, որ դրա առջևի կողմը բաց էր և ժողովրդին թույլ էր տալիս տեսնելու նրա ներսակողմը: Ավելի շատ ժողովուրդ էր եկել, քան պահակատան գավիթը կարող էր ընդգրկել: Մարդիկ խռնված էին այնտեղ մինչև ամրոցի պարիսպներից այն կողմ, որտեղից ոչինչ չէին կարող տեսնել կամ կռահել: Ներս ընդունվածների թվում խցկվել էր նաև Երեմիան՝ անանուն կերպով և անճանաչելի, ինչպես շատ անգամ: Ընդամենը մի քանի ժամ էր անցել նրա վերադարձից: Նա հազիվ ժամանակ էր ունեցել մնալու համար մի տեղ ճարել իր համար, որն ի վերջո գտել էր քաղաքի

ստորին թաղամասերից մեկում՝ մի թամբագործի տանը: Նրա առաջին քայլը պետք է լիներ տաճար գնալը, ուր հույս ուներ հանդիպել Բարուքին: Բայց դա մի ապարդյուն փորձ էր բազմության հոսանքի դեմ գնալը և նրա միջով առաջանալը: Նա հրաժարվում է այդ մտքից: Մարդկանց ալիքը քշում է նրան դեպի անտառային պալատի պահակատան բակը, ուր նա ժամերով, մի ուժասպառ բանտարկյալի նման, սպասում է:

Բոլորի նման, ինքն էլ նայում է ոսկյա վահաններով զինված պահակների կրկնաշարքի արանքներից դեպի մութ ներքնասրահը: Արքայական այդ պահակախումբը հսկում էր դեպի սյունազարդ դահլիճն առաջնորդող լայն աստիճանները: Բայց միայն մայրամուտից հետո արժեք պիտի ունենար նրանց երկարաժամյա սպասումը: Աստիճանաբար դահլիճը լուսավորվում է ոսկյա բազմաթիվ յոթթևյան աշտանակների բազմագույն ճրագներով և լույսերով: Դրանք ընդհանուր առմամբ շողում էին կարմրառսկեգույն երանգներով և սփռում առատ ցոլքեր հավաքված ամբոխի վրա: Այդ լուսավորության մեջ սրահի մայրու սյուների միջև մի հսկա բեմ էր պատրաստված, որի վրա դրված էր թագավորների սեղանը, ինչպես մի զոհասեղան: Երկնագույն կապույտ սփռոցներ, ինչպես նաև խմելու և ըմպելու ոսկյա սպասքը ծածկում էին սեղանը: Դրանք բոլորն էլ Դավթի գանձերից էին, որոնք փրկված էին բաբելոնացիներից՝ պահված լինելով ամրոցի ստորին նկուղներում: Յոթ գահեր շրջապատում էին սեղանի կիսաշրջանը: Գահերը դրված էին մեկը մյուսից բավական հեռու: Առաստաղից կախված էին կանաչ տերևների և գունագեղ ծաղիկների շարոցներ, որոնցով զարդարված էին նաև սյունները: Հատակին շաղ էին տվել թարմ ծաղիկներ: Այդ թարմ ծաղիկներից Երեմիան հասկանում է, որ Ամիտալը նույնպես վերադարձել է: Գահերից յուրաքանչյուրի հետևում արդեն անշարժ սպասում էր համապատասխան թագավորի ծառայողական կազմը: Երևում էին փյունիկեցիների ծիրանագույն կոշտ հանդերձները, որոնց վրա արծաթյա թելերով ասեղնագործված էր, հարյուրավոր անգամներ, գեղեցիկ պոչով դելֆինը: Երևում էին եգիպտացիների յոթգույնի օձիքները, Ամմոնի և Մովաբի տարածքներում օգտագործվող լայն ծալքերով անապատային վերարկուները: Սրածայր գլխարկների կողքին տեսնվում էին գունավոր կլոր գլխարկներ, ինչպես նաև գոհարազարդ ու երկուական եղջյուրներով

զարդարված շքեղ սաղավարտներ: Շեփորի մի երկար ազդարարությունից հետո, որը տարածվում էր աշտարակից աշտարակ, թագավորներն իրար հետ դուրս են գալիս Սողոմոնի գահասրահից և մտնում են դահլիճ: Երկնագույն կապույտ զգեստով Սեղեկիան, որը փայլում էր երիտասարդական գեղեցկությամբ, հյուրերի մեջտեղում պահում է իրեն որպես տանտեր: Իր ձախ կողմում նստեցնում է փարավոնի եղբորը, իսկ իր աջ կողմում՝ Տյուրոսի Հոբաղ թագավորին: Հոբաղի կողքին նստում են Սիդոնն ու Մովաբը: Եգիպտոսի ներկայացուցչի կողքին նստում են Ամմոնը և Եդոմը: Դավթի տան ծառաները, ծածկված սափորներով ու ամաններով, շտապում են դրանք իրարից անջատ դնել յուրանչյուր գահի առջև: Այնուհետև ամեն մի թագավորին սպասարկում է իր սեփական սենեկապետը: Միևնույն ժամանակ քահանայապետը թագավորական այդ խնջույքի աստվածային մասը վերցնում է ու տանում տաճար՝ դնելու համար զոհասեղանին:

Թագավորները մեկնում են իրենց ձեռքերը դեպի կերակուրը, որն սկսվում է հացի արարողակարգի հանդիսավոր բեկանումով: Դա իսկապես հոյակապ մի ճաշկերույթ էր մարդկանց աչքի առաջ: Հյուրերը նստած էին անշարժ և ուղիղ՝ շրջված դեպի հետաքրքրասեր ամբոխը, ում արժանի էին դարձրել իրենց արքայական վսեմաշուք տեսքին: Յուրաքանչյուր կերակրատեսակից նրանք վերցնում էին ընդամենը մի փոքր կտոր, որը դանդաղ տանում էին դեպի իրենց բերանները և ուտում, կարծես թե դրանով պարզապես մի պարտականություն էին կատարում իրենց ժողովրդի համար և ոչ թե վայելում ճաշը: Ամեն պատառից հետո նրանք լվանում էին իրենց մատները ձեռքերի հատուկ ոսկյա ջրամաններիի մեջ, որոնք անընդհատ փոխվում էին: Միայն թե իրենց առջև բարձր գավաթներով դրված Շարոնի այգու գինուց օգտվում էին առատորեն: Թագավորների սեղանին լռություն էր տիրում: Նրանց խոսքը, լինելով ազդու և հեռահաս, ավելի լավ էր, որ չէր ասվում: Լռություն կար նաև հետաքրքրասեր ամբոխի շուրջը, որն իր հերթին սրում էր ականջները՝ լսելու թագավորի խոսքը, քանզի այն կայծակի պես լուսավորում էր աշխարհի խավարը: Թագավորները, սակայն, ծամում էին, խմում և պահում զգուշավոր ու համառ լռություն: Ճաշողների համայնքը, որին միացել էին իրենց տարածքներից յոթ տիրակալներ, ավելի խոսուն էր, քան

որևէ արտասանված բառ: Հնչում էր միայն սաղմոսների, սրինգների և երգչախմբային ձայների մի նուրբ երաժշտություն, որի երաժիշտներին ու երգիչներին Սեղեկիան պահել էր թաքնված մի անկյունում:

Երեմիան հոգնել էր անվերջ ճանապարհորդությունից և ոտքի վրա երկար մնալուց: Այն տենդը, որով նա բռնվել էր Եփրատի ափերին, այժմ եռում էր նրա երակներում: Նրա աչքերի առաջ՝ դահլիճի վառվող լույսերի ներքո, պտտվում էին թագակիրների շքեղափայլ կերպարանքները: Գլխապտույտը սպառնում էր նրան գետին տապալել: Նրա սրտի վրա ճնշող տագնապը դեռ տեղի չէր տվել մտքի պարզության: Ինչ էր պատահել վուշե մաքուր կտավից պատրաստված գոտու հետ, երբ այն հեռացրել էր իր մարմնից. այն քայքայվել էր ու փչացել:

Սպասավորները սեղանից վերցնում են կերակրի վերջին ափսեն: Սեղեկիայի կողքին, սակայն, հայտնվում է նիհար ու բարձրահասակ մի մարդ, որը թագավորի առջև դնում է ոսկե մի հսկա բաժակ և լցնում է այն կարմիր համեմված գինով: Նիհար տղամարդը բարձրացնում է գլուխը: Մուգ մաշկով մի դեմք Քուշի ցեղից: Հնարավո՞ր է արդյոք, որ այդ կիրթ շարժուձևերով, զուսպ և շրջահայաց մատուցողն Աբդիմելեքն է՝ Երեմիայի մյուս աշակերտը՝ անդադար հարցեր տվող այն փոքրիկ սատանան:

Սեղեկիան բարձրացնում է Դավթի գերդաստանի ծանր բաժակը, կարճ ժամանակով դնում է այն իր շրթունքերին և խմում մի կում, այնուհետև բաժակը փոխանցել է տալիս սեղանակիցներին՝ դրսից ժողովրդի հայացքի առաջ: Այդ պահին պատահում է այնպես, ասես մեկը բռունցքի մի ուժգին հարված է հասցնում ուղղակի Երեմիայի սրտին: Ինչ էր դա. Տիրոջ ցասման բաժակը... Ճիշտ այնպես, ինչպես տեսիլքում էր, բաժակը բոլորին մատուցելուց հետո այն վերադարձնում են իր նույն տեղը՝ սեղանի կենտրոնը: Ոչ մի ջղաձգություն չի նշմարվում թագավորների դեմքին, այլ, ընդհակառակը, գոհունակության մի ժպիտ է ուրվագծվում այնտեղ, ինչպես գոյանում է մի հաջող գործի ավարտից հետո: Նրանք վեր են կենում իրենց տեղերից և եղբայրաբար ձեռք ձեռքի բռնած՝ Երուսաղեմի վկայության առաջ մի շարք են կազմում: Երգչախմբի ձայները լռում են: Լռությունը գնալով ավելի է ծանրանում: Եթե չլիներ Երեմիայի ուղեղում աճող տենդը, այդ պահին Եհովային հեշտ չէր լինի իր խոսքը դնել նրա բերանում և նրա միջոցով արտաբերել այն.

— Ես իմ զորությամբ և հաղթ բազկի շնորհիվ ստեղծել եմ երկիրը, մարդն ու կենդանին և այն ամենը, ինչ կա երկրի երեսին... Ես դրանք կհանձնեմ նրան, ով հաճելի է իմ աչքին...

Երեմիայի շուրջը հավաքված ամբոխը, որն ակնկալում էր լսել մի օրհնության երգ՝ նվիրված թագավորների ճոխ խնջույքին, մի քիչ ավելի է սեղմվում իրար՝ տեղ բացելու համար երգողին: Նրանց մրմնջոցը քաջալերում է նրան շարունակել: Տենդի մեջ գտնվողը երգելիս ավելի ուժ է տալիս իր ձայնին.

— Բայց ես երկիրը տալիս եմ իմ ծառայի ձեռքը... Իմ ծառայի՝ Բաբելոնի թագավոր Նաբուգոդոնոսորի ձեռքը... Դաշտի գազաններն ու կենդանիները նույնպես պիտի հնազանդվեն նրան...

Ճի՞շտ են լսել արդյոք: Ի՞նչ իմաստ ուներ այդ երգը: Բոլորը զարմացած իրար են նայում: Թագավորները նույնպես հարցական նայում են իրար: Բորբոքված մարդուն թվում էր՝ տեսնում է թագավորներին կիսաշրջան կազմած, իրար ձեռք բռնած, գլուխները խոնարհած, կրծքները դեպի առաջ, ինչպես յոթ եզներ՝ լծված մեկ լծի: Ինչպես նախկինում, հիմա էլ միապաղաղ ու մելամաղձոտ մեղեդու միջից լսվում է Եհովայի մրմունջը.

— Այն թագավորը, որը չի ուզում ենթարկվել ու ծառայել... Ազգեր ու թագավորություններ, որոնք չեն խոնարհվում իմ ծառայի՝ Բաբելոնի արքա Նաբուգոդոնոսորի, լծի տակ... Այդպիսիններին կրակով, սրով, սովով ու ժանտախտով պիտի հետապնդեմ ու պատժեմ... մինչև որ ոչնչացվեն Նաբուգոդոնոսոր արքայի ձեռքով...

Ներկա գտնվող մարդիկ չեն կարողանում հավատալ իրենց լսածներին: Երգն այդ երեկո այնքան վրդովեցուցիչ էր, որ ոչ ոք չէր ցանկանա խոստովանել, որ հասկացել է այն: Թագավորները լսո՞ւմ էին արդյոք երգողի խոսքերը: Անհանգստությունը տարածվում է նաև պալատի սյունազարդ սրահում: Հյուրերը շշնջալով խոսում են Սեդեկիայի հետ: Ամբոխի միջից, սակայն, ճիշտ պահին ինչած մի կանչ վերջ է դնում տանջող լարվածությանը.

— Դա մի գիժ է... դա մի հիվանդ մարդ է...

Երեմիան իր մտքում թեթևացած համաձայնում է: Իրականում, այո՛, ինքը մի հիվանդ մարդ էր: Այդ ընթացքում տենդի ուժը նրան զցում է իր շուրջը գտնվող մարդկանց գիրկը:

Համենայն դեպս, Երեմիան չի հանդուրժում, որ հիվանդությունը տիրապետի իրեն: Հաջորդ առավոտ նա վեր է կենում, մի դույլ սառը ջուր է լցնում իր տենդահար մարմնի վրա, իջնում է թամբագործի արհեստանոցը և գնում մի հին ու փտած լուծ՝ ծանր ու կոպիտ մի գավազանի հետ, որով խթանում են եզները: Ծաղրական հայացքները սևեռվում են նրա վրա, երբ նա, այդ գավազանին հենած, լծի ծանրության տակ գրեթե կքած, երերալով դուրս է գալիս արհեստանոցից:

Երուսաղեմն այդ ժամերին շատ ավելի կենսունակ էր, քան նախորդ օրը, քանզի տեղի էր ունենալու Սեղեկիայի թագավորական հյուրերի հրաժեշտի հանդիսավոր արարողությունը: Թագավորի և արքունիքի համար դա այնքան էլ հեշտ օր չէր: Նույնպես և Երուսաղեմի ժողովրդի համար, որը չէր ուզում բաց թողնել հրաժեշտի շքեղ դրվագներից որևէ մեկը: Այդ օրը շատ քիչ կանայք միայն տանը կերակուր էին պատրաստում: Կանանց և պարմանուհիների ցուցադրվելը փողոցում՝ անցորդների հայացքի դիմաց, թեև հակասում էր սովորությանը, արժանապատվությանն ու ճաշակին, այդուհանդերձ, այդ եզակի և յուրահատուկ առիթը, որն այդ սերունդն այլևս չէր տեսնելու, ճիշտ չէր լինի բաց թողնել: Նրանք՝ կանայք և պարմանուհիները, զույգերով կամ փոքրիկ խմբերով անխոնջ շրջում էին փողոցներով: Ահավասիկ, Սիոնի դուստրը քայլում է՝ ամբողջությամբ ծիրանիներով պաճուճված: Նրա ապարանջանները զրնգում են, նրա այտերը շպարված են, նրա հոնքերը պոկված են և դրանց տեղը ներկված, մատների եղունգները փայլեցված են ոսկով: Նա կրում է բարձրակրունկ ու նուրբ սանդալներ, իսկ իր կոճերի շուրջը կապված են փոքրիկ զանգակներ, որով նրա քայլերը դառնում են ավելի նուրբ ու գայթակղիչ, քան երբևէ: Տիրոջն անհաճո լինելու համար չէ, որ Սիոնի դուստրն այդքան նրբագեղ կերպով է զարդարված, այլ որպեսզի հաճույք պատճառի այն օտարներին, որոնք քաղաք էին եկել իրենց թագավորների հետ:

Քանի որ մայրերն ու մեծահասակ քույրերը չէին հսկում տունը, ինչպես դա անում էին սովորական օրերին, առանց հսկողության մնացած երեխաներն առիթ են գտնում դիմելու փախուստի: Փողոցի տղաների բանակը քաղաքը դարձնում է անապահով: Փողոցի այդ տղաներն առաջինն էին, որ խանդավառ բացականչություններով հավաքվեցին վզին

եզան լուծ դրած ծռամեջք մարդու շուրջը, ապա հետևեցին նրան՝ որպես գիսավոր աստղի պոչ: Արդյոք նա մի խեղկատա՞կ էր, որից մարդ ակնկալում էր զվարճալի ներկայացումներ, գուցե չար ոգիներից բռնված մեկն է, կամ պարզապես մի անվնաս հիմար, որը հաղթանակի այդ օրը քայլում է, ինչպես լծկան եզը հերկելիս: Նշված երեք տարբերակներն էլ հավասարապես հաճելի էին փողոցի աղմկող տղաների համար: Ծիծաղող մարդիկ նույնպես միացան հավաքվածներին՝ հետաքրքրվելով, թե դեպի ուր է տանելու նա: Մի քանի արժանապատիվ տղամարդ ճանաչեցին Եհովայի մարգարեին, որի խոսքն իրականություն էր դարձել վերջին շրջանի ծանր օրերին: Նրանք տխրությամբ շարժեցին իրենց գլուխները այդ ընտրված մարդու համար, որն այդ աստիճանի նվաստացել էր ու դարձել փողոցի ծաղրուծանակի առարկա: Ինչ սարսափելի պատկեր օրինության այդ օրվա մեջ, բայց, ի վերջո, այդպիսին է մարգարեների գործելակերպը. ամեն գնով մարդկանց ուշադրությունը գրավել, նույնիսկ ամենախայտառակ միջոցով: Հարգարժան մարդիկ, չընդունելով նման հավակնոտ ինարամտություն, դժգոհ հեռացան: Այնուամենայնիվ, Երեմիան իրեն դեպի առաջ էր մղում զոհաբերվող կենդանու նման անտարբեր՝ առանց հաշվի առնելու, եթե այդ զոհաբերությունն օգտակար է կամ ապարդյուն: Միայն մի ծանր զգացողություն ճնշում էր նրա հոգին. այն, որ դա պետք է այդպես լինի:

Տաճարի դարպասի մոտ կաշվեգոտի կրող պահապանները ցրում են ծաղրող ամբոխին: Բարձրաստիճան քահանաներից մեկը պետք է ճանաչած լիներ Երեմիային, որպեսզի թույլ տային նրա մուտքն այնտեղ: Աշխարհիկ զբաղմունքներին նվիրված այդ օրը տաճարը հիմնականում լցված էր Աստծուն ծառայողներով: Քիչ մարդիկ միայն խմբված սպասում էին ունկնդրելու քարոզիչներին կամ մատուցելու համայնական աղոթքներ: Երեմիան դեռ սյունասրահ չհասած՝ Բարուքը վազելով դեմն է ելնում: Նրա վերադարձի լուրը տարածվել էր տաճարում, և աշակերտը շտապել էր ամբողջ քաղաքով մեկ որոնելու իր ուսուցչին: Հիմա, սակայն, Բարուքի աչքերը մտահոգ կենտրոնանում են եզան լծի վրա, որը խորապես ճնշում էր վերադարձած ուսուցչի վիզը: Նա սարսափով խուզարկում էր Երեմիայի տենդահար նայվածքը: Այդքան ժամանակ բացակայությունից հետո դա մի մելամաղձոտ և տագնապալից հանդիպում էր:

Ոչ միայն Երուսաղեմը, այլև Բարուքն ինքն էլ ամբողջովին վերափոխվել էր: Այն իմաստուն մարդը, որը գիտեր կարդալ Երեմիայի սիրտը, ինչպես իր սեփականը, թվում էր, որ այլևս ոչինչ չէր հասկանում: Երեմիան, նրան տեսնելով, անմիջապես հասկացել էր, որ Տերն այս վերջին հոգուն անգամ օտարել էր իրենից:

— Քաղաքը տոնական շքեղությամբ է զգեստավորված... Իսկ Երեմիան... Ինչ է նա կրում... Ինչ է պատահել իմ տիրոջը...

— Ինձ հայտնի է դարձել այն, ինչ պատահելու է,— ասաց Երեմիան կոշտությամբ,— և ես կրում եմ փայտյա այն բեռը, որը դրվել է ինձ վրա...

Բարուքի խոսքերը մի տարօրինակ ջերմություն հաղորդեցին, երբ նա ասաց.

— Միթե չի պատահել մի արտակարգ լավ բան... Միթե թագավորը հրաշալի բաներ չի արել քաղաքի և երկրի համար... Թշնամին այլևս չի համարձակվի խանգարել Սիոնի խաղաղությունը...

— Ո՞վ գիտե, թե նա ինչ է անում,— ասաց Երեմիան խռպոտ ձայնով:— Լավը կարող է չարին ծառայել, ինչպես չարը՝ լավին...

Աշակերտը լռեց: Սակայն ուսուցիչը զգում էր, որ նա, ինչպես մնացած բոլորը, իրեն համարում են հոգեպես խանգարված ու տարօրինակ: Քիչ-քիչ այդ «մնացյալները» նույնպես մեծ հետաքրքրությամբ հավաքվում են Երեմիայի շուրջը, քանի որ ասվում էր, որ տևապես դժգոհ այդ մարդը նույնիսկ այդ օրվա շքեղությամբ ու փայլով չէր բավարարված և մտածել էր այդպիսի՝ առանձնապես զարմանալի ու գռեհիկ ձևով ներկայանալ իր տուն վերադառնալու առիթով: Հավաքված պատվավոր մարդկանց թվում էին նաև Ահիկամը, Գեդալիան ու Միքիան: Սափանի որդիները ցավագին ու դժգոհ հայացքով նայում են իրենց հին ընկերոջը, որի համար նրանք այնքան համարձակորեն պայքարել էին Հովակիմի օրոք: Ո՞րն էր իմաստը լծի այդ վրդովեցուցիչ պատկերի, և այն էլ Աստվածօրհնյալ ձեռքբերումների տոնական այդ շրջանում: Նրանք բոլորն էլ մտածում էին, ինչպես Բարուքը, կամ, ավելի ճիշտ, Բարուքն էր մտածում նրանց նման: Արքայի խելամիտ խորհրդականները համաձայն էին, որ Սեդեկիայի դաշինքը թագավորների հետ վերջնական փրկություն էր, որը հաճո էր Աստծուն, և որի պատրաստությանն իրենք էլ խորհրդով

և գործով բերել էին իրենց մասնակցությունը: Սակայն ահա, այս անսովոր մարդը վերադառնում է Բաբելոնից: Սա այն մարդն է, որը չի ընդունում որևէ բան, որ չի բխում իրենից, և արհամարհում է ուրիշի արածը: Երեմիան մնացել էր բոլորովին մենակ, քան երբևէ: Այդուհանդերձ, նա խուսափում էր որևէ բանավեճից: Ի վերջո, մի տարեց ու պատվարժան մարդ միացավ հավաքվածներին, որը մեղմաբարո հայացքով նայում էր Երեմիայի լծին և բարեհաճությամբ իրար էր շփում իր դողացող ձեռքերը: Սոփոնիան՝ Շեմի առաջին խնամատարը, ամենասուր հակադրությունն էր իր նախորդի՝ Փաշհուրի: Նա, անկասկած, մի խաղաղասեր ու խաղաղարար անձ էր, թեև ոչ բոլորովին առանց չարության: Չնայած նա չէր նայում Երեմիային՝ այդ հայտնի մարգարեին, այդուհանդերձ, նրա խոսքերն անուղղակիորեն ուղղված էին նրան: Սոփոնիան հայտարարեց, որ վրդովմունքի ու զառանցանքի մեջ գտնվող խելագար մարդկանց համար, որոնց վրա ինքն ի պաշտոնե վերակացու է նշանակվել, կլինի մի հոգատար ընկեր այնքան ժամանակ, որ նրանք կգործեն ողջամիտ սահմանների մեջ և գայթակղության տեղի չեն տա: Այդուհանդերձ, գայթակղությունների պատճառով առաջացած հարցերը կարող են իր պես հանգիստ ու խաղաղասեր մարդուն զայրացնել ու կատաղության մղել: Այնուհետև, երբ նա այս քողարկված զգուշացումը կատարեց Երեմիայի համար, ցույց տվեց սյունազարդ նախագավիթի աստիճաններին այդ նշված «զառանցողներից» մեկին, որն այդ ընթացքում քարոզում էր մի փոքր խումբ մարդկանց առջև: Շեմի նոր խնամատարը տվեց նաև Անանիայի անունը, ում բարձր էր գնահատում որպես Տիրոջ առջև լավ վարքի ու չափավորության հոյակապ օրինակ:

Ծանրորեն հենվելով իր գավազանին՝ Երեմիան մոտեցավ Անանիային: Իր հին պաշտոնակցի դեմքը փայլում էր եռանդով ու կայտառ առողջությամբ, քանի որ նա գիտեր, թե ինչպես պետք է իմաստուն օգտագործեր իր շնորհը, առանց բոլորովին մեկ կողմ ծռվելու, ինչպես քամու դիմաց տատանվող եղեգ: Ավերածության օրերին Անանիան իրեն հեռու էր պահել ամեն ինչից: Նրա գործունեության վրա ոչ մի ստվեր չկար: Իր թևի վրա նա սովորաբար կրում էր ոչ հարմարավետ մազե թիկնոցը, որպես վայելչատես ապացույց իր մարգարեական պաշտոնի: Անանիայի ձայնը պայծառ էր ոչ պակաս, քան իր դեմքը, երբ մարգարեանում է.

— Միայն երկու տարի,— ասում է Զորաց Տերը,— ևս երկու տարի, որից հետո ես պիտի փշրեմ լուծը Բաբելոնի մեծ տիրակալի: Այնուհետև ես հետ՝ այստեղ պիտի բերեմ տաճարի գանձերը, նրա ամբողջ սպասքը, որ գողացել էր Նաբուգոդոնոսորը: Եվս երկու տարի միայն, որից հետո ես այստեղ պիտի բերեմ Քոնիային և բոլոր Բաբելոն աքսորյալներին: Քանզի ես պիտի փշրեմ լուծը...

Նախադասության կեսին Անանիան կանգ առավ: Նրա աչքերը ճանաչեցին եզան լծի տակ կքած Երեմիային: Նա կարմրեց, բերանը դողաց: Ամոթն ու կասկածը կարծես թե խեղդեցին նրա ձայնը: Աշխարհի իմաստուն մարդը մեկեն կարծես թե մի տղա լիներ՝ բռնված հանցանքի վրա իր ուսուցչի կողմից: Երեմիան, այնուամենայնիվ, հարգալից ողջունեց նրան՝ ձեռքը սրտին դրած:

— Ամեն,— ասաց նա հանգիստ ձայնով,— Տերը թող քո խոսքի համաձայն կատարի, Անանիա: Թող Նա տուն բերի գերված Քոնիային և Բաբելոն աքսորյալներին...

Անանիան այդ սրտաբուխ արտահայտության վրա թեթևացած խոր շունչ քաշեց: Տուն վերադարձած մարդու անսպասելի հայացքը, ում ինքը կարծում էր, թե շատ հեռու է գտնվում, ցրտահարել էր իր էությունը: Նա սպասում էր այդ անզիջող մարդու բերանից ամոթալից խոսքեր, դառն քննադատություններ լսել: Սակայն նրա մեղմ ու սիրալիր վերաբերմունքի դիմաց Անանիայի սիրտը լցվեց երախտագիտությամբ և, ձեռքը սրտին դրած, ինքն էլ խոնարհվելով ողջունեց նրան:

— Երուսաղեմի ժողովուրդ,— ասաց նա հաճոյախոսելով,— ահա Երեմիան տուն է վերադարձել իր ճանապարհորդությունից: Այն Երեմիան, որի հետ է միշտ Տերն ու Նրա ճշմարտությունը...

Զարմանքի մրմունջներ են ուղեկցում այս ողջույնի խոսքին, որոնք վերաբերում են ոչ թե մարգարեին, այլ ավելի նրա դրած լծին: Երեմիան մերժում է շողոքորթությունը.

— Լսի՛ր, Անանիա, և դուք՝ մյուսներդ էլ, լսե՛ք: Մարգարեներ են եղել ինձնից և քեզնից առաջ: Եվ նրանք մարգարեացել են շատ երկրների ու հզոր թագավորությունների մասին, ինչպես նաև պատերազմի, արհավիրքի ու ժանտախտի մասին: Բայց լինի դա պատերազմ, թե խաղաղություն, լինի աղետ, թե փրկություն, մարգարեի ճշմարտությունը չի

ճանաչվում իր կատարած մարգարեությամբ, այլ այդ մարգարեության կատարումով, գուցե նաև շատ ժամանակ անց... Թող ճշմարտությունը լինի քեզ հետ, Անանիա, և ոչ թե ինձ հետ...

Մինչ Երեմիան փորձառու վարպետի զգուշավորությամբ և համեստությամբ տխուր կասկածի տակ էր դնում մարգարեանալու ողջ արվեստը, Անանիան կարծես թե ընկղմվել էր երազների մեջ: Շուտով, սակայն, նա շտկում է իր մի քիչ ճարպակալած մարմինը: Նրա դիմագծերի վրա զգացվում էր մի կատաղի լարվածություն, ասես թե Եհովայի մրմունջը հասել էր նրան ու ցնցել նրա ողջ էությունը: Նա արագ մոտենում է Երեմիային, և նախքան նրա անդրադառնալը՝ մեկեն հանում է լուծը նրա ուսերից: Այնուհետև նա փտած ու ծռված փայտը պահում է մարդկանց աչքերի դիմաց: Լարվածությունից նրա դեմքը դարձել էր մուգ կարմիր: Պարանոցի երակներն ու ջիղերը մեծապես ուռել էին: Լավ խնամված ու հարդարված տղամարդը նման էր սյուներ տապալող Սամսոնին: Նա կոտրեց որդնած լուծը և բաժանեց երկու մասի: Անանիան դրանով կատարեց ոչ միայն մի խորհրդանշական գործողություն, այլև ուժի մի հոյակապ ցուցադրություն: Շնչակտուր ձայնով նա ցնծությամբ բացականչեց.

— Ես այսպես պիտի կոտրեմ... երկու տարի հետո... Բաբելոնի արքա Նաբուգոդոնոսորի լուծը... ժողովուրդների պարանոցից... ասաց Զորաց Տերը...

Անանիայի շուրջը հավաքվածները նույնպես ուրախացան: Իրենց մարգարեն շատ ավելին էր արել, քան պարզապես մարգարեանալը: Նա կանխագուշակել էր ապագան և Տիրոջ օգնությամբ ճիշտ ուղղություն էր տվել: Կոտրված լուծն աշխարհի ընթացքի վրա մի շարունակական և անհաղթելի ազդեցություն գործեց: Երեմիան մի տարօրինակ գոհունակություն էր զգում: Նրա սիրտը միշտ համակրանքով էր լցված Անանիայի նկատմամբ, թեև երբեք չէր կարողացել վստահել նրան: Ո՜հ, ինչքան պատրաստ էր նա հիմա վստահել Անանիային, որի ձեռքն ազատել էր իրեն գարշելի բեռից: Հոգով և մարմնով նա իրեն ավելի թեթևացած էր զգում:

Հրաշագործ քարոզիչը հրճվում էր գովեստների և օրհնության խոսքերի առատությամբ, չնայած որ իր աչքերը հարցական կերպով միշտ

թեքվում էին դեպի Երեմիան: Վերջինս մեկ անգամ ևս ասաց՝ ամեն, և ձեռքերով եղբայրաբար դիպավ տաճարում և արքայի մոտ իր կատարած առաջին ծառայության պաշտոնակցին: Հետո նա ուրախությամբ գնաց իր ճանապարհով, չնայած որ նա՝ իբրև մարգարե, ժողովրդի առջև պարտություն էր կրել: Նա օրհնում էր այդ պարտությունը: Երանի թե դա լիներ Աստծու արդարության համաձայն, ամբողջական և վերջնական: Բարուքը դժգոհ հետևում էր նրան: Աշակերտը տառապում է իր ուսուցչի անհասկանալի վերաբերմունքի ու ձախողության պատճառով:

Նրանք ուղղվեցին դեպի նախագավիթի հարավային պարիսպը: Դեռ չէին հասել այնտեղ, երբ Երեմիան հանկարծ ընկրկեց, ուժգին հառաչեց և սկսեց ցնցվել: Բարուքն անմիջապես ցատկեց և ամուր բռնեց նրան: Երեմիայի սարսափահար աչքերը նայում էին նրան: Այդ ընթացքում նրա համար անծանոթ, խոպոտ ու տենդահույզ մի ձայն հառաչեց սարսափահար.

— Փայտե լուծը կոտրված է... Նրա փոխարեն դարբնված է երկաթյա մի լուծ... Այսուհետև հենց դա է, որ պետք է կրեմ...

Երեմիան թաքցրեց իր դեմքը Բարուքի ուսի հետևում: Նա տեսնում էր, թե ինչպես է Անանիան մահանում մի ահավոր մահով. նրա վայելչագեղ մարմինը, որը պոռթկում էր առողջությամբ, գալարվում էր տոչորումների մեջ: Դարչնագույն խոշոր որդերն ամեն տեղից ծակծկում էին նրա գեղեցիկ մաշկը: Բարուքը չէր հասկանում, թե ինչ է կատարվում Երեմիայի հետ: Նա կրկին լսեց Երեմիայի հառաչանքը.

— Դժբախտ արարած... Ափսո՜ս քեզ, Անանիա... Ինչո՞ւ դու այդ արեցիր...



«Անանիան կոտրում է Երեմիայի փայտե լուծը»

ԳԼՈՒԽ ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ

ՍԵԴԵԿԻԱՆ ԵՎ ԻՐ ՏՈՒՆԸ

Երեմիան այժմ փողոցում քայլելիս կամ տաճար գնալիս իր ուսերի վրա կրում էր մի երկաթե լուծ: Բեռն ավելի ծանր էր կշռում, քանի որ ինքը տենդի պատճառով շատ էր տկարացել: Նա իր վրայից հանում էր լուծը միայն այն ժամանակ, երբ մտնում էր ներքին գավիթ կամ բնակելի մի տուն: Կրելով այն իր վրա՝ ինքը նույնպես կանխատեսում էր ապագան, միաժամանակ ընծայում էր այն որպես շարունակական ազդեցություն աշխարհի ընթացքի վրա: Նրա լուծ կրելը բոլորովին հակադրվում էր Անանիայի կողմից լուծը կոտրելուն: Նա խոնարհաբար ընդունում էր Հավերժի վատթարագույն մրմունջը նույնիսկ՝ իբրև անփոփոխելի ճշմարտություն, և անմիջապես իրագործում այն իր սեփական ցավերի միջոցով: Դրանով նա վճարում էր իր պարտքը՝ նախքան հաշվի թողարկումը: Այդպիսով, միգուցե նա կարողանար մի փոքր թեթևացնել Իսրայելի հետագա մեծ ցավերն ու տանջանքները, միգուցե նույնիսկ (այստեղ այսպես մտածելն անգամ հանդգնություն էր) նրա փոքր, բայց համառ ցավը կշարժեր Տիրոջ գութը:

Երեմիայի վերադարձից անցել էր որոշ ժամանակ: Չնայած դրան՝ նա ամեն օր հետաձգում էր իր գնալն ու ներկայանալը թագավորին՝ իր աշակերտին: Այդ հապաղումի համար բազմաթիվ պատճառներ կային նրա սրտում: Սեդեկիայի ասած երախտագիտական խոսքերը նրա՝ Եգիպտոսից վերադառնալուց հետո դրոշմված էին Երեմիայի մտքում.

— Ես իմ կյանքը պարտական եմ հորս և մորս... Մնացած բոլոր բաները, սակայն, ես պարտական եմ քեզ... Այլևս չեմ թողնի, որ դու գնաս իմ կողքից...

Այս ջերմ խոսքերը՝ արտասանված երջանկության մեջ գտնվող երբեմնի երիտասարդի կողմից, հիմա իբրև մի պարտավորեցուցիչ խոստում ծանրանում էին թագավորի վրա: Երեմիան դա հստակ զգում էր: Պատահական չէր նաև, որ Սեդեկիան իր հերթին այդ բոլոր օրերին մարդ չէր ուղարկել՝ փնտրելու իր ուսուցչին: Երիտասարդ թագավորը չէր կարող անտեսել լուծ կրողի անմիտ պահվածքը, որը միակ բացառությունն էր, որ չէր ընդունում հոբելյանական տոնախմբությունը՝ կնքված խաղաղության դաշինքի շուրջ, և անգամ ցավագին կերպով արտահայտում էր իր քննադատությունը: Այսպիսով, երախտագիտական շռայլ խոստումը և տարօրինակ լուծը, իբրև մի մռայլ ստվեր, ընկնում են Սեդեկիայի և Երեմիայի միջև, ինչն անհանգստություն էր պատճառում երկուսին էլ մի նոր հանդիպման առնչությամբ: Մարգարեն պետք է լսած լիներ մեղմ ու հստակ ձայնով իրեն տրված մի հրահանգ, նախքան հնազանդորեն իր գնալն ու բախելը Սողոմոնյան պալատի դուռը:

Պալատում նրան առաջինն ընդունեց Հովսիա թագավորի ժամանակվա տխեղծ ներքինին, որի փափկամազ դեմքի վրայից անցել էին տարիները՝ առանց հետք թողնելու: Հին սենեկապետն ամբողջությամբ դարձել էր եգիպտացի, ոչ միայն հագուստով և բնավորությամբ, այլև լեզվի առումով: Հանձին Երեմիայի՝ նա մասնավորապես ողջունում էր Եգիպտոսի վաղեմի գիտակին, որը վայելել էր Նոփի հաճելի ու քաղցր կյանքը: Նոփը, համեմատած Երուսաղեմի մռայլ լրջության հետ, կարծես Եդեմի իսկական պարտեզն էր: Ներքինու շատախոսությունից Երեմիան տեղեկացավ բազմաթիվ դեպքերի մասին, որոնցից միայն մեկն էր հատկապես կարևոր. այն, որ ժամանակավոր հանգստի կոչված գահազուրկ արքա Հովաքազը հանկարծամահ էր եղել Նոփի հին տանը, ուր նրան թույլ էր տրվել վերադառնալ փարավոնի շնորհիվ: (Այդ տունը հիշատակելիս Երեմիան միանգամից իր դիմաց տեսնում է Զենուային՝ պպզած իր աջ գարշապարի վրա, Լոտոսյան սրահում, և նրա յուրահատուկ լուրջ հայացքը՝ հառած իր վրա): Երեմիան սրբեց թաց աչքերը: Հովաքազն իրենից փոքր էր: Ինչպե՞ս էր մահը հարվածել նրան: Ներքինին զեկուցեց երկար. «Ինչպես հայտնի է, Նորին արքայական մեծությունն իր օրերն անցկացնում էր՝ քանդակելով Եգիպտոսին պատկանող նրբին և հիանալի առարկաներ: Սկզբում դրանք պարզապես արկղիկներ էին,

զզրոցներ, փոքրիկ նավակներ, կառքեր և այլն: Բայց երբ հետզհետե նա առաջ գնաց իր արվեստի մեջ, համարձակվեց կրկնօրինակել կենդանի էակներ՝ փոքրիկ մի առյուծ, մի ցուլ, մի ավանակ և հետո՝ մարդկային կերպարանքներ, մի խումբ նետաձիգներ, նիզակակիրներ և նավավարներ, այնուհետև...»: Այստեղ ներքինին շփոթվեց և կանգ առավ: Մարգարեի ներկայությունը սարսափով հիշեցրեց նրան իր տիրոջ կատարած մեղքը: Նա շշնջաց սրտաճմլիկ և դժգոհ. Նորին վսեմությունը մինչ աշխատում էր կովի գլխով Հաթոր աստվածուհու փայտե քանդակի վրա, ճակատագրի բերումով վիրավորվեց: Ի դեպ, դա մի շատ փոքրիկ կերպար էր՝ հագիվ մի կանգուն բարձրությամբ, որը պիտի օգտագործվեր որպես երեխաների խաղալիք: Այդուհանդերձ, յոթ օրվա ընթացքում ձեռքի փորագրիչ դանակով կատարված թեթև մի կտրվածք, որը թարախակալվեց, պատճառ դարձավ Հովաքազի մահվան: Նույնիսկ Խեր–Հեպը՝ երկրի Արևմուտքի կառավարիչը, չկարողացավ օգնել իր պաշտպանյալին՝ ըմպելի դեղերով և թարախային դևի հմայախոսությամբ:

Տխեղծ մարդը խոնարհեց գլուխն այնպես, որպես թե ինքը, չնայած Նոփի հանդեպ ունեցած իր սիրուն, պատրաստ է, իհարկե, հեզությամբ ընդունել Տիրոջ մարգարեի օգտակար եզրակացությունը, որ նա պիտի քաղեր նման մի պատժից: Երեմիան, սակայն, խնդրեց ծեր ներքինուց, որ իրեն անհապաղ առաջնորդի թագավորի առաջ: Այդ պահին դա հնարավոր չէր, քանզի Նորին արքայական մեծությունը խորհրդակցության մեջ էր իր պալատական իշխանների հետ: Չնայած դրան, ներքինին չթողեց, որ Երեմիան մեկնի: Եթե թույլատրեր Նոփի իրենց տան սիրելի բարեկամի մեկնումը, հետո ինքը պիտի ենթարկվեր մայր թագուհու՝ Ամիտալի, և նրա հարսի՝ երիտասարդ թագուհու դաժան հանդիմանությանը: Մայր թագուհին ամեն օր հարցնում էր Երեմիայի մասին և զարմացած էր նրա բացակայությունից:

Ճարպակալած մարդը բռնեց տկար տղամարդու ձեռքից և քաշեց նրան իր հետևից պալատի ներքին գավիթի միջով, մինչև կանանոցի մուտքի դարպասը, որը կոչվում էր փարավոնի դստեր անունով: Այստեղ նա պետք է մի փոքր սպասեր: Ներքինին անհետացավ տան մեջ: Մթնշաղի առաջին ստվերներն արդեն տարածվել էին սպիտակ պատերի վրա: Քիչ ժամանակ անց Ամիտալն ինքը հայտնվեց նախաշեմին և իր հին ընկերոջը

սեղմեց իր սրտին: Այնուհետև նրանք մութ սենյակում նստեցին կողք կողքի հանգստյան բազմոցի վրա: Նրանք շատ քիչ կարողացան իրար հետ խոսել, ինչպես պատահում է նման դեպքերում, երբ երկար բացակայությունից հետո նորից են հանդիպում: Հոգիների մտերմիկ հաղորդակցությունը խամրում է ամբողջական բաժանումի դեպքում: Ամիտալը, գլուխը ձեռքին հենած, նայում էր իր որդու ուսուցչին: Արդյոք այդ հյուծված մարդը, բերանի շուրջը խոր ակոսներով, այն նույն ազնիվ երիտասարդն էր, ում Հովսիան այնքան կապված էր, որ չէր թողնում նրան հեռանալ իր մահվան անկողնու մոտից: Երեմիայի համար ավելի հեշտ էր ճանաչել իր երիտասարդության բարի հովանավորուհուն՝ այն կնոջը, որը պաշտպանել էր իր սրտի սիրածին՝ Ձենուային, և որի կորուստը սգացել էր իբրև սեփական աղջկա կորուստ: Ամիտալը շատ էր գիրացել և կաղում էր, այդուհանդերձ, հակառակ իր տարիքին, նրան դեռ չէր կարելի ծեր կին անվանել: Մայր մտնող արևի՝ դեռևս ցոլացող կարմրության նման, նրա դեմքին նկատելի էր դեռ խամրած գեղեցկության հետքը: Երեմիան նայեց Ամիտալի փափուկ ձեռքերին. դրանք առաջվա նման կլոր էին և սպիտակ: Իրար հետ սակավ խոսքեր փոխանակելուց հետո, այն, ինչ որ կարելի էր ասել, առանց անհարմար թեմաներ շոշափելու, Ամիտալը ժպտալով հարցրեց.

— Ինչո՞ւ է արհամարհում Նոփի աքսորավայրի մեր տան սիրելի բարեկամը կիսել մեր հացը նաև Երուսաղեմում...

Երեմիայի դեմքի մկանները պրկվեցին.

— Արդյոք թագավորի կամքն է, որ ես կիսեմ իր հացն այս պալատում...

Ամիտալը ցնցվեց: Երեմիան զգաց, որ ինքը բարեկամական մի արտահայտության, որի մեջ ոչ մի արտառոց բան չկար, իր կատարած փոխադարձ հարցումով տվել էր մի անպատշաճ կարևորություն: Արքայի մայրը լռեց: Ըստ երևույթին, նա խոսքեր էր փնտրում՝ իր որդուն անհավատարմության մեղադրանքներից պաշտպանելու համար: Վերջում նա գտավ անտեղի մի խոսք, որը վրդովեցրեց մարգարեի հոգին.

— Թագավորը երախտապարտ է իր ուսուցչին...

Երախտապա՞րտ: (Քանզի արքան ասել էր՝ մնացած բոլոր բաները, սակայն, ես պարտական եմ քեզ...): Երեմիան ձեռքի մի շարժումով մերժեց Ամիտալի վերոհիշյալ հակիրճ ու ոչ համոզիչ նախադասությունը:

— Մեկ բան է լինել մի սովորող տղա, և այլ բան է լինել մի իշխող թագավոր,— ասաց նա:

Ամիտալը երախտագիտություն ասելով նկատի ուներ Երեմիային՝ պարզապես որպես ուսուցիչ Սեդեկիայի, և ոչ թե որպես նրա գահ բարձրանալուն պատճառ, ինչը, անտարակույս, եղել էր նույնպես Երեմիայի գործը: Խոսակցությունն ընդհատվեց: Աղախինները ճրագներ բերեցին, սեղանին դրեցին կավե ծաղկամաններ՝ անուշաբույր նարգիզներով: Սպասուհիների հետևից, սակայն, ներս էր մտել նաև մի երիտասարդ աղջիկ, որը, վախենալով անծանոթ մարդու ներկայությունից, կանգնել էր դռան մոտ:

— Մաաքա՛,— կանչեց Ամիտալը,— թագուհին չի վախենում: Այս անձը, ում դու տեսնում ես այստեղ, Հովսիայի և Սեդեկիայի հավատարիմ մարդն է...

Մաաքան մոտեցավ ամոթխածությամբ: Նրա գրեթե անավարտ տեսքը, նրա թեթև քայլվածքը, նրա համեստ ու վերապահ պահվածքը, թողնում էին երիտասարդ աղջկա տպավորություն, չնայած նրան, որ նա արդեն երկու որդի էր ծնել և կերակրել նրանց իր կրծքով: Երեմիան վեր կացավ, որպեսզի թագուհու առաջ խոնարհվի և դիպչի գետնին՝ ըստ ընկալյալ պատշաճության: Թագուհին, սակայն, գիտեր՝ ինչպես կանխել դա. նա բռնեց նրա ձեռքերը և ամուր պահեց: Այնուհետև Մաաքան և Երեմիան լուռ կանգնեցին դեմառդեմ՝ լրջությամբ ուսումնասիրելով իրար, ինչպես երկու հոգի, որ կռահում են, թե իրենք փոխկապակցված են:

Ամիտալը մեկեն շատ աշխույժ դարձավ և սկսեց երգել Մաաքայի սեփական գովեստը, ըստ որի հեշտ չի եղել Նոփի օտարության մեջ Հուդայի իշխանուհիների միջից ճիշտ ընտրություն կատարել իր որդու համար: Չնայած այն բոլոր դժբախտություններին, որ Տերը պատճառել էր իրեն կյանքում, ինքը միշտ ունեցել է մի բախտավոր ձեռք ամեն ինչի համար, և հատկապես հարմարագույն հարսնացու ընտրելու հարցում: Ըստ երևույթին, Մաաքան ոչ մի ուշադրություն չդարձրեց Ամիտալի գովեստի խոսքերին: Միայն նրա հարթ ճակատն անհամբեր կերպով կնճռոտվեց: Մեկեն շրջեց դեմքը մեկ այլ կողմ: Թվում էր, թե Երեմիայի հայացքը հանգստացրել էր նրա թաքուն մտահոգությունները և բավականություն պարգևել նրան: Մինչ Ամիտալը չէր դադարում Երեմիայի առաջ

գովաբանել իր հարսի առաքինությունները, Մաաքայի համբերությունը հատավ և խստորեն կշտամբեց նրան.

— Մայրիկ,— ասաց,— միթե Մաաքան չի տվել թագավորին հոյակապ որդիներ և դեռ չի տալու ևս ուրիշներ, որպեսզի ապահովվի Դավթի գահն իսկական թագավորներով մինչև ժամանակների վախճանը...

— Երեխաները... Երեխաները...— գոչեց Ամիտալը, ասես աններելի կերպով մոռացած լիներ ամենից կարևորը,— միթե մեր ընկերը չպետք է տեսնի իր թագավորի երեխաներին:

Նա առիթը բաց չթողեց անձամբ ներկայացնելու Երեմիային Դավթի ժառանգներին: Շնչակտուր վերադարձավ ներքին սենյակներից: Պահակները հետևում էին նրան: Տատիկը, յուրաքանչյուր ձեռքով մի տղա բռնած, առաջնորդում էր: Մեծը՝ առաջին թագաժառանգ իշխանը՝ Ադաիան, չորս տարեկան էր, իսկ փոքրը դեռ երեք չկար: Նրանք երկուսն էլ օժտված էին իրենց հոր գեղեցիկ, խոհուն ու մեծ աչքերով, որոնք իրենց հերթին նման էին Ամիտալի փայլուն կովի աչքերին: Երեխաները, երբ սենյակում տեսան մի օտարականի, դարձան դժկամ ու կամակոր, քաշեցին իրենց առաջնորդուհու բազուկները և չէին ուզում առաջ գնալ: Միայն տատիկի շշնջալով ասված հաճելի խոստումները համոզեցին նրանց մտնել սենյակ: Երեմիան ուշադիր խոնարհվեց Դավթի զարմերի առաջ, որոնց ճակատագիրը Տերը դեռևս ծածկել էր իրենից: Ադաիան՝ ավագ տղան, հանդուրժեց նրա նայվածքը և նույնիսկ հակադարձեց նրան հպարտ տղայի գրգռված վրդովմունքով, որը չի սիրում, որ անծանոթ մարդիկ նայեն իրեն: Բայց երեք տարեկան Եհիէլը սկսեց դժգոհ գոռգոռալ, և ոչ մի խոստում չկարողացավ հանդարտեցնել նրան: Երբ Երեմիան փորձեց փաղաքշել Եհիէլի փոքրիկ ձեռքը, այդ ընթացքում լացի գոռոցը վերածվեց վախի ճիչի, որից դողացին պատերը: Մաաքայի ակնարկով դայակները գրկեցին երեխաներին և անմիջապես դուրս հանեցին: Ամիտալը նույնիսկ չհասցրեց տալ իր պատրաստած հարցը, այն, որ Ադաիան, երբ մեծանար, կուզենար արդյոք ունենալ նույն ուսուցչին, ինչպես ունեցել էր իր հայրը: Մաաքան, ամաչելով որդու սանձարձակ վարմունքից, ժպտաց Երեմիային՝ ասես ներում խնդրելով: Վերջինս, սակայն, գլխով նշան արեց, որպես թե դա շատ բնական երևույթ էր երեխաների համար, քանի որ ինքն իրոք նման էր մի խրտվիլակի, որը վախ էր ազդում երեխաներին:

* * *

Աբդիմելեքն առաջ անցավ Երեմիայից, որպեսզի առաջնորդի նրան թագավորի մոտ: Երեմիան զարմացած նայում էր նախկին պարոդի և չարաճճի պատանու հանդիսավոր քայլվածքին, որը հիմա դարձել էր լուրջ արժանավորությամբ մի անձնավորություն: Երբեմնի անուշադիր, հոլաձև փոքրիկն այժմ ծանրակշիռ, բարձրահասակ և կոշտ մի տղամարդ էր դարձել: Ըստ երևույթին, թագավորի արարողակարգի ինքնավստահ ղեկավարը կարծես մոռացած լիներ իր ուսուցչին, որն առաջնորդել էր նրան՝ Քուշի երկրի սնահավատ և հասարակ ծագում ունեցող երեխային, դեպի տիեզերքի ամենազոր Աստվածը: Բայց որքան սխալվում էր Երեմիան այդ մարդու հոգու վերաբերյալ, որը քայլում էր իր առջևից եթովպացու ճոճվող քայլերով: Աբդիմելեքը հանկարծ հետ շրջվեց: Արցունքոտված աչքերով ծիծաղեց, բռնեց իր ուսուցչի ձեռքը և ծածկեց այն ջերմ համբույրներով: Այնուհետև շարունակեց իր լուրջ քայլվածքը: Բառեր չէր գտնում՝ արտահայտելու իր զգացումները:

Թագավորի դռան առջև նրանք հանդիպեցին իշխաններին, որոնք նոր էին դուրս եկել թագավորության խորհրդակցական ժողովից: Նրանք նոր դեմքեր էին, բացառությամբ Եղնաթանի՝ Աքբորի որդու՝ պատերազմի հին հերոսի, ում աշխարհի իրադարձությունները դաժան մարդուց վերածել էին մի տխուր ու տրտում մարդու: Երեմիան ապարդյուն փնտրեց Ահիկամին և նրա երկվորյակ որդիներին: Սափանի ժառանգները հրավիրված չեն եղել ժողովին: Պե՞տք է արդյոք նրանցից գաղտնի մնար այն, ինչ որ այդ օրը քննարկվել էր:

Թագավորը դիմավորեց Երեմիային և ընդունեց նրան բռնազբոսիկ ժպիտով՝ միաժամանակ մեղմորեն կշտամբելով նրան, որ այդքան ուշ է ներկայանում իրեն: Երեմիան ամբողջությամբ պահպանեց պատշաճ արարողակարգը, խոնարհվեց մինչև գետին և շշնջաց թագավորին ողջունելու սահմանված բանաձևը: Սեդեկիան կտրուկ նշան արեց նրան՝ չշարունակելու: Երեմիան նրա գեղեցիկ աչքերում անմիջապես կարդաց արքային տանջող անորոշությունը: Վատ լուսավորված սենյակում ևս մի անձնավորություն կար: Երեմիան ճանաչեց Շեմի նոր խնամակալին՝

Սոփոնիային՝ այն մարդուն, որը ոչ մի բան այնքան չէր ատում, որքան մարգարեների կողմից առաջացած գաղթակղությունները:

— Նամակներ են եկել Բաբելոնից,— ասաց թագավորը հարևանցի, որպես թե ինքը շատ կարևորություն չի ընծայում այդ իրադարձությանը: Ըստ երևույթին, սակայն, նա այս առթիվ սպասում էր Երեմիայի հետաքրքրվող արտահայտությանը, բայց վերջինս մնաց հանգիստ և անտարբեր: Այնուհետև Սեդեկիան շարունակեց.

— Նրանցում կա մի նամակ, որը վերաբերում է քեզ...

Նույնիսկ այս դեպքում Երեմիան ոչ մի հետաքրքրություն չցուցաբերեց: Նա կարծես վաղուց կարդացած լիներ իրեն վերաբերող այդ նամակը: Ուշ էր հասել Բաբելոնում գերվածների պատասխանը՝ իր արած հորդորների վերաբերյալ: Իր լռությունն ավելացրեց թագավորի դժգոհությունը: Սոփոնիայի հնազանդորեն խոնարհված տեսքը, սակայն, ավելի զայրացրեց նրան: Կոպիտ շեշտով հրամայեց.

— Կարդա՛,— Շեմի խնամակալն իր գոտուց արագ հանեց կնքված մի նամակ, բացեց այն, մի քանի անգամ խոնարհվեց անհամբեր թագավորի առջև և կարդաց այն՝ առանց ուշադրություն դարձնելու Երեմիայի վրա.

— Նեքլամացի Շամաիայի նամակը Բաբելոնից՝ ուղղված Սոփոնիային՝ Աստծու տաճարի Շեմի պահապանին...

Ըստ երևույթին, նամակի վերնագիրը՝ ընթերցված հանդիսավոր կերպով, հպարտությամբ էր լցնում այն ստացողի հոգին: Նա մի պահ կանգ առավ և մաքրեց կոկորդը: Երեմիան մնաց իր տեղում անշարժ. հիմա նա հասկանում էր, թե որտեղից է փչում հովը. նեքլամացի Շամաիան Փաշհուրի փեսան էր: Սոփոնիան շարունակեց.

— Տերն է նշանակել քեզ քո պաշտոնին՝ փոխարենը քո նախորդի, հսկելու համար յուրաքանչյուր խենթ ու ստախոս մարգարեի վրա, որպեսզի նրան սեղմես կոճղի մեջ կամ առնվազն բանտը գցես: Եվ ուրեմն, Սոփոնիա, ինչո՞ւ նման խստությամբ չեք վարվում անաթովթցի Երեմիայի հետ, որը մարգարեանում է ձեզ մոտ: Այդ մարդը համարձակվել է մեզ գրել Բաբելոնում՝ ասելով, որ մեր գերությունը երկար պիտի տևի, հետևաբար տներ կառուցեք և բնակվեք դրանց մեջ: Պարտեզներ մշակեք, ծառեր տնկեք և օգտվեք դրանց պտուղներից: Կիներ առեք Բաբելոնում և բազմացեք: Աղոթեք Տիրոջը ձեր ապրած երկրի բարօրության համար...

Այստեղ թագավորն ընդհատում է ընթերցումը.

— Սրանք քո խոսքերն են, Երեմիա:

— Այո՛, իմ խոսքերն են:

— Եվ ինչ ես ասելու նեքլամացու նամակի հարցով, որի սիրտը վրդովված է:

Երեմիայի աչքերը շրջվել էին դեպի ներս և փոս էին ընկել: Թագավորը դրանք տեսնում էր միայն ինչպես ստվերներ, երբ լսեց հետևյալ խոսքերը.

— Նեքլամացին, Փաշհուրը և մնացած բոլորը: Նրանց անունն այլևս կենդանի չէ, եթե նույնիսկ նրանց մարմինը դեռ ողջ է: Նրանք այլևս չեն հիշվի...

Սեդեկիան վեր ցատկեց իր տեղից: Նրա բարետես դեմքը կարմրել էր: Վտանգված էր իր պատիվը՝ որպես թագավորի: Նա պետք է ցույց տար Շեմի խնամակալին, որ ինքը բավարար ուժ ունի՝ զսպելու իր ուսուցչին: Մոտեցավ Երեմիային և կանգնեց նրա դիմաց:

— Գիտե՞ս,— գոչեց նա,— թե ինչ ես արել դու, անզգամ մարդ: Դու զոհացել ես նրանց հույսը, ովքեր միայն դրանով էին ապրում: Տներ կառուցեք... Որտե՞ղ: Թշնամու երկրո՞ւմ: Ո՞վ կկառուցի մի տուն, որը հնարավոր է վաղը խլել նրանից: Պարտեզներ մշակեք... Որտե՞ղ: Օտար երկրո՞ւմ: Կիներ առեք Բաբելոնում և բազմացեք... Ինչի՞ համար, որպեսզի աճեն ու բազմանան խեղված սերունդնե՞ր, որոնք չեն հավատալու ոչ Հավիտենականին և ոչ էլ աստղերին: Աղոթեք Տիրոջը... Ինչպե՞ս: Առանց տաճարի՞, առանց զոհաբերության՞, առանց սովորությունների՞: Աղոթեք Տիրոջը ձեր ապրած երկրի բարօրության համար, այսինքն՝ ձեր թշնամու համար... Արդյոք մարդ պե՞տք է աղոթի իր մարդասպանի բարեկեցության համար, որը դնում է իր սուրը նրա կրծքին... Իսկ դու հիմա ասա ինձ, ով անաթովթցի, ընդունո՞ւմ ես, թե ինչ ես արել քո նամակով Բաբելոնում գերվածներին...

— Ես դա ընդունում եմ,— ասաց Երեմիան հանգիստ: Թագավորը, սակայն, ջանք էր թափում բառեր գտնելու.

— Եվ դու չե՞ս սարսափում անհնարինից...

Երեմիան խոնարհեց գլուխը, որի հետևանքով նրա ճակատը սկսեց փայլել հատակին դրված ճրագի լույսով:

— Տերն է դա պահանջում նրանցից և մեզնից...

Սեդեկիան ձեռքի մի կտրուկ շարժումով ազատեց Շեմի խնամակալին: Երբ նրանք մենակ մնացին, թագավորը կարծես թե հանդարտվեց:

— Ամեն ինչ փոխանակվել է,— ասաց նա ինքն իրեն,— ես խոսում եմ որպես մարգարե, իսկ Երեմիան՝ որպես մեղավոր...

— Տերը,— ասաց Երեմիան ծանր լեզվով,— հայտնում է իր կամքը, բայց ոչ իր մտադրությունը:

Թագավորի լայն հայացքը սևեռվեց իր ուսուցչի վրա և ասաց՝ շշնջալով.

— Ես լսել եմ քո երգը Նաբուգոդոնոսորի մասին... Ինչպես նաև ժողովուրդների լծի մասին... Մի՞թե դա Նրա կամքն է...

— Զորաց Տերը Նաբուգոդոնոսորին դարձրել է իր սրի ծառան, այսինքն՝ իր որոշումները գործադրող դահիճ...

— Ուրեմն, Նա սիրում է նրանց, ովքեր ատում են իրեն, և ատում է նրանց, ովքեր սիրում են իրեն...

— Սիրո՞ւմ ես դու քեզ ծառայող դահճին...

— Իսկապես, Երեմիա, գլխապտույտ եմ զգում, ինչպե՞ս հասկանալ Նրան...

— Մի՛ հասկացիր, այլ միայն լսի՛ր...

— Լսե՞լ... Մի՞թե դու այն միակ անձն ես, որը տիրապետում է ճշմարտությանը... Նույնիսկ եթե ես ուզենամ հավատալ, որ դու միակ անձն ես, օրինավո՞ր է արդյոք դրան հավատալը... Թագավորը լսում է մարգարեությունների բազմաթիվ ձայներ... Նրանք կանխատեսում են շատ տարբեր բաներ... Եվ ինքը պետք է ընտրի ոչ թե ըստ իր համակրանքի, այլ ըստ իր դատողության՝ Անանիայի և Երեմիայի միջև... Անհասկանալի բաները թագավորի գործը չեն, այլ հասկանալին... Նա հոգ է տանում, հաշվարկում է և ծրագրում ժողովրդի ու քաղաքի համար...

Մի նոր հուզմունք մի անգամ ևս մղեց Սեդեկիային վեր կենալ իր նստած տեղից: Նա իր ձեռքերը դրեց Երեմիայի մեջքին:

— Ես հիմնեցի ու կնքեցի թագավորների ուխտը...— շշնջաց նա, թեև սենյակում այլ մարդ չկար:— Եվ արյամբ երդվեցինք միմյանց՝ լինել մեկ մարմին՝ Քուշի սահմաններից սկսած մինչև հյուսիսային կղզիները... Հիմա մենք ավելի ուժեղ ենք, քան Բաբելոնը... Դու, սակայն, այն միակ մարդն ես Սիոնում, որը նախատում է իմ արարքը...

— Թող իմ թագավորը գերիշխի, իրավացի լինի և վրեժխնդիր լինի ինձնից,— բացականչեց Երեմիան ցավագին ձայնով:— Եվ երանի թե նա երբեք պատանդ չլինի իր իսկ կնքած այդ արյան ուխտի...

Թագավորը քաշեց ձեռքերը Երեմիայի մեջքից.

— Եվ ո՞ւմ համար արեցի այն բոլորը, ինչ ես արեցի այս ժողովրդի համար: Մի՞թե ես դա չարեցի Նրա համար, տաճարի, զոհաբերությունների և զոհաբերման աղոթքների համար...

Երեմիայի սրտից, սակայն, դուրս թռավ մի աղաղակ.

— Տիրոջ համար կարևոր չեն ոչ տաճարը, ոչ զոհաբերությունները և ոչ էլ զոհաբերական աղոթքները...

Թագավորը երկու քայլ հետ գնաց և ասաց.

— Ուսուցիչս, լավ է, որ քո այս խոսքն ուրիշ մեկը չլսեց, բացի քո մոռացկոտ աշակերտից...

Նա թույլ տվեց, որ անցնի լռության մի երկար պահ, որպեսզի նախատինքի և հայհոյության վանկերը լուծվեն ու անհետանան օդի մեջ: Այնուհետև նա որդեգրեց մի հաշտարար խոսելաոճ.

— Երեմիա, թող մեր միջև լինի խաղաղ ու հաշտ մի ճանապարհ...

Եվ հավանաբար վաղուց լավ մտածված դարձվածքներով թագավորը հայտարարեց, որ ինքը պատրաստ է թագավորների հետ իր կնքած ուխտին առընթեր, որի համար ինքն ու իր ավագանու անդամները տվել են իրենց համաձայնությունը, մի այլ ուխտ ևս կնքել Անիմանալիի հետ և հետևել այդ ուխտին: Նա չի ուզում Աստծու համար պակաս բան արած լինել, քան իր հայրն էր արել: Նա գիտակցում է, որ Զորաց Տերը պետք է իրեն հանգիստ զգա Սիոնում, երբ մեկը ցանկանա նրան ամբողջությամբ իր կողքին ունենալ: Թագավորը մի խոհեմ վաճառականի նման առաջարկեց մարգարեին տարբեր հատուցումներ կատարել Եհովայի համար, որպիսիք են երկրի մի նոր մաքրագործումը կուռքերից և կռապաշտությունից, *շաբաթի* խիստ պահպանումը, ծոմապահության և ապաշխարության մի նոր օրվա ծանուցումը: Երեմիան, սակայն, բոլոր այս առաջարկների վրա դժգոհ շարժում էր գլուխը: Եթե մի թագավոր իսկապես ցանկանում է ապահովել Տիրոջ կապն իր հետ, ապա անհրաժեշտ է մի գործողություն, որը շատ ավելին է, քան սովորական աշխարհն ու ժողովուրդը. դա գերագույն օրենքի պահպանումն է: Դրանից հետո Եհովան

պիտի խուսափի վերջնականապես քանդելու և ոչնչացնելու Իսրայելին, որը պահել է հաստատված գերագույն օրենքն ու պատվիրանը: Երեմիան պահանջում էր երիտասարդ թագավորից, որ չսպասի մինչև մի նոր յոթերորդ տարվա հոբելյանը՝ ծառաներին ազատ արձակելու հարցում, որովհետև իրար հետևից արդեն անցել են ծառայության բազմաթիվ յոթամյա շրջաններ, և Հակոբի ծառաներն ու աղախիններն անբարեխղճորեն դեռ ազատ չեն արձակված և չեն էլ ստացած իրենց արձակման նվերները: Սեդեկիան ապշահար հայացքով նայեց Երեմիային.

— Դու, անհնարինության և բարդությունների մարդ,— հառաչեց նա,— դու ինձ ծանրաբեռնում ես խնդիրներով և մղում դեպի անհնարինը... Թագավորի ուժը ոչ թե աղքատներն ու տառապյալներն են, այլ հարուստներն ու վսեմափայլները...

— Ով իմ արքա, թող մեր միջև գտնվի մի հաշտարար ճանապարհ,— հիշեցրեց Երեմիան:

— Եվ ես ուզում եմ գտնել այդ ճանապարհը, որքան էլ դու ինձ խիստ քննության ենթարկես, ով իմ ուսուցիչ... Լսի՛ր, երբ տարին լրանա, Դավթի տան ու կալվածքների վրա ես կհռչակեմ հոբելյանական և ազատ արձակման տարի... Բավարա՞ր է դա...

— Դա բավարար չէ, իմ թագավոր, երբ դա մի անձ է անում և այն էլ ոչ ընդհանուր կերպով... Հոբելյանական և միաժամանակ ստրուկների ազատ արձակման տարին պետք է հռչակվի ամբողջ երկրում, բոլորի համար...

— Ուզում ես, որ իմ իշխաններն ինձ շան նման սպանե՞ն,— գոռաց Սեդեկիան՝ ծեծելով իր կուրծքը: Այնուհետև նա վեր ելավ տեղից և գնում-գալիս էր սենյակում: Երեմիան լռում էր: Թագավորը հանկարծ զայրագին աղաղակով դիմեց քարոզչին.

— Չե՞ս հանելու, ի վերջո, վրայիցդ այդ լուծը...

— Երբ իմ թագավորը հռչակի ստրուկների ազատ արձակումը, ես կհանեմ լուծը...

— Ես ոչինչ չեմ խոստանա,— փոխադարձեց Սեդեկիան դառնացած՝ վերջ դնելով խոսակցությանը: Նա իր մանկության ուսուցչին չհրավիրեց իր տուն՝ բաժնեկից դառնալու իր սեղանին:

«Երեմիան երկաթե լուծով թագավորի առջև»

ԳԼՈՒԽ ՔՍԱՆՅՈԹԵՐՈՐԴ

ԴԱՇԻՆՔԻ ԲԱՆՏԱՐԿՅԱԼԸ

Ավելի վաղ, քան Երեմիան կարողանար հանել ինքն իր վրա դրած լուծը, եկավ այն օրը, երբ իր կանխազգացումը՝ դաշինքի կալանավորի մասին, սարսափելիորեն իրականացավ: Պատահել էր այնպես, որ Տյուրոսի թագավոր Իտուբաալը, որը հարկատու էր Բաբելոնին, մեկ օրից մյուսը մերժեց վճարել իր տուրքը Մարդուկ–Նաբուգոդոնոսորին: Հավանաբար Փյունիկեի ծովային հարուստ թագավորը հույս ուներ, որ Նաբուգոդոնոսորը հաշվի կառնի կնքված նոր դաշինքը ժողովուրդների միջև, և չվճարված տուրքերի պատճառով պատերազմ չի հայտարարի ու դրանով չի խախտի աշխարհի խաղաղությունը: Այդ հարցում, սակայն, Իտուբաալը սխալվել էր, որ կարծել էր, թե Մարդուկը մի սովորական հաշվարկող է իր տեսակի մեջ: Ճիշտ է, որ արքայից արքան արել էր նաև իր հաշվարկը, բայց դաշնակցելով ոչ թե երկրային իշխանությունների, այլ երկնային հրամանատարների և *Շամաշի* մեջ կենտրոնացած տասներկու լուսեղեն ու առեղծվածային ուժերի հետ, որոնք համաստեղություններն են: Դեռ երեք ամիս չանցած՝ նա մեծ զորապետ Ներգալ Ռիսուայի հրամանի տակ մի հսկա բանակ ուղարկեց դեպի ծովեզերք, որպեսզի պատժի ըմբոստներին և կործանի նրանց քաղաքը: Անշուշտ, Տյուրոսն ավելի նպաստավոր դիրք ուներ, քան աշխարհի որևէ այլ քաղաք, քանի որ այն տարածվում էր հանդիպակաց կղզու վրա, որը միայն մի երկար կամրջով էր միանում ծովեզերքին:

Նախկինում նման մի իրադարձություն չէր կարող հատուկ կերպով խանգարել Երուսաղեմի հանգիստը: Հիմա, սակայն, տաճարում կնքված թագավորների ուխտն ուժեղ մրրիկի նման ծավալվում է ողջ երկրում: Այդ ուխտն ակնհայտորեն պահանջում էր, որ այն դեպքում, երբ

Տյուրոսի թագավորը զինված հարձակման ենթարկվի, նրան պետք է ամենից առաջ օգնության հասնեն Սիդոնի և Հուդայի թագավորները, ճիշտ այնպես, երբ հակառակը պատահի, Տյուրոսի թագավորը պետք է իր բանակով անմիջապես օգնության հասնի իր հարևան թագավորներին: Այսպիսով, դաշինքի հարցը պարզ ու հստակ էր, և Իտուբաալը մի պատվիրակություն ուղարկեց Սեդեկիայի մոտ՝ պահանջելով սրբազան ուխտի անհապաղ իրագործումը: Հուդայի երիտասարդ թագավոր Սեդեկիան ծանր դրության մատնվեց: Եթե նա կատարեր իր պարտականությունը կնքված ուխտի նկատմամբ և զորք ուղարկեր Կարմելի հյուսիս, Նաբուգոդոնոսորի ահավոր վրեժխնդրության թիրախը պիտի դառնար, որը չէր հապաղի երկրորդ անգամ ներխուժել Տիրոջ երկիրը և պաշարել Երուսաղեմը: Նույնիսկ եթե մնացած թագավորները հավատարիմ մնային իրենց ուխտին, այդուհանդերձ, մի անիմաստ պատերազմ պիտի բռնկվեր ամբողջ աշխարհում, որի թատերաբեմը կլինեին բացառապես Իսրայելն ու Հուդան: Բայց եթե Սեդեկիան հրաժարվեր կատարել դաշինքի հանդեպ ունեցած իր պարտավորությունը, այն ժամանակ ինքը, որ նկատվում էր ստեղծողը ժողովուրդների այդ միացյալ ուխտի, պիտի համարվեր ուխտադրուժ, անարգ, անպատիվ և անեծքի ենթակա մի մարդ, ոչ թե արքայական հերոս, այլ վախկոտ: Երուսաղեմը, սակայն, որը պարծենում էր լինել ուշադրության կենտրոնը, պիտի վերածվեր ժողովուրդների ծաղրական գոռգոռոցների, զզվանքի ու արհամարհանքի առարկայի: Նույնիսկ եթե Սեդեկիան բավականաչափ վեհ հոգի ունենար՝ դիմանալու համար նման խայտառակության ու դժբախտության, դրանով, սակայն, նա չէր կարող փրկել իր թագավորությունը: Մարդուկը երկմտելո՞ւ էր արդյոք վերջնականապես ջախջախելու ժողովուրդների դաշինքի արհամարհված ստեղծողին: Բայց սա դեռ ամենը չէր. Սեդեկիայի ընդունած յուրաքանչյուր սխալ որոշում կարող էր վտանգել Բաբելոն աքսորված ավելի քան տասը հազար հրեաների ճակատագիրը, որոնք իրենց տեղահանված վիճակից կարող էին հանկարծ դառնալ դաժանաբար սպանված պատանդներ: Սեդեկիան հայտնվում է այս անելանելի վիճակում:

Այն օրերին, երբ Իտուբաալի պատվիրակությունը դեռ Երուսաղեմում էր՝ առանց որևէ պատասխան ստանալու, Երեմիան մի երեկո

եկավ թամբագործի տունը և մտավ իր սենյակը՝ ուսերին երկաթե լուծը դրած, բորբոքված ու չափազանց հոգնած: Բարուքը, որ երկար ժամանակ հեռու էր մնացել նրանից, հուզումնալից պպզած էր մի անկյունում: Աշակերտը մոտենալով ընկավ իր ուսուցչի ծնկներին և արցունքների միջից հառաչեց.

— Երեմիա, թույլ մի՛ տուր ինձ երբեք հեռանալ քեզնից: Ես փորձում էի իմ սեփական անձի մեջ ճանաչել ճշմարտությունը և կասկածում էի Տիրոջ ձայնին, որն աշխարհում ուրիշ ոչ մի տեղ չի խոսում, այլ միայն քո մեջ...

Երեմիան հոգնած ազատեց իրեն Բարուքի գրկախառնումից.

— Լավ կլիներ,— ասաց նա,— որ դու չգայիր ինձ մոտ և քո սրտի հաշվարկը իմ դեմ շարունակվեր մնալ այդպես...

Բարուքը, իր հին սովորության համաձայն, սկսեց անմիջապես եռանդուն կերպով կարգի բերել սենյակում գտնվող բազմաթիվ ոլորված մագաղաթներ ու Երեմիայի սակավաթիվ իրերը, որոնք դեսուդեն էին նետված: Նրա աչքերը, սակայն, զարմանքով ու սարսափով նկատում են իր ուսուցչի փոս ընկած այտերը: Նա երևի երկար ժամանակ սնվում էր միայն չոր հացով: Բարուքը վազեց մոտակա իջևանատունը և նրա համար տաք կերակուր և մի սափոր գինի բերեց: Երեմիան կերավ և խմեց սովահարի ախորժակով: Ճաշի ընթացքում աշակերտը մեղավորաբար նկարագրում էր այն պատճառները, որ նույնիսկ Սափանի որդիները թագավորների կնքած դաշինքը համարում էին դիվանագիտական արվեստի մի խելամիտ գլուխգործոց: Ափսոս, սակայն, այդ իմաստուն մարդկանց, որոնք տաճարի հպարտությունն էին, որոնք շաբաթական ծոմ էին պահում և ամեն օր Թորայից կարդում ու սովորում, այդուհանդերձ, նրանք կռապաշտ էին իրենց հոգով: Երեմիան գլուխը կախ լսում էր և ոչինչ չէր ասում:

Այնուամենայնիվ, նա թույլ տվեց, որ Բարուքը նույն գիշերը տանի իրեն Սափանի սրահը տաճարում, ուր բազմաթիվ հուսահատ համախոհներ էին հավաքված: Նրանց մեջ էր նույնիսկ Ահիկամը, ում ոտքերը ծերունական մի հիվանդությունից կաթվածահար էին եղել, և նա միայն գավազանների օգնությամբ էր կարողանում քարշ տալ իր մարմինը: Ճրագների աղոտ լույսի ներքո հավաքված բոլոր իմաստուն և ուսյալ մարդկանց խելքը ոչ մի այլ որոշում չի կայացնում, բացի համատեղ

մի գրություն խմբագրելուց՝ ուղղված Սեդեկիային, ուր նրա նկատառմանն են հանձնում հետևյալը: Եթե նա մերժեր օգնության հասնել Տյուրոսի Իտուբալին, ապա դա երդմնազանցություն չէր համարվի, քանզի կազմված դաշինքը խոսում էր մեկ մարմնի մասին, որի անդամները պետք է անբաժան կերպով կապված լինեին իրար: Հետևաբար, համատեղ մարմնում անդամներից որևէ մեկն իրավունք չուներ իր սեփական հայեցողությամբ գործելու՝ առանց ամբողջական մարմնի և էության հանձնարարության ու համաձայնության: Հենց այս սխալն էր, որ կատարել էր Տյուրոսի թագավորը, որի արդյունքում վերացել էր մարմնի միասնությունը, իսկ այս պարագայում՝ նաև անդամների՝ իրար օգնելու պարտավորությունը:

Վերոհիշյալ գրության բերված առաջարկն ամենևին չէր հետապնդում վատ կամ անազնիվ նպատակներ: Բայց դա մի մռայլ նշան չէ՞ր արդյոք, որ Գեդալիայի նման մի մարդ ստիպված էր գրավոր խորհուրդներ տալ այն երիտասարդ թագավորին, որի գահ բարձրանալը ժամանակին նա այնքան կրքոտ կերպով պաշտպանել էր Բաբելոնի պատերազմական ճամբարում: Ահիկամը և նրա որդիներն այլևս Սեդեկիայի մարդկանց կազմում չէին: Դա տեղի էր ունեցել արագ և առանց ակնհայտ խայտառակության: Տարբեր մարդիկ էին եկել, որոնք հետզհետե դուրս էին մղել Սափանի ընտանիքի անդամներին և նրանց տեղը իրենք բռնել: Այդ մարդկանց թվում էին նշանավոր հերոսներ, որոնց բանականությունը թեև այնքան էլ փայլուն չէր, բայց շատ էին հետաքրքրված ու ոգևորված ձիաբուծությամբ, եգիպտական շքեղ կառքերով, զենքի խաղերով և խնջույքներով: Այդ ուրախ երիտասարդների գրավիչ երգերը գինու կողքին կազմում էին ավելի համեղ ու հաճելի աղանդերներ, քան դպիրների տևապես անհանգստացնող ելույթները:

Սեդեկիան գեղեցիկ մարդ էր, որը բծախնդիր ուշադրությամբ հետևում էր իր արտաքին տեսքին և բոլոր ձևականություններին: Կարելի՞ էր արդյոք ակնկալել, որ նման մի թագավոր կարատավորի իր փայլուն համբավն ու պատիվը՝ խորամանկ պատճառաբանությամբ խախտելով կնքված միասնական դաշինքը: Սափանի սրահում հավաքվածները շատ քիչ հույս ունեին: Նրանք շրջապատեցին Երեմիային և խնդրեցին, որ նա հաջորդ օրը՝ առաջին իսկ հարմար ժամին, գնա արքայական

ամրոց՝ հանդիպելու թագուհուն ու մայր թագուհուն: Իր հոգու և խոսքի ամբողջ ուժով նա պետք է համոզեր Ամիտալին ու Մաաքային, որպեսզի հեռու պահեն թագավորին պատերազմական որևէ տեսակի աջակցություն տրամադրելուց: Սեդեկիայի մոր սրտի վրա ուրիշ ո՞վ կարող էր այդքան համոզիչ ազդել, քան նա, ով եղել է նրա աքսորական կյանքի անբաժան ընկերը:

Երեմիան համաձայնվեց: Վաղ առավոտյան հարմարագույն ժամին նա գնաց պալատ և մտավ կանանց հատկացված բաժինը: Ամիտալն այդ օրերին հիվանդ պառկած էր: Նրան ընդունեց երիտասարդ թագուհին: Մաաքայի անհանգիստ աչքերը սևեռվեցին Երեմիայի վրա, երբ նա հրավիրեց նրան նստել իր կողքին: Չնայած որ նրա դեմքը դեռ պահում էր իր կուսական թարմությունը, այդուհանդերձ, մի տարտամ և աննկարագրելի վիշտ ստվերում էր նրա դիմագծերն ու տալիս նրան մի հուզիչ լրջություն:

— Տերը պատրաստում է ավարտը,— սկսեց խոսել Երեմիան,— բայց Նա դեռ վարանում է... Մի՞թե իմ թագուհին չի կամենա օգնել երկարաձգելու մեր կյանքի տևողությունը... Մի՞թե նա չի կամենա ձեռք բերել բարձր արժանիքներ թագավորի համար...

Մաաքան անմիջապես հասկացավ, թե նա ինչ է ուզում: Նստեց ուղիղ և ընկավ մտածմունքների մեջ, ապա ասաց.

— Կանանց գործը չէ վաստակել այդպիսի արժանիքներ...

Երեմիան փնտրում էր նրա հայացքը, որը նա սկզբում խոնարհեցրել էր, բայց հետո այն բարձրացրեց՝ նայելու համար ուղղակի իրեն.

— Այն ամենը, որ վերաբերում է ու ծառայում կյանքին, դա, իհարկե, կանանց գործն է,— վրա բերեց Երեմիան:

Եվ այդժամ նա ներկայացրեց պատերազմի սարսափազդու պատկերներ, որոնք կուտակված էին իր սրտի խորքում: Բայց նա չնկարագրեց տղամարդկանց միջև մոլեգնող մի ճակատամարտ, որը թեև խլում է մարդկային հազարավոր կյանքեր և պատճառ դառնում արյան հեղեղների, սակայն շուտով հասնում է իր ավարտին: Նրա նկարագրածը մի այնպիսի պատերազմ է, որը չի ավարտվի, մինչև որ այլևս կլանելու ու լափելու բան չգտնի: Դրա հետևանքն է լինում սպանված տղամարդկանց, կանանց և երեխաների բազմաթիվ փտած դիակների կուտակում փողոցներում: Ցանքերի ակոսների միջից նշմարվող մեռածների աղաչավոր ձեռքեր՝

ուղղված դեպի ամպամած երկինք, որոնք միայն գիշատիչ թռչունների ուշադրությունն են հրավիրում իրենց վրա: Հզոր հաղթողների նժույգների սմբակների տակ անխնա տրորված մարդկային խմբեր՝ փախած հրդեհի մատնված իրենց տներից: Պաշարված քաղաքում սովի, համաճարակների ու դրանց նմանների կողքին գիշերները փողոցներում վխտացող թափառող վայրի շներ: Մյուս կողմից էլ, երբ ջրամբարներից անհետանում է ջրի վերջին կաթիլը, այն ժամանակ ծարավից տոչորվողները խմում են նույնիսկ իրենց արտաթորանքը: Երբ քարերի միջև բուսած վերջին խոտն անգամ պոկվում է, և այլևս ոչինչ չի մնում սնվելու, մայրերն ուտում են իրենց վաղաժամ ծննդաբերածներին... Ո՞ր թագավորը թույլ կտա իրեն, առանց ծայրահեղ կարիքի, առաջին քայլը ձեռնարկել, որն անխուսափելիորեն կհանգեցնի նման մի ահավոր ու կործանարար կացության: Իտուբաալին տրվելիք զինված օգնությունը, առանց ծայրահեղ անհրաժեշտության, հենց ինքնին նման ողբերգությունների առաջին քայլն է:

Երեմիայի խրոխտ ձայնն ու նրա նկարագրած պատկերները մեծ ազդեցություն թողեցին: Մաաքան ամբողջությամբ գունատվեց և փորձեց պաշտպանվել.

— Թագավորը կանանց հետ չի խոսում իր կառավարման մտահոգությունների մասին...

Երեմիայի ձայնը, սակայն, ուժեղ ճնշեց նրա հոգին.

— Այդուհանդերձ, նրա կինը պետք է խոսի թագավորի հետ նրա իշխանության մտահոգությունների մասին... և այն էլ՝ անմիջապես... Քանի դեռ շատ ուշ չէ...

Մաաքան տխրությամբ շարժեց գլուխը.

— Թագավորը խորհրդակցական ժողովի մեջ է իր իշխանների հետ...

— Ուրեմն, թող թագուհին մտնի սրահ... Նա կլսի նրան...

— Եթե նա չի լսում նույնիսկ իր մորը... Ինչպե՞ս պիտի լսի Մաաքային...

Երեմիան մոտեցավ նրա դեմքին և շատ ցածր ձայնով ասաց.

— Վերջապես ո՞ւմ համար դու պետք է անես դա... Ոչ թե ուրիշների համար, այլ հենց քեզ համար... Որովհետև թագավորի երեխաներն առաջինն են, որոնք...

Մաաքան գոչեց տագնապահար և իր փոքրիկ ձեռքով ծածկեց նրա բերանը.

— Մի՛ շարունակիր, որովհետև քո ասածը կատարվում է...

Եվ նա դուրս վազեց սենյակից:

Նույն օրվա երեկոյան Երեմիան նոր էր գնացել պառկելու, երբ նրա դուռը բախեցին, ներս մտավ մի լրջախոհ մարդ և նստեց հատակին՝ նրա կողքին: Դա Աբդիմելեքն էր, քուշեցի սենեկապետը: Նրան ուղարկել էր երիտասարդ թագուհին, ում կանխազգուշացումն ուշ էր հասել թագավորին, քանզի Եղնաթանն արդեն մեկնել էր դեպի հյուսիս մի փոքրիկ բանակով, որը բաղկացած էր արքայական թիկնազորի մասերից: Այդպիսով, Սեդեկիան կարծում էր, թե ինքը լավ կմնա և կպաշտպանի իր պատիվը, առանց փաստացիորեն միջամտելու պատերազմին և առանց իր դեմ հրահրելու Մարդուկի զայրույթն ու վրեժը: Երիտասարդ թագավորը գործել էր որպես համատեղ Ուխտի բանտարկյալ՝ ընդդեմ հայրերի սրբազան ավանդության, և առ այդ իր որոշումը կայացրել էր առանց դա ավագաժողովի հետ համաձայնեցնելու: Պատասխանությունն ընկնում էր միայն նրա ուսերին: Այնուամենայնիվ, նա ճշգրիտ չափել էր իր գործողության հնարավոր հետևանքները, քանզի նույն ժամանակ ամբողջ երկրով մեկ ուղարկել էր իր գործակալներին, որպեսզի կոչ անեն մարդկանց՝ տղաներից սկսած մինչև ծերերը, զինվելու: Նա այս բանը պարտադրում էր ժողովրդին, երբ դեռ բերքն ապահովված չէր, և ձիթապտուղն ու խաղողը դեռ նոր էին սկսում հասունանալ:

Աբդիմելեքը լուրջ դեմքով և առանց հուզմունքի ներկայացրեց իր զեկույցը: Նա իրեն իրավունք չէր վերապահում մեկնաբանելու իր տիրոջ գործերը: Այդուհանդերձ, Երեմիան զգաց, թե ինչպես է վախը մտել *մավրի* սիրտը և կրծում այն: Իր զեկույցն ավարտելուց հետո Աբդիմելեքը չաճապարեց դուրս գալ սենյակից, այլ ամաչկոտ նայեց իր շուրջը և շշնջաց.

– Աղոթիր Նրան, ուսուցիչդ իմ, աղոթիր օր ու գիշեր...

— Ինչի՞ կծառայի միայնակ մարդուս աղոթքը:

— Քո աղոթքը շատ կծառայի, ուսուցիչս...

Քուշեցու հաստ շուրթերին ուրվագծվեց մանկական ժպիտը.

— Ես էլ նույնպես ուզում եմ աղոթել Նրան... Սակայն Նա ուշադրություն չի դարձնում Աբդիմելեքի վրա... Ես զզվելի եմ Նրա համար... Քանզի ես Աստծու ժողովրդից չեմ, ում ես ուզում եմ ծառայել...

Երեմիան շտկվեց: Մի ինչ–որ բերկրանքի փափուկ լույսով ողողվեց նրա էությունը.

— Քո երեսի մուգ գույնը,— ասաց նա,— երբեք սպիտակ չի դառնա, Աբդիմելեք... Այդուհանդերձ, դու պատկանում ես Աստծու ժողովրդին... Շատերը, որոնք միայն արյան ճանապարհով են մաս կազմում Աբրահամի սերդին, պիտի մերժվեն... Քեզ, սակայն, Նա ընդունել է իբրև որդի քո մաքուր սրտի պատճառով...

* * *

Ճակատագրական հիվանդությունը հանկարծակի կերպով պատուհասել էր Անանիային, ինչպես որ Երեմիան կանխատեսել էր իր տառապալից տեսիլքում: Նա գնաց այցելելու դժբախտության մեջ գտնվող այն մարդուն, որն այցելել էր իրեն իր դժբախտության ժամանակ, երբ ինքը պառկած էր՝ ոտքերը կոճղի մեջ ամրացված և արյունակալած կապտուկներով: Նա գտավ Անանիային իր իշխանական տանն անկողնում պառկած: Հիվանդը տնքում էր ցավերից: Քիչ օրերի ընթացքում արդեն նրա մարմինը հյուծվել էր և համարյա սպառվել: Նա պառկած էր բոլորովին բաց, քանի որ ցավերն ու տենդագին ջերմությունը չէին կարող հանդուրժել վերմակը: Նրա մարմինը ծածկված էր ամբողջությամբ թարախակալված պալարներով, որոնք թունավորված արյան պատճառով փայլում էին կապույտ գույնով: Մահճակալի կողքին դրված էին մաքուր ջրով լցված կավե սափորներ:

Անանիայի որդի Երիան, որը ծառայում էր որպես թագավորի թիկնազորի սպա, ջանասիրաբար թաթախում էր կտավե նուրբ սրբիչներ սառը ջրի մեջ և դրանցով սառեցնում հոր պալարների այրուցքը: Առանց մի բառ ասելու՝ Երեմիան ներս մտավ և օգնեց մահամերձի որդուն իր բարեսիրտ գործում: Շատ ժամանակ անցավ, մինչև որ Անանիան զարթնեց իր տենդագին զառանցանքից և նկատեց Երեմիային: Ձեռքի մի թույլ շարժումով նշան արեց որդուն, որ դուրս գնա սենյակից: Վերջինս, սակայն, անանուն ատելությամբ մխրճեց իր հայացքն այցելուի աչքերի մեջ, որպես թե նա լիներ իր երբեմնի փայլուն հոր այդ դաժան ավարտի միակ

մեղավորը: Երբ մենակ մնացին, Անանիան բարձրացրեց իր խոպոտ ձայնը, որը նման էր հարբածի ձայնի.

— Այստեղ ես դու... Գիտեի, որ կգաս, եղբայր... որպես իմ մահվան պատգամաբեր...

Երեմիան, որն իր կյանքում այդքան հաճախ մահամերձների մահճակալների մոտ էր կանգնել, իր ձեռքը դրեց տառապյալի ճակատին: Անանիայի դեմքն անմիջապես խաղաղվեց, ցավերը մեղմացան:

— Այժմ ես կարող եմ վերջապես ասել ճշմարտությունը, եղբայր իմ,— շշնջաց հիվանդը:– Երեմիային խաբելու համար ես խաբեցի Տիրոջը... Որովհետև Նրա խոսքն իմ մեջ չէր...

Երեմիան մեղմորեն թեքվեց նրա վրա.

— Նրա խոսքը միշտ քո մեջ էր, Անանիա, հատկապես, երբ դու մարգարեանում էիր Եգիպտոսի մասին...

Մահամերձի դիմագծերի վրա նշմարվեց մի տարօրինակ ժպիտ.

— Թերևս այո... և թերևս՝ ոչ... Բայց ես քեզ նախանձել եմ իմ ամբողջ սրտով... Այն պահից, երբ Զատկվա այն գիշերը քո ձայնը հնչեց թագավորի ականջին... Ինչո՞ւ դու, և ոչ թե ես...

— Նախանձելի՞ն եմ,— հարցրեց Երեմիան՝ անհերևակայելի տխրությամբ:

Անանիան խոր շունչ քաշեց.

— Այո՛, նախանձելին... Միայն դու ես նախանձելին, դու՝ թշվառականդ... Ես քեզ ասել եմ. «Տերը նայում է բազում հայելիների մեջ...»: Բայց դու մի՛ հավատա... Դրանով ես ուզում էի շփոթեցնել քեզ... Քանզի միայն դու ես լսում միակ ճշմարտությունը... Միայն դո՛ւ... Միայն դո՛ւ...

Այս «միայն դուն» վերածվեց հոնդյունի: Կարծես թե Անանիան կորցրել էր գիտակցությունը: Երեմիան արդեն ուզում էր կանչել նրա որդուն, երբ հիվանդի ձեռքը պահեց նրան.

— Ինչո՞ւ դու... Ինչո՞ւ ոչ ես... Տես, ամբողջ հարցը սա է... Ես ուզում էի ստիպել Տիրոջը թեքվել դեպի ինձ... Բայց հետո տեսա, որ ամենևին Նրա կարիքը չունեմ, որպեսզի մեծ դառնամ մարդկանց առջև... Դա հնարավոր էր առանց Նրա... Ավելի լավ էր առանց Նրա...

Անանիան փորձեց ծիծաղել: Դրանով նրա ցավերը տասնապատկվեցին: Երեմիան ուզում էր հանգստացնել նրան, բայց նա ընդդիմացավ.

— Նա երկու պատիժ ուղարկեց ինձ, եղբայր իմ... քո անհավատությունը... որովհետև դու ինձ երբեք չհավատացիր: Ոչ մի խոսք մի՛ ասա... Ես միայն ցանկացա հաղթել քեզ... Եվ հետո... ահա, տես... իմ պալարներն ու թարախակալված վերքերը... որոնք, սակայն, իմ ուրախությունն են... իսկ քանի որ դու խոսում ես Նրա հետ, որը միայն քեզ է լսում, ասա Նրան, որ թարախոտ պալարներն Անանիայի ուրախությունն են... Նա շնորհակալություն է հայտնում Քեզ իր պատժի համար...

Հիվանդը դեպի հետ ընկավ և այլևս ոչինչ չասաց: Նրա շունչը կարծես թե դադարել էր: Սակայն նա կրկին վերագտավ իրեն և ձեռքով ծածկեց սիրտը՝ միակ տեղը, որը զերծ էր մնացել հիվանդությունից:

— Այստեղ ահա, եղբայր իմ,— կմկմաց նա,— այստեղ չկան ոչ պալարներ և ոչ թույներ... Նույնիսկ եթե չհիշվեմ... դու, սակայն, ով ատելիդ իմ, տես Անանիայի վաստակը... և իմացիր՝ իմ սիրտը երբեք չի ատել քեզ...

* * *

Տաճարի նախագավիթի բեմերից հնչում էին «թավամազ» քարոզիչների ձաղկող խոսքերը: Նրանց քարոզածը, սակայն, Աստծու խոսքը չէր: Նրանք դարձել էին պատերազմի մունետիկներ՝ հարբած հաղթանակներով, քանի որ Տյուրոսի մերձակայքում Եղնաթանն իր քաջարի մարտիկներով նորանոր կորուստներ էր պատճառում Ներգալ Ռիսուայի զորքին: Երեմիան տնից դուրս չէր գալիս: Եթե նա այդ օրերին հայտնվեր՝ լուծն ուսերին դրած, այլևս ենթակա չէր լինի սովորական ծաղրուծանակի, այլ ուղղակի մահվան: Հաղթանակների վերաբերյալ քարոզիչների ամպագոռգոռ ելույթները Սիոնի դստեր սիրտը չէին լցնում երջանկության և շնորհակալության խոնարհ զգացումներով, այլ մատնում էին նրան մի ցոփ կնոջ հարբած վիճակի, որի պատճառով էլ նա ոչնչացնում էր բոլոր նրանց, ովքեր բարի և նախազգուշացման նպատակներով ելնում էին իր դիմաց:

Ավելի քան կես օր տևեց, մինչև որ Հանամեէլը՝ նրա զարմիկը, որը եկել էր Անաթովթից, կարողացավ գտնել Երեմիային իր իջևանում: Բարի զարմիկը կանգնեց իր մանկության ընկերոջ նեղ սենյակում և նրա

առջև դրեց մի պարկ զանազան տեսակի սննդարար մրգեր, որոնք նա իր հետ էր բերել իբրև նվեր: Չնայած այդ նվերին՝ Հանամեէլի դեմքը չափազանց լուրջ էր ու մտահոգ: Պատահել էր անհավատալին: Հանամեէլը եկել էր հայրական տան արժանի նահապետի՝ Օբադիայի հանձնարարությամբ: Եվ այդ հանձնարարությունն իրականում օգնության մի թախանձագին խնդրանք էր՝ ուղղված տան կրտսերին: Ըստ զարմիկի պատմածի՝ պետք է մի շատ ծանր բան պատահած լիներ, որպեսզի Հեղիի ամբարտավան երեխաների նկատմամբ հին անեծքը մեկ անգամ ևս կատարվեր: Աբիի մահվան իրական պատճառը մնացել էր անբացատրելի: Բայց քիչ–քիչ հառնում էր վրեժխնդրության պահանջը՝ ծանրորեն մթագնելով հոգիները Քեղկիայի նահապետական սրբազան սեղանի շուրջը: Այն սկսվեց Մոխելեթից: Սկզբում դա պարզապես անկանոնություն էր և մայրական պարտականությունների մեջ անփութություն: Բայց հետո հանկարծ նա մի ամբողջ գիշեր հեռանում է տնից, մազերն արձակ շրջում է դաշտերում՝ բարեպաշտ երգեր երգելով: Հաջորդ օրը վերադառնում է բոլորովին թրջված, անխնամ և առանց ի վիճակի լինելու որևէ խոսք ասելու: Նրա այս նոպաները կրկնվում են, մինչև որ նա մի օր գնում է և այլևս չի վերադառնում: Լունի լույսով լուսավորված գիշերները դիվահար ու խելագարված կինը թափառում էր Անաթովթի բլուրների վրա՝ ողբալի ճիչեր արձակելով բուերի նման, իսկ ժողովրդի կողմից էլ համարվելով մի հրեշ կամ անտառային մի դև: Երբ, սակայն, աշխարհ տեսած Հովելն անդրադառնում է, որ չար ոգիներն իր եղբոր կնոջն անբուժելի վիճակում են պահում իրենց ճանկերում, նրա կասկածները որոշակի են դառնում: Նա պատռում է իր հանդերձը և վկաների առաջ ասում է Օբադիային.

— Ես արդեն հոգնել եմ այս ամենից: Թող իմ եղբայրը տա ինձ իմ բաժին ժառանգությունը՝ վճարելով ինձ ձույլ ոսկով:

Օբադիան, հարբած իր հին երազով, որ ինքը միակ սեփականատերն է ամբողջ ունեցվածքի, համաձայնում է և մտնում գործարքի մեջ, որի հետևանքով զրկվում է իր դրամական ամբողջ գանձից: Հովելն իր կնոջ, զավակների և թոռների հետ տեղափոխվում է Բենիամինի երկրից և հաստատվում Ասքելոն պիղծ քաղաքում, որն ուներ ծովային մի մեծ նավահանգիստ և առևտրական մարդու համար շատ ավելի մեծ շահեր էր

ապահովում, քան մնացած ամբողջ երկրի առևտուրը: Մյուս կողմից էլ Հովելի նման բանիմաց և շատ ճամփորդած մարդուն այդ պիղծ քաղաքը թվում էր ավելի ապահով, քան Տիրոջ մաքուր երկիրը: Օբադիայի համար, սակայն, որը թվում էր շատ ինքնավստահ, վրա են հասնում վատ բերքի ու սակավության տարիներ: Հովելի՝ այդ ճարպիկ մարդու հեռացումով Օբադիայից հեռանում են բոլոր տեսակի օրհնությունները: Եվ նա ստիպված է լինում կարևոր վարկեր վերցնել Երուսաղեմում: Բայց հիմա, երբ արդեն նրա ուժերը տկարացել են տարիների բեռան տակ, պարտատերերն անողոքաբար սպառնում են նրան: Դրանից բացի, արքայական բանակի պաշտոնյաները վերջերս հայտնվել էին նրա տան բակում և զինվորական ծառայության էին քշել տան բոլոր մեծահասակ որդիներին ու թոռներին: Այժմ Օբադիան մենակ էր որոշ կանանց և դեռահաս երեխաների հետ Աբիաթարի սրահում: Երբ գիշերը տառապում էր մարմնի ցավերից և անքնությունից, նստում էր մոտակա ավերակված տան դիմաց և մտածում ծնողների օրհնության մասին: Այնուհետև նա լսում էր քամու մեջ իր մոլագար ու դիվահար կնոջ՝ բվի նմանվող կանչերը, որը, թաքնվելով մի ինչ-որ տեղ մացառներում, մրցակցում էր գիշերային կենդանիների ողբի ձայների հետ:

Այս պատմություններին Հանամեէլն ավելացրեց Օբադիայի աղաչանքը, որ Երեմիան, ի սեր Աստծու, ների, մոռանա, վերադառնա և իր իմաստությամբ նոր օրհնություններ բերի իրենց անկումային վիճակի բարելավման համար: Դրա փոխարեն պետք է կատարվի նրա հին պահանջը և առանց վերապահության ազատություն հայտարարվի կալվածքների վրա աշխատող բոլոր ճորտերի նկատմամբ: Ինչպես բոլոր սովորական մարդիկ, Օբադիան էլ խիստ ու դաժան էր բարեկեցության մեջ, և մեղմ՝ դժբախտության ժամանակ: Երեմիան, սակայն, տարբեր էր: Նա անխռով տարուբերեց գլուխը.

— Իմ ավագ եղբայրն ինձ այլևս երբեք չի տեսնի, քանի դեռ երկուսս էլ կենդանի ենք...

— Իսկ ճորտերի ազատ արձակո՞ւմը,— հիշեցրեց Հանամեէլը:

Մարգարեն տվեց նրան նույն պատասխանը, ինչ որ տվել էր թագավորին.

— Այն, ինչ անում է անհատը, բավարար չէ...

— Իսկ ինչ պիտի պատահի քո ժառանգության հետ,— հարցրեց բարի զարմիկը:— Ժամանակները վատացել են, և երկրում քիչ գնորդներ կան...

Երեմիան պատասխանեց դժկամությամբ.

— Աստծու երկրում իմ բաժին ժառանգությունը ես չեմ վաճառի...

— Դա կդառնա խոպան, ամայի և փշոտ մի տարածք,— զգուշացրեց զրուցակիցը:

Երեմիան բռնեց Հանամեէլի ձեռքը, զննեց նրա աչքերի մեջ և ասաց.

— Ես քեզ կդարձնեմ իմ ժառանգության կառավարիչը... Ինչ որ այնտեղ աճի ու արտադրվի, թող քոնը լինի... Իմ և քո միջև թող ուխտ կնքվի...

Սկզբում զարմիկը դիմադրում էր այս առաջարկին, բայց նա աղքատ մարդ էր, քիչ հող ուներ և չափազանց քիչ եկամուտ: Այդ իսկ պատճառով հողի և հողագործության տենչը հաղթեց իր սրտում: Զգուշավոր վարանումով նա սկսում է կազմել համաձայնագրի բնագիրը: Համենայն դեպս, նա կտրականապես մերժում է անհատույց կերպով օգտագործել կալվածքը, որով պարտավորություն է ստանձնում պտուղների և եկամտի մի մասը կանոնավոր կերպով վճարել Երեմիային: Վերջինս հանձնարարում է Բարուքին ապահովել, որ համաձայնագիրը նույն օրը վավերացվի վկաների ներկայությամբ: Այդպես էլ լինում է: Բայց երբ զարմիկը հրաժեշտի պահին կրկին մենակ մնաց Երեմիայի հետ, խորապես հառաչեց.

— Մենք երկուսով մի ուխտ կնքեցինք... Բայց ով գիտե, թե այն որքան կտևի քեզ և ինձ համար...

* * *

Հազիվ էր Հանամեէլը մեկնել, երբ Երեմիային հասավ թագավորի հրահանգը՝ անմիջապես ներկայանալ իրեն: Սեդեկիան շատ հուզված էր թվում, քանի որ շտապում էր հանդիպել այցելուին՝ առանց սպասելու նրա՝ հպատակին հատուկ ողջույնին:

— Երեմիան թող ուրախ լինի,— բացականչեց նա,— թագավորը համաձայնում է կատարել նրա մեծ խնդրանքը... Այժմ, ով իմ ուսուցիչ,

քո աշակերտը վճարում է քեզ իր պարտքն ու երախտագիտությունը... Նա մեծ բաներ է անում քեզ համար... Ապահով կարող ես հանել լուծը վրայիցդ և շպրտել այն Խեցիների դարպասի առջև...

Թագավորի վարմունքը վախեցրեց Երեմիային: Սեդեկիայի խոսքերն ամեն անգամ ավելի վերամբարձ էին հնչում.

— Դու արդեն կռահե՞լ ես դա, ով տեսանողդ և մարգարեդ... Թագավորը պիտի չսպասի Նոր տարուն... Հիմիկվանից սկսած և հենց այստեղ նա կկատարի Աստծու ամենադժվարին պատվիրանը... Դու ծանոթ չես թագավորի ջանքերին ու պայքարներին... Օրեր ու գիշերներ, գիշերներ ու օրեր շարունակ նա պայքարել է երկրի իշխանների և հողատերերի դեմ... Բայց դու դրա մասին ոչինչ չգիտեիր և դատապարտում էիր քո աշակերտին... Ուրեմն, լսի՛ր. *Շաբաթի* օրը կհայտարարվի և տեղի կունենա ճորտերի ազատ արձակում... Ես կսկսեմ իմ սեփական տնից, իսկ դո՞ւ... դու լռում ես...

Երեմիայի սիրտը հանկարծ սկսեց այնքան ուժգին բաբախել, որ նա սեղմեց բռունցքը կրծքավանդակին: Թագավորի ձայնը մարտահրավերային էր հնչում.

— Սեդեկիան արել է այն, ինչը չի արել իր բարեպաշտ հայրը, ինչը չի արել իր մեծ նախնին՝ Եզեկիան, ինչը չեն արել Դավեթն ու Սողոմոնը... Իրականում այսքանն արդեն բավական է, և ավելի քան բավական... Հազարավոր ստրուկներ ազատ են արձակվելու և պիտի ստանան իրենց հատուցումը՝ ըստ Եհովայի պատվիրանի, որը մեծ հեղաշրջում կբերի աշխարհին... Դու, սակայն, ջերմագինս խոսիր Նրա հետ, որպեսզի ուշադրության արժանացնի Սեդեկիային... Որպեսզի թագավորի մեծ գործը մատուցվի Նրան իբրև բարի աղերսանք...

Երեմիան խոնարհվեց և համբուրեց Դավթի ժառանգորդի հանդերձի քղանցքը: Այդուհանդերձ, նա ուրախ չէր, որ իր կյանքի հին պայքարը պսակվել է հաղթանակով: Սեդեկիայի խիստ ու փքուն խոսելաոճը կասկածելի էր դարձնում նրան: Նա գիտեր, որ այդ «մեծ» գործին առընթեր կան երկրորդական անմաքուր նպատակներ: Մի՞թե պատվիրանի կատարումը որևէ արժեք կունենա, եթե այն չի կատարվում հանուն պատվիրանի, այլ հետապնդում է թաքուն շահեր, ինչպես նաև աստվածային վարձատրության ակնկալիքներ: Թագավորը կարծես նկատեց Երեմիայի

տարակուսանքը: Շրջեց նայվածքն Արդիմելեքի կողմը, որն անշարժ կանգնած էր իր հետևում.

— Իմ սենեկապետ Արդիմելեք... Վաղվանից դու ազատ կլինես... Քո կյանքի երկրորդ տարուց սկսած՝ դու ծառայում ես ինձ... Արդյոք օրավուր հաշվե՞լ ես, թե արդար կերպով ինչքան եմ պարտական քեզ ոսկով... Մի՛ բացիր բերանդ հակաճառելու համար... Գիտե՞ս, թե ինչ պատիժ է տալիս Տերը նրանց, ովքեր հրաժարվում են իրենց ազատությունից... Այդ անարժանները պետք է մեխվեն իրենց ականջների բլթակներից... Խնայիր քո թխագույն ականջները, ով իմ սենեկապետ...

Արդիմելեքը, սակայն, խոնարհվեց խոր լրջությամբ.

— Նորին արքայական մեծությունը թող չբարկանա, եթե ես հակաճառելու համար բացեմ բերանս... Քո սենեկապետը Հակոբի արյունից չէ, որպեսզի իր համար վավերական լինի վերոհիշյալ օրենքը... Քո հայրն ինձ՝ քուշեցի հասարակ երեխայիս, գնել է Մովաբի ստրուկների շուկայից... Դրա դիմաց իր վճարած զումարով արդեն իսկ մարել է իմ բոլոր իրավունքները... Ես կարող եմ շարունակել իմ ծառայությունը քո փառքին...

— Լսեցի՞ր սա,— փնփնթաց թագավորը հեգնանքով,— Քուշի այս որդին ինչպես է վախենում ազատությունից... Վաղը, սակայն, երբ վրա հասնի Տիրոջ ազատությունը, Հակոբի որդիներից շատերը նախանձելու են նրան իր սև մաշկի համար...

Երեմիան լսեց այս հեգնանքը՝ առանց որևէ հակազդեցության: Ինքն էլ գիտեր, որ ճորտերից շատերի համար ազատությունը սարսափելի կլինի, ինչպես մաքուր օդը բանտարկվածների համար: Այդ իսկ պատճառով որևէ ստրկական ծառայություն չպետք է տևի յոթ տարուց ավելի, որպեսզի աստվածային ազատության հիշողությունը չկորչի մարդկանց միջից: Թագավորը, սակայն, եկավ կանգնեց Երեմիայի առաջ.

— Ես դա արել եմ ընդդեմ բոլորի և ընդդեմ ինձ... Ուղղակի Նրան հնազանդվելու համար... Բայց հիմա արդեն բավական է, և ավելի քան բավական... Երեմիան թող չհամարձակվի ինձ հիշեցնել պատերազմի պատվիրանի մասին... Մարտից առաջ տուն պիտի չվերադառնա նա, ով երիտասարդ կին է առել կամ նոր տուն է կառուցել... Եվ այն վախկոտները, որոնք վհատեցնում են իրենց եղբայրների սիրտը, կմահանան առաջին իսկ առճակատման ընթացքում...

Առանց անդրադառնալու՝ թագավորը, որը գերին էր դաշինքի, իր այդ սպառնալիքով հայտնեց դառն ու հուսահատ ճշմարտությունը: Ըստ այդմ, պատերազմը երկրի սրտում անխուսափելի էր: Միամիտները դեռ շարունակում էին հավատալ, որ Նաբուգոդոնոսորը չի համարձակվի հրդեհի մատնել ամբողջ աշխարհը. մի բան, որ սխալ էր դուրս գալու: Ինչ սարսափելի լուրեր էր թաքցնում երիտասարդ թագավորն իր սրտում, որը կրծում էր իր ստորին շրթունքը, ասես ստիպված լիներ հետ մղելու իր գաղտնիքները: Բազմաթիվ հրատապ հարցեր իր մեջ կուտակած՝ Երեմիան սևեռուն նայում էր արքային: Վերջինս, սակայն, շրջվեց և ձեռքի անհամբեր մի շարժումով ազատ արձակեց նրան:

Եվ ամեն ինչ կատարվեց Սեդեկիայի խոսքի համաձայն: Նոր տարին դեռ չսկսած՝ երկու լուսնային ամիս առաջ, տաճարում տեղի ունեցած զոհաբերությունների և ուխտերի ավարտին հայտարարվել էր ստրուկների ազատության հոբելյանական տարին: Բոլորն էլ, նույնիսկ ամենից անմիտները, նախազգում էին, որ մոտենում է աղետային մի արտակարգ իրավիճակ, ավելի սարսափելի, քան երբևէ: Տաճարի նախագավիթի ամբիոններից «թավամազ» քարոզիչներն առաջվա նման շարունակում էին իրենց ելույթները և այս անգամ՝ իբրև հաղթանակի պատգամաբերներ Տյուրոսի առջև մղվող փոքրածավալ պատերազմի, ուր Եղնաթանն ամեն օր պսակվում էր փառքով՝ համաձայն իրենց գովերգերի: Նրանք ներկայանում էին այնպես, որպես թե թագավորը գործում է՝ անսալով իրենց հորդորներին ու քարոզներին: Նրանք այդ անում էին անարգել, քանի որ Երեմիան չէր երևում, թեև նա այլևս հանել էր լուծն իր վրայից: Նրա գործունեությունն էր բերել Տիրոջ ազատությունը ժողովրդի վրա: Բայց եթե ճիշտ նայենք, այդ ազատությունը փոխհատուցված էր հարյուրավոր նեղություններով ու դժվարություններով: Սեդեկիան ճիշտ էր դատել, որ այդ ազատությունն անկում էր առաջ բերելու իր բոլոր տառապանքներով ու խառնաշփոթությամբ: Շատերը դարձել էին գործազուրկ, դաշտերը՝ անմշակ, հոտերը՝ անհովիվ: Երիտասարդ թագավորը, սակայն, միջամտում էր խիստ կերպով: Հովսիայի իսկական ու արժանի որդու խրոխտ կեցվածքով նա իր ձիու վրա նստած անխոնջ կերպով շրջում էր ամբողջ երկրով մեկ, հավաքում էր ազատ արձակված բոլոր ճորտերին, որոնք երբեք որևէ ժողովրդի կողմից արժանի չէին համարվել զենք

կրելու, ապա զինավարժության համար ուղարկում էր նրանց բանակի սպաների և պատասխանատուների մոտ: Ճորտերից կազմված բանակը դարձել էր մի վիթխարի ուժ և բաղկացած էր հազարավոր գերազանցապես զինված տղամարդկանցից: Այժմ Երեմիան հասկանում էր, թե որն է եղել նրանց ազատ արձակման մյուս անմաքուր նպատակը: Այսպիսով, թագավորն օգտագործել էր աստվածային պատվիրանը, որպեսզի մեծացնի իր զինված ուժերը և Հուդայից ձեռք բերի վերջին բազուկն անգամ, որն ի վիճակի էր զենք կրելու:

Մի օր տաճարի բակում քարոզիչները հայտարարեցին, որ Եղնաթանը մի մեծ հաղթանակ է տարել Էնդորի (Այենդոր) մոտակայքում: Մարդիկ վախեցած իրար նայեցին: Որտե՞ղ էր Էնդորը: Դա մի ավան էր Գելբուա բլուրների հետևում: Օրեր անց Էնդորի մեծ հաղթանակին հաջորդեց ավելի մեծը՝ Թանաքում: Այդ առթիվ գունատվեցին նույնիսկ ամենից անմիտների դեմքերը: Թանաքը Մեգիդոյի հարևանությամբ գտնվող մի քաղաք էր, որտեղ Հուդայի թագավորների համար մի անառիկ ամրոց կար: Ոչ ոք չէր կարող խափանել նրա ճանապարհը դեպի Եփրեմ, ով տիրում էր այդ ամրոցին ու քաղաքին:

Վերոհիշյալը եղավ վերջին հաղթանակը՝ հայտարարված փրկության «թավամազ» քարոզիչների կողմից: Բայց արդեն իսկ հաջորդ առավոտ քամուց տարուբերվող այդ եղեգները նորից վերածվեցին ապաշխարության քարոզիչների, որոնք հնչեցնում էին դաժան խոսքեր չարաշահումների և ապականության մասին՝ նախատեսելով արդար պատիժներ: Նրանք ասում էին, թե Հուդան ունի ընդամենը մի քանի հազար պատրաստված մարտիկ, մինչդեռ Բաբելոնը՝ հարյուր հազարներ, որոնք, վաղ տարիքից պայքարների մեջ մարզվելուց բացի, այլ բան չեն արել: Երուսաղեմում հետզհետե սկսվում է գյուղացիների տխուր ներհոսքը՝ իրենց կանանց, երեխաների, անասունների և կարևոր իրերի հետ: Քաղաքը լցվում է մարդկանցով, ինչպես որ կատարվել էր տարիներ առաջ: Պարիսպների նոր օղակները, որոնք կառուցել էր Մեդեկիան իր գահ բարձրանալուց անմիջապես հետո, այժմ ունենում են իրենց օգտակարությունը: Ներքին ամրություններում հիմա կարող էր տեղավորվել ու պատսպարվել կրկնապատիկ անգամ ավելի ժողովուրդ, քան քաղաքի առաջին պաշարման ժամանակ: Հովսիայի կրտսեր որդուն չէր կարելի

համեմատել Հովակիմի հետ, որի մեծությունը միայն ճառեր արտասանելու և ինտրիգներ նյութելու մեջ էր, իսկ վտանգի ամենալուրջ պահին կորցնում էր գլուխը: Սեդեկիան, սակայն, ամենևին չի կորցնում գլուխը: Նրա սուրհանդակները շտապում են դեպի Նոփ, Եդոմ, Մովաբ և Ամմոն: Իսկ ինքը կարծես թե իր ամբոխի հետ լիներ երկրում և միևնույն ժամանակ՝ Երուսաղեմում: Ինչպես բոլոր գեղեցիկ և տպավորիչ տղամարդիկ, նա իր շուրջը գտնվող մարդկանց վստահություն էր ներշնչում: Բոլոր ճամփաները խցանված էին փոխադրամիջոցներով, ուղտերով և բեռնատար էշերով, որոնք թագավորի հրամանով Երուսաղեմ էին բերում հսկայական քանակությամբ հացամթերք, գինի, յուղ և անհրաժեշտ այլ մթերքներ: Ավելի ուշ Հուդայի բանակի միավորները դարպասների միջով սկսում են մտնել քաղաք: Սկզբում դրանք միայն ցրված խմբեր էին, հետո՝ գնալով ավելի մեծ ու խիտ խմբեր: Նրանց նիզակների ծայրերը կոտրված էին, թրերը՝ ծռված, աղեղները՝ թուլացած: Այդ մարդկանց փոս ընկած աչքերը, ինչպես նաև նրանց պատառոտված ու արյունոտ թիկնոցները վկայում էին նրանց մղած կատաղի մարտերի մասին: Անմիջապես վերազինում էին նրանց, օժտում նոր զգեստներով և նշանակում Սիոնի ամրոցների ու ռազմական դիրքերի վրա: Ժողովուրդը զգում էր Սեդեկիայի գործունյա ու կառավարող ձեռքի ազդեցությունն ամենուրեք, դրա համար էլ հանգիստ էր: Թագավորի սրտից բխում է մի դառն, բայց անսասան վճռականություն: Երուսաղեմը միայնակ չէր: Քարոզիչներն անընդհատ բղավում էին դա ամբիոններից: Միայն մի բան էր հարկավոր, և դա ժամանակ շահելն էր: Վերջիվերջո, ժողովուրդները չպիտի ուզեին խայտառակվել՝ խախտելով արյան այն դաշինքը, որն իրենց թագավորները կնքել էին և ուխտել փոխադարձաբար պաշտպանել այն: Փարավոնի անունը բոլորի շուրթերին էր: Նույնիսկ նրանք, ովքեր երբեք չէին հավատում, որ Ստրկության տունը կարող էր որևէ լավ բան անել, այլևս չէին համարձակվում կասկածել, որ Հոփրա (Վափառ) փարավոնի հզոր բանակն արդեն շարժման էր անցել իրեն օժանդակող բոլոր ժողովուրդների հետ՝ քուշեցիների (այսինքն՝ եթովպացիների), փուդացիների, անու և սատիու ազգերի, լյուդիացիների և իոնացիների:

Երբ ձմեռային մի ցուրտ առավոտվա լուսաբացին պահապանները դուրս նայեցին աշտարակներից, տեսան Երուսաղեմի շրջակա ամբողջ

տարածքը տարօրինակորեն ամայացած, կարծես թե ստեղծագործության ողջ շնչառությունը կանգ էր առել՝ նախքան Վերջին դատաստանը: Ժամեր անց բարձունքներում հայտնվեցին Բաբելոնի առաջամարտիկների խիտ ու կանոնավոր շարքեր: Նրանք իսկապես նման էին Մեծ օրվա դատաստանին ծառայող պաշտոնյաների: Մարդուկը՝ այդ անխոնջ գյուտարարն ու ամենն նոր բան փորձողը, իր զորամասերում մտցրել էր երկաթյա դիմակներ, որոնք ամրացվում էին դեմքերին: Սև կամ կարմիր ներկված այդ երեսակալները, որոնք արևի տակ շողում էին հազարաթայլ երանգներով, դրանք կրողներին աստղային պատգամաբերների կերպարանք էին տալիս, լինեն դրանք Ներգալի կամ Նինուրտալի սպասավորներ: Եվ իրականում էլ դրանք այդպիսի հանգամանք ունեին: Այդ սարսափազդու դիմակների դիմաց դողում էին նույնիսկ ամենից քաջարի սրտերը:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ

ՍԵԴԵԿԻԱՅԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Տաճարի տարածքի պարիսպներն ավելի բարձր էին, քան նրանց դիմաց գտնվող պարիսպների օղակները, որոնք եզերում էին քաղաքը: Նրանց ամրությունների աշտարակներից քահանաները կարող էին տեսնել Երուսաղեմի շրջակա դաշտերն ու հեռակա բարձունքները: Արևելյան կողմի պարիսպներից մեկի աշտարակում էր Երեմիան՝ Բարուքի և Գեդալիայի հետ: Ներգալ Նաբուզարդանն իր բանակի երեք ստորաբաժանումներով ներխուժել էր երկիր: Նրանք իրենց հազարավոր վրաններով ծածկել էին Ձիթենյաց լեռան լանջերը: Ճամբարային քաղաքը կորաձև լայնությամբ տարածվում էր գրեթե մինչև Գարեբի բլուրները: Երուսաղեմն առնված էր աքցանի մեջ: Միայն հարավային անմագլցելի պարիսպները, որոնք կառուցված էին ցցված ժայռերի վրա և տարածվում էին մինչև Բեն–Հինոմի հովիտը, մնացել էին անառիկ, քանի որ այդտեղ Բաբելոնի ուժերն անգամ չէին կարող հաջողության հասնել: Քաղաքում արդեն հայտնի էին դարձել Մարդուկի զորավարների անունները: Բացի երիտասարդական գեղեցկությամբ օժտված Ներգալ Նաբուզարդանից, որը վարում էր բանակի ընդհանուր հրամանատարությունը, քաղաքի պաշարումը ղեկավարում էին Հրատ մոլորակի մեծագույններից մեծագույնները՝ Ներգալ Սարասարը և Ներգալ Սարսեքիմը: Հաջողության հասնելու համար Մարդուկ–Նաբուգոդոնոսորն արել էր առավելագույնը և բաժանվել էր Սամգեր Նեբուից, որպեսզի վերջինս անխոնջ հաշվարկներով կարողանար Ներգալ Նաբուզարդանի ծրագրերը համաձայնեցնել գիշերային երկնքի պայմաններին: Հենց որ հաստատվում է վրանային քաղաքը, անմիջապես սկսվում է մի փոքրիկ Ետեմենանկիի կառուցումը, որը միաժամանակ

պետք է ծառայեր բանակի համար իբրև տաճար և Սամգեր Նեբուի համար էլ՝ իբրև աստղադիտարան:

Ըստ ստացված տեղեկությունների՝ Աստծու ծառան Բաբելոնում զինում էր նոր բանակներ, որպեսզի իր բարձր հրամանատարությամբ անձամբ առաջնորդեր նրանց դեպի փյունիկյան ափերը, Սիրիա, Իսրայել, Հուդա, հարևան երկրներ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև մինչև Եգիպտոս, որպեսզի իրականացներ իր մեծ որոշումը: Միայն դրանից հետո է, որ «աշխատավարձով» աշխատողի սուրբ նշանը՝ ոսկե բահը, կկարողանար օգտվել իր իրավունքներից: Մարդուկը՝ կեսգիշերային առյուծը, հոգնել էր պարզապես անզգույշ մեծահոգությամբ գիշատիչ գազանների հետ խաղալուց և թույլ տալուց, որ տկար կենդանիները ծաղրի ենթարկեն իրեն: Թաթերի թույլ հարվածներն այլևս բավարար չէին: Հասել էր ժամանակն աշխարհի նորացման: Մարդկության անկարգ բազմազանությունը պետք է բոլորովին ջնջվեր, որպեսզի այն նմանվեր աստղային երկնքի կարգավորված պարզության, որտեղ ամեն ինչ ներդաշնակ հարաբերությամբ կապված է ամեն ինչի հետ, առանց որևէ կամայական խառնաշփոթության: Այս աշխարհում ևս մեկ անգամ պետք է արյուն հոսեր, որպեսզի Մարդուկը համաշխարհային մեկ տարվա համար կամ վաթսուն *«սար»* տևողությամբ երկնքի երջանկաբեր գրությունը տեղափոխեր երկրի վրա: Մեկնաբանների իմաստությունը կարգուկանոն էր բերել աստղերին՝ միավորելով նրանք պատկերների և խորհրդանշանների մեջ՝ միաժամանակ հանձնարարելով նրանց իրենց պարտականությունները: Երկրի ժողովուրդները, սակայն, ապրում էին անկարգության ու խառնաշփոթության մեջ և չգիտեին իրենց պարտականությունը:

Մարդկային տոհմերի ճնշող մեծամասնությունը (հատկապես փոքրերն ու փոքրագույնները) չէր համապատասխանում երկնքի օրենքներին և, հետևաբար, չար էր: Եվ, ի վերջո, ինչ էին ժողովուրդները: Նրանք աստղերի արդյունքներից առաջացած նոր արդյունքներ էին, որոնք հանդգնաբար կարծում էին, որ իրենք աստվածահիմն են և անկախ: Նրանց միջի փոքրերը խախտում էին ձայների ներդաշնակությունն ավելորդ ձայներով: Դրանք պետք է բոլորովին արմատախիլ արվեին աշխարհի երաժշտությունից, որպեսզի վերջինս ավելի մաքուր հնչեր: Եվ

նրանց հետ իրենց աստվածները կազմում էին մի կոպիտ շեղում ճշմարտությունից, որը տևապես և բոլոր ժամանակների համար ուսումնասիրվում էր Բաբելոնի կողմից: Կարո՞ղ է լինել մեկ այլ ճշմարտություն, քան այն, որ ամեն գիշեր ընկալում է հետազոտող աչքը, ինչպես նաև քան այն, որ կշռադատող հոգին ամեն օր ձեռք է բերում թվերի մաքուր հաշվարկումներով: Եվ ահա ժողովուրդների աստվածներից մեկը գոռոզամտությամբ իրեն վեր է բարձրացնում այդ ակնհայտ ու ողջամիտ ճշմարտությունից: Նա հակադրում է իր միավորվածությունը թվերի դեմ, նույնիսկ համարձակվում է, մարգարեի խոսքի համաձայն, Մարդուկին իր «ծառան» անվանել: Ոչինչ չէր կարող հաճելի լինել Մարդուկին այնքան, որքան այն ամբարտավանությունը, որը գերազանցում էր իրենը: Այն փաստը, որ նման ամբարտավանություն կարող էր ընդհանրապես գոյություն ունենալ, հուզում էր նրան և ջերմացնում նրա սիրտը: Նա արքայավայել ուրախությամբ էր հրճվում, որ մենամարտի համար գտել էր մրցակից, որն ինքն իրեն համարում էր գերազանց: Նրա ուժերի համախմբումն ուղղված չէր ժողովրդի դեմ, այլ Հակոբի Աստծու: Այդուհանդերձ, Եհովայի բնությունը երբեք ատելությամբ չէր լցնում Մարդուկի սիրտը, այլ մի ինչ-որ թաքուն հետաքրքրությամբ, որից նա չէր կարողանում ձերբազատվել: Տիրոջ «ծառան» պատրաստ էր ասպարեզ կարդալ այդ Տիրոջը՝ նրա իսկ սեփական տաճարում: Մարտահրավերի ուժգնությունը հենց առաջին իսկ օրվանից պարզ է դառնում, երբ Երեմիան և իր ընկերները տաճարի բարձունքներից նայում են մերձակա տարածքներում վխտացող մարդկանց զանգվածներին:

Այս անգամ Բաբելոնը խուսափում էր վայրագ հոխորտանքներ հնչեցնելուց և մուտքի դարպասների մոտ բանագնացներ ուղարկելուց՝ պահանջելով քաղաքի հանձնումը: Պատերազմի նպատակը ոչ թե քաղաքին տիրանալն էր ու այնտեղ հաստատվելը, այլ այն կործանելը: Առանց ժամանակ կորցնելու՝ հրամանատարները դիրքավորվում են պարիսպների դիմաց իրենց հրետանիով, նետաձիգներով և պարսպաքանդ սարքերով, երկար սանդուղքներով և փայտե ճոճվող աշտարակներով, քարաձիգներով՝ քաղաքի վրա ժայռ ու կրակ շպրտելու համար: Միանգամից սկսվում է պատերազմը: Նետաձիգ սարքերից արձակված երկաթյա սրածայր սլաքները մեծաղղորդ թափով մխրճվում են պարիսպների մեջ,

որոնց քարերի փշուրները ցրվում են դեսուդեն: Եզների կողմից քարշ տրվող սանդուղքներն ու փայտե աշտարակները շարժվում են պատվարների դեմ: Այդ աշտարակների ճոճվող հարթակների վրա պատրաստ էին զրահապատ կամուրջներ՝ գրոհելու համար քաղաքի վրա: Հազարավոր նետաձիգ զինվորներ, ծնկի եկած պաշարված պարիսպների արագորեն պատրաստված հողապատնեշների հետևում, շարունակաբար նետերի մեծ տարափ են տեղում քաղաքի պաշտպանների վրա: Այս առաջին ահռելի հարձակումը տևում է լրիվ երեսուն օր՝ արևածագից մինչ մայրամուտ: Այն ոչ միայն ձախողվում է, այլև Բաբելոնը կրում է մարդկային և ռազմամթերքի ծանր կորուստներ, առանց կարողանալու որևէ ճեղք իսկ բացելու պարիսպներից մեկի վրա կամ էլ գրավելու արտաքին աշտարակներից որևէ մեկը:

Հաջող ինքնապաշտպանությունը Սեդեկիայի գործն էր, որը երիտասարդական եռանդով ռազմաճակատից ռազմաճակատ էր շտապում և ճարպիկ հնարքներով թշնամու կատաղի հարձակման ամբողջ ուժգնությունը ձախողության մատնում: Նա ամեն անգամ թույլ էր տալիս, որ փայտե պաշարող աշտարակները շատ մոտիկ գան, այնուհետև ձեռնարկում էր իրենց կեղծ փախուստը: Նոր միայն վերջին պահին նա թաքստոցներից վառվող յուղերով գրոհում էր աշտարակների հարթակներում գտնվող շարժական կամուրջների վրա և դրանք հրո ճարակ դարձնում, որոնցից շատ հազվադեպ էր մեկնումեկը փրկվում: Եթե օրը պատկանում էր թագավորին, ապա գիշերվա տերն էր Եղնաթանը: Վերջինս հավաքել էր Հուդայի անապատում, հարավի անանցանելի լեռներում և Մեռյալ ծովի Արաբա հովտում այն բոլոր խմբավորումներն ու բանակները, որոնք թագավորի կողմից ընդգրկված չէին քաղաքում: Դա պարտիզանական ընդհարումների մի հաջող ռազմավարություն էր, որին Եղնաթանը ծանոթ էր դեռևս Հովակիմի օրերից: Բայց քանի որ այժմ նա ուներ ոչ միայն թույլ և առանձնացված խմբեր, այլև մի իսկական զինված ուժ, սպառնում էր քաղդեական զորքի՝ իրար կապող բոլոր ճանապարհներին, միաժամանակ գիշերային ժամերին Նաբուզարդանի թիկունքում հարձակումներ էր կատարում Բաբելոնի ճամբարների վրա: Բաբելոնի համար գիշերները սուրբ էին, և նրա զինվորները խուսափում էին մթության մեջ կռվելուց: Ավելի քան մեկ անգամ հաջողվում է

Եղնաթանին տապալել բաբելոնյան ճամբարի պահակներին և մահ սփռելով՝ մի փոքր ներխուժել այնտեղ: Մեծ էր Աքբորի դաժան որդու պատճառած վնասը Բաբելոնին, բայց դրանից ավելի մեծ էր այն անորոշությունը, որը տիրում էր պաշարումն իրականացնող բանակի մեջ: Ներգալ Նաբուզարդանը ստիպված էր թուլացնելու իր ուժերը և Ներգալ Սարսեքիմի հրամանատարության տակ բանակի մի ստորաբաժին ուղարկելու դեպի Հուդայի անապատ, որպեսզի հետապնդի ու ոչնչացնի Եղնաթանին: Տեղի է ունենում հակառակը: Խոր կիրճերում, չոր հովիտներում և անապատի վայրի ծայրամասերում տեղացիները հեշտությամբ են հաղթում իրենցից տասնապատիկ անգամ գերադաս ուժերին: Եղնաթանը ներքաշում է Ներգալին դեպի մի նեղ կիրճ՝ կրաքարե բեկորներով լցված, և մինչ վերջինս այնտեղ հաստատում էր իր ճամբարը, հարձակվում է նրա բանակի վրա և կոտորում համարյա բոլորին: Այնուհետև այդ վայրը կոչվում է *Ադումիմ*, այսինքն՝ արյունահեղության կիրճ: Սարսեքիմն իր փոքրաթիվ թիկնապահների հետ կարողանում է փախչել Նաբուզարդանի մոտ:

Այս բոլոր բարենպաստ իրադարձություններից հետո Երուսաղեմը մինչև իր սրտի խորքերը համակվում է ցնծալից հույսով: Երեմիան սխալվել էր: Տերը թույլ չէր տվել իր ժողովրդի կործանումը և իր ժառանգությունը չէր դարձրել ազգերի ծաղրուծանակի առարկա: Հատկապես Բաբելոնին ապացուցել էր, որ իր առջև նրա մեծությունն ու զորությունը ոչնչություն են: Պատերազմական բարենպաստ իրավիճակի առաջին պտուղներն արդեն նկատելի էին: Մովաբը, Եդոմը, Ամմոնը խոստանում են կատարել իրենց դաշնակցային խոստումն ու պարտավորությունը և բանակներ են զինում: Ամենից հոյակապն այն էր, որ Նոփի բարի աստվածն իր անձնական խորհրդականներից երեքին ուղարկել էր Երուսաղեմ, չնայած պաշարման վիճակին: Սեդեկիայի հետ նրանց առաջին խորհրդակցությունից հետո արքայի դեմքը փայլում էր անսովոր ուրախությամբ:

Դարձյալ տաճարը գլորվում է ու ճոճվում, ինչպես մի նավ ծովի փոթորկի մեջ: Զոհասեղանի կրակը ոչ մի վայրկյան չի հանգում: Անհնար էր նրա անկյունների պղնձե հալված եղջյուրները փոխարինել: Քահանայապետը բարդացնում և ավելի է խստացնում ծառայությունը:

Քահանայական կարգերի համար քունը համարյա բոլորովին վերացել էր: Սուր և ազդեցիկ աղոթքները երբեք չէին դադարում, ինչպես զոհաբերությունների բոցը:

Քաղաքը ոչ միայն կարիքներ չուներ, այլև ապրում էր առատության մեջ: Պարիսպների ներքին և արտաքին օղակների միջև արածում էին անասունների նախիրները: Պահեստները լիքն էին ապրանքներով, իսկ լճակները, ջրամբարները, ջրավազանները լցված էին մինչև բերան ձմեռային թարմ ջրով: Օրինաբեր անձրևը բխեցնում էր աղբյուրներ, առուներ և ջրհորների ակեր: Այլևս ավելի հիվանդություն չկար, քան ինչ որ եղել էր սովորական խաղաղ ժամանակներում: Քանի որ հարավային դարպասներն անվտանգ կերպով բաց էին, մարդ կարող էր ձեռք բերել այն, ինչի կարիք ուներ: Եղնաթանի սպաները համարձակորեն հափշտակում էին ոչ միայն Բաբելոնի ուղարկած պաշարները, այլև բռնում ու կողոպտում էին այն բոլոր քարավանները, որոնք համարձակվում էին Նեղոսից դեպի հյուսիս գնալ՝ անցնելով խնկի և ոսկու ճանապարհի երկայնքով: Գիշերները հարյուրավոր բեռնավորված ուղտեր էին բերում քաղաք՝ անցնելով Խեցիների դարպասի և Հովտի դարպասի միջով: Երուսաղեմը, ավելի քան երբևէ, ծաղկում էր սրի ներքո: Երբ մեկը տալիս էր Սեդեկիայի անունը, դրա վրա ավելացնում էր նաև իր օրհնության մաղթանքները:

Երեմիան, Բարուքը, Գեդալիան ու Միքիան այժմ գրեթե ամեն օր միասին նստում էին տաճարում: Նրանք նաև անխոնջ կերպով մասնակցում էին զոհաբերություններին, ժողովրդական աղոթքին, պահեցողությանը և ջերմեռանդ հսկումներին: Երբ Երեմիան մենակ էր լինում իր սենյակում, այն ժամանակ փորձում էր առաջվա նման զրույց սկսել Տիրոջ հետ: Բայց Եհովան կարծես թե հոգնել ու հագեցել էր Իսրայելից ու Երեմիայից:

Սրբազան *շաբբաթ* օրերից մեկում, երբ պարիսպներից դուրս մղվող պայքարը մի փոքր մեղմացել էր, ծեր Ահիկամը թույլ տվեց, որ իրեն տանեն իր հոր ուսուցանելու և ուսանելու նվիրված սենյակը: Նրա դեղին մաշկը, քարացած հայացքը, կտրվող շունչը, մարած ձայնը ցույց էին տալիս, որ նա արդեն հասել է իր կյանքի վախճանին: Նա իր մոտ կանչեց Երեմիային և հարցրեց.

— Կամ արդյոք որևէ փոփոխություն Տիրոջ նպատակների մեջ:

Երեմիան բացասաբար շարժեց գլուխը:

— Ես դա գիտեի,— դժվարությամբ հառաչեց Ահիկամը,— Երջանիկ սկիզբն ինձ չի կարող խաբել... Բայց այն, ինչ ես գիտեմ, ամենևին Երեմիայի իմացածի նման չէ... Դա պարզապես իմ սեփական մտածողության եզրակացությունն է... Քանզի ես Աստծու խոսքն ունկնդրող մարդկանցից չեմ, այլ միայն աղքատ որդին եմ իմ հոր, ում եզրահանգումները գերազանցում էին բոլոր մահկանացուներինը... Այս անգամ, սակայն, իմ եզրակացությունը համապատասխանում է Երեմիայի մեջ Տիրոջ խոսքով ձևավորվածի հետ...

Ահիկամը նշան արեց իր ծառային, որ բարձեր դնի իր կողքերին, որպեսզի կարողանա նստելու ավելի վայելուչ դիրք ընդունել: Սակայն արագ վրա հասան նրա որդիները և ուղղեցին նրա կաթվածահար մարմինը, որն այլևս իր մեջ բավարար ուժ չուներ ուղիղ նստելու:

— Կամ արդյոք այստեղ մեկը,— շշնջաց նա,— որը մեզնից չէ: Բարուքը՝ Երեմիայի աշակերտը, թող մնա մեզ հետ, թող լսի և արտահայտվի... Հավաքվեք իմ շուրջը և ականջ դրեք, որպեսզի խորհրդակցենք այն մասին, թե ինչ է պատահելու ավարտից հետո, որը կատարվելու է իմ վախճանից հետո...

Ներկաներն այդտեղ մի օղակ կազմեցին Ահիկամի շուրջը, թեքվեցին նրա կողմը, որպեսզի նա ստիպված չլինի լարել իր ձայնը, և վտանգավոր խոսակցությունը դուրս չգա շրջանակից:

— Երբ այդ վերջը գա,— հևքոտ ձայնով սկսեց իր խոսքը Հովսիայի անձնական քարտուղարը,— և ամեն ինչ կործանված լինի, հրդեհված, սպանված, տարագրված, այդ բոլորով հանդերձ պիտի վերապրի Հուդայի վերջին մնացորդը...

Լսելով այս խոսքերը՝ բոլորն էլ տագնապով լցված խոնարհեցին իրենց գլուխները: Թեև իրենց կասկածները շատ մոտ էին ասված սահմռկեցնող ճշմարտությանը, այդուհանդերձ, այն ասես մուրճի հարված լիներ՝ իջած իրենց գլխին: Ահիկամն այլևս շատ ժամանակ և ուժ չուներ:

— Հուդայի վերջին մնացորդը,— կրկնեց նա.— եկեք միայն ավելի շատ մտածենք նրա մասին, ավելի շատ հոգ տանենք նրան... Նա չի կարող մնալ առանց հովվի: Այս է իմ մեծ մտահոգությունը, որն ինձ

գիշերները չի թողնում քնել... Ո՞վ կուզենա լինել այն հովիվը, որը պետք է համախմբի Հուդայի մնացորդը, երբ ժամը հասնի... Լսո՞ւմ ես, Երեմիա... Դա պետք է լինի այն մարդը, որը Տիրոջից է, որը չի ապրում իր սեփական օգտի համար... Դա պետք է լինի այնպիսի մեկը, որը սիրված ու գնահատված լինի Բաբելոնի կողմից, որպեսզի մեղմացնի բռնությունը... Դա պետք է լինի այն մարդը, որը հենց այսօր կամ վաղը պիտի որ լքի այս քաղաքը՝ երկրում տեղ պատրաստելու վերջին մնացորդաց համար... Լսո՞ւմ ես, Երեմիա...

Մատնանշված անձը բարձրացրեց իր ձեռքերի ափերն Ահիկամի դեմքի դիմաց և ասաց.

— Ես չեմ լքի այս քաղաքն իր վերջին օրվանից առաջ... Բայց իմ բարերարը թող նկատի ունենա, որ Երեմիան այն հովիվը չէ, ում սիրում է հոտը... Քանի անգամ որ ինքը մոտեցել է այդ հոտին, խրտչեցրել է նրան... Ես այն մարդը չեմ, որին դու փնտրում ես...

Ահիկամն այլ պատասխան չէր ակնկալում: Նրա հայացքն ընկավ երկվորյակների վրա, որոնք արդեն հասուն տղամարդիկ էին:

— Այսպիսով,— ասաց նա,— հայրը դնում է իր հոգսն ու կամքը որդիների վզին... Գեդալիան և Միքիան երկուսն էլ Տիրոջից են... Նրանք չեն ապրում իրենց անձնական շահերի համար... Գեդալիան շատ է գնահատված Բաբելոնի արքունիքի կողմից... Հետևաբար, Գեդալիա, ես հրամայում եմ քեզ իմ մահվան ուժով: Լքիր այս քաղաքն այսօր կամ ամենաուշը վաղը և երկրում պատրաստիր այն ապահով վայրերը, ուր, երբ ժամը հասնի, կարող կլինես ընդունել ու տեղավորել Հուդայի վերջին մնացորդը...

Գեդալիայի վայելուչ դեմքը մռայլվեց.

— Թող իմ հայրը լսի ինձ,— թոթովեց նա:— Ինչ էլ պատահի, Գեդալիան դավաճան պիտի համարվի...

Ահիկամը մնաց անտարբեր.

— Մի՛ մտահոգվիր, թե ինչ կասեն մարդիկ, նախքան քո արդարացման օրվա գալը... Եվ դա կգա... Դրանից հետո ի՞նչ կարևորություն ունի անցյալում ամբողջ պատահածը...

Անդամալույծը գնալով կորցնում էր իր ուժը և հետ ընկավ, չնայած բարձերի նեցուկին:

— Այլևս չեմ խոսելու,— մրմնջաց նա,— մինչև որ չտաք ձեր երդումը:

Իր մոտալուտ մահվամբ պայմանավորված՝ հայրն արձակել էր մի հրաման: Նա պատրաստվում էր մտնել հայրերի երկարաձիգ շարքի մեջ, որը հետադարձ կերպով հասնում էր մինչև առաջին մարդը և, հետևաբար, մինչև Արարիչը: Մահանալու նշանը, որը վերադարձի նշան էր, արդեն դրոշմվել էր նրա դեմքին: Միթե բարեպաշտ որդիները կարող էին անտեսել վերջին կարևոր հրամանն իրենց հոր, որը պատրաստվում էր բռնել վերադարձի ճանապարհը, և որն այդ պահին գրեթե ավելին էր, քան Տիրոջ պատկերի նմանությունը: Տկար և դժգույն Միքիան դարձել էր սովորականից շատ ավելի գունատ: Նա իր նիհարավուն ձեռքերը խաչաձևել էր կրծքին, քանի որ այժմ խոսքն ուղղում էր իր հորը.

— Սկզբում ուղարկվում է փոքրն ու խոնարհը, ապա՝ կարևորն ու հեղինակավորը... Մենք՝ երկուսս, որ երկվորյակներ ենք, մեզնից Գեդալիան է ավագն ու ծանրակշիռը... Նա ունի ոչ միայն խոհեմություն, այլև ուժ, և ժողովուրդը վստահում է նրան... Թող իմ հայրն ուղարկի փոքրին՝ Միքիային, որպեսզի պատրաստի մնացորդաց հավաքավայրը... Քաղաքից նրա հեռացումը չի ազդի ոչ ոքի վրա... Այնուհետև, երբ ժամանակը գա, Գեդալիան կհետևի նրա օրինակին՝ իբրև հովիվ մնացորդաց...

Ահիկամը բարեհամբույր ժպտաց՝ իր որդիների հավատարմության ոգուց բավականացած: Միքիայի տված խորհուրդը լավ էր, և նրա ցույց տված ճանապարհն էլ՝ ճիշտ:

* * *

Երիտասարդ թագուհի Մաաքան արցունքոտ աչքերով խնդրեց Երեմիային՝ չհեռանալ թագավորի կողքից այն վտանգավոր գործողության ժամանակ, որը ձեռնարկել էին Սեդեկիան և նրա հերոսները: Երեմիան, սակայն, որ չէր կարող խուսափել Մաաքայի տագնապալի խնդրանքից, տվեց նրան իր խոսքը:

Նորալուսնից դեռ շատ առաջ Սեդեկիայի մերձավոր իշխանները հավաքվում են Խեցիների դարպասի առաջ և դեպի թագավորական պարտեզները տանող կրկնաշար պարիսպների մոտ: Նրանց հետ էին մի քանի հարյուր ընտրված ռազմիկներ՝ Անանիայի որդու՝ Երիայի

հրամանատարության ներքո: Բոլորը կրում էին սև կամ մուգ գույնի հագուստ, որպեսզի ոչ մի պայծառ բիծ չմատնի իրենց: Ռազմիկները սև գույնով էին ներկել նույնիսկ իրենց զրահն ու զենքերը, առանց տեղյակ լինելու, որ Նինուրտուն՝ Երևակ աստղը, իշխում էր այդ գիշերվա վրա: Սեղեկիայի ընկերների շարքում էր արքայական գերդաստանից մի մարդ՝ իշխան Իսմայելը՝ կրտսեր եղբայրը Հանամեէլի, որը ժամանակին դաժանորեն հալածել էր Ուրիային ու Երեմիային, և հետո ստիպված էր եղել աքսորյալների հետ գնալ Բաբելոն: Բավականին զարմանելի էր, որ Մարդուկի իշխանությունները նման բարձրաստիճան ու դաժան վերաբերմունքի տեր եղբայրներից մեկին թողել էին տեղում: Ոչ պակաս զարմանալի էր նաև այն, որ թագավորի ծառայության շատ նեղ շրջանակին պատկանող մեկը՝ Փաշհուրի որդին, որն իրեն անվանում էր Մալքիա, կարողացել էր վերադառնալ Բաբելոնից՝ կաշառելով այնտեղ պաշտոնատար մի անձի: Իսմայելից և Մալքիայից բացի, արքայական սեղանին կանոնավոր մասնակցող երկու վայելչագեղ երիտասարդ իշխաններ սպասում էին թագավորին: Նրանց անուններն էին Շեփաթիա և Հովաքալ: Ճակատագրի բերումով նրանց աքսորյալ հայրերը Երեմիայի առավել չարամիտ հակառակորդներն էին: Իսմայելը, Մալքիան, Շեփաթիան ու Հովաքալը «պալատի տատրակներն» էին: Այսպիսով, Սեղեկիայի բարեկամների շրջանակը բաղկացած էր Երեմիայի թշնամիներից, անհետացած բռնավորների որդիներից և եղբայրներից, որոնք ժառանգել էին մի վառվող ատելություն՝ ընդդեմ մարգարեի: Կարծես թե մի անխախտելի օրենք էր, որ Սուրբ գրոց ոչ մի սիրահար կամ մարգարեներին մեծարող անձ չպետք է հավաքվեր թագավորության շուրջը, այլ այնտեղ պիտի լինեին միայն սրբազան գրությունները մեծամտաբար արհամարհողներ և հոգին ուրացողներ: Չորս երիտասարդները, որոնք իշխանավայել կերպով էին զինված, ջանք չէին խնայում՝ ցույց տալու Երեմիային իրենց հակակրանքն ու արհամարհանքը: Նրանք չէին պատասխանում նրա խաղաղության ողջույնին, խուսափում էին նրանից քամահրանքով, ծաղրական խոսքեր էին ասում նրա մասին այնքան բարձրաձայն, որպեսզի նա ստիպված լիներ լսել դրանք: Երեմիան մնացել էր մենակ: Նրան արգելված էր տեղեկացնել Բարուքին մարտական ծրագրերի մասին կամ նրան իր հետ տանել: Նրա սիրտը զայրացած

մտածում էր, թե ճիշտ չէր լինի արդյոք հրաժարվել թագավորից ու նրա շրջապատից և գնալ տուն: Ինչո՞ւ և ո՞ւմ համար նա պետք է այդ գիշեր զոհաբերություն կատարեր՝ վկայություն տալով արյան հեղումի մասին, որից նա խորշում էր փսխելու աստիճան: Ի վերջո, ի՞նչ էր այն, որն իրեն մղել էր իր պատանեկությունից ի վեր անձնվիրաբար ծառայել Դավթի այս որդիներին, որոնք իր խոսքը, որը Եհովայի խոսքն էր, քամուն էին տալիս: Ինքը բան չուներ անելու արքունիքում կամ թագավորների ռազմական գործողություններում:

Երեմիան արդեն որոշել էր տուն գնալ, երբ վերջին մթնշաղում հայտնվում է Սեդեկիան Աբդիմելեքի հետ, իրենց հետևում՝ սուսերակիր և վահանակիր թիկնապահների մի խումբ: Թագավորը շատ ակնհայտ կերպով անցնում է իր չորս մտերիմների կողքով՝ առանց ողջունելու նրանց: Կարծես կռահած լինելով Երեմիայի մտադրությունը՝ արագ մոտենում է նրան, սիրալիր ողջագուրվում նրա հետ՝ հայտնելով նրան՝ «իր ուսուցչին», իր խորին շնորհակալությունն առ այն, որ նա եկել է այդտեղ, որպեսզի այդ գիշեր, շնորհիվ Աստծու հետ իր ունեցած մերձավորության, հովանավորի իր աշակերտին: Սեդեկիան այնքան բարձր էր խոսում և այնքան բացահայտ էր ցույց տալիս իր հարգանքը, որ շրջապատի մարդիկ, որոնք հենց նոր էին անողոք կերպով ծաղրում Երեմիային, մատնվում են շփոթության և ամոթի: Երբ պատրաստվում են մեկնել, թագավորը հանդուրժում է միայն Երեմիայի ընկերակցությունը, իշխանները պետք է մնային հետևում:

Լուռ բացվում են դարպասի ծանր փեղկերը: Թիկնապահների խմբերն անմիջապես անձայն անհետանում են մթության մեջ: Անլուսին գիշերը չափազանց փոթորկոտ էր. դա մի շատ բարենպաստ հանգամանք էր: Ճամբարի լույսի գոլորշապատ ցոլքը բարձրանում էր դեպի երկինք, որի տակ ցածր ամպերը քամուց քշվում էին դեպի արևելք: Ճանապարհը նշանակված էր: Հուդայեցիք շտապում էին հեռանալ, ինչպես փախչող ստվերներ: Երեմիան ստիպված էր մեծ ջանք թափել՝ երիտասարդ թագավորին հավասար քայլելու համար:

Ճանապարհին Սեդեկիան շշնջալով հայտնում է իր ծրագիրը մարգարեին: Խորամանկ գործողությունը պետք է տեղի ունենար երեք հանգրվանով: Առաջինի համար պատասխանատու էր նշանակվել Եղնաթանը:

Այս անգամ նա ստիպված էր հավաքել իր ողջ ուժը բոլոր թաքստոցներից ու անկյուններից և որոշված պահին տանել դրանք դեպի ճամբարային քաղաքի հարավային խրամատները: Այստեղ ճամբարը տարածվում էր մինչև Հովսափատի հովիտը. այն պաշտպանված էր միայն թույլ պատվարներով և դրա համար էլ բազմիցս դարձել էր Եղնաթանի գիշերային հարձակումների թիրախը, անշուշտ, միշտ համեստ ուժերով: Թշնամու բանակի ղեկավարները, նկատի ունենալով նման հաճախակի հարձակումները, որոշ ժամանակից ի վեր կրկնապատկում և եռապատկում են իրենց պահակային ուժերը հարավային կետերում: Արևելքում և հյուսիսում, ուր պատնեշները ձգվում էին մինչև անանցանելի բարձրադիր սարահարթը, վրանային քաղաքի հրամանատարները շատ չէին վախենում նմանատիպ հարձակումներից: Սեղեկիան աշխատում էր և ակնկալում, որ պահապաններն իրենց ապահով զգան Ձիթենյաց լեռան բարձրության վրա: Նրան հաջողվել էր սիրաշահել Բաբելոնի հրամանատարներից (*ռաբսախիմ*) մեկին, որն արամեացի էր և այդ գիշեր արևելքում տեղակայված պահակների հրամանատարն էր, որպեսզի միանա իրեն: Այդ մարդը, որը դարձել էր Հուդայի կողմը, վստահ կերպով խոստացել էր թագավորին ազատ թողնել ճամբարի խրամատն ու դարպասը հենց այն պահին, երբ հարավում բարձրանար հարձակման աղմուկը: Ներգալ Նաբուզարդանի սեփական հրամանով կարգադրված էր, որ գիշերային հարձակման դեպքում բոլոր տրամադրելի պահակախմբերը պետք է միանային և միասնաբար գրոհեին հարձակվողների վրա: Մինչ մարտական հարձակումների աղմուկը դեպի հարավ կձգի բոլոր արթուն և արթնացող թշնամիներին, նրանց արևելյան խրամատները կմնան անպաշտպան: Այդժամ Սեղեկիան մտածում է իր թիկնազորի հետ գաղտնորեն մտնել ճամբարային քաղաք և կատարել մի քստմնելի սպանդ: Բացի դրանից, հովտում ու բարձունքներում տեղի ունեցող արյունահեղությունը, հրդեհների առաջին բռկումները պետք է ազդարարեին Երուսաղեմի պաշտպաններին դուրս գալ քաղաքի դարպասներից և կատաղորեն գրոհի անցնել ճամբարի վրա:

Նրանք կոացած սողոսկում են քաղաքից ներս: Այնքան մութ էր, որ մեկը մյուսին չէր տեսնում: Ոչ մի աղոտ լույս անգամ չկար՝ առաջնորդելու համար իրենց քայլերը: Միայն երբեմն մի կարճ ու նվաղկուն ձայն

թելադրում էր փոխել ուղղությունը: Երեմիան մի զգուշավոր կանխազգացում ունեցավ, որ Տերը նպաստում է Սեդեկիայի մարտավարությանը: Եհովան, ում կամքը միշտ անորոշ էր ու փոփոխվող, կայացրել էր արդյոք մի նոր որոշում: Մի զորեղ հույս շողաց Երեմիայի սրտում, որը չէր խուսափում սպասելուց: Մյուս կողմից էլ, արդյոք ստրուկների ազատ արձակումը, թեկուզ երկրորդական նպատակներով կատարված, առաջացրել էր Տիրոջ գերագույն ողորմածությունը: Երանի թե այդ գիշեր աշխարհի աչքի առաջ հաջողվեր թուլացնել և շփոթեցնել Բաբելոնը... Սա մի միտք էր, որն ինքնին թուլացնում ու երերացնում էր մարդկանց ծնկները: Այդ գիշերվա ուժերը թշնամությամբ էին լցված Բաբելոնի դեմ: Նրա աստվածները թաքնված էին: Ոչ Մարդուկը և ոչ էլ Ներգալը չէին երևում երկնքում: Հարձակվողների թիկունքից փչող արևմտյան քամին ուժգնանում էր, հավաքում և քշում ամպերը դեպի հյուսիս–արևելք՝ դեպի Եփրատ, ասես զգուշացնում էր Բաբելոնի մեկնաբաններին մի չար վախճանի մասին: Երեմիան սկսեց մրմնջալ իր մանկության սովորած սաղմոսները: Նա պարսատիկի նման ուղղեց իր հոգին դեպի երկինք, որպեսզի վեր առաքված իր աղոթքների զորությամբ պաշարի Տիրոջը: Եթե հաջողվեր... եթե այդ գիշեր մի նոր գիտակցություն հայտնվեր...

Լսվեց մի կարճ կանչ: Ստվերների անտեսանելի հոսքը հանկարծ դադարեց: Ամեն ոք անձայն զցում էր իրեն գետին: Աբդիմելեքի ձեռքով Երեմիայն նույնպես ստիպված էր կռանալ: Պահակակետերի կրակները պսպղացին մացառների և ձիթենիների ոլորուն ճյուղերի միջից: Նրանց հետևում նշմարվեցին ճամբարի պատնեշները: Աստիճանավոր աշտարակի նմանությամբ և ներկված փայտից կառուցված աստղային սրահում փայլեց մի միայնակ լույս: Այնտեղ հավանաբար Սամգեր Նեբուն փորձում էր բացահայտել այդ գիշերվա խորհրդավոր անբարենպաստությունը: Երեք Ներգալները՝ Ներգալ Նաբուզարդանը, Ներգալ Սարսեքիմը և Ներգալ Սարասարը, անհանգիստ կանգնած էին նրա մոտ՝ լսելու երկնքում առաջացող աստղային դիրքերի մեկնաբանությունը, ինչը սահմանափակում էր նրանց գործունեության կարողությունը: Երեմիան փակեց աչքերը: Նրա շուրջը եղած դատարկության մեջ ոչինչ չկար, բացի հուզված մարդկանց ծանր շնչառության ձայնից: Ամբողջ ուժով նա գերազանցեց ինքն իրեն՝ կտրվելով արտաքին աշխարհից և դառնալով միայն ներքին մի

տարածք, ինչպես նաև ողողվելով անդիմադրելի ուժերով: Նրա աղոթքն ամեն անգամ ավելի ազդու կերպով էր բարձրանում դեպի Տերը: Եվ պատահեց այնպես, որ իրարից բավականին հեռու գտնվող պահակակետերի կրակների մի մասն աննկատ կերպով հետզհետե տկարացավ և հանգավ՝ գոյացնելով մի հսկա բացատ: Երեմիան լսեց Սեղեկիայի շշնջացող հրամանները: Նա տեսավ, թե ինչպես Իսմայելը, Մալքիան, Շեփաթիան, Հովաքալը և Անանիայի որդին, սևազգեստ կերպարանքների գլուխն անցած, ներխուժեցին ճամբարի ճառագայթաձև փողոցները: Երեմիան մնաց տեղում կանգնած՝ բազուկները վեր բարձրացրած, ինչպես Մովսեսը, որ արել էր պատերազմի ժամանակ: Այո՛, ոտքի է կանգնում և չի իջեցնում իր բազուկները, երբ պայթում է սարսափի աղաղակը, սուրերի առաջին շաչյունը, հրդեհաձիգ առաջին ջահերի ճռճռոցը, երբ նետերը, նիզակները, պարսատիկները, քարանետ սարքերը շառաչում են աննպատակ՝ ճեղքելով գիշերային խավարը: Ամբողջովին մեկուսացած ու փակված էր նա իր ներքին տարածքում, երբ հաղթական կրակը սկսում է ցատկել վրանից վրան և սուրացող քամու օգնությամբ հզոր ու աճող բազուկներով գրկում է հսկա ճամբարը: Բայց ինչպե՞ս կարող էր Երեմիան ուրախանալ հաղթական կրակով, երբ միևնույն ժամանակ մի ազդեցիկ մրմունջ թափանցում էր իր ներքին տարածքը: Դա անակնկալ էր և լեցուն հակասությամբ, դրա համար էլ այն վավերական էր սարսափելիորեն: Ահավասիկ սա էր Երեմիային հասած կործանարար պատգամը.

— Անգամ եթե դուք Բաբելոնի ամբողջ ճամբարը կոտորեք, վրաններում խոցվածներն ու սպանվածները նորից պիտի բարձրանան և պիտի հրկիզեն իմ այս սուրբ քաղաքը...

Երեմիան դանդաղորեն իջեցրեց իր ծանրացած բազուկները: Նրան ուշքի բերեց Սեղեկիայի ցնծությունը, որն իր ձեռքերում երկու բոցավառ ջահեր բռնած, իր թիկնապահների միջից վազում էր դեպի աստղերին նվիրված աշտարակը, որպեսզի կրակին մատնի աստվածների այդ խորհրդանիշը, որը պաշտպանվում էր միայն խառնաշփոթ կերպով հավաքված Բաբելոնի մարդկանցով: Երբ բռնկվում ու թափ է առնում փոքրիկ Ետեմենանկիի հրդեհը, Երուսաղեմի դարպասներն արդեն բացվել էին, և պաշարվածները հազարավոր կատաղած առյուծների մռնչոցներով հարձակվում են սարսափահար Ներգալներից մեկի պատնեշների վրա:

* * *

Երբ առավոտվա մթնշաղին փակվեցին Սիոնի դարպասներն արքայի վերջին մարտիկի հետևում, հայտնի դարձավ, որ խորամանկ հարձակումը ոչ միայն հաջողակ էր, այլև մղվել էր մի մեծ ճակատամարտ, և արձանագրվել մի վճռական հաղթանակ: Երկու կողմից կրակի մատնված վրանային քաղաքը համարյա ամբողջությամբ այրվել էր: Նաբուզարդանը կորցրել էր իր բանակի ոչ միայն մեկ երրորդը, այլև դարձել էր անօթևան: Սեդեկիայի զինվորներն ավերել ու գետնին էին հավասարեցրել թշնամու պատնեշներն ու խրամատները: Բաբելոնի համար վատթարագույն կորուստը համարվում էր այն, որ գրավել էին կամ կործանել նրա ռազմամթերքն ու գրոհելու հատուկ շարժական աշտարակները: Դրանով այլևս ամիսներ շարունակ անհնար էր դառնում Ներգալի նոր հարձակումը: Աստղերի վրա իշխանություն ունեցող Տերը ցույց էր տվել իր բազկի զորությունը կործանարար աստղին: Երուսաղեմի ժողովուրդը, սակայն, որն անզսպելի էր ինչպես իր հպարտության, այնպես էլ իր նվաստացման մեջ, սկսեց վաղ առավոտից խանդավառ ոգևորությամբ պարել փողոցներում և ծառուղիներում: Հաջորդ օրը, երբ գիշերային հաղթանակից հետո արևը կրկին վեր բարձրացավ, հայտնի դարձավ, որ կատարվել է հրաշքների հրաշքը. անհետացել էին Նաբուզարդանի, Սարսեքիմի, Սարասարի նվաստացած բազմությունները: Բարձր աշտարակների վրայից ամենասրատես աչքերը միայն կարող էին տեսնել դեպի հարավ շարժվող վերջապահ զորքի հանած փոշու ամպերը: Քաղդեացիների համար այնքան ստիպողական էր եղել այդ խայտառակ փախուստը, որ այն իրականացվել էր գիշեր ժամանակ՝ հակառակ իրենց ավանդություններին:

Մի սուր և շարունակական աղաղակ անցավ Տիրոջ քաղաքի միջով: Դա այլևս տոնախմբման աղաղակ չէր, այլ խելագարվածների: Իրենց երջանկության տենդի մեջ միայն քչերն էին տալիս այն կարևոր հարցը, թե ինչու է Նաբուզարդանը շարժվել դեպի հարավ, այլ ոչ թե դեպի հյուսիս: Դրա պատասխանը տրվեց երեկոյան, որով հրաշքը դարձավ իսկապես ամբողջական: Տաճարում թագավորն անձամբ ներկայացավ ժողովրդի առաջ: Սեդեկիան բոլորովին թույլ էր և գունատ՝ ի դիմաց իրեն

ընձեռված այդքան առատ շնորհների: Երկմտող ձայնով նա հայտարարեց, որ փարավոնը որոշել է կատարել իր տված խոստումը. այդ պահին նա անձամբ իր աստվածային հանգամանքով և իր զորքի հետ հատել է Եգիպտոսի սահմանը Փիթոմ քաղաքի մոտ և կարճ ժամանակ հետո կհասնի Հուդայի սահմանին՝ անհրաժեշտ օգնությամբ: Թագավորների պաշտպանողական սրբազան ուխտն ուժի մեջ էր մտել, որը ձգտում էր պատժել Բաբելոնի գոռոզությունն ու լկտիությունը բոլոր ժամանակների համար:

Դա արդեն չափազանց էր Երուսաղեմի սրտի համար: Խելագար գոռոցը տեղի է տալիս խոր լռության, ապա լռությունը վերածվում է խեղդված հեկեկոցի: Ամբողջ մի ժողովուրդ լաց էր լինում: Նա լաց էր լինում իր սեփական կարծրասրտության վրա և ի սեր բազումողորմ Աստծու, որը վերջին ժամին ներում էր շնորհել: Ոչ ոք այդ գիշեր չի հեռանում տաճարից: Քահանայական պահակախումբը և գոտիներով զինված հսկիչներն այնքան էլ ուժեղ չէին, որ պաշտպանեին ներքին գավիթն ամբոխի ներխուժումից: Մարդիկ պառկում էին գետնին և արցունքներով թրջում ու համբուրում սալաքարերը: Մեղքերի խոստովանությունը զոհաբերությունների ծխի հետ բարձրանում էր դեպի երկինք: Զղջումի և ապաշխարության այդ հիշարժան շրջանը տևում է յոթ օր: Յուրաքանչյուր սիրտ այնքան խորն էր հուզված, որ նույնիսկ Երեմիային թվում էր, թե իսկապես հասունացել է ճշմարիտ դարձի և ապաշխարության շրջանը: Այդուհանդերձ, զղջումի ժամանակահատվածից օրեր անց տեղի է ունենում մի այնպիսի զարշելի ու քստմնելի բան, որ Երեմիան երկար ժամանակ չէր ուզում դրան հավատալ, քանի դեռ չկային բացահայտ ապացույցներ:

Այդ հանցագործությունը թագավորի կողմից չէր, այլ պալատական իշխաններից և երկրի մեծ հողատերերից՝ հիմնականում այն մարդկանցից, որոնք բոլորովին նման էին ջրաղացպան Մեշուլամի: Այն քողարկված էր գեղեցիկ բառերով և արդարացված՝ թվացյալ անհրաժեշտության տեսքով: Մեծահարուստները հայտարարում են, որ ստրուկների ազատ արձակումը, որը կատարվել էր համաձայն Աստծու պատվիրանի, վատ արդյունքներ է ունեցել: Երկրում բազմաթիվ հողային տարածքներ, որոնք փրկվել էին պատերազմից, լքված վիճակում են՝ աշխատուժի բացակայության պատճառով: Վտանգված էր նաև պատերազմական

սարքավորումների և խաղաղ ժամանակների համար օգտագործվող անհրաժեշտ գործիքների արտադրությունը: Տիրոջ սեփական շահը, ում տաճարը լավ էր պաշտպանված, պահանջում էր թագավորից վերականգնել հայրերի կարգն ու դրա հետ մեկտեղ՝ կանոնավոր աշխատանքը: Աստծու ողորմած միջամտությամբ վերացել էր քաղաքի պաշարումը: Հազարավոր ստրուկներ, որոնք թույլ կամ պատշաճ կերպով էին ծառայում զինված ուժերում, այժմ ավելորդ էին դարձել և անօգտակար կերպով էին ուտում իրենց հացը, ինչը վնասում էր ամողջ երկրին: Հետևաբար, թագավորը պետք է անհապաղ հրահանգեր, որ ազատ արձակված յուրաքանչյուր ծառա վերադառնա իր օրինական տիրոջ մոտ՝ կամավոր կամ ծանր պատժի սպառնալիքով: Հակառակ իր խղճմտանքին՝ թագավորը հավանություն է տալիս իր իշխանների՝ Իսմայելի, Մալքիայի, Շեփաթիայի և Հովաքալի, ինչպես նաև բոլոր մյուսների առաջարկին, որոնք սուր պատճառաբանություններով ճնշում էին գործադրում նրա վրա՝ ասելով, որ արքայական վսեմ իշխանությունն ու հեղինակությունը կարող են զարգանալ միայն այն դեպքում, երբ ապահովվի հասարակ ժողովրդի ստրկական ենթակայությունը: Հատկապես անկայուն ժամանակներում չպետք է տկարանա նահապետական ազնվագույն տների և հզոր սեփականատերերի կարողությունը՝ ատելությամբ լցված ու վնասակար ընկերությունների անփույթ անկախությամբ: Վատ խորհրդատուները չէին անդրադառնում, որ իրենք, տեղյակ լինելով վտանգի մասին, խոսում էին ոչ թե օգտակար նկատառումներից ելնելով, այլ անհեթեթ կերպով մղված ատելության զգացումներով՝ ընդդեմ պարզ ու համեստ ժողորդի: Նրանք զգուշորեն չէին նշում, որ ճորտերի ազատ արձակումը ոչ թե մարդկային եսասիրության պահանջ է, այլ աստվածային սիրո պատվիրանի թելադրանք: Նոր տարբերակներով նրանք անընդհատ կրկնում էին, որ Աստված պատկանում է տաճարին, իսկ թագավորն էլ՝ գահին: Ծայրահեղ օրենքներով հնարավոր չէր ղեկավարել մի ժողովրդի՝ ի թիվս այլ ժողովուրդների: Նրանցից ոչ մեկը կարծես թե տեղյակ չէր Եհովային դավաճանելու սատանայական և անպարկեշտ անպատվության մասին՝ վերացնելով այն պատվիրանը, որն իրագործվել էր դժբախտության ժամանակ... Մեդեկիան քաջատեղյակ էր գարշելի մեղքի մասին: Մինչ նրա կառավարիչներն ու վերահսկիչներն

ամբողջ երկրում վերահաստատում էին իրենց հայրերի կարգադրությունը, թագավորն իր սեփական տանը և իր կալվածքներում չէր վերացրել ստրուկներին շնորհած ազատությունը: Այդքանը, սակայն, չի հանգստացնում Երեմիային: Այժմ նա անսահման վրդովմունքից լաց էր լինում ինքն իր մեջ: Եվ երբ հայտնի է դառնում, որ ստրուկները պետք է լծվեն իրենց նախկին աշխատանքին և վերադարձնեն իրենց տերերից ստացած իրենց հատուցումները, Երեմիան վրդովմունքից նույնիսկ անեծք է կարդում: Առաջին և միակ անգամն էր, որ նա լքում է իր ժողովրդին, որի համար ինքը, սկսած իր կոչման գիշերից, պայքարել էր Տիրոջ հետ անձնվիրաբար: Անքնությունից թավալվելով՝ հեկեկում է նա մթության մեջ.

— Դու ասացիր, Հակոբի Աստված, Ես այս ժողովրդին կերակրելու եմ օշինդրով և խմեցնելու եմ դառնության ջուր... Դու ասացիր. Ես ուզում եմ դրանց ցրել այն մարդկանց մեջ, որոնց չեն ճանաչել ոչ նրանք և ոչ էլ նրանց հայրերը... Տեր, Տեր, ես չեմ ընկնի քո գիրկը...

Աստծու դեմ կատարված այդ ցնցող դավաճանությանը հաջորդող օրերին թագավորը երեք անգամ ուղարկեց իր սենեկապետ Աբդիմելեքին Երեմիայի մոտ՝ կանչելու նրան պալատ: Մարգարեն երեք անգամ էլ մերժեց քուշեցուն միևնույն բառերով.

— Իմ անունով ասա քո տիրոջը. ի՞նչ կապ ունի Երեմիան քեզ հետ:

Այնուհետև մի շատ անսովոր բան տեղի ունեցավ: Թագուհի Մաաքան, ում, ընդունված սովորության համաձայն, խստիվ արգելված էր ինքն իրեն ցույց տալ արքայական պալատից դուրս, համարձակվեց մի երեկո՝ մթնշաղին, խիտ քողերով ծածկված և ընկերակցությամբ միայն մի նաժշտի, դուրս գալ պալատից և ուղղվել դեպի Երեմիայի կացարանը: Նա արագորեն մոտեցավ անակնկալի եկած մարգարեին և բռնեց նրա ձեռքը.

— Ինչո՞ւ է Երեմիան հրաժարվել իր և իմ տիրոջ հանդեպ ունեցած հավատարմությունից,— հարցրեց նա՝ շիկնելով իր իսկ համարձակությունից:

Երեմիան, առանց նրա կողմը նայելու, պատասխանեց նրան.

— Քո տերը, որը տիրում է միայն մի փոքրիկ հողատարածքի, խզել է իր հավատարմությունն ամբողջ աշխարհի Տիրակալի հանդեպ...

Մաաքայի նիհարավուն և պարմանի դեմքի տարօրինակ ստվերները խորացան:

— Ոչ ոք ավելի լավ չգիտե, քան իր կինը,— հակադարձեց նա,— թե ինչքան է հավատարիմ թագավորը Տիրոջը... Մարգարեի համար շատ հեշտ է խստությամբ վարվել... Թագավորը, սակայն, խճճված է աշխարհի գործերում... Իր հերոսների հպարտությունը, իր իշխանների կամքը, իր մարդկանց ագահությունն ազատ չեն թողնում նրան... Ինչ է իմանում Աստծու մենավոր մարգարեն, թե որքան դժվար է գտնել նեղ ճանապարհը գիշատիչների երախում...

— Թող նա վերջ տա իր թուլության նեղ ճանապարհին,— ասաց Երեմիան խստությամբ:

Թագուհին անտեսեց այս մեղադրանքը: Նա պատրաստ էր դիմանալ նույնիսկ ավելի ծանր խոսքերի: Չնայած նրան, որ ամբողջ քաղաքը դեռ թնդում էր հաղթանակների տոնական ձայներից, Մաաքան եկել էր վրդովված մարգարեի մոտ՝ քողարկված կերպով ներում խնդրելու խոստումնադրուժի համար:

— Այս օրերին տեղի են ունենալու մեծ իրադարձություններ,— ասաց նա:— Թագավորը ցանկանում է լսել քո խոսքը, իսկ դու քեզ թույլ ես տալիս ասելու նրան՝ «Ինչ կապ ունի Երեմիան քեզ հետ»...

— Նրա համար օգտակար չէ լսել իմ խոսքը,— պատասխանեց Երեմիան,— Քանի որ նա անում է միայն այն, ինչ ասում են իշխանները...

Մաաքան բարկացած թողեց Երեմիայի ձեռքը, որը բռնել էր աղերսալից, և ասաց.

— Բայց ես ուզում եմ, որ նա լսի քո խոսքը և ոչ միայն իր իշխաններինը... Նա այսօր իսկ պետք է լսի քեզ...

Երեմիան շրջեց գլուխը, քանի որ երիտասարդ կնոջ մաքուր էությունը և ջերմեռանդ պնդումը թուլացնում էին նրան: Նա հիշեց անցյալը.

— Այն խոսքի համար, որն իմ խոսքը չէր, ես մի անգամ ծեծի եմ ենթարկվել, բանտարկվել և տարեցտարի հալածվել մահվամբ... Արդյոք պե՞տք է, որ ես կրկին վտանգի ենթարկեմ իմ կյանքն ապարդյուն կերպով... Եվ ո՞ւմ համար...

Հուզմունքից ջղաձգվեց Մաաքայի բերանը.

— Մի՞թե դու դա անում ես թագավորի համար,— հարցրեց նա՝ զսպված ու խիստ ձայնով,— կամ ի՞նձ համար... Դու պարտավոր չե՞ս արդյոք խոսել այս ժողովրդի օգտին...

Արագ շարժումով Երեմիան շրջվեց դեպի նա և նկատեց, որ նրա ջինջ աչքերը լցված են արցունքով: Մաաքան ասել էր ճշմարտությունը: Եվ նա մեկ անգամ ևս համաձայն էր նրա հետ:

Սեդեկիան սառն և բոլորովին անտարբեր ընդունեց նրան: Երբ պալատում լուր տարածվեց, որ Երեմիան անցել է շեմը, իշխաններն անմիջապես հավաքվեցին արքայի սենյակում՝ պաշտպանելու համար նրան նրա անիծյալ ազդեցությունից: Սեդեկիան զայրացավ՝ տեսնելով, թե ինքն ինչքան խիստ է պաշտպանված: Բայց քանի որ նա համարձակություն չուներ իր իշխանության հզոր աջակիցներին սենյակից դուրս հրավիրելու, իր զայրույթը թափում է Երեմիայի վրա, որը երեք անգամ համառությամբ մերժել էր ընդառաջել իր կանչին և հիմա, մյուսների անխուսափելի ներկայությամբ, իրեն զգացնել էր տալիս իր սեփական անզորությունը:

— Մենք լուր ենք ստացել,— սկսեց թագավորը մի փոքր կոշտ շեշտով,— որ Եգիպտոսն ու Բաբելոնը տեղակայված են դեմ դիմաց Բերսաբեի (Բեեր Շաբա) հարավում: Նրանցից ոչ մեկը, սակայն, չի պատրաստվում կռվի... Ինչ է սա նշանակում...

Պատասխանելուց առաջ Երեմիան մի պահ սպասեց, թեև նա արդեն իսկ գիտեր ամբողջը, ինչպես նաև ներքին աչքով տեսնում էր ամենը: Իր այդ տեսիլքում Սամգեր Նեբուն և Խեր–Հեպը հանդիպում են միմյանց իրենց ճամբարների սահմանին, որպեսզի միասնաբար ստուգեն՝ երկնքի աստղերի դիրքը նպաստավոր է արդյոք մի համաձայնություն կնքելու համար:

— Դա նշանակում է,— ասաց նա,— որ ստրկության երկու տները հանդուրժելու են միմյանց և մի դաշինք են կնքելու... Հետևաբար, թող թագավորը մեծ տիրակալին առաջարկի խաղաղություն և հպատակություն, քանի դեռ ուշ չէ...

Թագավորի գահի հետևից, ուր կանգնած էին պալատի «անբաժանելիները», ծաղրական մի քրքիջ բարձրացավ: Մալքիան, որը ժառանգել էր իր հորից կոճակի նմանվող կոունկի կլոր աչքեր, իբրև առաջինը, ինքը խոսք առավ.

— Ով դու տեսանողդ ու մարգարեդ, ինչպես միշտ իրոք կանխատեսել ես ճշմարտությունը, հիմա էլ, ըստ քո խոսքի, Սիոնը դարձել է Բաբելոնի ծաղրուծանակի առարկան:

— Արդյոք սա՞ է քո անկեղծ խորհուրդը, Երեմիա,— հարցրեց թագավորը՝ հազիվ զսպելով իր զայրույթը,— մի՞թե ես խաղաղություն և հպատակություն պետք է առաջարկեմ Բաբելոնի մեծ տիրակալին հենց հիմա, երբ նրա զորքերը թուլացել են: Հենց հիմա, երբ իմ դաշինքի մեծ եղբայրը՝ փարավոնը, նրա դեմ է դուրս եկել հզոր բանակով: Հենց հիմա, երբ ես ցույց եմ տվել Բաբելոնի Ներգալին, որ մի պաշարված քաղաք կարող է ոչնչացնել ամենաուժեղ պաշարողին անգամ... Ո՛չ, Երեմիա, քո խորհուրդն արդար չէ...

— Թող իմ տեր արքան անի այն, ինչ կարծում է, որ ճիշտ է,— փոխադարձեց Երեմիան, որպես թե իրեն չէին հետաքրքրում Դավթի տունն ու նրա ճակատագիրը,— Իմ գործը չէ քեզ խորհուրդ տալը, դա քո իշխանների գործն է: Այսուամենայնիվ, լավ ես անում, որ մտածում ես այն դաշինքի մասին, որն այժմ կնքում են մեծերը, որովհետև նրանք փոքրերի մասին չեն մտածում...

Այս խոսքերին չհաջորդեց ոչ մի ծիծաղ, այլ մի վտանգավոր լռություն: Անբաժանելիներից իշխան Իսմայելը՝ չափազանց բարձրահասակ և ոսկրոտ ու մռայլ դեմքով մի մարդ, եկավ կանգնեց Սեդեկիայի և Երեմիայի միջև: Պատահական չէր, որ նա կրում էր միևնույն անունը, ինչպես Հագարի որդին, որը դարձել էր հայրն անապատային բոլոր երեխաների: Նա նմանվում էր նրան իր նիհար և փոքր–ինչ դեպի առաջ թեքված կերպարանքով, իր խուզարկու նայվածքով, ասես չափում էր թշնամու արժեքը: Իսմայելը խաչաձևեց բազուկները և նայեց Երեմիային այնպես, ինչպես մեկին, որը չպետք է գոյություն ունենար աշխարհում: Թագավորի վրա, սակայն, Երեմիայի խոսքերը թողեցին իրենց ազդեցությունը: Նա տարակուսանքով բարձրացրեց գլուխը.

— Ճի՞շտ է արդյոք այդ դաշինքը Նոփի և Բաբելոնի միջև... Տեսե՞լ ես այն քո տեսիլքում, լսե՞լ ես նրա մասին...

Նախքան Երեմիայի մի բան ասելը Փաշհուրի որդին անամոթաբար միջամտեց.

— Մի՞թե մեր թագավորը չի տեսնում, թե այս մարդն այստեղ որքան երջանիկ է՝ քեզ դժբախտություն մարգարեանալով... Չե՞ս տեսնում, թե նա որքան է ուրախանում՝ նսեմացնելով քո փառավոր հաղթանակը և կոչելով այն ապարդյուն... Նա միայն մեկ հույս է փայփայում, և

դա քո անկումն է, որպեսզի դրանով իրականանա իր քարոզածը... Քեզ սպանված տեսնելն ու քաղաքը՝ հրդեհված, սա կլինի նրա հոգու մեծագույն հրճվանքը, քանզի նա ատում է քեզ և այս ժողովրդին... Դու դա չե՞ս տեսնում...

— Ես ոչինչ չեմ տեսնում,— մրմնջաց թագավորը և շփոթահար նայեց իր շուրջը:

Սենեկապետները ներս մտան՝ իրենց հետ լույսեր բերելով: Երկու բազմաթևյան ճրագակալներ դրվեցին Սեդեկիայի գահի կողքերին: Այնուհետև նրանք սենյակի տարբեր անկյուններում զետեղեցին ոսկյա միաթևյան աշտանակներ: Երեմիայի համար Իսմայելի դեմքը երևում էր, ինչպես մի հրաբորբ վառարան, որն իր կոպիտ ձայնով դիմեց Սեդեկիային.

— Մեր արքան խոնարհեցրել է ու զսպել գետերի երկիրը (Միջագետքը), ինչպես դա չէր արել ոչ մի թագավոր նրանից առաջ... Փարավոնի առջև այժմ հավաքված է մի հոգնած զորք... Արդյոք նա կհամարձակվի՞ ազատել իրեն Բաբելոնից հավիտյան...

— Բայց եթե դա ճիշտ է Բաբելոնի և Նոփի հարցում,— ասաց թագավորը՝ առանց իր անորոշ հայացքը Երեմիայից հեռացնելու,— եթե նրանցից ոչ մեկը չի պատրաստվում պատերազմելու... Ի՞նչ կպատահի հետո...

Երեմիան ձեռքը դրեց սրտին և խոնարհվեց.

— Թող այժմ իմ թագավորը թույլ տա ինձ գնալ...

— Ուրեմն, քեզ Տիրոջից մի վատ պատգամ է հասել,— շշնջաց Սեդեկիան:

Մարգարեն երեք քայլ հետ գնաց՝ ասես պատրաստ էր ինքնակամ հեռանալու:

Թագավորը տեղից ցատկեց.

— Դու պետք է խոսես... Ես ուզում եմ լսել այդ պատգամը...

Երեմիան խոնարհեց գլուխը և համառորեն լռում էր: Այդ ընթացքում Հուդայի թագավորը, այլևս չկարողանալով զսպել ինքն իրեն, գոռաց.

— Եթե դու ինձ և այս ժողովրդին չես ատում, ուրեմն խոսիր պատգամի մասին... Ի՞նչ կա Բաբելոնի համար...

— Բաբելոնը վերադառնալու է,— ասաց Երեմիան հանգիստ:

Սրահում բարձրացավ մի ամբարտավան ծիծաղ.

— Թող Բաբելոնը վերադառնա...

Երեմիան ուշադրություն չդարձրեց դրա վրա և չխուսափեց թագավորի սևեռուն հայացքից.

— Դու հարվածել ես Բաբելոնին... Սակայն դու չես կարող հաղթել նրան, որը Տիրոջ ծառան է... Նա գալիս է նոր զորքով, որպեսզի քեզ պաշարի...

Իրարից անբաժան չորս իշխանները խոնարհվեցին Սեդեկիայի ականջին և հառաչեցին.

— Ով մեր արքա, մի՞թե չես հոգնել այս զառամյալ շաղակրատից... Մի՞թե նա նույն բանը չէր ասել հաղթելուց առաջ...

Թագավորը չէր լսում նրանց: Նրա աչքերը հանկարծակիորեն կորցրել էին իրենց փայլը:

— Սա դեռ Եհովայի խոսքը չէ,— ասաց նա,— Ես ուզում եմ լսել Զորությունների Տիրոջ խոսքը:

Երեմիան այլևս չդիմադրեց, մոտեցավ թագավորին և հայտնեց նրան առաքված խոսքը.

— Դու չեղյալ համարեցիր ստրուկների ազատության պատվիրանը,— ասաց Տերը,— ուստի ես քեզ վրա ազատություն եմ հայտարարում...

Իշխանները նայեցին միմյանց: Ի՞նչ նկատի ուներ այս ասացվածքը: Զորաց Տերը նախընտրում է առեղծվածային բառախաղերը, որոնց հետևում մարգարեները կարող են թաքցնել իրենց սեփական հանդգնությունը: Սեդեկիայի իշխանության պաշտոնակիցների մոտ կամաց-կամաց պարզաբանվեց այդ խոսքերի իմաստը: Որպես պատիժ՝ չեղյալ հայտարարված ստրուկների ազատության, Տերը թագավորի նկատմամբ ազատություն էր հռչակում: Դա որսորդից փախչող թռչունի և հալածվող վայրի կենդանու ունեցած ազատությունն է: Իսմայելն առաջինն էր, որ հասկացավ դրա իմաստը: Նրա փոքրիկ դեմքը կարծես թե ավելի կծկվեց, ոսկյա աշտանակը բռնած ձեռքի ջիղերն ավելի ձգվեցին, բայց նրա ձայնը զուսպ էր.

— Մեծափառ տեր, դու, որ արիություն ունեցար հարվածելու Ներգալին իր ճամբարում, մի՞թե դու համարձակություն չունես այստեղ սրա դեմ... Արդյոք քո հերոսների սրերը պետք է հանդուրժե՞ն քո դեմ արված վիրավորանքները...

Սեդեկիան, որի դեմքը կարմրել էր արյան գույնով, հուսահատ զայրույթով նայեց մի առ մի իր իշխաններին.

— Այդ պատգամն ինձ չի վերաբերում... Դա ինձ հետ կապ չունի... Իմ տանը ես պահում եմ իմ խոսքը և չեմ խախտում պատվիրանը... Բայց դուք, իմ զինակիցներ,— այստեղ նա բռնկվեց բարկությամբ ու ցավով,— դուք ինձ մոլորեցրիք... Միայն դուք եք չեղյալ համարել պատվիրանը և մեղանչել... Ոչ թե ինձ, այլ ձեզ համար է ասված այդ պատգամը: Անեծքը ծանրանում է ձեր հոգու վրա...

Սեդեկիան ծածկեց աչքերը: Անդնդային խոր լռությունը տարածվում է սրահում: Թագավորը երբեք այդքան սարսափելի չէր խոսել իր մտերիմների հետ: Նրանք, մինչև իրենց հոգու խորքը վիրավորված, լռում են: Բայց ո՞վ էր մեղավորն այս պառակտման մեջ, քան այդ անիծյալ անձը, որը համարձակվում է նույնիսկ հիմա կրկնել իր խնդրանքը.

— Թույլ կտա՞ ինձ թագավորը գնալ այստեղից...

— Ո՛չ,— գոռաց Սեդեկիան,— նույնիսկ եթե իմ ուսուցիչն ես եղել, դու նույնպես կմնաս այստեղ, որովհետև իմ հրամանը վերաբերում է քեզ, ինչպես բոլորին:– Այնուհետև նա հանգիստ հավելեց,– գիտեմ, որ դու ինձ դեռևս չես ասել ամենը, դու թաքցնում ես ինձնից ևս մի պատգամ:

— Ինչո՞ւ ես ստիպում ինձ խոսել, երբ չես լսում,— ասաց Երեմիան մեծ տխրությամբ:

Թագավորի ձայնը, սակայն, վրա հասավ.

— Տեսնո՞ւմ ես, դու ինքդ էլ խոստովանում ես, թե ինչ–որ բան թաքցրել ես... Ինչքան լավ էր ամեն ինչ առանց քեզ... Իսկ ինչքան վատ է ամեն ինչ, երբ դու ներկա ես... Դեռ մեկ ժամ առաջ ես երջանիկ հաղթող էի, իսկ հիմա՞... Ես հրամայում եմ քեզ՝ խոսի՛ր իմ և այս իշխանների առջև, որպեսզի նրանք լսեն պատգամը մինչև իրենց համառ սրտի խորքերը... Երբ ստրկության տները պայմանագիր կնքեն, երբ Բաբելոնը վերադառնա, երբ կազմված նոր բանակները մոտենան... Այդ դեպքում ի՞նչ կլինի...

Իսմայելը մեկեն խլեց աշտանակը փոքրիկ սեղանի վրայից: Եվ որպեսզի թագավորի տրամադրությունը չթունավորվի, ցանկացավ կանխել մարգարեին և ճչաց.

— Երբ նրանք վերադառնան, երբ նոր զորքեր մոտենան, հետո ի՞նչ... Դու նրանց դարձյալ կհաղթես, ինչպես որ արդեն ջախջախել ես նրանց...

Այդժամ առաջին անգամ Երեմիան ամբողջությամբ շրջվեց դեպի իշխան Իսմայելը և տխուր աչքերով նայեց նրան, ապա բացահայտեց այն պատգամը, որը նա ստացել էր Հուդայի բանակի հաջող գրոհի ժամանակ.

— Այսպես է ասում Զորությունների Տերը. Եթե դուք Բաբելոնի ամբողջ ճամբարը կոտորեք, վրաններում խոցվածներն ու սպանվածները նորից պիտի բարձրանան և պիտի հրկիզեն իմ այս սուրբ քաղաքը...

— Դու, սակայն, այլևս ոտքի չես կանգնելու,— ասաց Իսմայելը կոպտորեն, ապա ձեռքում բռնած ոսկյա ծանր աշտանակը թափով շպրտեց ուղղակի Երեմիայի դեմքին:

Ուժգին հարվածը դիպավ Երեմիայի ճակատին՝ հենց աչքերի միջև: Առանց որևէ ձայն հանելու՝ նա փլվեց հատակին՝ թագավորի գահավորակի դիմաց: Դահլիճում չկար մեկը, որ չերդվեր, թե նա արդեն մեռած է: Եվ ներքին լույսը, որ նրա անգիտակից հոգու մեջ դեռ արթուն էր, նույնպես հավատում էր դրան...

«Իսմայելը աշտանակով հարվածում է Երեմիայի դեմքին»

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ

ՊԱՐԻՍՊՆԵՐԻ ՄԻՋԵՎ, ԶՆԴԱՆՈՒՄ, ՊԱՀԱԿԱՏԱՆ ԲԱԿՈՒՄ

Երեք ամսից ավելի էր, որ Երեմիան մաքառում էր կյանքի և մահվան միջև: Քեղկիայի և Աբիի զգայուն որդին քարի նման ամուր ճակատ ուներ, որ դիմակայել էր մետաղի ուժեղ հարվածին և չէր մահացել: Նրա վերքը բուժվում էր դանդաղորեն, որից դուրս էին ընկել ոսկորի փշուրներ: Սակայն աչքերից վերև մնացած սպին նույնքան խորն էր, որքան վերքը: Բարեբախտաբար, հարվածը չէր դիպչել նրա՝ նրբաճաշակ կորությամբ օժտված քթին, որն ընտանիքի հնագույն ժառանգությունն էր: Այնպես որ ճակատի սպիով նրա դեմքի աղավաղումն անարգ ու սարսափազդու չէր, ինչպես Ուրիայի այտի սպին: Վերքը, սակայն, բուժվում էր ավելի առաջ, քան նրա բանականությունը: Մահվան ձեռքից պրծնելուց հետո դեռ երկար ժամանակ պառկած էր անշարժ և առանց որևէ մի խոսք ասելու: Երբ Բարուքը՝ նրան խնամողը, սնունդ էր մատուցում նրան հեղուկ վիճակում, նա բացում էր բերանը և երեխայի նման կուլ էր տալիս այն, մինչդեռ հեռուներում կորած նրա նայվածքը մնում էր կառչած սենյակի մի անկյունին: Երբեմն թագուհիները՝ Ամիտալն ու Մաաքան, թաքուն գալիս էին հիվանդին այցելության, նրա համար բերում էին գեղեցիկ նռներ, թարմ արմավ և խաղող, ապա երկար ժամանակ նստում էին նրա մոտ: Մի անգամ էլ թագավորը հայտնվեց և տխրության մելամաղձոտ խոսքեր ասաց: Երեմիան թարթիչն անգամ չշարժեց: Ուստի բոլորը հավատում էին, որ նա կորցրել է տեսնելու, լսելու և խոսելու ունակությունը: Բայց սա ճիշտ չէր: Այնպես, ինչպես որ նա կարիք ուներ լսողության, որպեսզի կարողանար զրույցներ ունկնդրել աննկարագրելի ժամանակներում և տարածություններում, նույնպես էլ նա կարիք ուներ իր տեսողության՝ ներքին

հայացքի համար՝ տեսնելու խորհրդավոր ու աննկարագրելի պատկերներ: Այդ ամիսներին Բարուքը երբեք չէր դադարում կրկին ու կրկին խոսել նրա հետ շատ բարձր ձայնով, ինչպես մի խուլ մարդու հետ: Բայց մի օր էլ հանկարծ պատասխան է ստանում: Նա իր սրտի տրտմության մեջ ևս մի անգամ աղաղակում է.

— Բաբելոնը վաղուց արդեն վերադարձել է... Իմ ուսուցիչը գիտե՞ արդյոք դրա մասին... Նրանք պաշարել են քաղաքը մեծ զորքով...

Այդժամ Երեմիան շրջեց իր նայվածքը դեպի նա և սովորական ձայնով հանդարտ ասաց.

— Ինչո՞ւ ես բարձրաձայնում հին բաների մասին, Բարուք... Արդեն շաբաթներ է, որ Բաբելոնը հսկա ուժերով պաշարել է քաղաքը:

Աշակերտն ուրախությունից շնչահեղձ եղավ՝ տեսնելով իր ուսուցչի վերազարթնումը, բայց շարունակեց բարձրաձայն խոսել, ինչպես մի խուլ մարդու հետ.

— Նոր բանակներ են ժամանել... Հարավային դարպասները նույնպես պաշարված են... Այլևս ոչ ոք չի կարող ներս մտնել կամ դուրս գալ...

— Ինչո՞ւ ես պատմում ինձ այն, ինչ ես արդեն գիտեմ և իմ հետևում է... Ես շատ ավելին եմ սովորել...

— Այսպիսով, ուրեմն, իմ ուսուցիչը տեսել է ապագան ու վախճանը,— կմկմաց Բարուքը: Երեմիան, սակայն, նայում էր նրան մշուշապատ աչքերով.

— Ես տեսել եմ վախճանը և այն, ինչ որ կատարվելու է դրանից հետո...

Այստեղ նա կանգ առավ և ժպտաց: Ինչ որ ասում էր բերանը, միտքն անմիջապես մոռանում էր ամբողջը: Բայց մի յուրահատուկ խաղաղ զգացում այն տպավորությունն էր թողնում նրա վրա, որ այն, ինչ ինքը վախճանի հետևում տեսնում էր, լսում և ապա մոռանում, չէր կարող վատ լինել:

Այսպես էր կատարվել Երեմիայի ապաքինումը: Հաջորդ առավոտ նա երկար ժամանակից հետո առաջին անգամ ոտքի կանգնեց ու քայլեց: Նրա թույլ ոտքերն ու ծնկները, սակայն, նրան հազիվ հասցրին մինչև թամբագործի արհեստանոցը, որի տանն ապրում էր ինքը: Այնտեղ նա փլուզվելու էր, եթե տանտերը չհասցներ բռնել նրան և քարշ

տալով չնստեցներ աթոռին: Աշխատանոցում արհեստավոր վարպետնե-
րը թողեցին իրենց աշխատանքը և սևեռուն հայացքով նայեցին նրան:
Այդ հայացքում միախառնված էին սարսափ, կարեկցանք և տարօրի-
նակ ծիծաղ, որ պետք է զսպեին դժվարությամբ: Թամբագործության
արհեստանոցը վերածվել էր զինագործարանի: Հատակին ընկած էին
մշակված կաշիներ, որոնք այսուհետ պիտի օգտագործվեին ոչ թե թամ-
բեր, այլ սրերի գոտիներ, պարսատիկի տոպրակներ, նետերի կապարճ-
ներ պատրաստելու համար: Երեմիան իր ոտքերի տակ տեսավ հան-
քաքարի մի ողորկ ու փայլուն սկավառակ, որն ամրացվելու էր փայտյա
կամ կաշվե մի շրջանակի մեջ: Նա կռացավ ու վերցրեց այդ հայելին և
դրեց իր գիրկը: Հետո նայեց դրա մեջ՝ հասկանալու համար, թե ինչու է
իր տեսքն անհանգստացնում մարդկանց: Հայելու մեջ նա տեսավ բոլո-
րովին օտար մի Երեմիայի: Երկնքի հավիտենական Արարիչը, որը նա-
խանձախնդիր կերպով արգելել էր մարդկային բոլոր տեսակի պատ-
կերները, այժմ վերափոխել էր նրա արտաքին տեսքը: Գրեթե ծերացած
մի մարդ՝ լավ սպիտակած ու անխնամ մազերով ու մորուքով, մնասված
հոնքերով ու դրանց վերևում գտնվող կարմրավուն խորը սպիով, հար-
ցականորեն նայում էր նրան: Այդուհանդերձ, Երեմիան ոչ վախեցած էր
և ոչ էլ զարմացած դրա վրա: Նրա սիրտը գիտակցում էր այս փոփոխու-
թյան իմաստը: Եհովան նրա դեմքից վերջնականապես ջնջել էր Քեղկի-
այի դրոշմը՝ հայրերի և նախահայրերի տեսանելի ապացույցը: Նա, ով
ընտրվել ու առանձնացվել էր նախքան իր մոր արգանդում ձևավորվելը,
այժմ ազատվել էր երկրային պատկանելիության վերջին վիճակներից,
որպեսզի ինքը, ում չէր թույլատրվել հայր դառնալ, այլևս չլիներ նաև որ-
դի: Տերը նրան նոր դեմք էր տվել, որպեսզի այլևս չնմանվեր ինքն իրեն
և նախնիներից իր ժառանգած հատկանիշներին: Նա մեղմորեն ժպտաց
հայելու արտացոլած պատկերին՝ ի զարմանս թամբագործի և նրա ընկե-
րակիցների, որոնք նրան համարում էին մի լուռ խելագար: Երեմիային,
սակայն, թվում էր, որ իր նոր դեմքը՝ այդ արտաքին վերածնունդը եզակի
ու միակ կյանքի, մի խորհրդավոր պատիվ է:

Եվս մեկ ամիս պետք է անցներ, մինչև որ Երեմիայի ոտքերը վերա-
գտնեին իրենց նախկին ուժը: Այնուհետև նա այդ ուժն օգտագործում էր
շատ ավելի, քան երբևէ: Թափառելու մի մեծ փափագ է առաջանում նրա

մեջ, բայց քանի որ քաղաքը շրջափակված էր, նա ոչ մի տեղ չէր կարող դուրս գալ: Անաթովթցի մարդն անընդհատ շրջում էր քաղաքում: Նա չէր գնում պալատ և ոչ էլ տաճար: Այդ օրերին նա անկարգ և նույնիսկ այլասերված մարդու տպավորություն էր թողնում, ում համար այլևս ոչ մի նշանակություն չունեին շնորհների զորությունը, զոհաբերությունները, ապաշխարությունը, աղոթքները: Երբ Բարուքը բացահայտորեն հարցրեց նրան այդ իր վիճակի մասին, Երեմիան պատասխանեց.

— Չգիտե՞ս, որ ազատություն է հռչակված ինչպես ինձ, այնպես էլ քեզ վրա... (Դա որսորդից փախչող թռչունի և հալածվող վայրի կենդանու ունեցած ազատությունն է):

Ամեն առավոտ՝ արևածագին, նա դուրս էր գալիս թամբագործի տնից: Նեղ փողոցները դեռևս դատարկ էին, և որևէ վտանգ չկար, որ մեկը նրան նեղություն կպատճառեր: Նա հայտնվում էր մարդկանց մեջ իր մուգ գույնի վերարկուով՝ հենված կոշտուկներ ունեցող իր գավազանին, որը նա բռնում էր դեռևս լուծ կրելու ժամանակից: Հիմար մայրերը ցույց էին տալիս Աստծու մարդուն, ասես նա մի չար ոգի էր, և նրանով վախեցնում էին իրենց երեխաներին՝ ասելով. «Եթե ձեզ լավ չպահեք, մարգարեն ձեզ կտանի...»: Նա, սակայն, միտումնավոր խուսափում էր բոլորից: Վերջապես նրա ամաչկոտ և թափառելու անկուշտ փափագով լցված սիրտը գտավ իր մնալու հարմարագույն վայրը: Արտաքին և ներքին պարսպապատերի և որմերի օղակների միջև գոյություն ուներ մի լայնածավալ խոտածածկ գոտի՝ քաղաքի ներսում գտնվող մի հսկայական ուղղանկյան մեջ: Դա քաղաքի մեջ մի քաղաք էր: Այնտեղ արածում էին անասունների հոտերը՝ իբրև կերակուր պաշարվածների: (Դրանք սարսափելի կերպով նվազել էին, քանի որ մորթվածների տեղն այլևս հնարավոր չէր լրացնել): Այդտեղ երկրի տարբեր մասերից եկող և Երուսաղեմում ապաստան չգտնող գաղթականները հաստատում էին իրենց վրանները: Այդ վայրում նաև պահում էին վիրավորներին և հիվանդներին, որպեսզի կանխեն քաղաքի ներսում վարակիչ հիվանդությունների տարածումը: Այդտեղ հավաքվում էին ռազմական ջոկատներն իրենց առաջնորդների գլխավորությամբ, որպեսզի որոշյալ ժամին փոխարինեն պարիսպների և խրամատների վրա հսկող զինվորներին: Նկատի ունենալով, որ այդ վայրն ամենից կարևորն էր պաշտպանողական զորքի

թիկունքում, մուտքն այնտեղ ամենևին ազատ չէր: Ներքին դարպասները հսկող պահակախմբերի ղեկավարները հատուկ ցուցակներ ունեին, թե ում պետք է թողնեին մտնել արտաքին և ներքին պարսպապատերի միջև ընկած այդ տարածքը:

Զինվորները հիմնականում ճանաչում էին Երեմիային և ձեռքի մի անփույթ շարժումով թույլ էին տալիս նրան անցնել, երբ նա առավոտյան հայտնվում էր քաղաքի Բենիամինի կամ Եփրեմի ներքին դարպասի դիմաց: Թեև նրանք մարգարեներից ոչ մեկի նկատմամբ համակրություն չունեին, այդուհանդերձ, հանդուժում էին ամենից անողոքին, որը թագավորի նախկին ուսուցիչն էր, որպեսզի միանա պահակախմբին փոխարինելու պատրաստվող ջոկատներից մեկին և նրա հետ բարձրանա աշտարակներն ու դիտակետերը, որտեղից նա ժամեր շարունակ լուռ դիտելու էր շրջապատը: Տարօրինակորեն շատ քիչ անգամներ միայն տեսնվում էր որևէ բան պատերազմից կամ Բաբելոնից: Ներգալ Նաբուզարդանը, խրատված Սեդեկիայի տարած հաղթանակից, որոշել էր նոր տիպի մի պաշարում ձեռնարկել: Պաշարման խեղդող շղթան ավելի ծավալուն կերպով էր շրջապատել Տիրոջ քաղաքը: Ներգալն աստղային մարդու անսխալ համբերությամբ սպասում էր ճիշտ ժամին՝ սեղմելու համար այդ խեղդող շղթան: Բաբելոնի բանակի ճամբարն այս անգամ տարածվում էր ոչ թե լեռների լանջերին, այլ լեռների վրա: Վեց ամրացված ու լավ պատսպարված վրանային քաղաքներ կանխում էին կամ ձախողության մատնում Սեդեկիայի կամ Եղնաթանի կողմից արվող հարձակման որևէ հանդգնություն: Նրանք՝ բաբելոնցիները, այժմ հսկում էին բոլոր փողոցները, իսկ փարավոնի հետ իրենց կնքած ուխտի համաձայն՝ փակում են խնկերի և ոսկու ճանապարհը, որպեսզի ոչ մի ուղտ, ոչ մի էշ, տավար կամ գառ չկարողանա հասնել Երուսաղեմ: Բաբելոնի վրանային քաղաքների և սուրբ քաղաքի միջև ընկած ամայի հսկա տարածությունն անկարելի էր դարձնում գրոհելու որևէ ծրագիր, քանի որ իրար հետ բախվողները պիտի կորչեին այնտեղ, ինչպես ջուրն անապատի ավազում: Այդուհանդերձ, թագավորի մարտիկների աչքերում չէր նկատվում ոչ մի անհանգստություն: Նրանք նման էին պահի ազդեցության տակ գործող երեխաների, որոնք մոռացել էին, որ փարավոնի անհավատարմությունն է եղել ամեն ինչի կրկին վատացման պատճառը: Թիկնազորի

հերոսները թնդացնում էին իրենց ռազմական երգերը, որոնցում նրանք հանդգնաբար և նույնիսկ անպատկառ կերպով պահանջում էին Եհովայից իրականացնել իր ուխտը և հարկ եղած դեպքում նույնիսկ հրաշք կատարել, ինչպես նախկինում՝ Հեսու զորապետի ժամանակ: Զինվորներն ուրախ տրամադրությամբ էին կատարում իրենց ծառայությունը, քանի որ մինչ այդ ոչ մի վատ պատերազմ տեղի չէր ունեցել: Երուսաղեմը տարիներ և օրեր շարունակ կանգնած էր անխորտակելի: Բաբելոնն իր թույլ և հազվադեպ հարձակումներով կարծես թե մեծ հարգանք էր ցուցաբերում Հուդայի հերոսների հանդեպ:

Երեմիան միշտ նայում էր Անաթովթի ուղղությամբ: Մի անհայտ կարոտ կանչում էր նրան դեպի հայրենի օջախ՝ դեպի Բենիամինի երկիր, դեպի իր մանկության օրրանը: Նրան կանչում էին Անաթովթի բլուրները: Նա չգիտեր, բայց զգում էր, թե ինչու: Իր հիվանդության ընթացքում բարի զարմիկ Հանամեէլը երկու անգամ սողոսկել էր քաղաք, որպեսզի հանձնի նրան իր վարձավճարը: Չորրորդ ամիսն էր արդեն, որ նա չէր գալիս: Երեմիան այժմ, երևի առաջին անգամ, զգաց, որ Քեղկիայի ամայի ժառանգությունն իրեն պետք է: Ավելի ուշ նա պիտի գիտակցեր, որ իր սիրտը կառչած է հայրական տանն ու հողին, մինչդեռ ինքն այդքան հաճախ անտեսել էր դրանք իր կյանքի թոհուբոհի մեջ: Այդժամ նա հետաքրքրվում է, թե ինչպես կարող է հեռանալ Երուսաղեմից՝ Անաթովթ հասնելու համար: Բոլոր դարպասները զօր ու գիշեր խստորեն հսկվում էին բարձրաստիճան հրամանատարների անմիջական հայացքի ներքո: Այդուհանդերձ, կային բավականաչափ դասալիքներ: Մարդուկի սեփական հրահանգով սահմանվել էր, որ դասալիքներին ոչ միայն պետք է խնայել, այլև բաց բազուկներով ընդունել: Նրանցից յուրաքանչյուրին պետք է բաժին տրվեր երկրի թագավորի, իշխանների և հարուստների կալվածքներից: Բաբելոնի նպատակն էր նման գայթակղություններով Երուսաղեմի բնակչության քանակը նվազեցնել՝ առանց սուր օգտագործելու, միևնույն ժամանակ վրեժ լուծել մեղավորներից:

Երեմիան միայն մի բան էր ցանկանում. մի քանի օրով վերադառնալ Անաթովթ, այցելել իր տունը, ուր ստացել էր Տիրոջից իր կոչումը, շրջել Հանամեէլի հետ իր ժառանգած դաշտերում, հիշատակության մի ընծայաբերում կատարել իր ծնողների գերեզմանին: Նրան այնպես էր թվում,

թե մայրը տանը սպասում է իրեն, և ինքը նրան պետք է ցույց տար իր նոր դեմքը, որպեսզի նա կարողանար ճանաչել դրա հետևում իր կրտսեր երեխային: Նա հայտնում է Բարուքին իր մեծ ցանկությունը: Վերջինս, սակայն, սարսափում է և այնքան ուժգին կերպով զգուշացնում նրան անխոհեմ քայլեր անելուց, որ նա այլևս չի խոսում դրա մասին:

Աշնանային մի անլուսին գիշերվա ժամերին, երբ նա անհանգիստ շրջում էր հյուսիսային պարիսպների օղակների միջև, հանկարծ զգում է, որ մեկը բռնել է իրեն: Մի մարդ լապտերի աղոտ լույսով լուսավորում էր իր դեմքը: Այդ մարդու հսկա կերպարանքը փաթաթված էր ճամփորդական լայն վերարկուով: Երբ վերջինս իր հերթին իր իսկ բռնած լապտերի լույսով լուսավորվեց, Երեմիան ճանաչեց նրան. նա Ահիկամի երկվորյակ որդիներից ավագն էր՝ Գեդալիան:

— Ես գիտեմ մի ճանապարհ,— շշնջաց Գեդալիան,— որն անվտանգ է, եթե շտապենք... հետևիր ինձ:

Երեմիան տեղից չշարժվեց: Գեդալիան ավելի համոզիչ կերպով պնդեց.

— Իրականություն է դարձել քո քարոզած ճշմարտությունը, ինչը նաև իմ հայրն էր հայտնել իր մահից առաջ... Ես սպասում էի և երկմտում, և մինչև այս պահը քաջություն չէի ունեցել... Բայց հիմա, երբ ամեն ինչ կորած է, ես այլևս չեմ մտածում քաղաքի և տաճարի մասին, այլ միայն՝ Հակորի մնացորդաց մասին... Միքիան՝ իմ եղբայրը, որն իր հիվանդ վիճակում պատրաստ էր զոհողություններ անելու, ինձ կանխել է՝ պատրաստելու մնացորդացի հավաքման վայրը, իսկ հիմա նա կանչում է ինձ, որպեսզի հանձն առնեմ շարունակելու գործը... Եվ նա կանչում է նաև քեզ...

Երեմիան դանդաղ շարժեց գլուխը.

— Դա քո գործն է և նրա գործը, և ոչ թե իմը...

Իսկապես էլ դա նրա ոճը չէր՝ գործել խելամիտ նկատառումներով, ինչպես Ահիկամն ու նրա որդիները: Այն, որ յուրաքանչյուր հաշվարկի արդյունքը, առանց բացառության, դատարկություն էր, Ահիկամը չցանկացավ երբեք սովորել: Երեմիային մեծ դժգոհություն էր պատճառում այն, որ Գեդալիան և Միքիան, իրենց եզրահանգումներից ելնելով, վստահ էին վատ վախճանին և Տիրոջից որևէ փոփոխություն

չէին ակնկալում: Մարդ արարածն իր ծիծաղելի ինքնավստահության մեջ մնում էր նույնը: Նրա ինքնավստահությունն արդյունք էր այն մանկական դատարկ գերագնահատանքի, որով նա կարծում էր, թե ինքն օժտված է բարձր մտքով և ամեն ինչ կանխատեսելու հնարավորությամբ: Ինչքան էլ Երեմիան հարգում էր Սափանի այդ հավատարիմ որդուն՝ իբրև լավագույն մարդու Հուդայի մեջ, այդուհանդերձ, նրա հետ հիմնական հարցերում անզիջում հակասության մեջ էր: Գեդալիան արագ շշնջալով տեղեկացնում է նրան, որ այդ օրերին սպասվում է Նաբուգոդոնոսորի գալը Երուսաղեմ: Համաձայն Միքիայի գաղտնի հաղորդագրությունների՝ Մարդուկը պատրաստ է Դավթի տունը ոչնչացնելուց հետո խնայել ժողովրդին և նրան՝ Գեդալիային, կառավարիչ նշանակել մնացորդաց վրա: Նա մինչև այդ օրը պայքարել էր ինքն իր դեմ այդ քայլին դիմելու հարցում, սակայն այլ միջոց չէր մնացել՝ պահպանելու Հակոբի ժողովրդին և կասեցնելու նրա գլորվելն անդունդ: Երեմիայի պարտականությունն էր նաև այդ ուղղությամբ աշխատելը, մանավանդ որ նա շատ մեծ հարգանք էր վայելում Նաբուգոդոնոսորի մոտ: Երեմիան զգում է, թե ինչքան դառնորեն դժվար է Գեդալիայի համար, չնայած բոլոր պարզ պատճառներին, հանձնել մաքառող քաղաքը, և թե ինչպես է նրա սիրտը, հանձին Երեմիայի, փնտրում իրեն դաշնակից: Սակայն վերջինս հրաժարվում է.

— Միշտ չի լինելու այն, ինչ ցանկանում է Նաբուգոդոնոսորը, և ոչ էլ այն, ինչ ծրագրում է Գեդալիան...

— Այլևս ոչ մի պահ մի՛ ուշացիր,— հորդորում է նրան Գեդալիան,— որպեսզի մենք քեզ առաջնորդենք Մարդուկ–Նաբուգոդոնոսորի առաջ, և դու նույնպես կկարողանաս սիրաշահել նրա սիրտը...

— Իմ տեղն այժմ Մարդուկի մոտ չէ,— ասում է Երեմիան,— բայց դու ասա իմ խոսքը նրան...

Գեդալիան հարցական կերպով մոտեցնում է իր մեծ ու անհանգստացած դեմքը Երեմիային: Սրանք էին այն խոսքերը, որ նա փոխանցելու էր Նաբուգոդոնոսորին.

— Դու սպանելու ես արդեն իսկ մեռած մի ժողովրդի: Դու հրկիզելու ես արդեն իսկ հրկիզված մի տաճար: Դու աղալու ես արդեն իսկ աղացած ալյուր...

* * *

Քաղաքում արագ տարածվում է լուրը, որ Սափանի թոռը՝ պատվավոր ու պատվարժան Գեդալիան, գիշերը փախել է ու անցել Բաբելոնի ճամբար՝ դառնալով մի ստոր դավաճան: Դա մի հարված էր՝ շատ ավելի վիատեցնող, քան պարտությունը: Թագավորը, նրա հերոսներն ու իշխանները կատաղել էին: Թշնամու կողմն անցնելու բարձր դավաճանությունը պետք է արժանանար համապատասխան պատժի: Պարիսպների օղակների շուրջը կրկնապատկվում է գիշերային երեք հերթափոխությունների հսկողությունը: Պահապաններին իրավունք է տրվում տեղում սպանել որևէ մեկին, որը կփորձի անցնել ու փախչել պարիսպների վրայով: Քաղաքի հյուսիսային հատվածի վերահսկողությունը հանձնվում է արքայական թիկնազորի ամենախիստ սպային: Դա հենց ինքը՝ Երիան էր՝ Անանիայի որդին: Նա իր պաշտոնատեղին հաստատում է Բենիամինի արտաքին դարպասի մի հատվածում, որտեղից մեծ ճանապարհը տանում էր դեպի հյուսիսային մարզեր:

Գեդալիայի փախուստից ընդամենը մի քանի օր էր անցել, երբ մի առավոտ Երեմիան հայտնվում է, ինչպես հաճախ էր պատահում, պարիսպների օղակների և Բենիամինի դարպասի միջև: Կոթնած իր գավազանին՝ նա գրեթե մեկ ժամ այս ու այն կողմ էր թափառում: Հաճախ կանգ էր առնում և անկուշտ հայացքով նայում մութ դարպասին, որի առջև նստած էին մի շիկահեր գնդապետ և Երիայի զինվորներից մի քանիսը, մինչ պահապանները, ուսներին սրածայր նիզակներ դրած, քայլում էին վեր ու վար: Վերջապես Երեմիան մոտեցավ գնդապետին և մատնացույց արեց դարպասը:

— Բացեք,— ասաց նա հանգիստ, ասես ոչ մի արտառոց բան չցանկանալով,— Ես Անաթովթից եմ... ուզում եմ մի քանի օրով տուն գնալ, որպեսզի կարգավորեմ ու մշակեմ իմ ժառանգությունը...

Նա արագորեն անցավ շիկահերի կողքով և ուղղվեց դեպի դարպասը: Գնդապետը, սակայն, ուժեղ բռնեց նրա թևերից և շեղակի նայեց նրան թունավոր հայացքով, ապա շարժեց գլուխը և ասաց.

— Անաթովթցի մարդն ուզում է գնալ Անաթովթ՝ իր ժառանգությունը կարգավորելու համար...

Առանց թողնելու, որ Երեմիան ժամանակ ունենա մտածելու, զինվորները բռունցքներով խլեցին նրան ու տարան կայազորի պետի առջև, որն իր սենյակի խորքում կույչ էր եկած բոցավառ կարմիր ածուխներով լցված կրակարանի կողքին: Սպան, որը ձերբակալել էր Երեմիային, հեռվից մեծ հրճվանքով հայտնեց.

— Ահավասիկ հիմա մենք ունենք նրան... Նա ինքնակամ մոտեցել է մեզ...

Երիան բարձրացրեց կրակի ջերմությունից արյան նման կարմրած իր դեմքը: Երկար ժամանակ նա ոչինչ չէր ասում: Նրա աչքերը, սակայն, վառվում էին երկար սպասված վրեժի վայելքից: Այնտեղ կանգնած էր հենց այն մարդը, որի անունը գիշերային ուրվականի նման չոքել էր իր հոր՝ Անանիայի կրծքին, որի հետևանքով նա մինչև իր մահն իրեն ճնշված էր զգացել: Եվ նույնիսկ այն ժամին, երբ թարախակալված վերքերը սպանել էին նրան, այս սատանան եկել էր հրճվելու իր պարտված մրցակցի մահով: Կամ Երեմիան ստի ոգի էր, որը մոգության և հմայախոսության միջոցով թշնամացրել էր Տիրոջը Երիայի հոր հետ, որի համար նա արժանի էր մահվան, կամ էլ նա իսկապես և օրինականորեն Աստծու ընտրյալն է, իսկ Անանիան՝ խաբեբա, այդ դեպքում, ըստ որդու, նա կրկնակի անգամ արժան է դարձել մահվան: Երիան ոչինչ ցույց չտվեց, այլ արտաքնապես պաշտոնական հանդարտությամբ դիմեց ձերբակալվածին.

— Ուրեմն, դու ուզում ես գնալ Անաթովթ,— հետաքրքրվեց նա մտածկոտ, որպես թե դա մի կարևոր հանգամանք էր: Դրանից Երեմիան հուսադրվեց.

— Այո՛, միայն մի քանի օրվա համար ցանկանում եմ տուն գնալ՝ ժառանգության հարցով...

Կայազորի պետն ունելիով զգուշորեն խառնում էր կրակարանի ածուխները.

— Իսկ դու ե՞րբ ես եղել վերջին անգամ Անաթովթում, որպեսզի կարգի բերեիր քո սեփականությունը,— հարցրեց նա անտարբերությամբ: Երեմիան անակնկալի եկավ. դա մի նենգամիտ հարց էր: Այդուհանդերձ, նա անկեղծությամբ խոստովանեց, որ ինքը Հովակիմի օրերից ի վեր ոտք չի դրել Անաթովթի իր կալվածքը: Դրա վրա Երիան ժպտաց մեղմորեն.

— Ուշ ես հայտնաբերել քո մեջի գյուղացիական ոգին, Երեմիա... Համբերությամբ ես սպասել Ներգալին և Մարդուկին, որպեսզի ճիշտ ժամանակին տուն վերադառնաս...

— Բաբելոնն ինձ արգելք չի լինի,— ասաց նա,— տեսնելու իմ ժառանգությունը. ես դա գիտեմ...

Անանիայի որդին շարունակում էր գոհունակությամբ ժպտալ.

— Ես հավատում եմ, որ դու դա գիտես... Եվ դու դեռ շատ ավելին գիտես... Դու իզուր չէ, որ ամիսներ շարունակ լրտեսում էիր բոլոր դարպասները և բարձրանում աշտարակները... Մենք ճանաչում ենք քեզ...

Ինչքան էլ Երեմիան անմեղ լիներ, այդուհանդերձ, կայազորի հրամանատարի ժպիտը, պահապանների զայրագին նայվածքները, իր մեղավորությունն ապացուցող հանգամանքները շփոթեցրին նրան, և նա սկսեց կմկմալ: Երիան, սակայն, ծաղրական կերպով խոնարհեց գլուխը նրա առջև:

— Տիրոջ իսկական մարգարե,— ասաց նա,— շնորհ արա Աստծուն վերաբերող հարցերում անփորձ այս ռազմիկին, որ փոխի իր պաշտոնը և քեզ համար մարգարեանա ճշմարտությունը...

Այս խոսքերից հետո նա իր նստատեղից խելագարի նման սկսեց բղավել.

— Դու դասալիք ես, ինչպես մյուսները, ինչպես Գեդալիան... Դու դավաճան ես, Բաբելոնի լրտեսը... Մենք դա վաղուց գիտենք...

Մի կատաղի վիշտ համակեց Երեմիայի հոգին, և նա նույնպես սկսեց գոռալ.

— Սո՛ւտ է... Սո՛ւտ... Սո՛ւտ... Ես չէի ուզում փախչել ու դասալիք լինել... Ես պարզապես ցանկանում էի Անաթովթ գնալ...

Նրա խելահեղ պոռթկումը ծիծաղ առաջացրեց: Երեմիան անընդհատ գոռում էր և պայքարում՝ պաշտպանելու ինքն իրեն, բայց այդպիսով իր մեղքն ավելի հավանական էր դարձնում: Անանիայի որդին նրան կապել է տալիս: Բայց քանի որ նա, ըստ ռազմական օրենքի, իրավունք չուներ դատելու այդ վտանգավոր դավաճանին, գլխավորում է այն պահակախումբը, որը տանում է բանտարկյալին տաճարի և քաղաքի միջով:

Անանիայի որդին, որը գիտեր ճիշտ դատել ու տարբերակել իրերի դրությունը, իր բանտարկյալին չտարավ թագավորի մոտ, այլ այսպես

կոչված՝ «առօրյա դատարան»: Այն գումարվում էր պետության դիվանապետի պալատում (որը Հովնաթան անունով մի անզոր մարդ էր): Դա մի ռազմական մշտական դատարան էր, ուր դատվում էին դավաճանները, դասալիքները, վախկոտները, վաշխառուները և սննդամթերք հափշտակողները: Օրվա դատավորը Փաշհուրի որդի Մալքիան էր, որի դեմքը փայլեց երանությամբ, երբ տեսավ իր հոր թշնամուն կալանավորված: Քահանայական դասի կողմից դատավորի հետ նստել էր նաև Շեմի առաջին խնամակալը՝ Սոփոնիան, և քանի որ ձմեռային ցուրտ եղանակ էր, նա իր ծերացած և ծուռումուռ ձեռքերը տաքացնում էր իր բերանի շնչով. մի գործողություն, որն ամբողջությամբ կլանել էր նրան: Հարցաքննությունը կարճ տևեց: Փաստերն անհերքելիորեն խոսում էին Երեմիայի դեմ: Նրա անունն ամիսներ շարունակ եղել է տարբեր դարպասապահների ամենօրյա ցուցակներում: Գտնվեցին վկաներ, որոնք պնդում էին, որ լսել են նրա խոսակցությունը Գեդալիայի հետ: Նույնիսկ ամենից բարեմիտ դատավորներն անգամ պիտի չհավատային նման հանգամանքների անմեղսունակ բացահայտումին: Եվ քանի որ Երեմիան իրեն արդեն իսկ կորած էր համարում, լռում է և հրաժարվում պատասխան տալուց: Որքան տարբեր էր այն ժամանակ, երբ նրա թշնամիները նրան իբրև Աստծուն նախատողի դատարան էին տարել ու կանգնեցրել քսաներեք անդամներից բաղկացած դատակազմի առաջ: Ի տարբերություն նախկին ժամանակների փոթորկոտ պատահարների՝ նրա հոգին այժմ լցված էր մի անսահման անտարբերությամբ, որի նմանը նա մինչ այդ երբեք չէր զգացել: Լցվա՞ծ էր իրոք: Ո՛չ, այդ անտարբերությունը համակել էր նրան: Որոշ չափով այդ անտարբերությունը կանգնած էր նրա հետևում՝ բազուկները լայն բացած, իբրև Աստծու հրեշտակ, որին ինքը պետք է քնքշությամբ հենվեր, որպեսզի ամեն ինչ, որ իր կողքին է, անմիջապես հեռանար իրենից: Ինչ էլ որ պատահեր, Երեմիան համաձայն էր: Անտարբերության ու հանդարտության հրեշտակը երբեք չէր հեռանում նրանից, նույնիսկ այն դեպքում, երբ կաշվեգոտի կրող պահապաններից մեկը, ըստ սահմանված կարգի, մտրակի երեսունինը հարված էր իջեցնում նրա մերկ թիկունքին: (Ափսո՜ս, որ Բարուքը կամ նրա նման մեկն այդ պահին չկար այդտեղ, որպեսզի մատուցեր իր տառապած մարմինը՝ ընդունելու այդ հարվածներից մի քանիսը): Պատժից հետո նրան

իջեցնում են պետության բանտը, որը տեղակայված էր դիվանատան այդ պալատի նկուղներում: Տարիներ հետո, երբ Բարուքն իր սեփական մատյանում անդրադառնում է իր ուսուցչի տառապանքներին, գրում է այսպես. «Եվ Երեմիան ընկավ բանտ ու զնդաններ, ուր մնաց շատ օրեր»: Բարուքի խոսքերը ճիշտ էին գրված, բայց դրանք ամբողջական չէին: Չնայած նրան, որ Երեմիան իսկապես շատ օրեր մնաց զնդաններում, բայց դրանք առավոտ և երեկո ունեցող օրեր չէին, այլ մի անվերջ գիշեր՝ երկրի ընդերքում: Ամենտին հրաշալիորեն շատ ավելի լավ էր, քան զնդանի մշտական խավարը, քանզի այն բաժանված էր ըստ տարածության և ժամանակի: Ձնդանները, սակայն, զուրկ էին դրանցից: Դրանք անկանոն ու խառնաշփոթ վայրեր էին և այդ պատճառով էլ՝ ավելի ճնշիչ, քան մահվան երկիրը: Միաժամանակ դրանք միատեսակ ու համատարած սև տարածություններ էին, ուր գոյություն չուներ ժամանակի տարանջատում: Այնտեղ շարունակական էին բանտարկյալների աղաղակն ու հառաչանքը, ինչպես նաև նրանց ատամների կրճտոցը: Նրանք Երեմիայի նման շղթաներով ամրացված էին ժայռին: Այս տևապես հառաչող ու հռհռացող մթնոլորտում ամենաուժեղ հոգին անգամ կարող էր խելագարվել: Հանդարտության և անտարբերության հրեշտակը չէր լքում Երեմիային: Նրա պաշտպանության ներքո էր, որ նա շունչ էր քաշում և ապրում ժամանակ հասկացությունից զուրկ դատապարտության մեջ: Պատահում էր նույնիսկ, որ այդ չսպառվող և գարշահոտությամբ լեցուն գիշերվա ընթացքում նրա զգայական ուժերն ավելանում էին ավելի, քան երբեք: Ո՛չ, Եհովայի ձայնը չէր խոսում նրա հետ: Այդ ձայնի բնությունն այնպիսին էր, որ այն երբեք չէր հնչում, երբ ունկնդիրը պատրաստվում էր լսելու այն, կամ էլ, երբ խոր խավարն ասպարեզ էր կարդում նրան: Դրա փոխարեն Երեմիայի ականջները բացվում են և հստակ կերպով սկսում է լսել կամ կարծում է, թե լսում է այն, ինչ որ տեղի է ունենում իրենից հեռու: Դա սկսվում է մարտիկների հավասարաչափ քայլերով մոտեցմամբ, որոնք բանտարկյալների վերևում՝ ականջի համար անլսելի ձայներով, գալիս էին հերթափոխելու հսկիչներին: Երեմիան լսում է ամեն տեսակ խառնաշփոթ ձայներ, որոնք տարօրինակ կերպով մոտենում էին իրեն և հետո հեռանում: Շատ ժամանակ և ջանք է պահանջվում, որպեսզի ձայների կծիկից սովորեր տարբերակել անհատական ձայները և հետևել

դրանց: Այսպիսով, երբեմն նա դառնում է ունկնդիր վկան այն խոսակցությունների, որոնք թագավորը վարում էր իր իշխանների հետ Սողոմոնյան պալատում: Տղամարդկանց ձայներն այնքան հստակ էին լսվում, որ Երեմիան վստահ էր, թե այդ խոսակցությունները տեղի են ունենում իր գլխի մեջ և ոչ թե թագավորական պալատում:

Երկչոտ ու տագնապալից են հնչում Սեդեկիայի խոսքերը: Նա զեկուցում է իր անհաջող պատգամների մասին՝ ուղղված փարավոնին և դաշնակից մյուս թագավորներին: Բաբելոնին օժանդակող ազգերը տասնապատկվել էին: Նոփի արև աստվածը, սակայն, ամենևին չէր մտածում վերին և ստորին Եգիպտոսի վրա բերել Մարդուկի սուրը: Մյուս կողմից էլ, փոքր թագավորները հնարավորինս թաքնվում էին և մեծապես ուրախանում, երբ ոչ ոք իրենց մասին չէր մտածում: Զորությունների Տերն անձամբ անցել էր Հակոբի թշնամիների կողմը: Թագավորը զայրույթի ճիչերով բարձրացնում էր իր ձայնը, և Երեմիայի զգայուն ու բաց ականջում կրկին ու կրկին մեղադրում էր իր իշխաններին վատ խորհուրդների համար: Իրենց հերթին իշխանները նույնպես բարձրացնում էին իրենց ձայնը բարկության գոռոցներով (նրանք այժմ կարծես շատ հանդուգն և անպատկառ էին դարձել իրենց տիրոջ դեմ) և Սեդեկիային անվանում էին թուլասիրտ, պատերազմի կաթվածահար առյուծ, որը, մտածելով միայն ապագայի մասին, չի տեսնում իր ապրած օրը, իր խճճված գործերը, որոնք կարոտ են լուծումների: Երուսաղեմն անառիկ էր: Թագավորը նորից գոռում էր ու բողոքում, որ երկրում արդեն երկու հունձք կորած է, և շտեմարանները լրիվ թալանված են: Կործանարար և ամբարիշտ արարած պետք է լինի նա, ով երկար ժամանակ խաբում է իր ժողովրդին և չի ընդունում, որ սովի սպառնալիք կա, որի հետևից գալիս են դրա դուստրերը՝ ժանտախտն ու արնալուծը (դիզենտերիա): Իշխանները գոռում էին, որ կործանարար և ամբարիշտ արարած է նա, ով նախօրոք խոսում է ահավոր սովի և նրա դուստրերի մասին: Բանակն անպարտելի կերպով կանգնած էր իր իշխանների հետևում: Անհրաժեշտ էր անել միայն մեկ բան՝ ժամանակ չկորցնել և պատրաստ լինել հարվածելու թշնամուն քաջաբար, ինչպես նախկինում...

Այդտեղ ձայներն այնքան խառնաշփոթ էին, որ Երեմիան այլևս իր զգայուն ականջում չէր կարողանում առանձնացնել ու տարբերակել

դրանք: Բայց նա մտովի տեղափոխվում էր նաև այլ վայրեր: Նրան էին հասնում պահակախմբի երգերի հեռավոր ձայները և աշտարակներից ազդարարվող ժամային կանչերը: Նա լսում էր տագնապահար մարդկանց ամենօրյա խոսակցությունը տներում: Նա լսում էր նաև Ասափի մանուկների հոգնած ձայները և քահանայապետի հառաչող աղաղակը Սրբարանի նախաշեմին: Ավելի ուշ ձայները կորչում էին խավարում: Նրա զգայուն ականջին հասնում էին այլ հնչյուններ՝ բազմաթիվ թռչունների հուզիչ ճռվողյունը: Բայց դա ավելին էր, քան դատարկ ծլվլոցը: Թռչունները խոսում էին: Նրանք ճչում էին, ծաղրում, ծիծաղում, շաղակրատում, նմանակում մարդկային խոսքեր: Այդժամ Երեմիան գիտակցում էր, որ ինքը Մարդուկի շքեղ վրանում է, որը նստած էր մենակ և ժողով էր գումարում իր թռչունների հետ: Նա իր ամբողջ ուժերը լարում էր՝ լսելու համար, թե Մարդուկի թռչունները՝ աստղային այդ փոքրացած ոգիները, ինչ էին ասում իրենց տիրոջը: Երեմիայի ներքին ականջը, սակայն, չէր կարողանում վերծանել ոչ մի բան՝ ոչ Նաբուգոդոնոսորի հարցերը և ոչ էլ մարդկանց ծաղրող թռչունների ճչացող պատասխանները:

Երբ նա մեկ անգամ ևս լարում է իր լսողությունը, որպեսզի լսի անլսելին, ջահի մի տատանվող լույս ճեղքում է զնդանի անսպառ գիշերը: Գալիս են մարդիկ և ազատում են նրան շղթաներից:

* * *

Նրանք տանում են նրան ոչ թե Սողոմոնի պալատ, այլ «Փարավոնի դստեր» անունով հայտնի կանանոցի տունը, ուր թագավորը, յուրայինների հետ նստած, սպասում էր նրան: Զնդանի հավերժական խավարն այնքան էր թուլացրել Երեմիայի զգայարանները, որ նա կորցնում է իր կառավարումը դրանց վրա: Այն մարդիկ, որ նրան ազատ էին արձակել, ստիպված էին գրեթե շալակել նրան: Թագավորական կանանոցի սրահում նա ծանր շնչելով ընկավ մի նստարանի վրա: Հետզհետե ուշքի էր գալիս: Առաջինը, որ նա տեսավ, Ամիտալն ու Մաաքան էին, որոնք կողք կողքի նստած էին բազմոցին: Նրանց երկու կողքերին կանգնած էին

թագավորի երկու որդիները՝ Ադաիան և Եհիէլը: Ադաիան՝ ավագը, շատ էր մեծացել այն ժամանակից ի վեր, երբ Երեմիան վերջին անգամ տեսել էր նրան: Նա կասկածանքով և տղայական խուզարկու հայացքով էր նայում մարգարեին: Թագուհիների և որդիների փոքրիկ խմբի վրա իջել էր գաղթականի և աքսորյալի տխուր մի ստվեր: Այնուհետև թագավորը հետևից կանչեց Երեմիային.

— Շնորհակալ եղիր այս կանանց,— ասաց նա,— և ոչ թե ինձ: Նրանք են հիշել քեզ...

Երեմիան չշրջվեց դեպի այդ ձայնը: Դրա համար նա ուժ չուներ: Միաժամանակ նա սպասում էր, որ թագավորը երկու քայլ անի, որպեսզի մոտենա և դեմառդեմ լինի իրեն: Սեդեկիան, սակայն, չարեց դա: Հավանաբար նրան ավելի հեշտ էր թվացել զրույցն իր ուսուցչի հետ նրա թիկունքում անել:

— Երբեք չէի կարծում,— հառաչեց նա չափազանցված կերպով,— որ դու ընդունակ կլինես դառնալու իմ թշնամին...

Այս դատարկ ու կեղծ մեղադրանքի հանդեպ Երեմիան խուլ ձևացավ. նույն կերպ վարվեցին նաև Մաաքան և Ամիտալը: Թագավորի փորձը՝ մեղավոր հանելու այն մարդուն, որի դեմ անարդարություն էր գործված, ոչ մի արդյունք չտվեց: Պատասխանելու փոխարեն, սակայն, Երեմիայի արած հարցումը հասավ իր նպատակին.

— Ի՞նչ վատություն արեցի քո դեմ կամ քո ծառաների և այս ժողովրդի դեմ, որ ինձ տարաք ու գցեցիք զնդան անսպառ գիշերվա խավարում:

Նախքան թագավորի պատասխան տալը խոսք առավ Ամիտալը, որն իր հիվանդության պատճառով իրոք ծեր կին էր դարձել.

— Մեր բարեկամը,— ասաց նա դժկամությամբ,— երբեք չի կարող որևէ վատություն գործել...

— Թագավորն է խոսում, և ոչ թե իր մայրը,— ասաց Սեդեկիան կոպտությամբ՝ կտրուկ ընդհատելով նրա խոսքը: Ամիտալի դեմ զայրույթի այս կոշտ արտահայտությունն ապացուցում էր, որ թագավորն իրեն շատ անհարմար էր զգում իր դերում՝ իբրև դատավոր: Այնուհետև Երեմիան օգտագործեց պալատական և պաշտամունքային կյանքում կիրառվող արարողակարգային մի ոճ: Իհարկե, այդ ոճով չեն դիմում մարդկային սրտին, առավել ևս ծանոթ մարդու սրտին, այլ միայն գահակալի իշխանությանը:

— Տեր իմ արքա,— մրմնջաց նա,— թող իմ աղաչանքն ընկնի քո առջև, թույլ մի՛ տուր, որ ինձ կրկին տանեն ու գցեն դիվանատան զնդանը, որպեսզի այնտեղ չմեռնեմ...

Ենթակայության խոնարհ ոճը՝ «թող իմ աղաչանքն ընկնի քո առջև», կարծես թե սիրաշահեց Սեղեկիային: Նա ելավ Երեմիայի հետևից, եկավ նրա առաջ և իր նշաձև ու գեղեցիկ աչքերով նայեց նրան մտահոգված.

— Ինչ ես կարծում, Երեմիա: Դու քո գործերով ծանր մեղք ես բարդել քեզ վրա...

— Իմ թագավորն իր սրտում գիտե, որ ես մեղավոր չեմ...

— Նույնիսկ եթե քո թագավորը գիտե այդ մասին, սակայն Իսմայելը, Մալքիան և մյուսները հավատում են քո մեղավոր լինելուն, քանի որ դու չես ապացուցել քո անմեղությունը... Ահա թե ինչու ես քեզ գաղտնի եմ ընդունում կանանց տանը...

Մաաքան վեր կացավ: Անհանգստությունն ու մտահոգությունը հյուծել էին նաև նրա դեմքը: Իր նախկին թարմությամբ անաղարտ մնացած ձեռքի մատների ծայրով նա դիպավ Սեղեկիայի ձեռքին.

— Թող իմ արքան լսի և հաշվի առնի,— խնդրեց նա,— թող Տիրոջ այս մարդը լինի ոչ թե քո իշխանների բանտարկյալը, այլ ուղղակի քո բանտարկյալը...

— Կինս խելացի բան է ասում,— ժպտաց Սեղեկիան, որը Մաաքայի նկատմամբ այդ սիրալիր վարմունքով ուզում էր հատուցել Ամիտալի հանդեպ դրսևորած իր զայրույթը:— Քո նկատառումները խորթ չեն թագավորի նկատառումներին...

Այնուհետև նա դիմեց Երեմիային.

— Մի անգամ դու ինձ ողջունեցիր՝ ասելով. «Դավթի իսկական որդի»: Դու դա հիշո՞ւմ ես:

— Այո՛, ես դա հիշում եմ:

— Եվ քանի որ դու հիշում ես դա, ես էլ նույնպես չեմ մոռանում հայտնել իմ երախտագիտությունը, որը պարտական եմ հորս և մորս, իսկ նրանց կողքին՝ նաև քեզ... Ես քեզ հավատարիմ եմ մնացել, չնայած քո անհավատարմությանը, թեև քո բնությունը և իմ ողորմածությունը քո նկատմամբ ինձ թշնամացնում են իմ իշխանների հետ... Դու չպետք է ազատ լինես և ազատ շրջես: Ես քեզ զնդանից բարձրացնում եմ

և դարձնում իմ բանտարկյալը՝ թագավորի պատվավոր հսկողության ներքո... Քո վայրը կլինի իմ պալատի պահակատան մեծ բակը: Դու կարող ես այնտեղ ապրել և անել այն, ինչ կցանկանաս, միայն իրավունք չես ունենա լքելու այն կամ նրա սահմաններն անցնելու... Բայց քանի որ դու ծառայել ես իմ հորը՝ Հովսիային, ես ավելին եմ անելու: Թող իմ մայրն ուրախ լինի... Հնարավոր է, որ գա ժամանակ,— ես կարծում եմ, որ այն երբեք չի գալու,— երբ դու բավարար քանակությամբ կերակուր չես ունենա սնվելու համար... Հետևաբար, հանուն իմ երախտագիտության, նախօրոք ես հոգ կտանեմ այդ ուղղությամբ: Մայրիկ և Մաաքա, լսեք... Հրահանգում եմ իմ սեղանապետին. այսօրվանից սկսած ամեն օր Երեմիան պետք է ստանա իր բաժին հացը՝ հացթուխի փռից, մսի իր բաժինը՝ սպանդանոցից, իսկ գինին, յուղը և հավելյալ սնունդը՝ իմ սեղանից... Եթե դու պետք է լինես իմ բանտարկյալը, ուրեմն ես քեզ կընդունեմ նաև որպես իմ հյուրը, որը կկիսի թագավորի հացը... Այժմ լավ կլինի, որ թագավորն այլևս լռի՝ իրազեկ դարձնելուց հետո բանտարկյալին իրեն շնորհված հանգամանքներին... Բայց ես գիտեմ Երեմիային, նրա համար նույնիսկ անհնարինը շատ համեստ է թվում...

Երեմիան երկու ձեռքերը վեր բարձրացրեց վախեցած.

— Անհնարինն ինձ համար չէ...

— Անհնարինը քեզ համար կամ Եհովայի համար,— թագավորը լուռ մնալու նշան արեց.— դա կարևոր չէ, սակայն երախտագիտությանդ փոխարեն ես պահանջում եմ, որ դու խոսես ինձ ամբողջ ճշմարտությունը՝ բաց և անկեղծ... Լսո՞ւմ ես, մի պարտ ու պատշաճ ճշմարտություն, քանզի իմ հոգին շատ տխուր է... Կա՞ արդյոք Տիրոջից մի խոսք...

Երեմիան մի երկար հայացք գցեց թագուհիների և երեխաների վրա, ապա լռեց: Թագավորն իրեն գցեց մի բազմոցի վրա: Նրա խոսքերը հնչեցին ճնշված.

— Երեմիան չի ցանկանում խոսել կանանց ականջներին, չնայած նրանք թագուհիներ են... Նա չի ցանկանում խոսել նաև թագավորի որդիների ականջին, չնայած նրանք դեռ շատ քիչ են հասկանում... Երեմիան իրավունք ունի... Քանի դեռ իմ երեխաները տասներեք տարեկանը չեն բոլորած, թող խնայված լինեն աստվածային որևէ տեսակ խստությունից:

Սեղեկիան գլխով մի նշան արեց, և թագուհիներն ու արքայազները դուրս ելան սրահից: Ամիտալը, որը հիվանդության պատճառով շատ էր գիրացել, դժվարությամբ էր շարժվում: Մաաքան ստիպված էր օգնել նրան: Թագավորն անհամբեր սպասում էր նրանց մեկնումին, ապա բացականչեց մեծ հուզմունքով.

— Ասա հիմա խոսքը, լինի դա լավ կամ վատ: Երանի թե լավ լինի: Պետք է լավ լինի: Այնուամենայնիվ, իմ վշտալի հոգին բավականաչափ ուժ ունի դիմանալու նույնիսկ վատին:

Երեմիան խոնարհեցրեց իր հյուծված դեմքը՝ թարթելով աչքերը, որոնք դեռ կիսով չափ կույր էին զնդանի անվերջ գիշերվա պատճառով:

— Նայիր ինձ, իմ տեր արքա,— աղաչեց նա:— Թույլ տուր ինձ խոսել...

— Ես չափազանց ողորմած ու համբերատար եղա,— ասաց Սեղեկիան զայրացած,— և քեզ համար արեցի շատ բան, ինչն ինձ թշնամացրեց իմ իշխանների հետ... Եվ դու խուսափում ես ինձնից չարությամբ, երբ ես գիտեմ, որ դու թաքցնում ես մի խոսք, լինի դա լավ կամ վատ... Համենայն դեպս, զգույշ եղիր, որ չվերադառնաս զնդան... Քեզ հրամայում եմ, որ խոսես...

Երեմիան ցնցվեց այդ սպառնալիքից և շշնջաց տխրությամբ.

— Դու ընկնելու ես Բաբելոնի մեծ տիրակալի ձեռքը, դու և քո շրջապատը...

Թագավորը, ցրված հայացքով, երկար նայում էր մարգարեին, ապա ջղաձիգ կերպով սկսեց քրքջալ.

— Սիրտս ուրախ է, որ ճանաչել է քեզ, Երեմիա... Դու կուզենայիր, սակայն, ավելի շուտ լեզուդ կծել, քան թե իմ հոգուն լավություն անել, չնայած որ ես իմ յուրաքանչյուր խոսքում թաքուն աղաչել եմ, որ լավություն անես իմ շատ տրտմած հոգուն...

— Մի՞թե ես իմ թագավորին, որն ինձնից ճշմարտություն է պահանջում, պետք է ստեմ,— ասաց Երեմիան զարմացած:

Թագավորի ջղային ծիծաղը վերածվեց բառերի մի հեղեղի:

— Ուրեմն սուտը պարզապես այն է, ինչը լավ է ու հաճելի,— գոչեց նա,— իսկ ճշմարտությունն այն է, ինչը ճնշող է ու խեղդող: Ահավասիկ, հենց սրանում է քո ցավալի սխալը, որ դու երբեք չես ճանաչի կյանքի

խառնուրդը: Բայց քո այդ թշվառ սխալն ինձ ուժ է տալիս ծիծաղել քեզ վրա... Գուցե ընկնեմ Բաբելոնի մեծ տիրակալի ձեռքը: Գուցե խոցված ընկնեմ աշտարակի բարձունքում կամ պատերազմի դաշտում, ինչպես իմ հայրը՝ Հովսիան: Գուցեև խոր ծերության հասնեմ խաղաղության մեջ, և Ուսիյահի պարտեզում իմ գերեզմանի վրա օրենքի սահմանված կարգով ողբի երգեր հնչեցնեք... Ոչինչ դեռ որոշված չէ, ոչ գալիք ժամը, ոչ վաղը և ոչ էլ վաղվան հաջորդող օրը... Ուսուցիչ, քո աշակերտը հաղթում է քեզ քո սեփական ուսմունքի միջոցով: Դու միշտ ասում էիր, որ Եհովան սպասումի և անորոշության Աստվածն է: Հետևաբար, մի՞թե Նա չպետք է սպասի Դավթի տունը քանդելու հարցում... Դու միշտ ասում էիր, որ քո հայրը՝ Հովսիան, մեռավ նրա համար, որ չափազանց վստահ էր Տիրոջ մասին... Սակայն ես վստահ չեմ ոչ իմ երջանկությանը և ոչ էլ իմ դժբախտությանը: Լսո՞ւմ ես: Դու մարգարեացար այս կամ այն, և համաձայն քո մարգարեացման՝ կատարվեց այս կամ այն: Բայց ո՞ր գուշակի կանխատեսածն արդյոք չի կատարվում... Ես բոլորովին անվստահ եմ, Երեմիա: Եվ հենց իմ այդ անվստահ լինելն է, որ ինձ համարձակություն է տալիս ծիծաղել քեզ վրա ու քո խոսքի վրա, առանց հետ կոչելու իմ երախտագիտությունը քեզ...

— Հարկ է,— ասաց Երեմիան ցածրաձայն,— նույնիսկ անվստահությանն այդքան էլ վստահ չլինել...

* * *

Պահակատան մեծ բակը, որը հայտնի էր նաև իբրև «Արքայական պահակատուն», տարածվում էր բնակելի պալատներից մինչև տաճարին սահմանակից հյուսիսային ամրոցի պարիսպը: Դա այդ շրջանի բոլոր հրապարակներից ամենաընդարձակն էր, որն իր հարմարություններով՝ կացարաններով, ախոռներով, աշտարակներով, նկուղներով, ծառայում էր արքայական թիկնազորին՝ իբրև ծառայության ու հավաքման վայր: Պահակատան պարսպի մի մռայլ սենյակում տեղ հատկացվեց Երեմիային՝ քնելու և բնակվելու համար: Նա սկսեց ապրել արքայական ռազմիկների մեջ, որոնց ղեկավար իշխաններն իր մահացու թշնամիներն էին:

Շարքային զինվորը, սակայն, ոչ թշնամական և ոչ էլ բարեկամական էր տրամադրված նրա նկատմամբ: Թագավորական ռազմիկների ծառայությունը ծանր էր, նրանց կերած հացը՝ նույնպես: Շաբաթից շաբաթ յուրաքանչյուրի հացի բաժինն ավելի էր փոքրանում, մինչդեռ Երեմիան օգտվում էր թագավորական ճոխ սեղանից: Բացառությամբ մի փոքր մասի, նա իր ամբողջ կերակուրը նվիրում էր զինվորներին: Նա ունենում էր բազմաթիվ երախտագետներ իր շուրջը: Բայց իր մտերմությունը նրանց հետ այդտեղից չէր: Երբեմն գիշերները, երբ հերթափոխված զինվորները վերադառնում էին իրենց պահակակետերից, կեղտոտ բաճկոնների մեջ փաթաթված՝ մի պահ քնում էին մերկ հատակին՝ Երեմիայի բաց դռան առջև: Պատահում էր, որ նրանցից մեկնումեկն ընդոստ վեր էր կենում իր կես քնից և գնում կոշտ կերպով արթնացնելու Աստծու մարդուն.

— Տիրոջ մարգարե, մարգարեացիր. թե ինչ է լինելու մեր կյանքի հետ...

Երեմիան հանգստացնում էր անհանգստացածին քաղցրաբարո խոսքերով, որոնք անկեղծ էին և միաժամանակ՝ հուսատու: Նա ամեն կերպ խուսափում էր մարտիկի սիրտը վիատեցնելուց: Ամեն օր, ժամեր շարունակ նա նստում էր հանգստացող զինվորների մեջ: Սկզբում նրանց զրույցները կոշտ էին և հաղթողի մեծամտությամբ տոգորված, որոնք, սակայն, գնալով մեղմանում էին ու լռության մատնվում: Մեծ տիրակալը հարյուր նոր հրանոթ էր բերել Բաբելոնից, որոնց հետ նաև՝ գրոհելու հատուկ շարժական աշտարակներ, որոնք ավելի բարձր էին, քան պարիսպները: Շաբաթներից ի վեր կրկին անգամ սկսվել էր հարձակումը: Ամեն օր շատ մարդիկ էին մահանում: Շարունակաբար դղրդում էին նետաձիգների սլաքներն ու քարընկեց սարքերի գրոհներն ընդդեմ ամրակառույց պարիսպների: Երեմիան միայն կիսով չափ լսում էր պարծենկոտների կամ մտահոգվածների զեկույցները: Նրա մտքերը կրկին անգամ Անաթովթում էին: Իր առջև նա տեսնում էր իր կալվածքը շրջապատող պարսպի մնասված մասը, իր տան շեմը, ուր մայրական վառված ճրագը սպասում էր իրեն, մութ միջանցքը, որը տանում էր դեպի ծնողների սրբազան սենյակը, իր ննջասենյակը, որի պատերին մի ժամանակ տարածվել էին իր հոգևոր արթնացումը խորհրդանշող նշենու ծաղկած ճյուղերը: Նա այլևս երբեք չէր վերադառնալու Անաթովթ...

Այդ օրերին, սակայն, պատահեց այնպես, որ Անաթովթն ինքը եկավ նրա մոտ: Եվ ինչպես սպասելի էր, այն եկավ Հանամեէլի կերպարանքով: Այդ փարթամ գյուղացին, որն այլապես մեծ ուշադրություն էր դարձնում մաքրությանը, մազ ու մորուքի պատշաճ հարդարանքին, համեստ, բայց կոկիկ հագուկապին, անհասկանալիորեն դարձել էր թափթփված ու փնթի: Մազերը փնջերով կախված էին ճակատից, մորուքն աճել էր անխնամ: Պատառոտված ցեխապատ հագուստները լռելյայն վկայում են բացօթյա ճամբարում անցկացրած գիշերների մասին՝ մորենիների և անձրևային տիղմերի մեջ: Հանգստացող մարտիկների հետաքրքրասեր նայվածքների դիմաց բարի զարմիկը պպզեց Երեմիայի կողքին: Երկուսն էլ մի որոշ ժամանակ լռում էին, ինչպես վայել էր տղամարդկանց, որոնց սիրտը լեցուն էր անհագ հարցումներով ու պատասխաններով: Հենց ինքը՝ Երեմիան, բացեց խոսակցությունը.

— Հանամեէլ, իմ լավ զարմիկ և մանկությանս խաղընկեր, հենց նոր էի մտածում իմ հայրական տան մասին, և դու հայտնվեցիր...

— Երեմիա, իմ զարմիկ և մանկությանս խաղընկեր,— ասաց հավատարիմ վարձակալը՝ դրականապես շարժելով գլուխը,— ես գիտեմ, որ քո միտքը հայրենի տանն է, և դրա համար դու շատ պատճառներ ունես... Ահա թե ինչու ես թաքուն կերպով և մեծ վտանգների միջով անցնելով ջանացի գեթ վերջին անգամ մտնել այս քաղաքը... Տես, այս վերջին վարձավճարը, որ քեզ բերում եմ, շատ աղքատիկ է՝ մի փոքր տոպրակ ոսպ, մի փոքր տոպրակ չոր թուզ և այս սափոր գինին անցյալ տարվա բերքից... Ավելին չունեմ...

— Իմ սիրելի զարմիկ, բաժանիր ոսպը, թուզն ու գինին այստեղ քաջամարտիկների միջև, որովհետև քաղաքում մեծ սով է, և մարդիկ տառապում են դրանից... Բայց դու ասա ինձ, թե ինչն է պատճառը, որ իմ միտքը ձգտում է դեպի հայրենի տուն, նաև չհասկացա, թե ինչն է պատճառը, որ դու խոսում ես վարձակալման վարձի վերջին վճարման մասին...

Հանամեէլը կատարեց Երեմիայի կամքը և իր հետ բերածները բաժանեց մարտիկներին: Այնուհետև նա, առանց փոխելու իր ձայնի հանգիստ տոնը, սկսեց իր տխուր զեկույցը՝ ասելով.

— Երբ քո ավագ եղբայրը՝ Օբադիան, մարմնական սարսափելի ցավերի մեջ մահանում էր, և քանի որ բոլորովին մենակ էր մնացել, կանչել է

տալիս Հանամեէլին: Երկարատև պատերազմն ու Տիրոջ զայրույթը ցրել էին նրա բոլոր հարազատներին: Դեռևս այնտեղ էր միայն մարդասպան բուն, որի ձայնը կարելի էր լսել գիշերը, ինչպես դիտարանից հնչող ձայն՝ ազդարարելով գիշերային պահակներին Աստծու վրեժխնդրությունը: Օբադիան, սակայն, ինձ հետ խոսեց այսպես. «Աշխարհ ման եկած Հովելը ստացել է իր բաժինը և տեղափոխվել այստեղից: Պատերազմը խլել է ինձնից իմ որդիներին, իսկ իմ դուստրերն ու հարսներն իրենց երեխաների հետ թողել գնացել են: Տերն ինձ հարվածել է Երեմիայի պատճառով: Արդ, կապիր գոտին մեջքիդ, ոտքի կանգնիր ու գնա խոսիր իմ անունով կրտսեր եղբորս հետ՝ ասելով, որ անզավակ Երեմիան ինքն է այժմ գերդաստանի հայրը և դատարկ տան տերը»... Արդեն երկու ամսից ավելի է, որ մենք թաղել ենք քո ավագ եղբոր մարմինը: Ես էլ պատրաստվել էի գալ քեզ մոտ, բայց այդ ընթացքում Անաթովթում տեղի ունեցավ մի մեծ դժբախտություն: Բաբելոնի մարդիկ եկան և այրեցին քո տունը՝ Աբիաթարի սրահի, ծնողներիդ սենյակի և բազմաթիվ գեղեցիկ իրերի հետ, որոնք հավաքել էր քո մայրը: Նրանք թալանեցին թանկարժեք ամեն ինչ, քշեցին անասունները, խմեցին գինին, ավերեցին դաշտերը և սպանեցին մշակներին: Նրանք այրեցին ու թալանեցին նաև իմը, ինչպես իմ շրջապատինը, որպեսզի մայրաքաղաքը ոչ մի տեղից չկարողանա սնունդ կամ օգնություն ստանալ: Բայց ես ուրիշների հետ սարսափահար թաքնվեցի լեռներում, նախքան վերջին անգամ քեզ մոտ գալս...

Երեմիան լսեց՝ առանց ընդհատելու արդարամիտ պատմողին:

— Ճշմարիտ է, որ ես հիմա գերդաստանի անզավակ հայրն եմ և տերը հրկիզված տան,— ասաց նա երկար լռությունից հետո: Հանամեէլը, սակայն, իր գյուղացու մեծ ձեռքը դրեց նրա ծնկին և հարցրեց.

— Ինչ պիտի լինի վերջը, ասա ինձ, որպեսզի քո խոսքի համաձայն կարգի բերեմ իմ կյանքի մնացած մասը...

Հետզհետե ավելի շատ արքայական մարտիկներ էին հայտնվում, որոնք խիտ օղակներ էին կազմում նրանց շուրջը: Երեմիան փակեց աչքերը: Իր դժբախտության մեջ նա այժմ մոռանում էր, որ իրենք մենակ չեն: Նույնիսկ եթե նա խոսում էր շատ ցածր ձայնով, այդուհանդերձ, սուր լսողություն ունեցողներից ոմանք հասկանում էին նրա վտանգավոր խոսքը.

— Այս քաղաքը, այս ժողովուրդը և այս ամբողջ երկիրն ընկնելու են Բաբելոնի թագավորի ձեռքը:

— Դու կանխատեսել էիր դա,— ասաց Հանամեէլը՝ գլուխը դրականորեն շարժելով, կարծես թե այլ բան չէր էլ սպասում,— Ես պետք է կարգավորեմ իմ մնացած կյանքը դրա համաձայն... Ես հեռանալու եմ այս երկրից, ինչպես դա արեց աշխարհ տեսած խելացի Հովելը, և թոթափելու եմ այս ժողովրդի և Աստծու բեռը... Նախքան այդ, սակայն, ես վերադարձնում եմ քո կալվածքը, ես այլևս չեմ կարող հետևել դրան... Իսկ իմ արտն ու արոտավայրը վերցրու քեզ՝ իբրև նվեր, նույնիսկ եթե դրանք խոպան են և անարժեք քեզ համար...

«Անարժեք» բառի վրա Երեմիան ցատկեց ոտքի:

— Աստված մի՛ արասցե,— գոչեց նա բարձր ձայնով,— որ Տիրոջ երկրում արտերն ու արոտավայրերն անարժեք համարվեն... Ոչ ոք քեզ՝ ծեր մարդուդ, չի խանգարի այս ժողովրդի և Աստծու բեռը քո վրայից հանելու և ճիշտ ժամանակին հեռանալու... Ես, սակայն, ուզում եմ քեզնից գնել քո կալվածքն իր լիարժեք գնով, որպեսզի կարողանամ մեծացնել իմ արդեն իսկ շատ մեծ ժառանգությունն այս երկրում: Օրենքի համաձայն՝ դու միայն ինձ կարող ես վաճառել քո դաշտն ու արոտավայրը, քանզի ես եմ հիմա գերդաստանի նահապետը:

Երեմիան այնքան բարձրաձայն էր խոսել, որ իր շուրջը զարմանքի մրմունջ էր հարուցել: Նրա նայվածքը լռեցրեց Հանամեէլին, որը փորձում էր առարկություններ անել: Աստիճանաբար բարի զարմիկն սկսում է գիտակցել, որ իրեն առաջարկված առևտուրը մի հիմար գործարք չէ, այլ մի խորհրդանշական գործողություն, որ Տերը հրահանգել է իր ընտրյալին, երբ ասվել էր «անարժեք» բառը: Երեմիան կանչեց իրեն շրջապատող արքայական ռազմիկներին՝ իբրև իր գնումի օրինական վկաներ: Իր գոտուց հանեց այն ոսկին, որը ժամանակին իր հոր՝ Քեղկիայի հանձնարարությամբ մայրը տվել էր իրեն՝ իբրև «ծայրագույն կարիքի» դեպքում օգտագործելու համար: Բարուքը, որ թույլտվություն էր ստացել ամեն օր այցելելու բանտարկյալին, պետք է անհապաղ շարադրեր ու կնքեր գնման փաստաթուղթը՝ ըստ ընդունված բանաձևերի: Հանամեէլը, որը դեռևս չէր հասկանում, թե ինչ է կատարվում, ստացավ իր հողի ամբողջական արժեքը: Այնուհետև Երեմիան հորդորեց նրան հետ կանգնել

իր արտագաղթելու մտադրությունից, վերադառնալ և առժամյա մի կացարան կառուցել գերդաստանի հնամյա հողի վրա, սպասել և հուսադրվել: Բարի զարմիկն արտասվալից աչքերով խոստացավ հնազանդվել: Երեմիան հրաժեշտ տվեց նրան՝ բարձրաձայն ասելով հետևյալը.

— Մի օր այս երկրում շատ տներ, դաշտեր և խաղողի այգիներ պիտի գնվեն...

Բարուքը, սակայն, Երեմիայից խիստ հրահանգ ստացավ՝ գնման կնքված վկայագիրը կավե մի սափորի մեջ դնելու և այն մի ապահով վայրում պահելու, որպեսզի մնա իբրև նշան և վկայություն գալիք տարիների ու մարդկանց համար: Շրջապատի մարդիկ տեսնում էին և լսում այս ամենը: Սակայն նրանց ռազմական միտքը չէր կարողանում ըմբռնել դրանցում առկա հակասությունները: Մի՞թե Երեմիան նախօրոք հստակ կերպով չէր գուշակել ավարտը: Եվ միևնույն մարդը, որն այլևս չի կասկածում ակնկալվող անկումի ու կործանումի մասին, իր վերջին դրամով գնում է մի անապատ, մի խոպան դաշտ այս երկրում: Բայց ոչ միայն մարտիկների պարզամիտ հոգին, այլև Երեմիայի բազմահմուտ հոգին էլ էր զարմանում այս հակասության վրա, որը տնօրինվում էր Տիրոջ կողմից: Այդ հակասությունը լցնում է նրան մի նոր քաղցրությամբ, որպես թե նրանում զգալի լիներ աստվածային մի նոր ճանաչում...

* * *

Հաջորդ օրը թագավորն իր անբաժան ընկերակիցների և այլ իշխանների ու հերոսների հետ գալիս է պահակատան պալատ: Ոսկյա զրահ և երկնագույն կապույտ թիկնոց հագած Սեդեկիան փայլում էր գեղեցկությամբ: Նրան ընկերակցողները նույնպես հիանալի զինված էին և կրում էին ջայլամի փետուրներով օժտված եգիպտական մարտական սաղավարտներ: Թագավորի հրահանգն էր երեկոյան դեմ Եփրեմի և Բենիամինի դարպասներից գրոհել և ոչնչացնել Բաբելոնի ռազմական նոր սարքերը: Այդ ծրագիրը ոչ թե լավ հաշվարկի արդյունք էր, այլ հուսահատության: Այն առաջացել էր հետևյալ մտքերից. «Ինչ-որ բան պետք է արվի», և «էլ ի՞նչ ունենք կորցնելու»: Սեդեկիան գիտեր, որ այս

խելագարությունը շատերի կյանքեր էր խլելու, գուցե նաև իր կյանքը: Բոլորը դա գիտեին և կրում էին մահվան մերձավորությունը՝ իբրև մի մռայլ հարբեցողություն իրենց մեջ, որը նրանց մղում էր անիմաստ դաժանությունների:

Լսվեց մի կանչ, և Մալքիան նշան արեց: Հերթապահ պահակները բռնեցին Երեմիային, տարան ու ծնկաչոք գցեցին թագավորի խմբի առջև:

Սեդեկիան վերևից նայեց նրան: Նրա ռունգերը դողում էին: Դավթի ժառանգի ոսկեփայլ շքեղ կերպարանքը հազիվ թե կարողանում էր զսպել իր անհամբերությունն ու տհաճությունը: Նա իր աջ ձեռքում բռնած էր փղոսկրյա մի մական: Դրանով նա դժկամորեն նշան տվեց Մալքիային վերջապես սկսելու իր նյարդայնացնող մեղադրանքը:

— Մի՛ ուրացիր,— ասաց Փաշհուրի որդին ծնկի եկած մարդուն,— տասնյակներով վկաներ կան, որ դու քո արքայի ռազմիկների ներկայությամբ ասել ես, թե՝ այս քաղաքը, այս ժողովուրդը և այս ամբողջ երկիրը ընկնելու է Բաբելոնի թագավորի ձեռքը...

Երեմիան մի երկար պահ մտածեց՝ նախքան ցածր ձայնով պատասխան տալը.

— Մեկը ցանկանում էր իմանալ, թե ինչպես պետք է կազմակերպեր իր կյանքը...

— Շատ լավ, որ դու չես ժխտում դա,— արագ ասաց Մալքիան,— բայց սա դեռ ամբողջը չէ: Դու յոթը *շեկելով* վաճառել ես քո հսկայական կալվածքներն Անաթովթում մի գյուղացու, որպեսզի ցույց տաս, թե ինչքան անարժեք են դարձել հողերը քո արքայի երկրում...

— Զրպարտությո՛ւն,— գոչեց Երեմիան,— սո՛ւտ, սատանայական սո՛ւտ... Ես, ընդհակառակը, հող եմ գնել, որպեսզի ցույց տամ դրա արժեքը... Թույլ տվեք, որ Բարուքը բերի գնման վկայականը...

— Ճիշտ կամ սխալ,— ասաց հյուծված Իսմայելն ամենայն հանդարտությամբ,— ո՞ւմ է ձեռնտու այս հարցաքննությունը... Պե՞տք է արդյոք վատնենք մեր սուղ ժամանակն այս մարդու հետ... Վերջապես Նորին արքայական մեծությանը պետք է հստակ լինի ու հաճելի, որ այս մարդը պետք է մահանա, քանզի նա անցել է իր չափը... Մենք պետք է անողորմ կերպով սպանենք յուրաքանչյուրին, ում սիրտը թուլանում է թշնամու

առջև, և ոտքը թեքում է փախչելու համար... Իսկ սա, ում դու մեծահոգաբար փայփայում ես ու պահում քո պատերազմող ժողովրդի մեջ, պիտի ապրի... Ժողովուրդը կարիք ունի քաջալերական բոցաշունչ խոսքերի, մինչդեռ սա խոսքեր է ասում, որոնք թուլացնում են սուր բռնող ձեռքերը և կաթվածահար անում ժողովրդին... Արդյո՞ք մեր թագավորն այլ ապացույցների կարիք ունի... Այս մարդը միայն Բաբելոնն է սիրում և սարսափելի ատելությամբ ատում է իր հայրենիքը...

Թագավորը շարունակում էր վերևից նայել Երեմիային: Նա հրաժարվել էր նրանից: Բաբելոնում գերված երեցներին ուղղված նրա նամակը, նրա փորձը՝ անցնելու թշնամու կողմը, երեկվա ասածը մարտիկների առջև, դրանցից որևէ մեկը նույնիսկ նրան արժանի էր դարձնում մահվան: Իսմայելն այլ բան չէր խոսել, քան այն, ինչը պիտի ասեր որևէ խելամիտ զորապետ: Սեղեկիան, զայրույթից շիկնած, հանկարծ գոռում է կարճ և տարօրինակ կերպով թրթռացող ձայնով.

— Արեք նրա հետ այն, ինչ դուք կկամենաք...

Նա թույլ է տալիս, որ այս նախադասությունը կախված մնա օդում՝ առանց այն իր ավարտին հասցնելու, սպասում է և կուլ տալով իր ամոթը, վերջապես ասում է հոգնած՝ մերժելով ամբողջ հանցանքը.

— Քանզի ի՞նչ կարող է անել թագավորը ձեր դեմ...

Այնուհետև նա արագ քայլերով հեռանում է մենակ: Նրան հետևում են միայն նրա սուրն ու վահանը կրողները: Ապա իշխանները ծիծաղների ներքո մանրամասն խորհրդակցում են, թե ինչպիսի դաժան մահվան պետք է արժանացնել այդ անագորույն թշնամուն: Մեծերի օրինակն անմիջապես փոխում է հասարակ զինվորների սիրտը՝ ընդդեմ Երեմիայի: Նրանք, ովքեր կերել էին նրա ճաշը, այժմ հպարտություն են համարում իրենց գործով ու վարմունքով գերազանցելու իշխաններին: Նրանք հարվածում են նրան, թքում են նրա դեմքին և աղտոտում նրա հագուստը: Բայց Իսմայելը թույլ չի տալիս, որ դա երկար շարունակվի այդպես, այլ հրամայում է, որ կապեն դատապարտյալի ձեռքերն ու ոտքերը և տանեն ու կոթնեցնեն դարպասի փայտյա փեղկին: Երեմիան հանգիստ թողնում է, որ իր հետ կատարվի այդ ամենը, քանզի նա գիտեր, որ Աստծու ողորմության շնորհիվ ինքը չի մեռնելու այդ ժամին զինվորների ձեռքով: Նույնիսկ երբ իր մարմնի շուրջն արձակում են նիզակներ, նետեր ու

դանակներ, որոնք մխրճվում են դարպասի փայտի մեջ, նա չի արձակում վախի ոչ մի ճիչ: Այդ ընթացքում կատարվում է մի տարօրինակ բան. նա, ով իր խոսքով ակամայորեն փրկում է նրան մահից, լինում է Երիան՝ իր հակառակորդի որդին: Ձեռքի մի կտրուկ շարժումով նա հանկարծակի կերպով վերջ է տալիս նրա տանջանքներին և ասում.

— Դուք՝ իշխաններդ թագավորի, լսեք ինձ: Պնտք է արդյոք՝ այս մարդը մեռնի սրով կամ նիզակով, ինչպես մեզնից մեկը, որ այս օրերին պատուհասվում է: Դա նրա համար շատ մեծ պատիվ կլինի և ոչ թե անարգանք: Հետևաբար, դադարեցրեք ձեր թիրախավորումն ու սլաքների արձակումը: Ես մի շատ ավելի արդար մահ գիտեմ դրա թշվառ մարմնի համար, ուր լորձունքի, խլինքի և կղկղանքի հետ, ասում է, թե ապրում է Աստծու խոսքը: Այդ խոսքը կարծես թե նախընտրում է բնակվել աղբահորերում, քան ազնվական օթևաններում: Եկեք այդ աստվածային խոսքն իր մեջ կրողին տանենք իր պատշաճ տեղը, ուր նա կամաց-կամաց սովից կվերանա, առանց երբեք ուտելու քաղաքի աղքատիկ հացը...

Իշխանները հավանություն են տալիս այս խոսքերին: Հավանաբար նրանց մեջ գտնվող խաղաղասեր ու լրջախոհ մարդկանց համար նպաստավոր չէր լինի, նախքան այդ օրվա ճակատամարտը, թափել մարգարեի արյունը, որը ծանրանալու էր իրենց վրա: Զինվորները քարշ են տալիս Երեմիային այնտեղ, ուր հրամայում է գնդապետը: «Թագավորի որդու ջրամբար» հորջորջումն անծանոթ ծագում ուներ: Այն ամեն ինչ էր, բացի մի իսկական ջրամբար լինելուց, երբ սովորաբար մաքրամաքուր մի վայրում հավաքվում ու պահպանվում է երկնքից տեղացած անձրևաջուրը: Այս դեպքում «Թագավորի որդու ջրամբար» կոչվածը գտնվում էր պարսպի արևելյան դարպասին կից՝ մի փոքր թեքության վրա: Նրա խորությունը տասներկու ոտք էր, երկարությունը՝ ութը ոտք, և լայնությունն էլ՝ ութը: Այստեղ էին հավաքվում բոլոր կոյուղաջրերը, շրջակայքի բոլոր աղբերը: Այնտեղ գցված Երեմիան չի մնասվում, որովհետև նա մեղմորեն ընկնում է թարմ տիղմի մեջ: Իր վերևում նա լսում է իրեն այնտեղ գցողների ծաղրական ծիծաղը.

— Դե հիմա դու, ով Աստծու խոսք, դուրս եկ սրա բերանից...

ԳԼՈՒԽ ԵՐԵՍՈՒՆԵՐՈՐԴ

ԽՈՐՔԻՑ ԵՎ ԲԱՐՁՈՒՆՔԻՑ

Սառը տիղմը հասնում էր Երեմիայի մինչև ծնկները: Նա կանգնում է ուղիղ, առանց շարժվելու: Նվազագույն շարժումը, որ նա անում էր իր կեղտոտված մարմնից դեպի վար նայելիս, ավելացնում էր իր զզվանքն այն աստիճան, որ նա կարծում էր, թե մեռնում է: Ամպամած մթնշաղն ու սուր գարշահոտությունը տարածվում էին նրա շուրջբոլորը: Երևի այստեղ՝ տիղմի տակ, կան նաև սատկած ու նեխած կենդանիներ, որոնք թունավորում են օդը: Երբեմն հատակի խոնավ շերտերից չփչփալով դուրս էին գալիս առնետներ, արագ անցնում էին իր կողքով և անհետանում հողի ճեղքերում: Դեռ ցերեկ էր: Սակայն նա ինչպե՞ս պիտի կարողանար գոյատևել գիշերն այդ փոսում, այդ գերեզմանում, այդ *շե՛օլի* մեջ, այդ լույծ աղբանոցում, այո՛, հենց այդ գիշերը, այդտեղ անցկացնել... Երեմիան, համակված տարօրինակ վախով ու զզվանքով, ինքն իր տերը չի լինում, բայց դա երկար չի տևում: Նրա միտքը սկսում է նորից գործել շատ արագ, ինչպես սովոր էր, այսինքն՝ ներթափանցել իր դրության իմաստի մեջ Աստծու հանդեպ: Տերը նրան չէր պատճառել մի անտանելի տառապանք, այլ՝ մի անիմաստ տառապանք: Ամեն ինչ խոսում էր հենց ինքն իր մասին: Ամեն պատահար ինքնին մի խոսակցություն էր, որն ինքն իրեն հասկանալի էր դառնում, ինչպես կավը բրուտի ձեռքում: Աշխարհի ողջ ընթացքը, լինի դա մոծակի թռիչք կամ պատերազմի իրարանցում, բացահայտում է իր կատարման ժամանակ իրեն բնորոշ գաղտնիքը: Այն փաստը, որ ընտրյալն անմեղորեն կանգնած էր գարշահոտ աղբահորում՝ մինչև իր ծնկները թաղված կեղտի մեջ, նույնպես բացահայտում էր մի կարևոր և իմաստալից բան: Նման եզրակացության հանգելուն օգնել էր Երիայի ելույթը, որի

խոսքերը դեռ հնչում էին իր ականջին: Տերը, անկասկած, նրան փրկել էր ստույգ մահից Անանիայի որդու միջոցով: Միևնույն ժամանակ Եհովան օգտագործում էր գնդապետի ատելի բերանը, որպեսզի արտահայտվի «Աստծու խոսքի» մասին, որը «իջնում է բնակվելու գարշելի մարմնի մեջ՝ լեցուն լորձունքով, խլինքով, կղկղանքով, գարշանքով»: Երեմիան մեկեն անդրադառնում է այն սարսափին ու զզվանքին, որոնք պիտի հայտնվեին, երբ Տերն իր խոսքն ուղարկեր, որպեսզի այն հնչեր մարդկային մարմնում: Երեմիայի սեփական ծանր իրավիճակը՝ տիղմով ու աղբով լեցուն փոսում, համապատասխանում էր Աստծու խոսքի ծանր իրավիճակին, որն անխոնջորեն, կրկին ու կրկին իջնում էր վերևից՝ փրկելու համար Իսրայելին, և կրկին ու կրկին մնում էր անլսելի: Այդ առթիվ զզվանքը, որն առաջանում էր կեղտից ու կղկղանքից, պարզապես թույլ նմանությունն էր աստվածային զզվանքի, որն առաջանում էր հոգու կեղտից, աղբից, անհավատարմությունից, մեղքից, կռապաշտությունից, պղծությունից, սիրո դավաճանությունից և այն ամեն ինչից, որը մարդուն ատելությամբ հեռացնում էր սկզբնական ուրախությունից: Այնուհետև աղբահորում նետվածը լցվում է Ամենաողորմածի հանդեպ ջերմ կարեկցանքով և խորությունից բարձրացնում է իր ձեռքերը դեպի նա՝ մեծ մտերմությամբ:

Նա մնում է կանգնած, և նրա ոտքերը չեն հոգնում, քանի որ նրա սիրտը համակված էր հզոր գիտակցությամբ: Նա դրսևորել էր բարի կամեցողություն և լրիվ հանձնվել իր ճակատագրին: Դրա համար էլ ենթարկվել էր նախատինքի: Մարդիկ նրան շպրտել էին այդ կեղտոտ փոսի մեջ, որպեսզի նա այդտեղ տառապեր ու դանդաղորեն մահանար: Այն գիտակցությունը, սակայն, որ իր տառապանքը Հակոբի ժողովրդի համար պարզապես իր զգայարանների պատրանքն է, փոխադրում էր նրան մի անծանոթ վիճակի կայուն էքստազի մեջ, որով նա այլևս հազիվ թե զգում էր իր անարգված մարմնի գոյությունը և այլևս հազիվ թե առնում էր աղբի ու կղկղանքի սուր հոտը: Այս կայուն հոգեզմայլանքն օգնում է նրան ժամեր ու ժամեր շարունակ: Նա լսում է միայն, ինչպես երազում, շեփորների ձայնը և մոլեգնող պատերազմի աղմուկը, որը բարձրանում էր հյուսիսային դարպասների մոտից և կանգ էր առնում միայն մթնշաղի վերջին լույսերի հետ: Աստղերը գնալով մեծանում են

«Թագավորի որդու ջրամբարի» վերևում: Հանկարծ, աստղային լույսի ներքո, պարանից կախված ինչ–որ մեծ բան շարժվում է փոսի պատի մոտ: Դա մի թիկնաթոռ էր, որի ոտքերը հապշտապ երկարացված էին փայտերով: Թիկնաթոռի բազկատեղից կախված էր մի զամբյուղ՝ սննդով լեցուն և գինու փակ մի սափորով: Ո՞վ էր մտածել նրա մասին, ո՞վ էր համարձակվել ազատել նրան տանջահար մահից, գուցե Բարուքը, թագուհինե՞ը: Ո՛չ, դրանցից ոչ մեկը: Իշխաններն արգելափակել էին մուտքերը դեպի թագավորի պահակատուն: Ոչ թագուհիները, ոչ էլ Բարուքը չգիտեին Երեմիայի ճակատագրի մասին: Դա մի համեստ մարդ էր, որ խղճացել էր նրան՝ առանց հայտնելու իր ինքնությունը: Բայց մյուս օգնությունը, որ ստացավ Երեմիան, շատ ավելին էր, քան այդ մարդունը: Ինչպես զնդանի հավերժական գիշերը հանդարտության և անտարբերության հրեշտակը գրկախառնվել էր նրա հետ, հիմա էլ գարշահոտության այդ փոսում հոգեկան հափշտակվածությունը պարուրում է նրա էությունը միշտ ավելի ուժեղ և ավելի ազատագրող հատկությամբ: Եվ ինչպես այնտեղ բացվել էր իր լսողությունն ամենահեռավոր հնչյուններն ունկնդրելու կարողությամբ, հիմա էլ բացվում է իր բերանը դառնաքաղցր ողբերի համար, որոնց բառերն ու մեղեդին բխում են իր զմայլված հոգուց՝ առանց իր միջամտության: Եվ Երեմիայի ձայնը հնչում է խորությունից՝ քաղցր և ուժեղ: Այն լցնում է գիշերվա ամբողջ տարածությունը և լուսնի աճող լույսի հետ մտնում է պալատների բաց պատուհաններով՝ հայտնելով, թե ով է տառապում աղբահորում: Անքուն Մաաքան լսում է ողբերգերի ձայնը և հուզմունքից ցնցվում: Երբ տարբերակում է և ընկալում դրանց բառերը, սկսում է հեկեկալ.

«Ես այն մարդն եմ, որը տեսել է թշվառություն և նրա գավազանը,
Որն ինձ առաջնորդել է և թույլ տվել գնալ մթության մեջ
և ոչ թե լույսի ներքո:
Նրա ձեռքը մնացել է կրկին ու կրկին իմ դեմ ուղղված:
Նա բզկտել է իմ միսն ու մաշկը և կոտրել իմ ոսկորները:
Ափելությամբ շրջապատված՝ ես կանգնած եմ մթության մեջ՝
մեռած մարդու նման:
Արգելափակված եմ, չեմ կարող դուրս գալ, շղթաներս ծանր են:

Դու արջն ես դարանակալ, ինչպես առյուծը թաքնված:
Դու ջախջախել ես ինձ և սարսափով լցրել:
Դու ձգում ես քո աղեղը և թիրախավորում ինձ:
Քո նետերն արդեն խոցել են իմ երիկամները:
Արդյոք չպե՞տք է մտածել, որ իմ հույսը սպառվել է,
իսկ իմ վստահությունը՝ մահացել:
Բայց ես ուզում եմ երգել իմ սրտի համար.
Աստծու սերը չի վերացել,
Նրա ողորմությունն իմ նկատմամբ չի սպառվել:
Ամեն առավոտ Նրա հավատարմությունը
հառնում է նոր ու թարմ զարթոնքով լեցուն...

* * *

Երեմիան նստում է անծանոթ օգնականի կողմից փոսում կախված աթոռին՝ ոտքերը կեղտերից վեր բարձրացրած: Նա այդ պահին ծանր ջերմության մեջ էր: Բայց երբ ջերմությունը պատուհասում է այդ ուժգնությամբ, ինչպիսին այդ պահին էր, հոգու համար դա չէր կարող անհաճո ու խանգարիչ լինել: Այն փոխարինում էր կայուն հոգեզմայլանքը և պարուրում նրան պատկերների և հնչյունների մի նրբահյուս ցանցով, որի մեջ լուծվում էին մարմնական տվայտանքները: Երեմիան չի անդրադառնում, թե գիշերվա որ ժամն է, արդեն ժամեր էին անցել: Նա ուշադրություն չէր դարձրել քահանայական շեփորների կանչերին, որոնք հայտարարում էին գիշերապահների հերթափոխության ժամը: Աստղերն արդեն երկնքում քչացել էին, որը նշան էր, թե կեսգիշերն արդեն ավարտվել էր: Ինչ-որ բան կարծես փոխվել էր Երեմիայի զգայարանների դիմաց: Նույնիսկ նրա հոտառությունը չէր կարող անմիջապես զանազանել, թե ինչ էր փոխվել իր զգայարանների առաջ: Միայն աստիճանաբար նրա համար պարզ է դառնում, որ այդ փոփոխությունը կապված էր աղբի սուր գարշահոտության հետ, որը կամաց-կամաց վերացել էր և տեղ տվել մի հարաճուն բուրմունքի, որը հիշեցնում էր բուրումնավետ խունկը և հեղուկ զմուռսը, որով թագուհիները ցողում էին իրենց մարմինները:

Բայց երբ խնկի այդ անուշ բուրմունքը, որը միևնույն ժամանակ կանացի բույր էր, վանել էր աղբահորի գարշահոտության վերջին շունչը, տեղի է ունենում միանգամայն անսպասելի մի բան: Աղբափոսի այն հատվածում, որի վերևում ցնցվում էին գարնանային հետկեսգիշերային գունատ աստղերը, հայտնվում է թևերը տարածած մի թռչուն, որը մնում է օդում կախված: Գիշերային ո՞ր գիշատիչ թռչունը պետք է լիներ դա, որն եկել էր փնտրելու այդ կեղտոտության մեջ իր զզվելի որսը: Չնայած այդ ժամին, դա գիշերային թռչուն չէր, այլ վաղաժամ արթնացած մի ծիծեռնակ, հեշտությամբ ճանաչելի թևերի արագ ու շչացող թափահարումից: Արդյոք գոյություն ունի՞ մի ծիծեռնակ,— մտածում է Երեմիան,— որը գիշերներն իջնում է որսալու առնետներ ու երկկենցաղ կենդանիներ: Բայց մինչ նա դեռ մտածում էր այդ մասին, արդեն ներքնապես վերահասու է դառնում, որ ծիծեռնակն ուրիշ մեկը չէր, քան հենց ինքը՝ Զենուան, որը գալիս էր այցելելու իրեն: «Երբ ծիծեռնակը նստի քո ուսին, ընդունիր նրան»: Մեռնողի շշնջանքով ասված այս խնդրանքը վերազարթնում է իր մեջ: Ծիծեռնակը, սակայն, կարծես թե երկմտում էր: Ծալում ու բացում էր թևերն անհանդարտ կերպով, բայց հանկարծ իջնում է և նստում, թեթև ու բոլորովին անզգալի կերպով, Երեմիայի ձախ ուսին, նրա սրտին մոտիկ:

— Փեսադ իմ,— ասում է ծիծեռնակը: Դա, սակայն, թռչունի ծլվլոց չէր, այլ Զենուայի սեփական ձայնը, միայն տարօրինակ կերպով նրբացած, զսպված ու հեռավոր: Մեծ զգուշությամբ, որպեսզի ոչ մի կոպիտ շարժումով կամ շնչառությամբ չխանգարի իր ձախ ուսին նստած ոգեղեն կերպարանքին,Երեմիան շշնջում է.

— Զենուա... հարսնացուս... ժողովուրդների ոգին...

— Ահա այստեղ եմ,— հնչում է նրա հեռավոր, բայց վճիտ ձայնը,— որպեսզի դու ընդունես իմ խնդրանքը...

— Հարսնացուս,— զանգատվում է Երեմիան,— փեսային տեսնելու համար դու իջել ես հարսանեկան վատ առագաստի մեջ:

Նրա ձախ ուսին թառած շնորհալի քնքշությունը պատասխանելիս կարծես թե ժպտում է.

— Մի՞թե մենք մեր մեջ չենք կրում հարսանեկան առագաստը...

Եվ իսկապես, այժմ նրանք՝ Երեմիան և Զենուան, միասին են տոնականորեն զարդարված սենյակում: Երեմիան նստած է առյուծների

«Ծիծեռնակ–Զենուան իջնում է Երեմիայի ուսին»

ոսկեզօծ թաթերով աթոռին և կոթնած նրա հենարանին, իսկ Զենուան ծնկի է եկած նրա ձախ կողմում՝ եգիպտական ազնվական տիկնանց նման: Երեմիան զգում է իր կողքին պարմանուհու շնչող ներկայությունը, բայց դեռ չի տեսնում նրան:

— Ով իմ փեսա,— ասում է նա,— դու դեռ շարունակում ես նշանված մնալ: Հարսնացուն սպասում է օրվա գալուն իր զարդարված վայրում...

— Դուստր հեթանոս երկրի, դեռ որքա՞ն ժամանակ, որքա՞ն տառապանք պիտի անցնի, մինչև որ գա մեր միավորվելու օրը...

Զենուան իր խոսքերի լրջության միջից արտացոլում է աղջկական այն հմայիչ ծաղրանքը, որը լավ ծանոթ էր Երեմիային.

— Մի՞թե դու ինքդ ինձ չսովորեցրիր, ուսուցիչս... Դու ասացիր, որ երկինքը թափառական է, ինչպես Հակոբի սերունդը...

— Ե՞րբ, Զենուա, ե՞րբ կհասնեմ ես այնտեղ քայլելով...

— Երբ դու ցած նետես *չափը*, ստվեր անողը, խավարայինը, ինչպես որ ես՝ փոքրիկս, ստիպված եմ եղել դեն շպրտել այն...

— Հարսնացուն գիտե բաներ,— գովում է Երեմիան,— որ փեսան չգիտե դրանց մասին: Սովորեցրու ինձ ավելին... Ե՞րբ կլինի դա...

— Երբ լույսը լինի այնքան պայծառ,— ասում է անտեսանելին,— որ մարմիններն այլևս ոչ մի ստվեր չգցեն...

— Ժողովուրդների ոգի, ի՞նչ օգուտ կրերի դա,— պոռթկում է Երեմիան հեկեկալով,— քանզի ես հիմա այստեղ շատ եմ տառապում այս ժողովրդի չարչարանքներով... Օգնիր ինձ...

Եվ Զենուան տեղում օգնում է փեսային: Նրա օգնությամբ նա էլ դառնում է մի թռչուն՝ առանց իմանալու, թե ինչ տեսակի թռչուն, թեև նա չի զգում իր մարմինը սովորականից տարբեր: Միայն մի բան էր թվում նրան, որ տարբեր էր և նորոգված. դա իր նայվածքն էր: Այո՛, նրա նայվածքն իսկապես թռչունին էր հատուկ: Եվ նա իր կլոր, միանգամայն բաց և անթարթիչ աչքերով այժմ պպզում է Մարդուկի գիշերային փափկամազ թռչունների միջև՝ շքեղ մի վրանի բարձր ձողերին, և նայում դեպի ներքև՝ թագավորական մահճակալին, որը շքեղորեն ամրացված էր ոսկյա երկու երկարավիզ վիշապների մեջքին: Նաբուգոդոնոսորը դեռ չէր պառկել, նստել էր մահճակալի եզրին՝ փաթաթված իր ավազագույն պատմուճանով և ժողով էր գումարում ձողերի վրա թառած թռչունների հետ:

Ձողերին թառած փետրավոր խորհրդականները կարծես թե դժգոհ էին Մարդուկից, որովհետև նրանք խստորեն և քննադատական մոտեցումով էին լսում նրա խոսքերը:

— Դա ինչ կապ ունի մեզ հետ,— բացականչում է մեծ տիրակալը դժգոհ,— Ահա երեք տարի է, որ պաշարել ենք այս թշվառ քաղաքը և թույլ ենք տվել իրեն, որ պաշտպանվի ու պահպանի իր գոյությունն իր պարիսպներից ներս: Ժամանակն անցնում է, և ես հանձնել եմ արդեն երեք գոհարներ իմ իշխանության մատանուց: Ե՞րբ պետք է ես կատարեմ Մարդուկի գործը, որն աշխարհին և նրա ժողովուրդներին կբերի կառուցողական փոխըմբռնում և ներդաշնակություն:

Երեմիայի շուրջը բարձրանում են զայրագին աղաղակներ ու ճիչեր: Թռչունների մարդկային խոսքն անշնորհքորեն և շտապ գլորվում էր, կրկնվում և այլափոխվում, մինչև որ վերջապես մի մեծ կտուցից լսվում է անդադար հնչող մի հանգիստ ձայն. «Մելեխ Բաբիլո՛ւ, Մելեխ Բաբիլո՛ւ»:

— Ինչո՞ւ է Մարդուկը միշտ կասեցնում Ներգալի բազուկը,— ճռռում է մեծ կտուցավորը:

Նաբուգոդոնոսորը պատասխանում է նրան.

— Ներգալի գործը երկրի վրա իմ գործը չէ: Ներգալը ստիպված է ինձ ծառայել...

— Բայց դո՛ւ ես ծառայում Ներգալին,— կռկռում է մեծ կտուցավորը,— և ոչ թե նա է ծառայում քեզ քո ամբողջ ժամանակում... Վարձով աշխատողի խորհրդանիշ ոսկյա փոքրիկ բահը հանի՛ր քո գոտուց և դե՛ն գցիր...

Անմիջապես վերսկսվում են խորհրդակցության մյուս անդամների հապճեպ գոռոցները:

— Պատերազմ... պատերազմ... պատերազմ...— գոռում են նրանք միմյանց,— Դրա վերջը չկա... Դե՛ն շպրտիր բահը... Քո ժամանակն անցնում է...

Ձգված բռունցքով Նաբուգոդոնոսորը հրամայում է ոգիներին, որ հանգստանան:

— Իմ ժամանակն անցնում է,— գոչում է նա,— և դավաճանի այս վատ շունը, ում ես եմ բերել իշխանության, դիմադրում է ինձ...

— Նա դիմադրում է քեզ,— ասում է մեծ կտուցավորը ծաղրական, որը հավանաբար թռչունների դիվանապետն էր,— Նա դիմադրում է Մարդուկին, քանի որ Մարդուկը վախենում է...

— Ինչից պետք է վախենա Մարդուկը,— ասում է մեծ տիրակալը՝ նայելով ձողերին սպառնալից: Լսվում է նոր ճռճռոց և մոթմոթուք, որոնք կոպիտ միջամտությամբ խզվում են թռչունների դիվանապետի կողմից.

— Դու վախենում ես հետևանքներից... Դու վախենում ես Աստծուց, ում դու չես ճանաչում... Երկնային գրությունը և մարգարեի սցենարը համաձայնեցված են...

Նաբուգոդոնոսորը լռում է, թողնում է, որ ժամանակ անցնի, ապա խոստովանում է իր ժողովականներին.

— Ճիշտ է... Հետևանքները վատ կլինեն, եթե ես նոր պատճառներ չստեղծեմ... Իմ համաշխարհային տարին տևում է միայն մեկ կարճատև «*ներ*»: Յոթանասուն տարի անց ամեն ինչ փլուզվում է... Անծանոթ մեկը դարձրել է ինձ իր ծառան...

— Մելեխ Բաբիլո՛ն... Մելեխ Բաբիլո՛ն...— հուզմունքով կրկնում են թռչունները Երեմիայի շուրջը, և թափահարելով իրենց թևերը՝ մի ուժգին ու սարսափազդու քամի են առաջացնում:— Ազատիր դու քեզ... Ազատիր դու քեզ...

— Ուստի խորհուրդ տվեք ինձ,— բղավում է Մարդուկը:— Եթե ես ոչնչացնեմ այս թշվառ քաղաքը և քանդեմ դրա մեջ գտնվող տաճարը՝ նրա Աստծու սրբազան սեփականությունը, ես ինքս ինձ կքանդեմ յոթանասուն տարի հետո...

— Մի՛ քանդիր... մի՛ ոչնչացրու...— ճռճռում են թռչունները խելահեղ:

— Եվ սա վիճակախաղի մի բառ չէ կամ կախարդական մի թոթովանք, այլ ամեն ինչ հաշվարկված է,— ասում է Մարդուկն ինքն իրեն, ապա անմիջապես դիմում է ժողովականներին.— եթե չքանդեմ այս Աստծու սեփականությունը, եթե չբարձրացնեմ գլուխս հին պատճառների վրա, ինչ կլինի դրանից հետո: Դրանից հետո ես ոչնչացրած կլինեմ Մարդուկի պատիվը ծաղրածու ժողովուրդների առաջ: Այնուհետև քաջալերած կլինեմ բոլոր դավաճաններին: Ուստի, որպեսզի Բաբելոնը չկործանվի, ես պետք է կործանեմ այս խեղճ քաղաքը...

— Կործանի՛ր... Կործանի՛ր...— կրկնում են մոռացկոտ թռչունները:

Երեմիան իր կլոր նայվածքով վերևից նկատում է, որ վրանի մուտքին մի տղամարդ է ծնրադրած: Հանգող ճրագներից մեկն իր վերջին ցոլքով լուսավորում է նրան: Նրա ճակատից արյուն էր հոսում,

կրծքավանդակում մխված էր չորս սուր՝ մինչև իրենց բռնատեղը: Նա Գեդալիան էր՝ Ահիկամի որդին: Նա ձեռքերն աղաչավոր կերպով բարձրացնում է դեպի Նաբուգոդոնոսորը, որը քիչ ուշադրություն է դարձնում նրա վրա, և իր վերջին ուժերի լարումով ասում է խորդալով.

— Թող իմ մեծափառ տերն առանձնացնի Աստծու տունը Դավթի տնից:

Այս խոսքերն ասելուց հետո Գեդալիան թուլանում է: Նրա արյունոտ մահը, սակայն, նվազագույն ազդեցությունն անգամ չի գործում Մարդուկի վրա: Վերջինս իր տղայական քմահաճ, կլոր դեմքը շրջում է դեպի վեր և իր խոսքն ուղղում է ոչ թե մեծ կտուցավորին կամ առհասարակ մյուս թռչուններին, այլ, ինչպես երևում է, ուղղակիորեն Երեմիային:

— Դավթի ժառանգորդը,— ասում է նա,— թող գա ապաշխարության քուրձ հագած, գլխին մոխիր ցանած, բոկոտն, և թող խոնարհվի իմ առջև ամբողջ սրտով: Դրանից հետո միայն ես կխնայեմ նրա Աստծու ունեցվածքը, և անձամբ ինքն ու իր սերունդն իրավունք կունենան ապրելու...

Երեմիան ուզում է բարձրաձայն գոչել և հարցնել, թե արդյոք դա Մարդուկի վերջնական որոշումն է, բայց նրա կոկորդից դուրս չի գալիս ոչ իսկ թռչունի մի աղավաղված ճիչ: Այս տանջալից փորձի արդյունքում ամեն ինչ դառնում է խառնաշփոթ, և նա նորից հայտնվում է աղբահորում նստած՝ կաթվածահար վիճակում:

Արթնանալիս, սակայն, տեսիլքում Մարդուկի արտասանած վերջին խոսքերը մեկ անգամ ևս հնչեցին նրա ականջին՝ իբրև մեղմ ու պարզ շշուկ: Նա վեր նայեց: Լուսաբացի թարմ շունչը սկսում էր տարածվել նրա վրա: Նրա մարմինը ցրտից սառել էր: Նա հանկարծ ցնցվեց: Նոր միայն լսեց այն շշուկաձայն կանչերն աղբափոսի եզրից, որոնք գնալով դառնում են ավելի ազդեցիկ.

— Երեմիա՛... Ուսուցի՛չ... Երեմիա՛...

Դա մավր Աբդիմելեքի շշուկն էր: Երեմիան տեսավ նրա թուխ գլուխը՝ խոնարհած աղբահորի վրա: Քուշեցին արագ հնչող խոսքերով բացատրեց փոսում գտնվողին, թե ինչ պետք է աներ: Պատրաստ էին պինդ պարաններ և երկու ուժեղ մարդ, որպեսզի նրան դուրս բերեն հորից: Ուսուցիչը պետք է վերցնի պարանի ծայրին կապված փաթեթը,

որի մեջ կային հին հագուստներ իր համար՝ պալատական պահեստներից առնված:

— Դրանք քո անութներին և ծնկներիդ հետևում դիր, ապա դրանց վրա ամուր փաթաթիր պարանը:— Մինչ Երեմիան բռնում է իջեցված փաթեթը, հարցրեց Աբդիմելեքին.

— Դու քո կամքո՞վ ես եկել, թե՞ թագավորն է ուղարկել քեզ...

— Ես եկել եմ իմ ազատ կամքով, բայց խոսել եմ թագավորի հետ, և նա գիտե ամեն ինչ:

Այսպիսով, նրա փրկության գաղափարը չէր բխում Սեդեկիայի մեղավոր սրտից, այլ անմեղ Աբդիմելեքից: Վերջինս անմիջապես սկսեց հոգ տանել, որ Երեմիային դուրս բերելիս հանկարծ չընկնի ու չմխրճվի կեղտի ու կղկղանքի մեջ: Օ՜, Սեդեկիա, թեև ամոթից շիկնած, դու արտասանեցիր հետևյալ խոսքերը. «Արեք նրա հետ այն, ինչ որ ձեզ հաճո է...»: Վախկոտությանդ պատճառով դու նրան, ում լավ գիտեիր, որ անմեղ է, հանձնեցիր ատելությամբ հարբած մարդկանց ձեռքը: Բայց հետո դու՝ վախկոտդ, անզուսպ հերոսությամբ պայքարի ելար, ոռնացիր ու հարվածեցիր՝ մահ սերմանելով դարպասների առաջ, պատրաստ լինելով նույնիսկ դիմագրավելու մահը: Այդքան մեծ խիզախություն պայքարի մեջ և մյուս կողմից էլ՝ հոգու այդքան երկչոտություն ու փոքրոգություն: Ո՞վ կարող է բացատրել դա:

— Շտապիր, ուսուցիչ, շտապիր, նախքան լույսը բացվելը,— ձայն տվեց մավրը վերևից: Երեմիան պարաններով կապեց հին լաթերն իր անութներին ու ծնկների հետևի մասին, ինչպես պատվիրել էր Աբդիմելեքը: Տղամարդիկ ձգեցին պարանները դեպի վեր: Այդ ընթացքում նրա մարմինը մի քանի անգամ ուժեղ բախվեց հորի պատերին, որի արդյունքում մնասվածքներ կրեց: Վերևում նա մնաց գետնին պառկած, սառած ու թրջված, ամբողջությամբ կեղտի մեջ կորած և անկարող տեղից շարժվելու: Հզոր Աբդիմելեքն առավ նրան իր թևերի մեջ, ծածկեց նրա դեմքը թաշկինակով և, ինչպես մի մեռած մարդու, տարավ պալատ: Պահապանները կտրեցին նրանց ճանապարհը: Աբդիմելեքը, սակայն, մի սարսափազդու ձայնով հնազանդեցրեց նրանց. «Սա թագավորի հրամանով է, ճամփա բացեք»: Այնուհետև, երբ սենյակ տարավ Երեմիային, մերկացրեց նրան, տաք ջրով և օճառով լվաց գարշահոտ աղբահորի կեղտը նրա

վրայից: Ապա հաց և գինի բերեց նրա համար ու պատրաստեց նրա անկողինը: Սպառված Երեմիան քնեց մի քանի ժամ շարունակ, առանց որևէ երազ տեսնելու: Երբ նա արթնացավ, Աբդիմելեքը խոնարհվեց նրա վրա հուզված.

— Թագավորը սպասում է քեզ...

Սեղեկիան նստած էր *Հաշալիշիմ* դարպասում, այսպես կոչված «Թիկնազորի փառատոնային դարպասում», որն արքայական ամրոցն ու տաճարն իրար էր միացնում և բացվում էր միայն հանդիսավոր թափորների ու շքերթների ընթացքում: Հակառակ դեպքում այն փակ էր և ամայի: Այն ուներ մի շարք՝ պատուհաններից զուրկ սենյակներ, որոնք նույնիսկ օրվա ընթացքում գրեթե բոլորովին մութ էին: Այդ սենյակներից մեկը, որը շատ հարմար էր գաղտնիք պահելու առումով, Աբդիմելեքը տարավ կորաքամակ Երեմիային: Սպասման այդ սենյակը բոլորովին անպաճույճ էր: Միայն պատերի երկայնքով դրված էր մի նեղ նստարան, ինչպես էր պարագան սպասման մի շարք նման սենյակների: Թագավորը, սակայն, նստած էր ոչ թե այդ նստարանին, այլ քարե հատակին: Նա այլևս չէր կրում իր ոսկեզօծ զրահը, այլ բարեպաշտորեն փաթաթված էր մահվան հագուստներով: Ըստ երևույթին, կռվելուց հետո նա մի փոքր հանգստացել էր և անմիջապես գնացել տաճար՝ աղոթելու քահանայապետի կողքին: Երեմիան կանգ առավ դռան մոտ, որն Աբդիմելեքը մեղմորեն փակեց նրա հետևից: Նրա աչքերը ժամանակ էին պահանջում՝ վարժվելու համար մթնշաղի աղոտ լույսին և ճանաչելու սպիտակ շորերի մեջ փաթաթված ու հատակին պպզած կերպարանքին: Թագավորի ձայնը դարձել էր բեկբեկուն:

— Գուցե մեր երկուսի համար էլ ավելի լավ կլիներ,— ասաց նա ողջույնի փոխարեն,— եթե մենք երեկ արդեն մահացած լինեինք, յուրաքանչյուրս իր ձևով, դու և ես...

Դա մի խրթին ուղերձ էր, որին Երեմիան ոչ մի պատասխան չտվեց: Բայց թագավորը համառում էր.

— Բայց երևի ավելի լավ է, որ մենք չմեռանք, դու և ես... Դու իմ հրամանով փրկվեցիր մահից, իսկ ես մարտնչեցի և վնասներ պատճառեցի Բաբելոնին, թեև այս անգամ ոչ շատ վնասներ... Եվ հիմա օր օրի ես կրկնելու եմ այն և մեծապես թուլացնելու եմ թշնամու սիրտը... Մենք դեռ կանգնած ենք հաստատուն կերպով, անկախ նրանից, որ մեր գոտիները

հետզհետե լայն են գալիս մեր մարմիններին... Ծարավն ավելի վատ է, քան սովը: Եվ, բարեբախտաբար, մեր աղբյուրները, ջրհորները, լճակները, ավազանները լի են խմելու ջրով... Տես, թագավորի տրամադրությունը բարձր է, և նա նույնիսկ չգիտե, թե ինչ է դա, որ կոչվում է հուսահատություն... Սակայն դու, Երեմիա, դու եղար այն անձը, ես դա չեմ հերքում, որն ինձ հետ բերեց Եգիպտոսի երկրից և իշխանության բարձրացրեց... Այո՛, դու ինձ հանեցիր Ստրկության տնից, որն ինձ համար իրավամբ սիրելի, խաղաղ ու գեղեցիկ բնակելի տուն էր... Այնպես որ արդար է, որ դու պաշտպանես քո աշակերտին հուսահատության դեմ, ում դու Նոփի մեղմիկ ու մաքուր զեփյուռներից պոկեցիր ու բերեցիր այստեղ... Ահա թե ինչու ես հարցնում եմ քեզ՝ մարգարեիդ, այն, ինչ որ միշտ հարցնում եմ. «Հասնե՞լ է քեզ արդյոք Տիրոջից մի խոսք»...

Երեմիան, թուլացած ու տկար, հազիվ էր կարողանում կանգնած մնալ թագավորի առաջ, որը, հատակին նստած, խոնարհեցրել էր իր անձը, ինչպես մի սգավոր կամ ապաշխարող մարդ: Որոշ ժամանակ անց Երեմիան պատասխանեց.

— Տեր իմ թագավոր, հաճախ ու հաճախ դու ինձ հարցրել ես դա, և ես հաճախ ու հաճախ պատասխանել եմ քեզ, ինչպես հիմա եմ անում. Ո՞ւմ է պետք դա և ինչի՞ կծառայի: Դու չես գործում խոսքի համաձայն: Քեզ համար միևնույն է, եթե դա կա կամ չկա: Բայց ես արդեն քո միջոցով երկու անգամ հայտնվել եմ մահվան երախում: Երրորդ անգամ նա այլևս ինձ բաց չի թողնի...

Սեդեկիայի ձայնը հնչեց՝ կարծես թե իր մեջ ընդգրկելով մի ծածուկ աղաչանք.

— Ինձնից ոչինչ մի՛ թաքցրու... և մի՛ վախեցիր, քանզի ես քեզ կպաշտպանեմ...

— Թագավորն ինձ չի կարող պաշտպանել...— Եվ Երեմիան կրկնեց Սեդեկիայի ամոթալի խոսքերը. «Քանզի ի՞նչ կարող է անել թագավորն իշխանների դեմ»...

— Դու, սակայն, լսիր ինձ,— գոռաց թագավորը և հրամայեց ուժասպառին նստել իր կողքին,— ճիշտ է, որ ես ասել եմ այդ խոսքերը, բայց դու իսկապե՞ս կարծում ես, որ ես ոչինչ չեմ կարող անել այդ մարդկանց դեմ: Նրանք ծառայում են ինձ իրենց կարմիր արյամբ: Բայց նրանք

քեզ չեն ատում պարզապես քո պատճառով, այլ նրանք քեզ ատում են իմ պատճառով, քանզի նրանք սիրում են ինձ, քանզի նրանք հարգում են տղամարդկային պատերազմը, ինչը դու անարգում ես և անպատվում... Եվ որպես արքայական հերոսներ ու մարտիկներ, միթե իրավացի չեն պայքարելու մի մարդու դեմ, որը, նախքան սրի առաջին հարվածը, լքել է իրենց քաղաքը և դրդել է բանակին փախչել... Դու էլ, Երեմիա՛, արդար ու ողջամիտ կերպով մտածիր... Բայց հիմա ասված այս խոսքերի մասին ես լռելու եմ, և դու էլ պետք է լռես...

Սեդեկիան հանկարծ լռեց, կարծես թե կասկածում էր, որ մեկը լսում է իրեն: Այնուհետև շարունակեց ցածր ձայնով.

— Մի՛ վախեցիր թագավորի իշխաններից... Հովաքալը մեռած է: Իսմայելի ձախ ուսը խոցված է Բաբելոնի նետով... Բայց այս ամենը ի՞նչ նշանակություն ունի՝ ընդդեմ իմ հաստատուն կամքի... Ես քեզ չեմ սպանելու և չեմ հանձնելու իմ հերոսների ձեռքը... Այսուհետև դու կապրես ինձ հետ, իմ տանը, պաշտպանված քո բոլոր թշնամիներից... Կբնակվես իմ տան ներքին բաժնում և ոչ թե պահակատան բաժնում: Այս մեկը երդվում է քեզ թագավորը՝ ձեռքը վեր բարձրացրած, հանուն Աստծու, որը կենդանի է և ստեղծել է այս կյանքը մեզ համար... Բայց եթե պարզ երդումը բավարար չէ, ապա թագավորը պատրաստ է երդումը կրկնել տաճարում՝ վկաների առաջ...

Երեմիան իր հոգնած աչքերով նայեց նրան.

— Անհրաժեշտ չէ, որ արքան կրկնի իր երդումը: Աստված, որն այս կյանքը ստեղծել է մեզ համար, լսել է նրան... Ես, սակայն, ցանկանում եմ առանց երդում անելու խոսել քեզ հետ, որովհետև Զորությունների Տիրոջից կա մի բարենպաստ խոսք...

— Մի բարենպաստ խոսք...— կմկմաց Սեդեկիան՝ լրիվ գունատված: Այնուհետև կարմրեց, և շրթունքները դողացին:— Մի բարենպաստ խոսք... Օրհնյալ լինի քո գալը...

Երեմիան խոր շունչ քաշեց.

— Տեր իմ թագավոր, քեզնից է կախված այս քաղաքի, այս ժողովրդի և ամբողջ երկրի փրկությունը...

— Ինձնից է կախված այս քաղաքի, այս ժողովրդի և ամբողջ երկրի փրկությունը,— կրկնեց Սեդեկիան սովորող մի երեխայի պես, բայց

հիասթափության հազիվ թե զգալի մի կասկածանքով: Երեմիան, սակայն, նշեց վարձատրությունը՝ նախքան պահանջներին անդրադառնալը.

— Բայց եթե դու փրկես Աստծու սուրբ սեփականությունը, ապա կփրկես քո սեփական կյանքը, քեզ հետ կփրկես նաև քո տունը, և դու կհիշվես երկնքում և երկրի վրա մինչև ժամանակների վախճանը...

Դա, իսկապես, հսկայական պարգև էր: Քանզի օրհնյալ հիշատակը վերևում և ներքևում մահվան մահն է, Տիրոջ խորհրդավոր համբույրը: Բայց ի՞նչ սարսափելի պահանջ պետք է մեկը բավարարի, որպեսզի արժանի դառնա նման վարձատրության: Թագավորի հարցը հնչեց ընկճված.

— Կա՞մ արդյոք մի դժվար գործ, որ ես պետք է անեմ:

— Դա գործ չէ, այլ մի միջոց է...

— Կանգ առ,— շշնջաց թագավորը,— մի՛ խոսիր, մի քիչ էլ սպասիր, մինչև որ ես հանգստացնեմ իմ սիրտը... Դա գործ չէ, այլ մի միջոց... Բայց ո՛չ, ո՛չ, շտապիր խոսել, որպեսզի վերջապես բացահայտվի խոսքը...

Երեմիան, նայելով գետնին, մեղմ ձայնով բացահայտեց այն զոհաբերությունը, որը պահանջվում էր Սեդեկիայից.

— Թագավորը պետք է դուրս գա քաղաքի դարպասների առջև՝ ձեռքերը վեր բարձրացրած... Նրա զգեստները պետք է պատռված լինեն, ինչպես սգավորներինը, իսկ մազերի վրա էլ՝ մոխիր ցանված: Մեծերը նույնպես պետք է հետևեն նրան... Այնուհետև դու պիտի ներկայանաս Բաբելոնի տիրակալին և ընկնես նրա ոտքերը՝ բոլորովին նվաստացնելով քեզ... Եթե վարվես այդպես, քո և քո որդիների կյանքը կխնայվի, իսկ քաղաքը չի հրդեհվի, և Տիրոջ սուրբ սեփականությունը չի այրվի...

Սեդեկիան կարծես թե կծկված լիներ իր մեռելային լայն հագուստների մեջ: Միայն այն ժամանակ, երբ նրա լռությունն անցել էր իր սահմանը, նա մրմնջաց վարանումով.

— Հիմա արդեն խոսքն ասվել է, և այն բացվել է այստեղ, ինչպես մի անդունդ... Իսկ դու տեսնո՞ւմ ես այն քո առջև, որն այդքան հեշտությամբ դուրս ելավ քո բերանից...

— Տեր իմ թագավոր, ես դա տեսնում եմ իմ առջև...

— Դու քո առջև ոչինչ չես տեսնում,— գոռաց թագավորը վիրավոր մարդու նման,— միայն ես եմ դա տեսնում իմ առջև... Ես ինձ տեսնում եմ,

թե ինչպես եմ դուրս գալիս Եփրեմի դարպասի առջև՝ ձեռքերս վեր բարձրացրած և մուրացկանի ցնցոտիներ հագած... Ինձ, սակայն, իմ հերոսները չեն հետևում ձեռքները վեր բարձրացրած, այլ հետևում են իմ հերոսների ու մարտիկների ծաղրն ու լուտանքը, որոնց ես դավաճանել եմ... Նրանք թքում են իրենց թշվառ թագավորի հետևից... Ես հանդուրժում եմ այդ ամենը և ներկայանում մեծ տիրակալին միայնակ: Ես՝ Դավթի ժառանգորդս, նվաստանում եմ նրա առաջ և համբուրում նրա՝ այդ աստղեր ու կուռքեր պաշտողի ոտքերը, ինչպես մի պատժված շուն... Ես դա տեսնում եմ: Դու նո՞ւյնպես տեսնում ես դա ինձ հետ միասին... Նա նշան է անում իր դահիճներին և թույլ է տալիս, որ ինձ սպանեն իմ նվաստացման մեջ...

— Այդպես չի լինելու, տեր իմ թագավոր,— ասաց Երեմիան՝ հորդ արցունքների մեջ գրեթե խեղդվելով:— Դու կենդանի կմնաս, դու և քո տունը...

— Կենդանի մնալ,— ծիծաղեց Սեդեկիան,— արդյոք կենդանի՞ է մնացել Քոնիան, որը դեռ ողջ է... Նա վանդակի մեջ դրված ցուցադրվում է: Նաբուգոդոնոսորն ինձ էլ կդնի վանդակի մեջ՝ ի ցուցադրություն բոլորին: Եվ միայն ճամբարը չէ, որ կհավաքվի ուրախանալու իմ վիճակի վրա... Կգան Գեդալիան, Միքիան, Սափանի մարդիկ և բոլոր դասալիքներն ու փախածները, հարյուրներով ու հարյուրներով: Նրանք կծաղրեն ինձ և կպղծեն մարմինս... Որովհետև ես շատ ավելի վատն եմ, քան Հովաքազը, շատ ավելի անարգ, քան Քոնիան, որոնք թագազուրկ էին դարձել դժբախտ պարագաներում, մինչդեռ ես բոլորովին անպատիվ եմ, ավազներում ճանճերով լեցուն տրորված մի օձ, մի կաղ շնագայլ, գարշահոտություն, որից մարդ փախչում է... Ծաղրական երգեր եմ լսում: Դու էլ լսո՞ւմ ես դրանք ինձ հետ... Նրանք կանանոցից քշում են կանանց շղթայակապ, թագուհիներին, նրանց ընկերակցողներին, նաժիշտներին, աղախիններին...Ահա լսվում է երգ և լացի ձայն: Ո՞վ քեզ մղեց գայթակղության... ո՞ր անիծյալ ընկերը... Ահա հիմա կանգնած ես կեղտի մեջ... Եվ ընկերը հեռացել է... Լսո՞ւմ ես դա...

— Ես քեզ հետ կլինեմ,— ասաց Երեմիան, բայց թագավորը շարունակեց զայրույթը.

— Այո, դու կլինես ինձ հետ այնպես, ինչպես Քոնիայի հետ էիր... Այ, տես, թե ինչպիսի երջանիկ ուղեկից... Եվ իմ տունը կենդանի կմնա,

այդպես է ինչում խոստումը... Բայց ես տեսնում եմ, թե նրանք ինչպես են տանում իմ տղաներին՝ Ադաիային և Եհիէլին, իրենց մոգերի մոտ: Եվ այդ մոգերը ներքինացնում են Սեղեկիայի որդիներին, որպեսզի Դավթից այլևս սերունդ չմնա աշխարհում... Ժողովրդի վրա, սակայն, իբրև ղեկավար, դավաճաններ պիտի նշանակվեն, ճարպիկ ոճրագործներ, բայց այլևս երբեք՝ մի թագավոր, քանի որ թագավորն արատավորել ու պղծել է ինքն իրեն...

Երեմիայի սիրտը նույնպես մոլեգնեց: Նա մեծ ջանք թափեց լավ շնչելու համար, որպեսզի կարողանա խոսել.

— Դու մոլորված ես, տեր իմ թագավոր... Ճիշտ է, քեզնից ակնկալվում է մեծագույն զոհաբերությունը, քան երբևէ կատարել է թագավորներից որևէ մեկը... Բայց ես հիմա ուզում եմ և աղաչում, որ հարցը դիտես իմ աչքերով: Եթե դու դուրս չգնաս՝ բազուկներդ վեր բարձրացրած քաղաքի դարպասների առջև, շուտով ճեղքեր կբացվեն նրա պարիսպների վրա, որովհետև դու մենակ ես, կորած և դավաճանված, և դու ինքդ դա գիտես քո հոգում... Քեզնից կխլվեն քո պատիվն ու կյանքը՝ առանց որևէ վարձատրության, քանզի պարտված թագավորը նույնպես համարվում է ավազում տրորված մի օձ: Մարդուկը քեզ հետ կորցրել է երեք տարի և երեք գոհար իր իշխանությունից, դրա համար էլ հավանաբար քեզ ավելի վատ կերպով կպատժի, քան պարզապես արագ մահվան կդատապարտի... Ինչպե՞ս գիտես, որ նրանք պիտի ներքինացնեն քո որդիներին, եթե դու քեզ հպատակեցնես... Իրենց համար կյանք է խոստացված, մինչդեռ դա այլևս կյանք չի լինի... Բայց եթե քո որդիները Բաբելոնի ձեռքն ընկնեն իբրև բանտարկյալներ, ապա նրանք ոչ թե կներքինացվեն, այլ դաժանորեն կսպանվեն... Հանուն աշխարհների Տիրոջ, որ ստեղծել է այս կյանքը, կոչ եմ անում քեզ, որ մտածես ու խորհրդածես, դեռ կարող ես ընտրություն անել: Քանզի եթե դու ձեռքերդ վեր բարձրացրած դուրս գաս, տաճարը չի վերածվի մոխրի, քաղաքն ու բնակիչները չեն մնասվի, վերքերը կբուժվեն, և երկիրը կրկին կծաղկի... Բայց այս ամենը կինի միայն շնորհիվ իմ թագավորի սուրբ գործի: Ի՞նչ արժեք ունի քո հերոսների ծաղրը՝ Հավիտենականի գովասանքի դիմաց: Մարդիկ պիտի երգեն, որ Սավուղն է եղել առաջին թագավորը, բայց նրա հիշատակի վրա ստվեր կա, քանի որ նրա թագավորությունը հաստատվել էր Տիրոջ կամքին հակառակ: Սեղեկիան

վերջին թագավորն է: Պիտի ասեն՝ թող լույս իջնի նրա հոգուն, որովհետև նա զոհաբերեց իր թագավորությունը և իր արքայական պատիվը Տիրոջը:

Այս խոսքերից հետո Երեմիան պառկեց գետնին և խոնարհաբար համբուրեց իր աշակերտի ոտքերը: Սեդեկիան մի կողմ քաշվեց:

— Դու մոռացել ես մի այլ ընտրություն, որը մնում է ինձ համար,— զգուշացրեց նա կոպտորեն:— Դա մահն է քաղաքի դարպասների առջև, այդ արագ հասնող, լավ ու երջանիկ եղբայրը հարբած... Ես կգտնեմ նրան, կազատվեմ և ավելին չեմ իմանա...

— Դարպասների առջև վրա հասած մահը սովորական մի բան է... Քո սպաներից և հասարակ զինվորներից հազարավորներ են նման մահով մեռնում... Այդպես մեռնելը թագավորի գործը չէ, որն արժանի է ավելի բարձր զոհաբերության...

— Պահանջո՞ւմ ես զոհաբերություն, Երեմիա, դու, որ երբեք չես *թլփատել* քո սրտի անթլփատությունը... Դու երբևէ հեռացնե՞լ ես քո համառ մտքերից... Ավելի լավ կլիներ, որ ես երեկ ընկած լինեի, քան թե հիմա հաշվի առնեի ու քննարկեի բարենպաստ խոսքը, որով ուրախացրել էիր իմ սիրտը... Իսկապես, ես միայն մի թույլ մարդ եմ, և Տերը հզոր Աստված է... Բայց ինչո՞ւ թույլը պետք է զոհաբերի իրեն հզորին, և ոչ թե հզորը՝ թույլին, երբ վերջինս նրա կարիքն ունի...

— Դու՝ թույլդ, չե՞ս ուզում հասկանալ,— շշնջաց Երեմիան՝ այլևս առանց զսպելու իր արցունքները,— որ այս զոհաբերությունը քո միակ զորությունն է...

Սեդեկիան հավաքեց մահվան զգեստներն իր մարմնի շուրջը, որպես թե վախենում էր, որ մեկը դիպչի իրեն:

— Գուցե դու գիտես,— ասաց նա,— թե ով է Աստված: Սակայն դու չգիտես, թե ինչ է նշանակում լինել մի տղամարդ և մի թագավոր...

Այս խոսքերից հետո նա ծածկեց իր գլուխը: Այնուհետև նրանք երկուսով երկար ժամանակ նստած մնացին կողք կողքի՝ առանց մի բառ արտասանելու:

ԳԼՈՒԽ ԵՐԵՍՈՒՆՄԵԿԵՐՈՐԴ

ԽԱՎԱՐԻ ՄԻՋՈՎ

Թագավորը հավատարիմ մնաց իր երդմանը: Նա Երեմիային չհանձնեց իշխանների ձեռքը, որոնք որսկան շան նման փնտրում էին նրան և դարանակալում այնտեղ, ուր պատկերացնում էին, թե կարող է լինել: Մինչդեռ նա թաքնված էր «փարավոնի դստեր» պալատում, և միայն գիշերները մտնում էր ներքին պարտեզ, ուր պահակներ չկային: Օրն անց էր կացնում արքունի կանանց հետ մայր թագուհու սենյակում: Ամիտալի առողջական վիճակը վատ էր: Հիվանդությունը չէր նահանջում: Ոչ ոք՝ ոչ մի բժիշկ, ոչ մի բուսաբույժ, ոչ մի հոգեհմա, չէր կարողանում օգնել նրան: Նրա ամբողջ մարմինն ուռել էր ջրգողության պատճառով: Նա պառկել էր իր բազմոցի վրա՝ ծանր շնչելով: Բայց նա չէր ողբում և ոչ էլ համառ ու լուռ հայացքով իր դիմացը նայում, ինչպես ուրիշ հիվանդներ: Թեև նրա հայացքն անշարժ էր, բայց նա խոսում էր ու խոսում՝ առանց բողոքելու, անհագ շտապողականությամբ, կարծես թե վախենում էր խոսքի որևէ մնացորդ մոռանալ ու թողնել այն իր հոգում: Սակայն ինչ որ նա ասում էր, ոչ մի վանկով անգամ չէր հիշում այն մահաբեր ալիքը, որը գնալով ավելի և ավելի էր շրջապատել ու հարվածել Դավթի տանը: Նրա համար գոյություն չունեին ոչ Բաբելոնը և ոչ էլ նրա մեծ տիրակալը, գոյություն չունեին ոչ սով և ոչ էլ որևէ տեսակի կարիք, չկար պարիսպների վրա մղվող պատերազմ կամ էլ իր որդու սարսափելի հուսալքվածությունը:

Մաաքան գլխահակ նստած էր նրա կողքին. թվում էր, թե հնազանդորեն լսում է հիվանդի խոսքը, որն արագավազ ու պղտոր հորդում էր շարունակ: Միայն երբեմն ցնցվում էին նրա մարմնի անդամները, և նրա մթագնած աղջկական դեմքը չէր կարողանում պատշաճ

արագությամբ վանել հուսահատության մռայլությունը: Նա այլևս չէր կարող հանդուրժել ամուսնու հիվանդ մոր բամբասկոտ ձայնը, որի անկողնուց չէր հեռանում: Երիտասարդ թագուհին ամբողջ սրտով փափագում էր որևէ այլ բան չլսել, բացի տվյալ օրվա մասին, վաղվա և սպառնալից ապագայի մասին, որի մեջ այլևս հուսադրող ոչինչ չէր տեսնում: Երբեմն Երեմիան բռնում էր նրա թափառական հայացքը, որի մեջ հնարավոր էր կարդալ ոչ միայն մի բանտարկյալի թշվառությունը, այլև ատելությունը հիվանդի միապաղաղ ձայնի հանդեպ: Երեմիան, որ լավ էր հասկանում Մաաքային, առաջարկեց կատարել Ամիտալի մի հին ցանկությունը. քանի որ ինքը եղել էր արքայի ուսուցիչը, հիմա էլ բավարար ժամանակ ուներ լինելու նաև նրա որդիների ուսուցիչը: Նա մտածել էր, որ ինքը դասերը կարող էր անցկացնել ընդհանուր սենյակում, ինչպես որ անում էր Նոփում, և այդպիսով կկասեցներ հիվանդի անվերջ շաղակրատելը: Ահա այդպես էլ լինում է՝ ի մեծ երախտագիտություն Մաաքայի: Երբ Երեմիան առաջին դասին սկսում է խոսել երեխաների հետ և պատմել նրանց «սկզբի» մասին, երիտասարդ թագուհին մոռանում է այսօրն ու վաղը:

Ադաիան ութ տարեկան էր, իսկ Եհիէլը դեռ յոթ էլ չկար: Դավթի ծառի վերջին երկու ընձյուղներն աճել էին իրարից տարբեր, ինչպես սովորական է երկու եղբայրների պարագայում՝ համաձայն կյանքի կարգուկանոնի: Ադաիան նման էր հորը թե գեղեցկությամբ և թե բնավորությամբ: Սեդեկիայի հրամանով պալատական զինագործը նրա համար պատրաստել էր մի փոքրիկ զրահ և սաղավարտ՝ զարդարված ջայլամի փետուրներով: Պատերազմական այդ հագուստի մեջ հոր որդին շարժվում էր նրբագեղ վայելչությամբ և իր աստիճանին վայել գիտակցությամբ: Մի ինչ–որ վանող բան կար այս տղայի մեջ, որը թույլ չէր տալիս նույնիսկ իր մորը և տատիկին շատ մոտենալ նրա կամակոր անձին: Քննադատություն հանդուրժում էր միայն, երբ քննադատողից բացի այլ ոք ներկա չէր: Նա, ով հրամայական շեշտով որևէ բան էր պահանջում կամ ուզում նրանից, անմիջապես թիկունք էր դարձնում նրան: Չնայած իր այդքան փոքր տարիքին՝ նա հեռավորություն էր պահում նույնիսկ իր ուսուցիչ Երեմիայից: Ով ուզում էր լիներ, նրա համար միևնույն էր, նույնիսկ եթե Տիրոջ ընտրյալն էր: Երակներում արքայական արյուն

ունենալն ամեն տեսակ ընտրությունից մեծագույնն էր: Ադաիան կարծես թե գիտակցում էր դա իր ապրած բոլոր հանգամանքներում:

Եհիէլին՝ կրտսերին, ընդհակառակը, կարելի էր կոչել ավելի իր տատիկի որդին, քան իր մոր, քանի որ նա ժառանգել էր ոչ թե Մաաքայի դառն բնությունը, այլ Ամիտալի մեղմ նկարագիրը: Նա չէր մտածում զենք ու զրահի մասին և դժկամությամբ էր մասնակցում իր եղբոր պատերազմական խաղերին: Նա շատ էր ցանկանում կրել աղջկա զգեստներ ու զարդեր: Շատ էր սիրում խուզարկել կնոջական իրերը, զմուռսի և նարդոսի տուփերը, կարելու իրերի և խճճված ժապավենների զզրոցները: Արծաթյա փոքր ամաններն ու պնակները, որոնք միշտ լիքն էին փոքրիկ քաղցրավենիքներով ու խորտիկներով՝ հատուկ պատրաստված պալատի կանանց համար, նրանից երբեք ապահովված չէին: Իր ունեցած վտանգավոր նախասիրությունը՝ բուրումնավետ օծանելիքների և դրանց խառնուրդների պատրաստման նկատմամբ, Եհիէլը ժառանգել էր Դավթի որդիներից, որը նրանց արատավոր հատկություններից մեկն էր:

Ուսուցիչն իրեն բավարարված էր զգում այն քիչ ժամերի ընթացքում, երբ նայում էր այդ դժվար զսպելի երեխաների աչքերին, որոնց ուշադրությունը նույնիսկ մի ճանճ կարող էր շեղել, սակայն ինքն իր գրավիչ ձայնով նրանց կրկին վերադարձնում էր նախահայրերի պատմություններին:

Աբդիմելեքը լսում է, որ ուսուցիչը դպրոց է պահում կանանց սենյակում: Ուստի, երբ ծառայությունը թույլատրում էր, նա դուրս էր գալիս պալատից և միանում իր հիվանդ տիրուհու շրջանակին: Բարձրահասակ մավրը, որի սենեկապետի արժանապատվությունը չէր հանդուրժում արագ քայլը, իր ոտնաթաթերի վրա համեստորեն քաշվում էր մի անկյուն, ուր պպզած և աչքերը փակ՝ ագահորեն լսում էր ուսուցչին:

Երեմիան, ավարտելով իր հեշտ աշխատանքը, ընդունում էր Բարուքին իր սենյակում: Այս երկրորդ թաքնվածության ընթացքում նրանք պատրաստում էին մի նոր գործ՝ մի երկրորդ մատյան, բոլոր տեսակի պատգամներով և տեսիլքներով՝ Հովակիմի օրվանից սկսած:

Կարելի էր մտածել, որ կանանց տունն իր ներքին կյանքով խաղաղ նավի նման ընթանում էր պաշարման ալիքների վրա: Եվ, ընդհանրապես,

դա այլ կերպ չէր էլ կարող լինել: Պատերազմի գոռգոռոցներն ու դժոխային ժխորը խառնաշփոթ կերպով խուժում էին պատուհանների միջով: Ճիշտ է, հացագործների փողոցում հացը գնալով դառնում էր ավելի ավազախառն, իսկ մի օր էր այն բոլորովին դադարեց: Արքայական պահեստներում, սակայն, դեռ կար ալյուր, կաթ, կարագ, ձիթայուղ, գինի և մեղր: Հացի փոխարեն նրանք ուտում էին քաղցր թխվածքներ՝ ի բերկրանս Եհիէլի: Այդ ժամանակահատվածում թագավորը միայն երկու անգամ կարճատև այցելեց իր մորը, Մաաքային և երեխաներին: Նա երջանիկ էր երևում, պարծենում էր և կատակում: Ինչքան ուրախ էր լինում նա, Մաաքան այնքան ավելի քիչ էր վերահսկում իր դեմքին նշմարվող վախը, մինչդեռ Ամիտալը միանգամից բավարարվում էր սովորական խոսակցություններով:

— Դուստր, քեզ չեմ ասել, որ թագավորը կհաղթանակի պատերազմում... Դա կլինի այլ կերպ, քան ինչ որ տեղի էր ունեցել այն ժամանակ, երբ իմ տերը հինգ հարյուր մարտական կառքերով դուրս էր եկել փարավոնի դեմ մեգիդոյի մոտ և խիզախորեն առաջացել մինչև այնտեղ, ուր *Յավանն* էր, այսինքն՝*իոնացիները*...

Եվ Ամիտալը կրկին նետվում էր հին ժամանակների պատահարների գիրկը: Բայց, ի մեծ հիասթափություն նրա, որդին չէր թողնում, որ նա երկար երազի, այլ ընդհատում էր նրա խոսքը, քանի որ շատ քիչ ժամանակ ուներ: Նա ուրախ տրամադրություն էր ցույց տալիս և խրախուսում վախեցած Մաաքային ու մյուսներին, որպես թե ինքը գիտե մի շատ յուրահատուկ բան, և թե վերջնական հաղթանակը միայն մի քանի շաբաթվա հարց է... Երեմիան, սակայն, Աբդիմելեքից գիտեր ճշմարտությունը: Անհաջողությունների և դարպասների առջև տեղի ունեցած մարտերի պատճառով, որ մղում էր Սեդեկիան տարօրինակ խելագարությամբ, կորցրել էր ոչ միայն իր խիզախ թիկնապահների կեսին, այլ նաև հարյուրավոր դժգոհ մարդկանց, որոնք, լինելով Սափանի որդիների կողմնակիցները, անցել էին Բաբելոնի կողմը: Չնայած այդ փորձառություններին՝ նա շարունակում էր իր հերոսների հետ համառորեն պայքարել թշնամու դեմ պարիսպների առջև: Նա թուլացնում է Բաբելոնի սիրտը և կոտորածների վայրագ գործողություններ է կատարում, որոնք արժանի էին հիշատակության: Սակայն դրանց մասին չի խոսվում, և դրանք հպարտությամբ

չեն լցնում Սիոնի սիրտը: Երեմիան գիտեր, թե ինչու: Քանզի թագավորը փորձում էր խուսափել պատերազմի դաշտում իրեն սպասող փառապանծ մահից: Հենց դրա համար էլ նա գործնականում դարձել էր անխոցելի: Հարվածող խմբի հետ, որը նա կազմել էր ամենախիզախներից, նրան մի անգամ հաջողվում է անակնկալ ու արագ կերպով ճեղքել պաշարողների առաջին շարքերը, և մահ սփռելով՝ հասնել մինչև մեծ զորապետ Ներգալ Սարսեքիմը, որին նա մենամարտի մարտահրավեր է նետում և ծանր վիրավորում: Բայց նույնիսկ այդ արյունալի բախումն ու առաջընթացը, որոնք նրան տեղափոխում են ուղղակի թշնամու կենտրոնը, նրան մահ չեն բերում: Սեդեկիայի՝ քաղաքը փրկելու ճանապարհը Եհովայի ճանապարհը չէր: Հազարավոր նետերից ու նիզակներից ոչ մեկը չի քերծում նույնիսկ նրա մաշկը: Եվ նկատի ունենալով, որ նա հաղթել էր Ներգալներից մեկին՝ այժմ մենամարտի ասպարեզ է կարդում ուղղակի Մարդուկ–Նաբուզոդոնոսորին: Պատասխանը, որ նա ստանում է, մի կամուրջ էր, որ Տերը բարեհաճել էր մեկ անգամ ևս կառուցել թագավորի համար, որը մի երիտասարդ ու կատաղի ցուլի նման պաշտպանում էր իր պատիվը և խուսափում զոհաբերվելուց: Այդ պատասխանը մի անհասանելի վեհապետի կողմից սթափ լրջությամբ տրված մի պատասխան էր, որով անտեսվում էր այն ծիծաղելի մարտահրավերը, որն արել էր բոլորովին ստորադաս ու արհամարհելի մեկը: Պատասխանում ասված էր նաև, որ եթե Հուդայի թագավորը մինչև նորալուսնի *Աբ* ամիսը հանձնվի և հպատակվի իրեն, այն ժամանակ Նինուրտուն՝ վերջնական ոչնչացման աստղը, չի տիրի Երուսաղեմին: Այս խոսքերով Երեմիայի տեսիլքն ու ստացած վերջին պատգամի իսկությունը լիովին ապացուցվում են: Մարգարեն մեկ անգամ ևս ընկնում է թագավորի ոտքերը, բայց վերջինս իր ձեռքով ծածկում է նրա բերանը: Ամեն ինչ արդեն ասված էր: Նրանք կրկին լուռ նստում են կողք կողքի: Սեդեկիան ավելի ուշ հրամայում է եթովպացուն՝ պալատի պահեստից իր համար ծառաներին հատուկ հնամաշ ու պատառոտված հագուստ բերել: Նա զզվանքով իր մատների ծայրով ընտրում է դրանցից մեկը և հագնում: Այնուհետև վերից վար նայում է ինքն իրեն, գունատվում է գարշանքից: Պատառոտելով պոկում է հագուստն իր մարմնից: Աբդիմելեքը ստիպված է լինում կոշտ անձեռոցներով շփել նրա մարմինը և յուղերով օծել: Օրերն անցնում են անօգուտ:

Թամմուզը մոտենում էր իր ավարտին, այդ այրող և ամեն ինչ չորացնող ամիսը, որի անունից անբաժան է բզկտված համանուն աստվածը, ում համար կռապաշտ կանայք դեռ ողբում են բարձունքներում: Այդ *Թամմուզը*, սակայն, երաշտ էր բերել, որի նմանը երկրի ծերերը երբեք չէին տեսել, որովհետև շաբաթներ ու շաբաթներ շարունակ անձրև չէր տեղացել երկրի վրա: Վայրի կենդանիները փախչում էին անապատից ու լեռներից, խելագարորեն թափառում դաշտերի մեջ և մտնում գյուղերը, քանի դեռ դրանք չէին այրվել: Մեծահարուստներն ուղարկում էին իրենց ստրուկներին՝ հուսալի վայրերում ջրհորներ փորելու: Աշխատողները վերադառնում էին շփոթահար, քանզի ավելի հեշտ կլիներ անապատում ջուր գտնել, քան այդ վայրերում: Առաջին հերթին չորանում է այն ջրառատ աղբյուրը, որը ոռոգում էր թագավորական պարտեզները: Այնուհետև մի քանի օրվա ընթացքում չորանում են քաղաքի պարիսպներից ներս գտնվող բոլոր աղբյուրներն ու ջրհորները: Ամեն ոք այժմ շտապում է դեպի ջրամբարները և Սելովամի երկու ավազանները, որոնց ջրերի մակարդակը գնալով նվազում է, իսկ կարճ ժամանակ անց մնացածը լրիվ գոլորշիանում է:

Երաշտը թեև հավասարաչափ կերպով պատուհասում է պաշարվածին և պաշարողին, բայց այն չի կարողանում ազդել ի շահ պաշարվածների, քանի որ այն ստիպում է պաշարողներին իրենց մոլուցքի մեջ առանց վարանելու արագացնել ծարավից տոչորվող քաղաքի անկումը: Հետևաբար, սանձազերծվում է մի կատաղի հարձակում քաղաքի պարիսպների ու պատվարների վրա՝ առանց մի ժամ իսկ դադար առնելու: Բաբելոնի համբերատար առյուծն այնքան էր նյարդայնացած, որ նույնիսկ գիշերվա ժամերին չէր դադարեցնում կռիվը:

Պարիսպներին կանգնած էին քաղաքի պաշտպանները՝ հյուծված, խանձված, ցամաքած: Նրանք այլևս չէին քրտնում նույնիսկ ամենավայրագ մարտերի ընթացքում: Մինչ վերևից նրանք նշան էին բռնում և արձակում իրենց նետերն ու արկերը, իրենց ատամների արանքում դնում էին ծառերի շյուղերից բարակ ու փոքր կտորներ, որպեսզի դրանք ծամելով մեղմացնեն իրենց ծարավը: Քաղաքը, սակայն, ցնցվում էր նրբանցքներում թափառող մայրերի և երեխաների աղաղակներից, որոնք լրտեսում էին տների դռները, հաճախ գնում էին տաճար, որպեսզի

քահանաներից մուրային ընծայաբերված մրգերից: Ժամանակի ընթացքում, սակայն, այդ թափառական կանանց ու երեխաներին միանում են նաև բազմաթիվ ամբարիշտ մարդիկ: Նրանք կազմում են սպանություններ և կողոպուտներ իրագործող խմբեր: Վերջում վրա է հասնում այն, որ պետք է հասներ. ժանտախտը բոլոր վայրերում, որի հայրն էր քաղցը, իսկ մայրը՝ ծարավը:

Թամուզի վերջին երեք օրերին պալատի բոլոր դարպասները պետք է ամրացվեին և թիկնապահների հսկողության տակ առնվեին, որովհետև թագավորի տունը վտանգի տակ էր: Ամեն կողմից լսվում էր ամբոխի ձանձրալի ճիչը, որը պալատից պահանջում էր հաց և ջուր: Թագավորը, սակայն, տուն չէր վերադառնում խրամատներից:

Կանանց պալատում նրանք բոլորը ժամերով նստում էին միասին՝ թագուհիները, տղաները, Երեմիան, Բարուքը, Աբդիմելեքը: Ամիտալի ուռած մարմինը պառկած էր անկողնում ողբալի կերպով: Ծեր թագուհին միայն երազում էր և այլևս չէր խոսում: Գահաժառանգ Ադաիան սևեռուն կերպով պատուհանից դուրս էր նայում՝ առանց շրջվելու: Եհիէլը՝ աղջկա նմանվող տղան, որը ոչ մի բանի կարևորություն չէր տալիս, իր շուրջը քաղցրավենիք էր փնտրում, որ չկար: Օրերը առավոտից միանգամից փոխվում են գիշերվա և անհասկանալիորեն դառնում սրընթաց: Այնտեղ էր *Աբ* ամսվա լուսինը՝ այդ լափողը, որը յուրաքանչյուր դաշտ անապատի էր վերածում, այդ նույն լուսինը, որը Երեմիան ատում էր մանկուց ի վեր՝ առանց իմանալու, թե ինչու: Նոր լուսնի հետ ավարտվել էր Սեդեկիայի վերջին ժամկետը՝ զոհաբերելու իրեն իր ժողովրդի համար: Հանկարծ պալատում գտնվող մարդկանց մխիթարական լուրեր են հասնում՝ իրենց հետ թարմ շունչ բերելով: Ըստ այդ լուրերի՝ թագավորը զրկանքների մեջ տառապող իր զինվորների հետ դիմադրել է բոլոր գրոհներին և գիշերային մի հարձակման ընթացքում հրակեզ կուպրով հրոճարակի է մատնել Բաբելոնի սպառազինության մեծ մասը: Միևնույն ժամանակ Եղնաթանին հաջողվել էր մի քարավանի հետ, ծպտված իբրև բաբելոնյան օժանդակ ուժ, Սելովամի ստորգետնյա անցքով գաղտնի կերպով մտնել քաղաք՝ իր հետ բերելով հազար *մար* ջուր, երեք հարյուր *մար* գինի և հարյուր *քոռ* թուզ: Չնայած այս գանձերն ընդամենը մի քանի ժամ տևեցին և քիչ մարդկանց բաժին ընկան, այդուհանդերձ, դրանք

հրաշքի ազդեցություն գործեցին, քանզի ասվում էր, որ մոտակա օրերին դրանց տասնապատիկը պիտի բերվի քաղաք: Նույնիսկ նրանք, ովքեր ոչինչ չէին ստացել, հուսադրվեցին: Բայց հետո հանկարծ եկավ վերջը: Եվ այն եկավ անսպասելի մի ժամի, ինչպես ամեն մեծ բան...

Երեմիան քնած էր իր սենյակում: Բարուքը պառկել էր նույն տեղում՝ հատակին, ծածկված վերմակով: Ընդհանուր թեթևացման այդ օրերին նրանք մտաբերում էին Տիրոջ խոսքը և քննարկում այն, որպեսզի որոշ չափով շեղվեն օրվա կարիքներից: Դեռ գիշերը նոր էր սկսել, երբ տանը լսվեցին խուլ բղավոցներ: Դրսից թակում էին դռները, և ծառաներն ու աղախինները ճրագների լույսերով շտապում էին դեպի միջանցքները: Աբդիմելեքն իր սպիտակափայլ ատամներով օժտված գլուխը մտցրեց Երեմիայի սենյակի դռան արանքից և ասաց հևալով.

— Մի ճեղք է բացվել Եփրեմի պարսպի վրա... Բոլորը թող անմիջապես գան թագավորի մոտ...

Ուսուցիչն ու աշակերտը ցատկեցին իրենց տեղից և վազեցին թագուհու բնակարան: Այնտեղ իրար էին անցել լացող կանայք և աղախիններ, որոնք, բոլորովին շփոթահար, անպետք իրեր էին հավաքում և լցնում ճամփորդական պայուսակների մեջ: Հիվանդ Ամիտալը նույնպես վեր էր կացել: Նրա նաժիշտները ջանասիրաբար հագցնում էին նրան: Մաաքան զբաղված էր իր տղաներով և փորձում էր քաջալերական խոսքերով համոզել Ադաիային, որ փախուստի ժամանակ վրան չդնի իր զրահն ու փետրավոր սաղավարտը: Համառ տղան, սակայն, չէր ուզում տեղի տալ: Եհիէլը, որի քունը խանգարել էին, խիստ զայրացած էր և նախատում էր իրեն հագցնող աղախնուն: Կանանց և երեխաների այս ամբողջ իրարանցման ժամանակ թագավորը կանգնած էր խրոխտ և անշարժ: Միայն երբեմն ոտքով թեթև հարվածում էր գետնին՝ հորդորելու համար, որ շտապեն: Պատերազմի վերջին մի քանի շաբաթվա ընթացքում նա գրեթե կմախք էր դարձել: Դրա համար էլ նրա հոյակապ աչքերը հյուծված դեմքին կրկնակի կերպով էին փայլում: Նրա էությունն ու վարվելակերպը չէին մատնում հուսահատության ոչ մի նշույլ, ոչ մի տարակուսանք կամ նույնիսկ անհանգստություն: Նա նման էր մի մարդու, որը գոհ էր, թե ամեն ինչ ընթանում է իր նախատեսած ծրագրի համաձայն: Երբ նա նկատեց Երեմիային, ժպտալով դիմեց նրան.

— Ավելի լավ է, որ մենք լքենք այս քաղաքը, և դու էլ գաս մեզ հետ...

Դա մի հրահանգ էր, որի դեմ չէր կարող լինել որևէ առարկություն:

— Թագավորի համար հեշտ կլինի ավելացնել Եղնաթանի շարքերը, և դրանք դրսից դեպի ներս առաջնորդել՝ իբրև օժանդակ ուժ... Մինչ այդ իմ փոխարեն քաղաքի հրամանատարությունը կստանձնի Իսմայելը... Օրեր առաջ արդեն ամեն ինչ պատրաստվել էր և կանոնակարգվել: Ձիերը, էշերը, ուղտերը տարված են մի ապահով վայր... Մենք կգտնենք Եղնաթանին Աղի լճի մոտ... Երուսաղեմից դուրս թագավորն ավելի հզոր է, քան ծուղակում... Թագավորն ուրախ է այս ազատ պատերազմի համար... Ուրախացեք նաև դուք...

Եվ Սեդեկիան իսկապես ծիծաղեց այս խոսքերից հետո, որպես թե ինքը գեղեցկորեն չէր շպարում ու նվազեցնում դառն իրականությունը: Նա ծիծաղում էր, իբրև անվրդով մարդ, որը մինչև վերջ չէր ուզում նահանջել իր սեփական դիրքերից, իսկ երբ ուժեղ քամին հեռուներն էր քշում նրան, ձևացնում էր, որ ինքը ոչ թե քշվածն է, այլ քամին: Սեդեկիան այդ անխուսափելի ժամին այլևս չկրկնեց իր երկմտող հարցը. «Կա՞ արդյոք Տիրոջից մի խոսք»: Վստահություն ներշնչող նրա արքայական ժպիտը տարօրինակ կերպով լավ ազդեցություն էր թողնում բոլորի վրա:

— Դու կարող ես քեզ հետ տանել քո աշակերտին,— ողորմածաբար ասաց նա Երեմիային:

Մի ժամվա ընթացքում ամեն ինչ պատրաստ էր մեկնումի համար: Սեդեկիան որոշել էր, որ քաղաքից փախուստը պետք է իրականացվեր երկու խմբով: Ուղեկցողների խումբը, որը բաղկացած էր պալատական երկու իշխանից, որոշ քանակի ծառաներից և աղախիններից, ինչպես նաև ուղեբեռից, պետք է դուրս գար դեպի ազատ տարածք՝ թագավորական պարտեզների միջով: Թագավորի հիմնական խումբը՝ Ամիտալի, Մաաքայի, տղաների, Երեմիայի, Բարուքի, Աբդիմելեքի և երկու արքայական մարտիկների հետ, նպատակ ուներ ստորգետնյա անցուղիով անցնել Սելովամից դեպի Կիդրոնի չոր հովիտ՝ այն կետի մոտ, ուր այն միանում է Բեն-Հիմոնի հովտին: Սելովամի գետնուղու հետ, սակայն, կապված էր հետևյալ իրադարձությունը:

Ավելի քան հարյուր տարի առաջ Եզեկիա թագավորը Դավթի բարձրահարկ ամրոցի և արևելյան արտաքին պարիսպների միջև

կառուցել էր երկու քարապատ ջրամբարներ, որոնք պիտի հավաքեին ու ամբարեին ձմեռվա առատ անձրևների ջուրը: Բայց քանի որ Տիրոջ շնորհքով կային նաև «թաց տարիներ», այսինքն՝ ջրառատ տարիներ, հարկավոր էր ջրամբարի հորդող ջրի համար ջրանցք բացել: Այդ ստորերկրյա ջրանցքը կոչվում էր «Սելովամի գետնափոր ջրանցք»: Այն շատ հայտնի մի հրաշք էր, որի մասին Երուսաղեմի բնակիչները պարծենկոտ հպարտությամբ էին խոսում: Համառ Եզեկիան չէր հանգստացել, մինչև որ իր ավարտին չէր հասցրել գործը, չնայած որ իմաստուն մարդիկ զարմացել էին նման մի հանդուգն նախաձեռնության վրա: Հորատման աշխատանքները սկսվել են միաժամանակ թե հովտի և թե քաղաքի կողմից: Հանքագործները քլունգով և բրիչով փորելով՝ երկու հակադիր կողմերից առաջ են ընթանում, մինչև որ կատարվում է հրաշքը, և նրանք սկսում են լսել միմյանց խռպոտ ձայները, քանի որ իրարից ընդամենը երեք կանգուն էին հեռու: Հանդիպումից հետո ջրանցքի երկու մասերն արդեն միացված էին, վերջապես ջրերը թունելի միջով սկսում են հոսել դեպի ներքև: Յոթ օր շարունակ տոնախմբում են և զոհեր մատուցում:

Հարմարավետ թունելի երկարությունը հազար երկու հարյուր կանգուն էր՝ սկսած արևելյան ջրամբարներից մինչև նրա վերջավորությունը Կիդրոնի հովտում, ուր թշնամուն խաբելու համար այն քողարկված էր որպես այլևս չգործող քարահանք: Դրա նման քարահանքեր շատ կային մեկը մյուսի կողքին քաղաքի լանջերին: Թշնամու ոչ մի զորապետ այդտեղ ոչինչ չէր կասկածում, որովհետև պաշարման սկզբից ի վեր «Սելովամի գետնափոր ջրանցքը» փակ էր: Թունելի վերջում՝ ժայռերի մեջ, ամենից ուղղաձիգ և անհասանելի վայրում կար ամրոցի մի բաժին, ուր երբեք փորձ չի եղել գրոհելու: Պաշարման օղակն այդ վայրում շատ թույլ էր և անկարգ: Ներգալ Նաբուզարդանը հիմք չուներ այդտեղ նախազգուշական միջոցների դիմելու, հատկապես այդ օրերին, երբ հավաքել էր իր բոլոր ուժերը՝ ընդդեմ քաղաքի հյուսիսային պարսպի, որի վրա արդեն բացել էր առաջին ճեղքը: Սեղեկիան հաշվի էր առել այս հանգամանքը, իսկ աշտարակի պահապանների զեկույցը հաստատում էր, որ Կիդրոնի հովտի հակառակ եզերքի երկարությամբ կային միայն կրակի շուրջը իրարից հեռու նստած պահապաններ:

Թագավորական տան փախուստը սկսվեց լուրջ դժբախտությամբ: Ամիտալն իրեն պահում էր ազնվագույն հերոսությամբ՝ իր ուժերից վեր: Մանր քայլեր էր անում՝ կոթնած երկու արքայական մարտիկների: Նրա շունչը թեև գնալով ավելի էր կտրվում, բայց նա շարունակում էր ջանասիրաբար հետևել մյուսներին: Անբացատրելի էր պատճառը, որ փախչելու համար նա կարմիր զգեստ էր հագել, որը չէր հագել Հովսիայի մահից ի վեր: Կարմրավուն գույնը սարսափեցրել էր Սեղեկիային, բայց նա զսպում էր յուրաքանչյուր խոսք, որ կարող էր վիրավորել մորը: Այնուհետև, մտածում էր նա, դրսում՝ բաց երկնքի տակ, նրա վրա կգցի մի սև վերարկու: Մի քանի ջահերի տատանվող լույսի առաջնորդությամբ նրանք մտան չորացած ու ժայռափոր ջրանցք: Չնայած դրա բավական հարմարավետ լայնությանը և բարձրությանը՝ ամբոխը դանդաղ էր ընթանում ուրվականների նման ճերմակ պատերի միջով՝ ի գոհունակություն Ամիտալի: Երբ փախստականներն արդեն հասել էին ոլորուն թունելի կեսին, Ամիտալն սկսեց տատանվել և հանկարծ փռվեց հատակին:

— Թողեք ինձ այստեղ, զավակներս,— ասաց նա կմկմալով,— Չեմ կարծում, որ սրանից ավելի լավ տեղ կգտնեմ... Ինձ այստեղ հանգիստ եմ զգում... Սա լավ ու գեղեցիկ տեղ է... Դուք գնացեք, ես կմնամ այստեղ...

Սեղեկիան սարսափահար աչքերով խոնարհվեց մոր վրա, որի մարմինը Մաաքան ծածկեց կարմիր վերարկուով, ապա գտավ իր հետ բերած բարձերից մեկը և դրեց նրա գլխի տակ:

— Վեր կաց, մայր իմ,— հորդորում էր թագավորը,— վեր կաց, դու, որ ինձ երբեք չես լքել իմ առաջին օրվանից... Ես քեզ կշալակեմ...

Ջահի տատանվող լույսի ներքո կարելի էր տեսնել, որ Ամիտալը մեծ ջանք գործադրելով փորձում էր մեկ անգամ ևս ժպտալ, և որ նրա կապտած շրթունքները դժվարությամբ ձևավորում էին «լավ», «գեղեցիկ» և «գնա» բառերը, որոնք ստիպում էին որդուն հեռանալ այդտեղից: Նրա վերջին ցանկությունը՝ չկանգնեցնել Դավթի որդիների երթը, անմիջապես կատարվեց: Երբ նա մի թեթև շարժում ևս արեց, որպես թե Դավթի ժառանգների համար մի հավատարիմ օգնական էր փնտրում (գուցե դա լիներ Երեմիան), նրա սիրտն անձնատուր եղավ կարճատև պայքարին և շուտով դադարեց տրոփելուց: «Լավ» բառը շրթունքներին վախճանվեց Ամիտալը՝ Հովսիայի օրինավոր կինը, երկու թագավորների մայրը,

տիրուհին՝ մի ընտրված ու մի մերժված ժամանակահատվածի, երջանկության և դժբախտության մեջ ապրած մի կին: Տերը վերցրեց նրան հենց այն ստորգետնյա անցուղու մեջտեղից, որն այնտեղ գտնվողներին մեծագույն կարիքից տանելու էր դեպի խորը թշվառություն: Առաջինն ուշքի եկավ թագավորը:

— «Լավ»,— կրկնեց նա մոր մահվան խոսքը:— Այո՛, այդ լավ է, ինչ դու անում ես, մայր իմ, ինչպես միշտ: Եվ դու հիմա գտել ես մի լավ ու խոր գերեզման...

Նա ընդմիջեց իր խոսքը և պոկվեց տեղից: Բռնի մի շարժումով դեպի առաջ էր մատնացույց անում, կարծես թե հանուն փրկարար նպատակի պետք է մոռացության տրվեր նույնիսկ մոր մահը և դուրս մղվեր իր հոգուց:

Երեմիան, Բարուքն ու Աբդիմելեքն արագորեն կատարեցին իրենց վերջին ծառայությունն Ամիտալի հանդեպ: Դիակը ծածկեցին վերմակով և կոթնեցրին ժայռի մի խորը խոռոչի պատին, որպեսզի Ամիտալի դեմքը միշտ ուղղված մնա դեպի տաճարի Սրբարանը:

Ելքին չհասած՝ երկու հարյուր կանգուն առաջ, հանգցրին ջահը: Թունելի վերջին հատվածը պետք է անցնեին կատարյալ խավարի միջով՝ սրտները լցված Ամիտալի մահվան կսկիծով և նրան լքած լինելու խղճմտանքով: Շուտով, սակայն, թունելի ելքը մեծացավ, ինչպես մի շողացող աստղ, որը գնալով ավելի է մեծանում:

Այդ մեղմ գիշերվա ընթացքում Կիդրոնի հովիտն ամբողջությամբ ամայի էր: Հավանաբար Ամիտալն իր մահվան ժամանակ մատուցած աղոթքով փրկություն էր խնդրել Դավթի վերջին ժառանգների համար: Հեռվում փայլում էին պահակների փոքր կրակները: Մյուս կողմի բարձունքներում, սակայն, ոչ մի հսկողություն չկար: Դրա փոխարեն Եփրեմի դարպասի դիմաց, որտեղ ճեղք էր առաջացել, լսվում էին մոլեգնող մարտերի խլացուցիչ ձայները, և փայլատակում էին արձակված հրավառ նետերն ու նիզակները: Սեդեկիան կանգ առավ: Այնտեղ՝ վերևում, հյուսիսային մասում, կատաղի մարտնչում էր Իսմայելը՝ իր կառավարիչը: Նկատելի էր թագավորի երկմտության ներքին փոթորիկը: Ճիշտ կլինի՞ արդյոք, որ ինքը թողնի իր ժառանգությունը՝ առանց նույնիսկ Աստծու խոսքը հարցնելու: Արդյոք ինքը չպե՞տք է վերադառնա և մեկ անգամ ևս

մասնակցի պարիսպների մոտ մղվող մարտերին, նույնիսկ թաղվի քաղաքի փլատակների տակ: Ի վերջո, միթե իր այդ փախուստն ինքնին վատոգի ու թուլասիրտ մի երևույթ չէր, իսկ ազատ մարտիկի հույսն էլ՝ մի պատրանք: Նրա մայրն արդեն եղել էր այդ փախուստի զոհը: Թագավորի երկմտանքը տևեց միայն երկու ակնթարթ: Այնուհետև նա շուռ եկավ և սկսեց գլխիկոր վազել դեպի հարավ՝ Կիդրոնի քարքարոտ առվի հունով: Մյուսները հետևեցին նրան, որոնց մեջ Աբդիմելեքը՝ իր գրկում շալակած երկու մանկահասակ իշխաններին: Նրանք շնչակտուր հազիվ հասնում են գետի մացառներով ծածկված մի ափ: Այդտեղ արդեն սպասում էին մյուս խմբի մարդիկ: Այդ կիրճում լավ էին թաքցրել պալատին պատկանող ձիերն ու բեռնակիր կենդանիները, այդ թվում՝ Ամիտալի համար նախատեսված մի հեզ ուղտ, որն այժմ տրվում է Մաաքային: Մյուս անասուններն ու իրենց պահապանները պատկանում էին Եղնաթանի քողարկված քարավաններից մեկին:

Ուղեկցող խումբն այնքան էլ հաջողությամբ չէր փախել քաղաքից, որքան թագավորը՝ յուրայինների հետ: Ծառաներից մեկը, որ չափազանց ծանր բեռ էր կրում, դժբախտաբար, չէր կարողացել քայլ պահել փախչողների հետ և ընկել էր թշնամու ձեռքը՝ իր շալակած բոլոր գանձերի հետ, որոնց թվում՝ Դավթի գերդաստանի ոսկյա բաժակը: Մի ծանր կորուստ, որը որևէ լավ բան չէր կարող նշանակել:

Բայց հարկավոր էր դրանից ավելի վատին պատրաստ լինել: Դա այն փաստն էր, որ պալատական վերոհիշյալ ծառան տանջանքների ներքո մատնել էր թագավորի փախուստի առաջին ուղղությունը: Այնպես որ կորցնելու ժամանակ չկար: Գրաստները բաժանվում են: Թագավորն ու ռազմիկները վերցնում են ձիերը: Երեմիան և Բարուքն ավանակներ են ստանում, նույնը ստանում է նաև Աբդիմելեքը, ում հանձնարարվում է փակել թիկունքը բեռների համար հատկացված կենդանիներով: Սեդեկիան ավագ որդուն նստեցնում է իր առջև՝ թամբի վրա: Մաաքան պնդում է իր հետ տանել Եհիէլին, որը, սակայն, դժգոհ լինելով իր նստած անհանգիստ տեղից՝ ուղտի սապատների արանքում, սկսում է լաց լինել: Այդ պատճառով էլ նրա ընկեր Աբդիմելեքը վերցնում է նրան մոր մոտից և նստեցնում իր ավանակին: Երեմիան, որ ընթանում էր նրա կողքով, «Աստծու մասին գեղեցիկ պատմություններ» է պատմում, որ փոքրիկը քնի:

Առաջին վտանգը հաղթահարված էր: Հուդայի անապատը, սակայն, շուտով նրանց առջև բացում է իր քարեղեն ցանկապատը, ուր պետք էր մտնել և դանդաղ առաջանալ՝ խուսափելով բաց ու հարթ ճանապարհից: Ձիերն ու ավանակները սայթաքում էին քարի բազմաթիվ բեկորների, ճեղքերի ու ծալքերի վրա: Մարդիկ կրկին ու կրկին իջնում էին թամբերից և ջահի լույսի ներքո ստուգում կենդանիների կապերը՝ արդյոք մնասված են, թե ոչ: Երիտասարդ լուսնի թույլ գիծը նոր էր նշմարվում կեսգիշերից հետո: Մաաքայի ձայնը շնորհակալություն է հայտնում Տիրոջն այդ միապաղաղ լուսատուի համար: Այդ պահին փախչողները նոր են հասնում Ադումիմ, որն արնագույն մի կավային դաշտ էր: Այդտեղ գետինը մի փոքր ավելի փխրուն էր, ուր ձիերը կարողանում էին լավ քայլել, և ավանակներն էլ համարձակ հետևում էին նրանց: Դեռևս չէին հասել Արյան ուղու սահմանը, երբ թագավորը հանկարծ կանգ առնելու նշան է անում: Խորը շնչելով՝ ամեն ոք հևասպառ մնում է իր տեղում կանգնած: Ի՞նչ էր տեղի ունեցել: Հեռվից շատ պարզ լսվում էր ձիերի սմբակների ուժգին աղմուկը, որը երկար ժամանակ արձագանք էր տալիս, հետո դավադրաբար դադարում: Դրա համար միայն մեկ բացատրություն կար: Ծառան մահվան սպառնալիքի տակ խոսել էր թագավորի փախուստի ճանապարհի մասին, իսկ հիմա հետապնդողներն արդեն մոտեցել էին: Ոչ ոք չէր կարող մտածել գիշերային ձայնի պատրանք լինելու մասին, քանի որ թշնամին դեռ որոշ ժամանակ շրջում էր մոտակայքում, թեկուզ փախուստը կանգ էր առել, որպես թե հանգիստ սպասում էին որոշելու՝ դեպի ուր գնալու մասին: Նորից շարունակվում է ընթացքը քարքարոտ ճանապարհով: Սեդեկիայի ձին ընկնում է գետին և այլևս չի բարձրանում: Թագավորը, որն անվնաս էր մնացել, հեծնում է մարտիկներից մեկի ձին, իսկ մարտիկը ստիպված մնում է անապատում:

Ոչինչ, սակայն, չէր կարող շփոթեցնել հետապնդողին, որը միշտ հավասար հեռավորության վրա, իր ավարի նկատմամբ ագահով և արհամարհական, կրնկակոխ հետևում է իր որսին: Թշնամու ներկայությունը թույլ չէր տալիս խրախուսանքի որևէ խոսակցություն սկսել կամ փոքրինչ հանգստանալ: Երբ Սեդեկիան նայում էր իր երիտասարդ կնոջը, սիրտը ճմլվում էր: Թագավորը գիտեր, որ իր խմբում Մաաքան և Երեմիան միակն էին, որոնք փրկվելու աննշան հավատն անգամ չունեին: Ամեն

անգամ, երբ նա նայում էր կնոջը, վերջինս քաջալերական հայացքով ժպտում էր նրան: Այդ բռնազբոսիկ ժպիտը՝ իբրև կնոջական սիրո կեղծ արտահայտություն, ամեն անգամ հարվածի տպավորություն էր թողնում նրա վրա. դա նրան հիվանդացնում էր: Այդ պահին նա ցանկանում էր ցատկել իր ձիուց և թաքնվել անապատի ինչ–որ մի քարանձավում, միայնակ, իր մնացած ամբողջ կյանքի ընթացքում: Այդուհանդերձ, բախտավորություն էր, որ երեխաները շատ լավ էին քնում. Ադաիան՝ հոր կրծքին, իսկ Եհիէլը՝ Աբդիմելեքի բազուկներում:

Քանի որ հեծյալների հետապնդումը չէր դադարում, մարում են իրենց ջահերը՝ չնայած քարքարոտ ու դարանակալ անապատի բազմաթիվ խոռոչներին ու անդունդներին: Միայն լուսաբացին էր, որ թշնամին թողել էր իր հետապնդումը: Թագավորը խուսափել էր հետապնդողներից: Թշնամու ձիերի սմբակների ձայները մոտակայքում դադարել էին: Առավոտը բացվել էր, և ճանապարհի ամենաերկար մասը հաղթահարված էր: Ցած իջան անասունների վրայից, որպեսզի մի քիչ հանգստանան: Մի բաժակ համեմված գինին և խորտիկները հրաշալիորեն աշխուժացրին նրանց հոգիները: Թագավորն իր մարմինը տարածեց գետնին, ժպտաց, գրկեց ու փաղաքշեց իր երեխաներին, որոնք, չնայած իրենց քնկոտությանը, առավոտյան բղավում էին ուրախությունից՝ անսովոր իրադարձությունների համար: Այժմ կարծես թե նրա կինը նույնպես լի էր իսկական երջանկությամբ, հավատով և հույսով: Արդյոք ինքը՝ թագավորը, ճիշտ չէ՞ր արել՝ հրաժարվելով նրանից, որ կորչելու էր, և այդպիսով փրկելով Դավթի տան ու կյանքի շարունակությունը երեխաների միջոցով: Քանի Դավթի ժառանգն ազատության մեջ է, ուրեմն տաճարն ու քաղաքն էլ կանգուն են: Թագավորը գրավականն էր կայունության ու գոյատևման, շատ ավելի, քան քարն ու ականանետը: Մարդուկը կարող էր մեռած պարիսպների վրա ճեղքեր բացել և կործանել կործանելին, Սեդեկիան, սակայն, նրանից խլել էր նրա արյունոտ աշխատանքի պտուղը, քանի որ ինքն ապրում էր ազատության մեջ, և իր որդիներն ապրում էին որպես սրբազան շարունակություն և գոյատևում Սիոնի: Ծեր Եղնաթանը պետք է արդեն ստացած լիներ իր պատգամը: Այդ հերոսն իր մարտիկների հետ թաքնված էր Աղի հովտում, որը կոչվում էր նաև Արաբա, Մեռյալ ծովի շրջակայքում: Նրանք նոսրացած էին, քայքայված ու վերածված մի

փոքր ավազակախմբի: Սեդեկիան շատ բարձր էր Եղնաթանից: Նա իր տիրապետող ու հմայիչ հայացքով զանգվածներ էր ձևավորում ահռելի մարտերի համար: Եվ միթե կարող էր դաշինքը խախտած փարավոնն իր մեղավոր խղճով մերժել օգնության իր արդար պահանջը, եթե ինքն անձամբ ներկայանար նրա գահի առաջ Նոփում: Սեդեկիան դաշինքի գերին դառնալուց ի վեր երբեք իրեն այդքան ազատ ու թեթևացած չէր զգացել, որքան իր փախուստի այդ առավոտյան ժամին: Նա կատակում էր Երեմիայի հետ: Նա այլևս չէր վախենում նույնիսկ Եհովայից, քանի որ կատարել էր այնպիսի ընտրություն, որն իրեն չէր թելադրվել ոչ Տիրոջ և ոչ էլ նրա մարգարեի կողմից: Դա ամբողջովին իր նախաձեռնությունն էր: Եվ նա դիմել էր փախուստի: Եղնաթանը հարթավայրում արդեն հնազանդորեն սպասում էր նրա հրամանին: Օ՛ն, դեպի առաջ: Թարմաշունչ առավոտը եռում էր նրա արյան մեջ: Մեկ անգամ ևս շրջվեց դեպի Երեմիան, որպես թե նախազգուշացման համար ուզենար մի հարց տալ նրան: Սակայն ոչինչ չհարցրեց, այլ խթանեց իր ձին և արշավեց դեպի առաջ: Իշխաններից մեկը կանչեց նրան.

— Մեծափառ արքա, թույլ տուր քո մարտիկներին առջևից գնալ:

Սեդեկիան ձեռքի մի լայն շարժումով մերժեց նրան: Լեռները գնալով ցածրանում էին: Այժմ նրանք իջնում էին մի խորը լեռնանցքի միջով: Մի լայն աստիճան, հետո նորից մի աստիճան, ապա ևս մի աստիճան: Եվ փախստականներն արդեն հասնում են Հորդանանի հովիտը և տեսնում Աղի լճի կապույտ–սև մակերեսը: Ուրեմն փրկված էին: Այնտեղ, սակայն, ոչ ավելի հեռու, քան երեք հազար կանգուն, աղի բյուրեղներով ծածկված փշաթփերի արանքում կանգնած էին մի խումբ անգործ հեծյալներ: Հուզմունքը պատեց Սեդեկիայի սիրտը. միայն Եղնաթանի հեծյալները կարող էին այդքան վատ զինված լինել, որոնց ձիերը սովից կմախք էին դարձել: Թամբերին նստած տղամարդիկ, սակայն, չէին կրում բաբելոնյան սրածայր սաղավարտներ, այլ գողերի նման՝ գունավոր գլխարկներ ու գլխաշորեր: Թագավորը մնաց անշարժ նստած իր ձիու վրա. դա տևեց միայն մի պահ: Այնուհետև իր կյանքում առաջին և վերջին անգամ նա իր տարօրինակ կոպիտ ձայնով արտաբերեց ուրախության այն հոյակապ ճիչը, որը եղել էր իր հոր նշանաբանը՝ «Աստծու ուրախությունը», ապա գավազանով դաժանորեն հարվածեց իր ձիուն,

որը խրխնջոցով սուրաց դեպի փայլող հարթավայրը: Այդ պահին Երեմիան նույնպես բացականչեց.

— Սպասի՛ր, արքա՛... Կանգ առ... Վերադարձի՛ր...

Սա վերջին նախազգուշացումն էր, որ մարգարեն կարող էր անել թագավորին: Զիավորների գլխաբաց առաջնորդը հանգիստ դրեց գլխին իր սաղավարտը: Եվ, արի տես, որ դա բաբելոնյան սրածայր մի սաղավարտ էր: Կարմրագույն երկաթե դիմակն իջավ զորապետի դեմքին: Ծաղրական դանդաղաշարժությամբ խումբը շարժվեց Հուդայի թագավորին ընդառաջ: Երբ վերջինս շրջեց իր ձին դեպի հետ, արդեն շատ ուշ էր:

* * *

Եվ արևը խավարեց: Նա, ով փեսայի նման էր դուրս գալիս իր առագաստից և հերոսի նման անցնում էր հաղթանակի ճանապարհով, այժմ ծածկում է իր գանգրահեր գլուխը: Սև ստվերներն աստիճանաբար սպառում են նրան, այնպես որ նրանից ոչինչ չի մնում: Փչում է մի քմայնոտ քամի, որը նման չէր ոչ մի ուրիշ երկրային քամու, այլ դա միայն քամու պատրանք էր, նրա արտացոլումը, քամու ուրվականը: Նա իր առջև է բերում գիշերային թռչուններին՝ բվերին, բվեճներին, չղջիկներին, որոնք զարմացած էին իրենց կանչվելու անսովոր ժամից: Բոլոր մարդիկ, կենդանիներ, բույսեր և իրեր հանկարծակիորեն գունատվում են, հիվանդի տեսք են ընդունում և նմանվում ներքինիների: Աշխարհի ժողովուրդները ցնցվում են իրենց սրտում: Քանի որ մարդն ավելի հեշտությամբ է ճանաչում Աստվածության գոյությունն ու ղեկավարությունը, երբ հայտնվում է մի արտակարգ իրավիճակում, քան առօրյա կյանքի այն հավերժական հրաշքի ժամանակ, որ յուրաքանչյուր նոր բացվող օր պարփակում է իր մեջ:

Արևի խավարումը սկսվեց կեսօրից հետո երրորդ ժամվա ընթացքում: Երբ սև ստվերը սպառեց նրա սկավառակի երեք քառորդը, Մարդուկը և նրա ամենաուժեղ հրամանատարները՝ Ներգալն ու Նինուրտոն, հայտնվեցին երկնքում՝ գունատ աստղերի տակ: Նրանց հետ իր

բնակավայրից դուրս է գալիս նաև Նաբուգոդոնոսորը: Քանի որ հասել էր նրա կյանքի և զորության մեծ ժամը, երբ գիշերային երկինքը տեսանելիորեն հաղթահարում է ցերեկային երկինքը, և նա՝ հենց ինքը, իր կամակատար ծառաների հետ ելնում է հրեղեն առյուծի տնից պայծառ երկնակամարում: Նրա ծննդյան առթիվ աստղաբաններն արդեն հաշվարկել էին այդ ժամը և հաստատել, որ այդ խավարման ժամանակ թագավորներն ու ժողովուրդները պիտի ավարտվեն նրա կրունկների տակ, որպեսզի ամբողջանա նրա համաշխարհային տիրապետությունը: Մարդուկի համաշխարհային տարում ուրիշ ինչ ժամ կարող էր ավելի հիանալի լինել, քան նրա դատարանի, այսինքն՝ դատաստան անելու ժամը: «Դատարանը», անշուշտ, մի անբավարար արտահայտություն է, զուցե չափազանց թերագնահատված: Իրականում այն ենթադրում է արդարություն, գործերի ճիշտ քննարկում՝ համաձայն օրենքների և կանոնակարգի, որի առջև նույնիսկ թագավորն է խոնարհվում: Մարդուկը, սակայն, չի ենթարկվում այս արդարությանը, այլ բազմաթիվ կասկածներից հետո անձնապես որոշում է մեկին դատապարտել կամ ներել: Մարդուկն արդար չէր, այլ՝ հզոր: Նրա արդարությունը միայն սրբազան չափի մեջ էր, որն էր՝ նախանձախնդիր կերպով պաշտպանել իր իշխանության բարձր ազնվականությունը: Նա, ով փոքրը մեծի տեղ է ներկայացնում, և մեծը՝ փոքրի տեղ, ով փոխանակում է թվերը, փոխում է արժեքները, անցնում է սրբազան ու հավիտենական չափի սահմանը, այդպիսին խախտում է Մարդուկի բարի կարգուկանոնը և ընկնում ոչնչության մեջ: Սեդեկիան փոքրը մեծի փոխարեն էր ներկայացրել, հատկապես ինքն իրեն և իր թագավորությունը: Նա փոխանակել էր թվերը և փոխել արժեքները մասնավորապես Երուսաղեմի ու Բաբելոնի առնչությամբ: Նա մեծ տիրակալի ակնհայտ գերազանցությունը փորձել էր փոխանակել իր հավաքած ժողովուրդների դաշինքով: Արևի խավարման ընթացքում Մարդուկը հանդես չի գալիս որպես դատավոր: Դատավորը մեղքը պարզում է դատաստան անելով՝ հարցաքննությամբ և վկաների ունկնդրությամբ: Մարդուկը հայտնվում է որպես զուտ ուժ, որպես զուտ չափ, ոչ իսկ պատժելու համար, այլ միայն անհրաժեշտ հետևանքների վրա ազդելու: Սակայն նրանք, ովքեր արևի խավարման ժամին առիթ են ունենում տեսնելու Նաբուգոդոնոսորին, նրա դեմքի վրա մի խոր տխրություն են

նկատում: Սա այլ բան էր, քան այն մելամաղձոտությունը, որը բխում էր հաղթող ուժի մենակությունից: Մարդուկը տերն է երկնային պատգամաբերների, նրան են ծառայում *Շամաշի* համաստեղությունները:

Մարդուկի աստվածային հայտնությունը, սակայն, տեղի է ունենում Ռիբլա քաղաքում, ուր նրա բանակատեղին էր: Քաղաքը բոլոր ժողովուրդների, երկրների և ճանապարհների մեջտեղում էր: Տարբեր ժողովուրդներից բազմաթիվ մարդիկ հավաքվել էին այդտեղ, որպեսզի մի նշանակալից վայրից ականատես լինեն գիշերային երկնքի հաղթանակին՝ ցերեկային երկնքի վրա, ինչպես նաև վայելեն սահմանված պատժի կիրառումը, որով պիտի պատուհասվեր մի անպիտան ազգի թագավորը: Ռիբլայի մեծ հրապարակը չէր կարող իր մեջ այդքան շատ մարդ տեղավորել: Թիկնապահները մեծ դժվարությամբ են կարողանում ազատ պահել աստղային գահին հատկացված բուրգի և դրան հարակից բեմահարթակի շուրջբոլորը, ուր տեղի էր ունենալու պատժի գործադրումը: Մարդուկն իր գոհարազարդ բաճկոնով, որը ծանոթ էր Երեմիային, նստում է բուրգի գագաթը համարվող գահին: Նրա աջ կողմում՝ ավելի ներքև, կանգնած էին հրակարմիր հագուստով տասներկու Ներգալներ, որոնց թվում, անշուշտ, չկար շքեղափայլ կերպարանքը Նաբուզարդանի, քանի որ նա դեռ չէր վերադարձել Հուդայի երկրից, ուր պետք է ամբողջացներ իր սկսած ավերիչ ու քայքայիչ աշխատանքը: Մարդուկի ձախ կողմում կանգնած էին ագռավի գույնի սև հագուստով տասներկու Նինուրտուներ, որոնք հիմնականում դժգոհ ծերունիներ էին և շատ էին հազում: Հրակարմիրների և սևազգեստների միջև՝ բարձրադիր գահից չորս աստիճան ներքև՝ ուղիղ կենտրոնում, միակ կապույտ հագնվածն էր, Սամգեր Ներուն: Նրա՝ մորուքից ու կնճիռներից զերծ դեմքը չէր պատկանում ոչ տղամարդկանց և ոչ էլ կանանց սեռին, կամ էլ երկուսի խառնուրդն էր, որն արդեն արտահայտում էր մի հոգնած զարշանք այն մասին, թե ինչ էր լինելու: Դա կարեկցանքի մի զգացում չէր, որը երիտասարդական գեղեցկությամբ օժտված մարդուն հարյուրամյա աչքերով մահամերձ հիվանդի տեսք էր տալիս, այլ դա արդյունք էր նրա ունեցած գարշանքին՝ ամեն տեսակ կոպտության ու դաժանության հանդեպ: Ներգալը կարող էր դառնալ Նինուրտու, և հենց Նինուրտուն էլ՝ մի Ներգալ: Սակայն նրանց և Ներուի միջև գոյություն չուներ ոչ մի խառնուրդ, ոչ

մի հնարավոր կապ: Եթե Մարդուկն իշխում էր չափի վրա, Ներուն էլ իշխում էր համաչափության, գեղեցիկ կերպարանքի և հնչեղության վրա, որոնք թաքնված էին թվերի հարաբերությունների մեջ: Եթե նրան ստիպեին որևէ տգեղ ու դաժան բան տեսնել, հոգին սկսում էր տառապել նրա նուրբ մարմնում մինչև փսխելը: Սամգեր Ներուից ներքև՝ ստորին աստիճանների վրա իրար էին սեղմված մնացած աստղագուշակներն ու նրանց խորհրդականները՝ ամենաբազմազան գույներով զգեստավորված, ներդաշնակ և ձեռք ձեռքի տված:

Պատժի կիրառման համար գահն իր վրա կրող բուրգի առջև պատրաստված էր մի լայն բեմահարթակ, որը նման էր մի հսկա սեղանի՝ ասես աստվածային մի խնջույքի համար, որը Մարդուկը մտադրվում էր տալ: Այդ սեղանի տախտակները ծածկված էին արյան ժանգոտ կարմիր մեծ բծերով, որովհետև մի քանի օրվա ընթացքում դատարանի որոշումով դրանց վրա սրով մահապատժի էին ենթարկվել Սեդեկիայի ավելի քան երեք հարյուր պալատական իշխաններն ու բարձրաստիճան անձինք: Վերջին մարտում նրանք ընկել էին Նաբուզարդանի ձեռքը և ուժեղ հսկողության ներքո անմիջապես տարվել Ռիբլա: Նրանց մեջ էին Մալքիան՝ Փաշհուրի որդին, և Երիան՝ Անանիայի որդին: Երուսաղեմի բարձրաստիճան անձանց մեծ մասին, հատկապես քահանաներին, հենց տեղում՝ տաճարում, կախաղան էին բարձրացրել: Մի երրորդ մաս՝ ամենից փոքրաթիվն ու քաջարին, իշխան Իսմայելի ղեկավարության ներքո փախել էր ու հասել Բահալիս՝ Ամմոնի թագավորի մոտ:

Այդտեղ՝ Ռիբլայում, մահաբույր բեմահարթակի աստճանների առջև կանգնել էր Երեմիան ազատության մեջ, քանի որ Մարդուկը դեռ շարունակում էր ամենն տեսակ բարեհաճություն ցուցաբերել օտար Աստծու մարգարեին, թեև չգիտեր դրա իսկական պատճառը: Երեմիայի բուռն ցանկության ու համառ դիմումների արդյունքում նրան թույլատրվել էր օրվա ընթացքում և գիշերը մի քանի ժամ անցկացնել գերեվարված Սեդեկիայի և նրա որդիների հետ այդ շատ դժվարին կացության մեջ: Այս պարագան մի բացառություն էր: Դավթի ժառանգների խնամակալությունը պաշտպանվում էր սրով ու նիզակով: Ոչ ոք, մանավանդ Հակոբի ժողովրդից, իրավունք չուներ մոտենալ բանտարկյալներին, նույնիսկ եթե նա լիներ Սափանի կողմնակիցներից մեկը: Իսկ թագուհի Մաաքային և

հավատարիմ մավը Աբդիմելեքին մահվան սպառնալիքով արգելված էր մուտք գործել Ռիբլա քաղաք: Այս երկուսը ճամբարում էին պարիսպներից դուրս՝ միշտ սպասելով Երեմիային կամ Բարուքին, որոնք ժամանակ առ ժամանակ լուրեր էին ուղարկում նրանց: Մաաքան փակ աչքերով պառկել էր գետնին, ասես կարկամախտով բռնված լիներ: Չնայած մավրի բոլոր հորդորներին՝ օրեր շարունակ նա ոչինչ չէր կերել և խմել:

Արևի սկավառակը դանդաղորեն ծածկվում էր ստվերով, որը նախանշում էր գալիք ժամանակներում աշխարհի վախճանի այն մեծ գունատությունն ու սառնությունը, որոնք տեղի էին ունենալու, երբ բոլոր պատճառները սպառված լինեին: Մարդուկն ու իր հրամանատարները դեռևս թույլ էին իրենց արտաքին փայլով: Մյուս աստղերի դողդոջուն փայլը հազիվ թե երևար դիակի գույնի տարածության մեջ: Ռիբլա քաղաքի բոլոր աշտարակների վրա կանգնած էին բարձրաստիճան աստղադիտողներ՝ կապտափայլ նյութից պատրաստված գլանաձև գլխարկներով, որոնք հղկված բյուրեղների միջոցով հետևում էին ստվերի տարածմանը և արքայական մոլորակի աճին: Նրանց էր հանձնարարված տալ ժամանակների լրումի նշանը: Մահվան գունաթափող ձեռքն անցնում էր շուրջբոլորը հավաքված ժողովուրդների և մարդկանց դեմքի վրայով: Միայն Մարդուկի արևախանձ, ուշադիր և կլոր դեմքն էր կենսունակության մի վառ գույն պահպանում: Նրա թիկնոցի գոհարները գնալով ավելի ուժգին էին շողշողում, որքան որ օրը կորցնում էր իր փայլը, նույնիսկ այն ժամանակ, երբ անուն չունեցող ձանձրալի մթնշաղի միջից հնչում էր բոլոր աշտարակների վրայից խոյի եղջյուրների միջոցով արվող ազդարարությունը, որն իրենից հետո թողնում էր մի խոր լռություն, այնքան սարսափելի, ինչպես ցանկացած վերջին ժամկետ: Այդ լռության մեջ Սեղեկիային և իր որդիներին հանում են պատժի համար նախատեսված բեմահարթակի վրա:

Հուդայի թագավորը և նրա որդիներն ամբողջովին մերկ էին: Մերկ, ինչպես զոհաբերության կենդանիները: Նրանցից խլել էին նույնիսկ նրանց ազդրերին կապված գոգնոցները, որպես սեփական անարգանք ու նախատինք՝ բացահայտելով մարդկանց աչքի առաջ նրանց ամոթույքը: Բայց այդ խավարային ժամին Տերը չէր զլացել օժտելու նրանց ներքին լույսով: Սեղեկիայի կերպարանքը փայլում էր մեծ գեղեցկությամբ:

Նուրբ ու սիրուն էին երեխաների մարմինները, այնպես որ մայրական հուզական հառաչանքով ցնցվում են ականատես մարդկանց սրտերը: Հոր դաստակները երկաթյա շղթայով ամրացված էին երեխաների փոքր թևերին: Նրանք պետք է միայն միասին շարժվեին: Ադաիան բարձր էր պահում իր գլուխը և իր լուրջ հայացքը չէր հեռացնում հորից, կարծես թե մտածում էր՝ թող պատահի այն, ինչ լինելու է, ինքը միշտ հետևելու է նրա պաշտելի օրինակին և ինքն իրեն էլ ոչ պակաս դրսևորելու: Եհիէլը, սակայն, թարթում էր իր աչքերը՝ նայելով իր շուրջը հետաքրքրությամբ և միաժամանակ արտասվալից: Մեծը լուռ էր: Փոքրը նվնվում էր.

— Հայրիկ... Ի՞նչ են ուզում այս մարդիկը... Ինչո՞ւ ենք մենք այստեղ... Ե՞րբ ենք տուն գնալու...

Սեղեկիայի ձայնն առանց դողալու հանգստացնում էր կրտսերին.

— Համբերիր, որդյակ, սա երկար չի տևի... Շուտով մենք նորից տանը կլինենք...

Եհիէլը սկսում է տրտնջալ, բայց ոչ շատ, ինչպես առաջ.

— Եկեք շորեր վերցնենք և գնանք մեր մոր ու տատի մոտ...

Գահը կրող բուրգի միջով մի շարժում անցավ: Մարդուկն ավագ Ներգալին է հանձնում կավե մի փոքրիկ գրատախտակ, որը փոխանցվում է ավելի ներքև: Միևնույն ժամանակ բեմահարթակ է մտնում հրակարմիր լայն վերարկուներով դիմակավորված անձանց մի թափոր, որոնք մի խիտ շրջանակ են կազմում Դավթի երեք ժառանգների շուրջը: Այնուհետև կարմրազգեստ ներգալներից առաջինը ստանում է Մարդուկի կավե գրատախտակը և Սեղեկիայի ու ժողովրդի առաջ բարձրաձայն կարդում անհրաժեշտությունից թելադրված վճիռը.

— Դու նախ կտեսնես և հետո այլևս չես տեսնի, քանի որ աչք ունենալով հանդերձ չես տեսել այն, ինչ որ պետք է տեսնեիր:

Մարդուկի աստվածային վճիռն առեղծվածային էր, ինչպես բոլոր աստվածային վճիռները: Թագավորի աչքերը վախեցած փնտրում են Երեմիային: Արդյոք հիմա զղջո՞ւմ էր զոհվելու դատապարտվածը, որ ինքն իրեն չէր զոհաբերել: Երեմիան ուզում է միանալ նրան բեմահարթակի վրա, բայց տեսնում է, որ ինքն էլ ազատ չէ: Նաբուի չորս կապտազգեստ եղբայրներ հանկարծ դուրս էին եկել և շրջապատել նրան բոլոր կողմերից, որպեսզի չկարողանա ոչ մի քայլ անել: Եղջերափողերը հնչում են

կրկին: Արևի խավարումն ամբողջացել էր: Հրապարակում, քաղաքում, գուցե բնակեցված ամբողջ երկրում բարձրանում է մի վայրի աղմուկ՝ ճռճռոցների, ծնծղաների, թմբուկների և հարվածային այլ գործիքների, որոնցում խեղդվում են շեփորներն ու երգչախմբերը, ինչպես նաև քահանաների երգեցողությունը: Կարծես թե այս հուզիչ ու մեծադղորդ աղմուկով մարդկությունը փորձում էր վանել իրենից աշխարհի վերջը և խեղդել զոհերի վայնասունը: Այդ պահին Սեղեկիայի որդիներն առաջին անգամ համակվում են մահվան վախով: Նրանք իրենց փոքրիկ դեմքերը սեղմում են իրենց հոր այրվող մարմնին: Իր աստիճանի վրա կանգնած կապտազգեստ Սամգեր Նեբուն մեջքը դանդաղորեն շրջում է դեպի բեմահարթակը և հոգնած նայում է ուղղակի Մարդուկի աչքերին: Վերջինս հազիվ նկատելիորեն վեր է բարձրացնում ձեռքը: Հրակարմիր վերարկուներ դրած տղամարդկանցից վեցը, զույգ առ զույգ, կանգնում են Սեղեկիայի և տղաների հետևում: Նրանք արձակում են այն շղթաները, որոնք կապում էին Ադահայինն և Եհիէլին թագավորի հետ: Ապա նրանց կանգնեցնում են երեք քայլի վրա իրենց հոր աջ և ձախ կողմերում, որպեսզի նա տեսներ ամբողջը, ինչպես վճիռն էր պահանջում: Սեղեկիան այնպես ուժգին է առաջ նետվում դեպի իր զավակները, որ իր հետևի երկու հսկաները, որ բռնել էին նրան, իր հետ տապալվում են հատակին: Մինչ նրա ոտքի ելնելն Ադահայի և Եհիէլի հետևում կանգնած մարդիկ մի կողմ են զցում իրենց վրայի կարմիր լայն վերարկուները և ներկայանում իբրև սատուրնային (Երևակ մոլորակի) սևով զգեստավորված դահիճներ, որոնք սրի կայծակնային հարվածներով երկուսի են բաժանում Դավթի վերջին երկու ժառանգների գանգերը, որոնք լուռ փլվում են տախտակամածին հսկայական աղմուկի մեջ: Նրանց արյամբ է ներկվում հոր մերկ մարմինը: Սեղեկիան ոտքի է կանգնում այնպիսի հզորությամբ, որ մի կողմ է շպրտում դահիճներին: Այնուհետև նրանք միասնաբար նետվում են նրա վրա և կապում նրա ձեռքերը մարմնին: Ծնկի եկած՝ նա մռնչում է հևքոտ կրծքով.

— Ես արդեն տեսա... Էլ ինչի՞ եք սպասում... Դե, շտապե՛ք, արե՛ք ձեր գործը, որ այլևս չտեսնեմ...

Սեղեկիան, սակայն, սխալ էր հասկացել Մարդուկի վճիռը: Նրան հսկող երկու հսկաներից բացի՝ կարմրազգեստ մարդկանց թափորը կրկին

հավաքվում է և լքում բեմահարթակը: Դատապարտվածը սարսափով նայում է նրանց հետևից. նա իր կրած հիասթափության տանջանքից և պատժի հետաձգումից շնչահեղձ է լինում: Մինչ նա դեռ նայում էր հեռացող մարդկանց, իր աչքի վերջին նայվածքով նշմարում է, որ բեմահարթակի մյուս կողմից մի նոր կերպարանք է մոտենում իրեն: Այս մարդը ոչ միայն ամբողջովին սատուրնական երևույթ ուներ, այլ նույնիսկ կարելի էր կարծել, որ նա անձամբ Նինուրտուն էր: Ծերունու մորուքով, թթու պաշտոնականությամբ, ձախ ոտքի վրա կաղալով, որը բավական կարճ էր մյուսից, սևազգեստը մոտենում է իր զոհին: Ձեռքերում, որոնք թաքցրել էր իր ծռված մեջքին, բռնել էր երկաթե բարակ ու շիկացած երկու ձողիկներ՝ իրենց փայտե բռնակներով: Երբ Սեդեկիան իր դեմքը հանկարծ շրջում է դեպի նա, նա անմիջապես և աներևակայելի վարժ հարվածով շիկացած երկաթե սրածայր ձողիկները մխրճում է նրա հոյակապ աչքերի մեջ: Կույր մարդու առյուծի մռնչյունը խեղդվում է ներքևում աճող խլացուցիչ աղմուկ-աղաղակի մեջ, որով սկսում են տոնել ստվերի նահանջը և արեգակի խավարման հաղթահարումը: Սևազգեստ ծառաները գալիս են և տանում տղաների արյունաշաղախ դիակները: Ուրիշ ծառաներ դույլերից ջուր են թափում Սեդեկիայի վրա: Նա կորցրել էր գիտակցությունը, քանի որ մարդը միայն Արարչի սիրո միջոցով կարող է որոշ չափով դիմանալ ցավի:

Նաբուի եղբայրության չորս կապտազգեստ անդամները հետ են քաշվում և ազատ ճանապարհ տալիս Երեմիային: Նա իրեն քարշ է տալիս դեպի բեմահարթակը և գլուխը դնում աչքերի խոռոչներն արյունոտված ու ածխացած արքայի գրկում: Մինչ նրա աչքերից հոսում են արցունքները և չեն դադարում, նա խոսում է բառեր և չի անդրադառնում, որ ինքը դրանք խոսում է.

— Իմ արքա, իմ երեխա, իմ վեհափառություն... Դու կապրես... Եվ ով ապրում է, նա կարող է ճանաչել իր վաստակը... Քո վաստակը շատ մեծ է... Քանի որ դու խմել ես դառն մրուրը բոլոր սերունդների բաժակից... Հիմա դու ցավից ուշաթափված վիճակում ես... Բայց մի քանի օրից այն կանհետանա... Եվ երբ ժամանակն իր ավարտին հասնի, Տերը քեզ չի զլանա իր ուրախությունը... Ուրախացիր, Մաթանիա, քանզի քեզ կհիշեն, և քո հոգին կմիանա կենդանի հոգիներին...

Երեմիան, խորապես խոնարհված ուշագնացի վրա, որը գուցե լսում էր նրան, հեկեկալով ասում է այս մխիթարական խոսքերը: Երբ նա հանկարծ վեր է նայում, տեսնում է իր դիմաց կանգնած Նաբուգոդոնոսորին: Մեծ տիրակալը բեմահարթակ էր բարձրացել իր ներգալների և նինուրտուների հետ և իր ուշադիր, բայց մարդկանցից հեռու հայացքը սևեռել էր Երեմիայի վրա, որը թրջված լաթերով հովացնում էր կուրացվածի վերքերը: Մարդուկը բացում է իր զուսպ բերանը և բարձր ու փոքրինչ բարակ ձայնով ժլատ խոսքեր է ասում Երեմիային, ինչը բացառիկ պատիվ է համարվում, հետևաբար այն շարժում է աստղերին հետևող ներկաների նախանձը:

— Բանտարկյալը,— ասում է նա,— վաղը կտարվի Բաբելոն... Ոչ ոք չի ընկերանա նրան, ոչ տղամարդ և ոչ էլ կին... Բայց դու ազատ ես մնալ այստեղ կամ գնալ... Եթե ուզում ես, կարող ես գնալ նրա հետ...

Երկրի տիրակալի կողմից արված այս յուրահատուկ առանձնաշնորհման համար տեղին կլիներ խոնարհվել մինչև գետին և համբուրել այն տեղը, ուր նա կանգնած է: Երեմիան, սակայն, ընդհակառակը, մնում է տեղում անշարժ նստած: Մութ ուժեր են հառնում նրա մեջ և զորությամբ լցնում նրա ջախջախված էությունը: Նա, ով կոչվել էր որպես մարգարե աշխարհի ժողովուրդների մեջ, ամենևին չի վախենում և այսպես է խոսում Մարդուկի հետ՝ հանուն միակ ամենակալ Աստծու.

— Դու կարող էիր դառնալ հիմնաքար և անկյունաքար... Բայց հիմա դու ճանապարհին ընկած մի մեռած աղյուս ես միայն...

Սարսափի երեք պահ: Աստղերին հետևող ներկաները գունատվում են և կարծես թե կուզենային գետինը մտնել այդ անպատիժ մնացած խոսքերի վրա: Նաբուգոդոնոսորի բերանը ցնցվում է: Այդ ցնցումից էին կախված մահն ու կյանքը: Երեմիայի խոսքերը դիպել էին վերքին և մերկացրել ճշմարտությունը: Աստծու սրի ծառան գիտեր, որ չնայած ավերված բոլոր քաղաքներին և այրված տաճարներին՝ իր աշխատանքն իզուր էր: Նրա աջ ձեռքը շոշափում է գոտուն ամրացված ոսկյա փոքրիկ թիակը: Բերանի ցնցումը հարթվում է ու վերածվում մի առեղծվածային ժպիտի: Նա մի փոքր շրջում է գլուխը և դիմում վախից գունատված ներգալներին ու նինուրտուներին: Չնայած իր կրած վիրավորանքին՝ նա, իր մեծ զորությամբ հանդերձ, շնորհում է և տևապես երաշխավորում իրեն վիրավորողի կյանքը.

«Երեմիան հայտնում է Նաբուզոդոնոսորի ապագան»

— Թող մնա կամ թող գնա, ուր որ կամենա... Թող խոսի ու մարգարեանա, ինչ որ ինքն անհրաժեշտ կհամարի... Քանզի նրա Աստվածը իր մեջ շատ ուժեղ է...

* * *

Նույն գիշեր Երեմիային երազային մի տեսիլք է երևում, ավելի ճիշտ՝ տեսիլքային մի երազ, որի ընթացքում Տերը հայտնվում է նրան: Իր կյանքում առաջին անգամ Եհովան ոչ միայն ձայն ու խոսք էր, այլ ավելին էր: Դա չի նշանակում, որ Երեմիան իր սեփական աչքերով տեսել էր մի որոշակի կերպարանք: Այդուհանդերձ, անբացատրելի կերպով նրա զգայարանների դիմաց կար տղամարդկային մի պնդակազմ ու լուսավոր կերպարանք, ամենևին ոչ ծեր, այլ համարյա երիտասարդ: Սակայն դա լրիվ ճշգրտությամբ չէ, որ հաղորդվում է: Սենյակում տղամարդու ոչ մի լուսավոր կերպարանք չկար, այլ միայն այն գիտակցությունը, որ սենյակում տղամարդու լուսավոր կերպարանք կա. այն իրականում Երեմիայի մտքի մեջ էր: Այդ ամբողջը, որ տեղի էր ունենում, մի ազատ տարածության մեջ էր՝ անապատում ավազի մեջ կորած քարավանային մի ճանապարհի վրա: Երեմիան տեսնում է անապատի եզրին՝ անսահման հեռավորության վրա, Ետեմենանքի աշտարակի եթերային կերպարանքն իր կարմրակապույտ գույնով, որին նա ձգտում էր հասնել: Այնքան հաճախ, երբ նա, միայնակ քայլելուց հոգնած, կանգ էր առնում և շրջվում, նշմարում է հեռվում՝ անապատի հակառակ եզերքում՝ Արևմուտքի երկրում, Նոփի տաճարի սև սյուները, որոնք հսկում են Ամենտիի դարպասները: Կենտրոնում տարածվում է ավերակներով և այրվածքներով լի մի աշխարհ: Տեսիլքն սկսվում է նրանով, որ Երեմիայի դիմացի քարավանային ճանապարհին հանկարծ մի խոր ճեղք է բացվում: Նա իր մեջ ուժ է գտնում մի ոստյունով ցատկելու և անցնելու դրա վրայով: Բայց լուսավոր կերպարանքի ներկայության գիտակցությունը հետ է պահում նրան, որը շշուկային ձայնով ասում է նրան.

— Կամքիդ ցանկությունը քեզ ձգում է դեպի Բաբելոն... Բայց իմ կամքը դեմ է դրան... Հետ դարձիր...

— Տեր,— առարկում է Երեմիան՝ տեսիլքի իսկությունից վախեցած,— Տեր, քո ողորմությունը շատ երկարատև է, իսկ իմը՝ միայն կարճ... Շնորհ

«Երեմիայի տեսիլքը»

արա քո ծառային ուղեկցել կուրացված թագավորին, որը մենակ է, դեպի Բաբելոն...

— Դու չպետք է գնաս Բաբելոն,— ինչում է ձայնն անհամբերությամբ,— քանզի Ես ուզում եմ քեզ հետ ուղարկել քո ժողովրդի մնացորդների մոտ...

Խոր մթնշաղ էր իջել: Հավաքված լույսը սկսում էր շողալ Ետեմենանքիի աստղի մեջ: Տեսանողը դիմադրում է իր ամբողջ ուժով.

— Դեպի Բաբելոնի հավերժական գերություն միայն կուրացվածը չի տարվելու, այլև այն ամենը, ինչ որ երկրում թարմ է և ուժեղ, տղամարդիկ և կանայք... Լծի տակ կքած, շղթաներով մեկը մյուսին կապված, սրածայր երկաթներով ու գավազանի հարվածներով խթանված՝ բոլոր ճանապարհների վրայով նրանք քշվում են տասնյակ–տասնյակ հազարներով: Ճանապարհները խցանված են իրենց թշվառության պատճառով: Իսկ մնացորդնե՞ը, ովքե՞ր են դրանք... Դավաճաններ, դասալիքներ, զգուշավորներ, իմաստուններ, հներ ու ռամիկ ժողովուրդ, որը սերմանում է, հնձում և վաստակում, ինչպես ամենուրեք և ինչպես միշտ... Նրանք իմ կարիքը չունեն...

— Մի՛ վիճիր ինձ հետ,— ասում է ձայնն անհամբերությամբ,— այլ հնազանդվի՛ր ու հե՛տ դարձիր...

Այս խոսքերից հետո ճեղքն ընդլայնվում է և վերածվում մի լայն անդունդի: Տղամարդու լուսաշող կերպարանքը մի փոքր հեռացել էր: Երեմիան որոշում է ավելի խելացի կերպով անցնել գործի.

— Տեր, մի՞թե քո ծառան միշտ հնազանդ չի եղել,– հարցնում է նա:

Սենյակի լուսավոր կերպարանքը մտախոհ լռության մեջ էր, ինչը մի տեսակ հաստատումի նշան էր: Ավելին ակնկալելը շատ կլիներ: Երեմիան, սակայն, ճարպկորեն առաջ է անցնում.

— Տեր, այս անգամ իմ կամքի ցանկությունն ավելի մեծ է, քան իմ հնազանդությունը... Իմ սիրտը կառչած է կուրացվածին, իմ սիրտը կառչած է Սիոնի գերյալներին... Արդյոք քո խոստումը չի՞ պատկանում նրանց...

— Իմ խոստումը պատկանում է նրանց:

— Եվ Դու ուզում ես ինձ վտարե՞լ... Ինձ, որ սպառվել եմ ու մաշվել հանապազօրյա աշխատանքում: Իսկ բազմաթիվ յոթնյակ տարիների ծառայությունից հետո պահե՞լ ես արդյոք իմ աշխատավարձը...

Երազողն իր թիկունքում զգում է բազմաթիվ քաղաքների և գյուղերի ահավոր հրդեհը: Նա իր դիմաց՝ հեռվում, տեսնում է Ետեմենանքիի լույսը, իսկ մոտակայքում՝ բացված անդունդը, որի վրայով ինքը պետք է անցներ: Անտեսանելի, բայց զգալի երևույթի ձայնը կարծես հոգնել էր Երեմիայի համառությունից

— Մի՛ վիճիր,— ասում է նա,— այլ հնազանդվի՛ր և հե՛տ դարձիր...

Երեմիան կանգնում է՝ ոտքերն իրարից հեռու, և ըմբոստանալով հարցնում.

— Իսկ ի՞նչ կլինի, եթե քո ծառան չվերադառնա...

— Ուրեմն, նա կդառնա անհնազանդ:

— Ի՞նչ կլինի անհնազանդության դեպքում:

— Ուրեմն, նա կլինի վերջին խախտողը հավատարմության, ինչպես բոլոր մյուսները...

— Թող այդպես լինի,— համարձակ գոչում է Աստծու դեմ պայքարող ծառան ու քայլ կատարում դեպի անանցանելի անդունդը: Լուսավոր կերպարանքում, սակայն, որի ներկայությունը գիտակցում էր Երեմիան, տեղի էր ունենում մի հստակ փոփոխություն: Այդտեղից վարանումով տրվում է մի պատասխան.

— Բայց Ես չեմ ուզում, որ վերջին հավատարիմը դառնա անհավատարիմ...

Տեսանողն ուրախանում է իր սրտում: Արդեն կարծում էր, թե ինքը մնացել է ավելի ուժեղ: Ուսերը թոթվելով հառաչում է.

— Ի՞նչ ես ուզում անել դրա դեմ, Տե՛ր: Քո ծառայի կամքի ցանկությունը չափազանց ուժեղ է...

Թվում էր, թե լուսավոր կերպարանքը սկսում է հետ քաշվել: Արդեն մյուս սենյակներից հնչում է Նրա խոհեմ խոսքը՝ ոչ առանց մի թաքուն ափսոսանքի.

— Եթե դու չես փոխում քո կամքի ցանկությունը, ուրեմն, Ես պետք է փոխեմ իմ կամքը:

Այս խոսքերից Երեմիան սարսափում է մինչև իր ուղնուծուծը: Միևնույն ժամանակ բաց անդունդը փակվում է, և ճանապարհը դառնում է ավելի սահուն և հեշտ անցանելի, քան նախկինում:

— Տերը փոխում է իր մտադրությունը,— թոթովում է նա:

— Քանի որ դու հետ չես դառնում,— շշնջում է Նա,— Ես հետ եմ դառնում... Քանզի իմ ցանկությունն էր Սիոնի գերյալների հետ գաղթել Բաբելոն և այնտեղ նրանց հետ ապրել... Հիմա, սակայն, դու ես ուզում գաղթել նրանց հետ, և ես հետ եմ դառնում...

— Ո՛չ, Տեր իմ, ո՛չ, մի՛ արա դա,— հուսահատորեն աղաղակում է կրկին անգամ պարտվածը:— Դու գնա նրանց հետ, և ես կինազանդվեմ ու հետ կդառնամ...

Եվ երբ նա արթնանում է, այն պարզ ու հստակ զգացողությունն է ունենում, որ ինքը կառչած է եղել մի տղամարդու երկու ուժեղ ու տաք բազուկներից:

Այդ օրերին, սակայն, Երեմիան ձեռնամուխ է լինում հիվանդ Մաաքայի, Բարուքի և Աբդիմելեքի հետ տուն վերադառնալուն, դժբախտ երկրում գտնվող Հակոբի մնացորդաց մոտ:

ԳԼՈՒԽ ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

ՄՆԱՑՈՐԴԸ

Ամեն ինչ հասել էր իր լրումին: Առաջին տեսիլքում հայտնված նշենու ծաղիկները վերածվել էին ճարճատուն բոցերի: Հյուսիսի եռացող կաթսան թափել էր իր շիկացած կայծերը և այրել ամբողջ երկիրը: Տուն վերադարձողներն իրենց ճանապարհին չեն գտնում ոչ մի գյուղ, ոչ մի ավան, ոչ մի չքանդված տուն, այլ միայն ծխացող ավերակների կույտեր: Դաշտերի եզերքներում փռված էին սպանվածների և դեն շպրտված մեռյալների դիակները: Մեծապես զգալի էր նրանցից առաջացած գարշահոտությունը, որը գնալով ավելի էր ուժեղանում, քանի մոտենում էին Երուսաղեմին: Երկինքը ծածկող թռչունների խանդավառ ճլվլոցները ցույց էին տալիս, որ Ներգալը նրանց համար ճոխ սեղան է պատրաստել:

Երբ Երեմիան բարձրացնում է իր վառվող աչքերը դեպի իրեն ծանոթ անփոփոխ բլուրներն ու լեռները, նրան թվում է, թե այդ լեռները տատանվում են, իսկ բլուրներն էլ սկսում են շարժվել: Արդյոք Հուդայի բարձունքներն ու Իսրայելի լեռները ցանկանո՞ւմ են լքել իրենց երկիրը և իրենց որդիների հետ տեղափոխվել դեպի օտար երկիր: Ի՞նչ կմնար նրանց անելու իրենց տանը. մահվան երգե՞ր երգել դատարկ արոտավայրերի ու մարգագետինների վրա, ավերված մրգաստանների վրա: Ինչպես հովիվը ծալում է իր բրդյա վերարկուն, այնպես էլ Տերը ծալել էր իր երկիրը: Արդյոք Երեմիան վա՞ղ էր տեսնում իր տանջահար աչքերով: Արդյոք այդ լեռներն ու բլուրները գո՞հ են, որ ազատվել են իրենց վրա անհաշիվ դարեր շարունակ ապրած համառ ու ըմբոստ ժողովրդից: Այժմ այստեղ մարդիկ կրկին ապրելու են, ինչպես Աբրահամից, Իսահակից և Հակոբից առաջ, մարդիկ՝ ինքնամփոփ, հանդարտ և բարեպաշտ, որոնց

հետ Աստված քիչ է խոսում, և որոնք էլ Աստծու հետ քիչ են խոսում: Հեշտությամբ ապրող և հեշտությամբ մահացող մարդիկ, ինչպես երկիրն է ուզում, որ դա այդպես լինի:

Փողոցների ու սալահատակված ճանապարհների առատությունը մի սարսափելի հակադրություն էր կազմում՝ երկրի դատարկության և նրա մխացող ավերակների դիմաց: Թեև մի քանի շաբաթ էր անցել *Ար* ամսի իններորդ օրվանից,— Երուսաղեմի անկումի և ավերածության օրվանից,— այդուհանդերձ, տառապալից գաղթն ու քարշ գալը դեռ չէին ավարտվել: Ներգալ Նաբուզարդանն անձամբ էր ղեկավարում մեծ տեղահանությունը: Այս անգամ, սակայն, ի տարբերություն Հովակիմի և Քոնիայի անկումից հետո կատարված աքսորի, ազնվականներին թույլ չէր տրվում կրել իրենց տիտղոսները, իսկ հարուստներին էլ չէր արտոնվում իրենց հետ վերցնել իրենց գանձերը: Երկրի ամբողջ դրամը, գույքը և ունեցվածքը Բաբելոնի բաժին էին դարձել: Իշխանների, բարձրաստիճան քահանաների և ստրուկների միջև որևէ տարբերություն չէր դրվում: Ստրուկներ պիտի լինեին բոլոր նրանք, ովքեր աքսորվում էին: Մարդուկը երբեք չէր մտածում իր կայսրությունը ծանրաբեռնել ձրիակեր ազնվականներով, դպիրներով, աստվածաբաններով, գրքեր կարդացողներով, քնկոտ փիլիսոփաներով կամ ոսկու ճարպիկ փոխանակողներով, գոհարեղենների կամ որևէ այլ տեսակի վաճառականներով: Բաբելոնը լիքն էր նման մարդկանցով: Դրանց փոխարեն բյուր-բյուրավոր ստրուկներ, որոնք աղյուսներ էին թրծում, եղեգներ կտրում, ճահիճներ չորացնում, տափաստաններ ոռոգում և հազարավոր այլ աշխատանքներ կատարում՝ «աշխատավարձով բանվոր» նշանի տակ, մի կարևոր միջոց էին հարստացման և պատերազմի անհրաժեշտ ծախսերի հայթայթման: Ահա թե ինչու այս բյուրավորները, լինեն դրանք բարձր կամ ստորին դասակարգից, աքսոր գնալիս պետք է զգային իրենց վրա անողոք թշվառության հարվածը, որպեսզի երբ տեղ հասնեին, այնտեղ՝ Բաբելոնում, աշխատանքային ամենադժվար կյանքն անգամ իրենց թվար քաղցր ու թարմացնող: Ում ուժերը չէին բավականացնի, պիտի ընկնեին ու մեռնեին ճանապարհին: Ինչ կարևոր էր, եթե մի քանի հազար մարդ իր կյանքը կորցներ այդպես՝ ուժասպառ լինելով: Գաղթը մի հոյակապ մաղ էր ստրուկներին զտելու համար: Մարդուկն իր շինարարական

աշխատանքների համար կարիք ուներ միայն ուժեղ բազուկների: Ներգալ Նաբուզարդանը գերվածների համար հիմնել էր համակենտրոնացման մի ճամբար Բենիամինի Ռամա կոչվող փոքրիկ քաղաքում: Այնտեղ էին կուտակվել նաև Բաբելոնի կողոպտիչ զորքի հափշտակած բոլոր հարստությունները: Միայն ծերերը, հիվանդները, խեղվածները, կույրերը և մի շարք խոնարհ գյուղացիներ կարող էին մնալ իրենց տեղում: Այս վերջինների համար աշխարհի իրադարձությունները տեղի են ունենում իրենց աչքերի առաջ՝ առանց երբեք դիպչելու իրենց, և ճիշտ այնպես, ինչպես կատուները, որոնք ինքնին կապվում են ոչ թե տան բնակիչների, այլ հենց տան հետ, այդպես էլ փոքր գյուղացին ավելի քիչ է պատկանում ազգին, քան իր հողին: Հետևաբար, նվաճողի համար որքան էլ շատ լինի նրանց քանակը, այն ոչ մի վտանգ չի ներկայացնում: Նաբուզարդանը Ռամայի համակենտրոնացման ճամբարից ուղարկում է գաղթականներին, խումբ առ խումբ և խելամիտ ընդմիջումներով, դեպի Բաբելոն: Եվ դրանց վերջը չկար:

Մարդուկ-Նաբուզոդոնոսորը, անսպասելի մեղմությամբ, դժբախտ թագուհուն և նրա ուղեկիցներին լավ գրաստներ և բավարար չափով ծառաներ է տրամադրում: Այնուամենայնիվ, տուն վերադարձողները մարդկանցով լեփ-լեցուն փողոցների միջով անցնելիս դանդաղ քայլերով հազիվ էին կարողանում առաջանալ: Նրանք ամեն ժամ հանդիպում էին թշվառների նոր խմբերի: Նրանցից յուրաքանչյուրը հիմնականում բաղկացած էր հարյուրավոր տղամարդկանցից, որոնց հետևից գնում էին կանանց և երեխաների զանգվածներ: Տղամարդիկ շղթայված էին իրար զույգերով կամ ավելի մեծ քանակով: Ըստ պատերազմական հին սովորության՝ նրանք իրենց կռացած պարանոցներին կրում էին փայտե հսկա ու ծանր լուծեր, և դրանցով շաբաթներ շարունակ քայլում էին հրակեզ արևի տակ՝ խառնելով իրենց արցունքները քրտինքի հետ: Լուծն ու շղթաները շուտ էին մաշեցնում ու քայքայում բարակ հագուստը, այնպես որ շատերը ստիպված էին դեպի հավիտենական գերություն գնալ ցնցոտիներով կամ մերկ: Չէր հանդուրժվում ոչ մի կամայական հանգիստ կամ դադար: Տառապանքներն ավելացնելու և տարագրվածների կապը նվազեցնելու համար գերդաստաններն ու հարևանությունները միմյանցից խստորեն առանձնացված էին: Իրենց ընտանիքներից և ծննդավայրերից

պոկված ու մեկուսացված հոգիները, պատահական ընտրությամբ իրար մոտ բերված, կրում էին երկաթե միևնույն շղթաները: Տերը ցնցել էր ու խառնել իր ժողովրդին, ինչպես մի բաժակում խառնված խմիչք:

Կանանց վիճակը, սակայն, ավելի սրտաճմլիկ էր, քան տղամարդկանցը, որոնք կրում էին լուծ և շղթաներ, բայց ուրիշ ոչինչ: Կանայք ստիպված էին իրենց հետ տանել այն ամենը, ինչ անհրաժեշտ էր աքսորավայրում, և ինչ Բաբելոնն աննկատ ծաղրանքով թույլ էր տալիս իրենց հետ տանել: Կանանցից շատերը գնում էին երերուն քայլերով, կքած ու հոգնաբեկ, շալակներն առած մեկական հսկայական պարկ և յուրաքանչյուր բազկում բռնած մի փոքր երեխայի, իսկ կողքերին՝ իրենց հետ քայլող մի քանի ավելի մեծ և դողդողացող երեխաներ: Երիտասարդ կանանց, աղջիկների և տղաների սպիտակավուն մաշկը ճաքճքում էր արևի ճառագայթներից, իսկ ոտքերին աստիճանաբար առաջանում էին արյունալի պալարներ: Եթե կանանցից մեկը հրապուրիչ էր և ցանկություն էր առաջացնում, վիճակ էին գցում նրան տիրանալու համար: Դա, իհարկե, կատարվում էր ուղեկցող հսկիչների համաձայնությամբ: Այնուհետև, երբ ամայի լեռներն արձագանք էին տալիս այդ կնոջ ողբին ու աղաղակին, շղթայված տղամարդիկ իրենց արդար զայրույթի մեջ չէին կարողանում օգնության հասնել, ինչպես պահանջում էր սրբազան օրենքը: Բաբելոնը հաճույք էր ստանում, երբ իր բանտարկյալներին անմաքուր ուտելիքներով էր կերակրում և նեխած ջրեր ըմպել տալիս, որոնցից նույնիսկ ինքը գարշում էր: Մի անգամ Երեմիան տեսնում է, որ քաղդեացի նետաձիգները գիշակեր ագռավներ են որսում և խորովելով դրանք՝ տալիս են իրենց հսկողության տակ գտնվող գաղթականներին՝ ուտելու: Իսրայելի տղամարդիկ և կանայք մնում են ուժեղ: Նրանց միջից միայն նա, ով մերժված է, գերհոգնած, սովից հաղթահարված, մեկնում է իր ձեռքը դեպի պիղծն ու գարշելին: Մյուսները, սակայն, նստում են մեռելային լռությամբ, փակում են իրենց աչքերը և խոնարհեցնում իրենց գլուխները մինչև իրենց գիրկը: Միևնույն ժամանակ հաղթանակածները ձիերի վրայից իջեցնում են գինու կճուճները և սկսում են խմել, երգել ու ծիծաղել սովահարների առջև: Այդ ընթացքում կանայք նույնպես համակվում են վսեմ հպարտությամբ, լացող երեխաներին սեղմում են իրենց կրծքերին, որպեսզի նրանց ողբի ձայնը չուրախացնի թշնամուն:

«Գաղթ»

Վերոհիշյալը միայն մեկն էր վայրագության այն բյուրավոր տեսարաններից, որին ականատես են լինում տուն վերադարձողները: Կրկին ու կրկին Երեմիան բռնում է Մաաքայի ձեռքը՝ վստահեցնելու համար նրան, որ նա մենակ չէ իր թշվառության մեջ: Երիտասարդ կնոջ ձեռքը, հակառակ օրվա կիզիչ շոգին, սառած էր, ինչպես նրա ողջ էությունը կարծես սառել էր մահու չափ: Նա նստած էր ուղիղ և քարացած իր էշի վրա, ասես բոլորովին զուրկ լիներ հոգուց: Ռիբլայի քստմնելի դատաստանից ի վեր նա ոչ մի բառ չէր արտասանել: Նույնիսկ Երեմիայի՝ կույր մարդուն տված վերջին սարսափելի հրաժեշտից հետո նրա շուրթերի վրա ոչ մի հարցում չէր ձևավորվել: Բարուքը և Աբդիմելեքը ենթադրում էին, որ Մաաքան ցավի պատճառով կորցրել է խոսելու կարողությունը: Մինչ ուրիշները մտածում էին, որ իրենք շոգի պատճառով մեռնելու են, Մաաքան ցրտահարության էր ենթարկված և կափկափում էր ատամները: Դադար առնելիս կամ գիշերները նա երբեք չէր կարողանում տաքանալ: Վերմակներն ու տաքացնող քարերը նրան չէին օգնում: Ասես նա աննկատելիորեն թափել էր ողջ արյունը իր ցավի ծավալում: Նա պառկած դողում էր իր վրանի մեջ: Այն երկու աղախիններին, որ նրան տրամադրել էր Մարդուկի ասպետական շնորհը, գիշերը փոխարինում էին միմյանց՝ անընդհատ շփելով նրա փոքրիկ, սպիտակ ոտքերը, որոնք, չնայած այդ ջանքերին, մնում էին կարծրացած, ինչպես մահացած կնոջ ոտքերը: Բայց երբ Երեմիան փորձում էր միջնորդել, որ նրան ավելի երկար հանգիստ շնորհվի իր այդ ճանապարհորդության ընթացքում, Մաաքան զայրանում էր, լուռ շարժում էր գլուխը, իսկ դեմքի գծերն աղավաղվում էին:

Հայրենադարձների ուղղությունը Մասեփա փոքրիկ քաղաքն էր, որը հեռու չէր Անաթովթից՝ Հուդայի և Բենիամինի սահմանին: Այնտեղ էին հավաքվել «Հակոբի մնացորդները»՝ բոլոր նրանք, ովքեր աչքի էին ընկնում՝ ազնվականներ, արժանավոր անձինք, սեփականատերեր և նրանց հետևորդները, որոնց մեծ տիրակալը, տարբեր պատճառներից ելնելով, թույլատրել էր մնալ երկրում: Նրանց թվում էին դասալիքներն իրենց ընտանիքներով, այն բոլոր հողատերերն ու քահանաները, որոնք դժգոհ են եղել Դավթի տան իշխանությունից և պատերազմի ընթացքում բացահայտ կերպով Բաբելոնի կողմն էին բռնել: Դրանց մեջ կային նաև

մաքուր հոգով մարդիկ, որոնք, Սափանի որդիների նման, մինչև վերջին վայրկյանն աշխատել էին կանխել պատերազմն ու ամբողջական կործանումը: Նաբուգոդոնոսորի կողմից Մասեփայում մնացորդաց վրա կառավարիչ էր նշանակված Ահիկամի որդի Գեդալիան: Նրա օրհնված համբավը տարածվել էր ավերված երկրով մեկ: Նրա հրամանի տակ էին հազարավոր նահապետական տներ, և դա քիչ չէր: Նա պատրաստում էր երկրի իմաստուն վերաբաշխումը: Բարուքը չի թաքցնում Երեմիայից իր հույսը, որ նույնիսկ ամբողջական կործանումը թեև մի լուրջ վերք է, բայց ոչ մահացու, որը կբուժվի քիչ սերունդներ հետո: Երեմիան լռում է այս ոգևորության դիմաց, ինչը, իհարկե, իր մեջ բովանդակում էր որոշ լավ ու հիմնավորված պատճառներ: Գեդալիան շատ ուժեղ մարդ էր, որն առանց աչք թարթելու օր ու գիշեր աշխատում էր սրբազան գործերի վրա: Այդ ուղղությամբ տարված հոգնեցուցիչ ջանքերին արդեն զոհ էր գնացել նրա երկվորյակ հիվանդ եղբայրը՝ Միքիան: Կառավարիչը պողպատյա արիությամբ հաղթահարում է ամեն տեսակ ընդդիմություն և նույնիսկ հասցնում է ապահովել, որ գինու և յուղի բերքն ամբողջությամբ չկորչի սպանությունների, կրակի և արտաքսումների աղետալի պայմաններում: Նոր կառավարչի պարտականությունն էր նաև հոգ տանել Սեդեկիայի կնոջն արքայավայել կերպով:

Մի երեկո ճանապարհին՝ Ռամայի մերձակայքում, տուն վերադարձողները հասան մի հսկա և հնադարյան գերեզմանի մոտ: Տասներկու մեծ քարեր բարձրանում էին մի փլատակ և փոս ընկած *մասպարայի* (եգիպտական դամբարան) վրա: Գոյություն չուներ ոչ մի մակագրություն, որպեսզի նշեր, թե իր դարաշրջանում ինչ մեծ անձնավորություն է եղել այդտեղ թաղված անձը: Ժողովուրդն այդտեղ հանգստանում է բացօթյա, քանի որ մարդկանց սրտերը չափազան ճնշված էին մուտք գործելու համար Ռամա՝ Ներգալ Նաբուզարդանի նստավայրը և աքսորյալների հավաքատեղին: Մաաքան, սակայն, հանկարծ ոտքի կանգնեց, հանդիսավոր կերպով քայլեց դեպի գերեզմանը և նստեց մի դարավոր ու մոխրագույն դարձած մեծ քարի վրա: Եվ ահա կատարվեց այն, որ Ռիբլայի դատաստանի օրվանից ի վեր լռածն առաջին անգամ բացեց իր բերանը.

— Սա նախամայր Ռաքելի գերեզմանն է...— քողարկված խստությամբ ասաց նա Երեմիային:

— Իմ տիրուհին սխալվում է,— պատասխանեց Երեմիան մեղմորեն:— Սա Ռաքելի գերեզմանը չէ, որը ծնել է Հովսեփին և Բենիամինին... Ռաքելը թաղված է Բեթղեհեմի մերձակայքում գտնվող Ռափայիմի (Եփրաթայի) դաշտում...

Մաաքան արհամարհանքով չափեց նրան գլխից մինչև ոտք.

— Ինչի՞ մասին ես խոսում, ով անհավատարիմ մարդ... Ես, իհարկե, ճանաչում եմ իմ գերեզմանը, ուր ես հանգրվանելու եմ այնքա՜ն դժվարություններից հետո...

Երեմիան նայեց նրան զարմացած աչքերով, ինչից հետո Մաաքան հեռացավ նրանից՝ վեհորեն դառնացած: Որոշ ժամանակ անց նա եկավ և նորից սկսեց խոսել.

— Նրանք սպանեցին իմ երկու տղաներին... Հովսեփին ու Բենիամինին... Բոլոր երեխաներին էլ սպանեցին... Եվ իմ գիրկն ամայացավ... Կանայք, ողբաձայն աղաղակներով, իրենց բազուկների վրա տանում են Բաբելոն իմ մեռած երեխաներին՝ Ադաիային և Եհիէլին... Տեր, ինչո՞ւ ես դու թույլատրում այդպիսի բան կատարել Ռաքելի տղաների հետ... Դու, որ այնքան դժվար ես տալիս երեխաներ մայրերին, ինչո՞ւ ես այդպես վարվում...

Նա լռեց: Արցունքները գլորվում էին նրա աղջկական ցրտաշունչ դեմքի վրայով: Այդ դեմքն իսկապես հիշեցնում էր հետագայում փրկված Ռաքելին: Բայց այդ արցունքները ոչ լավ էին և ոչ էլ փրկարեր. դրանք խելքի չեն բերում Մաաքային: Երեմիան քնքշորեն խոսեց նրա հետ, որպեսզի հեռանա այդ գերեզմանից: Սակայն նա համառում էր՝ պնդելով, որ դա է իր տեղը, ուր ինքը վերջապես կկարողանա նորից քնել և ջերմանալ մահվան մեջ, ինչպես ինքը սովոր է, հետևաբար պետք է թողնել իրեն ազատ, որ կատարվի իր կամքը:

Մաաքան գիշերն անցկացրեց գերեզմանի քարին նստած, ուր ինքը կարծես թե անշարժ պատկերը լիներ Ռաքելի: Առավոտվա դեմ միայն ցած իջավ այնտեղից և քնեց: Երեմիան, մի կողմ տանելով Աբդիմելեքին, ասաց նրան.

— Երբեք մի՛ հակաճառիր տիրուհուն... Եվ որքան հնարավոր է, քնքշորեն ու հոժարակամ կատարիր նրա կամքը... Գուցե Տերը կբժշկի նրան, գուցեև ոչ... Մնա նրա հետ, ուր և ինչքան ժամանակ, որ նա կամենա...

Այնուհետև ուղեկցիր նրան դեպի Մասեփա, ուր ես գնալու եմ շուտով Բարուքի հետ...

— Թող իմ ուսուցիչը հանգիստ գնա,— ասաց մավրը համաձայնելով,— քանզի այժմ իմ տերը իմ տիրուհին է...

Երեմիան հրամայեց, որ բարձրահասակ տղամարդը խոնարհի իր գլուխը: Ապա նա իր ձեռքերը դրեց նրա վրա, որպեսզի օրհնի նրան.

— Տերը զորությունների,— մրմնջաց նա,— որ մահվան մատնեց թագավորի բազմաթիվ ծառաներին, որոնք բոլորն էլ Հակոբի որդիներ էին, բայց քեզ՝ օտարականիդ, խնայեց... Եվ դեռ ավելին՝ քո հավատարմության համար դու ընդունվեցիր ու դասվեցիր ամենահավատարիմների մեջ...

— Ընդունվեցի՞,— կասկածանքով և մելամաղձոտ հակադարձեց եթովպացին:— Եթե ես երեխաներ ունենայի, նրանք չէին լինի Հակոբի զավակներ, այլ օտարներ՝ թխադեմ և ինքնությունից զուրկ...

Երեմիան, սակայն, գնալուց առաջ վստահեցրեց նրան.

— Մեր սրտի գործերը, Աբդիմելեք, նույնպես ունեն իրենց սերունդներն ու ժառանգները...

* * *

Հենց որ նրանք դարպասի միջով մտան Մասեփա քաղաք, նրանք դեմ հանդիման հայտնվեցին մի քստմնելի իրադարձության, որը տեղի էր ունեցել գիշերը: Կառավարչի տունը շրջապատված էր բողոքավոր ու հայհոյող ամբոխի կողմից: Երեմիային ու Բարուքին իսկույն ճանաչեցին: Պահակները թույլ տվեցին նրանց մտնել պալատի բակը: Հավաքված մարդկանց շրջապատում, քարե սալահատակին, փռված էր մի մարդկային կերպարանք՝ փաթաթված արյունոտված կտավներով: Դա Գեդալիան էր, ում մարգարեն տեսել էր իր տեսիլքի մեջ՝ քառապատիկ անգամ սրով խոցված: Իրականում, սակայն, ոչ թե չորս, այլ տասը սուր խոցել էին նրա մեջքն ու կուրծքը: Այս աննկարագրելի ոճրագործության ամենավատ կողմն այն էր, որ այն կատարվել էր Իսրայելում նախքան եբրայական Նոր տարվա սկիզբը՝ հենց այն օրերին, երբ Մարդուկը



«Երեմիան օրհնում է Աբդիմելեքին»

շնորհք էր արել և անձնապես հրամայել Ներգալ Նաբուզարդանին, որ դադարեցնի հետագա որևէ աքսոր կամ տեղահանում: Ռամայի համակենտրոնացման ճամբարը պետք է անմիջապես փակվեր, և բանտարկյալներն այնտեղ ազատ արձակվեին՝ անկախ իրենց կարգավիճակից և անցյալից: Միևնույն ժամանակ ողջ երկրում ներում էր հայտարարվել, որը վերաբերում էր բոլոր փախստականներին, որոնք թաքնվել էին սահմանից այս կամ այն կողմ: Ներման արժանանալու այս հնարավորությունից ոչ ոք բացառված չէր անունով, ոչ իսկ Եղնաթանը՝ պատերազմի երբեմնի հերոսը, ոչ էլ իշխան Իսմայելը: Եվ դա կարող էր այսպես պատահած լինել. Իսմայելը, որի երակների միջով մի քանի կաթիլ Դավթի արյուն էր հոսում, մի խումբ մտերիմ ընկերների հետ օրեր առաջ անսպասելիորեն և անպատիժ կերպով հայտնվում է Մասեփայում և խոնարհեցնում իր գլուխը Գեդալիայի առաջ:

Զարհուրած ամբոխը հավաքված էր արյունոտ դիակի շուրջը, նրանց մեջ էր մի երիտասարդ, ում Երեմիան և Բարուքը ճանաչում էին հարևանցի կերպով, տաճարի՝ Սափանների սրահից: Նրա անունն էր Հովնան՝ որդի Կարեի, որը կարծես թե ընդհանուր շփոթության մեջ պարտադրել էր իրեն իբրև խոսնակ և նախախնամական առաջնորդ: Երեմիան նրանից է տեղեկանում հանցագործության ընթացքի մասին, որը ոչնչացնելու էր վերջին մնացորդաց հույսը.

— Դեռ երեք օր չի եղել,— պատմում է Կարեի որդին,— երբ Գեդալիան հավաքեց ժողովրդին և ազնվականներին իր շուրջը (նրանց թվում նաև Իսմայելին և յուրայիններին)՝ հորդորելով նրանց անտեսել Բաբելոնի զինվորներին, հանգիստ ապրել երկրում և զինել իրենց սրտերը համբերությամբ: Ինքը, սակայն, միշտ պիտի ապրեր նրանց կողքին և իր գործերը պիտի վարեր ծրագրավորված հմտությամբ, մինչև որ քայքայված ժողովուրդը նորից ոտքի կանգներ: Մինչ այդ նրանք պետք է մեկնեին խաղաղությամբ և իրենց անոթները լցնեին գինիով, յուղով, մրգերով, և նորից պետք է մշակեին իրենց դաշտերը: Ժողովուրդն ուշադրությամբ լսում է Գեդալիայի այս լավ ելույթը: Բայց նա ցանկանում էր ավելին անել, քան միայն հաճելի խոսքերով հորդորել իր թշնամիներին, ուզում էր ամուր կապերով կապել նրանց իր հետ: Այդ նպատակով Գեդալիան նախորդ օրվա երեկոյի համար պատրաստել էր մի

ընդունելություն և խնջույք: Հիշյալ խնջույքին հրավիրված էին Իսմայելն ու նրա ինն ընկերները, ինչպես նաև Նաբուզարդանի կողմից Մասեփայի վրա նշանակված նրա զինվորական փոխանորդը, ընդ որում՝ Գեդալիայի արժանավոր օգնականներից մի քանիսը: Ափսոս, սակայն, կառավարչին, որն ականջ չէր դրել Հովնանի նախազգուշացումին, չնայած որ վերջինս այդ օրը բազմաթիվ անգամներ կրկնել էր իր խոսքը.

— Զեղարկիր քո ծրագրած խնջույքը: Չգիտե՞ս, որ դավադրություն է պատրաստվում քո դեմ... Իսմայելն ատում է քեզ՝ Գեդալիայիդ, և չի ների քեզ կատարվածի համար, քանի որ դու գնացիր Բաբելոն և նշանավոր դարձար թշնամիների մեջ: Նա նույնիսկ իր նոր տիրոջը՝ Բաալիս Ամոնին, դրդել է, որ մնասի քեզ...

Դրա վրա Գեդալիան միայն ծիծաղում է և ծաղրականորեն պատասխանում, որ ինքը, ուրեմն, նման բաների հավատալու դեպքում պետք է հրաժարվի իր հավատից՝ Աստծու բարձրագույն պարգևների հանդեպ՝ կշռադատված խոհեմության, իմաստության և բանական եզրահանգումների առնչությամբ: Ուրիշ ինչ պատճառ կարող էր ունենալ Իսմայելը՝ ատելու համար հենց նրան, ով արտոնություն էր ձեռք բերել, որ ինքն անպատիժ տուն վերադառնար և հույս ունենար վերատիրանալու իր ունեցվածքին: Բացի այդ, նա լսել էր հենց իր՝ Իսմայելի բերանից, թե վերջինս որքան է օրհնում իրեն իր կատարած արդար գործի համար: Եվ հիմա Հովնանը մանրամասն բացատրելով լույս է սփռում այն բանավեճի վրա, որն ինքն ունեցել է մահացածի հետ: Դեպքն ավարտվում է նրանով, որ զայրացած Գեդալիան արտաքսում է նրան խնջույքից, որպեսզի նրա ատելությունը չթունավորի հաշտեցման ուրախությունը: Սակայն խոր գիշերվա ընթացքում պատահում է այն, ինչ ինքը կանխատեսել էր: Երբ գինին իրար նկատմամբ ավելի է մտերմացնում հոգիները, մեկեն ոտքի են կանգնում Իսմայելն ու նրա ընկերակիցները՝ մերկացած սրերն իրենց ձեռքում, հարձակվում են Գեդալիայի վրա և հոշոտում նրան, սպանում են նաև մյուս հյուրերին և հատկապես՝ Բաբելոնի զորականին:

Երեմիան լուռ հայացքով նայում է արյունոտված սավանների մեջ փաթաթված մարմնին: Տապալվել էր տան վերջին հենասյունը: Վերջ էր տրվել իր հաշիվները լավ իմացող, ազնվական և խորաթափանց մարդու

կյանքին՝ իր ենթադրյալ նոր ծրագրի կեսին, հենց այն ժամանակ, երբ նա փորձում էր մի փոքր մեղմացնել Աստծու դատաստանը՝ հօգուտ մնացորդաց: Երեմիայի հոգին մեկեն իր դիմաց տեսնում է այն արթնամիտ երկվորյակներին, որոնք իրենց ազդեցիկ խոսքով փրկել էին իրեն Մեշուլամից և մյուս դատավորներից: Այնուհետև մարդկանց գրգռված աղմուկից կտրվում է նրա մտքի թելը: Բակում հավաքվածները խոսում են հետը գոռալով: Նա դեռ չգիտեր կատարված հանցագործության ամբողջությունը, որի միայն սկիզբն էր վերոհիշյալ ահավոր սպանդը: Իսմայելը գիշերով իր նման վայրագ ավազակների մի խմբով, որոնք թաքնված էին, մի քստմնելի արյան բաղնիք է կազմակերպում անպաշտպան ժողովրդի համար: Նրա վրեժխնդրության զոհ են դառնում ոչ միայն մի շարք արժանավոր ու բարեպաշտ մարդիկ մնացորդաց միջից, այլև Եփրեմից ժամանած բազմաթիվ անմեղ ուխտավորներ, որոնք ցանկանում էին այցելել տաճարի փլատակները: Առավոտյան դեմ միայն կարողանում են հավաքել մարդկանց ու անհրաժեշտ զենքեր՝ դիմադրելու համար մարդասպանների այդ ոհմակին, և կարողանում են քշել նրանց դեպի Գաբավոն քաղաքը: Այդ պահին լուր է հասնում այն մասին, որ այնտեղ, բաբելոնացիների ծաղրական հայացքի դիմաց, արյունալի մարտերի մեջ ջարդվում է Հուդայի մնացորդը... Նոր խոսնակի ու ղեկավարի հպարտ կեցվածքով՝ Հովնանը բարձրացնում է իր ձայնն աղմուկի միջից.

— Ահավասիկ մենք քեզ խառն կերպով պատմեցինք,— ասում է նա Երեմիային,— այն ամբողջ սարսափելի դեպքերի մասին, որոնք պատահեցին մեզ հետ և շարունակվում են պատահել... Բայց ուրիշ ինչ կարող է պատահել... Պետք է, որ մենք փախչենք, կամ մնանք մեր տեղում... Բաբելոնացիներից սպանվել են մի սպա և մի քանի այլ մարդիկ... Մեծ տիրակալը վրեժխնդիր կլինի մեզնից և կսպանի մեզ, դրանում կասկած չկա... Այդ իսկ պատճառով իմ խորհուրդն է, որ մենք շտապ տեղափոխվենք Եգիպտոս, նախքան Նաբուզարդանը պատահարների մասին իր զեկույցը Բաբելոն կհասցնի... Թեև մեր մեջ կան ոմանք, որոնք տարբեր խորհուրդներ ունեն՝ փրկելու համար դրությունը... Թող մեր խնդրանքները դրվեն քո առջև,— Կարեի որդին այս խոսքերն ասում է կեղծ հնազանդությամբ,— Աղոթիր Տիրոջը՝ քո Աստծուն, բոլոր մնացորդաց համար, քանզի միայն սակավ մարդիկ են ողջ մնացել մեծ ժողովրդից, ինչպես որ տեսնում ես քո

սեփական աչքերով... Թող քո Տեր Աստվածը մեզ ցույց տա այն ճանապարհը, որով մենք պետք է գնանք, և ցույց տա այն գործը, որ պետք է անենք...

Երեմիան տեսնում է, թե ինչպես խռովահույզ մարդիկ մի կողմից մյուսն են վազում, շարժում իրենց մորուքները, ափերով հարվածում են իրենց կողերին և դաժանորեն վիճաբանում միմյանց հետ: Զայրույթն ու դառնությունը համակում են նրան, քանի որ նա այժմ մտածում է կուրացվածի մասին, նաև տեղահանված խեղճ ժողովրդի մասին, որը դեռ շարունակում է իր երթը դեպի Բաբելոն, ուր Տերն ինքը նրանց ցույց է տալիս ճանապարհը: Երեմիան մեծ հանդարտությամբ է խոսում Հովնանի և մյուս մարդկանց հետ այն բակում, ուր դրված էր սպանվածի մարմինը.

— Արդեն լսեցի... Կաղոթեմ Տիրոջը՝ մեր Տեր Աստծուն, կաղոթեմ և կխնդրեմ Նրա պատասխանը... Եվ ինչ որ Տերը պատասխանի, դրանից, այսինքն՝ այդ ճշմարտությունից, ոչ մի բառ անգամ չեմ թաքցնի ձեզնից...

Այս խոսքերից հետո նա նորից նայում է արյունոտ կերպարանքին, ում ոչնչով չէր օգնել նրա իմաստությունը, մեղմաբարո նկարագիրը և ունեցած հույսը՝ կառավարելու համար մի շփոթահար ժողովրդի: Այնուհետև մարդիկ երախտագիտական խոսքերով տանում են նրան Գեդալիայի տուն (քանզի կատարվել էր նրա ողջ մարգարեությունը), որպեսզի նա այնտեղ ապրեր իր աշակերտի հետ: Գիշերը, սակայն, երբ ճրագը դեռ հանգած չէր, Բարուքը նստեց Երեմիայի մահճակալի կողքին և փորձեց նրան.

— Ինչո՞ւ ես ուզում շատ աղոթել և խանգարել Տիրոջը,— հարցրեց նա,— մենք երկուսս էլ գիտենք, թե ինչն է ցանկալի, և ինչն է լավ այս մնացորդի համար... Թող այն մնա երկրում, որպեսզի այս ժողովուրդն ամբողջությամբ չանհետանա... Գեդալիայի պատճառով մեծ տիրակալը չի փոխելու իր կամքը... Նա մեծապես ձանձրացել է մեզնից և այլևս չի ուզում երբեք լսել մեզ... Թող Երեմիան վաղն իսկ խոսի ժողովրդի հետ և ասի՝ մնացեք երկրում:

Երեմիան, սակայն, ուղղվեց և ծաղրական ու զայրագին կերպով նայեց Բարուքին:

— Դու, շատ հասկացողդ,— ասաց նա՝ գլուխը շարժելով,— դու դեռ չես սովորել... Ինչքան ես հիշեցնում ինձ այն օրը, երբ տաճարում Ահիկամի որդիների հետ ամաչում էիր իմ կրած լծի պատճառով և ցույց էիր տալիս քո սեփական խոհեմության ունայնությունը... Այո՛, հենց դա է, որ

ինձ տարբերում է ձեզնից՝ Ահիկամի որդիներից և քեզնից... Դուք միշտ գիտեիք, թե ինչ է լինելու վաղը... Միայն ես՝ մարգարես, դա չեմ իմացել երբեք... Որպես իմ պատգամաբեր՝ կցանկանայիր արդյոք մի բան հաղորդել, որը ես քեզ չեմ պատվիրել... Այստեղ դու հիմա տեսնում ես դա... Միթե ես պետք է քարոզեմ այս դժբախտներին պատգամի խաբեպատիր խոսքեր պարզապես այն պատճառով, որ ինձ թվում է, թե դրանք ճիշտ են, և ցանկանամ իմ ամբողջ սրտով, որ դրանք կատարվեն... Գնա և պառկիր քնելու... Եվ քանի որ դու ինձ փորձեցիր, ես չեմ ուզում այսօր քնել, այլ աղաչել Տիրոջը, որ ինձ ճիշտ ուղղություն տա...

Տասն օր և տասը գիշեր Երեմիան շատ քիչ սնունդ է ընդունում և գրեթե ամբողջությամբ հաղթահարում է քունը: Պառկում էր մերկ հատակին և աղոթում էր՝ պատասխան ստանալու խնդրանքով, ինչպես խոստացել էր անել: Տերը, սակայն, երկար ժամանակ էր, որ հեռացել էր նրա հոգուց և նրա ծանր ջանքերից: Կարծես թե Նրան հաճելի էր ամբողջությամբ փորձի ենթարկել երկրի վրա իրեն հնազանդ միակ անձի ճշմարտացիությունն ու հնազանդությունը: Միայն այն ժամանակ, երբ Երեմիայի մարմինը փլուզվելու վտանգի առաջ էր, տասներորդ օրվա երեկոյան, հասնում է նրան մի հստակ մրմունջ:

Արևածագին Երեմիան հավաքեց Հովնանին և ողջ ժողովրդին՝ խոսելու համար նրանց Աստծու խոսքը, բայց նախքան այդ հարցրեց.

— Չէիք երդվել ինձ, որ կգործեք Տիրոջ խոսքի համաձայն, անկախ նրանից, եթե այն հաճելի է ձեզ կամ ոչ...

— Այո՛, մենք երդվել ենք, Տերը դրա վկան է,— գոչեցին ոմանք տղամարդկային հավատարմությամբ: Երեմիան նայեց հեռուն՝ ամբիոնից այն կողմ, երբ սկսեց պատգամել.

— Լսե՛ք ձայնը... ով մնացորդ ժողովրդի, եթե դու մնաս երկրում, ասում է Տերը, ես քեզ կվերականգնեմ և չեմ թողնի, որ քանդվես... Մի՛ վախեցեք Բաբելոնից, ումից շատ եք վախենում... Բայց եթե ասում եք՝ մենք չենք ուզում այստեղ ապրել, այլ տեղափոխվել Եգիպտոս, պատերազմ չտեսնել, շեփորի ձայն չլսել, հացի սով չունենալ, ապա այդ դեպքում մի անգամ ևս լսե՛ք ձայնը: Մի՛ տեղափոխվեք Ստրկության տուն... Բայց դուք՝ տղամարդիկդ, մեղք եք գործում ձեր սեփական հոգու դեմ, եթե սկզբում պահանջում եք լսել և հետո չեք լսում...

Այս պարզ խոսքերից հետո ճնշող լռություն տիրեց, որը, սակայն, արագորեն վերածվեց մի խռովահույզ հորձանուտի, քանզի վերջին մի քանի օրերի ընթացքում կշեռքի նժարը հօգուտ Եգիպտոսի էր թեքվել, որի անվերապահ ջատագովն էր Հովնանը: Այս հանգամանքը ծանրորեն վիրավորեց մարգարեին, ինչպես ժամանակին արել էին թագավորները.

— Քեզ հետ դժվար է, Երեմիա,— հանդիմանեց նա,— որովհետև դու երբեք չես ասել այն, ինչ պետք է ասես: Քո Տեր Աստվածը կարծես բոլոր լավ սկիզբների և դատողությունների իսկական հակառակորդն է... Ո՞վ է մեզ հավաստիացնում, որ Բաբելոնը մեզ խաղաղություն է տալիս և վրեժ չի լուծում... Մյուս կողմից՝ քո Տեր Աստծու խո՞սքը... Դա մի խոսք է, որը ձևավորել են քո շուրթերը: Իսկ եթե Բաբելոնը վրեժխնդիր լինի, դու կչքմեղանաս՝ պարզապես ասելով, թե սխալ ես հասկացել, ոչինչ ավելի... Այնուամենայնիվ, Ստրկության երկրում մեզ համար ապահով խաղաղություն կա...

Այդ ընթացքում մի ոմն Ազարիա՝ մեկ այլ խոսնակ ժողովրդի միջից, գոռալով դիմեց Երեմիային.

— Այն, ինչ դու ասում ես, քո Տեր Աստծու խոսքը չէ, ոչ էլ քո խոսքն է, այլ հաստ թշերով ու խռնված մազերով մեկի, ում դու մշտապես քեզ հետ ես քարշ տալիս: Նա է թելադրում ամենը քո ականջին... Ի՞նչ ես կարծում, մի՞թե մենք չգիտենք, թե որն է Բարուքի նպատակը: Նա ատում է մեզ բոլորիս և ուզում է մեզ հանձնել Բաբելոնին...

Երեմիան չմտավ ընդհանուր վիճաբանության մեջ, այլ մնաց իր տեղում կանգնած, առանց բերանը բացելու, որպես թե այդ հարցն իրեն չէր ուղղված: Երբ մարդկանց ցասումը սպառվեց, նա տարօրինակ անտարբերությամբ ասաց.

— Հուդայի մնացորդ, ես չեմ պայքարելու քո դեմ, քանզի դու ոչ թե իմ նկատմամբ ես սխալվում, այլ քո սեփական հոգու... Եթե դուք արդեն որոշել եք... Արեք այն, ինչը ճիշտ է թվում ձեզ... Եվ պատրաստվեք ճանապարհորդության...

Հովնանն իր ձեռքերով ուժեղ բռնեց ու սեղմեց Երեմիային, որպես թե ուզենար բանտարկել նրան:

— Այո՛, մենք արագորեն պատրաստվելու ենք ճանապարհորդության,— բացականչեց նա.– բայց քեզ էլ կտանենք մեզ հետ դեպի ստրկության երկիր, որպես առհավատչյա քո Տեր Աստծու խոստումի...

Երեմիան արհամարհանքով պոկվեց նրա ձեռքից և, չափազանց հոգնած, ասաց.

— Կարիք չկա ինձ ստիպելու, ես ինքնակամ կգնամ ձեզ հետ, ձեր առջևից... Դա իմ առաքելությունն է... Քանզի ուր որ դուք եք, ես էլ պետք է այնտեղ լինեմ... Բայց այնտեղ՝ Եգիպտոսի Տափնաս (Տայանիս) և Նոփ քաղաքներում, դուք կոչնչանաք և կվերածվեք ստորգետնյա աշխարհի ստվերների, որոնք այլևս չեն վերադառնա...

Այս խոսքերից հետո նա շրջվեց՝ թողնելով նրանց շվարած վիճակում: Իր սրտում նա համակվեց մի անծանոթ ու սարսափելի զգացումով, այն, որ Իսրայելի մնացորդը մերժում է Տիրոջ վերջին առաջարկը:

* * *

Երեմիան ու Բարուքը նստում են այն նույն տեղում, որտեղ նրանք հաճախ հանգստանում էին կամ հրաժեշտ տալիս միմյանց: Կարճ բաժանումների հրաժեշտն այժմ վերածվում է մի հավիտենական հրաժեշտի: Նրանց թիկունքում տարածվում էին Անաթովթի բլուրները: Քեղկիայի ագարակից ոչինչ չէր մնացել, բացի շրջապատող հին պարսպի պատից: Այդ առավոտ Երեմիան երկար նայում էր այդ պարսպի քանդված մասին, ասես ուզում էր այնտեղով վեր մագլցել, ինչպես անում էր նախկինում, և թափառել իր ավերված կալվածքի միջով: Այնուհետև, ասես արգելված լիներ նրան, նա արագորեն անցնում է դրա կողքով, առանց նույնիսկ այցելելու ծնողների գերեզմանները:

Աշնանային մեղմ օրվա ոսկեզօծ երանգները ծածկել էին հանգստացողներին: Արևը մոտենում էր կեսօրին: Մանուշակագույն մելամաղձոտ գույնով էին շաղախված կորած երկրի բոլոր ստվերները: Բարուքը գիտեր, որ դա պետք է այդպես լիներ, և ոչ թե այլ կերպ: Նրա ուսուցչիչը վաղուց ասել էր, որ ինքը՝ Երեմիան, կապված պիտի մնա մնացորդաց հետ, թթխմորի և վերջին խլյակի հետ, որ ինքը շուտով նրանց հետ պիտի գնա Ստրկության տուն (Եգիպտոս), որպեսզի այնտեղ գտնի իր վախճանը հավիտյան: Նկատի ունենալով Մասեփայի գործերն ու մարդկանց՝ Երեմիայի և Բարուքի համար ամենադույզն

կասկածն անգամ չկար, որ մնացորդն այն հին անուղղելին է, այն մրուրը, որը մնում է հնոցի հալամանի մեջ: Բաբելոնում մաքրիչ ու զտիչ կայծեր կային, բոցավառվող նորը, որովհետև Տերը քայլում էր աքսորյալների հետ: Երեմիային, սակայն, նա զցել էր խարամի մեջ: Դա նաև նրա ճակատագիրն էր, որ չկարողանար ոտք դնել նորի շեմին և հետ մղվեր սահմանագծից: Իսկ եթե նա խորտակվելու էր մնացորդաց հետ, ապա ինչո՞ւ պիտի իրենց հետ Եգիպտոսում խորտակվեր նաև Բարուքը: Անշուշտ, Բարուքի համար էլ ոչ մի արգելք չկար՝ ուզած ճամփան բռնելու: Այդուհանդերձ, Բաբելոնում գտնվող բանտարկյալների համար անհրաժեշտ էին մարդիկ, ինչպես Բարուքը, քանի որ նա, իբրև Երեմիայի օգնական վայելելով Մարդուկի համակրանքը, կարող էր օգնել ու պատրաստել նրանց, ինչպես ուրիշ ոչ ոք: Դրա համար էլ նրա ուսուցիչը որոշել էր ազատել իր աշակերտին նրա՝ իր հետ լինելու ուխտից և ուղարկել նրան Բաբելոն, որպեսզի նա այնտեղ աշխատի իբրև մի ոսկի ձուլողի հին աշակերտ՝ առանձնացնելու համար ընտիր մետաղն անարգից ու հասարակից: Բարուքը, սակայն, սարսափած էր Երեմիայի մտադրության ու որոշումի դիմաց և ամբողջ սրտով մինչև վերջին ժամ դիմադրում էր, որպեսզի չլքի նրան:

— Ճիշտ է, որ քո աշակերտն եմ,— հակաճառեց նա,— բայց դեռ ինձ քանի՞ տարի է պետք՝ հասնելու քո տարիքին: Հաշվիր դա. վեց կամ յոթ տարի: Ես նույնպես այլևս ընդունակ կամ պատրաստված չեմ նորի համար: Թույլ տուր ինձ միանալ մնացորդաց գաղթին, որ միասին լինենք, ինչպես միշտ...

Երեմիան կնճռոտվեց.

— Անօգուտ է, Բարուք: Ինչո՞ւ չես հրաժարվում ինձ տանջելուց: Ես պետք է իջնեմ Եգիպտոս խառնակության ու շփոթության մեջ, մինչդեռ քեզ հանձնարարված է ամբողջացնել ու ավարտին հասցնել...

— Ավարտին հասցնել,— ծիծաղեց Բարուքը,— ո՞վ եմ ես, որ կարողանամ ավարտին հասցնել այն, ինչը նույնիսկ չեմ էլ սկսել... Երբ հրամայում էիր, ես հնազանդվում էի, երբ ուսուցանում էիր, ես լսում էի, երբ դու թելադրում էիր, ես գրում էի: Այսուհետև ես ո՞ւմ պիտի հնազանդվեմ ու լսեմ, ո՞ւմ համար պիտի գրեմ...

— Քո ականջը միշտ լեցուն պիտի լինի, Բարուք, մինչև քո վախճանը:

Բարուքի դեմքը շիկնեց արյան կարմիր գույնի նման և զսպված ձայնով պոռթկաց.

— Այո՛, հարցը հենց դա է. Բարուքը չի կարող ապրել առանց Երեմիայի...

— Իսկ Երեմիա՞ն,— հարցրեց մյուսը շատ մեղմ և կարմրեց:

Այնուհետև նրանք երկար ժամանակ լուռ էին՝ առանց միմյանց նայելու: Երեմիան առաջինն սկսեց նորից խոսել: Նա մի հարց տվեց, որը սովորաբար տալիս են իրար ծեր ամուսինները.

— Ինչի՞ մասին ես մտածում...

Բարուքի մարմինը սկսեց ճոճվել աղոթող մարդու մարմնի նման.

— Ես մտածում եմ Զատիկի այն գիշերվա մասին,— մրմնջաց նա ցավագին,— երբ ես քեզ էի սպասում տաճարի դարպասի մոտ... Եվ դու երկար ժամանակ չէիր գալիս, քանի որ նրանք քեզ ընտրել էին ոչ միայն պատվաբեր ծառայության համար, այլև որպես վկա Սրբարանում... Բայց ես մրսում էի, որովհետև գիշերային ցուրտ քամի էր փչում... Երբ դուրս եկար դարպասից, իմ մարմնի վրա դրեցիր քո վերարկուն... Դրանից հետո քանի անգամ դրեցիր քո խնամքի վերարկուն ինձ վրա... Եվ պարզ հիշում եմ նաև գրաստի վրա կեսգիշերային մեր զբոսանքը, երբ իր մեծությամբ փայլում էր Աստարտի՝ երկնքի թագուհու աստղը... Հետո ես խոսեցի քեզ հետ այն մասին, թե ինչ եմ սովորել ու կարդացել օրվա ընթացքում, մինչ պարապ սպասում էի... Սամվելի, տղայի և քո նախնի Հեղիի մասին, որը քնում էր իր մահճակալի վրա՝ Սրբարանում... Դեռ հիշում եմ բառերը. «Եվ այդ ժամանակ քիչ մարգարեություն կար...»: Այստեղ, Երեմիա, որտեղ նստել ենք, խրտնեց քո էշը...

Երեմիան, մտածկոտ, ձեռքը դրեց խոտերի վրա.

— Տես, Բարուք, դու պետք է մի շատ հիմնավոր պատճառ ունենաս՝ հիշելու համար այն գիշերը... Այն տղան, որը վազում էր իմ հետևից, իմ նախագնացն էր... Դու, տանվեց տարեկան պատանիդ, այն ժամանակ շատ ավելի բան գիտեիր իմ մասին, քան ես ինքս կարող էի իմանալ... Տերն էր, որ քեզ մղում էր դեպի քո երեց ընկերը... Այսպիսով, դու եղար առաջինը, որ քո անմեղության մեջ, քո հորդորական ոգով ինձ արթնացրիր քո կոչով... Եվ մենք երկուսս էլ չգիտեինք, թե արթնությունն ինչ պիտի բերի մեզ...

Բարուքն իր երկու բռունցքներով ծեծեց կուրծքը և բարձրաձայն դուրս տվեց.

— Վա՜յ ինձ, որովհետև Տերն իմ ցավերի վրա այժմ ավելացել է նաև տխրություն ու տառապանք... Ես ուտում եմ և խմում՝ հոգոց հանելով... Այլևս չեմ գտնի խաղաղություն...

Երեմիան շրջեց իր դեմքը դեպի բաժանումի ցավից ընկճված աշակերտը և սևեռուն նայեց նրան՝ նախքան դանդաղ կերպով խոսելը.

— Այսպես է ասում Տերը. Ահավասիկ Ես ինքս քանդում եմ այն ամենը, ինչը Ես շինել եմ, և արմատախիլ եմ անում, ինչ որ տնկել եմ ամբողջ երկրում: Այս երկիրը ծննդաբերող մի կին է իր ծննդաբերման անկողնում, որը ծնում է մահվան համար... Եվ դու ի՞նչ ես քեզ համար մեծ բաներ պահանջում: Թող քեզ համար բավարար լինի այն, որ Տերը տալիս է քեզ քո կյանքը՝ իբրև ավար, քանզի, ըստ խոստացվածի, քո կյանքն իբրև ավար պիտի ունենաս բոլոր տեղերում, ուր էլ որ գնաս...

— Ես չեմ ուզում այդ ավարը,— գոչեց Բարուքը զայրույթով՝ հաղթահարելով իր լացը:

Դրա վրա Երեմիան այլևս պատասխան չտվեց, այլ իր ձեռքը ծանրորեն դրեց Բարուքի ծնկներին, մինչև որ հասավ մեկնումի պահը: Նա դանդաղ վեր կացավ՝ քայլելու դեպի տապալված դուստրը Սիոնի և դեպի փլատակները տաճարի, վերջին անգամ, նախքան իր մեկնումը դեպի Եգիպտոս: Բարուքի ճանապարհը, սակայն, Ռամայի վրայով տանում էր հակառակ ուղղությամբ: Երկու սպիտակահեր մտերիմները կարճ ողջագուրվեցին: Որպեսզի հրաժեշտի ծանր ազդեցությունը չխորտակի իր ողջամտությունը՝ Երեմիան ձևացնում էր, թե հավատում է մի բանի, ինչին իրականում ինքն էլ չէր հավատում.

— Ո՞վ գիտե, գուցե Աստծուն հաճելի լինի, որ մենք իրար կրկին հանդիպենք...

— Ո՞վ գիտե,— կոշտ շշնջաց Բարուքը՝ ամաչելով հրաժեշտի հետևանքով առաջացած հուզմունքից:

Այնուհետև նրանք բաժանվեցին միմյանցից՝ առանց մի անգամ էլ հետ դառնալու և իրար նայելու:

ԳԼՈՒԽ ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ

ՏԱՃԱՐԸ

Դեռ կանգուն էին Երուսաղեմի պարիսպները՝ Եփրեմի և Բենիամինի արտաքին սահմաններին չհասած: Գրավումից անմիջապես հետո վերջիններիս պարիսպները կործանվել էին: Այնուամենայնիվ, Բաբելոնը չէր աճապարում զետնին հավասարեցնել նաև սրբազան քաղաքն ու նրա պարիսպները: Նախևառաջ պետք է փտեին բոլոր սպանվածների և համաճարակից մեռածների մարմինները, որոնք ընկած էին փողոցներում և տներում: Պետք է չորանային նրանց ոսկորները, որպեսզի ժանտախտը չտարածվեր: Մինչ այդ, երկրի ողջ երկնքով մեկ թռչունները խայտում էին երամներով, ինչպես շարժվող ամպեր: Նրանք կուտակվում էին Սիոնի վրա: Երկնքի թռչուններին կատաղի մրցակից էին դաշտի կենդանիներն ու անապատի գազանները: Մարդուկ–Նաբուգոդոնոսորի՝ անգործության մատնված զավթողական բանակը, որը տեղակայվել էր պարիսպներից պատշաճ և զգուշավոր հեռավորության վրա, լուսաններին, աղվեսներին, գայլերին, շնագայլերին և բորենիներին թույլ էր տալիս հանգիստ կատարել իրենց մաքրողական աշխատանքը: Նոր միայն, երբ մեռածները չորանային ու անվնաս դառնային, կսկսվեր կործանման վերջնական աշխատանքը:

Խոժոռ դեմքով և վատ տրամադրությամբ մի սպա՝ մի տարեց մարդ, նշանակվել էր նվաճողական բանակի հրամանատար: Նա չափազանց դժգոհ էր իր կատարած այդ քիչ պատվաբեր պահակային ծառայությունից, և այն էլ՝ ապականության այդ վայրում: Իր պաշտոնատեղին հաստատել էր աղբյուրի դարպասի դիմաց՝ թագավորական պարտեզներում գտնվող մի հանգստի տանը: Այնտեղ բոլորը, որոնք ինչ–ինչ պատճառներով ցանկանում էին մտնել ավերված քաղաքը, պետք է ներկայանային

նրան: Հրամանատարը նստում էր հանգստի տան առջև՝ միշտ զրահավորված և սաղավարտը գլխին, և, հավանաբար անտրամադիր լինելով, մերժում էր քաղաք մտնելու բոլորի ցանկությունը՝ առանց բացառության և բոլոր դեպքերում, նույնիսկ եթե նա լիներ իր հոր դիակը փնտրող հարազատ որդին: Ոչ ոք չպետք է մտներ Երուսաղեմ: Նրա քարերն այլևս չէին պատկանում հենց իրեն՝ քաղաքին, և ոչ էլ քշված ժողովրդին, այլ Բաբելոնին: Բաբելոնը, սակայն, ենթադրում էր, որ դեռ շատ մեծ գանձեր կան թաքնված այնտեղ: Քաղաքի անկումից հետո քսանութ օր շարունակ խուզարկում են ամենուրեք, քանզի Հակոբի Աստվածն ու Նրա հպատակները համարվում էին շատ հարուստ: Տաճարի լեռան բոլոր անկյունները փորվում են, այնտեղ փնտրում են ոսկի ու թանկարժեք քարեր: Նույնն անում են նաև քաղաքի մյուս բլուրներում, որոնցում խարսխված էին Սիոնի հիմքերը: Նոր միայն դրանից հետո յոթանասուն տարբեր թաղամասերում միաժամանակ հրդեհներ են բռնկվում: Քաղաքը, սակայն, մեծ էր, իսկ կրակն իր առաջին ախորժակը հագեցնելուց հետո հարատևում է համառությամբ, բայց այլևս չափավոր կերպով: Նույնիսկ այդժամ, այդքան օրեր անց, դեռ այն փայլում է ամենուր: Այստեղ և այնտեղ հանկարծակի բարձրանում է մի բոց: Ծխի խիտ ամպերը շարունակում են կուտակված մնալ տաճարի տարածքի վրա:

Բանակի հրամանատարը չմերժեց Երեմիայի խնդրանքը: Երեք տարի շարունակ նա պաշարել էր այդ քաղաքը, ճանաչում էր այդ քաղաքի Աստծու հռչակավոր մարդուն և գիտեր, որ Մարդուկը նրան գերադասում է այդտեղի անվստահելի ժողովրդի բոլոր մարդկանցից: Այդ իսկ պատճառով վատ տրամադրության մեջ գտնվող հրամանատարը նույնիսկ որոշեց Աստծու մարդու խաղաղության ողջույնին սիրալիր արձագանքել.

— Ինչ ես ուզում, ինչ ես փնտրում տաճարում,— հարցրեց նա թաքնված կասկածանքով:

— Պատասխան,— հանգիստ ասաց Երեմիան: Հրամանատարն այդ երկվանկ բառից ոչինչ չկարողացավ գուշակել, բայց այն, ինչը նրան հանգստացնում էր, դա Աստծու մարդու դրսևորած մտադրությունն էր, որը, ինչպես այդ տեսակ բոլոր խելագարները, կարծես թե չէր հետապնդում իրեր, այլ միայն խոսքեր, դրա համար էլ նա վտանգ չէր

ներկայացնում: Հրամանատարը նշան արեց պահակներին՝ ազատ թողնել նրան: Նրա առջև բաց էր ճանապարհը:

Առաջին ցնցումը, որ զգաց Երեմիան, արքայական գերեզմանների պղծումն էր: Նա ծածկեց իր գլուխը և արագ անցավ պղծությունների կողքով: Մահացածների մերկ ոսկորների տեսարանը ոչ պակաս ամոթալի էր, քան ցուցադրվող ամոթույքն ինքնին, որովհետև երկու դեպքերում էլ անպաշտպան կերպով ցուցադրվում է այն, ինչը պետք է ծածկված մնա: Դավթի օրերից ի վեր լավ կամ վատ եղանակով իշխած թագավորների գանգերն ու ոսկորները նետված էին խառնիխուռն:

Անցնելով դարպասի միջով, երբ նա առաջին քայլն արեց քաղաքում, ժանտախտի հեղձուցիչ հոտը կպավ նրան, որը գալիս էր Երուսաղեմից և տարածվում երկրով մեկ՝ առաջացած փտած մսից և ածխացած ավերակներից ու աղբերից: Բարձրադիր Սիոնը, որը լի էր ուրախությամբ, վերածվել էր գարշահոտության մի փոսի: Այո՛, Դո՛ւ ես շպրտել գարշահոտության ու կեղտի փոսում ծիրանազգեստ դստերը, որը պաճուճված էր գեղեցկորեն, շռայլությամբ, հոնքերը ներկած ու եղունգները ոսկեզօծ: Անհավատալի՜, աներևակայելի՜: Ի՞նչ են գիշերային տեսիլքները, նույնիսկ դրանց ամենասարսափելիները, համեմատությամբ լուսեղեն հետմիջօրեի այդ տեսարանին:

Առանց կանգ առնելու Երեմիան շարունակեց իր բռնած ճամփան, որն իր ճամփաներից ամենադժվարն ու հոգնեցուցիչն էր: Դժվար ոչ միայն իր հոգու համար, այլև իր ոտքերի: Ինչպե՞ս կարելի էր արագ առաջ գնալ այդ փլուզվող ավերակների ու քարակույտերի միջով, որոնք խցանում էին բոլոր փողոցները և դարձնում անճանաչելի: Դաժան անեծքի նման մի բան էր այն, որ հրամանատարը բաց էր թողել միայն այդ մեկ ճանապարհը՝ ստիպելով Երեմիային անցնել ողջ քաղաքի միջով՝ հարավից սկսած, հասնելու մինչև ամրոց և տաճար: Այսպիսով ամենաչնչին մանրամասնությունն անգամ աննկատ չէր մնում: Մի տեղ պետք է բարձրանար մի հարկի չափ, մի այլ տեղ պետք է սողալով անցներ քարանձավի միջով, որը կազմված էր փլատակների բեկորներից, որպեսզի կարողանար շարունակել ծառուղին, որն այլևս նույնը չէր: Ամեն քայլափոխի ոտքը սայթաքում էր, երբեմն այն մնում էր զուգահեռ քարերի միջև, որոնց շուրջը թունավոր կանաչություն էր աճել, ինչպես մի նեխած

ճահճի մեջ է լինում: Երբեմն քայլում էր մի ինչ–որ փափուկ ու սահուն բանի վրայով, ապա ցնցվում էր և առաջանում, որպես թե կայծակնահար եղած լիներ ողջ էությամբ: Ռաքելի որդիները՝ խեղված ու կորամեջք, փռված էին ավերակների մեջ: Նրանցից յուրաքանչյուրը մի անառարկելի հարց էր՝ ուղղված Եհովայի անորոշությանը: Երեմիան ներառում է այդ բոլոր հարցերը յուրայինների մեջ: Անգղները՝ կարմրավուն, երկար ու փետրազուրկ պարանոցներով, միայն փոքր չափով էին խանգարվում նրա քայլվածքից: Նրանք մի քիչ հեռու էին ցատկում և ապա կրկին վերադառնում իրենց առաջվա տեղը: Երբեմն երևում էր մի գիրուկ բորենու գավակը, որը կայծակի արագությամբ անհետանում էր պարիսպների հետևում, ինչպես մի անպարկեշտ մտածում: Դատաստանի այդ օրը շատ տների համար անակնկալ կերպով էր վրա հասել: Դրա ապացույցն այն էր, որ շատերի նահապետական սեղանին դեռ մնում էին բաժակներն ու ամանները՝ քարացած սարսափի մտերմության մեջ: Միայն աթոռներն էին գետնին ընկած՝ մարդկանց անհաջող փախուստի ընթացքում:

Ի վերջո Երեմիան հաղթահարում է ստորին քաղաքի մասը և հայտնվում ամրոցի հարավային դարպասի առջև: Այստեղ արագորեն բերված Բաբելոնի հրետանին հսկայական ճեղքեր էր պատճառել պարիսպների վրա և ավերել դարպասի թևերը: Ամենուրեք երևում էին վերջին ճակատամարտի հետքերը, որն արքայական թիկնազորը ներքին շրջաններում մղել էր ներխուժողների դեմ: Ամենուրեք կուտակված էին նիզակներ, տեգեր, նետերի կապարճներ, սլաքներ, բաբաններ, պարսատիկներ, իսկ սպիտակ սալահատակը ծածկված էր չորացած արյան սև հետքերով: Երեմիան քայլում էր ամրոցի դարպասի միջով: Փլատակ տան՝ Լիբանանից բերված հազարամյա գերանները դեռ բոցկլտում էին ու ծխում: Դատարանի դահլիճն ու գահասրահը, պաշտոնատեղիները, բնակելի պալատները, կանանց տունը, հարակից շինությունները, ախոռները, պահեստները, պահակատեղիները, աշտարակները կողք կողքի ընկած ծխում էին: Իր գերության պահակատան բակում Երեմիան իր հանգստացած հայացքը պտտում է չորս կողմը: Ինչքա՜ն փոքր էր այդ ամբողջն ավերակ վիճակում, ինչն իր համար ժամանակին այնքան մեծ էր թվացել, երբ դեռ կանգուն էր: Յուրաքանչյուր քանդված կամ

ավերակ տուն, նույնիսկ եթե դա Մարդուկի պալատը եղած լիներ, իր ոչնչության մեջ ավելի սարսափելի էր, քան գերեզմանը: Դա ցույց է տալիս, թե մարդ որքան քիչ տարածք, որքան քիչ «տեղի» կարիք ունի՝ ծածկելու համար իր կյանքի բոլոր ալեկոծումներն ու իշխելու տենչերը:

Երեմիան հանկարծ զայրանում է ինքն իր վրա նրա համար, որ ինքը խոստացել էր Բարուքին, որպես այս անցավոր երկրի վրա բարձրագույն խոստում, որ նրան կտրվի կյանքը՝ «իբրև ավար»: Այժմ նա հասկանում էր իր աշակերտին, որը կոպտորեն մերժել էր այդ խոսքը: Ոհ, ինչ թշվառ խոստում, ոչ մի այլ բան չունենալու համար՝ իբրև ավար, քան այս կյանքն ինքնին, թույլ տալ քարշ գալ օրեր կամ տարիներ շարունակ անսահման գարշահոտության մեջ, մեծ ծառայություններ մատուցելուց հետո, այդքան մեծ դժվարություններից և ապարդյուն ջանքերից հետո: Ավերված ամրոցի մեջտեղում Երեմիան փորձեց մի խոսակցություն հաստատել Եհովայի հետ «ծառայության» մասին.

— Ճշմարիտ է, որ Դու ինձ օգտագործել ես ծառայության համար, առանց արձակուրդի: Դրա համար, Տեր, ես քո դեմ ոխ չեմ պահում, քանի որ ես քո ծառան էի: Չկարծես, թե ես կրկին ապարդյուն ու անօգուտ վիճաբանությունների մեջ պիտի ընկնեմ, ինչպես հին ժամանակներում: Բոլոր մարտահրավերները հաղթահարված են, և ես առանց որևէ խոսք ասելու վերցնում եմ ու տալիս այն, ինչը Դու ես տալիս ու վերցնում: Ես հաղթահարել եմ իմ կամքի մեծագույն ցանկությունը, որի արդյունքում ես չեմ գնում Բաբելոն ապրողների հետ, այլ գնում եմ Եգիպտոս մեռնողների հետ, քանզի Դու ես այն պատվիրում: Մի բան, սակայն, չեմ հասկանում, ով Տեր, դա այն սերն է, որ կա Քո մեջ: Մեզ պատվիրել ես քո ուսմունքի մեջ արդար լինել բոլոր աշխատավորների նկատմամբ: Սակայն Դու ինձ հետ վարվեցիր այնպիսի խստությամբ, ինչպես վարվում են Իսրայելում իրենց օրինազանց ստրուկների հետ: Ներիր ինձ, Տեր, եթե ես իմ ներսում հիմար բաներ եմ խոսում քեզ հետ: Այնուամենայնիվ, դրանք դուրս չեն գալիս իմ շուրթերից: Ես չեմ բողոքում, որ ինձ անխնա օգտագործել ես և ուղարկել՝ ասելով. «Գնա այստեղ, գնա այնտեղ, ասա այս, ասա մյուսը»: Գնացել եմ և խոսել, ինչը պատճառ է եղել ինձ կալանավորելու և տանջանքների ենթարկելու: Կցանկանայի հազար անգամ անել նույնը և տառապել, եթե դա միայն մի փոքր արդյունք տար: Մարմինը, որ

Դու ես ստեղծել, չի կարող գոյատևել առանց սննդի: Հոգին, սակայն, որ Դու ես ստեղծել, չի կարող գոյատևել առանց վարձատրության, բայց Դու ի սկզբանե սնուցիր իմ հոգին դատարկությամբ: Եվ հիմա դատաստանի օրն այստեղ է, հիմա Դու ինձ ոչինչ չես տալիս, քան իմ մերկ կյանքը՝ որպես ավար ինձ համար, բայց սա չի կարող լինել իմ վարձը, որովհետև սա ավելի վատ է, քան ոչինչ չտալը: Հաճախ ինձ՝ քո ծառային, օգտագործել ես քո ծառայության համար, որի ընթացքում խոսել ես ինձ հետ քո ձայնով պարզ ու հասկանալի կերպով: Սակայն ես՝ Երեմիաս, տկարս և կարիքավորս, երբ քո կարիքն ունեցա և քեզ փնտրեցի, Դու վանեցիր իմ սերը և չընդունեցիր իմ մտերմությունը: Լսո՞ւմ ես ինձ, Տեր, ինձ, որ այստեղ եմ և այս ավերվածության միջից աղաղակում եմ քեզ: Հանուն մի պատասխանի, հանուն քո սիրո մի նշանի՝ աղաղակում եմ քեզ, այս ահեղ դատաստանից ու պատուհասներից հետո, որոնք բերեցիր կենդանի մարդկանց գլխին, որոնք ստեղծվել էին առանց իրենց կամքի: Հիմա ես ինքս ինձ կհավաքեմ, Տեր, և վերջին անգամ կմտնեմ քո ավերված ու պղծված օթևանը, նախքան Արևմուտքի երկիր՝ Եգիպտոս իջնելս: Տեր, ով Տեր, երբ մտնեմ քո անարգված ու կործանված տունը, երբ ոտք դնեմ քո Սրբություն Սրբոց Սրբարանից ներս, ինչպես քահանայապետն էր անում, այն ժամանակ տուր ինձ իմ վարձը, այն ժամանակ Դու էլ եղիր այնտեղ և ցույց տուր քեզ...

Քանի դեռ կանգուն էր տաճարը, ոչ ոք երբևէ մենակ չէր մտել նրա տարածքը: Երեմիան առաջին անձն էր, որ մտնում էր Տիրոջ տունը, արդեն ավերակ վիճակում, առանց որևէ մեկի ընկերակցության:

Անհրաժեշտ է, որ նա, ով իբրև քահանա մտնում է այս տունը, մեծ քաջություն ունենա, որովհետև իր շուրջը եղած ավերածությունների սարսափելի մենության մեջ վախը շնչահեղձ կանի նրան: Երեմիայի սիրտը բաբախում է ուժգին, երբ ոտք է դնում այն աստիճանների վրա, որոնք տանում են դեպի այն օթևանները, որոնք շրջապատում են սրբավայրը: Նա այդ պահին մոռանում է ամեն ինչ: Նա մոռանում է տեղի սրբապղծումը: Նա մոռանում է, որ իր համար տաճարը երկար ժամանակ նշանակություն չի ունեցել: Նա մոռանում է նույնիսկ իր աննահանջ կամքը՝ պատասխան ստանալու, որն ավելին է, քան տեսիլքն ու մրմունջը: Առաջին հերթին նա տեսնում է Սրբարանը: Մայր մտնող արևի երեք ճառագայթ

ածխացած գերանների կմախքի միջով թափանցում է և լուսավորում սովորական ու բարձր տանիքով մի սենյակ՝ մերկ պատերով, քարե ողորկ հատակով, որտեղից հանված էին *սանդալի* փայտից պատրաստված սեղանները: Դա նման էր քառակուսի գորշ քարերով բարձրակառույց մի ամայի շտեմարանի: Գողացված էին աշտանակը, խնկածխության ոսկյա խորանը, սրբազան հացի սեղանը, ինչպես նաև հիանալի կերպով հյուսված բազմագույն վարագույրը: Դատարկ էին ու բաց դեպի Սրբություն Սրբոց առաջնորդող դռան շրջանակները...

Երեմիան երկմտանքով առաջանում է, ձեռքները դողում են: Ըստ ծիսակարգի՝ նա պետք է ծածկեր իր գլուխը, բայց դա չի անում, այլ ծանր շնչելով անցնում է քանդված շեմը: Սրբություն Սրբոցում այլևս առաջվա նման չի իշխում նախաստեղծման խավարը: Բարձր առաստաղի այրվող ու մխացող հենագերանների բացվածքների միջով ներս է թափանցում սպառվող օրվա լույսը, թեև ոչ այնքան առատությամբ: Այդուհանդերձ, սկզբնական խավարը, որն այդքան ժամանակ այդտեղ էր, ամբողջությամբ չէր անհետացել, այլ պարզապես մի քիչ լուսավորվել էր և վերածվել մի սարսափազդու ու խորը մթնշաղի: Այդ մթնշաղի սրտում, սակայն, այլևս ոչինչ չկա: Չկա Իսրայելին պատկանող ամենավսեմ, միակ և ամենից շոշափելի սրբավայրը, ինչպես նաև Սինայի պատվիրանները պարունակող Տապանակը, որի վրա ծնկի էին գալիս թևերը տարածած երկու քերովբեներ. այն կորել էր առանց հետքի: Սրբարանի ամենից ներքին մասը դատարկվել էր ամբողջությամբ, ինչպես սիրտը կործանված ժողովրդի: Տարօրինակ կերպով հատակին չկար ոչ մի ածխացած կամ մխացող փայտի կտոր: Երեմիան արդեն ցանկանում էր հետ դառնալ, երբ հանկարծ ցնցվում է այն աստիճան, որ մնում է տեղում անշարժ: Մի՞թե ինքը քահանայապետը չէ այդ համատարած ավերածության մեջ: Մի՞թե ինքն այդտեղ՝ Սրբություն Սրբոցում, կանգնած չէ երկու «Սոսկալի օրերի» միջև ընկած ժամանակահատվածում՝ դատաստանի և հաշտեցման: Այնուհետև Երեմիան դանդաղորեն ծածկում է գլուխը՝ կատարելու այն, ինչ անում էր այդտեղ քահանայապետը տարին մեկ անգամ՝ ծածկած գլխով ու դողացող ձայնով: Նա բացում է բերանը և բարձրաձայն հնչեցնում Աստծու իրական, ճշմարիտ և անարտասանելի անունը, որն աշխարհում արգելված է կրկնել.

— Ե Հ Վ Հ[17] –

Ե. Սա է ստեղծագործող ձեռքը:

Հ. Սա է սկզբնական լույսը, որից բխում է ամեն ինչ:

Վ. Սրանք կապող բազուկներն են ժամանակի և տարածության:

Հ. Սա վերջավորության լույսն է, որտեղ վերադառնում է ամեն ինչ:

Երեմիան ջերմեռանդորեն արտասանում է այդ չորս կարճ հնչյունները: Կյանքում առաջին անգամը լինելով՝ նրա շրթունքները կազմում են այն Անունը, որի ահավոր իսկությունը ոչ մի հոգի չի կարող քննարկել ու հասկանալ: Նա բացում է իր դեմքը, ուժասպառ էր և շնչակտուր, ինչպես երկարատև վազքից հետո: Մխացող հենագերանների բացվածքներից ներթափանցող լույսը մթնշաղի մեջ դարձել էր ծիրանագույն կարմիր: Սենյակը զգալիորեն փոխակերպված էր: Երեմիան նայում է շուրջը երկյուղալից: Չգիտեր, թե որն է այդ զգալի փոփոխությունը: Ինչ-որ ուշագրավ բան էր ընկած գետնին, որը ձեռքի ափից ավելի մեծ չէր և աղոտ փայլում էր: Երեմիան խոնարհվում է՝ վերցնելու այն. դա քարի մի բեկոր էր: Սկզբում նա կարծում է, որ իր ձեռքին քանդված պատի մի կտոր է, բայց շուտով զգում է, թե ինչպես տարօրինակ կերպով այդ փայլող բեկորն այրում է իր մաշկը: Այդժամ անդրադառնում է, որ Բաբելոնի մարդիկ կոտրել են Սինայի քարե տախտակները, որոնց վրա Տերն անձամբ արձանագրել էր իր պատվիրանները: Այժմ Տերը նրան ուղարկում է անհայտ կորած քարե տախտակներից մի բեկոր՝ «պատասխանը»:

Երեմիան ապշահար թողնում է Սրբություն Սրբոց Սրբարանը, շեմն ու քահանայական գավիթը: Նա կանգ է առնում ճեմասրահի արտաքին աստիճանների վրա՝ մի սյունի դիմաց, մինչ ամեն ինչ նրա շուրջը պտտվում էր: Քարե բեկորը նա մոտեցնում է իր աչքերին, որոնք դեռևս ոչինչ չեն կարողանում զանազանել ու հասկանալ: Բազալտի վրա խորը փորագրված հնագույն նշանագրերը երկար ժամանակ են պահանջում բացահայտվելու համար: Մայր մտնող արևի կարմիր շողերը տարածվում են ուժեղ կերպով: Աստվածային քարե տախտակների հիշյալ բեկորը ծածկված էր տառերով, որոնք կտրված էին իրենց հարակից տառերից ու

[17] ԵՀՎՀ: Եբրայեցերենում սրանք Աստծո անվան սրբազան ու խորհրդավոր տառերն են (Tetragramaton), ըստ հրեական կանոնի պարզ մահկանացուներին արգելվում է արտասանել այս տառերով կազմված անունը՝ Եահվե կամ Յահվե:

համատեքստից: Նրանց միջից, սակայն, առանձնանում էր ակնկալվող պարզ ու հստակ պատասխանը, ինչը շատ ավելին էր, քան տեսիլքն ու մրմունջը.

— Որպեսզի դու կյանք ունենաս...

Երեմիան սարսափում է: Արդյոք Տերը նույն պատասխանն է տալիս իրեն, ինչ որ ինքը տվել էր Բարուքին... Արդյոք ինքն էլ պետք է մխիթարվի նրանով, որ այժմ համատարած ոչնչացման միջից կյանքը տրվել է իրեն՝ իբրև ավար: Նրա բռունցքը ջղագրգիռ կերպով սեղմվում է բեկորի շուրջը: Տերը, սակայն, այլևս չի թողնում, որ իր ընտրյալը երկար տառապի, այլ իր պատասխանին ավելացնում է մի այնպիսի փառավոր լուսավորություն, ինչպիսին երբեք չէր զգացել Երեմիայի հոգին:

— Որպեսզի դու կյանք ունենաս... Դա չի նշանակում, որ դու մի քանի տարի ավելի երկար պիտի ապրես: Դրա իմաստն է. այս բանն արել եմ քեզ համար, որպեսզի դու դրանով հաղթես մահը: Որպեսզի Իսրայելը հաղթահարի դատաստանն ու մահը, Ես սահմանել եմ այն: Իմ ձեռքից միայն կյանք է բխում: Ինչպե՞ս կարող ես դու, որ առաջացել ես իմ ձեռքից, մեռնել և ապարդյուն ապրած լինել: Իբրև մաղ եմ ստեղծել դատաստանն ու մահը, քանզի դուք մահվան մեջ ավելի ու ավելի կենդանի պիտի լինեք, իսկ դատաստանի մեջ՝ էլ ավելի մաքրված: Դու կանչել ես իմ անունը, իսկ Ես պատասխանում եմ քեզ՝ ամրապնդելով քո սրտի մեջ գոյատևելու ստուգությունը, քանզի քո ժամանակն արմատավորված է իմ ժամանակի մեջ: Շուրջդ մի՛ նայիր՝ այս սարսափին: Նայիր այն նշանին, որ Ես այսօր այս սարսափի միջից ուղարկում եմ քեզ. «Որպեսզի դու ապրես»: Որպեսզի դու իմը լինես, իսկ Ես՝ քոնը, այդ իսկ պատճառով դու տառապել ես: Քո հաղթանակը պարտությունից պարտություն է աճում: «Որպեսզի դու կյանք ունենաս», դու ի վիճակի չես սպառել խոստումը...

Հավիտենականությունից դեպի հավիտենականություն ձգվող աստվածային այս գործելակերպի գիտակցությունը պարփակված չէր ձայնի և խոսքի մեջ: Դա մի հանկարծակի գիտակցություն էր, մի անճառելի ընկալում՝ վերջնական հաղթանակի, որն ուրախությամբ շփոթեցնում էր սյան դիմաց կանգնած մարդու խոհերը:

Երեմիան քարե տախտակի բեկորը թաքցնում է իր ծոցում: Նա իջնելու էր Եգիպտոս և իր հետ էր տանելու հավիտենական խոսքը. «Որպեսզի



«Երեմիան քարի բեկորը ձեռքին»

դու կյանք ունենաս»: Նրա սրտի մոտ այդ բեկորն այրվում էր լափող կրակով, բայց այնքա՜ն հրաշալի, այնքա՜ն երանավետ, որ ինքն էլ կցանկանար հաճույքով դրա հետ մեկտեղ այրվել: Նրա աչքերը հորդում են ցնծությամբ: Իր կյանքի ոչ մի ոգևորության և զմայլանքի ընթացքում նա ճշմարտապես մոտ չի եղել Աստծու ուրախությանը: Նա զգում է, որ այժմ առաջին և միակ անգամն է, որ ինքը ճշմարտապես այդքան մոտ է այդ ուրախությանը: Դեռևս շողում էին արևի շլացնող ճառագայթները: Երեմիան ձեռքը դնում է աչքերի առաջ, որպեսզի պաշտպանի իրեն հորդառատ լույսից, որը ողողում էր ամեն ինչ: Իր դաստակի շուրջը նա դեռ շարունակում էր կրել երիզով կապված այն օրինությունը, որը մայրը նվիրել էր իրեն: Արդյոք դա տեղի է ունեցել այսո՞ր, կամ անհիշելի ժամանակներ առա՞ջ...

ՎԵՐՔԱԲԱՆ

ՏԱՃԱՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

Incipit vita nova[18]

Արդը, որ իր թևի ժամացույցը պահում է իր աչքերին շատ մոտ, տեսնում է, որ այն դեռ շարունակում է ցույց տալ երեկոյան ժամը հինգ անց երեսունյոթ րոպեն, և ոչ իսկ մեկ րոպե ավելի: Արևը գնալով խոնարհվում էր և իր ծիրանագույն շողերի մեջ էր առնում Օմարի մզկիթի գմբեթը:

— Ձիվս, ինչո՞ւ եք ամբողջ ժամանակ սևեռված նայում ձեր ժամացույցին,— հարցրեց կանացի մի ձայն այնպիսի մի տոնով, որն իր մեջ խտացնում էր մտահոգություն և ջերմություն: Նոր միայն կարճատես Ջլեյթոն Ձիվսն անդրադարձավ, որ ինքն ընկնելու վախից հանել էր իր ակնոցը և պահել ձեռքում: Դրեց այն իր աչքերին և անմիջապես ուրիշ տեսք ստացավ: Ազնվաշուք մուսուլմաններ աստիճաններով վեր էին բարձրանում ու քայլում սյուների նրբաքանդակ կամարի մոտով, որի առաջ Ձիվսն ու Դորոթի Քովելն իրար մոտիկ էին կանգնած: Կինը գունատ էր, մինչդեռ տղամարդու դեմքը վայրկյան առ վայրկյան ավելի էր կարմրում:

Եղանակը ցրտել էր: Դորոթին հայտնապես սառչում էր իր բարակ հագուստի մեջ: Անհանդարտ, բայց նախանձախնդիր հնազանդությամբ նա կրկնում էր Ձիվսի՝ տեղանքի մասին տված բացատրության վերջին խոսքերը, երբ վերջինս ակնոցը դեռևս չէր հանել և հայացքը խելագարի նման չէր սևեռել ժամացույցի վրա.

---

[18] Լատ.՝ Սկսվում է մի նոր կյանք:

— Այստեղ՝ վերևում, արևմուտքից արևելք էր երկարում Սողոմոնի տաճարը, հետագայում Հերովդեսի տաճարը, ուր քարոզել էր Քրիստոսը... Ինչո՞ւ ընդհատեցիք... Լսում եմ, շարունակեք...

Ձիվսը բարեհաճությամբ երկար նայեց իր ուղեկցուհուն, ապա խոր շունչ քաշելով ասաց.

— Ո՛չ, գնանք արդեն:

Նրանք անխոս հատեցին անցան տաճարի ընդարձակ հրապարակը՝ *Հարամ ալ–Շարիֆը*: Հաջորդ օրը սկսվելու էր մուսուլմանների Զատիկը[19]: Սրբավայրում գունազարդ զգեստներ հագած կերպարանքների եռուզեռ կար: Ձիվսը նրանց վրա ուշադրություն չէր դարձնում, այլ գնում էր առաջ՝ մի քիչ կորացած մարմնով, արագ և փոքր-ինչ երերուն քայլերով: Առաջին հերթին նրան պարզ դարձավ, որ նոպան, որի մտաբերումով ինքը ժամեր շարունակ տանջալից կերպով ահաբեկվել էր, տեղի չի ունեցել: «Բացակայությունը», որ ինքը բոպեներ առաջ ապրել է, սեփական ես–ի և անհատականության իր իմացած այն սարսափելի կորուստը չէր, այլ ինչ–որ նոր, վսեմ և հոյակապ բան: Համոզված էր, որ հենց այդ նորն է, որ հաղթահարել էր հիվանդությունը, կարգի բերել իր ներքին անկարգությունը՝ անծանոթ մի բժշկության ճանապարհով: Հանկարծ վերհիշեց այն ուշագնացությունը, որ իր հետ մանկության ժամանակ պատահել էր, երբ ինքն առաջին անգամ ծովն էր տեսել, Աստծու այդ պատը՝ բարձրացած դեպի երկինք: Հիմա արդեն գրեթե վստահ է, որ այդ հիվանդությունն այլևս ոչ մի անգամ չի պատուհասելու իրեն, որ իր մեջ Լեոնորայի մահվանը հաջորդող ամիսներին բավարար ուժ է կուտակվել՝ դիմադրելու խավարային բոլոր գրոհներին և դրանք աշխատանքի վերածելու: Աչքերի անկյուններում նա զարմանքով նկատեց սառած արցունքներն այն էքստազի, որն իր հետ պատահել էր նոպայի փոխարեն, երբ ինքը դրանից առաջ իր հայացքը սևեռել էր ժամացույցին: Այն, ինչ որ ինքն արդեն վաղուց չէր ակնկալում, նորից շնորհվել էր իրեն. դա հոգեկան լիության երջանիկ զգացումն էր, հաճույքն անիմանալի կերպով լարված նյարդների, հաճույքը մի կայծակում պարփակված հարյուրավոր

[19] Մուսուլմանների համար դա կենդանիների զոհաբերման սրբազան տոնն է, որով ավարտվում է նրանց ծոմի ու պահեցողության ամիսը:

կերպարանքների, դեպքերի, գաղափարների: Այն, որը ոչ մի համադրություն, ոչ մի ջանք կամ խելամտություն չէին կարող ձեռք բերել, հիմա ինքը գիտեր անկորնչելի կերպով և իր մեջ համախմբված: Նա սկսում է տենդագին խորհրդածել այդ լիության մասին...

Նրանք, անցնելով այունաշար գավիթի և ելքի դարպասի միջով՝ հասել էին աստիճաններին, որոնք առաջնորդում էին ներքև՝ դեպի հին քաղաք: Դորոթի Քովելը կանգ առավ, դիպավ Քլեյթոնի ձեռքին, որը վերստին ջերմություն էր հաղորդում, ինչպես նրա առույգ ու երիտասարդացած դեմքը: Ապա որոշեց հարցնել նրան.

— Իսկապես շատ էի վախեցել, Ջիվս... Ինչ էր դա, որ քիչ առաջ պատահեց ձեզ հետ, արդյոք հիվանդ եք...

— Ես ինքս էլ նույնն եմ մտածել, Դորոթի:— Այնուհետև մտավ նրա թևը և ոչ առանց անհամբերության, ստիպեց նրան քայլել առաջ:– Ես վախեցա, որ ձեր ներկայությամբ իմ նոպան կբռնի, այսինքն՝ ուշագնաց կլինեմ...– Քայլերը դանդաղեցրեց, որպեսզի կարողանա ճշգրիտ ու հարմարագույն բառերը գտնել՝ արտահայտվելու համար.– Փառք Աստծու, եղածը մի բան չէր, հիվանդ չեմ... Դուք շատ ճիշտ էիք գուշակել, որ ես շուտով պիտի վերադառնամ աշխատանքի... Քիչ առաջ էլ մի բան հիշեցի...

— Քիչ առաջ, այսինքն, երբ նայում էիք ժամացույցին:

Նա լռությամբ դրականորեն շարժեց գլուխը, իսկ Դորոթին այլևս չխոսեց՝ կուլ տալով «ներշնչում» բառը, որն արդեն լեզվի ծայրին էր: Ջիվսի հոգու ուրախությունն ու լիությունը երբեք չէին նվազում: Այն, ինչ որ նա մի ակնթարթ տևողությամբ տեսել էր տաճարի հրապարակում, անբացատրելիորեն կուտակված էր ու ամփոփված իր մեջ, նույնիսկ եթե հիմա այլևս չէր մտաբերում դրա հազարավոր մանրամասները: Իր հոգին մի կատարյալ հյուսվածք էր գործել, որն ընկալվում էր որպես շոշափելի և նույնիսկ որպես մի նյութեղեն ներկայություն: Նրան հարկավոր էր միայն դրա մի թելը բռնել ու ձգել, ինչին հաջորդելու էր անհաշիվ պատկերների մի անսպառ շարան: Իրականում ինքը լավ գիտեր, որ այդ ներշնչանքի համար կարևոր դեր է խաղացել Սուրբ Գրքի մասին իր կատարած ջանադիր ուսումնասիրությունը, որին նվիրվել էր ամիսներ շարունակ: Այդուհանդերձ, այդտեղ՝ այդ լայնանիստ աստիճանների վրա, որոնք առաջնորդում էին դեպի վեր՝ դեպի հին տաճարի քահանայական

գավիթը, նրան ներկայացել է բոլորովին տարբեր մի բան, քան այն, որ գրված է և ուսանելի: Արդյոք դա Քարթրայթի ասած akâsha–ն է, այսինքն՝ տիեզերական *խրոնիկան*, պատմության եթերային պատկերը, որը կուտակվում է և խտանում, ինչպես մի ամպ մարդկության պատմական ամենաաճոխ հիշատակներով լեցուն վայրերի վրա: Կամ էլ՝ արդյոք դա ավելի խորախորհուրդ, ավելի անձնական մի բան է, մի հորդորական ձայն, մի կանչ՝ դեպի տուն և բնօրրան վերադառնալու, մի պատասխան, որը միայն իրեն է վերաբերում: Նա դեռևս այս հարցը չէր լուծել, բայց նրա ողջ էությունը տոչորվում էր մի արգասաբեր նախանձախնդրությամբ՝ տուն շտապելու, սեղանի շուրջը նստելու և անհապաղ ամբողջն ուրվագծելու, որպեսզի ոչինչ չկորչի, սկսելով կառուցել այն, ինչ որ իր մեջ արդեն կառուցված էր: Բայց ոչ միայն այն աշխատանքը, որ ինքն ուզում էր կատարել, զգում էր իր մեջ՝ իբրև արդեն իսկ կատարված ու ամբողջացած, այլև իր սեփական ինքնությունը դարձել էր ավելի քան երբեք կայուն և անպարտելի, քանզի առաջին անգամ էր, որ ինքն առանց խուսափելու և ուղղակի կերպով նայել էր իր ամբողջական ճշմարտության աչքերին և նրանից ստացել մի այնպիսի վստահություն, որն իրեն օժտում էր անծանոթ ուժերով:

Իրիկնադեմին միայն վերջապես հնարավոր դարձավ դանդաղ քայլերով առաջ գնալ շուկայի խռնված նրբանցքներով: Ջիվսը, անցորդների նկատմամբ բոլորովին անուշադիր, իր համար անցնելու տեղ էր բացում: Դորոթին, որն իր գլխարկը դեռևս պահում էր իր ձեռքին, մեծ ջանք էր թափում՝ նրա կողքին լինելու համար: Ջիվսի հայացքն ընկավ նրա մուգ մազերի վրա, որոնց մեջ նկատվում էր մի ալեխառն մազափունջ, որը նրա երիտասարդությանը տալիս էր առույգ և միևնույն ժամանակ մելամաղձոտ մի արտահայտություն: Նա հանկարծ շեղակի նայեց նրան՝ մի անորոշ ժպիտով.

— Ես ձեզ իսկապես շատ եմ երախտապարտ, Դորոթի, որ մենք... որ դուք ինձ հետ մնացիք... քիչ առաջ...

Վերջինս պատասխանեց ցածր ձայնով.

— Հիմա է, որ դուք մի մեծ բան պիտի կատարեք, Քլեյթոն...

— Մեռնում եմ աշխատելու ցանկությունից,— եղավ կարճ պատասխանը:

Դորոթին, սակայն, գիտեր, որ Լեոնորան այդ բոպեներին դուրս էր մղվել Ջիվսի հոգուց: Հանգուցյալը գնացել էր այնտեղ, ուր ննջեցյալները սպասում են, երբ երկրային սերը հաղթահարում է կորստի ցավը: Դորոթին գրեթե կարեկցում էր քնքշորեն մոռացության մատնվածին: Նրանք այլևս ոչինչ չխոսեցին, մինչև որ կանգ առան «Քինգ Դեյվիդ» լուսափայլ հյուրանոցի առաջ: Վերջալույսի միջից դեպի երկինք էր սլանում Սիոնի բերդի սևաթույր բարձր մինարեթը:

Դորոթի Քովելը սկսեց ասել վարանոտ.

— Եթե ձեզ անհաճո է, ստիպված մի՛ եղեք ինձ պատասխանել, Քլեյթոն... Ես կարծում եմ, թե այն, ինչ ձեզ հետ պատահեց տաճարի հրապարակում, անկասկած, կապ ունի Սուրբ Գրքի հետ...

Նա մի քանի վայրկյան լռեց ու մտածում էր՝ նախքան անունը հայտնելը.

— Այո, դա Երեմիան է, մարգարեն...

— Նրա մասին ես շատ չգիտեմ,— ասաց լրագրողուհին, և նրա նայվածքում կասկածներ նկատվեցին,— օգնե՛ք իմ տկար կրթությանը և կրոնական թույլ գիտելիքներին:

Քլեյթոն Ջիվսը խոնարհեցրեց իր երկարավուն թարթիչները, ասես իր խոսքերի մեջ պարտավորված լիներ զսպելու պայքարի պատրաստ մի տարօրինակ բարկություն:

— Այս մարգարեն մի զգայուն մարդ էր, որն անզիջում կերպով հակառակության մեջ էր իր աշխարհի ու ժամանակի հետ: Նա մի երկյուղած մարդ էր, որին այս երկրում տիրող բացահայտ մոլորություններն ու հզոր տիրակալների գործադրած ճնշումները չեն կարողացել ընկճել, քանզի նա ուրիշ ոչ ոքի չէր հնազանդվում, բացի Աստծու ձայնից, որը խոսում էր իր մեջ և իր հետ...

Նա գիտեր, որ այս բառերով հազիվ թե մի չնչին բան հայտնած կլիներ իր ձեռք բերած իսկական փորձառությունից: Ամենից առաջ իր պարտականություններից մեկը պետք է լինի ցույց տալ, որ մեծությունն առկա է միայն ընդդեմ աշխարհի և ոչ երբեք՝ աշխարհի հետ, որ հավիտյանս հաղթահարվածները հավիտյանս հաղթողներն են, և որ ձայնն ավելի իսկական ու ճշմարիտ է, քան ժխորը: Հոգևոր ուրախությունն ուռեցնում էր իր կուրծքը, քանզի ինքը գիտեր, որ ձայնը նույն ուժգնությամբ է

խոսում նաև ներկա ժամանակի ու աշխարհի մեջ: Այն խոսում է նաև իր մեջ և իր հետ: Միայն թե ինքը պետք է սրի իր ներքին լսողությունը, որ-պեսզի կարողանա անխարդախ և անկաշառելի անարատությամբ լսել այն միակ ճշմարտությունը, ում արժի հետևել:

Շաչեց մի անհաճո քամի: Դորոթի Քովելը դողաց, շփոթված էր և ինքն էլ չգիտեր, թե ինչու: Ձիվսը վայրկյան առ վայրկյան ավելի էր օտարանում նրանից: Շքեղ հյուրանոցի հսկա ապակիները փայլում էին մշտապայծառ և նոր սկսվող գիշերում: Դորոթին անհամբեր նայեց դեպի այդ լուսաշող կողմը.

— Ներս չգնա՞նք: Մյուսները սպասում են...

— Մնաք բարով, Դորոթի,— ասաց Ձիվսը և բռնեց նրա ձեռքը.— ես այդտեղ չեմ մտնի, չեմ գնա մյուսների մոտ... Որովհետև ես հիմա գնում եմ դեպի իմ ներաշխարհը և սկսում եմ...

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թարգմանչի կողմից 9

Գլուխ առաջին. Զրույցներ Մեռյալ ծովի ափին 13
Գլուխ երկրորդ. Ճանապարհորդություն դեպի Երուսաղեմ 29
Գլուխ երրորդ. Տաճարի հրապարակում 45
Գլուխ չորրորդ. Տաճարում 56
Գլուխ հինգերորդ. Զայնն արտաքին և ներքին 89
Գլուխ վեցերորդ. Մարգարեն իր հայրական տանը 107
Գլուխ յոթերորդ. Տեսիլքների դպրոցը 123
Գլուխ ութերորդ. Շրջագայությունը և առաջին
խայտառակ միջադեպը 137
Գլուխ իններորդ. Թագավորն է կանչում 170
Գլուխ տասներորդ. Ցասման բաժակը 188
Գլուխ տասնմեկերորդ. Մեգիդո 212
Գլուխ տասներկուերորդ. Մեծ մեղադրանքը 234
Գլուխ տասներեքերորդ. Նոփի ծաղկազարդ սյուների տակ 251
Գլուխ տասնչորսերորդ. Զենուա 270
Գլուխ տասնհինգերորդ. Զենուան ընդունվում է 283
Գլուխ տասնվեցերորդ. Անցում Ամենտիի միջով 307
Գլուխ տասնյոթերորդ. Ճակատագիրը Խեցիների
դարպասի մոտ 327
Գլուխ տասնութերորդ. Ոտքերը կոճղի մեջ 343
Գլուխ տասնիններորդ. Հովակիմ և Հեքոնիա 361
Գլուխ քսաներորդ. Աշխատանքը թաքստոցում 383

Գլուխ քսանմեկերորդ. Հրաբորբ փայտածուխ
և թունավոր գինի 402
Գլուխ քսաներկուերորդ. Մելեխ Բաբիլու 428
Գլուխ քսաներեքերորդ. Էշի թաղումն ու երկնքի բանալին 442
Գլուխ քսանչորսերորդ. Աստղազարդ երկնքի միջով 470
Գլուխ քսանհինգերորդ. Եզան լուծը 506
Գլուխ քսանվեցերորդ. Սեղեկիան և իր տունը 521
Գլուխ քսանյոթերորդ. Դաշինքի բանտարկյալը 534
Գլուխ քսանութերորդ. Սեղեկիայի հաղթանակը 553
Գլուխ քսանիններորդ. Պարիսպների միջև, զնդանում,
պահակատան բակում 579
Գլուխ երեսուներորդ. Խորքից և բարձունքից 607
Գլուխ երեսունմեկերորդ. Խավարի միջով 625
Գլուխ երեսուներկուերորդ. Մնացորդը 656
Գլուխ երեսուներեքերորդ. Տաճարը 676

Վերջաբան 687

ՖՐԱՆՑ ՎԵՐՖԵԼ

ԵՐԵՄԻԱ
ԼՍԷՔ ՁԱՅՆԸ

FRANZ WERFEL

JEREMIAS
HÖRET DIE STIMME

Գերմաներենից թարգմանեց
Հակոբ արքեպիսկոպոս Գլնճյանը

Aus dem Deutschen übersetzt
von Erzbischof Hakob Kelendjian

Նկարիչ՝ Մայիս Մխիթարյան

Ձևավորումը՝ Վիտալի Ասրիևի
Սրբագրությունը՝ Մարգարիտ Իսկանդարյանի

9 789939 038964

Տպագրությունը՝ օֆսեթ
Թուղթը՝ կավճապատ
Չափը՝ 70x100/16
Ծավալը՝ 43,5 տպ. մամուլ